ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԵԿՅԱՆ ԵՐՎԱՆԴ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

# ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒ. ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ (ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՈՏՈՒԹՅՈՒՆ)

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.03 «ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն


**ԱՌԱՋԱԲԱՆ**..... 12

**ԳԼՈՒԽ Ա. ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**..... 18

1.1. Իշխանության կառուցվածքն Բիայնիլի-Ուրարտուում ..... 18

1.1.1. Արքայական իշխանությունը Բիայնիլի-Ուրարտուում, արքայական իշխանության գաղափարախոսությունը. «խալդյան պետություն»..... 18

1.1.2. Արքայի գործառույթները..... 21

1.1.2.1. Քրմական գործառույթ..... 21

1.1.2.2. Վարչական գործառույթ..... 23

1.1.2.3. Դատական գործառույթ..... 24

1.1.2.4. Ռազմական գործառույթ.....25

1.1.2.5. Տնտեսական գործառույթ..... 26

1.1.3. Արքայական տիտղոսաշարը..... 27

1.1.4. Արքայական իշխանության ժառանգորդությունը..... 31

1.1.5. Արքունիքը և պաշտոնեությունը..... 32

1.1.5.1. Մայրաքաղաքը..... 32

1.1.5.2. Արքունիքը..... 35

1.1.5.3. Բարձրագույն պաշտոնյաները..... 39

1.1.5.4. Միջին և ցածրաստիճան պաշտոնեությունը..... 44

1.1.5.5. Պալատի տնտեսական և սպասարկող անձնակազմը..... 47

1.1.5.6. Չպարզաբանված գործառույթներ ունեցող այլ պաշտոններ կամ մասնագիտություններ..... 51

1.1.6. Գիրը, դպրությունը, ներքին և միջպետական գրագրությունը..... 51

1.1.6.1. Գիրը և դպրությունն Ուրարտուում..... 51

1.1.6.2. Ներքին գրագրությունը..... 61

1.1.6.3. Միջպետական գրագրությունը..... 63

1.1.6.3.1. Ասորեստան..... 63

1.1.6.3.2. Շումերիա.....64

1.1.6.3.3. Այլ վկայություններ..... 65

1.1.7. Տարիների հաշվարկն Ուրարտուում..... 66
1.1.8. Իշխանության իրականացումը տեղերում. ձևերը և միջոցները..... 67
1.1.9. Վարչական բաժանումը..... 72
1.1.9.1. «Մարզ» հասկացությունը..... 72
1.1.9.2. Ուրարտուի վարչատարածքային միավորները..... 76
1.2. Ուրարտական տերության աշխարհագրությունը..... 87
1.2.1. Բուն Ուրարտու..... 87
1.2.1.1. Միջնաշխարհ..... 87
1.2.1.2. Հյուսիս-արևելք և արևելք (մերձարաքսյան գոտի) ..... 89
1.2.1.3. Հարավ-արևելք (մերձուրմյան գոտի) ..... 91
1.2.1.4. Հարավ (մերձտավրոսյան գոտի) ..... 93
1.2.1.5. Հարավ-արևմուտք (մերձտիգրիսյան գոտի) ..... 100
1.2.1.6. Արևմուտք (մերձեփրատյան գոտի) ..... 105
1.2.1.7. Հյուսիս-արևմուտք (Երզնկայի սարահարթ) ..... 110
1.2.1.8. Հյուսիս (մերձպոնտական գոտի) ..... 110
1.2.2. Ուրարտական տերության գերիշխանության գոտին..... 113
1.2.3. Ուրարտուի նվաճումների աշխարհագրությունը..... 114
1.2.3.1. Հյուսիս, հյուսիս-արևելք և արևելք (մերձկուրյան և մերձարաքսյան գոտիներ) ..... 114
1.2.3.2. Հարավ-արևելք (Իրանական բարձրավանդակ) ..... 116
1.2.3.3. Հարավ-արևմուտք (հյուսիս-սիրիական գոտի) ..... 117
1.2.3.4. Արևմուտք (փոքրասիական գոտի) .....118
1.3. Բնակչության թվաքանակը Հայկական լեռնաշխարհում ուրարտական շրջանում..... 119
1.4. Բնակավայրերի տիպերն Ուրարտուում..... 129
1.4.1. Քաղաքը (պալատը/տաճարը) և քաղաքաշինությունն Ուրարտուում..... 129
1.4.1.1. «Քաղաք» հասկացությունն Ուրարտուում..... 129
1.4.2. Բնակավայրերի տիպերը և դասակարգումն ըստ ուրարտական սեպագիր աղբյուրների..... 131
1.4.2.1. URU LUGÁL-*nusi* (*agununi*)– «(ամրացված) արքայական քաղաք»..... 131
1.4.2.2. URU$^{(MEŠ)}$ *agununi* – «ամրացված քաղաք»-ներ..... 132
1.4.2.3. É.GAL$^{(MEŠ)}$ (1) – «ամրոց»-ներ..... 132

1.4.2.4. É.GAL$^{(MEŠ)}$ (2) *agununi* – «ամրացված ամրոց»-ներ..... 133
1.4.2.5. É.GAL (3) – «պալատ-տաճար»..... 134
1.4.2.6. *qarbi agununi* – «ամրացված ժայռ»..... 135
1.4.2.7. URU/*patari*$^{(MEŠ)}$ – «քաղաք»-ներ..... 135
1.4.2.8. URU.TUR – «փոքր քաղաք»..... 137
1.4.3. Բնակավայրերի տիպերն Ուրարտուում ըստ «Լուվրի աղյուսակ»-ի..... 137
1.4.3.1. *āl dannūti* – «հզոր քաղաք»..... 137
1.4.3.2. *birtu* – «բերդ, ամրոց»..... 139
1.4.3.3. *bīt dūri* – «(ամրացված) զորակայան» (՞)..... 140
1.4.3.4. *ālu* (1) – «քաղաք» («ագարակ, դաստակերտ»)..... 141
1.4.3.5. *ālu* (2) – «քաղաք» (գյուղ, գյուղատիպ բնակավայր, ժամանակավոր վրանային ճամբար) ..... 141
1.4.3.6. Քաղաքաշինությունն Ուրարտուում ..... 143
1.4.3.7. Ուրարտական քաղաքների տարածքը և բնակչությունը..... 149
1.4.3.8. Ուրարտական բնակավայրերը հնագիտության տեսանկյունից..... 155
1.4.3.9. Ճարտարապետությունը և շինարարական արվեստն Ուրարտուում..... 161
1.4.3.9.1. Պալատական և բնակարանային ճարտարապետությունը..... 161
1.4.3.9.1.1. «Պալատներ»- ը..... 161
1.4.3.9.1.2. Արքայական ապարանքները..... 164
1.4.3.9.1.3. Ուրարտական «պետ-ստանդարտ»-ի տները..... 166
1.4.3.9.1.4. Ուրարտական «քաղաքային» տները..... 168
1.4.3.9.1.5. Շինարարական արվեստն Ուրարտուում..... 169
1.5. Պաշտամունքային կենտրոնները, տաճարները և սրբարաններն Ուրարտուում..... 172
1.5.1. Ուրարտական տաճարների ընդհանուր բնութագիրը..... 172
1.5.1.1. Առաջին տաճարները..... 172
1.5.1.2. Տաճարների և սրբարանների տիպերն ըստ ուրարտական սեպագիր աղբյուրների..... 174
1.5.1.2.1. $^{(GIŠ)}$KÁ$^{(MEŠ)}$ ..... 174
1.5.1.2.2. $^{(É)}$*susi*..... 175

1.5.1.2.3. É..... 176
1.5.1.2.4. É.DINGIR$^{MEŠ}$..... 177
1.5.1.2.5. É.BÁRA..... 177
1.5.1.2.6. *”arani*.....
177
1.5.1.2.7. $^{(É)}$*adunusi*..... 178
1.5.1.2.8. $^{É}$*sir(i)Æani*..... 178
1.5.1.2.9. Այլ կառույցներ..... 179
1.5.2. Պետական գաղափարախոսությունը և «տաճար»
հասկացությունն Ուրարտուում..... 179
1.5.3. Դիտարկումներ «սուսի»-տաճարի շուրջը..... 182
1.6. Հաղորդակցության համակարգն Ուրարտուում..... 184
1.6.1. Ընդհանուր բնութագիրը..... 184
1.6.2. Ճանապարհային ցանցը..... 189
1.6.2.1. «Կենտրոնական մայրուղի»..... 189
1.6.2.2. «Հյուսիս-արևելյան մայրուղի»..... 191
1.6.2.3. «Արևելյան մայրուղի»..... 192
1.6.2.4. «Հարավ-արևելյան մայրուղի»..... 194
1.6.2.5. «Հարավային մայրուղի»..... 195
1.6.2.6. «Հարավ-արևմտյան մայրուղի»..... 195
1.6.2.7. «Արևմտյան մայրուղի»..... 196
1.6.2.8. «Հյուսիսային մայրուղի»..... 197

**ԳԼՈՒԽ Բ. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒՈՒՄ**..... 198
2.1. Ռազմական գործը Հայկական լեռնաշխարհում
ուշ բրոնզ – վաղ երկաթի դարաշրջանում..... 198
2.2. Բանակաշինությունն Ուրարտուում Ք.ա. 9-րդ դ-ում ..... 203
2.3. Ուրարտական տերունական բանակը.
կառուցվածքը և զինվածությունը..... 207
2.3.1. Արքունի բանակը..... 207
2.3.1.1. «Արքայական գունդ»-ը..... 207
2.3.1.2. «Մարզային զորքեր»-ը..... 210

2.3.1.3. Կայազորային զորքերը..... 211
2.3.1.4. Արքունի թիկնազորը..... 214
2.3.2. Ենթակա երկրների զորքերը..... 215
2.3.3. Դաշնակիցներ և վարձկան զորքեր..... 218
2.3.3.1. Ուրարտուի դաշնակիցները..... 218
2.3.3.2. Վարձկան զորքերը..... 221
2.3.4. Հրամանատարական կազմը..... 221
2.3.4.1. «Գերագույն հրամանատար»-ը..... 221
2.3.4.2. «Գլխավոր զորավար»-ը (lú*turtānu*) ..... 223
2.3.4.3. «Երկրորդ զորավար»-ը (lú*turtānu šanû*/2-*u*) ..... 223
2.3.4.4. «Թևերի զորավարներ»-ը
(lú*turtānu ša imittu*/ZAG, lú*turtānu ša šumēlu*/KAB) ..... 223
2.3.4.5. «Մարզպետ» (LÚEN.NAM) ..... 224
2.3.4.6. «Գնդապետ» (*rab kiṣri*) .....
225
2.3.4.7. «Հարյուրապետ» (*rab* 1.*me'at*) ..... 226
2.3.4.8. «Հիսնապետ» (*rab Æanšê*) ..... 226
2.3.4.9. «Տասնապետ» (*rab eširti* / LÚ.10-*li*) ..... 226
2.3.5. Ստորաբաժանումները..... 227
2.3.6. Զորահավաքի սկզբունքը..... 228
2.3.7. Հիմնական զորատեսակները..... 231
2.3.7.1. Կառամարտիկ զորքերը..... 231
2.3.7.2. Հեծելազորը..... 235
2.3.7.3. Հետևակը..... 238
2.3.7.4. Օժանդակ զորքերը և գումակը..... 239
2.3.7.5. Սպասարկող անձնակազմը..... 241
2.3.7.6. Հանդերձանքը և զինվածությունը..... 242
2.3.7.7. Զորավարժանքներն ու զորախաղերը..... 251
2.3.7.8. Զինվորների օրապահիկը և սննդակարգը..... 251
2.3.8. Թվակազմը..... 255
2.3.9. Էթնիկ կազմը..... 260
2.4. Ամրոցաշինությունը և ամրաշինությունն Ուրարտուում..... 263

2.4.1. Ամրոցաշինությունն Ուրարտուում ..... 263
2.4.1.1. Տեքստային վկայություններ ..... 263
2.4.1.2. Ամրոցներն Ուրարտուում ըստ հնագիտական տվյալների ..... 265
2.4.1.2.1. Վանա լճի արևելյան ավազան («Ա» գոտի) ..... 267
2.4.1.2.2. Վանա լճի հյուսիսային ավազան («Բ» գոտի) ..... 268
2.4.1.2.3. Վանա լճի հարավային ավազան («Գ» գոտի) ..... 268
2.4.1.2.4. Վանա լճի արևմտյան ավազան, Մշո դաշտ, Արածանիի միջին հոսանք («Դ» գոտի) ..... 268
2.4.1.2.5. Մերձեփրատյան տարածքներ («Ե» գոտի) ..... 268
2.4.1.2.6. Մերձտիգրիսյան տարածքներ և Տավրոսյան լեռնագոտի («Զ» գոտի) ..... 269
2.4.1.2.7. Մերձուրմյան տարածքներ («Է» գոտի) ..... 269
2.4.1.2.8. Արաքսի ստորին հոսանքի շրջան («Ը» գոտի) ..... 269
2.4.1.2.9. Նախիջևան և Շարուրի դաշտ («Թ» գոտի) ..... 270
2.4.1.2.10. Արարատյան դաշտավայր և Սուրմարի («Ժ» գոտի) ..... 270
2.4.1.2.11. Բայազետի հարթավայր («Ի» գոտի) ..... 270
2.4.1.2.12. Վայք և Սևանա լճի ավազան («Լ» գոտի) ..... 271
2.4.1.2.13. Շիրակի դաշտավայր և Կարսի սարահարթ («Խ» գոտի) ..... 271
2.4.1.2.14. Էրզրում և Բասենի դաշտեր («Ծ» գոտի) ..... 272
2.4.2. Ամրաշինությունն Ուրարտուում ..... 272
2.4.2.1. Պաշտպանական կառույցները ..... 272
2.4.2.2. Ռազմական ճամբարները և զորանոցները ..... 278
2.4.2.3. Արքունի ախոռները ..... 280
2.4.2.4. Զինագործությունը և զինապահեստները ..... 282

**ԳԼՈՒԽ Գ. ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ** ..... 286
3.1. Աշխարհագրական և բնակլիմայական միջավայրը ..... 286
3.1.1. Ուսումնասիրվող տարածքը ..... 286
3.1.2. Օգտակար ռեսուրսները ..... 287
3.1.2.1. Մետաղահանքերը ..... 287
3.1.2.1.1. Երկաթ ..... 287
3.1.2.1.2. Պղինձ ..... 290

3.1.2.1.3. Ոսկի..... 292
3.1.2.1.4. Արծաթ..... 293
3.1.2.2. Այլ հանածոներ..... 294
3.1.2.3. Անտառները..... 294
3.1.2.4. Ջրագրությունը..... 295
3.1.3. Ուրարտուի տնտեսական տարածքը..... 297
3.1.3.1. Տնտեսական գոտիների ընդհանուր բնութագիրը..... 297
3.1.3.2. Կենտրոնական գոտի (Վանա լճի ավազան) ..... 299
3.1.3.3. Հարավ-արևելք (Ուրմիա լճի ավազան) ..... 302
3.1.3.4. Հյուսիս-արևելք (Արարատյան դաշտավայր, Շարուր-Նախիջևան և Բայազետ) ..... 302
3.1.3.5. Հյուսիս (Շիրակի դաշտավայր և Կարսի սարահարթ, Էրզրումի և Բասենի դաշտեր) ..... 304
3.1.3.6. Արևմուտք (Մերձեփրատյան գոտի) ..... 304
3.1.3.7. Հարավ-արևմուտք (Մերձտիգրիսյան գոտի) ..... 305
3.2. Տնտեսության հիմնական ճյուղերն Ուրարտուում ըստ գրավոր և հնագիտական աղբյուրների..... 306
3.2.1. Երկրագործությունը..... 306
3.2.2. Այգեգործությունը և խաղողագործությունը..... 308
3.2.3. Անասնապահությունը..... 308
3.2.4. Հիդրոշինարարությունը..... 313
3.3. Ուրարտական պալատական/տաճարային (պետական) տնտեսությունը. էտատիզմ..... 319
3.3.1. Պալատական/տաճարային (պետական) տնտեսության հիմնական բնութագիրը..... 319
3.3.1.1. Ուրարտական «ստրկատիրական պետություն»-ը..... 319
3.3.1.2. Գերեվարությունները..... 323
3.3.1.3. Հողային հարաբերությունները, հողատիրության բնույթն ու ձևերն Ուրարտուում..... 327
3.3.1.4. Տաճարային/պալատական տնտեսությունները..... 330
3.3.1.4.1. Տաճարային/պալատական տնտեսության ընդհանուր բնութագիրը..... 330

3.3.1.4.2. Տաճարը/պալատը որպես տնտեսությունը կազմակերպող օղակ..... 332
3.3.1.4.3. Տաճարային/պալատական տնտեսությունը կամ *tamertu*-ն Կարմիր բլուրի օրինակով..... 333
3.3.1.5. «Արքայական տնտեսություններ»-ը..... 338
3.3.1.6. «Մասնատիրական տնտեսություններ»-ը..... 340
3.3.1.7. Համայնքային հողատիրությունը..... 347
3.3.2. Էտատիզմ..... 348
3.3.2.1. Պետական պահուստները..... 348
3.3.2.1.1. Շտեմարանները..... 348
3.3.2.1.2. Մառանները..... 351
3.3.2.1.3. Տաճարային/պալատական տնտեսության վերաբաշխման հնարավորությունները..... 355
3.3.2.2. Պետական արհեստանոցները..... 359
3.3.2.2.1. Մետաղագործական և փայտագործական արհեստանոցներ..... 359
3.3.2.2.2. Բրուտագործական արհեստանոցներ..... 362
3.3.2.2.3. Կարի արհեստանոցներ..... 364
3.3.2.2.4. Բնամթերք մշակող արհեստանոցներ..... 364
3.3.2.2.5. Քարի մշակման արհեստանոցներ..... 365
3.3.2.2.6. Այլ..... 366
3.3.3. Չափի, կշռի և ծավալի միավորները և պետական ստանդարտները..... 366
3.3.3.1. Պետական ստանդարտները..... 366
3.3.3.2. Չափի, կշռի և ծավալի միավորները..... 368
3.3.3.3. Պետական միջոցների բաշխումը և սննդակարգը..... 373
3.3.3.3.1. Պետական միջոցների բաշխումը..... 373
3.3.3.3.2. Սննդակարգը..... 374
3.3.4. Ներքին հարկային համակարգը..... 376
3.3.4.1. Հարկերը..... 376
3.3.5. Արտաքին եկամուտները..... 381
3.3.5.1. Հարկատու երկրներ..... 381

3.3.5.2. Ավարառություն..... 384
3.3.6. Առևտուրը..... 385
3.3.6.1. Ընդհանուր բնութագիրը..... 385
3.3.6.2. Ներքին տնտեսական կապերը..... 386
3.3.6.3. Արտաքին առևտուրը..... 387
3.3.6.3.1. Ուրարտու – Միջագետք..... 391
3.3.6.3.2. Ուրարտու – Իրանական բարձրավանդակ..... 392
3.3.6.3.3. Ուրարտու – Լևանտ
(Սիրիա-փյունիկյան աշխարհ և Պաղեստին) ..... 396
3.3.6.3.4. Ուրարտու – Եգիպտոս..... 399
3.3.6.3.5. Ուրարտու – Փոքր Ասիա և Էգեյան աշխարհ..... 400
3.3.6.3.6. Ուրարտու – Կենտրոնական և Հյուսիսային Կովկաս..... 402
3.3.6.4. Մաքսանենգություն..... 403

**ԳԼՈՒԽ Դ. ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ**..... 404
4.1. Իշխող խավը..... 404
4.1.1. Արքայատոհմը..... 404
4.1.1.1. Արքան և արքայական ընտանիքը..... 404
4.1.1.2. Թագուհին..... 405
4.1.1.3. Արքայազները և արքայադստրերը..... 410
4.1.1.4. Արքայական ընտանիքի մյուս անդամները..... 412
4.1.1.5. Դինաստիական կապերը..... 413
4.1.2. Իշխող վերնախավը..... 415
4.1.2.1. $^{LÚ}$*mari*(*ni*) խավը..... 415
4.1.2.2. $^{LÚ}$*tardašÆe* խումբը..... 419
4.1.2.3. Քրմական խավը..... 422
4.1.2.3.1. Ընդհանուր բնութագիրը..... 422
4.1.2.3.2. $^{LÚ}$*urbikani* խումբը..... 424
4.1.2.3.3. $^{LÚ}$*aïei‹eni* խումբը..... 424
4.1.2.3.4. $^{LÚ}$*palagi* խումբը..... 425
4.1.2.3.5. $^{LÚ}$*šeluini*, $^{LÚ}$*purunurdani*, $^{LÚ}$*iriuni*, $^{LÚ}$*šiarkira* խմբերը..... 425

4.1.3. Իշխող խավն Ուրարտուում ըստ հնագիտական տվյալների..... 425
4.1.3.1. Կեցությունը..... 425
4.1.3.2. Կնիքն իբրև կարգավիճակի ցուցիչ..... 427
4.2. Ծառայող խավը..... 429
4.2.1. «Ծառայող ազնվականություն»-ը ($^{LÚ}$*kirine*) ..... 429
4.2.2. «Զինվորականություն»-ը ($^{LÚ}$*ḫuradinili*) ..... 430
4.2.3. «Սպասավորներ»-ը ($^{LÚ}$ÌR/ERUM/$^{LÚ}$*bura*) ..... 432
4.2.4. Իշխող և ծառայող խավերի անդամների թիվը..... 433
4.3. «Կախյալներ»-ի խավը..... 434
4.4. «Հպատակների խավ»-ը..... 439
4.4.1. Տեղական բնակչությունը..... 439
4.4.2. Վերաբնակիչները..... 441
4.4.3. Ինքնավար քաղաքային համայնքները..... 444

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ** ..... 447

**ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ**..... 454

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ** ..... 458

# ԱՌԱՋԱԲԱՆ

Աքեմենյան տերության կործանումով սեպագիր դպրությունը դադարում է հիշատակել «Ուրարտու» անունը (բաբելերեն՝ «Ուրաշտու»)[1], որի տեղը սեպագիր տեքստերում զբաղեցնում է «Արմինի»ն[2]: Դրանից շատ ժամանակ չէր անցնելու՝ որպեսզի մոռացվեր սեպագիր գրահամակարգն ընդհանրապես: Վանա ժայռին և այլուր հանդիպելով սեպագիր գրերի՝ պատմահայր Մովսես Խորենացին չէր թաքցնում իր զարմանքը. «(*այրասիրտն այն և կաթոփն Շամիրամ*) … *զամենայն երեսս քարին իբրև գրչաւ զմոմ հարթեալ՝ բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ*»: Ապա շարունակում է. «*Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր*»[3]:

Թվում է՝ Ուրարտուն Խորենացուն հայտնի չէր, իսկ այն ամենը, ինչը մնացել էր ուրարտական շրջանից, նա վերագրում էր ասորեստանյան թագուհի Շամիրամին: Մյուս կողմից Պատմահայրը, իր «Հայոց պատմության» մեջ ոչ քիչ էջեր հատկացնելով Շամիրամին, զարմանալի կերպով շրջանցում է այն դարաշրջանը, որը կարելի է ժամանակագրել իբրև «ուրարտական», ասելով՝ «*Թողլով զոչ կարևորագոյնսն ի բանից՝ ասասցուք որ ինչ հարկաւորն է: Վերջին սոցա, որք առ Ասորեստանեայց թագաւորութեամբն և որք ի Շամիրամայ և կամ թէ ի Նինոսէ՝ զմերս ասեմ Պարոյր առ Սարդանապալլաւ, որ ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ գտանի Վարբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդարապալլայ*»[4]:

Արդյո՞ք Պատմահայրը չէր ցանկանում մանրամասնել, որ Շամիրամի ժամանակ Հայաստանում իշխել են ինչ-որ օտարներ, ինչի մասին ավելի ուշ նշում է 7-րդ դ-ի պատմիչ Սեբեոսը՝ նրանց համարելով «ասորեստանցիներ»[5]: Պատահական է թե ոչ, բայց Շամիրամից հետո և մինչև Պարույր Սկայորդի ընկած շրջանը հայ պատմիչների

[1] Ամփոփ տե՛ս Salvini 2015: 394.
[2] Geller, Traina 2013: 447ff.
[3] Մովսէս Խորենացի, Պատմութիին Հայոց, Գիրք Ա, Գլուխ ԺԶ:
[4] Մովսէս Խորենացի, Պատմութիին Հայոց, Գիրք Ա, Գլուխ ԻԱ [ԻԲ]:
[5] Սեբեոս, Պատմություն, Գլուխ Ա, էջ 12-13:

համար այդպես էլ մնաց որպես ինչ-որ «բռնակալներ»-ի կամ «ոչ ցեղակիցներ»-ի պատմության շրջան, որոնք իշխել են «ոչ ըստ ազգի» և տիրել հայոց աշխարհին[6]:

***

Ուրարտուի պատմության ու մշակույթի ուսումնասիրությունը, ցավոք, մինչ օրս մնում է հայագիտության առավել քաղաքականացված ոլորտներից մեկը: Ուրարտագիտական հարցերը հաճախ խիստ պարզունակեցնելով՝ ամփոփվում են ուրարտացիների՝ տեղաբնիկնե՞ր, թե՞ նորեկներ լինելու կամ ընդհանրապես՝ «Ուրարտու», «ուրարտացի», «ուրարտական» եզրերի կիրառելիության շուրջը ծավալված անիմաստ բանավեճերով: Փոխարենը՝ ուրարտագիտության, ինչպես նաև ընդհանրապես՝ հայագիտության իրական խնդիրները, այդ թվում նաև հայ ժողովրդի պատմության հնագույն և վաղ փուլերի հետ կապված բազում հարցեր հաճախ անտեսվում են և մղվում հետնախորք:

Ցավոք, վերջին տասնամյակում փորձ է արվում մասսայականացնել նման տրամադրությունները և անգամ դասագրքեր ներմուծում տեսակետներ, որոնց գիտական հիմնավորումը հեղհեղուկ է, երբ փաստերը մեկնաբանվում են կամայականորեն կամ ընդհանրապես զուրկ են գիտականությունից: Առավել անընդունելի է, երբ նման տրամադրությունները մուտք են գործում ակադեմիական շրջանակներ: Այս երևույթները մեզ շատ են մտահոգում և այն պնդումները, որ պատմագիտության հետ կապված իրավիճակը շատ ավելի վատթար է, օրինակ, հարևան Ադրբեջանում, արդարացում չէ և չի կարող մեզ մխիթարել:

Միաժամանակ, այս առումով մխիթարական չեն նաև որոշ միտումներ, որը մենք տեսնում ենք արևմտյան հետազոտողների վերջին շրջանի աշխատանքներում՝ կապված Ուրարտուի, ուրարտական տերության էթնիկ կազմի և հատկապես՝ ուրարտա-հայկական՝ այլևս կասկած չհարուցող փոխառնչությունների հետ կապված: Հատկապես վերջին տարիներին նկատվող այդ մոտեցումը կոչել ոչ այլ կերպ, քան «հիպերքննադատական», մենք չենք կարող: Ավելին, երբեմն անգամ կասկածներ են հնչում աքեմենյան արձանագրություններում հանդես եկող Արմինան և հունական աղյուրներում հիշատակվող արմեններին Հայաստանի և հայերի հետ նույնականցնելու հարցում[7]: Սա անընդունելի է: Առկա են լուրջ կռվաններ՝ պնդելու համար հայերենի կրողների ներկայությունն այստեղ մինչուրարտական շրջանում և վիճարկել դա անիմաստ է: Այլ հարց է, թե ինչ դերակատարություն են ունեցել հայերենի կրողները

[6] Տես, օրինակ, Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, էջ 22-23:
[7] Kroll *et al.* 2012b: 448f.

ուրարտական տերության կազմավորման գործում, ինչպիսի փոխհարաբերությունների մեջ կարող էին լինեն հայկական իշխանությունները ուրարտական նվաճողների հետ տերության կազմավորման շրջանում, կազմավորումից հետո և անկման նախօրեին, ինչպիսի տարածվածություն ուներ հայերենը և ինչ փոխառնչություններ են նկատվում ուրարտերենի հետ, ինչ դերակատարություն են ունեցել հենց իրենք՝ ուրարտացիները, հայերենի տարածման գործում՝ լեռնաշխարհի տարածքում իրականացրած լայնածավալ վերաբնակեցումների իրենց քաղաքականությամբ, արդյո՞ք հայերն էին կազմում ուրարտական հասարակության զինվորական խավը, ինչպես ենթադրում են որոշ հետազոտողներ:

Ներկայացվող ուսումնասիրությունը նպատակ չի հետապնդում և չի կարող պատասխանել ուրարտագիտության բոլոր կնճռոտ հարցերին: Փոխարենը՝ նպատակ ունի մոտենալու դրանցից որոշներին և որպես առաջին քայլ՝ փորձում է հասկանալ ու վեր հանել Բիայնիլի-Ուրարտու պետության կառուցվածքն ու բնույթը:

Ըստ այդմ, մեր նպատակն է համակողմանի ուսումնասիրության ենթարկել հիմնախնդիրը՝ մինչ օրս հայտնի գրավոր և հնագիտական նյութի ամբողջական հետազոտության հիման վրա, հնարավորինս բացահայտել բնագավառի չլուսաբանված կամ քիչ լուսաբանված հարցերը, մատնանշել այն խնդիրները, որոնց լուծման հեռանկարները, մեր իմացության սահմաններում, թեև թվում են խիստ աղոտ, բայց փոխարենը՝ հնարավոր է թվում մատնանշելու մոտեցման ուղիներ կամ, առնվազն, ուրվագծելու ընդհանուր պատկեր: Այդ առումով հինառաջավորասիական զուգահեռները կարող են ուղենիշ ծառայել, իհարկե, երբևէ տուրք չտալով մեխանիկական տեղայնացումներին: Այդ կերպ Բիայնիլի-Ուրարտուի ուսումնասիրության գործում շատ հարցեր, թեկուզև՝ աղբյուրագիտական սահմանափակ նյութի պայմաններում, կարող են գտնել օբյեկտիվ լուծումներ:

Այս առնչությամբ անհրաժեշտ ենք գտնում նշելու, որ ուրարտական սեպագիր աղբյուրները, որոնք մերթ ընդ մերթ համալրվում են նոր տեքստերով, միայնակ այլևս չեն կարող խթան հանդիսանալ ուրարտագիտության առաջընթացի համար և ապագայում իրականացվելիք նոր ուսումնասիրություններում դրանք ծառայելու են հիմնականում որպես ենթատեքստ: Անկասկած է, որ իր խոսքն է շարունակելու ասել հնագիտությունը, բայց ոչ միայն հնագիտությունը: Ուրարտագիտությունը կարիք ունի համալիր ուսումնասիրությունների, մինչդեռ, իրականացվող աշխատանքները սովորաբար դուրս չեն գալիս կոնկրետ բնագավառի սահմաններից, և զգացվում է

գիտության տարբեր բնագավառներ և ուղղություններ ընդգրկող համալիր հետազոտությունների խիստ պակաս:

Դա վերաբերում է Բիայնիլի-Ուրարտուի ուսումնասիրության բոլոր բնագավառներին՝ լինի դա քաղաքական պատմություն և պատմական աշխարհագրություն, տնտեսություն և սոցիալ-հասարակական հարաբերություններ, էթնիկ պատմություն, լեզու և դպրություն, արվեստ, հավատալիքներ և կրոն: Միաժամանակ, չպետք է մոռանալ, որ բիայնական/ուրարտական քաղաքակրթությունը դա հինարևելյան և հատկապես՝ հինառաջավորասիական տիպի քաղաքակրթություն է, և պատմահամեմատական զուգահեռները կարող են թույլ տալ վերհանելու բիայնական՝ աղբյուրներում կարծես թե չնշմարվող, սակայն, իրականում, սպասելի ասպեկտներ:

Թեմայի ուսումնասիրությունը թույլ է տալիս ուրվագծել այն հիմքերը, որոնց վրա ծնունդ առավ բիայնական քաղաքակրթությունը և որպես ժառանգություն՝ իր կնիքը թողեց Հայկական լեռնաշխարհի լանդշաֆտի ու նրա բնակչության վրա:

Հետազոտությունն ընդգրկում է ժամանակագրական լայն շրջանակ և չի սահմանափակվում Հայկական լեռնաշխարհում ուրարտական գերիշխանության դարաշրջանով՝ Ք.ա. 9-7-րդ դդ-ով: Տիպաբանական ընդհանրությունները, զուգահեռներն ու փոխազդեցությունները վեր հանելու նպատակով աշխատանքում խորությամբ արծարծվում են նաև հին Առաջավոր Ասիայի երկրների քաղաքական, տնտեսական, սոցիալ-հասարակական, ռազմական պատմությանը վերաբերող հարցեր՝ սկսած Ք.ա. 3-րդ հազ-ից ընդհուպ մինչև Ք.ա. 2-րդ դ.:

Ուսումնասիրության նյութի աշխարհագրական սահմանները հիմնականում վերաբերում են Հայկական լեռնաշխարհին ու հարակից երկրներին՝ ընդգրկելով Հայաստանի Հանրապետության և ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքները, Թուրքիայի Հանրապետության արևելյան, Իրանի Իսլամական Հանրապետության հյուսիս-արևմտյան շրջանները, ինչպես նաև ներկայիս Իրաքի և Սիրիայի հանրապետությունների հյուսիսային հատվածները, որոնք մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում բիայնական/ուրարտական պետության կազմում էին կամ գտնվում էին նրա քաղաքական ազդեցության գոտում:

Բիայնիլի-Ուրարտուին վերաբերող մեծաթիվ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների առկայությանը հակառակ՝ հիմնախնդիրը գերազանցապես մնացել է չլուսաբանված, քիչ չեն նաև թերի, ոչ լիակատար պատկերացումները: Դա միայն մասամբ է պայմանավորված մատչելի աղբյուրների սակավությամբ, ինչը, իր

հերթին, հետազոտողին չի մղել ձեռնամուխ լինելու խնդրի՝ հնարավորինս համակողմանի ուսումնասիրությանը: Հիմնախնդրին անդրադարձել են սակավաթիվ հեղինակներ, իսկ վերջին ամփոփիչ աշխատությունների հրատարակությունից անցել է արդեն երեսուն տարի[8]: Անցած տասնամյակներում լույս են տեսել ընդամենը մի քանի հոդված, որոնք ավելի շուտ ունեն հրապարակախոսական բնույթ կամ դրանց հեղինակները բավարարվել են սոսկ տեսական դիտարկումներով՝ դուրս չգալով անցյալում արդեն իսկ հրատարակված նյութի շրջանակներից, շատ դեպքերում անհաղորդ մնալով նաև գրավոր և հնագիտական նոր աղբյուրների ընձեռած հնարավորություններին: Կարելի է փաստել, որ հիմնախնդրի ուսումնասիրությունը թերի է, առկա աշխատանքների մեծ մասը՝ այլևս հնացած, իսկ նոր աշխատանքները՝ հաճախ ժամանակավրեպ:

Հետազոտությունը կատարված է սեպագիր-գրավոր և հնագիտական սկզբնաղբյուրների հիման վրա: Ըստ անհրաժեշտության՝ օգտագործվել են նաև այլ աղբյուրներ և գիտական դիսցիպլինների տվյալներ:

Գրավոր սկզբնաղբյուրների հիմնական խումբն են կազմել ուրարտական և համաժամանակյա նորասորեստանյան սեպագիր աղբյուրները: Աշխատանքում օգտագործվել են նաև Ք.ա. 3-րդ – 1-ին հազ-ների գրավոր աղբյուրներ՝ շումերական, աքքադական, միտաննական, միջինասորեստանյան, խեթական, ուգարիթյան, նորբաբելոնյան և աքեմենյան դարաշրջանների տեքստեր: Հետազոտությունը կատարելու ընթացքում կարևորագույն դեր է վերապահվել Բիայնիլի-Ուրարտուի հնագիտությանը. ուսումնասիրության ընթացքում քննության է առնվել ուրարտական 300-ից ավելի, իսկ ընդհանուր առմամբ՝ Հայկական լեռնաշխարհում և նրան հարակից շրջաններում վկայված շուրջ 1000 հնավայր:

Բիայնիլի-Ուրարտուի պատմության ուսումնասիրության բնագավառում մեր աշխատանքները սկսել ենք դեռևս 2000-ական թթ-ի սկզբներին՝ կապված Հայկական լեռնաշխարհի և նրան սահմանակից հյուսիս-արևմտյան Իրանի տարածքներում տեղորոշվող Մաննայի թագավորության պատմության ուսումնասիրության հետ: Այնուհետև, ավելի ընդլայնելով հետազոտության դաշտը և ընդգրկելով Բիայնիլի-Ուրարտուի պատմության՝ ըստ էության բոլոր բնաբավառները (սեպագիր աղբյուրների հրատարակություն, պատմության, հնագիտության և պատմական աշխարհագրության հարցեր, տնտեսություն, կրոն և հավատալիքներ), հավաքել և համակարգել ենք

[8] Tarhan 1983: 295ff.; Zimansky 1985; Тирацян, Кошеленко 1985: 24 сл.

հրապարակի վրա եղած գրեթե ամբողջ նյութը, հանդես եկել բազմաթիվ՝ շուրջ 50-ի հասնող գիտական հրապարակումներով:

Աշխատանքը բաղկացած է երկու գրքից: Առաջին գիրքը ներառում է հիմնական տեքստը և գրականության ցանկը: Վերջինս ընդգրկում է հայերեն, ռուսերեն, թուրքերեն և եվրոպական հիմնական լեզուներով գրված ընդհանուր բնույթի կամ մասնավոր հարցերի վերաբորղ բազմաբնույթ ուսումնասիրություններ՝ 2302 անուն: Աշխատանքում քննարկված հարցերը մասնավորեցնելու, լրացնելու կամ տեսանելի դարձնելու նպատակով աշխատությանը կցել ենք երկրորդ գիրքը: Այն հավելված է և ընդգրկում է 28 աղյուսակ, 52 հեղինակային քարտեզ և 600-ից ավելի նկարներ, գծանկարներ և գրչագրեր:

Ներկայացված ուսումնասիրությունը նախ և առաջ ուղղված է գիտական աշխարհին և չունի զուտ ճանաչողական բնույթ: Նրանում լուսաբանվում են Բիայնիլի-Ուրարտուի պատմության երբևէ չքննարկված, վիճահարույց կամ թերի ուսումնասիրված խնդիրները, որոնք վերարծարծվում են նորովի: Աշխատանքը հետազոտողների ուշադրությունն է հրավիրում հատկապես այդ խնդիրների վրա և կոչ է անում քննարկելու դրանք: Աշխատանքն առաջադրում է հարցադրումներ, որոնք կարիք ունեն պատասխանների և կարող են հետագա ուսումնասիրությունների նպատակ հանդիսանալ տարբեր դիսցիպլիններ ներկայացնող հետազոտողների համար: Բացի դա, ուսումնասիրությունը կարող է օգնել հասկանալու համար բիայնական պետության բնույթը և առանձնահատկությունները, նրա քաղաքական, ռազմական և կրոնական համակարգի, հասարակության կառուցվածքի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ կապված տարաբնույթ հարցեր: Ի վերջո՝ աշխատանքի նպատակն է նպաստել հայագիտության մեջ խիստ քաղաքականացված այս բնագավառը իր բնականոն հուն՝ գիտական հարթակ տեղափոխելուն: Այն կարող է բավարարել հիմնախնդրով մտահոգ ընթերցող խավերի հետաքրքրությունը:

Շարադրանքի ընթացքում ծանոթագրությունները տրվել են տողատակում՝ նշելով հղվող աշխատանքի հեղինակին, հրատարակության թիվը և էջը: Նույն հեղինակի՝ մեկ տարում լույս տեսած մի քանի աշխատանքները տարբերակված են հրատարակության թվականին կից նշված լատինական այբուբենի տառերով:

Ծանոթագրության մեջ էջերը չեն նշվում այն դեպքերում, երբ հղվում է աշխատանքն ամբողջությամբ: Օգտագործված գրականության և համառոտագրությունների ցանկերը զետեղված են աշխատանքի շարադրանքի վերջում: Լատինական այբուբենում բացակայող հնչյունների համար աշխատանքում

օգտագործել ենք հետևյալ տառադարձումները՝ Š, š – շ; Ṭ, ṭ – տ; Ḫ, ḫ – խ; Ł, ł – ղ, Ṣ, ṣ – ծ, –, ˜ – ջ, ø, ï – վ:

Բուն շարադրանքին անցնելուց առաջ մենք ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել մասնագիտական հարցերում խորհրդատվությամբ և գրականության տրամադրմամբ մեզ աջակցած հայ և օտարազգի բոլոր գիտնականներին:

# ԳԼՈՒԽ Ա
# ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

## 1.1. Իշխանության կառուցվածքը Բիայնիլի-Ուրարտուում

### 1.1.1. Արքայական իշխանությունը Բիայնիլի-Ուրարտուում, արքայական իշխանության գաղափարախոսությունը. «խալդյան պետություն»

Մասնագիտական գրականության մեջ վաղուց է դիտարկվել ուրարտական տերության աստվածապետական բնույթը և քննարկվել դրա տարբեր դրսևորումներ: Այն, որ Որւարտուն աստվածապետություն էր, կասկած չի հարուցում[9]: Սակայն, ուրարտական աստվածապետությունն ուներ իր առանձնահատկությունները, որոնցից գլխավորը Խալդի աստծո՝ իբրև թագավորության առաջնորդ և գործող արքա ընկալումն էր[10]: Ձորօրինակ՝ Թոփրաքքալեից գտնված աղյուսակներից մեկում Խալդին անվանվում է «արքա Խալդի» (LUGAL-*ni* $^{d}$*ḫaldini*)[11]: Այդ նույն Թոփրաքքալեից հայտնաբերվել են գահավորակի մասեր (նկ. Ա-1-2)[12]: Ամենայն հավանականությամբ՝ տեղի «սուսի»-տաճարում դրվել է գահ[13], որին բազմելու էր Խալդին: Ընդ որում, կարելի է ենթադրել, որ գահին չի եղել Խալդիին պատկերող որևէ արձան կամ նրան մարմնավորող որևէ իր/խորհրդանիշ[14]: Հավանաբար, գահը «դատարկ» էր, քանի որ

[9] Belck, Lehmann-Haupt 1894: 354; նույնի՝ 1931: 461; Ղափանցյան 1940, էջ 113; Adontz 1946: 224; Götze 1957: 195; Tarhan 1983: 298ff.; Հմայակյան 1990, էջ 73; Zimansky 1998: 71; Taffet, 1999: 372; Գրեկյան 2004ա, էջ 315-338:

[10] Տե՛ս Գրեկյան 2004ա, էջ 317-321; Grekyan 2006: 158: Հմմտ. Հմայակյան 1990, էջ 33-34; Zimansky 1998: 86f.

[11] КУКН, 412 лиц. стор.$_4$; CTU IV, CT Tk-1$_4$. Թոփրաքքալեի տեքստի այս հատվածի մեկնաբանության համար տե՛ս և Հմմտ. Дьяконов 1963a: 38 сл., 80 сл.; Çilingiroğlu, Salvini 2001b: 17; Գրեկյան 2004ա, էջ 335-336, ծնթ. 65:

[12] Barnett 1950: 3ff., Fig. 22. Վերակազմության համար տե՛ս նաև Seidl 1994: 67ff., Abb. 10; նույնի՝ 2004: 61ff., Abb. 25. Այն, որ տվյալ գահավորակը ծագում է հենց Թոփրաքքալեից, կասկած չի հարուցում Տե՛ս Սրուանձտեանց 1874, էջ 132-133: Այս առումով մասնագիտական գրականության մեջ տեղ գտած կասկածները հիմնավոր չեն: Հմմտ. Barnett 1950: 27; Çilingiroğlu 2008a: 343f.

[13] Հմմտ. Çilingiroğlu 2008a: 341ff.

[14] Տե՛ս նաև Taffet, Yakar 1998: 147. Հմմտ. Rehm 2004: 182ff., Abb. 13.

Խալդին, ամենայն հավանականությամբ, ընկալվում էր իբրև գահին բազմած անտեսանելի աստված, աստված-արքա (նկ. Ա-3/1-2):

Խալդիից էին իրենց իշխանությունը ստանում երկրի առաջնորդները, որոնց նա օժտում էր օրինական իշխանությամբ[15]: Ուրարտական տեքստերում դա արտահայտվում է *iu* $^{d}$*ẖaldiše … *LUGÁL-*tuḫi aruni* «*Երբ Խալդին … թագավորություն տվեց*»[16] և կամ *ušẖanume ïešelaše muṣi aluka ïeši''auli* PAP/*burgalani* KUR.KUR$^{MEŠ}$/$^{KUR}$*šurili* «*պարգևեց-ինձ իշխանություն*(՞) *ճշմարիտ նա-ով*(՞) *իշխում է*(՞) *ողջ տերությանը*» բանաձևերով[17]: Հետաքրքիր է, որ նույն միտքն է արտահայտում նաև «Լուվրի աղյուսակ»-ը[18]՝ Խալդիին վերաբերող անդրադարձներից մեկում. [.....*š*]*a ul-la-ni-uš-šu* $^{giš}$PA *ú a-gu-ú la in-na-áš-šu-ú si-mat re-e-*[*ú-ti*] «*առանց նրա (համաձայնության) չեն կարող կրվել գայիսոնն ու խույրը՝ խորհրդանիշները հովվության…*»[19]: Ուրարտական արձանագրություններից մի քանիսում հիշվում են իշխանության խորհրդանիշները, ինչպես, օրինակ, գայիսոնը, որը տալիս էր Խալդին՝ տերության առաջնորդներին օժտելով «ճշմարիտ իշխանությամբ» (*alušme šuini esini muṣi ïešelaše ïešigi/ïešiu''ali*)[20]: Ուրարտական արքաների կրած խույրն ու արքայական գայիսոնը ($^{GIŠ}$PA LUGAL-*ti/ḫaṭṭu šarruti*) հիշատակում է նաև «Լուվրի աղյուսակ»-ը. «*…Խալդիի՝ նրա աստծու առջև թագադրում են նրան տերունական խույրով և տալիս են կրելու արքայական գայիսոնը Ուրարտու (երկրի), իսկ նրա մարդիկ բացականչում են անունը նրա…*»[21]:

Խալդիի կամքով և նրա ձեռքից տերության առաջնորդները ստանում էին իշխանությունը սոսկ իբրև տեղապահներ, այսինքն՝ կոչվելով ի ծառայություն[22]: Պատահական չէ, որ նրանք կրում էին LUGÁL/MAN (=BUZÚR) տիտղոսը, որը նշանակում էր «գաղտնիություն, պահպանություն» (աքք. *puzru*[23]) և միայն հետագայում է նույնացվել «արքա» գաղափարին, որպես «պահապան» (*puzru* = MAN)[24]: Դա երևում է

[15] Oppenheim 1960: 140f.
[16] Տե՛ս, օրինակ, КУКН, 174 A3$_{17-19}$; CTU I, A 8-1 Ro$_{17-19}$.
[17] Գրեկյան 2004ա, էջ 231: Հմմտ. Khachikyan 2006: 143ff.
[18] Աղբյուրի հրատարակությունների համար տե՛ս Thureau-Dangin 1912; Mayer 1983: 68sqq.; նույնի՝ 2013a: 96sqq.
[19] Mayer 1983: 102f. (Z. 338).
[20] Թարգմանության համար տե՛ս Գրեկյան 2004բ, էջ 231: Հմմտ. КУКН, 406$_{17-30}$, 407$_{13-23}$; CTU I, A 11-1 Ro$_{13-23}$, A 11-2 Ro$_{17-30}$; Khachikyan 2006: 143ff.
[21] Mayer 1983: 102f. (Z. 342).
[22] Գրեկյան 2004ա, էջ 319, 329: Հմմտ. Taffet, Yakar, 1998: 144f.
[23] CAD 12, P, 2005: 558 (*puzru* 2).
[24] Borger 1978: 179 (No. 471), 348. Մանրամասն տե՛ս Дьяконов 1988a: 66, прим. 37; Գրեկյան 2004ա, էջ 334, ծնթ. 47:

նաև Ռուսա Սարդուրորդու[25] Մովանայի երկլեզու վիմագրից, որի ասորեստանյան տեքստում ասվում է.

[x] *ana-ku* DÙG.GA *šá ana* UGU-*ia i*-[*re*?-*ú*] ..... [x] x *ki-li-ú na-ṣir e-q*[*u-ti*] *Ես հիանալի հովիվն եմ ինձ վստահվածի, ..... պահապանը ժառանգության*(՞)[26]:

Ուրարտական այլ տեքստերում երբևէ չհանդիպող այս միտքը բավական խոսուն է՝ մատնանշելով «հովվի» գործառույթը՝ նա տերության փաստացի առաջնորդն էր, նրան էր աստված-արքան վստահել պետությունը, որի համար և պատասխանատու էր: Ուրարտական արձանագրություններում իրենք՝ արքաները, հանդես են գալիս նաև որպես «ժողովուրդների ճշմարիտ հովիվ» (ուրարտ. $^{LÚ}$*sie muṣi* $^{LÚ}$ÙKU$^{MEŠ}$[27], ասսուր. *rē'û*/$^{LÚ}$SIPA *kēnu ša nišē*/ÙKU$^{MEŠ}$[28]), այդպես են նրանց տեսել ասորեստանցիները ևս ([..] *mal-ku* SIPA UN.MEŠ $^{KUR}$*U*[*r-ar-ṭi*...])[29]:

Ուրարտական արքաների կրած «ժողովուրդների ճշմարիտ հովիվ» կոչումը հանդիպում է ասորեստանյան արքաների մոտ սկսած դեռևս միջինասորեստանյան շրջանից[30] և ունի ընդհանուր հին առաջավորասիական հետնախորք[31]: «Ճշմարիտ հովվի», «բարի հովվի» և ընդհանրապես՝ «հովիվ-արքա»-ի այս ընկալումը, մյուս կողմից, ամենևին խորթ չէր խուրրիական աշխարհին և ասսուրա-ուրարտական օրինակները կարող էին ժառանգվել Ք.ա. 3-րդ – 2-րդ հազ-ների հյուսիս-սիրիական կամ հյուսիս-միջագետքյան ավանդույթներից[32]:

Կարելի է սահմանափակվել նշելով, որ ուրարտական արքայական տիտղոսաշարերի LUGÁL գաղափարագիրն ըստ էության նշանակել է ոչ թե «արքա»՝ իր դասական իմաստով, այլ «տեղապահ», «քրմապետ-արքա» կամ պարզապես «հովվապետ»: Ըստ այդմ, երբ խոսում ենք ուրարտական արքայի մասին, նկատի ենք ունենում Խալդի աստծո տեղապահներին, իսկ նրանց իշխանությունն ընդունում իբրև տեղապահություն:

---

[25] Ուրարտական արքաների ժամանակագրությունը դեռևս վիճահարույց է: Ըստ այդմ, մենք ձեռնպահ ենք մնում նրանց կառավարման թվականները և հաջորդականությունը նշելուց: Տե՛ս և հմմտ. Աղ. 1–3:
[26] CTU I, A 10-3 Vo$_{35'}$ (versione assira).
[27] КУКН, 387 урарт. текст$_{25}$, 406 обор. стор.$_{31}$; CTU I, A 10-3 l. d. $_{11\text{-}14'}$, A 10-5 Ro$_{25'}$, A 11-2 Vo$_{31}$, A 14-2 Vo$_{32}$.
[28] КУКН, 387 ассир. текст$_{24}$; CTU I, A 10-3 Vo$_{53'}$, 10-5 Vo$_{23'}$.
[29] Mayer 1983: 102f. (Z. 339).
[30] Grayson 1987: 184 (A.0.77.1: 107), 233 (A.0.78.1: 3), etc.
[31] CAD 14, R, 1999: 302 (*re'u* 2/b). Տե՛ս նաև Cachia 1997: 30f.; Westenholz 2004: 281ff.
[32] Տես, օրինակ, Ուրկեշի և Նավարի խուրրի արքա Աթալ-շենի կոչումներից մեկը՝ *ri'um epšum* կամ *ri alim* [URU] *epšum* (Hallo 1980: 194f.)

Բիայնական նվաճողները տարածում էին Խալդիի պաշտամունքը՝ որպես իրենց աստծո, և Խալդիի իշխանությունը՝ որպես իրենց արքայի[33]: Ուրարտուում տարածված էր խալդյան կոթողների ($^{(NA_4)}$*pulusi*) կանգնեցումը, հատկապես՝ նվաճված տարածքներում, դրանով մատնանշելով բիայնացիների թե քաղաքական իշխանության և թե, միգուցե, Խալդիի պաշտամունքի հաստատումը տվյալ տարածքում[34]: Սրանով ուրարտական պետությունը տարբերվում էր մնացյալ հինարևելյան երկրներից[35], բացառությամբ՝ Ասորեստանի[36]: Այստեղ ևս տեսնում ենք նույն երևույթը. ասորեստանյան տերության տարբեր հատվածներում կանգնեցվել են կոթողներ, որոնք ըստ երևույթին ներկայացրել են Աշշուրին և նրա քաղաքական իշխանությունը տվյալ տարածքում[37]: Նույն երևույթը տեսնում ենք նաև Աշշուրի «էմբլեմի» դեպքում, որը կարող էր լինել ինչ-որ զենք[38], օրինակ՝ երկաթե նետ[39]:

Ընդհանրապես, Խալդին համադրելի է ասորեստանցիների գերագույն աստված Աշշուրին[40], ով ևս ընկալվում էր որպես արքա, պետության առաջնորդ[41]: Բացի դա, Խալդի և Աշշուր աստվածները չափազանց մոտ են իրենց կերպարով, և մենք չենք բացառում, որ նրանք երկուսն էլ ծագում են մեկ ընդհանուր նախատիպից[42]:

Ի դեպ, Աշշուրի պետության դարաշրջանում նույնպես քաղաքի և ոչ մի տիրակալ հանդես չի եկել որպես արքա՝ կրելով միայն «Աշշուր աստծո *išši'akkū*» (իմա՝ «տեղապահ») տիտղոսը (շում. énsi): Այստեղ տեղին է հիշել այդ շրջանի Աշշուրի առաջնորդներից Ծիլուլուի արձանագրությունը, ուր ասվում է. «*Աշշուրը արքա է, Ծիլուլուն՝ Աշշուրի տեղապահը*» (*a-šùr*.KI LUGAL *ṣi-lu-lu* ÉNSI *a-šùr*.KI)[43]: Միայն միջին ասորեստանյան դարաշրջանում Աշշուրի առաջնորդները սկսեցին կրել «արքա» տիտղոսը՝ «տեղապահ»-ին զուգահեռ, սկսած Աշշուր-ուբալլիտ I-ից (Ք.ա. 1363-1328 թթ.)[44]:

Ամփոփելով ասվածը կարելի է եզրակացնել, որ ուրարտական տերության իշխանության կառուցվածքն էապես տարբերվում էր իր դարաշրջանի զուգահեռներից:

---

[33] Տե՛ս նաև Ղափանցյան 1940,էջ 113; Дьяконов 1983: 190 сл.; Salvini 1987: 405; նույնի՝ 1989: 86; Taffet, Yakar 1998: 133f., 144ff.
[34] Grekyan 2006: 152f.
[35] Дьяконов 1983: 190.
[36] Տե՛ս և հմմտ. Holloway 2002: 200.
[37] Տե՛ս և հմմտ. Dalley 1986: 99f.
[38] Տես, օրինակ, Tadmor 1994: 166f. (Summ. 7: 44a); Tadmor, Yamada 2011, No. 47: 44a.
[39] Holloway 2001: 161f.
[40] Աշշուր աստծո պաշտամունքի մասին մանրամասն տե՛ս van Driel 1969; Lambert 1983: 82ff.; Parpola 2000: 165ff.; Holloway 2002; Vera Chamaza 2002; Baştürk 2012: 80ff.; ևն:
[41] Holloway 2002: xv ff.
[42] Grekyan 2015: 388ff.
[43] Grayson 1987: 13 (A.0.27.1 1-4).
[44] Grayson 1987: 3f.

Այն շատ ավելի արխաիկ էր, ուներ բազում առանձնահատկություններ: Դրանցից առաջինը Խալդի աստծո ընկալումն էր որպես արքայի, մինչդեռ՝ երկրի փաստացի առաջնորդների իշխանությունը դիտվում էր իբրև ծառայություն: Այդ սկզբունքով էր կազմակերված նաև պետության կառավարումը:

### 1.1.2. Արքայի գործառույթները

#### 1.1.2.1. **Քրմական գործառույթ**

Արքան Խալդի աստծո տեղապահն էր երկրում, նրա «ստվեր»-ը (*ṣíl-lí* $^{d}$*ẖal-di-e*)[45], ինչը նշանակում է, որ արքայի գործառույթները չէին տարբերվելու այն ամենից, որոնց կրողն էր Խալդին: Ըստ էության արքան էր, ով Խալդիի անունից իրականացնում էր աստված-արքայի «երկրային» գործառույթները, այդ թվում՝ քրմական, ռազմական, վարչական և դատական:

Ուրարտուում արքաներն են հաստատել բոլոր այն պաշտամունքային արձանագրությունները (ուրարտ. *ṭelzuše*[46]), որոնցում նշվում է աստվածություններին մատուցվելիք պաշտոնի կարգը՝ զոհաբերվող կենդանիների հաստատագրված թվաքանակներով, մի գործառույթ, որը, թվում է, պետք է իրականացներ գլխավոր քուրմը[47]: Նման տեքստեր ունեն ուրարտական բոլոր արքաները՝ սկսած Իշպուինի Սարդուրորդուց մինչև Ռուսա Արգիշթորդի[48]:

Կողբանցից գտնված և Մենուայի միանձնյա իշխանության շրջանում կազմված տեքստում ուղղակի նշվում է Մենուային տրված Խալդիի հրամանի մասին. $^{d}$*ẖal-di-i ku-r*[*u-ni*] $^{d}$DINGIR$^{MEŠ}$*-na ku-ru-ni ma-ni-ni iš-ti-n*[*i* $^{m}$*me*]*-nu-u-a ar-di-še* «*Խալդի* (*աստծո*) *կողմից*$^{(?)}$*, աստվածների կողմից*$^{(?)}$ *թող լինի Մենուային հրաման*»[49]: Նման հրամանների շարքին կարելի է դասել նաև ուրարտական մի քանի արձանագրությունների այն հատվածները, որոնցում նշվում է «Խալդյան դռան» կողմից տրված հրամանի մասին: Ահա դրանցից մեկը. $^{m}$*ru-sa-a-še a-li* $^{d}$*ẖal-di-na-ni* KÁ *bi-di-ni gu-ni ar-di-še gu-ni ar-qa-ú-še ma-nu-li* ..... MÁŠ.TUR $^{d}$*ẖal-di-e ni-ip-si-du-li-ni* GUD 2 UDU $^{d}$*ẖal-di-e* TAG… «*Ռուսան ասում է.- Խալդյան դռան կողմից իրապես*$^{(?)}$ *հրաման, իրապես*$^{(?)}$ *arqauše* (*երբ*) *լինի* …… (*մեկ*)

---

[45] Belli *et al*. 2009: 91ff.

[46] Salvini 2002a: 137 (հղված գրականությամբ). Հմմտ. Diakonoff 1989: 91.

[47] Հմայակյան 1990, էջ 73:

[48] Տե՛ս ԿՈՒՀ, 36 (Իշպուինի); 38, 38b, 39a (Իշպուինի և Մենուա); 82, 122-124 (Մենուա); 193 (Արգիշթի Մենուայորդի); 270 (Սարդուրի Արգիշթորդի); 392 (Ռուսա Սարդուրորդի), 407 (Արգիշթի Ռուսայորդի); 415$^{(?)}$, 418$^{(?)}$, 421, 424, 425$^{(?)}$, 427$^{(?)}$; Salvini 2002a: 115ff. (Ռուսա Էրիմենայորդի); Salvini 2001a: 253ff. (Ռուսա Արգիշթորդի); ևն:

[49] ԿՈՒՀ, 115$_{5-6}$; CTU I, A 5-60$_{5-6}$.

*ուլ Խալդիին թող-ողջակիզվի,* (*մեկ*) *ցուլ* (*և*) *երկու ոչխար Խալդի* (*աստծուն*) *թող-մատուցվի…*[50]:

Ուրարտական տեքստերից մեկում՝ Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության մեջ, նշվում է Խալդի աստծո ([d]*ẖal-di-ka-i*), Վարուբանի աստվածուհու ([d]*'a-ru-ba-i-ni-ka-i*) և «խալդյան դարպասներ»-ի ([d]*ẖal-di-*(*i*)*-na-a* KÁ-*ka-i*) առջև իրականացված ծեսերի մասին[51]: Կարելի է կարծել, որ դրանք գուշակային բնույթի ծեսեր էին[52]:

Եթե ճիշտ է Իգոր Դյակոնովի կողմից [LÚ]A.NIN-*li*` «թագուհու որդի» (իմա՝ «արքայազն»[53]) ընթերցվող գաղափարագրերի կոմբինացիայի համար մեր կողմից առաջարկված [LÚ]A.ZUx-*li*` «*քուրմ, գուշակ*» ընթերցումը, ապա կհաստատվի մեր ենթադրությունը արքաների՝ որպես գլխավոր քուրմ կամ պատգամախոս հանդես գալու մասին[54]: Ի վերջո պատահականություն չի կարող լինել այն փաստը, որ այս տիտղոսը/պաշտոնը կրել են միմիայն արքայական անուններ ունեցող անձինք:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Ուրարտուում արքան հանդես է եկել որպես գերագույն քուրմ և, թերևս, որպես գլխավոր պատգամախոս՝ հանդիսանալով թիվ մեկ միջնորդը Խալդի աստծո և իր հպատակների միջև:

1.1.2.2. **Վարչական գործառույթ**

Ուրարտուում որպես վարչարար հանդես էր գալիս Խալդին, ում հրամաններն իրականացնում էր տեղապահ-արքան[55]: Նա էր վճռում թե ներքին կյանքին, և թե արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերը, անձամբ էր ընդունում պատվիրակություններին, ինչի մասին վկայում են ասորեստանյան զեկուցագրերը, անձամբ էր հետևում դիվանագիտական գրագրությանը, հանձնարարականներ տալիս իր հանձնակատարներին: Ասորեստանյան մի քանի տեքստերում հիշատակվում են ուրարտական արքայի հանձնակատարները, այդ թվում՝ «մեծավորներ» կամ «դեսպաններ» (LÚ.MAḪ.MEŠ / LÚ.*ṣīprāni ša* KUR.URI-*aja*)[56] և «պատվիրակներ / սուրհանդակներ» (LÚ.A-KIN / LÚ.*mār*(A/DUMU) *šipri*)[57]: Ասորեստանցիների ձեռք բերած տեղեկատվության մեջ հնարավոր է հանդիպել նաև ուրարտական արքաների

[50] Salvini 2001a: 254, 259f. (Ay-susi, Section $I_{8-9}$); CTU I, A 12-1 $I_{8-9}$.
[51] КУКН, $424_{15, 17-18}$; Salvini 2001a: 257ff. (Ay-susi, $II_{9-10}$; Ay-susi, $III_{1-3}$); CTU I, A 12-1 $II_{9-10}$, $III_{1-3}$.
[52] Գրեկյան 2004ա, էջ 326 հաջորդիվ (հղված գրականությամբ); Grekyan 2005: 46f.
[53] Дьяконов 1963a: 62.
[54] Grekyan 2005: 42ff. Ի դեպ, այդ մասին է խոսում նաև ուրարտական արքաների հանդես գալը որպես «հովիվ»: Հմմտ. նաև Cachia 1997: 31.
[55] Grekyan 2005: 45f.
[56] Parpola 1987, No. 10: 14; Lanfranchi, Parpola 1990, Nos. 35: 33; 169: 5.
[57] Lanfranchi, Parpola 1990, Nos. 3: 15, 19; 31: 13′, 18′; 35 Rev: 13′, 18′, 22′-23′; Saggs 2001: 136ff. (ND 2673: rev. 4′-5′).

խոսքերին՝ ուղղված այս կամ այն հասցեատիրոջը (Շուբրիայի արքային, կումմեցիներին ևն)[58]:

Թեև ասորեստանյան տեքստերը վկայում են Ուրարտուում արքայի խորհրդականների ինստիտուտի գոյության մասին ([lú]*maliku*[59], LÚ.GALGA[60]), սակայն, դժվար է ասել, թե ինչ դերակատարություն են նրանք ունեցել արքայի կողմից որոշումներն ընդունելիս: Մասնագիտական գրականության մեջ նշվում է նաև արքային կից գործող «խորհրդաժողով»-ի կամ «ծերակույտ»-ի գոյության մասին[61]: Իրականում, որևէ տվյալ այդ մասին առկա չէ: Թոփրաքքալեի տեքստերից մեկում հիշատակվող և 2411 հոգուց կազմված խումբ մատնանշող տերմինի ընթերցումը որպես «հավաք, ժողով» ([LÚ]UKKIN-*še*[(?)])[62] ճիշտ չէ (տե՛ս ստորև): Ավելին, ուրարտական տերության խիստ կենտրոնացված բնույթը չէր ենթադրում այնպիսի ինստիտուտների գոյություն, որոնց թեկուզև ձևականորեն կարող էր հաշվետու լինել արքան (ինչպես, օրինակ, «Աշշուրի խորհուրդ»-ն էր Ասորեստանում[63] կամ «բոլոր երկրների հավաք»-ը Բաբելոնիայում[64]): Բացի դա, ինչպես նկատել է դեռևս Նիկողայոս Ադոնցը[65], Սարգոն II-ը գերի ընկած ուրարտացիների թվում նշելով «մեծամեծներ»-ի, «խորհրդականներ»-ի, «մարզպետներ»-ի մասին, չի հիշատակում «ավագներ/ծերեր»-ի: Մինչդեռ, «ավագներ» (ասսուր. *šību*, «ծերունի» բառից) հիշատակվում են Սարգոնին դիմավորելու եկած մանայական արքա Ուլլուսունուի շքախմբում՝ արքայի «մեծամեծներ»-ի, «խորհրդականներ»-ի, «փոխարքաներ»-ի հետ միասին[66]:

Հայտնի է նաև, որ արքան էր նշանակում և ազատում պաշտոնյաներին, թեև չի բացառվում, որ մինչև Ռուսա Սարդուրորդի բիայնական վերնախավը ներկայացնող պաշտոնյաները կառավարած լինեն նաև ժառանգաբար:

1.1.2.3. **Դատական գործառույթ**

Ուրարտուումգլխավոր դատավորը արքան էր: Ասորեստանյան աղբյուրներից հայտնի է մեկ դեպք՝ արքայի կողմից արքունիք կանչված (կամ ձերբակալված) և

[58] Lanfranchi, Parpola 1990, Nos. 35 Rev: 13′-17′; 95: 3-10.
[59] Mayer 1983: 80f. (Z. 137).
[60] Հմմտ. Շամաշ աստծուն ուղղված և ուրարտական արքայի գործողությունների մասին հարցում պարունակող տեքստը (Starr 1990, No. 18: 6), թեև պետք է նկատել, որ դա կարող էր կրել զուտ բանաձևային բնույթ:
[61] Հմայակյան 2012, էջ 34:
[62] CTU IV, CT Tk-1$_{11}$. Հմմտ. Дьяконов 1963a: 39; КУКН, 412 лиц. стор $_{11}$.
[63] CAD 12, P, 2005: 487f. (*puḫru* A 1b). Տե՛ս նաև Jacobsen 1943: 161f.; Oppenheim 1964: 111f.; Дьяконов и др. 1988: 26 сл.
[64] Radner 2011a: 371.
[65] Մանրամասն տե՛ս Adontz 1946: 218.
[66] Mayer 1983: 70f. (Z. 33).

խռովության մեջ մեղադրվող բարձրաստիճան զինվորականներին հարցաքննելու մասին, ընդ որում, նրանք անմեղ էին ճանաչվել և ազատ արձակվել[67]: Հնարավոր է՝ արքայի առջև տեղի ունեցած հարցաքննության դրվագ է պահպանվել ուրարտական նամակներից մեկում[68]:

Ուրարտուում վկայված չէ արդարադատության որևէ մարմնի գործունեություն, ինչպես օրինակ, «արքայական դատավորներ»-ն էին Բաբելոնիայում (բաբել. *dayyānu ša šarri*)[69], որոնք հետագայում հիմք հանդիսացան աքեմենյան «(արքայական) դատավորներ»-ի ինստիտուտի համար (հին պարսկ. **dātabara*): Հայտնի չէ նաև, թե արդյո՞ք տեղերում են իրականացվել դատավարությունները, թե՞ յուրաքանչյուր հարց իր լուծումն է գտել մայրաքաղաքում: Համենայն դեպս, արքունի գրագրություններից դատելով՝ դատական հարցերը լուծվել են արքայի կողմից. մի քանի սեպագիր աղյուսակ վերաբերում է նման խնդիրների և դրանց առնչությամբ արքայի արձակած վճիռներին: Կարելի է կարծել, որ արքային դիմում էին միայն ուրարտական վերնախավի ներկայացուցիչները՝ որպես գերագույն դատավորի (ինչը տեսնում ենք նաև Ասորեստանում[70]), ընդ որում, դիմումները կարող էին կապված լինել անգամ կախյալների հետ[71], իսկ ենթակա բնակչության ներհամայնքային վեճերը, ամենայն հավանականությամբ, լուծվել են համայնքի առաջնորդների կողմից կամ, համենայն դեպս, տվյալ համայնքի ներսում:

Որոշ հետազոտողների կարծիքով՝ ուրարտական տեքստերից մի քանիսը կարող են հանդիսանալ իրավական բնույթի վավերագրեր: Դրանցից առաջինը Սարդուրի Արգիշթորդու թողած Քարաթաշի արձանագրությունն է[72], ուր խոսվում է Սարդուրիի հիմնած խաղողի այգին վնասելու կամ այգուց գողություն (՞) կատարելու դեպքում սահմանված փոխհատուցման (՞) մասին (*aluše ḫaulie uni urulie* SUM-*nini I uiduše supa*)[73]: Այս հատվածի ընթերցումը, սակայն, միանշանակ չէ[74], և հարկ է առայժմ ձեռնպահ մնալ արված եզրակացությունները ներկբա ընդունելուց:

### 1.1.2.4. **Ռազմական գործառույթ**

[67] Lanfranchi, Parpola 1990, No. 91: 13-20.
[68] КУКН, 520; CTU IV, CT Kb-7. Թարգմանության համար տե՛ս և հմմտ. Дьяконов 1963a: 36.
[69] Wunsch 2000: 557sqq.; Holtz 2009: 254ff.
[70] Radner 2003b: 886f.
[71] Հմմտ., օրինակ, КУКН, 433, 446; CTU IV, CT Kb-3, Kb-4 տեքստերը: Թարգմանության համար տե՛ս և հմմտ. նաև Дьяконов 1963a: 33 сл.
[72] КУКН, 273; CTU I, A 9-11.
[73] Կարագյոզյան 2002, էջ 350-351:
[74] Հմմտ. CTU I, A 9-11$_9$.

Ուրարտուի արքաների գլխավոր գործառույթը Խալդի աստծո երկրի բարգավաճումն ապահովելն էր՝ ընդլայնելով նրա տարածքը և շենացնելով երկիրը: Ինչպես Խալդիին, ով ակնհայտորեն հանդես էր գալիս նաև որպես ռազմիկ և ռազմի աստվածություն[75], բիայնական արքաներին նույնպես տեսնում ենք արշավանքներում՝ ռազմական գործողությունների կիզակետում, ինչը վկայում են թե ուրարտական, և թե ասորեստանյան աղբյուրները: Անկասկած է, որ նա էր Խալդիի «կողքին» առաջնորդում բանակը և այն փաստը, որ Սարդուրի Արգիշթորդու ճամբարում ասորեստանցիների ձեռքն են ընկնում թե արքայի, և թե Խալդիի մարտակառքերը, այդ մասին է խոսում: Ուրարտական մի քանի տեքստերում կան ուղղակի վկայություններ ուրարտական արքաների՝ արշավանքները գլխավորելու մասին: Օրինակ, արշավանքին Իշպուինիի և Մենուայի մասնակցելու մասին է ասվում ուրարտական տեքստերից մեկում ([*u*]*š-ta-a-li* $^{m}$*lu-šá-i-ni-e-d*[*i* $^{m}$*i*]*š-pu-ú-i-ni-ni* $^{md}$*sar-du-ri-e-*[*ḫi* $^{m}$]*me-nu-ú-a-ni* $^{m}$*iš-pu-ú-i-ni-ḫ*[*í*])[76], «Սարդուրյան տարեգրության» մեջ նշվում է «եզակի գնդով» Սարդուրի Արգիշթորդու ձեռնարկած արշավանքի մասին[77]: Արքայի գլխավորությամբ իրականացված արշավանքների դեպքում ուրարտական տեքստերն այդ մասին հայտնում են *ištedi*[78] *uštadi/ulḫudi* ձևակերպումներով (հմմտ., օրինակ, *ištedi uštadi* $^{KUR}$*kumaḫaḫalinie* $^{KUR}$*ebaniedi* «*ես (անձամբ)/ինքս արշավեցի դեպի կումախացիների երկիր*», *ištedi ulḫudi* $^{URU}$*miliṭiani qabqarulini* «*ես (անձամբ)/ինքս շարժվեցի-դեպի Միլիտիա* (*քաղաքը*) *պաշարելու*»)[79]: Ասորեստանյան աղբյուրները ևս վկայում են ռազմական գործողություններին ուրարտական արքաների անմիջական մասնակցության մասին, ինչը տեսնում ենք, օրինակ, Արգիշթի Մենուայորդու, Սարդուրի Արգիշթորդու և Ռուսա Սարդուրորդու դեպքում: Հատկապես մեծ թիվ են կազմում Ռուսա Սարդուրորդուն վերաբերող վկայությունները[80], որոնց թվում առանձնանում է Ուաուշի ճակատամարտը[81]:

1.1.2.5. **Տնտեսական գործառույթ**

Դատելով առկա տվյալներից՝ Խալդին սկզբնապես եղել է իգական[82] կամ միգուցե՝ երկսեռ աստվածություն[83], և անգամ ուրարտական դարաշրջանում

[75] Меликишвили 1954: 366 сл.; Հմայակյան 1990, էջ 34-34: Տե՛ս նաև Salvini 1995a: 185; Baştürk 2012: 111ff.; և այլք:
[76] КУКН, $32_{9-11}$, $33_{9-12}$; CTU I, A 3-5 $Ro_{9-11}$, A 3-5 $Vo_{9-12}$.
[77] КУКН, $241F_{16}$; CTU I, A 9-3 $VI_{16}$. Հատվածի ընթերցման և մեկնաբանության համար տե՛ս և հմմտ. Girbal 2005: 167.
[78] Ուրարտ. *ištedi* բառի համար որպես դերանվան տե՛ս Girbal 2001: 139ff.
[79] Տես, համապատասխանաբար, КУКН, $241E_{x+48-49}$, 242 $BI_{26-27}$; CTU I, A 9-3 $IV_{48'-49'}$, A 9-1 $Vo_{26-27}$.
[80] Parpola 1987, Nos. 29-32; Lanfranchi, Parpola 1990, Nos. 86-88, 90, 92, 114, 147, 164-165, 173-174.
[81] Մանրամասն տե՛ս Grekyan 2010a: 83 ff. (նշված գրականությամբ):
[82] Çilingiroğlu 2004a: 259; նույնի՝ 2007a: 266f.
[83] Հմայակյան 1990, էջ 36; Baştürk 2012: 122f.

շարունակում էր ընկալվել որպես ընդգծված պտղաբերության աստվածություն[84] կամ անգամ հացահատիկի աստված[85]: Ուլերի (այծերի) զոհաբերությունը Խալդիին, որը հավանաբար արվում էր մարտ ամսին՝ կապվելով գարնանամուտի տոնի հետ[86], բնության վերածնության հետ միասին Ուրարտուում նախանշում էր երկրագործական սեզոնի սկիզբը[87]:

Ըստ այդմ, Ուրարտուում արքայի գործառույթներից կամ պարտավորություններից մեկը, որպես Խալդի աստծո երկրի տեղապահ, դա երկրի բարգավաճումն ապահովելն էր, ինչպես ասորեստանյան արքան, ով ըստ էության դիտվում էր Աշշուր աստծո սեփականության կառավարիչը[88]: Վերջինս իր բազում տիտղոսների կողքին կրում էր նաև *ikkāru*/LÚ.ENGAR՝ «երկրագործ, մշակող» տիտղոսը[89]: Նույն ընկալումն էր իշխում խեթական աշխարհում: Այստեղ տերության գերագույն՝ Ամպրոպի աստվածն ընկալվում էր իբրև Երկնքի և Երկրի, խեթական թագավորության և այն բնակեցնողների տերը, ով ընտրում էր լաբարնասին (իմա՝ արքային) իբրև իրեն տեղապահ (*maniyaḫḫatallaš*) և Խաթթի երկիրը տալիս էր նրան՝ կառավարելու[90]:

Հնարավոր է՝ բիայնական արքան նույնպես հանդես է եկել նման կոչումով: Նկատի ունենք ուրարտական արձանագրություններում մի քանի անգամ վկայված $^{(LÚ)}$i*pšuše*/$^{LÚ}$UTÚL-*še* տերմինը[91]: Այն, համատեքստից դատելով, կարող էր նշանակել «կառավարում» կամ «կառավարիչ» և, ըստ այդմ, վերաբերեր «ողջ կալվածք»-ը կառավարելուն (*ušḫanume* $^{d}$*ḫaldiše … eïa* $^{LÚ}$*ipšuše šuini=i urini=i*/GAN-*i*)[92]: Միգուցե, այդ տերմինն ուներ այն բովանդակությունը, ինչ ասորեստանյան արքայի կրած և վերը հիշատակված LÚ.ENGAR տիտղոսը՝ «երկրագործ», առավել ևս, GAN շումերագիրը նշանակում էր հենց «հող/դաշտ»:

Հնարավոր է, որ հաջորդ արքային՝ որպես ապագա կառավարչի է ուղղված խոսքը նաև ուրարտական մի քանի տեքստերում, ուր ասվում է. LUGAL *ali isi ikukani edini* GAR-*ïe manuli mei …*. «*արքան, ով հետագայում կառավարիչ կլինի, թող …*»[93]:

---

[84] Հմայակյան 2005, էջ 168 հաջորդիվ; Лосева 1962: 304 сл.; Çilingiroğlu 2007a: 265ff.
[85] Grekyan 2015: 388ff.
[86] Пиотровский 1959a: 222.
[87] Հմայակյան 1990, էջ 35, 77-78:
[88] Liverani 2011: 260f.
[89] Radner 2000: 235ff.; Westenholz 2004: 293.
[90] Güterbock 1954: 16.
[91] КУКН, 242 AII+AI$_{29}$, 406 лиц. стор.$_{33}$, 407 лиц. стор.$_{25}$, 414$_{9}$; CTU I, A 9-1 Ro$_{29}$, A 11-1 Ro$_{24}$, A 11-2 Ro$_{33}$, A 12-1 VII$_{6}$, A 12-4 II$_{13'}$, A 14-1 Ro$_{14}$, A 14-2 Ro$_{13}$.
[92] Գրեկյան 2002, էջ 233-234: Այս հատվածի թարգմանության համար տե՛ս նաև Salvini 2002a: 129f.
[93] КУКН, 273$_{4-5}$, 275$_{2-4}$. Հմմտ. CTU I, A 9-11$_{4-5}$, A 9-13$_{2-4}$.

Այստեղ օգտագործված GAR գաղափարագիրը նշանակում է «կառավարիչ» (GAR = *šaknu*)[94]:

Ուրարտական տեքստերի մի մեծ խումբ վերաբերում են խոպան կամ ամայացած հողերի յուրացմանն ու հիդրոշինարարությանը, յուրացված հողերում նոր ամրոցներ, պալատներ և քաղաքներ կառուցելուն: Թերևս, նման գործունեության արդյունք էր Մենուայի տեքստերից մեկում նշված եզակի միտքը. «*հողը մշակված էր, գարու դաշտերը … խաղողի այգին՝ գցված, երկիրը/բնակչությունը երջանիկ էր Մենուայի իշխանության տակ*» (GÁN$^{\text{MEŠ ŠAM}}$ŠE *gunuie iniei* $^{\text{GIŠ}}$*ulde naḫibe* $^{\text{KUR}}$*šurili piṣadiali* $^{\text{m}}$*menuainiei irnutuḫie*)[95]:

### 1.1.3. Արքայական տիտղոսաշարը

Հայկական լեռնաշխարհից հայտնի առաջին արքայական տիտղոսաշարը, որը մեզ է հասել սեպագրով, հայտնի է Լութիպրիի որդի Սարդուրիի թողած ասսուրերեն արձանագրություններից[96]: Դրանցում Սարդուրիի կրած տիտղոսաշարը գրեթե կրկնում էր Աշշուր-նածիր-ապալ II-ի տիտղոսները[97]:

Իշպուինիի տիտղոսաշարն էապես տարբերվում էր Սարդուրիի տիտղոսաշարից: Ուրարտական սեպագրով արձանագրված առաջին օրինակները ծագում են Իշպուինիի հիմնադրած Ստորին Անձավի ուրարտական ամրոցից՝ երեք վիմագիր արձանագրություններ, որոնցում Իշպուինին հանդես է գալիս LUGÁL *DAN.NU* LUGÁL *al-su-i-ni* LUGÁL $^{\text{KUR}}$*šú-ú-ra-ú-e* LUGÁL $^{\text{KUR}}$*bi-”a-i-na-ú-e* տիտղոսներով[98]: Վերին Անձավի ամրոցից հայտնաբերված Իշպուինիի ասսուրերեն արձանագրություններում արքայական տիտղոսաշարը հիմնականում կրկնում էր ուրարտականին. (*ṣíl-lí* $^{\text{d}}$*ḫal-di-e* $^{\text{m}}$*iš-pu-ú-i-ni apil*(A) $^{\text{md}}$*sar$_5$-dūru šárru*(MAN) *rabū*$^{ú}$(GAL-*u*) *šárru*(MAN) *dan-nu šar$_4$ kiššati*(ŠÚ) *šar$_4$* $^{\text{KUR}}$*na-i-ri*…)[99]:

Իշպուինիի կրած այս տիտղոսաշարն իր կառուցվածքով հիշեցնում էր ասորեստանյան զուգահեռները՝ LUGÁL *DAN.NU*՝ «հզոր արքա», LUGÁL *alsuini*՝ «մեծ արքա», LUGÁL $^{\text{KUR}}$*bia”naïe*՝ «Բիայնիլիի արքա», LUGÁL $^{\text{KUR}}$*šuraïe*՝ «Տիեզերքի արքա»: Իշպուինիի թողած ասսուրերեն տեքստերում «Բիայնիլիի արքա» տիտղոսի փոխարեն նշվել է LUGAL/šar$_4$ $^{\text{māt}}$*nairi*՝ «Նաիրիի արքա» տիտղոսը: Ռուսա Սարդուրորդու ասսուրերեն տեքստերում Բիայնիլիի փոխարեն արդեն արձանագրվել է $^{\text{KUR}}$TILLA

[94] Borger 1978: 205 (No. 597).
[95] CTU I, A 5-11A$_{27-28}$-B$_{27-30}$. Թարգմանությունը տրվում է ըստ Khachikyan 2011: 99 ուսումնասիրության:
[96] КУКН, 1-6; CTU I, A 1A-1F.
[97] Տե՛ս նաև Wilhelm 1986: 103f.: Այս կապակցությամբ տե՛ս և հմմտ. նաև Salvini 1995a: 36. Ուրարտական արքաների տիտղոսաշարի քննարկման համար տե՛ս նաև Roaf 2012a: 194ff.
[98] КУКН, Послесловие с. 531; CTU I, A 2-6 A-C.
[99] Belli *et al.* 2009: 91ff.; CTU IV, B 2-7 A-E.

($^{KUR}$URI) գաղափարագիրը, այն է՝ «Ուրարտու»: Այդ նույն գաղափարագիրն է օգտագործվում նաև «Աքքադ»-ի համար[100]:

Ինչ վերաբերում է LUGÁL $^{KUR}$*šuraïe*՝ «Տիեզերքի արքա» տիտղոսին, ապա նման թարգմանության համար հիմք է վերցվել Իշպուինիի ասսուրերեն տեքստերում որպես համազոր օգտագործված LUGÁL ŠÚ / *šar₄ kiššati*՝ «Տիեզերքի արքա» տիտղոսը: Դատելով հետագա ուրարտական տեքստերում $^{KUR}$*šurili* և KUR.KUR$^{MEŠ}$՝ «երկրներ» գաղափարների զուգահեռ կիրառումներից[101], երևում է, որ որպես «տիեզերք» ընկալվել է ողջ բիայնական տերությունը կամ այլ կերպ ասած՝ *Pax Urartu*-ն: Ռուսա Արգիշթորդու թողած Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության մեջ բարօրություն է մաղթվում ինչպես բիայնական արքային, այնպես էլ Բիայնիլի երկրին, բիայնական տերությանը ($^{d}$*ḫaldi bidini* $^{d}$*ḫaldinani* KÁ *bidini manini ulguše* …… $^{m}$*rusa* $^{m}$*argišteḫinie* $^{KUR}$*šuraïe* $^{KUR}$*bia”naïe*)[102]:

Իշպուինին միակն էր, ով հանդես է գալիս որպես «Խալդի (աստծո) ստվեր»: Այս բանաձևի զուգահեռը կարելի է համարել ասորեստանյան արքա Աշշուրբանիպալի թագադրության հիմնում հնչած հետևյալ տողերը. $^{d}$*aš-šur* LUGAL $^{d}$*aš-šur-ma* LUGAL $^{m}$*aš-šur*-DÙ-[A……] $^{d}$*aš-šur* «*Աշշուրը արքա է, Աշշուրը արքա է, Աշշուրբանիպալը՝* [*ներկայացուցիչն է*] *Աշշուրի*»[103]:

Հետաքրքրքիր է նաև, որ Իշպուինին միակն էր, ով սկբնապես չէր կրում բիայնական արքաների ավանդական՝ «Տուշպա քաղաքի կառավարիչ» տիտղոսը (*alusi* $^{URU}$*ṭušpae* URU/*patari*): Իշպուինիի տիտղոսաշարին հավելված այս նոր տիտղոսին առաջին անգամ հանդիպում ենք Աշոտակերտ/Յեշիլալըչի բիայնական և Քելիշինի երկլեզու արձանագրություններում՝ կազմված իր և Մենուայի անունից[104]: Իշպուինիի և Մենուայի «համատեղ գահակալության» շրջանից սկսած այն դարձավ արքայական տիտղոսաշարի անբաժան մասը՝ ընդհուպ մինչև տերության անկում:

Բիայնական հաջորդ արքան՝ Մենուան, շարունակեց կրել այդ տիտղոսաշարը՝ դրան հավելելով «արքայից արքա» տիտղոսը (LUGÁL *eri/elaïe/*LUGÁL LUGÁL$^{MEŠ}$-*ïe*), որն իր թողած արձանագրություններում առայժմ հանդիպում է միայն մեկ անգամ[105]: Մենուայի հաջորդ Արգիշթի Մենուայորդին շարունակեց կրել ավանդական տիտղո-

[100] Borger 1978: 148 (No. 359).

[101] Հմմտ., օրինակ, Սարդուրի Արգիշթորդու ԿՈՒՀ, $245_{9\text{-}10}$ – CTU I, A 9-$8_{9\text{-}10}$ և ԿՈՒՀ, $274_{9\text{-}11}$ – CTU I, A 9-$10_{9\text{-}11}$ տեքստերը: Այստեղ նկատենք, որ տիտղոսաշարում քննարկվող տարբերակներից մեկի առկայության դեպքում մյուսը բացակայում է:

[102] CTU I, A 12-1 $I_{6\text{-}8}$.

[103] Livingstone 1989: 26 (No. 11: 15); նույնի՝ 1997: 166.

[104] ԿՈՒՀ, 30 Урарт. Текст$_{4,\ 19}$, Ассир. текст$_{3,\ 16}$, 36 Текст $I_3$, Текст $II_3$; CTU I, A 3-$2_{3,\ 8}$, A 3-11 $Ro_{4,\ 19}$, $Vo_{3,\ 16}$.

[105] ԿՈՒՀ, $90_6$; CTU I, A 5-$51_6$.

սաշարը (չի հանդիպում միայն LUGÁL $^{KUR}$*šuraïe* տիտղոսը)։ Սարդուրի Արգիշթորդու իշխանության տարիներին տեղ գտած բիայնական տերության աննախադեպ վերելքն ու տարածքային հսկայական աճն իր արտացոլումը գտավ արքայի տիտղոսներում։ Սարդուրին ամենից հաճախն է հանդես գալիս արքայական տիտղոսաշարի ողջ շքեղությամբ՝ միաժամանակ կրելով թե՛ «արքայից արքա» (LUGÁL LUGÁL$^{MEŠ}$-*ïe*), և թե՛ «երկրների արքա» LUGÁL KUR.KUR$^{MEŠ}$(-*ïe*) տիտղոսները[106] (մանրամասն տե՛ս Աղ. 4)։

Ռուսա Սարդուրորդու թողած տեքստերն առանձնանում են արքայի տիտղոսաշարում կատարված կտրուկ փոփոխություններով։ Ռուսայից մեզ հասած և ոչ մի արձանագրության մեջ նա չի կրում իր նախորդների հարուստ տիտղոսաշարը, ինչը կարող է բացատրվել Թիգլաթպալասար III-ի արշավանքից հետո թագավորության ունեցած տարածքային կորուստներով և Ռուսայի իշխանության առաջին տարիներին երկրում իշխող ճգնաժամով։ Ավելին՝ ընդամենը միայն մեկ անգամ է նա հանդես գալիս «հզոր արքա» տիտղոսով, թեև այստեղ, միգուցե, պետք է նկատի ունենալ նաև նրանից մեզ հասած վիմագիր արձանագրությունների սակավությունը (Աղ. 5)։

Մյուս կողմից նկատելի է, որ արձանագրությունների մեծ մասում Ռուսան ընդհանրապես որևէ տիտղոս չի կրում։ Փոխարենը, նրա արձանագրություններում առաջնային է դառնում տիտղոսաշարի համարժեք $^{m}$*rusani* $^{md}$*sarduriḫi* LUGÁL DAN.NU *aluše* $^{KUR}$*bia''nili nulduali* և *šusina* MU$^{MEŠ}$ $^{KUR}$*bia''nili nulduli*՝ «*Ռուսա Սարդուրորդի, հզոր արքա, ով տիրում է Բիայնիլի* (*երկրին*)» և «*իմ տարիների ընթացքում ես տիրում էի Բիայնիլի* (*երկրին*)» բանաձևերը[107], որոնք հանդիպում են նաև այս արքայի թողած ասսուրա-ուրարտերեն երկլեզու տեքստերում (*ina libbi* MU$^{MEŠ}$-*ia* $^{KUR}$TILLA *irti'i/piš* KUR.KÚR *usīq*)[108]։ Բիայնիլիին իշխելու փաստի նման շեշտադրումը կարող էր կապված լինել Ռուսա Սարդուրորդու գահակալության հետ կապված ինչ-ինչ խնդիրներով։

Ռուսա Սարդուրորդուց հետո արքայական տիտղոսաշարը հիմնականում կրկնում էր նախկին կառուցվածքը, սակայն, այս անգամ, փոփոխություններ են նկատվում արձանագրությունների ներածական բանաձևերում, ուր հստակ ընդգծվում է Խալդիի կողմից արքաներին իշխանություն տալու դրույթը։ Մասնավորապես, և՛ Ռուսա Սարդուրորդու, և՛ Ռուսա Էրիմենայորդու, և՛ Արգիշթի Ռուսայորդու արձանագրություններում հատուկ նշվում է արքայի՝ Խալդի աստծո ծառան լինելու դրույթը. *ištedi* (*$^{m}$rusani* $^{md}$*sarduriḫi*/*$^{m}$rusani* $^{m}$*erimenaḫi*/*$^{m}$argištiše* $^{m}$*rusaḫiniše*) $^{d}$*ḫaldiei*

[106] КУКН, 245$_{10}$, 250$_{8}$, 269$_{10}$; CTU I, A 9-7$_{8}$, A 9-8$_{10}$, A 9-15$_{10}$, A 9-21$_{10}$.
[107] КУКН, 387 урарт. текст$_{28-30}$, 388$_{7-8}$; CTU I, A 10-1$_{8}$, A 10-3 l. d.$_{23'-27'}$, A 10-4 l. d.$_{2'-5'}$, A 10-5 Ro$_{28'-30'}$. Թարգմանության համար տե՛ս նաև Խաչիկյան 2005, էջ 478-480; Khachikyan 2006: 147ff.
[108] КУКН, 387 ассир. текст$_{27-28}$; CTU I, A 10-3 Vo$_{56'-57'}$, A 10-5 Vo$_{26'-27'}$,

$^{LÚ}$ERUM(-*še*)՝ ուրարտական տեքստերում[109], և *anaku* $^{LÚ}$ERUM *ša* $^{d}$*ḫaldia*՝ ասորեստանյան[110]: Բացի դա, նրանց տեքստերում ի հայտ են գալիս Խալդիի կողմից հիշյալ արքաներին «ճշմարիտ իշխանության» (*ïešelaše muṣi*) և իշխանության խորհրդանիշերի՝ գահի ($^{GIŠ}$GU.ZA), գայիսոնի (GIŠ LUGÁL-*tuḫini*) և թագի$^{(?)}$ (*ṭubarduni*) փոխանցման դրույթները[111]: Եվ վերջապես նրանց տեքստերում է միայն, որ արքաներն անվանվում են «ժողովուրդների ճշմարիտ հովիվ» ($^{LÚ}$*sie muṣi* $^{LÚ}$UN$^{MEŠ}$-*ïe*)[112]:

Նման բանաձևերի հայտնվելը ուրարտական՝ բացառապես ուշ շրջանի տեքստերում չի կարող հարցեր չառաջադրել: Տպավորություն ենք ստանում, որ թե Ռուսա Էրիմենայորդին, և թե Արգիշթի Ռուսայորդին խնդիր են ունեցել նման բանաձևերով ամրապնդելու իրենց իշխանության օրինականությունը, ինչի համար արձանագրություններում շեշտվում էր Խալդի աստծո կամքը: Չի բացառվում, որ Ռուսա Էրիմենայորդին հանդիսանա նոր հարստության հիմնադիրը, ում էլ հաջորդել է որդին՝ Արգիշթին:

Արքայական վերջին տիտղոսաշարերը հայտնի են Ռուսա Արգիշթորդու տեքստերից: Դրանցում Ռուսան, ինչպես ժամանակին Սարդուրի Արգիշթորդին, հանդես է գալիս ավանդական տիտղոսաշարով՝ Սարդուրիից հետո մի վերջին անգամ կրելով նաև LUGÁL $^{KUR}$*šuraïe*/LUGÁL KUR.KUR$^{MEŠ}$-*aïe* և LUGÁL LUGÁL$^{MEŠ}$-*ïe* տիտղոսները[113]:

Այսպիսով, բիայնական արքաների կրած տիտղոսաշարը իր կաղապարայնությամբ հանդերձ ճշգրտորեն վերարտադրում էր պետության անցած պատմական ճանապարհը՝ վերելքի և վայրէջքի փուլերով[114]:

### 1.1.4. Արքայական իշխանության ժառանգորդությունը

Արքայական իշխանությունն Ուրարտուում, անկասկած, ժառանգական էր: Ուրարտական հանդիսավոր արձանագրություններում հաճախ կարելի է հանդիպել արքաների կողմից «հայրական տեղը (արքայական)» բարձրանալու ($^{LÚ}$AD-*ni*/$^{LÚ}$*aṭeini esi* (LUGÁL-*tuḫini*) *naḫabi/e*)[115] կամ «արքայական գահին» բարձրանալու մասին ազդարարող բանաձևերի (*naḫadi* LUGÁL-*tuḫinina* $^{GIŠ}$GU.ZA-*a*)[116]:

---

[109] КУКН, 387 урарт. текст$_{24-25}$, 406$_{14-16}$, 407$_{12-13}$; CTU I, A 10-3 Ro$_{5-6}$, A 10-3 l. d.$_{11′-12′}$, A 10-5 Ro$_{24′-25′}$, A 11-1 Ro$_{11-12}$, A 11-2 Ro$_{14-16}$, A 14-1 Ro$_{2-3}$, A 14-2 Ro$_{2-3}$, A 14-2 Vo$_{31}$.

[110] КУКН, 387 ассир. текст$_{23-24}$; CTU I, A 10-3 Vo$_{52′-53′}$, A 10-4 Vo$_{6′}$, A 10-5 Vo$_{22′-23′}$.

[111] КУКН, 406$_{21-26}$, 407$_{16-20}$; CTU I, A 11-1 Ro$_{15-19}$, A 11-2 Ro$_{21-26}$, A 14-1 Ro$_{7-10}$, A 14-2 Ro$_{6-9}$. Թարգմանության համար տե՛ս Խաչիկյան 2005, էջ 473-478; Khachikyan 2006: 143ff.

[112] КУКН, 387 урарт. текст$_{23}$, 406 обор. стор.$_{32}$; CTU I, A 10-3 l. d.$_{13′}$, A 10-5 Ro$_{25′}$, 11-2 Vo$_{31}$, A 14-2 Vo$_{32}$.

[113] CTU I, A 12-1 VII$_{8-10}$, A 12-7$_{13-16}$.

[114] Հմմտ. Çifci 2015a: 130ff.

[115] КУКН, 148$_{7}$, 149$_{5}$, 174 A3$_{19}$, 247$_{2}$; CTU I, A 5-11A$_{7}$, A 8-1 Ro$_{19}$, A 5-11B$_{5}$, A 9-17$_{2}$.

[116] КУКН, 406 лиц. стор.$_{24-25}$, 407 лиц. стор.$_{19}$, 247$_{2}$; CTU I, A 11-1 Ro$_{18}$, A 11-2 Ro$_{24-25}$, A 14-1 Ro$_{9}$, A 14-2 Ro$_{8-9}$.

Ենթադրվում է, որ սկզբնական շրջանում Ուրարտուում գործել է «զույգ արքաներ»-ի ինստիտուտը[117]: Նման կարծիքի համար հիմք է հանդիսանում ուրարտական վաղ շրջանի հանդիսավոր արձանագրություններում Իշպուինիի և Մենուայի[118], Իշպուինիի, Մենուայի և Ինուշպուայի[119] և վերջապես՝ Մենուայի և Ինուշպուայի[120] անունների համատեղ հիշատակումները: Հնարավոր է՝ Մենուայի և Արգիշթիի անուններն են արձանագրված նաև բրոնզե մի սաղավարտի վրա նույնպես[121]:

Հիմնվելով հատկապես Իշպուինիի և Մենուայի անունների հաճախակի համատեղ հիշատակվելուց՝ առաջարկվել է այդ արքաների «համատեղ գահակալության» մասին տեսակետը, ինչը լայնորեն իշխում է նաև արդի գրականության մեջ[122]: Սակայն, վաղուց է նկատվել, որ նման արձանագրություններում Իշպուինին հանդես է գալիս արքայական տիտղոսաշարով, իսկ Մենուան՝ միայն որպես Իշխուինիի որդի[123], և որ իշխանությունը, անկասկած, պատկանել է Իշպուինիին[124]: Իհարկե, կան նաև արձանագրություններ, որոնցում երկու անուններից և ոչ մեկը հանդես չի գալիս տիտղոսաշարով, և կարծես հավասարության «նշան» է դրվել երկուսի միջև (հմմտ., օրինակ, *manu* $^{m}$*išpuini kurunu* $^{m}$*menua kuruni* բանաձևը)[125]: Մյուս կողմից, ինչպես ենթադրվում է, արքայի՝ ըստ երևույթին ավագ որդու անվան հիշատակությունը պարզապես նպատակ է հետապնդել ապահովելու գահի անցումը գահաժառանգին[126]: Կարելի է կարծել, որ գահը ժառանգվել է ըստ ավագության:

Արգիշթի Մենուայորդուց սկսած նման երևույթ այլևս չի նկատվում: Դա կարող էր պայմանավորված լինել գահաժառանգման ավանդույթների ձևավորմամբ, ինչպես նաև՝ արքայական իշխանության կայունությամբ:

Ինչ վերաբերում է Կարմիր բլուրից հայտնաբերված և տերության գոյության ուշ շրջանին վերաբերող աղյուսակներից մեկի կնքադրոշմում միաժամանակ երկու

---

[117] Sevin 1979 [1981]: 1ff.
[118] *E.g.* КУКН, 38; CTU I, A 3-1.
[119] КУКН, 20; CTU I, A 4-1.
[120] КУКН, 120; CTU I, A 5-79.
[121] Տե՛ս Born, Seidl 1995: 90ff. (Abb. 94, 95, Taf. XII); Seidl 2004: 26 (No. C.17.): Սաղավարտը կրում է $^{m}$*Me-nu-a-i ú-ri-iš-ḫé* և $^{[m]}$*Ar-gi-*⌜*iš*⌝*-ti-i ú-ri-*⌜*iš*⌝*-ḫé* արձանագրությունը: Այստեղ, սակայն, չի բացառվում Մենուային պատկանող առարկայի կրկնակի արձանագրման հնարավորությունը արդեն Արգիշթի Մենուայորդու իշխանության շրջանում: Տե՛ս Hmayakyan, Grekyan 2006: 256: Տե՛ս նաև Seidl 2004: 48.
[122] Пиотровский 1944: 65; նույնի՝ 1959a: 61; Salvini 1995a: 48sq; Հմայակյան 2012, էջ 33:
[123] Տե՛ս, օրինակ, КУКН, 30 урарт. текст$_{2\text{-}5}$; CTU I, A 3-11 Ro$_{2\text{-}5}$. Ընդ որում, արձանագրության մեկ այլ հատվածում (տող 17-19) Իշպուինիի անվան մոտ բացակայում է Մենուա անունն անգամ:
[124] Տե՛ս Меликишвили 1954: 203 сл.
[125] КУКН, 35 лиц. стор. Текст I$_{13}$, Текст II$_{43}$, обор. стор. Текст III$_{14\text{-}15}$; CTU I, A 3-9 Ro$_{13, 43}$, Vo$_{14\text{-}15}$. Թարգմանության համար տե՛ս և հմմտ. նաև Wilhelm 1976: 110 sqq.; CTU I: 139f.
[126] Меликишвили 1954: 203.

արքայական անունների առկայությանը՝ առանց հայրանվանակերտ *-ḫi* վերջավորության (m*ru-sa* md*sar*$_5$*-du-ri …r*]*i*)[127], ապա ակնհայտ է, որ այստեղ մենք գործ ունենք արքայական անունների կրճատ գրելաձևերի հետ[128]: Ենթադրությունը, թե այդտեղ արձանագրված են երկու համատեղ կառավարող արքաների անուններ[129], մեր խորին համոզմամբ՝ չունի բավարար հիմնավորում:

### 1.1.5. Արքունիքը և պաշտոնեությունը

#### 1.1.5.1. Մայրաքաղաքը

Տուշպան, որպես Ուրարտուի «արքայական քաղաք», հիշատակվում է թե ասորեստանյան (URU*ṭurušpa āl šarrūti*(URU LUGAL-*ti*))[130], և թե ուրարտական տեքստերում (URU LUGAL *ṭu.*<*špa*>)[131]: Միայն Տուշպան է, որ կրում էր այդ կոչումը, հակառակ այն փաստի, որ «արքայական քաղաք»-ները կարող էին լինել մի քանիսը: Տուշպայի բացառիկ նշանակության մասին է վկայում նաև բիայնական արքաների տիտղոսաշարը:

Նույն կերպ և ասորեստանյան աղբյուրներն են շեշտում Տուշպայի՝ մայրաքաղաքային նշանակությունը: Մասնավորապես, Ք.ա. 735 թ-ին Թիգլաթպալասար III-ի կողմից դեպի Ուրարտու ձեռնարկված արշավանքի ժամանակ ասորեստանյան տեքստերը նշում են Սարդուրիին Տուշպայում՝ «իր քաղաք»-ում «փակելու» մասին (m*sarduri* KUR.*urarṭaya ina* URU.*ṭurušpa* URU-*šu esiršuma*)[132]: Ք.ա. 735 թ-ին Թիգլաթպալասար III-ի կողմից Տուշպայի «արտաքին քաղաք»-ի հնարավոր ավերումն անգամ[133] պատճառ չդարձավ Տուշպան լքելու կամ առնվազն արքունիքն այստեղից Ռուսախինիլի Կիլբանիկայի (Թոփրաքքալե) տեղափոխելու համար, ինչպես կարծում էին նախկինում[134]: Վերջինս, լինելով վարչական խոշոր կենտրոն, որի վարչական, ծառայող և սպասարկող անձնակազմն անցնում էր 5500 հոգուց[135], զուրկ էր ամրություններից և համեմատության եզրեր չկան Վանի միջնաբերդի հետ, ինչն անտրամաբանական է դարձնում այդ կենտրոնի դիտարկումն իբրև տերության նոր

---

[127] Տե՛ս և հմմտ. նաև КУКН, 428, прим. 12; CTU IV, CT Kb-1 Sig. 20-6$_1$.
[128] Տե՛ս CTU IV, Sig. 20-5 (a-c).
[129] Дьяконов 1963a: 25, 42; Հմայակյան 1998, էջ 11-12/13-14:
[130] Mayer 1983: 82f. (Z. 150).
[131] CTU IV, CB Ay-2.
[132] Tadmor 1994: 120ff. (Summ. 2: 23-24a), 132ff. (Summ 3: 21′b-25′a), 180ff. (Summ. 9: 3′-4′); Tadmor, Yamada 2011, Nos. 39: 23-24a., 41: 21′b-25′a, 49: 3′-4′.
[133] Հմմտ. Saggs 2001: 136ff. (ND 2673: obv. 4-6) տեքստը:
[134] Lehmann-Haupt 1931: 461, 855; Пиотровский 1944: 96; նույնի՝ 1959a: 92; Burney 1957: 40; Burney, Land 1971: 162; Арутюнян 1970: 280; Kleiss 1988c: 190; Belli 2004a: 285. Տե՛ս և հմմտ. նաև Salvini 2005c: 145ff.
[135] КУКН, 412; CTU IV, CT Tk-1.

մայրաքաղաք անգամ այն դեպքում, երբ վերջինիս հիմնադրումը դեռ վերագրվում էր Ռուսա Սարդուրորդուն[136]:

Այդ նույնը կարելի է ասել Ռուսախինիլի Էիդուրուկայիի (Այանց) քաղաքի համար: Ռուսա Արգիշթորդու այս փառահեղ ամրոցն աչքի էր ընկնում իր հանդիսավորությամբ, անկասկած, այն արքայական նստավայր էր[137], սակայն, այնուամենայնիվ, նրան չի կարելի կոչել մայրաքաղաք: Դրա լավագույն վկայությունն այն է, որ հենց Այանցից գտնված բուլլաներից մեկի արձանագրության վրա է հիշատակվում Տուշպան որպես արքայական քաղաք՝ URU LUGAL *ṭu.<špa>* (տե՛ս վերը):

Ակնհայտ է, որ Տուշպան պահպանեց իր նշանակությունը որպես տերության մայրաքաղաք Թիգլաթպալասարի արշավանքից հետո ևս՝ Ռուսա Սարդուրորդու, Ռուսա Էրիմենայորդու, Արգիշթի Ռուսայորդու և Ռուսա Արգիշթորդու օրոք: Դա պնդելու համար ասորեստանյան սեպագիր աղբյուրները բավարար հիմք են տալիս: Մասնավորապես, սարգոնյան շրջանի տեքստերը բազմիցս են վկայում, որ արքան գտնվել է Տուրուշպայում[138], զոհեր է մատուցել Տուրուշպայում[139] կամ «դուրս է եկել Տուրուշպայից»[140] և այլն[141]: Այստեղ կարելի է հավելել նաև Ռուսա Էրիմենայորդու արձանագրություններից մեկը, ուր, ոչ այնքան հասկանալի կոնտեքստում, հիշատակվում են թե Տուշպան, և թե Ռուսախինիլին[142]:

Այսպիսով, կասկածից վեր է, որ Տուշպան էր բիայնական մեծ արքաների նստավայրը և որ երկիրի կառավարումն իրականացվում էր այստեղից[143]: Այդ առումով հետաքրքիր է, որ Խարդա քաղաքում ծառայություն իրականացնող ուրարտական մարզպետին ուղղված և Տուշպայից ստացված հրամանի մասին է նշվում ասորեստանյան տեքստերից մեկում[144]: Ճիշտ է՝ Տուշպայից գտնված արքունի գրագրությանը վերաբերող նմուշները իրենց քանակով անհամեմատելի են Ք.ա. 7-րդ դ-ի ուրարտական կենտրոններից հայտնաբերված նյութի հետ, սակայն, այս հանգամանքը միանգամայն բացատրելի է Տուշպայի միջնաբերդում հետագա դարերի ընթացքում և հատկապես միջնադարում իրականացված խոշորածավալ վերակառուցումներով և ուրարտական մշակութային հորիզոնի գրեթե ոչնչացմամբ:

---

[136] Հմմտ. Burney, Lang 1971: 162; Zimansky 1985: 79; Wartke 1990: 5; Salvini 1995a: 7, 104; etc.
[137] Çilingiroğlu, Salvini 2012: 100.
[138] Lanfranchi, Parpola 1990, Nos. 85, 91-92, 113 (Ռուսա Սարդուրորդի).
[139] Lanfranchi, Parpola 1990, No. 84 (Ռուսա Սարդուրորդի).
[140] Lanfranchi, Parpola 1990, Nos. 86-87 (Ռուսա Սարդուրորդի).
[141] Տե՛ս նաև Lanfranchi, Parpola 1990, Nos. 3, 85, 93, 145, 178-179; Saggs 2001: 136ff. (ND 2673) տեքստերը ևն:
[142] CTU I, A 14-2 l. d.
[143] Այս հարցի քննարկման համար տե՛ս և հմմտ. նաև Zimansky 1985: 78ff.
[144] Lanfranchi, Parpola 1990, No. 3: 9-15.

Պատահական չէ, որ արքունի գրագրության եզակի օրնակները գտնվել են միջնաբերդից դուրս՝ Տուշպայի «ուրարտական վերնախավի թաղամաս»-ից: Այստեղից գտնված առայժմ եզակի սեպագիր աղյուսակը թեև խիստ վնասված է, սակայն, ամենայն հավանականությամբ, ներկայացրել է արքայական հրաման[145]: Բացի դա, հայտնաբերվել է նաև $^{LÚ}$A.ZU$_x$-*li* պաշտոնյայի կնքադրոշմով բուլլա[146], իսկ այդ կնիքը սովորաբար դրոշմվում էր արքայի հրամանագրերի/նամակների վրա:

Փոխարենը՝ Տուշպան և նրա շրջակայքն առանձնանում են արքայական հանդիսավոր արձանագրությունների խիստ մեծ թվով և խտությամբ (տե՛ս Քարտեզ 2-12ա-բ): Տուշպայից են հայտնի նաև ուրարտական երկու ամենաընդարձակ տեքստերը՝ Արգիշթի Մենուայորդու և Սարդուրի Արգիշթորդու տարեգրությունները: Տուշպայից ոչ հեռու է կերտվել «Միերի դուռ»-ը: Ուրարտական քաղաքների շարքում Տուշպայի բնակչությունը վայելում էր որոշակի ինքնավարություն (տե՛ս ստորև): Տուշպայի նշանակությունը բիայնական արքայատոհմի համար արժեվորվում էր նաև այն հանգամանքով, որ այս քաղաքն էր ծառայում որպես վերջին հանգրվան արքաների համար[147]:

Տերության տարբեր հատվածներում կառուցված ռազմավարչական կենտրոնները կարող էին իրականացմել «մայրաքաղաքային» գործառույթներ հատկապես ձմեռային ամիսներին, երբ կապը Տուշպայի հետ, չի բացառվում, միշտ չէ, որ հնարավոր էր լինում պահպանել: Սակայն, այստեղ պետք է նկատի ունենալ բացառապես տնտեսական գործառույթները և խոսել տերության ապակենտրոնացված կամ «սեգմենտային» կառուցվածքի մասին, կարծում ենք, ճիշտ չէ (տե՛ս նաև վերը՝ 1.1.2.2.-1.1.2.3)[148]:

### 1.1.5.2. **Արքունիքը**

Երկրի ղեկավարությունն իրականացվում էր արքունիքից՝ մեծաթիվ պաշտոնեության միջոցով: Ուրարտական պետության վաղ շրջանի համար՝ ընդհուպ մինչև Ռուսա Սարդուրորդի, արքունիքի և պաշտոնեության մասին մենք տվյալներ ըստ էության չունենք: Վկայված են մարզպետներ, որոնք փաստացի հանդիսանում էին փոխարքաներ և օժտված էին լայն իրավունքներով: Նրանք էին, թերևս, վերահսկում մարզի ողջ ներքին կյանքն ու միաժամանակ իրականացնում այդ տարածքի պաշտպանությունը: Ուրարտական մարզպետի պաշտոնի կարևորության մասին է խոսում նաև այն փաստը, որ ուրարտական հանդիսավոր արձանագրությունները երկրի բարձրաստիճան պաշտոնյաներից միայն մարզպետներին են հիշատակում

[145] Işık 2014: 176.
[146] Konyar 2011c: 152, Fig. 7; նույնի՝ 2012: 416f.; CTU IV, Sig. 20-5 (c), Işık 2014: 174f.
[147] Ամփոփ տե՛ս Հմայակյան, Գրեկյան 2010, էջ 3-19; Hmayakyan, Grekyan 2010: 50ff.
[148] Տե՛ս և հմմտ. նաև Zimansky 1985: 3, 77ff., 96; Հմմտ. Bernbeck 2003-2004b: 273sqq.

անվանապես (Թիթիա, Զայա)[149]: Թեև ուղղակի տվյալներ չկան[150], բայց այս շրջանում նրանց կարելի է համադրել ասորեստանյան փոխարքաների հետ, որոնք, Ք.ա. 8-րդ դ-ի առաջին կեսին, Ասորեստանի առժամանակյա անկումով պայմանավորած, դարձել էին փաստացի անկախ[151]: Նման ենթադրության կարելի է հանգել միայն անուղղակի տվյալներից ելնելով: Մասնավորապես, ենթադրվում է, որ Ք.ա. 735 թ-ին Ասորեստանից կրած պարտությունը ուրարտական արքունիքում առաջ է բերել դժգոհություն, և թեև հայտնի չէ, թե ինչպես է արտահայտվել այդ դժգոհությունը, սակայն, հավանական է, որ դրա արդյունքում է գահ բարձրացել նոր արքան՝ Ռուսա Սարդուրորդին, չի բացառվում՝ զենքի ուժի շնորհիվ[152]:

Հայտնի է, որ Ռուսա Սարդուրորդին գահ բարձրացավ մի շրջանում, երբ երկիրն ապրում էր ծանր օրեր. խիստ ընկել էր արքայական իշխանության հեղինակությունը, տերության ակնհայտ թուլության վկայություններից էր այն, որ իշխանություններն անգամ չէին կարողանում դիմագրավել դեպի երկրի խորքերը ձեռնարկված էթիունցիների ավարառուական արշավանքները[153]: Ուրարտուում ծավալված իրադարձություններին ակնդետ հետևող ասորեստանցիների կարծիքով պահը հարմար էր Ուրարտուին ջախջախիչ հարված հասցնելու համար. Թիգլաթպալասարի(՞) կառավարման վերջին տարիներին գրված մի նամակում ասորեստանյան պաշտոնյան հորդորում էր արքային արշավել Ուրարտու և «մեկ անգամ ևս» նվաճել Տուշպան[154]:

Ստեղծված իրավիճակում ուրարտական արքունիքը, ձեռնամուխ լինելով երկիրը բարեփոխելուն, կարծում ենք, օգտվեց ասորեստանյան փորձից: Թերևս նույն Ասորեստանի օրինակով նախ և առաջ իրականացվեց վարչական բարեփոխում՝ մասնատելով փոխարքայությունները և ձևավորելով նոր մարզեր, սահմանափակելով մարզպետների իրավունքները: Կարծես՝ նրանց թողնվեց միայն ռազմական կառավարչի պաշտոնը (տե՛ս ստորև): Բարեփոխումներ իրականացվեցին նաև բանակում: Ինչպես Թիգլաթպալասարը Ասորեստանում, Ռուսան ևս փորձում էր նվազեցնել կախումը բիայնական ազնվականությունից՝ այդ նպատակով կազմավորելով սեփական զորք՝ «արքայական գունդ»-ը (մանրամասն տե՛ս 2.3.1.1.):

---

[149] Տե՛ս, համապատասխանաբար, КУКН, 59 Текст $I_{17-19}$, Текст $III_{8-9}$; CTU I, A 5-8 $Ro_{18-19}$, $Vo_{8-9}$, A 9-$18_{6-7}$.
[150] Пиотровский 1959a: 92; Арутюнян 1970: 279 сл.
[151] Grayson 1993: 27f.; նույնի՝ 1994: 74ff.
[152] Меликишвили 1954: 276 сл.; Пиотровский 1959a: 87-88; Հմայակյան 2000, էջ 8; Lanfranchi, Parpola 1990: xix; և այլք:
[153] Saggs 2001: 116ff. (ND 2453), 147f. (ND 2798).
[154] Saggs 2001: 136ff. (ND 2673: obv. 4-11).

Կարևոր նորամուծություններից մեկը կարելի է համարել արքունի դիվանի ստեղծումը և մայրաքաղաքի ու տեղական կենտրոնների միջև իրականացվող գրագրության արխիվացումը: Այս առումով հետաքրքրական է Բաստամից հայտնաբերված մի քանի արձանագիր բուլլաների տեքստերը, որոնք հայտնում են «աղյուսակներ»-ի ($^{GIŠ}$ZU$^{MEŠ}$) ստացման և այս կամ այն քանակի «կնիքներ»-ի (KIŠIB, իմա՝ «կնքված աղյուսակներ»-ի՞) մասին[155]: Այստեղ նշենք նաև, որ մեզ հասած արքունի գրագրության ամենավաղ օրինակները վերաբերում են հենց Ռուսա Սարդուրորդու իշխանության շրջանին[156]: Ինչ խոսք, նոր աղբյուրների հայտնաբերումը կարող է փոխել այս պատկերը:

Կարելի է ենթադրել, որ Ռուսայի բարեփոխումները հանդիպել են բիայնական վերնախավի դիմադրությանը՝ շրջանակներ, որոնց հազիվ թե ձեռնտու լիներ արքայական իշխանության խիստ ամրապնդումը: Կան տեքստեր, որոնք նշում են արքայի դեմ մարզպետների բարձրացրած խռովության մասին: Դրանցից ամենախոշորը արքայազն Մելարտուայի խռովությունն էր, որն անկասկած աջակցություն էր ստացել որոշ մեծամեծների կողմից[157]: Պահպանվել են ուրարտական մարզպետների բարձրացրած խռովությունների մի քանի այլ դրվագ ևս[158]: Ի դեպ, հետաքրքիր է, որ ասորեստանյան արքունի գրագրություններում պահպանվել են հիշատակումներ, երբ Ուրարտուից ինչ-որ անձինք կամ մարդկանց խմբեր փախել են Ասորեստան և ապաստանել այնտեղ[159]: Արդյո՞ք որևէ կապ ունեն այս փաստերը, օրինակ, Ռուսայի իշխանության գալու հանգամանքների հետ, մնում է անհայտ: Համենայն դեպս, ասորեստանյան արքային՝ թերևս Սարգոնին ուղղված և բացառիկ նշանակություն ունեցող մի նամակում Ռուսան մեղադրում էր նրան իր դեմ ելույթ ունեցած և Ասորեստան փախած իր մի մարզպետին ապաստան տալու համար, ընդ որում, ասորեստանյան արքան նրան դարձրել էր անգամ «գլխավոր զորավար»[160]:

Նման ելույթները հետագայում կանխելու համար բոլոր բարձրագույն պաշտոնները Ռուսան հանձնեց արքայական ընտանիքի անդամներին՝ պաշտոնները դարձնելով նշանակովի և դրանով իսկ թուլացնելով բիայնական վերնախավի դիրքերը, վերջ տալով պաշտոնները ժառանգելու կամ տեղերում ժառանգաբար իշխելու

[155] Տե՛ս CTU IV, CB Ba-1-3, Ba-6.
[156] КУКН, 393-394; CTU IV, CT Ba-1-2.
[157] Lanfranchi 1983: 127ff.; Deller 1984: 98 (Nr. 1.1), 116f. (Nr. 6.1); Lanfranchi, Parpola 1990, Nos. 92-93: Այս առնչությամբ տե՛ս նաև Иванчик 1990: 14 сл.
[158] Lanfranchi, Parpola 1990, No. 91, 179.
[159] Տե՛ս, օրինակ, Lanfranchi, Parpola 1990, No 184.
[160] Parpola 1987, No. 8.

ավանդույթին: Այն, որ արքայական տան անդամների թիվը վարչական պաշտոններում մեծ է եղել, երևում է «Լուվրի աղյուսակ»-ի տվյալներից: Վերջինս հայտնում է Ռուսայի գերի ընկած տոհմակիցների թիվը, «*արքայական սերմը/սերունդը*»՝ ինչպես նշում է աղբյուրը, ավելի քան 260 հոգի (2 ME 60 NUMUN LUGAL-*ti-šú*)[161]: Հազիվ թե նրանց քանակն այդքան մեծ լիներ, եթե լայնորեն ընդգրկված չլինեին արքունի բարձր պաշտոնեության մեջ և բանակի հրամանատարական կազմում: Այն, որ արքայական տան անդամների ձեռքին է եղել ռազմական իշխանությունը, երևում է նաև ասորեստանյան մի զեկուցագրից: Դրա հատվածներից մեկում նշվում է ուրարտական բանակի «աջ թևի զորավար»-ի մասին, ով «Սարդուրիի ընտանիքից» էր[162]:

Ուրարտական արքունիքի կազմին վերաբերող ամենակարևոր աղբյուրը Թոփրաքքալեից գտնված սեպագիր աղյուսակն է (նկ. Ա-4/1-2): Տեքստը դպիրը բաժանել է ութ հատվածի, որոնցից վեցը ներկայացնում է տաճարի/պալատի անձնակազմը, ապա և նշել մարդկանց հանրագումարը: Այն կազմում է 5 հազ. 507 մարդ, այդ թվում՝ 1113 $^{LÚ}$*mari(ni)*, 3 հազ. 892 $^{LÚ}$*ŠÁ.RĒŠI* և տարբեր գործառույթներ ունեցող թվով 502 այլ անձինք:

Ուրարտական տեքստերից մեկում հիշատակվում է ոմն Խանու՝ «պալատական» ($^{LÚ}$*TE-RI*)[163]: Պալատականների է հիշատակում «Լուվրի աղյուսակ»-ը, այդ թվում՝ (պալատի) ներքինիներ ($^{lú}$*šūt*-SAG$^{MEŠ}$), խորհրդականներ ($^{lú}$*maliki*) և մարզպետներ ($^{LÚ}$EN.NAM$^{MEŠ}$)[164]: Ուրարտական «մեծամեծներ»-ի (LÚ.GAL.MEŠ)[165]՝ պալատականների և ներքինիների մասին են հայտնում նաև ասորեստանյան զեկուցագրերը[166]: Ուրարտուից ինչ-որ ներքինի հիշատակվում է նաև Կալխուից գտնված տեքստերից մեկում (LÚ.SAG KUR.*ura*[*rṭāyu*])[167]:

Տաճարային/պալատական համալիրի անձնակազմում ամենամեծ թիվը կազմել են ներքինիները: Ուրարտական արքունի գրագրություններում $^{LÚ}$*ŠÁ.RĒŠI* «ներքինի» նշանակող աքքադագիրը հանդիպում է երկու սեպագիր տեքստերում[168]: Թոփրաքքալեի պալատական/տաճարային համալիրի անձնակազմը թվարկող տեքստը հայտնում է նրանում ավելի քան 3 հազ. 784 ներքինիների գտնվելու մասին,

[161] Mayer 1983: 82f. (Z. 138). Տարբերակ՝ 250 (տե՛ս Fuchs 1994: 204, 345 (Z. 42)).
[162] Deller 1984: 98 (Nr. 1.1); Lanfranchi, Parpola 1990, No. 93.
[163] CTU IV, CB Ba-8$_2$.
[164] Mayer 1983: 80ff. (Z. 137-138).
[165] Վերջիններիս նույնականացման համար տե՛ս նաև 4.1.2.2.:
[166] Տե՛ս, օրինակ,Lanfranchi, Parpola 1990, Nos. 91:3-7, 93:3′.
[167] Dalley, Postgate 1984, No. 136: obv.1.
[168] КУКН, 412 лиц. стор $_{10}$, обор. стор $_2$; 520$_{12}$; CTU IV, CT Tk-1 Ro$_{10}$, Vo $_2$; CT Kb-7, Ro$_{12}$.

որոնց թվում՝ 2411 «*պատանի*» (՞)[169], 119 հոգի «*հաշվեփարի մոտ/առջև*» ($^{LÚ}$NÍG.ŠID.DA-*ka-i*), 66 դերձակ և 1188 «*շնապահ*»: Նույն տեքստի մեկ այլ հատվածում նշվում է ամրոցի/պալատի 168 հոգուց բաղկացած անձնակազմի (՞) մասին՝ $^{LÚ}$*ešiate* տերմինով ($^{LÚ}$*ešiate* É.GAL), որոնցից 108-ը՝ «*ամրոցի ներքինիներ*» (1 ME 8 $^{LÚ}$*ŠÁ.RĒŠI*$^{MEŠ}$ É.GAL-*i*), ինչպես նաև՝ թվով 35 $^{LÚ}$*ḫalbiuni*-մարդիկ, 10 հոգի՝ $^{LÚ}$É.TIN-պաշտոնյա և 15 հոգի՝ $^{LÚ}$*ṣipikani*-մարդիկ: «Ամրոցի ներքինիներ»-ի թվում կարող էին լինել նաև բարձրաստիճան պաշտոնյաներ, եթե այս տերմինը դիտարկենք ասորեստանյան տեսանկյունից: Մասնավորապես, Կալխուի պալատական տնտեսությանը վերաբերող տեքստերում առանձնանում է բուն պալատի կամ պալատական թաղամասի՝ *qabaši āli*-ի՝ (միջնաբերդ, բառացի՝ «միջնաքաղաք») անձնակազմը, որը ներկայացված էր պալատական անձնակազմի/պաշտոնեության ավագ անդամներով, այդ թվում՝ *qur*(*u*)*būti*-անձինք («թիկնապահ(ներ), թիկնազոր»)[170], և *ša rēši*-անձինք՝ «ներքինի(ներ)»[171]: Սակայն, որևէ փաստ, նշելու համար, որ Ուրարտուում նրանց ներքինացրել են, ինչպես, օրինակ, Ասորեստանում էր գերազանցապես Թիգլաթպալասար III-ից սկսած[172], մենք չունենք:

1.1.5.3. **Բարձրագույն պաշտոնյաները**

(1) $^{LÚ}$A.ZU$_x$-*li*

Կարմիր բլուրի սեպագիր աղյուսակների հրատարակությամբ շրջանառության մեջ դրվեց այդ աղյուսակների կնքադրոշմներում հանդիպող և մինչև այդ սեպագիր դպրությանն անծանոթ $^{LÚ}$A.NIN-*li* գաղափարագրերի կոմբինացիան (նկ. Ա-4/3-6), որը տեքստերի հրատարակիչ Իգոր Դյակոնովը թարգմանեց «տիրուհու/թագուհու որդի», «օրինական թագաժառանգ» իմաստով[173]: Այդ նշանակությունը լայնորեն շրջանառվեց գիտական գրականության մեջ[174] և միայն Փոլ Զիմանսկին հնարավոր համարեց դրանում տեսնել այլ իմաստ և բովանդակություն[175]: Տարիներ անց Ուրսուլա Հելվագն առաջարկեց կոմբինացիան ընթերցել $^{LÚ}$A.ZUM-*li* տարբերակով, որպես մի պաշտոնյա, ում իրավասության տակ էր ջրաբաշխման գործը, պայմանական ասած՝ «ջրային տնտեսության նախարար»[176]: Միրյո Սալվինին, ելնելով Ռուսախինիլի Էիդուրուկայիի

[169] Дьяконов 1963a: 39; КУКН, 412 лиц. стор $_{11}$. Հմմտ. $^{LÚ}$UKKIN-*še* ըստ CTU IV, CT Tk-1$_{11}$.
[170] Fales 2010a: 142. Հմմտ. Radner 2002: 13f.
[171] Kinnier-Wilson 1972: 5f.
[172] Kinnier-Wilson 1972: 13f.; Grayson 1995b: 85ff.; Radner 2011a: 359f.
[173] Дьяконов 1963a: 62.
[174] КУКН, стр. 412; Seidl 1979: 141f.; Salvini 1979b: 122ff.; նույնի՝ 1979c: 133ff.; նույնի՝ 1982a: 225; նույնի՝ 1995a: 112ff. ևն:
[175] Zimansky 1985: 85, 125, n. 76.
[176] Hellwag 2000: 21ff, 27, n. 39; նույնի՝ 2005: 94ff.

կնքադրոշմների պահպանված արձանագրություններից, ընդհանրապես հրաժարվեց սեպախմբերին վերագրվող գաղափարագիր նշանակություններից՝ դրանցում տեսնելով վանկագրեր և, ըստ այդմ, ինչ-որ մի պաշտոն՝ $^{LÚ}$*a-ṣu-li*[177]:

Ինչպես փորձել ենք ցույց տալ մեր մի հոդվածում՝ $^{LÚ}$A.NIN-*li*, $^{LÚ}$A.ZUM-*li* կամ $^{LÚ}$*a-ṣu-li* ընթերցումների փոխարեն տվյալ սեպախմբերի կոմբինացիան կարելի է կարդալ որպես $^{LÚ}$A.ZU$_x$-*li*[178] և այն համադրել սեպագիր այլ դպրություններից քաջ հայտնի $^{LÚ}$A.ZU կոմբինացիայի հետ՝ խուրրի-ուրարտերենում մասնագիտություն մատնանշող -*li* հնչյունական ցուցիչով[179]: Մեզանից անկախ՝ այլ հետազոտողներ ևս արտահայտել են նման կարծիք[180]: $^{LÚ}$A.ZU գաղափարագրերի կոմբինացիան, որը հանդիպում է հատկապես խեթական տեքստերում և նշանակում է «բուժակ, մոգ, կախարդ», իր նշանակությամբ մոտ է $^{LÚ}$AZU քրմի գործառույթներին («գուշակ, քուրմ, մոգ, կախարդ»)[181]: Վերջիններս հայտնի են որպես զոհաբերված կենդանիների լյարդով գուշակություններ անող քրմեր[182]: Իսկ ուրարտական պաշտամունքային այն տեքստերը, որոնցում խոսվում է լյարդը (*zieldi*) և սիրտը (ŠÀ/$^{(UZU)}$*tišni/u*) արքային (Մենուա, Ռուսա) տալու մասին[183], կարող են հուշել, որ այստեղ գործ ունենք գուշակություն ենթադրող ծեսի հետ, որն իրականացրել է Ուրարտուի արքան: Ինչպես մենք ենք կարծում՝ հենց նրանք են հանդես գալիս որպես $^{LÚ}$A.ZU$_x$-*li* «պաշտոնյա»: Դա է վկայում նաև այն, որ $^{LÚ}$A.ZU$_x$-*li* «պաշտոնյայի» կնիքներ օգտագործող անձինք կրել են միմիայն արքայական անուններ (Ռուսա, Սարդուրի, Էրիմենա(՞)[184]:

Մեր այս տեսակետի հիմնավորման համար կարող ենք բերել մեկ այլ փաստ ևս: «Կնիք» (KIŠIB) գաղափարագիրը, որը հանդիպում է $^{LÚ}$A.ZU$_x$-*li* «պաշտոնյայի» կնքադրոշմներում, նշանակում է նաև «քուրմ» (SANGA)[185]: Ըստ այդմ, միանգամայն հնարավոր է կնքադրոշմների արձանագրությունները որոշ դեպքերում ընթերցել ոչ թե որպես KIŠIB $^{LÚ}$A.ZU$_x$-*li*՝ «*կնիքը* $^{LÚ}$A.ZU$_x$-*li* (*պաշտոնյայի*)», այլ պարզապես SANGA $^{LÚ}$A.ZU$_x$-*li* «$^{LÚ}$A.ZU$_x$-*li քուրմ*»[186], քրմեր, ովքեր կրել են արքայական անուններ:

---

[177] Çilingiroğlu, Salvini 2001b: 23f.
[178] Grekyan 2005: 42f.
[179] Wilhelm 1992: 239ff. Ուրարտերենի համար բացի նշվածից կարելի է բերել նաև LÚ.10-*li* (իմա՝ «տասնապետ»), օրինակը: Տե՛ս CTU IV, CT An-1$_{16.}$
[180] Տե՛ս Hellwag 2005: 95.
[181] Rüster, Neu 1989: 304f., 308. Tischler 2001: 211, 214. Մերձ գրությունների համար տե՛ս նաև CAD 1, A, 1968: 346f. (*aso* A/b).
[182] Տե՛ս Van den Hout 2003: 118; Pongratz-Leisten 1999: 128ff.
[183] Համապատասխանաբար՝ KUKH, 424$_{18-20}$, 193$_{3-4}$, 115$_{8-10}$; CTU I, A 12-2 II$_{7-9}$, A 8-14$_{2-3}$, A 5-60$_{8-10}$. Թարգմանության համար տե՛ս Diakonoff 1991: 15f.
[184] CTU IV, Sig. 13-1, 20-1, 20-2/a-b, 20-3, 20-4, 20-5/a-c, 20-6.
[185] Borger 1978: 129 (No. 314); Rüster, Neu 1989: 208 (No. 231).
[186] Grekyan 2005: 43.

Այս առումով ուշագրավ է, որ նորասորեստանյան շրջանում SANGA գաղափարագրով կարող էր արտահայտել նաև «տեղապահ» (*išši'akkū*) իմաստը՝ որպես «միջնորդի՝ աստծո և համայնքի միջև»[187]: Մարիո Լիվերանիի բնութագրմամբ՝ այդ տերմինը բնորոշում է արքային որպես քաղաքի գլխավոր կամ նոմային աստծուց կախյալ և նրա անունից գործող անձի[188]: Այսպիսով, կարելի է մեկ անգամ ևս նշել, որ Ուրարտուում արքան երկրի առաջին պաշտոնյան էր, ով ծառայում էր աստված-արքային և իրականացնում նաև քրմական (պատգամախոսական) գործառույթներ:

(2) $^{LÚ}$EN.NAM/ $^{LÚ}$NAM

«Կառավարիչներ»-ը (շում. $^{lú}$gar (kur), աքքադ.՝ $^{lú}$*šaknu*), որոնք վկայված են Միջագետքի՝ դեռևս վաղշումերական շրջանից, իրականացնում էին թե ռազմական, և թե վարչական, գուցե նաև՝ դատական գործառույթներ[189]: Այլ իրավիճակ էր միայն Ուրի III հարստության օրոք, երբ հստակ տարբերվում էր նահանգի ռազմական կառավարիչը (շում. šagina) նույն նահանգի վարչական կառավարչից (շում. ensik/ensi$_2$)[190]: Ցավոք, որևէ տվյալ, որը կվկայեր ուրարտական մարզպետների՝ միաժամանակ թե վարչական, և թե ռազմական գործառույթներ իրականացնելու մասին (ինչը վկայված է աղբյուրներում) մենք չունենք, թեև դա մենք չենք բացառում առնվազն մինչև Ք.ա. 8-րդ դ-ի վերջին քառորդ ընկած շրջանի համար: Մեզ հասած հիմնական նյութը վերաբերում է Ռուսա Սարդուրորդու իշխանության շրջանին, երբ արդեն գործ ունենք բարեփոխված համակարգի հետ:

Միանշանակ է, որ մարզպետներն ուրարտական պաշտոնեության մեջ զբաղեցրել են բարձր դիրք և անկասկած ունեցել են ռազմական իշխանություն (տե՛ս ստորև): Նրանց նշանակել է արքան[191], արքան էր նաև նրանց պաշտոնանկ անում, ինչի վկայություն է պահպանվել ասորեստանյան աղբյուրներից մեկում[192]: Մարզպետներն արքունի գրագրություններում հանդես են գալիս մի քանի անգամ[193], սակայն, հայտնի է միայն մեկ դեպք, երբ նա եղել է հասցեատերերի թվում[194]: Երկրի

---

[187] Parpola 1993: 167, n. 28. Տե՛ս նաև Pečírková 1977: 217f.; նույնի՝ 1982: 208f.

[188] Liverani 2011: 260.

[189] Մանրամասն տե՛ս և հմմտ. Pečírková 1977: 212f. and notes 5-7; Machinist 1982: 22. Հմմտ. Henshaw 1968: 461ff.

[190] Lafont 2009: 16f.

[191] КУКН, 59 Текст I$_{17-19}$, Текст III$_{8-9}$; CTU I, A 5-8 Ro$_{17-19}$, Vo$_{7-9}$, A 9-18$_{6-7}$.

[192] Lanfranchi, Parpola 1990, No. 179.

[193] КУКН, 393 лиц. стор. $_{10}$, 432 лиц. стор. $_{3}$, 520 лиц. стор. $_{2}$; CTU IV, CT Ba-1 Ro$_{10}$; CT Ba-3 Ro$_{3}$, Vo$_{2'}$, CT Kb-7 Ro$_{2}$.

[194] КУКН, 432 лиц. стор. $_{3}$; CTU IV, CT Ba-3 Ro$_{3}$. Տե՛ս նաև Տուշպայից հայտնաբերված խիստ պակասավոր սեպագիր աղյուսակը, որի երկրորդ տողի վերջում նշված է NAM գաղափարագիրը: Տեքստի վնասվածությունը, սակայն, թույլ չի տալիս հստակեցնել, թե արդյո±ք այդ «մարզպետ»-ը հանդես է գալիս որպես հասցեատեր: Տե՛ս Işık 2014: 176f.

ներքին՝ առօրյա հարցերը կարգավորելուն ուղղված արքայական հրամաններում մարզպետների ներգրավվածությունը որպես կատարողների կարծես թե մեծ չէ: Արդյո՞ք սա չի վկայում Ուրարտուում տեղերում միաժամանակ երկու՝ ռազմական և քաղաքացիական/տնտեսական վարչակազմերի գոյության օգտին, ինչպես Ուրի III հարստությունում էր: Կարելի է կարծել՝ այո[195]: Թերևս պատահական չէ, որ վերը նշված մեկ դեպքում նամակում խոսվում է ինչ-որ լրտեսների և պատժիչ գործողությունների մասին[196]: Այս առումով ուրարտական մարզպետներն ըստ երևույթին տարբերվել են ասորեստանյան իրենց պաշտոնակիցներից, ովքեր լայնորեն ներգրավված էին երկրի ներքին տնտեսական կյանքի կարգավորմանը, միաժամանակ, զբաղվելով իրենց տարածքում տեղաբաշխված «նահանգային զորքեր»-ի պարենավորմամբ, իսկ պատերազմների ժամանակ՝ առաջնորդելով զորքերը[197]:

Ամենայն հավանականությամբ՝ մարզպետի պարտականությունների շարքում էր իր հրամանատարության տակ գտնվող զորքի ապահովումը, ամրությունների շինարարությունն ու սահմանների պաշտպանությունը, մարզի ներսում ճանապարհների անվտանգության և ընդհանրապես՝ մարզի անդորրի պահպանումը: Ասորեստանյան աղբյուրներից հայտնի է, որ ուրարտական մարզպետները լուծել են նաև տեղային վեճերը՝ տարբեր առաջնորդների միջև կամ լոկալ իշխանության համար մղվող պայքարում[198]: Կարելի է կարծել, որ նրանք օժտված են եղել որոշ դատական իրավունքներով, թեև տեքստերից ակնհայտ է դառնում, որ յուրաքանչյուր դատ/վեճ հանգուցալուծվում էր արքունիքում՝ արքայի վճռով (տե՛ս վերը):

(3) $^{\text{LÚ}}$(EN.)NAM 2-*u*

Ուրարտուում «երկրորդ մարզպետ»-ի կամ փոխմարզպետի պաշտոնի գոյությունը վկայում են միայն ասորեստանյան աղբյուրները: Տեքստերից մեկում նշվում է մարզպետի հետ միասին նաև փոխմարզպետին (տեքստում՝ LÚ.2-*u*) պաշտոնանկ անելու մասին[199]: Մեկ այլ տեքստում նշվում է մարզպետի և փոխմարզպետի (տեքստում՝ $^{\text{LÚ}}$EN.NAM 2-*u*) զորքերի կողմից իրականացվող սահմանային հսկողության մասին[200]: Այս տեքստերը որոշակի պատկերացում են տալիս նրանց և ընդհանրապես՝ մարզպետների ինստիտուտի գործառույթների մասին: Այն փաստը, որ

[195] Տե՛ս և հմմտ. նաև Дьяконов, 1963: 26сл.; Tarhan 1983: 301ff.; Zimansky 1985: 93.
[196] Թարգմանության համար տե՛ս Дьяконов, 1963: 35сл.; CTU IV: 139 (CT Kb-7).
[197] Kinnier-Wilson 1972: 14f.; Pečírková 1977: 212f.; Ասորեստանյան պաշտոնեության մասին մանրամասն տե՛ս Pečírková 1977: 220ff.; Mattila 2000.
[198] Նման հետևության կարելի է հանգել Lanfranchi, Parpola 1990, No 31 նամակից:
[199] Lanfranchi, Parpola 1990, No. 179.
[200] Deller 1984: 113f. (Nr. 4.7); Lanfranchi, Parpola 1990, No. 3.

«փոխմարզպետ» ուրարտական որևէ տեքստում վկայված չէ, մղում է մեզ ենթադրելու, որ նրանք տեքստերում հանդես են եկել այլ պաշտոնով: Նման դիրքի է հավակնում, օրինակ, $^{LÚ}$NA$_4$.DIB-պաշտոնյան:

(4) $^{LÚ}$NA$_4$.DIB

Այս կոչումը կրող անձինք հիշատակվում են բավական հաճախ (վեց տեքստերում[201]), արքայական նամակներից հինգը հասցեագրված է նրանց և ակնհայտ է, որ ուրարտական պաշտոնեության մեջ վերջիններս զբաղեցրել են բարձր դիրք՝ զիջելով միայն մարզպետներին: Համենայն դեպս, մեզ հասած այն տեքստում, որտեղ որպես հասցեատեր հանդես է գալիս նաև մարզպետը, այս պաշտոնը զբաղեցնող անձը հիշատակվում է նրանից հետո[202]: NA$_4$.DIB կոմբինացիան ուրարտական դպրության կողմից արված նորամուծություն է և թարգմանվում է որպես «կնիք պահող»[203]: Կարելի է ենթադրել, որ նման պաշտոնյաների մոտ են պահվել «արքայական» կնիքները, որոնցով վավերացվում էր մայրաքաղաքի և մարզային կենտրոնների միջև իրականացվող գրագրությունը[204]: Պատահական չէ, որ նման պաշտոնյաներ գործել են ուրարտական մի քանի կենտրոններում (Բաստամ, Կարմիր բլուր), ընդ որում, բոլոր դեպքերում գործ ունենք այդ պաշտոնը զբաղեցնող տարբեր անձանց հետ, ինչը վկայում է, որ նրանց քանակը եղել է անհամեմատ մեծ[205]:

(5) $^{LÚ}$É.GAL

Այս պաշտոնը հիշատակվում է Բաստամից հայտնի երկու աղյուսակներում[206], հնարավոր է նաև՝ վիմագիր, խիստ պակասավոր արձանագրություններից մեկում, ուր, հետաքրքիր է, հիշատակվում են նաև 3551 ձիեր[207]: Արդյո՞ք դա խոսում է այս պաշտոնյայի գործառույթների մասին, որպես, օրինակ, «ախոռապետ»-ի: Կարելի է մտածել, սակայն, որ նա բերդապետն էր՝ զուգահեռ տանելով ասորեստանյան աղբյուրներից հայտնի $^{amēl}$*rab* ḪAL.ṢU-ի հետ[208]: Չի բացառվում, որ նա եղել է նաև ամրոցի քաղաքացիական/տնտեսական մասի կառավարիչը[209] կամ «ամրոցի պատասխանատու»-ն՝ ըստ Միրյո Սալվինիի[210]: Այս պաշտոնը համահունչ է թվում ասորեստանյան *rab ekalli*-ին

[201] КУКН, 393 лиц. стор. $_2$, 429 лиц. стор. $_3$, 432 лиц. стор. $_4$, 446$_3$, 522$_3$; CTU IV, CT Ba-1 Ro$_2$; CT Ba-3 Ro$_4$, CT Kb-1 Ro$_{10}$, CT Kb-2 Ro$_3$, CT Kb-4 Ro$_3$, CT Kb-6 Ro$_3$.
[202] КУКН, 432 лиц. стор. $_{3-4}$; CTU IV, CT Ba-3 Ro$_{3-4}$.
[203] Дьяконов 1963a: 47.
[204] Նորասորեստանյան զուգահեռների համար տե՛ս և հմմտ. Radner 2008: 486ff.; Nadali 2009-2010: 215ff., 231.
[205] Տե՛ս և հմմտ. նաև Дьяконов 1963a: 26, 93; Zimansky 1985: 87.
[206] КУКН, 393 лиц. стор. $_{3-8}$, КУКН, 424$_{18-20}$; CTU IV, CT Ba-1 Ro$_{3, 8}$; CT Ba-2, Ro$_2$.
[207] КУКН, 483$_1$, прим. 1; CTU I, A 18-5$_1$.
[208] Saggs 2001: 107f. (ND 2402: 4).
[209] Дьяконов 1988б: 149; КУКН, 393 стр. 306, прим. 4.
[210] CTU IV, CT: 137.

(«պալատի կառավարիչ»), որը վկայված է սկսած միջինասորեստանյան դարաշրջանից[211]: Մյուս կողմից, կարելի է զուգահեռներ տանել ասորեստանյան «արքունի սենեկապետ»-ի (*nāgir ekalli*[212]) պաշտոնի հետ: Համենայն դեպս, նամակներից մեկում նրան է արքան հրամայում իրականացնել հացի բաշխումը սահմանված քանակներով՝ $^{LÚ}$*amerieši*-մարդկանց՝ 3-ական հաց, $^{LÚ}$*ḫalbi*-մարդկանց՝ 2-ական[213]:

(6) LÚ.GAL–URU(.MEŠ)

«Քաղաքապետներ»-ը, ինչպես ենթադրվում է, ասորեստանյան նահանգային վարչակազմում զբաղեցրել են բավական բարձր դիրք, թերևս երրորդը՝ նահանգապետից հետո[214]: Հետաքրքիր է, որ ասորեստանյան մի քանի զեկուցագրերում տարբեր դրվագներում հիշատակվում են ուրարտական քաղաքների կառավարիչներին՝ «քաղաքապետներ»-ին (LÚ.GAL–URU.MEŠ/$^{amēl}$*rab ālāni*)[215]: Զեկուցագրերից մեկից դատելով՝ Ուրարտուում նրանք եղել են նշանակովի պաշտոնյաներ, քանի որ տեքստում խոսվում է արքայի կողմից «քաղաքապետ»-ին պաշտոնանկ անելու մասին[216]: Արդյո՞ք սա նշանակում է, որ բոլոր «քաղաքապետներ»-ը նշանակովի պաշտոնյաներ էին: Կարծում ենք՝ ոչ, և նրանց մեծ մասը, որ դուրս են մնացել սեպագիր աղբյուրների տեսադաշտից, կարող էին լինել ընտրված համայնքի կողմից՝ որպես «համայնքապետ»: Ցավոք, այս մասին վկայող տվյալներ չեն պահպանվել ո՛չ ասորեստանյան, և ո՛չ էլ ուրարտական աղբյուրներում: Այստեղ չի բացառվում, որ այս «քաղաքապետներ»-ն ունեին հարկային/վերահսկողական գործառույթներ՝ հետևելով «քաղաքներ»-ից (տվյալ դեպքում, կարծում ենք, աղբյուրներում նկատի են առնվում «շրջակա բնակավայրեր»-ը/գյուղերը) բնամթերքով տրվող հարկերի հավաքմանը, ինչը երևում է Ասորեստանում[217]:

### 1.1.5.4. **Միջին և ցածրաստիճան պաշտոնեությունը**

(1) $^{LÚ}$IGI.LÁ

Այս պաշտոնը հիշատակվում է միայն մեկ անգամ՝ Բաստամի աղյուսակներից մեկում[218]: Գաղափարագրի նշանակությունը հայտնի է նաև միջագետքյան տեքստերից

[211] Machinist 1982: 24; Dalley, Postgate 1984: 6ff.
[212] Grayson 1993: 21ff.
[213] Տե՛ս Дьяконов 1988б: 149сл.; CTU IV, CT: 128. Տեքստի ընթերցման համար տե՛ս նաև Mayer 2013b: 150sq.
[214] Kinnier-Wilson 1972: 15f.; Machinist 1982: 24.
[215] Saggs 2001: 136ff. (ND 2673).
[216] Lanfranchi, Parpola 1990, No. 179.
[217] Kinnier-Wilson 1972: 16f.
[218] КУКН, 432 лиц. стор. $_5$; CTU IV, CT Ba-3 Ro$_5$.

(igi-lá = *amāru*՝ «դիտել, հետևել»[219]), ինչից ելնելով ուրարտական տեքստում այն թարգմանվում է որպես «հսկիչ, տեսուչ»:

(2) $^{LÚ}$É.TIN

Սեպագիր այլ դպրություններում գաղափարագրերի այս համադրությունը հայտնի չէ: Ելնելով գաղափարագրերի առանձին նշանակությունից՝ Իգոր Դյակոնովն այն թարգմանել է որպես «գինեգործ» կամ «մատռվակ»[220]: Հիշատակվում է երկու տեքստերում: Թոփրաքքալեի՝ պալատական անձնակազմը նշող տեքստում նշվում է, որ թվով տասը հոգի եղել են այս մասնագիտության/պաշտոնի տեր[221]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրորդ՝ Կարմիր բլուրի տեքստում արքան՝ Սարդուրի Ռուսայորդին, հրամանն ուղղում է անձամբ ոմն Շանիխինիի, ով անվանվում է $^{LÚ}$É.TIN, ապա կարելի է կարծել, որ նա պաշտոնյա էր[222]: Այստեղ պաշտոն է տեսնում նաև Միրյո Սալվինին[223]: Նկատենք, որ ասորեստանյան բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը «գլխավոր մատռվակն» էր (*rāb šāqê*)[224]:

Նշենք, սակայն, որ մենք հակված ենք այստեղ տեսնել մի մասնագիտություն, որը կարելի է թարգմանել որպես «ճարտարապետ»: Խնդիրն այն է, որ գաղափարագրերի այս կոմբինացիայի երկրորդ բաղադրիչը՝ tin/din-ը, որպես մասնագիտություն, նշանակում է «փայտագործ վարպետ, տան շինարար» ($^{LÚ}$DIN = *itinnu/etinnu*[225]), և միանգամայն հնարավոր է թվում գաղափարագրերի կոմբինացիան ($^{LÚ}$É.TIN/DIN՝ «(մասնագիտության ցուցիչ) + տուն + փայտագործ վարպետ/տան շինարար) դիտել իբրև «ճարտարապետ»: Ուրարտական արքունիքում ճարտարապետների ներկայությունը, ընդ որում՝ ոչ մեծ խմբի, ընդամենը տասը մարդ, միանգամայն հնարավոր է[226]:

(3) $^{LÚ}$KÙ/KUG$^{MEŠ}$

Այս պաշտոնը վկայված է երկու անգամ՝ Կարմիր բլուրի աղյուսակներից մեկում և Այանցից գտնված բուլլաներից մեկի վրա[227]: Նշանակությունն է «արծաթի մարդ»: Հետաքրքիր է, որ Այանցի տեքստում այս պաշտոնը հանդիպում է $^{LÚ}$KÙ KUR-*iš* ձևով: Եթե հաշվի առնենք, որ ասորեստանյան դպրության մեջ KUR-*iš* գրությունը նշանակում էր նաև «պալատ»[228], ապա չի բացառվում, որ այստեղ գործ ունենք «պալատի

[219] Borger 1978: 173 (No. 449).
[220] Дьяконов 1963a: 42. Տե՛ս նաև Կարագյոզյան 1976, էջ 90:
[221] КУКН, 412 обор. стор. $_4$; CTU IV, CT Tk-1 Vo$_4$.
[222] КУКН, 428 лиц. стор. $_4$; CTU IV, CT Kb-1 Ro$_4$.
[223] "Ispettore?" (CTU IV, CT Kb-1: 133).
[224] Grayson 1993: 23ff.
[225] Borger 1978: 178 (No. 465); CAD 7, I-J, 1960: 296f. (*i/etinnu*).
[226] Հմմտ. նաև Mayer 2013b: 151.
[227] Համապատասխանաբար՝ КУКН, 433 лиц. стор. $_2$; CTU IV, CT Kb-3, Ro$_2$; CB Ay-51$_4$.
[228] Borger 1978: 148f. (No. 366); Parpola 1988: 73.

գանձապետ»-ի հետ: Նման պաշտոնի գոյությունը վկայված է ասորեստանյան արքունիքում (*masennu*)[229]: Հովհաննես Կարագյոզյանն ու Միրյո Սալվինին այստեղ տեսնում է մասնագիտություն՝ «արծաթագործ/ոսկերիչ»[230], ինչի օգտին, սակայն, չի խոսում Կարմիր բլուրի նամակի՝ իրավական բնույթի բովանդակությունը[231]:

(4) $^{LÚ}$NÍG.ŠID(.DA)

Կարմիր բլուրից և Թոփրաքքալեից հայտնաբերված երկու աղյուսակներում հիշատակվում է $^{LÚ}$NÍG.ŠID(.DA)-պաշտոնյան[232]: Այս գաղափարագրի նշանակությունն է «հաշվի մարդ, հաշվետար» և քաջ հայտնի է միջագետքյան աղբյուրներից: Հետաքրքիր է, որ Թոփրաքքալեի պալատական/տաճարային համալիրի անձնակազմը թվարկող տեքստում նշվում է հաշվետարին ենթակա աշխատողների, թերևս՝ գրագիրների քանակը՝ 119 մարդ: Իրենց գործառույթներով նրանք ըստ երևույթին նմանվել են ասորեստանյան *mušarkisu*-պաշտոնյաներին կամ «տեսուչներ»-ին, որոնց խնդիրն էր հետևել նահանգներում հարկերի հավաքմանը և հարկերն ու ձեռք բերված ռազմավարն ուղարկել պալատ:

Ելնելով այն փաստից, որ Կարմիր բլուր ուղղարկված արքայական երկու նամակներում որպես հասցեատեր հանդես է գալիս ոմն Խալդի-բուրա, ով հիշվում է որպես $^{LÚ}$KÙ$^{MEŠ}$-պաշտոնյա, իսկ մյուս դեպքում նույն անունն է կրում $^{LÚ}$NÍG.ŠID-պաշտոնյան, ենթադրվել է, որ կարող են նույնը լինել նաև այդ պաշտոնները[233]: Կարելի է մտածել, որ դրանք փոխկապակցված էին:

(5) $^{LÚ}$NA.KAD

NA.KAD (աքք. *nāqidu*) գաղափարագիրը նշանակում է «հովիվ»[234]: Ուրարտական սեպագիր աղյուսակներում հիշատակվում է մեկ անգամ[235]: Հաշվի առնելով այն փաստը, որ նա հանդիսանում է արքայական նամակի երկու հասցեատերերից մեկը՝ $^{LÚ}$NA$_4$.DIB-պաշտոնյայից հետո, ապա կարելի է կարծել, որ խոսքն այստեղ վերաբերում է հովիվների ավագին, «ավագ հովվին», ինչպես և մտածել է Իգոր Դյակոնովը[236]: Նկատենք, որ այդ նույն գաղափարագիրը կարող էր նշանակել նաև «կաշեգործ»[237]:

(6) $^{LÚ}$GÁ/PISAN-*ṣi*

---

[229] Radner 1999: 136f.; Mattila 2000: 3, 13ff.
[230] Կարագյոզյան 1976, էջ 86; CTU IV: 135.
[231] Дьяконов 1963a: 33сл, 51сл.
[232] КУКН, 412 лиц. стор. $_{12}$, 429 лиц. стор. $_4$; CTU IV, CT Kb-2, Ro$_4$, CT Tk-1, Ro$_{12}$.
[233] Дьяконов 1963a: 52.
[234] Borger 1978: 73f. (No. 70).
[235] КУКН, 446$_4$; CTU IV, CT Kb-4$_4$.
[236] Дьяконов 1963a: 34, 58.
[237] Postgate 2008a: 88f.

Այս պաշտոնը բառացի նշանակում է «արկղ(ներ)ի մարդ» (հմմտ. շում՝ bisag/ĝ՝ «զամբյուղ»), հանդիպում է միայն մեկ անգամ՝ Հայկաբերդից գտնված սալիկներից մեկի վրա[238]: Հնարավոր է, որ խոսքը «պահեստապետի» մասին է, առավել ևս, խիստ վնասված և պակասավոր կավե սալիկի պահպանված հատվածներում թվարկվում են զինվորներ՝ նետաձիգներ (LÚ.GIŠ.BAN), մի քանի անվանապես հիշատակված անձինք, ինչպես նաև «արքայական գնդի» մեկ զինվոր: Հնարավոր է, որ տեքստը վերաբերում է պահեստից նրանց զենք հատկացնելուն, քանի որ տողերից մեկում հիշատակվում է «աղեղ», մեկ այլ տողում՝ «մական/գայիսոն» բառը: Ամեն դեպքում՝ տեքստը խիստ պակասավոր է հստակ եզրակացությունների համար և հնարավոր են այլ մեկնաբանություններ ևս[239]:

(7) $^{LÚ}$ŠE.NUMUN-*ḫu* (?)

ŠE-NUMUN գաղափարագրերի կոմբինացիան նշանակում է «սերմ, ցանքս»: Ըստ այդմ, այստեղ հիշվող պաշտոնյայի կոչումը եղել է «ցանքսի մարդ»[240], ինչը և ցույց է տալիս նրա պատասխանատվության ոլորտը[241]: Այս պաշտոնյայի գործառույթը կարելի է համեմատել ասորեստանյան $^{lú}$*rab karmāni*-ի հետ, ով պատասխանատու էր հացահատիկի մատակարարումների համար[242]: Միրյո Սալվինիի կողմից առաջարկվող $^{LÚ}$GÉME EN ընթերցումը միանշանակ ընդունելի չէ, քանի որ CT Kb-7 տեքստի 3-րդ տողում հստակ երևում է, որ ենթադրյալ նշանը չի կարող լինել EN: Դա թերևս ավելի ուշ նկատել է և հեղինակը՝ արդեն անվանացանկում այս կոմբինացիան ներկայացնելով որպես $^{LÚ}$GÉME MUŠEN(?): Այս ընթերցումը թվում է գայթակղիչ, քանի որ կարելի կլինի տեսնել մի մասնագիտություն, որի քրմական գործառույթը (գուշակություն թռչնի թռիչքով) քաջ հայտնի է սեպագիր այլ դպրություններից ($^{LÚ}$IGI.MUŠEN, $^{LÚ}$MUŠEN.DÙ, ասսուր. *dāgil iṣṣūri*)[243]: Նման ընթերցումը, սակայն, առաջացնում է մի շարք հարցեր: Նախ, GÉME (MUNUS+KUR) գաղափարագրի առաջին բաղադրիչը՝ MUNUS-ը, հստակ չի ընթերցվում և ոչ մի սալիկի վրա: Երկրորդ, եթե գործ ունենք կնոջ/քրմուհու հետ, ապա անհասկանալի է մնում նրա անունը, որը միանշանակ արական է, ինչը ցույց է տալիս անվան դիմաց դրված որոշիչը: Հնարավոր

[238] CTU IV, CT Çav-1 Ro, col. sin. $_{8'}$.
[239] Dinçol *et al*. 2001: 198, n. 5.
[240] КУКН, 431 обор. стор. $_3$, 520 лиц. стор. $_3$; CTU IV, CT Kb-5 Vo$_3$, CT Kb-7, Ro$_3$.
[241] Այս առումով հետաքրքիր կարող է լինել Դեդելիի ուրարտական դամբարանը, ուր գտնվել են մեծ քանակությամբ երկրագործական գործիքներ: Այդ դամբարանում հուղարկավորված պաշտոնյան, ըստ հեղինակների, կարող էր լինել «երկրագործական աշխատանքների պատասխանատու»: Տե՛ս Baştürk 2011: 168 and n. 26.
[242] Kinnier-Wilson 1972: 17.
[243] Borger 1978: 78 (No. 78); Radner 2009: 223, 226ff.

է թվում առաջարկել գաղափարագրի $^{LÚ}$NAGAR՝ «հյուսն» ընթերցումը, բայց այնուամենայնիվ այն ևս զերծ չէ հարցականից: Ըստ այդմ, առայժմ հնարավոր չէ նախապատվությունը տալ որևէ տարբերակի և այս հարցը թողնում ենք բաց:

(8) $^{LÚ}$GAL–*ka–ṣir*

Այս բառը ասորեստանյան արքունի գրագրությունները վերահրատարակած Ջովաննի Լաֆրանչին և Սիմո Պարպոլան ընթերցում են որպես «գլխավոր դերձակ», գուցե՝ «հանդերձապահ», ընդ որում, հայտնի է այդ անձի անունը՝ Նարագե[244]: Սակայն, հնարավոր է, որ այստեղ առկա է շփոթմունք և թերևս պետք է լիներ «գնդապետ» ($^{LÚ}$GAL *ki-ṣir*), ինչպես թարգմանվում էր նախկինում[245]: Նորասորեստանյան տեքստերում այդ երկու տերմինները հաճախ են շփոթվել[246]: Այս մասին է վկայում նաև տեքստը, որտեղ խոսվում է ուրարտական արքայի դեմ հանդես եկած Նարագեի և նրա հետ 20 ներքինիների ձերբակալության, 100 այլ զինվորների սպանության մասին:

### 1.1.5.5. **Պալատի տնտեսական և սպասարկող անձնակազմը**

Թոփրաքքալեի պալատական/տաճարային անձնակազմի մոտ 4/5-րդ մասը կազմել է սպասարկող անձնակազմը, հիմնականում՝ ներքինիներ: Նրանց մի մասը, կարծում ենք, ներգրավված էր լինելու համալիրի տնտեսական աշխատանքներում, այդ թվում նաև՝ զբաղվելով երկրագործությամբ: Նման աշխատանքներում էր ներգրավված, հնարավոր է, ներքինիների շարքում թվարկված 2411 հոգին, որոնց գրիչն առանձնացրել է որպես $^{LÚ}$*ubše*՝ «պատանի»: Միրյո Սալվինին այստեղ ընթերցում է $^{LÚ}$UKKIN-*še*, այն է՝ «հավաք, ժողով, բազմություն»[247], ինչը, աղյուսակի լուսանկարից դատելով, հավանական չէ և արտաքուստ նմանությանը հակառակ տեքստում արձանագրված է *ub*- սեպանշանը (ըստ այդմ՝ $^{LÚ}$*ubše*)[248]: Այստեղ նկատենք, որ մեր հաշվարկներով մոտ 1.7 հազ-ից 2 հազ. մարդու աշխատանք էր պահանջվում Կարմիր բլուրի երկրագործական գոտում աշխատելու համար (տե՛ս ստորև) և հետաքրքիր է, որ գրեթե նույն քանակությունն է կազմել Թոփրաքքալեի «պատանի»-ների, այն է՝ հողին ամրացված կախյալների թիվը: Աղբյուրներում հանդիպում են նաև այլ խմբեր՝ ըստ իրենց մասնագիտությունների, այդ թվում.

(1) $^{LÚ}$NU-*iš*

[244] Lanfranchi, Parpola 1990, No. 91.
[245] Дьяконов 1951a, № 50 (13), прим. 1.
[246] Parpola 2008: 92, n. 169.
[247] CTU IV, CT Tk-1 Ro$_{11}$.
[248] Առավել հստակ լուսանկարը տե՛ս Wartke 1993, Taf. 86.

Հանդիպում է միայն Հայկաբերդից գտնված երկու աղյուսակներում[249]: Նշանակությունը պարզ չէ: Եթե ելնենք NU գաղափարագրի նշանակությունից որպես «պատկեր» (NU = *ṣalmu*)[250], ապա կարելի է ենթադրել, որ նրանք եղել են նկարիչներ: Ի դեպ, տեղին է հիշել, որ ուրարտական առնվազն երկու կենտրոններում (Տուշպա և Էրեբունի) գտնվել են նկարիչների տներ/արհեստանոցներ[251]:

(2) $^{LÚ}$NAGAR

Այս մասնագիտության նշանակությունն է «հյուսն»[252]: Հիշատակվում է Բաստամից գտնված բուլլաներից մեկի արձանագրության մեջ ($^{LÚ}$ $^{GIŠ}$NAGAR$^{MEŠ}$)[253]: Վերջինիս հետ միասին հիշատակվող $^{GIŠ}$ZU$^{MEŠ}$ գաղափարագիրը, որը նշանակում է «աղյուսակ(ներ)», չի բացառվում ընթերցել որպես հնչյունագիր՝ $^{GIŠ}$zu<li>$^{MEŠ}$, և թարգմանել «ձողեր (փայտից)» նշանակությամբ: Դա առավել համահունչ է թվում «փայտագործ/ատաղձագործ» նշանակող գաղափարագրի հետ:

(3) $^{LÚ}$UR.ZÍR/GI$_7$

Այս գաղափարագիրը հանդիպում է սեպագիր այլ դպրություններում ևս՝ «շուն»[254], որից և, տվյալ դեպքում, «շնապահ» նշանակությունը[255]: Հանդիպում է Թոփրաքքալեի պալատական/տաճարային համալիրի անձնակազմը թվարկող տեքստում, ընդ որում, նշվում է բավականին մեծ թիվ՝ ավելի քան 1188 $^{LÚ}$UR.ZÍR/GI$_7$-մարդ[256]: Այդ խմբում ընդգրկվածների մեծաքանակությունը հուշում է, որ մի գուցե և գործ ունենք ընդհանրական ինչ-որ անվանման կամ սպասարկողների խմբի հետ, ենթադրենք՝ շնապահ-որսորդների կամ պալատի հովիվների ընդհանրապես, ինչը և կարող է բացատրել նրանց մեծ թիվը: Համեմատության համար նշենք, որ աքեմենյան արքա Դարեհ I-ի օրոք կազմված տեքստերում խոսվում է պալատի հետ կապված 700 հովիվների մասին[257]:

(4) $^{LÚ}$ANŠE.GÌR.NUN.NA

Գաղափարագրերի այս կոմբինացիան նշանակում է «ջորեպան»: Ջորեպաններ հիշատակվում են Թոփրաքքալեի վերոհիշյալ տեքստում: Ընդ որում, պալատի սպասարկող անձնակազմի թվում նշվում են 7 ջորեպաններ[258]: Ջորիներով է իրականացվել

[249] CTU IV, CT Çav-1 Ro col. ds. $_{4'}$, CT Çav-2, 1 col. $_{1}$, $_{6}$.
[250] Borger 1978: 76f. (No. 75).
[251] Тер-Мартиросов 2005: 148 сл.; Tarhan 2005a: 126f.
[252] Borger 1978: 194 (No. 560).
[253] Salvini 1988: 130 (3.1); CTU IV, CB Ba-6$_4$.
[254] Borger 1978: 196f. (No. 575).
[255] Дьяконов 1963a: 81 сл.
[256] КУКН, 412 лиц. стор. $_{14}$; CTU IV, CT Tk-1 Ro$_{14}$.
[257] Dandamayev 1998: 103.
[258] КУКН, 412 обор. стор. $_{8}$; CTU IV, CT Tk-1 Vo$_8$ (հրատարակության մեջ առկա է վրիպակ. նշված է 71).

պալատի մատակարարումը, ինչը տեսնում ենք նաև Ասորեստանում: Այս առումով որպես զուգահեռ կարող ենք նշել *ša bīt kudini*-ն[259]: Հնարավոր է, ջորիներով է իրականացվել նաև հաղորդակցության մի մասը կենտրոնի և տարբեր քաղաքների միջև:

(5) $^{LÚ}$KASKAL

Ուրարտական տեքստերում հանդիպում է առաջին անգամ[260]: Ընթերցումը պատկանում է Միրյո Սալվինիին, ով այն թարգմանում է որպես «սուրհանդակ»: Նիկոլայ Հարությունյանի առաջարկած $^{LÚ}$BI.LUL(?)՝ «փորագրիչ» ընթերցումը, որը կարծես թե բխում է նաև կոնտեքստից, աղյուսակի լուսանկարից դատելով, քիչ է հավանական:

Դժվար է ասել, թե արդյո՞ք $^{LÚ}$KASKAL-ը կապ ունի «(արքայական) սուրհանդակներ»ի կամ «դեսպաններ»-ի հետ (LÚ.A-KIN = *mār šipri*[261]), ովքեր հաճախ են հիշատակվում համաժամանակյա ասորեստանյան տեքստերում[262]: Մյուս կողմից, հաշվի առնելով, որ KASKAL գաղափարագիրը (աքք. *ḫarrānu*), որն արտահայտում է «ճանապարհ», «արշավանք» և այլ իմաստներ, միաժամանակ նշանակում է նաև «առևտուր», «առևտրական ճամփորդություն»[263], ճիշտ այնպես, ինչպես խեթերենում *laḫḫa*-ն («արշավանք», «առևտրական ճամփորդություն»)[264], ապա, կարելի է մտածել, որ խոսքն այստեղ վերաբերում է և «առևտրական»-ի: Սակայն, այս դեպքում պետք է նկատի ունենալ միմիայն պետության համար գործող առևտրականների, ովքեր նաև հարկահաններ էին[265]: Ի դեպ, այս առումով նշենք նաև, որ եթե ճիշտ լինի անգամ այստեղ տեսնել սուրհանդակի, ապա դարձյալ կարող է խոսքը վերաբերել առևտրականի կամ առևտրական գործակալի[266]:

(6) $^{LÚ}$MUḪALDIM

Այս գաղափարագրի նշանակությունն է «խոհարար»: Երկու խոհարարներ են հիշատակվում Կարմիր բլուրի աղյուսակներից մեկում[267]:

(7) $^{LÚ}$ÌR/ERUM

Այս գաղափարագիրը նշանակում է «ստրուկ, ծառա, սպասավոր, հետևորդ» ևն: Վկայված է երեք սեպագիր տեքստերում և մեկ բուլլայի վրա՝ տարբեր

[259] Kinnier-Wilson 1972: 5, 54.
[260] CTU IV, CT Kb-1 Ro$_9$. Համմտ. КУКН, 428 лиц. стор. $_9$, прим. 7.
[261] Borger 1978: 200 (No. 579).
[262] Deller 1984: 113f. (Nr. 4.7); Lanfranchi, Parpola 1990, No. 3: 15.
[263] CAD 6, ḫ, 1956: 106ff. (*ḫarrānu*).
[264] Hoffner 2002: 181.
[265] Radner 1999b: 101ff.
[266] Zaccagnini 1977: 171f.
[267] КУКН, 433 лиц. стор. $_3$, $_6$, $_{10}$; CTU IV, CT Kb-3, Ro$_3$, $_6$, $_{10}$.

նշանակությամբ[268]: Դրանցից մեկում խոսքը վերաբերում է երկու ծառաների/սպասավորների (II-*ue* $^{LÚ}$ERUM-*ue*), մեկ այլ տեքստում հիշվում է ոմն Թաթա՝ «տիրուհու ծառան/սպասավորը», երրորդում անվանապես հիշվում է ևս մեկ «ծառա/սպասավոր», իսկ չորրորդ տեքստը խիստ պակասավոր է թարգմանության համար: Թվով 336 «ծառա/սպասավոր» է հիշատակվում «Սարդուրյան տարեգրության» մեջ: Վերջիններս հանդես են գալիս որպես $^{LÚ}$*ururdani*[269]: Նրանց գործառույթը, ինչպես նաև այլ փաստարկներ վկայում են, որ $^{LÚ}$ÌR/ERUM գաղափարագրի համար սկզբնապես ընդունվող «ստրուկ» նշանակությունը տեղին չէ և գերադասելի է օգտագործել «ծառա/սպասավոր» նշանակությունը (տե՛ս ստորև 4.2.3.):

(8) $^{SAL}$GAD-*ḫi-e*

Թոփրաքքալեի համալիրի անձնակազմի շարքում թվարկվում են նաև 66 կանայք (ներքինիների թվում), որոնք հանդես են գալիս որպես «դերձակ»: Թեև նման վերակազմության շուրջ եղել են տարակարծություններ[270], սակայն, տեքստի նոր հրատարակված լուսանկարն ու գրչագիրը հաստատում են այդ ընթերցումը[271]:

Հետաքրքիր է, որ Թոփրաքքալեի համալիրի անձնակազմում դերձակների թիվը միանգամայն համադրելի է ասորեստանյան պալատներում աշխատող դերձակների թվերի հետ, միջինը՝ 20 դերձակուհի նահանգային կենտրոնների արքայական պալատներում և մի քանի անգամ ավելի՝ Նինվեի պալատում[272]:

Հնարավոր է, որ արքունիքում եղել է նաև «գլխավոր դերձակ»-ի կամ «հանդերձապահ»-ի պաշտոնը (տե՛ս վերը): Վերին Անձավից գտնված երկրորդ նամակում արքայի խոսքն ուղղված է ոմն Գուլիլիի, ով հանդես է գալիս որպես $^{LÚ}$GAD[273]: Կախյալ կամ ռազմագերի կանանց հաճախ էին աշխատեցնում պետական արհեստանոցներում որպես դերձակներ, բուրդ մանողներ կամ թել հյուսողներ[274]:

(9) $^{LÚ}$ZÁ.[DIM.MA] (?)

Այս ընթերցումն առաջարկվել է Նիկոլայ Հարությունյանի կողմից Կարմիր բլուրից գտնված աղյուսակներից մեկի վրա նշմարվող $^{LÚ}$ZÁ/$^{LÚ}$NA$_4$.[…] գաղափարագրի պակասավոր հատվածի համար[275]: Նշանակությունն է «քարտաշ», «աղեղ

[268] КУКН, 428 лиц. стор. $_6$, 446$_6$, 524$_3$; CTU IV, CT Kb-1 Ro$_6$, CT Kb-4, Ro$_6$, CT Kb-11$_{3'}$, CB Ay-1$_5$.
[269] КУКН, 241 G$_{11}$; CTU I, A 9-3 VI$_{11}$.
[270] КУКН, 412 лиц. стор. $_{13}$, прим. 16. Հմմտ. Дьяконов 1963a: 81.
[271] CTU IV, CT Tk-1 Ro$_{13}$.
[272] Teppo 2007b: 267 and n. 55.
[273] Belli, Salvini 2003: 147; CTU IV, CB An-1$_1$.
[274] Տե՛ս, օրինակ, Postgate 2008a: 88; Richardson 2011: 29f.; ևն:
[275] Հարությունյան 1958, էջ 211; КУКН: 428 лиц. стор.$_{10}$, прим. 8.

պատրաստող» (շում. za.dim, աքք. *zadimmu*)[276]: Ընթերցումը, սակայն, միանշանակ չէ. այլ հետազոտողներ այստեղ տեսնում են $^{LÚ}$NA$_4$.DIB գաղափարագրերի կոմբինացիան:

1.1.5.6. **Չպարզաբանված գործառույթներ ունեցող այլ պաշտոններ կամ մասնագիտություններ**

Ուրարտական արքունի գրագրություններում հիշատակվում են խավ, պաշտոն կամ մասնագիտություն ներկայացնող այլ անձինք կամ մարդկանց խմբեր, որոնց պաշտոնը/մասնագիտությունն արտահայտված է վանկագրով, իսկ նշանակությունն անհայտ է: Տեսականորեն չի բացառվում, որ դրանց մի մասը հանդիսանա գաղափարագրով տրված պաշտոնների/մասնագիտությունների հնչյունագիր համապատասխանությունները կամ լինեն նոր տերմիններ: Դրանք են՝ (1) $^{LÚ}$*ibriuni*, (2) $^{LÚ}$*kuruḫi*, (3) $^{LÚ}$*šiardia*, (4) $^{LÚ}$*ṭè-ri*/ $^{LÚ}$*TE-RI* (?), (5) $^{LÚ}$*ešiate*, (6) $^{LÚ}$*unqaitani*/ $^{LÚ}$UN/ÙKU *qaitani*, (7) $^{LÚ.GIŠ}$*garrurda*/$^{LÚ\ GIŠ}$*garrurda*, (8) $^{LÚ}$*arudi*, (9) $^{LÚ}$*mardadi*, (10) $^{LÚ}$*ṣipikani*:

### 1.1.6. Գիրը, դպրությունը, ներքին և միջպետական գրագրությունը

1.1.6.1. **Գիրը և դպրությունն Ուրարտուում**

Հայկական լեռնաշխարհի տարածքում սեպագիր գրահամակարգերի կիրառության հնագույն վկայությունները կարող են վերաբերել առնվազն Ք.ա. 15-րդ դ-ին, երբ հատկապես լեռնաշխարհի արևմուտքի պետական կազմավորումները հայտնվեցին խեթա-միտաննական ազդեցության գոտում՝ այս երկու թագավորությունների հետ ստիպված լինելով կապվել դաշնակցային կամ վասսալական կապերով: Սա ինքնին ենթադրում է, որ նրանց իշխողների միջև կարող էր գոյություն ունենալ գրագրություն, չի բացառվում, որ տեղի իշխողների նստավայրերում գործել են խեթական կամ, միգուցե, միտաննական/աքքադական սեպագրին տիրապետող գրիչներ: Սա վստահաբար կարելի է ասել հատկապես Իսուվայի (Ծոփք) պարագայում, որի արքան բավական բարձր դիրք էր զբաղեցնում խեթական տերության իշխողների աստիճանակարգում և նրանց հետ գտնվում էր ակտիվ գրագրության մեջ[277]: Հնարավոր է թվում նույնն ասել նաև Ալշեի (Ալզի/Աղձնիք), Պախխուվայի, Ազզիի և Հայասայի համար, հատկապես, եթե հաշվի առնենք այս երկրների առաջնորդների հետ խեթերի կնքած «դաշնակցային» պայմանագրերի գոյության փաստը, ինչպես նաև գրագրությունների մասին որոշ հիշատակումներ[278]:

Միանշանակ է, որ Լեռնաշխարհի հարավում ծանոթ էին նաև միջագետքյան՝ աքքադական (միջինասորեստանյան) սեպագրին: Նախ, այս տարածքներում

[276] CAD 21, Z, 1961: 10 (*zadimmu*).
[277] Քոսյան 1997, էջ 179-185; նույնի՝ 1999, էջ 72-75; նույնի՝ 2004ա, էջ 129:
[278] Քոսյան 2004ա, էջ 109, 114-118, 124; Beckman 1996: 22ff. (No. 3).

միջինասորեստանյան շրջանում հիմնվել էին ասորեստանյան բազմաթիվ գաղութներ՝ ակտիվ փոխշփումների մեջ մտնելով տեղի բնակչության հետ: Օրինակ, Աշշուրից գտնված և տարբեր զինվորականների ու մասնագետների ցուցակ ներկայացնող տեքստերից մեկում թվարկվում են նաև «սուբարեացի» ութ թարգմանիչ, ամենայն հավանականությամբ՝ տեղի բնակիչներ, որոնք տիրապետում էին նաև սեպագրին[279]: Մյուս կողմից, հայտնի է Վանա լճի ավազանի հարավ, հարավ-արևմտյան շրջաններում տեղորոշվող Այա երկրի կառավարչի ասսուրերեն նամակը, ընդ որում, տեքստը թվագրվել է ասորեստանյան էպոնիմների ցանկի համաձայն և վերաբերում է Թիգլաթպալասար I-ի կառավարման շրջանին (Ք.ա. 1114–1077 թթ.)[280]: Սեպագիրը հազիվ թե կիրառություն չունենար Հայկական լեռնաշխարհի հարավի այնպիսի պաշտամունքային կենտրոնում, ինչպիսին էր Կումմեն: Ք.ա. 1-ին հազ-ի սկզբների համար սա արդեն հաստատված է նաև գրավոր աղբյուրներով. ասորեստանյան բազմաթիվ զեկուցագրերում նշվում է ասորեստանյան արքունիք Կումմեի, Ուկկուի, Խուբուշկիայի, Մուծածիրի առաջնորդների ուղարկած և այնտեղից ստացած նամակների մասին: Այսպիսով, ամենևին էլ տարօրինակ չէ, որ Հայկական Տավրոսներից քիչ դեպի հյուսիս՝ Վանա լճի ավազանում՝ Տուշպայում, Ք.ա. 9-րդ դ-ում հանդիպում ենք արդեն տեղի առաջնորդի թողած սեպագիր արձանագրությունների: Լութիպրիի որդի Սարդուրիի թողած այդ տեքստերը թվով վեցն են և գրված են նորասորեստանյան բարբառով (նկ. Ա-5/1)[281]:

Լութիպրիի որդի Սարդուրիի ժամանակ հազիվ թե անհրաժեշտություն կար և կամ հնարավորություն՝ ստեղծելու սեփական սեպագիր դպրություն: Նրա թագավորությունը չի ենթադրում այնպիսի սահմաններ և կառուցվածք, որն անհրաժեշտություն կստեղծեր փոխառված գիրը օգտագործելուց բացի կատարելագործելու այն կամ ստեղծելու սեփականը: Մեզ հասած նյութը ցույց է տալիս, որ սեպագիրն այստեղ ունեցել է խիստ սահմանափակ կիրառություն: Այստեղ նշենք, որ Վանի միջնաբերդից դուրս՝ արևելյան խանդակի մոտի որմնախորշի պատին փորագրված ասսուրերեն արձանագրությունը (նկ. Ա-5/2)[282], որն ըստ ոմանց ներկայացնում է իրավական բնույթի տեքստ-օրենքների ժողովածուի հատված[283], իսկ

[279] Postgate 2008a: 84.
[280] Lambert 1991: 314ff.
[281] ԿՄԿՀ, 1-6; CTU I, A 1-1A-F. Ուրարտուում ասսուրերեն սեպագրի կիրառության համար մանրամասն տես նաև Salvini 2013: 113sqq.
[282] Dinçol and Dinçol 1986: 351ff., Taf. I-V; CTU I, A 1-2.
[283] Diakonoff 1989: 93f.; Mayer 2013a: 138sqq.

ըստ այլոց՝ զոհաբերության ցանկ[284], թեև վերագրվում է Լութիպրիի որդի Սարդուրիին[285], սակայն, դա հիմնավորելու համար կռվաններ առայժմ չկան:

Ասվածով հանդերձ նկատենք, որ Սարդուրիի արձանագրությունները ցույց են տալիս որոշ առանձնահատկություններ, որոնք չեն տեղավորվում նորասորեստանյան սեպագրի ավանդույթների մեջ: Օրինակ, IM գաղափարագիրը, որը նշանակում է «կավե աղյուսակ», օգտագործվել է «արձանագրություն» բառն արտահայտելու համար[286]: Շատ ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում հենց Սարդուրի անվան գրությունը, որը կարող է լույս սփռել, թե ում կողմից է բերվել սեպագիրը Սարդուրիի թագավորություն:

Սարդուրին (հավանաբար հնչել է *sardorə*), որին նմանեցվել է ասորեստանյան՝ գրեթե նույն կերպ արտասանվող Իշթարդուրի անունը (հմմտ. *(i)s(s)ardorə*), դիցակիր, խոսուն անուն է: Տարօրինակ է, սակայն, որ նշված արձանագրություններում նրա անվան գրությունը խիստ տարբեր է ասորեստանյան զուգահեռներից: Եթե Ասորեստանում այս անունը գրվել է $^{md}$MÙŠ-BÀD ($^{md}$XV-BÀD), $^{md}$MÙŠ-*du-ri* տարբերակներով, ինչպես հանդիպում ենք նաև Ուրարտուում մեկ անգամ՝ Իշպուինիի հայրանվան մեջ ($^{md}$XV-BÀD[287]), և տասնյակներով՝ ասորեստանյան տեքստերում, սակայն, Տուշպայի արձանագրություններում նրա անունը գրվել է բոլորովին այլ գրությամբ՝ $^{md}$*ri*/RI-BÀD (= $^{md}$*ridur*): Հետագայում, երբ զուգադրվել է այս անունը ասորեստանյան տեքստերում հանդիպող Իշթարդուրի և Սարդուրի անվանաձևերի հետ, ինչպես նաև ելնելով այն փաստից, որ ուրարտական արձանագրություններից մեկում[288] նույն անունը գրվել է նաև *sar*-[289] սեպանշանով՝ $^{m}$*sar-du-ri* (որն ամենևին կապ չունի Իշթար դիցանվան գրությունների հետ և տարբերվում է նաև վերոհիշյալ *ri*/RI-ից[290]), պարզ է դարձել, որ անվան սկզբնամասում *ri*/RI- տառադարձվող սեպախումբն ունեցել է նաև *sar*- նշանակությունը՝ դառնալով այս վանկն արտահայտող թվով հինգերորդ սեպախումբը ($sar_5$):

Ելնելով անվան կազմությունից, հավանաբար նաև այն փաստից, որ անունը դիցակիր է, հավասարության նշան է դրվել այդ անունների առաջին բաղադրիչների

---

[284] Salvini 1982b: 329sq; նույնի՝ 2014a: 308f., Fig. 14.11; Tarhan 2007a: 761ff.

[285] Տե՛ս Salvini 1982b: 327ff.; նույնի՝ 2014a: 308; Diakonoff 1989: 93; Tarhan 2011: 301f.

[286] Քննարկումը տե՛ս Wilhelm 1986: 101f.; Salvini 1995a: 36.

[287] Ուրարտական արձանագրություններում ճնշող մեծամասնությամբ հանդիպում է $^{md}$*sar*$_5$*-du-ri* գրելաձևը: Բացառություն է Օձասարի ուրարտական արձանագրությունը, ուր առկա է $^{md}$XV-BÀD գրությունը՝ Իշթար աստվածության թվային համարժեքով ($^{d}$XV = $^{d}$Ištar). Տե՛ս ԿՈՒՀ, 39a$_1$; CTU I, A 3-8$_1$.

[288] ԿՈՒՀ, 249$_2$; CTU I, A 9-6$_2$.

[289] Borger 1978: 138f. (No. 331e).

[290] Հմմտ. Borger 1978: 82 (No. 86); 86. (No. 103).

միջև (*sar*$_5$ = MÙŠ[291]) և, ըստ այդմ, անունն ընթերցել որպես Իշթարդուրի կամ Սարդուրի: Սակայն, որքան որ տեղյակ ենք, ասորեստանյան և ընդհանրապես՝ սեպագիր այլ գրահամակարգերում չկան *ri*(RI)/*sar*$_5$ = MÙŠ համապատասխանության վկայություններ[292]: Հետևաբար, ինչու՞ են Տուշպայում գրիչները դիմել նորամուծության, երբ նրանք Սարդուրիի անունը գրելու համար ունեին բազմաթիվ տարբերակներ՝ թե գաղափարագիր գրությամբ (տե՛ս վերը), և թե վանկագիր (հմմտ., օրինակ, $^{m}$*sa-ar-du-ri*, $^{m}$*sa-ar-da-ur-ri* գրելաձևերը[293], ինչպես նաև $^{URU}$*sa-ar-du-ri-a-na*/$^{URU}$*sa-ar-da-ur-ri-a-na*, $^{URU}$*sar-du-ri-ḫu-ur-da* քաղաքանունները ևն[294]) և անհասկանալի է մնում, թե ինչու են դա արել կիրառելով *ri*/RI սեպախումբն ու դրան տալով նոր նշանակություն՝ *sar*$_{(5)}$:

Կարծում ենք, սա կարող է ունենալ մեկ բացատրություն: Գրիչների համար Իշթար աստվածուհու անունը, որի գաղափարագիրը կիրառվել է Սարդուրի/Իշթարդուրի անվան մեջ, պարզապես հնչել է որպես *sar*: Այս առումով ուշադրության է արժանի այն փաստը, որ նորասորեստանյան դարաշրջանի ասսուրերեն մի քանի տեքստերում Իշթար դիցանունը, որ հնչել է *is(s)ar*, գրվել է որպես *šār* (հնչել է՝ *sar*), ինչպես, օրինակ, Իշթար-թարիբա անձնանվան գրությունները ($^{md}$*iš-šar–ta-ri-bi*, $^{md}$*iš-šár–ta-ri-bi*, $^{m}$*šar–ta-ri-bi*, $^{md}$*šár–ta-ri-bi*)[295]:

Ասսուրերեն բառերի բառասկզբի ձայնավորների անկումը բնորոշ էր արամեական լեզվաշխարհին (հմմտ. Aššur → Šūr (արամ. sr), ինչպես, օրինակ, srslmh → Aššur-šallim-ahi, srgrn → Aššur-gārû'a-nēre անձնանուններում և այլն: Ի դեպ, այս նույն երևույթն է ընկած նաև Սիրիա (*Súrios/Súros/Suría*) անվան դեպքում՝ ծագելով Ասորեստանի անունից (*Assúrios/Assuría*)[296]: Ըստ այդմ, տեղին է ենթադրել, որ Տուշպայի

[291] Borger 1978: 268.

[292] Տե՛ս և հմմտ. նաև Salvini 1998a: 95: Այլապես, խնդրո առարկա սեպախմբի համար պետք է վերականգնվեր ոչ թե *sar*$_5$, այլ պարզապես MÙŠ արժեքը, եթե գործ ունենայինք սեպախմբի իմաստի և ոչ թե հնչողության հետ, առավել ևս՝ հաշվի առնելով դրա դիմաց մշտապես արձանագրվող «աստված» որոշիչը: Ուրարտական տեքստերից մեկում Սարդուրի անվան $^{m}$*sar-du-ri* գրության առկայությունը վճռորոշ փաստարկ չէ: Տե՛ս վերը՝ նույն անվան $^{md}$MÙŠ-*du-ri* և $^{m}$*sa-ar-du-ri* գրությունները:

[293] Tadmor 1994: 52f. (Ann. 17: 10′); 124f. (Summ. 1: 20); 132ff. (Summ. 3: 15′); Tadmor, Yamada 2011, Nos. 9: 10′, 39: 20, 41: 15′.

[294] Հղումների համար տե՛ս Parpola 1970: 305; Tadmor 1994: 303; Tadmor, Yamada 2011: 203. Բացի այդ, ասորեստանյան արքունի դիվանի զեկուցագրերից մեկում հիշվում է Սուրուդուրիանի քաղաքը ($^{URU}$*su-ru-du-ri-a-ni*): Տե՛ս Saggs 2001: 116f. (ND 2453: r.22). Թերևս նույն քաղաքը նկատի ունի մեկ այլ տեքստ, ուր քաղաքանունը գրված է $^{URU,d}$MÙŠ-*dur-a-na/ni* տարբերակով (Սարդուրանա/ի): Տե՛ս Saggs 2001: 120f. (ND 2487: r.5, 10). Նույնն է, ինչ Սարդուրիանին (՞):

[295] Radner 1998: XXV.

[296] Մանրամասն տե՛ս Parpola 2004: 5ff.; Rollinger 2006: 283ff. ևն:

արձանագրությունները թողած դպիրները եղել են արամեացիներ: Վերջիններս կարող էին լինել շրջիկ դպիրներ[297]:

Տուշպայից հետո կամ գուցե նաև զուգահեռաբար՝ ասորեստանյան սեպագիրը մուտք գործեց բիայնական թագավորություն: Անկասկած է, որ այստեղ սկզբնապես տեքստերը գրվել են միմիայն ասսուրերեն: Մեզ են հասել Իշպուինիի՝ դեռևս միանձնյա գահակալության շրջանից եկող ասսուրերեն տեքստեր[298]: Մյուս կողմից, Իշպուինիի կատարած կարևորագույն քայլերից էր սեփական՝ բիայնական սեպագիր դպրության ստեղծումը[299], որի առաջին օրինակները ևս թվագրվում են նրա միանձնյա գահակալության շրջանով (նկ. Ա-6/1)[300]:

Հաշվի առնելով այն փաստը, որ $sar_5$ գրությունը (թերևս գերադասելի տարբերակը $šar_{(x)}$ տառադարձումն է) մուտք է գործել նաև բիայնական սեպագիր դպրություն, ապա կարելի է ենթադրել, որ բիայնական դպրոցի կազմավորման ակունքներում պետք է տեսնել նաև արամեացի՝ թերևս այդ նույն գրիչներին: Սրանով կարելի է բացատրել ուրարտական արքաների թողած արձանագրություններում նկատվող որոշ արխաիզմներն ու շեղումները, ինչպես, օրինակ, վերը նշված IM՝ «կավե աղյուսակ» գաղափարագրի պարագայում, որը հանդիպում է նաև Արգիշթի Մենուայորդու արձանագրություններից մեկում՝ կիրառվելով DUB՝ «արձանագրություն» շումերագրի փոխարեն[301]:

Բիայնական սեպագրի ծնունդը և կիրառությունը դեռևս դուրս չմղեց ասսուրերենը և ընդհուպ մինչև Մենուայի միանձնյա իշխանության շրջանը ներառյալ հանդիսավոր արձանագրություններ կազմելիս երբեմն օգտագործվում էր ասսուրերեն գիրը[302]: Շուշանցից գտնված Մենուայի երկլեզու արձանագրությունը հիշեցնում է Իշպուինիի՝ Ծվստանի ասորեստանյան տեքստը, դրա արխայիկ բնույթը և որոշ գրչագրական նրբություններ հուշում են, որ Մենուայի օրոք շարունակվել է Իշպուինիի ժամանակաշրջանի ասորեստանյան դպրոցի ավանդույթները[303]: Մասնավորապես, Վանին մերձակա Թութան գյուղից հայտնի Մենուայի արձանագրության մեջ *-tú-* սեպանշանի փոխարեն կիրառվել է *-tu-* սեպանշանը, որն ունի միանգամայն այլ

[297] Հմմտ. Mayer 2013b: 111sq. Շրջիկ դպիրների համար տե՛ս, օրինակ, Cohen 2004: 81f. and n. 4; Weeden 2011: 597ff.
[298] Belli *et al.* 2009: 91ff.; CTU IV, B 2-7 A-E.
[299] Ղափանցյան 1940, էջ 139; Меликишвили 1954: 375; Հմայակյան 1994, էջ 19; նույնի՝ 2012, էջ 31-32:
[300] Հմմտ. КУКН, Послесловие с. 531; CTU I, A 2-6A-C տեքստերը:
[301] CTU I, A 8-13$_8$.
[302] Տե՛ս КУКН, 141; CTU I, A 5-44 տեքստը:
[303] Belli, Salvini 2004: 173.

գրություն: Դա պատճառ էր դարձել, որ արձանագրությունը համարվի կեղծ[304]: Մինչդեռ, նման գրությունը հաճախ է հանդիպում նորասորեստանյան սեպագրում[305]: Նույնը վերաբերում է նշված արձանագրության մեջ հանդիպող *-li-* սեպանշանի գրության տարբերակներից մեկին, երբ տվյալ նշանը երեք փոքր հորիզոնական սեպերի փոխարեն գրվել է երկու շարք երեքական սեպերի կիրառությամբ[306]: Սեպագրի գրության այդ ձևը հայտնի է նաև Մենուայի տարբեր տեքստերից[307], իսկ առաջին կիրառությունը հանդիպում է Իշպուինիի և Մենուայի «համատեղ գահակալության» շրջանում կազմված տեքստերում[308]: Ուրարտական դպրության մեջ հազվադեպ կիրառվում է *-diš-* սեպանշանը *-di-iš-* ավանդական գրության փոխարեն, ևն[309]: Մենուայի ժամանակաշրջանից հետո ուրարտական սեպագիր դպրության մեջ մինչ այդ հանդիպող մի քանի սեպախմբեր (*tu*[310], *di*[311], *eš*$_{15}$[312] վանկագրերը, DUR$_8$/BÀD գաղափարագիրը[313], ĮI.A հոգնակիակերտ ցուցիչը[314] ևն, որոնք հաճախ հանդիպում են միայն մեկ անգամ[315]) կիրառությունից դուրս են մղվում: Սա խոսում է այն մասին, որ ուրարտական սեպագիր դպրության «գրահամակարգ»-ի մշակումները շարունակվել են նաև Մենուայի գահակալության շրջանում:

Հետագայում երկլեզու արձանագրություններ թողնելու ավանդույթը սկսեցին կիրառել միայն այն տարածքներում (օրինակ՝ Մուծածիրում), որտեղ այդ գիրը կիրառվում էր բավական վաղուց և, թերևս, մատչելի էր շատերին: Այստեղ նշենք նաև, որ ուրարտական բրոնզե իրերի արքայական արձանագրությունները երբեմն նույնպես թողնվում էին ասսուրերեն: Մասնավորապես, խոսքը վերաբերում է BE-LI (*til-li*) NÍG (*šá*) $^{m}$*iš-pu-ú-i-ni* և նույնաբնույթ արձանագրություններին[316], որոնք հնարավոր է կարդալ ինչպես ուրարտերեն՝ շումերագրերի կիրառությամբ, այնպես էլ՝ ասսուրերեն:

Ուրարտական (բիայնական) սեպագիր դպրոցը, ինչպես վերը նշվեց, հիմնել է Իշպուինին: Գրականության մեջ ուրարտական գրի և սեպագիր դպրոցի ձևավորմանը

[304] Церетели 1939: 61 сл. (№ 23, Таб. XIX/a-б, XXX/23):
[305] Дьяконов 1951б: 102 сл.
[306] CTU I: 287 (059).
[307] КУКН, 91 Текст I$_4$, Текст II$_9$ (Таб. L/1), 92$_{3\text{-}4}$ (Таб. L/2), 97$_3$ (Таб. LI/1), 105 шир. стор.$_{3\text{-}4}$, уз. стор.$_{4\text{-}5}$; CTU I, A 5-45A$_{3\text{-}4}$, B$_3$ (CTU III: 150), A 5-47$_{4,\ 9}$ (CTU III: 151), A 5-48 f.f.$_{3\text{-}4}$, f.d.$_{4\text{-}5}$ (CTU III: 152), A 5-50$_3$ (CTU III: 153).
[308] *E.g.* КУКН, 37 Текст I$_5$, Текст II$_{11}$ (Таб. XVII/2), 38 Текст I$_9$ (Таб. XVIII); CTU I, A 3-1$_9$, (CTU III: 69), A 3-3$_{5,\ 11}$, (CTU III: 76), etc.
[309] Дьяконов 1951б: 104, прим. 4.
[310] Belli, Salvini 2004: 169.
[311] КУКН, 39$_6$; CTU I, A 5-27$_{10}$, CTU IV: 282.
[312] CTU I, A 3-9 Ro$_{6,\ 10}$, etc., A 5-10$_4$, CTU IV: 282.
[313] Գրեկյան 2010, էջ 84 և ծնթ. 39:
[314] Հետագայում հանդիպում է միայն ուրարտական արքաների թողած երկլեզու արձանագրությունների ասսուրերեն տեքստերում: Տե՛ս CTU I, A 10-3 Vo$_{31'}$, A 10-4 Vo$_{4'}$.
[315] КУКН, 39$_6$; CTU I, A 3-10$_6$.
[316] Տե՛ս, օրինակ, CTU IV, B 2-5, B 2-6, etc.

նվիրված անդրադարձները եզակի են: Հայտնի է, որ ուրարտական սեպագիր գրահամակարգը մեծապես կրում էր միտաննական, խեթական, միջին և նորասորեստանյան և անգամ շումերական դպրոցների ազդեցությունը: Հատկապես նկատելի է ուրարտական արագագրի վրա միտաննական ազդեցությունը: Ուրարտական սեպագիր դպրության արմատները, ըստ այդմ, գնում էին Ք.ա. 2-րդ հազարամյակ[317]: Այս առումով պատահական չէ, որ ուրարտական սեպագրում ի հայտ են գալիս սեպանշաններ կամ դրանց գաղափարագիր համադրություններ, որոնք վաղուց դուրս էին մղվել կիրառությունից և չեն հանդիպում նորասորեստանյան սեպագիր դպրության մեջ: Նման օրինակներից են *má* սեպանշանը, որը կիրառվել է միջինասորեստանյան ժամանակաշրջանում, միջինասորեստանյան գրչության օրինակ է Այանցի «դպրոցական» տեքստերից մեկում հանդիպող ŠA սեպանշանը[318]: Ուրարտական դպրության մեջ կիրառվող «թագուհի» գաղափարագրի գրությունը՝ SAL/MÍ.LUGAL, նույնպես հանգում է Ք.ա. 2-րդ հազ-ի սեպագիր ավանդությանը[319] և տարբերվում է նորասորեստանյան շրջանում կիրառվող «պալատի կին» (իմա՝ «թագուհի») գրությունից (MÍ.É.GAL/*sēk/gallu*)[320], LIŠ գաղափարագիրը, որը կիրառվել է որպես $li_{12}$ վանկագիր[321], ինչը հանդիպում է միայն խեթական սեպագիր գրահամակարգում[322] և այլն[323]:

Ենթադրվում է, որ ուրարտական սեպագիրը հինարևելյան դպրոցներին կապող օղակ է ծառայել Ալզիին կամ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքի մեկ այլ երկիր[324]: Հնարավոր է՝ այդ դերը կատարել է Շուբրիան: Հետաքրքիր է նաև, որ խեթական դպրոցը ևս ձևավորվել է Հյուսիսային Սիրիայի սեպագրական դպրոցներից մեկի հիման վրա[325]:

Ուրարտական սեպագիրը, սակայն, հինարևելյան իր զուգահեռների մեխանիկական կիրառում չէր միայն, այլ ձգտում էր ինքնուրույնության: Առաջին փոփոխությունները նկատվում է սեպագրության ոճի մեջ. եթե Մենուայի ժամանակ դեռևս նկատվում էր նորասորեստանյան սեպագրության ոճական ազդեցությունը

[317] Дьяконов 1963a: 19 сл.; Diakonoff 1989: 79.
[318] Salvini 2001a: 313, n. 1. Հմմտ. CTU IV, CT Ay-1 Obv. $V_4$.
[319] Salvini 2012b: 106; նույնի՝ 2014b: 18.
[320] Parpola 2012: 619f.
[321] КУКН, 424, прим. 44.
[322] Սրա վրա մեր ուշադրությունը հրավիրեց Միրյո Սալվինին, ում հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:
[323] Այս հարցի շուրջ տես նա՛և Diakonoff 1989: 79, n. 14.
[324] Diakonoff 1989: 79.
[325] Beckman 1983: 100; Wilhelm 2010: 256ff.

հատկապես հանդիսավոր արձանագրություններում[326], ապա Արգիշթի Մենուայորդուց սկսած ուրարտական սեպագրությունը ձեռք է բերում իր ուրույն տեսքը, որի մեջ տեսանելի են անգամ տարբեր արքաների ժամանակաշրջաններում գործած գրիչների ձեռքի ոճական տարբերությունները՝ ուրարտական սեպագրության ներսում[327]: Ռուսա Սարդուրորդուց սկսած և հատկապես Ռուսա Արգիշթորդու ժամանակ վերադարձ է նկատվում նորասորեստանյան ոճին (նկ. Ա-6/2 (Մենուա), Ա-7/1 (Արգիշթի Մենուայորդի), Ա-7/2 (Սարդուրի Արգիշթորդի), Ա-8/1 (Ռուսա Սարդուրորդի), Ա-8/2 (Ռուսա Էրիմենայորդի), Ա-9/1-2 (Ռուսա Արգիշթորդի))[328]:

Գաղափարագրերի մի մասը, որ կիրառվում էր ուրարտական սեպագրում, հանդիսանում էր ուրարտացի գրիչների/գիտունների նորամուծությունը սեպագիր դպրության մեջ: Օրինակ, հատկապես մասնագիտություններ/պաշտոններ ցույց տվող մի շարք գաղափարագրերի կոմբինացիաների հանդիպում ենք միմիայն ուրարտական տեքստերում ($^{LÚ}$NA$_4$.DIB, $^{LÚ}$É.TIN, $^{GIŠ}$NU.SAR/KIRI$_6$, $^{LÚ}$A.ZU$_x$-*li* ևն)[329]: Այդ նույնը վերաբերում է նաև առանձին սեպանշանների. ուրարտական տեքստերում նոր նշանակությամբ են կիրառվել TUR գաղափարագիրը որպես *pu*$_x$ վանկագիր[330], *gi* սեպանշանը կիրառվել է *ji/jè* նշանակությամբ[331] և այլն[332]: Սա ցույց է տալիս, որ Ուրարտուում գործել է մի դպրոց, ուր ոչ միայն կիրառվել է փոխառված գրահամակարգ, այլև փորձ է արվել կատարելագործել այն և հարմարեցնել տեղական կարիքներին:

Ցավոք, Ուրարտուում դպրոցների (շում. é.dub.ba.a) գոյության մասին գրավոր վկայություններ չկան: Սակայն, Այանցից դեռևս 1990 թ-ին հայտնաբերված սեպագիր մի աղյուսակ ուղղակի մատնանչում է այստեղ սեպագիր ուսուցանելու մասին: Այդ աղյուսակում չկա կապակցված տեքստ, փոխարենը՝ իրար տակ, միևնույն ձեռագրով, գրված են տարբեր սեպանշաններ՝ նույն նշանը երբեմն կրկնելով մինչև ութ անգամ: Ակնհայտ է, որ գործ ունենք «դպրոցական» տեքստի հետ[333]: Ուշագրավ է, որ Այանցի 2007 թ. պեղումների ժամանակ ամրոցի խեցեղենի պահեստի մոտ՝ փոքր սափորների միջից գտնվեցին չթրծած չորս կավե աղյուսակներ, որոնց վրայի գրությունների

[326] Քննարկումների համար տե՛ս Дьяконов 1951ճ: 103; նույնի՝ 1963a: 18 сл.; Diakonoff 1989: 78ff.; Diakonoff, Medvedskaya 1987: 392f.; Wilhelm 1986: 97ff.; նույնի՝ 1994: 354f., Abb. 3; Salvini 2014a: 308f.
[327] Wilhelm 1994: 352ff.; CTU IV: 281f.
[328] Меликишвили 1960: 34; Wilhelm 1994: 352; Գրեկյան 2004բ, էջ 247:
[329] Дьяконов 1963a: 42, 47, 52; КУКН, 408, прим. 2; Diakonoff 1989: 78; Grekyan 2005: 42f.
[330] Salvini 2001a: 262, 271f.
[331] Дьяконов 1963a: 30 сл., 96 сл.
[332] Дьяконов 1963a: 96 сл.; Salvini 1995a: 194; CTU IV: 282f.
[333] Salvini 2001a: 312ff.; CTU IV, CT Ay-1.

կրկնություններից դատելով՝ դրանք ևս դպրոցական տեքստեր էին և կարող են վկայել Այանցում սեպագիր ուսուցանող «դպրոց»-ի գոյության մասին[334]: Այանցից գտնված մեկ այլ տեքստում նշվում է «սեպագիր աղյուսակներ» ստանալու մասին «մառանի արձանագրության» (՞) համար (*nunabie ini<li>* $^{GIŠ}$ZU-*li* $^{m}$*rusae* DUB-*gi* É GEŠTIN)[335]: Արդյո՞ք այս տեքստը պետք է ընկալել տվյալ արձանագրությունները պահեստավորելու («արխիվացնելու») իմաստով, նամանավանդ, ինչպես հայտնի է, խեցանոթների մեջ աղյուսակներ պահելն ամենևին էլ բացառիկ երևույթ չէր[336]: Այս պրակտիկայի հետ կարող են կապված լինել մի քանի բուլլաների արձանագրումները՝ «կնիքներ»-ի հանրագումարային թվեր, ինչպես, օրինակ, «61 կնիք» (իմա՝ «արձանագրություն(՞)», «կնքված (աղյուսակ(՞)[337]/գալարափաթեթ(՞)»), «100 կնիք», «30 կնիք» ևն[338]:

Դպիրների նոր սերունդները սովորել են ոչ միայն բիայնական սեպագիրը: Դպիրները ստացել են խորացված կրթություն, ծանոթ են եղել հինարևելյան սեպագրության ողջ ներկապնակին և իրենց գիտելիքները դրսևորել են, երբ ծագել է դրա անհրաժեշտությունը: Օրինակ, դպիրը/գրիչը, որպես բացառություն, Արգիշթի անվան մեջ կիրառել է *ub* նշանը դրա՝ *ár* նշանակությամբ[339], և *sar* սեպանշանը Սարդուրի անվան մեջ՝ $sar_5$-ի փոխարեն: Դրա պատճառն այն էր, որ այդ անուններն փորագրելու համար տվյալ արձանագրության տարածքը բավական փոքր էր, և դպիրները կիրառել են այն սեպանշանները, որոնք զբաղեցնում էին շատ ավելի կարճ տարածք, քան ընդունված գրության դեպքում[340]: Այդ նույնը կարելի է ասել *ár* սեպանշանով Արգիշթի անվան գրության մեկ այլ դեպքի համար[341]:

Ուրարտուում դպրոցները, ինչպես երևում է, գործում էին խոշոր կենտրոններում: Իսկ ընդհանուր առմամբ՝ գրային մշակույթն Ուրարտուում տարածված չէր, ուներ սահմանափակ կիրառություն և ակնհայտ է, որ ծառայում էր միմիայն պետության պահանջները բավարարելուն: Ինչ վերաբերում է ուրարտական սեպագրի լեզվին, ապա ենթադրվում է, որ որպես այդպիսին, որպես «պետական լեզու» ընդունվել է Կումենուի (Կումմե) խոսվածքը[342]: Դա չի բացառվում, սակայն, չպետք է անտեսել այն

[334] Çilingiroğlu, Batmaz 2014: 178; Çilingiroğlu 2015: 37.
[335] CTU IV, CB Ay-$51_{5-8}$.
[336] Postgate 1986b: 31.
[337] Այս առումով կարելի է նշել, որ միջինասորեստանյան պրակտիկայում «կնիք» բառը կարող էր արտահայտել «կնքված (աղյուսակ)» իմաստը: Տե՛ս Postgate 1986b: 21. Տե՛ս նաև Salvini 2005b: 265f.
[338] Տե՛ս, համապատասխանաբար, CTU IV, CB Ba-3, CB Ba-10-11.
[339] Borger 1978: 125 (No. 306).
[340] КУКН, $249_2$, прим. 1-2; CTU I, A 9-$6_2$.
[341] CTU I, A 8-$13_7$.
[342] Հմայակյան 1992, էջ 129; նույնի՝ 1994, էջ 19; նույնի՝ 2012, էջ 32:

փաստը, որ Կումենուի բնակչությունն ավելի շուտ պետք է խուռիախոս լիներ, քան՝ ուրարտախոս:

Ինչ վերաբերում է բիայնական պատկերային գրին կամ «մեհենագրությանը», ինչպես ընդունված է հայ պատմագիտության մեջ, ապա մեզ հասած փաստական նյութի սղությունը հնարավորություն չի տալիս միանշանակ պնդելու, որ գրահամակարգը հնարավոր է վերծանել, հակառակ այն փաստի, որ այս ուղղությամբ արվել է մեծ աշխատանք[343]: Այստեղ նշենք, որ հայտնի է կավե աղյուսակի վրա գրված երկուսուկես տողանի ընդամենը մեկ տեքստ, ենթադրելի է՝ տնտեսական բովանդակությամբ (նկ. Ա-10/1)[344], երկու կարճ տեքստեր են պահպանվել բրոնզե նվիրատվական թիթեղների (նկ. Ա-11/1-2)[345], երեքը՝ բրոնզե թասերի[346], մի քանի կնքադրոշմների վրա, ևն (նկ. Ա-10/2-5)[347]: Ընդհանուր առմամբ՝ նման տեքստերի թիվը չի անցնում երկու տասնյակը, որոնցից առավել ընդարձակը այսպես կոչված «Բուդինի թիթեղ»-ն է՝ հինգ կամ վեց տողից և մոտ 20 նշանից բաղկացած: Փոխարենը՝ մեծ թիվ են կազմում տարբեր իրերի վրա հանդիպող առանձին մենանշանները[348]: Առանձին խումբ են կազմում տարողության նշումները կարասների և խոշոր խեցանոթների վրա (Կարմիր բլուր, Թոփրաքքալե, Քայալըդերե, Վերին Անծավ, Լիվար, թերևս նաև՝ Էրեբունի): Դրանց նշանակությունը հնարավոր է դառնում պարզել հաճախ՝ միևնույն կարասների վրա սեպագրով արված արձանագրումների հետ զուգադրելու շնորհիվ[349]:

Ուրարտուում կամ, առնվազն, նրա արևմտյան ծայրագավառներում կիրառվել է նաև խեթալուվիական հիերոգլիֆային գիրը: Նախկինում հայտնի էին այդ գրով գրված թվով 10 կարճ արձանագրություններ, որոնցից 8-ը՝ մատնանշելու համար կարասների տարողության չափերը[350], իսկ երկուսը, ենթադրաբար, անձնանուններ են (նկ. Ա-12/1-3): Ալթըն-թեփեի նոր շրջանի պեղումների ժամանակ հայտնաբերվեցին լուվիական հիերոգլիֆային գրով գրված կարասների նոր բեկորներ[351]:

---

[343] Пиотровский 1944: 285 сл.; Ղասաբյան 1960, էջ 83-86; Барсегян 1961: 238 сл.; նույնի՝ 1967: 85 сл. (նշվ. գրականությամբ); Barnett 1974: 43ff.; Вайман 1978: 100 сл.; Մովսիսյան 1998ա; Movsisyan 2010: 166ff.; Salvini 1995a: 203 ff.; Çilingiroğlu 1997: 151f.; Hellwag 2012: 207ff.; etc.

[344] Lehmann-Haupt 1907: 108f. (No. 40, Fig. 81), նույնի՝ 1931: 588; Wartke 1993: Taf. 86.

[345] Barnett 1974: 43ff., Pl. 11; Taşyürek 1975b: 154f., Pl. 36/a; Movsisyan 2010: 166ff., Figs. 6-7.

[346] Lehmann-Haupt 1907: 100 (Nr. 28, Fig. 71); Барсегян 1961: 240, рис. 3-4; Wartke 1990: 72, Abb. 13, Taf. 18; նույնի՝ 1993: 89f., Abb. 38.

[347] Barnett 1950: 6f., Fig. 4, Pl. 7/2; նույնի՝ 1974: 49ff., Fig. 3; Մանրամասն տե՛ս Մովսիսյան 1998ա, էջ 18-22:

[348] Барсегян 1961: 239, рис. 1; Barnett 1974: 48ff., Fig. 2; Մովսիսյան 1998ա, էջ 18-22:

[349] Մովսիսյան 1998ա, էջ 24; Grekyan 2009: 99ff. (նշվ. գրականությամբ):

[350] Steinherr 1958: 3, 97ff.; Barnett, Gökce 1953: 124ff., Pl. 16/1; Laroche 1971 [1973]: 55ff., Fig. 1, Tab. 1-4 ; Klein 1974: 77ff., Fig. 1; Hawkins 2000: 588f. Ուրարտուում խեթա-լուվիական հիերոգլիֆային գրի կիրառության մասին տե՛ս նաև Çilingiroğlu 1984: 81ff.

[351] Karaosmanoğlu, Korucu 2012: 133, Fig. 15.

Սահմանափակելով այս բաժինը նշենք Բորիս Պիոտրովսկու կողմից ժամանակին առաջարկված տեսակետը, ըստ որի՝ Ուրարտուում կարող էր կիրառվել արամեերենը՝ գրված կաշվե գալարափաթեթների վրա[352]: Ինչ խոսք, արամեերենն այդ շրջանում արդեն իսկ ուներ լայն կիրառություն ասորեստանյան տերության մեջ և այդ գրի կիրառությունը նաև Ուրարտուում միանգամայն հավանական է: Այդ առումով կարող ենք հիշել Մաննայի թագավորության տարածքից հայտնաբերված Բուկանի արամեերեն արձանագրությունը, ուր հիշատակվում է նաև Խալդի աստծո անունը[353]: Մաննայում արամեերենի կիրառության համար կան նաև անուղղակի տվյալներ[354]: Ցավոք, Ուրարտուի տարածքից ուղղակի վկայություններ առայժմ մենք չունենք: Բորիս Պիոտրովսկու կարծիքը, որ Կարմիր բլուրից հայտնաբերված բուլլաների վրա երևում է պապիրուսե գալարափաթեթի թողած դաջվածքը և այն քողը, որով կապվել է գլանափաթեթը, կարող էր լինել կարասների բերանը ծածկող քաթանի և այն կապող քողի հետքը, ինչպիսի օրինակ մենք ունենք Այանցից[355]:

1.1.6.2. **Ներքին գրագրությունը**

Ներքին գրագրությանը վերաբերող առաջին օրինակները հայտնաբերվել են դեռևս 19-րդ դ-ի դարավերջին Թոփրաքքալեի պեղումներից և հրատարակվել նախ՝ Արչիբալդ Սեյսի, ապա և՝ Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտի կողմից[356]: 1948 թ-ին Իգոր Դյակոնովի կողմից հրատարակվեցին Կարմի-բլուրից հայտնաբերված սեպագիր դիվանի առաջին օրինակները[357]: Կարմիր բլուրի տեքստերի ամբողջական հրատարակությունն իրականացվեց 1963 թ-ին նույն հեղինակի կողմից՝ քննության առնելով նաև Թոփրաքքալեի նյութը[358]: Հետագա տարիներին իրականացված պեղումների արդյունքում նոր տեքստեր հայտնաբերվեցին նաև Բաստամից, Հայկաբերդից, Վերին Անձավից, Այանցից և Վանից (նկ. Ա-13/1-12): Ընդհանուր առմամբ՝ սեպագիր աղյուսակներ են հայտնի ուրարտական վեց կենտրոններից, իսկ տեքստերի թիվը՝ գրված կավանյութի վրա, հասնում է 97-ի[359]: Դրանց մի մասն են միայն կավե սալիկներ (37 օրինակ), ներառյալ՝ խիստ պակասավոր տեքստերը, իսկ

[352] Пиотровский 1950: 76 сл.
[353] Lemaire 1997: 543 ff.; նույնի՝ 1998: 15ff.; Sokoloff 1999: 105ff.; Ephᶜal 1999: 116ff.
[354] Tadmor 1982: 464, n. 44.
[355] Çilingiroğlu 2001a: 69, Fig. 2.
[356] Sayce 1893: 15ff.; Lehmann-Haupt 1907: 105ff. (Nos. 36-38, Fig. 77-79).
[357] Дьяконов 1948: 86-89.
[358] Дьяконов 1963a: 17 сл.
[359] Հրատարակությունների համար տե՛ս КУКН, 393-394, 412-412a, 428-429, 431-433, 446-450, 507a-g, 508a-b, 510b, 511, 511a-b, d, 520-525; Salvini 2001: 312ff.; Dinçol and Dinçol, Salvini, 2001: 195ff.; Belli, Salvini, 2003: 141ff.; CTU IV, CT An-1, CT Ay-1-11, CT Ba-1-4, CT Çav-1-2, CT Kb-1-11, CT Tk-1-7, CB An-1, CB Ay-1-40, 51-53, CB Ba-1-12, CB Tk-1; Işık 2014: 176ff. Դրանցից վերջին երեք բուլլաների տեքստերը դեռևս չեն հրատարակվել: Տեղեկության համար տե՛ս Işıklı, Parlıtı 2015: 56.

մեծ մասը արձանագրված բուլլաներ են՝ տնտեսական կյանքին վերաբերող կարճ արձանագրումներով (նկ. Ա-14/1-12):

Նշված օրինակները, որոնց թիվը չի հասնում անգամ 100-ի, չափազանց չնչին է թվում ուրարտական բյուրոկրատական համակարգի համար: Սուբյեկտիվ պատճառներից բացի դա կարող է ունենալ օբյեկտիվ բացատրություն: Ուրարտական հաղորդակցության զարգացած համակարգը, ամրոց-կայանների մերձավորությունը միմյանց թույլ էր տալիս տեղեկատվությունը փոխանցել բանավոր, այնպես, ինչպես դա ենթադրվում է Իսրայելի և Հուդայի թագավորությունների համար[360]: Մեզ հայտնի է օրինակ՝ սուրհանդակի բերած ուրարտական արքայի հրամանի մասին, որը, կարծես, փոխանցվել էր բանավոր[361]:

Կավե սալիկների մեծ մասը արքայական նամակներ են, իսկ այդպիսին ենք համարում այն տեքստերը, որոնք կնքված են «արքայական» կամ այսպես կոչված $^{LÚ}$A.ZU$_x$-*li*-պաշտոնյայի կնիքներով[362]: Նամակների կառուցվածքին վերաբերող իր դիտարկումներում Իգոր Դյակոնովը ցույց է տալիս որոշ համապատասխանություններ ուրարտական և շումերական/աքքադական, ուրարտական և խեթական օրինակների միջև, այն է՝ նամակի հեղինակի խոսքը հասցեատիրոջը հասցվում էր միջնորդավորված՝ երրորդ անձանց՝ գրագիրների միջոցով, ինչը բացատրվում է գրաճանաչ մարդկանց սակավությամբ[363]: Պահպանված օրինակները կարելի է խմբավորել երեք խմբի՝ նամակագրություն արքայի և իր հպատակ(ներ)ի միջև, նամակագրություն արքայի երկու (և ավելի) հպատակների միջև, արքայական հրամանագրեր, ընդ որում, այստեղ չկա(ն) հասցեատեր(եր)[364]: Հինարևելյան զուգահեռներից ուրարտական նամակների հիմնական տարբերությունը դրանցում այսպես կոչված «արձանագրված կնիքներ»-ի դրոշմների առկայությունն է, որոնք դրվել են մատնանշելու համար ուղարկողի անձը և/կամ հաստատելու նամակի իրավական ուժը: Նման որոշ զուգահեռներ կարելի է տեսնել խեթական արքունի գրագրություններում[365]:

#### 1.1.6.3. **Միջպետական գրագրությունը**

##### 1.1.6.3.1. **Ասորեստան**

[360] Cantrell 2011: 66.
[361] Lanfranchi, Parpola 1990, No. 3: 15-20.
[362] Մանրամասն տե՛ս Grekyan 2005: 40ff.
[363] Дьяконов 1963a: 22 сл. Հինարևելյան զուգահեռների համար տե՛ս Michalowski 1980: 51ff.
[364] Дьяконов 1963a: 42.
[365] Дьяконов 1963a: 24 сл. Արքայական կնիքների կիրառության համար տե՛ս Millard 1980: 135ff.

Միջպետական գրագրությունը, ինչպես երևում է, վարվել է աքքադերենով (ասսուրերենով): Մեզ են հասել տարբեր երկրների առաջնորդների հետ Ուրարտուի արքաների վարած գրագրության և պատվիրակությունների փոխայցելությունների մասին որոշ վկայություններ: Ուրարտուն դիվանագիտական ակտիվ կապերի մեջ էր ոչ միայն հարևան փոքր թագավորությունների, այլև հենց Ասորեստանի հետ: Մեզ են հասել երկու երկրների արքաների միջև տեղ գտած դիվանագիտական գրագրության մի քանի ուշագրավ վկայություններ: Դրանցից ամենավաղը վերաբերում է Ք.ա. 8-րդ դ-ի վերջերին՝ ասսուրա-ուրարտական հարաբերությունների խիստ լարված շրջանին, երբ երկու տերությունների շահերը բախվել էին Մաննայի թագավորությունում գերիշխանության համար:

Նինվեից հայտնաբերված այդ տեքստը, որը բնագրի կրկնօրինակն է և պահվում էր արքունի դիվանում, գրվել է որպես ասորեստանյան արքայի ուղիղ խոսք և ակնհայտորեն ուղղված է Ուրարտուի արքային[366]: Նրանում մի քանի անգամ նշվում է «այն մասին, ինչ դու գրեցիր ինձ» (*ša taš-pur-an-ni ma-a*) կամ «այն մասին, ինչ դու ասացիր ինձ» միտքը (*ša taq-bu-u-ni ma-a*)՝ վկայելով, որ երկու արքաների միջև նամակագրության այս օրինակը եզակի չէ: Միջպետական գրագրության երկրորդ օրինակը ևս հայտնի է ասորեստանյան դիվանից: Այն կազմվել է ասորեստանյան արքա Աշշուրբանիպալի անունից և ուղղված էր Ուրարտուի արքա Սարդուրիին՝ «իր որդուն», նրա արքունիքին և երկրին հղելով բարեմաղթանքներ[367]: Աշշուրբանիպալի տարեգրության մի հատվածում ակնարկ կա երկու երկրների նախորդ արքաների միջև տեղ գտած աշխույժ նամակագրության մասին[368]: Ցավոք, ուրարտական աղբյուրներում չի պահպանվել նման գրագրության որևէ օրինակ:

Արքայական նամակագրությունից զատ քիչ չեն տվյալները դեսպանների այցելությունների մասին: Դրանցից առավել հայտնի է Աշշուրբանիպալի իշխանության շրջանում՝ Ք.ա. 653 թ-ի սահմաններում ասորեստանյան արքունիք ուրարտական դեսպանների այցելության մասին, որոնք ժամանել էին Արբելա՝ հարցնելու ասորեստանյան արքայի որպիսությունը[369]: Ասորեստանյան բարձրաքանդակներից մեկը պատկերում է այդ դեսպաններին (նկ. Ա-15/1)[370]: Ասորեստան տարբեր նպատակներով ուրարտական դեսպանների այցերի մասին կան այլ տեղեկություններ

[366] Parpola 1987, No. 8: 12′, 14′, e.25′.
[367] Waterman 1930: 364f. (No. 1242). Տեքստի պատկանելությունն Աշշուրբանապալի ժամանակաշրջանին կասկած չի հարուցում: Տե՛ս Дьяконов 1951a, № 79, прим. 1.
[368] Borger 1996: 71, 250 (Prismen A §86: A X 40-42).
[369] Borger 1996: 37, 228 (Prismen C §51: vii 76-79).
[370] Wartke 1993, Taf. 21.

ևս: Դրանցից մեկը վերաբերում է ուրարտուի ինչ-որ կանանց, որոնց փրկագնելու (՞) համար Ասորեստան՝ Արզուխինա էր մեկնել ուրարտական դեսպանությունը[371]: Չափազանց հետաքրքիր է ասորեստանյան արքայի հուղարկավորության ընծաները թվարկող տեքստում ուրարտական արքայի ուղարկած ընծաների մասին հաղորդումը՝ 10 ձի, 30 ցուլ և 300 ոչխար: Այդ ամենը, անկասկած, Ասորեստան էր բերվել պատվիրակության ուղեկցությամբ[372]:

Ասորեստանյան աղբյուրները վկայում են նաև երկու երկրների տարբեր պաշտոնյաների, գերազանցապես՝ սահմանակից նահանգների կառավարիչների միմյանց հետ ունեցած նամակագրության մասին[373]:

1.1.6.3.2. **Շուբրիա**

Ուրարտուի և Շուբրիայի միջև միջպետական կապերի մասին բավականաչափ վկայությունների կարելի է հանդիպել ասորեստանյան զեկուցագրերում: Օրինակ, հայտնի է Ռուսա Էրիմենայորդու (՞) և Արգիշթի Ռուսայորդու կողմից շուբրիական արքա Խու-Թեշուբին ուղարկված ընծաների մասին, ընդ որում, հետաքրքիր է, որ Արգիշթին պահանջում էր վերադարձնել ոսկեղենը, թերևս, շուբրիական արքայի կողմից ինչ-ինչ պայմանավորվածություններ խախտելու համար: Շուբրիացուն ուղղված Արգիշթիի խոսքում ասվում է.

«*Եթե դու մնաս* […]*-ում, հետ տ*[*ու*]*ր* […] *և ոսկեղենը,* [*ո*]*րը իմ հայրը և ես տվեցինք քեզ*»[374]:

Այս փաստը հայտնող ասորեստանյան պաշտոնյայի զեկուցագրում մի քանի անգամ հիշատակվում են ուրարտական և շուբրիական սուրհանդակները (LÚ.*mār*/DUMU-*šipri*), որոնք ապահովում էին կապը երկրների միջև[375]: Շուբրիա ուղևորված ուրարտական առաքելության մասին ենք իմանում մեկ այլ տեքստից[376]:

Ուրարտուի արքա Ռուսա Արգիշթորդու և Շուբրիայի արքա Իք-Թեշշուբի միջև նամակագրության մասին ենք իմանում Ասսարհադդոնի տեքստերից: Ըստ աղբյուրի՝ ուրարտական արքայի նամակին շուբրիացին պատասխանել է և «գրել չարությամբ»[377]:

1.1.6.3.3. **Այլ վկայություններ**

[371] Parpola 1987, No. 10.
[372] Postgate 2008b: 179. Հմմտ., սակայն, Kwasman 2009: 118f.
[373] Lanfranchi, Parpola 1990, Nos. 2, 33, 115.
[374] Lanfranchi, Parpola 1990, No. 31: r.14′-17′.
[375] Lanfranchi, Parpola 1990, No. 31: 15, r.13′, 18′, 22′-23′.
[376] Lanfranchi, Parpola 1990, No. 35: e.33.
[377] Borger 1956: 86 (§ 68: Gbr. II, III 28-30); Leichty 2011, No. 33: iii 28′-30′.

Ասորեստանյան աղբյուրներից հայտնի մյուս վկայությունները վերաբերում են հիմնականում Ուրարտուի և Ասորեստանի միջև ընկած տարբեր երկրների առաջնորդների հետ ուրարտական արքունիքի ունեցած կապերին:

Այդ երկրներից մեկը Կումմեն էր: Ասորեստանյան զեկուցագրերից մեկը հայտնում է կումմեցի առաջնորդներին ուղղված Արգիշթի Ռուսայորդու նամակի մասին: Նամակում արքան իր դժգոհությունն էր հայտնում կումմեցիներին, ովքեր, ի տարբերություն այլ առաջնորդների, պատվիրակություն չէին ուղարկել ողջունելու իր գահակալությունը: Ասորեստանյան զեկուցագիրը մեջբերում է ուրարտական արքայի խոսքը.

«*Այն ժա*]*մանակվանից, ինչ ես գահին եմ, չգտնվեց իրապես* (*որևէ մեկը*)*, որին դուք ուղարկեիք ողջունելու ինձ,* (*բոլորը*) *գալիս են ինձ մոտ Աշշուրի և ձեր աստվածների* [*ան*]*ունից*»*: Այնուհետ նա ասաց.* «*Ես լսել եմ, որ դուք ահաբեկված եք, ինչու՞ եք դուք ահաբեկված, անգամ Ռուսան չէր խոսում ձեր երկիրը* [*կործանելու մասին, ոչ էլ ես եմ*] *խոսել այդ մասին*»[378]:

Ասորեստանյան զեկուցագրերում տեղեկություններ կան նաև Ուրարտուի արքայի հետ Մուծածիրի առաջնորդի ունեցած հանդիպման[379], Մուծածիրի[380], Ուկկուի[381], Խուբուշկիայի[382], Զիկիրտուի[383] և Անդիայի[384] առաջնորդների հետ տեղ գտած նամակագրության կամ պատվիրակությունների այցելությունների մասին:

Բացի վերը նշված փաստերից հայտնի է կիլիկյան Կուե երկրի արքա Ուրիկկիի կողմից Ուրարտու ուղարկված պատվիրակության մասին՝ 14 անձից կազմված, որոնց, սակայն, փոյուգացիները ձերբակալել էին և հանձնել ասորեստանցիներին[385]: Կասկածից դուրս է, որ ուրարտական արքունիքը նամակագրական կապեր ուներ նաև լուվիական այլ թագավորությունների հետ: Դրա անուղղակի վկայությունը կարող է լինել ասորեստանյան աղբյուրի պնդումը Կումմուխի արքա Մուտալլուի քայլի մասին՝ հրաժարվելու ասորեստանյան գերիշխանությունից, ինչպես տեքստն է փաստում՝ ապավինելով Ուրարտուի արքա Արգիշթիին[386]:

### 1.1.7. Տարիների հաշվարկն Ուրարտուում

[378] Lanfranchi, Parpola 1990, No. 95: 3-10.
[379] Parpola 1987, No. 31: r.17-19.
[380] Lanfranchi, Parpola 1990, No. 145: 14-r.5.
[381] Parpola 1987, No. 29: 11-12; 41: 7-8; Lanfranchi, Parpola 1990, No. 96: 4-5.
[382] Parpola 1987, No. 31: r.20-22; Lanfranchi, Parpola 1990, No. 165: 4-11.
[383] Lanfranchi, Parpola 1990, No. 164: 3-15; 169: 5-7.
[384] Lanfranchi, Parpola 1990, No. 164: 3-15.
[385] Parpola 1987, No. 1; Saggs 2001: 188ff. (ND 2759).
[386] Fuchs 1994: 222, 349 (Prunk. 112-113).

Ուրարտուում տարիների հաշվարկն իրականացվում էր ոչ թե ըստ արքաների կառավարման տարիների, ինչպես դա արվում էր, օրինակ, Բաբելոնիայում Ք.ա. 13-րդ դ-ից սկսած[387] կամ կովչում *limmu*-պաշտոնյաների անունով, ինչպես Ասորեստանում էր[388], այլ կիրառվում էր շատ ավելի արխաիկ համակարգ. նոր տարին անվանակոչվում էր նախորդ տարվա գլխավոր իրադարձության անունով[389]: Մեզ են հասել տարիների անվանակոչման ընդամենը չորս օրինակ: Դրանցում տեքստը սկսվում է *akuki* MU/*šali* «այն տարին, *երբ* (հետևում է իրադարձությունը)» բառերով: Դրանցից առաջինը Թոփրաքքալեի անձնակազմը նշող աղյուսակն է, որը կազմվել է այն տարում, որին նախորդած տարում Շագապուտարան՝ Իշկիգուլուի արքան, գնացել է Մանա երկիրը և երբ Խալդի արքան հաստատել է Ռուսային (՞) Ռուսախինիլի Կիլբանիկայի քաղաքում (թարգմանությունը հստակ չէ)[390]: Բաստամից հայտնաբերված երկրորդ օրինակը վկայում է, որ տեքստը կազմելու տարին անվանակոչվել է նախորդ տարվա գլխավոր իրադարձության անունով, այն է, երբ Ռուսա Արգիշթորդին գահը հաստատել է Ռուսախինիլի Կիլբանիկայի քաղաքում[391]: Եվ վերջապես երրորդ օրինակը հայտնի է Այանցից: Այստեղից գտնված բուլլաներից մեկի վրայի տեքստը թվագրվում է այն տարով, որին նախորդած տարում Ռուսան կառուցել է $^{É}$*ašiḫusi*-կառույցը[392]:

Տարիների թվագրման այդ համակարգը հայտնի էր դեռևս Աքքադի թագավորության շրջանից և կիրառվում էր Բաբելոնիայում ընդհուպ մինչև Կասսիտական հարստության իշխանության առաջին շրջանը[393]: Սակայն, այդ համակարգը Ուրարտու է ներմուծվել, հնարավոր է, հյուսիսային Սիրիայից (Միտաննիի՞ց), ուր, իր հերթին, կարող էր փախառված լինել Բաբելոնիայից: Իհարկե, պետք է նշել, որ դրա ուղղակի վկայություններ, որքան մեզ է հայտնի, չկան: Հաշվի առնելով ուրարտական առօրյա գրագրություններում միտաննական նկատելի ազդեցությունը՝ դա այնքան էլ անհավանական չի թվում[394]:

### 1.1.8. Իշխանության իրականացումը տեղերում. ձևերը և միջոցները

Նվաճված տարածքներում ուրարտական իշխանությունն ապահովվում էր ռազմական անմիջական ներկայությամբ և հենվելով տվյալ տարածքը վերահսկող և կենտրոնին կապող ամրոց-ամրությունների շղթայի վրա: Ամրաշղթայի մեջ

[387] Brinkman 1976: 397ff.
[388] Millard 1994: 1ff.
[389] Այդ մասին տե՛ս Дьяконов 1963a: 23 сл.; Zimansky 79f., 123 and n. 25.
[390] КУКН, 412$_{1-5}$; CTU IV, CT Tk-1$_{1-5}$.
[391] КУКН, 412a$_{1-3}$; CTU IV, CB Ba-6$_{1-3}$.
[392] CTU IV, CB Ay-51$_{1-2}$. Չորրորդ տեքստը դեռևս հրատարակված չէ:
[393] Brinkman 1976: 403; Horsnell 1999: 3ff.
[394] Տե՛ս նաև Дьяконов 1963a: 24.

առանձնանում է մարզպետի նստավայր հանդիսացող առավել հզոր և/կամ ընդարձակ ամրոցը, ուր գործում էր նաև ուրարտական տեղական վարչակազմը: Իշխանությունների անմիջական հսկողության տակ գտնվող տարածքը սահմանափակ էր: Դա մարզկենտրոն հանդիսացող գլխավոր ամրոցի մերձավորությամբ սփռված երկրագործական՝ համեմատաբար ընդարձակ գոտին էր, երկրորդական ամրոցների վերահսկողության տակ գտնվող շրջակա տարածքը և դրանք կապող ճանապարհների ցանցը՝ հսկիչ-պահակակետերով և ամրացված կայաններով[395]:

Այս ցանցից դուրս ընկած ողջ տարածքը դուրս էր ուրարտական անմիջական վերահսկողությունից և տնօրինվում էր տեղի առաջնորդների կողմից: Նրանց լոյալությունն ու պարտավորություններն ուրարտական իշխանությունների հանդեպ պայմանավորված էին վերջիններիս ռազմական ներկայության կամ զորքերի հասանելության աստիճանով:

Այս քաղաքականությունը՝ զբաղեցնելու երկրագործական շրջանները և դրանք կապող ուղիները՝ առանց այդ շրջանների միջև ընկած գոտիները տոտալ վերահսկողության տակ պահելու, նկատվում է Միջագետքում դեռևս միջինասորեստանյան շրջանում: Տիգրիսի և Մեծ Զաբի միջև ընկած միջնաշխարհից դուրս ձգվող միջինասորեստանյան տիրապետությունն իրենից ներկայացնում էր Բալիխ և Խաբուր գետերի և վերջինիս վտակների երկայնքով ձգվող ոռոգովի/երկրագործական գոտիները՝ դրանք վերահսկող *dunnu*-ամրոցներով (ամրացված ագարակներ)[396]: Այդ կերպ էին ասորեստանցիները վերահսկում նաև Դիարբեքիրից Սիլվան – Չընար – Բիսմիլ ձգվող տիգրիսամերձ երկրագործական բերրի տարածքը[397]: Արարատյան դաշտավայրում Քասախ և Հրազդան գետերի շուրջը ձգվող երկրագործական տարածքները հսկող ուրարտական ամրաշղթաները (համապատասխանաբար՝ Արգիշթիխինիլի – Մեծամոր (՞) – Արագած – Աղթամիր – Օշական և Արտաշատ – (-) – Էրեբունի – Արամուս – Դովրի) ուղիղ համեմատական են միջինասորեստանյան պատկերին (Քարտեզ 3-10բ):

Ուրարտական իշխանությունները ձգտում էին ռազմական ներկայություն ապահովել նաև իրենց գերիշխանությունն ընդունած և հարկատու դարձած երկրներում, եթե այդ երկրի տարածքով էր անցնում ուրարտական երկրագործական գոտիներն իրար կապող հաղորդակցության համակարգը: Օրինակ, ուրարտական խոշոր ամրոցներից մեկը՝ Քարաքոյունլուի ամրոցը, որը երբեմն նույնացվում է

[395] Տե՛ս և հմմտ. նաև Smith, Thompson 2004: 564ff.; Biscione 2003: 183.
[396] Liverani 1988: 81ff., 92; Parker 1997: 77.
[397] Köroğlu 2002: 456.

Մենուախինիլիի հետ, կառուցվել էր վաղերկաթեդարյան Քասըմթըղըի ամրոցի անմիջական մերձավորությամբ: Վերջինս նույնացվում է Էրիկուախիի մայրաքաղաք Լուխիունիի հետ (նկ. Ա-15/2): Այդ նույն երևույթը նկատվում է Մեծ Մասիսի արևմտյան ստորոտին, ուր ուրարտական Բոզքուրթ II ամրոցը կառուցվել է Բոզքուրթ I ուշ-բրոնզ - վաղերկաթեդարյան ամրոցի անմիջական մերձավորությամբ, ըստ երևույթին՝ դարձյալ Էրիկուախիի տարածքում (նկ. Ա-16/1)[398]: Իսկ Էրիկուախիի զբաղեցրած ռազմավարական կարևոր դիրքը Վանա լճի ավազանի և Արարատյան դաշտավայրի միջև կասկածից դուրս է: Նույն կերպ և Սեկինդելի ուրարտական հզոր ամրոցը կառուցվել էր Պուլուադիի մայրաքաղաք Լիբլիունիի մերձավորությամբ՝ երկու հարևան բլուրներից մեկի վրա (նկ. Ա-16/2): Դրանով իսկ խիստ սահմանափակվում էին Լիբլիունիում նստող տեղի արքայի «անհնազանդության» հնարավոր փորձերը:

Երբ նվաճված երկրում ռազմական ներկայությունը կամ դրա բացակայության դեպքում՝ ռազմական ներխուժման սպառնալիքը բավարար չէր դառնում տվյալ երկրի հնազանդությունն ապահովելու համար՝ ուրարտական իշխանությունները դիմում էին առավել գործուն քայլերի՝ «վերանվաճելով» երկիրը, ավերելով ամրություններն ու շրջապատող բնակավայրերը, իսկ գլխավոր քաղաքում վերակառուցում էին ամրոցը և տեղակայում մշտական կայազոր: Դրանով վերացվում էր նաև տվյալ երկրի «անկախություն»-ը: Ջորօրինակ՝ Վիտերուխի երկիրը, ուր արշավանքներ էր ձեռնարկվել դեռևս Իշպուինին և որը նվաճվել էր Արգիշթի Մենուայորդու կողմից՝ Ուրեյունի մայրաքաղաքով հանդերձ, դարձել էր տերությանը ենթակա թագավորություն[399]: Արդեն Սարդուրի Արգիշթորդու ժամանակ Վիտերուխին նվաճվեց մեկ անգամ ևս, նշանակվեց մարզպետ, իսկ մայրաքաղաք Ուրայանիի (Ուրեյունի) վերակառուցված ամրոցում տեղակայվեց մշտական կայազոր[400]: Թերևս, նման ճակատագիր բաժին հասավ հատկապես այն երկրներին (Էրիկուախի, Լուշա, Ալզի, Ծուփանի ևն), որոնք ուրարտական հետագա նվաճումներով պայմանավորված՝ հայտնվել էին տերության խորքերում կամ ունեին ընդհանուր սահման և որոնց գոյատևելու համար այլևս չկար և ոչ մի փրկօղակ: Շատ հաճախ, գրավելով երկիրը, արքայի հրամանով տեղի առաջնորդը ներքինացվում էր (ուրարտ. *ïedia-d*(*u*)/$^{SAL}$*lut*(*u*)՝ «*կին (դարձնել), ներքինացնել*»)[401], նրա ժառանգները, ամենայն հավանականությամբ, սպանվում էին, ինչը նպատակ ուներ կանխել իշխանությունը հետ բերելու փորձերը:

[398] Այս մասին տե՛ս նաև Özfırat 2014d: 217; նույնի՝ 2014e: 68.
[399] КУКН, 173, столб. $I_{12}$; CTU I, A 8-3 $I_{12}$.
[400] КУКН, 241$D_{18-32}$; CTU I, A 9-3 $III_{18-30}$.
[401] Համմտ., օրինակ, КУКН, 174 $B1_{x+38-39}$, 242 $C_{x+13-14}$; CTU I, A 8-2 $Vo_{38'-39'}$, A 9-1 l. $s._{13-14}$ ևն:

Հետևաբար, հարկ չկա պնդելու, թե ուրարտական իշխանության կայունությունը տեղերում պայմանավորված էր պետության կառավարման գործում տեղի իշխողների կամ ցեղապետների («աշիրեթապետներ»-ի) լայն ընդգրկմամբ: Այս առումով անցկացվող զուգահեռները Արևմտյան Հայաստանում օսմանյան իշխանությունների վարած քաղաքականության հետ (կառավարման/վերահսկման գործում քուրդ աշիրեթապետների ընդգրկում, կենտրոնական իշխանությունների տնօրինության տակ գտնվող քրդական «Համիդիյե գնդեր»-ի ստեղծում ևն) բացարձակապես տեղին չէ[402]: Ուրարտական իշխանությունը, ակնհայտորեն, կախված չի եղել տեղի առաջնորդների բարեհաճությունից, համենայն դեպս՝ Ք.ա. 9-8-րդ դդ-ում: Եվ այս առումով մեզ անտեղի է թվում թե պետական կառավարման, և թե Ուրարտուում դինաստիական հնարավոր փոփոխությունների գործում նրանց վերագվող դերակատարությունը՝ այդ փոփոխությունները պայմանավորելով իբր ուրարտական արքայատան հետ արյունակցական կապերի մեջ գտնվող ցեղաղապետների միջև ընթացող պայքարով և ցեղապետների ուժերի հարաբերակցության փոփոխությամբ[403]: Կասկած չկա, որ ուրարտական գահը երբևէ խաղալիք չի եղել որևէ ցեղեպետի համար, Ուրարտուն Բաբելոնիան չէր, ուր արքայի իշխանությունն ու հեղինակությունը պայմանավորված էր նախ և առաջ այն ցեղի/ցեղախմբի ուժով, որի վրա նա հենվում էր, իսկ հաճախ՝ նաև ներկայացնում:

Ինչ վերաբերում է տերության մեջ Ք.ա. 8-րդ դ-ի վերջ – 7-րդ դ-ում նկատվող փոփոխություններին և քաղաքական նոր միավորների՝ «տներ»-ի ի հայտ գալուն (տե՛ս ստորև), ապա դրա հիմքում մենք տեսնում ենք ոչ թե Ք.ա. 9-րդ դ-ի վաղերկաթեդարյան «ամրոցային» հասարակություններին, այլ կարծում ենք, որ գործ ունենք նախ և առաջ լայնածավալ վերաբնակեցումների արդյունքում Ուրարտուում աստիճանաբար ուրվագծվող լեզվական/էթնիկ մեծամասնության և որպես արդյունք՝ դրա ունեցած քաղաքական հետևանքների հետ:

Սարդուրի Արգիշթորդու օրոք տերության ապրած տարածքային հսկայական աճին կենտրոնական իշխանություններն ըստ երևույթին չկարողացան համապատասխան կերպով արձագանքել, և թվում է, թե ռազմական հաղթանակները չբերեցին ուրարտական գերիշխանության ամուր հաստատմանը աշխարհագրական նոր տարածքներում: Եթե ինչ-որ մի պահ տեղերում իշխանությունն ապահովվում էր զուտ ռազմական ներկայության կամ ձեռնարկվելիք անխուսափելի արշավանքի

[402] Հմմտ. Erdem 2011b: 63. Տե՛ս և հմմտ. նաև Yakar 2011: 125f.
[403] Հմմտ. Erdem 2011b: 63.

հեռանկարի շնորհիվ, ինչը տեսնում ենք հատկապես Էթիունիի դեպքում, ապա տերության դիրքերի սասանումը Ասորեստանի դեմ պայքարում պատճառ դարձավ, որ անգամ հյուսիսի զգալի մասը դուրս գա նրա վերահսկողությունից: Դրա վկայությունը տեսնում ենք ասորեստանյան հետախուզական նամակներից մեկում, ուր խոսվում է «ջախջախված Ուրարտուի» մասին: Այդ նույն աղբյուրում հիշվում են էթունացիները (թերևս՝ էթիունցիները)[404], որոնք թալանել էին ուրարտական քաղաքներից մեկը՝ տանելով ընտանի կենդանիներին: Ասորեստանյան մեկ այլ աղբյուր վկայում է էթիունյան երկու հաջողված ռազմարշավների և երրորդն իրագործելու նպատակով համախմբվելու մասին: Դրան դիմագրավելու համար Ռուսան (տեքստում՝ Ուրսա) ստիպված էր կրկին ռազմերթի ելնել նրանց դեմ[405]:

Ռուսայի ձեռնարկած վարչական բարեփոխումների նպատակներից մեկը միտված էր բարձրացնելու ուրարտական իշխանության արդյունավետությունը տեղերում: Սեպագիր աղբյուրները՝ սկսած Ռուսա Սարդուրորդուց ընդհուպ մինչև Ռուսա Արգիշթորդի, իրենց սակավությամբ հանդերձ կարծես թե չեն վկայում տերության ներսում և անգամ դրանից դուրս՝ հատկապես հյուսիսարևելյան հարևան Էթիունիի հետ խորը հակամարտությունների մասին[406]: Թվում է՝ Ռուսա Սարդուրորդուց սկսած Ուրարտուի ներսում հաստատվում է որոշակի «փոխըմբռնում», կարծես, բիայնական վերնախավը աստիճանաբար ստիպված է լինում հաշվի նստել երկրում ստեղծված նոր իրավիճակի հետ, մի իրողություն, որն իրենց իսկ իրականացրած վերաբնակեցումների քաղաքականության ուղղակի հետևանքն էր, գումարած՝ Ք.ա. 8-րդ դ-ի վերջ – 7-րդ դ-ում տեղ գտած էթնիկ տեղաշարժերը:

Ք.ա. 7-րդ դ-ում ըստ էության ուրարտական պետության կազմում քաղաքական նոր միավորների՝ «տների» ի հայտ գալը, թերևս, պատահական չէր, եթե չասենք՝ պարտադիր օրինաչափություն կայսրությունների համար[407]: Այդպիսի օրինակ է Այանցի «սուսի»-տաճարի ձանագրության մեջ հիշվող «Իշպիլիբրիի տուն»-ը (*É išpilipri*)[408]: Այս շարքին կարելի է հավելել բաբելոնյան ժամանակագրությունից հայտնի «Խանունիի տուն»-ը (*bīt ḫanuni*)[409]: Այս «տներ»-ը ներկայացնող անձինք լայնորեն

[404] Աղյուրում հիշվող «էթի/ունացիներ» անունը ըստ ամենայնի նույնական է ուրարտական աղբյուրների Էթիունիին: Հմմտ. Saggs 2001: 148 (ND 2798 նամակի 13-րդ տողին տրված ծնթ.-ը):
[405] Saggs 2001: 116ff. (ND 2453), 147f. (ND 2798). Հմմտ., սակայն, Deller 1984: 111 (Nr. 4.4).
[406] Տե՛ս նաև Հմայակյան 2000, էջ 8, ուր դրա պատճառ է դիտվում տարածաշրջանում նոր եկվորների՝ կիմմերների և սկյութների ի հայտ գալը:
[407] Lanfranchi 2003: 87f.
[408] Salvini 2001: 257 (Ay-susi $V_2$); CTU I, A 12-1 $V_2$.
[409] Wiseman 1956: 64-65 (lns. 2-3); Grayson 1975: 97 (Chr. 4: 2-3).

ընգրկված էին Ռուսա Արգիշթորդու արքունիքում[410]: Այս առումով բնութագրական է նաև այն փաստը, որ Ք.ա. 7-րդ դ-ի առաջին կեսին պետության կառավարման միջին և ցածր օղակներում հանկարծ տեսնում ենք անձանց, ովքեր ուրարտացիներ չէին և բնորոշվում են իրենց էթնիկ/տարածքային պատկանելությամբ (հմմտ., օրինակ, $^{m}$*abilianiše*՝ «Աբեղյանցի», $^{m}$*’aza’’a*՝ «Վազա(ցի)» ևն)[411]: Մեզ հասած գրագրություններից դատելով՝ նրանք սկսել էին մուտք գործել տերության՝ հատկապես ծայրամասային վարչախմբեր և աստիճանաբար կիսել վարչական և ռազմական իշխանությունը ուրարտացիների հետ. վերը նշված «Աբեղյանցի»-ն, օրինակ, բարձրաստիճան պաշտոնյա էր՝ $^{LÚ}$NA$_4$.DIB, Վազա(ցի)ն՝ զինվորական՝ «տասնապետ»: Էթնո-քաղաքական այս և նման ուժերը, ամենայն հավանականությամբ, տերության անկումից հետո զբաղեցրեցին առաջացած վակուումը:

Այդ նույն երևույթը տեսնում ենք Ասորեստանում Ք.ա. 7-րդ դ-ի առաջին կեսին: Մեզ են հասել ասորեստանյան արքաներից Ասսարհադդոնի կնքած մի քանի դաշնագրեր, որոնցից երեքը, դատելով դրանք կնքած առաջնորդների անուններից, մարերի հետ էր[412], մնացածը՝ կասսիտական, լուլուբեյական և էլամական անուններ կրող առաջնորդների[413]: Հետաքրքիր է դրանցում Զամուայի «քաղաքի տեր» ոմն Լարկութալայի հիշատակությունը: Զամուա երկիրը, առաջիններից մեկն ընդգրկվելով տերության կազմում և ասորեստանյան տիրապետության տակ լինելով շուրջ երկու հարյուր տարի, առավել մեծ չափերով էր սերտաճել նրա միջնաշխարհի հետ, ամենից շատ էր ենթարկվել ասսուրականացման և այստեղ լիովին գործում էր ասորեստանյան կառավարման համակարգը: Ուստի և տարօրինակ է նահանգային իշխանությունների փոխարեն Զամուայի ինչ-որ առաջնորդի հիշատակությունը, որի հետ ասորեստանյան արքան հարկ էր համարել կնքելու դաշնագիր: Փաստը կարող է միմիայն բացատրվել ասորեստանյան նահանգներում ժողովրդագրական փոփոխություններով և նոր էթնոքաղաքական դերակատարների ի հայտ գալով[414]: Պատահական չէ, որ ասորեստանյան արքաները ստիպված էին հաշվի նստել նոր իրողությունների հետ և փորձում էին տարբեր միջոցներով նման առաջնորդներին կամ տոհմացեղային ավագանուն հնարավորինս մոտ պահել արքունիքին[415]:

---

[410] Համապատասխանաբար՝ Salvini 2001a: 281 (CB Ay-1$_4$); Belli, Salvini 2003: 147, ln. 4 ($^{m}$*išpilipri*); КУКН, 429, лиц. стор.$_5$; 511б$_2$ ($^{m}$*ḫanu(ni)*$^{(?)}$); CTU IV, CT Kb-2 Ro$_5$, CB Ba-8$_2$.

[411] CTU IV, CT Kb-1 Ro$_{10}$, CT An-1$_{16}$.

[412] Համապատասխանաբար՝ Parpola, Watanabe 1988: XXX (No. 6, variants A; T; G; F, a; H).

[413] Մանրամասն տե՛ս Radner 2003a: 60.

[414] Հմմտ., սակայն, Lanfranchi 2003: 115f.

[415] Lanfranchi 1998: 108f.; նույնի՝ 2003: 80, 116. Հմմտ. Levine 1972: 5.

Ուրարտական տերությունը, փաստորեն, Սարդուրի Արգիշթորդուց հետո ոչ միայն ի զորու չգտնվեց յուրացնելու նվաճված տարածքները, այլև ընդհակառակը՝ տերության ներսում տեղ գտած խորքային երևույթների արդյունքում ուրարտական իշխանություններն իրենք կանգնեցին մի իրողության առջև, երբ ինչ-որ պահից սկսած նրանց իշխանությունն այլևս չէր տարածվում ամրոցի պարիսպներից դուրս: Այդ իրավիճակը շատ էր հիշեցնում Ասորեստանի արևելյան՝ մարական նահանգները, ուր ևս «մարական մեծ ապստամբությունից» առաջ անգամ հարահավաքման գործը աստիճանաբար վեր էր ածվել ռազմական արշավանքների՝ հաջողության անորոշ հեռանկարով, իսկ ասորեստանյան կայազորները փաստացի հայտնվել էին պաշարված վիճակում[416]:

Այս պատկերը վստահաբար կարող ենք վերականգնել նաև Ուրարտուում սկսած Ք.ա. 7-րդ դ-ի ինչ-որ մի շրջանից: Սա մի շրջափուլ էր, որին մենք անվանում ենք «Ք.ա. 7-րդ դ-ի ճգնաժամ» և որն անխուսափելիորեն հանգեցնելու էր ուրարտական տերության կործանմանը[417]:

### 1.1.9. Վարչական բաժանումը

#### 1.1.9.1. **«Մարզ» հասկացությունը**

Թե ուրարտական, և թե ասորեստանյան աղբյուրները վկայում են, որ տերության տարածքը բաժանված էր «մարզերի/նահանգների», որոնք արտահայտվել են NAM շումերագրով (աքք. *pī/āḫati*՝ «շրջան, գավառ, նահանգ»)[418]: Էմիլ Ֆորրերի կարծիքով՝ վարչական բաժանման այս համակարգը ուրարտական նորամուծություն էր, որը հետագայում փոխառվել է Ասորեստանի կողմից, Թիգլաթպալասար III-ի իրականացրած բարեփոխումների ժամանակ[419]: Այս թեզը, սակայն, վիճելի է[420]: Համենայն դեպս, Ասորեստանում մարզային/նահանգային կառավարչի պաշտոնը ($^{LÚ}$NAM/$^{LÚ}$EN.NAM/*bēl pī/āḫati*) հայտնի էր դեռևս միջինասորեստանյան դարաշրջանում[421]:

Ուրարտուոում կիրառված վարչական բաժանման մասին վկայող ասորեստանյան առաջին աղբյուրը «Լուվրի աղյուսակ»-ն է: Վերջինս նշում է 7

[416] Starr 1990, No. 64, 66-72:
[417] Այս մասին տե՛ս Grekyan 2013-2014: 57ff.
[418] Borger 1978: 78f. (No. 79).
[419] Forrer 1920: 49. Տե՛ս նաև Дьяконов 1951б: 109 сл.; նույնի՝ 1963а: 66, прим. 75; Дьяконов, Медведская 1987: 210, прим. 19; van Loon 1966: 14.
[420] Zimansky 1985: 89f.; Postgate 1995: 2f.
[421] Տե՛ս, օրինակ, Machinist 1982: 21f.; Postgate 1995: 2f.; Jacob 2003: 111sqq.; Llop 2011: 591ff.

մարզերի մասին, որոնց տարածքով ընթացել է Սարգոնի բանակն ուրարտական տարածքներում[422]: Այդ մարզերն ասորեստանյան աղբյուրն անվանում է *nagū*:

Նորասորեստանյան դարաշրջանի տեքստերում *nagū* տերմինը սովորաբար կիրառվել է նշելու համար որոշակի տարածական միավոր՝ լինի աշխարհագրական գոտի, լինի՝ վարչական շրջան[423]: Օրինակ, «Լուվրի աղյուսակ»-ում այդ տերմինը հանդիպում է 32 անգամ՝ առանց բացառության թարգմանվելով որպես նահանգ կամ շրջան[424]: Այդ աղբյուրից դատելով՝ *nagū*-ն ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ ռազմավարչական գլխավոր կենտրոնի շուրջը համախմբված մի քանի ենթակա կենտրոնների և դրանց շուրջ սփռված «շրջակա բնակավայրեր»-ի ամբողջություն[425]: Դրանից ելնելով՝ ռազմական արշավանքների կոնկրետ փուլ, այս ամբողջության սահմաններում, գրագիրներն արձանագրում էին որոշակի սկզբունքով՝ տալով դրան ավարտուն արշավանքի տեսք. նշվում էր տվյալ միավորի սահմաններ մտնելու, կենտրոն(ներ)ն ու գյուղատիպ «շրջակա բնակավայրեր»-ը նվաճելու, ավարառության և գերեվարության մասին: Նկարագրությունը եզրափակվում էր սովորաբար անվանապես հիշատակվող կենտրոն(ներ)ն ավերելու, իսկ «շրջակա բնակավայրեր»-ը՝ հրի մատնելու մասին տեղեկատվությամբ, որից հետո, հաջորդ միավորի սահմաններում, կրկնվում էր նույնը: Ըստ այդմ, «Լուվրի աղյուսակ»-ում հնարավոր է դառնում առանձնացնելու յոթ միավորներ կամ «փուլեր», որոնք էլ ճշտորեն համապատասխանում են թե «Լուվրի աղյուսակ»-ում, և թե Սարգոն II-ի այլ արձանագրություններում նշվող ուրարտական նվաճված մարզերի թվին:

Նվաճումների արձանագրման նույն սկզբունքը կիրառվել է նաև ուրարտական դպրության մեջ: Ուրարտական արձանագրություններում յուրաքանչյուր քաղաքական միավոր՝ «երկիր» ($^{KUR}$*ebani*/KUR-*ni*), ներկայացվում է որպես ռազմավարչական կենտրոն(ներ)ի և դրա/դրանց շուրջը սփռված բնակավայրերի ամբողջություն:

Ուրարտուի վարչական բաժանման առաջին վկայությունները, որ հանդիպում ենք ուրարտական արձանագրություններում, վերաբերում են Մենուայի իշխանության շրջանին: Պաղինից հայտնաբերված նրա արձանագրությունը հայտնում է «այստեղ» ոմն Թիթիային մարզպետ նշանակելու մասին ($^{m}$*me-nu-ú-a-še a-li te-ru-bi* $^{m}$*ti-ti-a-ni iš-ti-ni*

[422] Mayer 1983: 112f. (Z. 422). Ասորեստանյան արքայի՝ այսպես կոչված «հանդիսավոր արձանագրության» մեջ նշվում է 8 մարզերի մասին (Fuchs 1994: 204, 345 (Z. 43).): Դա բացատրվում է նրանով, որ նվաճված ուրարտական մարզերի թվին հավելվել է Ռուսա կողմից նվաճված մանայական Ուիշդիշ երկրամասը, որն ասորեստանցիները վերանվաճելով՝ վերադարձրել էին մանացիներին:

[423] CAD 11, N/1, 1980: 121ff. (*nagû* A).

[424] Գրեկյան 2002բ, էջ 215:

[425] Zimansky 1985: 93f.; նույնի՝ 1990: 10ff.; Գրեկյան 2000, էջ 157; նույնի՝ 2002բ, էջ 217:

$^{LÚ}$EN.NAM)[426]: «Այստեղ» ասելով տեքստը, թերևս, նկատի ունի Խուզանայի և Ծուփայի տարածքները (ներկայիս Հոզաթը և Դերսիմը՝ հին հայկ. Ծոփքը)[427]: Հաջորդ տեղեկությունը վերաբերում է Արգիշթի Մենուայորդու օրոք Դիաուխիից նվաճված տարածքներում նահանգապետներ ($^{LÚ}$EN.NAM$^{MEŠ}$) նշանակելուն, կարելի է կարծել՝ երեք հոգու, քանի որ տեքստում նշվում է երեք երկրներ անջատելու և բնակչությամբ հանդերձ Բիայնիլիին միացնելու մասին[428]: Մյուս կողմից, չի բացառվում, որ այստեղ խոսքը վերաբերում է ընդամենը մեկ մարզպետի[429]:

Այստեղ հարկ է նկատել, որ ուրարտական «մարզեր»-ը սկզբնապես ընդգրկում էին ընդարձակ տարածք և նմանվում փոխարքայությունների, ինչպիսիք կային նաև Ասորեստանում մինչև Ք.ա. 8-րդ դ-ի կեսերը[430]: Նման հետևության կարելի է հանգել Սարդուրի Արգիշթորդու մի արձանագրությունից: Բահչեջիք գյուղի մոտ գտնված մի արձանագրության մեջ նշվում է Սարդուրիխինիլի անունով քաղաք կառուցելու և ոմն Զայայի մարզպետ նշանակելու մասին (*te-ru-bi* $^{m}$*za-ia-ni* $^{LÚ}$EN.NAM *iš-ti-n*[*i*]): Արձանագրությունը յուրահատուկ է նրանով, որ տալիս է մարզի/փոխարքայության սահմանները: Մասնավորապես, Սարդուրիի կողմից ստեղծված նոր վարչական միավորը ձգվում էր մինչև Մելիդ (*pa-ri* $^{URU}$*mì-li-ṭi$_5$-a*), մինչև Կումախա (*pa-ri* $^{URU}$*qu-*[*ma-ḫa*]), մինչև Արմե երկրի Նիխրիա քաղաքը (*pa-ri* $^{URU}$*ni-iḫ-ri-a* $^{KUR}$*ar-*[*me-e*]) և մինչև Խաշիմե[…] երկիրը (*pa-ri* $^{KUR}$*ḫa-ši-me-e*[…])՝ կարծես թե ընդգրկելով տերության ողջ հարավ-արևմուտքը[431]: Սա շատ ընդարձակ տարածք է և խիստ տարբերվում է ուրարտական մարզերի սահմանների մասին մեր ունեցած այն պատկերից, որը վերաբերում է արդեն Ռուսա Սարդուրորդու շրջանին[432]:

Ռուսայի օրոք ընդարձակ սահմաններով փոխարքայությունները վերակազմավորվեցին մարզերի, էապես սահմանափակվեցին մարզպետների իրավունքները, ինչպես նաև նրանց տրամադրության տակ եղած միջոցներն ու հնարավորությունները: Ռուսա Սարդուրորդու համար կարող էին օրինակ ծառայել Թիգլաթպալասար III-ի իրականացրած բարեփոխումները: Դրանք նպատակ ունեին վերջ տալու փոխարքայությունների կիսանկախ գոյությանը, երբ արքայական

[426] КУКН, 59, текст I$_{17-19}$; CTU I, A 5-8 Ro$_{17-19}$, Vo$_{7-9}$.
[427] Հմմտ. КУКН, 56; CTU I, A 5-5 արձանագրությունը:
[428] КУКН, 174 B1$_{8-17}$; CTU A 8-2 Vo$_{8'-17'}$. Նկատենք, որ տեքստում սկզբնապես նշվում է երեք երկրներ անջատելու մասին, սակայն, հաջորդող հատվածում անվանապես հիշատակվում են չորս արքաներ, որոնք ուրարտացիների կողմից ներքինացվել են, իսկ տեղերում նշանակվել մարզպետներ: Տե՛ս КУКН, 186, прим. 24.
[429] Дьяконов 1988б: 147, նույնի՝ 1989: 87.
[430] Kinnier-Wilson 1972: 14f.
[431] Payne, Sevin, 2001: 113, lns. 6-11, 117f.; CTU I, A 9-18$_{6-11}$.
[432] Հմմտ. Zimansky 1985: 90f.; Sevin 2005a: 382f.

իշխանությունը դարձել էր զուտ արարողակարգային[433]: Ռուսայի քայլերի արդյունքում էր, որ նախկին 9-10 փոխարքայությունների փոխարեն ձևավորվեցին մի քանի տասնյակ մարզեր[434]:

Իր՝ Ռուսայի կողմից երկու նոր մարզեր կազմավորվեցին Սևանա լճի ավազանում: Դրանցից մեկը ձևավորվեց լճի արևմտյան ափերին՝ Վելիքուխի երկրի տարածքում: Այստեղ հաստատվեց մարզպետ, իսկ մարզկենտրոն դարձավ Վելիքուխիի վերակառուցված ամրոցներից մեկը, որն անվանվեց «Խալդիի քաղաք»[435]: Երկրորդ մարզը ձևավորվեց լճից հարավ-արևմուտք ձգվող տարածքներում, իսկ Ծովինարի կիկլոպյան ամրոցը դարձավ մարզկենտրոն՝ անվանվելով «Թեյշեբայի քաղաք»[436]: Հաշվի առնելով «Թեյշեբայի քաղաք»-ից մինչև «Խալդիի քաղաք» (Գավառ) ընկած հեռավորությունը՝ 51 կմ, կարելի է կարծել, որ այս մարզերն ունեցել են բավական համեստ սահմաններ:

Տերության ներսում վերջին խոշոր վերափոխումները իրականացվեցին Ռուսա Արգիշթորդու օրոք: Նրա օրոք երկրում սկիզբ առած բուռն քաղաքաշինությունը, ենթադրվում է, պայմանավորված էր երկրի վարչական նոր բաժանումով: Ենթադրվում է, որ մարզերի փոխարեն երկիրը վերստին բաժանվեց փոխարքայությունների, իսկ ռազմավարչական նոր կենտրոններում փոխարքաներ նշանակվեցին արքայազները[437]:

Արդյո՞ք նախկին վարչական կառուցվածքն այլևս չէր արդարացնում իրեն և անհրաժեշտություն էր առաջացել արդյունավետ վերահսկողություն ունենալու համար խոշորացնել մարզերը և դրանք կառավարել մեկ կենտրոնից: Նման երևույթ կարծես թե նկատվում է Ասորեստանում[438]: Մյուս կողմից, եթե անգամ Ռուսա Արգիշթորդու օրոք երկրում իրականացվել է վարչական նոր բաժանում, ինչը բացառել չի կարելի, ապա Ռուսայի կողմից նոր քաղաքների հիմնադրումը, համենայն դեպս, դրա հետ կապ չուներ: Ըստ այդմ, վարչական հնարավոր փոփոխությունները պետք է դիտել ոչ թե որպես նախապես կազմված ծրագիր, որ հետևողական իրականացրել են իշխանությունները, այլ իբրև արձագանք նոր իրողություններին՝ պայմանավորված նոր քաղաքների գոյությամբ:

---

[433] Grayson 1995a: 964.

[434] Дьяконов 1951б: 111 сл. Ասորեստանյան զուգահեռի համար տե՛ս Pečírková 1982: 210. Ուրարտուի վարչական կառուցվածքի մասին տե՛ս և հմմտ. նաև Հմայակյան 2012, էջ 35-36:

[435] КУКН, 388; CTU I, A 10-1

[436] КУКН, 389; CTU I, A 10-2.

[437] Այս մասին տե՛ս Burney 1977: 3; Zimansky 2012a: 104; ևն:

[438] Radner, Schachner 2001: 734/758f.

Համենայն դեպս, ուրարտական առօրյա գրագրություններում նկատելի փոփոխություններ չեն երևում: Տեքստերը բազմիցս հիշատակում են մարզպետների: Ճիշտ է՝ նկատելի է, որ գրագիրները հիմնականում սկսում են օգտագործել $^{LÚ}$NAM գաղափարագիրը[439], և կարելի էր մտածել, որ դրանով նրանք նկատի են ունեցել ոչ թե մարզային կառավարիչների, այլ հենց փոխարքաների (շում. $^{lú}$gar, աքքադ.՝ $^{lú}$*šaknu*)[440]: Սակայն, Այանցից հայտնաբերված տեքստերից մեկում հիշատակվում է ոմն Ուրակի՝ «վազացիների մարզպետ»-ը ($^{m}$*uraqi* EN.NAM $^{m}$*’azaḫali*)[441]: Տեքստում EN.NAM գրությունը վկայում է, որ $^{LÚ}$NAM գրությունը պետք է դիտել ոչ թե որպես «փոխարքա», այլ որպես $^{(LÚ)}$EN.NAM՝ «մարզային կառավարիչ» գրության կարճ տարբերակ:

Ասորեստանյան զեկուցագրերի հեղինակները, որոնցից շատերը պաշտոնավարել են այս կամ այն նահանգում որպես նահանգապետ, հաճախ են հիշատակում ուրարտական մարզպետներին՝ հայտնելով նաև մարզի և/կամ մարզպետի անունը: Երբեմն նրանք սահմանափակվում են հակիրճ նշումով՝ «*իմ դիմացի մարզպետ/մարզ*»՝ առանց որևէ անուն տալու ($^{LÚ}$EN.NAM *ša pūt* PN/GN): Ըստ այդմ, միշտ չէ, որ հնարավոր է նույնականացնել նրանց նշած այս կամ այն «դիմացի մարզ»-ը Ուրարտուի՝ աղբյուրներից հայտնի վարչական որևէ միավորի հետ: Այնուամենայնիվ, ասորեստանյան աղբյուրներն են, որ տալիս են տեղեկությունների հիմնական մասը Ուրարտուի վարչական բաժանման մասին: Ինչպես տեսանք, որոշ տեղեկություններ կան նաև ուրարտական՝ Ք.ա. 8-րդ դ-ի վերջ – 7-րդ դ-ի աղբյուրներում, որոնց համադրությունը թույլ է տալիս ստանալու հետևյալ պատկերը.

### 1.1.9.2. **Ուրարտուի վարչատարածքային միավորները**

**(1)** Ասորեստանյան արքային ուղղված Նաշխիր-Բելի[442] նամակում խոսվում է «իր դիմաց»-ի ուրարտական մարզպետի մասին, ում զորքերը ծառայություն էին իրականացնում Խարդա քաղաքում: Արքունիք ուղղված մեկ այլ նամակում, ուր Նաշխիր-Բելը վերստին խոսում է «իր դիմաց»-ի մարզպետի մասին, նշվում է, որ Խարդա քաղաքն ընկած էր ասորեստանյան բարձրաստիճան պաշտոնյա «նախարար»-ի դիմաց (URU.*ḫarda pūt* LÚ.SUKKAL)[443]: Հայտնի է, որ Նաշխիր-Բելը ասորեստանյան Ամիդու և Սինաբու նահանգի կառավարիչն էր և Ք.ա. 705 թ-ի

[439] Հղումների համար տե՛ս CTU IV: 168.
[440] Borger 1978: 205 (No. 597).
[441] CTU IV, CB Ay-10.
[442] Անվան ընթերցման համար տե՛ս Baker 2001: 932. Վաղ հրատարակություններում՝ Ուպախիր-Բել կամ Լիպխուր-Բել: Տե՛ս Waterman 1930: 388f. (No. 548); Lanfranchi, Parpola 1990, Nos. 2: 1, 3: 1.
[443] Lanfranchi, Parpola 1990, No. 3: 9-12.

էպոնիմը[444]: Ինչ վերաբերում է «նախարար»-ին, ապա ենթադրվում է, որ որևէ նահանգ նրան կցված չէր[445], և վերջինիս հիշատակությունը տեքստում կարող էր վերաբերել նրա գլխավորած զորքերին, որոնց «դիմաց» էր գտնվում ուրարտական Խարդա քաղաքը: Համենայն դեպս, Ամիդի հիշատակությունն արդեն իսկ հուշում է որոշակի սահմանակից տարածք Տիգրիսի ձախափնյակում: Ինչ վերաբերում է Խարդա քաղաքին, ապա վերջինիս տեղորոշումը հստակ չէ: Այն նույնացվել է Հորթայի հետ՝ Դիարբեքիրից հյուսիս[446], Խարբերդ քաղաքի[447], ինչպես նաև Խերդեի հետ՝ ներկայիս Սիլվանից հյուսիս-արևելք[448]: Խարբերդը, որն առայժմ հայտնի տվյալներով ուրարտական տերության ծայր արևմուտքում ընկած առավել խոշոր ամրոցներից մեկն էր և կարող էր ծառայել իբրև ուրարտական մարզպետի նստավայր, թվում է, հավանական թեկնածու չէ Խարդայի համար. այն Ամիդից գտնվում էր անհամեմատ հեռու տարածության վրա՝ կոչվելու համար «դիմացի» մարզ: Թերևս, այդ նույնը կարելի է ասել Խերդեի համար. վերջինս ավելի մոտ էր ընկած Թուշխանին և ավելի շուտ գտնվելու էր շուբրիական, քան ուրարտական տարածքներում: Առավել հավանական թեկնածու է Հորթան, թեև այստեղ ևս մեծ է անորոշությունը: Համենայն դեպս, պարզ է, որ ուրարտական մարզն ընկած էր Տիգրիսի ակունքների շրջանում, հնարավոր է՝ ներկայիս Էյիլից Քարաչալը ընկած հատվածում:

**(2)** Ասորեստանյան մեկ այլ պաշտոնյա՝ Շա-Աշշուր-դուբբուն, արքային ուղղված երկու զեկուցագրերում հիշատակում է Պուլուայի մարզպետին[449]: Զեկուցագրերից մեկում նա մասնավորեցնում է, որ Պուլուայի մարզպետը «իր դիմացի» մարզի կառավարիչն է: Ըստ այդմ, հավանաբար, Պուլուայի կառավարիչն է հիշատակվում նաև արքունիք ուղղված ասորեստանյան մեկ այլ զեկուցագրում, ուր նշվում է Շա-Աշշուր-դուբբուի «դիմացի» մարզպետի մասին[450]: Շա-Աշշուր-դուբբուն Թուշխան նահանգի կառավարիչն էր: Ուրարտուին սահմանամերձ այս նահանգն ընկած էր Տուր-Աբդինի լեռների շրջանում՝ ձգվելով մինչև Տիգրիս գետը, իսկ նրա կենտրոն Թուշխան քաղաքի նույնականացումը Զիյարեթ-թեփեի հետ կասկած չի հարուցում[451]: Ըստ այդմ, ուրարտական Պուլուա մարզը հարկ է որոնել Տիգրիսի ձախափնյա հատվածում,

[444] Millard 1994: 48/60.
[445] Քննարկումը տե՛ս Mattila 2000: 97ff.
[446] Waterman 1931: 158.
[447] Adontz 1946: 120.
[448] Арутюнян 1985a: 224, карта.
[449] Lanfranchi, Parpola 1990, Nos. 31: 16, 33: r16.
[450] Lanfranchi, Parpola 1990, No. 90: 8′.
[451] Matney 1998: 7ff.; Matney, Somers 1999: 204ff.; Radner, Schachner 2001: 730ff./754ff., figs. 1-4; ևն:

թերևս՝ Քարաչալըի և Բիսմիլի միջև[452]: Պատահական չէ, որ Շա-Աշշուր-դուբբուի նամակում հիշատակվում է Բենզա քաղաքը, Շուբրիան և Ալզին, ինչը միանգամայն հնարավոր է դարձնում նման տեղորոշումը:

**(3)** Ասորեստանյան հինգ տեքստեր հիշատակում են Ուեսիի ուրարտական մարզպետին[453]: Ուեսի/Ուայաիս քաղաքն իր տարընթերցումներով հիմնականում հիշատակվում է սարգոնյան ժամանակաշրջանի աղբյուրներում (URU.*ïa''ais/ïa''is*, URU.*ïa''asi*, KUR/URU.*ïasi*, URU.*ïesi*)[454]: Դրանցում այն հանդես է գալիս բացառապես Խուբուշկիայի, Մուծածիրի և Մանայի թագավորության հետ միասին, որոնք բոլորն էլ տեղորոշվում են Ուրմիայից հարավ, մասամբ՝ հարավ-արևմուտք: Մերձուրմյան ավազանից հայտնաբերված ուրարտական արձանագրություններից մեկում՝ Կալատգահի վիմագրում, պահպանվել է Ուիշե քաղաքանունը ($^{URU}$*uiše*), որը նույնացվում է Ուեսիին[455]:Ամենայն հավանականությամբ՝ «Միերի դռան» արձանագրությունից հայտնի Ուիշինի քաղաքանունը ($^{URU}$*uišini*) նույնպես վերաբերում է Ուիշե-Ուեսին: Նույնպես և ներկայիս Ուշնուի անունը, որը, հավանաբար,, ծագում է այստեղից[456]: Ի դեպ, հայկական միջնադարյան աղբյուրներում հանդիպում ենք Պարսկահայք աշխարհի հարավային գավառի՝ Արիսի/Արասխի վաղ անվանմանը՝ Ովայք, որը կարող էր ծագել Ուեսից. Ուես անվանմանը հանդիպում է երեք հայկական ձեռագրերում: Այդ անունը հազիվ թե կապ չունենար Ուեսի/Ուայաիսի հետ, նամանավանդ, հայկական այդ գավառը հստակ կերպով տեղորոշվում է Ուշնուի շրջանում[457]:

Ըստ այդմ, նախկին կարծիքները՝ Ուեսի/Ուայաիսը (ինչպես նաև Խուբուշկիան, Աիդու(նի)ն ևն) տեղորոշելու Վանա լճի մերձավորությամբ[458], հարկ է թողնել մի կողմ, իսկ ներկայիս Ուշնուի շրջանը՝ Ուրմիա լճի հարավ-արևմտյան հատվածում, լավագույնս համապատասխանում է Ուեսի/Ուայաիսի՝ սեպագիր աղբյուրներից ենթադրվող տեղադրությանը[459]: Ի դեպ, այս տարածքում է գտնվում նաև Կալատգահի

[452] Հմմտ. Kessler 1995: 64f.
[453] Parpola 1987, No. 30: 8′; Lanfranchi, Parpola 1990, Nos. 11: 6-7, 90: 10′, 145: 14-16, 147: 9.
[454] Աղբյուրների հղումների համար տե՛ս Parpola 1970: 362f.; Lanfranchi, Parpola 1990: 248.
[455] Diakonoff, Medvedskaya 1987: 390.
[456] Kinnier-Wilson 1962: 109f.
[457] Երեմյան 1963, էջ 38; Հարությունյան 2001, էջ 323-324:
[458] Меликишвили 1951b: 177; Пиотровский 1959a: 105; Арутюнян 1985a: 193 сл., карта; Adontz 1946: 110, 209; Diakonoff, Kashkai 1981: 101, map; և այլք:
[459] Zimansky 1990: 16ff.; Lanfranchi 1995: 130. Հմմտ. Muscarella 1986: 472; Salvini, Pecorella 1984: 24f., Fig. 1; Salvini 1995a: 87.

ուրարտական խոշոր ամրոցը, որը երբեմն նույնացվում է Ուեսիին[460]: Չպետք է շփոթել KUR.*ïazae/na*, KUR.*ïazaun* նահանգի հետ (տե՛ս ստորև):

**(4)** Աղբյուրներից հայտնի ուրարտական հաջորդ մարզը Ալզի(նի)ն է ([KUR]*alzini*): Ալզի(նի)ն նվաճվել էր դեռևս Մենուայի կողմից[461] և մնացել ուրարտական տիրապետության տակ առնվազն ընդհուպ մինչև Ռուսա Սարդուրորդի: Ալզինիի մարզպետը՝ Սիպլիան, հիշատակվում է կիմմերների դեմ արշավանքին մասնակից մարզպետների շարքում[462]: Ուրարտական դարաշրջանում Ալզի(նի)ն ընդգրկում էր բավական ընդարձակ տարածք՝ հյուսիս-արևելքում ձգվելով ընդհուպ մինչև Վանա լիճ. Ալզի(նի)ի Կուտումե քաղաքը, որի նվաճման մասին հայտնում է Մենուան, նույնացվում է Թովմա Արծրունու հիշատակած Կոտոմ բնակավայրի հետ՝ Վանա լճից հարավ-արևմուտք[463]: Մյուս կողմից, այն կարող էր հարավ-արևմուտքում հասնել մինչև Տիգրիս, նկատի ունենալով, որ ասորեստանյան աղբյուրներում Ալզին հաճախ է հիշատակվում Կաշիյարի լեռների հետ[464]:

**(5)** Ասորեստանյան մեկ այլ նամակում խոսվում է Թասի քաղաքի մարզպետի մասին ([amēl]*b*[*ēl*] *pāḫati ša* [ā][l]*t*]*a-a-si*): Հաշվի առնելով այն փաստը, որ նամակում վերջինս համարվում է «թշնամի», կարելի է կարծել, որ խոսքը ուրարտական մարզպետի մասին է[465]: Թասի քաղաքը Թիգլաթպալասար III-ը հիշատակում է Ուրարտուից գրաված քաղաքների շարքում: Սակայն, Սալմանասար V-ի կառավարման շրջանում կամ Սարգոն II-ի իշխանության սկզբներին այն կարող էր վերագրավված լինել ուրարտացիների կողմից: Ինչ վերաբերում է Թասիի տեղորոշմանը, ապա նշենք, որ Թիգլաթպալասար III-ի արձանագրություններում հանդես են գալիս համանման անուններով երկու քաղաքներ՝ Թասու (URU.*tasu*) և Թասա (URU.*tasa*)[466]: Դրանք կարելի է նույնացնել Սարդուրի Արգիշթորդու նվաճած Թաշե ([URU]*taše*) և Կուերայի Թաշե (URU [d]*querai taše*) քաղաքների հետ, որոնք հիշատակվում են նրա թողած Իզողլուի արձանագրության մեջ[467]: Հետազոտողները գերազանցապես համամիտ են՝ ասորեստանյան աղբյուրների [URU]*tasa* քաղաքանվան տակ տեսնելու Իզողլուի

[460] Zimansky 1985: 112, n. 64; Kroll 2010: 161, Fig. 14.
[461] Տե՛ս КУКН, 44 лиц. стор. $_8$, 148$_{22\text{-}26}$; CTU I, A 5-9 f. f.$_8$, A 5-11A$_{22\text{-}26}$.
[462] Lanfranchi, Parpola 1990, No. 87$_{9\text{-}10}$. Թերևս նաև No. 31: 17.
[463] Карагезян 1974: 191 сл.
[464] Տե՛ս, օրինակ, Grayson 1987: 236 (A.0.78.1: iii 30-iv 3), 240 (A.0.78.2: 26-27) ևն: Տեղորոշման համար տե՛ս և հմմտ. Toffteen 1907: 333ff.; Երեմյան 1963, էջ 33-34; Головлева 1978: 72 сл.; Նահապետյան 1984, էջ 55 հաջորդիվ; Арутюнян 1985a: 18 сл., карта; Kessler 1995: 64.
[465] Saggs 2001: 108f. (ND 2427: 7f.).
[466] Tadmor 1994: 76f. (The Calah Annals 5: 1), 126f. (Summ. 1: 32, 34), 184f. (Summ. 9: 18′, 20′); Tadmor, Yamada 2011, Nos. 10: 6′; 18: 1; 39: 32, 34; 49: obv. 18′, 20′.
[467] КУКН, 244$_{30\text{-}31}$; CTU I, A 9-4$_{30\text{-}31}$. Հմմտ, սակայն, Beran 1956: 143; van Loon 1974: 194.

արձանագրության $^{URU}$*taše*-ն[468], թեև, ինչպես մեզ է թվում, այդ դերին առավել հավակնում է Թասու քաղաքը[469]: Վերջինս, ինչպես երևում է, ընկած էր ինչ-որ տեղ՝ Շուբրիայի մերձավորությամբ կամ հարում էր աշխարհագրական այդ գոտուն՝ գտնվելով, հնարավոր է, Տիգրիսի ակունքներից՝ այսպես կոչված «Տիգրիս թունել»-ից ոչ հեռու: Մյուս կողմից, Թասա և Թասու քաղաքների տեղորոշման խնդրում դերակատարություն ունեցող մի քանի տեղանուններ ($^{KUR}$*ulluba*, $^{KUR}$*nāl(a)* և հատկապես $^{URU}$*ur(r)a*) ուրվագծում են մի շրջանակ, որն անկասկած է դարձնում դրանցից մեկի, ամենայն հավանականությամբ՝ Թասայի տեղորոշումն արդեն այլ՝ Վանա լճից հարավ կամ հարավ-արևմուտք ընկած Տավրոսյան լեռնագոտում[470]: Այդ քաղաքն է, հավանաբար, որ հիշատակվում է ուրարտական աղբյուրներում URU $^{d}$*querai taše* անունով:

Թիգլաթպալասարի տեքստերից դատելով՝ երկու քաղաքներն էլ գտնվել են բավականաչափ հեռու՝ կապելու համար Սինախերիբի արձանագրություններից մեկում հիշատակվող KUR.*tas* լեռան հետ (տե՛ս ստորև):

**(6)** Ասորեստանյան նամակներում ուրարտական վարչական միավորներից մեկը բնորոշվում է որպես «*ուկկայցիներից հետո ընկած*» ($^{LÚ}$EN.NAM *ša qa-ni* KUR.*u-ka-a-a*)[471]: Հետաքրքիր է, որ հայտնի են այս մարզի միանգամից երկու մարզպետների անուններ՝ Քակկադանու և Սունա[472]: Սունան, ըստ երևույթին, փոխարինել է Քակկադանուին մարզպետի պաշտոնում, երբ վերջինս զբաղեցրեց ուրարտական բանակի գլխավոր զորավարի պաշտոնը: Այստեղ հավելենք, որ հավանաբար ուրարտական այդ մարզի մարզպետի մասին է խոսվում ND 2433 նամակում[473]: Ոմն Աշշուր-նաթկիլի կողմից ասորեստանյան բարձրաստճան պաշտոնյա «արքունի սենեկապետ»-ին ($^{amēl}$*nāgīr ekalli*) ուղղված նամակում նշվում է Մեծի քաղաքի վրա ուրարտական մարզպետի ձեռնարկած հարձակման մասին, ընդ որում, կոնտեքստը հուշում է, որ Մեծին գտնվել է Ուկկուի կազմում: Այն հանգամանքը, որ վերոհիշյալ Աշշուր-նաթկիլի նամակն ուղղված էր հենց «արքունի սենեկապետ»-ին, կարող է հուշել, որ վերջինիս նահանգը (*māt nāgīr ekalli*) մոտ էր գտնվում թե ուկկայցիների երկրին, և թե Ուրարտուի սահմաններին, և թե Մուծածիրին: Այս վերջինիս առումով նշենք, որ հայտնի են «արքունի սենեկապետ»-ի հետ Մուծածիրի արքա Ուրզանայի ունեցած գրագրության օրինակներ[474], իսկ Սարգոն

[468] Diakonoff, Kashkai 1981: 84, map; Parpola 1987: 239; Saggs 2001: 109. Հմմտ. Арутюнян 1985a: 180сл.
[469] Տե՛ս նաև Kessler 1995: 60, 63.
[470] Տե՛ս նաև Astour 1987: 23f.
[471] Lanfranchi, Parpola 1990, Nos. 147: 10, 286: 2-4$^{(?)}$.
[472] Lanfranchi, Parpola 1990, Nos. 87: 7-8, 88: 12-r1.
[473] Saggs 2001: 119f. (ND 2433).
[474] Deller 1984: 114f. (Nr. 5.1); Lanfranchi, Parpola 1990, No. 147.

II-ի տարեգրությունն ուղղակի փաստում է, որ նվաճված Մուծածիրը նա միացրել է հենց «արքունի սենեկապետ»-ի նահանգին[475]: Ըստ այդմ, դատելով Ուկկու երկրի տեղորոշումից՝ Հաքյարիի լեռների շրջանում[476], Մուծածիրի տեղորոշումից ներկայիս Ռևանդուզի շրջանում և «արքունի սենեկապետ»-ի նահանգի տեղորոշումից Մեծ Զաբի միջին հոսանքի շրջանում[477]՝ կարելի է ուրարտական մարզը տեղորոշել նշված գոտուց հյուսիս, միգուցե, ներկայիս Յուքսեքօվայի կամ, որ առավել հավանական է թվում՝ Շեմդինլիի շրջանում:

**(7)** Ասորեստանյան տեքստերից մեկը հիշում է Սակուաթային՝ Կանիունի մարզպետին ($^{m}$*sakuatâ* KUR.*qaniun*)[478]: Այդ մարզի տեղորոշման համար աղբյուրը որևէ կռվան չի տալիս. Կանիունի հետ հիշատակվող ուրարտական մյուս մարզերն ընդգրկում են լայն աշխարհագրական տարածք՝ սկսած տերության հարավ-արևմուտքից (Ալզի) մինչև մերձուրմյան ավազան (Արմարիլի): Մյուս կողմից, Սինախերիբի տեքստերում արքայի «5-րդ տարվա արշավանք»-ի ժամանակ հիշատակվող Կանա քաղաքը (URU.*qana*) հնարավոր է թվում նույնացնել Կանիունին: Կանան հիշատակվում է մի քանի այլ քաղաքների թվում՝ «Նիբուր լեռան գագաթի վրա» (*ṣēr zuqti* KUR.*nipur*)[479]: Քաղաքների շարքում է նաև Տումուրրուն (URU.*tumurri*), որը հայագիտության մեջ վաղուց է նույնականացվել Հայաստանի հարավային երկրամասերից մեկին՝ Տմորիքին (հուն. աղբյուրներում՝ *Ταμωρι`τις Տամորիտիս*)[480]: Վերջինս տեղորոշվում է Կորդուքի արևմտյան հատվածում[481]: Այդ նույն շարքում հիշատակվող մեկ այլ քաղաք՝ Կիբշուն (URU.*kibšu*), նույնականացվում է Գեֆշեի հետ՝ ներկայիս Զախոյից հյուսիս-արևելք[482]: Մյուս կողմից, Ջուդի լեռան վրա Սինախերիբի թողած արձանագրության մեջ այդ քաղաքները նշվում են Կադմուխիի սահմանակցությամբ[483]: Ասորեստանյան նահանգի վերածված մերձտավրոսյան այդ երկրի տեղորոշումը բավական հստակ է՝ Տուր-Աբդին լեռների արևելյան՝ մերձտիգրիսյան շրջաններում[484]: Այդ ամենը հաշվի առնելով՝ Տիգրիսի

[475] Fuchs 1994: 116, 322 (Z. 163-164).
[476] Radner 2012: 258 and Fig. 17.01. Գրականության համար տե՛ս Liverani 1992: 27, n. 75.
[477] Postgate 1995: 8f., Fig. 5; Mattila 2000: 36f. and n. 17; Parpola, Porter 2001: 13, Map 4 (D5). Հմմտ. Forrer 1920: 38f., 117f. Հմմտ., միաժամանակ, Radner 2015: 195f., ով «արքունի սենեկապետ»-ի նահանգը տեղորոշում է Փոքր Զաբ գետի վերին հոսանքի շրջանում՝ Փեշդարի հովտում:
[478] Lanfranchi, Parpola 1990, No. 87: 8-9.
[479] Grayson, Novotny 2012, No. 16 (Col. iv 70-75), 17 (Col. iv 18-22); etc.
[480] Adontz 1946: 122.
[481] Երեմյան 1963, էջ 86:
[482] Forrer 1920: 37; Adontz 1946: 58; Kessler 1980: 170; Parpola, Porter 2001: 11, Map 4 (B4).
[483] Luckenbill 1924: 64 (l. 12-15).
[484] Forrer 1920: 18; Adontz 1946: 49; Kessler 1980: 16ff., Karte 1; Арутюнян 1985a: 98 сл., карта; Liverani 1992: 29f., Fig. 2. Տե՛ս նաև Parpola, Porter 2001, Map 3 (E3).

ձախափնյակում՝ մոտավորապես ներկայիս Դաղլելիից Էրուի և Քումչաթը ձգվող գոտում կարելի է որոնել Սինախերիբի հիշատակած քաղաքները, այն է՝ երբեմնի Խաբխիի տարածքներում: Ինչ վերաբերում է այն փաստին, որ այդ քաղաք(ներ)ը Սինախերիբը չի հիշատակում Ուրարտուի կազմում, ապա միանգամայն հնարավոր է, որ Ուրարտուն Ք.ա. Ք.ա. 8-րդ դ-ի վերջ – 7-րդ դ-ի սկզբներին արդեն կորցրել էր իր վերահսկողությունը ինչպես այդ, այնպես էլ՝ Արևելատավրոսյան լեռների ողջ գոտու նկատմամբ:

**(8)** Կանիունի հետ միասին հիշատակվում է նաև Արմիրալիուի մարզպետը[485]: Արմարիլի-Արմարիյալի երկիրը ([KUR]*armari(''a)li*) հայտնի է ասորեստանյան աղբյուրներից: Առաջին անգամ այն հիշատակվում է դեռևս Սալմանասար III-ի արձանագրություններում՝ Ք.ա. 856 թ-ին Հայկական լեռնաշխարհ ձեռնարկված արշավանքի ժամանակ Արամալե անունով (URU.*aramalē*)[486]: Ասորեստանյան արքա Սարգոն II-ի աղբյուրները առավել մանրամասն են ներկայացնում այդ երկիրը՝ Սարգոնի «8-րդ տարվա արշավանք»-ի կապակցությամբ[487]: Ընդհանուր առմամբ հետազոտողները համամիտ են՝ Արմարիլին տեղորոշելու Ուրմիա լճի մերձավորությամբ[488], չի բացառվում՝ Սալմաստի հովտում[489]:

**(9)** Ասորեստանին սահմանակից մարզերից էր Կար-սիպարրը ([KUR].*kar*-UD.KA.BAR, URU.*kar*-URUDU.NEŠ, URU.*kar-si-par*-[*ri*]), որի մարզպետի անունը՝ Տունբաուն, հիշատակվում է ասորեստանյան զեկուցագրերից մեկում[490]: Թեև մարզի անունն ասսուրերեն է, բայց այդ տարածքն ինչ-որ շրջանում գտնվել է Ուրարտուի տիրապետության տակ: Կար-սիպարրը հիշատակող տեքստերից մեկում նշվում է, որ նրա և Մուծածիրի մարզպետները մեկնել են հսկելու ուրարտա-մանայական սահմանը: Այդ փաստը, թե Մանայի, և թե Մուծածիրի հիշատակությունը վկայում են, որ Կար-սիպարրը չպետք է հեռու լիներ Ուրարտուի մերձուրմյան տիրույթներից, գտնվելով, հավանաբար, Մեծ Զաբի վերին հոսանքի շրջանում՝ Ուկկու երկրի մերձավորությամբ, նրանից, հնարավոր է, դեպի արևելք: Հնարավոր է, որ Կար-սիպարրի անունն է պահպանվել Զիբար տեղանվան մեջ[491]: Մյուս կողմից, այդ անունը հիշեցնում է

[485] Lanfranchi, Parpola 1990, No. 87: 10-11.
[486] Grayson 1996: 21 (A.0.102.2 ii 56-57).
[487] Mayer 1983: 96f. (Z. 269, 280, 290).
[488] Salvini 1984: 14ff., Fig. 1; Liebig 1991: 33sqq. Հմմտ. Меликишвили 1954: 29; Дьяконов 1951a, № 27, прим. 16; Kinnier-Wilson 1962: 106f.; Арутюнян 1985a: 38 сл., карта; van Loon 1987: 259.
[489] Zimansky 1990: 16.
[490] Lanfranchi, Parpola 1990, No. 84: 11-12. Տե՛ս նաև Lanfranchi, Parpola 1990, Nos. 90, 166 տեքստերը:
[491] Forrer 1920: 116; Арутюнян 1985a: 103 сл., карта.

Մուծածիրի Ծ/Զապպարիա «հզոր քաղաք»-ի անունը (URU.*ṣ/zapparia*)[492] և կարող է նույնականացվել վերջինիս հետ[493]: Կարելի է ենթադրել, որ Կար-սիպարրը սահմանակցում էր Ասորեստանին, իսկ այստեղ բարձրացված հակաուրարտական ելույթը[494] կարող էր հրահրված լինել վերջինիս կողմից: Այս փաստը կարող է հուշել, որ խոսքը հենց ուրարտական մարզի մասին է[495]:

**(10)** Ասորեստանցի Աշշուր-րեծուվայի երեք նամակներում հիշատակվում է «*մեր դիմացի*» մարզպետը, ընդ որում, նամակներից երկուսում նշվում է նաև մարզպետի անունը՝ Սեթինու[496]: Ի դեպ, «*մեր դիմացի*» մարզպետի մասին է խոսվում նաև մեկ այլ ասորեստանյան տեքստում[497]: Սակայն, նամակի հեղինակի անունը չի պահպանվել և դժվար է ասել, թե ում մասին է խոսքը տվյալ դեպքում: Չի բացառվում, որ նամակի հեղինակը լիներ նույն Աշշուր-րեծուվան:

Դատելով այն հանգամանքից, որ Աշշուր-րեծուվան հետևում էր, մի կողմից, ուրարտական գործերին, իսկ մյուս կողմից՝ առնչվում էր կումեցիների հետ և, ըստ երևույթին, գործել է Կումմեում[498], ապա կարելի է ենթադրել, որ Սեթինուի մարզը նույնպես գտնվել է Կումմեի հարևանությամբ և սահմանակցել նրան: Կումմեի հնարավոր տեղորոշումը Ջուդի լեռների շրջանում կամ, ըստ Քերին Ռադների՝ Բեյթյուշշեբափի մոտ[499], թույլ է տալիս ուրարտական մարզը որոնել նրանից դեպի հյուսիս կամ հյուսիս-արևելք: Հնարավոր է, որ նույնն է, ինչ «ուկկայցիներից հետո ընկած» ուրարտական մարզը (տե՛ս վերը), հաշվի առնելով, որ Կումմեն և Ուկկուն հարևանում էին միմյանց[500]:

**(11)** Ասորեստանյան երկու զեկուցագրերում հիշատակվում է Աբալիուկունուն, որոնցից մեկում նա հանդես է գալիս որպես Մուծածիրի մարզպետ[501]: Երկրորդ նամակում Աբալիուկունուն հիշատակվում է ուրարտական արքայազն Մելարտուայի հետ, թերևս, որպես նրա բարձրացրած խռովության աջակից: Սակայն, Աբալիուկունուն արդեն զբաղեցնում էր մեկ այլ մարզի կարավարչի պաշտոնը: Աղբյուրում մարզի անունը վնասված է, սակայն պահպանված հատվածը՝ [KUR.*x x*]*x-pa* հուշում է, որ այն

[492] Grayson 1996: 70 (A.0.102.14 178).
[493] Арутюнян 1985a: 234 сл., карта.
[494] Lanfranchi, Parpola 1990, No. 166: r.1-4.
[495] Տե՛ս նաև Lanfranchi, Parpola 1990: 246.
[496] Deller 1984: 104f. (Nr. 3.1 Rs 1); Parpola 1987, No. 29: r.1; Lanfranchi, Parpola 1990, Nos. 87: 9, 88: 6-7.
[497] Lanfranchi, Parpola 1990, No. 90: 7.
[498] Lanfranchi, Parpola 1990: XXII; Roaf 2012a: 210; Radner 2012: 257.
[499] Radner 2012: 254ff. and Fig. 17.01. Համմտ. Kessler 1980: 170ff.; Diakonoff, Kashkai 1981: 70, map; Salvini 1984: 28f.; Арутюнян 1985a: 121 сл., карта; Astour 1987: 5f.
[500] Radner 2012: 255f.
[501] Lanfranchi, Parpola 1990, No. 84: 9-10.

Մուծածիրը չէր[502]: Ասորեստանյան աղբյուրներից հայտնի ուրարտական մարզերի անուններից և ոչ մեկը չի ավարտվում *-pa*-ով, ինչը հուշում է, որ գործ ունենք ուրարտական մեկ այլ մարզի հետ:

**(12-17)** Շիբտուրուի (KUR.*ši-ib-*⌜*ṭu*$^{?}$⌝*-*[*ru*]$^{?}$) մարզպետը հիշատակվում է ասորեստանյան ABL 646 նամակում, ուր հիշատակված են ուրարտական ինը մարզպետներ, այդ թվում՝ Շաթթերայի մարզպետը, «գլխավոր մատռվակի դիմաց»-ի մարզպետը, «Մուծածիրի դիմաց»-ի մարզպետը, «Կար-սիպարրի դիմաց»-ի երկու մարզպետներ ևն[503]: Շիբտուրույի և Շաթթերայի տեղորոշման մասին ոչինչ հայտնի չէ[504], առավել ևս՝ Շիբտուրու անվան ընթերցումը հստակ չէ: Ասորեստանյան բարձրաստիճան պաշտոնյաներից «գլխավոր մատռվակ»-ի նահանգի (NAM LÚ.KAŠ.LUL/*māt* $^{lú}$*rab šāqê*) տեղորոշումը նույնպես հստակ չէ: Հետազոտողները «գլխավոր մատռվակ»-ի նահանգային կենտրոն են համարում Շաբիրեշու քաղաքը և դրա վրա հիմնվելով՝ նահանգը տեղորոշում Կաշիյարի լեռների արևելյան՝ տիգրիսամերձ տարածքներում[505]: Ըստ մեկ այլ տեսակետի՝ նահանգն ընկած էր Տիգրիսի վերին հոսանքի շրջանում՝ Ջուդի լեռներից հյուսիս-արևմուտք և Կումմեի հարևանությամբ[506]: Եվ վերջապես երրորդ տեսակետը չի բացառում «գլխավոր մատռվակ»-ի նահանգը տեղորոշելու շատ ավելի դեպի արևելք՝ գրեթե ասսուրա-մաննայական սահմանների մերձավորությամբ[507]: Ըստ այդմ, դժվար է նշել, թե ուր կարող էր գտնվել «*նրա դիմացի*» ուրարտական մարզը: Փաստ է միայն, որ «գլխավոր մատռվակ»-ի նահանգը սահմանակցում էր Ուրարտուին, ինչի մասին է վկայում նաև ասորեստանյան նամակներից մեկը, ուր խոսվում է «գլխավոր մատռվակ»-ի ամրոցների վրա ուրարտական արքայի ձեռնարկած հարձակման մասին[508]: Ինչ վերաբերում է Մուծածիրի և Կար-սիպարրի «դիմացի» երեք մարզերին, ապա վերջիններիս կարելի է որոնել Մեծ Զաբի վերին հոսանքի ձախափնյակում կամ Ուրմիա լճի արևմտյան ափի ուրարտական տարածքներում՝ ելնելով, գլխավորապես, Մուծածիրի տեղորոշման մասին ունեցած մեր տվյալներից[509]:

**(18)** Ասորեստանյան արքունիք ուղղված ոմն Աշիպայի նամակում խիստ պակասավոր հատվածում Ուրարտուից ստացված լուրերի հետ կապված պահպանվել է

[502] Lanfranchi, Parpola 1990, No. 114: 8-9.
[503] Lanfranchi, Parpola 1990, No. 90: 6-13.
[504] Համմ. Арутюнян 1985a: 241, карта.
[505] Forrer 1920: 107f.; Kinnier-Wilson 1972: 14.
[506] Parpola, Porter 2001, Map 4 (A4-B4).
[507] Kessler 1980: 163ff.; Postgate 1995: 7f., Fig. 5. Տե՛ս նաև Mattila 2000: 50f.
[508] Deller 1984: 110f. (Nr. 4.3); Saggs 2001: 119f. (ND 2463).
[509] Տե՛ս ստորև 1.2.1.3.:

«իմ դիմացի» արտահայտությունը (*ša pu-tú-u-*[*a*])[510]: Ամենայն հավանականությամբ՝ խոսքը վերաբերում է «իմ դիմացի մարզպետ»-ին, ինչպես այլ դեպքերում է[511]: Հետևաբար, նամակում խոսվել է ևս մեկ ուրարտական մարզպետի մասին: Այս առումով հետաքրքիր է, որ Աշիպայի մեկ այլ՝ նույնպես խիստ պակասավոր նամակում հիշատակվում են ինչ-որ «մարզպետներ»[512]: Հիշյալ Աշիպան, դատելով նրա նամակների բովանդակությունից, ինքը կարող էր լինել ասորեստանյան նահանգապետ, թեև նրանից մեզ հասած և ոչ մի նամակում կամ այլ աղբյուրներում նա հանդես չի գալիս որպես այդպիսին[513]: Այդ նամակներից մի քանիսում անդրադարձ է կատարվում Ուրարտուում ընթացող անցքերին և զորքերի տեղաբաշխումներին, ընդ որում, հիշատակվում են ուրարտական Պուլուա և Դանիբանի քաղաքները[514], որոնցից առաջինը հայտնի է նաև Թուշխանի նահանգապետ Շա-Աշշուր-դուբբուի գրած նամակներից (տե՛ս վերը): Հետևաբար, ոչինչ չի խանգարում մտածելու, որ Աշիպայի «դիմացի մարզ»-ը կարող էր լինել Դանիբանին: Ավելին, տեքստերից մեկում, ուրարտական վտանգով պայմանավորված, նշվում է, որ բնակչությունը տեղափոխվել է ամրացված վայրեր, իսկ խոշոր և մանր եղջերավոր անասունների հոտերը «գետի այս կողմում» են[515]: Ամենայն հավանականությամբ՝ այդ գետը Տիգրիսն էր[516]: Վերջինիս ձախափնյակում՝ ասորեստանյան Թուշխան նահանգի մերձավորությամբ և Պուլուայի սահմանակցությամբ էլ, թերևս, կարելի է տեղորոշել Դանիբանի մարզը, հնարավոր է՝ Տիգրիսի հետ Բոհթան-սուի միախառնման գոտում: Ըստ այդմ, չի բացառվում նաև, որ Աշիպան կարող էր լինել այդ գոտու դիմաց ընկած Կատմուխի նահանգի կառավարիչը[517]:

**(19-23)** Ուրարտական մարզերի մասին է խոսվում նաև Սարգոն II-ի «8-րդ տարվա արշավանք»-ի նկարագրության ժամանակ: «Լուվրի աղյուսակ»-ում հիշատակվում են 7 մարզեր, որոնից երկուսը (Ուայահս, Արմարիլի) հայտնի են ասորեստանյան արքունի գրագրություններից: Մնացյալը տեղորոշվում են Ուրմիայի հյուսիս-արևելյան, հյուսիսային և հյուսիս-արևմտյան ափերին՝ զբաղեցնելով Ուրմիա լիճը թափվող գետահովիտների տարածքը՝ երկրագործության համար պիտանի

[510] Lanfranchi, Parpola 1990, No. 22: 7-8.
[511] Հմմտ., օրինակ, Lanfranchi, Parpola 1990, No. 80: 6-7.
[512] Lanfranchi, Parpola 1990, No. 23: 7.
[513] Parker 2009: 180ff.
[514] Lanfranchi, Parpola 1990, No. 21: 11-12.
[515] Lanfranchi, Parpola 1990, No. 21: 16-19.
[516] Տե՛ս նաև Parker 2009: 191.
[517] Հմմտ. Lanfranchi, Parpola 1990: xvf.; Radner, Schachner 2001: 744/769; Parker 2009: 183f.

հողերով[518]: Ի դեպ, այդ նույն արշավանքի մասին շատ ավելի ամփոփ տեղեկություններ հայտնող սարգոնյան մյուս արձանագրություններում նշվում է ուրարտական 8 մարզերի մասին: 8-րդը՝ Ուիշդիշը, սակայն, անցել էր Մանայի թագավորությանը, որի տիրապետության տակ էր այն գտնվում դեռևս մինչև Ռուսա Սարդուրորդու գահակալությունը:

(24) Այանցից գտնված բուլլաներից մեկում նշված է վազացիների մարզպետի անունը ($^{m}$*uraqi* EN.NAM $^{m}$*’azaḫali*)[519]: Վազա երկիրը ($^{m}$*’azaini* KUR-*ni*), ինչպես հայտնի է, զբաղեցնում էր Արարատյան դաշտավայրի երևի թե մեծ մասը[520], իսկ մարզկենտրոն կարող էր լինել Արգիշթիխինիլին՝ ուրարտական ամենամեծ ամրոցն այս տարածքներում[521]:

Ամենայն հավանականությամբ՝ ասորեստանյան աղբյուրներում հիշատակվող KUR.*ïazae/na*, KUR.*ïazaun* նահանգը[522], հակառակ ընդունելություն գտած կարծիքի[523], ոչ մի կապ չունի Ուեսի քաղաքի մարզի հետ, իսկ ասորեստանցիները նկատի են ունեցել հենց Արարատյան դաշտավայրում ընկած Ուազա/Վազա երկիրը/մարզը: Այս տեղանունը հիշատակող տեքստերից առաջինում նշվում է, որ ուրարտական արքան գտնվում է Ուազա/Վազա երկրում, երկրորդ աղբյուրը հայտնում է կիմմերների դեմ մղված ճակատամարտում Ուազա/Վազայի մարզպետի զոհվելու մասին և վերջապես երրորդ աղբյուրը նշում է, որ ուրարտական արքան իր բանակը կենտրոնացրել է Ուազա/Վազա երկրում:

Ինչպես տեսնում ենք, որևէ տեղեկություն, որը կվկայեր, որ Ուազա/Վազան գտնվել է մերձուրմյան տարածքներում և սահմանակցել այդ գոտում ընկած որևէ երկրի, ասորեստանյան աղբյուրները չեն հայտնում: Այս առումով հատկանշական է նաև, որ այդ աղբյուրներում Ուազաե/Վազաե, Ուազանա/Վազանա, Ուազաուն/Վազաուն անվանաձևերը հիշատակվում են բացառապես KUR՝ «երկիր» որոշիչով այն դեպքում, երբ վերոհիշյալ Ուեսին մշտապես հանդես է գալիս որպես «քաղաք»՝ բազմիցս հիշատակվելով մերձուրմյան ավազանում տեղ գտած իրադարձությունների կապակցությամբ:

[518] Zimansky 1990: 15ff.
[519] CTU IV, CB Ay-10.
[520] Арутюнян 1985a: 13, карта.
[521] Biscione, Dan 2011: 108.
[522] Parpola 1990, No. 31, r.2-3; Lanfranchi, Parpola 1990, Nos. 90: 10′; 114: 3-6.
[523] Дьяконов 1951a/4: 300 (указатель); Меликишвили 1951б: 178; նույնի՝ 1954: 33, 359; Հմմտ. նաև Арутюнян 1985a: 193.

(25) Բաստամից գտնված աղյուսակներից մեկում հիշատակվում է Այսուաբզունի քաղաքի մարզային կառավարիչը[524]: Դատելով այն փաստից, որ տվյալ տեքստը հայտնաբերվել է Բաստամից, մի գուցե կարելի է ենթադրել, որ Այսուաբզունի քաղաքը շատ հեռու չէր գտնվում ուրարտական այս խոշոր կենտրոնից:

Այսպիսով, միայն ասորեստանյան աղբյուրների տվյալները թույլ են տալիս ենթադրելու քսանից ավելի մարզերի գոյության մասին: Բացի դա, հավանաբար տերության հարավ, հարավ-արևմտյան և արևմտյան տարածքներում ընկած ուրարտական 18 մարզերի մասին է խոսվում Թիգլթպալասար III-ի արձանագրություններից մեկում[525]: Եթե ճիշտ է այդ ընթերցումը կամ եթե դա չափազանցություն չէ, ապա, մի քանի համընկնումները հաշվի առնելով կարելի է նշել, որ միայն ասորեստանյան աղբյուրները թույլ են տալիս խոսելու առնվազն 30 ուրարտական մարզերի մասին: Ոչ պակաս քան յոթ մարզերի գոյության մասին կարելի է դատել ուրարտական աղբյուրներից: Հաշվի առնելով նաև այն փաստը, որ ասորեստանցիների տեսադաշտում էր գտնվում ուրարտական տերության մեծ մասը, բացառությամբ, թերևս, հյուսիսային շրջանների, և հաշվի առնելով Ռուսայի հնարավոր վարչաքաղաքական վերափոխումները, ապա անկասկած մարզերի թիվը լինելու էր ավելին:

## 1.2. Ուրարտական տերության աշխարհագրությունը

### 1.2.1. Բուն Ուրարտու

#### 1.2.1.1. Միջնաշխարհ

Սեպագիր աղբյուրներից և հնագիտական տվյալներից դատելով՝ Ք.ա. 9-րդ դ-ի 30-20-ական թթ-ին բիայնական պետության սահմանները բավական համեստ էին: Սկզբնապես այն պարփակված էր Կոտուրյան լեռներին հարող հյուսիս, հյուսիս-արևմտյան մերձուրմյան շրջաններում, ուր հնարավոր է թվում տեղորոշել «Խալդի աստծո քաղաք»-ը և բիայնացիների բնօրրանն ընդհանրապես[526]: Եթե իրոք «Միերի դռան» արձանագրությունն արտահայտում է Բիայնիլիի գլխավորած նաիրյան համադաշնության կազմը, ապա կարելի է մոտավոր պատկերացում կազմել նաև համադաշնության սահմանների մասին: Նրա կազմում են գտնվել բիայնական պետությունը, Արդինի-Մուծածիրը, Տուշպա, Կումենու, Արծունիունի, Էրիդիա, Ուիշինի, Նիշի[…]նի քաղաքները և մի քանի այլ իշխանություններ՝ ընդգրկելով Վանա լճի

[524] КУКН, 393 лиц. стор. 3-8; CTU IV, CT Ba-1 Ro3, 8.
[525] Tadmor 1994: 184f. (Summ. 9: 22′); Tadmor, Yamada 2011, No. 49: 22′.
[526] Grekyan 2006: 166f.

արևելյան շրջաններից գրեթե մինչև Որմիա, Կորդվաց լեռներից մինչև Թոնդրակ ձգվող տարածքը (Քարտեզ 2-1)[527]:

Նաիրյան համադաշնության շարքում բիայնական գերիշխանության հաստատմանն ու կենտրոնացված պետության կազմավորմանը զուգընթաց՝ իրագործվեցին և առաջին արտաքին նվաճումները: Իշպուինիի և Մենուայի արձանագրած նվաճումները Հայկական լեռնաշխարհի հյուսիսում և արևելքում թույլ տվեցին պետության սահմանները տանել բնական արգելքների թելադրած ուրվագծով[528]: Այս միտումը ակնհայտ է հատկապես Մենուայի օրոք (Քարտեզ 2-4): Վերջինիս նվաճումները նպատակ ունեին պետության սահմանները տանել լեռնաշղթաների ուրվագծած բնական սահմաններով՝ պետության համար ապահովելով ամուր դիրքեր և երկիրը վերածելով բնական ամրոցի: Հետագայում իրականացված նվաճումներում աշխարհագրական գործոնն ուներ կարևորագույն դերակատարություն:

Լեռնաշխարհի բնական պայմանները, տարածքի խիստ կտրատվածությունը երբևէ չեն նպաստել կառուցելու տարածքային պետություն: Ուրարտուն՝ ընդհուպ մինչև Սարդուրի Արգիշթորդի իրականացված տարածքային ձեռքբերումներով հանդերձ, շարունակում էր հանդիսանալ համեմատաբար համեստ սահմաններով երկիր: Այդ շրջանի աղբյուրներում էլ հանդիպում են առաջին տեքստային վկայությունները՝ նվաճված երկիրը «իմ երկրին» ավելացնելու մասին (KUR-*ni*/$^{KUR}$*ebani* $^{KUR}$*ebaniuki(e)di abilidu*-)[529]:

Ուրարտուի տարածքների կտրուկ աճ է դիտարկվում հատկապես Սարդուրի Արգիշթորդու կառավարման տարիներին: Նվաճված երկիրը «իմ երկրին» ավելացնելու մասին ձևակերպումները հանդիպում են հատկապես «Սարդուրյան տարեգրության» մեջ, ուր նշվում է Պուլուադի երկիրը[530], Էրիախի երկիրը[531], Մանա երկիրը[532], ինչպես նաև Մելիդին պատկանող ինը ամրոցներ[533] Ուրարտուին միացնելու մասին: Մնացյալ դեպքերում տարածքային աճն արտահայտվում էր նվաճված երկրում մարզպետ նշանակելու[534], նվաճված քաղաքում ամրոց կառուցելու և կայազոր թողնելու մասին տեղեկատվությամբ[535]:

---

[527] Հմմտ. Հմայակյան 1992, էջ 128-131; նույնի՝ 1995ա, էջ 105:
[528] Տե՛ս և հմմտ. նաև Zimansky 1985: 54ff.; նույնի՝ 1995c: 264; նույնի՝ 2001: 17.
[529] КУКН, 57 Фрагмент $C_{2-3}$, 174 $B1_{x+8-11}$; CTU I, A 5-6 Ro $(c)_{2''-3''}$, A 8-2 $Vo_{8'-11'}$.
[530] КУКН, 241 $Ex+_{8-18}$; CTU I, A 9-3 $IV_{8'-18'}$.
[531] КУКН, 241 $Ex+_{20-24}$; CTU I, A 9-3 $IV_{20'-24'}$.
[532] КУКН, 241 $B_{13-27}$; CTU I, A 9-3 $V_{12'-26'}$.
[533] КУКН, $244_{21-31}$; CTU I, A $9\text{-}4_{21-31}$.
[534] *E.g.* КУКН, 59 Фрагмент A, Текст $I_{17-19}$; CTU I, A 5-8 $Ro_{17-19}$.
[535] *E.g.* КУКН, $45_{1-7}$; CTU I, A 5-10 $Ro_{1-7}$.

Մասնագիտական գրականության մեջ, խոսելով Ուրարտուի սահմանների մասին, շատ հաճախ նկատի են ունենում ուրարտական արշավանքների աշխարհագրությունը՝ առանց հաշվի առնելու, որ ամեն մի արշավանք չէ, որ նպատակ էր հետապնդում նվաճելու տվյալ տարածքը: Դա է պատճառը, որ հաճախ Ուրարտուին վերագրվող սահմանները խիստ ուռճացվում են[536]: Ստորև մենք կքննարկենք Ուրարտուի սահմանների հարցը՝ նկատի ունենալով այն տարածքները, որոնք գտնվել ուրարտական իշխանությունների ուղղակի ենթակայության տակ և կառավարվել են ուրարտական վարչակազմի կողմից: Ըստ այդմ, այդ սահմանագիծը մենք կոչում ենք Ուրարտուի «բուն սահմաններ»:

1.2.1.2. **Հյուսիս-արևելք և արևելք (մերձարաքսյան գոտի)**

Բիայնական ներկայությունը մերձարաքսյան տարածքներում սկսվում է դեռևս Իշպուինիի և Մենուայի «համատեղ գահակալության» շրջանից: Նվաճումների առաջին ալիքն ընդգրկում էր ներկայիս Նախիջրանի և Մակվի գոգավորությունների տարածքը, և կարելի է կարծել, որ արդեն Ք.ա. 9-րդ դ-ի վերջին քառորդին Ուրարտուի սահմաններն արևելքում հասնում էին մինչև Մարանդ և Ջուլֆա[537], ուր վկայված են Ք.ա. 9-րդ դ-ով թվագրվող բիայնական ամրոցներ[538]: Օձասարի արձանագրության տվյալները ևս հուշում են այստեղ բիայնական մշտական ներկայության մասին[539]:

Դեպի Սյունյաց լեռներ՝ ընդդեմ Ամուշա քաղաք-պետության ձեռնարկված արշավանքի փաստն[540] իր հերթին վկայում է, որ Իշպուինիի կառավարման վերջում բիայնական սահմաններն անցնում էին Զանգեզուրի լեռներով՝ իրենց հսկողության տակ վերցնելով Նախիջևանը Սյունիքի հետ կապող լեռնային ուղիները, մասնավորապես՝ Մայրադուրքի (Սիսիանի) լեռնանցքը: Ամուշա քաղաքը, կարծում ենք, գտնվել է այդ լեռնանցքի մերձավորությամբ[541]: Ամուշայի հիշատակությունը Արգիշթի Ռուսայորդու թողած Թանահատի արձանագրության մեջ որպես Բիայնիլի տունդարձի ուղի[542] կարող է վկայել, որ անգամ Ք.ա. 7-րդ դ-ի սկզբներին Նախիջևանն ու Զանգեզուրի լեռնանցքները գտնվում էին բիայնական վերահսկողության տակ:

Նախիջևանի տարածքը հենարան դարձավ դեպի հյուսիս-արևելք՝ Սևանա լճի ավազան ծավալվելու համար: Սարդուրի Արգիշթորդու օրոք նվաճվեցին Արփա գետի

[536] Տես, օրինակ, Մովսիսյան 2008, էջ 35-43 և կից քարտեզները:
[537] Kroll 1984b: 128.
[538] Kroll 1976: 173, Abb. 46; Kleiss, Kroll 1978: 65; etc.
[539] КУКН, 39a; CTU I, A 3-8.
[540] КУКН, Послесловие 2; CTU IV, B 4-1A-D, B 4-2.
[541] Համմմտ. Կարագյոզյան 2008, էջ 63-64:
[542] КУКН, 411 обор. стор.$_{22-23}$; CTU I, A 11-3 Vo$_{22-23}$.

վերին հոսանքի՝ Վարդենիսի լեռնաշղթայից հարավ ընկած տարածքները: Վերահսկողություն սահմանվեց Արաքսի հովտից Սևանի ավազան ու Սյունիք տանող ճանապարհների և դրանց հանգուցային կետերի՝ Սելիմի և Որոտանի լեռնանցքների[543] նկատմամբ, հարավից առաջին արշավանքները ձեռնարկվեցին դեպի մերձսևանյան երկրներ: Այստեղ ուրարտական մշտական ներկայությունը հաստատվեց միայն Ռուսա Սարդուրորդու ժամանակ, երբ լճի արևմտյան և հարավային ափերին ընկած երկրները նվաճվեցին և միացվեցին տերությանը: Հայրավանքից մինչև Սոթք ձգվող ուրարտական ամրաշղթան հստակ կերպով ուրվագծում է տերության սահմանները Սևանա լճի ավազանում (Քարտեզ 3-12բ):

Դեռևս Մենուայի օրոք Էրիկուախի երկրի նվաճումով մերձարաքսյան գոտում սահմանը հասցվել էր Հայկական Պար լեռնաշղթային: Արգիշթի Մենուայորդու օրոք ուրարտական տերության սահմանների մեջ ընգրկվեց արդեն ողջ Արարատյան դաշտավայրը, իսկ Սարդուրի Արգիշթորդու օրոք իրականացվեց նաև Շիրակի դաշտավայրի նվաճումը:

Այս գոտում նույնպես սահմանները տարվեցին բնական արգելքների թելադրած ուրվագծով. Արարատյան դաշտավայրի բիայնական տարածքներն արևելքից պաշտպանված էր Գեղամա լեռներով, հյուսիսից՝ Ծաղկունյաց լեռնաշղթայով և Արագածի լեռնազանգվածով: Այդ լեռնաշղթաների ստորոտով էլ ձգվում էր ուրարտական ամրաշղթան՝ Սևաբերդ – Կամարիս – Արամուս – Սոլակ – Դովրի (Ջորավան) – Փարպի – Աղթամիր (Ոսկեվազ) – Արագած գծով՝ հսկողության տակ պահելով դաշտավայրը հյուսիս-էթիունյան տարածքներին կապող Հրազդանի և Քասաղի գետահովիտներով անցնող մատչելի ճանապարհները (Քարտեզ 3-10բ):

Սարդուրի Արգիշթորդու օրոք նվաճված Պուլուադի երկրի մայրաքաղաք Լիբլիունիի շուրջը կառուցված ուրարտական ամրոցների շղթան մատնանշում էր տերության սահմանները ծայր արևելքում: Արգիշթի Ռուսայորդու օրոք թեև փորձ արվեց ամրապնդվել Ուրմիայից արևելք՝ դեպի Սաբալանի լեռնազանգված ձգվող տարածքներում, իսկ այստեղից հայտնաբերված ուրարտական արձանագրությունները վկայում են տարբեր նվաճումների և ամրոցներ կառուցելու մասին, սակայն, կասկած չկա, որ այստեղ ուրարտական ներկայությունը դրվագային էր, իսկ տերության սահմաններն արևելքում սկսած Սարդուրիից ամենայն հավանականությամբ մնացել են նույնը (Քարտեզներ 2-6 – 2-9)[544]:

[543] Հակոբյան 2007, էջ 12:
[544] Այս մասին տե՛ս և հմմտ. նաև Дан 2015: 33 сл.

### 1.2.1.3. **Հարավ-արևելք (մերձուրմյան գոտի)**

Հյուսիս-արևմտյան Իրանի՝ երբեմնի ուրարտական տարածքները Ուրարտուի հնագիտության տեսանկյունից առավել լավ ուսումնասիրված գոտիներից են, և հնագիտական պատկերի համադրումը սեպագիր աղբյուրների հետ թույլ է տալիս բավական հստակ մոտենալ մերձուրմյան գոտում Ուրարտուի սահմանների հարցին:

Սեպագիր տեքստերից դատելով՝ արդեն Ք.ա. 9-րդ դ-ի վերջերին մերձուրմյան ավազանում բիայնական պետությունն ուներ ամուր դիրքեր և ի զորու էր Զագրոսյան լեռներով դեպի հարավ ձեռնարկելու խորը ռազմերթեր: Ուրմիա լճի արևմտյան ափի ողջ երկայնքով և մասամբ դեպի հարավ կառուցված էր ամրոցների հզոր շղթա: Հարավում սահմանագիծն հիմնականում հստակ է և անցնում էր Քելիշինի լեռնանցք – Քանիքի Զար – Գերդե-Սորեի (Սուֆիան) – «Մահաբադ-թեփե» – Թաշ-թեփե – Արսլան Կալ'եհ գծով և ավարտվում Ուրմիա լճի հարավ-արևելյան անկյան մոտ՝ ընդգրկելով նաև լճի հարավային ափամերձ հատվածը գրեթե ամբողջությամբ[545]: Այդ գիծը պաշտպանված էր լեռների բնական սահմանով, իսկ Սուֆիանի ամրոցը պաշտպանում էր Փոքր Զաբի հովտից դեպի Սոլդուզի հովիտ տանող ճանապարհը[546]:

Մերձուրմյան ուրարտական տիրույթներին սահմանակից երկրներն էին Մուծածիրը, Խուբուշկիան և Մաննայի թագավորությունը:

Այդ երկրներից Մուծածիրի տեղորոշումը բավականին որոշակիացված է՝ Մեծ Զաբի վտակ Ռևանդուզ գետի և Բարադոստի լեռների շրջանում[547], իսկ բուն քաղաքը նույնացվում է Սիդեկանի մերձավորությամբ գտնվող Մուջեսիր գյուղի հետ[548]: Մյուս կողմից, այս նույնականացման հետ կապված հարցերն իրականում ավելի շատ են, քան պատասխանները[549]: Առայժմ խնդիր է նաև, թե արդյո՞ք Մուծածիրը երբևէ գտնվել է Ուրարտուի կազմում: Խնդիրն այն է, որ ասորեստանյան տեքստերից մեկում հիշատակվում է Մուծածիրի մարզպետ Աբալիուկունուն մի կոնտեքստում, որը նրան կապում էր Ուրարտուի և ուրարտական արքայի քայլերի հետ[550]: Այն, որ ասորեստանցի նամակագիրը խոսում է ուրարտական մարզպետի մասին, հազիվ թե կարելի լինի վիճարկել[551]: Մյուս կողմից, չի բացառվում, որ նամակագիրը նկատի է ունեցել

---

[545] Kleiss 1976a: 43; նույնի՝ 1977a: 138f., Abb. 1; Biscione 2009: 126, Fig. 2. Տե՛ս նաև Salvini 1981: 163ff.; Сальвини 1983: 221 сл.; Burney 1994a: 32.

[546] Kleiss 1976a: 43.

[547] Edmonds 1966: 160ff.; Diakonoff, Kashkai 1981: 9, map; Арутюнян 1985a: 144 сл., карта; Radner 2012: 245ff., Figs. 17.01; Danti 2014: 27ff.; etc. Տե՛ս նաև Liverani 1992: 24, ծնթ. 57-ում նշված գրականությունը:

[548] Boehmer, Fenner 1973: 489ff., Abb. 1, 13, 508ff., Abb. 40-45; Boehmer 1995: 446ff., Abb. 1-2.

[549] Համմտ. Marf 2014: 13ff.

[550] Deller 1984: 117 (Nr. 6.2); Lanfranchi, Parpola 1990, No. 84.

[551] Համմտ. Иванчик 1990: 15 сл.

Մուծածիրի «դիմաց ընկած» մարզպետի[552]: Եվ վերջապես ամենևին չի բացառվում, որ Մուծածիրը մի պահ ընդգրկված լիներ ուրարտական տերության սահմանների մեջ[553]:

Առայժմ հայտնի չէ, թե արդյո՞ք Ուրարտուն մերձումյան ավազանում ընդհանուր սահման ուներ Խուբուշկիա երկրի հետ: Որ վերջինս ընկած էր Զագրոսյան լեռներում՝ Ուրարտուի մերձուրմյան սահմաններից ոչ հեռու, այլևս կասկածի ենթակա չէ[554]: Այլ հարց է այդ երկրի կոնկրետ տեղորոշումը: Համենայն դեպս, առկա նյութը վկայում է, որ Խուբուշկիան խնդիր չուներ Ուրարտուի հետ հաղորդակցվելու հարցում և որ Զագրոսյան լեռներով անցնող կարևոր ճանապարհներից մեկը կապում էր այդ երկրներին[555]: Այստեղ նշենք նաև, որ Ուայաիս ամրոցը, որին «Լուվրի աղյուսակ»-ն անվանում է «Ուրարտուի ստորին սահման/սահմանի վերջ», ըստ աղբյուրի հարևանում էր Նա'իրի երկրին, այն է՝ Խուբուշկիային (*šepit mišri ša* KUR.*urarṭi ša patti* KUR.*na'iri*)[556]:

Ինչ վերաբերում է Մաննայի թագավորությանը, ապա վերջինիս հետ Ուրարտուի սահմանակցությունը կասկած չի հարուցում և վերը նշված՝ Գերդե-Սորեհ (Սուֆիան) – «Մահաբադ-թեփե» – Թաշ-թեփե – Արսլան Կալ'եհ գծից դեպի հարավ, հարավ-արևելք և դեպի արևելք ձգվում էին Մաննայի կամ նրա կազմում ընդգրկված տարբեր քաղաքական կազմավորումների տարածքները (Ուիշդիշ, Զիկիրտու, Մեսսի, Անդիա):

Ք.ա. 714 թ-ի ասորեստանյան արշավանքից հետո Ուրարտուն կորցրեց իր մերձուրմյան հենարանի հարավային հատվածը[557]: Հավանաբար, Ուեսին անցավ մանացիների վերահսկողության տակ: Ուրարտուի հետ քաշված սահմանները Ք.ա. 7-րդ դ-ի սկզբներին կարող էին անցնել Ուրմիայի հովտից դեպի հարավ և Միշուդաղի (Նոր-Շիրական) լեռներով: Այդ գծից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած տարածքները մնացին ուրարտական տիրապետության տակ ընդհուպ մինչև տերության անկումը (Քարտեզներ 2-8 – 2-9):

Ուրմիա լճից անմիջապես արևելք ընկած ողջ գոտին, այդ թվում նաև Սահանդի լեռնազանգվածի փեշերին ընկած հովիտները, դատելով հնագիտական տվյալներից, Ուրարտուի սահմաններից դուրս էր[558] և ամենայն հավանականությամբ՝ գտնվում էր Մաննայի թագավորության կազմում: Դա է վկայում այստեղից գտնված Ջավանքալեհի

[552] Меликишвили 1954: 295 сл., прим. 5 ուր և տե՛ս Թյուրո-Դանժեհի նկատառումը տեքստի ընթերցման հետ կապված (Thureau-Dangin 1912: XVI, n.1):
[553] Գրեկյան 2005ա, էջ 281-283:
[554] Kinnier-Wilson 1962: 108ff.; Hulin 1963: 59; Reade 1994: 185ff.; նույնի՝ 1995: 33ff.; Lanfranchi 1995: 127ff.; Salvini 1997: 109ff. Հմմտ. Арутюнян 1985а: 231 сл., карта (նշված գրականությամբ); Медведская 1989: 111 с.л., рис. 3; Medvedskaya 1997: 197ff., Fig. 1; Liverani 1992: 24f., Fig. 1.
[555] Տե՛ս 1.2.1.3.:
[556] Mayer 1983: 98f. (Z. 298).
[557] Burney 1981: 148f.; Diakonoff, Medvedskaya 1987: 389.
[558] Biscione, Khatib-Shahidi 2006: 303.

ուրարտական արձանագրությունը, ուր խոսվում է Արգիշթի Մենուայորդու կողմից դեպի Մաննա ձեռնարկված արշավանքի և «արքայական քաղաք» Շիմերիխադիրինիի նվաճման մասին[559]: Սարդուրի Արգիշթորդու տարեգրությունն իր հերթին հայտնում է Մաննա արշավելու, «ամրացված քաղաք» Դարբանին նվաճելու և երկիրն «իր-երկրին» միացնելու մասին[560]: Կարելի է կարծել, որ մանայական Դարբանին դա Ուշկայայի ամրոցն էր, իսկ Ուրարտուին միացված տարածքը կարող էր լինել Սուբի մարզը, որը «Լուվրի աղյուսակ»-ը համարում է «մաննացիների երկիր»[561]: Պատկերը լրացնում են այն աղբյուրները, որոնք վերաբերում են Ուրմիա լճից հարավ-արևելք ընկած Ուիշդիշ երկրին: Վերջինս համարվում է Ռուսայի կողմից զավթված մանայական մարզ[562]:

Ինչպես երևում է՝ Ուրմիա լճից արևելք ուրարտական ներկայությունը կարճատև էր և հիմնականում վերաբերում է Ք.ա. 744 թ-ից մինչև Ք.ա. 714 թ. ընկած մոտ 30-ամյա մի շրջանի (Քարտեզներ 2-6 – 2-7):

#### 1.2.1.4. **Հարավ (մերձտավրոսյան գոտի)**

Ուրարտական տերության ընդլայնումը հարավային ուղղությամբ՝ դեպի Տավրոսյան լեռներ և անդին, սկսվեց Մենուայի օրոք: Նրա տեքստերից երկուսը հայտնում են Ալզի երկրի նվաճման մասին[563], որով հսկողության տակ վերցվեցին Հայկական Տավրոսի կենտրոնական հատվածով՝ Բիթլիսի լեռներով անցնող կարևորագույն ուղիները: Համենայն դեպս, դա է հուշում Ալզիի Կուտումե քաղաքի համադրումը Կոտոմի հետ և տեղորոշումը Վանա լճից հարավ-արևմուտք (տե՛ս վերը): Բացի դա, Մենուայի տեքստերից մեկը հայտնում է հարավային ուղղությամբ հետագա ծավալման և «մինչև Կումենու», «մինչև Աշշուր (երկիրը)» հասնելու մասին (*pari* ... $^{URU}$*qumenuni pari* $^{KUR}$*ašurini*)[564]: Երևում է՝ այդ արշավանքի արդյունքում ուրարտական զորքերը դուրս են եկել մերձտիգրիսյան շրջաններ: Ուրարտական աղբյուրը թեև ուղղակի նշում է Ասորեստանին հասնելու մասին, սակայն, այնուամենայնիվ, կարծում ենք, որ Ուրարտուն այդտեղ Ասորեստանի հետ ընդհանուր սահման չուներ: Մերձտավրոսյան գոտում Ուրարտուն սահմանակցում էր առնվազն չորս «բուֆերային» երկրների հետ, որոնք ընկած էին նրա և Ասորեստանի միջև: Դրանք են՝ Ուլլուբան (Ուլիբա), Կումմեն (ուրարտ. Կումենունի), Ուկկուն և Խաբխին: Վերջին երկուսը, համենայն դեպս այդ անուններով ուրարտական տեքստերում չեն հիշատակվում:

---

[559] CTU I, A 8-13.
[560] КУКН, 241 $B_{13-27}$; CTU I, A 9-3 $V_{12'-26'}$.
[561] Mayer 1983: 84f. (Z. 172).
[562] Mayer 1983: 84f. (Z. 163).
[563] КУКН, 44 лиц. стор.$_{8}$, 148$_{22-26}$, 149$_{20-24}$; CTU I, A 5-9 f. f.$_{8}$, A 5-11 $A_{22-26}$, A 5-11 $B_{20-24}$.
[564] КУКН, 44 верх. стор.$_{12-13}$; CTU I, A 5-9 f. s.$_{12-13}$.

Վերը թվարկված երկրներից Ուլլուբան, միանշանակ, գտնվում էր Ուրարտուի գերիշխանության տակ, բայց չէր ընդգրկվել նրա սահմանների մեջ և վերա-կազմավորվել մարզի: Սա երևում է այն փաստից, որ Ք.ա. 739 թ-ին Թիգլաթպալասար III-ի ձեռնարկած «7-րդ տարվա արշավանք»-ը, որը շոշափում էր հենց Ուրարտուի դիրքերը մերձտավրոսյան գոտում[565], այնուամենայնիվ, ասորեստանյան էպոնիմների ցանկում նշվում է իրագործված ընդդեմ Ուլլուբա երկրի (*ana* KUR.*ulluba*)[566], և եթե անգամ Ուրարտուն այդտեղ ուներ ռազմական ներկայություն, ապա, համենայն դեպս ասորեստանցիների համար, Ուլլուբան մնում էր իբրև առանձին քաղաքական միավոր:

Ուլլուբայի տեղորոշումը մեծապես նպաստում է Ուրարտուի սահմանները հարավում հստակեցնելու համար: Ք.ա. 739 թ-ին վերաբերող Թիգլաթպալասար III-ի տեքստերը վկայում են Ուլլուբա երկիրը նվաճելու և ասորեստանյան նահանգի վերածելու մասին[567]՝ այդտեղ կառուցելով նահանգային նոր կենտրոն՝ Աշշուր-իկիշա քաղաքը[568]: Ասորեստանյան տեքստերից մեկում թվարկվում են Ուլլուբա երկրի 29 քաղաքների անունները[569]: Այդ արշավանքի կապակցությամբ՝ ասորեստանյան արքան տարբեր տեքստերում հայտնում է Իլլիմերու լեռան վրա իր «արքայական պատկեր»-ը թողնելու մասին[570]: Այդ բարձրաքանդակը՝ կից ընդարձակ տեքստով, հայտնաբերվել է Միլա Մերգիում՝ Դոհուկից հյուսիս-արևմուտք (նկ. Ա-17/1)[571]: Հետևաբար, Ուլլուբայի տեղորոշումը Փոքր Խաբուրի ավազանում՝ Դոհուկից մինչև Զախո և, թերևս, մինչև Սիլոպի, հազիվ թե կասկած հարուցի[572]:

Թիգլաթպալասար III-ի հանրագումարային արձանագրություններից մեկում Ուլլուբա երկրից բացի նշվում է նաև Բիթիրրու, Պարիսու[573], Թաշուխա, Մանտուն, Սարդաուրրիանա, Դիուլլա-անա-Նալ, Սիկիբշա, Աշշուրդայա, Բաբութթա, Լուսիա և

---

[565] Ուլլուբայի դեմ արշավանքը մանրամասն նկարագրող Միլա Մերգիի արձանագրության մեջ պարզորոշ նշվում է այդ մասին՝ «[Ես բռնեցի ……] Ուրարտուի ճանապարհը» (տե՛ս Tadmor 1994: 114f. (The Mila Mergi Rock Relief: 24); Tadmor, Yamada 2011, No. 37: 24):

[566] Millard 1994: 44/58.

[567] Tadmor 1994: 114f. (The Mila Mergi Rock Relief: 43b-45a); Tadmor, Yamada 2011, No. 37: 43b-45a.

[568] Tadmor 1994: 126f. (Summ. 1: 28b-29), 134f. (Summ. 3: 29b′-31′), 166f. (Summ. 7: 43), 182f. (Summ. 9: 7′-8′); Tadmor, Yamada 2011, Nos. 39: 28b-29, 41: 29b′-31′, 47: 43b, 49: 7a′-8a′.

[569] Tadmor 1994: 114f. (The Mila Mergi Rock Relief: 2); Tadmor, Yamada 2011, No. 37: 27-34. Պահպանվել են Մամա, Կինա, Զալուակա Սա[…]զաբաե, Կուրուլա, Աթուքա, Սիրուքա, Գաուրնա քաղաքների անունները:

[570] Tadmor 1994: 114f. (The Mila Mergi Rock Relief: 45b-46a), 134f. (Summ. 3: 28′-29′), 182f. (Summ. 9: 6′); Tadmor, Yamada 2011, Nos. 37: 45b-46a; 41: 28b′-29a′, 49: 6b′.

[571] Postgate 1973: 47ff., Figs. 1-7.

[572] Postgate 1973: 56ff.; Reade 1978b: 177; Parpola, Porter 2001: 17, Map 4 (B4). Այս առումով դեռևս Էմիլ Ֆորրերի կողմից առաջարկված Ուլլուբա - Խուլպ համադրությունը պետք է մի կողմ թողնել (Forrer 1920: 85, Adontz 1946: 196; Diakonoff, Kashkai 1981: 93, map; Арутюнян 1985a: 205 сл., карта):

[573] Այս տեղանունը հանդիպում է նաև ասորեստանյան «հանրագումարային արձանագրություններ»-ից մեկում՝ նվաճված տեղանուններ թվարկող խիստ պակասավոր տեքստում: Տե՛ս Tadmor 1994: 144ff. (Summ. 5 Col. I: 11b-24); Tadmor, Yamada 2011, No. 43: i 11b-24.

Թապսիա ամրոցները նվաճելու մասին, որոնք ընկած են «Նալ լեռան հետևում» (*ša kutal* KUR.*nal*): Աղբյուրը շեշտում է, որ դրանք Ուրարտուի ամրոցներն են[574]: Թիգլաթպալասարի մեկ այլ արձանագրության վնասված կոնտեքստում վերստին հիշվում են Մանտուն և Սարդուրրիանա քաղաքները, ինչ-որ լեռնանուն ([…]լուպպի), որոնք կցվել են նոր կազմավորված Ուլլուբա նահանգին (տեսքտում՝ «Աշշուր-իկիշա քաղաքի նահանգ»)[575]: Այստեղ էլ խոսվում է Նալ լեռան մերձավորությամբ մի նոր քաղաք կառուցելու մասին[576]:

Միաժամանակ, նույն տեքստի հաջորդող հատվածում թվարկվում են «մինչև Բիթզուա երկիրն ընկած» Սարդուրրիանա, Լուսիա[577], Թապսիա և Սուբա քաղաքները: Դրանք բնորոշվում են իբրև Ուրարտուի հզոր ամրոցներ, որոնք «շրջակա բնակավայրեր»-ով հանդերձ միացվել են «գլխավոր ծառայապետ»-ի նահանգին (EN.NAM LÚ.IGI.DUB / NAM LÚ.AGRIG/*māt masennu*)[578]: Թե ինչու՞ է Սարդուրրիանան հիշատակվում մեկ որպես Ուլլուբային, մեկ էլ որպես «գլխավոր ծառայապետ»-ի նահանգին միացված քաղաք, դժվար է ասել. հավանաբար, այստեղ գործ ունենք գրագրի սխալի հետ:

Հաշվի առնելով, որ Ուլլուբայից հյուսիս ամենայն հավանականությամբ տարածվում էր Կումմեն, որից արևելք ընկած էր Ուկկուն, ապա կարելի է կարծել, որ ուրարտական հիշյալ ամրոցները պետք է գտնվեին ինչ-որ տեղ Ուլլուբայից դեպի հյուսիս-արևմուտք, հնարավոր է՝ Տիգրիսի փոքր վտակներից Քըզըլ-Սուից մինչև Բոհթան-սուի ստորին հոսանքի շրջան ձգվող հատվածում: Այստեղ բարձրացող լեռնազանգվածի գագաթներից մեկն էլ կարող էր լինել Նալ լեռը, օրինակ՝ Յասըդաղը (2280 մ)[579]: Ասորեստանյան «գլխավոր ծառայապետ»-ի նահանգի տեղորոշման շուրջն արտահայտված կարծիքներն ամենևին չեն հակասում նման հնարավորությանը[580]:

Թիգլաթպալասարի տեքստերում Ուլլուբայի հետ հիշատակվում է նաև Խաբխի երկրի նվաճման մասին[581]: Այդ երկու երկրներն էլ բնորոշվում են իբրև «Նալ լեռան

[574] Tadmor 1994: 124ff. (Summ. 1: 25b′-28a′); Tadmor, Yamada 2011, No. 39: 25b-28a.
[575] Tadmor 1994: 182f. (Summ. 9: 9′-10′); Tadmor, Yamada 2011, No. 49: 9′-10′.
[576] Tadmor 1994: 182f. (Summ. 9: 11a′); Tadmor, Yamada 2011, No. 49: 11a′.
[577] Լուսիան, որպես երկրանուն, հիշատակվում է նաև Թիգլաթպալասար III-ի խիստ պակասավոր տեքստերից մեկում: Տե՛ս Tadmor, Yamada 2011, No. 36: 8′. Հետաքրքիր է, որ ինչ-որ Լուշիա քաղաքի դեմ (*ana* $^{āl}$*lušia*) իրականացված արշավանք է նշվում ասորեստանյան էպոնիմների ցանկում Մութաքքիլ-Մարդուկի էպոնիմատի տարում (Ք.ա. 798 թ.): Տե՛ս Millard 1994: 35/57. Տե՛ս նաև Mayer 2013a: 41.
[578] Tadmor 1994: 182f. (Summ. 9: 11b′-13); Tadmor, Yamada 2011, No. 49: 11b′-13′.
[579] Հմմտ. Forrer 1920: 85, Adontz 1946: 94, 226; Дьяконов 1951a, № 42, прим. 6; Reade 1978b: 177; Арутюнян 1985a: 149 сл., карта; Parpola, Porter 2001: 13, Map 4 (B5).
[580] Postgate 1995: 6f., Fig. 5; Mattila 2000: 18ff.
[581] *E.g.* Tadmor 1994: 166f. (Summ. 7: 43a); Tadmor, Yamada 2011, No. 47: 43a.

հետևում (ընկած)»[582]: Ասորեստանյան աղբյուրները, սակայն, Խաբխիի նվաճման մասին որևէ մանրամասնություն չեն հայտնում: Արդյո՞ք տրամաբանական չէ մտածել, որ Նալ լեռան վրա ընկած վերոհիշյալ «ուրարտական ամրոցներ»-ը գտնվել են հենց Խաբխիի տարածքում կամ, համենայն դեպս, մի գոտում, որն ասորեստանցիներն ընկալում էին իբրև խաբխական, բայց կարող էր նվաճված լինել ուրարտացիների կողմից: Այս առումով հավելենք նաև, որ վերը թվարկված ուրարտական ամրոցներից մեկը՝ Թապսիան (URU.*tapsia*), հիշատակվում է դեռևս Ադադ-Նիրարի II-ի տարեգրության մեջ՝ որպես Կումմեին հարևան խաբխական քաղաք (… URU.*tabsia* … URU.MEŠ-*ni ša* KUR. *ḫabḫi ša limīt* URU.*kumme*)[583]:

Ինչ վերաբերում է Խաբխիի տեղորոշմանը, ապա հետազոտողները սովորաբար Խաբխին համարում են ոչ թե կոնկրետ երկրի անվանում, այլ՝ դիտարկում իբրև ընդհանրական անուն, որը կարող էր վերաբերել գրեթե ողջ արևելատավրոսյան լեռնագոտուն[584]: Սակայն, Խաբխին ընդհանրական անվանում դիտելը, մեր կարծիքով, համոզիչ չէ առնվազն քննարկվող ժամանակաշրջանի համար: Միաժամանակ, դժվար է ասել՝ որքանով է ճիշտ Խաբխին հինգ առանձին երկրների տրոհելը[585]: Համենայն դեպս, որոշ աղբյուրներ վկայում են, որ Խաբխին ուրարտա-ասորեստանյան սահմանների միջև ընկած որոշակի քաղաքական միավոր էր: Այս առումով հետաքրքիր է «Խաբխի երկրի տիկնոջ» հիշատակությունն ասորեստանյան նամակներից մեկում (MÍ KUR.*ḫabḫi*)[586], որը կարող է թվագրվել անգամ Սարգոն II-ի շրջանով:

Այսպիսով, Խաբխիի և Ուլլուբայի սահմանակցությունը կասկածի ենթակա չէ: Մյուս կողմից, կասկած չի հարուցում նաև Խաբխիի և Կումմեի սահմանակցությունը, ինչի մասին ունենք ասորեստանյան ուղղակի վկայություններ[587]: Բացի դա, ուրարտական՝ վերը նշված Սարդաուրրանա (URU.*sardaurriana*) կամ Սարդուրիանա ամրոցը (URU.*sarduriana*) կարծես հիշատակվում է նաև ND 2487 նամակում Սարդուրանա անվանումով (*ālˡᵘ.ᵈištàr-d*[*ur*]*an*[*a*])[588]: Ամենայն հավանականությամբ, այդ քաղաքն է հիշատակվում նաև ABL 147 նամակում (*ālˡᵘ sarduriani*/URU.15-BÀD-*ani*)՝ Կումմեում զինվորականների ինչ-ինչ տեղաշարժերի հետ կապված[589]: Այդ ամենը

[582] Tadmor 1994: 134f. (Summ. 3: 27′-28b′); Tadmor, Yamada 2011, Nos. 41: 27′-28b′, 49: 6a′.
[583] Grayson 1991: 152 (A.0.99.2: 95).
[584] Grayson 1982: 250; Liverani 1992: 25f., n. 65 (հղված գրականությունը); Radner, Schachner 2001: 737/761f. Հմմտ. Adontz 1946: 70; Меликишвили 1954: 22 сл.; Levine 1972-1975: 12f.; Арутюнян 1985a: 217 сл., карта; Liverani 1992: 25ff., 43, 82f.; Parpola, Porter 2001: 9, Maps 3-4.
[585] Fuchs 2000: 73 sqq.
[586] Lanfranchi, Parpola 1990, No. 108: r.23.
[587] *E.g.* Grayson 1991: 152 (A.0.99.2: 91-96).
[588] Saggs 2001: 119f. (ND 2487: 5, 10).
[589] Lanfranchi, Parpola 1990, No. 97.

«ուրարտական ամրոցներ» = «Խաբխի»-ի համար մատնանշում է խիստ որոշակի տարածք Բոհթան-Սու գետի ստորին հոսանքի հարավային (ձախափնյա) ավազանում, թերևս՝ Փերվարիից Էրուի և մինչև դեպի Տիգրիս ձգվող հատվածում, մի գոտի, ուր ավանդաբար տեղորոշվել է «Ներքին Խաբխի» երկիրը (KUR.*ḫabḫi ša bitānī*)[590]:

Տավրոսյան մյուս երկու երկրների՝ Կումմեի և Ուկկուի հետ Ուրարտուի սահմանը որոշելու համար կարևոր նշանակություն ունի հատկապես ND 2487 նամակը: Արքունիք ուղղված Թամնունայի նահանգապետ Նաբու-ուծալլայի նամակում խոսվում է Էլիզկուն քաղաքի և արքայի հրամանի մասին՝ այնտեղից ուրարտացիներին վտարելու հրահանգով: Նամակում նշվում է նաև իր դեմ դիրքավորված ուրարտական երեք մարզպետների մասին՝ իրենց զորքերով[591]: Էլիզկուն քաղաքը հիշատակվում է նաև ABL 101 նամակում՝ որպես Կումմեի լեռնանցքի մոտ ընկած ուկկայական քաղաք: Ենթադրվում է, որ Կումմեի լեռնանցքը դա ներկայիս անվամբ Սյուվրիհալիլի լեռնանցքն է (2470 մ)[592]: Այդ դեպքում, ուրարտական տիրույթները հեռու չէին լինելու այդ շրջանից և Փերվարի – Բահչիսարայ – Շատախ – Ալաջայըր – Դաղսևեն – Դոլայլը գիծը՝ Բոհթան-Սուի ափերի երկայնքով և մինչև Բաշքալե, կարող էր կազմել ուրարտական սահմանագիծն այդ գոտում՝ պաշտպանված լեռների բնական սահմանով: Հետաքրքիր է, որ դեպի Կումմե՝ կումմեցիների առաջնորդ Արիյեի մոտ գնացող ուրարտացի լրտեսը մեկնել էր ուրարտական Արգիսթիանի քաղաքից և անցնելու էր լեռներով, ուր և բռնվել էր ասորեստանցի հետախույզների կողմից[593]:

Այդ գոտում Ուրարտուի սահմաններն արևելյան ուղղությամբ՝ Հաքքարիի լեռների արևելյան փեշերով կարող էին իջնել դեպի հարավ՝ ընդգրկելով Բաշքալեն, Յուքսեքօվան ու Շեմդինլին[594], և դուրս գալ Քելիշինի լեռնանցքի շրջան՝ այդտեղից միանալով ուրարտական մերձուրմյան տիրույթներին: Արևմտյան ուղղությամբ սահմանագիծը, կարելի է ենթադրել, Փերվարիից ընթացել է դեպի Էրուի և Ուլլուբայի ու Խաբխիի տարածքով դուրս եկել Տիգրիս:

Մերձտավրոսյան գոտում ուրարտական սահմանները փոփոխվեցին Ք.ա. 735 թ-ին դեպի Ուրարտու ձեռնարկված արշավանքից հետո: Թիգլաթպալասար III-ի տեքստերը հայտնում են […]շիա, Մարխաթիանշա երկիրը, Էնու, Սասսու, Լուպսա

[590] Арутюнян 1985a: 218 сл., карта; Liverani 1992: 25ff., Fig. 1; Parpola, Porter 2001: 9, Map 4 (B4, D5).
[591] Saggs 2001: 119f. (ND 2487: 10-17).
[592] Radner 2012: 255 and Fig. 17.01.
[593] Lanfranchi, Parpola 1990, No. 55.
[594] Յուքսեքօվայում ուրարտական հուշարձանների բացակայությունը դեռևս չի նշանակում, որ այդ գոտին չէր կարող ընդգրկված լինել Ուրարտուի սահմանների մեջ: Համմտ. Sevin 2004b: 28; նույնի՝ 2015: 24.

(տրբ. Լուպսուա), Լուկիա, Շիմիրրա, Ուշուրնու, Ուզուրրա (տրբ. Ուսուրու), Աուիբի[595], Ուբուլա քաղաքները՝ մինչև Բիրդաշա (տրբ. Բիրդանշա) լեռը, Ալինզիրանու, Թաշլիանա, Տիրխիմ քաղաքները՝ մինչև Սինիե/ա լեռը նվաճելու մասին, որոնք կցվեցին «գլխավոր մատռվակ»-ի նահանգին[596]:

Թիգլաթպալասարի՝ «հանրագումարային» բնույթի արձանագրություններից մեկում թվարկվում են բազմաթիվ անուններ, որոնց աղբյուրը համարում է Էնզի և Ուրարտու երկրների քաղաքներ: Տեղանունների մեծ մասը վնասված է, սակայն, պահպանված Լուպսուա, Դանզիուն և Բիրդաշա քաղաքների անուններին[597] հանդիպում ենք նաև «գլխավոր մատռվակ»-ի նահանգին կցված ուրարտական քաղաքների շարքում:

Ասորեստանյան մեկ այլ արձանագրություն, որը պահպանել է արշավանքի որոշ մանրամասներ, թվարկում է Դաիկանշա, Սակկա, Իպպա, Էլիզանշու, Լուկադանշա, Կուդա, Էլուգիա, Դանիա, Դանզիուն, Ուլայա, Լուկիա, Աբրանիա, Էուսա քաղաքները, որտեղից ասորեստանյան արքան տարել էր համեստ ավար: Այնուհետև տեքստը պակասավոր կոնտեքստում հիշատակում է Մուկանիա քաղաքի բնակիչներին և Ուրա քաղաքը[598]: Վերջինիս համար նշվում է, որ այն Մուծուրնի երկրի ներսում է[599]:

Թվարկված տեղանունների այս վերջին շարքից հայտնի են միայն երեքը: Դրանցից Լուկիան հիշատակվում է նաև նախորդ շարքում, ուր թվարկվում են «գլխավոր մատռվակ»-ի նահանգին կցված տարածքները: Այդ դեպքում, կարելի է մտածել, որ մնացյալ քաղաքները ևս միացվել են ասորեստանյան նույն նահանգին, թեև ասորեստանյան աղբյուրն այդ մասին չի հայտնում: Երկրորդը Էլիզանշուն է: Այս վերջինս հիշատակվում է խիստ պակասավոր, բայց չափազանց հետաքրքիր տեղեկություն հաղորդող մի տեքստում: Նրանում թվարկված ուրարտական քաղաքների մեծ մասի անունները չեն պահպանվել, փոխարենը, երկու անուն՝ Ուրմուշեն և Էլիզանշուն, բնորոշվում են իբրև քաղաքներ, որոնք «Նաիրի երկրի ծովի (ափին են)» (URU.*urmuše* [URU.*eli*]*zanšu* [URU.MEŠ-*ni*$^{?}$ *ša*$^{?}$] UGU *tam-tim* [*ša*$^{?}$ KUR.*na'iri*$^{?}$…])[600]: Ճիշտ է՝ տեքստը խիստ պակասավոր է, բայց նշված հատվածի վերականգնումը հազիվ թե կասկած հարուցի: Դա է վկայում նաև երրորդ տեղանվան՝ Ուրա քաղաքի հիշատակությունը: Կարելի է կարծել, որ հիշյալ Ուրան դա նույն Ուրաշ

[595] Չի նշվում մյուս զուգահեռ տեքստում:
[596] Tadmor 1994: 50f., 126f. (Ann. 17: 1′-3′ + Summ. 1: 30-31), 184f. (Summ. 9: 14′-16′); Tadmor, Yamada 2011, No. 10: 1′-3′ + No. 39: 30-31, No. 49: 14′-16′.
[597] Tadmor 1994: 144ff. (Summ. 5 Col. I: 11b-24); Tadmor, Yamada 2011, No. 43: i 11b-24.
[598] Tadmor 1994: 76f. (Ann. 5: 4b-7); Tadmor, Yamada 2011, No. 18: 4b-7.
[599] Tadmor 1994: 76f. (Ann. 6: 1); Tadmor, Yamada 2011, No. 19: 1.
[600] Tadmor 1994: 144f. (Summ. 5 Col. I: 1-11a); Tadmor, Yamada 2011, No. 43: i 1-11a.

քաղաքն է, որի նվաճման մասին է հայտնում Սալմանասար III-ի զորավար Դայյան-Աշշուրը՝ Ք.ա. 830 թ. Վանա լճի ավազան ձեռնարկած արշավանքի ժամանակ[601]: Ամենայն հավանականությամբ՝ այդ նույն Ուրան է հանդես գալիս կումմեցիների և ուկկուացիների հետ մեկտեղ՝ Սարգոն II-ի ժամանակաշրջանի նամակներից մեկում[602] և գրեթե կասկած չկա, որ սեպագիր աղբյուրների հիշատակած բազմաթիվ Ուրաներից առնվազն մեկը գտնվել է Վանա լճից հարավ ընկած տարածքնում[603]: Հետաքրքիր է նաև, որ վերը նշված արշավանքի նկարագրության մեջ ասորեստանյան աղբյուրները հիշատակում են Ունզումունի քաղաքն իր շրջակա բնակավայրերով[604]: Իսկ Ունզումունին հայտնի էր դեռևս Թիգլաթպալասար I-ի ժամանակներից՝ Ունզամունի/ու անվամբ՝ «Վերին ծովի», այն է՝ Վանա լճի ափերին ընկած նաիրյան 23 երկրների շարքում[605]:

Հետևաբար, վերը թվարկված քաղաքների մեջ կարելի է տեսնել Վանա լճի ավազանում ընկած ուրարտական բնակավայրերի, որոնց մի մասը, ինչպես, օրինակ, Լուկիան միացվել է ասորեստանյան տարածքներին: Իհարկե, Վանա լճի հիշատակությունը չի նշանակում, որ ասորեստանյան տիրապետության սահմանները հասել են մինչև այստեղ: Այս առումով հարկ է տարբերակել Ք.ա. 735 թ-ի արշավանքը մանրամասն նկարագրող տեքստերը այդ նույն արշավանքի արդյունքները ամփոփող այսպես կոչված «հանրագումարային արձանագրություններ»-ից: Դրանցից առաջինը մատնանշում է արշավանքի երթուղին, կատարած ավերածությունները, գերեվարություններն ու թալանը, իսկ երկրորդները՝ ամփոփում են արդեն տարածքային ձեռքբերումները:

Ինչ վերաբերում է «գլխավոր մատռվակ»-ի նահանգին միացված քաղաքներին, ապա, ինչպես վերը նշվեց, ասորեստանյան այդ նահանգը հանարավոր չէ հստակ տեղորոշել: Մյուս կողմից, այն փաստը, որ հիշյալ քաղաքները միացվում են ոչ թե ասորեստանյան Ուլլուբա նահանգին կամ նրանից հյուսիս-արևմուտք ընկած Կադմուխիին և ոչ էլ «գլխավոր ծառայապետ»-ի նահանգին, ապա կարելի է մտածել, որ այդ քաղաքներն ընկած էին շատ ավելի դեպի արևելք, մի գուցե՝ Մեծ Զաբի միջին հոսանքի ձախափնյա հատվածում՝ հարավ-հարավ-արևմուտքից հարևանելով «արքունի սենեկապետ»-ի նահանգին: Եթե դա այդպես է, ապա, մի գուցե, Շեմդինլիի մերձավորությամբ ենթադրվող ուրարտական տարածքներում էլ կարելի է որոնել այդ քաղաքները:

[601] Grayson 1996: 81 (A.0.102.16: 242′-244′).
[602] Lanfranchi, Parpola 1990, No. 111.
[603] Astour 1987: 38f., 45.
[604] Grayson 1996: 81 (A.0.102.16: 238′-239′).
[605] Grayson 1991: 21 (A.0.87.1: iv 74).

Սահմանափակելով այս քննարկումը, նշենք, որ Ուրարտուն Ք.ա. 7-րդ դ-ի սկզբներին դեռևս պահպանում էր իր ներկայությունն այս գոտում: Մասնավորապես, Սինախերիբի Բավիանի արձանագրությունը վկայում է Ուրարտուի սահմանին գտնվող Թաս լեռից (KUR.*tas*) Նինվե և շրջակա բնակավայրեր ջրանցք անցկացնելու մասին[606]: Եվ թեև Թաս լեռը հնարավոր չէ առայժմ հստակ նույնականացնել[607], սակայն, փաստը բավական խոսուն է և առայժմ եզակի՝ Ք.ա. 7-րդ դ-ի սկզբներին հարավում Ուրարտուի սահմանների մասին ինչ-որ պատկերացում կազմելու համար այն դեպքում, եթե միայն Ուրարտուի հիշատակությունը Սինախերիբի կողմից գրական ճարտարաբանություն չէ:

1.2.1.5. **Հարավ-արևմուտք (մերձտիգրիսյան գոտի)**

Դեպի հարավ-արևմուտք՝ դեպի մերձտիգրիսյան գոտի ուրարտական առաջխաղացումը սկսվել էր Մենուայի օրոք: Վերջինիս տեքստերում հիշատակվող մի քանի տեղանուններ, միանշանակ, ընկած էին այդ գոտում: Այդ տեղանուններից մեկը է Կուլմերին է ($^{URU}$*qulmeri*)[608]: Քուլ(լ)իմ(մ)երի/ա-Կուլմերին Շուբրիա երկրի գլխավոր կենտրոններից մեկն էր, և թեև Շուբրիան այդ անունով երբեք չի հիշատակվում ուրարտական աղբյուրներում, ապա կարելի է մտածել, որ Ուրմե երկիրը, որի նվաճման հետ կապված հիշատակվում է նաև Կուլմերին, դա նույն Շուբրիան է[609]: Ուրմեի հնարավոր տեղորոշումը Մշո դաշտում չի բացառում նրա նույնականացումը Շուբրիայի հետ առնվազն որպես շուբրիական տարածքի[610]: Այստեղ ուրարտական հաստատուն ներկայության բացակայությունը խոսում է այդ մասին[611], իսկ Շուբրիան, միանշանակ, երբևէ չի գտնվել Ուրարտուի կազմում:

Կուլիմերին, այս անգամ Խուլմերունի ($^{URU}$*ḫulmeruni*)[612] անվանաձևով, հիշատակվում է Մենուայի մեկ այլ արձանագրության մեջ նույնպես: Վերջինիս նույնականությունը Կուլմերիի հետ հազիվ թե կասկած հարուցի: Քուլ(լ)իմ(մ)երի/ա-Կուլմերին հիշատակվում է հետագայում ևս՝ բյուզանդական աղբյուրներում՝ Խլոմարոն (*Χλομαρων*), իսկ հայկական աղբյուրներում՝ Քղիմար անվանաձևերով, և տեղորոշվում է Տիգրիսի վտակ Բաթման-սու (Քաղիրթ) գետի միջին հոսանքի շրջանում[613] և

[606] Luckenbill 1924: 79 (l. 6-17); Grayson, Novotny 2014: 313 (No. 223 12b-13a).,
[607] Տե՛ս և հմմտ. Reade 1978b: 168f.; Astour 1987: 23f.; Parpola, Porter 2001: 17, Map 4 (C5).
[608] КУКН, 57 лиц. стор. Фрагмент $B_5$, 58 б. правая стор.$_{x+5-6}$; CTU I, A 5-6 Ro (b)$_{5'}$, A 5-7 l. d.$_{5-6}$.
[609] Дьяконов 1951б: 107 сл. Diakonoff, Kashkai 1981: 69; Dan 2010a: 335, n. 28.
[610] Дьяконов 1951б: 107 сл.; Меликишвили 1954: 52; Diakonoff, Kashkai 1981: 95f.; Арутюнян 1985a: 210 сл. Տե՛ս և հմմտ. նաև Biber *et al.* 2012: 93; Dan, Neri 2014: 115ff.
[611] Burney, Lang 1971: 140; Schachner 2009: 238sq.; Dan, Neri 2014: 121ff. and n. 13 (նշվ. գրականությամբ):
[612] КУКН, 44 верх. стор. .$_8$; CTU I, A 5-9 f. s.$_8$.
[613] Forrer 1920: 87; Diakonoff, Kashkai 1981: 69, map; Арутюнян 1985a: 117 сл., 232 сл., карта; Հարությունյան 2001, էջ 166-167; Parpola, Porter 2001: 12, Map 3 (E2).

նույնացվում Բաթման-սուի ձախ ափին ընկած Գրե Միգրոյի հետ՝ ներկայիս Բայրաքլը և Բըչաքչը գյուղերի միջև (Բաթման)[614]:

Իսկ Շուբրիան, ինչպես հայտնի է, բավական ընդարձակ երկիր էր՝ հիմնականում զբաղեցնելով Վերին Տիգրիսի ձախափնյա վտակներ Ամբար-չայ, Փամուք-չայ, Սալաթ-չայ, Բաթման-սու և Գարզան-սու գետերի ավազանը[615]:

Մյուս տեղանունը, որ հիշատակվում է Մենուայի տեքստերում, Դիրգունի/Դիրյունի երկիրն է ([KUR]*dirguni/dir”uni*)[616]: Այս վերջինիս նույնացումը Աշշուր-նածիր-ապալ II աղբյուրներում բազմիցս հիշատակված Դիրր(ի)ա/ու հետ միանգամայն հնարավոր է[617]: Հետաքրքիր է, որ ինչպես ուրարտական տեքստում, այնպես էլ՝ ասորեստանյան տեքստերից մեկում այդ տեղանվան հետ հիշատակվում է Ուլլուբա երկիրը[618]: Միաժամանակ, ասորեստանյան տեքստերը վկայում են, որ Դիրրու երկիրը հեռու չէր Թուշխանից. Դիրրուի Պիթուրա/Պիդարա[619] քաղաքը Թուշխանից գտնվում էր մոտ մեկօրյա հեռավորության վրա[620]: Վերջինս իր հերթին հեռու չէր Արբակկուից՝ «Ներքին Խաբխի»-ի քաղաքից (URU.*arbakki* KUR.*ḫabḫi ša bitānī*)[621]: Թե Ներքին Խաբխիի, և թե Արբակկուի տեղորոշումը բավական հստակ է. առաջինը տեղորոշվում է Բոհթան-Սուի ստորին հոսանքի շրջանում (տե՛ս վերը), իսկ Արբակկուն նույնացվում է Ջեբել Արվախ/Ավրախի հետ՝ այդ նույն գոտում[622]: Հետևաբար, Դիրրուն գտնվելու էր Տիգրիսի հետ Բոհթան-սուի միախառնման վայրի մոտ՝ ձգվելով դեպի արևմուտք և հյուսիսից սահմանակցելով Շուբրիային:

Եվ վերջապես մերձտիգրիսյան երրորդ տեղանունը դա Իշալանին է ([URU]*išalani*)[623]: Ուրարտագիտական գրականության մեջ այն նույնացվում է ասորեստանյան աղբյուրներից քաջ հայտնի Իզալլայի հետ[624]: Իզալլան Տուր-Աբդինի լեռնաշղթայի արևմտյան հատվածն է՝ Մարդինից դեպի արևմուտք[625]: Եվ եթե Մենուայի տեքստում Իշալանիի համար նշված «քաղաք» որոշիչը չի մատնանշում ինչ-որ քաղաք,

---

[614] Kessler 1995: 57ff.
[615] Forrer 1920: 86f.; Kessler 1980: 106ff. and n. 403; Арутюнян 1985a: 248 сл., карта; Liverani 1992: 39f., Fig. 3 (հղված գրականությամբ).
[616] КУКН, 44 верх. стор.$_{11}$; CTU I, A 5-9 f. s.$_{11}$.
[617] Меликишвили 1954: 50 сл.; Diakonoff, Kashkai 1981: 27, map; Арутюнян 1985a: 74 сл., карта.
[618] Grayson 1991: 262 (A.0.101.19: 98).
[619] Համադրության համար տե՛ս Меликишвили 1954: 50 сл.; Diakonoff, Kashkai 1981: 63.
[620] Grayson 1991: 210 (A.0.101.1: ii 103b-104a), 250 (A.0.101.17: iv 60b-66a), 260 (A.0.101.19: 70-71a).
[621] Grayson 1991: 210 (A.0.101.1: ii 112b), 250 (A.0.101.17: iv 90b-92a), 260 (A.0.101.19: 79b).
[622] Streck 1901: 360; Forrer 1920: 27; Adontz 1946: 68, n. 2, 197; Арутюнян 1985a: 32, карта; Liverani 1992: 60ff., Fig. 6; Radner, Schachner 2001: 738/762f., Figs. 3-4.
[623] КУКН, 44 верх. стор.$_{11}$; CTU I, A 5-9 f. s.$_{11}$.
[624] Adontz 1946: 197; Дьяконов 1951a, № 23, прим. 30; Diakonoff, Kashkai 1981: 45, map; Арутюнян 1985a: 117 сл., 232 сл., карта.
[625] Streck 1898: 104 sqq.; Zadok 1989: 164; Liverani 1992: 34f., Fig. 3; Radner 2006: 292ff.; Parpola, Porter 2001: 11, Map 3 (D3).

որի անունը համընկնում է Իզալլա անվան հետ, ապա այդ դեպքում Մենուան լինելու էր առաջին արքան, ով անցել էր Տիգրիսը և մտել հյուսիս-սիրիական հողեր:

Մենուայի հաջորդ Արգիշթի Մենուայորդին արևմտյան ուղղությամբ արշավանքներ ձեռնարկել է մի քանի անգամ: Դրանք ուղղված էին հիմնականում դեպի մերձեփրատյան գոտի, սակայն, նրա տեքստերից մեկում հիշատակված Նիրիբաի-խուբի տեղանունը ($^{KUR}$*niribai ḫubi*) կարող է վկայել, որ բիայնական արքան գործել է նաև մերձտիգրիսյան տարածքներում[626]: Նիրիբաի-խուբին նույնացվում է ասորեստանյան աղբյուրների Նիրբու/ե-Նիրիբ(ա)ի հետ[627]: Վերջինս Տուր-Աբդինի լեռների մի հատվածն է[628]: Այդ գոտում ուրարտական ներկայության և ուրարտա-ասորեստանյան բախումների մասին է վկայում նաև ասորեստանյան բանակի գլխավոր զորավար և ասորեստանյան տերության ողջ արևմտյան հատվածի փաստացի տիրակալ Շամշի-իլուն[629]:

Մերձտիգրիսյան գոտում ուրարտական հաստատուն ներկայության մասին արդեն վկայում է Սարդուրի Արգիշթորդին: Թեև Տիգրիսը նա չի հիշատակում[630], փոխարենը, Բահչեջիքից գտնված նրա արձանագրությունը հայտնում է մինչև Մելիդ և Կումմուխ ձգվող ուրարտական սահմանների մասին (*p*[*ari*] $^{URU}$*miliṭia* pari $^{URU}$*qumaḫa*)[631]: Դա կարող է վկայել, որ Տիգրիսի վերին հոսանքի և ակունքների գոտին ամբողջությամբ ուրարտական վերահսկողության տակ էր, և այստեղից տերության տարածքները կարող էին ձգվել դեպի էլ ավելի արևմուտք և հարավ-արևմուտք՝ դեպի Եփրատ գետը: Դա է վկայում նաև Սարդուրիի՝ վերը նշված արձանագրության մեջ Արմե երկրի Նիխրիա քաղաքի հիշատակությունը, ուր հասնում էին տերության սահմանները (*pari* $^{URU}$*niḫria* $^{KUR}$*ar*[*me*])[632]: Նիխրիան հիշատակվում է նաև Սարդուրիի տարեգրության մեջ՝ որպես Արմե երկրի «արքայական քաղաք» (*karuni* $^{KUR}$*arme karuni* $^{URU}$*niḫiriani* URU LUGÁL-*nusi* KUR-*nie*), տարեգրության տվյալ տարվա «ներածական բանաձև»-ում, ասորեստանյան արքա Աշշուր-նիրարի V-ի նկատմամբ ձեռք բերված հաղթանակը նշող կոնտեքստում[633]: Ցավոք, տարեգրությունն այստեղ վնասված է, և մանրամասները հայտնի չեն:

---

[626] ԿՈՒՀ, 173 II$_{13}$; CTU I, A 8-3 II$_{13}$. Տե՛ս և հմմտ. նաև Արտյունյան 1988: 309.
[627] Արտյունյան 1985a: 152 сл., карта.
[628] Streck 1898: 82 sqq.; Дьяконов 1951a, № 26, прим. 50; Liverani 1992: 37f., Fig. 3; Radner, Schachner 2001: 737/762; Radner 2006: 290f.
[629] Grayson 1996: 231f. (A.0.104.2010), 233f. (A.0.104.2011).
[630] Տիգրիս գետը չի հիշատակվում առայժմ հայտնի ուրարտական և ոչ մի արձանագրության մեջ:
[631] Payne, Sevin 2001: 113, lns. 8-9, 117f.; CTU I, A 9-18$_{8-9}$.
[632] Payne, Sevin 2001: 113, lns. 6-11, 117f.; CTU I, A 9-18$_{6-11}$.
[633] ԿՈՒՀ, 242 DI+DII$_{8-13}$; CTU I, A 9-1 l. d.$_{8-13}$.

Նիխրիան, որը հայտնի է թե միջագետքյան տարբեր[634], և թե խեթական աղբյուրներից[635], նույնացվել է Նփրկերտի հետ (Մայաֆարկին, ներկայիս Սիլվանը)[636] կամ, համենայն դեպս, նրա համար առաջարկվել է մերձտիգրիսյան տեղորոշում՝ Տիգրիսի վերին հոսանքի շրջանում՝ ասորեստանյան Կադմուխի նահանգի մերձավորությամբ[637]: Միխաիլ Ասթուրի կարծիքը, ըստ որի՝ Նիխրիան դա Ամիդն է[638], կարոտ է մնում լրացուցիչ փաստարկների. Ամիդը Ասորեստանի կողմից նվաճվել էր դեռևս Սալմանասար III-ի օրոք և վերինտիգրիսյան գոտու ասորեստանյան գլխավոր հենակետերից մեկն էր[639]: Թիգլաթպալասար III-ի որևէ տեքստ չի հայտնում Սարդուրիից Ամիդը հետ նվաճելու մասին, ինչը հազիվ թե հնարավոր լիներ նրա նախորդների և հատկապես՝ Աշշուր-ներարի V-ի օրոք, ում հաղթելու մասին է հայտնում Սարդուրին իր տարեգրության մեջ[640]: Այդ նույնը կարելի է ասել Նիխրիայի համար: Անկախ Սարդուրիի տարեգրության պնդումից՝ Արմե երկիրը և Նիխրիա քաղաքը «խոնարհեցնելու» մասին, ակնհայտ է, որ այն դուրս է եղել ուրարտական անմիջական տիրապետության գոտուց: Բահչեջիքի տեքստը հաստատում է այդ փաստը: Մյուս կողմից, Նիխրիայի համար առաջարկված նոր տեղորոշումները Եփրատի վտակ Բալիխ գետի վերին հոսանքի շրջանում՝ Խարրանի մոտ[641], և մասնավորապես՝ Քազանե-հյոյուքում[642], կամ Սամոսատից ոչ հեռու՝ Եփրատի ձախափնյակում գտնվող Լիդար-հյոյուքում[643], միանգամայն համահունչ է ուրարտական աղբյուրների տվյալների հետ և կարող է ուրվագծել այդ գոտում Սարդուրիի նվաճումների մոտավոր սահմանագիծը (տե՛ս ստորև): Այս առումով նախկինում արտահայտված կարծիքը՝ Արմե երկրանվան տակ տեսնելու արամեացիների, այժմ արդեն տեղին է թվում[644]:

Հետևաբար, այստեղ պետք է նշել, որ հիշյալ Արմեն կապ չունի ուրարտական աղբյուրներում հիշատակվող Ուրմե երկրի հետ և Արմեի նույնացումը Շուբրիային[645] և

---

[634] Miller 2012: 350ff.

[635] Քոսյան 2004ա, էջ 73-74 (հղված գրականությամբ):

[636] Пиотровский 1946: 9 сл. Հմմտ. Манандян 1956: 139 сл.

[637] Տե՛ս և հմմտ. Манандян 1956: 135 сл.; Diakonoff, Kashkai 1981: 60f., map; Арутюнян 1985a: 155, карта; Salvini 1995a: 67sq.; Քոսյան 2004ա, էջ 73-74 (հղված գրականությամբ): Տե՛ս նաև Miller 2012: 349, n. 4-5 (հղված գրականությունը):

[638] Astour 1979: 5 [73].

[639] Ամփոփ տե՛ս Radner, Schachner 2001: 734f./759f., Tab. 1.

[640] КУКН, 242 DI+DII$_{8\text{-}10}$; CTU I, A 9-1 l. d.$_{8\text{-}10}$.

[641] Röllig 1997b: 289.

[642] Miller 2012: 358f. (Քազանե-հյոյուքում)

[643] Forlanini 2006: 163ff., n. 90.

[644] Diakonoff, Kashkai 1981: 11.

[645] Меликишвили 1954: 52; Dan 2012: 55; Dan, Neri 2014: 116, 123. Հմմտ. Diakonoff, Kashkai 1981: 11; Арутюнян 1985a: 39.

հատկապես հայագիտության մեջ արմատավորված «Արմե-Շուբրիա»-յի տեսությունը[646], նաև սեպագիր այլ աղբյուրների լույսի ներքո, կարիք ունի վերանայվելու[647]:

Այն փաստը, որ Ուրարտուն լայն ճակատով դուրս էր եկել Տիգրիսի ափեր, կասկած չի հարուցում: Իհարկե, հազիվ թե հնարավոր լինի խոսել Տիգրիսից դեպի հարավ ուրարտական ներկայության օգտին: Ասորեստանը համենայն դեպս ի զորու գտնվեց իր ձեռքում պահել Ամիդը, Նիսիբինը և Թուշխանը, որոնց նահանգապետերը հիշատակվում են Ք.ա. 781- 744 թթ-ի ասորեստանյան էպոնիմների ցանկում[648]: Դրանով Ասորեստանը փակեց ուրարտական հնարավոր առաջխաղացման ճանապարհը դեպի տերության միջնաշխարհ, սակայն, ի զորու չգտնվեց կանխելու Ուրարտուի սրընթաց ծավալումը դեպի Եփրատի մեծ ոլորանի շրջան՝ սեպաձև մխրճվելու լուվիական թագավորությունների և Ասորեստանի միջև:

Ք.ա. 735 թ-ի հաղթական արշավանքից հետո Թիգլաթպալասար III-ի տեքստերը հայտնում են «Տիգրիսից վերև ընկած» (UGU *piāti ša* ÍD.IDIGNA) ուրարտական «*Կուկուսանշու, Բարզուննա քաղաքներից մինչև Խար(ա)բիսիննա, Աբբիսսա և Թասա, մինչև Ուլուրուշ երկիրը, ……, Լուսիա երկիրը, … Ամադինուն (և) Աթեյա երկրի Կիլիսսա, Եզզեդա*[649]*, Դ(ի)ույապլի քաղաքները*» ասորեստանյան Նա'իրի նահանգին միացնելու մասին[650]: Ասորեստանյան Նա'իրի նահանգին Խարաբիսիննա և Թասա քաղաքները՝ մինչև Ուլուրուշ գետը (նախորդ արձանագրություններում՝ «երկիրը/լեռը»), միացնելու մասին է ասվում մեկ այլ տեքստում, ընդ որում, աղբյուրը հիշյալ քաղաքներին հավելում է ևս երկու անուն՝ Խիսթան և Բարբազը, ինչպես նաև մանրամասն թվարկում այդ տարածքներից գերի տարված մարդկանց և ընտանի կենդանիների քանակները[651]:

Նա'իրի նահանգի տեղորոշումը հստակ է՝ Տիգրիսի վերին ոլորանի շրջանում, ուր և գտնվում էր նահանգային կենտրոն Ամիդ քաղաքը[652]: Սա թույլ է տալիս մտածել, որ Տիգրիսի ձախ ափին՝ Նա'իրի նահանգի երկայնքով էլ պետք է փնտրել վերը

---

[646] Պիոտրովսկի 1945, էջ 12-32; Пиотровский 1946: 9 сл.; Երեմյան 1958, էջ 65-72; նույնի՝ 1968բ, էջ 91-120; Տիրացյան 1966բ, էջ 90-91; ևն:

[647] Տե՛ս, դեռևս, Манандян 1956: 136 сл.

[648] Millard 1994: 38ff./58ff.

[649] Եզզեդայի անունը հիշատակվում է նաև Էնզի և Ուրարտու երկրների քաղաքները թվարկող «հանրագումարային արձանագրություններ»-ից մեկում: Տե՛ս Tadmor 1994: 144f. (Summ. 5 Col. I: 17); Tadmor, Yamada 2011, No. 43: i 17.

[650] Tadmor 1994: 54f. (Ann. 20: 4′-8′); 126f. (Summ. 1: 33b-34a, 36b); 184f. (Summ. 9: 17′-19′); Tadmor, Yamada 2011, No. 10: 4′-8′, No. 39: 33b-34a, 36b, No. 49: 17′-19′.

[651] Tadmor 1994: 76f. (Ann. 5: 1-4a); Tadmor, Yamada 2011, No. 18: 1-4a.

[652] Streck 1898: 73; Salvini 1998c: 89f.; Арутюнян 1985a: 25, 58 сл., карта; Liverani 1992: 85, Fig. 11; Radner, Schachner 2001: 734/759; Parpola, Porter 2001: 5, 13, Map 3 (D3). Բարբազ քաղաքի տեղորոշման համար տե՛ս և հմմտ. Astour 1987: 23f.

թվարկված ուրարտական քաղաքները: Դա է հուշում նաև Ամադինուի հիշատակությունը Ուրարտուից նվաճված տարածքների թվում՝ վերջինիս համար հստակեցնելով, որ Ամադինուն «արճիճի երկիր» է (KUR A.BÁR KUR.*amadinu*): Ինչպես հայտնի է՝ Ամադինուն դա նույն Մադենի լեռների շրջանն է[653], որը հնագույն ժամանակներից հայտնի է որպես մետաղի արդյունահանման կարևորագույն օջախ (տե՛ս ստորև): Հենց այս գոտում՝ Էրգանիի Գիսգիս (Քեսեներաշ) ոչ հեռու հայտնաբերված նորասորեստանյան բարձրաքանդակը[654] կարող էր թողնված լինել Թիգլաթպալասար III-ի կողմից այդ հաղթանակների կապակցությամբ (նկ. Ա-17/2-3):

Այստեղ անհրաժեշտ է հավելել, որ Թիգլաթպալասարի Ք.ա. 735 թ-ի արշավանքից հետո, թերևս արդեն՝ Ռուսա Սարդուրորդու ժամանակ, Ուրարտուին կարծես հաջողվել էր հետ բերել հարավ-արևմուտքում ընկած որոշ տարածքներ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է վերը նշված քաղաքներից մեկին՝ Եզզեդային: Այդ քաղաքը Եզիաթ անվանումով մի քանի անգամ հիշատակվում է Սարգոն II-ի ժամանակաշրջանի ասորեստանյան գրագրություններում[655], ընդ որում, տեքստերից դատելով, այն կամ ուրարտական ներխուժման սպառնալիքի տակ էր, կամ գտնվում էր ուրարտական վերահսկողության տակ և ասորեստանցիները ստիպված էին մարտեր մղելով զորք մտցնել այդ քաղաք՝ ապահովելու համար փայտանյութի մատակարարումները Դուր-Շարրուկին[656]:

1.2.1.6. **Արևմուտք (մերձեփրատյան գոտի)**

Արևմտյան ուղղությամբ ուրարտական ծավալումը սկսվել էր դեռևս Մենուայի օրոք, ում զորքերն առաջին անգամ դուրս եկան Եփրատի ափեր՝ սպառնալով անդրեփրատյան Մելիդ պետությանը: Վերջինս ստիպված էր ընդունել ուրարտական գերիշխանությունը և վճարել հարկեր, սակայն, դրա փոխարեն պահպանեց Եփրատի ձախափնյա հատվածի տիրույթները՝ գերազանցապես Ծուպանիում: Այս ուղղությամբ Մենուայի հաջորդի՝ Արգիշթի Մենուայորդու ձեռնարկած հեռավոր արշավանքը, թվում է, տարածքային էական աճ չապահովեց տերության համար, և միայն Սարդուրի Արգիշթորդու օրոք Մելիդից խլվեցին նրա անդրեփրատյան տարածքները՝ այդտեղ կառուցված ամրաշղթայով հանդերձ[657]: Ուրարտական աղբյուրները նշում են ինը

[653] Toffteen 1907: 346ff.; Дьяконов 1951a, № 23, прим. 64-65; Parpola, Porter 2001: 5, Map 3 (C2). Հմմտ. Forrer 1920: 22f.; Меликишвили 1954: 51; Арутюнян 1985a: 24 сл., карта; Liverani 1992: 83f., Fig. 11.
[654] Köroğlu, Yumruk 2014: 2ff., Res. 1-7.
[655] Toffteen 1907: 355f.; Kessler 1995: 64.
[656] Lanfranchi, Parpola, Nos. 3-5.
[657] Köroğlu 1996: 16ff., Res. 1. Աղբյուրներում հիշատակված տեղանունների համադրումը տե՛ս Adontz 1946: 199; Astour 1979: 3f. [71f.].

ամրոցներ[658], որոնցից մի քանիսը ենթակա են նույնականացման: Դրանցից Գավրախին ($^{URU}$*gaïraḫi*) նույնն է, ինչ Գավրեքը[659], Տումիշքին ($^{URU}$*ṭumiški*)՝ Տոմիսա/Թմնիսը (Հաբիբուշաղը/Իզոլու)[660]: Բացի դա, ենթադրվում է, որ Մանինուվին ($^{URU}$*maninuïï*) կարող է նույնացվել Մենաինիի, իսկ Մելույանին ($^{URU}$*melu''ani*)՝ Մալիանի հետ, երկուսն էլ՝ Քեբանմադենի (Քեբան) մերձավորությամբ, սակայն, Եփրատի աջ ափին[661]: Բահչեջիքից գտնված նրա արձանագրությունը հայտնում է մինչև Մելիդ և Կումմուխ ձգվող ուրարտական սահմանների մասին: Անկասկած, Սարդուրիի օրոք ուրարտական տերությունը լայն ճակատով դուրս էր եկել Եփրատի ափեր:

Թիգլաթպալասար III-ի տեքստերը նույնպես Եփրատը հիշատակում են որպես Ուրարտուի սահման (*adi … puratti* (ÍD.A.ŠÌTA) *miṣir* KUR-*šu*)[662]: Ընդհանրապես, ասորեստանյան այս արքայի արձանագրություններն ունեն բացառիկ արժեք՝ հստակեցնելու համար ուրարտական սահմանները մերձեփրատյան գոտում:

Ք.ա. 735 թ-ի արշավանքից հետո Ուրարտուն կորցրեց մերձեփրատյան գոտու իր տիրույթների մեծ մասը: Թիգլաթպալասարի տեքստերից մեկը հայտնում է Բազու երկրի Արանու, Ուալլիա, Թասու, Ուրա քաղաքները, Ուիլլա, Ուրբակկա, Ուլինա, Արասիլլա երկրները, Ալկի[…] քաղաքը՝ Էրիբի լեռից մինչև Եփրատ գետը և Կումմուխի սահման, Էնզի երկիրն ամբողջությամբ՝ մինչև Ծուպպա երկիրը նվաճելու և «գլխավոր զորավար»-ի նահանգին միացնելու մասին[663]: Մեկ այլ տեքստում թվարկվում են նախորդ շարքում հիշատակված քաղաքներից Ուրրան (Ուրա), Արանուն, Թասուն, Ուալլիան՝ «*մինչև Եփրատ գետը և Կումմուխի սահման*»՝ այդ շարքին ավելացնելով Կութա քաղաքը[664]: Նույն տեքստում վերստին նշվում է Էնզի երկիրը, ապա հավելում Անգանու և Բենզու քաղաքները, որոնց տեքստն անվանում է «*Կալլա*[…] *գետի՝ իր գետ*»-ի վրա ընկած Ուրարտուի ամրոցներ (URU.*anganu* URU.*benzu birāṭe ša* KUR.*urarṭi* ÍD.*kalla*[…] ÍD-*šu*): Դրանք բոլորն էլ կցվում են «գլխավոր զորավար»-ի նահանգին[665]:

---

[658] КУКН, 244$_{26-31}$; CTU I, A 9-4$_{26-31}$.

[659] Adontz 1946: 199; Арутюнян 1985a: 62, карта.

[660] Forrer 1920: 75; Adontz 1946: 199; Երեմյան 1963, էջ 53; Astour 1979: 3 [71]; Diakonoff, Kashkai 1981: 88, map; Арутюнян 1985a: 188, карта (նշվ. գրականությամբ).

[661] Манандян 1956: 134; Арутюнян 1985a: 133 сл., 141, карта.

[662] Tadmor 1994: 52f. (Ann. 17: 11′); Tadmor, Yamada 2011, No. 9: 11′. Տե՛ս նաև Tadmor 1994: 126f. (Summ. 1: 32), 184f. (Summ. 9: 22′); Tadmor, Yamada 2011, Nos. 39 (l. 32); 49 (obv. 22′) տեքստերը:

[663] Tadmor 1994: 184f. (Summ. 9: 20′-23′); Tadmor, Yamada 2011, No. 49: 20′-23′.

[664] Tadmor 1994: 126f. (Summ. 1: 32′-33a′); Tadmor, Yamada 2011, No. 39: 32-33a. Տեքստը հստակ մատնանշում է, որ այդ քաղաքները գտնվել են տերության արևմտյան հատվածում: Հետևաբար, դրանցից մի քանիսի (Կութա և Ուալլիա) տեղորոշումը Մեծ Զաբ գետի ավազանում հնարավոր չէ: Հմմտ. Astour 1987: 6, 23 and n. 141.

[665] Tadmor 1994: 126f. (Summ. 1: 34b′-35a′); Tadmor, Yamada 2011, No. 39: 34b-35a. Տեքստը անվանումները ներկայացնում է հանրագումարային տեսքով՝ որպես «գլխավոր զորավար»-ի և Նա'իրի նահանգին

Եփրատ գետի և «Կումմուխի սահման»-ի հիշատակությունները ասորեստանյան տեքստերում հստակ մատնանշում են արևմուտքում Ուրարտուի սահմանները: Ակնհայտ է, որ տերության արևմտյան սահմանագիծն անցել է Եփրատով առնվազն սկսած Արևմտյան Եփրատի հետ նրա աջափնյա վտակ Տևրիկ գետի (Չալթ-սու) միախառնման շրջանից մինչև Գերգեր՝ Շամշատից (Կումմուխ) ոչ հեռու, Ադաթեփե – Քեմալիյե – Քեբան – Դողանյոլ – Գերգեր – Դուրաք գծով: Դուրաքից հարավ՝ Եփրատի հետ Քյահթա գետի միախառնման շրջանի մոտ՝ Անջոզից (այժմ՝ Էսքիթաշ) հայտնաբերված հիերոգլիֆ լուվիերեն արձանագրությունները, որոնք բոլորն էլ թվագրվում են Ք.ա. 8-րդ դ-ի առաջին կեսով[666], արդեն մատնանշում են, որ այդ գոտին գտնվում էր Կումմուխի տիրապետության տակ:

Առայժմ դեռևս հստակ չէ մերձեփրատյան գոտու հարավային՝ Եփրատից մինչև Տիգրիս ընկած սահմանագծի հարցը: Աղբյուրները վկայում են, որ նվաճված ուրարտական տարածքները միացվել են «գլխավոր զորավար»-ի նահանգին (NAM (É) LÚ.*turtanu* / *māt (bīt) turtānu*): Ասորեստանյան այդ նահանգը հիմնականում զբաղեցնում էր Եփրատի մեծ ոլորանից Բալիխ գետը ձգվող տարածքները՝ արևմուտքից սահմանակցելով Կարգամիսի և Կումմուխի լուվիական թագավորություններին, իսկ նահանգային կենտրոն կարող էր լինել կամ Խառան քաղաքը, կամ Կար-Սալմանասարը (Թիլ-Բարսիպ)[667]:

Ասորեստանցիների նվաճած Էնզի երկիրը, որի անունը պահպանվել է հունական աղբյուրներում Անզետա/Անզիտենե/Անզետենե (*Ἄνζητα, Ἀνζιτηνή, Ἀνζητηνή*), իսկ հայկական աղբյուրներում՝ *Անձիտ* անվանումներով, գտնվում էր բավական հյուսիս՝ Ծովք լճի և Արածանիի միջև[668], և հազիվ թե սահմանակցեր Կումմուխին: Մյուս կողմից, ասորեստանյան աղբյուրների հիշատակած Կալլա[…] գետը, որը նույնացվում է Քյաղիրթի, ներկայիս անվամբ՝ Բաթման-սուի հետ[669] և որի մոտ էին գտնվում ուրարտական Անգանու և Բենզու ամրոցները, հոսում էր Շուբրիայի տարածքով և չափազանց հետու էր՝ ներառվելու համար «գլխավոր զորավար»-ի նահանգի մեջ: Ուստի, կարելի է կարծել, որ Կալլա[…] գետը ոչ թե Քյաղիրթն էր, այլ կարող էր լինել

---

միացված քաղաքներ: Տարբերակումը հնարավոր է դառնում հաշվի առնելով ասորեստանյան մյուս տեքստերի տվյալները:

[666] Hawkins 1995: 93; նույնի՝ 2000: 333, 345ff.

[667] Kinnier-Wilson 1972: 14; Postgate 1995: 6, Fig. 5; Mattila 2000: 114ff.

[668] Anderson 1897: 24f., Map; Streck 1898: 91 sqq.; Toffteen 1907: 345f.; Forrer 1920: 85; Adontz 1946: 80; Дьяконов 1951a, № 27, прим. 10; Kinnier-Wilson 1962: 102f.; Klengel 1976: 86; Kessler 1980: 167; Арутюнян 1985a: 255 сл., карта; Parpola, Porter 2001: 8, Map 3 (B2).

[669] Վերականգնվում է որպես ÍD.*kal-la*-[*a*]*t* Էմիլ ֆորրերի կողմից: Forrer 1920: 85f.; Дьяконов 1951a, № 42, прим. 12; Parpola, Porter 2001: 11, Map 3 (E2).

հենց Տիգրիսը իր ակունքների շրջանում՝ հաշվի առնելով, որ Տիգրիսի ակունքը միջագետքյան ընկալումներում սկիզբ էր առնում «Տիգրիսի թունել»-ից, այն է՝ Տիգրիսի ձախափնյա վտակ Դիբնի գետի ակունքների շրջանը (Լիջեի մոտ)[670]:

Հետևաբար, կարծում ենք, որ Տիգրիսի ակունքների շրջանում, թերևս՝ հենց Դիբնի գետի (ուրարտ. *Կալլա*[...](?)) մերձավորությամբ պետք է որոնել Անգանու և Բենզու ամրոցները[671]: Այդ գոտին հեռու չէր՝ հիշատակվելու համար Շուբրիայի հետ ասորեստանյան արքունի գրագրություններում: Մենք նկատի ունենք Բենզու քաղաքը, որը Պենզա անունով (URU.*penza*) հիշատակվում է ուրարտա-շուբրիական անցուդարձերի կապակցությամբ, մի կոնտեքստում, ուր մի քանի անգամ հիշվում է նաև Շուբրիայի կենտրոններից Պումու (Ուպումու) քաղաքը[672]: Վերջինիս անունն ավանդաբար նույնացվում է բյուզանդական աղբյուրների Աֆումոնի հետ (*Ἀφουμῶν*, այժմ՝ *Ֆում*)[673]: Շուբրիայի հետ Պենզայի մերձավորության մասին են վկայում ասորեստանյան ևս երկու աղբյուր[674]: Հընթացս նշենք նաև, որ այդ շրջանի տեքստերում հիշատակվում է Թասի քաղաքը (URU.*tasi*) և լեռնանցքը (*nēribi ša* URU.*tasi*)[675], որը, ըստ երևույթին, նույնն է, ինչ վերը թվարկված շարքի Թասուն: Այստեղ պետք է հիշել նաև Սարդուրի Արգիշթորդու Իզոլուի արձանագրության մեջ հիշատակված Թաշեն ($^{URU}$*taše*), որը նշվում է Մելիդից խլված ինը ամրոցների շարքում[676]: Եթե ճիշտ է Թասու/Թասին նույնացնել Թաշեի հետ, ապա պարզ կդառնա, որ Մելիդի թագավորությունը բավական ծավալվել էր արևելյան ուղղությամբ:

Եվ վերջապես անդրադառնանք Բազու երկրին, որի կազմում թվարկվում են առնվազն չորս քաղաքներ՝ այդ թվում նաև Թասուն: Բազու երկիրը հայտնի է նաև Ադադ-նիրարի II-ի (Ք.ա. 911-891 թթ.) արձանագրություններից, որոնցից մեկում նշվում է դեպի Խաբխի արշավելու և մի քանի երկրների թվում նաև Բազուն նվաճելու մասին՝ Մեխրի երկրի Ռուռու գետի ափին ընկած քաղաքների հետ միասին[677]: Ցավոք, անորոշությունը շատ է թե Խաբխի երկրի, և թե Մեխրիի տեղորոշման հետ կապված[678]: Համենայն դեպս, կասկած չկա, որ գործ ունենք մերձտիգրիսյան շրջանների հետ:

---

[670] Schachner 2009: 1ff., Abb. 1.

[671] Տե՛ս և հմմտ. Forrer 1920: 85; Арутюнян 1985a: 27, 55 сл., карта; Kessler 1995: 63f., 67; Parpola, Porter 2001: 14, Map 3 (D2).

[672] Deller 1984: 112f. (Nr. 4.5); Lanfranchi, Parpola 1990, No. 31.

[673] Арутюнян 1985a: 208 сл., карта; Հարությունյան 2001, էջ 167: Տեղորոշման համար առավել հավանական թեկնածու է դիտվում Ֆումից 3 կմ հեռավորությամբ ընկած ներկայիս Լիջեն: Տե՛ս Kessler 1995: 57.

[674] Lanfranchi, Parpola 1990, Nos. 32, 34.

[675] Lanfranchi, Parpola 1990, Nos. 31: 11, 34: r.10, 15; 48: r.8.

[676] КУКН, $244_{30}$; CTU I, A $9\text{-}4_{30}$.

[677] Grayson 1991: 144 (A.0.99.1: r.6′-9′).

[678] Այս վերջինիս համար տե՛ս և հմմտ. Harutyunyan 1984a: 85ff.; Astour 1987: 5f.

Այսպիսով, ամփոփելով նշվածը, մերձեփրատյան գոտու հարավային սահմանի համար կարելի է առաջարկել միայն մոտավոր սահմանագիծ, թերևս ներկայիս Դիջլեից դեպի Էրգանի, Չերմիք, Սիվերեք և դեպի Եփրատ ուղղությամբ:

Թիգլաթպալասար III-ի նվաճումների արդյունքում Ուրարտուի մերձեփրատյան սահմանագիծը հետ մղվեց մինչև Արածանի: Հետաքրքիր է, որ ասորեստանյան տեքստերից մեկում նվաճումների կապակցությամբ հիշատակվում է Արածանին (ð D.*arṣania*), որն արքան անցել է «հորդացած ժամանակ»: Ցավոք, տեքստից միայն պատառիկներ են մեզ հասել[679]: Համենայն դեպս, Արածանիի այս եզակի հիշատակությունը կարող է հուշել, որ ասորեստանյան զորքերն այստեղ երկար չեն մնացել և խոսել տարածքային նվաճումների մասին Արածանիից հյուսիս ընկած ուղղությամբ, հազիվ թե իրատեսական լինի: Այստեղ նշենք, նաև, որ ասորեստանյան՝ վերը նշված տեքստերից մեկում հիշատակվում է Էնզի երկիրը մինչև Ծուպպա երկիրը (տեքստում՝ Ծուպպա երկրի մարզը) նվաճելու մասին: Ծուպպան, անկասկած, ուրարտական տեքստերի Ծուպանի երկիրն է, որն Ուրարտուի գերիշխանության տակ էր հայտնվել կամ Մենուա Իշպուինորդու, կամ Արգիշթի Մենուայորդու օրոք: Ինչպես տեքստից է երևում՝ ասորեստանյան զորքը չէր մտել Ծուպպա-Ծուպանի: Առնվազն Ք.ա. 7-րդ դ-ի առաջին քառորդին Ծոփքը դեռևս գտնվում էր Ուրարտուի կազմում: Դրա վկայությունն է այդ երկրի հիշատակությունը Ռուսա Արգիշթորդու թողած արձանագրություններից մեկում[680]: Այն հայտնաբերվել է ներկայիս Քալեքյոյից՝ Մեծկերտի (Մազգիրթ) մոտ, ըստ երևույթին՝ երբեմնի Ծուպանիի տարածքից (ներկայիս Թունջելին):

Ք.ա. 735 թ-ի ասորեստանյան արշավանքից հետո Ուրարտուն թեև ունեցավ հսկայական տարածքային կորուստներ, բայց միաժամանակ շարունակեց պահպանել իր ներկայությունը մերձեփրատյան գոտում: Կասկած չկա, որ Ուրարտուն դեռևս ելք ուներ դեպի Եփրատ և ցամաքային սահմանով կապվում էր լուվիական թագավորությունների հետ: Դրա վկայությունն է նաև ասորեստանյան արքա Սարգոն II-ի քայլը, երբ վերջինս Ք.ա. 712 թ-ին Մելիդի և Կամմանուի նվաճումից հետո ասորեստանյան վերահսկողության տակ անցած հինգ քաղաքներ վերածեց հսկիչ ամրոցների Ուրարտուի դեմ՝ ձգտելով սեպ խրել նրա և լուվիական պետությունների միջև: Այդ ամրոցներն են՝ Լուխսուն, Պուրտիրը, Անմուրրուն, Կի[ակա]ն, Անդուարսալիան[681]: Թվարկված քաղաքների համար առաջարկված համադրումները

[679] Tadmor, Yamada 2011, No. 36: 11′-13′.
[680] CTU I, A 12-6$_7$.
[681] Fuchs 1994: 127f., 324 (Z. 216-218).

հիմնականում վերաբերում են Եփրատի աջափնյա տարածքներին[682]: Որքանով է դա հնարավոր՝ դժվար է ասել:

Առայժմ հայտնի չէ նաև, թե որքան շարունակվեց ուրարտական ներկայությունը մերձեփրատյան գոտում: Ք.ա. 8-րդ դ-ի վերջերին տեղ գտած էթնոքաղաքական զարգացումները, ինչպես երևում է, կտրուկ փոխեցին ուժերի հարաբերակցությունն այս տարածքներում, և հավանաբար արդեն Արգիշթի Ռուսայորդու օրոք Ուրարտուն կորցրեց մերձեփրատյան գոտու հիմնական մասը՝ հետ քաշվելով դեպի Արածանիի և Արևմտյան Եփրատի ափեր (Քարտեզ 2-8):

1.2.1.7. **Հյուսիս-արևմուտք (Երզնկայի սարահարթ)**

Ուրարտական տերության՝ հյուսիս-արևմտյան սահմանների մասին պատկերացումներն աղոտ են: Անգամ կարելի է կարծել, որ այդ ուղղությունն ընդհուպ մինչև Ք.ա. 8-րդ դ-ի վերջեր առանձնապես չէր հետաքրքրում ուրարտական իշխողներին: Արևմուտքում ընկած ուրարտական ամրաշղթան հիմնականում ձգվում էր Արածանիի և նրա Մնձուր ու Փերի-Սու վտակների ափերով դեպի Եփրատ: Սակայն, Ք.ա. 8-րդ դ-ի վերջերից սկսած ուրարտական տերությունը ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված փորձում է ծավալվել հենց հյուսիս-արևմտյան ուղղությամբ և ամրապնդվել տերության ավանդական սահմաններից դուրս ընկած տարածքում՝ Երզնկայի դաշտում: Այստեղ ուրարտական ամրոցների ի հայտ գալը հավանաբար կապված էր Արգիշթի Ռուսայորդու (՞) կողմից Ալթըն-թեփեում հաստատվելուն ուղղված քայլերով: Այդ ամրոցները Ալթըն-թեփեն կապում էին Էրզրումի դաշտավայրի հետ և հիմնականում ընկած էին Արևմտյան Եփրատի հոսանքին մերձ գոտիներում: Ըստ այդմ, Անահտական լեռնաշղթան և Կապույտ լեռները կարելի է համարել տերության հյուսիս-արևմտյան սահմանները, հնարավոր է, մի կարճատև ժամանակահատվածի համար: Իսկ Ռուսա Արգիշթորդու՝ Քալեքյոյից գտնված արձանագրությունից դատելով[683]՝ նրա օրոք Ուրարտուն դեռևս ներկա էր առնվազն Մնձուր գետի ավազանի շրջանում: Այսքանով սահմանափակվում է առկա նյութը՝ հստակեցնելու համար տերության սահմանները հյուսիս-արևմտյան գոտում (Քարտեզներ 2-9, 3-6բ):

1.2.1.8. **Հյուսիս (մերձպոնտական գոտի)**

Հյուսիսում՝ մերձպոնտական գոտում ընկած երկրներից առաջինը Դիաուխին էր, որը ենթարկվեց ուրարտական հարձակումներին: Առաջին տարածքային ձեռքբերումները Դիաուխիում իրականացրեց Մենուան, երբ նվաճվեցին դիաուխյան

[682] Forrer 1920: 75.
[683] КУКН, 418; CTU I, A 12-6.

Բալտուլխի և Խալդիրիուլխի երկրներ: Այդ մասին հայտնող ուրարտական աղբյուրը վկայում է նաև տեղի «ամրացված ամրոցներ»-ը Բիայնիլիին միացնելու մասին (É.GAL$^{MEŠ}$-*ašili agununieli* $^{KUR}$*ebaniaṣi edini sutuqubi*)[684]: Առավել դյուրամատչ հատվածներում՝ հատկապես Բասենի դաշտ տանող Վելիբաբայի լեռնանցքի շրջանում, կառուցվեցին ամրոցներ (Դելիբաբան և Յուքարը Ըղըրբըղըրը): Դրանով Հայկական Պար լեռնաշթան ամբողջությամբ մինչև Այծպտկունքի լեռներ՝ Ներքին Տավրոսի արևելյան հատվածում, վերցվեց հսկողության տակ: Մենուայի հաջորդ Արգիշթի Մենուայորդու տեքստերը վկայում են Դիուխիից նոր տարածքներ նվաճելու և այդ տարածքներում մարզպետ(ներ) հաստատելու մասին: Ուրարտական տերության ծավալումը հյուսիսային ուղղությամբ շարունակվում է նաև Սարդուրի Արգիշթորդու կառավարման ընթացքում: Նրա օրոք էր, որ վերջնականապես նվաճվեց Շիրակը և ամենայն հավանականությամբ՝ նաև Կարսի սարահարթը:

Դիաուխիի ընդհանուր տեղորոշումը հստակ է՝ Արաքսի վերին հոսանքից դեպի հյուսիս՝ ընդհուպ մինչև Ճորոխ գետի միջին հոսանք և Կուր գետի ակունքներ ընկած շրջանում: Դա հետագայի Մեծ Հայքի Տայք աշխարհն էր, որի անունն էլ ծագում է Դիաուխիից (հունական աղբյուրներում՝ *Τάοχοι*, *Τάοι*, վրացականում՝ ტაო *Sṭaṿ*): Այլևս կասկած չկա, որ Դիաուխին որևէ կապ չունի ասորեստանյան աղբյուրներում բազմիցս հիշատակված Դայենիի հետ[685], ինչը երբեմն պատճառ է դառնում «Դիաուխի-Դայենի»-ի համար գծելու անհավանական ընդարձակ սահմաններ[686]: Դիաուխիի տեղորոշման հարցը եզրափակում են Յազըլըթաշի, Զիվինի և Օրթաքենթի արձանագրությունները: Խորասանից դեպի հարավ-արևելք՝ Դելլալբողազըի մոտ գտնված Յազըլըթաշի արձանագրությունը, որը տալիս է Մենուայի արշավանքի ամփոփումը, կարող էր թողնված լինել արշավանքից հետո և դիաուխյան սահմաններից դուրս: Փոխարենը, Զիվինի արձանագրությունը, վստահաբար, թողնվել է արդեն Դիաուխիի տարածքում. նրանում խոսվում է Դիաուխիի «արքայական քաղաք» Շաշիլուի գրավման և տեղում «կոթող» կանգնեցնելու մասին: Զիվինը (ներկայիս անվամբ՝ Սյունգյութաշը) գտնվում է Խորասանից դեպի հյուսիս-արևելք՝ Արաքսի ձախափնյա վտակներից Զիվին-չայ գետի ափին, ուր և կարելի է տեղորոշել Շաշիլուն[687]:

---

[684] ԿՈՒՀ, $53_{24-28}$; CTU I, A $5\text{-}3_{24-28}$.

[685] Տե՛ս նաև Կարագյոզյան 1978ա, էջ 93-94: Հմմտ. Kinnier-Wilson 1962: 104; Diakonoff, Kashkai 1981: 26; Арутюнян 1985a: 70 сл., 73; Salvini 1995a: 22; նույնի՝ 2002b: 45.

[686] Հմմտ., օրինակ, Սարգսյան 2003, էջ 168-178: Տե՛ս և հմմտ. նաև Գայսերյան 1985, էջ 208-214:

[687] Տե՛ս և հմմտ. Diakonoff, Kashkai 1981: 25 сл., 79, map; Çilingiroğlu 1980 [1982]: 193; Арутюнян 1985a: 242, карта.

Եվ վերջին՝ Օրթաքենթի արձանագրությունն առավել ընդարձակ ներկայացնում է Արգիշթի Մենուայորդու դիաուխյան արշավանքի մի հատվածը[688], որի ամփոփ նկարագրությունը տալիս է Խորխորյան տարեգրությունը[689]: Ընդ որում՝ տարեգրության մեջ նշվում է Դիաուխիի «արքայական քաղաք» Զուանին ոչնչացնելու և այդտեղ արձանագրություն թողնելու մասին[690]: Կուր գետի ակունքների մոտ՝ Հանաքից քիչ դեպի հարավ-արևելք ընկած Օրթաքենթի վիմագիրը կարող է լինել հենց այդ արձանագրությունը: Այստեղ հավելենք նաև, որ վերը հիշատակված Խալդիրիուլխին նույնացվում է Խաղտո առիճի հետ[691՝] Ճարոխի միջին հոսանքի շրջանում[692], այսինքն՝ ուրարտական աղբյուրներով գծագրվող դիաուխյան տարածքներում:

Ինչ խոսք, Դիաուխիի տեղորոշումն ուրվագծում է միայն ընդհանուր տարածք, ուր մուտք էին գործել ուրարտացիները, և տերության հյուսիսային սահմանների հարցը մնում է դեռևս բաց: Այդ գոտում ընկած ուրարտական ամրաշղթան ձգվում էր Ասբողա – Քյորօղլու-քալեսի – Զիվին – Հասանքալե – Քայալըք-թեփե – Ումուդում թեփե – Քյուչյուքգեչիթ գծով, այն է՝ ներկայիս Կարսից Սարիղամիշ, Խորասան, Փասինլեր և ապա՝ Էրզրում տանող ուղին: Հետևաբար, կարելի է կարծել, որ այդ գծից հյուսիս բարձրացող Մեծրաց և Կարմիր Փորակ լեռնաշղթաներն էլ կազմել են տերության հյուսիսային սահմանը: Առայժմ հստակ չէ, թե արդյո՞ք Չըլդըր լճի մերձակայքը ևս ներառվել է տերության կազմում: Հնարավոր է մտածել, որ Սարդուրիի Արգիշթորդու օրոք այդ գոտին միաժամանակ գտնվել է ուրարտական վերահսկողության տակ, եթե ընդունենք, որ այդ գոտում էր գտնվում ուրարտական աղբյուրների Իգա երկիրը[693] և որ, օրինակ, Չըլդըրի ափին գտնվող Սենգեր-քալեում հաստատվել էր ուրարտական կայազոր:

Դրանից հյուսիս-արևմուտք՝ Յալնըզչամի լեռների (Արսիանիի լեռնաշղթա) երկարությամբ տեսնելու տերության հյուսիսային սահմանները[694], մեզ իրատեսական չի թվում: Ուրարտական աղբյուրները հիմք չեն տալիս մտածելու, թե այդ գոտում տեղորոշվող Կուլխա երկիրը[695], որի մայրաքաղաք Իլդամուշան նույնացվել է

---

[688] КУКН, 174C; CTU I, A 8-7.
[689] КУКН, 173, столб. $I_{x+5-8}$, 174 $B1_{x+1-7}$; CTU I, A 8-2 $Vo_{1'-7'}$, A 8-3 $I_{5-8}$.
[690] КУКН, 174 $B1_{x+5}$; CTU I, A 8-2 $Vo_{5'}$.
[691] Арешян 1974б: 132.
[692] Ըստ Հակոբ Մանանդյանի՝ Գաղտառիճ գյուղը Էրզրումից արևմուտք՝ Աշկալեի մերձավորությամբ: Տե՛ս Մանանդյան 1936, էջ 63-64:
[693] Меликишвили 1954: 57, 60 сл., карта; Diakonoff, Kashkai 1981: 43, map; Арутюнян 1985a: 84 сл., карта.
[694] Köroğlu 1998: 140.
[695] Ավանդաբար Կուլխան նույնացվել է անտիկ աղբյուրների Կոլխիդայի հետ (Կոլխեթի/Կողքիս): Տե՛ս Ղափանցյան 1940, էջ 62; Adontz 1946: 203; Diakonoff, Kashkai 1981: 68f., map; Арутюнян 1985a: 118, карта; Salvini 1995b: 52: Սակայն, դեռևս անցյալ դարի 50-ական թթ-ին Գեորգի Մելիքիշվիլին կարծում էր, որ

Արտանուջի հետ[696], ընդգրկվել է տերության կազմում: Կարծում ենք, որ ուրարտական զորքերն ընդհանրապես չեն հասել Կուր գետին, իսկ եթե հասել են, ապա միայն նրա ակունքների շրջանում:

Հյուսիսային ուղղությամբ Ուրարտուն ուներ ամենաքիչ թվով ամրոց-ամրությունները: Ակնհայտ է, որ ուրարտական իշխողները չէին ձգտում հիմնվել այստեղ, իսկ հիմնական նպատակը դեպի մետաղի աղբյուրներ և անասնապահական շրջաններ մուտք ապահովող ճանապարհների վերահսկողությունն էր (Քարտեզ 3-13բ):

### 1.2.2. Ուրարտական տերության գերիշխանության գոտին

Վերը քննարկված Ուրարտուի «բուն սահմաններ»-ը, ինչ խոսք, ուրարտական տիրապետության վերջնագիծը չէր: «Բուն սահմաններ»-ից դուրս ընկած բազմաթիվ երկրներ գտնվում էին տերության գերիշխանության տակ և իրենց ինքնուրույնությունը պահպանելու համար պարտավոր էին հարկ վճարել և կատարել տարբեր պարիակներ: Նման երկրների ամբողջությունն էլ մենք անվանում ենք «ուրարտական տերության գերիշխանության գոտի»:

Ուրարտական արձանագրություններում այս կամ այն երկրի նկատմամբ գերիշխանության հաստատումը նշվում է տվյալ երկրի արքային «ծառա դարձնելու» ($^{LÚ}$*bura aštubi*) և «հարկի տակ գցելու» (*ïaldubi mešini pi*) մասին բանաձևերով: Ուրարտական աղբյուրները պահպանել են նման մի քանի տասնյակ երկրների անուններ, այդ թվում՝ Էթիունին[697], Ուրմեն (Շուբրիա)[698], Դիաուխին[699], Մելիդը[700], Կումմուխը[701], Իգանին[702], Պուինիալխին[703], Աբիլիանիխին[704], մերձսևանյան Վելիքուխի[705], Ադախունի, Լուերուխի և Արկուկինի երկրները[706], անդրսևանյան 19 երկրներ[707], Ծուլուկուն[708], Իրանական բարձրավանդակի մի քանի երկրներ[709], Արդինի/Մուծածիրը[710]:

---

Կուլխան տարածվել է ընդհուպ մինչև Կուր գետի վերին հոսանքի շրջանը, ուր և բախվել է Ուրարտուի հետ (Меликишвили 1954: 59, 62 сл. ուր և տե՛ս հղումը Իվանէ Ջավախիշվիլու աշխատանքին): Գրեթե նույն տեսակետն է արտահայտված Սուրեն Երեմյանի մոտ, ով Կուլխան տեղորոշում է Գյոլեի (հայ. *Կող*, վրաց. ჯოლა *Կոլա*) շրջանում (Երեմյան 1963, էջ 59): Հետագայում այդ նույն կարծիքն է հայտնում Քեմալեթթին Քյորօղլուն: Տե՛ս Köroğlu 2001: 726ff., Res. 17; նույնի՝ 2005: 99f., esp. 105, Fig. 1.

[696] Ղափանցյան 1940, էջ 62:

[697] КУКН, $47_{13-14}$; CTU I, A $5\text{-}1_{13-14}$, A $5\text{-}2A_3\text{-}F_3$.

[698] КУКН, 57 лиц. стор. Фрагмент $A_{8-11}$, 58 б. правая стор.$_{x+1-6}$; CTU I, A 5-6 Ro $(b)_{8'-11'}$., A 5-7 l. d.$_{1-6}$.

[699] КУКН, $53_{12-15}$, 174 $B1_{17-23}$; CTU I, A $5\text{-}3_{12-15}$, A 8-2 $Vo_{17'-23'}$.

[700] КУКН, $56_{16-17}$, 242 $BI_{28-31}$; CTU I, A $5\text{-}5_{16-17}$, A 9-1 $Vo_{28-31}$.

[701] КУКН, 241 $E_{x+48-56}$; CTU I, A 9-3 $IV_{48'-56'}$.

[702] КУКН, 174 $B1_{39-40}$; CTU I, A 8-2 $Vo_{39'-40'}$.

[703] КУКН, 241 $A_{17-18}$; CTU I, A 9-3 $I_{17-18}$.

[704] КУКН, 241 $C_{x+36-39}$; CTU I, A 9-3 $II_{36'-39'}$.

[705] КУКН, 241 $F_{19-21}$, $388_{2-3}$; CTU I, A 9-3 $VI_{19-21}$, A $10\text{-}1_{2-3}$.

[706] КУКН, $389_{2-5}$; CTU I, A $10\text{-}2_{2-5}$.

[707] КУКН, $389_{6-15}$; CTU I, A $10\text{-}2_{6-15}$.

Այդ երկրներից Էրիկուախին, Աբիլիանիխին, Վելիքուխին, Ադախունին, Լուերուխին, Արկուկինին, ինչպես նաև Դիաուխիին, Էթիունիին և Մելիդին պատկանող ընդարձակ տարածքներ հետագայում ներառվեցին տերության կազմում: Նման ճակատագիր է երևում նաև այլ երկրների դեպքում (Վիտերուխի, Լուշա, Աբունի(՞) ևն):

Ինչ խոսք, «ծառա դարձնելու» կամ «հարկի տալ գցելու» ուրարտական քաղաքականության արդյունավետությունը հաճախ կարճատև էր, և բոլոր դեպքերում չէ, որ պետք է ենթադրել տվյալ երկրի նկատմամբ ուրարտական երկարատև գերիշխանության մասին: Զորօրինակ՝ Դիաուխի երկիրը, որը, թվում է, դեռևս Մենուայի ժամանակ ընդունել էր ուրարտական գերիշխանությունը, արդեն Արգիշթի Մենուայորդու ժամանակ տեսնում ենք հակաուրարտական պայքարի մեջ: Էթիունին, իր կրած հսկայական տարածքային կորուստներով հանդերձ, շարունակեց համառ պայքար մղել և այդպես էլ չզիջեց իր անկախությունը բիայնացիներին: Բիայնական արքաները ստիպված էին հաճախ արշավել դեպի արևմուտք՝ հատկապես՝ Մելիդի ու Կումմուխի նկատմամբ ազդեցությունը չկորցնելու համար: Այդ նույնը տեսնում ենք Մանայի թագավորության պարագայում:

Արգիշթի Մենուայորդու և հատկապես Սարդուրի Արգիշթորդու օրոք տերության գերիշխանության գոտին խիստ ընդարձակվեց: Արևմուտքում այն արդեն ծածկում էր վերինեփրատյան լուվիական թագավորությունները ընդհուպ մինչև արևմուտքում՝ Գուրգում, իսկ հարավում՝ Կարքեմիշ[711], հյուսիսում ուրարտական առժամանակյա գերիշխանության տակ է հայտվում Էթիունին, ուրարտական գերիշխանության տակ էր գտնվում գրեթե ողջ Զագրոսյան լեռնագոտին (Խուբուշկիա, Մանա, Պարսուա, Բուշտու երկրները): Ուրարտուն ակնհայտ ազդեցություն ուներ հարավ-արևմուտքում՝ հյուսիս-սիրիական Բիթ-Ագուսի երկրի նկատմամբ և հնարավոր է՝ մի պահ Ունկի-Պատտինի միջնորդությամբ դուրս էր եկել Միջերկրականի ափեր (Քարտեզ 2-10ա):

### 1.2.3. Ուրարտուի նվաճումների աշխարհագրությունը

#### 1.2.3.1. Հյուսիս, հյուսիս-արևելք և արևելք (մերձկուրյան և մերձարաքսյան գոտիներ)

Շատ ավելի ընդարձակ էր Ուրարտուի նվաճումների աշխարհագրությունը, այսինքն՝ այն առավելագույն սահմանագիծը, ուր երբևէ ոտք էր դրել ուրարտացի զինվորը: Հյուսիսում դա Զաբախան էր ([KUR]*zabaḫa*), որի տարածքը հիմնականում

---

[708] ԿՈՒԿՀ, 411$_{11-14}$; CTU I, A 11-3 Vo$_{11-14}$.
[709] ԿՈՒԿՀ, 409$_{3-7}$, 410$_{3-10}$; CTU I, A 11-4$_{3-7}$.; A 11-5$_{3-10}$.
[710] ԿՈՒԿՀ, 387 упарт. текст$_{19-20}$; CTU I, A 10-5 Ro$_{19'-20'}$.
[711] Winter 2010: 584, n. 81, 589.

համապատասխանում է ներկայիս Ջավախքին՝ եզերված Թղերքի և Խոնավ լեռներով: Վերջինիս հետ միասին հիշատակվում է Սիրիմութարա լեռը (KUR*sirimutara* KUR*babani*)[712]: Հնարավոր է, որ դա Մեծ Աբուլն է՝ ամենախոշոր հրաբխային լեռնազանգվածն այդ գոտում (վրաց. დიდი აბულო *Դիդի Աբուլի*): Հյուսիս-արևելքում ուրարտական զորքերի հասած ամենահեռավոր կետը դա Սևանա լճի հյուսիս-արևմտյան հատվածն է. ուրարտական տեքստերն այստեղ հիշատակում են «ծովի կողմում» (*ṣuinia bedie*) ընկած Կեխու(նի) երկրի նվաճման մասին (KUR*qi(e)ẖuni*) մինչև Ալիշտու քաղաքը (*pari* URU*alištu*)[713]: Կեխու(նի)ի տեղորոշումը ճշգրտում է Լճաշենի արձանագրությունը[714]: Այդ նույն տեքստերում հիշատակվող Ալիշտու քաղաքի անունը, պահպանվել է Աղստև գետանվան մեջ[715], որի ակունքները սկիզբ են առնում Սևանա լիճը հյուսիսից եզերող Փամբակի և Արեգունու լեռներից:

Սարդուրի Արգիշթորդու տարեգրությունից հայտնի մերձսևանյան մի քանի երկրների տեղորոշման շուրջն արված կարծիքները ենթադրում են, որ ուրարտական զորքերը ինչ-որ պահ գործել են հյուսիսային Արցախում՝ Թարթառ գետի միջին և վերին հոսանքի շրջաններում[716]: Այստեղ դժվար բացատրելին լեռնային դժվարամատչ և թավ անտառներով ծածկված տարածքներով ուրարտացիների հետաքրքրվածությունն է, քանի որ ուրարտական «հարթավայրային քաղաքակրթություն»-ը միշտ խուսափել է նման գոտիներից: Այստեղ հավելենք նաև, որ հայագիտության կողմից լայնորեն ընդունված համադրությունը՝ ուրարտական տեքստերի Ուրտեխի երկրի (KUR*urṭeẖi*) և «Արցախ» տեղանվան միջև[717] հանդիպում է լեզվաբանական դժվարությունների[718]:

Այս նույնը կարելի է ասել Ռուսա Սարդուրորդու կողմից թողնված Ծովինարի արձանագրության մեջ հիշատակվող և «ծովի այն ափին ընկած» թվով 19 «երկրներ»-ի ընդգրկած աշխարհագրության մասին: Թեև հայագիտական ուսումնասիրություններում կան տեսակետներ՝ տեղորոշելու այդ երկրներից մի քանիսը Սևանի ավազանի և Կուր-արաքսյան հարթավայրի միջև[719], սակայն, կարծում ենք, այստեղ նույնպես մեծ է անորոշությունը:

---

[712] КУКН, 173 $I_{5-10}$; CTU I, A 8-3 $I_{5-10}$.
[713] КУКН, 173 $II_{25-31}$, 174 $A2_{1-12}$; CTU I, A 8-1 $Vo_{1-12}$, A 8-3 $II_{25-31}$.
[714] КУКН, 180; CTU I, A 8-11: Տեղորոշման համար տե՛ս Harutyunyan 1984b: 229ff.; Арутюнян 1985б: 108 сл.; Salvini 2002b: 40ff., Fig. 2.
[715] Կարագեոզեան 1998, էջ 227: Հմմտ. Harutyunyan 1982: 233ff.
[716] Երեմյան 1968ա, էջ 82; Պետրոսյան 1984, էջ 175-184:
[717] Капанцян 1931: 114; Կարագյոզյան 1978բ, էջ 56-57:
[718] Արմեն Պետրոսյանի և Հրաչ Մարտիրոսյանի բանավոր հաղորդման համաձայն:
[719] Երեմյան 1968ա, էջ 82; Կարագյոզյան 1978բ, էջ 62; նույնի՝ 1998, էջ 139, 206 և այլուր:

Արևելքում ուրարտական զորքերի հասած առավելագույն սահմանագիը, թերևս, Կըզըլ-Ուզենն էր, և կարելի է մտածել, որ ուրարտացիներին անծանոթ այդ գետն է հենց հանդես գալիս Արգիշթի Ռուսայորդու թողած Ռազլիկի, Նաշթեբանի, հավանաբար նաև՝ Շիշեի արձանագրություններում[720], առանց, սակայն, անունը նշելու (*kuṭiadi pari* $^{ÍD}$*munaidi*)[721]: Կարելի է կարծել, որ ուրարտական զորքերը երբևէ դուրս չեն եկել Կասպիցի ափեր:

1.2.3.2. **Հարավ-արևելք (Իրանական բարձրավանդակ)**

Այս ուղղությամբ ուրարտական զորքերի առաջխաղացման հարավային սահմանագիծը Բաբիլունի քաղաքի երկիրն էր ($^{KUR/URU}$*babilu*(*ni*) $^{KUR}$*ebani*), ուր ուրարտական զորքերը հասել են երկու անգամ՝ Արգիշթի Մենուայորդու[722] և Սարդուրի Արգիշթորդու օրոք[723]: Կասկած չկա, որ դա Բաբելոնիայի հիշատակումն է ուրարտական աղբյուրներում[724], առավել ևս, Արգիշթի Մենուայորդու «Խորխորյան տարեգրության» մեջ այդ տեղանունը հանդես է գալիս հենց որպես «Բաբիլու(նի) (քաղաքի) երկիր»: Ընդհանրապես, ենթադրվում է, որ այդպես կարող էր ընկալվել Նամրու երկիրը (վերջինս բազմիցս հիշատակվում է ասորեստանյան աղբյուրներում)՝ Բաբելոնիայից դեպի հյուսիս-արևելք[725]: Դա չի բացառվում, սակայն, որևէ փաստարկ, որը կժխտեր ուրարտական զորքերը տեսնելու հենց Բաբելոնիայի սահմանների մոտ և անգամ՝ սահմաններից ներս, առկա չէ: Առավել ևս, դա վերաբերում է մի շրջանի, երբ Բաբելոնիան իրենից ներկայացնում էր անկայուն, մանր քաղաքական միավորներից բաղկացած բազմէթնիկ մի տարածք, ուր քաղաքական իշխանության էին փորձում հասնել քաղդեական ցեղերը[726]: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, թե Բաբելոնիան գտնվել է ուրարտական իշխանության տակ, և իրականում գործ ունենք բաբելոնյան տարածքներում ուրարտական զորքերի դրվագային ներկայության հետ:

Զագրոսյան լեռնագոտում ընկած հարավային մյուս երկիրը Բարուատան էր: Մեզ հասած երկու աղբյուրներում Բաբելոնիայի հետ հանդես եկող Բարուատա երկիր, ինչպես երևում է, ուրարտական զորքերն այդպես էլ չեն մտել: «Խորխորյան տարեգրություն»-ը թեև նշում է Բաբելոնիայի հետ նաև Պարսուա և Բարուատա արշավելու մասին, սակայն, թե տեքստն է պակասավոր, և թե տեղեկատվությունը, որ

[720] КУКН, 409$_{4-5}$, 410$_{4-5}$; CTU I, A 11-4$_{4-5}$, A 11-5$_{4-5}$, A 11-6$_{4-5}$.
[721] Salvini 2009b: 205sq.; Дан 2015: 38 сл.
[722] КУКН, 173 III$_{11}$; CTU I, A 8-3 III$_{11}$.
[723] КУКН, 241 A$_{4-6}$; CTU I, A 9-3 I$_{4-6}$.
[724] Տե՛ս, դեռևս, Струве 1944: 135. Տե՛ս նաև Грантовский 1970: 115 сл.; Կարագեոզեան 1998, էջ 310-311:
[725] Дьяконов 1951a, № 28, прим. 20; Diakonoff, Kashkai 1981: 17f., map. Տե՛ս և հմմտ. նաև Меликишвили 1954: 40 сл.; Арутюнян 1985a: 50, карта; Fuchs 2012: 150.
[726] Brinkman 1968: 260ff.; Քոսյան 2013, էջ 122-128:

հաղորդվում է, բավական համեստ է: Ավելին, կարծես թե այդ տվյալները վերաբերում են Պարսուային[727]: Բարուատան երկրորդ անգամ հիշատակվում է «Սարդուրյան տարեգրության» մեջ, որպես մի երկիր, ուր հասել էին ուրարտական զորքերը Բաբելոնիա արշավելիս (*kuṭiadi pari* $^{KUR}$*baruatainia*)[728]: Բարուատան համադրվում է ասորեստանյան աղբյուրների Բիթ-Բարրուա երկիրի հետ[729], որը տեղորոշվում է ինչ-որ տեղ Էլամի հյուսիսային սահմանների մերձավորությամբ, ներկայիս Քերմանշահից հարավ-արևելք ընկած Խուրամաբադի շրջանում[730]:

1.2.3.3. **Հարավ-արևմուտք (հյուսիս-սիրիական գոտի)**

Այս ուղղությամբ ուրարտական առաջխաղացման առավելագույն սահմանագիծը հայտնի չէ: Ուրարտական տեքստերում հիշատակվում են Կումմուխի Ուիտա ($^{URU}$*uitani*), Խալպա ($^{URU}$*ẖalpani*) և Պարալա ($^{URU}$*paralani*) «արքայական քաղաքներ»-ը[731]: Դրանցից Խալպին նույնն է, ինչ նորասորեստանյան աղբյուրների հիշատակած Խալպան, որի և Քիշթան քաղաքների միջև տեղի ունեցած ճակատամարտում էր Սարդուրին կրել ճակատագրական պարտությունը Թիգլաթպալասար III-ի զորքերից:

Սարդուրի II-ի հիշատակած Խալպան ավանդաբար նույնացվում է Հալֆեթիի հետ՝ ներկայիս Բիրեջիքից հյուսիս-արևմուտք՝ Եփրատի ափին[732]: Սակայն, հաշվի առնելով նաև ուրարտական աղբյուրը, ըստ որի՝ քաղաքը գտնվում էր ինչ-որ լճի մոտ, Միխաիլ Ասթուրի ենթադրությամբ՝ Խալպի-Հալֆեթի նույնականացումը սխալ է և այն կարելի է տեղորոշել Գյոլբաշը լճի մերձավորությամբ՝ Ադըյամանից դեպի արևմուտք[733]: Ուիտան, ինչպես ենթադրվում է, սահմանային քաղաք էր Մելիդի և Կումմուխի միջև՝ Մելիդից դեպի Գյոլբաշը տանող ճանապարհի վրա, և կարող էր լինել Մելիդի երբեմնի քաղաքներից Ուետաշը[734]: Վերջինս հիշատակվում է Սալմանասար III-ի արձանագրություններում որպես Լալլա Մելիդցուն պատկանող «հզոր քաղաք»[735]: Պարալան մոտավոր տեղորոշվում է Բեսնիում[736], և վերջապես Քիշթանը նույնացվում է Քեյսունի հետ (այժմ՝ Չաքըրհյույուք)[737]: Ինչպես երևում է, սա այն սահմանագիծն է, ուր հասել էին ուրարտական զորքերը (Քարտեզ 2-10բ):

---

[727] КУКН, 173 $III_{11-17}$; CTU I, A 8-3 $III_{11-17}$.
[728] КУКН, 241 $A_{4-6}$; CTU I, A 9-3 $I_{4-6}$.
[729] Дьяконов 1956a: 170, прим. 2; Diakonoff, Kashkai 1981: 18f., map.
[730] Грантовский 1970: 115 сл.; Parpola, Porter 2001: 7, Map 11 (D3).
[731] КУКН, 241 $E_{x+48-52}$; CTU I, A 9-3 $IV_{48'-52'}$.
[732] Forrer 1920: 79; Diakonoff, Kashkai 1981: 39, map.
[733] Մանրամասն տե՛ս Astour 1979: 9ff. [77ff.], esp. p. 14 [82].
[734] Меликишвили 1954: 54, 248; Astour 1979: 5 [73].
[735] Grayson 1996: 67 (A.0.102.14: 107b-110a).
[736] Astour 1979: 14f. [82f.].
[737] Astour 1979: 15f. [83f.].

### 1.2.3.4. **Արևմուտք (փոքրասիական գոտի)**

Արևմտյան ուղղությամբ ուրարտական առաջխաղացման ծայրակետը, հավանաբար, Թաբալն էր: Առաջին անգամ Թաբալը հիշատակվում է Արգիշթի Մենուայորդու տարեգրության մեջ՝ «Տուատեխիի երկիր» անունով ([m]*tuateḫini* KUR-*ni*) և վերաբերում է այդ երկրում ուրարտական զորքերի դրվագային ներկայությանը[738]: Հիշյալ Տուատեխին, ինչպես նկատել է Արամ Քոսյանը, կարող է լինել Թաբալի (թաբալյան Բիթ-Բուրուտաշ երկրի) արքա Տուվատիսը, ում իշխանության ժամանակագրումը Ք.ա. 8-րդ դ-ով կամ առավել ևս՝ 8-րդ դ-ի առաջին կեսով, անվիճելի է: Ըստ այդմ, նա կարող էր լինել Արգիշթի Մենուայորդու ժամանակակիցը[739]: Արգիշթիի գահակալության սկզբի վերաթվագրումը Ք.ա. 791/790 թ-ով շատ ավելի նվազ է դարձնում Տուվատիսի՝ խիստ երկար իշխելու շուրջ ծագած կասկածները[740]: Թաբալը երկրորդ անգամ հիշատակվում է Ռուսա Արգիշթորդու արձանագրություն-ներում՝ Թաբլանի անունով ([KUR]*tap/blani*)[741]՝ հանդես գալով այն երկրներից շարքում, որտեղից կատարվել են գերեվարություններ[742]: Ինչպես հայտնի է, Թաբալը նույնանում է հետագայի Կապադովկիային[743]: Այս նույն գոտում ընկած Կամանանի երկրի տեղորոշման և ասորեստանյան աղբյուրներից հայտնի Կամմանուի հետ նույնականացման հարցում առայժմ համակարծություն չկա[744]:

Ռուսա Արգիշթորդու՝ վերը նշված արձանագրություններում հիշատակվում է նաև Մուշկի(նի) երկիրը ([KUR]*mušk*ini)[745]: Այն ավանդաբար նույնացվում է ասորեստանյան աղբյուրների Մուշկիի հետ, այն է՝ Փռյուգիան[746]: Սակայն, այս հարցում առկա են խնդիրներ, և չի բացառվում, որ Ռուսայի տեքստերում Մուշկի(նի) անվան տակ նկատի առնված լինի Վանա լճից հարավ-արևմուտք և արևմուտք ընկած տարածքը կամ որ նույնն է՝ Շուբրիան[747]:

---

[738] ԿՈՒԿՀ, 173 $II_{15}$; CTU I, A 8-3 $II_{16}$.

[739] Քոսյան 1998ա, էջ 13 և ծնթ. 26; նույնի՝ 1999ա, էջ 144 և ծնթ. 25: Նման եզրակացության է հանգել նաև Միրյո Սալվինին: Տե՛ս Salvini 1995b: 51. Քննարկումների համար տե՛ս նաև Weeden 2010: 39ff.

[740] Տե՛ս Weeden 2010: 41.

[741] Թաբլանի-Թաբալ համադրությունն առաջինն առաջարկել է Հովհաննես Կարագյոզյանը: Տե՛ս Карагезян 1981: 220, прим. 39. Այս ենթադրությունը հետագայում հաստատվեց Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության հայտնաբերումով, ուր վերստին հիշատակվում է Թաբալը: Տե՛ս Çilingiroğlu, Salvini 2001b: 20.

[742] ԿՈՒԿՀ, $416_{8}$; CTU I, A 12-1 $VI_{10-11}$, A 12-4 $II_{8'}$.

[743] Aro 2012: ff.; Parpola, Porter 2001: 16, Map 1 (D3).

[744] Ամփոփ տե՛ս Քոսյան 1984, էջ 68 և ծնթ. 44:

[745] ԿՈՒԿՀ, $414_{x+4}$; CTU I, A 12-1 $VI_{10-11}$, A 12-4 $II_{8'}$.

[746] Меликишвили 1954: 315; Карагезян 1981: 220 (նշվ. գրականությամբ); Diakonoff, Kashkai 1981: 59, map; Liverani 1992: 30, n. 89 (հղված գրականությունը); Röllig 1995: 494.

[747] Քննարկումների համար տե՛ս և հմմտ. նաև Liverani 1992: 30f.; Çilingiroğlu, Salvini 2001b: 20.

Հաջորդը Խալիտուն է ($^{KUR}$*ḫaliṭu*): Վերջինս չի նշվում Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության մեջ, սակայն, նրա անունն առկա է Արծկեից հայտնաբերված «Զիուկունի երկրի Խալդիի քաղաք»-ի «սուսի»-տաճարի արձանագրության մեջ[748]:

Խալիտուն հնարավոր է տեղորոշել Արևելապոնտական լեռնային գոտում՝ ելնելով այդ շրջաններում անտիկ աղբյուրների հիշատակած խալյուբների (խալդայների) անվան հետ համադրումից: Թերևս, համընկնում է միջնադարյան հայկական աղբյուրներում հիշատակված Խաղտիքի տարածքի հետ՝ ներկայիս Գյումյուշհանեի շրջանում (Քարտեզ 2-10բ)[749]: Այդ տարածքը չի գտնվել ուրարտական տերության կազմում. համենայն դեպս, այստեղից ուրարտական ներկայության որևէ հետք չի հայտնաբերվել[750]:

Եվ վերջապես այդ նույն կոնտեքստում հիշատակվող երկրներից մեկն էլ Թարգունին է ($^{KUR}$*tar-gu/je$_x$-ni*, կարդա՝ Թարյունի՞)[751]: Վերջինիս տեղորոշումն առայժմ անհայտ է: Խիստ գայթակղիչ է թվում այս երկրանունը Թիլ-Գարիմմուի և Թեգարամայի (Տուն Թորգոմայ) հետ նույնացնելու հնարավորությունը[752]:

### 1.3. Բնակչության թվաքանակը Հայկական լեռնաշխարհում ուրարտական շրջանում

Ինչ խոսք, առայժմ հնարավոր չէ շատ թե քիչ վստահելի տվյալներ վեր հանել Ուրարտուի բնակչության թվաքանակի մասին: Առայժմ միայն ենթադրություն է այն կարծիքը, որ Ուրարտուն ունեցել է 6-7 մլն բնակչություն[753]: Այդ տեսակետն արտահայտած Իգոր Դյակոնովը հենվում էր «Սարդուրյան տարեգրության» մի հատվածի վրա, ուր 92 մարտակառքի և 3 հազ. 600 հեծյալների հետ նշվում է 352 հազ. 11 զինվորների մասին՝ «և հեծյալ, և հետևակ[754]»: Այդ թվի վրա հիմնվելով, որով, ըստ հեղինակի, նշվել է Ուրարտուում զինվորական խավի՝ *šureli*-ի թվաքանակը, Իգոր Դյակոնովը ենթադրում էր, որ միայն ազատ բնակչության թիվն Ուրարտուում կազմել է 1 մլն-ից ավել մարդ[755]: Հետագայում, ելնելով այն մոտեցումից, ըստ որի՝ ծառայել է այդ խավի յուրաքանչյուր 5-րդ ներկայացուցիչը, Իգոր Դյակոնովն արդեն գտնում էր, որ միայն *šureli*-խավի անդամների թիվը կարող էր կազմել 1 մլն. 750 հազ. մարդ: Այդ

[748] КУКН, 414$_{x+4}$; CTU I, A 12-4 II$_{8'}$.
[749] Дьяконов 1952б: 111 сл.; Меликишвили 1954: 315; van Loon 1966: 82; Diakonoff, Kashkai 1981: 39, map; Çilingiroğlu, Salvini 2001b: 20.
[750] Տե՛ս Sinclair 1989a: 125; Çiğdem *et al.* 2004: 168.
[751] CTU I, A 12-1 VI$_{11}$.
[752] Медведская 2010: 141.
[753] Дьяконов 1988a: 60 сл.; Diakonoff 1991: 19, n. 55. Հմմտ. Դեմոյան 2009, էջ 14 (3 մլն.):
[754] КУКН, 241G$_{3-5}$; CTU I, A 9-3 VII$_{3-5}$.
[755] Дьяконов 1963в: 57.

թվին գումարելով մնացյալ խավերը կազմող բնակչության հնարավոր թվաքանակները՝ նա տերության ողջ բնակչության համար ենթադրում էր վերը նշված 6-7 մլն. թիվը:

Իրականում այստեղ շատ է անորոշությունը: Օրինակ, ինչպես նկատել է Միրյո Սալվինին, զինվորականության հսկայական թվաքանակն ամենևին չի համապատասխանում այդ նույն տեքստում նշված զենքերի թվին. մոտ 356 հազ. մարդու դիմաց նշված է 2114 «մարտական զենք» (*BE.LI*$^{MEŠ}$ *gunušini*) և 1332 աղեղ ($^{GIŠ}$BAN$^{MEŠ}$): Այսինքն, նշված զենքը բավարար է զինելու համար ընդամենը 3.5 հազ. մարդու: Բացի դա, նշված հաշվարկով առաջնորդվելու դեպքում թերևս ճիշտ կլիներ ենթադրել, որ 356 հազ. թիվն արտահայտում է ենթադրյալ *šureli*-խավի ամբողջ թվաքանակը, քանի որ պետության համար սուբյեկտ հանդիսանում էր ծառայող զինվորականը, բայց ոչ՝ նրա ընտանիքը: Այլապես, եթե ընդունենք, որ *šureli*-խավը միայն կազմել է 1 մլն 750 հազ. մարդ, ապա, այդ թվին գումարելով նրանց ընտանիքի անդամներին (միջինը՝ 4 անձ), ապա հեղինակի մատնանշած 6-7 մլն-ը թիվն ամբողջությամբ վերաբերելու էր այդ խավին: Իսկ ընդհանրապես՝ այստեղ տեսնել սոցիալական ինչ-ինչ խավեր մեր կարծիքով ճիշտ չէ (տե՛ս 4.2.2.):

Ուրարտուի բնակչության թվաքանակը պարզելու համար որոշ դատողություններ կարելի է անել սեպագիր և հնագիտական տվյալներից ելնելով: Մասնավորապես, մեզ հասած ուրարտական վիմագիր աղբյուրներում անվանապես թվարկվում է 168 բնակավայր (Աղ. 8), որոնցից 16-ը «արքայական քաղաքներ» են (Աղ. 10): Ուրարտական արքունի գրագրություններում և տնտեսական բովանդակությամբ տեքստերում անվանապես հիշվող «քաղաքներ»-ի թիվը հասնում է 20-ի, որոնցից վիմագիր տեքստերում վկայված են 9-ը (Աղ. 9): Այսպիսով, ընդհանուր առմամբ ուրարտական տեքստերը պահպանել են ավելի քան 180 քաղաքների անուններ:

Բացի դա, արձանագրությունների հանրագումարային տվյալները հայտնում են 1841 բնակավայրերի մասին, այդ թվում՝ 383 ամրոց և «արքայական քաղաք» (É.GAL / URU LUGÁL-*nusi*) և 1441 «քաղաք/շրջակա բնակավայր» (URU), որոնց մեծամասնությունը տեղորոշվում է Լեռնաշխարհի սահմաններում (304 ամրոց և «արքայական քաղաք», 1284 բնակավայր): Ուրարտուի մերձուրմյան տարածքների համար ևս մոտ 70 ամրոց և 430 «քաղաք/շրջակա բնակավայր» է հիշատակում «Լուվրի աղյուսակ»-ը: Ի լրումն՝ ուրարտական տեքստերը առնվազն երեք տասնյակ անգամ հայտնում են նվաճված ամրոցները քանդելու կամ «քաղաքներ»-ը հրդեհելու մասին՝ առանց որևէ թվական տվյալ նշելու (Աղ. 10): Հաշվի առնելով, որ նշված 1284 բնակավայրերը գտնվում էին 12 երկրների տարածքում, ապա միջինացված հաշվարկի

դեպքում յուրաքանչյուր երկրի համար ունենում ենք մոտ 107 բնակավայր և 25-26 ամրոց: Իհարկե, պետք է հաշվի առնել, որ նման թվերն ապահովվում են երկու անասնապահական երկրների՝ Ուրմեի և Դիաուխիի մեծաթիվ բնակավայրերի հաշվին (միասին՝ 850-ից ավելի), և կարելի է առաջարկել որպես միջին ընդունել 50 բնակավայր/երկիր հաշվարկը, ինչպես, օրինակ, ունենք Պուլուադիի և Արխիի դեպքում՝ համապատասխանաբար՝ 55 և 60 բնակավայր, 46 բնակավայր է հիշատակվում Մուծածիրի տարածքում[756], 33 (տրբ. 35) բնակավայր՝ Ուկկուում[757] և այլն: Նման պատկեր է երևում նաև վաղ նորասորեստանյան աղբյուրներից[758]:

Ինչ վերաբերում է ամրոցներին, ապա մեր հաշվարկները ցույց են տալիս, որ ամրոցների և բնակավայրերի միջին հարաբերակցությունը կազմել է 1 : 5-ի, և կարելի է յուրաքանչյուր երկրի տարածքում ենթադրել միջինը 10-12 ամրոցի գոյություն: Նշված թվերը միանգամայն համահունչ են մերձուրմյան ավազանի ուրարտական տիրույթների համար. այստեղ ընկած յոթը մարզերում գտնվել է 430 բնակավայր և մոտ 70 ամրոց, յուրաքանչյուրի համար, միջինը, 61 բնակավայր և 10 ամրոց:

Եթե առաջնորդվենք այդ հաշվարկներով և այն կիրառենք Լեռնաշխարհում տեղորոշվող 13 երկրների համար, որոնց դեպքում ուրարտական աղբյուրներն ամրոցների և բնակավայրերի կոնկրետ թվեր չեն հայտնում, կունենանք ևս մոտ 130 ամրոց և 650 բնակավայր: Ընդհանուրը կկազմի շուրջ 600 քաղաք, ամրոց և 1900-ից ավելի գյուղատիպ բնակավայր: Ինչ վերաբերում է տերության բուն տարածքին, ապա կարելի է ենթադրել, որ նրանում գտնվող բնակավայրերի թիվը կարող էր հասնել մինչև 2 հազ-ի (տե՛ս ստորև):

Փաստորեն, սեպագիր աղբյուրները թույլ են տալիս խոսել ուրարտական տիրապետության դարաշրջանում Հայկական լեռնաշխարհի սահմաններում գտնվող շուրջ 4.5 հազ. բնակավայրերի գոյության մասին (շուրջ 900 «քաղաք» և ամրոց, մոտ 3.6 հազ. բնակավայր): Պետք է նշել, որ չի կարելի թերագնահատել այդ թվերը, որքան էլ որ հաշվարկները պայմանական են կամ գործ ունենանք սեպագիր աղբյուրների սակավության, ինչպես նաև՝ այդ աղբյուրների գերագնահատված տեղեկատվության հետ, հատկապես՝ երբ հանդիպում են կլոր թվեր:

Ավելին, Հայկական լեռնաշխարհի վաղերկաթեդարյան և ուրարտական շրջանների մեզ հայտնի հնավայրերի թիվը հասնում է մոտ 970-ի (տե՛ս Աղ. 11): Ընդ որում, սա հնավայրերի այն քանակն է, որը մենք առանձնացրել ենք մեր աշխատանքի

[756] Grayson 1996: 70 (A.0.102.14: 179); 83 (A.0.102.16: 326′).
[757] Luckenbill 1924: 37 (l. 28-29); Grayson, Novotny 2012, No. 16 (Col. v 28b-29), 17 (Col. iv 58-59a); etc.
[758] Liverani 1992: 136.

ընթացքում՝ բնավ նպատակ չունենալով կազմելու քննարկվող դարաշրջանի հուշարձանների ամբողջական ցանկը: Ամեն դեպքում, նշված թիվը բավական պատկառելի է թվում, եթե հաշվի առնենք նաև այն, որ ուրարտական աղբյուրների նշած բնակավայրերի և հատկապես՝ «քաղաքներ»-ի զգալի մասն իրականում անասնապահ համայնքների հյուղակներ կամ սեզոնային կայաններ էին, որոնք հնագիտորեն անհնար է հաստատագրել: Ասվածը վերաբերում է, օրինակ, Սյունիքին, որտեղ հաստատագրված մեծաթիվ վաղերկաթեդարյան և ուրարտական դարաշրջանների դամբարանների դիմաց ունենք վկայված ընդամենը մի քանի բնակատեղի[759]:

Այսպիսով, կարծում ենք, որ Հայկական լեռնաշխարհի համար ենթադրվող 4.5 հազ. թիվն ամենևին հեռու չէ իրականությունից: Ասվածը վերաբերում է նաև ամրոցներին: Միայն Վանա լճից դեպի Արարատյան դաշտ ընկած հատվածում հաստատագրված վաղերկաթեդարյան և ուրարտական ամրոցների թիվը հասնում է գրեթե 150-ի[760]:

Հինարևելյան զուգահեռներից առավել հստակ տեղեկություններ ունենք Ուգարիթի թագավորության համար: Ուգարիթի հիմնական տարածքը, որը կազմում էր ընդամենը մոտ 2.2 հազ. կմ$^2$,[761] ըստ տարբեր հաշվարկների՝ ընդգրկում էր 150-ից[762] 200[763] և անգամ մինչև 350[764] «քաղաք»/գյուղ՝ տարբեր հաշվումներով 17-22 հազ.[765], 25-ից-35 հազ.[766], իսկ առավելագույնը՝ մինչև 50 հազ. բնակչությամբ[767]: Այդ թվերն ընդգրկում են նաև Ուգարիթ քաղաքը, որի բնակչության թիվը ենթադրվում է 6-8 հազ. մարդու սահմաններում[768]:

Ուգարիթյան և միջինասորեստանյան «գյուղեր»-ի բնակչության միջին թիվը կազմել է 120-150 մարդ[769]: Նորասորեստանյան աղբյուրներից դատելով՝ նաիրյան և զագրոսյան բնակավայրերի համար կարելի է ենթադրել միջինը մինչև 250 բնակիչ[770]:

---

[759] Մանրամասն տե՛ս Xnkikyan 2002: 49ff.; Kroll 2006: 25ff.
[760] Özfırat 2012a: 131.
[761] Vita 1999: 455. Տե՛ս և հմմտ. նաև Heltzer 1976: 104.
[762] Liverani 1982: 250ff.; van Soldt 1995: 1258.
[763] Heltzer 1976: 7ff. (Tab. 1); 103f.
[764] Schniedewind, Hunt 2007: 8.
[765] Vidal 2014b: 49.
[766] Heltzer 1976: 111f.; Liverani 1982: 250ff.; van Soldt 1995: 1258; Vita 1999: 455. Հմմտ. Schniedewind, Hunt 2007: 8.
[767] Schniedewind, Hunt 2007: 8.
[768] van Soldt 1995: 1258; Vita 1999: 455. 2 հազ. 100-ից մինչև 4 հազ. բնակիչ է ենթադրվում մոտ 20 հա զբաղեցնող Ալալախի համար: Տե՛ս Casana 2009: 30.
[769] Heltzer 1976: 103ff. Հմմտ. Vidal 2014b: 49ff.
[770] Liverani 1992: 133ff., esp. p. 136.

Գրավոր աղբյուրներից ելնելով կարելի է ենթադրել, որ Լեռնաշխարհի որոշ շրջաններ, հատկապես՝ հյուսիսում, ունեցել են համեմատաբար խիտ բնակչություն: Դա կարելի է նշել, օրինակ, Սևանա լճի ավազանի բնակավայրերի համար: Այս տարածքի վաղերկաթեդարյան խոշոր բնակավայրերից մեկը Սանգար ամրոցն է՝ 3.6 հա մակերեսով: Վերջինիս ներքին տարածքը խիտ կառուցապատված էր տներով[771], որոնց թիվը կարող էր հասնել մինչև 40-50-ի: Ամեն մի տան համար 5-6 մարդ հաշվարկի դեպքում կունենանք մինչև 300 բնակիչ: 1 հա-ի համար 90-100 մարդ խտությունը միանգաման իրատեսական է և ընդունվում է որպես հիմք միջագետքյան քաղաքների բնակչության հաշվարկի համար (տե՛ս ստորև): Առանձին բնակավայրերի դեպքում բնակչության խտությունը կարող էր լինել և ավելի մեծ, հատկապես, երբ գործ ենք ունենում «մայրաքաղաքային» տիպի կենտրոնների հետ: Օրինակ, եթե հիմք ընդունենք Լճաշենի առաջին միջնաբերդի (մոտ 1 հա) ներսում հաշվված քառանկյունի կամ բոլորատիպ կացարանների թիվը՝ մոտ 70[772], ապա այստեղ բնակվող բնակչության թիվը կարող էր հասնել ընդհուպ մինչև 350-400 մարդու[773]: Այստեղ նկատենք, որ սևանյան գոտում թեև կան ամրոցներ, որտեղ բնակարանային կառույցները տարածվել են նաև ամրոցի պարիսպներից դուրս (օր. Քռայի ամրոցը[774]), սակայն, հիմնականում, ամրություններից դուրս բնակչության էական կուտակում չի նկատվում[775]:

Լեռնաշխարհի տարածքում վկայված Ուշ բրոնզ – Վաղ երկաթի դարաշրջանների ամրոցների և դրանց շուրջը սփռված բնակատեղիների մակերեսը սովորաբար տատանվում է 0.1 – 10 հա միջև (Աշոտ Երկաթ՝ 0.15 հա[776], Հերի բերդ՝ 0.15 հա[777], Մուրադխաչ՝ 0.3 հա[778], Այրք 1՝ 0.8 հա[779], Մոխրաբլուր II՝ 1 հա[780], Գազանոց՝ 1 հա[781], Գեղարոտ՝ 3.43 հա[782], Օրգով՝ 4 հա[783], Բյոյուք Կալ’եհ՝ 4 հա[784], Բերդի-գլուխ՝ 5

[771] Միքայելյան 1966, էջ 237-240, նկ. 3:
[772] Մարտիրոսյան 1969, էջ 14:
[773] Այդ թիվը կարող ենք ունենալ միայն այն դեպքում, եթե ընդունենք, որ յուրաքանչյուր կացարան պատկանել է առանձին ընտանիքի: Եթե դրանք ներկայացրել են մի քանի սենյակներից կազմված համալիրներ, ապա բնակչության թիվը լինելու էր շատ ավելի փոքր: Այստեղ, ցավոք, անորոշությունն այնուամենայնիվ մեծ է: Տե՛ս և հմմտ., միաժամանակ, Hmayakyan 2002: 283.
[774] Միքայելյան 1966, էջ 234-236, նկ. 2:
[775] Biscione 2003: 178.
[776] Smith *et al.* 2009: 286.
[777] Հմայակյան, Սանամյան 2002, էջ 32:
[778] Հմայակյան, Սանամյան 2002, էջ 31:
[779] Sanamyan 2002b: 335.
[780] Арешян 1978: 97.
[781] Арешян 1978: 99.
[782] Smith *et al.* 2009: 288.
[783] Арешян 1978: 99.
[784] Biscione, Khatib-Shahidi 2006: 302.

հա[785], Քռա՝ մոտ 5 հա[786], Գյամրեզ՝ 5..3 հա[787], Արագածոտն՝ 6 հա[788], Կոլ Պալ՝ 6.5 հա[789], Սահակաբերդ՝ 8.2 հա[790], Սառնաղբյուր (արևմտյան ամրոց)՝ 8.9 հա[791], ևն) և սովորաբար չի գերազանցում 10 հա-ը: 10 և ավելի հա տարածք զբաղեցնող ամրոց-բնակավայրերի թիվը մեծ չէ (Էլառ-Դարանի՝ 80 հա[792], Իլիկյա Վանք՝ մոտ 80 հա, որից ամրոցը՝ մոտ 9 հա[793], Մեծամոր՝ մոտ 70-80 հա, որից պարսպապատ քաղաքը՝ 30 հա[794], Հոռոմ՝ 45-50 հա[795], Մոտկան՝ 40-50 հա[796], Կարմիր բլուրի վաղերկաթեդարյան բնակատեղի՝ 40-50 հա[797], Ղազարավան՝ 35-40 հա[798], Լճաշեն՝ 35 հա[799], Ծովակ՝ 35 հա, որից ամրոցի տարածքը՝ 10 հա[800], Հնաբերդ՝ 33 հա[801], Արամուս՝ մոտ 25 հա[802], Ծովինար՝ մոտ 18 հա, որից ամրոցի տարածքը՝ 5 հա[803], Նաղարախան՝ 15.5 հա[804], Հառիճ՝ 12 հա[805], ևն) և եզակի են 100 և ավելի հա տարածք ունեցող բնակավայրերը (Բերդի-դոշ՝ 210 հա[806], Ույծ՝ 200 հա[807], Քասըմ Թըղը/Գրե Հերշե՝ մոտ 200 հա[808]):

Ինչպես կտեսնենք ստորև՝ հնագիտորեն առավել լավ ուսումնասիրված ուրարտական բնակավայրերն ունեցել են 50-ից մինչև 300 մարդու հասնող բնակչություն: Հետևաբար, թե ուրարտական, և թե վաղերկաթեդարյան բնակավայրերի բնակչության թվաքանակի համար որպես միջին թիվ նույնպես կարելի է հիմք ընդունել 150-200 մարդ/բնակավայր հաշվարկը:

Եթե հիմք ընդունենք առնվազն 2.5 հազ. բնակավայրերի գոյության հնարավորությունը Հայկական լեռնաշխարհի՝ ուրարտական հասանելիության գոտում, ապա կարող ենք ենթադրել, որ դրանց բնակչության թիվը կազմել է 375-ից 500 հազ.

---

[785] Միքայելյան 1964, էջ 119-132; նույնի՝ 1968, էջ 18-20: Հմմտ. Biscione *et al*. 2002b: 180f.
[786] Միքայելյան 1966, էջ 234; նույնի՝ 1968, էջ 31; Sanamyan 2002b: 326.
[787] Smith, Khafadarian 1996: 25.
[788] Smith, Khafadarian 1996: 28.
[789] Sanamyan 2002b: 326.
[790] Smith *et al.* 2009: 310.
[791] Smith, Khafadarian 1996: 29.
[792] Խանզադյան 1979, էջ 125:
[793] Միքայելյան 1968, էջ 25:
[794] Խանզադյանև այլք 1973, էջ 9; Խանզադյան 1979, էջ 126:
[795] Badaljan *et al.* 1994: 1.
[796] Արեշյան և այլք 1977, էջ 81; Արեշյան, Ղաֆադարյան 1996, էջ 86, Աղ. 15ժԶ:
[797] Мартиросян 1964: 161.
[798] Արեշյան և այլք 1977, էջ 82; Արեշյան, Ղաֆադարյան 1996, էջ 70:
[799] Միքայելյան 1968, էջ 35: Հմմտ. Մարտիրոսյան 1969, էջ 14:
[800] Միքայելյան 1968, էջ 42; Sanamyan 2002b: 326, 335.
[801] Smith *et al.* 2009: 302.
[802] Smith, Khafadarian 1996: 36; Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, էջ 120:
[803] Միքայելյան 1966, էջ 244; նույնի՝ 1968, էջ 38: Տե՛ս նաև Biscione *et al.*; 2002b: 128; Sanamyan 2002b: 326.
[804] Sanamyan 2002b: 326.
[805] Хачатрян 1975: 130.
[806] Smith *et al.* 2009: 287.
[807] Զարդարյան և այլք 2010, էջ 157:
[808] Özfirat 2010a: 528.

մարդ: Ուրարտական աղբյուրների պահպանած տվյալներով՝ տերության գոյության ընթացքում գերեվարված կամ վերաբնակեցված բնակչության թիվը նվազագույն հաշվումներով հասնում էր առնվազն 630 հազ. մարդու[809], որից շուրջ 500 հազ-ը վերաբերում է Լեռնաշխարհի ներքին շրջաններից տեղահանված բնակչությանը (տես Աղ. 28):

Ուրարտական տեքստերը հայտնում են շուրջ չորս տասնյակ երկրների անուններ, որոնցից կատարված գերեվարությունների մասին թվական տվյալներ կամ չեն նշվել, կամ դրանք չեն պահպանվել: Եթե հաշվի առնենք այն, որ 500 հազ. գերիները տարվել են Լեռնաշխարհի շուրջ 100 երկրներից (այս թվի մեջ ենք ներառում նաև միևնույն երկրից իրականացված բազմակի գերեվարությունները), ապա որպես աշխատանքային տարբերակ՝ կարելի է մտածել, որ յուրաքանչյուր երկրից կամ յուրաքանչյուր անգամ տվյալ երկրից գերեվարված բնակչության թիվը միջինը կազմել է մոտ 5 հազ. մարդ: Ըստ այդմ, հնարավոր է խոսել աղբյուրների չհայտնած՝ ևս մոտ 200 հազ. գերիների մասին[810]: Հետևաբար, Լեռնաշխարհի ներքին շրջաններից գերեվարված և վերաբնակեցված բնակչության թիվը կարող էր կազմել մինչև 700 հազ. մարդ, իսկ աղբյուրների տվյալները ընդհանուր առմամբ կվերաբերեին նվազագույն հաշվումներով շուրջ 850 հազ. մարդու:

Եթե հաշվի առնենք, որ ուրարտացիները ըստ երևույթին բնաջնջել են զենք կրելու ունակ չափահաս տղամարդկանց, որոնց թիվը կարելի է հաշվել բնակչության 1/5-րդի չափով, ապա կարող ենք նշել, որ ուրարտական տեքստերը վկայում են լեռնաշխարհի՝ մոտ 1 մլն-ի հասնող բնակչության մասին:

Մյուս կողմից, չի կարելի մոտ 2.5 հազ. բնակավայրերի բնակչության թիվը (375-ից 500 հազ.) և գերեվարություններին վերաբերող աղբյուրների թվերը (շուրջ 1 մլն.) մեխանիկորեն գումարել, հաշվի առնելով, որ գերեվարված կամ վերաբնակեցված բնակչության թվի մեջ ներառված են հիմնականում նվաճված և աղբյուրներում հիշատակված երկրների բնակավայրերի բնակչությունը: Սակայն, ելնելով տվյալ երկրի ունեցած բնակչության և այդ երկրից տարված գերիների թվի մոտավոր հարաբերակցությունից (տե՛ս ստորև) կարելի է կարծել, որ Հայկական լեռնաշխարհի՝ Ուրարտուից դուրս ընկած գոտիները կարող էին ունենալ ոչ պակաս, քան 1.2-ից մինչև 1.5 մլն բնակչություն:

---

[809] Էթիունիից տարված կես մլն. բնակչության մասին տե՛ս Աղ. 28-ում տրված բացատրությունը:

[810] Նորասորեստանյան դարաշրջանում ասորեստանցիների կողմից տեղահանված բնակչության քանակության հաշվարկների համար տե՛ս Oded 1979: 19ff.

Ինչ խոսք, ուրարտական ներխուժումների ենթարկված երկրների ողջ բնակչությունը չէ, որ տեղահանվել է և կարելի է ենթադրել, որ զուտ ֆիզիկական կորուստների հետ միասին այդ երկրները կորցրել են իրենց բնակչության 50-75 տոկոսը: Այս առումով, ճիշտ է, ուղղակի վկայություններ մենք թեև չունենք, բայց որպես օրինակ կարող ենք դիտարկել աղբյուրներում լավ վկայված մի դրվագի՝ Սինախերիբի երրորդ՝ Ք.ա. 701 թ-ին դեպի Հուդայի թագավորություն ձեռնարկած արշավանքին վերաբերող տվյալները:

Ինչպես հայտնի է, իր արձանագրություններում ասորեստանյան արքան հայտնում է Հուդայից 200 հազ. 150 մարդու տեղահանելու մասին[811]: Ք.ա. 8-րդ դ-ի վերջերի համար Հուդայի բնակչության թիվը, հնագիտական իրավիճակից ելնելով, գնահատվում է 110-250 հազ-ի սահմաններում[812]: Եթե որպես հիմք վերցնենք երկրորդ՝ առավեագույն թիվը և հավատանք ասորեստանյան աղբյուրների տվյալներին, ապա ստացվում է, որ Հուդայի թագավորությունը կորցրել է իր բնակչության մոտ 80 տոկոսը: Ընդ որում, ինչպես վերը նշեցինք, այստեղ պետք է հաշվի առնել նաև արշավանքի ժամանակ բնակչության կրած ֆիզիկական կորուստները: Սինախերիբի զորքերի կողմից հրեական Լակիշ քաղաքի գրավման ժամանակ զոհված բնակչության թիվը, դատելով այստեղ բացված չորս զանգվածային թաղումներից, հասել է առնվազն 1.5 հազ մարդու, ներառյալ՝ կանայք և երեխաներ: Դա կարող էր կազմել քաղաքի ողջ բնակչության 75-90 տոկոսը[813], հաշվի առնելով, որ քաղաքը զբաղեցրել է մոտ 8 հա տարածք, իսկ այստեղ բնակչության խտությունը մեկ հեկտարի համար ենթադրվում է 200-250 մարդու սահմաններում[814]: Այդ թվաքանակները հավելելու դեպքում մենք կունենանք Սինախերիբի արշավանքի ժամանակ Հուդայի բնակչության կրած կորուստների շատ ավելի մեծ տոկոս:

Այստեղ կարող ենք նշել, որ ուրարտական տեքստերում նույնպես եզակի չեն ավերածություններից և գերեվարություններից բացի բնակչությանը զանգվածաբար ոչնչացնելու մասին տեղեկությունները: Օրինակ, «Խորխորյան տարեգրության» մեջ նշվում է Բի[…]խաուծունի քաղաքն իր բնակիչներով հանդերձ այրելու մասին ($^{URU}$*bi-*[*ẖa*]*-ú-*[*ṣ/z*]*u-ni-e* URU*-e* $^{LU}$*ta-ar-šú-a-na-ra-ni* GIBÍL*-bi*)[815]: «Սարդուրյան տարեգրության» մեջ, խոսելով Կուլխա երկրի «արքայական քաղաք» Իլդամուշան գրավելու մասին, հատուկ շեշտվում է տեղի բնակիչներին այրելու և քաղաքի կայազորը ոչնչացնելու

[811] Grayson, Novotny 2012, No. 4 (51), 16 (Col. iv 3); etc.
[812] Zorn 2014: 91.
[813] Zorn 2014: 83ff.
[814] Zorn 1994: 33f.
[815] КУКН, 173 II$_{44-45}$; CTU I, A 8-3 II$_{44-45}$.

փաստը ($^{URU}$<*il*>-*da-mu-šá-ni* URU MAN-*nu-si* ..... *gu-nu-šá-*[*a ḫ*]*a-ú-bi* UN$^{MEŠ}$-*ra-ni* GIBÍL-*bi* $^{LÚ}$*ir-di* .....$^{KUR}$*qul-ḫa-i* ..... *za-aš-gu-bi*)[816]: Ուշկիանի և Բամնի (՞)[817] լեռների վրա ապաստանած բնակչությանը ոչնչացնելու մասին է նշվում տարեգրության մեկ այլ հատվածում[818]:

Ք.ա. մոտ 800 թ-ին ուրարտական զորքերի կողմից Հասանլուի IVB շերտի պալատական համալիրի նվաճման ժամանակ զոհվածների թիվը կազմում էր ոչ պակաս, քան 250 մարդ[819], և կարելի է նշել, որ նվաճողները կոտորել են Հասանլուի ողջ բնաչկությանը, ներառյալ՝ մեծաթիվ կանանց և երեխաների (նկ. Ա-18/1-2)[820]:

Ինչ խոսք, նշված օրինակները ցույց են տալիս, որ ուրարտական արքաների արշավանքների ժամանակ տեղ են գտել նաև բնակչության զանգվածային կոտորածների դեպքեր: Դրան պետք է հավելել նաև այն փաստը, որ բնակչության ֆիզիկական կորուստներն աճելու էին գերեվարությունների ժամանակ, հատկապես, եթե նկատի ունենանք, որ ուրարտացիները, ինչպես երևում է, փորձել են ձերբազատվել բնակչության արական՝ զենք կրելու ունակ չափահաս զանգվածից:

Մյուս կողմից, նշված օրինակները հազիվ թե կարող են հիմք հանդիսանալ ենթադրելու, որ ուրարտական զորքերն ամենուրեք իրականացրել են բնակչության զանգվածային կոտորածներ: Մենք չենք կարծում նաև, որ գերեվարվածների «զտման» ժամանակ կարող էր ոչնչացվել նրանց մինչև հիսուն տոկոսը[821]: Ուրարտական պետությանն անհրաժեշտ էր աշխատող ուժ, որը ստացվում էր գերազանցապես գերեվարությունների հաշվին: Այս առումով կարելի է առաջարկել միայն, որ արշավանքների ենթարկված երկրների բնակչության 50-75 տոկոս ենթադրվող կորուստների 10-15 տոկոսը կամ այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր հինգից մեկը կարող էր կազմել զուտ ֆիզիկական կորուստների թիվը, մնացյալ 40-60 տոկոսը՝ գերեվարվածների: Այս հաշվարկի համար հիմք ենք վերցնում հինգ հոգանոց ընտանիքի մեկ (չափահաս/զենք կրելու ունակ) անդամի սպանությունը նվաճողների կողմից: Որպես զուգահեռ մենք այստեղ նույնպես կարող ենք դիմել հինարևելյան աղբյուրներին: Մասնավորապես, խեթական տեքստերից մեկում նշվում է արքայի հրամանը՝ դիմադրություն ցուցաբերած քաղաքի բոլոր ռազմիկներին սպանելու և

[816] КУКН, 241D$_{x+6-12}$; CTU I, A 9-3 III$_{4'-10'}$.
[817] Այսպես է թարգմանված տեղանունը նախորդ հրատարակություններում: Տե՛ս КУКН, 241F$_{27}$: Միրյո Սալվինին ընթերցում է $^{KUR}$*ḫa-am-ni*: (CTU I, A 9-3 VI$_{27}$)
[818] КУКН, 241F$_{26-28}$; CTU I, A 9-3 VI$_{26-28}$.
[819] Հմմտ. Danti 2013b: 354, ուր նշված է 285 մարդու մասին:
[820] Muscarella 1989: 32ff.; նույնի՝ 2006b: 77; Danti 2013a: 440, Pl. 3.3a; 457, Pl. 3.20.
[821] Հմմտ. Дьяконов 1983г: 57.

մնացյալ գերիներին արքայի մոտ ուղարկելու մասին[822]: Ասորեստանյան արքա Աշշուր-նածիր-ապալ II-ի տեքստերից մեկում խոսվում է 2.8 հազ. ռազմիկների սպանելու և 14.6 հազ. մարդու գերեվարելու մասին[823]: Սպանվածների թիվը կազմում է ընդհանուրի մոտ 16 տոկոսը և կարելի է մտածել, որ այս դեպքում ևս ասորեստանցիները կոտորել են բոլոր զենք կրելու ունակ տղամարդկանց՝ «ռազմիկներ»-ին (GAZ.MEŠ):

Ինչ վերաբերում է բուն Ուրարտուին, այստեղ մենք խնդիրներ ունենք պայմանավորված աղբյուրների սակավությամբ: Ինչպես նշվեց՝ ուրարտական տեքստերի տվյալները հիմնականում վերաբերում են Ուրարտուից դուրս ընկած և մասամբ միայն՝ ուրարտական տարածքներին միացված երկրներին: Մյուս կողմից, մենք ունենք Ուրարտուի մերձուրմյան տիրույթների բնակավայրերի բավական հստակ պատկերը շնորհիվ ասորեստանյան աղբյուրների: Դրանք հայտնում են մերձուրմյան տարածքներում ընկած 63 կամ 67 ամրոցների և քաղաքների, ինչպես նաև՝ 430 «շրջակա բնակավայրեր»-ի մասին: Հնագիտորեն վկայված ուրարտական ամրոցների թիվն այդ գոտում հասնում է 64-ի, ինչը գրեթե ճշգրիտ համապատասխանում է ասորեստանյան տվյալներին և կարող է հուշել, որ իրականությանը մոտ է լինելու նաև բնակավայրերի թիվը:

Հետևաբար, կարելի է կարծել, որ Ուրմիայի ավազանում ընկած և մոտ 500-ի հասնող ուրարտական բնակավայրերի բնակչության ընդհանուր թիվը, յուրաքանչյուրի համար միջինը 150-200 մարդ հաշվարկի դեպքում կկազմի 75-100 հազ. մարդ:

Եթե ընդունենք, որ մեկ ամրոցին միջին հաշվով բաժին է ընկնում 5 բնակավայր, ապա նման հաշվարկի դեպքում՝ միայն Վանա լճի ավազանի համար կունենանք առնվազն 500 բնակավայր. այստեղ ընկած ամրոցների թիվն անցնում է 100-ը: Տերության մյուս գոտիներում ընկած մնացյալ 130 ամրոցների համար կարելի է ենթադրել ևս մոտ 650 բնակավայր: Այսպիսով, ուրարտական անմիջական վերահսկողության տակ գտնվող կամ այլ կերպ ասած՝ պետության բուն տարածքներում կարելի է ենթադրել ոչ պակաս, քան 1600 բնակավայրերի գոյություն, չհաշված՝ ուրարտական ամրոցները (շուրջ 300):

Հետևաբար, կարելի է զուտ որպես աշխատանքային տարբերակ ենթադրել, որ բուն ուրարտական և ուրարտական գերիշխանությանը ենթակա համայնքների տարածքում ընկած ամրոցների և բնակավայրերի թիվը կարող էր հասնել ընդհուպ մինչև 2 հազ-ի: Ուրարտական բնակավայրերի համար առաջարկված 150-200

[822] Hoffner 2002: 63
[823] Grayson 1996: 17 (A.0.102.2: ii 10b-12a).

մարդ/բնակատեղի միջին հաշվարկի դեպքում կարող ենք խոսել 300-400 հազ-ի հասնող բնակչության մասին: Այդ բնակչության մի զգալի, եթե ոչ՝ մեծ մասը ձևավորվելու էր գերեվարությունների հաշվին: Ըստ այդմ, Ուրարտուի համար կարելի է ենթադրել մոտ 1 մլն, իսկ Հայկական լեռնաշխարհի ողջ բնակչության համար՝ մոտ 1.5-1.75 մլն մարդ: Համենայն դեպս, վեր հանվող թվերը հուշում են այլ պատկեր, քան Ուրարտուի բնակչության համար նախկինում ենթադրված 6-7 մլն թիվն է:

## 1.4. Բնակավայրերի տիպերն Ուրարտուում

### 1.4.1. Քաղաքը (պալատը/տաճարը) և քաղաքաշինությունն Ուրարտուում

#### 1.4.1.1. «Քաղաք» հասկացությունն Ուրարտուում

Սեպագիր աղբյուրները հայտնում են Ուրարտուում տարբեր տիպի բնակավայրերի գոյության մասին: Դրանց մի մասը լինելու էին խոշոր բնակավայրեր, հատկապես, երբ խոսքը վերաբերում է «արքայական» և «ամրացված» քաղաքներին կամ ամրոցներին: Մյուս կողմից, ուրարտական «ամրոցային/պալատական քաղաքակրթություն»-ը, կարելի է նշել, չէր ենթադրելու այնպիսի քաղաքների և քաղաքային կյանքի գոյություն, ինչպիսիք տեսնում ենք, օրինակ, Միջագետքում կամ Սիրիայում: Ընդհակառակը՝ Ուրարտուում «քաղաք»-ը, ինչպես մեզ է թվում, փաստացի նույնանում էր ամրացված պալատ-տաճարին:

Մասնավորապես՝ Բաստամի հիմնադրման արձանագրության մեջ «Ռուսայի փոքր քաղաք»-ը անվանվում է É.BÁRA՝ «սրբարան/տաճար»[824]: Բացի դա, Ռուսախինիլի Կիլբանիկային, որը հանդիսանում էր ուրարտական վարչական խոշոր կենտրոններից մեկը՝ բազմահազար անձնակազմով, նույնպես հանդես է գալիս որպես É.BÁRA[825]: Ընդ որում, այդ գաղափարագրի կիրառության դեպքերը հուշում են, որ որպես É.BÁRA կարող էր հանդես գալ ուրարտական յուրաքանչյուր խոշոր կենտրոն, ուր կար «սուսի»-տաճար (տե՛ս ստորև):

Ուրարտուում «քաղաք»-ի կառուցապատումն իրականացվում էր գերիշխող կառույցի՝ «սուսի»-տաճարի շուրջը: Տաճարը շրջապատում էին հանդիսությունների մեկ կամ մի քանի սրահներ և բազմաթիվ օժանդակ կառույցներ, սահմանափակ տարածք էին զբաղեցնում բնակելի սենյակները: Տարածքի մնացյալ մասը զբաղեցնում էին զորանոցները, պետական արհեստանոցները, ընդարձակ մառանները, ամբարները և պահեստները: Կարծում ենք, որ այս ողջ համալիրն էր, որ անվանվում էր É.BÁRA:

[824] КУКН, 419$_{1-2}$; CTU I, A 12-7$_{1-2}$.
[825] КУКН, 412 лиц. стор. $_{6}$; CTU IV, CT Tk-1$_{6}$.

Որպես կանոն՝ այն շրջապատվում էր հզոր պարիսպներով և վերածվում ամրոցի՝ É.GAL-ի[826]: Ըստ այդմ, մեզ արդարացված է թվում É.GAL-ի համար «(ամրացված) պալատ-տաճար» թարգմանությունը, հատկապես՝ վերը նշված օրինակների դեպքում:

«(Ամրացված) պալատ-տաճար»-ը զբաղեցնում էր սահմանափակ տարածք՝ սովորաբար 2-4 հա, եզակի դեպքերում՝ հասնում 12 հա-ի: Իրեն սպասարկող «արտաքին քաղաք»-ի կամ կից բնակավայրի հետ միասին «(ամրացված) պալատ-տաճար»-ը կազմում էր ուրարտական «քաղաք»-ը: Այլ կերպ ասած՝ այն É.BÁRA-ի («պալատ-տաճար»), É.GAL-ի («ամրոց») և URU-ի («քաղաք») ամբողջությունն էր: Հենց այսպես է ներկայանում Ք.ա. 7-րդ դ-ի ուրարտական խոշոր կենտրոններից մեկը՝ Այանցը: Այդ քաղաքի հիմնադրման արձանագրություններում միաժամանակ նշվում է թե «պալատ-տաճար», թե «ամրոց», և թե «քաղաք» կառուցելու մասին.

… *ieše ini* É.BÁRA *šidištubi eïa* É.GAL *badusie šidištubi* … URU *šuḫi ištini šatubi* … *terubi tini* $^{m}$*rusaḫinili* $^{KUR}$*eidurukai* «*…ես այս տաճարը կառուցեցի, նաև ամրոց փառահեղ կառուցեցի, … քաղաք նոր այստեղ գցեցի, … դրեցի անունը Ռուսախինիլի էիդուրուկայի*»[827]:

Ուրարտական «քաղաք»-ը կազմող բացադրիչների այս համադրությունն իր արմատներով հանգում էր հյուսիս-միջագետքյան – խուրրիական քաղաքաշինական ավանդույթին: Այդ շրջանի քաղաքները ևս իրենցից ներկայացնում էին «ստորին քաղաք»-ի (աքք. *adaššu*) և միջնաբերդի (աքք. *ki/erḫu*) ամբողջություն[828]:

Ուրարտուում «քաղաք»-ը պետության գլխավոր հենարանն էր, հանդիսանում էր ռազմավարչական-կրոնական և տնտեսական կենտրոն, ուր գտնվում էին պաշտամունքային գլխավոր կառույցները և պետական պահուստները: Ուրարտական «քաղաք»-ի կենտրոնական կառույցը՝ «պալատ-տաճարը»-ը, աչքի էր ընկնում մոնումենտալ ճարտարապետությամբ, որպես պարտադիր բաղադրիչ՝ ուներ «սուսի»-տաճար, «պալատական» տիպի կառույցներ, այստեղ էր գործում ուրարտական վարչակազմը և որպես կանոն՝ առօրյա գրագրության բոլոր օրինակները հայտնաբերվել են նման կենտրոններից:

«Քաղաք»-ն էր համակարգում տվյալ գոտու տնտեսական կյանքը՝ միաժամանակ իրականացնելով պետության հիմնական գործառույթներից մեկը՝ պետական միջոցների կենտրոնացումն ու վերաբաշխումը (տե՛ս 3.3.1.4.1.): Դրանով

[826] Հմմտ., օրինակ, Այանցի հիմնադրման արձանագրությունը՝ *ieše e'a* É.BÁRA *e'a* É.GAL *badusi šidištubi* (CTU I, A 12-9$_{5-6}$),
[827] CTU I, A 12-1 VI$_{4-9}$.
[828] Oppenheim 1964: 131f.

պայմանավորված՝ ուրարտական քաղաքն ուներ սահմանափակ բնակչություն, որի թիվն ուղիղ համեմատական էր տվյալ կենտրոնի իրականացրած գործառույթների հետ, իսկ «բնակչություն»-ը ծառայում կամ սպասարկում էր «քաղաք»-ը[829]:

### 1.4.2. Բնակավայրերի տիպերը և դասակարգումն ըստ ուրարտական սեպագիր աղբյուրների

#### 1.4.2.1. **URU LUGÁL-*nusi* (*agununi*) – «(ամրացված) արքայական քաղաք»**

Ուրարտական տեքստերում հիշատակված բնակավայրերից մոտ երկու տասնյակը բնորոշվում են իբրև «արքայական քաղաք»: Պարզ է, որ տեքստերը նկատի ունեն տվյալ երկրի մայրաքաղաքը կամ որևէ արքայանիստ քաղաք: Որոշ դեպքերում՝ միևնույն երկրի հետ կապված հիշատակվում են մի քանի «արքայական քաղաք»-ներ: Մասնավորապես՝ դեպի Կումախա իրագործված արշավանքի նկարագրության մեջ հիշատակվում են երեք արքայական քաղաքներ ($^{URU}$*uitani* URU LUGÁL-*nusi*, $^{URU}$*ḫalpani* URU LUGÁL-*nusi*, $^{URU}$*paralani* URU LUGÁL-*nusi*)[830]: Որպես կանոն՝ բոլոր «արքայական քաղաք»-ներն էլ հիշատակվում են անվանապես: Բացի դա, մի շարք դեպքերում տեքստերը նշում են քաղաքների «ամրացված» լինելու մասին (տե՛ս Աղ. 10):

Ուրարտական աղբյուրներից հայտնի «արքայական քաղաք»-ներից մի քանիսը հնագիտորեն նույնականացվել են: Դրանցից մեկը Լիբլիունին է՝ Պուլուադի երկրի մայրաքաղաքը, որի նվաճման մասին է խոսվում Սարդուրի Արգիշթորդու արձանագրություններում[831]: Լիբլիունին գտնվում է հյուսիս-արևմտյան Իրանում՝ Ահարի հովտում, Վարժականից 5 կմ դեպի արևելք, և նույնանում է Սեկինդելի հետ: Հին ամրոցը զբաղեցնում է ավելի քան 3 հա տարածք (228 × 138 մ), որոշ հատվածներում ունի կրկնակի պարիսպներ, գաղտնուղի, պարիսպներից ներս փաստագրվել են բնակելի բազմասենյակ համալիրների հետքեր (նկ. Ա-19/1)[832]: Մեկ այլ կենտրոն էր Էրիկուախիի մայրաքաղաք Լուխիունին: Այն ուներ միջնաբերդ և պարիսպներով շրջապատված արտաքին քաղաք (նկ. Ա-19/2)[833]: Մյուսը Մելիդն է, որը հիշատակվում է թե Արգիշթի Մենուայորդու, և թե Սարդուրի Արգիշթորդու տեքստերում[834]: Թեև ուրարտական տեքստերում Մելիդը տարօրինակ կերպով հանդես չի գալիս որպես «արքայական քաղաք», սակայն, Մելիդի մայրաքաղաքային նշանակությունը

[829] Տե՛ս և հմմտ. նաև Biscione 2003: 183f. and n. 10. Հայկական լեռնաշխարհում «քաղաք» հասկացության համար տե՛ս և հմմտ. նաև Smith 1998: 74, n. 3; նույնի՝ 2003: 241ff.; Բոբոխյան 2014, էջ 40-75:
[830] ԿՈՒՀ, 241 $E_{48-52}$; CTU I, A 9-3 $IV_{48'-52'}$.
[831] ԿՈՒՀ, 241 $E_{8-13}$; CTU I, A 9-3 $IV_{8'-13'}$.
[832] Kleiss 1968: 43f., Abb. 32; Kleiss, Kroll 1980: 21ff., Abb. 3, 5-7, Taf. 5.
[833] Ամփոփ տե՛ս Ozfirat 2014c: 32ff., Res. 19-21.
[834] CTU II: 315.

կասկածից դուրս է[835]: Երկրագործական բարեբեր գոտում ընկած քաղաքը զբաղեցնում էր համեմատաբար համեստ տարածք՝ 5 հա, բայց շրջապատված էր կրկնակի պարիսպներով, կար պալատական համալիր և բնակելի կառույցներ[836]: Նման «արքայական քաղաք» կարելի է համարել Նազրվանի (Ղազարավանի) վաղերկաթեդարյան բնակավայրը: Այն գտնվում է Աշտարակից մոտ 7 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Բնակավայրը զբաղեցնում է մոտ 40 հա տարածք, որից միջնաբերդը՝ 1.5 հա: Շրջապատված է աշտարակավոր հզոր պարիսպներով, պարսպապատ են նաև միջնաբերդից դուրս ընկած «քաղաքային» թաղամասերի մի մասը: Միջնաբերդում առանձնանում են մոնումենտալ ճարտարապետությամբ երկու կառույցի մնացորդներ, որոնք, հավանաբար, պալատական տիպի համալիրի մաս են կազմել[837]:

Ինչպես երևում է, «արքայական քաղաք» բնորոշումը տրվում էր միայն այն դեպքում, երբ տվյալ քաղաքը հանդիսանում էր արքայի/առաջնորդի նստավայր, ուր կար պալատ կամ պալատական տիպի կառույց՝ անկախ տվյալ քաղաքի ընդգրկած տարածքից, ամրացվածության աստիճանից և բնակչության թվաքանակից:

#### 1.4.2.2. **URU$^{(MEŠ)}$ *agununi* – «ամրացված քաղաք»-ներ**

Ուրարտական տեքստերում բնակավայրերից մի քանիսը հանդես են գալիս «քաղաք, որ ամրացված էր» բնորոշմամբ: Դրանք, ինչպես «արքայական քաղաք»-ները, հանդես են գալիս անվանապես, սակայն, միաժամանակ, չեն բնորոշվում իբրև «արքայական» (Աղ. 10): Հնարավոր է, որ նման դեպքերում գործ ունենք ընդգծված միջնաբերդից զուրկ, սակայն, պարսպապատ, ամրացված խոշոր բնակավայրի հետ: Նման «քաղաքներ»-ի օրինակ կարող են հանդիսանալ Աղթամիրի և Լանջաղբյուրի ամրոցները[838]: Ցավոք, անվանապես վկայված միակ «ամրացված քաղաք»-ը հիշատակող տեքստը պակասավոր է, և առայժմ հնարավոր չէ քաղաքը հնագիտորեն տեղայնացնել:

#### 1.4.2.3. **(1) É.GAL$^{(MEŠ)}$– «ամրոց»-ներ**

É.GAL շումերագիրը նշանակում է «մեծ տուն»: Ուրարտագիտական գրականության մեջ այն սովորաբար թարգմանվում է որպես «ամրոց»՝ հաշվի առնելով այն փաստը, որ ուրարտական տեքստերում որպես կանոն նշվում է É.GAL-ները «մարտում նվաճելու» և «քանդելու» մասին, ինչից բխում է դրանց ամրացված և

[835] Hawkins 1993: 37f.
[836] Frangipane 1993: 48ff.
[837] Արեշյան և այլք 1977, էջ 82; Арешян 1978: 101 сл.; Արեշյան, Ղաֆադարյան 1996, էջ 70-71:
[838] Արեշյան, Ղաֆադարյան 1996, էջ 84, Աղ. 14Ը-Թ:

քարաշեն լինելը[839]: Ի լրումն՝ ուրարտական տեքստերն ամրոցների համար նշում են բավական սահմանափակ թվաքանակներ՝ 1-ից մինչև 39 ամրոց՝ այս կամ այն երկրի համար (Աղ. 10): Երկու դեպքում է միայն, որ աղբյուրները հայտնում են 96 և 105 ամրոցների մասին, ընդ որում, հետաքրքիր է, որ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է Դիաուխիին: Կարելի է կարծել, որ տվյալ դեպքում É.GAL ասելով տեքստերն իրոք նկատի են ունեցել «մեծ տներ»-ը՝ ամրացված քարաշեն աշտարակներ կամ աշտարակավոր կառույցներ, ինչպիսիք հայտնի են հատկապես Դիաուխիի տարածքից (Ինջեդերե, Դերինդերե, Չաթալդերե, Զիյարեթ Քալեսի, Քյորօղլու Քալեսի ևն): Այդ կառույցներն իրենցից ներկայացրել են կիկլոպյան շարվածքով հաստաբեստ պատերով, 8.3 × 9 մ-ից մինչև 16 × 25 մ չափեր ունեցող աշտարակներ, որոնք իրենց հերթին շրջապատված էին արտաքին մեկ այլ պատով: Նման կառույցները մասնագիտական գրականության մեջ հայտնի են որպես «հսկայի/դևի տուն» (նկ. Ա-20/1-2)[840]: Ամենայն հավանականությամբ՝ ուրարտական տեքստերում նշվող Դիաուխիի ամրոցների մեծ թիվը պայմանավորված էր հենց նման «տներ»-ի գոյությամբ:

#### 1.4.2.4. **(2) É.GAL$^{(MEŠ)}$ *agununi* – «(ամրացված) ամրոց»-ներ**

Ուրարտական տեքստերում երբեմն É.GAL-ները հանդես են գալիս լրացուցիչ՝ *agununi manu*՝ «(որ) ամրացված էին» բնորոշումով: Կարելի է ենթադրել, որ նման դեպքերում գործ ունենք այն ամրոցների հետ, որոնք ունեցել են պարիսպների մի քանի շարք և միաժամանակ նաև միջնաբերդ: Այս առումով հետաքրքիր է, որ Սարդուրի Արգիշթորդու կողմից դեպի Վելիկուխի երկիր (Գավառագետի հովիտ, Սևանա լճի ավազան) ձեռնարկված արշավանքի նկարագրության մեջ միաժամանակ նշվում է 22 «ամրոցներ, որ ամրացված էին» նվաճելու և ավերելու մասին: Ամրացված 20 այլ ամրոցներ նվաճելու և ավերելու մասին է նշվում տարեգրության շարունակության մեջ, ընդ որում, խոսքը դարձյալ վերաբերում է Սևանա լճի ավազանում ընկած երկրներին (Արկուկի, Ադախունի, Լուիբրունի, Էշումուա ևն)[841]: Դատելով այդ տարածքի հնագիտական պատկերից, ուր վկայված վաղերկաթեդարյան ամրոցներից գրեթե բոլորն ունեն միջնաբերդ և արտաքին պարիսպ, որը հաճախ իր մեջ է ընդգրկում նաև «քաղաքային բնակատեղի»-ն (Բերդի գլուխ (Գավառ), Հայրիվանք, Պառավի վանք,

---

[839] Քննարկումների համար տե՛ս և հմմտ. նաև Friedrich 1931: 84, Anm. 1; Гвахария 1959: 95 сл.; Меликишвили 1960: 392; Оганесян 1960: 291 сл.; Дьяконов 1963: 55 и прим. 47; Арешян 1974: 208 сл., прим. 44; Zimansky 1985: 62ff.; Hmayakyan 2002: 279 and n. 10; Areshian 2010: 22f.

[840] Մանրամասն տե՛ս Başgelen 1988: 14ff., Res. 1-2, 5-6; Köroğlu 1997: 376f., Res. 9, Çiz. 3; նույնի՝ 2001: 733ff., Res. 1, 8-17; նույնի՝ 2005: 103f., Figs. 5, 7.

[841] КУКН, 241 $F_{16-25}$; CTU I, A 9-3 $VI_{16-25}$.

Ջաղացի դար, Սանգար, Բերդի գլուխ (Դաշտաձոր), Ծովինար ևն)[842], ապա կարելի է կարծել, որ նման ամրոցներն են ուրարտական տեքստերում հանդես գալիս «ամրոց, որ ամրացված էր» բնորոշումով[843]: Դրանք հիմնականում կառուցված են հրվանդանների վրա և հայտնի են Հայաստանի այլ վայրերից նույնպես[844]:

1.4.2.5. **(3) É.GAL – «պալատ-տաճար»**

Ուրարտական մի քանի խոշոր կենտրոններ, ինչպիսիք էին, օրինակ, Մենուախինիլին[845], Էրեբունին[846] և Արգիշթիխինիլին[847], այդ քաղաքների հիմնադրման արձանագրություններում անվանվում են É.GAL, ինչը թարգմանվում է որպես «ամրոց»: Հետաքրքիր է, որ համաժամանակյա ասորեստանյան դպրության մեջ É.GAL-ը (աքք. *ekalli*) չէր օգտագործվում այդ իմաստով, այլ նշանակում էր «պալատ» կամ «արքունիք»[848]: Աքքադական շրջանում նույնպես É.GAL-ը նշանակում էր կամ «պալատ», կամ «տաճար»[849]: Կարծում ենք, որ ուրարտական դպրության մեջ նույնպես É.GAL-ն ունեցել է նաև «պալատ», «տաճար» կամ «արքունիք» նշանակությունը, և ճիշտ չէ այս շումերագրի բոլոր կիրառումների համար այն միանշանակ թարգմանել իբրև «ամրոց»[850]:

Ենթադրվում է, որ É.GAL-ի ուրարտերեն համարժեքը կարող է լինել *burganani*-ն, ինչի մասին են թերևս հուշում նաև É.GAL-*ni*, É.GAL-*ani* գրելաձևերը (տե՛ս նաև ստորև)[851]: Ըստ այդմ, *burganani* բառի համար առաջարկվել է «պալատ», «դղյակ» կամ «ամրոց» թարգմանությունը: Վերջին երկու նշանակությունները չեն արդարացնում իրենց, քանի որ բազմաթիվ տեքստերում É.GAL-ը և *burganani*-ն հանդիպում են միևնույն տեքստում կողք-կողքի՝ նորակառույցները թվարկելիս[852]: Մյուս կողմից, հնարավոր է թվում, որ *burganani*-ն ունենա «պալատ» կամ «աշտարակ» (իմա՝ «ապարանք») նշանակությունը, և É.GAL-*ni*, É.GAL-*ani* գրելաձևերը վերաբերեն ոչ թե ամրոցի, այլ հենց «ապարանք»-ի[853]: Ինչ վերաբերում է Խորխորյան տարեգրության հատվածներից մեկում հանդիպող É.GAL-*ria* ընթերցմանը, որի հնչյունագիրն է

---

[842] Միքայելյան 1968, էջ 18-19, 21-22, 25, 27, 33-37:
[843] Տե՛ս նաև Арешян 1974: 209 и прим. 47; նույնի՝ 1978: 93 сл.; Հմայակյան, Սանամյան 2002, էջ 35:
[844] Արեշյան, Ղաֆադարյան 1996, էջ 84-86, Աղ. 16ԺԱ-ԺԶ:
[845] КУКН, $87_{4-7}$; CTU I, A $5\text{-}26_{4-7}$.
[846] КУКН, 197-201; CTU I, A 8-16, 8-17A, 8-17B, 8-18, 8-19, 8-20.
[847] КУКН, $188_{1-5}$; CTU I, A $8\text{-}16_{1-5}$.
[848] Machinist 1982: 20.
[849] McCormick 2002: 6, n. 1.
[850] Հմմտ. նաև Оганесян 1961: 26 сл.
[851] КУКН, с. 441.
[852] Հմմտ., օրինակ, КУКН, $172_{8-12}$; CTU I, A 5-28 $Ro_{8-12}$.
[853] Տե՛ս նաև КУКН, с. 414.

համարվում ուրարտական $^{É}$*ṭuluria*-ն[854], ապա այդ ընթերցումը վստահելի չէ[855] և É.GAL = $^{É}$*ṭuluria* համադրությունը պետք է թողնել մի կողմ:

Այսպիսով, կարող ենք նշել, որ É.GAL շումերոգրամն ուրարտական տեքստերում կիրառվել է մի քանի նշանակությամբ՝ որպես «(ամրացված) տուն», «ամրոց», «քաղաքամրոց», «աշտարակ (ապարանք)» և որպես «(ամրացված) պալատ-տաճար»: Արձանագրությունների բովանդակությունը, ինչպես նաև դրանց հայտնաբերման կոնտեքստը հիմնականում հուշում են գաղափարագրի կոնկրետ նշանակությունը:

1.4.2.6. ***qarbi agununi* – «ամրացված ժայռ»**

Ուրարտական տեսքտերում երկու դեպքում հանդիպում ենք «ժայռ, որ ամրացված էր» բնորոշմանը[856]: Կարելի է մտածել, որ գրիչը նկատի է ունեցել բնականից պաշտպանված ինչ-որ ամրություն, ուր հարձակումների ժամանակ ապաստան էր գտնում բնակչությունը՝ իր հոտերի հետ միասին[857]: Նման ապաստարանի նկարագրության կարելի է հանդիպել Քսենոփոնի մոտ՝ տաոխների երկրով անցնելու ժամանակ[858]:

1.4.2.7. **URU/*patari*$^{(MEŠ)}$ – «քաղաք»-ներ**

URU գաղափարագիրը, որը լայնորեն կիրառվում էր նաև ուրարտական տեքստերում, կարող էր նշանակել թե խոշոր քաղաք, ինչպիսին էր, օրինակ, Տուշպան ($^{URU}$*ṭušpa* URU/*patari*), և թե ցանկացած գյուղատիպ բնակավայր, որը կարող էր կազմված լինել ընդամենը մի քանի տնից[859]:

Որպես կանոն՝ «քաղաք» ասելով ուրարտական տեքստերը նկատի ունեին հենց նման՝ գյուղատիպ, ամրություններից զուրկ բնակավայրերը: Մի շարք դեպքերում նույնպես գյուղատիպ բնակավայր կամ գյուղ էր նկատի առնվում, երբ տեքստերում նշվում էր արքաների կողմից «քաղաք» կառուցելու մասին: Պատահական չէ, որ դրանց մի մասի կառուցումը զուգորդվում է ջրանցք անցկացնելու մասին տեղեկատվությամբ[860]: Նման «քաղաքներ» կառուցելու մասին է նշվում, օրինակ, Արգիշթի Ռուսայորդու Հաղիի արձանագրության մեջ՝ միաժամանակ հայտնելով ջրամբար («ծով») կառուցելու մասին[861]:

---

[854] Ղափանցյան 1940, էջ 67; КУКН, с. 414 сл., 470.
[855] Տե՛ս CTU I, A 8-3 $V_{75}$, ինչպես նաև CTU III, p. 216 (Fig A 8-9. a լուսանկարը):
[856] КУКН, 173 $I_{26}$, 173 $III_{62}$; CTU I, A 8-3 $I_{26}$, A 8-3 $III_{62}$.
[857] Հմմտ. Հմայակյան, Սանամյան 2002, էջ 35; Hmayakyan 2002: 279.
[858] Քսենոփոն, Անաբասիս, 4: VII (1-2).
[859] Меликишвили 1954: 334 сл.; Дьяконов 1973б: 33; Zimansky 1985: 65f.; Hmayakyan 2002: 278f.
[860] КУКН, $75_{39-31}$, $421_{13-15}$; CTU I, A 5-17 $Ro_{39-31}$, A 12-$8_{13-15}$.
[861] КУКН, 406 лиц. стор.$_{44-45}$, обор. стор.$_{x+2}$; CTU I, A 11-2 $Ro_{44-46}$, $Vo_{1-2}$.

Անասնապահ համայնքների ժամանակավոր կամ վրանային ճամբարները լեռնային գոտիներում նույնպես կարող էին հանդես գալ իբրև «քաղաք»[862]: Պատահական չէ, որ ամենաշատ թվով «քաղաքներ» ուրարտական տեքստերը նշում են հենց անասնապահական մեծ հնարավորություններ ունեցող երկրների՝ Ուրմեի (Մշո դաշտ) և Դիաուխիի համար (Տայք)՝ համապատասխանաբար 400 և 453 «քաղաք» (տե՛ս Աղ. 10): Նման պատկեր է երևում նաև Ուրմիայի բարեբեր հովտից դուրս ընկած արևմտյան և հարավ-արևմտյան շրջանների համար: Այստեղ բավական մեծ է եղել բնակատեղիների և բնակչության խտությունը, իսկ բնակչությունը գերազանցապես զբաղվել է անասնապահությամբ[863]:

Ուրարտական տեքստերը, նշելով ամրոցները քանդելու և «քաղաքներ»-ը հրդեհելու մասին, երբեմն հաղորդում են նաև թվական կոնկրետ տվյալներ: Այս կամ այն երկում ընկած «քաղաքներ»-ի թիվը, ըստ պահպանված տեքստերի, տատանվել է 23-ից 453-ի միջև: Ուրարտական հանդիսավոր արձանագրություններում դրանք երբևէ հանդես չեն գալիս անվանապես: Բացառություն է կազմում առօրյա գրագրությունը, ուր անվանապես հիշատակված «քաղաքներ»-ի մեծ մասը եղել են սովորական գյուղեր կամ գյուղակներ:

«Քաղաքներ»-ը սովորաբար կենտրոնացած էին որևէ ամրոցի շուրջը և ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում են որպես «շրջակա քաղաքներ» (*ālāni ša limīti*)[864]: Այս կամ այն երկրում հիշատակվող «քաղաքներ»-ի թիվը մշտապես գերազանցում էր տվյալ երկրի ամրոցների թվին: Բաբիլունիի համար այդ հարաբերակցությունը կազմում էր 1 : 7.7, մինչդեռ Պուլուադիի համար այն ամենացածրն էր՝ 1 : 2.6 հարաբերակցությամբ[865]: Միջինը յուրաքանչյուր ամրոցին բաժին էր ընկնում 4-5 «քաղաք»: Ուրարտական տարածքներում նույնպես բնակավայրերի խտությունը տարբեր էր: «Լուվրի աղյուսակ»-ի տվյալներից ելնելով՝ Բարի/Սանգիբութու մարզում այդ հարաբերակցությունը կազմում էր 1 : 6.4[866], Արմարիլիում՝ 1 : 4.3, Այադուում՝ 1 : 2.7, Ուայաիսում՝ 1 : 6.7[867], միջինը՝ 1 : 4.5: Մյուս կողմից, Ուշկայայի համար աղբյուրը նշում է 115 «շրջակա բնակավայրեր»-ի մասին, և այս դեպքում կարելի է մտածել, որ դրանց մեծ մասն անասնապահական սեզոնային

[862] Yakar, Taffet 2001: 101. Տե՛ս և հմմտ. նաև Дьяконов 1973б: 32.
[863] Kleiss, Kroll 1978: 48.
[864] Меликишвили 1954: 335.
[865] Տե՛ս և հմմտ. նաև Арешян 1978: 93 сл.
[866] Եթե Բարի/Սանգիբությունի 146 «շրջակա բնակավայրեր»-ի մեջ ներառենք Թարուհի ու Թարմաքիսայի շուրջն ընկած 30 և Ուլխուի ու Սարդուրիխուրդայի շուրջն ընկած 57 բնակավայրերը: Տե՛ս նաև ստորև 1.4.3.5.:
[867] Հմմտ. Zimansky 1985: 44.

ճամբարներ էին, ինչի մասին է կարծես հուշում նաև «Լուվրի աղյուսակ»-ում պահպանված Ուշկայայի շրջակայքի նկարագրությունը: Ինչ խոսք, նման բնակավայրերը հնագիտորեն հաստատագրել հիմնականում արդեն անհնարին է[868]:

1.4.2.8. **URU.TUR – «փոքր քաղաք»**

Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության մեջ հիշատակվում են բնակավայրեր, որոնք բնորոշվում են իբրև «փոքր քաղաք» (URU.TUR)[869]: Պարզ չէ, թե ինչ է նկատի ունեցել աղբյուրը այդ բնորոշման տակ, առավել ևս, երբ ուրարտական ամենախոշոր քաղաքը՝ Բաստամը, քաղաքի հիմնադրման արձանագրության մեջ նույնպես կոչվում է «փոքր քաղաք»: Մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ խոսքը վերաբերում է գյուղերի, որոնք ինչ-ինչ հանգամանքների պատճառով սկսել են պարսպապատել և վերածել «(ամրացված) փոքր քաղաք»-ի[870]: Հետաքրքիր է, սակայն, որ առայժմ հայտնի բոլոր դեպքերում «փոքր քաղաքներ»-ը կապված են ինչ-որ անձանց հետ: Օրինակ, հիշատակվում է ոմն Պաբիեխինիի հետ կապված բնակավայրը ($^{m}$*pabieḫinini* URU.TUR): Մյուս դեպքում նշվում է Իշպիլիբրիի «տան» հետ կապված ինչ-որ «փոքր քաղաք» (URU.TUR É *išpilipri*) և այլն: Հաշվի առնելով սա, կարելի է կարծել, որ տեքստերը նկատի ունեն այս կամ այն ծառայող «մարի(նի)»-ին տրված և գլխավոր քաղաքի ՝ տվյալ դեպքում Ռուսախինիլի Էիդուրուկայիի շուրջը, նրա երկրագործական տարածքում ցրված «դղյակ»-ամրոցները կամ ամրացված ագարակները: Դրանց շուրջը, ժամանակի ընթացքում ձևավորվում էր բնակավայր՝ կախյալ երկրագործների հաշվին, ինչն էլ, թերևս, թույլ է տվել այդ ագարակներն անվանելու «(փոքր) քաղաք»: Նման երևույթ մեզ հայտնի է Հայաստանի պատմությունից, երբ բազմաթիվ գյուղեր իրենց արմատներով ծագում են ագարակների շուրջը ձևավորված բնակատեղիներից, իսկ բնակչությունը սերում էր ագարակներում աշխատող «մշակներ»-ի խավից[871]:

### 1.4.3. Բնակավայրերի տիպերն Ուրարտուում ըստ «Լուվրի աղյուսակ»-ի

1.4.3.1. ***āl dannūti*** **– «հզոր քաղաք»**

Ենթադրվում է, որ այս արտահայտության տակ ասորեստանցիները նկատի են ունեցել ամրացված բնակավայրերն ընդհանրապես, որոնք թե իրենց գործառույթներով, թե իրենց զբաղեցրած տարածքով և ամրացվածությամբ կարող էին լինել տարբեր[872]: «Լուվրի աղյուսակ»-ը Բարի/Սանգիբութու մարզում հիշատակում է

[868] Stone, Zimansky 2009: 633f.
[869] CTU I, A 12-1 $V_{1-3}$.
[870] Grekyan 2009: 108.
[871] Еремян 1950: 14.
[872] Zimansky 1985: 41ff.

22[873], Արմարիլիում՝ 7[874], Այադուում՝ 30[875], Ուայաիսում՝ 1[876] «հզոր քաղաք(ներ)» (*ālāni*(URU.MEŠ-*ni*) *dannūti*(KAL.MEŠ)), ընդհանուրը՝ 60 «հզոր քաղաք», որոնք բոլորն էլ նշվում են անվանապես: «Լուվրի աղյուսակ»-ը մանրամասն կանգ է առնում դրանցից մեկի՝ Ուլխուի նկարագրության վրա ([URU]*ulḫi* URU *dannūtišu*)[877]: Վերջինս առանձնանում է նրանով, որ քաղաքում գտնվել է արքայական պալատ (É.GAL-*LIM šubat* LUGAL-*ti*[878]), աղբյուրը տեղեկացնում է նաև արքայի անցկացրած ջրանցքի ափին կառուցված մեկ այլ (՞) պալատի մասին (É.GAL *šubat* LUGAL-*ti*[879]), թեև, ամենայն հավանականությամբ, ասորեստանյան դպիրը երկու դեպքում էլ նկատի է ունեցել միևնույն կառույցը: Ուլխուում եղել են նաև ամբարներ և գինու մառաններ, իսկ ողջ համալիրը շրջապատված էր պտղատու այգիներով, դաշտերով և մարգագետիններով, անցկացված էր ոռոգման համակարգ, որի գլխավոր ջրանցքը ասորեստանյան դպիրը համեմատում է Եփրատի հետ[880]:

Ուլխուի մանրամասն նկարագրությունը և նկարագրության բնույթը կարծես հուշում է, որ գործ ունենք տաճարային/պալատական տնտեսության կամ *tamertu*-ի հետ (տե՛ս ստորև 3.3.1.4.), որի կենտրոնն էր Ուլխուն: Վերջինս համադրելի է թվում ուրարտական խոշոր բերդաքաղաքի կամ «(ամրացված) պալատ-տաճար»-ի հետ: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ որպես կանոն ուրարտական բերդաքաղաքը երկրագործական տվյալ գոտու ամենախոշոր կենտրոնն էր և գլխավոր ամրոցը, մինչդեռ Ուլխուն, ինչպես երևում է, թույլ էր պաշտպանված և այն պաշտպանելու համար բիայնական արքան կառուցել էր նաև Սարդուրիխուրդա հզոր ամրոցը: Կարելի է մտածել անգամ, որ Ուլխուն, անկախ իր «հզոր քաղաք» բնորոշումից, ընդհանրապես զուրկ էր ամրություններից[881]: Ինչպես երևում է՝ որպես «հզոր քաղաք» հանդես է գալիս պալատը: Տեքստը ևս տալիս է ոչ թե քաղաքի, այլ պալատի ամրակառույց պատերը կործանելու նկարագրությունը: Ըստ այդմ, հնարավոր է թվում Ուլխուն դիտարկել պարզապես որպես արքայական ապարանք կամ *burganani*՝ իր օժանդակ կառույցներով, պարտեզով և երկրագործական շրջանով (տե՛ս նաև 1.4.3.9.1.2.): Ուլխուի պալատի «հզոր քաղաք» բնորոշումը ըստ երևույթին քարոզչական քայլ էր՝

[873] Mayer 1983: 90ff., 96f. (Z. 214, 233, 269).
[874] Mayer 1983: 96f. (Z. 272).
[875] Որպես հանրագումար տեքստը նշում է 30 ամրոց, թեև անվանապես թվարկված են 29-ը: Տե՛ս Mayer 1983: 96f. (Z. 281-286).
[876] Mayer 1983: 98f. (Z. 299).
[877] Mayer 1983: 90f. (Z. 214).
[878] Mayer 1983: 90f. (Z. 216).
[879] Mayer 1983: 88f. (Z. 211).
[880] Mayer 1983: 88f. (Z. 199-232).
[881] Հմմտ. Zimansky 1985: 42. Տե՛ս և հմմտ. նաև Burney 1981: 148f.

առավել ընդգծելու դրա նվաճումն ու Սարգոնի հանդիսավոր մուտքը Ռուսայի ագարակ-ապարանքը:

Միանգամայն այլ գործառույթ ուներ մեկ այլ «հզոր քաղաք»՝ Ուայահիսը: Վերջինս, մասնավորապես, հանդես է գալիս որպես ուրարտական մարզպետների նստավայր և բանակի խոշոր զորակայան[882]: Ինչ վերաբերում է մնացյալ «հզոր քաղաք»-ներին, ապա դրանց նկարագրությունը հակիրճ է. ընդգծվում է այդ բնակավայրերի ամրացված լինելը հզոր պատերով և խորը խանդակներով, հետաքրքիր է, որ աղբյուրը հայտնում է դրանցում «մեծ պալատներ»-ի (É.GAL.MEŠ *rabbate*), ամբարների և տների գոյության մասին[883]: Վերջիններիս հիշատակությունը վկայում է, որ «հզոր քաղաք»-ներն ունեին «քաղաքային թաղամաս» և խաղաղ բնակչություն: Հետաքրքիր է հատկապես միջնաբերդերի հիշատակությունը (*ki/erḫu*)[884]: Պատահական չէ, որ ասորեստանյան աղբյուրը «հզոր քաղաք»-ներից մեկի՝ Խունդուրի հետ կապված շեշտում է նաև բնակավայրի կրկնապարիսպ լինելը ([URU]*ḫundur ša 2* BÀD.MEŠ-*ni lamû*)[885]:

Այս ամենը ցույց է տալիս, որ «Լուվրի աղյուսակ»-ի հիշատակած «հզոր քաղաք»-ները հիմնականում հանդիսացել են պարսպապատ բնակավայրեր, որոնք ունեին միջնաբերդ, պարսպապատ բնակելի գոտի և նույնանում են ուրարտական տեքստերի հիշատակած «ամրացված ամրոց»-ին (É.GAL[(MEŠ)] *agununi*) և «ամրացված քաղաք»-ին (URU[(MEŠ)] *agununi*): Որոշ դեպքերում՝ իբրև «հզոր քաղաք» կարող են հանդես գալ այլ տիպի բնակավայրեր ևս, լինի դա ռազմավարչական խոշոր կենտրոն՝ «(ամրացված) պալատ-տաճար» (É.GAL 3), պետության կողմից կառուցված ամրոց (É.GAL 1) կամ առանձին ամրացված ագարակ-ապարանք/պալատ (*burganani*):

1.4.3.2. ***birtu* – «բերդ, ամրոց»**

«Լուվրի աղյուսակ»-ում հիշատակված «հզոր քաղաք»-ներից երեքը՝ Կալլանիան, Բուբզին և Ուայահիսը միաժամանակ բնորոշվում են որպես *birtu*՝ «ամրոց»[886]: Որպես *birtu* են հանդես գալիս ևս երեք ամրոցներ՝ Ուշկայան, Սարդուրիխուրդան և Արգիշթիունան[887]: Դրանցից Ուշկայան և Սարդուրիխուրդան կոչվում են «մեծ ամրոց» ([URU]*ušqa”a birti* GAL-*ti*, [URU]*sarduriḫurda dannasunu* GAL-*tu*)[888], իսկ Ուայահիսն անվանվում է «ամրացված քաղաք և մեծ ամրոց, նրա ամրոցներից հզորագույնը» ([URU]*ua”is* URU

[882] Mayer 1983: 98f. (Z. 299-301).
[883] Mayer 1983: 92f. (Z. 240-264).
[884] Mayer 1983: 94f. (Z. 260).
[885] Mayer 1983: 96f. (Z. 270).
[886] Mayer 1983: 96f. (Z. 270), 98f. (Z. 287, 299).
[887] Mayer 1983: 84f. (Z. 167), 90f. (Z. 212, 214), 98f. (Z. 287).
[888] Mayer 1983: 84f. (Z. 167), 92f. (Z. 231).

*dannutišu birtušu* GAL-*tu ša* UGU *kullat birātešu dunnunatma*)[889]: Միաժամանակ, Ուայաիսի կապակցությամբ հստակ ընդգծվում է ամրոցի դերը որպես զորակայան և զորքերի հավաքատեղի: Բացի դա, աղբյուրը շեշտում է «հզոր ամրոցներ»-ում (*birātešu dannāte*) մշտական կայազորի առկայության մասին, որում եղել են «*նրա լավագույն զինվորները, պատերազմում հաղթական զորքը՝ վահանակիրներ և տեգակիրներ՝ նրա երկրի հույսը*»[890]: Այս առումով «ամրոց»-ներում հիշատակված տները (É.MEŠ)[891] կարող էին լինել պարզապես զորանոցներ:

Նշված ամրոցներից մեկը՝ Ուշկայան, պաշտպանել է Ուրարտուի «վերին սահման»-ը (*rēš miṣri*)[892], մյուսը՝ Ուայաիսը, «ստորին սահման»-ը (*šēpīt miṣri*)[893]: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ ամրոցները (*birtu*), ի տարբերություն «հզոր քաղաքներ»-ի մեծամասնության, ունեցել են ընդգծված ռազմական նշանակություն, կառուցվել են պետության կողմից ռազմավարական վայրերում, եղել են ամրապարիսպ, ունեցել են մշտական կայազոր և հանդիսացել են արքունի բանակի հանգրվաններ[894]:

1.4.3.3. ***bīt dūri*** **– «(ամրացված) զորակայան» (՞)**

«Լուվրի աղյուսակ»-ում երկու անգամ հիշատակվում են «հզոր պարսպապատ տներ» (*bīt dūrāni*(É-BÀD.MEŠ-*ni*) *dannūti*): Առաջին հիշատակությունը վերաբերում է Թարուի և Թարմաքիսա «քաղաք»-ներին ($^{URU}$*tarui* $^{URU}$*tarmakisa* É-BÀD.MEŠ-*ni dannūti*)[895]: Եվս հինգ «հզոր պարսպապատ տներ» են հիշատակվում Ուայաիսում, ընդ որում, բոլորն էլ հիշվում են անվանապես[896]: Հաշվի առնելով այն փաստը, որ աղբյուրի վկայությամբ Թարուիում և Թարմաքիսայում էին պահվում «արքայական գնդի» պահեստային ձիերը[897], ապա չի բացառվում, որ դրանք լինեին պարսպապատ զորակայաններ, այնպիսին, ինչպիսին էր Բաստամի մերձակայքում բացված «Արևելյան կառույց»-ը՝ այսպես կոչված *Ostbau*-ն (տե՛ս ստորև): Վերջինս ընկած էր հարթավայրում, ինչպես և վերը նշված Թարուին և Թարմաքիսան: Այս դեպքում ևս դրանց ներսում աղբյուրի հիշատակած «տներ»-ը[898] կարող էին լինել զորանոցներ, ախոռներ և օժանդակ կառույցներ[899]:

---

[889] Mayer 1983: 98f. (Z. 299).
[890] Mayer 1983: 98f. (Z. 287-289). Հմմտ. նաև Дьяконов 1951a, № 49, прим. 70.
[891] Mayer 1983: 86f. (Z. 181).
[892] Mayer 1983: 84f. (Z. 167).
[893] Mayer 1983: 98f. (Z. 298).
[894] Տե՛ս և հմմտ. նաև Zimansky 1985: 43f.
[895] Mayer 1983: 86f. (Z. 189).
[896] Mayer 1983: 98f. (Z. 304-305).
[897] Mayer 1983: 86f. (Z. 189-191).
[898] Mayer 1983: 88f. (Z. 196).
[899] Հմմտ. Zimansky 1985: 44.

#### 1.4.3.4. *ālu* (1) – «քաղաք» («ագարակ դաստակերտ»)

«Լուվրի աղյուսակ»-ն անվանապես հիշատակում է միայն երկու բնակավայր, որ հանդես են գալիս որպես «քաղաք»՝ *ālu* (URU): Դրանք են՝ Ռուսայի «հայրական տուն» համարվող Արբուն (…$^{URU}$*Arbu* URU É AD-*šú ša* $^{m}$*Ursa*) և «Սարդուրիի տուն» Ռիյարը ($^{URU}$*Ri’’ar* URU- *šú ša* $^{md}$XV-*dure*$_{8}$)[900]: Դրանք շրջապատող յոթ այլ «քաղաք»-ներ դիտվում են որպես Ռուսայի եղբայրների բնակավայրեր (7 URU.MEŠ-*ni ša limītišunu ša* ŠEŠ.MEŠ-*šu* NUMUN LUGAL-*tišu*): Սակայն, անվանապես հիշատակված այդ երկու բնակավայրերից և ոչ մեկը չի բնութագրվում իբրև «հզոր քաղաք», ինչը նշանակում է, որ դրանք կամ պարսպապատ չէին, կամ էլ չեն ունեցել մշտական «քաղաքային բնակչություն»: Մյուս կողմից, աղբյուրը նշում է, որ Արբուն և Ռիյարը ունեցել են «հզոր պաշտպանություն»: Այս դեպքում, կարելի է մտածել, որ խոսքը վերաբերում է ագարակ-դաստակերտ հիշեցնող բնակավայրերի, ինչպիսիք հիշատակվում են նաև Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության մեջ իբրև URU.TUR՝ «փոքր քաղաք» (տե՛ս վերը): Հետաքրքիր է, որ ինչպես Այանցի արձանագրության «փոքր քաղաք»-ներն էին կապված ինչ-որ անձնանց հետ, ապա այստեղ ևս Արբուն և Ռիյարը կապվում են արքայական տան անդամների հետ: Կարելի է եզրակացնել նաև, որ դրանք նույնանում են «տան» հետ (É/*bītu*)՝ իբրև «կալվածք», «տնտեսություն» կամ պարզապես «ագարակ-դաստակերտ»[901]:

#### 1.4.3.5. *ālu* (2) – «քաղաք» (գյուղ, գյուղատիպ բնակավայր, ժամանակավոր վրանային ճամբար)

«Լուվրի աղյուսակ»-ի հիշատակած «քաղաք»-ների մեծամասնությունը, անկասկած, գյուղեր կամ գյուղատիպ «շրջակա բնակավայրեր» էին (*ālāni*(URU.MEŠ-*ni*) *ša limīti*)[902]: Դա է հուշում թե «քաղաք»-ների մեծ թիվը, թե այն փաստը, որ այդ մեծաթիվ «քաղաք»-ները չեն հիշատակվում անվանապես, իսկ աղբյուրը սովորաբար նշում է դրանք ոչ թե քանդելու, այլ «ինչպես խարույկ» հրդեհի մատնելու մասին[903]: Վերջիններս սփռված էին ուրարտական խոշոր կենտրոնների շուրջը՝ տվյալ կենտրոնի երկրագործական/գյուղատնտեսական գոտում[904]: «Լուվրի աղյուսակ»-ը հիշատակում է Ուշկայային շրջակա 115 և Անիաշտանիայի շուրջն ընկած 17 «շրջակա բնակավայր»-

[900] Mayer 1983: 96f. (Z. 277-278).

[901] Հմմտ. նաև Меликишвили 1951a: 35; Zimansky 1985: 44.

[902] Zimansky 1985: 44.

[903] Հմմտ., օրինակ, Mayer 1983: 94f. (Z. 267-268).

[904] Ենթադրությունը, թե «շրջակա բնակավայրեր» հասկացությունը վերաբերում է ուրարտական ամրոցիններին անմիջապես կից բնակատեղիին կամ այսպես կոչված «արտաքին քաղաք»-ին, հնարավոր չի թվում՝ հաշվի առնելով նման բնակատեղիների համար սովորաբար նշվող մեծ թվերը: Տե՛ս և հմմտ. Stone, Zimansky 2009: 634ff.; Zimansky 2012a: 107, n. 15.

եր[905]: Բարի/Սանգիբութու մարզում հիշատակվում է Թարուի և Թարմաքիսա քաղաքների շուրջն ընկած 30[906], Ուլխուի և Սարդուրիխուրդայի շուրջն ընկած 57[907] և Սանգիբութուի 21 «հզոր քաղաք»-ների շուրջն ընկած 146 բնակավայր[908]: Եվս 37 բնակավայր է հիշատակվում Արմարիլիում, ներառյալ՝ Արբու և Ռիյար «քաղաք»-ներին շրջակա 7 բնակավայրերը[909]: Այադուում հիշատակվում են 87 բնակավայր[910], և վերջապես 40 բնակավայր է նշվում Ուայաիսի համար[911]:

Ընդհանուր առմամբ, նվաճված և հրդեհված «շրջակա բնակավայրեր»-ի թիվն աղբյուրը տալիս է 430[912], թեև առանձին մարզերի համար նշված բնակավայրերի թվի հանրագումարն իրականում կազմում է 529: Այս դեպքում, պետք է ընդունել, որ Սանգիբութուի 21 «հզոր քաղաք»-ների շուրջն ընկած 146 բնակավայրի թվի մեջ են ներառված նաև Թարուիի ու Թարմաքիսայի շուրջն ընկած 30 և Ուլխուի ու Սարդուրիխուրդայի շուրջն ընկած 57 բնակավայրերը: Ուշկայայի շրջակա 115 բնակավայրերի ցանկում ներառելով նաև Անիաշտանիայի 17 բնակավայրերը, այդ դեպքում միայն կարող ենք ստանալ 425 թիվը, ինչը մոտ է աղբյուրի մատնանշած հանրագումարին:

Ինչ վերաբերում է խոշոր բնակավայրերին, ապա «Լուվրի աղյուսակ»-ը նշում է արշավանքի ընթացքում նվաճված 57 «հզոր քաղաք»-ի, 6 «ամրոց»-ի և 7 «(ամրացված) զորակայան(?)»-ի մասին: Սարգոնի «Հանդիսավոր արձանագրություն»-ը ներկայացնում է այլ տվյալներ՝ 55 կամ 56 «հզոր քաղաք և զորակայան(?)», 11 անառիկ ամրոց[913]:

Դրանցից «հզոր քաղաք»-ը (*ālu dannu*) միանգամայն համադրելի է ուրարտական տեքստերում հիշվող «ամրացված ամրոց»-ին (É.GAL *agununi*) և «ամրացված քաղաք»-ին (URU *agununi*): Ասորեստանյան տեքստի *birtu*-ն համադրելի է ուրարտական աղբյուրների «ամրոց»-ին (É.GAL) կամ «ամրացված ամրոց»-ին (É.GAL *agununi*), *ālu* (URU)՝ «քաղաք» հասկացության տակ կարելի է տեսնել ուրարտական տեքստերի URU.TUR-ը, բայց հիմնականում՝ այն մեծաթիվ «քաղաք»-ները (URU$^{MEŠ}$), որոնք նույնանում են ասորեստանյան աղբյուրների «շրջակա բնակավայրեր»-ին (*ālāni*(URU.MEŠ-*ni*) *ša limīti*), այն է՝ գյուղ, գյուղատիպ բնակավայր, ժամանակավոր ճամբար կամ վրանային ավան:

[905] Mayer 1983: 86f. (Z. 182, 185).
[906] Mayer 1983: 88f. (Z. 182, 198).
[907] Mayer 1983: 92f. (Z. 231).
[908] Mayer 1983: 94f. (Z. 268).
[909] Mayer 1983: 96f. (Z. 272).
[910] Mayer 1983: 98f. (Z. 293).
[911] Mayer 1983: 98f. (Z. 305).
[912] Mayer 1983: 112f. (Z. 422).
[913] Fuchs 1994: 204, 345 (Z. 43).

Ինչ վերաբերում է «հզոր պարսպապատ տներ»-ին (*bīt dūrāni*(É-BÀD.MEŠ-*ni*) *dannūti*), որոնք մենք դիտում ենք իբրև «(ամրացված) զորակայան», ապա նվաճված երկրների բնակավայրերի շարքում դրանց բացակայությունը միանգամայն բնական է՝ հաշվի առնելով ուրարտական տերության և լեռնաշխարհի տարաբնույթ պետական կազմավորումների ռազմական կառույցների և ռազմական կազմակերպվածության միջև առկա ակնհայտ տարբերությունները:

Այսպիսով, հանրագումարի բերելով նշվածը, մենք տեսնում ենք, որ «Լուվրի աղյուսակ»-ի ուրվագծած պատկերը նույնանում է ուրարտական տեքստերի տվյալների հետ և մատնանշում բնակավայրերի նույն տիպերի գոյությունը ողջ Լեռնաշխարհի տարածքում:

### 1.4.3.6. **Քաղաքաշինությունն Ուրարտուում**

Ուրարտուում քաղաքաշինությունն ըստ էության նույնանում էր պալատական/տաճարային համալիրի կառուցման հետ և «քաղաքաշինություն» եզրույթը կիրառելի է թերևս միայն այն պատճառով, որ այդ կենտրոնին կից կամ մերձավորությամբ գտնվել է այդ կառույցին սպասարկելու կոչված բնակելի հատված՝ այսպես կոչված «արտաքին քաղաք»-ը կամ կից բնակատեղին (նկ. Ա-21, 22/1-2, 25/1-2)[914]:

Նորասորեստանյան քաղաքների կառուցապատման կամ հին քաղաքներն ընդարձակելու ժամանակ նկատվում է, որ հին քաղաքին կամ ամրոցին հարակից բնակավայրերը սովորաբար ընդգրկվել են ամրությունների նոր շղթայի մեջ և վերածվել քաղաքային թաղամասերի[915]: Նման երևույթ ուրարտական քաղաքաշինության մեջ երբևէ չի նկատվում: Ուրարտական ամրոցի կառուցման ժամանակ, եթե այն կառուցվում էր նախորդող՝ վաղերկաթեդարյան բնակավայրի տեղում, այդ բնակավայրը սովորաբար ավերվում էր (Տուշպա, Դիլքայա-հյոյուք, Արմավիր-Արգիշթիխինիլի, Կարմիր բլուրի վաղերկաթեդարյան բնակատեղի, Մեծամոր, Հոռոմ, Հասանլու, Նորշունթեփե, Քյոշքերբաբա ևն[916]), որի տեղում կառուցվում էր ուրարտական ճարտարապետական չափանիշներին համապատասխանող նոր ամրոց: Եթե անգամ վաղերկաթեդարյան ամրոց-բնակատեղին չէր ավերվում, բայց զբաղեցվում էր ուրարտացիների կողմից, ապա դա ամեն դեպքում նշանակում էր այդ բնակավայրի վախճանը: Փոխարենը,

[914] Այս հարցի շուրջը տե՛ս և հմմտ. Оганесян 1983: 138 сл.; Հովհաննիսյան 1996, էջ 92-124; Тирацян, Кошеленко 1985: 24 сл.; Sinclair 1987: 13f.

[915] Ur 2013: 13ff. Տե՛ս և հմմտ. նաև Van De Mieroop 1997: 86, 91.

[916] Գրականության հղումների համար տե՛ս 3.3.1.2.:

կենտրոնական իշխանությունները նորակառույց ամրոցի մոտ, ինչպես վերը նշվեց, հիմնում էին «արտաքին քաղաք»-ը կամ ամրոցի «քաղաքային հատված»-ը, ուր, հաճախ պետության կողմից կառուցված տներում տեղավորվում էին ամրոցում ծառայելու կոչված քրմական և ռազմավարչական անձնակազմի անդամները և նրանց ընտանիքները: Քաղաքաշինական այս ավանդույթը, թերևս, միտաննական/միջինասորեստանյան ժառանգություն էր (հմմտ. նկ. Ա-23/1-2)[917]:

Ինչպես կփորձենք ցույց տալ ստորև, Ուրարտուի՝ որպես պալատական/տաճարային տիպի պետության բնույթը բացառում էր երկրում քաղաքների կամ քաղաքային տիպի խոշոր բնակավայրերի գոյությունը, որոնցում կարող էր կենտրոնանալ մեծաթիվ բնակչություն, կարելի կլիներ խոսել քաղաքներին բնորոշ կառուցապատման (այն է՝ ամրությունների առկայություն և սահմանափակ տարածքով պայմանավորված՝ բնակարանների խիտ կառուցապատում (Հնաբերդ[918], Սանգար[919], ևն), տաճարների/սրբարանների գոյություն, ինչպիսիք կան Հայաստանի ուշ-բրոնզ – վաղերկաթեդարյան բնակատեղիներում (Մեծամոր[920], Դվին[921], Գեղարոտ[922], Շամիրամ[923]) և բնակիչների՝ քաղաքային/համայնական ինքնավարության և շուկայական հարաբերություններով պայմանավորված քաղաքային կյանքին բնորոշ կենցաղավարության մասին, օրինակ՝ հրապարակի/շուկայի առկայություն (Ղազարավան[924]): Նկատենք նաև, որ ուրարտական տերության գոյության մոտ 200 տարիների ընթացքում ուրարտական շրջանով թվագրվող որևէ բնակավայրում շոշափելի կառուցվածքային փոոխություն, ինչպես, օրինակ, բնակավայրի բնականոն ընդարձակումն է, չի նկատվում: Ք.ա. 7-րդ դ-ում հիմնված «քաղաքային» տիպի ուրարտական որևէ բնակավայր իր տարածքով չէր գերազանցում Ք.ա. 9-8-րդ դդ-ի «քաղաքային» կենտրոններին, որոնք, իրենց հերթին, թվում է, դուրս չեն եկել տարածքային այն սահմաններից, որի սահմաններում կառուցապատվել են ի սկզբանե: Իսկ եթե նման աճ դիտարկվում է՝ ապա դա վերաբերում է միմիայն պալատական/տաճարային համալիրներին՝ պայմանավորված պալատի/տաճարի իրականացրած տնտեսական գործունեության ծավալային աճով, հատկապես՝ Ք.ա. 8-րդ դ-ի առաջին կեսին՝ Արգիշթի Մենուայորդու և Սարդուրի Արգիշթորդու իրոք: Իսկ

[917] Տե՛ս և հմմտ. նաև Բոբոխյան 2014, էջ 72-73:
[918] Smith *et al.* 2009: 302, Pl. 47.
[919] Միքայելյան 1966, էջ 237-240, նկ. 3:
[920] Խանզադյան և այլք 1973, էջ 107-123, նկ. 110-113:
[921] Кушнарева 1977: 11 сл., 14 сл., 36 сл., табл. IV, VII, XII-XIII, XXVIII, рис. 11, 18-19, 25, 58.
[922] Badalyan *et al.*: 2008: 65ff., Fig. 20; Smith, Leon 2014: 551ff., Figs. 2-4, 7.
[923] Արեշյան, Սիմոնյան 1976, էջ 286-287, նկ. 2:
[924] Արեշյան, Ղաֆադարյան 1996, էջ 71:

Ք.ա. 7-րդ դ-ում այդ կենտրոններում տեղ գտած բնակչության կտրուկ աճը, նոր բնակելի թաղամասերի հապշտապ կառուցապատումներն ու անպաշտպան թաղամասերը պարսպապատելու միջոցառումներն ամենևին բնականոն կյանքի արդյունք չէին և պայմանավորված էին տերության մեջ դիտվող ճգնաժամով[925]:

Ուրարտուում քաղաքաշինության և ամրոցաշինության մասին վկայող ամենավաղ տեքստերը թվագրվում են Իշխուինիի իշխանության շրջանով: Վերջին տեքստերը թվագրվում են Արգիշթի Ռուսայորդու և Ռուսա Արգիշտորդու կառավարման տարիներով: Ընդհանուր առմամբ՝ ավելի քան 56 արձանագրություն է հայտնում «ամրոց» (É.GAL) կառուցելու մասին (Աղ. 12): «Քաղաք» (URU) հիմնելու մասին են հայտնում 17 արձանագրություններ (Աղ. 13): Մեզ հասած տեքստերի մեծամասնությունը վերաբերում է Մենուայի իշխանության շրջանին (համապատասխանաբար՝ 56-ից 36-ը և 17-ից 9-ը, տե՛ս աղյուսակները):

Առաջին խոշոր կենտրոններից մեկը դա Իշպուինիի հիմնադրած «Խալդիի քաղաք»-ն է ($^{D}$*ẖaldini* URU)[926], որը հիշատակվում է Քարահանից գտնված կոթողներից մեկում և որը, թերևս, պետք է տարբերակել «Միերի դռան» արձանագրությունից հայտնի «Խալդիի քաղաք»-ից[927]: Անվանապես հիշատակվող հաջորդ քաղաքը հիմնադրվել է Մենուայի կողմից՝ Մեծ Մասիսի մերձավորությամբ, և կրում է «Մենուախինիլի» անունը ($^{m}$*menuaẖinili*)[928]: Կարելի է ենթադրել նաև Վանա լճի ավազանում և մերձուրմյան տարածքներում «Մենուախինիլի» անունը կրող առնվազն երկու այլ քաղաքների գոյության մասին[929]:

Արգիշթի Մենուայորդու օրոք Արարատյան դաշտավայրում հիմնադրվեցին խոշոր կենտրոններ «Էրեբունին» ($^{URU}$*er(e)buni*)[930] և «Արգիշթիխինիլին» ($^{m}$*argišteẖinili*, $^{m}$*argištiẖina* $^{m}$*’azani* KUR-*ni*)[931]: «Արգիշթիխինիլի» ($^{m}$*argištiẖinili*) անունով մեկ այլ քաղաք հիմնադրվեց ինչ-որ տեղ՝ Մշո դաշտում կամ մերձավորությամբ[932]:

Երկրում սկիզբ առած լայն քաղաքաշինությունը շարունակեց Սարդուրի Արգիշթորդին՝ հիմնադրելով այնպիսի խոշոր կենտրոն, ինչպիսին էր արքայի անունը

---

[925] Grekyan 2009: 102ff.; Գրեկյան 2013ա, էջ 68-70:
[926] CTU I, A 2-9A.
[927] Grekyan 2006:166f.
[928] ԿՈՒԿՀ, 48, 87; CTU I, A 5-26, A 5-27.
[929] Ընդհանուր առմամբ՝ պահպանվել են Մենուախինիլի քաղաքանունը հիշող չորս այլ տեքստեր, որոնց հայտնաբերման աշխարհագրությունը, ինչպես նաև տեքստերում հանդես եկող մի քանի տեղանուններ հուշում են, որ գործ ունենք այդ անունը կրող այլ քաղաք(ներ)ի հետ: Տե՛ս ԿՈՒԿՀ, 79, 101; CTU I, A 5-23, A 5-24, A 5-25; CTU IV, CB Ay-3.
[930] ԿՈՒԿՀ, 173 $II_{32-34}$, 174 $A2_{14-17}$, 197-198, 200-201; CTU I, A 8-3 $II_{32-34}$, A 8-1 $Vo_{14-17}$, A 8-17 A-B, A 8-18, A 8-19.
[931] ԿՈՒԿՀ, 173 $IV_{72}$, 174 $B2_{41}$, 188, 193; CTU I, A 8-2 $Ro_{41'}$, A 8-3 $IV_{72}$, A 8-14, A 8-16.
[932] CTU I, A 8-22

կրող «Սարդուրիխինիլի»-ն ($^{mD}$*sarduriẖinili*)՝ Հայկաբերդ-Զավուշթեփեն[933]: «Սարդուրիխինիլի» ($^{mD}$*sarduriẖinili*) անունով մեկ այլ քաղաք է հիմնադրվել նաև Աղձնիքում[934]:

Եվս երկու քաղաք է անվանապես հիշատակվում Ռուսա Սարդուրորդու արձանագրություններում, այն է՝ Գավառի և Ծովինարի ամրոցները, որոնք նվաճվելով բիայնական զորքերի կողմից և վերակառուցվելով՝ ստացել էին «Խալդիի քաղաք» ($^{D}$*ẖaldiei* URU) և «Թեյշեբայի քաղաք» ($^{D}$IM-*i* URU) անունները[935]:

Արգիշթի Ռուսայորդու կառուցած ամենախոշոր կենտրոնը դա արքայի անունը կրող «Արգիշթիխինիլի Արտարաբշակայի»-ն է ($^{m}$*argišteẖinili* $^{KUR}$*artarapšakai*)[936]: Վերջինիս տեղորոշումը, սակայն, դեռևս ճշգրտված չէ, և առայժմ միայն Արտարաբշա լեռը նույնացվում է Աքչա-դաղի կամ Ծաղկանց (Ալադաղլար) լեռների որևէ գագաթի հետ[937]: Նրա արձանագրություններում նշվում է նաև մի քանի ամրոցներ կառուցելու մասին, որոնք հիշատակվում են անվանապես ($^{D}$*ẖaldiei irdusi*, $^{m}$*argištei irdusi*)[938]:

Աղբյուրների վկայությամբ՝ առնվազն չորս նոր խոշոր կենտրոններ են հիմնադրվել Ռուսա Արգիշթորդու կողմից: Դրանք են՝ «Թեյշեբայի քաղաք»-ը ($^{D}$*teišebaini*/$^{D}$IM-*ni* URU, $^{m}$*’azaini* KUR-*ni* $^{d}$IM-*ni* URU – Կարմիր բլուր)[939], «Ռուսայի փոքր քաղաք»-ը ($^{m}$*rusai* UTU.TUR – Բաստամ)[940], «Զիուկունի երկրի Խալդիի քաղաք»-ը ($^{D}$*ẖaldiei* URU $^{KUR}$*ziuquni* – Քեֆ-քալեսի)[941], և «Ռուսախինիլի Էիդուրուկայի»-ն ($^{m}$*rusaẖinili* $^{KUR}$*eidurukai* – Այանց)[942]: Առկա են նաև անավարտ մնացած քաղաքաշինության հետքեր[943]: Ինչ վերաբերում է «Ռուսախինիլի Կիլբանիկայի» քաղաքին ($^{m}$*rusaẖinili* $^{KUR}$*qilbanikai* – Թոփրաքքալե)[944], ապա այն ամենայն հավանականությամբ հիմնադրել է ոչ թե Ռուսա Արգիշթորդին, այլ՝ Ռուսա Էրիմենայորդին:

Ուրարտական տեքստերը հաճախ են նշում É.GAL-ի հետ միասին նաև URU՝ «քաղաք» կառուցելու մասին (… *šidištuni eïe* É.GAL *šuẖi eïa* URU)[945]: Նման

---

[933] КУКН, 247; CTU I, A 9-17.
[934] CTU I, A 9-18. Հմմտ. նաև КУКН, 274 արձանագրությունը, որի հրատարակիչը ենթադրում է Արճեշի մերձավորությամբ Սարդուրիի անունը կրող մի երրորդ քաղաքի (՞) գոյության մասին: Հմմտ. CTU I, A 9-10.
[935] Տե՛ս, համապատասխանաբար, КУКН, 388-389; CTU I, A 10-1, A 10-2.
[936] КУКН, 406, лиц. стор.$_{4-5}$; CTU I, A 11-2 Vo$_{4-5}$.
[937] CTU IV: 183.
[938] КУКН, 409-410; CTU I, A 11-4, A 11-5, A 11-6.
[939] КУКН, 422, 424; CTU I, A 12-2 I, CTU IV, B 12-15, CB Ay-4.
[940] КУКН, 419; CTU I, A 12-7.
[941] КУКН, 414; CTU I, A 12-4.
[942] CTU I, A 12-1 VI$_{4-9}$, A 12-91-11.
[943] Sevin 2006a: 46f., Fig. 2.
[944] КУКН, 391, 412; CTU I, A 14-1 Ro, CTU IV, CT-Tk-1 Ro.
[945] Հմմտ., օրինակ, КУКН, 75$_{39-31}$, 172a$_{8-10}$; CTU I, A 5-17 Ro$_{39-31}$, A 5-28 Ro$_{8-10}$ ևն տեքստերը:

բովանդակություն ունեն առնվազն 11 տեքստ: Առկա տվյալներից դատելով՝ տեքստերը նկատի ունեն ինչպես ամրոցին կից կառուցված բնակատեղին կամ «արտաքին քաղաք»-ը, այնպես էլ՝ գյուղատիպ բնակավայրերը:

«Արտաքին քաղաք»-ներ կամ բնակելի թաղամասեր ունեին խոշոր ուրարտական կենտրոնների մեծ մասը՝ ներառյալ Վերին Անձավի ամրոցը, Արգիշթիխինիլին, Կարմիր բլուրը, Այանցը, Արագածը, Բաստամը, Օշականը, Արծկե/Քեֆ-Քալեսին, Հոռոմը և այլն, ինչպես նաև մեծաթիվ ամրոցներ[946]:

«Քաղաքային թաղամասեր»-ը բաժանվում էին երկու հատվածի: Դրանցից առաջինը մենք կոչում ենք «ուրարտական վերնախավի թաղամաս»: Վերջինս սփռված էր ամրոցի կամ միջնաբերդի անմիջական ստորոտին կամ մերձավորությամբ (Կարմիր բլուր[947], Արգիշթիխինիլի[948], Տուշպա[949]), հաճախ՝ այդ թաղամասը շրջապատվում էր պարիսպներով և վեր էր ածվում «վերին քաղաք»-ի (Արգիշթիխինիլի[950], Լիվար[951], Կալ’աթ[952]):

«Ուրարտական վերնախավի թաղամասեր»-ին բնորոշ է նոսր, ազատ կառուցապատումը: Տները գտնվում են միմյանցից զգալի հեռավորության վրա. Արգիշթիխինիլի-Արմավիրի երկու միջնաբերդերի միջև ընկած և գրեթե 3.5 կմ ձգվող տարածության վրա նշմարվող երեք թաղամասերում վկայված են ոչ ավելի, քան 50 առանձնատներ՝ դասավորված երկու ամրոցները կապող գլխավոր փողոցի երկայնքով (նկ. Ա-24/1)[953]: Համեմատության համար նշենք, որ Նուզի քաղաքում՝ պարիսպներից ներս (մոտ 4.4 հա), տաճարից և պալատից բացի եղել է ընդամենը 40-ից քիչ ավելի տուն (նկ. Ա-24/2)[954]: Այսինքն, գրեթե նույն պատկերն է, ինչն ունենք Արմավիր-Արգիշթիխինիլի դեպքում, պարզապես, տարբերությունը կայանում էր կառուցապատման խտության մեջ. այն խիտ էր Նուզիում և պայմանավորված էր նրա՝ մինչմիտաննական շրջանի անցյալով:

---

[946] Համապատասխանաբար՝ Burney, Lawson 1960: 180; Belli 1999a: 16; նույնի՝ 1999c: 508; Мартиросян 1974: 24; Оганесян 1955: 18 сл.; Stone, Zimansky 2001: 355ff.; նույնի՝ 2004: 236ff., Fig. 1; Stone 2005: 187ff.; Kleiss 1974b: 108, Abb. 1; Есаян, Калантарян 1988: 111 сл.; Ավետիսյան 2001, էջ 28 հաջորդիվ; Stone, Zimansky 2004: 235f., 242; Badaljan *et al.* 1992: 35.

[947] Мартиросян 1964: 259 сл., рис. 94.

[948] Мартиросян 1974: 104 сл., 133, Рис. 9; Ղաֆադարյան 1984, գծ. 8.

[949] Tarhan 2000: 163, Fig. 10; նույնի՝ 2011: 326ff.; Konyar 2011-2012: 180.

[950] Мартиросян 1974: 42; Ղաֆադարյան 1984, էջ 31:

[951] Kleiss, Kroll 1977: 54ff., Abb. 2.

[952] Kleiss, Kroll 1978: 41ff., Abb. 17.

[953] Мартиросян 1974: 104; Ղաֆադարյան 1984, էջ 35 հաջորդիվ, գծ.8-9:

[954] Maidman 1995: 937.

Խիստ սակավ դեպքերում է, որ կառուցապատումը ցուցաբերում է շատ թե քիչ կանոնավոր բնույթ: Մասնավորապես, Կարմիր բլուրում տների մի մասը դասավորված էր համեմատաբար կանոնավոր-հատվող 6-10 մ լայնությամբ փողոցների երկայնքով (նկ. Ա-26/1-2): Ինչ վերաբերում է Զերնակի-թեփեի՝ միասնական հատակագծով նախագծված քաղաքին, ապա այն վաղուց է, ինչ վերաթվագրվել է հետուրարտական շրջանով:

Հիմնականում ամրոցների թե «արտաքին քաղաքներ»-ը, և թե բնակավայրերը անկանոն են կառուցապատված (տե՛ս Ա-27/1-2), բացակայում է քաղաքաշինության որևէ նորմ, չկան ուղիղ փողոցներ. դրանք նեղ են, ծուռումուռ, բացակայում են ջրահեռացման համակարգերը, և ակնհայտ է, որ հին առաջավորասիական քաղաքաշինության ավանդույթները խորթ են եղել այս տարածքներին[955]:

Ինչ վերաբերում է մայրաքաղաք Տուշպային, ապա այն սկզբնապես մաս չէր կազմում բիայնական պետությանը, ներկայացնում էր միանգամայն այլ աշխարհ, հնարավոր է՝ իր ուրույն ճարտարապետական ավանդույթներով, որոնց պահպանված օրինակները՝ այսպես կոչված *Sardursburg*-ը[956] և «Հին պալատ»-ը[957], կարծում ենք, հարկ է թվագրել մինչ-բիայնական շրջանով: Այդ նույն շրջանով պետք է թվագրել նաև այսպես կոչված «Նախնիների տաճար»-ը[958] և միջնաբերդի կառուցապատման առաջին փուլն ընդհանրապես: Պատահական չէ, որ Տուշպայի ճարտարապետությունը չի տեղավորվում ուրարտական քաղաքների՝ վերը տրված բնութագրման մեջ: Բիայնական ճարտարապետությունը և հատկապես տաճարաշինությունը, թվում է, Տուշպա է բերվել արդեն ձևավորված ավանդույթներով[959]: Հետաքրքիր է, որ ուրարտական կենտրոնների շարքում Տուշպան առայժմ միակն է, որտեղից մինչ օրս չի հայտնաբերվել «սուսի»-տաճարի գոյության որևէ վկայություն, հակառակ այն փաստի, որ Իշպուինիի, Մենուայի և Ինուշպուայի անունից կազմված արձանագրության մեջ նշվում է «Տուշպա քաղաքի համար» «սուսի»-տաճար և «խալդյան դարպաս»-ներ կառուցելու մասին[960]:

Տուշպայում բիայնական իշխանության հաստատումով քաղաքը ենթարկվեց վերակառուցումների: Միջնաբերդում կառուցվեց այսպես կոչված «Նոր պալատ»-ը, որի

[955] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 286. Համմտ. Тирацян, Кошеленко 1985: 24.
[956] Lehmann-Haupt 1907: 61, Fig. 37.
[957] Tarhan 1994: 33, Fig. 3; նույնի՝ 2000: 161.
[958] Tarhan 1994: 33, Fig. 8; նույնի՝ 2000: 161; նույնի՝ 2005b: 122f.; նույնի՝ 2011: 303ff., Fig. 7; Tarhan, Sevin 1989 [1990]: 360f., Res. 8-9.
[959] Grekyan (forthcoming).
[960] KUKN 20; CTU I, A 4-1.

կառուցումը վերագրվում է Արգիշթի Մենուայորդուն (նկ. Ա-32/1-2)[961]: Տուշպայում աչքի ընկնող կառույցներից են արքայական ժայռափոր դամբարանները, որոնք իրենց մեծությամբ, հանդիսավորությամբ և ներքին հարդարանքով անհամեմատելի են տերության այլ տարածքներում բացված ժայռափոր դամբարանների հետ (տե՛ս նկ. Ա-28/1-3, Ա-29/1-2):

Ցավոք, քիչ տվյալներ են պահպանվել Տուշպայի քաղաքային թաղամասերի կառուցապատման մասին: Ինչպես երևում է՝ Վանա ժայռի ստորոտին փռված «ստորին քաղաք»-ը պարսպապատ էր[962] և բիայնական տիրապետության շրջանում կառուցապատվել էր պետ-ստանդարտի տներով[963]: Պարսպապատերից դուրս կարող էր սփռված լինել «արտաքին քաղաք»-ը: Ուրարտական շրջանի շինություններով է կառուցապատված եղել այսպես կոչված «Տուշպա-հյոյուք»-ը՝ Վանի միջնաբերդից ճիշտ դեպի հյուսիս: Ներկայումս այն մոտ 70 մ լայնությամբ ձգվում է գրեթե 1 կմ, ինչը կարող է պատկերացում տալ արվարձանի ընդգրկած տարածքի և կառուցապատման խտության մասին[964]:

### 1.4.3.7. **Ուրարտական քաղաքների տարածքը և բնակչությունը**

Ուրարտուում բնակավայրերը տարբեր էին՝ փոքր, ամրություններից զուրկ գյուղական բնակավայրերից մինչև ամրացված բերդաքաղաքներ: Սիրիա-միջագետքյան չափորոշիչներով՝ խոշոր քաղաք է համարվում 100-400 և ավելի հա, քաղաք՝ 40-50 և ավելի հա, իսկ գյուղաքաղաք՝ 5-25 և ավելի հա զբաղեցնող բնակավայրը[965]: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ սիրիա-միջագետքյան քաղաքն ընդգրկում էր ողջ պարսպապատ գոտին, չհաշված՝ դրանից դուրս սփռված և ամրություններից զուրկ արվարձանները:

Մինչդեռ, ուրարտական «քաղաք»-ները պարսպապատ չէին և հանդիսանում էին բաց բնակավայրեր՝ սփռված ամրոցի շուրջը: Անգամ խոշոր «քաղաքներ»-ի մակերեսը սովորաբար չէր գերազանցում 40-50 հա-ը: Միայն երկու կենտրոն են ունեցել 50 հա-ից ավելի տարածք՝ Այանցը (80 հա) և Արգիշթիխինիլին (100-120(?) հա)[966]: Տուշպան ևս, ամենայն հավանականությամբ, պետք է դասվի այս շարքը, թեև նրա «արտաքին քաղաք»-ի զբաղեցրած տարածքի համար որևէ տվյալ առայժմ մենք չունենք:

---

[961] Tarhan 1994: 35ff., Fig. 3, 12; նույնի՝ 2000: 162, Fig. 7; նույնի՝ 2003: 96.
[962] Tarhan 1994: 39; նույնի՝ 2000: 163; նույնի՝ 2003: 98f.; նույնի՝ 2005a: 131.
[963] Tarhan 1994: 44, Fig. 15; նույնի՝ 2003: 98f.; նույնի՝ 2005a: 129, 131; Tarhan, Sevin 1990 [1991]: 434f., Res. 16-17; Tarhan, Sevin 1992 [1993]: 410f., Res. 10, 17-19; Konyar 2011-2012: 178; Konyar *et al.* 2012: 223f., Figs. 9-10.
[964] Tarhan 2000: 162f.; նույնի՝ 2003: 98f.; Konyar *et al.* 2012: 219ff.
[965] Տե՛ս և հմմտ. Adams, Nissen 1972: 18; Algaze 2008: 103, 167ff. (Appendix I-II).
[966] Հմմտ. ծնթ. 996: Էրեբունիի համար տե՛ս ստորև:

Պարզապես, եթե համարենք, որ հին Վանի քաղաքային պարիսպներն անցկացվել են հնագույն ուրարտական պարիսպների շրջագծով, ինչը միանգամայն հնարավոր է, ապա կարող ենք ենթադրել, որ «ստորին քաղաք»-ը զբաղեցնելու էր մոտ 50 հա տարածք[967]: Դրան գումարելով «Տուշպա-հյոյուք»-ի տարածքը և, թերևս, հարակից որոշ արվարձաններ[968], ապա կարելի է կարծել, որ ընդհանուր առմամբ Տուշպայի քաղաքային թաղամասերը զբաղեցնելու էին առավելագույնը մոտ 80-90 հա տարածք:

Ուրարտուում ոչ մի տեղ չենք հանդիպում այնպիսի մի բնակավայրի, որը կենթադրեր շատ թե քիչ հոծ բնակչության կենտրոնացում համեմատաբար սահմանափակ տարածքում՝ միջնաբերդում, միջնաբերդից դուրս ընկած և պարիսպներով շրջապատված քաղաքային հատվածում կամ պարիսպներից դուրս[969]: Ընդհակառակը, առկա տվյալները հուշում են, որ պարիսպներից դուրս սփռված և բավական ազատ կառուցապատում ունեցող «քաղաքային» թաղամասի բնակիչները հանդիսանում էին ամրոցի վարչակազմի, կայազորի կամ սպասարկող անձնակազմի անդամներ, որոնց ապրուստը հոգում էր պետությունը՝ ամրոցում կենտրոնացված պետական միջոցների հաշվին: Այսինքն՝ քաղաքային կյանք, որը կենթադրեր ինքնավար համայնք, որի անդամները կարող էին ունենալ սեփականություն և այն ինքնուրույն տնօրինելու իրավունք, որի անդամները կարող էին զբաղվել ազատ տնտեսական գործունեությամբ, քաղաք, որը կունենար իր հրապարակ(ներ)ը, շուկաները, տաճարները և այլն, ուրարտական քաղաքների դեպքում տեսանելի չէ: Դրանով պայմանավորված՝ ուրարտական խոշոր կենտրոնների «քաղաքային թաղամասեր»-ն ունեցել են սահմանափակ տարածք, աչքի չեն ընկնում խիտ կառուցապատումով, չունեն հրապարակ/շուկա, տաճար(ներ)/սրբարան(ներ), իսկ բնակչությունը կամ առնվազն բնակչության զգալի մասը չի վարել սեփական տնտեսություն:

Ասվածի լավագույն օրինակն է Բաստամը: Ուրարտական այս խոշորագույն կենտրոնը, որի միայն միջնաբերդը զբաղեցրնում է մոտ 30 հա տարածք, ըստ Վոլֆրամ Կլայսի հաշվարկների՝ ունեցել է ոչ ավելի, քան 6-700 զինվորի հասնող կայազոր և վարչակազմ: Բաստամի «արտաքին քաղաք»-ն ընդգրկում է մոտ 18 հա տարածք[970], զուրկ էր ամրություններից, և թեև ունեցել է համեմատաբար խիտ

[967] Հին Վանի մակերեսը հաշվվում է մոտ 46 հա: Տե՛ս Konyar, Avcı 2014: 205.
[968] Ամփոփ տե՛ս Tarhan 2007b: 118.
[969] Տե՛ս նաև Biscione 2003: 184, n. 10.
[970] Kleiss 1970b: 10, 17ff., Abb. 4; նույնի՝ 1972a: 34ff., Abb. 28-29; նույնի՝ 1976b: 33; նույնի՝ 1977b: 39ff., Abb. 30; նույնի՝ 1979a: 26ff., Abb. 16, 18; նույնի՝ 1988a: 19f.

կառուցապատում, սակայն, բացված կացարանները կարող էին ընդունել ոչ ավելի, քան ևս մոտ 7-800 բնակիչ, ներառյալ՝ կանայք և երեխաները: Ըստ այդմ, Բաստամի ողջ բնակչությունը՝ ներառյալ կայազորը և վարչակազմը, ենթադրվում է մոտ 1500 մարդու սահմաններում[971]:

Միջագետքյան քաղաքային համայնքներում բնակչության խտությունը 1 հա-ի վրա տատանվում էր 100-ից 500 մարդու միջև՝ հաշվի առնելով կառուցապատման խտությունն ու տների հարկայնությունը, տների բնակելի մակերեսը, բնակավայրի բնակելի հատվածի մակերեսը, երկրագործական տարածքի հնարավորություններն ու ջրային ռեսուրսները[972]: Որպես միջին ցուցանիշ՝ ընդունվում է 1 հա-ի վրա 100-200 մարդ հաշվարկը[973]: Ինչ խոսք, ուրբանիզացիայի բարձր մակարդակ ունեցող սիրիա-միջագետքյան քաղաքների համար մեր ունեցած այս պատկերը ոչ մի կերպ չի կարելի համադրել ուրարտական իրողությունների հետ: Ուրարտական որևէ կենտրոն աչքի չի ընկնում տների խիտ կառուցապատումով, քաղաքային թաղամասերի տարածքի զգալի մասը զբաղեցնում էին առանձին կանգնած վերնախավի տները և վստահաբար կարելի է պնդել, որ 1 հա-ի համար 20-30 մարդ հաշվարկը կարող է լինել միանգամայն իրատեսական (տե՛ս ստորև): Եթե առաջնորդվենք այս թվով, ապա Կարմիր բլուրի քաղաքային թաղամասերի համար, որոնք զբաղեցրել են մոտ 40 հա տարածք[974], կարող ենք ենթադրել ոչ ավելի, քան 800-1200 բնակիչ:

Այդ թվին կարելի է հավելել Կարմիր բլուրի միջնաբերդում տեղակայված կայազորի զինվորներին, ուրարտական վարչակազմի, քրմության ներկայացուցիչներին ու սպասարկող անձնակազմը, որոնց զգալի մասը, անկասկած, բնակվել է ամրոցից դուրս ընկած «քաղաքային թաղամաս»-ում:

Վերջիններիս թիվը մեծ չէր լինելու: Կարմիր բլուրի միջնաբերդը զբաղեցնում է մոտ 4 հա տարածք, ներառյալ՝ ընդարձակ ներքին բակը, և եթե հաշվի առնենք այստեղ պետական արհեստանոցների, պահեստների, մառանների և մթերանոցների զբաղեցրած ընդարձակ տարածքները և ամրոցի առաջին (նկուղային) հարկում բնակելի գոտու բացակայությունը, որը գտնվել է ամրոցի երկրորդ հարկում, ապա տեսնում ենք, որ ամրոցի բնակելի գոտին կարող էր կազմել ոչ ավելի, քան 1 հա

[971] Kleiss 1980: 301.

[972] Մանրամասն տե՛ս և հմմտ. Zorn 1994: 31ff., Tab. 1.

[973] Adams 1965: 41; նույնի՝ 1981: 69; 144; Wright 1969: 39; Weiss 1986a: 95 and n. 8; Garr 1987: 39; Kühne1990: 19; van Driel 1999-2000: 83, n. 22; Casana 2009: 30; Pedersén *et al.* 2010: 122.

[974] Пиотровский 1950: 13, 17; նույնի՝ 1959б: 170; Сорокин 1952б: 79; Мартиросян 1964: 259: Տե՛ս նաև Հովհաննիսյան 1996, էջ 103: Հմմտ., սակայն, Мартиросян 1974: 44 (700-800 հա, որից 50 հա-ը՝ «պարսպապատ ներքին քաղաք»-ը); Тирацян, Кошеленко 1985: 24 (600-800 հա); Եսայան 1982, էջ 13 (100 հա).

տարածք: Առավել ևս, հարկ է նկատի ունենալ, որ այդտեղ էր գտնվում «սուսի»-տաճարը[975] և մարզային կառավարչի հարկաբաժինները[976]: Ըստ այդմ, կարելի է ենթադրել, որ բուն ամրոցում միաժամանակ կարող էին բնակվել լավագույն դեպքում 2-3 հարյուր մարդուց ոչ ավելի: Որպես օրինակ կարող ենք վերցնել Թելլ Սաբի Աբյադի *dunnu*-ամրոցը (նկ. Գ-7/2), որը միջինասորեստանյան շրջանում հանդիսանում էր Խանիգալբատ (Միտաննի) նահանգի ռազմավարչական կենտրոններից մեկը: Այն զբաղեցնում էր 0.36 հա տարածք (60 × 60 մ), ուներ հանդիսությունների սրահ, մառաններ, արհեստանոցներ և բնակելի սենյակներ, իսկ ամրոցում ապրել է, ինչպես ենթադրվում է, առավելագույնը 60 մարդ, ներառյալ՝ կանայք և երեխաները[977]: Միջինասորեստանյան մեկ այլ *dunnu*՝ Թելլ ալ-Ֆաքարը, որը զբաղեցնում է մոտ 0.15 հա մակերես, ըստ երևույթին ունեցել է շուրջ 40-45 մարդու հասնող բնակչություն[978]:

Այս առումով ուրարտական լավագույն զուգահեռը հայտնի է Գիրիքթեփեի դղյակ-ապարանքից: Այստեղից հայտնաբերվել են 44 մարդու աճյուններ[979], որոնք բոլորն էլ զոհվել են ապարանքի գրավման ժամանակ: Նրանց շարքում կանանց մեծ թիվը վկայում է, որ գործ ունենք ապարանքի բնակիչների հետ:

Այս զուգահեռները նկատի ունենալով կարելի է մտածել, որ Կարմիր բլուրի ընդհանուր բնակչությունը կարող էր հասնել ընդհուպ մինչև 1500 մարդու: Համեմատության համար նշենք, որ Նուզին ունեցել է մոտ 1600 բնակիչ իր արվարձաններով հանդերձ, և դա այն դեպքում, երբ քաղաքի պարսպապատ տարածքը խիտ կառուցապատված էր բնակելի տներով (նկ. Ա-24/2)[980]:

Գրեթե նույնն էր լինելու պատկերը Արին-բերդի դեպքում, որի քաղաքային թաղամասերը[981], ենթադրվում է, ընդգրկել են մոտ 50 հա տարածք[982]: 40-50 հա

---

[975] Dan 2010d: 44ff., Figs. 1-6.
[976] Հովհաննիսյան 1964, էջ 35; Ղաֆադարյան 1984, էջ 78-79:
[977] Wiggermann 2000: 191.
[978] Koliński 2002: 9ff.
[979] Köroğlu 2009: 387.
[980] Maidman 1995: 935.
[981] Էրեբունիի «քաղաքային թաղամաս»-ը ուսումնասիրված է մակերեսորեն և առայժմ միայն այստեղ հաստատագրվել են ընդարձակ առանձնատների (՞) և մի քանի սենյակից բաղկացած անկանոն կառուցված կացարանների հետքեր (Hodjasch 1982: 271): Կացարանների հետքեր այստեղ փաստագրվել են նաև 1998 թ-ին իրականացված կարճատև պեղումների ժամանակ (Тер-Мартиросов 2008: 152 сл.): Էրեբունիի 2007 թ-ի պեղումների ընթացքում միջնաբերդից հարավ-արևելք ընկած բլրի վրա բացված ուղղանկյունաձև ընդարձակ կառույցի համար տե՛ս (Stronach *et al.* 2009: 182ff., 1-3, Pls. 1-4): Վերջին ուսումնասիրություններից տե՛ս նաև Herles, Fassbinder 2015: 292ff.
[982] Оганесян 1961: 15. Սակայն, հետագա հրատարակություններում Կոնստանտին Հովհաննիսյանը նշում է 200 հա թիվը: Այդ թիվը հավաստի կերպով փաստարկել ոչ մի կերպ հնարավոր չէ և, ինչպես մեզ է թվում, խիստ չափազանցված է: Հմմտ. Оганесян 1980: 33; Dan, La Farina 2012: 254.

տարածք է ենթադրվում Հոռոմի քաղաքային բնակատեղիի համար[983], մոտ 40 հա է զբաղեցրել Քայալըդերեի ուրարտական բերդաքաղաքը[984]: Արագածի ուրարտական ամրոցի շուրջը սփռված ընդարձակ բնակատեղին զբաղեցրել է, հավանաբար, 30-40 հա տարածք[985]: Մոտ 80 հա է կազմում Այանցի «արտաքին քաղաք»-ի մակերեսը[986]: Շատ ավելի համեստ տարածք է զբաղեցրել ուրարտական վաղ կենտրոններից մեկի՝ Վերին Անձավի ամրոցի «քաղաքային թաղամաս»-ը, որը տարածվում էր մոտ 14 հա-ի վրա[987]: Նորգեղի բնակատեղին, որը պաշտպանված էր փոքր ամրոցով, զբաղեցնում է մոտ 20 հա տարածք[988]: 24 հա մակերես է զբաղեցրել Գյոյ-թեփեի՝ ուրարտական շրջանով թվագրվող բնակատեղին[989]: Թորքի Թափայի շուրջը սփռված բնակատեղին զբաղեցնում էր մոտ 9 հա[990]: Ընդամենը 8 հա մակերես էր զբաղեցնում Լիվարի ուրարտական ամրոցի «քաղաքային թաղամաս»-ը, այնքան՝ որքան ամրացված «վերին քաղաք»-ն էր[991], ընդհանուրը, այսպիսով, կազմելով մոտ 16 հա: Մոտ 8-9 հա մակերես է ունեցել Գործոթի ամրոցի «ստորին քաղաք»-ը[992]: Ալիլերի ամրոցին մերձակա բնակատեղիի մակերեսը մոտ 4 հա էր[993]: Վերախրամի խոշոր ամրոցին կից բնակատեղիի օգտակար մակերեսը կազմում էր ընդամենը մոտ 3.5 հա[994]: Ուրարտական մնացյալ կենտրոնների և ամրոցների «քաղաքային թաղամասեր»-ը զբաղեցնում էին շատ ավելի համեստ տարածքներ: Եվ վերջապես նշենք, որ առնվազն չորս խոշոր կենտրոն՝ Հայկաբերդը, Ալթընթեփեն, Թոփրաքքալեն և Քեֆ Քալեսին, ընդհանրապես չեն ունեցել «արտաքին քաղաք»: Վերջինս, սակայն, ուներ «ստորին քաղաք», որը պարսպապատ էր և զբաղեցնում էր մոտ 10 հա տարածք[995]:

Ինչ վերաբերում է Արգիշթիխինիլի-Արմավիրին, ապա, ելնելով վերը նշված թվերից, մեզ խիստ չափազանցված է թվում Հարություն Մարտիրոսյանի այն ենթադրությունը, որ քաղաքը զբաղեցրել է գրեթե 1000 հա մակերես[996]: Դա շատ

[983] Badaljan *et al*. 1994: 1.
[984] Ավետիսյան, Բոբոխյան 2010, էջ 52:
[985] Ավետիսյան 2001, էջ 9: Հմմտ. Оганесян 1958: 80; Հովհաննիսյան 1996, էջ 101:
[986] Çilingiroğlu, Sağlamtimur 1999: 530ff.; Çilingiroğlu, Derin 2000: 400ff.; Çilingiroğlu 2011a: 1055 ; նույնի՝ 2012a: 18ff., Res. 23; Çilingiroğlu *et al*. 2002: 291ff., Çiz. 4-6; Çilingiroğlu, Erdem 2007: 128ff.
[987] Burney, Lawson 1960: 180; Belli 1999a: 16; նույնի՝ 1999c: 508.
[988] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 287ff., Res. 2, Lev. XX.
[989] Biscione 2003: 171.
[990] Kleiss, Kroll 1977: 62f., Abb. 11.
[991] Kleiss 1971: 55ff., Abb. 8; նույնի՝ 1976a: 42; Kleiss, Kroll 1977: 55ff, Abb. 2-3, 57.
[992] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 285ff., Res. 1, Lev. X; Özdemir *et al*. 2013: 980.
[993] Sevin 2004c: 373.
[994] Kleiss 1974a: 87sq.
[995] Zimansky 2005: 237.
[996] Мартиросян 1972: 39; նույնի՝ 1974: 24. Սկբնապես նա նշում էր 4-500 հա տարածք: Տե՛ս Мартиросян 1964: 233; նույնի՝ 1967: 222. Հմմտ., միաժամանակ, Հովհաննիսյան 1996, էջ 94:

ավելին է՝ քան անգամ Նինվեն իր առավել ընդարձակ շրջանում, երբ քաղաքը զբաղեցնում էր մոտ 750 հա տարածք[997] և կարող էր ունենալ ընդհուպ մինչև 75 հազ. բնակչություն[998]: Կորյուն Ղափադարյանի ենթադրությունը, ըստ որի՝ Արգիշթիխինիլի-Արմավիրը կարող էր զբաղեցնել մոտ 400 հա մակերես[999], թեև շատ ավելի իրատեսական է, սակայն, այնուամենայնիվ, նույնպես հավանական չէ: Ինչ խոսք, ենթադրելի է, որ Արգիշթիխինիլի-Արմավիրը մյուս ուրարտական կենտրոնների համեմատությամբ կարող էր զբաղեցնել ավելի ընդարձակ տարածք և ունենալ համեմատաբար մեծաթիվ բնակչություն՝ հաշվի առնելով քաղաքի դիրքը երկրագործական բարեբեր գոտում: Սակայն, այնուամենայնիվ, չենք կարծում, որ այն կարող էր զբաղեցնել 100-120 հա-ից ավելի տարածք[1000], մի գուցե՝ անգամ ավելի քիչ[1001]: Նույնիսկ առավել մեծ թիվն ընդունելու դեպքում Արգիշթիխինիլի-Արմավիրը հազիվ թե ունենար 3-4 հազ-ից ավելի բնակչություն: Այս առումով Հարություն Մարտիրոսյանի եզրակացությունը, որ Արգիշթիխինիլին կարող էր ունենալ մոտ 30 հազ. բնակչություն, նույնպես մեզ թվում է ոչ իրատեսական[1002]: Այդ նույնը վերաբերում է Տուշպային: Ընդունելով անգամ, որ պարսպապատ «ստորին քաղաք»-ից դուրս սփռվել են «արտաքին քաղաք»-ի ընդարձակ թաղամասերը՝ բոլորելով Վանա ժայռի չորս բոլորը, ապա այդ դեպքում անգամ քաղաքի բնակչության համար առաջարկված 50 հազ. թիվը[1003] խիստ չափազանցված է: Նույնը պետք է ասել Կարմիր բլուրի բնակչության համար ենթադրվող 20 հազ. թվի մասին. մեր կարծիքով այն գերագնահատված է մոտ 13-14 անգամ (տե՛ս վերը)[1004]:

Համեմատության համար նշենք, որ խեթական տերության մայրաքաղաք Խաթթուսասի համար (181 հա) ենթադրվում է 9 հազ-ից մինչև 15 հազ. բնակչություն[1005]: Ըստ ասորեստանյան աղբյուրների՝ մայրաքաղաք Կալխուի բնակչությունը Աշշուր-նաձիր-ապալ II-ի օրոք կազմում էր 16-17.5 հազ. մարդ[1006], երբ քաղաքը զբաղեցնում էր 360 հա տարածք[1007], որից 185 հա-ը քաղաքային

[997] Oates 1968: 43.
[998] Stronach 1994: 100ff.
[999] Кафадарян 1967: 237.
[1000] Հմմտ. Hammer 2014: 768.
[1001] Այստեղ նկատի ունենք, որ երկու՝ Արևմտյան և Արևելյան ամրոցների միջև ընկած քաղաքային թաղամասը, որն ինչ-որ մի պահ շրջափակվել է պարսպապատերով և ամրացվել, ընդգրկել է 50-60 հա տարածք: Տե՛ս Мартиросян 1972: 41:
[1002] Мартиросян 1974: 137.
[1003] Burney 1972a: 183. Տե՛ս նաև Tarhan 2011: 291.
[1004] Հմմտ. Հովհաննիսյան 1996, էջ 94:
[1005] Mielke 2011: 183f.
[1006] Grayson 1991: 293 (A.0.101.30: 147-148). Տե՛ս նաև Reade 1982: 102; Wilkinson *et al*. 2005: 26.
[1007] Oates 1968: 42.

կառուցապատված թաղամասերի տարածքն էր[1008]: Այս դեպքում անգամ բնակչության խտությունը 1 հա-ի համար կազմում է 100 մարդուց պակաս: Հիմք ընդունելով 1 հա-ի համար 100 մարդ հաշվարկը՝ մոտ 15 հազ. բնակչություն է ենթադրվում Նինվեի համար (մոտ 150 հա) մինչև Սինախերիբի իրականացրած վերակառուցումները[1009]: Ասորեստանյան նահանգային կենտրոններից Դուր-Կատլիմույի (մոտ 100 հա)[1010] բնակչությունը կարող էր կազմել 9 հազ. մարդ[1011]: Ասորեստանյան աղբյուրների վկայությամբ՝ Սարգոն II-ը նվաճված Համաթը վերաբնակեցնում է 6 հազ. 300 ասորեստանցիներով[1012]: Պատկերը նույնն է նաև բաբելոնյան քաղաքների դեպքում: Օրինակ, Բաբելոնի համար, որը զբաղեցնում էր 800 հա մակերես, բնակչության ենթադրվող նվազագույնը քանակը կազմում է 80 հազ. մարդ[1013]: Ըստ այդմ, ուրարտական որևէ կենտրոն ոչ իր տարածքով, ոչ իր բնակչությամբ համադրելի չէ միջագետքյան քաղաքների հետ: Անգամ Աշշուր քաղաքը, որն ուներ ընդամենը 65 հա մակերես, իր ընդարձակ տաճարային և պալատական համալիրներով հանդերձ կարող էր ունենալ մոտ 7 հազ. բնակչություն[1014]: 8 հազ. բնակիչ է ենթադրվում արվարձաններով հանդերձ մոտ 100 հա զբաղեցնող Երուսաղեմի համար նախքան Սինախերիբի Ք.ա. 701 թ-ի արշավանքը դեպի Պաղեստին[1015]:

### 1.4.3.8. **Ուրարտական բնակավայրերը հնագիտության տեսանկյունից**

Տվյալ դեպքում նկատի ունենք այն բնակավայրերը, որոնք վկայված են հնագիտորեն և թվագրվում են ուրարտական շրջանով, անմիջապես կապված են եղել ուրարտական ամրոցի հետ կամ գտնվել են ամրոցի կողմից վերահսկվող գոտում: Նման բնակավայրերի թիվն անցնում է հարյուրը (Աղ. 11): Դրանք բոլորը փոքր՝ 0.1-10 հա մակերես զբաղեցնող գյուղեր և գյուղակներ են և այդ առումով հիմնականում համադրելի են սիրիա-միջագետքյան գյուղական և գյուղատիպ բնակավայրերին: Դրանց տարածքը սովորաբար չէր անցնում 5-6 հա-ը (գյուղակներ՝ 0.1-2.5 հա, և գյուղեր՝ 2.6 – 5/6 հա)[1016]: Նորասորեստանյան շրջանում վերինտիգրիսյան գոտում՝ Բիսմիլից մինչև Տիգրիսի հետ Բաթման գետի միախառնման շրջան ձգվող հատվածում փաստագրված 29 բնակավայրերի ճնշող մեծամասնությունն ուներ 1 հա-ի մոտ

[1008] Ur 2013: 14.
[1009] Stronach 1994: 99.
[1010] Թելլ Շեյխ Խամադ հնավայրը հյուսիսային Սիրիայում:
[1011] Kühne 1990: 19.
[1012] Hawkins 2004: 160f.
[1013] Pedersén *et al.* 2010: 136.
[1014] Հմմտ. նաև Liverani 2011: 253.
[1015] Geva 2014: 141.
[1016] Adams, Nissen 1972: 18; Algaze 2008: 103, 167ff. (Appendix I-II).

տարածք[1017]: Խաբուրի հովտի ստորին գոտում ընկած Վաադի Աջիջում հիմնված 11 գյուղատիպ բնակավայրերից ոչ մեկը չէր գերազանցում 2.5 հա մակերեսը և հիմնականում 1.5 հա-ից փոքր գյուղակներ էին՝ խմբված հովտի կենտրոնական՝ մոտ 12 հա զբաղեցնող բնակավայրի շուրջը: Ջեբել Աբդ էլ-Ազիզում ընկած նորասորեստանյան 25 բնակավայրերից 8-ն ուներ 1-5 հա, մնացածը՝ մինչև 1 հա մակերես: Բալիխ գետի միջին հոսանքի շրջանում ընկած նորասորեստանյան բնակավայրերի թիվը հասնում էր 19-ի, որոնցից կենտրոնական՝ ամրացված բնակավայրն ուներ 7.3 հա տարածք, մինչդեռ՝ մյուս բնակավայրերի մակերեսը տատանվում էր 0.38-0.75 հա-ի միջև: Նման իրավիճակ է վկայված նաև Ջազիրայի՝ ասորեստանյան տիրապետության մյուս գոտիներում[1018]: Այս իրավիճակը կարելի է տիպական համարել նաև ուրարտական բնակավայրերի համար: Որպես օրինակ կարելի է նշել, որ Ուրմիայի հովտում ընկած և ուրարտական շրջանով թվագրվող 27 բնակատեղիներից 15-ի տարածքը չէր գերազանցում 1.3 հա-ը (այդ թվում Դանկերալուն՝ ընդամենը 0.16 հա), 8 բնակավայրեր զբաղեցնում էին 2-3.5 հա տարածք, երկուսը՝ համապատասխանաբար 4 և 8.3 հա, և ընդամենը երկու հնավայր՝ 10 հա-ից ավելի տարածք (Թափա Դիզաջթաքյեն՝ մոտ 11.5 հա և վերը նշված Գեոյ թեփեն՝ 24 հա)[1019]:

Հայկական լեռնաշխարհում ուրարտական շրջանի համար վկայված բնակավայրերի մի մասը, որոնք կարող են դիտարկվել իբրև բուն-ուրարտական կամ հաստատապես բնակեցված են եղել ուրարտական շրջանում, դրանք ամրոցների «քաղաքային թաղամասեր»-ն են կամ կից բնակատեղիները: Նման «թաղամասեր» են ունեցել Տուշպան[1020], Քայալըդերեն[1021], Աքթաշը[1022], Ծվստանը[1023], Շուշանցը[1024], Քըզ-քալեսին (Արտամետ)[1025], Գործոթը[1026], Դելիչայը[1027], Ալիլերը[1028], Բերկրի/Մուրադիյեն[1029], Չալդըրանը[1030], Բոսթանքայան[1031], Քանջըքլըն[1032], Նորգեղը (Էսքի Նորգյուի)[1033],

[1017] Parker 2003: 536f.
[1018] Մանրամասն տե՛ս Morandi Bonacossi 2000: 370ff., 381f. Տե՛ս նաև Wilkinson *et al*. 2005: 38f.
[1019] Biscione 2003: 171ff., Fig. 8.4.
[1020] Tarhan 1994: 37ff., Fig. 13; 2003: 98; Konyar 2011a: 84ff.; նույնի՝ 2012: 409ff.; etc.
[1021] Lloyd, Burney 1965 [1967]: 217; Burney 1966: 64.
[1022] Özfirat 2009b: 352.
[1023] Dan 2010c: 53ff., Fig. 5.
[1024] Belli 1984: 164.
[1025] Dan 2010c: 78, Fig. 11.
[1026] Burney 1957: 47f.; Tarhan, Sevin 1977a: 285f.
[1027] Burney 1957: 49, Fig. 10; Burney, Lawson 1960: 184f., Fig.
[1028] Sevin 2004c: 373.
[1029] Burney 1957: 48, Fig. 7; Burney, Lawson 1960: 183f., Fig.
[1030] Burney 1957: 48f., Fig. 8; Burney, Lawson 1960: 182f., Fig.
[1031] Burney 1957: 51f., Fig. 14.
[1032] Burney, Lawson 1960: 192.
[1033] Belli, Konyar 2003a: 76.

Յոնջաթեփեն[1034] (Վանա լճի ավազան), Սամանթեփեն[1035], Բուրմագեչիդը (մերձեփրատյան գոտի)[1036], Կալատգահը[1037], Լիվարը,[1038] Կալ'եհ Հայդարին[1039], Թորքի Թափան[1040], Քանիքի Զարը[1041], Փիր Չավուշը[1042], Մոլլահասանը[1043], Շերաղայեհ Ամիրը[1044], Կալ'եհ Գոհարը (Մալեջի)[1045], Դուչգագին[1046], Կալ'եհ Սանգարը[1047], Կալ'եհ Օղլուն[1048], Քյաֆիր-կալ'եհը[1049], Կալ'եհ Քամանան[1050], Թափա Դոսոկը[1051], Աշաղի Կորուլը[1052] և Կալ'աթը[1053] (Ուրմիա լճի ավազան): Սևանա լճի ավազանում վկայված բնակավայրերից են Իշխան Նահատակը[1054], Ջաղացաձորը[1055], Ծովակը[1056], Այրքը[1057], Կոլ Պալը[1058] և Քռան[1059]:

Թվարկվածից բացի հայտնի են մեծաթիվ առանձին բնակատեղիներ, որոնք դիտվում են որպես ուրարտական: Վանի ավազանում գտնվող բնակավայրերի թվում են Արտամետը[1060], Աղաչլըքը (հնում՝ Ավզինի)[1061], Դիլքայա-հյոյուքը[1062], Աշաղը Ադըրը (Նորովանցի մոտ)[1063], Խանասորը (Գելինջիք)[1064], Գյովելեքը (Էրմանց/Էրմանիս)[1065], Գիյիմլին[1066], Փիրիհլանը[1067], Քարաթաշը[1068] և Բուրուն Հարաբեսի կոչվող քաղաքատիպ

[1034] Belli, Konyar 2001a: 183ff., Fig. 15; Belli, Konyar 2001c: 151, Fig. 2; Belli 2009a: 434ff., Çiz. 1, 4; նույնի՝ 2010b: 102ff., Res. 9-14, Çiz. 1; etc.
[1035] Sevin 1989b: 458f. Տե՛ս նաև Dan 2012: 57.
[1036] Belli 1993a: 62.
[1037] Kleiss, Kroll 1977: 71, Abb. 22.
[1038] Kleiss 1971: 55ff., Abb. 8; նույնի՝ 1976a: 42.
[1039] Kleiss 1976a: 20.
[1040] Kleiss, Kroll 1977: 62f., Abb. 11.
[1041] Kleiss 1976a: 33f., Abb. 17.
[1042] Kleiss, Kroll 1979: 183f., Abb. 2.
[1043] Dan 2010c: 69.
[1044] Kroll 1984b: 23.
[1045] Kroll 1984b: 29.
[1046] Kleiss 1969: 24, Taf. 7/3, Abb. 20, 22; Kleiss, Kroll 1978: 36ff.
[1047] Kroll 1984b: 32.
[1048] Kleiss 1972a: 64, Abb. 56.
[1049] Kleiss, Kroll 1978: 28ff., Abb. 3.
[1050] Kleiss, Kroll 1978: 48ff., Abb. 24-26, Taf. 6/3; Kleiss 1983: 285, Abb. 1; Belgiorno *et al*. 1984: 172; Biscione 2003: 174ff.
[1051] Kleiss, Kroll 1979: 195, Abb. 17.
[1052] Kleiss 1971: 68f., Abb. 18.
[1053] Kleiss, Kroll 1977: 74.
[1054] Biscione 2002: 362; նույնի՝ 2003: 182.
[1055] Biscione 2002: 362f.; նույնի՝ 2003: 182.
[1056] Sanamyan, 2002a: 335.
[1057] Biscione 2002: 362f.; նույնի՝ 2003: 182.
[1058] Biscione 2003: 182.
[1059] Biscione 2002: 361.
[1060] Տեր-Ավետիսյան 1941, էջ 42:
[1061] Tarhan, Sevin 1976-1977 [1977b]: 350ff., Fig. 4.
[1062] Çilingiroğlu 1985 : 155.
[1063] Belli 1998a: 172ff.; նույնի՝ 1999d: 268.
[1064] Belli 1994b: 13.
[1065] Belli 1994a: 342.
[1066] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 295; Tarhan, Sevin 1976-1977 [1977b]: 347ff., Res. 1-7, Lev. I-II.

բնակատեղին՝ Խլաթից հարավ-արևմուտք[1069]: Ուրարտական բնակավայրերի հետքեր են պահպանվել Բադնոցի շրջանում՝ Դեդելի, Յուքարը Գյոչմեզ և Լիչ գյուղերի տարածքում[1070], ուրարտական շրջանի բնակավայր է եղել Դիյադինի մոտ՝ Յուքարը Քոմի ուրարտական ջրամբարի մերձավորությամբ[1071] և այլն:

Հատկապես լավ են վկայված ուրարտական բնակավայրերը հյուսիս-արևմտյան Իրանում: Ամրոցների մերձավորությամբ կամ քիչ հեռու ընկած առանձին բնակավայրեր են եղել Կարա Զիա-էդ-դինի հովտում գտնվող Կըզ Չաչլուն[1072] և Կալ'եհ Բոզորգ Արվանջից մոտ 1 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ Թափա Ռեշթաբաթ Բալան[1073]: Նման բնակավայրեր են վկայված Լիվարից 2 կմ դեպի արևելք ընկած թեփեի վրա[1074], մի քանի փոքր բնակատեղիներ են վկայված Թափա Դոսոկի կայան-ամրոցից դեպի արևմուտք[1075]: Չորս բնակավայրեր էին սփռված Կալ'եհ Սեյյեդ Թաջ էդ-Դինի փոքր ամրոցի շուրջը[1076]: Կալ'եհ-Հայդարիից մոտ 6 կմ հարավ-արևելք ընկած է մեկ այլ ուրարտական բնակատեղի[1077]: Կալ'աթի ամրոցից 1 կմ դեպի արևմուտք՝ ներկայիս Նարի գյուղի մերձավորությամբ, գտնվել է մեկ այլ ուրարտական բնակատեղի[1078]: Ուրարտական բնակատեղի է եղել Քյաֆիր-կալ'եհի մերձավորությամբ գտնվող Կալ'եհ Բիլկիսի մոտ[1079]: Ուրարտական բնակատեղի է եղել Թափա Ախուդարրեն՝ Սալմաստից 30 կմ հարավ-արևմուտք[1080]: Այն-է Ռումից, ուր գտնվում է Մենուայի արձանագրությունը, 6 կմ դեպի հյուսիս վկայված է ևս մեկ բնակատեղի[1081]: Հավանաբար, ուրարտական շրջանի բնակատեղիներ են հանդիսացել Խոյից 8 կմ արևմուտք ընկած Թեփե Զավիյե Հասանխանը[1082] և Թասուջը՝ Ուրմիա լճի հյուսիս-արևելյան անկյան մոտ[1083]: Սիահ Չեշմեյից մոտ 10 կմ դեպի հյուսիս գտնվող Զավիեն ևս կարելի է դասել դրանց շարքը: Ուրարտական խեցեղեն է վկայված Քիշմիշ-թեփեում

---

[1067] Belli 1994b: 11, Fig 2.6. նույնի՝ 1994c: 94, Fig. 16.
[1068] Belli 1997d: 145.
[1069] Burney 1957: 39; Özfırat 2002: 26, n. 3.
[1070] Belli, Salvini 2003: 185.
[1071] Belli 1997d: 143f.
[1072] Kleiss 1974a: 101ff., Abb. 23, Taf. 24/1.
[1073] Kleiss, Kroll 1979: 222; Kleiss 1981a: 9; Kroll 1984b: 92ff.
[1074] Kleiss, Kroll 1979: 222; Kroll 1984b: 23.
[1075] Kleiss, Kroll 1979: 195, Abb. 17.
[1076] Kleiss, Kroll 1979: 203f., Abb. 29.
[1077] Kleiss 1976a: 31f., Abb. 15.
[1078] Kleiss, Kroll 1978: 46, Abb. 21.
[1079] Kleiss, Kroll 1978: 28ff., 62, Abb. 2.
[1080] Kleiss 1975: 65f., Abb. 17, Taf. 10/2.
[1081] Kleiss, Kroll 1977: 77f., Abb. 28.
[1082] Kleiss, Kroll 1978: 52, Abb. 1.
[1083] Kroll 1984b: 34.

և Սյունաթի մոտ[1084]: Ինչպես վերը նշվեց, միայն Ուրմիայի հովտում գտնվող և ուրարտական շրջանով թվագրվող բնակավայրերի թիվը հասնում է քսանյոթի[1085]:

Նշված բոլոր բնակավայրերն ունեցել են սահմանափակ տարածք: Քյաֆիր-կալ'եհին մերձակա «թաղամաս»-ը, օրինակ, զբաղեցնում էր մոտ 1 հա տարածք (200 × 45 մ)[1086], նույն տարածքն ուներ Արտամետի մոտ ընկած բնակատեղին[1087]: Չալդըրանի ամրոցին կից բնակատեղին ուներ մոտ 2 հա մակերես[1088]: 3 հա (300 × 100 մ) մակերես էր զբաղեցնում Փիր Չավուշի մոտ գտնվող բնակատեղին[1089]: Ծվստանին կից բնակատեղին առավել խոշոր էր՝ մոտ 8 հա մակերեսով (410 × 200 մ)[1090]: Դրանով հանդերձ՝ հազիվ թե այդ բնակատեղին ունենար 350-400-ից ավելի բնակիչ: Գործոթի ամրոցին կից բնակատեղիի՝ առավել լավ պահպանված հատվածում (մոտ 1 հա) փաստագրված և բավական խիտ կառուցապատում ունեցող կացարանների թիվը կարելի է հաշվել 10-ի մոտ (նկ. Ա-27/1)[1091]: Յուրաքանչյուր կացարանի/ընտանիքի համար հաշվելով 5 բնակիչ և կառուցապատման նույն խտությունը ենթադրելով նաև մյուս հատվածների համար՝ 8-9 հա զբաղեցնող բնակավայրի համար մենք կունենանք մոտավորապես 400-450 բնակիչ: Մինչև 10 հա զբաղեցնող բնակավայրի համար որպես զուգահեռ կարող ենք նշել Բածիրու քաղաքի օրինակը (Թել Բազի): Միտաննական դարաշրջանի այդ բնակավայրը բաղկացած էր միջնաբերդից (ուր գտնվում էր տաճարը) և դրա ստորոտին սփռված «ստորին քաղաք»-ի երկու թաղամասից: Այսպես կոչված *Weststadt*-ի պեղված հատվածում (մոտ 4 հա) բացվել են նույնատիպ կառուցվածքով բավական խիտ կառուցապատում ունեցող 50 տներ (ողջ բնակավայրն ունեցել է մոտ 75-80 տուն): Այսինքն, մեկ հա-ի վրա միջինը կազմում է 12-13 տուն՝ հաշվի առնելով նաև փողոցների զբաղեցրած տարածքը և հրապարակի առկայությունը (նկ. Ա-23/2)[1092]: Նման թաղամասը հազիվ թե ունենար 4-500-ից ավելի բնակչություն[1093]:

Ուրարտական բնակավայրի լավ վկայված օրինակ է Դուչգագին: Հիմնական բնակատեղին զբաղեցնում է մինչև 360 × 260 մ տարածք, երեք կողմերից գտնվում է եռանկյունաձև դարավանդի վրա, իսկ միակ մատչելի՝ հարավային կողմից

[1084] Kleiss 1975: 64, Taf. 10/1.
[1085] Biscione 2003: 171ff., Fig. 8.4.
[1086] Kleiss, Kroll 1978: 28ff., Abb. 3.
[1087] Տեր-Ավետիսյան 1941, էջ 42:
[1088] Burney 1957: 48f., Fig. 8; Burney, Lawson 1960: 182f., Fig.
[1089] Kleiss, Kroll 1979: 183f., Abb. 2.
[1090] Burney 1957: 45; Burney, Lawson 1960: 177f.; Dan 2010c: 53ff., Fig. 5.
[1091] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 285ff., Res. 1, Lev. X. Տե՛ս նաև Özdemir *et al*. 2013: 980.
[1092] Otto 2014: 85f.
[1093] Հմմտ. նաև Wossink 2009: 58.

պաշտպանված էր 95 մ ձգվող և արմնահեցերով ամրացված պարսպով: Հիմնական բնակատեղիի մուտքը փակող պարիսպներից դուրս սփռված էր «արվարձան»-ը՝ 360 × 115 մ մակերեսով[1094]: Ընդհանուր առմամբ՝ մոտ 7 հա մակերես[1095] զբաղեցնող բնակատեղին ունեցել է մոտ 50 տուն՝ շուրջ 300 բնակչով[1096]: Միջինը՝ մոտ 43 մարդ մեկ հա-ի համար և մոտ 7 տուն յուրաքանչյուր հա-ի վրա: Եվ դա՝ նկատի ունենալով, որ բնակավայրը, ինչպես Գործոթը, ուներ խիտ կառուցապատում (նկ. Ա-30):

Ուրարտական բնակավայրի մյուս օրինակը Կալ'աթն է[1097]: Միջնաբերդի շուրջը սփռված բնակատեղին զբաղեցնում է մոտ 3.5 հա մակերես (255 × 135 մ)[1098], բնակատեղիի արտաքին պարիսպներից դուրս սփռվել է «արվարձան»-ը (նկ. Ա-31/1): Ամրացված բնակատեղիում պեղվել են մի քանի տներ, որոնց՝ միմյանց նկատմամբ ունեցած հեռավորությունից ելնելով կարելի է դատել նաև բնակատեղիի ընդհանուր կառուցապատման մասին: Եթե նկատի ունենանք, որ Դուչգագիի՝ մոտ 7 հա զբաղեցնող բնակատեղիում եղել են մոտ 50 տներ, ապա կարելի է ենթադրել, որ այս բնակատեղին ունեցել է մինչև 20-25 տուն՝ ոչ ավելի, քան 120-150 մարդու հասնող բնակչությամբ:

Ք.ա. 8-րդ դ-ով թվագրվող Կալ'եհ Քամանայի բնակատեղին զբաղեցնում է մոտ 1.5 հա (150 × 105 մ) մակերես[1099]: Փոքր բնակատեղի է՝ բիայնական դղյակ-ամրոցի շուրջը սփռված ընդամենը հինգ բնակելի համալիրներով: Ունեցել է մինչև 50 բնակիչ (նկ. Ա-31/2)[1100]:

Այս թվերը միանգամայն համահունչ են միջինասորեստանյան և ուգարիթյան «գյուղեր»-ի բնակչության թվի մասին մեր ունեցած պատկերացումների հետ: Մասնավորապես՝ միջինասորեստանյան մեկ գյուղի համար ենթադրվում է մոտ 30 ընտանիք բնակչություն, այն է՝ 120-150 մարդ[1101]: Նման պատկեր ունենք Ալալախի գյուղատիպ բնակավայրերի համար[1102]: Ուգարիթյան մեկ գյուղի բնակչության միջին թիվը, ինչպես վերը նշվեց, ենթադրվում է մինչև 150 մարդու սահմաններում[1103]: Ուգարիթի հետ կապված նշենք նաև, որ այստեղից գտնված տեքստերից մեկը ներկայացնում է թվով 26 գյուղերում առկա տների/ընտանիքների քանակները:

[1094] Kleiss, Kroll 1978: 36ff.
[1095] Բնակատեղիի զբաղեցրած տարածքի համար տե՛ս Zimansky 1985: 35, Tab. 2.
[1096] Kleiss, Kroll 1978: 41.
[1097] Kleiss, Kroll 1978: 41ff., Abb. 17.
[1098] Բնակատեղիի մակերեսը 4.1 հա է ներկայացնում Փոլ Զիմանսկին: Տե՛ս Zimansky 1985: 35, Tab. 2.
[1099] Բնակատեղիի մակերեսը 0.94 հա է ներկայացնում Փոլ Զիմանսկին: Տե՛ս Zimansky 1985: 35, Tab. 2.
[1100] Kleiss, Kroll 1978: 51.
[1101] Wiggermann 2000: 193. Տե՛ս և հմմտ. նաև Wright 1969: 39.
[1102] Casana 2009: 30, Tab. 3.
[1103] Liverani 1982: 250ff. Մանրամասն վերլուծությունը տե՛ս նաև Heltzer 1976: 103ff.

Յուրաքանչյուր գյուղի համար նշվող տների/ընտանիքների քանակը տատանվում է 3-ից 43-ի միջև և մի դեպքում նշվում է 130 թիվը: Ընդհանուրը կազմում է 497 տուն/ընտանիք 26 գյուղերում, միջինը՝ 19 տուն/ընտանիք մեկ գյուղում: Այդ թիվը կազմում է մոտ 15 ընտանիք, եթե հանենք վերը նշված մեկ բացառությունը: Յուրաքանչյուր ընտանիքի համար ենթադրելով 4-5 թիվը՝ ուգարիթյան մեկ գյուղի միջին բնակչությունը կարելի կլինի հաշվել 60-95 մարդու սահմաններում[1104]:

Դատելով վերը նշվածից, կարծում ենք, որ շատ սխալված չենք լինի, եթե ուրարտական բնակատեղիների բնակչության խտության համար որպես հիմք ընդունենք Դուչգագիից ստացված տվյալները և միջինացնելով թվերը՝ առաջարկենք 40 մարդ մեկ հա-ի համար և 8 տուն յուրաքանչյուր հա-ի վրա:

### 1.4.3.9. **Ճարտարապետությունը և շինարարական արվեստն Ուրարտուում**

#### 1.4.3.9.1. **Պալատական և բնակարանային ճարտարապետությունն Ուրարտուում**

##### 1.4.3.9.1.1. «**Պալատներ**»- ը

Ուրարտական ճարտարապետության մեջ «պալատ» ասելով ավելի շուտ պետք է նկատի ունենալ քաղաքի կամ «պալատ-տաճար»-ի հանդիսավոր-վարչական հատվածը, քան առանձին կանգնած ճարտարապետական համալիր[1105]: Այդ երևույթը բնորոշ է հատկապես հյուսիս-միջագետքյան – հյուսիս-սիրիական-փոքրասիական քաղաքային ճարտարապետությանը[1106]: Ուրարտուում «պալատ»-ը, երևի, դա գահանիստ կամ հանդիսավոր սրահն էր, չի բացառվում՝ $^{É}$*ašiḫusi* կոչվող կառույցը[1107]: Այդ անվան համար առաջարկված նոր ստուգաբանությունը վկայում է, որ այն կարող էր լինել «հանդիսությունների սրահ»[1108]: Նամանավանդ՝ $^{É}$*ašiḫusi*-ի կարևոր նշանակության մասին է վկայում այն փաստը, որ Այանցում այդ կառույցի շինարարության ավարտը նշանավորվել է նոր տարին այդ իրադարձությամբ անվանակոչելով (նկ. A-32, 33/1-2)[1109]:

Պալատական տիպի կառույցներ են բացվել կամ դրանց գոյությունը ենթադրվում է ուրարտական բոլոր խոշոր կենտրոններում[1110]: Ուրարտական մեծ արքայի նստավայր հանդիսացող մայրաքաղաք Տուշպայի պալատական համալիրից քիչ բան է

[1104] Vidal 2014b: 47ff.
[1105] Տե՛ս և հմմտ. նաև Forbes 1983: 42.
[1106] Oppenheim 1964: 130.
[1107] KUKH, 108-109, 111, 192, 265; CTU I, A 5-65A-C, A 8-30, A 9-20, A 12-10.
[1108] Wilhelm, Akdoğan 2011: 219ff.
[1109] CTU IV, CB Ay 51.
[1110] Ուրարտական պալատական տիպի կառույցների համար ամփոփ տե՛ս նաև Forbes 1983: 41ff., Figs. 5-6, 11-13, 18.

պահպանվել: Մասնագիտական գրականության մեջ «Նոր պալատ» անվանված այդ կառույցը գտնվում էր Տուշպայի միջնաբերդը արևմուտքից պաշտպանող խանդակից դուրս ընկած գոտում՝ Վանա ժայռի արևմտյան վերջավորությանը մոտ: Այստեղ բացվել են տարբեր մեծության և նշանակության 12 սենյակներ, որոնց հատակը փորվել է ժայռի մեջ, պատերի մի մասը նույնպես ժայռեղեն է և պահպանվել է մինչև 7 մ բարձրությամբ[1111]: Սենյակներից մեկը ծառայել է որպես մառան՝ խոշոր կարասների համար[1112]: Պալատն ունեցել է ջրահեռացման համակարգ[1113]:

Ուշագրավ է, որ պալատի պատերի հիմքերի մեջ տեղադրվել են բրոնզե նվիրատվական սկավառակներ[1114]: Տուշպայի պալատը, ինչպես ենթադրվում է, առնվազն երկհարկանի էր (նկ. Ա-34/1-2)[1115]:

Առավել լավ ուրվագծվող պալատական հատվածը բացվել է Արգիշթիխինիլիում՝ քաղաքի «Արևմտյան միջնաբերդ»-ի տարածքում: Այն խոշոր համալիր է՝ 4150 մ$^2$ մակերեսով: Բաժանված է 22 սենյակների, որոնց միջուկը կազմում է ուղղանկյունաձև, շուրջ 660 մ$^2$ մակերես ունեցող սյունազարդ դահլիճը: Վերջինս շրջապատված է տարբեր նշանակության սենյակներով, որոնցից չորսն ունեցել են տնտեսական նշանակություն, այդ թվում նաև՝ 29 կարասով խոշոր մառանը (նկ. Ա-35/1-2)[1116]:

Սարդուրիխինիլիում բացված պալատական հատվածը զբաղեցնում է մոտ 2600 մ$^2$ տարածք: Ինչպես Արգիշթիխինիլիի դեպքում՝ պալատի միջուկը հանդիսավոր ուղղանկյունաձև սրահն է՝ ավելի քան 1215 մ$^2$ մակերեսով (նկ. Ա-36), որի երկու կողմերով ձգվող միջանցքները սրահը կապում էին պալատական հատվածի բնակելի և օժանդակ սենյակների ու մթերանոցների հետ, ապահովված էր ջրամատակարարման[1117] և ջրահեռացման համակարգով[1118]: Ի տարբերություն Արգիշթիխինիլիի՝ սրահի տանիքը հենվում էր ոչ թե փայտե սյուների, այլ՝ հզոր մույթերի վրա: Պալատական հատվածի արևմտյան մասում էր գտնվում հարեմի

---

[1111] Tarhan 1988: 374ff., Figs. 1-10; նույնի՝ 1994: 35ff., Fig. 12 ; Tarhan, Sevin 1989 [1990]: 356f., Res. 1-4.

[1112] Tarhan 1988: 375, Fig. 11; նույնի՝ 1994: 35, Fig. 12A.

[1113] Tarhan 1988: 376, Fig. 14-15; նույնի՝ 1994: 35.

[1114] Tarhan, Sevin 1989 [1990]: 357, Res. 10-11; Tarhan 1994: 37; նույնի՝ 2000: 162.

[1115] Tarhan 1988: 377.

[1116] Մանրամասն տե՛ս Мартиросян 1974: 79 сл., рис. 29-30; Ղաֆադարյան 1984, էջ 68-77, Գծ. 21:

[1117] Այստեղից գտնված 15 սմ տրամագծով թրծակավե խողովակները, ամենայն հավանականությամբ, նախատեսված էին ոչ թե ջրահեռացման, այլ ջրամատակարարման համար: Տե՛ս Yılmaz 2012: 232. Այստեղ նշենք, որ կավե խողովակներով ջուր է մատակարարվել Այանցի ամրոցին (Çilingiroğlu 2004c: 215, Fig. 9/1-2): Հայտնի է, որ նման համակարգ է գործել Ազնավուրթեփեն ջրով ապահովելու համար (Balkan 1960: 137): Էրեբունիից հայտնաբերված կավակերտ խողովակների համար տե՛ս Оганесян 1980: 125 сл., рис. 89-90. Տե՛ս նաև Հովհաննիսյան 1996, էջ 188-189, Աղ. 43:

[1118] Erzen 1978: 8ff., Res. 1, Lev. VIII/a.

բաժանմունքը[1119]: Ողջ կառույցն առնվազն երկհարկանի էր, մասամբ պահպանվել են դեպի երկրորդ հարկ տանող աստիճանները[1120]:

Ինչ վերաբերում է Էրեբունիին, ապա ենթադրվում է, որ այստեղ պալատական հատվածի համար որպես կենտրոն է ծառայել սյունազարդ, «պերիստիլ» բակը, որի շուրջը համախմբված էին մյուս սենյակները (նկ. Ա-37/1-2)[1121]: Նման պատկեր ունենք Այանցում միայն այն տարբերությամբ, որ «սուսի»-տաճարի շուրջը բացված «պերիստիլ» բակի տանիքը հենվում էր ոչ թե փայտե սյուների, այլ՝ մույթերի վրա (նկ. Ա-38/1-2)[1122]: Կարմիր բլուրի միջնաբերդի երկրորդ հարկը զբաղեցնող պալատական հատվածից գրեթե ոչինչ չի պահպանվել, սակայն, առկա տվյալները թույլ են տալիս երկրորդ հարկում վերականգնել մույթերով դահլիճի գոյությունը (նկ. Ա-39)[1123]: Սյունազարդ դահլիճ(ներ)ի գոյություն է ենթադրվում Բաստամի պալատական հատվածի՝ այսպես կոչված «Վերին քաղաք»-ի համար (Oberburg): Ցավոք, պալատական հատվածի վերին հարկերի համար տվյալներ քիչ ունենք[1124]: Վերին Անձավում բացվել է սյունազարդ դահլիճ՝ 238 մ$^2$ մակերեսով, որին տրվել է «Ընդունելությունների մեծ սրահ» անվանումը: Այն, կից 17 սենյակների հետ միասին կազմել է ամրոցի պալատական հատվածը (նկ. Գ-13/1, Ա-40/1-2)[1125]: Եվ վերջապես մույթերով դահլիճ է ունեցել մեկ այլ խոշոր կենտրոն Քեֆ-քալեսին (նկ. Ա-41/1-2)[1126]:

Վերջին տարիներին Ալթըն-թեփեում իրականացվող պեղումները թույլ տվեցին ուրվագծելու «սուսի»-տաճարը ներառող սյունազարդ «պերիստիլ» բակին շրջակա բազմաթիվ սենյակների նշանակությունը: Մասնավորապես, տեղի 18 սյուներով դահլիճը, որը սկբնապես ուրարտական[1127] համարվելով հանդերձ հետագայում վերաթվագրվեց աքեմենյան շրջանով[1128], նոր պեղումների լույսի ներքո վերահաստատվում է դահլիճի պատկանելությունը (ուշ) ուրարտական շրջանին (նկ. Ա-42/1-2)[1129]: Այստեղ բացվել է նաև «պալատական» համարվող սենյակների մի համալիր[1130]: Պալատական տիպի կառույց կարելի է համարել Հաֆթավան-թեփեում

[1119] Erzen 1967: 470; նույնի՝ 1978: 9.
[1120] Erzen 1966 [1968]: 57; նույնի՝ 1967: 469; նույնի՝ 1978: 9.
[1121] Оганесян 1961: 27; Ղաֆադարյան 1984, էջ 77: Մանրամասն նկարագրությունը տե՛ս Оганесян 1961: 24 сл.
[1122] Տե՛ս, օրինակ, Çilingiroğlu 2001c: 37ff., Figs. 1-2, 26; Harmanşah 2009: 191f., Fig. 3; etc.
[1123] Forbes 1983: 52, Fig. 27. Հմմտ. նաև Dan 2010: 44ff., Fig. 6.
[1124] Kleiss 1980: 303. Մանրամասն նկարագրությունը տե՛ս Kleiss 1979a: 80ff.
[1125] Belli 2009d: 755ff.; Belli *et al.* 2009: 92ff.
[1126] Bilgiç, Öğün 1964 [1966]: 111f.; Forbes 1983: 52, Pl. 3, Fig. 30; Kleiss 1988c: 186, Abb. 14.
[1127] Özgüç 1961: 253/269ff.; նույնի՝ 1966: 10ff.
[1128] Summers 1993: 85ff.; Çilingiroğlu 1997: 79.
[1129] Karaosmanoğlu, Korucu 2012: 131ff.; Karaosmanoğlu, Korucu 2013: 233.
[1130] Karaosmanoğlu *et al.* 2014b: 79f.

բացված ուրարտական համալիրը: Այն երկհարկանի էր, ունեցել է սյունազարդ դահլիճ[1131]: Եվ վերջապես հնարավոր է, որ սյունազարդ կառույց է եղել նաև Կալ'եհ Էսմայիլ Աղայում[1132], ինչը ևս կարող է հուշել այստեղ պալատական տիպի կառույցի առկայությունը:

### 1.4.3.9.1.2. **«Արքայական ապարանքներ»-ը**

$^{giš}$*dul-bu* $^{giš}$*šu-rat-ḫu bal-ti* É.GAL-*LIM*-[*šú*……] *ki-ma* $^{giš}$TIR UGU *ta-mer-ti-šú ta-ra-nu ú-šá-áš-ši* «*Սոսիները՝ սլացիկ(՞) ծառերը, նրա պալատի զարդը, [……] ինչպես անտառ, տարածել փվեց սփվերը նրա ոռոգովի դաշտերի վրա*»[1133]: «Լուվրի աղյուսակ»-ը պահպանել է նաև ուրարտական արքայի պալատի մեկ այլ հիշատակություն: «*Ջրանցքի ափին իր բավականության համար նա [կառուցեց] պալատ՝ արքայական կեցավայր, ծածկեց այն մայրու գերաններով և հաճելի դարձրեց բույրը նրա*»[1134]: Հիշատակումները վերաբերում են Ուլխուին, որը «Լուվրի աղյուսակ»-ը համարում է Ռուսայի «հանգստի քաղաք» (URU *tarmatešu ša* $^{m}$*Ursa*)[1135]: Ասորեստանյան աղբյուրից դատելով՝ երկրում գոյություն են ունեցել նման ապարանքներ, որոնք ընկած էին ամրոցներից դուրս, շրջապատված կանաչով, զուրկ էին ամրություններից, թեև, միգուցե, բուն կառույցը, շնորհիվ իր հաստաբեստ պատերի, կարող էր ծառայել նաև իբրև ամրություն[1136]:

Նման ապարանք է հնագիտորեն վկայված Յոնջաթեփեում[1137]: Այն կանգնած է ոչ բարձրադիր բլրի վրա, զուրկ է արտաքին ամրություններից և, ամենայն հավանականությամբ, չի ունեցել վարչական գործառույթներ: Բուն շինությունն առնվազն երկհարկ էր՝ կառուցված ուրարտական ճարտարապետության կանոններով, առաջին հարկում ունի ընդարձակ սալահատակ ընդունելությունների սրահ (10.20 × 16.20 մ), խոշոր կարասներով չորս մառաններ, խեցեղենի պահեստ և այլն, ընդհանուր առմամբ՝ շինության առաջին հարկն ունեցել է 12 սենյակ՝ 1750 մ$^2$ (50 × 35 մ) մակերեսով (նկ. Ա-43/1-2):

Այս նույն պատկերն է երևում նաև ուրարտական Գիրիքթեփեի պալատում[1138]: Վերջինս, ի տարբերություն Յոնջաթեփեի, շրջապատված է հաստաբեստ պարսպով, սակայն չի բացառվում, որ պարիսպը հավելված լինի պալատի գոյության վերջին

[1131] Burney 1972b: 139.
[1132] Kleiss 1976a: 29f., Abb. 12.
[1133] Mayer 1983: 88f. (Z. 206).
[1134] Mayer 1983: 88f. (Z. 211).
[1135] Mayer 1983: 90f. (Z. 216).
[1136] Տե՛ս նաև Belli 2009a: 425.
[1137] Köroğlu 2009: 384ff., Res. 1-2.
[1138] Balkan 1964: 239ff., Figs. 2-4; Özfirat 2006: 197; Köroğlu 2009: 386f., Res. 3-5; Dan 2010c: 78.

շրջանում: Պալատի բաժանմունքները խմբված են կենտրոնական «գահանիստ» դահլիճի շուրջը: Բաժանմունքների մեջ առանձնանում են մառանները՝ շարքերով դասավորված և կիսով չափ հողի մեջ թաղված կարասներով (նկ. Ա-44/1-2): Դրանցից ոչ մեկը, սակայն, չի կրում տարողության նիշեր: Երկու հնավայրն էլ աչքի են ընկնում պալատական տիպի հարուստ գույքով, հատկանշական է, որ պալատներից մեկում բացվել է հարեմի բաժանմունքը[1139]: Հարեմի բաժանմունք է հայտնի, ինչպես վերը նշվեց, նաև Հայկաբերդ-Չավուշթեփեից[1140]:

Հնարավոր է, նման ապարանքներ նկատի ունեն տեքստերը, երբ նոր տարածքների յուրացման կապակցությամբ արքաների կատարած «հզոր մեծագործություններ»-ի թվում հիշատակում են նաև *burgana*(*ni*) կառուցելու մասին: Սովորաբար, *burgana*(*ni*)-ն թարգմանվում է «պալատ» իմաստով, թեև *burgali* բառի (ուրարտ. *բոլորը*(?), *ամբողջը*(?)) հետ նմանությունը հաճախ է տեղիք տվել շփոթի[1141]: Հետաքրքիր է, որ *burgana*(*ni*)-ն գրեթե միշտ հիշատակվում է նոր հիմնադրված «խաղողուտ»-ի (*uldi šuḫe*) և «այգու» (*ṣari šuḫe*) միջև և պատահական չէ, որ երբեմն թարգմանվում է որպես «խոտհարք», «դաշտ» ևն[1142]: Հետաքրքիր է նաև, որ առաջին նման հիշատակումները թվագրվում են Իշպուինիի միանձնյա կառավարման շրջանով, սակայն, Մենուայից հետո ուրարտական տեքստերում այդ տերմինն այլևս չի հանդիպում[1143]: Մյուս կողմից, խաղողուտների և այգիների հետ կապը շատ է հիշեցնում «Լուվրի աղյուսակ»-ից հայտնի՝ վերը տրված նկարագրությունը, և չի բացառվում, որ *burgana*-ն հանդիսացել է պալատական տիպի կառույց կամ ապարանք՝ շրջապատված խաղողի և պտղատու այգիներով կամ երկրագործական հողերով: Դա է կարծես հուշում նաև *burgana*(*ni*) բառի ստուգաբանությանը: Այն վաղուց է համադրվել հայերենի *բուրգն* բառի հետ[1144]: Սա շատ հետաքրքիր է՝ հաշվի առնելով այն փաստը, որ *բուրգն* (իմա՝ *աշտարակ*) էին անվանվում նաև նման կալվածքները միտաննական դարաշրջանում (*dimtu*): Ըստ այդմ, կարելի է *burgana*(*ni*)-ն բնորոշել իբրև *dimtu*, այն է՝ «(ամրացված) ագարակ՝ իր երկրագործական շրջանով»: Ուրարտական

---

[1139] Balkan 1964: 241f.; Çavuşoğlu *et al.* 2010: 160ff.

[1140] Erzen 1967: 470; նույնի՝ 1978: 9.

[1141] Меликишвили 1960: 392 (*крепость*(?), *подкрепление*(?), *войско*(?)).

[1142] Sevin 2000: 396, n. 4. *Burgana*-ի՝ «դաշտ, վարելահող» հնարավոր նշանակությունն ամենևին չի հակասում այդ նույն տերմինի «ապարանք», «ագարակ-դաստակերտ» նշանակություններին: Տե՛ս և Հմմտ. Սարգսյան 1962, էջ 84: Այստեղ տե՛ս նաև Երվանդակերտ-դաստակերտի շուրջն արված վերլուծությունը:

[1143] КУКН, с. 441; CTU II: 74.

[1144] Համադրությունն ըստ Ժ. Սանտալճյանի, տե՛ս Աճառյան 1971, էջ 488: Տե՛ս նաև Adontz 1946: 403: Հմմտ. Diakonoff 1985: 602f.; Petrosyan 2010: 134f.

արձանագրություններում որպես նորակառույց հիշատակվող «տներ»-ից (É) որոշները կարող էին լինել նման ապարանքներ (*burgana*(*ni*)):

Հնարավոր է՝ հենց *burgana*(*ni*)-ներ են պատկերված ուրարտական բրոնզեգործական իրերի վրա՝ ի դեմս «ճաշկերույթ»-ի տեսարանների հետնախորքում երևացող մի քանի հարկանի աշտարակավոր կառույցների (տե՛ս նկ. Ա-45/1-6):

### 1.4.3.9.1.3. **Ուրարտական «պետ-ստանդարտ»-ի տները**

Ուրարտական խոշոր կենտրոններում բացված բնակելի շենքերի մի մասը կառուցվել էր պետության կողմից: Դրանք բավական ընդարձակ՝ մոտ 250-ից մինչև 780 մ$^2$ մակերեսով և մինչև 10-15 սենյակից կազմված կանոնավոր հատակագծով, իսկ երբեմն՝ բազմաբնակարան կառույցներ են և նոսր կառուցապատված թաղամասերի ընդարձակ առանձնատներ[1145]:

Կարմիր բլուրում բացված նման տներից մեկը զբաղեցնում էր շուրջ 500 մ$^2$ մակերես: Առանձնատունն ունեցել է ուղղանկյունաձև հինգ սենյակ, մեկ մեծ, սյունազարդ դահլիճ և բակ՝ 3 մ լայնությամբ մուտքով, որը, հավանաբար, նախատեսված էր մարտակառքերի և սայլերի համար (նկ. Ա-46/1-2)[1146]: Բնակելի տների կորիզը կազմում էր ընդհանուր սենյակը՝ ծածկված մի քանի սյուների օգնությամբ, իսկ ընդհանուր սենյակի կամ դահլիճի շուրջը դասավորված էին մնացյալ բնակեի և օժանդակ սենյակները[1147]: Տիպաբանորեն նման տները Ք.ա. 2-րդ հազ-ի միտաննական և միջինասորեստանյան բնակարանային ճարտարապետության շարունակությունն են և հիշեցնում են Նուզիից և Աշշուրից հայտնի և գրականության մեջ որպես *Mittelsaalhaus* դասակարգված տները (նկ. Ա-47/1-2)[1148]:

«Ուրարտական վերնախավ»-ի տները հաճախ ցուցաբերում են ուրարտական «պետ-ստանդարտ»-ի ճարտարապետությանը բնորոշ մոնումենտալություն. ունեն ուղիղ, որմնահեցերով զարդարված պատեր, որոնք պատերն ամրացնելու դեր չեն կատարել և ունեցել են գեղագիտական արժեք[1149] (նկ. Ա-48/1-5): Ուրարտական «պետ-ստանդարտ»-ի ճարտարապետության լավագույն օրինակը Կարմիր բլուրի քաղաքային հատվածի հարավ-արևմտյան մասում պեղված բազմասեկցիոն շենքն է: Այն զբաղեցնում է ավելի քան 2200 մ$^2$ մակերես (62 × 33 մ), ունի որմնահեցերով զարդարված կանոնավոր ուղղանկյունաձև հատակագիծ՝ անկյունային

[1145] Тирацян, Кошеленко 1985: 26; Հովհաննիսյան 1996, էջ 128, Աղ. 28-29; Hoffman 1978: 80ff.; Stone 2012: 91ff.
[1146] Оганесян 1955: 18 сл.
[1147] Ղաֆադարյան 1984, էջ 121:
[1148] Novák 1994: 399, Abb. 6, 8-9, etc.; նույնի՝ 1999: 131ff., Fig. 7.
[1149] Kleiss 1978: 399; նույնի՝ 1979a: 29f.; Ղաֆադարյան 1984, էջ 95:

աշտարակներով, և իրենից ներկայացրել է միանման հատակագծով չորս բնակարաններ՝ յուրաքանչյուրը 11 տարբեր բաժանմունքներից կազմված, առանձին շքամուտքերով (նկ. Ա-48/5)[1150]: Նման բնակելի համալիր է պեղվել նաև Տուշպայի «ստորին քաղաք»-ում[1151]: Ուրարտական «պետ-ստանդարտ»-ի կամ «վերնախավ»-ի տներն իրենց տարածքով և կառուցապատման հանդիսավորությամբ միանգամայն համադրելի են միտաննական (Նուզի[1152]) և ասորեստանյան նահանգային կենտրոններում պետության կողմից կառուցված վերնախավի տներին, ինչպես, օրինակ, Դուր-Կատլիմուի «Ստորին քաղաք» II-ում է[1153] (նկ. Ա-49/1-2):

Հետաքրքիր է, որ նման տներով կառուցապատված «թաղամասեր»-ը առավել մոտ են ընկած ամրոցին (Տուշպա[1154], Այանց[1155], Կարմիր բլուր[1156]) կամ գտնվել են ամրոցի «վերին քաղաք»-ի տարածքում՝ ամրություններից ներս (Արգիշթիխինիլի-Արմավիր[1157], Կալ'եհ Էսմայիլ Աղա[1158]), սակավ դեպքերում՝ նաև բուն ամրոցի տարածքում (Այանց): Այանցի ամրոցի ներսում եղել են երկհարկանի տներ կամ բնակելի համալիրներ, որոնցից գտնված գույքից դատելով՝ պատկանել են ուրարտական վերնախավի մարդկանց[1159], թերևս՝ քրմական կամ ռազմավարչական վերնախավի ներկայացուցիչներին: Այանցի արտաքին քաղաքի «վերնախավի թաղամաս»-ի որոշ տներ եղել են երկհարկ[1160]:

«Ուրարտական վերնախավի թաղամաս»-ի տիպիկ օրինակ է Դուչգագին: Հյուսիս-արևմտյան Իրանում՝ Մակուից մոտ 50 կմ հարավ-արևելք ընկած բնակավայրը բաղկացած է երկու թաղամասից, որոնցում բնակվել են ակնհայտորեն երկու տարբեր սոցիալական խմբերի պատկանող մարդիկ: Հիմնական բնակատեղին իր «արվարձան»-ից բաժանվում է պարսպով: «Արվարձան»-ում կառուցված բնակարաններն ավելի պարզունակ են, քան բուն բնակատեղիում բացված տները, որոնք ընդարձակ են, իսկ առավել ընդարձակ տունը զբաղեցնում է ավելի քան 2800 մ$^2$ մակերես (60 × 47 մ)՝ ընդգրկելով սրահներ, փոքր սենյակներ, միջանցքներ, ինչպես նաև բակ (նկ. Ա-30)[1161]:

---

[1150] Мартиросян 1963: 221 сл., рис.; նույնի՝ 1964: 260 сл., рис. 98-99; Հովհաննիսյան 1996, էջ 135-136, Աղ. 31:
[1151] Նույն տեղում, էջ 126-127:
[1152] Novák 1999: 130f., Fig. 5.
[1153] Kühne2006-2008: 548, Abb. 3; նույնի՝ 2011: 146, Fig. 11.5.
[1154] Tarhan 2003: 99f.; նույնի՝ 2007b: 118, Fig. 1.1d.
[1155] Stone, Zimansky 2001: 361, 363, Figs. 5-12, 19-21; Stone, Zimansky 2003: 214ff., 220, Fig. 11.4-11.5, etc.
[1156] Мартиросян 1961: 106 сл., рис. 42; նույնի՝ 1964: 262, рис. 98.
[1157] Мартиросян 1957: 83 сл.; նույնի՝ 1967: 222 сл.; նույնի՝ 1974, рис. 38-46; Հովհաննիսյան 1996, էջ 100-101:
[1158] Kleiss, Kroll 1977: 64ff., Abb. 16.
[1159] Çilingiroğlu 2012a: 9ff.; Solmaz, Dönmez2013: 3.
[1160] Stone 2012: 95.
[1161] Kleiss, Kroll 1978: 36sqq, Abb. 14.

Նման շենքեր են բացվել նաև Տուշպայում[1162], Հայկաբերդում[1163], Այանցում[1164], Բաստամում[1165], Քարագյունդյուզում[1166], Թորքի Թափայում[1167], Կալ'աթում[1168], Արագածում[1169] ևն:

### 1.4.3.9.1.4. **Ուրարտական «քաղաքային» տները**

Ի տարբերություն ուրարտական վերնախավի և պետության կողմից կառուցված ընդարձակ տների՝ բնակչության հիմնական մասը բնակվում էր 16-ից մինչև 100 մ$^2$ մակերես զբաղեցնող փոքր, կառուցվածքով իրար նման տներում: Դրանք հիմնականում երկսենյակ են, ունեն նախասրահ կամ բաց բակ (նկ. Ա-50/1-2): Պատերը կառուցված են քարից՝ կավի լիցքով, աղյուսի կիրառության հետքերն չեն նկատվում: Ունեցել են եղեգնյա կավածեփ տանիքներ[1170]: Այդ նույն տիպի տներ են ի հայտ գալիս հետագայում ևս, օրինակ, Կարմիր բլուրում, ուր հանդիպում են բաց կամ կիսաբաց բակով և երկու սենյակով տներ[1171]: Նման տները բնորոշ էին Վանա լճի ավազանին դեռևս մինչուրարտական շրջանից սկսած[1172], իսկ ճարտարապետությունը հանգում է փոքրասիական-խեթական օրինակներին[1173]: Դա բացատրել միայն արևմուտքից իրականացված գերեվարություններով, ինչպես, օրինակ, կարելի է ենթադրել Կարմիր բլուրի համար՝ հաշվի առնելով այդտեղ խեթա-լուվիական վերաբնակիչների առկայությունը[1174], բավարար չէ: Թերևս, կարելի է խոսել շատ ավելի խորքային կապերի մասին:

Ք.ա. 7-րդ դարում նկատվում է ամրոցների տարածքի և բնակելի թաղամասերի ընդարձակում գրեթե բոլոր խոշոր կենտրոններում, ներառյալ՝ Արգիշթիխինիլին (Արմավիր-բլուր և Ս.Դավթի-բլուր)[1175], Սարդուրիխինիլին (Հայկաբերդ/Չավուշթեփե)[1176], Վերին Անձավի ուրարտական ամրոցը[1177], Թեյշեբայի քաղաքը (Ծովինար), ներկայիս

---

[1162] Taner Tarhan 2005: 131.
[1163] Erzen 1978: 29, Fig. 13.
[1164] Stone 2008: 150, Fig. 8.10.
[1165] Kleiss 1972a: 36f., Abb. 31-32; նույնի՝ 1977b: 41ff., Abb. 31-33; նույնի՝ 1978: 399; etc.
[1166] Sevin, Özfirat 2001a: 142.
[1167] Kleiss, Kroll 1977: 62f., Abb. 11.
[1168] Kleiss, Kroll 1978: 41ff., Abb. 17.
[1169] Оганесян 1958: 81 сл., рис. 2-4; Հովհաննիսյան 1996, էջ 129, Աղ. 23/բ:
[1170] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 295f.
[1171] Сорокин 1952б: 79 сл.; Оганесян 1955: 18 сл., рис. 9а; Հովհաննիսյան 1996, էջ 131-134, Աղ. 30; Мартиросян 1957: 83 сл.; Пиотровский 1959б: 175 сл.; Forbes 1983: 119f., Figs. 63, 67; Ղաֆադարյան 1984, էջ 121:
[1172] Tarhan, Sevin 1976-1977 [1977b]: 356ff., res. 10-11.
[1173] Tarhan, Sevin 1976-1977 [1977b]: 356ff.; Ղաֆադարյան 1984, էջ 123:
[1174] Tiratsyan 2008: 79ff.
[1175] Мартиросян 1974: 53.
[1176] Erzen 1974a: 21f.; նույնի՝ 1978: 6, 17ff.; Sevin 2005b: 97.
[1177] Belli 1999a: 23; նույնի՝ 1999c: 511.

Հոռոմի ուրարտական բերդամրոցը[1178] և այլն[1179]: Նոր ձևավորված թաղամասերում ի հայտ են գալիս մեծաթիվ, փոքր հյուղակներ, սովորաբար՝ 1-2, առավելագույնը՝ 3 սենյակից բաղկացած, պատերը բարակ են, անկանոն, կառուցված մանր խճաքարերից կամ հում աղյուսից՝ կավե շաղախով: Խրճիթները միմյանց կից են, իսկ որպես «փողոց» ծառայում են մոտ մեկ մետր, երբեմն՝ շատ ավելի քիչ լայնություն ունեցող միջանցքները[1180]: Նման պատկեր է տեսանելի Արգիշթիխինիլի-Արմավիրում (նկ. Ա-51/1-3): Կարմիր բլուրում ևս ի հայտ են գալիս հապճեպ կառուցված փոքր կացարանները, որոնք ունեցել են քարերի մեկ շարքից կազմված և կամ կավածեփ պատեր: Ամենայն հավանականությամբ՝ դրանք ժամանակավոր կացարաններ էին, որ բարձրացվել են քաղաքում ապաստանած շրջակա բնակչության կողմից[1181]: Այստեղ տեսնել սոցիալական շերտավորման ինչ-որ արտահայտություն, ճիշտ չէ:

Գյուղական տիպի բնակավայրերի տների համար որոշ պատկերացում կարող են տալ Գյովելեքի[1182], Յուքարը Քոմի[1183], Մարաթաշի[1184], Աշաղը Ադըրի[1185], Գելինջիքի[1186] մոտ բացված կացարանները (նկ. Ա-52/1-6):

### 1.4.3.9.1.5. **Շինարարական արվեստն Ուրարտուում**

Շինարարության մեջ կիրառվել է քարե հիմքի վրա հում աղյուսից պատեր բարձրացնելու սկզբունքը[1187]: Պատերը սվաղվել են կավաշաղախով, երբեմն՝ հարդախառն, որի վրա խորադիր գծերով վերարտադրվել է աղյուսի շարվածքը:

Շինարարության մեջ օգտագործված աղյուսները տարբեր չափերի են: Ստանդարտը, թերևս, Կարմիր բլուրում օգտագործված քառակուսի՝ 51.8 × 51.8 × 14 սմ, և ուղղանկյունաձև՝ 51.8 × 35.0 × 14 սմ, չափերով աղյուսներն են[1188]: 51.8 սմ-ը համապատասխանում էր ուրարտական մեկ արմնկաչափին, որն էլ ընկած էր հաշվարկների հիմքում: Ըստ այդմ, միջնաբերդի արտաքին պարիսպն ունեցել է մոտ յոթ արմնկաչափ կամ տասը շարք աղյուսի հաստություն (շուրջ 3.5 մ): Ամրոցի շինությունների ներքին պատերն ունեցել են չորս արմնկաչափ կամ վեց շարք աղյուսի հաստություն (շուրջ 2.1 մ):

---

[1178] Հմայակյան 2000, էջ 8-9; Դևեջյան, Հմայակյան 2004, էջ 38:
[1179] Մանրամասն տե՛ս Grekyan 2009: 98; Գրեկյան 2013ա, էջ 64:
[1180] Ղաֆադարյան 1984, էջ 38, 46, 115 հաջորդիվ:
[1181] Пиотровский 1950: 21 сл.; նույնի՝ 1959б: 184 сл.; Мартиросян 1961: 126 сл., 134.
[1182] Belli 1994a: 342.
[1183] Belli 1997d: 143f.
[1184] Belli 1997d: 145.
[1185] Belli 1998a: 172ff., esp. 174; նույնի՝ 1999d: 268.
[1186] Belli 1994b: 13.
[1187] Մանրամասն տե՛ս Հովհաննիսյան 1996, էջ 190-197:
[1188] Пиотровский 1950: 43; նույնի՝ 1959б: 170. Հմմտ. Оганесян 1955: 79 сл.

Հետաքրքիր է, որ Արագածում օգտագործված աղյուսների չափը նույնն է, ինչ Կարմիր բլուրինը՝ 51.8 × 51.8 × 14.8 և 51.8 × 35 × 14.8[1189], և կարելի է ենթադրել, որ այս ամրոցը կառուցվել է Կարմիր բլուրի հետ միաժամանակ՝ քաղաքաշինական նույն ծրագրի շրջանակում: Ուրարտական արմնկաչափն է ընկած նաև Արտաշատի ուրարտական ամրոցում օգտագործված աղյուսների չափի հիմքում (51.8 × 51.8 × 14 և 51.8 × 35 × 14 սմ)[1190], ինչպես Թոփրաքքալեում էր (52 × 33 × 14 սմ[1191]) և Այանցում (51 × 35 × 14 սմ)[1192]:

Դովրիում հանդիպում է աղյուսների 52 × 52 × 16[1193], Ալթըն-թեփեում՝ 52 × 52 (?) × 15 սմ չափը[1194]: Քեֆ-քալեում կիրառված աղյուսների չափը մոտ է ուրարտական «պետ-ստանդարտին»: Այստեղ հանդիպում են 53 × 35 × 14 և 53 × 53 × 14 սմ չափերով աղյուսներ[1195]

Փոքր-ինչ տարբեր չափերի աղյուսներ են օգտագործվել Էրեբունիում՝ քառակուսի և ուղղանկյունաձև, համապատասխանաբար՝ 47.4 × 47.4 × 12.5 և 32.3 × 47.4 × 12.5 սմ չափերով[1196]: Տարբեր է նաև Բաստամում կիրառված աղյուսների չափը. այստեղ հանդիպում են 53 × 37 × 20[1197], 50 × 50 × 12[1198], 50 × 34 × 15 և 42 × 33 × 15 սմ[1199] չափերի աղյուսներ:

Միաժամանակ, ուրարտական որոշ կենտրոններում հանդիպող աղյուսները ստանդարտից դուրս են: Ալթըն-թեփեում հանդիպող մյուս չափը կազմում է 60 × 50 × 15 սմ[1200], Ազնավուրթեփեում՝ 60 × 60 × 10 սմ[1201], Գիրիքթեփեյում՝ 33 × 33 × 13 և 50 × 50 × 12 սմ[1202], որոնցից երկրորդ չափը հանդիպում է նաև Բաստամում: Աղյուսների մի քանի ստանդարտ է կիրառվել նաև Հայկաբերդում (50 × 30 × 15 սմ, 51 × 14 × 14 սմ և 55 × 13 × 13 սմ)[1203]: Աղյուսների չափը Կալեհ Գյավուրում կազմում է 43 × 43 × 13 սմ[1204], Ագրաբ թեփեում՝ 49/50 × 49/50 × 10/12 սմ[1205], Օղլանկալայում՝ 40 × 40 × 20 սմ[1206]:

---

[1189] Оганесян 1958: 92.
[1190] Խաչատրյան 2007, էջ 5:
[1191] Erzen *et al*. 1960 [1961]: 14.
[1192] Çilingiroğlu 2011b: 341.
[1193] Համայակյան և այլք 1987, էջ 34; նույնի՝ 2005ա, էջ 75:
[1194] Özgüç 1961: 263/277.
[1195] Bilgiç, Öğün 1964 [1966]: 68; նույնի՝ 1965a [1967]: 4 / 14.
[1196] Оганесян 1951: 86; նույնի՝ 1980: 118 сл.
[1197] Zimansky 1988: 108.
[1198] Kleiss 1972a: 22.
[1199] Kleiss 1979a: 53.
[1200] Özgüç 1966: 8.
[1201] Balkan 1960: 136.
[1202] Balkan 1964: 239.
[1203] Erzen A. 1968 [1969]: 80; նույնի՝ 1978: 18.
[1204] Kleiss 1972b: 148; Kleiss, Kroll 1976: 109.
[1205] Muscarella 1973: 50

Ամրոցների շինարարության համար պահանջվում էր հսկայական քանակությամբ քար և աղյուս: Միայն Կարմիր բլուրի աղյուսե պատերը բարձրացնելու համար պահանջվել է մոտ 2 մլն հում աղյուս[1207]: Այանցում պարսպի և ներքին կառույցների պատերի քարե հիմքերը կառուցելու համար անհրաժեշտ է եղել 45 հազ. անդեզիտե և կրաքարի բլոկներ[1208], հում աղյուսի պատի շարվածքի համար՝ մոտ 8 մլն աղյուս, ենթադրվում է, որ շինարարության ընթացքում հատվել է մոտ 50 հազ. ծառ[1209]: Արգիշթիխինիլիի զույգ միջնաբերդերի պարիսպները կառուցելու համար օգտագործվել է 40 հազ. 500 մ$^3$ բազալտ և 95 հազ. 500 մ$^3$ կավ՝ քարե հիմքերի 3 մ միջին բարձրության և 2.5 մ միջին լայնության դեպքում, որի վրա, իր հերթին, բարձրացվել է հում աղյուսի 7 մ բարձրությամբ պատը[1210]: Ինչ խոսք, այս թվերն անհամեմատելի են նորասորեստանյան շրջանի կենտրոնների համեմատ, որոնցից միայն Կալխուի պարիսպների կառուցման համար օգտագործվել է 70 մլն հում աղյուս[1211]:

Ամրոցների զբաղեցրած՝ համեմատաբար սահմանափակ տարածության պատճառով կիրառվում էր հարկերի բարձրացման մեթոդը[1212]: Ներքին կառույցներն ունեին մինչև մի քանի հարկ բարձրություն, ինչը երևում է նաև պատկերագրության մեջ. շենքերի մի քանի մանրակերտեր, ինչպես նաև բրոնզե բազմաթիվ գոտիների պատկերները վկայում են մինչև երեք հարկ ունեցող շինությունների գոյությունն ուրարտական քաղաքներում (նկ. Ա-53/1-2): Կրկնահարկ և եռահարկ շինություններ վկայված են նաև հնագիտորեն: Երկրորդ հարկ կամ կրկնահարկ շինություններ են ունեցել Տուշպան[1213], Սարդուրիխինիլին[1214], Կարմիր բլուրը[1215], Այանցը[1216], Արագածի[1217] և Ագրաբ-թեփեի ամրոցները[1218], հնարավոր է՝ նաև Քայալըդերեն[1219]: Երկհարկանի էր Յոնջաթեփեի ուրարտական պալատը[1220]: Ենթադրվում է, որ եռահարկ կառույց է եղել Կալ'եհ Քամանան[1221]:

---

[1206] Ristvet *et al*. 2012b: 42.
[1207] Пиотровский 1959б: 170. Տե՛ս և հմմտ. նաև Jakubiak 2003b: 65ff.
[1208] Çilingiroğlu 2011b: 340.
[1209] Çilingiroğlu 2011b: 341.
[1210] Мартиросян 1974: 24.
[1211] Reade 1982: 105.
[1212] Kleiss 1976b: 29; նույնի՝ 2005: 210.
[1213] Տե՛ս վերը, ծնթ. 1115:
[1214] Տե՛ս վերը, ծնթ. 1120:
[1215] Տե՛ս վերը, 1.4.3.7.:
[1216] Çilingiroğlu 2011a: 1061.
[1217] Оганесян 1958: 87 сл.; Ավետիսյան 2001, էջ 20-27:
[1218] Muscarella 1973: 53.
[1219] Burney 1966: 83.
[1220] Տե՛ս, օրինակ, Belli, Konyar 2001: 169ff.
[1221] Kleiss, Kroll 1978: 48ff., Abb. 24-26.

## 1.5. Պաշտամունքային կենտրոնները, տաճարները և սրբարաններն Ուրարտուում

### 1.5.1. Ուրարտական տաճարների ընդհանուր բնութագիրը

#### 1.5.1.1. Առաջին տաճարները

Ինչպես վերը նշվեց (1.1.1.)՝ Իշպուինիի ու Մենուայի վարած կրոնական քաղաքականության դրսևորումը երկրի ամենատարբեր հատվածներում աստվածների որոշակի մի խմբի նվիրված արձանագիր քարակոթողների (ուրարտ. $^{(NA_4)}$*pulusi*) կանգնեցումն էր: Հայտնի են «կոթող» կանգնեցնելու մասին տարբեր արքաների թողած 37 արձանագրություններ (Աղ. 15):

Անկասկած, Ուրարտուում կոթողներն ունեցել են պաշտամունքային մեծ նշանակություն (նկ. Ա-54/1-2)[1222]: Ըստ ամենայնի՝ դրանք վաղնջական պատկերացումների վերապրուկ էին, երբ կոթողը կարող էր ընկալվել թե իբրև ժայռ կամ լեռ, թե իբրև ծառ, թե իբրև հասկ կամ այս բոլորը միասին՝ կապվելով, ընդհանրապես, պտղաբերության պաշտամունքի հետ: Հավանաբար, կոթողները սկզբնապես ամփոփել են այն բոլոր նախնական պատկերացումները գերբնականի մասին, որը դեռևս չէր տրոհվել առանձին ասպեկտներ կրող ուժերի, իսկ այդ ուժը մարմնավորող աստվածությունը դեռ չէր ստացել շատ ավելի ընկալելի՝ մարդկային դեմք ու կերպարանք:

Արևելատավրոսյան-զագրոսյան լեռնագոտում նման կոթողները հայտնի էին վաղուց և հանդիպում են տարածաշրջանի մի քանի հուշարձաններում, ներառյալ՝ Աշշուրը[1223], Հասանլուն[1224], Մուջեսիրը[1225], ևն[1226]: Հաշվի առնելով ուրարտական աստվածների խմբի հնարավոր ծագումը այդ նույն գոտուց՝ բնական կլինի ենթադրել, որ Ուրարտուում կոթողներ կանգնեցնելու ավանդույթը նույնպես կարող էր գալ այստեղից (նկ. Ա-55/1-2)[1227]:

Այն տարածքները, որտեղ տեսնում ենք ուրարտական նմանատիպ առաջին կոթողների խմբերը՝ կարելի է դիտարկել իբրև յուրատեսակ լանդշաֆտ, սրբազան տարածք, ուր բնակվում էին աստվածները: Նման առաջին բաց սրբավայրը, որը

---

[1222] Մանրամասն տե՛ս Riemschneider 1965: 331ff.; Дьяконов 1983a: 191; Հմայակյան 1990, էջ 69-70; Salvini 1993: 543ff.; նույնի՝ 1995a: 168ff.; Çevik 1999: 344ff.

[1223] Andrae 1913. Քննարկումների համար տե՛ս և հմմտ. Saporetti 1974; Miglus 1984: 133ff.; Dalley 1986: 88; Reade 2004: 455ff.; etc.

[1224] Dyson 1977: 551f.; նույնի՝ 1989b: 116ff., Figs. 1, 12, 14.

[1225] Boehmer 1973: 31ff.; Taf. 11/3, 12/1-4, 13/1-2, 14/1-5; նույնի՝ 1979: 143f., Taf. 26/b, Taf. 27/a-b.

[1226] Հին առաջավորասիական զուգահեռների համար տե՛ս Canby 1976: 113ff.; Hutter 1993: 87ff.; Işık 1995: 60ff.; etc. Տե՛ս նաև Burney, Lang 1971: 149.

[1227] Çilingiroğlu 1997: 106.

համարվում է հնագույնն Ուրարտուում, գտնվում է Աշոտակերտում (Յեշիլալըչ): Այստեղ՝ Խալդիի «դարպաս»-ի մերձավորությամբ, պահպանվել են կոթողների հիմքերի վեց ժայռափոր փոսորակներ (նկ. Ա-56/1)[1228]: Նման մեկ այլ վայր էր Քարահանը (ուրարտական տեքստերի Արծունիունի քաղաքը՞), ուր ստեղծված արձանախումբն ընդգրկում էր ութ կոթողներ[1229]: Չորս կոթողներից կազմված բացօթյա սրբարան է եղել Ալթըն-թեփեում (նկ. Ա-56/2)[1230]: Եվս երեք կոթողներ են գտնվել Ազնավուրթեփեից[1231]: Նման սրբարաններ են բացվել Տուշպայում[1232] և Հայկաբերում[1233]: Ուրարտական կնքադրոշմներում կարելի է հանդիպել կոթողների և սրբազան ծառերի պատկերումների (նկ. Ա-57/1-2)[1234]:

Ամենայն հավանականությամբ՝ նման սրբազան տարածքներն էին, որ հիշատակվում են Իշպուինիի և Մենուայի արձանագրություններում իբրև *ṭeribišuzi*[1235], որը կարող էր լինել բացօթյա «կոթողների սրբարան» (Աղ. 15)[1236]: Ուրարտական բացօթյա սրբարանների համար մեր ունեցած պատկերը շատ է հիշեցնում Հերոդոտոսի այն հաղորդումը պարսիկների մասին, ըստ որի՝ նրանք չունեին տաճարներ, իսկ ծեսերն իրականացնում էին բացօթյա[1237]: Նույն կերպ և Դարեհ I-ի արձանագրություններում հիշատակված *ayādanā*-ն՝ «պաշտամունքի վայր»-ը[1238] կամ «աստվածների տուն»-ը (é.⌜meš⌝ šá dingir.meš), ինչպես տրված է արձանագրության բաբելոնյան տարբերակում[1239], նույնպես կարող էր լինել բացօթյա սրբարան[1240]:

Կարելի է կարծել, որ ուրարտական շրջանում կոթողն ինքը մարմնավորում էր ոչ միայն այն աստծուն, որի անունն արձանագրված էր, այլև այն «տուն»-ը, որտեղ բնակվում էր այդ աստվածը: Մեզ հնարավոր է թվում Ուրարտուում կանգնեցված քարե կոթողներն ընդունել իբրև առաջին պաշտամունքային կառույցներ, որոնք քիչ ավելի ուշ՝ արդեն «կայսերական» շրջանում, ձեռք կբերեն ճարտարապետական կառույցի իրենց ուրույն բնութագիրը ի դեմս «սուսի»-տաճարի (տե՛ս ստորև):

---

[1228] Sevin, Belli 1976-1977: 373f., Res. 2, Lev. VII/1-2.
[1229] Dinçol, Kavaklı 1978; Dinçol, Kavaklı 1978 [1979]: 17ff.
[1230] Özgüç 1969: 2, 28f., 73f., Pls. 26-27.
[1231] Bora 2007: 5ff., Figs. 1-6.
[1232] Işık 1995: 1, 60f., Abb. 161; Tarhan 1994: 28f., Figs. 5-7; 2011: 322ff., Figs. 20a-d; etc.
[1233] Işık 1995: 47f., 60f., Abb. 159-160, 162-163.
[1234] Lehmann-Haupt 1907: 82 (Fig. 54): Տե՛ս նաև Işık 1986: 1ff.; Çevik 1999: 344 and n. 50-52 (Lev. IIa-b, etc.).
[1235] КУКН, 20a, 41+42, 172a; CTU I, A 2-9 A, B; A 5-28; A 5-30, A 5-31.
[1236] Salvini 1993: 543ff. and esp. p. 547.
[1237] Հերոդոտոս, I. 131.
[1238] Schmitt 2009: 46 (F).
[1239] Malbran-Labat 1994: 95, 110 (§ 13).
[1240] Boyce 1985: 429.

### 1.5.1.2. **Տաճարների և սրբարանների տիպերն ըստ ուրարտական սեպագիր աղբյուրների**

#### 1.5.1.2.1. $^{(GIŠ)}$**KÁ**$^{(MEŠ)}$

Ամենատարածված և առավել վաղ թվագրվող պաշտամունքային կառույցներն Ուրարտուում «դարպաս(ներ)»-ն էին: Դրանք կոչվում էին *šeštili*, բայց տեքստերում գրեթե միշտ գրվում են շումերագիր գրությամբ՝ $^{(GIŠ)}$KÁ: Պահպանվել են «դարպաս(ներ)»-ի կառուցման մասին վկայող քսանութ տեքստեր՝ սկսած Իշպուինիի Սարդուրորդու կառավարման շրջանից մինչև Ռուսա Արգիշթորդի: Հետաքրքիր է, որ հիշատակումների ճնշող մասը վերաբերում է Իշպուինիի և Մենուայի կառավարման շրջանին (քսաներեք տեքստ, տե՛ս Աղ. 14): Եվ թեև հետագա շրջանին վերաբերող, հատկապես՝ Ռուսա Արգիշթորդու իրականացրած լայնածավալ քաղաքաշինության հետ կապված տեքստերն ամբողջությամբ չէ, որ մեզ են հասել և «դարպաս(ներ)-ի կառուցման մասին հիշատակումները բնականաբար կարող են լինել և ավելին, բայց այնուամենայնիվ կարելի է փաստել, որ Իշպուինին և Մենուան եղել են ամենաեռանդուն գործիչները, որոնց օրոք կանգնեցվել է ուրարտական պաշտամունքային կառույցների հիմնական մասը[1241]:

«Դարպաս(ներ)»-ի կառուցումն Ուրարտուում կապվել է Խալդիի պաշտամունքի հետ, իսկ դրանք սովորաբար կոչվել են «Խալդիի դարպաս» ($^{d}$*ẖaldiei* $^{(GIŠ)}$KÁ): Համենայն դեպս, «Միերի դռան» արձանագրությունից հետո մենք չունենք որևէ այլ վկայություն, որտեղ կնշվեր Խալդիից բացի մեկ այլ աստվածությանը «դարպաս» կառուցելու մասին[1242]: Դա պատահական չէ, քանի որ «դարպաս(ներ)»-ը խորհրդանշում էին այն «տան» մուտքը, ուր ապրում էր Խալդին: Այդ «տուն»-ը ժայռն էր/լեռը, ինքը՝ Խալդին, լեռ-աստված էր, ժայռածին հերոս, ում պաշտամունքը կապվում էր ժայռերի հետ[1243]:

«Դարպաս(ներ)»-ն իբրև ճարտարապետական կառույց Ուրարտուում ի հայտ են գալիս Իշպուինիի ժամանակ[1244]: Մեզ են հասել նման երեք ժայռափոր կառույցներ, որոնցից հնագույնը հայտնի է «Հազինե Փիրի քափըսը» անունով[1245]: Մյուս երկուսը կերտվել են Իշպուինիի և Մենուայի՝ այսպես կոչված «համատեղ գահակալության» շրջանում: Դրանցից առաջինը Նազարաբադ լեռան փեշերին ընկած Աշոտակերտի

---

[1241] Տե՛ս նաև Grekyan 2006: 150f., Tab. 1-2.

[1242] Առայժմ հայտնի է միայն մեկ տեքստ, ուր ինչ-ինչ զոհաբերությունների կոնտեքստում հիշատակվում է «Շեբիթուի դարպաս»-ը ($^{d}$*šebituinaïe* KÁ): Այս երևույթի մասին տե՛ս Grekyan 2006: 152.

[1243] Дьяконов 1983a: 192; Петросян 2004: 47; Grekyan 2015: 388f.

[1244] Batmaz 2009: 152f.

[1245] Belli, Dinçol 1980: 167ff., Lev. VI-IX.; Belli 2003c: 105ff.

«Խալդիի դարպաս»-ն է (նկ. Ա-58/1)[1246], մյուս «դարպաս»-ը կերտվել է տերության մայրաքաղաք Տուշպայի մոտ[1247]: Այս վերջինը նշանավոր «Միերի դուռ»-ն է՝ աստվածների համար նախատեսված զոհաբերությունների ընդարձակ արձանագրությամբ (նկ. Ա-58/2):

1.5.1.2.2. $^{(\acute{E})}$***susi***

Հիմնական ճարտարապետական կառույցը, որը միանշանակ ծառայել է իբրև տաճար, դա «սուսի»-ն է[1248]: Մինչ այժմ ուրարտական գրավոր աղբյուրներում պահպանվել են «սուսի»-տաճարի կառուցման քսանմեկ վկայություններ (Աղ. 14): Ամենավաղ հիշատակումները վերաբերում են Իշպուինիի և Մենուայի՝ «համատեղ գահակալության» շրջանին: Հնագիտորեն վկայված առաջին նման տաճարը հայտնի է Վերին Անձավից[1249]: Ամրոցի կառուցումը թեև վերագրվում է Մենուային, սակայն, այն կարող էր և հիմնադրված լինել Իշպուինիի և Մենուայի «համատեղ գահակալության» շրջանում[1250]: Ինչպես վերը նշված «կոթող(ներ)»-ի և «դարպաս(ներ)»-ի դեպքում՝ այս անգամ նույնպես հիշատակումների մեծ մասը վերաբերում է Իշպուինիի և Մենուայի կառավարման շրջանին (քսանմեկից տասներեքը, տե՛ս աղյուսակը):

Հնագիտորեն վկայված կամ ենթադրվող «սուսի»-տաճարների թիվը կարող է հասնել մինչև տասնութի: Այդ հնավայրերն են՝ Վերին Անձավը[1251], Գործոթը[1252], Ազնավուրթեփեն[1253], Արին-բերդը (Էրեբունի)[1254], Արմավիրը (Արգիշթիխինիլի)[1255], Հայկաբերդ/Չավուշթեփեն (Սարդուրիխինիլի)՝ իր զույգ տաճարներով[1256], Քայալըդերեն[1257], Ալթըն-թեփեն[1258], Կարմիր բլուրը («Վազա երկրի Թեյշեբայի քաղաք»)[1259], Թոփրաքքալեն (Ռուսախինիլի Կիլբանիկայի)[1260], Բաստամը («Ռուսայի

[1246] Sevin, Belli 1976-1977: 367ff., Lev IV/3, Lev V/1, 3; Belli 2003c: 108f.
[1247] Salvini 1994: 205f.; Belli 2004a: 109ff.; etc.
[1248] Առկա ւսումնասիրություններից տե՛ս Kleiss 1963/64: 1ff., Abb. 1-12; նույնի՝ 1988c: 187ff., Abb. 18-27; նույնի՝ 1989b: 265ff.; Özgüç 1966: 40ff.; Burney 1966: 73ff.; Ussishkin 1994: 144ff.; Stronach 1967: 278ff., and also n. 29 (գրականության համար); նույնի՝ 2012: 309ff.; Tarhan, Sevin 1975: 390, n. 1 (գրականության համար); Հովհաննիսյան 1996, էջ 159-162; Rehm 2004: 173ff.; Tanyeri-Erdemir 2007: 205ff. and n. 5; Çilingiroğlu 2012c: 295ff.
[1249] Belli 1999a: 25.
[1250] Նույնը ենթադրվում է նաև Ազնավուրթեփեի «սուսի»-տաճարի համար: Տե՛ս Balkan 1960: 140f.
[1251] Belli 1999a: 24ff., Figs. 14-16.
[1252] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 283f., Fig. 1.
[1253] Balkan 1960: 99ff.; նույնի՝ 1964: 237ff., Figs. 1-2; Boysal 1961: 200ff., Plan 2.
[1254] Оганесян 1961: 31ff., Figs. 12-14; նույնի՝ 1980: 49ff., Figs. 39-40.
[1255] Karapetyan 2010: 36ff., Fig. 4.
[1256] Erzen 1976-1977: 6ff., Res. 8-12, Lev. VII-IX; նույնի՝ 1978: 8ff., Lev. VIII/b.
[1257] Burney 1966: 68ff., Pls. 5-6.
[1258] Özgüç 1961: 264ff./278ff., Res. 4, 12; idem. 1963 [1964]: 45ff. / 53ff., Plan 2-3, Pl. XII-XIII; 1966: 3ff. / 39ff., Lev. VIII-XII; etc.; Karaosmanoğlu, Yılmaz 2013-2014: 120ff., Figs. 1-2, Tab. 15-17; etc.
[1259] Dan 2010d: 44ff.
[1260] Erzen 1976-1977: 19ff., Res. 17, Lev. XI/2, XII/1-3.

փոքր քաղաք»)[1261], Այանցը (Ռուսախինիլի Էիդուրուկայի)[1262]: Միանշանակ, «սուսի»-տաճար է եղել Արծկե-Քեֆքալեում («Զիուկունի երկրի Խալդիի քաղաք»)[1263]: Հնարավոր է, «սուսի»-տաճարներ են եղել Լիվարում[1264] և Վերախրամում[1265], գուցե նաև՝ Կալաթգահում[1266]: Շուշանց/Քևենլիից հայտնի սեպագիր նյութը ևս վկայում է, որ այստեղ եղել է «սուսի»-տաճար (նկ. Ա-59 – Ա-62)[1267]:

1.5.1.2.3. **É**

Այս շումերագիրը նշանակում է «տուն», իսկ մեծաթիվ կիրառումներից մի քանիսը վերաբերում են «Խալդիի տան»-ը (Աղ. 16)[1268]: Առայժմ դժվար է նշել, թե ինչ էր իրենից ներկայացնում այդ կառույցը: Էրեբունիից հայտնաբերված շինությունը, որի պատին *in situ* պահպանվել է Արգիշթի Մենուայորդու կողմից Խալդի աստծո համար «տուն» կառուցելու մասին հայտնող արձանագրությունը[1269], պատկերացվել է որպես քառանկյուն աշտարակաձև կառույց՝ կից «պորտիկ»-ով[1270]: Սակայն, վերջին տարիներին Էրեբունիում իրականացված պեղումներն աստիճանաբար ուրվագծում են ամրոցի նախնական ճարտարապետության այլ պատկեր, քան վերականգնվել է խորհրդային շրջանում[1271]: Հետագա պեղումները, պետք է հուսալ, հնարավորություն կտան էլ ավելի հստակեցնելու մեր պատկերացումները Խալդիի «տան» ճարտարապետական տեսքի մասին: Համենայն դեպս, արտահայտված կարծիքը՝ Խալդիի «տան» և «սուսի»-տաճարի նույնականության մասին, չպետք է բացառել[1272]: Հետաքրքիր է, որ Էրեբունիի «Խալդիի տան»՝ վերը հիշված կառույցն ունեցել է մոնումենտալ որմնախորշ՝ խորհրդանշական դռան տեսքով (նկ. Ա-63/1)[1273]:

Ամփոփելով այս բաժինը նշենք նաև, որ «Լուվրի աղյուսակ»-ը Ռուսայի «հայրական տուն» Արբու և «Սարդուրիի տուն» Ռիյար քաղաքների մասին հիշատակում է նաև այդտեղ գտնվող Խալդի աստծո տաճարը՝ «տուն»-ը հրդեհելու և «նրա (Ռուսայի) սրբարան»-ը թալանելու մասին (É $^{d}$*ẖaldia* DINGIR-*šu abreš aqūdma ušalpita sagišu*)[1274]:

---

[1261] Kleiss 1972a: 32ff., Abb. 27; նույնի՝ 1988a: 31; Salvini 2005a: 371ff.
[1262] Çilingiroğlu 2001c: 37ff., Figs.
[1263] Seidl 1974: 115ff.; Salvini 2004: 245ff.
[1264] Kleiss, Kroll 1977: 57.
[1265] Kleiss 1974a: 91, Abb. 11.
[1266] Kleiss, Kroll 1977: 71.
[1267] Belli, Salvini 2004: 164ff.
[1268] КУКН, $200_{1-3}$, $201_{1-3}$, $269_{1-4}$, ևն; CTU I, A 8-$18_{1-3}$, A 8-$19_{1-3}$, A 9-$15_{1-4}$, 12-1 $II_{9}$, ևն:
[1269] КУКН, 202; CTU I, A 8-24.
[1270] Оганесян 1961: 51ff., Figs. 25a-b, 27; նույնի՝ 1980: 59ff., 45-46.
[1271] Stronach *et al*. 2010: 99ff.; Deschamps *et al*. 2011: 121ff.; Deschamps *et al*. 2012: 148ff.
[1272] Հովհաննիսյան 1968: 11; КУКН, 200, n. 1.
[1273] Stronach *et al*. 2010: 110ff., Tab. 32/2, 33/1-2; Deschamps *et al*. 2011: 127, Figs. 2, 4, Tab. 18/1.
[1274] Mayer 1983: 96f. (Z. 279).

#### 1.5.1.2.4. **É.DINGIR$^{MEŠ}$**

«Աստվածների տուն» (ասսուր. *bīt ilāni*$^{MEŠ}$) անվանված այս տաճարը գտնվել է Մուծածիրում և հիշատակվում է Ռուսա Սարդուրորդու թողած երկլեզու արձանագրությունների ասորեստանյան տարբերակներում[1275]: Ուրարտական տեքստերը որպես համարժեք օգտագործում են É.BÁRA շումերագիրը[1276]: Մուծածիրի տաճարի միակ պատկերը պահպանվել է Խորսաբադի բարձրաքանդակներից մեկում (նկ. Ա-64/1)[1277] և հիմք հանդիսացել առաջարկելու համար տաճարի տեսքի տարբեր վերակազմություններ (նկ. Ա-64/2)[1278]:

#### 1.5.1.2.5. **É.BÁRA**

Ուրարտական սեպագրում կիրառված այս շումերագիրը նշանակում է «սրբարան» (Աղ. 17)[1279]: Առայժմ հայտնի ութ հիշատակումներից երեքը հստակ վերաբերում են Խալդիի «սրբարան»-ին (*$^{d}$ḫaldiei* É.BÁRA)[1280]: Մնացյալ դեպքերում խոսքը կարծես կառույցների մի համալիրի մասին է, որը կարող էր ընդգրկել անգամ մի ամբողջ «քաղաք»: Մասնավորապես, որպես É.BÁRA է հանդես գալիս «Ռուսայի փոքր քաղաք» (*$^{m}$rusai* URU.TUR) անվանված ուրարտական ամենախոշոր ամրոցը՝ Բաստամը[1281]: Թե այս, և թե É.BÁRA-ի կիրառության մյուս դեպքերը հուշում են[1282], որ շումերագիրն ունեցել է ընդհանրական իմաստ և որ հարկավոր չէ դրա տակ տեսնել կոնկրետ ճարտարապետական-պաշտամունքային կառույց[1283]: Ավելին, կարելի է կարծել, որ ուրարտական այս կամ այն քաղաքը, լինի դա Սարդուրիխինիլին, Ռուսախինիլի Էիդուրուկային կամ «Զիուկունի երկրի Խալդիի քաղաք»-ը, կարող էր համարվել Խալդի աստծո «սրբարան»:

#### 1.5.1.2.6. ***”arani***

Այս կառույցը հիշատակվում է Քելիշինի երկլեզու արձանագրության ուրարտերեն տեքստում[1284]: Ասորեստանյան տեքստը սույն բառի համար տալիս է *parakku* զուգահեռը[1285], որն ունի բազում նշանակություններ, ինչպես, օրինակ, «պատվանդան,

---

[1275] КУКН, 387, ассир. текст$_{12}$; CTU I, A 10-3 Vo$_{41'}$, A 10-4 Vo$_{14'}$, A 10-5 Vo$_{11'}$.
[1276] КУКН, 387$_{12}$; CTU I, A 10-3 Ro$_{58}$, A 10-5 Ro$_{12'}$.
[1277] Botta, Flandin 1849, Pl. 142-143.
[1278] Trever 1953: 69ff., Tab. 64; Stronach 1967: 281f.; Ussishkin 1994: 147; Boehmer 1993-1997: 446ff. Çilingiroğlu 2012c: 300ff.
[1279] Borger 1978: 143 (No. 344).
[1280] КУКН, 247$_{3}$, 424$_{12}$; CTU I, A 12-1 II$_{6-7}$, A 12-2 II$_{1}$, A 12-3$_{5}$.
[1281] КУКН, 419$_{1-2}$; CTU I, A 12-7$_{1-2}$.
[1282] Հմմտ. CTU I, A 9-17$_{3}$, A 12-1 VI$_{6-7}$, A 12-4 II$_{3'}$, A 12-9$_{5-6}$.
[1283] Տե՛ս նաև Erzen 1976-1977: 13f.; Zimansky 1985: 75; Salvini 2001a: 259, n. 7; նույնի՝ 2005a: 374sq.; նույնի՝ 2007c: 41sqq. Հմմտ. Հմայակյան 1990, էջ 65 հաջորդիվ; Diakonoff 1991: 13, n. 3, 30.
[1284] КУКН, 30, урарт. текст$_{5}$; CTU I, A 3-11 Ro$_{5}$.
[1285] КУКН, 30, урарт. текст $_{4-5}$; CTU I, A 3-11 Vo$_{4-5}$.

զոհարան, սրբարան» ևն[1286]: Ուրարտական տեքստերում *”arani*-ն հիշատակվում է ևս մեկ անգամ, Մենուայի կողմից դեպի արևմուտք ձեռնարկված արշավանքի նկարագրության մեջ (Աղ. 14): Դրանում նշվում է, որ արքան նվաճված Շեբեթերիա քաղաքում կառուցել է Խալդիի *”arani*[1287]: Հետաքրքիր է, որ երկու դեպքերն էլ վերաբերում են Ուրարտուի ծայրագավառային կամ դրանից այն կողմ ընկած գոտիներին: Բուն Ուրարտուից հայտնաբերված որևէ տեքստում նման կառույց երբեք չի հիշատակվում, ինչը կարող է հուշել, որ այն բնորոշ չէր ուրարտական տաճարային ճարտարապետությանը և կարող էր ներկայացնել սիրիա-միջագետքյան ավանդույթներով կառուցված ինչ-որ պաշտամունքային շինություն[1288]:

1.5.1.2.7. **(É)*adunusi***

(É)*adunusi* կոչվող կառույցը հիշատակվում է բացառապես Ք.ա. 7-րդ դ-ի տեքստերում՝ Ռուսա Արգիշթորդու հիմնադրած քաղաքների «սուսի»-տաճարների արձանագրություններում: Այս տերմինը հանդես է գալիս այնպիսի կոնտեքստում, ուր հիշատակվում են նաև «զենքեր» և տարբեր սրբազան իրեր[1289]: Հետևաբար, կարելի է կարծել, որ (É)*adunusi*-ն մի կառույց էր, ուր պահվել են Խալդի աստծուն ընծայված զենքերն ու այլ իրեր: Ըստ այդմ, այն կարող էր լինել տաճարի հետ կապված կառույց, հնարավոր է՝ պահեստ, զուրկ պաշտամունքային նշանակությունից[1290]:

1.5.1.2.8. **É*sir(i)ẖani***

Ինչպես (É)*adunusi*-ն, É*sir(i)ẖani* կոչվող կառույցները նույնպես հանդես են գալիս բացառապես Ռուսա Արգիշթորդու տեքստերում՝ նրա հիմնադրած «սուսի»-տաճարների արձանագրություններում[1291]: Այդ կառույցի նշանակությունն առայժմ դեռ անհայտ է: Ի տարբերություն (É)*adunusi*-ի՝ É*sir(i)ẖani*-ն հիշատակվում է ծես և զոհաբերություն նկարագրող, ցավոք, առայժմ քիչ հասկանալի կոնտեքստում: Այդ կառույցը կարծես գտնվել է «սուսի»-տաճարի մերձավորությամբ, ինչ-որ կերպ կապվում է կենդանիների զոհաբերությունների հետ (*zadini* ŠUM É*sirẖani* ..... É*sirẖanini susinika*)[1292]: Ակնհայտ է, որ կառույցն ունեցել է պաշտամունքային նշանակություն[1293]: Հաշվի առնելով կառույցի կապը զոհաբերությունների հետ, նաև այն փաստը, որ տեքստերը կարծես տարբերակում են Խալդիի համար արված զոհաբերությունները, որ իրականացվել են

[1286] CAD 12, P, 2005: 145ff. (*parakku* A).
[1287] КУКН, $30_{13-14}$; CTU I, A $5-5_{13-14}$.
[1288] Հմմտ. Salvini 1979a: 580, n. 21-ում նշվ. գրականությունը:
[1289] Օր. CTU I, A 12-1 $IV_{2, 5}$.
[1290] Batmaz 2015a: 145f., 151.
[1291] CTU II: 181f.
[1292] Օր. CTU I, A 12-1 $II_{10-11}$.
[1293] Հմմտ. Diakonoff 1989: 96f.; նույնի՝ 1991: 15, n. 26.

Խալդյան դարպասների առջև (*ᵈḫaldie išani šini zadini* ŠUM *ᵈḫaldina* KÁ-*kai*)[1294], ապա կարելի է այստեղ տեսնել մի կառույց, որտեղից ծեսերի/զոհաբերությունների ժամանակ դուրս են բերվել և դրվել ուրարտական մյուս աստվածների բրոնզե արձանիկները, այնպիսիք, ինչպիսիք հայտնաբերվել են, օրինակ, Կարմիր բլուրի պեղումներից[1295]:

1.5.1.2.9. **Այլ կառույցներ**

Ուրարտական տեքստերից հայտնի են նաև մի քանի այլ կառույցների անվանումներ, ինչպիսիք են՝ *ᴱbarzu/idib(i)duni*[1296], *irididuni*[(?)1297], *ᴱṭulurini*[1298], *qudulani*[1299] և *ᴱašiḫusi*-ն[1300]: Սակայն, այստեղ մեծ է անորոշությունը: Այդ կառույցներից առաջին երկուսը կարող էին ծառայել իբրև ռազմական նշանակություն ունեցող շինություններ: *ᴱṭulurini*-ն հիշատակող արձանագրության կոնտեքստը թեև չի բացառվում այստեղ տեսնելու պաշտամունքային ինչ-որ կառույց, սակայն, ավելին ասել առայժմ հնարավոր չէ (Աղ. 18)[1301]: Ընդհանրական՝ «կառույց» նշանակությունը կարող էր ունենալ *qudulani*-ն[1302]: Ինչ վերաբերում է *ᴱašiḫusi*-ին, ապա այն սովորաբար դիտարկվում էր իբրև «զոհաբերության տուն, զոհարան»՝ կապելով *ašḫ(u)*- բայի հետ, որից կազմվում են «զոհել», «զոհաբերություն» բառերն ուրարտերենում[1303]: Սակայն, այդ բառի նոր ստուգաբանությունը հուշում է, որ այն կարող էր լինել պալատական տիպի կառույց:

### 1.5.2. Պետական գաղափարախոսությունը և «տաճար» հասկացողությունն Ուրարտուում

Որքան էլ տարօրինակ թվա, Ուրարտուի պատմության՝ այսպես կոչված կայսերական փուլից սկսած Ուրարտուում անգամ պետական/պաշտոնական դիցարանի աստվածություններին նվիրված տաճարների կամ ճարտարապետական կառույցների գոյության վկայություններ գոնե առայժմ հայտնի չեն: Դրա պատճառը կարող էր լինել երկրում իշխող գաղափարախոսությունը՝ կենտրոնացված բիայնական արքայատան հովանավոր աստվածության՝ Խալդիի պաշտամունքի շուրջը[1304]:

---

[1294] Որ. CTU I, A 12-1 $III_{1-2}$.

[1295] Կարմիր-բլուրից է ծագում Թեյշեբային պատկերող բրոնզե արձանիկը: Դարաբեյից գտնված արձանիկը, ենթադրվում է, պատկերել է Վարուբանի աստվածուհուն: Տե՛ս Piotrovskij 1967: 52f., Fig. 33, Pl. 15.

[1296] КУКН, 46, 114-116, 278a, 481; CTU I, A 5-60-64, A 9-19.

[1297] CTU I, A $5\text{-}78_{2-3}$.

[1298] КУКН, $98_{1-2}$; CTU I, A $5\text{-}34_{1-2}$.

[1299] КУКН, 36 $I_4$, $II_4$, $38b_{11}$, $392_5$, $424_7$; CTU I, A $3\text{-}2_{4,\,9}$, A $3\text{-}12_{11}$, $10\text{-}6_{4'}$, A 12-1 $I_9$, A 12-2 $I_7$.

[1300] КУКН, 108-109, 111, 192, 265; CTU I, A 5-65A-C, A 8-30, A 9-20, A 12-10.

[1301] Հմմտ. նաև Belli, Salvini 2004: 164.

[1302] Հմմտ. КУКН, Glossary, p. 459.

[1303] КУКН, c. 437f.

[1304] Ղափանցյան 1940: 112ff.; Дьяконов 1983a: 190ff.; Salvini 1987: 405; նույնի՝ 1989: 86; Taffet, Yakar 1998: 133f., 144ff.; Grekyan 2005: 39ff.

Խալդիի պաշտամունքի բացարձականացման վկայությունն էր այն, որ Ուրարտուում պաշտամունքային բոլոր արարողությունները կատարվել են Խալդիի «սուսի»-տաճարում, «խալդյան դարպասներ»-ի կամ «խալդյան կոթողներ»-ի առջև: Տպավորություն է ստացվում, որ Ուրարտուում ընդհանրապես «տաճար» հասկացությունը կարող էր ընկալվել իբրև «Խալդիի տաճար»[1305]: Անգամ Կարմիր բլուրից, որը կրում էր Ամպրոպի աստված Թեյշեբայի անունը[1306], ոչ միայն հայտնի չէ որևէ կառույց, որը կարելի լիներ համարելու Թեյշեբայի տաճար, այլև ավելին՝ Կարմիր բլուրից մենք չունենք այդ աստծո պաշտամունքին առնչվող որևէ առանձնահատուկ վկայություն՝ բացառությամբ այլ աստվածների հետ նրա համար ևս նախատեսված զոհաբերության մասին հիշատակության: Փոխարենը՝ քաղաքում եղել են Խալդիի «սուսի»-տաճար և «խալդյան դարպասներ»[1307], այստեղ Խալդին ունեցել է իր «տուն»-ը (*ᵈḫaldinie* É)[1308], ծեսերն իրականացվել են «Խալդիի (և) Վարուբանիի առջև» (*ᵈḫaldika ᵈ'arubainika*)[1309], «խալդյան դարպասներ»-ի (*ᵈḫaldinani* KÁ-*kai*) կամ Խալդի աստծո «սուսի»-տաճարի առջև (*susinika*)[1310]:

Այս նույն իրավիճակի հետ գործ ունենք նաև այն դեպքերում, երբ նոր հիմնադրված քաղաքներն իրենց անվան մեջ որպես բաղադրիչ կրել են այն լեռան/աստվածության անունը, որի «առջև» և կառուցվել են: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է *ᵐrusaḫinili* *ᴷᵁᴿqilbanikai* (Թոփրաքքալե), *ᵐrusaḫinili* *ᴷᵁᴿeidurukai* (Այանց/Այանիս) ու թերևս՝ *ᵐargišteḫinili* *ᴷᵁᴿartarabšakai* քաղաքներին: Ինչպես հայտնի է, Կիլբանին լեռ-աստված էր, ենթադրվում է՝ Վարագա լեռը[1311], հիշատակվում է «Մհերի դռան» արձանագրության մեջ[1312], սակայն, Ռուսախինիլի Կիլբանիկայիից մենք չունենք այդ աստծուն նվիրված տաճարի կամ նրա պաշտամունքին առնչվող որևէ վկայություն: Նույնը վերաբերում է Էիդուրու աստծուն, այն է՝ Սիփան լեռը[1313]: Վերջինիս «առջև» կառուցված Ռուսախինիլի Էիդուրուկայիի «սուսի»-տաճարի ընդարձակ արձանագրության մեջ թեև հիշատակվում է Էիդուրուն, որի համար սահմանված էր մեկ ոչխարի զոհաբերություն՝ տեքստում թվարկված մյուս աստվածների հետ զուգահեռ[1314], սակայն, այնուամենայնիվ, այստեղից հայտնի չէ որևէ կառույց կամ կոթող, որը կարող

[1305] Petrosyan 2006: 261.
[1306] ԿՈՒՀ, 422, 424$_2$; CTU I, A 12-2 I$_2$, CTU IV, B 12-15, CB Ay-4$_1$.
[1307] Օր. ԿՈՒՀ, 424$_{1-2}$; CTU I, A 12-2 I$_{1-2}$.
[1308] ԿՈՒՀ, 424$_{14, 20-21}$; CTU I, A 12-2 I$_{3, 9-10}$.
[1309] ԿՈՒՀ, 424$_{15}$; CTU I, A 12-2 I$_4$.
[1310] ԿՈՒՀ, 424$_{16-18}$; CTU I, A 12-2 II$_{5-7}$.
[1311] Salvini 2002: 130, 133.
[1312] ԿՈՒՀ, 38 Text I$_{18}$, Text II$_{31}$. CTU I, A 3-1$_{18, 62}$.
[1313] Çilingiroğlu, Salvini 1995: 120.
[1314] CTU I, A 12-1 II$_1$.

էր կապվել այդ աստծո պաշտամունքի հետ: Ինչպես Կարմիր բլուրի ընդարձակ արձանագրության դեպքում՝ այստեղ ևս տեքստը նշում է Խալդիի «սուսի»-տաճարի կամ Խալդիի և Վարուբանիի առջև կատարվելիք զոհաբերությունների ու ծեսերի մասին[1315]: Այդ նույնը կարելի է ասել նաև Արգիշթիխինիլի Արտարաբշակայիի մասին: Արտարաբշան, որ նույնացվում է Աքչա-դաղի կամ Ծաղկանց (Ալադաղլար) լեռների որևէ գագաթի հետ[1316], ամենայն հավանականությամբ երկրպագվել է իբրև աստվածություն: Սակայն, նրա անունը, ինչպես Էիդուրուն, անգամ չի հիշատակվում «Միերի դռան» արձանագրության մեջ և առայժմ հայտնի չէ նրա հնարավոր պաշտամունքի որևէ վկայություն:

Առկա փաստերից դատելով՝ ուրարտական մյուս աստվածությունների հետ կապված ծեսերն ու արարողությունները իրականացվել են ոչ այլուր, քան Խալդի աստծո տաճարում կամ նրա հետ կապված պաշտամունքային որևէ կառույցի առջև[1317]:

Եթե ընդունենք, որ Ուրարտուում «տաճար» ասելով պետք է հասկանալ «Խալդիի տաճար», հատկապես, երբ խոսքը վերաբերում է «սուսի»-տաճարներին, ապա Խալդիից հետո եկող այնպիսի մեծ աստվածների տաճարների բացակայության ֆոնին, ինչպիսիք էին Թեյշեբան, Շիվինին կամ Կուեռան, չափազանց տարօրինակ է թվում այն փաստը, որ ուրարտական արքաներ Արգիշթի Մենուայորդին և Սարդուրի Արգիշթորդին երկու «սուսի»-տաճարներ են կառուցել երկու «երկրորդական» աստվածների՝ Իուբշայի և Իրմուշինիի համար[1318]: Ընդ որում, առաջին աստվածությունն ընդհանրապես չի հիշատակվում «Միերի դռան» դիցացանկում: Նա դիտվում է օտար (լուվիակա՞ն) ծագման աստվածություն, որի պաշտամունքի ներմուծումը Ուրարտու սովորաբար կապվում է Արգիշթի Մենուայորդու կողմից Խաթե և Ծուպա երկրներից բերված և Էրեբունիում վերաբնակեցված ռազմիկների հետ[1319]: Ինչ վերաբերում է Իրմուշինիին, ապա վերջինս թեև հանդես է գալիս «Միերի դռան» դիցացանկում[1320], սակայն, ամենևին էլ ոչ առաջին շարքի աստվածների խմբում, և անբացատրելի է թվում Հայկաբերդում Սարդուրի Արգիշթորդու կողմից այս աստվածությանը «սուսի»-տաճար ընծայելու փաստը: Խալդիից բացի այս երկու աստվածներին տաճարների ընծայումն ուրարտական ամենահզոր արքաների կողմից ամեն դեպքում հազիվ թե

[1315] CTU I, A 12-1 $II_{9-11}$.
[1316] Salvini 2012: 183.
[1317] Հմմտ. Мартиросян 1972: 41 сл.
[1318] КУКН, 195-196, 247; CTU I, A 8-21A-B, A 9-17. Բադնոցից գտնված և խիստ պակասավոր շինարարական տեքստերից մեկի վերակազմությունը, ըստ որի, «սուսի»-տաճար է կառուցվել Ուա աստծո համար, վստահելի չէ: Տե՛ս CTU I, A $3\text{-}12_4$: Հմմտ. КУКН, $38б_{14}$, n. 3, 5.
[1319] Меликишвили 1958: 42ff. Cf. Salvini 1995a: 45, 186; КУКН, с. 484f.
[1320] КУКН, 38 Text $I_9$, Text $II_{13}$. CTU I, A $3\text{-}1_{9,\ 44}$.

հնարավոր լինի դիտարկել իբրև շեղում ընդունված «խալդակենտրոն» գաղափարախոսությունից և պետք է որ ունենա այլ բացատրություն: Օրինակ, կարելի է մտածել, որ նրանք արքաների հովանավոր աստվածներն էին, որոնց պաշտամունքը կարող էր միաժամանակ առաջ մղվել ու սինկրետվել Խալդիի հետ[1321]: Միգուցե՝ այդ աստվածները ներկայացրել են Խալդիի մի ասպեկտը և վերջին հաշվով հենց իրեն՝ Խալդիին: Այս դեպքում, կարելի է պայմանականորեն նրանց անվանել «Խալդի-Հուբշա» կամ «Խալդի-Իրմուշինի», ճիշտ այնպես, ինչպես ներկայանում է Աշշուրը ասորեստանյան *tākultu*-ծեսում՝ հանդես գալով մեկ որպես «Աշշուր-Իշթար» (Աշշուրը, որը Իշթարն է), մերթ որպես «Աշշուր-Ադադ» (Աշշուրը, որը Ադադն է) կամ որպես «Աշշուր-Սումուկան» (Աշշուրը, որը Սումուկանն է) ևն[1322]:

### 1.5.3. Դիտարկումներ «սուսի»-տաճարի շուրջը

Ուրարտական տեքստերը, այսպիսով, նշում են մի քանի տերմիններ, որոնք բոլորն էլ կարելի է հասկանալ իբրև «տաճար»: Դրանք են՝ «Խալդիի կոթող»-ը, «Խալդիի տուն»-ը, «Խալդիի դարպաս»-ը և «Խալդիի «սուսի»-տաճար»-ը: Այս վերջինս գլխավոր, եթե ոչ՝ միակ, ճարտարապետական կառույցն է, որը հստակ կարելի է բնորոշել որպես «տաճար»:

Այս թվացյալ բազմազանությանը հակառակ՝ իրականում մենք գործ ունենք Խալդիի հետ կապվող միևնույն գաղափարի տարբեր արտահայտամիջոցների հետ, և տպավորություն ենք ստանում, որ այդ բոլոր տերմիններն էլ, վերջին հաշվով, վերաբերում են մեկ-միևնույն կառույցի: Խնդիրն այն է, որ ուրարտական տեքստերի մի մասում «դարպաս(ներ)» կառուցելու մասին տեղեկությունն ուղեկցվում է «սուսի»-տաճար կառուցելու մասին տեղեկությամբ: Ակնհայտ է, որ դրանք փոխկապակցված էին, և թեև առկա է կարծիք, որ «դարպաս(ներ)»-ը կարող էին լինել տաճարներից առանձին կանգնած կառույցներ[1323], սակայն, այժմ գրեթե անկասկած է, որ «դարպաս»-ը դա նույն «սուսի»-տաճարի մուտքն է, և որ այս երկուսը վերաբերել են միևնույն կառույցին (նկ. Ա-63/2)[1324]: Տեքստերում դրանց առանձին հիշատակությունը կարող էր պայմանավորված լինել այն հանգամանքով, որ Խալդիի «տուն» հանդիսացող ժայռը/լեռը, որի վրա կերտվում էր «դարպաս»-ը, սկզբնապես դեռ չուներ

[1321] Այս առումով ուշադրություն են գրավում այս կամ այն արքայի «աստծու» և «աստվածուհու» հիշատակումներն ուրարտական տեքստերում, ինչպես, օրինակ, ևն $^{m}$*argištinie* DINGIR, $^{m}$*rusainie* $^{d}$GI/DINGIR-*gi*, $^{m}$*rusainie* $^{d}$NIN ևն (CTU I, A 11-1 Vo$_{6-7, 32-33}$, A 14-1 Vo$_{9-10, 19-20}$): Տե՛ս նաև Tarhan 2005: 124ff

[1322] Frankena 1954. Քննարկումը տե՛ս և հմմտ. Porter 2000a: 230ff.

[1323] Diakonoff 1989: 95f.

[1324] Tarhan, Sevin 1975: 395ff.; Sevin, Belli 1976-1977: 375; Salvini 1979a: 580ff.; Tanyeri-Erdemir 2007: 210f. Տե՛ս նաև van Loon 1966: 54. Հմմտ. Diakonoff 1989: 95ff.; Çilingiroğlu 2005: 31, n. 1.

ճարտարապետական կառույցի՝ իրեն բնորոշ որևէ ուրույն տեսք: Պատահական չէ, որ ուրարտական տեքստերում «դարպաս(ներ)»-ը հիշատակվում են շատ ավելի վաղ, քան «սուսի»-տաճարները: Ինչպես երևում է՝ հետագայում ծնունդ առած «սուսի»-ն պարզապես խորհրդանշում էր այդ նույն ժայռը/լեռը, այլ կերպ ասած՝ ուրարտական «սուսի»-տաճարը ժայռի/լեռան կրկնակումն էր ճարտարապետության մեջ[1325]:

Մյուս կողմից, «սուսի»-տաճարի՝ իբրև ճարտարապետական կառույցի բնութագրման համար կարևոր նշանակություն ունի Շուշանցից գտնված Մենուայի արձանագրություններից մեկը[1326]: Երկլեզու այդ տեքստի ասսուրերեն հատվածում, այն կոնտեքստում, ուր ակնկալվում էր տեսնելու «սուսի» բառը, ասսորերեն տեքստը դրա համար կիրառում է *isītu* տերմինը: Վերջինս նշանակում է «աշտարակ»: Այստեղից էլ «սուսի»-ին տրվող երկրորդ բնորոշումն իբրև «աշտարակ-տաճար»[1327]:

Անկասկած է «Կենաց ծառ»-ի պաշտամունքի կապը Խալդիի, Խալդիի կոթողների և նրա «սուսի»-տաճարի հետ[1328]: Դրա վերջին ապացույցներից են Այանցից գտնված «Կենաց ծառ»-ի մնացորդները (նկ. Ա-57/3-4)[1329], որոնց պատկերումները հայտնի էին ուրարտական պատկերագրությունից: Այստեղ մենք հանդիպում ենք պատկերների, ուր «Կենաց ծառեր»-ը ներկայացված են կոթողների հետ մի շարքում՝ կողք-կողքի (նկ. Ա-57/1-2)[1330]: Ակնհայտ է, որ դրանք նույնացվել են: Մյուս կողմից, հնագիտորեն վկայված է «սուսի»-տաճարների առջև տնկված ծառերի գոյությունը[1331], ինչը նույնպես տեսանելի է պատկերագրության մեջ և ըստ էության «Կենաց ծառ»-ը, այս դեպքում, խորհրդանշել է «սուսի»-տաճարը: Ինչպես երևում է, մենք գործ ունենք նույն երևույթի տարբեր պատկերումների հետ. մի դեպքում՝ որպես կոթող, մյուս դեպքում՝ որպես «Կենաց ծառ», և երրորդ դեպքում՝ որպես «սուսի»-տաճար:

Ուրարտական բրոնզե իրերի դրվագումներում հաճախակի հանդիպող աշտարակաձև կառույցները, ինչպես ենթադրվում է, կարող էին պատկերել «սուսի»-

---

[1325] Աշոտակերտի ժայռակերտ դարպասի արձանագրության մեջ խոսվում է թե «դարպաս», և թե «սուսի»-տաճար կառուցելու մասին, մինչդեռ, այդտեղ «սուսի»-տաճարի գոյության որևէ հետք չկա: Հետևաբար, կարելի է կարծել, որ որպես «սուսի» է ընկալվել այն ժայռը, որի վրա և բացվել է դարպասը: Տե՛ս նաև Sevin, Belli 1976-1977: 372; Çevik 2006-2007 [2008]: 137f.; Բադալյան 2013, էջ 89:

[1326] КУКН, 141; CTU I, A 5-44.

[1327] Salvini 1979a: 580ff.

[1328] Ուրարտուում «Կենաց ծառ»-ի պաշտամունքի համար տե՛ս Belli 1980 [1982]: 237ff.; van Loon 1966: 74f.; Մնացականյան 1977, էջ 201 հաջորդիվ; Calmeyer 1979: 186ff.; Дьяконов 1983a: 193f.; Çevik 1997: 229, Figs. 2-3, 7-8; նույնի՝ 1999: 335ff.; Թումանյան 2005a: 19ff.; Baştürk 2009: 134ff.

[1329] Batmaz 2013a: 65ff.

[1330] Lehmann-Haupt 1907: 82 (Fig. 54); Işık 1986, Abb. 2a. Հմմտ. նաև Çevik 1999: 344ff., Lev. 6/e, etc.

[1331] Çilingiroğlu 2005: 31. Հմմտ. նաև Özgüç 1966: 40, Pl. IX/2, X/1. Մեկ այլ դեպքում՝ դա կարող էր լինել քարակոփ կոթող (՞): Տե՛ս Burney 1966: 71f. Հմմտ. Tanyeri-Erdemir 2007: 212f., n. 11.

տաճարներ[1332]: Դրանք սովորաբար ավարտվում են յուրահատուկ մի «սիմվոլով», որը կարող է լինել հասկի սիմվոլիկ պատկերում[1333]: Այս կոմպոզիցիան՝ հասկ և նրան ծնունդ տվող Խալդիի «սուսի»-տաճար, նույնանում էր ժայռին/լեռանն ու նրան պատող բուսականությանը, որին ծնունդ էր տալիս ժայռածին կամ լեռ-աստվածը՝ Խալդին:

Այսպիսով, ինչպես երևում է, ուրարտական տաճարներն ու սրբարանները ձևավորվել են պետության կայացմանը զուգընթաց՝ երկրում իշխող հզոր խալդակենտրոն գաղափարախոսության պայմաններում և անմիջական ազդեցությամբ: Ինչ վերաբերում է ուրարտական տաճարային ճարտարապետության ակունքներին, ապա դրանք, մեր կարծիքով, ընկած են լեռնաշխարհի հարավում[1334]:

### 1.6. Հաղորդակցության համակարգն Ուրարտուում

#### 1.6.1. Ընդհանուր բնութագիրը

Ուրարտական տերության ողջ կենսագործունեությունը հենվում էր հաղորդակցության զարգացած ցանցի վրա, որը վերահսկվում էր պետության կողմից ճանապարհների երկարությամբ և հատկապես հանգուցային կետերում կառուցված ամրոց-ամրությունների միջոցով, իսկ դրանց միջև ընկած տարածքներում գործում էին ամրացված իջևանատուն-կայանները:

Ուրարտական սեպագիր աղբյուրներում պետության կողմից անցկացված ճանապարհների մասին տվյալներ հայտնի չէին ընդհուպ մինչև 2008 թ-ը, երբ հրատարակվեցին նախ՝ Սավաջըքի, ապա և, արդեն 2010 թ-ին՝ Բուլութփընարի արձանագրությունները: Դրանցից առաջինում, խոսելով տվյալ տարածքի «ամայի» լինելու մասին, նշվում է, որ չկար նաև ճանապարհ (*ú-i* ... KASKAL *iš-ti-ni ma-nu*), և որ արքան՝ Ռուսա Էրիմենայորդին, բազում այլ գործերից բացի հավանաբար նաև ճանապարհ է անցկացրել[1335]: Երկրորդ արձանագրությունը, որը թողել է Արգիշթի Ռուսայորդին, հայտնում է Արածանի (ուրարտ. $^{ÍD}$*arṣi”ani*) գետի վրա կամուրջներ (ուրարտ. *qaburzanili*) կառուցելու մասին, որոնք անվանվել են Արգիշթիի անունով (*terubi tini* $^{m}$*argištinili qaburzanili*): Ապա տեքստը հայտնում է դեպի Բիայնիլի ճանապարհ (KASKAL, ուրարտ. *ḫari*) անցկացնելու մասին[1336]: Եվս մեկ վկայության ենք հանդիպում

---

[1332] Calmeyer 1979: 189ff.; Մովսիսյան 1998ա: 36-37, Աղ. XXIII-XXV; Մնացականյան 1977, էջ 202; Թումանյան 2005ա, էջ 25:

[1333] Տե՛ս և Համմտ. Sevin, Belli 1976-1977: 374f.; Belli 1980 [1982]: 241ff.; Calmeyer 1979: 188ff.; Seidl 2004: 48ff.; Baştürk 2011: 166f.; Roaf 2012b: 351ff.

[1334] Տե՛ս նաև Batmaz 2009: 151ff.; Çevik 2006-2007 [2008[: 135f.

[1335] CTU I, A 14-2$_{27-30}$, ինչպես նաև A 14-1 Ro$_{29-31}$.

[1336] Çavuşoğlu *et al*. 2010: 42ff.; CTU I, A 11-8$_{3-14}$.

ասորեստանյան զեկուցագրերից մեկում, ուր նշվում է արշավանքից առաջ ուրարտացիների կողմից ճանապարհները բարեկարգելու և կամուրջները նորոգելու մասին[1337]:

Պատկերը շատ ավելի հստակ է հնագիտական վկայությունների պարագայում: Մասնավորապես, Արաքս գետի վրա գցված և ուրարտական շրջանով թվագրվող կամուրջի ավերակներ են պահպանվել Վերախրամի մոտ (նկ. Ա-66/1-2)[1338], կամուրջի հետքեր են երևում Կարմիր բլուրի մոտ՝ Հրազդան գետի վրա[1339], ուրարտական շրջանում կամուրջ է եղել Գավառագետի վրա[1340], դեպի արևմուտք՝ մերձեփրատյան տարածքներ ձգվող ուրարտական ճանապարհը Զուլյումթեփեի մոտ անցել է մոտ 4 մ լայնությամբ քարե հիմքերով և փայտե տախտակամած ունեցող կամուրջով[1341]: Եփրատի վրա գցված և դեպի Ուրարտու տանող կամուրջ է հիշատակվում ասորեստանյան աղբյուրներում[1342]: Դա կարող էր լինել պոնտոնային կամուրջ՝ նավակների վրա կառուցված, ինչպիսիք կային Եփրատի և Տիգրիսի վրա աքեմենյան դարաշրջանում[1343]:

Ուրարտական դարաշրջանով թվագրվող և կենտրոնական իշխանությունների կողմից կառուցված ճանապարհի ուսումնասիրությունը սկսվել էր դեռևս 1970-ական թթ-ից Օքթայ Բելլիի[1344] և շարունակվել 1980-ական թթ-ին Վելի Սևինի կողմից[1345]:

Ճանապարհը, որը Վանա լճի ավազանը կապում էր մերձեփրատյան շրջանների հետ, սալարկված է՝ եզրերում խոշոր, միջնահատվածում՝ փոքր քարերով, ունի 3.90-ից մինչև 5-5.5 մ լայնություն (տե՛ս նկ. Ա-65/1-2)[1346]: Նկատվում է, որ ժայռերը կամ քարքարոտ ելուստները հարթեցվել են, հարկ եղած դեպքում ճանապարհի լայնությունը պահպանելու համար կառուցվել են հենապատեր: Բինգյոլից գալով՝ ճանապարհը ձգվում է դեպի Բալու, անցնում Մասթարի լեռը և ձգվում Գենեֆիք – Նորշունթեփե ուղղությամբ՝ կրկին երևալով Խարբերդից մոտ 10 կմ հեռավորությամբ ընկած Հաջըսելի գյուղի մոտ[1347]:

---

[1337] Deller 1984: 104f. (Nr. 3.1); Parpola 1987, No. 29.
[1338] Kleiss 1976b: 33; նույնի՝ 2012: 75, Abb. 04.15; Kleiss, Kroll 1979: 221f., Abb. 50.
[1339] Оганесян 1955: 10; Հովհաննիսյան 1996, էջ 103:
[1340] Միքայելյան 1964, էջ 131-132:
[1341] Sevin 1987: 6, Res. 15-17; նույնի՝ 1991: 97ff., Fig. 07.2.2.
[1342] Tadmor 1994: 52f. (Ann. 17: 11′); Tadmor, Yamada 2011, No. 9: 11′.
[1343] Briant 2002: 362ff. (աղբյուրների հղումներով):
[1344] Belli 2000b: 409ff.; նույնի՝ 2001b: 370ff.; նույնի՝ 2007c: 342ff.
[1345] Sevin 1988: 547ff.; նույնի՝ 1989a: 47ff.; նույնի՝ 1989b; նույնի՝ 1991: 97ff.
[1346] Sevin 1986: 283f., Res. 7-10; նույնի՝ 1987: 7, Res. 1, 20-21; նույնի՝ 1989a: 51, Lev. I-III; նույնի՝ 1989b: 490f., Res. 27-32; նույնի՝ 1991: 97ff., Figs. 07.1.2., 07.2, Pl. 07.1.1; Belli 2001b: 371. Ճանապարհի հռոմեական կամ օսմանյան շրջանով թվագրության համար տե՛ս և Հմմտ. Sinclair 1989b: 424f.
[1347] Sevin 1986: 286f.; նույնի՝ 1989a: 47ff., Lev. 1-3, 4/1.

Ուրարտական ճանապարհի մի հատված է պահպանվել Շուշանցի մոտ՝ Տուշպայի ուղղությամբ[1348]: Սութայի մոտ նկատվող, մասամբ ժայռափոր ճանապարհը, հնարավոր է, նույնպես պատկանում է ուրարտական ժամանակաշրջանին[1349]: Հին ճանապարհի որոշ հատվածներ են պահպանվել հյուսիս-արևմտյան Իրանում՝ Կալ'եհ Ջիկ կայան-ամրոցի մերձավորությամբ: Ճանապարհը Կոտոր-չայի հովտով տանում էր դեպի Կոտուրյան լեռներ և այն հատելով՝ Ուրմիայի ափերը կապում Վանի հետ[1350]:

Հետաքրքիր է, որ ճանապարհների որոշ հատվածների անցանելությունն ապահովելու համար անգամ փորվել են ժայռերը՝ ճանապարհն անցկացնելով թունելի միջով (Սաքալթութան, Դելիքթաշ (Շամիրամ), նկ. Ա-67/1-2)[1351]:

Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել տերության համար ռազմավարական մեծ կարևորություն ունեցող և կենտրոնական իշխանությունների կողմից վերահսկվող ութը մայրուղիներ՝ դրանք պայմանականորեն անվանելով «Կենտրոնական», «Արևմտյան», «Հարավ-արևմտյան», «Հարավ-արևելյան», «Արևելյան», «Հյուսիս-արևելյան», «Հյուսիսային» և «Հյուսիս-արևմտյան» մայրուղի:

Ուրարտական պետական ճանապարհների վերահսկողությունն ու կանոնավոր հաղորդակցությունն ապահովելու համար կենտրոնական իշխանությունները կառուցել էին իջևանատներ կամ փոքր կայան-ամրոցներ, որոնք ունեին պահակազոր, ապահովված էին պարենամթերքով, փոխադրող տեխնիկայով, քաշող կենդանիներով և ձիերով, կայաններում թերևս գործում էին նաև վերանորոգող արհեստավորներ և սպասարկող անձնակազմ, միգուցե՝ իրենց ընտանիքներով:

Իջևանատների արտաքին պատերը կառուցվում էին որպես պարսպապատ՝ քառակուսի կամ ուղղանկյուն հատակագծով, և դրանով նմանվում էին ամրոցների (այստեղից էլ «կայան-ամրոց» բնութագրումը): Այս կառույցները սովորաբար զբաղեցնում են մինչև 1 հա մակերես, ինչը համադրելի է ուրարտական փոքր ամրոցների զբաղեցրած տարածքներին: Մինչև այժմ վկայված նման կայան-ամրոցների թիվը հասնում է 32-ի (տե՛ս Քարտեզ 2-11)

Օրինակ, Բինգյոլից դեպի Բալու տանող մայրուղու մեջտեղում ընկած Բահչեջիք II կայանը իրենից ներկայացնում է 63 × 10 մ մակերեսով մեծ շինություն՝ ներքին բաժանումներով (տե՛ս նկ. Ա-68/1)[1352]: Հետաքրքիր է, որ շինությունից ոչ հեռու ժայռի մեջ փորված են «կաղապարներ», որոնք օգտագործվել են, ամենայն

[1348] Belli 1984: 166.
[1349] Ozfirat 1994: 362, Res. 8-9.
[1350] Kleiss, Kroll 1979: 199.
[1351] Belli 2001b: 372, Fig. 6/a-b; նույնի՝ 2011b: 37ff.
[1352] Sevin 1991: 98 and Fig. 07.5; Payne, Sevin 2001: 111.

հավանականությամբ, մարտակառքերի և սայլերի դետալներ պատրաստելու համար (տե՛ս ստորև 2.4.2.4.), ինչը կարող է վկայել, որ յուրաքանչյուր կայանին կից գործել է արհեստանոց՝ անվավոր փոխադրամիջոցները նորոգելու համար: Բավական լավ պահպանված մեկ այլ կայան-ամրոց՝ Թափա Դոսոկը՝ Ուշնուի հովտում, ուներ ամրոցի ներսի երեք բակերի շուրջը դասավորված միջինը՝ 5.5. մ × 3.50 մ մակերես ունեցող 40 սենյակ (նկ. Ա-68/4)[1353]: Ամրոցի պարիսպներին կից կար փոքրիկ բնակատեղի՝ մի քանի տներով, որոնց բնակիչները, թերևս, սպասարկել են ամրոցի անձնակազմի և կայանի կարիքները կամ իրենք են ծառայել հենց ամրոցում: Նույն պատկերն է նաև Քանիքի Զարում[1354] և Թորքի Թափայում[1355]: Այս առումով հետաքրքիր է, որ կան տվյալներ ասորեստանյան նմանատիպ կայանի մերձավորությամբ ընտանիքների բնակեցնելու մասին (30 ընտանիք)[1356], ինչն ուղիղ համեմատական է Ուրարտուում ունեցած պատկերի հետ (նկ. Ա-68/5):

Պետության կողմից կառուցված նման կայանների հանդիպում ենք ասորեստանյան սեպագիր աղբյուրներում ևս: Դրանք կոչվել են *bīt mardītu* (հմմտ. ասսուր. *mardītu*-ն՝ «մեկօրյա երթանցում/ճանապարհ»), իջևանատան պետի՝ LÚ.GAL *kalli'u*-ի տնօրինության ներքո, որի գործառույթների մեջ էր մտնում արքայական սուրհանդակների և պաշտոնյաների, գուցե նաև՝ առանձին ճանապարհորդների մասին հոգալը[1357]: Ուրարտական տեքստերում հանդիպող $^{LÚ}$KASKAL-ը[1358], որը բառացի նշանակում է «ճանապարհի մարդ», մի գուցե, կարող է կապվել այս համակարգի հետ՝ նշանակելով «սուրհանդակ»(?), «իջևանատան ծառայող»(?) կամ նման մի բան, ինչպես $^{LÚ}$*kalli'u*-ն Ասորեստանում (տես, սակայն, 1.1.5.5.):

Առայժմ հայտնի չէ, թե ինչպես են կոչվել կայան-ամրոցներն Ուրարտուում: Միանգամայն հնարավոր է, որ դրանց կից բնակավայրը նկատի ունենալով, այդ կայան-ամրոցները կոչվեին պարզապես «քաղաք» (URU): Մյուս կողմից, չի բացառվում, որ դրանք կոչվեին այլ կերպ, և մի գուցե այդ կառույցներն են նկատի առնվում տեքստերում $^{É}$*barzu/idib(i)duni*-«տուն» տերմինով: Հաշվի առնելով, որ արձանագրություններում սովորաբար $^{É}$*barzu/idib(i)duni*-«տան» հետ միասին նշվում է նաև É.GAL-«ամրոց» կառուցելու մասին[1359], ապա գործնականում ոչինչ չի խանգարում

[1353] Kleiss, Kroll 1979: 196, Abb. 20.
[1354] Kleiss 1976a: 33f., Abb. 17.
[1355] Kleiss, Kroll 1977: 62f., Abb. 11.
[1356] Parpola 1987, No. 177. Տե՛ս նաև Oppenheim 1964: 119.
[1357] Levine 1989: 90.
[1358] CTU IV, CT Kb-1 Ro$_9$.
[1359] *E.g.* КУКН, 46; CTU I, A 5-61.

É*barzu/idib(i)duni* կոչվող կառույցը համարելու «(ամրացված) իջևանատուն», որը, ի դեպ, կարող էր կոչվել նաև արքայի անունով (տե՛ս նաև 2.4.2.2.):

Կայան-ամրոցների միջև եղած հեռավորությունը սովորաբար տատանվում էր 15-ից 35 կմ-ի սահմաններում, միջինը՝ 25-30 կմ, ինչը կարող էր պայմանավորված լինել ճանապարհի մատչելությամբ և բնույթով[1360]: Մասնավորապես, Բինգյոլից 26 կմ հեռավորությամբ էր գտնվում դեպի արևմուտք ձգվող ճանապարհի երկայնքով կառուցված ուրարտական կայան-ամրոցներից մեկը՝ Զուլյումթեփեն, որին հաջորդում էր Ջանքուրթարանթեփեն՝ 33 կմ հեռավորությամբ, 25 կմ էր կազմում Զուլյումթեփեից մինչև Քալեօենյու-թեփե ընկած ճանապարհը[1361]:

Նույն պատկերն է նաև հյուսիս-արևմտյան Իրանում: Այստեղ, օրինակ, Կալ'եհ Գյավուրից մինչև Կըզ Կալ'եհ՝ Խոյի մոտ, կազմում էր 26 կմ, Ուզուբ Թափայից մինչև Կըզ Կալեհ կազմում էր 29 կմ, որն էլ գտնվում էր Բաստամից 15 կմ հեռավորության վրա[1362]: Գրեթե նույն՝ մոտ 20 կմ հեռավորությամբ են ընկած Արարատյան դաշտավայրի ուրարտական ամրաշղթայի մաս կազմող ամրոց-ամրությունները[1363]: Դա հնարավորություն էր տալիս տեղեկատվությունը հաղորդել հեռվից՝ կրակի կամ ծխի ազդանշաններով, իսկ տարբեր հանգույցների միջև մոտ հեռավորությունը թույլ էր տալիս սուրհանդակին, անհրաժեշտության դեպքում փոխելով ձին կամ կառքը, արագորեն տեղեկատվությունը հասցնել կենտրոն և կենտրոնից՝ ծայրամաս:

Հետաքրքիր է, որ կայանների միջև ընկած միջին հեռավորությունը՝ 25-30 կմ, հավասար է մոտ 3 *bēru*-ի («կրկնաժամ»)[1364], ինչը կազմում է մեկ օրվա ճանապարհ և հանդիպում է միջագետքյան՝ տարբեր դարաշրջանների տեքստերում ևս[1365]:

Ուրարտական ճանապարհների այս ցանցը իր կայաններով հիշեցնում է ասորեստանյան «Արքայական ճանապարհ»-ը (KASKAL–LUGAL/*ḫarrān šarri*)[1366] և Ուրարտուում, ենթադրվում է, այն նույնպես կարող էր կոչվել այդպիսին[1367]: Ասորեստանում «Արքայական ճանապարհ»-ի առաջին հիշատակությունները վերաբերում են Թիգլաթպալասար III-ի ժամանակաշրջանին, սակայն, ճանապարհների այդ ցանցը՝ կանոնավոր հեռավորությամբ կառուցված իջևանատներով, գործում էր դեռևս

[1360] Payne, Sevin 2001: 111.
[1361] Sevin 1987: 5.
[1362] Dan 2010a: 333 and n. 15.
[1363] Ավետիսյան 2001, էջ 10:
[1364] CAD 2, B, 1965: 208ff. (bēru A).
[1365] Տե՛ս Hallo 1964: 63; Levine 1989: 82, 90; Faist 2006: 148 and n. 4, 150.
[1366] Kessler 1980: 183ff., Karte 8; նույնի՝ 1997: 129ff.; Faist 2006: 149 (map).
[1367] Տե՛ս և հմմտ. Çavuşoğlu *et al*. 2010: 45.

միջինասորեստանյան դարաշրջանում[1368]: Պահպանվել են անգամ «ճանապարհացույց»-ներ՝ նշելով տարբեր քաղաքների միջև ընկած հեռավորությունը[1369]: Աքեմենյան հաղորդակցության համակարգը և մասնավորապես՝ «Արքայական ճանապարհ»-ը, որը ձգվում էր 2600 կմ և ուներ ավելի քան 111 իջևանատուն-կայան (*σταθμοί*)՝ ապահովելով կանոնավոր հաղորդակցությունը կենտրոնի և տերության արևմտյան սատրապությունների միջև[1370], հավանաբար փոխառված էր ասսուրա-ուրարտական օրինակից[1371]: Կարելի է մտածել, որ շատ ավելի ուշ՝ հայոց արքայից արքա Տիգրան Մեծի կառուցած «Արքունի պողոտան», որն Արտաշատը կապում էր Տիգրանակերտի հետ[1372], գոնե մասամբ կրկնել է ուրարտական պետական ճանապարհներից մեկի երթուղին և օգտագործել դրա ենթակառուցվածքները:

Ենթադրվում է նաև, որ Վանա լճի վրա եղել է կանոնավոր ծովային հաղորդակցություն, ինչի վկայություն է դիտվում Դելիչայի ամրոցի մոտ ենթադրաբար ուրարտական շրջանին պատկանող նավահանգստային կառույցի գոյությունը[1373]:

### 1.6.2. Ճանապարհային ցանցը

#### 1.6.2.1. «**Կենտրոնական մայրուղի**»

Տերության մայրաքաղաք տանող բոլոր ճանապարհները գտնվում էին բիայնական մշտական հսկողության տակ՝ դրանց երկայնքով կառուցված ամրոց-ամրությունների համակարգի միջոցով: Դրանք հիմնականում բնական ճանապարհներ էին, որոնց ուղին թելադրում էին լեռնաշխարհի բարդ ռելյեֆն ու բնակլիմայական պայմանները[1374]:

Առաջին ամրաշղթան կառուցվել էր Վանա լճի բոլոր ափերը միմյանց կապող «Կենտրոնական մայրուղու» երկայնքով, որի վրա էր գտնվում տերության նոր մայրաքաղաք Տուշպան: Վերջինիս մատույցները հարավից հսկում էին Ծվստանի, հյուսիսից՝ Քալեջիքի, իսկ հյուսիս-արևելքից՝ Անձավի զույգ ամրոցները: Մայրուղու՝ հյուսիսից դեպի Վան տանող հատվածն անցնում էր Չալդըրանի հովտով, իսկ

---

[1368] Kühne2000: 275, Fig. 2.

[1369] Röllig 1983: 279ff.; Faist 2006: 150 and n. 5 (միջինասորեստանյան դարաշրջան); Levine 1989: 75ff.; Fales, Postgate 1995, No. 14 (նորասորեստանյան դարաշրջան).

[1370] Տե՛ս Briant 2002: 357ff.

[1371] Graf 1994: 172f.; Belli 2001b: 374. Հմմտ. նաև Kleiss 1988c: 187.

[1372] Արտաշատ – Տիգրանակերտ ճանապարհի երթուղու համար տե՛ս և հմմտ. Մանանդյան 1984, էջ 18-34; նույնի՝ 1936, էջ 85-114:

[1373] Belli 2001b: 370, Fig. 1.

[1374] Հայկական լեռնաշխարհը առաջավորասիական տարածքներին կապող ճանապարհների ցանցի մասին մանրամասն տե՛ս Bobokhyan 2008b: 91ff., Abb. 2-10.

անվտանգությունն ապահովում էին Չալդըրանի, Բերկրիի և Գործոթի ամրոցները[1375]: Բերկրիի հովտից ճանապարհը տանում էր դեպի Քեչիքըրան, ապա՝ Դելիչայ, Արճեշ և Բադնոց: Արճեշից՝ Վանա լճի հյուսիսային ափերով, այն ձգվում էր դեպի Արծկե, Դատվան, ապա և Բիթլիս: Նեմրութ հրաբխային լեռան հարավային լանջերով էր անցնում Բիթլիսը Մուշին կապող ճանապարհը[1376]: Բիթլիսից մինչև Վան հնարավոր էր հասնել երկու օրում, սակայն, անցնելով ոչ թե լճի հարավային ափերով, այլ՝ շրջանցելով լիճը հյուսիսից: Առավել կարճ՝ հարավային հատվածը, անգամ 17-րդ դ-ում, համարվում էր քարքարոտ և դժվարանցանելի[1377]:

«Կենտրոնական մայրուղու» հարավ-արևելյան հատվածը Տուշպան կապում էր Հայոց ձորի հետ՝ ընթանալով հիմնականում ընթանալով Խոշաբ գետի ափերի երկայնքով, ուր կառուցված ամրաշղթան ապահովում էր տարածքի և ճանապարհի անվտանգությունը (Քարտեզ 2-11):

Կային նաև մի քանի այլ ճանապարհներ ևս, որոնք նվազ կիրառվող էին և շատ ավելի դժվարին: Դրանք են՝ Վանից դեպի Ոստան (Գևաշ), Խիզան և Բահչիսարայ, Վանից դեպի Շատախ, ապա Բահչիսարայ և Փերվարի տանող ճանապարհները[1378]:

Հնագիտորեն վկայված կայան-ամրոցներից մի քանիսը պեղվել են Վանա լճի ավազանում: Տուշպայի մոտ գտնվող նման կայաններից մեկը, ենթադրվում է, Քալեջիքի փոքր ամրոցն է[1379], թեև վերջինիս մերձավորությունը քաղաքին (հեռու է ընդամենը 4 կմ) քիչ հավանական է դարձնում նման ենթադրությունը: Մյուս կողմից, հայտնի է այլ օրինակ, երբ կայան-ամրոցը գտնվում էր խոշոր կենտրոնի անմիջական մերձավորությամբ[1380]: Դա Հայկաբերդի մատույցներում՝ նրանից ընդամենը 500 մ դեպի հարավ-արևմուտք ընկած Ջերմուկն էր (նկ. Ա-68/3)[1381]: Տվյալ դեպքում, մի գուցե, կարելի է ենթադրել, որ կայանը կառուցվել էր շատ ավելի վաղ, քան բուն ամրոցը, հավանաբար՝ Մենուայի օրոք: Հայկաբերդից քիչ դեպի հյուսիս է ընկած Թաշքոնաքի ամրոց-կայանը[1382]: Վանա լճի հյուսիս-արևելյան անկյան մոտ գտնվող Քեչիքըրանը, հնարավոր է, նույնպես ծառայել է իբրև ամրացված կայան[1383]: Որպես կայան-ամրոց է ծառայել Արծկեից դեպի արևմուտք ընկած Ջևիզդերեսի-քալեսի փոքր ամրոցը[1384]:

---

[1375] Burney 1957: 40.
[1376] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 275; Özfırat 2002: 24.
[1377] Էվլիյա Չելեբի, «Ուղեգրություն», 128-134 (Սաֆրաստյան 1967, էջ 208):
[1378] Belli 1983a: 35, Res. 1-4.
[1379] Çavuşoğlu, Biber 2012: 329.
[1380] Payne, Sevin 2001: 116f.
[1381] Erzen 1970 [1972]: 107f.; նույնի՝ 1978: 29, Res. 13; Sevin 1989a: 52; Dan 2009: 89ff., Figs. 1-1.
[1382] Özfırat 2010c: 228.
[1383] Marro, Özfırat 2004: 240, Fig. 12; Dan 2010c: 65.
[1384] Özfırat 2002: 21ff.

### 1.6.2.2. «**Հյուսիս-արևելյան մայրուղի**»

«Հյուսիս-արևելյան մայրուղի»-ն Տուշպայից սկիզբ առնող «Կենտրոնական մայրուղու» շարունակությունն էր: Չալդրանից հետո, արևլյան կողմից շրջանցելով Թոնդրակի լեռնազանգվածը, այն ձգվում է դեպի Բայազետ: Բայազետից ճանապարհը ճյուղավորվում է դեպի Սուրմարի և Արարատյան դաշտ՝ Հայկական պարն անցնելով Օրգովի լեռնանցքով (Չիլլիի լեռնանցք՝ 2110 մ[1385]), իսկ մյուս ճյուղը Մելեքլի-թեփեյով ուղղվում էր դեպի ներկայիս Նախիջևան[1386]: Արարատյան դաշտավայրը Նախիջևանի հետ կապվում էր Գայլի-դրունքով անցնող և Արաքսի ձախ ափով ընթացող հնագույն ճանապարհով: Վերջինս հավանաբար Վերախրամի ուրարտական կամրջով անցնում էր Արաքսը և միանում ներկայիս Դողուբայազեթ – Մակու – Խոյ մայրուղուն:

Ուրարտական տերությունը Սևանա լճի ավազանի իր տիրությների հետ կապվում էր ներկայիս Օղլանկալայից (Արբա ամրոցը(?)) դեպի հին Արենի տանող կարճ, սակայն, դժվարամատչ ճանապարհով, որն անցնում էր Արփա գետի նեղ կիրճով[1387]: Այստեղից ճանապարհը ձգվում էր դեպի Սիսաջան, անցնում Սելիմի լեռնանցքը (2410 մ) և իջնում դեպի Սևանի ավազանի ուրարտական ամրոցներ[1388]: Սա ավանդական բանուկ ճանապարհ էր[1389], որը հետագայում մաս էր կազմելու Դվին - Պարտավ մայրուղուն և այժմ էլ հանդիսանում է Զանգեզուրը Սևանա լճի ավազանին կապող ամենակարճ ուղին:

Տերության վերահսկողության տակ էր նաև Նախիջևանից դեպի Շաղաթ տանող Սիսիանի լեռնանցքով (Մայրադուրք) անցնող հնագույն ճանապարհը: Այս երկու ճանապարհների՝ Զանգեզուրի լեռները հատող լեռնանցքների մերձավորությամբ էր գտնվում Ամուշա քաղաքը: Այն առաջին անգամ հիշատակվում է Խալդի աստծուն նվիրաբերված շղթայի ընծայագրերում՝ թողնված Իշպուինիի, նրա որդու՝ Մենուայի, և վերջինիս որդու՝ Ինուշպուայի անունից[1390]: Երկրորդ հիշատակությունը վերաբերում է Արգիշթի Ռուսայորդու իշխանության շրջանին՝ հայտնելով Ամուշայով դեպի Բիայնիլի արքայի վերադարձի մասին՝ Ծուլուկու (Էթիունի) ձեռնարկված հաղթական արշավանքից հետո (տե՛ս վերը 1.2.1.2.):

Արարատյան դաշտավայրը Սևանա լճին կապող մյուս ճանապարհը ձգվում էր Հրազդան գետի երկայնքով դեպի հյուսիս-արևելք՝ հետևելով ներկայիս Երևան – Սևան

---

[1385] Sinclair 1987: 406.
[1386] Marro, Özfırat 2003: 395.
[1387] Տեր-Մարտիրոսով 1989, էջ 186:
[1388] Հմայակյան, Սանամյան 1998, էջ 42; Biscione, Dan 2011: 110ff.
[1389] Մանանդյան 1984 [1936], էջ 192-212; Հարությունյան 1968, էջ 217-220; Зардарян 2009: 50 сл.
[1390] КУКН, Послесловие, No. 2; CTU IV, B 4-1A-D, B 4-2.

մայրուղուն: Սակայն, ի տարբերություն Վայոց ձորով անցնող ուղու, այդ ճանապարհի նկատմամբ ուրարտական վերահսկողության սահմանագիծն ավարտվում է Սոլակի կայան-ամրոցով: Արարատյան դաշտավայրը Սևանա լճի ավազանին են կապել նաև Գեղամա լեռներով անցնող մի քանի սեզոնային ճանապարհներ[1391]:

Այդ ճանապարհների երկայնքով վկայված ուրարտական կայան ամրոցներից են Բայազետի մոտ՝ Զիյարեթթեփեն[1392], Արարատյան դաշտավայրում՝ Սոլակը[1393], Սևանա լճի ավազանում՝ Առվույտի դաշտը[1394]: Հնարավոր է՝ նույն դերն ունեին Գետափի, Ալ Բերդի և Մարտունիի ամրոցները Արարատյան դաշտավայրից և Նախիջևանից Սևանա լճի հարավային ափեր տանող վերը նշված ճանապարհի վրա[1395]:

Հետաքրքիր է, որ Արարատյան դաշտավայրում կառուցված ամրոց-ամրությունների ամրաշղթայի հանգույցները (Արգիշթիխինիլի - Արագած – Օշական - Դովրի - Արամուս / Օշական – Փարպի) գտնվում էին գրեթե նույն՝ մոտ 20 կմ և միմյանցից տեսանելի հեռավորության վրա (Քարտեզ 2-11)[1396]:

1.6.2.3. «**Արևելյան մայրուղի**»

Տուշպան մերձուրմյան ավազանի ուրարտական տիրույթներին կապում էր երկու ճանապարհ: Դրանցից գլխավորը կամ «Արևելյան մայրուղին», սկիզբ առնելով Տուշպայից, ընթանում էր դեպի Արճիշակ, ապա՝ դեպի Օզալփ – Սարայ – Կոտուր կամ Օզալփ – Սաթմանց (այժմ՝ Օերենբուրչ) – Քոչբաշը – Կոտուր ուղղությամբ և, անցնելով Կոտուրյան լեռները, իջնում դեպի Խոյ՝ Ուրմիայից հյուսիս-արևմուտք[1397]: Խոյից ճանապարհը ձգվում է դեպի հյուսիս-արևելք՝ Էվօղլու, ընթացքում ճյուղավորվում դեպի հյուսիս՝ դեպի Բաստամ, իսկ այնուհետև դեպի հաևավ-արևելք՝ հասնելով Լիվար և արևելյան ուղղությամբ շարունակվելով՝ մինչև Սեկինդել (Քարտեզ 2-11): Հնարավոր է, Բաստամը Վանի ավազանի ուրարտական ամրոցների հետ է կապվել նաև մի երկրորդ՝ Ակ-չայ գետի հոսանքով ձգվող Օզալփ – Սարայ – Կափութ – Զորավա – Աջայ – Բաստամ ճանապարհով[1398]:

Խոյից դեպի հարավ ճանապարհն անցնում էր ներկայիս Խոյ – Քյահրիզ – Ուրմիա – Ուշնու գծով և շարունակվում դեպի Փիրանշահր ու Սորան: Այս հատվածից

[1391] Փիլիպոսյան, Մկրտչյան 2001, էջ 80; Biscione, Dan 2011: 111f.
[1392] Özfirat, Marro 2007: 14.
[1393] Castelluccia *et al.* 2012: 30ff.
[1394] Biscione, Dan 2011: 110, n. 3.
[1395] Biscione, Dan 2011: 110.
[1396] Ավետիսյան 2001, էջ 10:
[1397] Burney, Lang 1971: 149; Sevin, Belli 1976-1977 [1977]: 377/388f., Lev. 1; Sinclair 1987: 311f.; Belli 2001b: 373; Salvini 2009a: 497.
[1398] Kleiss 1973a: 17sq., Abb. 14.

հյուսիս ընկած շրջաններում է ավանդաբար տեղորոշվում Մուծածիրը, որի հետ հնարավոր էր կապվել Քելիշինի լեռանցքով անցնող ճանապարհով: Մուծածիր և Քելիշինի լեռնանցք տանող ճանապարհի վրա էին ընկած Թափա Դոսոկն և Քանիքի Ձարը:

Երկրորդ ճանապարհը Բաշքալեից (Հադամակերտ) ձգվում էր դեպի Խանասոր ապա, անցնելով Կոտուրյան լեռները, իջնում դեպի Սալմաստ[1399]: Տուշպայի հետ Բաշքալեն կապվում էր «Հարավ-արևելյան» մայրուղիով:

Բաստամում և հյուսիս-արևմտյան Իրանի այլ հուշարձաններում ընթացող հնագիտական աշխատանքներին զուգահեռ՝ ուրվագծվեց նաև այս տարածքներում ուրարտական տերության անցկացրած ճանապարհային ցանցը՝ իր կայան-ամրոցներով: Դրանց թիվն այստեղ հասնում է 11-ի: Դրանք են՝ Կալ'եհ-Գոհարը[1400], Աշաղի Կորուլը[1401], Ուզուբ Թափան[1402], Կալ'եհ Թազաբուլակը[1403], Թափա Դոսոկը[1404], Կըզ Կալ'եհը (Մարականդ)[1405], Քանիքի Ձարը[1406], Թափա Ջաջուրդը[1407], Կալ'եհ Հավաշը[1408]: Այս շարքին հավանաբար կարելի է դասել նաև Թեփե Բադր-էդ-Դինի (Նաալուս) փոքր ամրությունը[1409], միգուցե նաև՝ Խարաբե Ձարը (Դոմբադ)[1410]:

Ճանապարհներից մեկն իրար էր կապում Բայազետը և Մակուի դաշտը: Բայազետից սկզբնավորվող առաջին ճանապարհը Փոքր Մասիսի հարավակողմով ուղղվում էր դեպի Արաքսի ափեր՝ կապելով Բայազետը Իլան Կալ'եհի, Կալ'եհ Սարանջի և Վերախրամի հետ: Բայազետից սկիզբ առնող երկրորդ ճանապարհն իրար էր կապում Սանգարը, Կալ'եհ Ռենտը, Կալ'եհ Սիահը և միանում Վերախրամին կամ ուղղվում հարավ՝ միանալով դեպի Կարա Զիյա-էդ-դին և մերձուրմյան տարածքներ տանող ճանապարհին: Բայազետից դեպի հարավ տանող երրորդ ճանապարհն անցնում էր ներկայիս Բայազետից դեպի Սիահ-Չեշմե – Կարա Զիա-էդ-դին – Էվօղլու և Սիահ-Չեշմե – Խոյ տանող ճանապարհներով (Քարտեզ 2-11): Այս վերջին ճանապարհը համապատասխանում էր Հակոբ Մանանդյանի կողմից վերականգնվող Արտաշատ – Էկբատան (Իրան) ճանապարհի Օրտիսպի – Գոբդի (Խո՞յ) ճանապարհահատվածին[1411]:

---

[1399] Kleiss 1977a: 148ff., Abb. 12. Տե՛ս նաև Biscione, Dan 2014: 127, n. 15.
[1400] Kleiss 1972b: 148, Abb. 21; նույնի՝ 1975: 58; Kroll 1984b: 29.
[1401] Kleiss 1971: 69, Abb. 18, Taf. 10/1; նույնի՝ 1972a: 67f., Abb. 60, Taf. 17; նույնի՝ 1975: 63; ևն:
[1402] Kleiss 1972a: 64ff., Abb. 59, Taf. 16/2; նույնի՝ 1976b: 31, Abb. 9; ևն:
[1403] Kleiss, Kroll 1977: 68ff., Abb. 20.
[1404] Kleiss, Kroll 1978: 51, Abb. 27, Taf. 8/3; նույնի՝ 1979: 195ff., Abb. 20.
[1405] Kleiss, Kroll 1979: 216ff., Abb. 45-46.
[1406] Kleiss 1976a: 33f., Abb. 17, Taf. 10/3.
[1407] Kleiss, Kroll 1979: 215f., Abb. 43; Jakubiak 2003a: 19.
[1408] Kleiss, Kroll 1979: 214ff., Abb. 42.
[1409] Kleiss, Kroll 1977: 77.
[1410] Kleiss 1976a, 39ff., Abb. 22, Taf. 11/4.
[1411] Մանանդյան 1984, էջ 168-192; նույնի՝ 1936, էջ 139-172:

Բաստամից, որը ինքը կայան-ամրոց էր մինչև Ռուսա Արգիշթորդու վերակառուցումները[1412], ճանապարհը տանում էր դեպի Ուզուբ Թափա, ապա Կըզ Կալ'եհ (Մարականդ), այստեղից դեպի Կըզ Կալ'եհ (Էվօղլու), իսկ մյուս ճյուղը՝ Լիվար ու Արաքսի ափեր՝ ներկայիս Ջուլֆայի մոտ (Կալ'եհ Գյավուր): Այդ ճանապարհի վրա ընկած ուրարտական հենակետերի միջև հեռավորությունը կազմում է 14-20 կմ[1413]:

1.6.2.4. «**Հարավ-արևելյան մայրուղի**»

Վանա լճի հարավ-արևելյան հատվածով՝ Հայոց ձորով դեպի Վան էր տանում հյուսիս-արևելյան Միջագետքը Վերին Զաբի հովտով Հայկական լեռնաշխարհին կապող գլխավոր կամ «Հարավ-արևելյան» մայրուղին: Հանդիսանալով «Կենտրոնական մայրուղու» հարավ-արևելյան ուղղության շարունակությունը՝ ճանապարը Խոշաբի հովտով ուղղվում էր դեպի Բաշքալե, որտեղից էլ՝ դեպի Հաքյարի և Բեյթուշշեբափ՝ կապվելով Ուկկուի և Կումմեի հետ: Ասորեստանից այդ գոտի առավել դյուրին մուտք հնարավոր էր միայն արևմուտքից՝ ներկայիս Ջիզրե – Շըրնաք – Շենոբա – Ուլուդերե – Ուզունգեչիթ – Աշաղը դերե – Բեյթուշշեբափ ճանապարհով: Հաքյարիի լեռներն ամուր փակում էին Զախոյից, Դոհուկից կամ Ամեդուից հյուսիս տանող անցումները, և պատահական չէ, որ Սինախերիբի՝ Ք.ա. 697 թ-ի արշավանքը դեպի Ուկկու ևս սկսվել էր արևմուտքից՝ Ջուդի լեռան շրջանից[1414]:

Բաշքալեից հետո «Հարավ-արևելյան մայրուղու» մի ճյուղն ուղղվում էր դեպի Յուքսեքօվա և Շեմդինլի: Այստեղից արդեն հնարավոր էր առաջանալ միայն խիստ դժվարամատչ լեռնային արահետներով և դուրս գալ Ուշնուի հովտի ուրարտական տիրույթներ: Գրեթե նույն երթուղին է առաջարկում Օքթայ Բելլին (Տուշպա – Սարդուրիխինիլի – Խոշաբի ամրոց – Չուհի (Գյուզելդերե) լեռնանցք (2650 մ) – Բաշքալե – Յուքսեքօվա – Հարունայի լեռնանցք – Քելիշինի լեռնանցք)[1415]: Քելիշինի լեռնանցքից (2860 մ) մի ճյուղն իջնում էր դեպի Միջագետք, իսկ մյուս ճյուղը՝ դեպի Ուրմիայի հարավ: Այս ճանապարհը բազմիցս են օգտագործել ասորեստանցիները՝ Հայկական լեռնաշխարհ ներթափանցել փորձելիս և գրականության մեջ հայտնի է «հյուսիսային ճանապարհ» անունով[1416]: Դեպի Քելիշինի լեռնանցք տանող հին ճանապարհի հետքեր է նկարագրում Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտը[1417]:

[1412] Kleiss 1980a: 299.
[1413] Kleiss, Kroll 1979: 218f.
[1414] Սինախերիբի արշավանքի համար տե՛ս նաև Jeffers 2011: 98ff.; Radner 2012: 257ff.
[1415] Տե՛ս Lehmann-Haupt 1926: 302sqq.; Burney 1957: 40; Sevin, Belli 1976-1977 [1977]: 377/388f., Lev. 1; Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 286; Taffet, Yakar 1998: 136; Belli 2001b: 372, Figs. 7-8; նույնի՝ 2004c: 336.
[1416] Levine 1977: 173, 178.
[1417] Lehmann-Haupt 1926: 302. Այս մայրուղու համար մանրամասն տե՛ս և հմմտ. նաև Sevin 2015: 24f., Res. 2.

1.6.2.5. «**Հարավային մայրուղի**»

«Հարավ-արևմտյան» մայրուղու մի ճյուղավորում թերևս ներկայիս Զիյարեթից շարունակվել է դեպի Սղերդ/Սիիրթ և իջել դեպի հարավ՝ Շըրնաք, Զախո և Դոհուկ: Տեղի ճանապարհները դժվարամատչ էին, անցնում էին մի քանի լեռնանցքներով, որոնցից ասորեստանյան աղբյուրները հիշատակում են Իզզա[…] լեռան անցումները (*nēreb ša* KUR.*izza*[…]), այն է, հավանաբար, Մեշինդաղի լեռնանցքը (1620 մ), ինչպես նաև Իլիմերու, […]թադդա, Աբիա, Սիրումի և այլ լեռները, որոնք ընկած էին Ուլլուբայի տարածքում[1418]: «Հարավային մայրուղու» վերահսկողությունը թույլ էր տալիս ոչ միայն ապահովել Ասորեստանից դեպի Վանա լճի ավազան տանող ճանապարհը, այլև, մյուս կողմից, կանխել ասորեստանյան ազդեցության տարածումը Վանա լճից հարավ ձգվող լեռնային գոտում, ուր ընկած էին Խաբխի, Կումմե և Ուկկու երկրները: Բացի դա, Խաբխիի նվաճումն ու Ուլլուբայի նկատմամբ վերահսկողությունը, որն իրականացվում էր, ամենայն հավանականությամբ, այդ երկրում ռազմական ներկայություն ապահովելով, թույլ էր տալիս անմիջական սպառնալիք ստեղծել ասորեստանյան միջնաշխարհի համար: Բավական է նշել, որ Դոհուկից մինչև Նինվե ուղիղ գծով կազմում է ընդամենը 60 կմ ճանապարհ (Քարտեզ 2-10ա):

Վանա լճի հարավային ափերից դեպի Մոկաց լեռներ ձգվող մի քանի ճանապարհներ տերության համար մուտք էին ապահովում տեղի հարուստ մետաղահանքերը և անտառները[1419]:

1.6.2.6. «**Հարավ-արևմտյան մայրուղի**»

«Հարավ-արևմտյան մայրուղի»-ն սկիզբ էր առնում Բիթլիսից և Բիթլիս գետի հովտով ուղղվում էր դեպի Սիլվան և Ամիդ՝ անցնելով Շուբրիայի տարածքներով: Այն լեռնաշխարհի դժվարամատչ, բայց միևնույն ժամանակ՝ առավել բանուկ և մեծ նշանակություն ունեցող ճանապարհներից մեկն էր, գլխավոր մայրուղին, որը Վանի ավազանը ամենակարճ ճանապարհով կապում էր Շուպրիայի, Միջագետքի և հյուսիսային Սիրիայի հետ[1420]: Շուբրիայի տարածքով էր անցնում Արածանիի հովիտը վերինտիգրիսյան գոտու հետ կապող մեկ այլ կարևոր ճանապարհ՝ հավանաբար անցնելով ներկայիս Գենչ – Լիջե – Ամիդ գծով[1421]: Մի երրորդ՝ շատ ավելի դժվարին ճանապարհ Լիջեն կապում էր Քուլպի (Փասուր) հետ և իջնում դեպի Մշո դաշտ[1422]:

[1418] Tadmor 1994: 114f. (The Mila Mergi Rock Relief: 25-26); Tadmor, Yamada 2011, No. 37: 25-26.
[1419] Belli 1983a: 35f., Res. 1-4; նույնի՝ 2001b: 374, Fig. 10.
[1420] Anderson 1897: 26, Map; Kessler 1995: 57f., Fig. 1; Belli 2011b: 39.
[1421] Kessler 1995: 61, Fig. 1.
[1422] Kessler 1995: 56, Fig. 1.

«Հարավ-արևմտյան» մայրուղու մի ճյուղավորում իջնում էր դեպի հարավ և միանում ասորեստանյան միջնաշխարհը Թուշխանին և Ամիդին կապող «արքայական ճանապարհ»-ի ճյուղավորումներից մեկին (Քարտեզ 2-11):

1.6.2.7. «**Արևմտյան մայրուղի**»

Վանա լճի ավազանը մերձեփրատական տարածքներին կապող գլխավոր ճանապարհը կամ «Արևմտյան մայրուղին» սկիզբ էր առնում Քայալըդերեից և հասնում մինչև Եփրատ գետը, որն անցնելուց հետո՝ միանում հյուսիսային Միջագետքը, հյուսիսային Սիրիան և հարավ-արևելյան ու կենտրոնական Փոքր Ասիան իրար կապող տարբեր ճանապարհների[1423]: Ճանապարհի հիմնական մասն ընթանում էր Արածանիին զուգահեռ և, հասնելով Խարբերդ, այստեղից ճյուղավորվում մի քանի ուղղությամբ: Դրանցից մեկը ձգվում էր դեպի ներկայիս Բասքիլ և հասնում Իմիքուշաղը, ապա, անցնելով գետը, հասնում Մելիդ/Մելիտենեին: Իմիքուշաղըի մոտ էր գտնվում Եփրատի կարևոր անցումներից մեկը, ուր գետը տարվա որոշ ամիսներին հնարավոր էր անցնել անգամ ոտքով: Երկրորդ ճյուղը Խարբերդից ձգվում էր դեպի Տումեիշքի՝ Թմնիս/Տոմիսա, ուր գտնվում էր Եփրատի հարմար անցումներից մեկ ուրիշը[1424]: «Արևմտյան մայրուղու»՝ Խարբերդից սկիզբ առնող երրորդ ճյուղը ձգվում էր հարավ, անցնում Անձիտը (Էնզիտենե, ներկայիս Թիլ Անզիտ)՝ հասնելով Ծովք լիճ, որի հյուսիսային և արևելյան ափերով ընթանալով՝ իջնում դեպի Էրգանի-Մադենի լեռները և անցնելով այն՝ ընթանում դեպի էլ ավելի հարավ՝ դեպի Ամիդ[1425]: Երկու այլ ճանապարհներ Խարբերդի ամրոցը կապում էին Արածանիից հյուսիս ընկած ամրությունների հետ. մեկը ձգվում էր դեպի հյուսիս-արևելք՝ Խարբերդը կապելով Բերդակի և Մեծկերտի ուրարտական ամրոցներին, իսկ մյուս ուղին ընթանում էր դեպի հարավ-արևմուտք՝ միմյանց կապելով Մերյեմ Դաղի, Հարօղլուի, Գյոքբելենի և Քոյունուշաղըի ամրոցները՝ Քյոշքերբաբայի մոտ դուրս գալով Եփրատի ափ (Քարտեզ 2-11):

Վանի ավազանից դեպի մերձեփրատյան տարածքներից տանող մայրուղու Քայալըդերե – Խարբերդ հատվածում հնագիտորեն փաստագրված կայան-ամրոցների թիվը հասնում է 5-ի: Դրանք են՝ Սոլհան/Ջանքուրթարանթեփեն[1426], Բինգյոլ/Ջուլյումթեփեն[1427], Բինգյոլ/Քալեօենյուն[1428], Բահչեջիք II կայանը (Էլազըղ)[1429] և

[1423] Anderson 1897: 25ff., 38, Map; Belli 2001b: 373.
[1424] Anderson 1897: 24ff., Map; Salvini 1972: 107ff.; Sinclair 1989b: 39f.
[1425] Sevin *et al*. 2011: 11.
[1426] Sevin 1987: 5f., Res. 8-9; նույնի՝ 1988: 550, Fig. 1; Köroğlu 1996: 29, Res. 3.
[1427] Sevin 1986: 284ff., Res. 1, 11-13; նույնի՝ 1987: 6, Res. 14; նույնի՝ 1988: 550, Fig. 1; նույնի՝ 1989a: 50f., Lev. 4/2, 5/1; Köroğlu 1996: 29f., Res. 3.
[1428] Sevin 1987: 6f. Res. 18; նույնի՝ 1988: 550, Fig. 1; Köroğlu 1996: 30, Res. 3.
[1429] Sevin 1988: 550, Fig. 4; նույնի՝ 1989a: 51, Lev. 6/1-2, 7/1; նույնի՝ 1989b: 459f.; Köroğlu 1996: 30f., Res. 3.

Նորշունթեփեն (նկ. Ա-68/2)[1430]: Բինգյոլի դժվարամատչելի լեռները հաղթահարվում էր Սոլիանի մոտով, որտեղ երևում է 5 մ լայնությամբ սալարկված ճանապարհը[1431]: Քայալըդերեի ուրարտական խոշոր բերդաքաղաքից մոտ 20 կմ դեպի հյուսիս-արևմուտք է գտնվում Հըրսըզ-քալեի փոքր կայան-ամրոցը[1432]: Այս կայանները միմյանց են կապում Խարբերդի, Բալուի, Պաղինի և Քայալըդերեի խոշոր ամրոցները: Ճանապարհը Արածանին անցնում է Բալուի մոտ[1433]:

Մի քանի փոքր ամրոցներ ևս, հնարավոր է, կատարել են նույն գործառույթները, ինչ կայան-ամրոցները (Մալթեփե, Հարօղլու, Գենեֆիք ևն)[1434]: «Արևմտյան մայրուղու» ընդհանուր երկարությունը մինչև Եփրատ գետը կազմել է մոտ 260 կմ կամ մոտ 11-օրյա ճանապարհ[1435]: Ամենայն հավանականությամբ՝ այս մայրուղին ընդուպ մինչև Ք.ա. 7-րդ դ-ի առաջին կեսը գտնվել է ուրարտական վերահսկողության տակ[1436]:

1.6.2.8. «**Հյուսիսային մայրուղի**»

Դեպի հյուսիս ընթացող հիմնական ճանապարհը կամ «Հյուսիսային մայրուղի»-ն սկիզբ էր առնում Գործոթից՝ ճյուղավորվելով Տուշապից եկող «Կենտրոնական մայրուղուց» և ուղղվելով դեպի Բադնոց, Աղրը, Ալաշկերտ, իսկ այստեղից՝ ճյուղավորվում դեպի Խորասան – Սարիղամիշ – Կարս և Խորասան – Հասանքալե – Էրզրում[1437]: Ողջ ճանապարհը գտնվում էր այդ գոտում կառուցված ուրարտական ամրաշղթայի հսկողության տակ (Քարտեզ 2-11): Էրզրումից ճանապարհն ուղղվում էր դեպի արևմուտք՝ հավանաբար անցնելով Աշքալե – Դերջան – Էրզնկա (Ալթըն-թեփե) – Կամախ (Քեմահ) ուղղությամբ և, անցնելով Արևմտյան Եփրատը (Քարա-սու), ուղղվում դեպի Փոքր Ասիա: Այդ ուղին ուրարտական իշխանությունների ուշադրության կենտրոնում հայտնվեց բավական ուշ, ինչը կարող էր պայմանավորված լինել Փոքր Ասիայի հետ կապող և Եփրատով անցնող ավանդական ճանապարհների կորստյամբ: Այդ ճանապարհով է Ք.ա. 7-րդ դ-ում իրականացվել կապը Թաբալի կամ Փռյուգիայի հետ (տե՛ս վերը 3.3.6.3.5): Ճանապարհը մասամբ համապատասխանում էր Արտաշատից Սատաղ տանող մայրուղուն[1438]:

---

[1430] Hauptmann 1969/1970: 64ff., Abb. 20, Taf. 9/1; նույնի՝ 1971: 77f./87sqq.; Lev./Taf. 54/1-2, 55/1-2, 61/1; Sevin 1986: 284; նույնի՝ 1989a: 52, Lev. 7/2; նույնի՝ 1991: 98; Köroğlu 1996: 31f., Res. 3 ; Payne, Sevin 2001: 112, Fig. 1.
[1431] Sevin 1986: 283f.; նույնի՝ 1988: 548, Figs. 3-4.
[1432] Jakubiak 2003a: 25.
[1433] Sevin 1989a: 51.
[1434] Payne, Sevin 2005: 111ff., Fig. 1; Sevin 2005a: 382; Sevin *et al*. 2013: 10, n. 3.
[1435] Dan 2012: 57, Fig. 2.
[1436] Մանրամասն տե՛ս նաև Dan 2012: 56ff., Figs. 1-17.
[1437] Çilingiroğlu 1980 [1982]: 193; Özkaya 1994: 385f.; Belli 2001b: 373.
[1438] Հմմտ. Մանանդյան 1984, էջ 85-132; նույնի՝ 1936, էջ 235-240:

# ԳԼՈՒԽ Բ
# ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒՄ

## 2.1. Ռազմական գործը Հայկական լեռնաշխարհում ուշ բրոնզ – վաղ երկաթի դարաշրջանում:

Ինչպես Հին Առաջավոր Ասիայի, այնպես էլ՝ Հայկական լեռնաշխարհի ռազմարվեստի բնորոշ կողմը ուշբրոնզեդարյան դարաշրջանում թեթև-անվավոր մարտակառքեր լայն կիրառությունն էր ռազմական գործում, որոնք փոխարինելու եկան մարտական ծանր սայլերին:

Հին Առաջավոր Ասիայում քառանիվ մարտական սայլեր (GIŠ.MAR.GÍD.DA/*eriqqum*) վկայված են դեռևս Վաղդինաստիական I փուլում (Ք.ա. 30-29-րդ դդ.)[1439]: Դրանք ունեին սահմանափակ կիրառություն՝ հիմնականում ծառայելով հրամանատարական կազմին կամ պարզապես որպես փոխադրամիջոց[1440]: Թել Բեյդարից (Ք.ա. 24-23-րդ դդ.) հայտնի կնքադրոշմներում պատկերված քառանիվ կառքերը, դրանց անիվների տակ պառկած պատկերված կերպարներից դատելով, կիրառվել են մարտում (նկ. Բ-1/2)[1441]: Մարտակառքեր հազվադեպ են հիշատակվում Աքքադի թագավորության բանակում[1442]: Ի դեպ, հետաքրքիր է, որ այստեղ կիրառվում էր մարտակառքերի մի տիպ, որը կոչվում էր «սուբարեական» (1 giš gigir$_2$ šubur e$_2$-ba)[1443]: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ուրֆայից ոչ հեռու՝ Սուրուշ քաղաքի մոտ ընկած Աբամոր Հյոյուքից հայտնաբերված քառանիվ սայլերի բրոնզե մոդելները, որոնք թվագրվում են Ք.ա. 3-րդ հազ-ի վերջ – 2-րդ հազ-ի սկզբներով և կարող են պատկերացում տալ «սուբարեական» կառքերի մասին (նկ. Բ-2/1-2)[1444]:

Թեև առաջին երկանիվ կառքերը (GIŠ.GIGIR/*narkabtum*/*nūbalum*) վկայված են այս նույն շրջանով թվագրվող կնիքների և կնքադրոշմների վրա[1445], բայց առավել լայն կիրառություն դրանք ձեռք են բերում Ք.ա. երկրորդ հազարամյակի սկզբներից, ինչպես, օրինակ, Փոքր Ասիայում[1446], Սիրիայում[1447] և Միջագետքում[1448]:

---

[1439] Yadin 1963: 37ff.; Nagel 1966: 11ff.; Littauer, Crouwel 1979: 15ff.; Fields 2006: 10.
[1440] Littauer, Crouwel 1979: 64; Hamblin 2006: 132ff.; Miglus 2008: 234; Raccidi 2012: 405ff.
[1441] Oates 2003: 116, Fig. 9.2 (10).
[1442] Hamblin 2006: 141f.
[1443] Abrahami 2008: 13.
[1444] Kulakoğlu 2003: 63ff., Figs. 1-12. Նյու Յորքի Մետրոպոլիտան թանգարանում պահվող և, հավանաբար, հյուսիսային Սիրիայից ծագող քառանից կառքերի բրոնզե մոդելների համար տե՛ս Muscarella 1988: 414f. (No. 568): Դրանք հնարավոր է թվագրել Ք.ա. 3-րդ հազ-ի վերջ – 2-րդ հազ-ի սկզբներով:
[1445] Littauer, Crouwel 1979: 20ff., 45ff.; Oates 2003: 121f.; Miglus 2008: 234.
[1446] Nagel 1966: 11; Littauer, Crouwel 1979: 50f.; Beal 1992: 142f.; Hamblin 2006: 147.
[1447] Sasson 1969: 31f.; Hamblin 2006: 148ff.; Vita 2008: 57ff.

Մարտակառքերի դերը Հին Առաջավոր Ասիայում կտրուկ աճեց Ք.ա. 18-17-րդ դդ-ից սկսած, ինչը ոմանք պայմանավորում են հնդարիացիների արշավանքներով, որոնք իրենց հետ բերեցին, ենթադրաբար, թեթև երկանիվ (ճաղերով) մարտակառքը և ձիաբուծությունը, թեև այս հարցերում, իհարկե, կան տարակարծություններ[1449]: Նկատենք, որ Սիրիայից է հայտնաբերվել ընտելացված ձի պատկերող կավե ամենահին արձանիկը (Թելլ էս-Սվեյհատ, Ք.ա. մոտ 2300 թ.)[1450], ընտելացված ձիու (*Equus caballus*) ոսկորներ են հայտնաբերվել Առաջավոր Ասիայի՝ Ք.ա. 3-րդ հազ-ի մի քանի հնավայրերից (Թելլ Լեյլան, Գոդին Թեփե)[1451]: Ուրի III հարստության դարաշրջանին (Ք.ա. 22-րդ դարի վերջ – 21-րդ դար) պատկանող կնքադրոշմներից մեկը պատկերում է ձի հեծած հեծյալի[1452], ընդ որում, գրավոր աղբյուրներում ձիերի (շումերերեն՝ anše.kur.ra «լեռնային էշ», anše.zi.zi, որից և աքքադ. *sisi/sisu(m)*-ը և եբր. *sûs*-ը՝ «ձի») առաջին հիշատակությունները նույնպես վերաբերում են Ուրի III հարստության շրջանին[1453]:

Միտաննական թագավորության հզորությունը պայմանավորված էր նրա բանակում մարտակառքերից բաղկացած զորամիավորումների գոյությամբ[1454], կտրուկ աճեց մարտակառքերի դերը ռազմական գործում[1455], իսկ որոշ հետազոտողների համաձայն հետևակի՝ որպես հիմնական զորատեսակի դերն ընդհանրապես մղվեց հետնախորք[1456]: Արագաշարժ, դյուրաշարժ և բավական թեթև ձիաքարշ մարտակառքերը, որոնք փոխարինեցին ծանր սայլերին, արագորեն մուտք գործեցին նաև Եգիպտոս[1457], խեթական թագավորություն[1458], Բաբելոնիա[1459], Ասորեստան[1460],

---

[1448] Littauer, Crouwel 1979: 50ff.; Stillman, Tallis 1984: 26; Moorey 1986: 196ff.; Fields 2006: 12ff.; Hamblin 2006: 145ff.

[1449] Այս խնդրի շուրջը տե՛ս և հմմտ. Եսայան 1994, էջ 3 և հաջորդիվ; Дьяконов 1968a: 41 сл.; Gray 1957: 167; Littauer, Crouwel 1979: 68ff.; Տե՛ս նաև Gropp 1981: 120ff.; Anthony 1986: 291ff.; նույնի՝ 1995: 554ff.; նույնի՝ 2007: 393ff., esp. 402ff.; Anthony, Vinogradov 1995: 36ff.; Boyce 1987: 508ff.; Pigott 1992; Postgate 1986a: 194ff.; Levine 2005: 5ff.; Littauer, Crouwel 1996: 36ff.; Drews 2004: 26ff.; Погребова 2010: 89 сл.; von Dassow 2014b: 13 and n. 6; ևն:

[1450] Drews 2004: 31 and Fig. 3.5; Holland 2006, Part I 229, 384, Part II Fig. 157: 6, Pl. 116a.

[1451] Oates 2003: 117.

[1452] Drews 2004: 27ff., Fig. 3.2. Տե՛ս և հմմտ. նաև Anthony 2007: 414ff., Fig. 16.3.

[1453] Littauer, Crouwel 1979: 43; Drews 2004: 34; Oates 2003: 117ff.; Feldman 2010: 89.

[1454] Stillman, Tallis 1984: 24f.; Anthony 2007: 403; Schwartz 2014: 272f.

[1455] Vita 2010: 87ff.

[1456] Drews 1993: 138, 142ff.; Cf. Archer 2010: 63f.

[1457] Yadin 1963: 86ff.; Littauer, Crouwel 1979: 75ff.; Hulit 2002: 18ff.; Hamblin 2006: 463; Feldman 2010: 83f. and n. 162.

[1458] Littauer, Crouwel 1979: 64f.; Beal 1992: 144ff.; Hamblin 2006: 302f.; Bryce 2002: 111ff.; նույնի՝ 2010 : 77; Lorenz, Schrakamp 2011: 138ff.

[1459] Stillman, Tallis 1984: 136, 143; Dalley 1995: 416; Hamblin 2006: 145ff.

[1460] Noble 1990: 62. Միջինասորեստանյան դարաշրջանի արքայական արձանագրություններում մարտակառքեր առաջին անգամ հիշատակվում են Արիկ-դին-իլիի օրոք (Ք.ա. 14-րդ դ-ի վերջին քառորդ): Տե՛ս Grayson 1987: 126 (A.0.75.$8_{10'-13'}$, $_{23'}$).

ինչպես նաև սիրիա-փյունիկյան տարածաշրջանի մանր երկրներ և Պաղեստին[1461]: Այս դարաշրջանի սեպագիր աղբյուրներում բանակների կազմում հիշատակվում են հիմնականում հետևազորայիններ ու մարտակառքեր/կառամարտիկներ (ERIN.MEŠ $^{GIŠ}$GIGIR.MEŠ, *ṢIMDI* ANŠE.KUR.RA.MEŠ)[1462]: Դրանց գոյությունը վկայված է նաև Հայկական լեռնաշխարհի երկրներում Ք.ա. 2-րդ հազ-ի երկրորդ կեսին՝ թե ասորեստանյան, և թե խեթական աղբյուրների համաձայն:

Մասնավորապես, միջինասորեստանյան դարաշրջանի արքայական արձանագրությունները, խոսելով դեպի Հայկական լեռնաշխարհ ասորեստանյան արքա Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. 1114-1076 թթ.) ձեռնարկած արշավանքների մասին, դրանցից մեկի ժամանակ հիշատակում են նաիրյան 23 արքաների մարտակառքերի, ապա և «Նաիրի երկրների 60 արքաներ»-ից խլված 120 մարտակառքերի մասին: Նույն տեքստում նշվում է նաև 1200 ձի, ինչպես նաև 2000 խոշոր եղջերավոր անասուն որպես հարկ ստանալու մասին[1463]: Եվս 120 մարտակառք ասորոստանյան արքան խլում է Հայկական Տավրոսներում հայտնված կաշկերի և ուրումեացիների ցեղերից[1464]: Նաիրյան 30 արքաների հաղթելու և նրանցից ձիերով հարկ ստանալու մասին է նշվում Թիգլաթպալասար I-ի մեկ այլ արձանագրության մեջ: Նրա տեքետերից մեկն էլ հայտնում է Դայենի, Խիմուա և Պաիթերի երկրներից որպես հարկ ձիեր ստանալու մասին[1465]: Ասորեստանյան բանակի կազմում նաիրյան և շուբրիական զորքեր են հիշատակվում միջինասորեստանյան տեքստերում[1466]:

Խեթական արձանագրությունները ևս նշում են Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների նշանակալի ռազմական կարողությունների մասին: Խեթական արքա Մուրսիլիս II-ի (Ք.ա. 1318-1290 թթ.) տարեգրությունից, օրինակ, հայտնի է ավելի քան 10 հազ. հետևակայինից և 700 կառամարտիկներից բաղկացած հայասական բանակի մասին[1467]: Մուրսիլիսի տարեգրության մեկ այլ հատվածում նշվում է հայասական Դուկկամա քաղաքից 3 հազ. ռազմիկների խեթական բանակ զորակոչելու մասին[1468]: Հայասացի զինվորներ են հիշատակվում նաև խեթական մեկ այլ տեքստում[1469]:

---

[1461] Гельцер 1956: 32 сл.; Yadin 1963: 88f.; Littauer, Crouwel 1979: 93f.; Stillman, Tallis 1984: 144; Gabriel 2003: 18ff.; Vidal 2005 [2006]: 653; Feldman 2010: 67ff.; Cantrell 2011: 114ff.
[1462] Littauer, Crouwel 1979: 97, n. 96; Beal 1992: 141ff.
[1463] Grayson 1991: 21 (A.0.87.1: iv 94, v 19).
[1464] Grayson 1991: 17 (A.0.87.1: ii 100-iii 6).
[1465] Grayson 1991: 37 (A.0.87.3: 16-25), 42 (A.0.87.4: 17), 52 (A.0.87.10: 19).
[1466] Postgate 2008a: 86, 88; նույնի՝ 2010: 26.
[1467] Beal 1992: 287.
[1468] Götze 1933: 136f.
[1469] Ամփոփ տե՛ս Քոսյան 2004բ, էջ 473-475:

Հայկական լեռնաշխարհում անվավոր փոխադրամիջոցների գոյությանը վերաբերող հնագիտական առաջին վկայությունները թվագրվում են Ք.ա. IV հազ-ի վերջ – III հազ-ի սկզբներով (Թռեղք, Բեդենի, Շրեշ բլուր, Քյուլ-թեփե (Նախիջևան), Շենգավիթ, Դվին ևն (նկ. Բ-3/1-2[1470]): Իսկ մարտակառքեր Հայաստանում հնագիտորեն վկայված են Ք.ա. 2-րդ հազ-ի կեսերից, եթե ոչ՝ ավելի վաղ[1471]: Սակայն, դրանք երկանիվ կամ քառանիվ, բավական ծանրաշարժ սայլեր էին՝ առաջնորդների «շտանդարտներ»-ով[1472], և որոնց ռազմական նշանակությունը, հատկապես լեռնային տեղանքում, շատ փոքր էր (նկ. Բ-4/1-2): Այդ նույնը վերաբերում է նաև երկանիվ, համեմատաբար թեթև կառքերին, որոնք հիմնականում օգտագործվել են որպես փոխադրամիջոց (նկ. Բ-5)[1473]: Նման կառքի պատկեր հայտնի է նաև Ք.ա. 2-րդ հազ-ի կեսերով թվագրվող Հաֆթավան-թեփեի «Ուշ VIB» շերտից[1474]: Լեռնաշխարհում թեթև երկանիվ մարտակառքերի առաջին վկայությունները վերաբերում են Ք.ա. 2-րդ հազ-ի երկրորդ կեսին՝ Ուշ բրոնզ – Վաղ երկաթի անցման փուլին[1475]: Երկանիվ մարտակառքերի բրոնզե մոդել է հայտնի Լոռի-բերդի թիվ 7 դամբարանից[1476], երեք այլ մոդելներ են հայտնի Լճաշենի պեղումներից, ինչպես նաև այստեղից հայտնաբերված բրոնզե գոտու բեկորի վրա (նկ. Բ-6/1-2)[1477]: Հայաստանի ներկայիս տարածքից հայտնաբերված մի քանի բրոնզե գոտիների վրա նույնպես կարելի է հանդիպել մարտակառքերի ու կառամարտիկների պատկերների: Ք.ա. 1-ին հազ-ի սկզբներով են թվագրվում հիմնականում քառաճաղ անիվներով մարտակառքերի պատկերները Ենոքավանից, Աստղիբլուրից, Ախթալայից, Մուսիերիից գտնված բրոնզե գոտիների վրա (նկ. Բ-6/3)[1478]: Ստեփանավանից գտնված գոտու պատկերագրության մեջ հստակ տարբերակված են հետևակը, հեծելազորը և մարտակառքերը (նկ. Բ-6/4)[1479]: Դվինից գտնված պաշտամունքային գավաթի բեկորի վրա պատկերված զույգ ձիերը, ակնհայտորեն, լծված էին մարտակառքի[1480]: ՀՀ տարածքից հայտնաբերված բրոնզե գոտիների վրա առանձին հեծյալների պատկերումները նույնպես թվագրվում են այս

[1470] Եսայան 1994, էջ 17; Есаян 1966: 130 сл., рис. 5-7. Տե՛ս և հմմտ. նաև Sagona 2013: 278ff.
[1471] Եսայան 1962, էջ 78; նույնի՝ 1965, էջ 282; նույնի՝ 1994, էջ 21; Դևեջյան 1976, էջ 212-220, նկ. 2; Мнацаканян 1957: 146 сл., рис. 8; նույնի՝ 1960: 139 сл., рис. 1, 8, 13. Տե՛ս նաև Pogrebova 2003: 397ff.
[1472] Есаян, Мнацаканян 1975: 253 сл.
[1473] Есаян 1960: 146 сл.
[1474] Burney 1994b: 53f.
[1475] Եսայան 1994, էջ 29; Sagona 2013: 282ff.
[1476] Դևեջյան 1976, էջ 212-220; Деведжян 1981: 27 сл., рис. 6; Мнацаканян 1960: 139 сл., рис. 5, 7.
[1477] Եսայան 1965, էջ 282; Есаян 1966: 137 сл.
[1478] Եսայան 1994, էջ 41; Yesayan 1984: 110f. (Abb. 12/38), 114ff. (Abb. 13/42, Abb. 14/47-48), 126 (Abb. 18/58).
[1479] Եսայան 1994, էջ 55-56; Есаян, Мнацаканян 1977: 280 сл.; Деведжян 1981: 51, табл. XVIII:
[1480] Кушнарева 1977: 12, табл. VIII, рис. 13.

ժամանակաշրջանով՝ Ք.ա. 2-րդ հազ-ի վերջ – 1-ին հազ-ի սկզբներով[1481]: Հեծյալի պատկեր է հայտնի Հաքյարիից հայտնաբերված և Ք.ա. 2-րդ հազ-ի երկրորդ կեսով թվագրվող կոթողներից մեկի վրա[1482]: Մարտակառքի մնացորդներ են հայտնաբերվել Հասանլուի՝ Ք.ա. 1000-800 թթ-ով թվագրվող IVB շերտից[1483]:

Ուշ բրոնզ – Վաղ երկաթի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում նկատվում է հասարակության կտրուկ ռազմականացում[1484]: Կառուցվում են հարյուրավոր «կիկլոպյան» ամրոցներ կամ բերդշեներ[1485], միայն Սևանի ավազանից հայտնի են շուրջ 60 ամրոց և ամրացված բնակավայր[1486], 12 ամրոց է վկայված Արագած լեռը հյուսիսից եզերող Ծաղկահովտի գոգավորությունում[1487]: Այս երևույթը դիտվում է ինչպես Հայաստանի ներկայիս տարածքում, այնպես էլ՝ Հայկական լեռնաշխարհի այլ հատվածներում, հյուսիսում՝ Բաբերդ-Էրզրումի շրջանում[1488], ներկայիս Նախիջևանի ԻՀ տարածքում[1489], հյուսիս-արևմտյան Իրանում[1490], Վանա լճի ավազանում[1491] և այլուր: Հանդիպում են առաջնորդների և ռազմիկների թաղումներ, նկատվում է հատկապես զենքով հարուստ թաղումների աճ[1492], ինչը խոսում է ռազմիկների խավի ձևավորման մասին: Այս փուլի բնութագրական կողմերից մեկը հասարակության կտրուկ շերտավորումն էր՝ հասարակությանը կազմակերպելու և ուղղորդելու ունակ իշխող վերնախավով[1493]:

Ք.ա. 11-րդ դ-ի կեսերից սկսած, երբ կտրուկ անկում ապրեց Ասորեստանի ռազմական ակտիվությունը, Հայկական լեռնաշխարհն առժամանակ դուրս մնաց գրավոր աղբյուրների տեսադաշտից: Ք.ա. 10-րդ դ-ի վերջերից սկսած՝ ասորեստանցիները վերսկսեցին առանձին արշավանքները դեպի հյուսիս: Դրանք ինտենսիվացան հատկապես Աշշուր-նածիր-ապապ II-ից սկսած՝ իր բարձրակետին

[1481] Եսայան, Ավետյան 1981, էջ 316-317, նկ. 2; Yesayan 1984: 112f. (Abb. 12/40), 114f. (Abb. 13/42).
[1482] Sevin, Özfırat 2001 [2002], Res. 10.
[1483] de Schauensee 1989: 44ff., Figs. 15-16.
[1484] Ավետիսյան 2014, էջ 65-66:
[1485] Եսայան, Ղաֆադարյան 1965, էջ 80-88; Միքայելյան, Եսայան 1968, էջ 289-296; Smith 1998: 73ff.; Smith, Kafadarian 1996: 23ff.; etc.; Արեշյան, Ղաֆադարյան 1996, էջ 71-72:
[1486] Միքայելյան 1968, էջ 10-11; Biscione 2003: 177ff., Fig. 8.8.
[1487] Badalyan *et al.* 2010: 267; Smith 2012a: 46, Fig. 02.05.
[1488] Sagona and Sagona 2004: 240.
[1489] Baxşəliyev 2006: 227; Ristvet *et al*. 2011: 8.
[1490] Kroll 2005: 65ff.; Biscione 2003: 171ff.; նույնի՝ 2009: 132ff., Figs. 8-9.
[1491] Belli, Konyar 2003a: 6ff.; Marro, Özfırat 2003: 395f.; Marro, Özfırat 2004: 234ff.; Özfırat, Marro 2005: 303; Özfırat 2005 [2006]: 147ff.; նույնի՝ 2010b: 54; Sevin 2004a: 179ff.; նույնի՝ 2004c: 358ff.
[1492] Եսայան 1965, էջ 283; Դևեջյան 1968, էջ 76-77; Gevorgyan 2009: 36ff.; Baxşəliyev 2006: 227f.
[1493] Badalyan *et al*. 2003: 144ff.; Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, էջ 8-13; Ավետիսյան 2014, էջ 63-66; Smith 2003: 166; նույնի՝ 2012b: 682ff.; Smith *et al*. 2004: 1ff.; Badalyan *et al*. 2010: 267ff.; Biscione 2002: 359ff.; նույնի՝ 2009: 134f.; Özfırat 2011b: 44ff.

հասնելով Սալմանասար III-ի օրոք: Վերջինիս առաջին արշավանքներն ուղղված էին «ուրարտացի Արամուի» դեմ և հայտնում են կարևոր մանրամասներ լեռնաշխարհի հասարակությունների ռազմական կազմակերպվածության մասին: Մանրամասն պահպանվել է Ք.ա. 856 թ-ին Արամուի դեմ ձեռնարկված արշավանքի նկարագրությունը, այդ թվում նաև՝ ասորեստանյան պատկերագրության մեջ[1494]:

Ասորեստանյան աղբյուրները վկայում են Արամուի զինուժի մասին՝ նշելով ճակատամարտում նրա տված կորուստների թիվը, մի դեպքում՝ 3 հազ., մյուս դեպքում՝ 3 հազ. 400, ապա նաև՝ 13 հազ. 500 սպանված զինվոր[1495], իսկ արշավանքի նկարագրությունը որպես արքայի սխրանքների հերոսապատում պահպանած տեքստը նշում է արդեն 18 հազ. զոհերի մասին[1496]: Ասորեստանյան տեքստերը Արամեի ճամբարից ձեռք բերված ավարի թվում բացի մարտակառքերից հիշատակում են նաև հեծյալների և ձիերի, մեկ այլ տեքստ նշում է Արամուի «անհաշիվ հեծյալների» մասին[1497]: Բացի դա, Արամուի բանակի հետևակայինների պատկերներ են հայտնի Արծաշկուի ամրոցի նվաճումը պատկերող բրոնզե թիթեղների վրա (նկ. Բ-7/1-3): Վերջիններիս հանդերձանքը, մասնավորապես՝ բարձրակատար սաղավարտը, զինվորների հագած կարճ պատմուճանը, հիշեցնում է լուվիական թագավորությունների զինվորներին[1498]: Մյուս կողմից, զուգահեռ է տարվում նաև Արամուի զինվորների և հյուսիս-արևմտյան Իրանի հուշարձաններից հայտնաբերված ռազմիկների պատկերների միջև, ըստ այդմ, Ուրմիա լճի մերձավորությամբ որոնելով «ուրարտացի» Արամուի մայրաքաղաք Արծաշկունը[1499]:

### 2.2. Բանակաշինությունն Ուրարտուում Ք.ա. 9-րդ դ-ում:

Բիայնիլի-Ուրարտուն Արամուի թագավորությունը չէր. կարծում ենք, որ այն առանձին քաղաքական միավոր էր: Հետևաբար, ինչպես Բիայնիլիի քաղաքական պատմությունը, այնպես էլ բանակաշինությունն այդ երկրում մենք սկսում ենք Իշպուինիի ժամանակաշրջանից[1500]:

---

[1494] Սալմանասարի ուրարտական արշավանքների դրվագները պահպանվել են այսպես կոչված «Բալավաթյան դարպասներ»-ը ծածկող բրոնզե պաստառների վրա (Пиотровский 1959a, Таб. II-V; Wartke 1993, Taf. 6-10): «Բալավաթյան դարպասներ»-ի համար տե՛ս Billerbeck, Delitzsch 1908; Unger 1913; Barnett 1975, Bildtafeln 40-44. Վերջին ուսումնասիրություններից տե՛ս Schachner 2007:

[1495] Տե՛ս, համապատասխանաբար, Grayson 1996: 29 (A.0.102.5 iii 1); 20 (A.0.102.6: ii 49-50); 104 (A.0.102.28 41).

[1496] Grayson 1996: 87 (A.0.102.17 47).

[1497] Grayson 1996: 20 (A.0.102.6: ii 51-52), 29 (A.0.102.5 iii 2).

[1498] Бациева 1953: 26 сл.; Пиотровский 1959a: 55; նույնի՝ 1962a: 341.

[1499] Piller 2012: 379ff.

[1500] Գրեկյան 2013ա, էջ 54-56:

Իշպուինիի միանձնյա կառավարման շրջանում իրագործված ռազմական արշավանքներին վերաբերող տեքստեր մեզ չեն հասել: Ավելին, ենթադրվում էր անգամ, որ նա զբաղվել է բացառապես խաղաղ շինարարությամբ՝ զերծ մնալով նվաճողական արշավանքներ ձեռնարկելուց[1501]: Մինչդեռ, Իշպուինին հիշատակվում է ասորեստանյան արքա Շամշի-Ադադ V-ի տարեգրության մեջ: Վերջինս հայտնում էր մերձուրմյան ավազանում Ուշպինայի (իմա՝ Իշխուինիի) հետ ունեցած բախումների և նրանից 11 «ամրացված քաղաքներ» և 200 բնակավայր նվաճելու մասին[1502]: Ընդ որում՝ այս արշավանքը կարող էր լինել Իշպուինիի կողմից Ասորեստանի հովանավորությունը վայելող Գիլզանու երկրի նվաճմանն ի պատասխան ձեռնարկված քայլ և միտված էր վերականգնելու ասորեստանյան վերահսկողությունն այդ երկրի նկատմամբ[1503]: Բացի դա, ռազմական նվաճման վկայություն կարող է հանդիսանալ Վերին Անձավի պեղումներից հայտնաբերված և Իշպուինիի միանձնյա կառավարման շրջանում կազմված ասսուրագիր արձանագրությունները: Այն ութ արձանագրված օղակներով բրոնզե շղթա է, որը որպես ռազմավար բերվել էր Վիտերուխի երկրից և ընծայվել Խալդի աստծո տաճարին[1504]: Եվ վերջապես Իշպուինիի ձեռնարկած նվաճումների արդյունքում էր, որ, ինչպես կարծում ենք, Տուշպա քաղաքը ներառվեց բիայնական պետության կազմում՝ դառնալով պետության քաղաքական նոր կենտրոնը[1505]:

Այս սուղ փաստերը, ինչպես նաև Իշպուինիի անունը կրող բրոնզե մեծաթիվ իրերի առկայությունը, որոնք ռազմական հանդերձանքի մաս են կազմել, թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմելու Իշպուինիի դարաշրջանի բիայնական բանակի կառուցվածքի, զինվորների հանդերձանքի և զինվածության մասին[1506]:

Իշպուինիի կամ արդեն Իշպուինիի և Մենուայի կողմից իրականացված բարեփոխումներն ընդգրկել են նաև զինված ուժերը[1507]: Այս առումով հետաքրքիր օրինաչափություն է նկատվում ուրարտական տեքստերում: Իշպուինիի և Մենուայի «համատեղ կառավարման» շրջանում զինված ուժերն արտահայտվել են $^{LÚ}$KUR.KUR$^{MEŠ}$՝ «երկներ(ի մարդիկ), աշխարհազոր» գաղափարագրերի կոմբինացիայով: Մինչդեռ, արդեն Մենուայից սկսած $^{LÚ}$KUR.KUR$^{MEŠ}$-ի փոխարեն

[1501] Меликишвили 1954: 203.
[1502] Grayson 1996: 184 (A.0.103.1: ii 16b-34a).
[1503] Ամփոփ տե՛ս Գրեկյան 2001: Սեպագիր աղբյուրներում Գիլզանը վերջին անգամ հիշատակվում է Ք.ա. 826թ.՝ Սալմանասար III-ի տարեգրությունում: Տե՛ս Grayson 1996: 70, 83 (A.0.102.14: 180-181; A.0.102.16: 328′-329′):
[1504] Belli *et al*. 2009: 91ff.
[1505] Գրեկյան 2013ա, էջ 49, 51-54:
[1506] Belli 1983b: 325ff., Res. 1-9, Lev. I-IV; նույնի՝ 1991c: 44ff.; նույնի՝ 1999e: 273ff.; Seidl 2004: 18ff.
[1507] Հմայակյան 1988, էջ 72-77; նույնի՝ 1994, էջ 19; Амаякян 2003: 105; Biber *et al*. 2008: 150. Ուրարտական բանակի կառուցվածքի մասին ամփոփ տե՛ս նաև Konakçı, Baştürk 2009: 169ff.

դպրության մեջ մուտք է գործում $^{LÚ}$*ḫuradi(e)* (գաղափարագիր՝ $^{LÚ}$A.SI$^{(MEŠ)}$) տերմինը[1508]: Ք.ա. 9-րդ դարի վերջերից սկսած և ամբողջ 8-րդ դարն ընդգրկող տեքստերում զինված ուժերն արտահայտելու համար կիրառվում է գերազանցապես այս տերմինը կամ դրա գաղափարագիր համարժեքը:

$^{LÚ}$*ḫuradi(e)* տերմինը հանդիպում է դեռևս աքքադերենում որպես զորքի տեսակ: Հավանաբար՝ այն փոխառություն է խուրրիերենից (հմմտ. խուրր. *ḫuradi*՝ «խուրրի (ռազմիկ)», «զինվոր»)[1509]: Էբլայի տեքստերում այն միանշանակ վերաբերում էր պրոֆեսիոնալ զինվորականությանը, մշտական բանակին, որը մատակարարվում և պահվում էր պետության կողմից[1510]: Այս տերմինով էին արտահայտվում ընտրյալ զորքերը Միտաննիում: Նկատի ունենալով, որ միջինասորեստանյան ռազմական կառույցը մեծապես կրում էր միտաննական ազդեցությունը[1511], իսկ *ḫurādu*-զինվորականությունը կազմել է միջինասորեստանյան բանակի կարևոր օղակներից մեկը[1512], կարելի է կարծել, որ այս համակարգից է տերմինը հետագայում փոխառվել ուրարտացիների կողմից: Դրանում կարող էր դեր խաղալ նաև տերմինի սոցիալական բովանդակությանը. կարծում ենք, որ $^{LÚ}$*ḫuradi(e)* տերմինն Ուրարտուում արտահայտել է ծառայող և ծառայության իրավունքով հողատարածքի տիրապետող զինվորականությանը (տե՛ս 4.2.2.)[1513]: Նորասորեստանյան ռազմական տերմինների մեջ *ḫurādu*-ն պահպանվել է որպես $^{(LÚ)}$*qurādu* («*հերոս*», «*(ընտիր) զինվոր*»)[1514] և կամ որպես *ḫarādu* («հսկել», «հսկողություն սահմանել») իմաստով[1515]:

Ինչ վերաբերում է ուրարտական դպրության մեջ $^{LÚ}$*Æuradi(e)* տերմինի համար օգտագործված $^{LÚ}$A.SI$^{(MEŠ)}$ գաղափարագրին, ապա այն որևէ այլ տեղ չի հանդիպում, իսկ ամենամոտ զուգահեռը խեթական դպրության կողմից կիրառվող LÚ.MEŠ *A-SI-RU-TIM* աքքադագիրն է: Վերջինիս նշանակում է «(ռազմա)գերի»[1516] և խեթական դպրություն է մուտք գործել աքքադերենից (հմմտ. $^{(LÚ)}$*asīru*-ն՝ «ռազմագերի»[1517]): Թե ինչու է ուրարտական դպրությունը վերցրել այդ տերմինը՝ դժվար է ասել:

---

[1508] КУКН, с. 447; CTU II: 102f.
[1509] CAD, ï, 1956: 244f. (*ḫurādu* A).
[1510] Մանրամասն տե՛ս Freydank 1976: 111sqq.; Heltzer 1979: 245ff.; նույնի՝ 1999: 429; Vita 2002: 124. Հմմտ. Vidal 2005 [2006]: 654f.; McGeough 2007: 117f.
[1511] Stillman, Tallis 1984: 27; Jacob 2003: 191sqq.
[1512] Jacob 2003: 202sqq.
[1513] Նկատենք, որ Ուգարիթում այս խմբի մեջ են հիշատակվում նաև *maryannu*-կառավամարտիկները (Heltzer 1979: 148f.; նույնի՝ 1999: 429):
[1514] CAD, Q, 1982: 310f. (qurādu).
[1515] Brinkman 1981: 28.
[1516] Дьяконов 1968б: 26; Tischler 2001: 273.
[1517] CAD, A/II, 1968: 331f. (asīru A).

Այսպիսով, Իշպուինիի և Մենուայի կողմից իրականացված ռազմական բարեփոխումների արդյունքում զինված ուժերի կազմավորումը դրվեց պրոֆեսիոնալ հիմքերի վրա՝ ստեղծելով կանոնավոր, ըստ զորատեսակների ստորաբաժանված մշտական բանակ՝ նախկին դաշնային աշխարհազորի փոխարեն:

Մյուս կողմից, աշխարհազորը միանգամից չկորցրեց իր դերը և բիայնական պետության՝ առայժմ դեռ սահմանափակ հնարավորությունների պայմաններում արքաները երբեմն ստիպված էին լինում դիմելու դրա օգնությանը: Նման եզակի հիշատակության կարելի է հանդիպել Մենուայի տեքստերից մեկում, ուր կարծես թե նշվում է արշավանք սկսելու համար աշխարհազոր(՞)[1518] հավաքելու մասին (*ikukani* MU *ïelidubi eḫinini* KUR-*nini*…)[1519]: Հետաքրքիր է, որ այս արտահայտությունից հետո հիշատակվում են քաղաքներ կամ երկրներ ([URU]*qalibiliani* [KUR]*niribai-ḫubi*, [URU]*arpu''ani* [KUR]*ususuanini*, [URU]*ḫulmeruni* [m]*tušurieḫi ebanini* ևն)[1520], որոնցից էլ, կարելի է կարծել, իրականացվել է զորահավաքը: Համենայն դեպս, արձանագրությունը թույլ է տալիս ունենալու նման ընթերցում: Սա շատ է հիշեցնում տարբեր քաղաքներից զորք հավաքելու խեթական փորձը[1521]:

Արշավանքներն ուղեկցվում էին նվաճված երկրների թալանով, ուրարտական արձանագրություններում հաճախ կարելի է հանդիպել «*սա արքային հասավ, իսկ այն, ինչ զորքերը տարան, առանձին տարան*» արտահայտությանը (*inani* LUGÁL-*e nunabi mei ali* [LÚ]A.SI[MEŠ]-*še partu šeri partu*)[1522]:

Ռազմական գործում հաջորդ կարևոր քայլը կատարեց Սարդուրի Արգիշթորդին, ում հրամանով, ինչպես ենթադրում ենք, պետությունն իր վրա էր վերցնելու ոչ միայն մշտական բանակի, այլև՝ զինվորական ծառայության համար հաշվարկված և զենքի տակ պահվող զինվորականության պարենավորման ու հանդերձավորման հոգսը (տե՛ս նաև ստորև): Բացի դա, Սարդուրի Արգիշթորդու տեքստերից դատելով՝ բանակում զգալիորեն մեծացել էր մարզպետների գլխավորած զորքերի դերը: Թե ինչ հիմունքներով էին դրանք ձևավորվում, ինչպիսի կազմ ունեին՝ դժվար է միանշանակ ասել: Շատ ավելի հարուստ են տվյալները հաջորդող շրջանի համար, որոնք վերաբերում են արդեն ուրարտական նոր բանակին:

---

[1518] *eḫinini* տերմինի հնարավոր նշանակության համար տե՛ս Арутюнян 1988: 307 сл.
[1519] КУКН, $44_{5-6}$, прим. 30; CTU I, A $5\text{-}9_{5-6}$.
[1520] КУКН, $44_{6-8}$; CTU I, A $5\text{-}9_{6-8}$.
[1521] Քոսյան 2004բ, էջ 472 հաջորդիվ:
[1522] Տես, օրինակ, КУКН, 241 $A_{11-12}$; CTU I, A 9-3 $I_{11-12}$.

## 2.3. Ուրարտական տերունական բանակը. կառուցվածքը և զինվածությունը:

### 2.3.1. Արքունի բանակը

#### 2.3.1.1. «**Արքայական գունդ**»-ը

Ուրարտական աղբյուրները սովորաբար չեն տարբերակում բանակի ստորաբաժանումները, ինչը պայմանավորված էր նաև աղբյուրների բնույթով. տարեգրությունները հայտնում են միայն բանակ/զորք հավաքելու ([LÚ]*ḫuradinili*/[LÚ]A.SI[MEŠ] *ա̀elidu-*) և արշավանք ձեռնարկելու մասին և միայն «Սարդուրյան տարեգրության» հատվածներից մեկում է նշվում առանց մարզպետներին կանչելու եզակի գնդով արշավանք ձեռնարկելու մասին (*ú-i-e a-i-ni-e-i* [LÚ]EN.NAM[MEŠ] *šú-ku-ú-ri ma-nu-ú-ri uš-ta-di* [LÚ]*ú-e-li šú-si-ni-e*)[1523]: Փոխարենը, որոշ տեղեկություններ են պահպանվել ասորեստանյան աղբյուրներում: Դրանք վերաբերում են արդեն ուրարտական նոր բանակին, որը ձևավորվեց Ռուսա Սարդուրորդու բարեփոխումների արդյունքում:

Ըստ երևույթին Ռուսա Սարդուրորդու քայլերը բանակաշինության ասպարեզում այս կամ այն կերպով կրկնել են ասորեստանյան արքա Թիգլաթպալասար III-ի իրականացրած ռազմական բարեփոխումները[1524]: Այս մասին կարելի է դատել այն փաստից, որ, օրինակ, ուրարտական բանակին վերաբերող ռազմական տերմինները նույնությամբ կրկնում էին ասորեստանյանին: Ուրարտական բանակը իր նոր կառուցվածքով, կարծում ենք, նույնպես հիշեցնում էր ասորեստանյանը[1525]: Աղբյուրներից դատելով բանակը (ասսուր. [LÚ]*emūqu*) կամ «արքայի զորք»-ը (ասսուր. *ṣāb šarri*[1526]), ինչպես արձանագրություններն են անվանում, բաղկացած էր երկու հիմնական մասից՝ «արքայական գնդից» և «նահանգային զորքերից»: Եթե «արքայական գունդ»-ը սկբնապես հավաքագրվում էր բուն Ասորեստանի սահմաններից և հիմնականում ներկայանում խոշոր քաղաքների տրամադրած զորամիավորումներով (CTN 3, No. 102-ում թվարկվում են այդ զորամիավորումների հրամանատարները, այդ թվում՝ «ասորեստանցիներ»-ի (LÚ.GAL *kiṣir*[MEŠ] *aššuraya*),

[1523] KUKH, 241F$_{16}$; CTU I, A 9-3 VI$_{16}$.
[1524] Stillman, Tallis 1984: 29; Anglim *et al.* 2002: 14.
[1525] Այստեղ հարկ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ բավականաչափ լուսաբանված են ասորեստանյան ռազմական կառույցին վերաբերող ամենատարբեր ոլորտները: Դրանք վերարծարծելու խնդիր մենք չենք դնում և ասորեստանյան զուգահեռներին անդրադառնում ենք ըստ անհրաժեշտության՝ փորձելով հստակեցնել մեր պատկերացումները նաև ուրարտական բանակի մասին: Manitius 1910: 97ff., 185ff.; Saggs 1963: 145ff.; Reade 1972: 101ff.; Mayer 1978: 175ff.; Malbran-Labat 1982; Stillman, Tallis 1984: 26ff., 60ff.; Dalley, Postgate 1984: 27ff.; Dalley 1985: 31ff.; Cooper 1988; Noble 1990: 61ff.; Mayer 1995: 419ff.; նույնի՝ 2002: 3ff.; Postgate 2001: 373ff.; նույնի՝ 2007b: 343ff.; Gabriel 2003: 45ff.; Dezső 2006a: 87ff.; նույնի՝ 2006b: 93ff.; նույնի՝ 2012a; նույնի՝ 2012b; De Backer 2007b, 69ff.; նույնի՝ 2012; Fuchs 2008: 45ff.; Nadali 2005a: 167ff., նույնի՝ 2005b: 222ff.; նույնի՝ 2010: 117ff.; Fales 1990a: 23ff.; նույնի՝ 2009: 71ff.; նույնի՝ 2010a; Grekyan 2010a: 83ff., etc.
[1526] Postgate 2000: 106f. Տե՛ս նաև Postgate 2007b: 345f.; Fales 2010a: 145ff.

Արրապխե (LÚ.GAL *kiṣir*$^{MEŠ\ uru}$*arrapḫaya*), Արզուխինա (LÚ.GAL *kiṣir*$^{MEŠ\ uru}$*arzuḫinaya*), Արբաիլ (LÚ.GAL *kiṣir*$^{MEŠ\ uru}$*arba'ilaya*) քաղաքների ևն)[1527], ապա «նահանգային զորքեր»-ը հավաքագրվում էին բուն ասորեստանյան տարածքներից դուրս և ներկայացնում Ասորեստանին ենթակա կամ նրա կազմում ընդգրկված երբեմնի անկախ էթնո-քաղաքական միավորների ուժերը (Կարքեմիշ, Դամասկոս, Սամարիա, արամեական, քաղդեական ցեղեր ևն)՝ գրեթե ամբողջությամբ բաղկացած ոչ-ասորեստանցիներից[1528]:

Ինչպես Ասորեստանում, Ուրարտուում ևս բանակի միջուկը դարձավ նոր կազմավորված «արքայական գունդ»-ը (ասսուր.՝ *kiṣir šarrūti*): Ուրարտական բանակի «արքայական գնդի» երկու հիշատակություն է պահպանել «Լուվրի աղյուսակը»[1529]: Հետաքրքիր է, որ արքայական գնդի զինվոր է հիշատակվում անգամ ուրարտական տեքստերում՝ Հայկաբերդից գտնված սեպագիր աղյուսակներից մեկում ($^{LÚ}$ÉRIN.MAN, բառացի՝ «արքայի զինվոր»)[1530]:

Ուրարտուում «արքայական գունդ»-ը գերազանցապես կազմված էր հեծելազորից և մարտակառքերից, թեև հետևակային ընտիր, թերևս ոչ մեծաթիվ ստորաբաժանումների գոյությունը նրա կազմում նույնպես չի կարելի բացառել: «Լուվրի աղյուսակ»-ի վկայությամբ Ուրարտուում մեծ տեղ է հատկացվել ձիաբուծությանը, գոյություն են ունեցել արքունի ձիավարժարաններ ու ձիաբուծարաններ, որոնք ձիեր էին մատակարարում արքունի գնդին[1531]: Ի դեպ, սարգոնյան շրջանի այլ աղբյուրներում ևս շեշտվում է հեծելազորի և մարտակառքերի ընդգրկումը հատկապես «արքայական գնդի»՝ *kiṣir šarrūti*-ի կազմ: Բացի դա, այն հանգամանքը, որ, օրինակ, ասորեստանյան «արքայական գնդի» զորամիավորումների հրամանատարների մեծ մասը կրում էր «*հեծելակի պետ*» (ասսուր. *rab urâte*) տիտղոսը[1532], նույնպես վկայում է *kiṣir šarrūti*-ի՝ գլխավորապես հեծյալներից և մարտակառքերից բաղկացած լինելու մասին: Դա են վկայում նաև Նիմրուդից (Կալխու) հայտնաբերված այսպես կոչված «Ձիերի ցուցակներ»-ը[1533]: Ձինվորների ողջ ապրուստը հոգում էր պետությունը: Պետությունն էր ապահովում նաև զենքը, ինչը վկայում է նաև «Լուվրի աղյուսակ»-ը[1534]:

Ինչ վերաբերում է «արքայական գնդի» թվակազմին, ապա այն մնում է անհայտ: Եթե ենթադրենք, որ «արքայական գունդ»-ը կազմավորվել է ուրարտական մշտական

[1527] Dalley, Postgate 1984: 36ff., 189ff. (No. 102).
[1528] Dalley, Postgate 1984: 176ff.; Dalley 1985: 32f. Հմմտ. նաև Nadali 2005: 222ff.; Dezső 2006b: 123ff.
[1529] Mayer 1983: 84, 86 (Z. 171, 191).
[1530] Dinçol and Dinçol, Salvini 2001: 198, CTU IV, CT Çav-1 Ro $_6$.
[1531] Mayer 1983: 84f. (Z. 167-173).
[1532] Dalley 1985: 32f.
[1533] Dalley, Postgate 1984: 195ff. (Nos. 103, 107-116).
[1534] Оганесян 1985b: 145; Mayer 1983: 78f. (Z. 104-105).

բանակի հիմքի վրա՝ չհաշված կայազորային զորքերը, ապա կարելի է ենթադրել, որ այն քանակապես եղել է շատ ավելի բազմամարդ, քան կարող էր լինել արքունի թիկնապահ գունդը: Թեև այս առումով ասորեստանյան զուգահեռը չի կարող հիմք ծառայել և, թերևս, լավագույն օրինակը չէ, բայց այնուամենայնիվ փորձենք անդրադառնալ այն տեղեկություններին, որոնք վերաբերում են ասորեստանյան «արքայական գնդի» թվակազմին:

Մեզ հասած հիմնական տեղեկությունները վերաբերում են նվաճված երկրների տարածքներից իրականացվող զորահավաքներին, երբ օտար ծագման զինվորներով համալրվել է *kiṣir šarrūti*-ի կազմը: Սարգոն II-ի տեքստերում նշվում է Կարգամիսից 50 մարտակառքերի, 200 հեծյալի և 3 հազ. հետևակայինի *kiṣir šarrūti*-ի կազմ ընդգրկելու մասին[1535]: Մեկ այլ հատվածում նշվում է *kiṣir šarrūti*-ի կազմում ընդգրկված սամարական զորամասերի մասին՝ 50 և 200 մարտակառքերից կազմված[1536]: Եվս 200 մարտակառք և 600 հեծյալ է ընդգրկվել *kiṣir šarrūti*-ի կազմ Համաթից[1537]: Որոշ տվյալներ թույլ են տալիս ենթադրելու, որ ասորեստանյան *kiṣir šarrūti*-ն կազմված է եղել առնվազն 6 առանձին գնդից[1538] և եթե հիմք ընդունենք ասորեստանյան զորամիավորումների անձնակազմերի ցուցակը, որոնցում առանձին զորամիավորումների զինվորների թվաքանակը հիմնականում տատանվել է 1100-ից 1500-ի սահմաններում[1539], ապա կարելի է ենթադրել, որ ասորեստանյան բանակի «արքայական գունդ»-ը կարող էր ընդգրկել ընդհուպ մինչև 10 հազ. և ավելի զինվոր: Նկատենք, որ ասորեստանյան արքային մշտապես ուղեկցող թիկնազորը (*ša qurbūte*) կազմված է եղել 1000 հեծյալից[1540]:

Միանգամայն այլ թվերի հետ գործ ունենք Սարգոն II-ի հաջորդ Սինախերիբի ժամանակ: Նրա արձանագրություններից մի քանիսում նշվում է նվաճված տարբեր երկրներում իրականացված զորահավաքների մասին, այդ թվում՝ Բաբելոնիայից՝ 20 հազ. նետաձիգ և 15 հազ. վահանակիր, Կիլիկիայից և Թիլ-Գարիմմուից՝ 30 հազ. նետաձիգ և 20 հազ. վահանակիր, Ոկկու երկրից՝ 20 հազ. 400 նետաձիգ և 20 հազ. 200 վահանակիր ևն, որոնք ընդգրկվել են *kiṣir šarrūti*-ի կազմ[1541]: Այս թվերի հանրագումարն անցնում է 100 հազ-ից և այն փաստը, որ Սինախերիբի արձանագրություններում սկսած արքայի «հինգերորդ արշավանք»-ից թշնամի երկրի

[1535] Fuchs 1994: 94, 316 (Z. 74-75).
[1536] Dalley 1985: 34ff.; Fuchs 1994: 88, 313 (Z. 15-16).
[1537] Dalley 1985: 38f.; Fuchs 1994: 201, 345 (Z. 35-36).
[1538] Grekyan 2010a: 86.
[1539] Dalley, Postgate 1984: 43ff.; Fales, Postgate 1995, No. 126.
[1540] Mayer 1983: 100f. (Z. 320).
[1541] Համապատասխանաբար՝ Grayson, Novotny 2012, No. 15 (Col. v 10-17), 17 (Col. v 15-22), 19 (Col. ii′ 7′-11′).

դեմ է ուղարկվում միայն *kiṣir šarrūti*-ն[1542], ապա կարելի է ենթադրել, որ այս շրջանում այն արդեն ներկայացնում էր ասորեստանյան ողջ բանակը: Ի լրումն՝ խնդիր է, թե որքանով են Սինախերիբի արձանագրություններում նշված թվերը վստահելի[1543]:

Մյուս կողմից, եթե ընդունելի լինի ուրարտական ամրոցներում բացված արքունի ախոռներում պահվող ձիերի քանակի հիման վրա արված հաշվարկները (տե՛ս ստորև), ապա կարելի է նշել, որ խաղաղ պայմաններում ուրարտական բանակի «արքայական գունդ»-ը կարող էր ունենալ առնվազն 4 հազ. հեծյալ: Պատերազմների ժամանակ, ամենայն հավանականությամբ, «արքայական գունդ»-ը ստանում էր էական համալրում գերազանցապես հեծյալներով և մարտակառքերով:

2.3.1.2. «**Մարզային զորքեր**»-ը

Ռուսա Սարդուրորդուց սկսած փոխվում է նաև զորահավաքի սկզբունքը: Եթե նախկինում տերության տարբեր շրջաններից ըստ անհրաժեշտության հավաքվում էր աշխարհազոր՝ տեղի բիայնական վերնախավի առաջնորդությամբ օժանդակելու մշտական բանակին, ապա այժմ յուրաքանչյուր մարզ պետք է պահեր իր առանձին, մշտական զորքը: Այն այլևս տեղի մարզպետի հավաքած աշխարհազորը չէր, այլ պետության կողմից մատակարարվող և ողջ տարին զենքի տակ պահվող կանոնավոր զորագունդ: Ամենայն հավանականությամբ Ռուսայի օրոք էր, որ ձևավորվեցին «մարզային գնդեր»-ը, ինչով բանակն ամբողջությամբ դրվեց պրոֆեսիոնալ հիմքերի վրա: Դատելով աղբյուրներից՝ Ռուսա Սարդուրորդուց սկսած բանակի զորագնդերի մեծ մասը ներկայացնում էին մարզային զորքերը:

Թեև հայտնի չէ «արքայական գնդի»-ի թվակազմը, բայց կարելի է ենթադրել, որ մարզային զորագնդերը զինվորների քանակով գերազանցել են «արքայական գնդին» և կազմել զորքերի մեծամասնությունը: Ասորեստանյան հետախուզական աղբյուրներից հայտնի է, որ կիմմերների դեմ ձեռնարկված արշավանքին ուրարտական տերությունը կենտրոնացրել էր տասներեք մարզերի զորագնդեր[1544]: Հայտնի է, որ ուրարտա-ասորեստանյան լարված, բայց ոչ պատերազմական իրավիճակում ուրարտական պետությունը Ուայախս մարզում կենտրոնացրել էր հինգ[1545], իսկ Պուլուա և Դանիբանի քաղաքներում (Տիգրիսի վերին հոսանքի շրջան)՝ վեց մարզպետների գնդեր[1546]: Երեք մարզպետների գլխավորած զորքեր են հիշատակվում ասորեստանյան արքային

[1542] Տե՛ս, օրինակ, Grayson, Novotny 2012, No. 17 (Col. iv 69-70).
[1543] Millard 1991: 216f.
[1544] Parpola 1987, No. 31: 11. Կիմմերական արշավանքին մասնակից մարզպետների թիվը տրվում է ըստ Иванчик 1990: 5 աշխատության:
[1545] Deller 1984: 103 (Nr. 2.2); Lanfranchi, Parpola 1990, No. 87.
[1546] Lanfranchi, Parpola 1990, No. 21.

ուղղված ոմն Նաբու-ուծալլայի նամակում[1547]: Թեև ասորեստանյան աղբյուրները չեն պահպանել Ուաուշի ճակատամարտին մասնակից մարզպետների կամ մարզային զորագնդերի թիվը[1548], սակայն, կարելի է ենթադրել, որ Ուաուշում գործել են առնվազն յոթ-ութ մարզերի զորքերը[1549]:

Առկա աղբյուրների տվյալները թույլ են տալիս ենթադրելու Ուրարտուում առնվազն երեք տասնյակ մարզերի գոյության մասին, որոնց մեծ մասը վկայված է աղբյուրներում (տե՛ս վերը): Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր մարզ պետք է պահեր առանձին զորագունդ, ապա կարելի է նշել, որ մոտավորապես նույն քանակն էին կազմելու նաև մարզային գնդերը:

2.3.1.3. **Կայազորային զորքերը**

Մշտական զորաբանակի կազմում զգալի թիվ են կազմել կայազորային զորքերը: Նվաճված տարածքում կայազոր (ուրարտ. $^{LÚ}$*irdi*$^{(MEŠ)}$) թողնելու մասին նշվում է դեռևս Մենուայի արձանագրություններից մեկում[1550]: Սարդուրյան տարեգրության մեջ ևս երկու անգամ նշվում է նվաճված երկրներում կայազոր թողնելու մասին[1551]: Իսկ Արգիշթի Ռուսայորդին հյուսիս-արևմտյան Իրանում իրականացրած նվաճումներից հետո նշում է ամրոցներ կառուցելու մասին, որոնք անվանակոչել է «Խալդիի կայազոր$^{(?)}$» ($^{d}$*ẖaldiei irdusi*), և «Արգիշթիի կայազոր$^{(?)}$» ($^{m}$*argištei irdusi*)[1552] անուններով:

Կայազորային զորքերի հիմնական զանգվածը տեղաբաշված էր ուրարտական խոշոր վարչական կենտրոններում, դրանց մատույցները պաշտպանող ամրոցներում, ինչպես նաև այն ամրություններում, որոնք կառուցվել էին վերահսկելու համար ուրարտական տարբեր կենտրոնները միմյանց կապող ճանապարհները:

Առկա են որոշ տվյալներ՝ պատկերացում կազմելու համար ուրարտական կենտրոնների բերդապահ զորքի քանակի մասին: Այս առումով հիմնական տեղեկությունները գալիս են Բաստամի պեղումներից, ուր բացվել են զորանոցներ և արքունի ախոռներ: Հնագիտական աշխատանքները գլխավորող Վոլֆրամ Կլայսի հաշվարկների համաձայն՝ ամրոցի բերդապահ զորքը կազմված էր 6-700 հոգուց[1553]:

---

[1547] Saggs 2001, ND 2487$_{16}$.

[1548] «Լուվրի աղյուսակ»-ը հիշատակում է միայն ուրարտական գերեվարված մարզպետների: Տե՛ս Mayer 1983: 82f. (Z. 138).

[1549] Grekyan 2010a: 88.

[1550] КУКН, 45$_{6}$; CTU I, A 5-10$_{6}$. Համմտ., սակայն, Իշպուինիի և Մենուայի թողած CTU I, A 3-10$_{5}$ տեքստը, որտեղ քիչ հասկանալի կոնտքեստում նշվում է *irdusi* բառը: Նույնպես և Արգիշթի Ռուսայորդու թողած Թանահատի արձանագրության մեջ (CTU I, A 11-3 Vo$_{21}$. Համմտ., սակայն, КУКН, 411, Обор. стор.$_{21}$).

[1551] КУКН, 241B$_{21-25}$; 241D$_{28-30}$; CTU I, A 9-3 III$_{26-28}$, A 9-3 V$_{20-24}$.

[1552] КУКН, 409$_{9}$; CTU I, A 11-4$_{9}$, A 11-6$_{11}$, ինչպես նաև էջ 542, 544:

[1553] Kleiss 1980: 301.

Կարմիր բլուրի կայազորը, ինչպես ենթադրվում է, առանձնապես բազմամարդ չէր[1554]: Թոփրաքքալեից գտնված սեպագիր աղյուսակներից մեկում, ուր թվարկվում է պալատական/տաճարային այս նոր կենտրոնի անձնակազմը, թվարկվածների շարքում նշվում է նաև երեք հարյուր զինյալների(՞) մասին (3 ME $^{LÚ}$KUR.KUR$^{MEŠ}$-*e*[1555]): Հաշվի առնելով այն փաստը, որ Թոփրաքքալեն զուրկ է եղել ամրություններից[1556], ապա նշված թիվը բավարար է թվում պալատական/տաճարային համալիրը հսկելու համար: Որպես օրինակ նշենք, որ նորբաբելոնյան դարաշրջանում Սիպպարի խոշորագույն՝ Էբաբբարի տաճարում ծառայել են մինչև 180 նետաձիգներ[1557]:

Եթե հիմք ընդունենք այս թվերը, հաշվի առնելով, որ Բաստամն ամենամեծ ամրոցն էր ուրարտական կենտրոնների շարքում, տարածքով ավելի մեծ՝ քան անգամ Տուշպան[1558], ապա կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր ուրարտական խոշոր ամրոցում տեղակայվել է միջին հաշվով 300 զինվոր: Իսկ նման ամրոցների թիվը տասներեքն էր: Այս առումով բացառություն կարող էր կազմել միայն մայրաքաղաք Տուշպան, որն ունենալու էր անհամեմատ մեծաքանակ կայազոր, կարելի է ենթադրել՝ ոչ պակաս, քան 1000 զինվոր[1559]:

Հինխեթական դարաշրջանի տեքստերից հայտնի է Տիպիյա քաղաքի կայազորի մասին, որը կազմված էր 300 զինվորից: Միրա երկրի նվաճումից հետո խեթերի կողմից նրա տարածքում կառուցված երեք ամրոցներում թողնվել է ընդհանուր հաշվով 600 զինվոր[1560]: Խեթական մեկ այլ տեքստում նշվում է երկրի կայազորային զորքերի մասին՝ թվով 3 հազ. զինվոր[1561]: Շամշի-Ադդու I-ի տեքստերում (հինասորեստանյան դարաշրջան) հանդիպում ենք 50, 100 և մինչև 500 զինվորներից կազմված խմբերի՝ որպես այս կամ այն քաղաքում թողնված կայազոր, նրա տեքստերից մեկում նշվում է արքայական պալատի համար 400-հոգանոց պահակազոր թողնելու մասին[1562]: Նման թվաքանակներ ենք տեսնում նաև Քանաանում տեղակայված եգիպտական

[1554] Мартиросян 1961: 111.
[1555] Дьяконов 1963a: 39, 82; КУКН, 412$_{15}$; CTU IV, CT Tk-1$_{15}$.
[1556] Sevin 2006a: 143f.
[1557] MacGinnis 2010: 157.
[1558] Kleiss 1989a: 217.
[1559] Օսմանյան արխիվներից դատելով՝ Վանի կայազորի թվաքանակը, եթե 16-րդ դ-ի կեսերին կազմում էր x+500 զինվոր (առաջին տեղեկությունը, որը վերաբերում է 1554 թ-ին, հայտնում է կայազորի թվաքանակը 500 զինվորով ավելացնելու մասին), ապա 17-րդ դ-ի սկզբներին այն տատանվում էր 2 հազ-ի սահմաններում, իսկ 1636թ-ին հասցվեց 3 հազ-ի, որից 2 հազ-ը հեծյալ և 1000 հետևակային: Տե՛ս Kılıç 2012 [2013]: 96ff. Էվլիյա Չելեբին հայտնում է Վանի ամրոցում մշտապես պահակություն կատարող 500 զինվորների մասին: Տե՛ս Էվլիյա Չելեբի, «Ուղեգրություն», էջ 188-190 (Սաֆրաստյան 1967, էջ 240):
[1560] Houwink ten Cate 1984: 65, 72; Nossov 2008: 52f.
[1561] Beal 1992: 278.
[1562] Beal 1992: 281f.

կայազորներում. տարբեր քաղաքներում տեղակայված եգիպտական զինվորների թիվն այստեղ տատանվել է մոտավորապես 50-ից 600-ի սահմաններում, այդ թվում Մեգիդդոյում՝ ընդամենը 100 զինվոր[1563]: Կալխուի գլխավոր զորակայանը կամ այսպես կոչված *ekal māšarti*-ի պալատը իր զորանոցներում կարող էր տեղավորել մինչև 250 զինվորից կազմված կայազոր[1564]: Ուրարտական միջին և փոքր ամրոց-ամրությունների կայազորերի թվակազմերի համար կարող են հիմք ծառայել ինչպես այս, այնպես էլ ասորեստանյան՝ արդեն համաժամանակյա մի քանի տեքստ: Մասնավորապես՝ ասորեստանյան արքային ուղղված բարձրաստիճան պաշտոնյա Տաբ-ծիլլ-էշարրայի նամակում նշվում է Ծիբթու քաղաքում կանգնած կայազորի մասին՝ կազմված հարյուր իթու'ացի զինվորներից: Ընդ որում, նամակագիրն ինչ-որ հանձնարարության համար խնդրում էր ուղարկել կայազորի զինվորներից հիսունին[1565]: Ասորեստանյան մեկ այլ պաշտոնյայի նամակում նշվում է Կասպունա քաղաքում կառուցված ամրության մեջ 30 զինվոր տեղակայելու մասին[1566]: 25-30 զինվոր են կազմել եգիպտական սահմանապահ փոքր ամրոցների կայազորները և այլն[1567]: Մոտավորապես նույն քանակն էր կազմելու ուրարտական փոքր ամրոցներից մեկի՝ Ագրաբ-թեփեի կայազորը: 52 մ տրամագծով բլրակի վրա կառուցված ամրոցը, որի ողջ ներքին տարածքը կառուցապատված էր շինություններով՝ տարբեր նշանակության ընդամենը 13 սենյակ[1568], և որի օգտակար մակերեսը կազմում էր ընդամենը մոտ 180 մ$^2$ տարածություն, հազիվ թե կարողանար տեղավորել 25-30-ից ավելի զինվորի: Թափա Դոսոկի կայան-ամրոցի անձնակազմը ենթադրվում է 20-25 մարդու սահմաններում[1569]: Օշականի ամրոցում կարող էր բնակվել ոչ ավելի, քան մի քանի տասնյակ մարդ[1570]: Հաշվի առնելով Արարատյան դաշտավայրի ուրարտական ամրոցներից մեկի՝ Արագածի ամրոցի հնարավոր պաշարները՝ մոտ 20-25 հազ. լ հացահատիկ[1571], ապա կարող ենք նշել, որ այդ քանակությունը բավարար էր ողջ տարին ապահովելու 50-70 մարդու կարիքները, այն էլ՝ եթե ողջ պաշարն օգտագործվեր միայն որպես սնունդ:

Հաշվի առնելով, որ տերության մեջ կառուցվել են 40 խոշոր և միջին մեծության ամրոց և 250-ից ավելի այլ ամրոց-ամրություններ, չհաշված այն ամրոցները (շուրջ 30),

[1563] Stillman, Tallis 1984: 35; Morkot 2003: 124, 208, 214, 248.
[1564] Kertai 2011: 73ff.
[1565] Lanfranchi, Parpola 1990, No. 97r$_{3-11}$.
[1566] Saggs 2001, ND 2715r$_{35-49}$.
[1567] García 2010: 21.
[1568] Muscarella 1973: 50.
[1569] Kleiss, Kroll 1979: 198.
[1570] Հովհաննիսյան 1996, էջ 110:
[1571] Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, էջ 116:

որոնց ուրարտական պատկանելությունը չի կարելի բացառել (տե՛ս Աղ. 20)[1572], ապա, յուրաքանչյուր մեծ և միջին մեծության ամրոցի կայազորի համար ենթադրելով հարյուրից երեք հարյուր զինվոր և յուրաքանչյուր ամրության համար՝ մինչև հիսուն զինվոր և միջինացնելով թվերը, կարելի է կարծել, որ տերության ամրոց-ամրություններում տեղաբաշված բերդապահ զորքը Ք.ա. 8-րդ դ-ում կազմում էր 10-12 հազ. զինվոր և կարող էր հասնել 12-15-հազ-ի՝ Ք.ա. 7-րդ դ-ում:

2.3.1.4. **Արքունի թիկնազորը**

Ուղղակի տվյալներ արքունի թիկնազորի մասին ուրարտական աղբյուրներում չկան: Եթե դատենք ասորեստանյան զուգահեռներից, ուր արքունի թիկնազորը կոչվում էր *ša qurbuti*՝ «*նա, ով մոտ է (արքային)*» և *ša šēpē*՝ «*(արքայի) ոտքի մոտ*»[1573], ապա կարծես թե նման դերում տեսնում ենք ուրարտական բանակի «արքայական գունդ»-ը: Մասնավորապես, դատելով «Լուվրի աղյուսակ»-ի տեղեկությունից՝ ուրարտական զինվորներին բիայնական արքայի *ոտքերի մոտ* մորթելու մասին (ընդգծումը մերն է), ապա կարելի է ենթադրել, որ խոսքը վերաբերում է հենց թիկնազորին: «Սարդուրյան տարեգրության» հաղորդումը՝ Սարդուրի Արգիշթորդու կողմից միայն «մեկ գնդով» ($^{LÚ}$*ïeli šusine*) դեպի Վելիքունի արշավանք կատարելու մասին[1574], կարող է վերաբերել նրա թիկնապահ գնդին: Այս դրվագը շատ է հիշեցնում «Լուվրի աղյուսակ»-ի հաղորդած տեղեկությունը՝ Սարգոն II-ի կողմից դեպի Մուծածիր իր թիկնապահ 1000 հեծյալների զորագնդով արշավելու մասին[1575]:

Ամենայն հավանականությամբ՝ որպես արքունի թիկնազոր էր ծառայում բանակի «արքայական գնդի» զորագնդերից մեկը, ինչպես աքեմենյան բանակում, ուր «Անմահների գնդի» առաջին զորագունդը՝ պարսիկ և մար 1000 ազնվականներից կազմված, ծառայում էր որպես աքեմենյան արքայի անմիջական թիկնազոր[1576]:

Թոփրաքքալեի տաճարային համալիրի անձնակազմը թվարկող տեքստը հայտնում է ամրոցի/պալատի 168 հոգանոց անձնակազմի մասին, որի շարքերում եղել են 35 $^{LÚ}$*ḫalbiuni*-մարդիկ, 108 հոգի՝ «*ամրոցի ներքինիներ*», ինչպես նաև 10 $^{LÚ}$É.TIN-պաշտոնյա և 15 $^{LÚ}$*ṣipikani*-մարդիկ: Դատելով ասորեստանյան մայրաքաղաքներից Կալխուի միջնաբերդի անձնակազմին վերաբերող տվյալներից, որի շարքերում եղել են

[1572] Այստեղ հետաքրքիր է նշել, որ Պիոտր Շտայնքելերը, ուսումնասիրելով Ուրի III հարստության տեքստերը, դրանցում հանդիպել է տարբեր վայրերում տեղաբաշխված թվով 90 կայազորների հիշատակության: Տե՛ս Lafont 2008: 39f.; նույնի՝ 2009: 16.

[1573] Reade 1972: 103; Dalley 1995: 420; Fales 2010a: 142. Համմտ. նաև Dezső 2006b: 113ff.; Postgate 2007b: 350.

[1574] КУКН, 241 $F_{16}$; CTU I, A 9-3 $VI_{16}$.

[1575] Mayer 1983: 100f. (Z. 320-321).

[1576] Հերոդոտոս, VII, 40-41, 83:

*qur(u)būti*-անձինք (որից և՝ *ša qur(u)būti*-ն՝ «(արքայական) թիկնապահ(ներ), (արքունի) թիկնազոր») և *ša rēši*-անձինք՝ «(պալատի) ներքինի(ներ)»[1577], ապա կարող ենք նշել, որ ամենայն հավանականությամբ $^{LÚ}$*ḫalbi(u)ni*-մարդիկ հանդիսացել են թիկնապահ զինվորներ՝ արքայի անձնական թիկնազորից: Ի դեպ, ամենևին պատահական չէ, որ այս նույն խմբի մարդիկ (տեքստում՝ $^{LÚ}$*ḫalbi*) հիշատակվում են նաև Բաստամի աղյուսակներից մեկում՝ օրապահիկ ստացող անձանց շարքում (տե՛ս ստորև)[1578]: Վալտեր Մայերը $^{LÚ}$*ḫalbi* տերմինի համար ենթադրում է արամեական ծագում և համեմատում նորբաբելոնյան տեքստերում վկայված *ḫalpu*՝ «տեղակալ» բառի հետ[1579]:

### 2.3.2. Ենթակա երկրների զորքերը

Ինչպես Ասորեստանում, ուրարտական տերության աճող ռազմական կարիքները ևս ստիպում էին ավելի ու ավելի հաճախ դիմել նվաճված/ենթակա երկրներից իրականացվող զորահավաքներին: Նման հակակարգը Հին Արևելքում հայտնի էր վաղուց, ինչպես, օրինակ, խեթական թագավորությունում էր[1580]: Խեթերին պարտավոր էին զորքեր տալ նրանց գերիշխանության տակ գտնվող երկրները, այդ թվում՝ Հայկական լեռնաշխարհից (Հայասա, Պախխուվա, Իսուվա ևն)[1581]: Այս երևույթը խորթ չէր նաև ուրարտական տերությանը: Ընդ որում, հակված ենք կարծելու, որ ենթակա երկրների վրա ռազմական պարհակներ էին դրվել դեռևս տերության կազմավորման սկզբնական շրջանից՝ Մենուայից սկսած: Այս մասին է կարծես թե վկայում Մենուայի՝ դեպի Դիաուխի ձեռնարկած արշավանքը նկարագրող արձանագրությունը: Այստեղ բիայնական արքային վճարված ռազմատուգանքի և սահմանված հարկի մասին նշումից հետո ասվում է հետևյալը.

(18) $^{m}$*mi-nu-ú-a-še a-li-e* (19) *ka-am-na-a-ḫi a-li* $^{m}$*di-a-ú-e-ḫi-ni-i* (20) ANŠE.KUR.RA$^{MEŠ}$-*ú-ú* $^{LÚ}$A.SI$^{MEŠ}$ *’a-a-ḫa-a-ú* (21) $^{LÚ}$A.SI$^{MEŠ}$-*aš-te ú-i*(-)*ú-ni a-šá-a-zi-e* (22) *ḫi-i-ni-e ši-ú-bi* $^{LÚ}$*ḫu-ú-ra-d*[*i-n*]*a-a* (23) *ma-a-si-ni-e*(-)*i-a-ni a-šá-zi-e* ⌜*ú-ú*⌝*-še*[1582].

Այս հատվածը հստակ թարգմանել հնարավոր չէ[1583]: Սակայն, նրանում հիշվում են Դիաուխիի «ձիեր»-ը (ANŠU.KUR.RA$^{MEŠ}$), այն է, թերևս, հեծելազորը[1584], և «զորք»-ը

---

[1577] Kinnier-Wilson 1972: 5f.
[1578] CTU IV, CT Ba-2 Ro$_{7-9}$.
[1579] Mayer 2013b: 151. Այստեղ նշենք, որ եթե նորբաբելոնյան աղբյուրներում արամեերեն փոխառությունների կամ արամեերեն բառերի վկայությունները միանգամայն բնական է, ապա առայժմ դժվար է փաստարկել, թե ինչու՞ «տեղակալ» նշանակությամբ բառը պետք է փոխառվեր ուրարտացիների կողմից:
[1580] Beal 1992: 71ff.; Bryce 2010: 75.
[1581] Խաչատրյան 1998, էջ 92; Քոսյան 2001, էջ 237 հաջորդիվ, նույնի՝ 2004, էջ 472 հաջորդիվ: Kosyan 2006: 83.
[1582] КУКН, 53$_{18-23}$; CTU I, A 5-3 VI$_{18-23}$.
[1583] КУКН, с. 81; CTU I, p. 191. Հնարավոր թարգմանության համար տե՛ս Дьяконов 1963a: 68 сл.

($^{LÚ}$A.SI$^{MEŠ}$), ենթադրելի է՝ հետևակը, իսկ հաջորդող *šiubi* $^{LÚ}$*ḫuradina*՝ «բերեցի/ուղարկեցի զորքի մեջ» արտահայտությունը կարող է հուշել, որ դիաուխյան զինվորներն պարզապես ընդգրկվել են բիայնական բանակի կազմում: Այս տեքստը եզակի է ողջ ուրարտական վիմագրության մեջ: Նմանատիպ, շատ ավելի հակիրճ մեկ այլ հատված, ընդ որում՝ դարձյալ Դիաուխիի զորքերի հետ կապված, իրադարձությունների գրեթե նույնական նկարագրությունից հետո, հանդիպում է Արգիշթի Մենուայորդու տարեգրության մեջ.

(26) [$^{LÚ}$A].SI$^{MEŠ}$-*na-a ú-ú-še ma-si-ni*(-)*i-a-ni áš-zi-e*[1585]:

Երկու դեպքում էլ, կարծում ենք, գործ ունենք նույն երևույթի հետ, երբ պարտված Դիաուխիի արքան ստիպված էր վճարել ռազմատուգանք, տարեկան հարկեր, իսկ դիաուխյան զորքերը պետք է մասնակցեին բիայնական արքաների արշավանքներին:

«Լուվրի աղյուսակ»-ը վկայում է, որ Ոլխուում կառուցված Ռուսայի պալատը պաշտպանող Սարդուրիխուրդա ամրոցում տեղակայված են եղել ինչ-որ ցեղի զինվորներ ([ÉRIN.MEŠ KUR…-*ti*]*i-b/na-aije*), որոնց աղբյուրն անվանում է «նրա երկրի հույսը» (*tu-kul-ti* KUR-*šu*)[1586]: Սարգոն II-ի տարեգրության տեքստից դատելով՝ դրանք կարող էին լինել դալայցիներ[1587]:

Կարծում ենք, որ նման զորքեր հիշատակվում են նաև ասորեստանյան աղբյուրներում: Վերը հիշված Աշշուր-րեծուվայի զեկուցագրերից մեկը, մասնավորապես, հայտնում էր Ուեսի մուտք գործած ուրարտական բանակի *pirru*-միավորումների երեք հրամանատարների մասին (3 LÚ.EN *pir-ri*)[1588]:

Միջինասորեստանյան դարաշրջանում *pirru*-ն, սկզբնապես, եղել է ծառայության համակարգ (ռազմական կամ աշխատանքային), որի մեջ ընդգրկում էին «կախյալներ»-ի, հատկապես՝ օտար երկրներից բերված գերիներին կամ տեղահանված բնակչությանը՝ կազմելով առանձին *pirru*-միավորումներ[1589]: Նորասորեստանյան դարաշրջանում *pirru*-միավորումները հայտնի են ասորեստանյան բանակի կազմում: Աղբյուրներից դատելով՝ այդ զորամիավորումները, որոնք ներկայացնում էին ասորեստանյան բանակի հետևազորի մի մասը, հիմնականում կազմված էին ոչ-ասորեստանցիներից, գերազանցապես՝ արամեացիներ (առավել հաճախ հանդես են

---

[1584] Սեպագիր աղբյուրներում «հեծելազոր» տերմինը հաճախ է փոխարինվում «ձիեր» (ANŠE.KUR.RA$^{(MEŠ)}$՝) բառով: Տե՛ս նաև «Լուվրի աղյուսակ»-ում (Mayer 1983, Z. 12, 22, 132, 313):
[1585] KYKH, 174B1$_{26}$; CTU I, A 8-2 Vo$_{26'}$.
[1586] Mayer 1983: 90f. (Z. 212).
[1587] Fuchs 1994: 112, 321 (Z. 139-140).
[1588] Lanfranchi, Parpola 1990, No 87$_{13}$.
[1589] Postgate 2008a: 83ff., 89. Մանրամասն տե՛ս նաև Freydank 1976: 115sqq.; Jacob 2003: 30sq.

գալիս արամեական իթու՚ա և կուրրա ցեղերի զինվորները)[1590]: Հայտնի է, որ *pirru*-զորամիավորումներում ընդգրկվել են նաև քաղդեացիներ[1591]: Ամենայն հավանականությամբ նման կազմ է ունեցել նաև Ուաուշի ճակատամարտի հիմնական դերակատարներից մեկը՝ Սարգոնի եղբայր Սին-ախ-ուծուրի գլխավորած *pirru*-միավորումը[1592]: Ընդ որում, այդ զորամիավորումն ունեցել է կարևոր դերակատարություն՝ թե Ուաուշում հաղթանակն ապահովելու, և թե Մուծածիրը գրավելու ժամանակ[1593]:

Ասորեստանյան աղբյուրներից դատելով՝ «նահանգային զորքեր»-ն ու *pirru*-միավորումները կազմավորվել են էթնո-տարածքային սկզբունքով, ընդ որում՝ «նահանգային զորքեր»-ը հիմնականում, իսկ *pirru*-միավորումները՝ ամբողջությամբ համալրվել են ոչ-ասորեստանցիներով (գերազանցապես՝ արամեացիներ): Հետևաբար, կարելի է ենթադրել, որ ուրարտական բանակի *pirru*-միավորումները նույնպես կազմավորվել են էթնո-տարածքային սկզբունքով և ներկայացրել տերությանը ենթակա կամ նրա ազդեցության գոտում ընկած «երկրների» կամ էթնիկ խմբերի ուժերը[1594]:

Եվ միգուցե այս հարթության մեջ կարելի է դիտարկել ուրարտական աղբյուրների տեղեկությունները նվաճված երկրներից գերի տղամարդկանց, կանանց և երեխաների հետ միասին նաև «ռազմիկներ»-ի (LÚ$^{(MEŠ)}$ *gunušini*) բերելու մասին: Խորխորյան տարեգրության մեջ նշվում է Խաթե և Ծուփա երկրներից 6 հազ. 6 հարյուր ռազմիկների Էրեբունիում բնակեցնելու (՞) մասին[1595]: Դեպի հյուսիս իրագործված արշավանքից հետո 10 հազ. 140 զինվորների գերելու մասին է նշվում տարեգրության մեկ այլ հատվածում[1596]: Բաբիլունի երկրից 6 հազ. ռազմիկների բերելու մասին է նշվում այս անգամ Սարդուրյան տարեգրության մեջ[1597]: Տարեգրության հաջորդող հատվածներում նշվում է Սևանա լճի ավազանի երկրներից, ինչպես նաև Ուրմե երկրից համապատասխանաբար 4 հազ. և 2 հազ. ռազմիկների բերելու մասին, ընդհանուրը՝ 12 հազ. մարդ[1598]: Ընդհանուր առմամբ աղբյուրները տեղեկություններ են

[1590] Postgate 2000: 101.

[1591] Սարգոնյան դարաշրջանում քաղդեական ուժեր են տեղաբաշխվել ասորեստանյան խոշոր քաղաքներից մեկի՝ Կալխուի մերձավորությամբ (Dalley 1985: 32): Ասորեստանյան զեկուցագրերից մեկում հիշատակվում են այս և նմանակազմ զորքերը՝ մայրաքաղաքների *pirru*-միավորումների տեսքով (Հմմտ., օրինակ, 3 pir-ra-ni šá $^{āl}$Kal-ḫi šá $^{āl}$Ni-nu-a šá $^{āl}$Dur-Sharru-ukin): Տե՛ս Waterman, 1930-1936, No. 440.

[1592] Mayer 1983: 80f. (Z. 132).

[1593] Գրեկյան 2002ա: 183, Grekyan 2010: 84f. Հմմտ. Dezső 2006b: 96f.

[1594] Grekyan 2010a: 88.

[1595] КУКН, 173 II$_{36-37}$, 174 A2$_{21-22}$; CTU I, A 8-3 II$_{36-37}$, A 8-1 Vo$_{21-22}$.

[1596] КУКН, 173 I$_{13}$; CTU I, A 8-3 I Vo$_{13}$.

[1597] КУКН, 241 A$_{10}$; CTU I, A 9-3 I$_{10}$.

[1598] КУКН, 241 A$_{20-27}$; CTU I, A 9-3 I$_{20-27}$.

պահպանել մոտ 28.8 հազ. գերեվարված ռազմիկների մասին: Ռազմիկների առանձին հիշատակության փաստը կարող է հուշել, որ նրանք չեն դիտարկվել ռազմագերիների շարքում և որպես զինվորներ ընդգրկվել են ուրարտական բանակի կազմում[1599]:

Մյուս կողմից, նկատի ունենալով միջինասորեստանյան զուգահեռը, մենք չենք բացառում, որ ուրարտական բանակի *pirru*-միավորումները կարող էին կազմված լինել նաև կախյալներից: Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում պետությունը կարող էր օգտագործել մարդկային այդ ռեսուրսը՝ նրանց ընդգրկելով, թերևս, թեթևազեն ուժերի կազմում:

### 2.3.3. Դաշնակիցներ և վարձկան զորքեր

#### 2.3.3.1. **Ուրարտուի դաշնակիցները**

Ուրարտուի պատմության տարբեր դրվագներում ուրարտական բանակն ու տերությանը դաշնակից երկրների զորքերը հանդես են եկել միասին: Ք.ա. 743 թ-ին տեղի ունեցած Արպադի ճակատամարտում Ասորեստանի դեմ կռվում էր ուրարտական տերության, Մելիդի ու Գուրգումի լուվիական թագավորությունների միացյալ բանակը[1600]: Աղբյուրներում առավել լավ վկայված հաջորդ դրվագը վերաբերում է Ռուսա Սարդուրորդու շրջանին: Ասորեստանյան աղբյուրները բազմիցս են նշում Ռուսայի և մերձուրմյան ավազանում Ուրարտուի հիմնական դաշնակիցը հանդիսացող Զիկերտու երկրի արքա Միտատտիի զորքերի ակտիվ համագործակցության մասին՝ Ասորեստանի և վերջինիս մերձուրմյան գլխավոր դաշնակցի՝ Մաննայի թագավորության դեմ[1601]: Հայտնի է, որ Միտատտիի զիկերտական բանակն ունեցել է հեծելազոր, որն աղբյուրներում, ինչպես ուրարտական հեծելազորը, արտահայտվել է «ձիեր» տերմինով[1602], և հետիոտն «ռազմի զինվորներ» (*ṣāb taḫāzi*)[1603]: Միտատտիից բացի, «Լուվրի աղյուսակ»-ում նշվում է Ռուսայի այլ դաշնակիցների՝ «հարևան արքաների» մասին: Թեև անուններ աղբյուրը չի հայտնում, բայց կարելի է նրանց շարքում տեսնել մերձուրմյան ավազանի պետական կազմավորումներից Անդիա երկրի արքա Տելուսինային, ով, ըստ համաժամանակյա աղբյուրների, այս շրջանում դաշնակցել է Ուրարտուին: Դաշնակիցների շարքում են գտնվել Խուբուշկիայի

---

[1599] Տե՛ս նաև Дьяконов 1952a: 99; Çilingiroğlu 1983b: 314. Հմմտ. Меликишвили 1951a: 27; նույնի՝ 1953: 27 сл. Խարականցի (Խարակոնիս) արձանագրության մեջ Ֆրիդրիխ-Վիլհելմ Քյոնիգի առաջարկած $^{LÚ}$GAZ՝ «մարտիկ» թարգմանությունը չի արդարացնում իրեն (König 1955: 40 (Nr. 7, $V_{21-22, 27-28}$), Anm. 6. Տե՛ս նաև Կարագյոզյան 1976, էջ 89): Տե՛ս և հմմտ. КУКН, 35 лиц. стор., Текст $I_{22}$. Միրյո Սալվինիի մոտ՝ MUNUS$^{MEŠ\ LÚ}$ ⌜TUR⌝$^{MEŠ}$ (CTU I, A 3-9 $Ro_{22}$).

[1600] Tadmor 1994, 50ff. (տե՛ս The Calah Annals 17, lns. 2-4, ինչպես նաև 2′-3′ տողերին տրված ծնթ.-ը); 98ff. (Iran Stele I B, lns. 24′-25′); Tadmor, Yamada 2011, No. 9.

[1601] Арутюнян 1970: 284 сл.

[1602] Mayer 1983: 76f. (Z. 85), 80f. (Z. 131).

[1603] Mayer 1983: 76f. (Z. 85).

զորքերը, որի արքա Յանզուն այս շրջանում ևս հակվել էր դեպի Ուրարտուն[1604]: Ասորեստանյան աղբյուրներից հայտնի է, որ Մուծածիրի արքա Ուրզանայից ռազմական օգնություն է խնդրել ուրարտական Վաիսի/Ուեսի քաղաքի մարզպետը[1605]:

Նկատի ունենալով, որ ուրարտական տերությունն իր հզորության շրջանում Արևմտյան Իրանում հիմնական թելադրող ուժն էր՝ վերահսկելով նրա տարածքի զգալի մասը, ապա անհնարին կլիներ, եթե ուղիղ շփումներ չլինեին այս տարածաշրջանի այլ պետական կազմավորումների և հատկապես՝ այստեղ հայտնված համեմատաբար նոր, բայց ռազմունակ էթնիկ ուժերի՝ մարերի հետ: Վերջիններս այս տարածաշրջանի կարևոր դերակատարներից էին սկսած արդեն Ք.ա. 8-րդ դ-ի սկզբներից: Պատահական չէ, որ այդ շրջանում, մասնավորապես՝ Ք.ա. 800–787 թթ-ի ընթացքում, յոթը տարի Ասորեստանը ստիպված էր իր գլխավոր արշավանքը ձեռնարկել մարերի դեմ[1606]: Եվ այն հանգամանքը, որ Թիգլաթպալասար III-ի կողմից Ուրարտուի դեմ ձեռնարկված երկու գլխավոր արշավանքներին (Ք.ա. 743 և 735 թթ.) նախորդել են դեպի Արևմտյան Իրան և ապա՝ Իրանական բարձրավանդակի խորքեր՝ կրկին մարերի դեմ ձեռնարկված արշավանքները (Ք.ա. 744 և 736 թթ.)[1607], որով ասորեստանցիները փորձում էին ապահովագրել իրենց արևելյան սահմանները՝ Ուրարտուի դեմ վճռական բախումից առաջ, ապա կարելի է ենթադրել, որ ուրարտական տերությունն ու մարերը գտնվել են ակտիվ համագործակցության մեջ: Նման համագործակցություն է ենթադրվել նաև Ուրարտուի և զագրոսյան երկրներից Պարսուայի, գուցե նաև՝ Բիթ-Խամբանի միջև[1608], և թերևս պատահական չէ, որ հենց այդ արշավանքների ժամանակ Թիգլաթպալասարը վերացրեց այս թագավորությունները և դրանց տարածքը ներառեց տերության կազմում[1609]:

Այս նույնը կարելի է ասել հյուսիսային Սիրիայում հաստատված արամեական ցեղապետությունների մասին: Ասորեստանյան աղբյուրների ուղղակի վկայությունները առայժմ վերաբերում են միայն արամեական Բիթ-Ագուսի երկրի արքա Մատի-իլուի հետ Սարդուրի Արգիշթորդու հաստատած դաշինքին: Կան տվյալներ նշելու, որ Ուրարտուն շատ ավելի լայնորեն էր ներգրավված հյուսիսային Սիրիայի քաղաքական կյանքում, քան ենթադրվում էր:

---

[1604] Deller 1984: 108 (Nr. 3.5); Lanfranchi, Parpola 1990, No. 164. Գրեկյան 2002ա, էջ 186, 191-2; նույնի՝ 2010: 89.

[1605] Lanfranchi, Parpola 1990, No. 145: 14-r.5.

[1606] Radner 2003a: 39, 42. Էպոնիմների տվյալները տե՛ս Millard 1994: 34-36/57-58.

[1607] Թիգլաթպալասար III-ի Ք.ա. 744թ. մարական արշավանքի մանրամասները տե՛ս Diakonoff 1985b: 76ff.; Radner 2003a: 44ff. Ք.ա. 737թ-ի համար տե՛ս Diakonoff 1985b: 79.

[1608] Lanfranchi 2003: 100ff.

[1609] Tadmor 1994: 46/47-50/51 (Thr Calah Annals 11, 12); 70/71-74/75 (Thr Calah Annals 14, 15, 16) ևն.

Մասնավորապես, ասորեստանյան զորավար Շամշի-իլուի թողած Թիլ-Բարսիպի զույգ կոթողների արձանագրության մեջ Արգիշթիի դեմ մղված ճակատամարտի նկարագրությունից առաջ նշվում է արամեական մի քանի քոչվոր ցեղերի դեմ ձեռք բերված հաղթանակի մասին (Ութուի, Ռուբուի, Հաթալլու, Լաբդուդու)[1610]: Կարելի է ենթադրել, որ վերջիններիս թալանչիական արշավանքները կարող էին հրահրված լինել հենց Ուրարտուի կողմից: Այս առումով հետաքրքիր է, որ ասորեստանյան զորավարի՝ Դոհուկից գտնված կոթողի արձանագրության մեջ Արգիշթիի նկատմամբ ձեռք բերված երկրորդ (՞) հաղթանակի նկարագրության մեջ խիստ վնասված հատվածում հիշատակվում է նաև Ամուրրուի (իմա՝ «արևմուտք»-ի, այն է, տվյալ դեպքում, արամեացիների) զորքը[1611]: Հետաքրքիր է նաև, որ Խաթալլու ցեղի 2 հազ-ոց ջոկատի ձեռնարկած արշավանքի մասին է հիշատակում Ք.ա. 747 թ-ին[1612], իսկ այդ ժամանակ մերձեփրատյան գոտում թելադրող ուժն Ուրարտուն էր: Պատահական չէ, որ Ասորեստանի գահին բազմած նոր գահակալը՝ Թիգլաթպալասար III-ը, իր առաջին իսկ արշավանքն ուղղում է արամեական հենց այդ ցեղերի դեմ[1613]:

Շամշի-իլուի՝ Թիլ Բարսիպից հայտնի վերը հիշատակված արձանագրության մեջ Ուրարտուի հետ միասին նշվում է Մուսկու երկրին (KUR.*mu-us-ki*) խոնարհեցնելու մասին[1614]: Հնարավոր է՝ խոսքը վերաբերում է փռյուգացիներին, և այդ դեպքում կարող ենք խոսել ուրարտա-փռյուգական վաղ համագործակցության ինչ-որ դրվագի մասին: Նկատենք, որ նորասորեստանյան աղբյուրներում տեղեկություն կա վերինեփրատյան գոտում՝ Մելիդից արևմուտք ընկած Թիլ-Գարիմմու երկրի հետ Փռյուգիայի սահմանակցության մասին[1615]: Թեև տեքստը վերաբերում է Ք.ա. 8-րդ դ-ի վերջին քառորդին (Սարգոն II), սակայն, Փռյուգիայի (կամ փռյուգացիների զանգվածների՞) ծավալումը դեպի վերինեփրատյան գոտի ակնհայտորեն սկսվել էր դրանից շատ առաջ[1616] և Ք.ա. 8-րդ դ-ի առաջին տասնամյակների ընթացքում անխուսափելիորեն հանգեցնելու էր այդ գոտում գերիշխող ուրարտական տերության հետ շփումների: Դրանց բնույթի մասին, միգուցե, կարելի է դատել Շամշի-իլուի՝ վերը նշված արձանագրության հաղորդումից:

[1610] Grayson 1996: 231f. (A.0.104.2010: 10b-11a).
[1611] Grayson 1996: 231f. (A.0.104.2011: 7′).
[1612] Cavigneaux, Ismail 1990: 324, 343 f. (Nr. 2, Kol. i: 9 f.).
[1613] Tadmor, Yamada 2011, No. 4-5, No. 6: 1-7a, No. 35: i 36 – i 4′.
[1614] Grayson 1996: 231f. (A.0.104.2010: 10a).
[1615] Fuchs 1994: 127sq., 324 (Z. 213-219).
[1616] Վերինեփրատյան-լուվիական թագավորությունների հետ Փռյուգիայի վաղ շփումների համար տե՛ս և հմմտ. van Dongen 2013: 53ff.; նույնի՝ 2014: 700ff.

Կիմմերների՝ Ուրարտու ներխուժումից ինչ-որ ժամանակ անց այս ուժերը դառնում են դաշնակիցներ, ինչի մասին են վկայում ասորեստանյան գուշակային տեքստերը: Դրանցում ուրարտական արքայի դաշնակիցների շարքում նախ և առաջ նշվում է կիմմերների անունը[1617]: Առկա է տեսակետ, ըստ որի կիմմերներն ընդգրկված են եղել ուրարտական կայազորային զորքերում: Այս նույն ենթադրությունն է արվում նաև սկյութների համար:

2.3.3.2. **Վարձկան զորքերը**

Հին Արևելքի երկրների բանակներում վարձկան ուժերի գոյությունը հայտնի է վաղուց[1618]: Դրանք երբեմն կազմում էին բանակի հիմնական զանգվածը, ինչպես, օրինակ, Հին Եգիպտոսում էր՝ հատկապես Նոր և Ուշ թագավորությունների օրոք կամ Աքեմենյան տերության մեջ նրա գոյության վերջին շրջանում[1619]: Վարձկանների օգնությանն էին դիմում նաև խեթական արքաները[1620]: Թեև ուրարտական բանակում վարձկան զորքերի գոյության մասին ուղղակի վկայություններ չկան, սակայն, վարձկանների գոյությունը չի կարելի բացառել: Համենայն դեպս, «Խորխորյան տարեգրության» մեջ և ընդհանրապես՝ ուրարտական տեսքտերում միայն մեկ անգամ վկայված *šurḫani* տերմինը (*šurḫani* $^{LÚ}$A.SI$^{MEŠ}$)[1621], ըստ որոշ հետազոտողների, կարող էր նշանակել «վարձկան», «վարձկան զորք»[1622]: Բացի դա, ուրարտական տեքստերից հայտնի է նաև $^{LÚ}$*aïerašili* տերմինը[1623], որը Արչիբալդ Սեյսի կարծիքով կարող էր նշանակել օժանդակ զորք/վարձու բանակ[1624]: Նման կարծիք է հայտնում նաև Գրիգոր Ղափանցյանը[1625]:

**2.3.4. Հրամանատարական կազմը**

2.3.4.1. «**Գերագույն հրամանատար**»-ը

Ուրարտուում իշխող գաղափարախոսության համաձայն՝ բանակն առաջնորդում էր Խալդի աստվածը[1626]: Նա էր դուրս գալիս արշավանքների, իր $^{GIŠ}$*šuri*-զենքով հպատակեցնում էր թշնամի երկրները և ծնկի բերում բիայնական արքայի առջև:

---

[1617] Star 1990, No. 18, թերևս նաև՝ No. 19; Ivantchik 1993: 201ff. (No. 19).
[1618] Luraghi 2006: 21ff.; Vidal 2006 [2007]: 702ff.; Richardson 2011: 25f.
[1619] Head 1992: 57; Spalinger 2005: 7ff.; Briant 2002: 783ff.
[1620] Beckman 1995: 27ff. Տե՛ս նաև Bryce 2010: 76.
[1621] КУКН, 173 III$_{49}$; CTU I, A 8-3 III$_{49}$.
[1622] Ղափանցյան 1940, էջ 36, 97: Տե՛ս նաև КУКН, с. 465.
[1623] КУКН, 173 III$_{30, 32}$, прим. 29; CTU I, A 8-3 III$_{30, 32}$.
[1624] Sayce 1882: 594 (XXXIX: 30, 32).
[1625] Ղափանցյան 1940, էջ 121; Капанцян 1936: 35 сл. Հմմտ. Գիորգի Մելիքիշվիլու կարծիքը, ըստ ում՝ այդ տերմինը նշանակել է «հրամանատար» կամ «զորավար»: Տե՛ս УКН: 391. Տե՛ս և հմմտ. նաև Дьяконов 1956в: 69 сл.; նույնի՝ 1963a: 87.
[1626] Меликишвили 1954: 366 сл.; ինչպես նաև Հմայակյան 1990, էջ 34 հաջորդիվ; Salvini 1995a: 185; Baştürk 2012: 111ff.; ևն:

Ներքին Անձավի ուրարտական վահանին Խալդին պատկերված է ասորեստանյան բանակի դեմ պատերազմելիս՝ առաջնորդելով և աստվածներին, և զորքերին, ոչնչացնելով թշնամուն[1627]: Միերի դռան արձանագրության մեջ առանձին զոհաբերություն է սահմանված ինչպես «Խալդյան զորքեր»-ի համար, այնպես էլ՝ «Խալդյան զենքեր»-ի[1628], տաճարներում պահվել են Խալդիին ընծայված զենք և ռազմական հանդերձանք, այդ թվում՝ ռազմավարից[1629]:

Անկասկած, բանակը գլխավորել է արքան (տե՛ս վերը): Արքայի՝ մարտական գործողություններին մասնակցելու մասին են վկայում թե ուրարտական, և թե ասորեստանյան տեքստերը՝ ուրարտական տերության գոյության ողջ շրջանի համար:

Մեզ են հասել միայն մի քանի իրեր՝ մարտակառքով ընթացող կամ ճակատամարտին մասնակից արքայի (՞) պատկերով: Դրանցից մեկը բրոնզե թիթեղի մի բեկոր է, որը թերևս պատկերում է արքայի՝ մարտակառքով ընթանալիս (տե՛ս նկ. Բ-8/1-2)[1630]: Մեկ այլ թիթեղի վրա պատկերված են երկու ռազմիկներ, հավանաբար՝ բարձրաստիճան զինվորականներ (ինչը հուշում են նրանց բռնած մականները, տե՛ս ստորև), որոնց հետևից հանդիսավոր ընթացող մարտակառքի վրա՝ կառավարի կողքին կանգնած անձը, հավանաբար, արքան էր (նկ. Բ-9/1)[1631]: Այս առումով այն հիշեցնում է ասորեստանյան պատկերագրությունը (նկ. Բ-9/2): Ինչ վերաբերում է Վերին Անձավի վահանի բեկորի վրա աստվածների և զորքերի առջևից ընթացող և մարմինն ու զենքերը կրակի բոցերով պատված ռազմիկին բիայնական արքայի հետ նույնացնելուն՝ իբրև աստվածային լույսով (ասսուր. *melammu*) պատված առաջնորդ[1632], ապա դա քիչ է հավանական[1633]: Չի բացառվում, որ արքան պատկերված լինի նույն վահանի մեկ այլ բեկորի վրա, ուր մարտակառք վարող աստվածության կողքին կանգնած ենք տեսնում զինվորի, ով, թերևս, արքան էր կամ զորավարը: Ուրարտական պատկերագրության մեջ կարելի է գտնել մեկ-երկու օրինակ՝ մական բռնած զինվորների պատկերներով[1634]: Եթե ընդունենք, որ մականը դա ռազմական իշխանության խորհրդանիշ էր, ինչպես, օրինակ, ասորեստանյան բանակում էր[1635], ապա կարելի է տվյալ պատկերներում տեսնել բանակի հրամանատարների:

---

[1627] Belli 1999a: 37ff., Fig. 17.
[1628] КУКН, 36 Текст $I_5$, $II_5$; 38 Текс $I_{7, 13}$, $II_{10, 22}$; CTU I, A 3-$2_{5, 10}$; A 3-$1_{7, 13, 41, 53}$; ևն:
[1629] Հմմտ., օրինակ, Çilingiroğlu 2005: 34f.; Belli *et al.* 2009: 104.
[1630] Sevin 2007: 722, Res 3-4.
[1631] Muscarella 1988: 428f. (No. 576).
[1632] Zimansky 2012a: 105f., n. 10; նույնի՝ 2012b: 719ff. Հմմտ. նաև Հմայակյան 2006, էջ 10-16:
[1633] Հմմտ. նաև Miglus 2008: 231ff.
[1634] Vanden Berghe, Meyer 1982: 114, Afb 50/d; Markoe 1982: 5ff., Fig. 3; Kellner 1991a, Abb. 8.
[1635] Reade 1972: 102.

2.3.4.2. **«Գլխավոր զորավար»-ը (**$^{\text{lú}}$***turtānu*****)**

Ուրարտական բանակի հրամանատարական կազմում «գլխավոր զորավար»-ի պաշտոնի գոյությունը փաստվում է միմիայն ասորեստանյան աղբյուրներից: Մասնավորապես, Ռուսա Սարդուրորդու ժամանակաշրջանին վերաբերող երեք տեքստերում հիշատակվում է գլխավոր զորավար ($^{\text{lú}}$*turtānu*) Քակկադանուն[1636]: Աշշուրբանիպալի արձանագրություններից մեկում որպես «գլխավոր զորավար» հիշատակվում է Անդարիան, թեև վերջինս ասորեստանյա արքայի այլ տեքստերում հանդես է գալիս որպես «մարզպետ»[1637]:

Ուրարտական բանակի գլխավոր զորավարը հիշատակվում է նաև Ուրարտուի և Մաննայի թագավորության միջև ընթացող ռազմական գործողություններին վերաբերող ասորեստանյան մի զեկուցագրում՝ չտալով, սակայն, զորավարի անունը[1638]: Մեկ այլ աղբյուր հայտնում է ուրարտական արքայի դեմ ապստամբած Կար-սիպպար քաղաքում գլխավոր զորավարի մղած մարտերի մասին[1639]: Այսպիսով, բոլոր հիշատակումները վերաբերում են Ք.ա. 8-րդ դ-ի երկրորդ կեսին և հայտնի չէ, թե արդյո՞ք բանակի «գլխավոր զորավար»-ի պաշտոնը գոյություն ուներ նաև նախորդ դարաշրջանում: Այստեղ միայն նկատենք, որ *turtānu* տերմինն ուներ խուրրիական ծագում[1640] և խորթ չէր լինելու նաև ուրարտերենին:

2.3.4.3. «**Երկրորդ զորավար**»-ը (**$^{\text{lú}}$*turtānu* 2-*u/šanû*)**

Ուրարտական բանակում գլխավոր զորավարի կողքին նաև «երկրորդ զորավար»-ի աստիճանի գոյությունը հայտնի է միայն մեկ ասորեստանյան տեքստից: Այդ տեքստը հայտնում է նաև «երկրորդ զորավարի» անունը՝ Ուրծենե[1641]:

2.3.4.4. «**Թևերի զորավարներ**»-ը (**$^{\text{lú}}$*turtānu ša imittu*/ZAG, $^{\text{lú}}$*turtānu ša šumēlu*/KAB**)**

Ուրարտական բանակում «թևերի զորավար(ներ)»-ի պաշտոնի գոյությունը չափազանց հետաքրքիր է, առավել ևս, նման պաշտոն հանդիպում է նաև ասորեստանյան բանակի հրամկազմում[1642] և կարող է մեկ անգամ ևս փաստել երկու բանակների աստիճանակարգի և կառուցվածքի նմանությունը: Բանակի բաժանումը թևերի նորություն չէր. նման բաժանում վկայված է թե միտաննական (Արրապխե,

[1636] Deller 1984: 103 (Nr. 2.3 Vs 7); Parpola 1987, No. 31: r.1. Lanfranchi, Parpola 1990, Nos. 86 : 7, 112 : 1′.
[1637] Borger 1996: 37, 222 (Prismen B §27: iv 9, 16, C §37: v 13, 22).
[1638] Lanfranchi, Parpola 1990, No. 131: 4.
[1639] Lanfranchi, Parpola 1990, No. 166: r1-5.
[1640] Wilhelm 1970: 277ff.
[1641] Deller 1984: 116f. (Nr. 6.1 Vs 13); Lanfranchi, Parpola 1990, No. 91: 13.
[1642] Տե՛ս, օրինակ, Fales, Postgate 1992, No. 57: 4-5; Dezső 2006b: 126 and n. 205.

Նուզի)[1643], թե խեթական դարաշրջանում[1644] և թե ավելի վաղ՝ Ուրի III հարստության տեքստերում[1645]: Սակայն, նման բաժանումը հազիվ թե բնորոշ լիներ լեռնաշխարհի մինչուրարտական կամ նաիրյան շրջանին, և Ասորեստանից փոխառելու հնարավորությունը թվում է շատ ավելի հավանական:

Ուրարտական արքունիքում Ռուսա Սարդուրորդու դեմ բարձրացված խռովության մանրամասները հայտնող ասորեստանյան զեկուցագրում հիշատակվում է ուրարտական բանակի «աջ թևի զորավար»-ը ([lú]*turtānu ša* ZAG)[1646], ում անունը, ցավոք, աղբյուրը չի պահպանել: Ուշագրավ է, սակայն, որ վերջինս արքայական ընտանիքից էր. զեկուցագրի հեղինակը նրան բնորոշում է «Սարդուրիի ընտանիքից» բառերով[1647]:

### 2.3.4.5. «**Մարզպետ**» (**[LÚ]EN.NAM)**

Մարզպետները ուրարտական բանակի բարձր հրամանատարական կազմի հիմնական անդամներն են, ինչը վկայում են տասնյակ տեքստեր՝ թե ուրարտական, և թե ասորեստանյան: Ասորեստանյան հետախուզական նամակները հայտնում են, որ ռազմերթի դուրս գալուց առաջ արքայի հրամանով ռազմակայան են ներկայացել մարզպետները՝ իրենց զորքերով: Սարդուրյան տարեգրության մի հատվածում բիայնական արքան հայտնում էր, որ նվաճումներն իրականացրել է միայն մեկ գնդով՝ առանց որևէ մարզպետի կանչելու[1648]: Տարեգրության մեկ այլ հատվածում նշվում է երեք մարզպետի կանչելու և երեք ուղղությամբ արշավանք ձեռնարկելու մասին[1649]: Սրանք ռազմական գործողություններին մարզպետների մասնակցության փոքրաթիվ վկայություններն են ուրարտական աղբյուրներում: Այս առումով շատ ավելի հարուստ նյութ են տալիս ասորեստանյան աղբյուրները: Հայտնի է, որ կիմմերների դեմ ուղղված արշավանքին մասնակցել են տասներեք մարզպետ[1650], որոնցից ինը սպանվել էին ճակատամարտում[1651], երկուսը, ինչպես նաև գլխավոր զորավարը՝ գերի վերցվել[1652]: Կիմմերների դեմ ճակատամարտում ուրարտական մարզպետի զոհվելու մասին է ասվում նաև ասորեստանյան արքունիք ուղղված Ուրզանայի նամակում[1653]: Հինգ մարզպետների մասին է խոսվում ասորեստանյան մեկ այլ նամակում[1654]: Կան նաև

[1643] Stillman, Tallis 1984: 25; Jankowska 1981: 199; Lion 2008: 74f.
[1644] Beal 1992: 144; Bryce 2007: 9; Lorenz, Schrakamp 2011: 143f.
[1645] Lafont 2008: 29; նույնի՝ 2009: 6.
[1646] Lanfranchi, Parpola 1990, No. $93_{6-7}$.
[1647] Նման հետևության կարելի է հանգել Deller 1984: 98 (Nr. 1.1); Lanfranchi, Parpola 1990, No. 93 տեքստից:
[1648] ԿՈՒՀ, $241F_{16}$; CTU I, A 9-3 $VI_{16}$.
[1649] ԿՈՒՀ, $241D_{17-21}$; CTU I, A 9-3 $III_{17'-21'}$.
[1650] Deller 1984: 98f. (Nr. 1.2 Vs 11); Parpola 1987, No. 31: 11
[1651] Deller 1984: 99f. (Nr. 1.3); Lanfranchi, Parpola 1990, No. 90.
[1652] Parpola 1987, No. $31_{13-14}$, $r_{1-2}$.
[1653] Deller 1984: 100 (Nr. 1.4.); Parpola 1987, No. 30.
[1654] Deller 1984: 103 (Nr. 2.2.); Lanfranchi, Parpola 1990, No. 87: 4.

տեքստեր, որոնք վկայում են մարզպետի գլխավորած զորքերի կողմից իրականացվող առանձին ռազմական գործողության, սահմանային հսկողության կամ այս կամ այն տարածքում մարզպետների զորքեր կենտրոնացնելու մասին[1655]: Ասորեստանյան աղբյուրներից հայտնի է նաև դեպի Շուբրիա ուրարտական մարզպետ (գլխավոր զորավա՞ր, տե՛ս վերը) Անդարիայի ձեռնարկած արշավանքի մասին հավանաբար Ք.ա. 657թ.[1656]: Հետաքրքիր է, որ ուրարտական բանակի գլխավոր զորավար Քակկադանուն, մինչև այդ պաշտում նշանակվելը, զբաղեցրել էր մարզպետի պաշտոնը[1657]:

2.3.4.6. **«Գնդապետ» (*rab kişri*)**

*Kişru*-զորամիավորման հրամանատարի կամ «գնդապետ»-ի (*rab kişri*) աստիճանով ուրարտական զինվորական է հայտնի Աշշուր-րեծուվայի զեկուցագրից[1658]: Դժվար է ասել, թե որքանով է այդ աստիճանը համապատասխանում «հազարապետ»-ին (ասսուր. *rab 1.lim*): «Հազարապետ»-ի աստիճանը վկայված է միայն ասորեստանյան աղբյուրներում, բայց ոչ՝ ուրարտական թեմատիկայով:

Ասորեստանյան տեքստերից մեկը, նշելով Մուծածիր շարժվող ուրարտական մարզպետ Սեթինուի զորագնդի մասին, հայտնում է, որ նրան ուղեկցել են իր զորքի հրամանատարները, որոնց անվանում է $^{LÚ}$GAR-*nu* (ասսուր. *šaknu*՝ «*(մարզի) կառավարիչ, տեղապահ*»)[1659]: Մեկ այլ աղբյուր ևս հիշատակում է Ուրարտու երկրի «հրամանատարներ»-ի ($^{LÚ}$GAR-*nu*$^{MEŠ}$ *ša* KUR URI-*a*-*a* …)[1660]: Տվյալ դեպքերում, սակայն, դժվար է միանշանակ պնդել, թե արդյո՞ք խոսքը վերաբերում է մարզային կառավարիչներին: Նկատենք, որ ասորեստանյան աղբյուրները ուրարտական մարզային կառավարիչներին հիշատակում են կիրառելով հիմնականում $^{LÚ}$EN.NAM գաղափարագիրը (տե՛ս վերը), թեև կան օրինակներ, երբ կիրառվել է նաև $^{LÚ}$GAR(-*nu*) գաղափարագիրը[1661]: Չի բացառվում, որ այստեղ աղբյուրը նկատի ունի խոշոր զորամասերի հրամանատարներին՝ գնդապետներին[1662]: Այդ նույն աղբյուրում հիշատակվում են նաև ուրարտական բանակի *kallāpu*-զորքերի հրամանատարները՝ «մեծավորներ»-ը ($^{LÚ}$GAL *kal*-*lab*.MEŠ)[1663]: Մեկ այլ աղբյուրում հիշատակվում են բանակի

[1655] Deller 1984: 104f. (Nr. 3.1.); Parpola 1987, No. 29; Lanfranchi, Parpola 1990, Nos. 84, 173-174, 178; Saggs 2001, ND 2433 ևն:
[1656] Grayson 1980: 227ff., 233.
[1657] Deller 1984: 103 (Nr. 2.2 Vs 7-8); Lanfranchi, Parpola 1990, Nos. 87: 7-8, $89_{5-6}$.
[1658] Дьяконов 1951a, № 50 (13); Deller 1984: 116f. (Nr. 6.1 Vs 3). Հմմտ. Lanfranchi, Parpola 1990, No. 91: 3.
[1659] Deller 1984: 107 (Nr. 3.4 Vs 5); Lanfranchi, Parpola 1990, No. 88: 5.
[1660] Lanfranchi, Parpola 1990, No. 34: r.23.
[1661] Lanfranchi, Parpola 1990, No. 34: r.23.
[1662] Հմմտ. նաև Postgate 1980: 70ff.; Deller 1984: 107f. (Nr. 3.4 Vs 4-5); Lanfranchi, Parpola 1990, No 88: 4-5.
[1663] Deller 1984: 107 (Nr. 3.4 Vs 5); Lanfranchi, Parpola 1990, No. 88 : 5.

*pirru*-զորքերի հրամանատարները՝ «առաջնորդներ»-ը, LÚ.EN՝ «տեր» (իմա՝ «*հրամանատար*») գաղափարագրով[1664]: Թե ինչ հրամանատարների մասին է խոսքը տվյալ դեպքերում՝ դժվար է միանշանակ ասել: Ասորեստանյան աղբյուրներից մեկում, օրինակ, $^{LÚ}$GAL կոչումով են հանդես գալիս ասորեստանյան բանակի *kiṣru*-զորամիավորման հրամանատարներից երկուսը (2 $^{LÚ}$GAL *kiṣir*.MEŠ)[1665]: Ռուսա Սարդուրորդուն վերաբերող ասորեստանյան զեկուցագրերից մի քանիսում կարծես թե խոսքը վերաբերում է մարզպետների[1666]: Համենայն դեպս, միանշանակ է, որ $^{LÚ}$GAL կոչումով կարող էր հանդես գալ ցանկացած բարձրաստիճան պաշտոնյա/զորավար:

2.3.4.7. **«Հարյուրապետ» (*rab 1.me'at*)**

Ինչպես «հազարապետ»-ի պարագայում, սեպագիր տեքստերը չեն հիշում ուրարտական բանակի որևէ հարյուրապետի: Սակայն, բանակի ստորաբաժանումների ենթադրվող բաժանումը տասնյակ – հիսնյակ – հարյուրակ և հազարյակ/գունդ (՞) սկզբունքով թույլ է տալիս ենթադրել, որ ցածր հրամանատարական կազմը գլխավորել են հարյուրապետները: Զինվորական այդ աստիճանը բազմիցս է վկայված ասորեստանյան բանակում: Այս առումով նշենք, որ «հարյուրապետ»-ի աստիճանի համադրումը *kiṣru*-զորամիավորման հրամանատարի հետ (ենթադրելով, որ *kiṣru*-զորամիավորումները եղել են հարյուրակներ[1667]), հազիվ թե ընդունելի գտնվի:

2.3.4.8. **«Հիսնապետ» (*rab ḫanšê*)**

Թեև աղբյուրներում ուղղակի վկայություններ չկան, սակայն, այս դեպքում ևս կարելի է պնդել, որ ուրարտական բանակի ստորաբաժանումների շարքերում եղել են «հիսնյակներ» և գոյություն է ունեցել «հիսնապետ»-ի զինվորական աստիճան[1668]:

2.3.4.9. **«Տասնապետ» (*rab eširti* / LÚ.10-*li*)**

Բանակի հրամանատարական կազմի ամենացածր աստիճանում գտնվել են տասնապետները: Հետաքրքիր է, որ բանակի «տասնապետ» հիշատակվում է նաև Վերին Անձավից գտնված ուրարտական սեպագիր աղյուսակում: Այստեղ թվարկվում են զինվորներ, որոնց տրվել են նետ և աղեղ, մի քանիսին՝ միայն նետ: Զինվորների ընդհանուր թիվը 15-ն է: Աղբյուրը տալիս է նաև տասնապետի անունը՝ Վազա կամ Վազայա ($^{m}$*'a-za-a* LÚ.10-*li*)[1669]:

---

[1664] Lanfranchi, Parpola 1990, No 87: 13.
[1665] Lanfranchi, Parpola 1990, No 32: 10.
[1666] Parpola 1987, No. $31_{12-13}$; Lanfranchi, Parpola 1990, No. 164: r3-10.
[1667] Արձանագրության հրատարակիչները հակված են *kiṣru* անվան տակ տեսնել կանոնավորապես հարյուր զինվորներից բաղկացած զորախմբեր (cohorts)՝ դրանից բխող եզրահանգումներով: Տե՛ս Fales, Postgate 1995: XXVII. Համմտ. նաև Postgate 1980: 72, n. 2; նույնի՝ 2007b: 347ff.
[1668] Համմտ. Հարությունյան 1971գ, էջ 351:
[1669] Belli, Salvini 2003: 148ff.; CTU IV, CT An-$1_{16.}$

### 2.3.5. Ստորաբաժանումները

Ուրարտական բանակի ստորաբաժանումների մասին կարելի է դատել հրամանատարական կազմի մասին մեր ունեցած տեղեկություններից ելնելով: Հավանական է, որ զորամիավորումները կազմված են եղել տասնյակ – հիսնյակ – հարյուրակ և հազարյակ/գունդ (՞) սկզբունքով: Աղբյուրներից դատելով՝ ուրարտական բանակի ամենամեծ և հիմնական զորամիավորումը, ինչպես ասորեստանյան բանակում էր, գունդն էր՝ գնդապետի գլխավորությամբ և մարզպետի ընդհանուր հրամանատարությամբ: «Գունդ»-ը միակ ստորաբաժանումն է, որը հիշատակվում է նաև ուրարտական աղբյուրներում ([LÚ]*ïeli*, հմմտ. ուրարտ. *ïeli-d(u)*՝ «*հավաքել*» բայը)[1670]:

Ցավոք, սեպագիր աղբյուրները հստակ տվյալներ չեն տալիս ուրարտական գնդի թվակազմի մասին: Աշշուր-րեծուվայի զեկուցագրերից մեկում հիշատակվում է մարզպետ Սեթինիի զորագունդը, որում ընդգրկված էին 3 հազ. հետևակայիններ (3-*lim* LÚ.ERÍM.MEŠ GÌR.2.MEŠ)[1671]: Սա միակ աղբյուրն է, որը տեղեկացնում է ուրարտական բանակի զորամիավորման թվակազմի մասին: Այս տեղեկության վրա հենվելով՝ ենթադրվել է, որ բանակը բաժանվել է 3 և 6 հազ-ոց գնդերի[1672]: Նման պնդման համար, սակայն, բավարար հիմքեր չկան, առավել ևս դժվար է ասել՝ արդյո՞ք բոլոր զորամիավորումներն են ունեցել նույն թվակազմերը: Ասորեստանյան աղբյուրներից դատելով՝ ոչ:

Ասորեստանյան բանակում ևս անհայտ է մնում *kišru*-գնդի ճշգրիտ թվակազմը: Բանակի անձնակազմին վերաբերող ցուցակներից մեկի համաձայն՝ զորամիավորումներն ունեցել են 300-ից մինչև 4 հազ. 100 զինվոր: Հիմնականում այդ թիվը տատանվել է 1100-ից 1500-ի սահմաններում[1673]: Աղբյուրը չի նշում առանձին միավորումների անվանումները: Ուստի և դժվար է ասել՝ արդյո՞ք գործ ունենք *kišru*-գնդերի հետ, թե ոչ: Համենայն դեպս, զինվորների՝ մեզ հայտնի առավելագույն քանակը, որ նշում են աղբյուրները *kišru*-գնդի կազմում, հասնում էր 1119 մարդու[1674]:

Ասորեստանյան աղբյուրները հստակ տեղեկություններ չեն տալիս նաև նահանգային զորքերի թվակազմի մասին: Թեև թվական տվյալներ են հայտնի նահանգներից մեկի՝ Զամուայի զորագնդի մասին (1430 հոգի, ներառյալ՝ սպասարկող անձնակազմը՝ 69 մարդ), սակայն, այս թիվը չի կարող հիմք ծառայել

---

[1670] КУКН, 241F$_{16}$, c. 470; CTU I, A 9-3 VI$_{16}$. Հմմտ. Меликишвили 1960: 410 (*отряд*$^{(?)}$); Дьяконов 1963a: 91 (*ополчение*$^{(?)}$).

[1671] Տե՛ս Deller 1984: 107 (Nr. 3.4); Lanfranchi, Parpola 1990, No. 88.

[1672] Տե՛ս, օրինակ, Իսրայելյան 1971, էջ 77:

[1673] Dalley, Postgate 1984: 43ff.; Fales, Postgate 1995, No. 126.

[1674] Հմմտ., օրինակ, Waterman 1930-1936, No. 304; Parpola 1987, No. 11.

եզրահանգումների համար, քանի որ նույն աղբյուրում նշվում է, որ զորքերի մնացած մասը դեռ պետք է ժամանեին[1675]: Ենթադրելի է, որ այս կամ այն նահանգում տեղաբաշխված զորքերի քանակը կախված էր լինելու տվյալ նահանգի ունեցած ռազմավարական նշանակությունից:

Եթե ճիշտ է այն ենթադրությունը, որ ասորեստանյան աղբյուրներում հաճախ հիշատակվող, ասորեստանյան արքայի «առջևից գնացող» աստվածների անվան տակ կարելի է տեսնել այդ աստվածությունների անունները կրող զորամիավորումներ (Ներգալ, Ադադ, Շամաշ, Մարդուկ, Իշթար և Աշշուր[1676]), որոնք, ամենայն հավանականությամբ, ներկայացրել են արքայական բանակը՝ *kiṣir šarrūti*-ն, ապա կարելի է ենթադրել, որ ուրարտական արքայական գնդի զորամիավորումները ևս կրել են աստվածների անուններ: Ասվածի վկայություն կարող են լինել ուրարտական բրոնզեգործության մեջ հանդիպող այսպես կոչված «զինադրոշներ»-ը (շտանդարտ)՝ այս կամ այն աստվածության պատկերով կամ խորհրդանիշով (նկ. Բ-9/3-5)[1677]: «Զինադրոշ»-ը (ասսուր. *uriggallu/uringallu*), ըստ երևույթին, տարվել է այն զորագնդի առջևից (գուցե՝ մարտակառքի վրա կամ առեղին ամրացված[1678]), որը կրել է դրա վրա պատկերված աստվածության անունը: Սա ամենևին խորթ չէր Հին Արևելքի բանակներին[1679]: Ի դեպ, բրոնզե «զինադրոշներ»՝ աստվածությունների պատկերներով, հիշատակվում են Իշպուինիի և Մենուայի թողած Քելիշինի արձանագրության մեջ՝ Մուծածիրի տաճարին տրված ընծաների թվում[1680]:

### 2.3.6. Զորահավաքի սկզբունքը

Ուրարտական աղբյուրները չեն մանրամասնում զորահավաքի սկզբունքը՝ սահմանափակվելով միայն զորք հավաքելու մասին կաղապարային ձևակերպումով ($^{LÚ}$*ḫuradinili*/$^{LÚ}$A.SI$^{MEŠ}$ *ïelidu*-): Անցում կատարելով դեպի մշտական/պրոֆեսիոնալ բանակի՝ թերևս հստակեցվում է նաև զորահավաքի սկզբունքը: Անկասկած՝ զորակոչվել են բանակի միջուկը կազմող բիայնական վերնախավը՝ $^{LÚ}$*mari*(*ni*)-ն, հողի ժամանակավոր տիրապետության իրավունք ունեցող պրոֆեսիոնալ զինվորականությունը՝ $^{LÚ}$*ḫuradinili*-ն, որոնցից կազմվել են հիմնականում հեծելազորն ու կառամարտիկ զորամիավորումները, հնարավոր է նաև հետևակային որոշ ստորաբա-

[1675] Lanfranchi, Parpola 1990 No. 215. Մանրամասն տե՛ս և հմմտ. Postgate 2000: 89ff.

[1676] Dalley, Postgate 1984: 40f., ուր և տե՛ս տեքստային մեջբերումները «Լուվրի աղյուսակ»-ից: Տե՛ս նաև Scurlock 1997: 497, n. 39; Grekyan 2010a: 86; Fuchs 2005: 46.

[1677] Seidl 1980: Taf. 14/2/1, 15/1-2; Özgen 1984: 117f., Figs. 46-48; Maaß 1987: 74sqq., Taf. 1/1-2, 4-5; Merhav 1991a: 57f., Figs. 27-28, 79-80; Wartke 1993, Taf. 35; Seidl 2004: 101, Taf. 22-23.

[1678] Եսայան 1962, էջ 85; Пиотровский 1959б: 179; Özgen 1984: 117.

[1679] Pongratz-Leisten *et al.* 1992: 291ff.; Fuchs 2011: 386; Vidal 2014a: 297ff.

[1680] КУКН, 30 Урартский текст, стк. 10, Ассирийский текст, стк. 9; CTU I, A 3-11 $Ro_{10}$, $Vo_9$.

ժանումներ, իսկ հետևազորի մյուս մասը հավաքվել նաև բիայնական իշխանությանը ենթակա համայնքներից, մասամբ, չի բացառվում, հողերին ամրացված կախյալներից, ի լրումն՝ դաշնակից կամ ենթակա երկրների տրամադրած հեծյալ ու հետևակ ուժերը:

Ռուսա Սարդուրորդու բարեփոխումներից հետո, երբ ձևավորվեցին մարզային գնդերը, կարծում ենք, փոխվեց նաև զորահավաքի կարգը. կարելի է կարծել, որ զորահավաքը սկսեցին իրականացնել բացառապես տարածքային սկզբունքով: Պրոֆեսիոնալ զինվորականության խիստ պակասը, որն այլևս հնարավոր չէր համալրել միմիայն բիայնական վերնախավի ու ծառայող ազնվականության հաշվին, ստիպում է զորքերը համալրել ծառայող խավի հողատարածքներին ամրագրված կախյալներով[1681]: Վերջիններս աստիճանաբար ներգրավվելու էին պրոֆեսիոնալ զինվորականության շարքերը՝ փոխելով նաև էթնիկ պատկերը բանակում: Ընդհանրապես, այս համակարգը հիշեցնում է Սպարտան, ուր բանակի միջուկը՝ ծանրազեն հոպլիտների հետևազորը, կազված էր բացառապես իշխող խավի անդամներից՝ սպարտիադներից, թեթևազեն հետևակը կազմվում էր պետության մեջ՝ իրենց քաղաքի սահմաններում, որոշակի իրավունքներ ունեցող պերիօյկոսների հաշվին, իսկ պետության համար ծանր պահերին՝ բացառիկ դեպքերում, բանակ էին զորակոչում նաև քանակապես շատ ավելի մեծ թիվ կազմող կախյալ բնակչությանը՝ հելոտներին:

Կարելի է կարծել, որ ուրարտական տերությունը համընդհանուր զորահավաքի դեպքում կարող էր հավաքել մինչև 40 հազ. մարդ (տե՛ս նաև 2.3.8.): Այդ թվաքանակի կեսից ավելին կազմելու էր մշտական բանակը և տերությանը ենթակա երկրների զորքերը, որոնց գումարվելու էին տերության տարբեր հատվածներում ծառայության իրավունքով հող ստացած զինվորականության ուժերը՝ մարզպետների հրամանատարության ներքո: Եթե նկատի ունենանք, որ ուրարտական տիրապետության տակ գտնվող բնակավայրերի թիվը կարող էր հասնել ընդհուպ մինչև 2 հազ-ի (տե՛ս վերը 1.3)՝ միջինը 150-200 բնակիչներով, որոնց մինչև քսան տոկոսը կարող էր կազմել հողատեր զինվորականությունը (8-10 ընտանիք), ապա յուրաքանչյուր գյուղից կարող էր կանչվել մինչև 10 զինվորական: Սակայն, զորահավաքները, ամենայն հավանականությամբ, իրականացվել են մասնակի, յուրաքանչյուր բնակավայրից՝ մի քանի հոգի: Հինարևելյան զուգահեռները թույլ են տալիս պատկերացում կազմելու նման զորահավաքների սկզբունքի մասին: Օրինակ,

[1681] Հետաքրքիր է, որ «մարյանուներ»-ի ծառաները կամ կախյալները Ուգարիթում կոչվում էին «պատանիներ»: Տե՛ս Heltzer 1971: 127; նույնի՝ 1979: 247, n. 19.

զինծառայության մասին կնքված խեթական մի տեքստից դատելով՝ տարբեր բնակավայրերից կամ «քաղաքների»-ից հավաքագրվելիք զինվորների թիվը տատանվում էր 10-ից 100-ի միջև, թեև հարկ է նկատի ունենալ, որ տեքստը պակասավոր է[1682]: Նման բովանդակությամբ ուգարիթյան տեքստերից մեկում նշվում է մոտ 30 բնակավայրերից կատարված զորահավաքի մասին, ընդ որում, առանձին բնակավայրերից ծառայության է կանչվել մինչև 50 մարդ[1683]: Ուգարիթյան մեկ այլ տեքստի վկայությամբ՝ տարբեր բնակավայրերից ծառայության կանչվածների թիվը տատանվում էր մեկից մինչև 90 մարդու սահմաններում, բայց, հիմնականում նվազ, քան 20 հոգին: Եվս մեկ տեքստ նշում է 10 բնակավայրից զորակոչված թվով 230 զինվորների մասին[1684]: Սակայն, հիմնականում կրկին գործ ունենք նվազ թվերի հետ[1685], սովորաբար՝ 1-3 մարդ յուրաքանչյուր «քաղաք»-ից, իսկ մեծ թվերը ըստ երևույթին վերաբերել են խոշոր բնակավայրերին[1686]: Ընդհանուր առմամբ՝ Ուգարիթի բնակչությունը, որը շրջակա բնակավայրերով հանդերձ կազմելու էր մոտ 30 հազ. մարդ (տե՛ս նաև վերը)[1687], կարող էր դուրս բերել, ըստ տեսակետներից մեկի, մինչև 7-9 հազ. ռազմիկ՝ ներառյալ պրոֆեսիոնալ զինվորականությունը: Առավել հավանական թիվը 4-5 հազ. է[1688]: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ ունենալով սահմանափակ տարածք և կոմպակտ բնակչություն՝ ուգարիթյան իշխանությունների համար շատ ավելի դյուրին էր իրականացնելու հնարավորինս արդյունավետ զորահավաքներ:

Մինչդեռ, պատկերը այլ էր Ուրարտուի դեպքում: Ուրարտական տիրապետության տակ գտնվող տարածքների բնակչության զգալի, եթե ոչ՝ մեծ մասը կախյալներ էին, որոնց ներգրավվածությունը բանակում, առնվազն մինչև Ռուսա Սարդուրորդի, քիչ է հավանական և հազիվ թե Ուրարտուում երբևէ բանակ կանչվեր բիայնական իշխանությանը ենթակա զենք կրելու ընդունակ ողջ արական բնակչությունը: Դրանով ենք փաստարկում մասնակի զորահավաքների հնարավորությունը, նամանավանդ, ուրարտական իշխանությունները խնդիր ունեին վերահսկողության տակ պահելու երկրի՝ հարյուր հազարների հասնող կախյալ և հպատակ բնակչությանը:

---

[1682] Քոսյան 2004բ, էջ 472-474:
[1683] Heltzer 1979: 249f.; Նկատենք, որ տեքստը պակասավոր է. պահպանվել են միայն 50, 40 և 13 թվերը:
[1684] Гельцер 1969: 22 и прим. 10, с. 34 сл.; Heltzer 1979: 250, n. 45. Տե՛ս և հմմտ. նաև Vidal 2005 [2006]: 663ff.
[1685] Гельцер 1963: 41.
[1686] Heltzer 1976: 19f.
[1687] Liverani 1982: 250ff.; van Soldt 1995: 1258. Տե՛ս և հմմտ. նաև Vita 1999: 455.
[1688] Гельцер 1969: 24 сл. Տե՛ս և հմմտ. նաև Vita 1999: 493; Vidal 2005 [2006]: 655f. (նշված գրականությամբ):

### 2.3.7. Հիմնական զորատեսակները

#### 2.3.7.1. **Կառամարտիկ զորքեր**

Ուրարտական բրոնզեգործության մեջ առանձնանում է ռազմական թեմատիկայով պատկերագրությունը: Ուրարտուի հզորությունն արտահայտող բրոնզե արվեստի այս յուրահատուկ ճյուղը ներկայացված է համեմատաբար մեծաթիվ օրինակներով: Դրանք պատկերում են «շքերթներ» կամ «որսի տեսարաններ»՝ ուրարտական բանակի հիմնական զորատեսակների՝ հետևակի, հեծելազորի և մարտակառքերի մասնակցությամբ, ինչպես նաև զինվորների խմբեր կամ պարզապես առանձին զինվորներ (նկ. Բ-10/1-4): Առանձին խումբ են կազմում ճակատամարտ պատկերող բրոնզե իրերը[1689]: Պատկերների շարքում մարտակառքերը և կառամարտիկները լայնորեն են ներկայացված[1690]:

Ք.ա. 1-ին հազ-ի սկզբներին մարտակառքերը շարունակում էին մնալ բանակների հիմնական հարվածային ուժը: Նման պատկեր ենթադրելի է նաև Ուրարտուում ընդհուպ մինչև Ք.ա. 9-րդ դ-ի վերջեր: Ճակատամարտի տեսարան պատկերող ուրարտական պատկերագրության մեջ ասորեստանյան բանակին կամ մեկ այլ ջախջախված թշնամու հալածող զինվորները գերազանցապես կառամարտիկներ են (նկ. Բ-11/1)[1691]: Դրանցից որոշները, հաստատապես, վերաբերում են վաղուրարտական շրջանին (նկ. Բ-11/2): Մարտակառքերի սռնիներին ագուցվող բրոնզե խուփերի և դրանք ամրացնող երիթակների մի մասը նույնպես վերաբերում է Ք.ա. 9-րդ դարին, նամանավանդ՝ դրանցից որոշները կրում են Իշպուինիի անունը[1692]:

Մարտակառքերի դերը ուրարտական բանակում սկսեց նվազել Ք.ա. 9-րդ դարի վերջերից սկսած՝ պայմանավորված հեծելազորի ի հայտ գալով: Թեև որպես զորատեսակ այն պահպանվեց, բայց կորցրեց իր նախկին նշանակությունը և կառամարտիկ զորքերի առկայությունը բանակում, թերևս, պարզապես դարձավ տուրք

---

[1689] Kellner 1991a, Nr. 33, Taf. 8-9, No. 33; Sevin 2003a: 209ff., Res. 1-5; Çavuşoğlu 2004: 67ff., Figs. 1-2; նույնի՝ 2005: 365ff., Figs. 1-5; Röllig 1997a: 217, Tab. II; Calmeyer, Seidl 1983: 103ff.; Born, Seidl 1995: 55ff., Abb. 45-53, 71; Seidl 2004: 113, 152f., Abb. 85, 107, Taf. 49, 50a, 50b; Falttaf. B I; Belli 1999a: 37ff.

[1690] Եսայան և այլք 1995, էջ 57, Աղ. XII; Մարտիրոսյան, Մնացականյան 1958, էջ 70-74, նկ. 2, Աղ. 4; Пиотровский 1970, рис. 46-49; Bilgiç, Öğün 1964 [1966], P. XIX; Taşyürek 1975a: Fig. 2, 14-16, Res. 10, 11, 14, 35-39, 41; Kellner 1991a, Nr. 1-3, 5, 9, 11-3, 18-19, 23-24, 28, 38, Abb. 10, Taf. 1/1-3, 5, 9, Taf. 2-3/11, 18, 23-24, Taf. 4-5/12-13, Taf. 6-7/19, 28 etc.; Vanden Berghe, Meyer 1982: 163ff. (Nos. 95, 97-98); Calmeyer 1986: 79ff., Fig. 4; Seidl 2004: Taf. 9/d.e., 10/c, 17/a.c.d., 18/a., 24/b., 46/b., 47/a-e., 48/a.d., 49/a-c., 50/a-d., 51/a-d., 55/c., 57/b. ևն: Գեղհովտի վիմափոր դամբարանից հայտնաբերված մարտակառքի բրոնզե դետալների համար տե՛ս Փիլիպոսյան, Մկրտչյան 2001, էջ 22-24, Աղ. 16/1-5, 18/2, 10-11, 19/1-5; Gökce *et al.* 2013: 108 (նշվ. գրականությամբ), ուր և տե՛ս ուրարտական մարտակառքի կառուցվածքի քննությունը (Gökce *et al.* 2013: 109ff., Figs. 3-6):

[1691] Seidl 2004, Abb. 74; Çavuşoğlu 2005: 366, Res. 1.

[1692] Seidl 1980: 63f., Abb. 1, Taf. 8/1; Tanabe *et al.* 1982: 69, Pl. XI; Özgen 1984: 114ff. Merhav 1991a: 53ff.; Çavuşoğlu 2011a: 116f. Տե՛ս նաև Gündüz 2002: 262ff., Fig. 66; Seidl 2004: 92ff., Abb. 59-71.

ավանդույթներին: Ի դեպ, եթե մարտակառքերի և հեծյալների 1 : 2-ի հարաբերակցությունը կարելի է տեսնել Ք.ա. 9-րդ դ-ի ողջ երկրորդ կեսի համար, այսինքն՝ մեկ մարտակառքին սովարաբար ուղեկցել են երկու հեծյալներ[1693], ինչը վկայված է նաև ուրարտական պատկերագրության որոշ օրինակներում (նկ. Բ-12/1-2)[1694], ապա հետագայում այդ հարաբերակցությունը փոխվում է: Ք.ա. 8-րդ դ-ում, օրինակ, ասորեստանյան աղբյուրներում հանդիպում ենք մարտակառքի և հեծյալների 1 : 4-ի և անգամ 1 : 10-ի հարաբերակցությունների (տե՛ս նաև ստորև):

Հետաքրքիր է, որ ուշ-ուրարտական պատկերագրության մեջ մարտակառքերը ներկայացվում են փոփոխված կառուցվածքով և անձնակազմով: Մասնավորապես, մարտակառքերի վրա արդեն պատկերվում են երեք զինվորներ, որոնցից մեկը՝ վահանակիր է (նկ. Բ-14/1-4): Կառամարտիկների նման կազմ (կառավար, նետաձիգ և վահանակիր/նիզակակիր կամ կառավար և երկու նետաձիգ) ի հայտ է գալիս Ռուսա Սարդուրորդուց սկսած և ընդհանրապես՝ համեմատաբար ուշ շրջանի պատկերումներում[1695], մինչդեռ վաղ փուլում՝ առնվազն ընդհուպ մինչև Սարդուրի Արգիշթորդու ժամանակաշրջանը ներառյալ, յուրաքանչյուր մարտակառքի վրա սովորաբար պատկերված էր լինում երկու զինվոր՝ կառավարը և մեկ նետաձիգ (նկ. Բ-13/1-3)[1696]: Բացի դա, նկատելի է, որ ուշ շրջանի մարտակառքերի անիվներն ունեին ութ ճաղ, մինչդեռ՝ դրանց թիվը վաղ և միջին-ուրարտական դարաշրջանում վեցն էր (նկ. Բ-15/1-6)[1697]: Փոփոխություններ են նկատվում նաև մարտակառքի խցիկի կառուցվածքում և այլն[1698]: Սա կարող էր պայմանավորված լինել մարտակառքերի համար մշակված նոր մարտավարությամբ: Մասնավորապես, նախկինում մարտակառքերը ծառայում էին միայն որպես շարժական հարթակ՝ նետաձիգների համար, և չէին ենթադրում մերձամարտ հակառակորդի հետ[1699]: Հակառակորդին նետահարելով հեռվից՝ թշնամու զինվորների մոտենալու ժամանակ մարտակառքերը, ինչպես նաև, ի դեպ, հեծյալ նետաձիգները, շարժվելով հակառակորդի ճակատի երկայնքով, այնուհետև նահանջում էին՝ շարունակելով նետահարել այդ ողջ ընթացքում[1700]: Պատահական չէ,

[1693] Dalley 1985: 37.
[1694] Taşyürek 1974: 177ff., Fig. 1; Seidl 2004: 71, Abb. 31, Sevin 2007: 725, Res 1.
[1695] Հմմտ. նաև Sevin 2003a: 213. Պատկերումների համար տե՛ս Bilgiç, Öğün 1964 [1966]: 87, Lev. XX; Burney 1966: 77f., Fig. 10, Pl. 9/b; Çavuşoğlu 2004: 69f., Res. 1-2, Çiz. 1-2; Seidl 2004: 113, Abb. 85; Sevin 2003a: 217, Fig. 5 ևն:
[1696] Пиотровский 1950: 66сл., рис. 40б-в; Seidl 2004: 69, Abb. 30; 90, Abb. 56.
[1697] Տե՛ս նաև Пиотровский 1962a: 340 сл.; Özgen 1983: 113; Merhav 1991a: 53f., Figs 1-2; Ավետիսյան 2008, էջ 249-266; Konakçı, Başturk 2009: 175ff.
[1698] Հմմտ. Özgen 1983: 115ff.
[1699] Drews 1993: 119f.; Cantrell 2011: 72ff.
[1700] De Backer F. 2009b [2010]: 2; նույնի՝ 2009a [2010]: 587; Archer 2010: 64ff. Տե՛ս նաև Fuchs 2011: 393ff.

որ ուրարտական բրոնզեգործության մի շարք նմուշներում թե հեծյալ, և թե կառամարտիկ նետաձիգը պատկերվում է իրանով դեպի հետ շրջված նետահարելիս (այսպես կոչված «պարթևական նետաձգություն), ինչպես վարվում էին հետագայում մար, սկյութ, պարթև և հայ հեծյալները[1701]: Մարտավարության այս ձևը Ուրարտուում, հնարավոր է, ձևավորվել է ինքնուրույն, չի բացառվում նաև տեսնել մարական/իրանական ազդեցություն, թեև այն կարծես թե խորթ չէր հինարևելյան մարտավարությանը դեռևս մինչև մարերի հայտնվելը[1702]:

Մարտակառքերում երրորդ՝ նիզակակրի/վահանակրի ներկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ այժմ արդեն կառամարտիկները մասնակցում էին նաև մերձամարտին:

Որքանո՞վ է այս նորամուծությունը ևս արվել Թիգլաթպալասար III-ի իրականացրած ռազմական բարեփոխումների օրինակով[1703], դժվար է ասել: Ընդ որում, ուրարտական մարտակառքերի շարքում առայժմ չենք հանդիպում ծանր կառքերի՝ չորս ձիերով և չորս զինվորներով (կառավար, նետաձիգ և երկու նիզակակիր/վահանակիր զինվոր), որոնցով զինվեց ասորեստանյան բանակը Թիգլաթպալասարի ժամանակ (տե՛ս նկ. Բ-16/1)[1704]:

Ուրարտական բանակի մարտակառքերին վերաբերող փաստերի մյուս խումբը հանդիպում է սեպագիր աղբյուրներում: Ամենավաղը Իշպուինիի և Մենուայի «համատեղ գահակալության» շրջանի տեքստերն են, որոնցում բանակի կազմում հիշատակվում է 66, մեկ այլ դեպքում՝ 106 մարտակառք (GIŠ.GIGIR$^{MEŠ}$)[1705]: Քիչ հասկանալի կոնտեքստում 92 մարտակառք է հիշատակվում «Սարդուրյան տարեգրության» մեջ[1706]: Ի դեպ, տարեգրության մեկ այլ հատվածում նշվում է թշնամուց խլված 50 մարտակառքերի մասին[1707]:

Ասորեստանյան աղբյուրներում ուրարտական բանակի մարտակառքեր հիշատակվում են Ուաուշի ճակատամարտի ժամանակ, մասնավորապես, երբ նշվում է Ռուսայի կողմից իր մարտակառքն իբր լքելու մասին[1708]: Սարդուրիի արքայական

---

[1701] Տե՛ս, օրինակ, Մանասերյան 1987, էջ 171-3; Rostovtzeff 1943: 182 and n. 22.

[1702] Drews 2004: 66ff., 88f.; De Backer F. 2009b [2010]: 4. Տե՛ս և հմմտ. նաև Zuttermann 2003: 134f., 148f.; Anthony 2007: 223f.

[1703] Littauer, Crouwel 1979: 104, 116; Mayer 1978: 177f., Abb. 2; Anglim *et al.* 2002: 90.

[1704] Yadin 1963: 299; Albenda 1986, Pl. 116; De Backer F. 2009b [2010]: 2f.; Nadali 2004: 70f.; նույնի՝ 2010: 134 ; Dezső 2012b: 68, Pl. 18, Figs. 31-32.

[1705] Համապատասխանաբար՝ КУКН, $32_{13}$, $33_{15}$, 35, лиц. стор., текст $I_{14}$, текст $II_{44}$, обор. стор., текст $III_{16}$; CTU I, A 3-5 $Ro_{13}$, A 3-5 $Vo_{15}$, A 3-9 $Ro_{14, 44}$, A 3-9 $Vo_{16}$,

[1706] КУКН, $241G_3$; CTU I, A 9-3 $VII_3$.

[1707] КУКН, 242 B $I_{19}$, $244_{17}$; CTU I, A 9-1 $Vo_{19}$, A 9-$4_{17}$.

[1708] Mayer 1983: 82f. (Z. 140).

մարտակառքի (GIŠ.GIGIR LUGAL-*ti*) և նրա «շքերթների արքայական մարտակառք»-ի (GIŠ.*šá šá-da-di* LUGAL-*ti*) մասին է խոսվում Թիգլաթպալասար III-ի տեքստերում[1709]: Ընդ որում, այստեղ «շքերթների մարտակառք» ասելով, չի բացառվում, որ ասորեստանյան գրագիրը մատնացույց է արել Խալդի աստծո մարտակառքը: Ինչպես վերը նշվեց, բիայնացիների պատկերացումներում Խալդի աստվածն էր պատերազմների ժամանակ առաջնորդում բանակը: Խալդի աստծո պաշտամունքի հետ է կապվում նաև ուրարտական պատկերագրության մեջ հանդիպող «դատարկ կառք»-ի մոտիվը (նկ. Բ-16/2)[1710]:

Ինչ վերաբերում է ուրարտական բանակի մարտակառքերի թվին, ապա կարելի է կարծել, որ այն անցնելու էր մի քանի հարյուրը: Նկատենք, որ ասորեստանյան նահանգային զորագունդը պարտադիր ուներ թե հեծյալ ջոկատ, և թե մարտակառքերի խումբ՝ առնվազն 10 միավոր[1711]: Եթե նման հաշվարկը ընդունելի լինի ուրարտական բանակի պարագայում, ապա կարելի է կարծել, որ միայն մարզային զորագնդերում դրանց թիվն առնվազն հասնելու էր մի քանի հարյուրի: Նկատենք, որ Բաստամի ամրոցի երեք ախոռները միասին տեղավորել են մոտ 160-170 ձի: Եթե նշված ձիերի մոտ 1/4-րդը առանձնացնենք մարտակառքերի համար (40-45 ձի կամ 10-15 մարտակառք) և հաշվի առնենք նաև նման կենտրոնների թիվը, ապա կարելի է նշել, որ միայն բերդաքաղաքներում և խոշոր ամրոցներում տեղակայված մարտակառքերի թիվը կազմելու էր առնվազն մոտ 100 միավոր: Ի լրումն՝ «արքայական գնդի» հեծյալ և կառամարտիկ զորամիավորումների տեղակայման վայրերում պահվող մարտակառքերը: Հետևաբար, ուրարտական բանակում կայսերական շրջանում առնվազն 5-600 մարտակառքերի գոյությունը ամենևին էլ հեռու չպետք է լինի իրականությունից[1712]:

---

[1709] Tadmor, Yamada 2011, No. 9:12′. Նման արքայական մարտակառքի պատկերում կարելի է տեսնել ուրարտական բրոնզե թիթեղներից մեկի վրա: Տե՛ս Sevin 2007: 721ff., Res 3.

[1710] Տե՛ս Calmeyer 1974: 49ff.; նույնի՝ 1991b: 313ff. Տե՛ս նաև Salvini 1989: 86; Պետրոսյան 2006, էջ 40 հաջորդիվ:

[1711] Postgate 2000: 90 (lns. 6-7). Հմմտ. Lanfranchi, Parpola 1990, No. 215: 6-7.

[1712] Որպես օրինակ նշենք, որ կրետե-միկենյան դարաշրջանի կենտրոններից մեկից՝ Կնոսսոսից գտնված և «գծային B» գրով գրված չորս տեքստերում նշված էր պալատի ախոռներում պահվող մարտակառքերի թիվը, ընդ որում, դրանցից մեկում նշված թիվն անցնում էր 200-ից (Archer 2010: 59. Տե՛ս նաև Feldman 2010: 86f.): Միայն Նուզի քաղաքը, որը գտնվում էր Արրապխեի խուրրիական թագավորության կազմում, կարող էր դուրս բերել գրեթե 300 մարտակառք: Առնվազն մի քանի հարյուր մարտակառք կարող էր դուրս բերել Ուգարիթը (Drews 1993: 107 and n. 11): Քադեշի ճակատամարտում խեթական տերությունը դուրս էր բերել իր և դաշնակիցների ավելի քան 3500 մարտակառք (Drews 1993: 133): Ասորեստանյան աղբյուրներում պահպանված մարտակառքերի ամենամեծ թիվը վերաբերում է Սալմանասար III-ի իշխանության տարիներին, երբ նրա արձանագրություններից մեկում նշվում է 2002 մարտակառքերի համար ձիեր խլելու մասին: Տե՛ս Grayson 1996: 41 (A.0.102.6 iv 47): Վերջինիս դեմ

### 2.3.7.2. **Հեծելազորը**

Ուրարտուն հին Առաջավոր Ասիայի երկրների շարքում թերևս առաջինն էր, որի բանակի կազմում որպես առանձին զորատեսակ ձևավորվեց հեծելազորը: Ոչ սեպագիր աղբյուրները, ոչ հնագիտական տվյալները չեն վկայում այս զորատեսակի գոյության մասին Հայկական լեռնաշխարհից դուրս ընդհուպ մինչև Ք.ա. 1-ին հազ-ի սկզբները[1713]: Այստեղ նշենք, որ խոսքը չի վերաբերում սուրհանդակներին. $^{lú}$*pētḫallu*՝ «հեծելակ» տերմինը, որը հանդիպում է թե՛ խեթական, և թե՛ բաբելոնյան տեքստերում, սկզբնապես վերաբերում էր միայն հեծյալ սուրհանդակներին[1714]: Չի բացառվում առանձին փոքր հեծյալ խմբերի գոյությունը Ք.ա. II հազ-ի երկրորդ կեսի բանակ-ներում[1715], ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի որոշ ցեղերի մոտ (տե՛ս վերը 2.1): Ասորեստանյան բարձրաքանդակներում Ք.ա. 9-րդ դարի սկզբներից հանդիպող հեծյալ զինվորները դեռ կատարում էին նույն դերը, ինչ կառամարտիկները: Մասնավորապես, մշտապես զույգերով ընթացող հեծյալներից մեկը կառավարում էր երկու ձիերին էլ՝ բռնելով նրանց սանձերից և իր վահանով պաշտպանում մյուս հեծյալին, մինչ վերջինս կարող էր ազատորեն օգտագործել նետ ու աղեղը[1716]: Անգամ Ք.ա. 9-րդ դ-ի կեսերին հեծյալը դեռևս չուներ ինքնուրույնություն և կռվում էր մարտակառքի անձնակազմի հետ փոխհամաձայնեցված: Թեև Ասորեստանում դեռևս Սալմանասար III-ի օրոք հիշատակվում է հեծյալների բավական մեծ թիվ՝ մոտ 5 հազ. 500 մարդ[1717], սակայն, որպես ինքնուրույն զորատեսակ հեծելազորն այստեղ ձևավորվեց բավական ուշ՝ Ք.ա. 8-րդ դ-ի երկրորդ կեսին միայն՝ Թիգլաթպալասար III-ի ռեֆորմների շնորհիվ կամ անգամ Սարգոն II-ի օրոք[1718]: Դա պայմանավորված էր հզոր հեծելազոր ունեցող հակառակարոդների՝ ուրարտական տերության, արամեական ցեղապետությունների, ինչպես նաև արևմտյան Իրանում հայտնված մարական ցեղերի դեմ մղվող պայքարով:

Ուրարտական հեծելազորի մասին առաջին վկայությունները, ինչպես մարտակառքերի դեպքում, թվագրվում են Իշպուինիի կամ Իշպուինի և Մենուայի «համատեղ գահակալության» ժամանակաշրջանով, ինչպես օրինակ, Վերին Անձավի վերոհիշյալ նվիրատվական վահանի վրա պատկերված հեծյալները (նկ. Բ-17/1-4)[1719]:

---

հանդես եկող սիրիական թագավորությունները միասին դուրս էին բերել գրեթե 4 հազ. մարտակառք, ինչպես նաև մոտ 2 հազ. հեծյալ (A.0.102.2 ii 89-95): Այս թվերի համար տե՛ս և հմմտ., սակայն, De Odorico 1995: 103ff. Հմմտ. Cantrell 2011: 36ff.

[1713] Fuchs 2005: 40.

[1714] Mayer 1978: 181; Dalley 1985: 37; Beal 1992: 190; Lorenz, Schrakamp 2011: 141 and n. 75.

[1715] Beal 1992: 191ff.; Vita 1999: 495; Vidal 2006 [2007]: 699ff.

[1716] Littauer, Crouwel 1979: 134f.; Dalley 1985: 37; Anglim *et al*. 2002: 89; Nadali 2010: 132; Archer 2010: 70ff.

[1717] Grayson 1996: 41 (A.0.102.6 iii 47-48).

[1718] Dalley 1985: 37; Drews 1993: 166; Nadali 2010: 133; Dezső 2012b: 19ff.

[1719] Belli 1999a: 37ff.

Ուրարտական աղբյուրներում հեծելազորի առաջին հիշատակումները, ինչպես նաև հայտնաբերված ասպազենի զգալի մասը նույնպես թվագրվում է այս ժամանակաշրջանով: Ուրարտական հեծելազորը (PIT.ḪAL.LU$^{(MEŠ)}$ / $^{lú}$*pētḫallu*) մի քանի անգամ հիշատակվում է նաև Ուաուշի ճակատամարտի նկարագրության ժամանակ (նկ. Բ-17/1 – Բ-19/5)[1720]: «Լուվրի աղյուսակ»-ի պնդմամբ՝ ուրարտացի գերիների մեջ մեծ էր հեծյալների թիվը[1721]:

Ուրարտական նոր բանակի միջուկը՝ «արքայական գունդ»-ը, հիմնականում կազմված էր հեծելազորից և մարտակառքերից: Ասորեստանյան աղբյուրներում նկարագրվում են արքունի ձիաբուծարաններ, որոնք ձիերով ապահովել են բանակը: Բացի դա, ուրարտական բոլոր խոշոր կենտրոնները, կարելի է կարծել, ունեին ախոռներ. ախոռներ են բացվել Վերին Անձավում, Այանցում և Բաստամում, չի բացառվում դրանց գոյությունը Հայկաբերդում և Կարմիր բլուրում: Արքունի ախոռներ էին գտնվելու Տուշպայի մերձավորությամբ՝ «արքայական գնդի» տեղաբաշխման վայրերում: Այս ենթադրության օգտին կարող է վկայել նաև այն փաստը, որ Վանա լճից հյուսիս-արևելք ընկած հետագայի Մեծ Հայքի Այրարատ նահանգի Ծաղկոտն գավառը եղել է հայոց բանակի բուն բանակատեղիներից մեկը, որի խոշոր ավաններից Շահապիվանում, ուր անցկացվել են նավասարդյան խաղերը, եղել է ձիարշավի հրապարակ և ռազմական այլ հարմարություններ[1722]:

Բաստամում բացված այսպես կոչված «Արևելյան կառույցը» (*Ostbau*) արքունի ախոռ էր՝ ձիավարժության հրապարակով, ընդ որում, ախոռում կարող էր պահվել մոտ 60-70 ձի, իսկ ընդհանուր առմամբ՝ Բաստամի ախոռները կարող էին տեղավորել 160-170 ձիերի (տե՛ս ստորև)[1723]: Արքունի ախոռների հիմնական մասը, հնարավոր է, տեղավորել են մի քանի հարյուր ձի: Այստեղ նկատենք, որ, օրինակ, Մեգիդդոյի մոտ (Պաղեստին) բացված արքունի ախոռը, որը տեղավորում էր մինչև 450 ձի[1724], կրում էր ուրարտական նույնատիպ կառույցների ազդեցությունը[1725]: Եգիպտոսից հայտնի են մարտակառքերի զորանոցներ, որոնք ունեցել են վարժահրապարակ, ախոռներ և արհեստանոցներ: Զորանոցներից մեկը տեղավորում էր 350 ձի[1726], մյուսում կարող էր

[1720] Mayer 1983: 78f. (Z. 105), 82f. (Z. 138-139).
[1721] Mayer 1983: 80ff. (Z. 137-138).
[1722] Հակոբյան և այլք 1998, էջ 51:
[1723] Kleiss 1980: 300; նույնի՝ 1988a: 17.
[1724] Stillman, Tallis 1984: 37; Gabriel 2003: 298ff.; Rocca 2010: 23ff., 43; Cantrell 2011: 88, 113. Cf. Kempinski, Reich 1992: 224ff.
[1725] Оганесян 1985b: 147; Kroll 1989: 329ff.; նույնի՝ 1992: 67ff.
[1726] Spalinger 2005: 227; Feldman 2010: 85f.

պահվել մինչև 500 ձի, ինչպես նաև մարտակառքերը[1727]: Նման մի կառույց էր, թերևս, մերձուրմյան ավազանում ընկած Անիաշթանիա քաղաքը, որին ասորեստանյան աղբյուրը բնորոշում է իբրև Ռուսայի «երամակների տուն» ($^{URU}$*aniaštania* É *sugullāte*)[1728]: Եթե ընդունենք, որ Անիաշթանիային շրջակա 17 բնակավայրերը կոչված էին հոգալու նրա կարիքները (նրանում հիշատակվում են հավաքված բերքի և ծղոտի պաշարներ, որ այրել էին ասորեստանցիները[1729]), ապա կարելի է ենթադրել, որ «քաղաք» անվան տակ գործ ունենք «արքայական գնդի» հեծյալ ստորաբաժանման մշտական տեղակայման բավական մեծ զորանոցի հետ: Այն կարող էր ունենալ ամրություններ, ինչպես ասորեստանյան ամրացված ճամբարը (տե՛ս նկ. Բ-42/1-2) և, ըստ այդմ, ընկալվել իբրև «քաղաք»՝ հիշեցնելով Բաստամին մերձակա «Արևելյան կառույց»-ը (նկ. Բ-82/2): Նման զորանոցներ կարող էին լինել նաև ասորեստանյան նույն աղբյուրի հիշատակած Թարուի և Թարմաքիսա «քաղաքներ»-ը Բարի երկրում. դրանց ներսում էին պահվում «արքայական գնդի» պահեստային ձիերը[1730]:

Ի դեպ, ուրարտական վիմագիր արձանագրություններից մեկում, բայց, ցավոք, խիստ պակասավոր կոնտեքստում հիշատակվում են ինչ-որ պաշտոնյաներ/ծառայողներ ($^{LÚ}$É.GAL, $^{LÚ}$ÌR/ERUM), ինչպես նաև մոտ 3 հազ. 500 ձի[1731]: Հնարավոր է, տեքստում մատնացույց է արվել արքունի ձիերի ինչ-որ մի քանակ, առավել ևս, ուրարտական վիմագիր արձանագրությունների դիվանում երբևէ չի հիշատակվում որևէ պաշտոնյա նման կոնտեքստում[1732]: Ի դեպ, Կալխուից հայտնաբերված և ասորեստանյան արքունի բանակի ձիերի ցանկերը պարունակող տեքստերում՝ այսպես կոչված «Նիմրուդի ձիերի ցուցակներ»-ում հանդիպող ձիերի հանրագումարի առավելագույն թիվը կազմում է մոտ 3 հազ. 400 ձի[1733]:

Եթե հաշվի առնենք այն հնարավորությունը, որ բերդաքաղաքների ախոռների ձիերի առնվազն 3/4-րդը նախատեսված էին լինելու հեծնելու համար և ընդունենք մարտակառքի և հեծյալների 1 : 10-ի հարաբերակցությունը[1734], ապա կարելի է ենթադրել, որ միայն խոշոր կենտրոնների ախոռներում պահվող ձիերի քանակը հասնելու էր մոտ 1-1.2 հազ-ի կամ մոտ 80-100 մարտակառք և 750-900 հեծյալ: Այստեղ

[1727] Bietak, Forstner-Müller 2011: 44ff and Fig. 15.
[1728] Mayer 1983: 86f. (Z. 184).
[1729] Mayer 1983: 86f. (Z. 186).
[1730] Mayer 1983: 86f. (Z. 189-191).
[1731] КУКН, 483$_{1-2}$, прим. 1; CTU I, A 18-5$_{1-2}$.
[1732] Վերջինիս գործառույթների համար տե՛ս 1.1.5.3.:
[1733] Dalley, Postgate 1984: 195ff. (No. 103 iii 9).
[1734] Դատելով ասորեստանյան աղբյուրներից՝ մարտակառքերի և հեծյալների թվի հարաբերակցությունը Ք.ա. 9-րդ դ-ի երկրորդ կեսին կազմում էր 1 : 2-ի կամ 1 : 3-ի: Սարգոնյան շրջանում այն արդեն հասնում էր մինչև 1 : 10-ի: Տե՛ս Dalley 1985: 38.

նկատենք նաև, որ յուրաքանչյուր մարտակառքի համար առանձնացվում էր երեք ձի, որից երկուսը լծում էին կառքին, իսկ երրորդն առանձնացվում էր որպես պահուստային: Սա տարածված էր հինարևելյան երկրների բանակներում[1735], և ուրարտական բանակը բացառություն չէր[1736]:

«Արքայական գնդի» ախոռների թիվը հայտնի չէ, սակայն, եթե միայն մերձուրմյան ավազանում դրանց թիվն առնվազն երեքն էր, չհաշված Բաստամի երեք ախոռները, ապա տերության ողջ տարածքում տեղաբաշխված արքունի զորքի ախոռների թիվը կարող էր հասնել մինչև 20-ի՝ մոտ 5 հազար ձիերով, որից մոտ 4 հազ-ը՝ նախատեսված հեծելազորի համար: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ ձիերը պահվում էին ախոռներում հիմնականում վարժեցման ժամանակ, որից հետո կարող էին պահվել ցանկապատված և մասամբ ծածկված տարածքներում[1737]: Ըստ այդմ, ձիերի թիվը կարող էր լինել և շատ ավելին:

2.3.7.3. **Հետևակը**

Հետևակը ուրարտական բանակի առավել մեծաքանակ զորատեսակն էր: Սակայն, ուրարտական հետևակն այնուամենայնիվ չուներ այն նշանակությունը, որը տեսնում ենք, օրինակ, ասորեստանյան բանակում: Ասվածի վկայություն կարող է լինել նաև այն փաստը, որ ռազմական թեմատիկայով ուրարտական պատկերագրության մեջ ունենք հետևակայիններին պատկերող եզակի օրինակներ (նկ. Բ-20/1-4 – Բ-22/1-3)[1738], մինչդեռ՝ կառամարտիկներն ու հեծյալները ներկայացված են լայնորեն: Իսկ ասորեստանյան պատկերագրության մեջ ճիշտ հակառակն է. պատկերներից դատելով՝ հետևակը կազմել է բանակի հիմնական զանգվածը[1739]: Այս փաստը, կարծում ենք, չպետք է պայմանավորել այն հնարավորությամբ, որ ուրարտական իշխող խավը, որը, ինչպես նշվեց, ծառայում էր հիմնականում հեծելազորում և մարտակառքերից կազմված զորամասերում, ուրարտական տերունական արվեստում բնականաբար ներկայացված էր լինելու առավել լայնորեն:

Ուրարտական աղբյուրներում հետևակայիններ ($^{LÚ}$ZAB/ÉRIN.GÌR.2$^{MEŠ}$) հիշատակվում են երեք տեքստերում[1740]: Մի քանի այլ տեքստերում ևս $^{LÚ}$ZAB/ÉRIN$^{(MEŠ)}$՝ «զինվոր/զորք» գաղափարագրով արտահայտվել է հետևազորը[1741]:

---

[1735] Cantrell 2011: 60f., n. 2 (նշված գրականությամբ):
[1736] Եսայան 1994, էջ 38:
[1737] Cantrell 2011: 9.
[1738] Տե՛ս ստորև, ծնթ. 1812-1813:
[1739] Reade 1972: 103ff.; Grayson 1995: 960; Nadali 2010: 134f.
[1740] КУКН, 35 лиц. стор., текст $I_{15}$, обор. стор., текст $III_{18}$, $45_7$, $241G_5$; CTU I, A 3-9 $Ro_{15}$, A 3-9 $Vo_{18}$, A 5-$10_7$, A 9-3 $VII_5$.
[1741] КУКН, $32_{14}$, $33_{17}$; CTU I, A 3-5 $Ro_{14}$, A 3-5 $Vo_{17}$ ևն:

«Լուվրի աղյուսակ»-ը մանրամասներ է հայտնում ուրարտական հետևակի մասին: Աղբյուրը հիշատակում է նետաձիգների (*ṣāb* GIŠ.BAN / $^{(giš)}$*qašti*)[1742], պարսատիկավորների (*nāš* $^{(giš)}$*kabābi*)[1743], տեգավորների կամ նիզակակիրների (*nāš* $^{(giš)}$*azmarê*)[1744], որոնք երբեմն նույնացվում են վահանակիրների հետ (*ṣāb* $^{(giš)}$*arīti*), և զրահավորված ռազմիկների (*qurādišu ša taḫlupti*)[1745]: Նույն աղբյուրում *ռազմիկ* ($^{lú}$*mundaḫṣu*) բառը, որը հանդես է գալիս երկու անգամ, արտահայտել է ուրարտական բանակի նետաձիգ և տեգավոր զինվորների. $^{lú}$*mundaḫṣišu tukulti ummānišu nāš qašti azmarē…* «*նրա ռազմիկները՝ նրա բանակի հույսը, որոնք կրում էին աղեղներ և տեգեր…*»[1746]:

Հետևակի զգալի մասը տեղաբաշխված էր տերության ամրոցներում և խոշոր կենտրոններում որպես կայազորային զորքեր:

### 2.3.7.4. **Օժանդակ զորքերը և գումակը**

Բանակի օժանդակ ուժերի շարքում միանշանակ կարելի է տեսնել զանազան ինժիներական աշխատանքներ իրականացնող սակրավորների[1747]: Օրինակ, ասորեստանյան մի քանի տեքստերում նշվում է ուրարտական զինվորների կողմից ճանապարհները բարեկարգելու, կամուրջները նորոգելու մասին[1748]: Ուրարտական տեքստերը թեև բազմիցս են նշում հակառակորդի ամրացված քաղաքները կռվում գրավելու մասին (URU …… *agununi manu gunuša ḫaubi*), սակայն, ցավոք, ուրարտական պատկերագրության մեջ հայտնի չէ ամրոցի գրավման և ոչ մի դրվագ: Ըստ այդմ՝ դժվար է միանշանակ պնդել, թե արդյո՞ք ուրարտական բանակն օգտագործել է պաշարողական մեքենաներ: Պաշարողական մեքենաները լայնորեն հայտնի էին հին Առաջավոր Ասիայի տարբեր բանակներում և լավագույնս վկայված են ասորեստանյան պատկերագրության մեջ (նկ. Բ-23/1-2)[1749]: Միակ, առայժմ դեռ չհրատարակված ուրարտական օրինակը՝ բրոնզե գոտի՝ ամրոցի պաշարման դրվագով, այնուամենայնիվ չի պատկերում պաշարողական մեքենաներ: Փոխարենը՝ զինվորները զինված են այսպես կոչված «պաշարողական» կամ «f-աձև» մեծ վահաններով[1750], որոնք բռնում էին առանձին զինվորներ՝ վահանակիրներ, և որոնք թույլ էին տալիս

[1742] Mayer 1983: 80f. (Z. 136).
[1743] Mayer 1983: 96f. (Z. 289).
[1744] Mayer 1983: 96f. (Z. 289).
[1745] Mayer 1983: 80f. (Z. 131).
[1746] Mayer 1983: 80f. (Z. 136, հավանաբար նաև տող 104-ում, որն ունի վնասված հատվածներ).
[1747] Есаян 1966: 113 сл.
[1748] Deller 1984: 104f. (Nr. 3.1 Rs 5-6); Parpola 1987, No. 29: r.5-6.
[1749] De Backer F. 2007a: 45ff.; նույնի՝ 2012; Fuchs 2008: 53ff., 79ff., Abb. 1-3; նույնի՝ 2011: 396ff. Տե՛ս նաև Houwink ten Cate 1984: 67ff.; Beckman 1995: 23ff.; Anglim *et al.* 2002: 185ff. ևն:
[1750] Շնորհակալություն ենք հայտնում Մ. Բադալյանին՝ այդ գոտու գծանկարը մեզ տրամադրելու համար: Նման վահանների կարելի է հանդիպել ասորեստանյան պատկերագրության մեջ: Տես, օրինակ, Fuchs 2008, Abb. 3.

պաշարողներին պաշտպանվել նաև վերևից՝ ամրոցի պարիսպներից և աշտարակներից կատարվող նետաձգությունից և քարանետումից: Ի դեպ, նման պաշարողական վահաններ լայնորեն հայտնի են ասորեստանյան և ընդհանրապես՝ հին առաջավորասիական տարբեր բանակներում (տե՛ս նկ. Բ-24/1-2)[1751] և որոնց կիրառությունը ուրարտական բանակում ենթադրվել է բավական վաղուց[1752]:

Ուրարտական բանակի կազմում գործել են առաջապահ, հետախուզական ջոկատներ և հետախույզների ցանց: «Լուվրի աղյուսակ»-ում, օրինակ, Ուայախս քաղաքը համարվում է Ռուսայի հետախույզների բնակության վայրը[1753]: Հետաքրքիր է, որ ասորեստանյան մեկ այլ աղբյուր հայտնում է ուրարտական բանակի հետախույզների հրամանատարի մասին (LÚ.GAL *daiāli*), ով ուղեկցում էր ջորիների քարավանին Շուբրիայի տարածքում[1754]: Ուրարտական հետախույզներ են հիշատակվում նաև ասորեստանյան մեկ այլ տեքստում[1755]: Կումմեի առաջնորդ Արիյեի մոտ գնացող և ասորեստանցի հետախույզների կողմից ձերբակալված ուրարտացի լրտեսի (LÚ.EME, բառացի՝ «լեզու») մասին է նշվում ասորեստանյան զեկուցագրերից մեկում[1756]: Ուրարտական արքունիքն ասորեստանցիների մասին տեղեկություններ է ստացել նաև երկու տերությունների սահմանագոտում ընկած երկրների առաջնորդներից, օրինակ՝ Շուբրիայի արքայից[1757]: Ուրարտացիների մասին այդ երկրների առաջնորդների ուղարկած տեղեկությունների բազմիցս կարելի է հանդիպել նաև նորասորեստանյան շրջանի արքունի գրագրություններում:

Ունենալով ճանապարհների բարեկարգ ցանց, ուրարտացիներն արագ կերպով կարողանում էին իրականացնել զորքերի տեղաշարժեր: Օգտագործվել են նաև անվավոր փոխադրամիջոցներ, որոնց որևէ նկարագրություն, ցավոք, ոչ տեքստերը, և ոչ էլ հնագիտական նյութերը չեն տալիս[1758]: Փոխարենը, եթե հաշվի առնենք, որ ասորեստանյան բանակի յուրաքանչյուր զորագունդ ունեցել է իր սեփական փոխադրամիջոցները (Մազամուայի նահանգային զորագունդը, օրինակ, ուներ 20 «լայնանիվ» սայլ, որից 10-ը ձիաքարշ էին, մյուսներին լծում էին ջորիներ[1759]), ապա ենթադրելի է, որ նման փոխադրամիջոցների պետք է տիրապետեր նաև ուրարտական

[1751] De Backer 2007a: 58, Fig. 21; նույնի՝ 2011: 1ff., Fig. 2; 8ff., Fig. 20, 22.
[1752] Есаян 1962: 205.
[1753] Mayer 1983: 98f. (Z. 299-301, 303-305).
[1754] Lanfranchi, Parpola 1990, No $35_{23}$.
[1755] Lanfranchi, Parpola 1990, No. 12: 6′.
[1756] Lanfranchi, Parpola 1990, No. 55.
[1757] Մեկնաբանության համար տե՛ս Parker 2009: 191.
[1758] Մեզ հասած օրինակները, որոնք պատկերում են քառանիվ սայլ, կարծես, կիրառվել է ծիսական նպատակներով: Տե՛ս Calmeyer 1974: 49ff.; նույնի՝ 1991b: 313ff.: Տե՛ս նաև Gökce 2011: 21ff., Çiz. 1-3.
[1759] Lanfranchi, Parpola 1990, No. $215_{7-8}$.

բանակը[1760]: Բանակի գումակում սայլերի հետ միասին օգտագործում էին բեռնակիր ձիերի, ջորիների և ավանակների: Ասորեստանյան տեքստերից մեկում նշվում է ռազմերթի դուրս եկած ուրարտական զորագնդին ուղեկցող բեռնակիր կենդանիների մասին (ANŠE.*aṣappu*)[1761]:

2.3.7.5. **Սպասարկող անձնակազմը**

Ուրարտական բանակում, անկասկած, գտնվել է նաև քաղաքացիական սպասարկող անձնակազմ: Նրանց շարքում կարող ենք տեսնել գրագիրների, որոնք արձանագրություններ են թողել արշավանքի վերջնակետ հանդիսացող վայրերում, ինչպես նաև արձանագրել արշավանքի ընթացքը՝ հաշվետվությունը արքունի դիվանում պահելու համար: Անկասկած, եղել են «հաշվապահներ», գուցե՝ նույն գրագիրները, որոնք արձանագրել են ձեռք բերված ավարը: Ամենայն հավանականությամբ՝ բանակին ուղեկցել են քրմեր/գուշակներ, ինչպես ասորեստանյան բանակում էր. հայտնի է, որ ասորեստանյան զորքերին ուղեկցել են քրմեր, ովքեր, օրինակ, գուշակություններ են իրականացրել թռչնի թռիչքի միջոցով[1762]:

Եթե ճիշտ է մեր կարծիքը՝ «Սարդուրյան տարեգրության» 7-րդ սյունակում տեսնելու բանակին հատկացվող պետական միջոցների ցանկը, ապա այդտեղ նշված 121 մարդիկ կամ «ժողովուրդ»-ը (1 ME 21 $^{LÚ}$UN$^{MEŠ}$)[1763], կարող էին հանդիսանալ բանակին ուղեկցող վերը նշված անձինք կամ «գիտուններ»-ը (LÚ.*ummānē*)[1764], ինչպես նրանց կոչում էին ասորեստանցիները[1765]: Բացի դա, տարեգրության այդ հատվածում նշված 336 «ծառաներ»-ը (3 ME 36 $^{LÚ}$ERUM$^{MEŠ}$) կարող էին կազմել բանակի սպասարկող անձնակազմը, օրինակ, զինագործներ, փայտագործ արհեստավորներ, դերձակներ, խոհարարներ ևն (տե՛ս 4.2.3.):

Այս առումով հետաքրքիր է, որ ասորեստանյան նահանգային զորագնդերից մեկի կազմում հիշատակվում են մոտ 100 քաղաքացիական անձինք, այդ թվում՝ 12 դերձակ, 20 փայտագործ վարպետ, 12 «մաքսավոր», 7 հացթուխ, 10 խոհարար և 8 գրագիր, ընդ որում՝ բոլորն էլ ասորեստանցի[1766]: Հայտնի է, որ զորաբանակին ուղեկցել են նաև երաժիշտներ[1767]:

---

[1760] Տե՛ս Оганесян 1966: 109: Հմմտ. նաև Есаян 1966: 110.
[1761] Lanfranchi, Parpola 1990, No. 88$_{9-10}$.
[1762] Radner 2009: 228ff.
[1763] КУКН, 241G$_6$; CTU I, A 9-3 VII$_6$.
[1764] Մանրամասն տե՛ս Nadali, Verderame 2014: 553ff.
[1765] Տե՛ս, օրինակ, Postgate 2000: 90; Lanfranchi, Parpola 1990, No. 215: 19.
[1766] Postgate 2000: 89f., 93. Cf. Lanfranchi, Parpola 1990, No. 215; Fales 2010a: 134ff. Բանակին ուղեկցող արհեստավորների համար տե՛ս նաև Gabriel 2003: 120.
[1767] Fales 2010a: 141.

### 2.3.7.6. **Հանդերձանքը և զինվածությունը**

Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների ռազմիկների առաջին պատկերումները ի հայտ են գալիս Սալմանասար III-ի ժամանակ՝ Բալավաթյան դարպասների բրոնզե թիթեղների վրա: Նրանք «ուրարտացի» Արամուի ռազմիկներն էին, որոնց զենքն ու հանդերձանքը շատ ավելի հիշեցնում էր փոքրասիական/լուվիական ռազմիկների զինավառությունը, քան՝ ուրարտացիների[1768]: Ինչպես վերը նշվեց, Արամուի «ուրարտացի» հորջորումն ամենևին չի կարող հիմք ծառայել նույնացնելու նրա երկիրը Բիայնիլիի հետ և, ըստ այդմ, այս տարբերությունը նույնպես պատահական լինել չի կարող: Մյուս կողմից, թեև ընդունված է կարծել, որ ուրարտական զինվորների հանդերձանքը նման է ասորեստանյանին[1769], սակայն, այն տարբերվում է մի քանի ուրույն, յուրահատուկ կողմերով:

Ուրարտական բանակի զինվածությանը վերաբերող մեր հիմնական աղբյուրը հնագիտական բավական հարուստ նյութերն են[1770]: Որոշակի պատկերացում են տալիս նաև «Լուվրի աղյուսակ»-ի այն տվյալները, որոնք վերաբերում են Ուաուշի ճակատամարտին կամ Մուծածիրից տարված ռազմավարի թվարկմանը[1771]: Աղբյուրների երրորդ խումբը ասորեստանյան բարձրաքանդակներն են, որոնցից մի քանիսը, կարծես, պատկերում են ուրարտական բանակի զինվորների[1772]:

Ուրարտական պատկերագրության մեջ զինվորները, սովորաբար պատկերվում են մարտակառքերով կամ հեծյալ, շատ ավելի հազվադեպ՝ հետևակ, միշտ անմորուս են[1773՝] կարճ տունիկայով, երբեմն՝ զրահավորված (տես, օրինակ, նկ Բ-11/1, Բ-14/1, 4), կրում են ասորեստանյան տիպի կոնաձև սաղավարտներ (նկ Բ-25/1-12, Բ-26/1-6): Հանդերձանքի մաս են կազմել բրոնզե գոտիները, ինչպես նաև ուսակալները, որոնց ամրացվել է թիկնոցը (նկ Բ-28/1-4, Բ-29/1-2): Հայտնաբերված ուսակալների թիվը հուշում է, որ զինվորների զգալի մասը կրել է թիկնոց, ինչը կարող էր պայմանավորված լինել նաև բարձրլեռնային պայմաններով:

Զինվորների պաշտպանական հանդերձանքի մաս են կազմել սովորաբար փոքր չափ ունեցող, նաև հեծյալների համար դյուրակիր վահանները՝ պատրաստված

---

[1768] Бациева 1953: 26 сл. Հմմտ. Piller 2012: 379ff.

[1769] Пиотровский 1959a: 166 сл.; նույնի՝ 1962a: 341. Ասորեստանյան զինվորների հանդերձանքի համար տե՛ս Postgate 2001: 373ff.

[1770] Özgen 1983: 111ff.; նույնի՝ 1984: 91ff.; Seidl 1988a: 169ff.; նույնի՝ 2004; Born, Seidl 1995; Taşyürek 1975a; Kellner 1991a ևն: Տե՛ս նաև Zimansky 1998: 210-214 էջերում տրված գրականության ցանկը:

[1771] Mayer 1983: 104ff. (Z. 349-409).

[1772] Barnett, Falkner 1962, Pls. LVIII, LXV, LXVII. Համադրության համար տե՛ս Nadali 2010: 126f.

[1773] Ուրարտական մի մարտակառքի վրա կանգնած նետաձիգի պատկերումը մորուսով, կարծում ենք, գծապատկերի սխալ վերարտադրության արդյունք է: Տե՛ս և հմմտ. Çavuşoğlu 2005: 365ff., Figs. 1a, 2.

հիմնականում կաշվից, շատ ավելի քիչ՝ բրոնզից (նկ Բ-31/1-3): Զինվորները հաճախ կրել են զրահներ (ուրարտ. *qarqarani*[1774]), ինչը վկայված է թե պատկերագրության մեջ[1775], և թե հնագիտորեն[1776]: Դեռևս կիրառության մեջ էին զրահաշապիկները՝ խոշոր բրոնզե սկավառակներով[1777], սակայն, առավել տարածվածը թեփուկավոր զրահն էր (նկ Բ-32/1-3, 6)[1778]: Նման զրահի հատվածներ և առանձին թիթեղներ են հայտնաբերվել Կարմիր բլուրի պեղումներից: Դրանցից մեկը, որ առավել ամբողջական է, պատրաստվել է իրար կարված մոտ 140 բրոնզե թիթեղներից, որոնցից յուրաքանչյուրն ունի մինչև 5.2 սմ երկարություն և 1.7-1.9 սմ լայնություն՝ մոտ 0.1 մմ հաստությամբ: Կարմիր բլուրի թիվ 38 սրահից գտնվել են զրահի 3 սմ երկարությամբ, 1.8 սմ լայնությամբ 159 և 4.8 սմ երկարութամբ, 2.2 սմ լայնությամբ 13 երկաթե թիթեղներ, թիվ 40 սրահից՝ նույն չափի շուրջ 150 և քիչ ավելի մեծ չափի 20 թիթեղ և այլն[1779]: Արգիշթիխինիլիի թիվ 3 առանձնատնից ևս հայտնաբերվել են երկաթե թեփուկավոր զրահի մնացորդներ[1780]: Ալթըն-թեփեի պեղումներից հայտնաբերվել են թեփուկավոր զրահի բրոնզե 52 թիթեղներ՝ 7.8 սմ երկարությամբ և 2.4 սմ լայնությամբ, յուրաքանչյուր կողմից՝ երեքական անցքով, որոնցով թիթեղները կարվել են բրդե կամ կաշվե գործվածքին: Այստեղից հայտնի են նաև երկաթե զրահի մի քանի թիթեղներ[1781]: Թեփուկավոր զրահի մի քանի թիթեղ է հայտնաբերվել Վանի միջնաբերդին մերձակա քաղաքային բնակատեղիի պեղումներից[1782] և Այանցից (Բ-32/4-5, 7)[1783]:

Թեփուկավոր զրահի օրինակներ հայտնի են Խաթթուսասից, Ուգարիթից, Միտաննիից (Նուզի), հետագայում նաև՝ Ասորեստանից ևն[1784]: Նման զրահ կրում էին հիմնականում վերնախավը ներկայացնող կառամարտիկները: Նուզիից հայտնաբերված տեքստերից մեկում նշվում է ոմն Թեխիպ-Թիլլային տրված զրահի մասին՝ կաշվի վրա կարված 400 մեծ և 280 փոքր բրոնզե թիթեղներից, «խանիգալբատյան» (միտաննական) զրահները պատրաստվում էին մինչև 1000 և ավելի թիթեղներից. մեկ այլ ռազմիկի՝ Վուրուկուննիին տրված զրահը, օրինակ,

---

[1774] КУКН, 227, лиц. стор. $_2$; CTU IV, B 8-17 $Ro_2$. Խուրր. զուգահեռի համր տես և հմմտ. Diakonoff 1989: 98.
[1775] Եսայան 1994: 64-67, Աղ. 21/2; Taşyürek 1975a, Fig. 16l; Born, Seidl 1995: 151, Abb. 118; Çavuşoğlu 2004: 69, Res. 2, Çiz. 1.
[1776] Пиотровский 1955a: 30 сл, рис. 21, 23-25; Есаян 1962: 202 сл.; նույնի՝ 1986: 44 сл.
[1777] Ավետիսյան և Ավետիսյան 2008, էջ 376-377:
[1778] Եսայան 1965, էջ 278; Есаян 1962: 202 сл.; նույնի՝ 1986: 46 сл.; Özgen 1984: 112f.
[1779] Пиотровский 1955a: 9, 30 сл, рис. 2, 21, 23-25, Табл. XIV; նույնի՝ 1970, рис. 50; Есаян 1962: 202 сл.; նույնի՝ 1966: 99 сл.; նույնի՝ 1986: 47 сл.
[1780] Мартиросян 1974: 112, рис. 89б (10); Есаян 1986: 48.
[1781] Barnett, Gökce 1953: 125f., Fig. 6, Pl. XVIII/2.
[1782] Tarhan, Sevin 1990 [1991]: 434, Res. 22/4.
[1783] Çilingiroğlu 2001b: 28.
[1784] Muscarella 1988: 317ff., Nos. 451-549; De Backer 2011: 5ff., Figs. 6-8, 15-17, 20, 22-23, 25.

պատրաստված էր 598 մեծ և 540 փոքր թիթեղներից (Բ-33/1-2)[1785]: Զրահների ընդհանուր կշիռը կազմում էր 37-ից 58 ֆունտ կամ 17-ից մինչև 26 կգ[1786]: Առավել ծանր, ողջ մարմինը ծածկող զրահը, որը կարվում էր մինչև 4 հազ. թիթեղներից, կշռում էր մոտ 27 կգ[1787]: Նման զրահները գործնականում անխոցելի էին դարձնում զինվորի մամինը հակառակորդի նետերից[1788]:

Այդ կերպ էին պատրաստվում նաև սաղավարտները, հաճախ՝ ձիերի համար նախատեսված զրահները[1789]: Մեծ թիվ են կազմում ուրարտական սաղավարտները: Հայտնաբերվել են ինչպես ամբողջական, այնպես էլ՝ փլուզված պատերի ծանրության տակ ճզմված տասնյակ օրինակներ[1790]: Սաղավարտները կրել են կաշվե կամ քաթանե գլխանոցի վրայից, որոնց մնացորդները պահպանվել են Այանցից հայտնաբերված մի քանի սաղավարտների մեջ[1791]: Նույն կերպ են կրել նաև զրահը՝ բրդե գործվածքի վրայից[1792]: Ի դեպ, առայժմ Ուրարտուից չունենք որևէ փաստ, որը կվկայեր ձիերի՝ զրահներ կրելու մասին[1793], իսկ ուրարտական բրոնզե առարկաների թվում հանդիպող «ձիու պեկտորալներ»-ը (*Pferde-Pektorale*)[1794], հնարավոր է, ամենևին կապ չունեին ձիերի հանդերձանքի հետ և կարող են լինել զինվորների ուսակալներ (տե՛ս վերը)[1795]:

Ուրարտական մարտակառքերի խցիկի կողային հատվածներին ամրացված են եղել բրոնզե թիթեղներ, հետնամասում, հազվադեպ, վահան՝ պաշտպանելով թերևս զինվորների ոտքերը (նկ Բ-14/4)[1796]: Վահանների և որպես զրահ ծառայող բրոնզե թիթեղների նման կիրառություն տեսնում ենք նաև Միտաննիում (Արրապխեում)[1797], սիրիա-պաղեստինյան տարածաշրջանում[1798], Ասորեստանում[1799] և այլուր:

---

[1785] Kendall 1981: 202f.; Lion 2008: 74f. Տե՛ս նաև Hulit 2002: 44ff.
[1786] Stillman, Tallis 1984: 139f.; Drews 1993: 111; Dalley 1995: 417; Hulit 2002: 83f.
[1787] Dezső 2004: 322; Lorenz, Schrakamp 2011: 140.
[1788] Նման փորձի համար տե՛ս Hulit 2002: 116ff.
[1789] Kendall 1981: 202, 204ff.; Stillman, Tallis 1984: 140ff.; Drews 1993: 111. Մանրամասն տե՛ս Hulit 2002.
[1790] Kellner 1980 [1982]: 206, Taf. I.; Born, Seidl 1995: 54, Abb. 43. Ուրարտական սաղավարտների համար տե՛ս նաև Kellner 1980 [1982]: 205ff., Taf. I-XVI; Vanden Berghe, De Meyer 1982: 77ff., Nos. 14-26; Calmeyer 1991a: 123ff., Figs 6-20; Wartke 1993: 72, Abb. 27-29, Taf. 82; Born, Seidl 1995; Seidl 2004: 64ff.; Dezső 2001: 79ff.
[1791] Konakçı, Baştürk 2009: 187.
[1792] Есаян 1966: 102.
[1793] Հմմտ. Littauer, Crouwel 1984: 41ff., Pl. 1.
[1794] Haerinck, Overlaet 1984: 56f., Abb. 1, Taf. 1, Seidl 1986: 309ff., Abb. 1-2, Taf. I-II; նույնի՝ 2004, Tafel. 32/a-c, 33/a-b, Abb. 83; Mayer 1978: 185f.; Dezső 2006a: 117; Potts 2007: 154. Ձիերի հանդերձանքի համար տե՛ս Пиотровский 1959a: 151 сл.; նույնի՝ 1970, рис. 56-58; van Loon 1966: 113f.; Sevin 1978 [1979]: 111ff.; Gropp 1981: 99ff., Abb. 2-6; Seidl 1991: 79ff., etc.
[1795] Տե՛ս Grekyan, Kashani 2015: 154, Tab. 33, 34/1-3.
[1796] Taşyürek 1975b: 151ff.; Özgen 1983: 114f., Fig. Figs. 11-12; նույնի՝ 1984: 112ff., Figs. 38-41; Wartke 1993: 78, Abb. 31.
[1797] Lion 2008: 75.
[1798] Yadin 1963: 84.

Պատկերագրությունից դատելով՝ ուրարտական հեծյալների զինվածության մեջ է մտել թե աղեղը, թե նիզակը, երբեմն՝ սուրը, կրել են նաև փոքր շրջանաձև վահաններ (նկ. Բ-17/1 – Բ-19/5)[1800]: Այս առումով նրանց զինվածությունը հիշեցրել է անտիկ և վաղ միջնադարյան ծանրազեն հեծյալին[1801], մինչդեռ, ասորեստանյան բանակն ուներ թեթև հեծելազոր, որն իր հերթին ստորաբաժանվում էր հեծյալ նետաձիգների և նիզակակիրների/տեգակիրների (նկ. Բ-27/1-2): Նիզակը/տեգը ասորեստանյան հեծյալի հիմնական զենքն էր[1802]: Ի տարբերություն ուրարտացիների՝ նրանք չեն կրել վահաններ[1803]: Ասորեստանյան պատկերագրության մեջ վահանակիր հեծյալներ Սալմանասար III-ի իշխանության շրջանից հետո այլևս չեն հանդիպում[1804]:

Հեծյալների մի զգալի մասը ներգրավված է եղել թեթևազեն հեծելազորի մեջ, որը կազմված էր նետաձիգներից և նիզակակիրներից: Ընդ որում, ուրարտական հեծյալների կրած փոքր աղեղներն առավել արդյունավետ էին՝ ասորեստանյան հեծյալ-ների մեծ աղեղների համեմատությամբ[1805]: Բացի դա, պատկերագրությունից դատելով, հեծյալների նիզակները եղել են բավական կարճ և նմանվել են դրոտիկների[1806]: Հեծյալների մի մասն ունեցել է երկու նիզակ[1807], ինչը թույլ է տվել մարտին մասնակցել նախքան մերձամարտի մեջ մտնելը[1808], եթե, իհարկե, դա զույգ հեծյալների սխեմատիկ պատկերում չէր: Քարագյունդյուզի պեղումների ժամանակ բիայնական ազնվականի տնից հայտնաբերվել է նման բրոնզե մի նիզակ, որի կոթի երկարությունը հասնում էր 73.5 սմ-ի[1809]: Սովորական խողովակակոթառ նիզակածայրերի երկարությունը կազմել է 12-20 սմ, փոքր թիվ են կազմում տեգերը, որոնց շեղբի երկարությունը կազմում էր 30 սմ-ից ավելի[1810] և, թերևս, օգտագործել են ուրարտական ծանրազեն հեծյալները[1811]:

---

[1799] Littauer, Crouwel 1979: 103; Nadali 2010: 134.

[1800] Տես, օրինակ, Мартиросян 1964: 249, табл. XXVI-XXVII; Taşyürek 1975a, Figs. 7-9, Res. 29-31, 35-37; նույնի՝ 1977a: 158f., Figs. 6, 18; Özgen 1983: 127, Fig. 11; Calmeyer 1976: 48, Abb. 38; Ligabue, Salvatori 1977: 9, Fig. 4; Kellner 1991a, Nr. 1-3, 5, 9, 11-13, 23, 25-27, 103, 160, Abb. 14, Taf. 1/1-3, 5, 9, Taf. 2-3/11, 23, 25, Taf. 4-5/12-13, Taf. 6-7/19-20, 26-27, Taf. 30-31/103 etc.; Seidl 1991b: 134ff., Fig. 11; նույնի՝ 2004: 70ff. (Abb. 32, Taf. 9/d. e.), 151 (Abb. 105), 157 (Abb. 112), Taf. 57, Falttafel C; Curtis 1996: 123ff., Figs. 1-2; Röllig 1997a: 217, Tab. II; Sevin 2007: 721ff., Res. 1-2; de Brestian 2005-2007: 25ff., Figs. 2-6; Konakçı, Baştürk 2009: 187ff., Figs. 24-28; Çavuşoğlu 2010: 405f., Çiz. 3, Res. 7.

[1801] Տե՛ս և հմմտ. Potts 2007: 154.

[1802] Scurlock 1997: 494f.; Nadali 2010: 133; Dezső 2012b: 21ff.

[1803] Reade 1972: 103; Dezső 2012b: 19, 21.

[1804] Nadali 2010: 132.

[1805] Zuttermann 2003: 134.

[1806] Մարտիրոսյան, Մնացականյան 1958, էջ 71, նկ. 2, Աղ. 4; Мартиросян 1964: 247, табл. XXV-XXVI; Kellner 1991a, Nr. 21, 26-27, Taf. 6-7/21, 26-27 ևն:

[1807] Seidl 2004: 90 (Abb. 56), 153 (Abb. 107).

[1808] Konakçı, Baştürk 2009: 182.

[1809] Sevin *et al*. 2000: 858, Res. 18/9.

[1810] Wartke 1990: 123; Derin, Çilingiroğlu 2001: 155; Biber 2011: 236.

[1811] Konakçı, Baştürk 2009: 189.

Ուրարտացի հետևակայինների պատկերներից դատելով՝ հետևակը ստորաբաժանվել է վահանակիր նիզակակիրների (նկ. Բ-10/1-4, Բ-22/1-2) և թեթևազեն հետևազորի, այդ թվում՝ նետաձիգներ և նիզակակիրներ (նկ. Բ-20/1-4, Բ-22/2-3)[1812], երբեմն հանդիպում են լրիվ-սպառազինված (աղեղ, նիզակ, սուր և վահան) ծանրազեն հետևակայինների պատկերներ (նկ. Բ-21/1-4)[1813]: Պատկերագրությունից դատելով՝ ուրարտական բոլոր զինվորներն անխտիր կրել են սաղավարտներ[1814]՝ ի տարբերություն ասորեստանցիների, ուր սաղավարտ կրել են միայն ասորեստանյան և արամեական ծանրազեն հետևակայինները և հեծյալները, մինչդեռ՝ շատ ավելի բազմամարդ թեթևազեն հետևակայինները ունեցել են միայն գլխակապեր՝ ճակատային մասում բրոնզե պաշտպանիչ թիթեղներով (նկ. Բ-26/7):

Ուրարտական ամրոցների պեղումներից հայտնաբերվել է մեծ քանակությամբ զենք, որի զգալի մասը հարուստ-դրվագված նվիրատվական զենքն է: Մեծ քանակ է կազմում ռազմական սպառազինությունը: Միայն Այանցի պեղումներից հայտնաբերվել է մոտ 1.2 հազ. միավոր զենք, այդ թվում՝ մոտ 900 նետասլաք և 150 նիզակածայր[1815]: Թոփրաքքալեի պեղումներից հայտնաբերված տարատեսակ զենքերի թիվը հասնում է հազարի, միայն նիզակածայրերի թիվը կազմում է շուրջ 250 օրինակ, հայտնաբերվել են նաև հարյուրավոր երկաթե նետասլաքներ[1816]: Զինվորական հանդերձանքի բավական նշանակալի քանակ հայտնի է Կարմիր բլուրից, այդ թվում՝ 20 բրոնզե վահան, 21 սաղավարտ, 18 բրոնզե կապարճ, մեծ քանակությամբ նետասլաքներ ևն[1817], որոնց մի մասը նվիրատվական են[1818]: Նվիրատվական զենքի զգալի մասը նախատեսված չէր ռազմի համար կամ հանվել էր կիրառությունից: Նման զենքերն են, թերևս, ուրարտական մի քանի տաճարների արձանագրություններում հանդես գալիս որպես «մաքուր զենք» (KÙ TUKUL/*kumemuše*)[1819]՝ ի տարբերություն մարտական զենքի (*BE.LI*$^{MEŠ}$ *gunušiniei*)[1820]: Խոսքը վերաբերում է բրոնզե շրջանաձև վահանների, հարուստ-դրվագված սաղավարտների և կապարճների: Նման վահանները խոշոր են,

[1812] Տես, օրինակ, Մարտիրոսյան, Մնացականյան 1958, էջ 74-80, Աղ. 5-6; Мартиросян 1964: 248 сл., табл. XXVI-XXVII; Barnett 1963: Figs. 41, 47; Calmeyer 1976: 48, Abb. 38; Vanden Berghe, Meyer 1982: 78, 130 (Afb. 38, No. 22), 163 (No. 96); Kellner 1991a, Nr. 19, 21, 83, 117-118, 441, Taf. 6-7/19, 21, Taf. 22-23/83, Taf. 34-35/117-118, Taf. 87/441 etc.; Curtis 1996: 130ff., Fig. 8; Seidl 2004: 152 (Abb. 106), Taf. 47/a-d; Yesayan 1984: 192f. (Abb. 26/82); de Brestian 2005-2007: 28, Fig. 3.

[1813] Kellner 1991a, Nr. 182-183, 186-187, Taf. 46-47/182, Taf. 48-49/183, 186-187; Seidl 2004: Falttafel C.

[1814] Համմտ. Есаян 1986: 33 сл.

[1815] Derin, Çilingiroğlu 2001: 155, Figs. 1-4, 15-16; Biber 2011: 236, Fig. 4; Batmaz 2015b: 183.

[1816] Wartke 1990: 123ff., Abb. 31-32, Taf. XXXVIII.

[1817] Пиотровский 1955a: 24 сл.; նույնի՝ 1959a: 167 сл.; Есаян 1962: 194 сл.; նույնի՝ 1966: 94 сл.; նույնի՝ 1986: 25 сл.

[1818] Եսայան 1982, էջ 46; Пиотровский 1970, рис. 38-41, 44-50, 54-55; van Loon 1966: 116ff.

[1819] КУКН, $415_{x+4}$, $425_6$; CTU I, A 12-1 $IV_3$, A 12-2 $III_6$, A 12-$4_{3'}$.

[1820] КУКН, $241G_9$; CTU I, A 9-3 $VIII_9$. Մանրամասն տե՛ս Harutyunyan 2006: 100ff.

ունեն մինչև 1.2 մ տրամագիծ[1821] և պահվել են՝ դրանք կախելով տաճարի կամ այն շրջապատող կառույցների պատերին[1822]: Նվիրատվական զենքի մեջ են եղել նաև նիզակներ, Այանցից հայտնաբերվել է նման մի նիզակաձայր՝ գրեթե 74 սմ երկարությամբ, ընձայված՝ Խալդիին: Մեկ այլ նիզակաձայր՝ 64 սմ երկարությամբ, հայտնաբերվել էր Հայկաբերդի պեղումներից[1823], համապատասխանաբար 41.5 և 32.8 սմ երկարություն, 21.3 և 16 սմ լայնություն ունեցող երկու տերևաձև նիզակաձայրեր են հայտնաբերվել Բաստամից[1824]: Նմանատիպ զենքն է աղբյուրներում հիշատակվում «Խալդիի զենք/սուր» անունով (*ḫaldiei* $^{GIŠ}$*šuri*)[1825]: Վահանների զգալի մասը, թերևս, կաշվից էր (KUŠ.*ariti*), որոնց վրա ամրացվում էին մետաղական կլոր «ումբոններ»[1826]: Օգտագործվել են նաև բրոնզե վահաններ, որոնք, ի տարբերություն նվիրատվական վահանների, շատ ավելի փոքր են՝ 60-80 սմ տրամագծով, մետաղական կամ կաշվե բռնակներով և ունեին կիրառական նշանակություն[1827]: Հետաքրքիր է, որ Կումմուխի արքայից իբրև ռազմատուգանք 2 հազ. բրոնզե վահաններ ստանալու մասին է նշվում «Սարդուրյան տարեգրության» մեջ[1828], իսկ «Լուվրի աղյուսակ»-ը հայտնում է Մուծածիրից 25 հազ. 212 «ծանր և թեթև» բրոնզե վահան տանելու մասին[1829]:

Պատկերներից դատելով՝ վահանները բռնել են անցկացնելով դաստակին (երկու կամ երեք բռնակ ունեցող վահանների դեպքում, նկ. Բ-31/2, 4)[1830]: Վահանների մյուս խումբն ուներ միայն մեկ բռնակ, որը բռնելով միայն ձեռքի ափով կարող էին պարզել առաջ և օգտագործել շատ ավելի ազատ (նկ. Բ-31/1)[1831]: Նման վահանները, հիմնականում, մետաղական չէին և բավական թեթև էին՝ պատրաստված կաշվից, փայտից, ինչպես նաև՝ եղեգնից, որոնց ամրացվում էին բրոնզե ումբոնները (նկ. Բ-31/5-6)[1832]: Պաշտպանական զրահի մաս են կազմել բրոնզե ուսակալները[1833], գոտիները և այլն[1834]:

---

[1821] Есаян 1962: 194 сл.
[1822] Пиотровский 1950: 63; Merhav 1991b: 135f., Fig. 22a; Derin, Çilingiroğlu 2001: 161f., etc.
[1823] Erzen 1968: 414.
[1824] Calmeyer 1979: 183sqq., Abb. 1-2.
[1825] Çilingiroğlu, Salvini 1999: 55ff., Fig. 2; Çilingiroğlu 2003: 209, Fig. 10.14. Տե՛ս և հմմտ. նաև Calmeyer 1979: 183ff.
[1826] Есаян 1962: 196. Հնագիտական վկայությունների համար տե՛ս Пиотровский 1950: 24; նույնի՝ 1952: 63 сл., рис. 34, Табл. 19; նույնի՝ 1970, рис. 42; Мартиросян 1974: 150, рис. 84; Есаян 1986: 16 сл., Таб. I, VIII; Barnett, Watson 1952: 135; Merhav 1991b: 138f., Fig. 22b; Xnkikyan 2002: 95, Pl. XCIV/16; Seidl 2004: 88, Abb. 53; Belli 2005a: 190/191; Belli, Tozkoparan 2006: 171ff., Çiz. 6-7, Res. 1-2.
[1827] Տե՛ս, օրինակ, Barnett 1950:14, Pl. 10/2; Özgüç 1966: 6, Lev./Pl. XXXIV/7; Եսայան, Աբաջյան 1992, էջ 184; Çilingiroğlu 2001d: 275ff., Figs. 1-2, 5. Տե՛ս նաև Զաքյան 2011, էջ 125-126:
[1828] КУКН, 242BI$_{19}$; 244$_{17}$; CTU I, A 9-1 Vo$_{19}$, A 9-4$_{17}$.
[1829] Mayer 1983: 108f. (Z. 392).
[1830] Տես, օրինակ, Reindell 2001a: 282, Tav. VIIb.
[1831] Seidl 2004, Tafel. 47/a.
[1832] Belli 1999a: 49ff. Ավետիսյան Հ., Ավետիսյան Ն. 2008, էջ 370-372:
[1833] Born, Seidl 1995: 92ff., Abb. 81, 86-87, 116-117, 119, 123.

Ուրարտական զինվորները կրել են համեմատաբար փոքր չափի, մինչև 1 մ բարձրությամբ երկու հիմնական տիպի աղեղներ[1835]: Դրանք բացարձակապես տարբեր են Հայկական լեռնաշխարհում կիրառված ուշ բրոնզ – վաղերկաթեդարյան աղեղների համեմատությամբ, որոնք մարդահասակ են և հանդիպում են ոչ միայն պատկերագրության մեջ[1836], այլև վկայված են հնագիտորեն (շուրջ 1.68-1.72 մ բարձրությամբ)[1837]: Թեև ենթադրվում է, որ Առաջավոր Ասիայում, այդ թվում՝ Հայկական լեռնաշխարհում նոր էթնիկ տարրերի՝ կիմմերների և սկյութների մուտքից հետո տեղի բանակներն աստիճանաբար անցում են կատարել լայնալիճ աղեղները[1838], սակայն, Ուրարտուի պարագայում փաստական նյութը չի խոսում դրա օգտին[1839]:

Ուրարտական նետերը, թերևս, ունեցել են առնվազն 80 սմ երկարություն[1840], եթե նկատի ունենանք, որ կապարճների բարձրությունը տատանվել է 60-70 սմ-ի շրջանում[1841], նետասլաքների երկարությունը սովորաբար կազմում էր 3-8, ընդհուպ մինչև 11-14 սմ[1842], իսկ նետերը մոտ 10 սմ բարձրացել են կապարճից վերև[1843]: Նետասլաքները հիմնականում երկաթից էին և բրոնզից[1844], հայտնի են նաև ոսկրից պատրաստված նետասլաքներ, միայն Յոնջաթեփեից գտնվել են 1000-ից ավելի ոսկրե նետասլաքներ[1845]:

Ուրարտական նետասլաքները հիմնականում տերևաձև են կամ նշաձև՝ դրանց տարատեսակներով, կտրվածքում՝ օվալաձև, հաճախ՝ երկու կլորավուն երկար կամ կարճ պոչուկով (նկ. Բ-34/1-9)[1846], մի մասը՝ նվիրատվական են (նկ. Բ-35/1-4): Ագուցվել են ուռենու շիվերից, հացենուց կամ եղեգնից պատրաստված նետերին[1847] և ակնհայտ տարբերվում են «սկյութական» տիպի նետասլաքներից (նկ. Բ-35/5):

Հայտնի է, որ ուրարտական կապարճները պարունակել են 36 նետ: Մասնավորապես, «Սարդուրյան տարեգրության» մեջ հիշատակված 1332 աղեղին

---

[1834] Есаян 1986: 49 сл.; Belli 1983b: 325ff., Res. 1-3.
[1835] Zuttermann 2003: 133ff., Tab. 5, Fig. 5. Ուրարտական բանակում կիրառված աղեղների համար տե՛ս նաև Findling, Muhle 2012: 397ff.
[1836] Yesayan 1984: 114ff. (Abb. 13/42-44, 14/45-47).
[1837] Թորոսյան և այլք 1993, էջ 16, Աղ. XII; Թորոսյան և այլք 2002, էջ 42-43, նկ. 3-5, Աղ. XXII:
[1838] Дьяконов 1956a: 318 и прим. 2; նույնի՝ 1994: 112 сл.; Дандамаев 1977: 33ff.
[1839] Տե՛ս նաև Zuttermann 2003: 145.
[1840] Հմմտ. նաև Findling, Muhle 2012: 405.
[1841] Biber 2011: 242; Castelluccia, Dan 2011: 29, 32; Findling, Muhle 2012: 407.
[1842] Wartke 1990: 126ff.; Derin, Muscarella 2001: 189ff.; Belli, Yalçın 1994: 56; Biber 2011: 237.
[1843] Տե՛ս և հմմտ. Barnett 1972: 168f., Fig. 5.
[1844] Пиотровский 1955a: 38 сл.; Wartke 1990: 123; Derin, Muscarella 2001: 189ff.; Biber 2011: 237f.
[1845] Belli *et al*. 2006: 11ff.
[1846] Հղումների համար տե՛ս Եսայան, Քիլիմջյան 1991, էջ 107-108, ծնթ. 32-38; Konakçı, Baştürk 2009: 188ff. and n. 68 for bibliography, Fig. 27-28.
[1847] Пиотровский 1952: 40; Паланджян 1955: 65 сл.

բաժին է ընկել 47 հազ. 970 նետ[1848], այսինքն՝ յուրաքանչյուր աղեղին (կապարճին)՝ միջինը 36 նետ: Այանցից գտնված կապարճներից մեկում եղել է ճիշտ 36 նետասլաք (նկ. Բ-36/1-2)[1849]: Զինվորներին նետ ու աղեղի բաշխման ցուցակ է հայտնի Վերին Անձավի ուրարտական ամրոցի պեղումներից: Ցուցակում թվարկված 15 անձանցից ինը ստացել են 30-ական, վեցը՝ 20-ական, և մեկը՝ 22 նետ, ընդհանուրը՝ 412 նետ, ինչպես նաև 13 աղեղ և մեկ $^{GIŠ}$*šuri*[1850]: Յուրաքանչյուր աղեղի համար նախատեսված նետերի քանակը բավական մեծ էր և համադրելի է Նուզիից հայտնի տվյալներին (25-ից 40 նետ)[1851], մինչդեռ՝ Ուգարիթում նետաձիգները ստացել են յուրաքանչյուրն ընդամենը 10 նետ[1852]: Նշենք նաև, որ անհամեմատ մեծաքանակ՝ 60-ից ավելի նետ են պարունակել սկյութական կապարճները[1853]:

Մեզ հասած բրոնզե կապարճների մեծ մասը թվագրվում է Ք.ա. 8-րդ դ-ի վերջ – 7-րդ դ-ի առաջին կեսով, ընդ որում՝ դրանք ստանդարտ են, հիմնականում առանց զարդանախշերի կամ պատկերագրության և համեմատաբար վատորակ՝ հարուստ դրվագված և գերազանցապես Ք.ա. 8-րդ դ-ի առաջին կեսով թվագրվող կապարճների համեմատությամբ[1854]: Նույնը վերաբերում է նաև գոտիներին[1855]: Սա կարող է վկայել, որ պրոֆեսիոնալ զինվորների կտրուկ աճը Ռուսա Սարդուրդու օրոք պահանջ էր առաջացրել անցնելու նաև զենքի և հանդերձանքի միանման, զանգվածային արտադրության:

Մեզ են հասել մեծ քանակությամբ կապարճներ (ուրարտ. *gurbi*[1856]), միայն Այանցի պեղումներից՝ 60 օրինակ, Կարմիր բլուրից՝ 18, Քայալըդերեից՝ 5, Թոփրաքքալեից՝ առնվազն 10 օրինակ և այլն (նկ. Բ-37/1-8, Բ-38/1-5)[1857]: Ուրարտական կապարճների առանձնահատկություններից էր այն, որ դրանք կարող էին ամրացվել գոտիներին[1858]: Կապարճների մի մասը նվիրատվական է, որոնք հասարակներից

[1848] KYKH, 241G$_9$, CTU I, A 9-3 VII$_9$.
[1849] Derin, Çilingiroğlu 2001: 159.
[1850] Belli, Salvini 2003: 148ff. Այս հատվածի մեկնաբանության հետ կապված տե՛ս Grekyan 2009: 111. Հմմտ. Çilingiroğlu 2006: 238f.; Konakçı, Baştürk 2009: 184ff.
[1851] Vita 2002: 126 and n. 86. Տե՛ս, օրինակ, Maidman 2010: 37 (No. 11: 3-5) տեքստը, ուր նշվում է 5 կապարճի համար 30-ական նետ հատկացնելու մասին:
[1852] Vidal 2005 [2006]: 655.
[1853] Findling, Muhle 2012: 406.
[1854] Castelluccia, Dan 2011: 32.
[1855] Castelluccia, Dan 2011: 33.
[1856] KYKH, c. 445; CTU IV, B 9-11, B 9-12.
[1857] Համապատասխանաբար՝ Batmaz 2015a: 136; նույնի՝ 2015b: 183; Եսայան 1982, էջ 48; Пиотровский 1959a: 167; նույնի՝ 1959б: 178; Есаян 1966: 43; Piotrovskij 1967: 47; Burney 1966: 93ff., Pl. 18; Barnett 1972: 168ff.; Wartke 1990: 58ff., Abb. 8; Belli 2004a: 283ff., Figs. 5-10; Badaljan *et al*. 1994: 2. Մանրամասն տե՛ս նաև Castelluccia, Dan 2011: 13ff.
[1858] Castelluccia, Dan 2011: 16.

տարբերվում են հատկապես իրենց հարուստ պատկերագրությամբ (նկ. Բ-37/5-8): Կապարճները պատրաստվում էին բրոնզից, կաշվից կամ երկուսի համադրությամբ (նկ. Բ-37/5-6)[1859], կան նաև երկաթից[1860], ուռենու շիվերից պատրաստված կապարճներ[1861], Կարմիր բլուրից հայտնի է նաև փայտե կապարճի մեկ օրինակ[1862]:

Հնարավոր է՝ ուրարտական հեծելազորում օգտագործվել է նաև կապարճի մի տեսակ, որը լայնորեն տարածված էր եվրասիական քոչվոր ռազմիկների մոտ և հույներին հայտնի էր *gorytos* անունով: Խոսքը վերաբերում է այն կապարճներին, որոնցում նետերի հետ միասին դրվել է նաև աղեղը, տվյալ դեպքում՝ «սկյութական» տիպի B-աձև փոքր աղեղը: Համենայն դեպս, Միսսուրիի համալսարանի Արվեստի և հնագիտության թանգարանում պահվող ուրարտական բրոնզե գոտու հեծյալների պատկերագրությունը տպավորություն է թողնում, որ նրանք իրենց թիկունքին կրել են նման կապարճներ[1863]: Ըստ երևույթին դրանք պատրաստվում էին կաշվից:

Որպես հեռահար զենք օգտագործվել է նաև պարսատիկը: «Լուվրի աղյուսակ»-ը վկայում է հետևակայինների շարքերում պարսատիկավորների առկայության մասին (*nāš* $^{(giš)}$*kabābi*)[1864]: Պարսատիկի քարեր են գտնվել Ագրաբ-թեփեի պեղումներից[1865]:

Ռազմական սպառազինության մաս են կազմել տարատեսակ նիզակները, սրերը, դաշույնները, կացինները, գուրզերը ևն (նկ. Բ-39/1-4 – Բ-40/1-8)[1866]: «Լուվրի աղյուսակ»-ը, թվարկելով Մուծածիրից տարված ավարը, նշում է 1514 «ծանր և թեթև» նիզակ, 305 հազ. 412 «ծանր և թեթև» սուր տանելու մասին[1867]: Մեզ հասած բրոնզեգործական արտադրանքի մեջ մեծ թիվ են կազմում ձիերի բրոնզե կամ երկաթե երկմաս կամ եռամաս երախճանները (նկ. Բ-41/1-15)[1868]:

Հայտնի է, որ ասորեստանյան բանակը գիշերել է ամրացված ճամբարներում, ինչպիսիք բազմիցս պատկերվել են բարձրաքանդակներում (նկ. Բ-42/1-2): Ուրարտական բանակի ճամբարի որևէ պատկեր, պատկերագրության մեջ չի

---

[1859] Пиотровский 1959a: 167; van Loon 1966: 121; Barnett 1972: 171; Wartke 1990: 58; Есаян *и др.* 1991: 9, Табл. XI; Ենգիբարյան 2008, էջ 172; Konakçı, Baştürk 2009: 189.
[1860] Çilingiroğlu 2006: 31ff.
[1861] Konakçı, Baştürk 2009: 189 and n. 70.
[1862] Пиотровский 1955a: 38; Ավետիսյան և Ավետիսյան 2008, էջ 369:
[1863] Մանրամասն տե՛ս de Brestian 2005-2007: 34ff.
[1864] Mayer 1983: 96f. (Z. 289).
[1865] Muscarella 1973: 52, 69.
[1866] Ավետիսյան և Ավետիսյան 2008, էջ 367-378: Տե՛ս նաև Пиотровский 1959б: 177, рис. 6; նույնի՝ 1970, рис. 51-53; Погребова 1967: 137 сл., рис. 1; Wartke 1990: 46ff., 122ff.; Փիլիպոսյան, Մկրտչյան 2001, էջ 19-21; Derin, Çilingiroğlu 2001: 155ff.; Ավետիսյան Հ., Ավետիսյան Ն. 2008, էջ 367-370; Ենգիբարյան 2008, էջ 169-171; Biber 2011: 233ff., Fig. 1.
[1867] Mayer 1983: 108f. (Z. 393-394).
[1868] Եսայան 1994, էջ 69-79; Belli 1983c 373ff., Res. 1-3, Lev. 1-2; Yıldırım 1987: 441ff., Res. 1-44; Есаян, Геворгян 2008: 181 сл.

հանդիպում: Ասորեստանյան որոշ տեքստերից դատելով՝ ուրարտացիները կառուցել են ռազմական ճամբարներ՝ վրաններով, որոնցում գիշերել են զինվորները: Ասորեստանյան արքա Թիգլաթպալասար III-ը, խոսելով Սարդուրի Արգիշթորդու և նրա դաշնակիցների դեմ մղած հաղթական ճակատամարտի մասին, նշում է, որ իր ձեռքն է ընկել Սարդուրիի «տաղավար»-ը (GIŠ.É *ṣe-e-ri*), «արքայական վրան»-ը՝ գույքով (GIŠ *kul-ta-ru* LUGAL-*ti*), և ողջ ճամբարը, որը, այնտեղ եղած ռազմական հանդերձանքի (*ú-nu-ut ta-ḫa-zi*) հետ միասին, մատնել է հրի[1869]:

2.3.7.7. **Զորավարժանքներն ու զորախաղերը**

Ուրարտական աղբյուրներում զորավարժանքների մասին ուղղակի վկայություններ չկան[1870]: Սակայն, Մենուայի՝ իր «Արծիբի» («Արծիվ») անունով ձիով կատարած ցատկի և Արգիշթի Ռուսայորդու կատարած նետաձգության մասին թողնված արձանագրությունները վկայում են, որ Ուրարտուում իրականացվել են զորախաղեր և զինավարժություններ, որոնցից երկու վկայված դեպքերում հաղթել են արքաները. Մենուան իր ձիով ցատկել է 22 կանգուն (22 1-KÙŠ) կամ մոտ՝ 11 մ[1871], իսկ Արգիշթիի արձակած նետը թռել է 950 կանգուն (9 ME 50 1-KÙŠ) կամ 475 մ[1872]: Հետաքրքիր է՝ արդյո՞ք Արգիշթին փորձել է սկյութական տիպի B-աձև աղեղ, որոնց հեռահարությունը հասնում էր 500 մ-ի[1873], դժվար է ասել:

Կարելի է ենթադրել, որ պրոֆեսիոնալ բիայնացի զինվորը պարտավոր էր ռազմական գործին ծանոթացնել և մարզել ծառայության ենթակա իր ընտանիքի այլ անդամների կամ կախյալներից ոմանց, որոնց հետ, թերևս, պարտավոր էր ներկայանալ ծառայության զորահավաքի դեպքում: Սա վերստին կարող է հիշեցնել Ուրի III հարստության ժամանակաշրջանը, ուր յուրաքանչյուր պրոֆեսիոնալ զինվորական ուներ նման չորս «հետևորդ» (իմա՝ զորակոչիկ)[1874]:

2.3.7.8. **Զինվորների օրապահիկը և սննդակարգը**

Զինվորների օրապահիկին վերաբերող տվյալների հանդիպում ենք դեռևս հինեգիպտական թագավորության դարաշրջանից: Հայտնի է, որ եգիպտական սահմանային ամրոցներից մեկում տեղակայված կայազորի զինվորները յուրաքանչյուր օր ստացել են 2 գավաթ ջուր կամ գարեջուր և 10 ձեռք լավաշհաց[1875]: Մեկ այլ

[1869] Tadmor, Yamada 2011, No. $9_{14'b-15'}$.
[1870] Taffet 1999: 378f. Հինարևելյան այլ զուգահեռների համար տես, օրինակ, Beal 1992: 535f.; Lorenz, Schrakamp 2011: 139.
[1871] КУКН, 136; CTU I, A 5-91.
[1872] КУКН, 408; CTU I, A 11-7.
[1873] Zuttermann 2003: 141.
[1874] Lafont 2009: 11.
[1875] Morkot 2003: 87; Fields 2007: 50, Fig. on p. 51.

տեքստից դատելով՝ զինվորներին ամեն 10 օրվա համար տրվել է 1 *heqat*[1876] գարի և 2/3 *heqat* ցորեն՝ յուրաքանչյուր օրվա համար միջինը կազմելով մոտ 0.8 լ[1877]: Մարիի տեքստերից դատելով՝ զինվորները ստացել են 1 *ṣimdu* գարի՝ օրեկան կազմելով 1 *qû*՝ մոտ 1 լ[1878], ընդ որում, այս քանակությամբ գարուց պատրաստված խաշիլը բավարարում էր տղամարդու սննդի պահանջարկը ողջ օրվա համար: Նույն քանակությամբ գարուց հաց պատրաստելու դեպքում այն այլևս չէր ապահովի անհրաժեշտ նվազագույնը և զինվորները կքաղցեին[1879]: Ի դեպ, Կարմիր բլուից գտնված ափսեներից մեկը պարունակել է կորեկաճավարի շիլայի մնացորդներ[1880]:

Խեթական դիվանում պահպանվել են զինվորների օրապահիկին վերաբերող չնչին տվյալներ: Միայն Մաշաթ-Հյոյուքի տեքստերից մեկում է նշվում, որ յուրաքանչյուր զինվոր ստացել է 2 *sūtu* գարի, սակայն, պարզ չէ, թե քանի օրվա համար[1881]: Այդ նույն դարաշրջանի միջինասորեստանյան տեքստերը վկայում են, որ Կար-Թուկուլթի-Նինուրտա քաղաքի կայազորի զինվորները ստացել են 1 *sūtu* գարի 10 օրվա համար[1882], օրեկան՝ 1 *qû*՝ մոտ 1 լ[1883]: Նույն քանակությունն է կազմել Արրապխեի քաղաքներում կայանած «խանիգալբադյան» (միտաննացի) զինվորականների համար տրված գարու օրապահիկը[1884]:

Նորասորեստանյան մի քանի տեքստերից կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր զինվորի օրապահիկի համար կարծես թե նախատեսված է եղել մինչև 2 *qû* գարի[1885]: Այս առումով նշենք, որ տեքստերից մեկի տվյալներով կումմուխցի 2 հազ. զինվորների համար նախատեսված մեկամսյա սնունդը կազմել է 600 *imēr* գարի՝ (տեքստում՝ NINDA.MEŠ՝ «հաց»)[1886]: Յուրաքանչյուրի համար այն կազմում է 1 *qû*: Այսինքն, կումմուխցի զինվորներին տրվել է սովորական օրապահիկ[1887]:

1 լ գարուց, որը կազմում է առավելագույնը 800 գրամ, ստացվում է մոտ 600 գրամ հաց[1888]: Հետաքրքիր է, որ Բաստամից մեզ հասած տեքստերից մեկում նշվում է ծառայողների/զինվորների օրապահիկի չափը՝ $^{LÚ}$*amerieši*-մարդկան համար՝ 3-ական,

---

[1876] 1 *heqat*-ը հավասար է 4.8 լ-ի:
[1877] Fields 2007: 51.
[1878] Powell 1987-1990: 494.
[1879] Lewy 1958: 55, n. 2. Տե՛ս նաև ստորև 3.3.3.3.2.:
[1880] Пиотровский 1950: 28; Եսայան 1982, էջ 21:
[1881] Beal 1992: 129f.
[1882] Llop 2010: 109f.
[1883] 1 *sūtu* = 8-10 *qa*, 1 *qa* = 0.842 լ: Տե՛ս Zaccagnini 1975: 182f., n. 3.
[1884] Համմտ., օրինակ, Maidman 2010: 70f., 74f.
[1885] Fuchs 2005: 41. Համմտ. Fales 1990a: 27.
[1886] Lanfranchi, Parpola 1990, No 172; Saggs 2001: 2495$_{27-28}$.
[1887] Fales 1990a: 30, n. 29.
[1888] Fales 1990a: 29; նույնի՝ 2010b: 71, n. 33.

իսկ $^{LÚ}$*ḫalbi*-մարդկանց համար՝ 2-ական հաց[1889], իսկ նման հաց հայտնաբերվել է Կարմիր բլուրից[1890]: Եթե ենթադրենք, որ յուրաքանչյուր հաց կշռել է մոտ 300 գրամ, ապա կստացվի, որ, $^{LÚ}$*ḫalbi*-մարդկանց համար նախատեսված է եղել 1 լ, իսկ $^{LÚ}$*amerieši*-մարդկանց համար՝ 1.5 լ գարի: Սա միանգամայն տեղավորվում է սիրիա-միջագետքյան զուգահեռների մեջ:

Ինչպես վերը նշվեց՝ «Սարդուրյան տարեգրության» եզրափակիչ հատվածը կարծես թե վերաբերում է պետության կողմից ծառայության կանչվող ռազմիկների օրապահիկը պետական միջոցների հաշվին հոգալուն: Ըստ այդմ, քննարկվող տեքստում նշված գարու չափաքանակը՝ 1022 հազ. 133 կապի[1891] կամ մոտ 25 մլն. 553 հազ. 325 լ, կարող էր արտահայտել պետության կողմից զինվորներին տրվող գարու օրապահիկի հանրագումարը: Այդ քանակությունը բավական էր ողջ տարին կերակրելու համար մինչև 70 հազ. մարդու, եթե ողջ պաշարն օգտագործվեր որպես զինվորների սնունդ:

Մյուս կողմից, պետք է նկատի ունենալ, որ այդ քանակության մեջ կարող էին հաշվարկված լինել նաև բանակի հեծելազորին և գումակի կենդանիներին հատկացվող կերը: «Սարդուրյան տարեգրութան» նշած 10 հազ. 408 ձիերին ողջ տարին կերակրելու համար յուրաքանչյուրին 1.5 լ հաշվարկ դեպքում[1892] կպահանջվեր 5 մլն 689 հազ. 380 լ գարի: Տեքստում նշված 132 ջորիների համար՝ ևս մոտ 72 հազ. 270 լ: Ինչ վերաբերում է բանակին ուղեկցող կենդանիների հոտերին, ապա 21 հազ. 357 ցլի կերի համար կպահանջվեր 5 մլն 864 հազ. 805 լ, իսկ 35 հազ. 467 ոչխարի համար՝ 1 մլն 624 հազ. 540 լ գարի՝ հաշվի առնելով նաև ամենօրյա մորթը զինվորների սննդի համար:

Հանրագումարը կազմում է տարեգրության նշված գարու պաշարի կեսից ավելին: Այդ դեպքում, մնացյալ քանակությունը, որը կազմում է մոտ 12 մլն. 293 հազ. լ, բավական կլիներ ողջ տարին սննդով ապահովելու գրեթե 33 հազ. 700 մարդու:

Ուրարտական բանակում զինվորների օրապահիկի մաս կարող էր կազմել միսը և գինին/գարեջուրը: Եթե հարավային Միջագետքում, հատկապես՝ Ուրի III հարստության շրջանում միսը զինվորներին տրվում էր միայն իբրև պարգևատրություն խնջույքի համար (թերևս՝ 1 ցուլը՝ 600 զինվորի, և 1 ոչխարը՝ 60 զինվորի համար հաշվարկով)[1893], ապա խեթական դիվանի տվյալները վկայում են, որ միսը զինվորների

[1889] Տե՛ս Дьяконов 1988б: 149 сл.; CTU IV, CT: 128.
[1890] Пиотровский 1950: 28 сл., рис. 9.
[1891] КУКН, 241$G_{10}$; CTU I, 9-3 VII$_{10}$.
[1892] Տե՛ս 3.3.2.1.3.:
[1893] Lafont 2009: 14 and n. 79.

օրապահիկի մաս է կազմել[1894]: Ասորեստանյան բանակին ուղեկցող նախիրների և հոտերի մասին հիշատակություն կա «Լուվրի աղյուսակ»-ում[1895]: Ի տարբերություն հարավային Միջագետքի, ուր հողը գերադասում էին օգտագործել որպես վարելահող կամ այգի և ոչ թե որպես արոտավայր, թե Փոքր Ասիան, և թե Հայկական լեռնաշխարհը նպաստավոր պայմաններ ունեն անասնապահության համար: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ ինչպես խեթերի կամ ասորեստանցիների մոտ, ուրարտական բանակում նույնպես միսը զինվորների օրապահիկի մաս է կազմել:

Այս առումով կարելի է հավելել, որ «Սարդուրյան տարեգրության» քննարկվող հատվածում նշված խոշոր և մանր եղջերավոր անասունների հոտերը (համապատասխանաբար՝ 21 հազ. 357 և 35 հազ. 467 գլուխ) հավանաբար նախատեսված էին բանակի կարիքները հոգալու համար: Եթե միսը զինվորների օրապահիկի մաս է կազմել, ապա 1 ցուլը 600, իսկ մեկ ոչխարը՝ 60 մարդու հաշվարկի դեպքում նշված քանակությունը ողջ տարին մսով կապահովեր մոտ 41 հազ. մարդու, իսկ յուրաքանչյուր օրվա համար մորթը միջինը կկազմեր 97 ոչխար և 58 ցուլ:

Զինվորները ստացել են նաև գինի/գարեջուր, սակայն, կարծում ենք, հիմնականում որպես պարգևատրություն կամ գլխավոր տոնակատարությունների ժամանակ: Թերևս պատահական չէ, որ «Սարդուրյան տարեգրության»՝ մեզ հետաքրքրող հատվածում նշվում է ընդամենը 111 *aqarqi* գինու մասին, այն է՝ մոտ 30 հազ. 525 լ: Յուրաքանչյուրին 1 գավաթ կամ 100 գր. հաշվարկի դեպքում, հիմք ընդունելով նորասորեստանյան տեքստերից հայտնի զուգահեռները, գինու այդ քանակությունը կբավարարեր ընդամենը մոտ 840 մարդու ողջ տարվա կտրվածքով: Սա վկայում է, որ գինի ստացել է կամ միայն հրամանատարությունը, կամ նաև զինվորականությունը, սակայն, միայն տոնակատարությունների ժամանակ կամ որպես պարգևատրություն հաղթական արշավանքից վերադառնալուց հետո:

Զինվորներին, թերևս, տրվել է նաև քիչ քանակությամբ ձեթ, ընդդեղեն ևն: Օրինակ, զինվորներին 5 ամսվա կտրվածքով 1 լ ձեթ հատկացնելու մասին տվյալներ են պահպանվել ասորեստանյան աղբյուրներում[1896]: Ասորեստանյան մեկ այլ տեքստում նշվում է վերաբնակիչների համար պետական պահուստներից տրվող օրապահիկի մասին, յուրաքանչյուրին՝ 3 *sūtu* գարի մեկ ամսվա համար (օրեկան՝ 1 *qû*), ինչպես նաև՝ 1 *šappu* ձեթ (= 5 *qû*, մոտ ՝ 5 լ), որը կազմում է օրեկան միջինը մոտ 0.17 լ[1897]:

[1894] Beal 1992: 129ff.
[1895] Mayer 1983: 86f. (Z. 187).
[1896] Lanfranchi, Parpola 1990, No 126.
[1897] Fales 1990a: 28f.

Հետաքրքիր է, որ «Սարդուրյան տարեգրության» քննարկվող հատվածում նույնպես նշվում է ձեթի խմբաքանակ՝ 88 *aqarqi* 7 *ṭirusi* չափով՝ մոտ 24.4 հազ. լ: Յուրաքանչյուր զինվորի 5 ամսվա կտրվածքով 1 լ կամ տարեկան՝ 2.4 լ ձեթ հաշվարկի դեպքում նշված քանակությունը կբավարարեր համապատասխանաբար 24 հազ. 400 մարդու կամ 10 հազ. 166 մարդու՝ ողջ տարվա կտրվածքով: Եթե դա վերաբերեր միայն արշավանքի ժամանակ զինվորներին տրվող ձեթի չափաքանակին, ապա 3 ամիս տևող արշավանքի շրջանում այդ քանակությունը կհասներ մոտ 40.7 հազ. մարդու:

### 2.3.8. Թվակազմը

Ուրարտական աղբյուրները պահպանել են բանակի թվակազմին վերաբերող չնչին տվյալներ: Հիմնականում դրանք վերաբերում են Իշպուինիի և Մենուայի «համատեղ գահակալության» շրջանում ձեռնարկված արշավանքներին: Մասնավորապես, թվական տվյալներ է պահպանել դեպի հյուսիս՝ Լուշա, Կատարզա և Վիտերուխի երկրների և էթիունյան միության դեմ ձեռնարկված արշավանք(ներ)ը նկարագրող արձանագրություններից մեկը՝ երեք անգամ կրկնելով միևնույն տեքստը[1898]: Ըստ այդմ, ռազմեթի դուրս եկած բիայնական բանակն ունեցել է 66 մարտակառք, 15 հազ. 760 հետևակային և մի քանի հազար հեծյալ[1899]: Հեծելազորի ամբողջական թվաքանակը չի պահպանվել և ոչ մի հատվածում: Առավել ամբողջական թիվը, որը հայտնի է Հյուսնենցի Սբ Հովհաննես եկեղեցուց գտնված այդ կոթողի մի բեկորից, x×1000 + 4×100 + 30 է[1900]: Վիմագրի վնասված տողի երկարությունը հնարավոր է դարձնում այստեղ վերականգնելու միմիայն կարճ տարածություն զբաղեցնող որևէ սեպանշան, այն է՝ «1», «2» և կամ «10» թիվն արտահայտող սեպանշանը: Հաշվի առնելով այն, որ Խառակոնիսի արձանագրության մեջ վկայված բանակի հեծյալների թիվը գրեթե մոտենում է 10 հազ-ի (տե՛ս ստորև), ապա հավանական է թվում այսեղ ևս վերականգնելու «10» սեպանշանը, ըստ այդմ՝ ունենալով 10 հազ. 430 թիվը:

Դեպի հարավ՝ Մե(ի)շթա քաղաքի և Բարշուա երկրի դեմ ձեռնարկված արշավանքի նկարագրության մեջ ևս պահպանվել են թվական տվյալներ: Ըստ Խառակոնիսի արձանագրության՝ զորքերում եղել են 106 մարտակառք, 9 հազ-ից ավելի հեծյալ և x+2 հազ. 704 հետևակային[1901]: Արձանագրության մեջ վնասված են թե

---

[1898] КУКН, 32-33, CTU I, A 3-5 Ro, A 3-5 Vo.

[1899] КУКН, $32_{14}$, $33_{17}$, CTU I, A 3-5 $Ro_{14}$, A 3-5 $Vo_{17}$.

[1900] КУКН, $32_{14}$, $33_{16}$, CTU I, A 3-5 $Ro_{14}$; A 3-5 $Vo_{16}$. CTU A 3-5 $Vo_{16}$-ում նշվում է 460 թիվը:

[1901] КУКН, 35, лиц. стор., текст $I_{14-15}$, 44, обор. стор., текст $III_{16-18}$; CTU I, A 3-9 $Ro_{14-15}$, 44, A 3-9 $Vo_{16-18}$. Արշավանքի թվագրությունն ու վերլուծության համար տե՛ս Գրեկյան 2001, 6-8: Հմմտ. Дьяконов 1956a: 169, прим. 5; Сальвини 1983: 227:

հեծելազորը, և թե հետևազորը մատնանշող թվերը: Եթե հեծելազորի պարագայում հստակ չէ հարյուրավորների թիվը (արձանագրված է 9×1000 + x×100 + 70 + 4 թիվը), իսկ վնասված հատվածն ու պահպանված սեպանշանի հետքերը հուշում են, որ հարյուրավորների թիվը եղել է 4 կամ 5, ըստ այդմ՝ ունենալով 9 հազ 4/574 հեծյալ, ապա միանգամայն այլ է պարագան հետևազորի դեպքում:

Արձանագրության վաղ հրատարակություններում և դրանց վրա հենված աշխատանքներում ուրարտական բանակի հետևազորի թիվը նշվում էր պարզապես 2 հազ. 704[1902], փաստորեն, ընդունելով, որ ուրարտական հեծելազորը գերակշռել է հետևակին գրեթե երեք անգամ[1903]: Սա անբնական էր, նամանավանդ մի դարաշրջանի համար, երբ հեծելազորը, որպես առանձին զորատեսակ, դեռ նոր էր կայանում:

Մինչդեռ, արձանագրության տվյալ տողի սկզբնամասը միանշանակ վնասված է, իսկ վնասված հատվածը համապատասխանում է նախորդող տողի ճիշտ նույն հատվածին, ուր արձանագրված են եղել, սակայն չեն պահպանվել LÚ և *ḫu*-սեպանշանները: Սա թույլ է տալիս ճշտելու հատվածում արձանագրված սեպանշանների զբաղեցրած տարածքը, և հնարավոր է պնդել, որ պահպանված 2 LIM (2×1000) սեպանշաններից առաջ արձանագրված բյուրավորների թիվը տեղի սղությամբ պայմանավորված՝ չէր կարող անցնել 10 հազ-ը (10 LIM): Ըստ այդմ, հավանաբար այստեղ արձանագրված է եղել 12 հազ. 704 թիվը (10×1000 + 2×1000 + 7×100 + 4): Մեր այս ենթադրությունը առավել մոտ է Ֆ.Վ. Քյոնիգի տեսակետին, ով այստեղ տեսնում էր 22 հազ. 704 թիվը[1904]: Փ. Զիմանսկու մոտեցումը՝ հատվածում տեսնելու 50 հազ. թիվը, պարզապես անհավանական է և ոչ միայն վիմագրական տեսանկյունից[1905]: Նրա հաշվարկների հիմքում ընկած են հետևազորի և հեծելազորի 5 : 1 հարաբերակցությունը, ինչը հիմնավորված չէ[1906]:

Փաստորեն, Ք.ա. 9-րդ դ-ի վերջերին բիայնական պետությունն արդեն ի վիճակի էր ռազմադաշտ դուրս բերելու մի քանի տասնյակ հազ. զինվոր: Պետության

[1902] УКН, 24, лиц. стор.$_{15}$, обор. стор.$_{18}$.; КУКН, 35, лиц. стор., текст I$_{15}$, обор. стор., текст III$_{18}$.

[1903] Меликишвили 1954: 324. Տե՛ս նաև Եսայան 1962, էջ 85-86, նույնի՝ 1994, էջ 83; Հարությունյան 1971գ, էջ 348:

[1904] König 1955-1957, Nr. 7, Tafel 7.

[1905] Zimansky 1985: 56f., Table 6, nt. B.

[1906] Զորօրինակ, սեպագիր աղբյուրներից հայտնի է, որ ասորեստանյան նահանգի վերածված Կումմուխում ասորեստանյան արքա Սարգոն II-ը նորանշանակ նահանգապետին է հանձնել նշանակալի զինված ուժեր՝ 150 մարտակառք, 1500 հեծյալ, 20 հազ. նետաձիգ և 10 հազ. պարսատիկավոր ու նիզակակիր զինվոր (Fuchs 1994: 224, 349 (Z. 116-117), 179, 338 (410): Եթե հիմք ընդունենք այս թվերը. ապա կունենանք հետևազորի և հեծելազորի 20 : 1 հարաբերակցություն: Այս նույն հարաբերակցությունն ունենք հետևազորի և մարտակառքերի համար Նուզիում (Jankowska 1981: 197ff.):

հզորության շրջանում ուրարտական բանակը պետք է որ ապրեր թվաքանակի էական աճ: Ցավոք, դրա ուղղակի վկայություններ ըստ էության չկան: Որոշ դատողությունների հիմք են տալիս երկու աղբյուր՝ Սարդուրի Արգիշթորդու և Թիգլաթպալասար III-ի տարեգրությունները:

«Սարդուրյան տարեգրության» մեջ հիշատակվում են 92 մարտակառքեր, 3 հազ. 600 հեծյալներ և ավելի քան 352 հազ. 11 զինվորներ՝ հեծյալ, թե հետևակ (*e-’a* PIT.ḪAL.LU$^{MEŠ}$-*e-i e-’a* $^{LÚ}$ÉRIN.GÌR.2$^{MEŠ}$-*e-i*)[1907]: Տարեգրության այս հատվածը, սակայն, հնարավոր չէ հստակ մեկնաբանել: Այն կարծիքը, թե այստեղ նշված է զինված ուժերի, ծառայող զինվորականության ողջ քանակը կամ տերության մեջ զենք կրելու ընդունակ մարդկանց թիվը[1908], նույնպես հիմնավոր չէ. չափազանց դժվար է ասել, թե ինչ պետք է հասկանալ $^{KUR}$*šurani* տերմինի դեպքում՝ ամբողջ կայսրությո՞ւնը, թե՞ զինվորականության խավ, ինչպես ենթադրում է Իգոր Դյակոնովը, ի՞նչ միջոցներով կամ չափանիշերով կարող էր իրականացվել նման հաշվարկը, արդյո՞ք բոլոր խավերն իրավունք ունեին զենք կրելու կամ ծառայելու բանակում, և այլն[1909]: Իսկ այն փաստը, որ մի քանի հարյուր հազարանոց թիվը ներկայացված է ընդհուպ մինչև մեկ թվի ճշտությամբ, ամենևին էլ բավարար հիմք չի ստեղծում դրա իսկությանը հավատալու համար[1910]:

Իսկ եթե ընդունենք, որ շուրջ 356 հազ. թիվն արտահայտում է զենք կրելու ունակ ողջ արական բնակչությունը, ապա արշավանքների համար ծառայության կանչվող տղամարդկանց/ռազմիկների թիվը կարող էր կազմել մոտ 71 հազ. մարդ (356 հազ.-ի մեկ հինգերորդ մասը): Սա արդեն իրատեսական թիվ է հիշեցնում: Մյուս կողմից՝ կարելի է ենթադրել, թե «երեսունհինգ հազար» գրելու փոխարեն գրիչն արձանագրել է «երեսունհինգ բյուր» (30 + 5 *atibi* + 2 LIM + 11), և իրականում տեքստում խոսվում է «հեծյալ ու հետևակ» 37 հազ. 11 զինվորների մասին[1911], ինչը, իհարկե, միանգամայն իրատեսական թիվ է, սակայն, դա միայն ենթադրություն է և այն փաստարկներով ամրապնդել հնարավոր չէ, նամանավանդ՝ այդ դեպքում ակնկալելի կլիներ 30 LIM + 7 LIM + 11 գրությունը:

Երկրորդ աղբյուրը վերաբերում է Ք.ա. 743 թ-ին Ուրարտուի և նրա լուվիական դաշնակիցների դեմ Թիգլաթպալասար III-ի մղած հաղթական ճակատամարտին:

---

[1907] КУКН, 241G$_{3-5}$; CTU I, A 9-3 VII$_{3-5}$. Տե՛ս և հմմտ. նաև König 1957: 119 (Nr. 103. A. I-III); Меликишвили 1960: 288 сл. (№ 155 G).

[1908] Հմմտ., օրինակ, Zimansky 1985: 57; Diakonoff 1991: 18f.; Konakçı, Baştürk 2009: 196.

[1909] Կարծիքների համար տե՛ս և Հմմտ. Հարությունյան 1971գ, էջ 350; Diakonoff 1991: 18f.; Wartke 1993: 72.

[1910] Millard 1991: 216ff.

[1911] Տե՛ս, դեռևս, Adontz 1946: 216.

Այստեղ միայն սպանվածների կամ գերեվարվածների թիվը, եթե հավատանք ասորեստանյան աղբյուրին, հասնում էր գրեթե 73 հազ-ի[1912]: Այս թիվը անհավանական չի թվում, թեև պետք է նկատի ունենալ նաև ասորեստանյան քարոզչամեքենայի միտումները:

Ուրարտական բանակի թվակազմի մասին աղբյուրների վերջին խումբը վերաբերում է Ռուսա Արգիշթորդու ժամանակներին: Ասորեստանյան արքունիք ուղղված զեկուցագրերից, օրինակ, հայտնի է դառնում, որ կիմմերների դեմ ձեռնարկված արշավանքին ուրարտական տերությունը կենտրոնացրել էր զորքերի մեծ քանակ՝ ուրարտական բանակի գլխավոր զորավար Քակկադանուի, ավելի քան տասներեք մարզպետների զորագնդերն ու, հաստատապես, արքայական գունդը[1913]: Եթե ընդունենք, որ մեկ գունդը կարող էր ընդգրկել մինչև 3 հազ. զինվոր, ապա կարելի է նշել, որ կիմմերների դեմ գործող ուրարտական բանակի զինվորների թիվը կազմել է մի քանի տասնյակ հազար մարդ: Այս կարգի թվաքանակները կարող են ընդունելի լինել նաև Ուաուշի ճակատամարտի պարագայում. ասորեստանյան տվյալների համաձայն՝ արքայական զորագնդից բացի բանակի կազմ են ներգրավվել նաև «ուրարտական մեծամեծների»՝ թերևս մարզպետների գնդերը:

Ասորեստանյան զեկուցագրերից մեկում, որը վերաբերում է կիմմերա-ուրարտական ընդհարմանը հաջորդած ժամանակահատվածին, խիստ վնասված հատվածում հիշատակվում են ուրարտական բանակի 8 հազ. զինվորներ[1914]:

Փաստորեն, աղբյուրներում պահպանված թվական տվյալները հիմնականում վերաբերում են ռազմադաշտ դուրս բերված և, ըստ այդմ, էապես համալրված բանակին: Կարելի է փաստել, որ բիայնական պետության գոյության արդեն սկզբնական փուլում երկիրն ի վիճակի էր դուրս բերել մինչև 30 հազ-ոց զորք: Անհայտ է մնում, սակայն, մշտական բանակի թվակազմը: Բացի դա, պետության հզորության շրջանում բանակը պետք է որ ունենար թվակազմի էական աճ՝ սեփական և այլ ռեսուրսների հաշվին (ենթակա երկրների զորքեր, վարձկան ուժեր ևն): Դատելով Ուրարտուում ծավալված ամրաշինական աշխատանքներից, կառուցված քաղաքների և ամրոցների թվից և բնույթից կարելի է կարծել, որ ընդհուպ մինչև Ք.ա. 8-րդ դարի երկրորդ կես միայն կայազորային զորքերի թիվը Ուրարտուում կարող էր կազմել առնվազն 10-12 հազ. մարդ: Ցավոք, գրեթե չկան տվյալներ ուրարտական զորամիավորումների տեղաբաշխման, ռազմական ճամբարների կամ բնակավայրերի

[1912] Տե՛ս Tadmor 1994: 50ff. (The Calah Annals 17, ln. 9)
[1913] Grekyan 2010a: 87.
[1914] Deller 1984: 98 (Nr. 1.1 Rs: 3´); Lanfranchi, Parpola 1990, No. 92: r.3.

գոյության մասին: Զերնակի-թեփեի «ճամբար»-ը կամ բնակատեղին այլևս չի թվագրվում ուրարտական շրջանով: Կարելի է կարծել, որ մշտական բանակի մնացյալ մասը, որն ընդգրկված չէր կայազորային զորքերում, տեղաբաշված էր երկրի կենտրոնական շրջաններում՝ մայրաքաղաքի մերձավորությամբ, և մատակարարվում էր այստեղից: Այս համակարգը հիշեցնում էր Ուրի III հարստության ռազմական կառուցվածքը[1915]: Թերևս պատահական չէ, որ այստեղից են հայտնի ամենամեծ տարողություն ունեցող ամբարները մատնանշող արձանագրությունները, ցավոք, հիմնականում առանց հնագիտական կոնտեքստի (տե՛ս Աղ. 27)[1916]:

Այսպիսով, որպես աշխատանքային վարկած, կարելի է մտածել, որ Ուրարտուում մշտական բանակի թվակազմը կարող էր կազմել առնվազն 20-25 հազ. մարդ, որին արշավանքների ժամանակ գումարվել են լրացուցիչ ուժեր՝ բանակի թվակազմը հասցնելով, չի բացառվում, ընդհուպ մինչև 40 հազ-ի[1917]:

Որպես օրինակ նշենք, որ ասորեստանյան բանակի անձնակազմին վերաբերող ցուցակներից մեկի համաձայն, ուր տրվում է առանձին զորահրամանատարների գլխավորած զորամիավորումների թվակազմերը, տարբեր վայրերում տեղակայված և մշտապես զենքի տակ գտնվող զորքերի ընդհանուր թիվը կազմում էր մոտ 34 հազ. մարդ, ընդ որում՝ տեքստը պակասավոր է[1918]: Սարգոն II-ի կողմից նվաճված և ռազմավարական առումով մեծ նշանակություն ունեցող Կումմուխ երկրում ասորեստանցիների տեղաբաշխած ուժերի թիվը, եթե հավատանք աղբյուրին, հասնում էր 31 հազ. 500 զինվորի, այդ թվում՝ 1500 հեծյալ, ինչպես նաև 150 մարտակառք[1919]: Ասորեստանյան Կար-Աշշուր քաղաքում արշավանքի պատրաստվող զորաբանակի համար կուտակված մթերքի պաշարները[1920] բավարար էր մեկ ամիս շարունակ ապահովելու առնվազն 32 հազ. մարդու և 3 հազ 500 կենդանիների[1921]:

Ի դեպ, ասորեստանյան բանակի առավելագույն թվաքանակը, որը հայտնի է տարբեր արշավանքների նկարագրություններ պահպանած արքայական հանդիսավոր արձանագրություններից, հասնում էր 120 հազ. զինվորի՝ ներառյալ դաշնակիցներին[1922]:

---

[1915] Տե՛ս Lafont 2008: 40ff.; նույնի՝ 2009: 19.

[1916] CTU I, A 5-66, 8-29, 8-32 ևն; Dan 2010c: 53. Տե՛ս և հմմտ. նաև Balkan 1960: 144f.

[1917] Տե՛ս նաև Есаян 1966: 106. Հմմտ., սակայն, Հմայակյան 2012, էջ 40 (կես մլն.); Konakçı, Baştürk 2009: 195ff. (մինչև 100 հազ.).

[1918] Dalley, Postgate 1984: 43ff.; Fales, Postgate 1995, No. 126.

[1919] Fuchs 1994: 224, 349 (Z. 116-117), 179, 338 (410).

[1920] Lanfranchi, Parpola 1990, No. 250.

[1921] Fuchs 2005: 41. Հմմտ. Fales 1990a: 23ff.; Richardson 2011: 37, n. 131.

[1922] Grayson 1996: 39 (A.0.102.6 iii 25); 53 (A.0.102.10 iii 15-16). Թվական այլ տվյալների համար տե՛ս Malbran-Labat 1982: 89f. Հմմտ. De Odorico 1995: 107ff.

Ասորեստանյան պակասավոր տեքստերից մեկում նշվում է Կալախից ոչ հեռու գտնվող Կալզու քաղաքում կենտրոնացված 300 հազ-ոց բանակի մասին (3 ME LIM)[1923]: Սակայն, հազիվ թե հնարավոր լինի և ճիշտ՝ հավատ ընծայելու թվական այս վերջին տվյալին[1924]:

### 2.3.9. Էթնիկ կազմը

Ուրարտական տերությունը բազմազգ կայսրություն էր: Եթե ենթադրենք, որ սկզբնապես՝ դեռևս իր գոյության վաղ փուլում, բիայնական «նոմային» զորքն ուներ շատ թե քիչ միատարր էթնիկ կազմ, ապա արդեն Իշպուինիի և Մենուայի շրջանում այն միանշանակ ունենալու էր խայտաբղետ կազմ՝ բաղկացած բիայնական և նաիրյան տարբեր երկրների աշխարհազորից: Այդ պատկերը պահպանվելու էր տևական ժամանակ: Ցավոք, ուրարտական աղբյուրները տալիս են միայն անուղղակի վկայություններ: Ասորեստանյան աղբյուրները ևս, եզակի բացառությամբ, նույնպես ոչինչ չեն հաղորդում ուրարտական բանակի էթնիկ կազմի մասին: Բացառությունը վերաբերում է Ռուսա Սարդուրորդու շրջանին վերաբերող ասորեստանյան տեքստերի մի խմբի: Դրանցից մեկը հիշատակում է ուրարտական բանակի *pirru*-միավորումները[1925], մյուսը՝ *kallāpu*-զորքեր ([lú]*kallāb/pu*)[1926]:

Ուրարտական բանակի *pirru*-միավորումների մասին նշվեց վերը (տե՛ս 2.3.2.): Ինչ վերաբերում է *kallāpu*-զորքերին, ապա ասորեստանյան զեկուցագրերից մեկում հիշատակվում են ուրարտական բանակի *kallāpu*-զորքերի հրամանատարներ, ինչը վկայում է, որ բանակի կազմում եղել են նման զորամիավորումներ: Ասորեստանյան աղբյուրներից դատելով՝ *kallāpu*-ն, որը դիտարկվում է որպես «հեծյալ սուրհանդակ», «հեծյալ նիզակակիր, որը կարող էր կռվել նաև որպես հետևակային», «սակրավոր», «կանոնավոր հետևակ» և այլն[1927], կարող էր վերաբերել բուն ասորեստանյան (ասորեստանցիներից կազմված) հետևակին[1928], մինչդեռ, ոչ-ասորեստանցիներից կազմված օժանդակ հետևակն արտահայտվել է այլ գրությամբ՝ LÚ.ÉRÍN.MEŠ

---

[1923] Saggs 2001, ND 2434r$_{16}$.

[1924] Ասորեստանյան բանակի թվակազմին վերաբերող վերջին քննարկումները տե՛ս Fales 2010a: 97ff. Այլ զուգահեռների համար տե՛ս և Հմմտ. Hamblin 2006: 198ff.

[1925] Lanfranchi, Parpola 1990, No 87$_{13}$, ուր հիշատակվում են ուրարտական բանակի *pirru*-միավորումների երեք հրամանատարներ:

[1926] Deller 1984: 107 (Nr. 3.4 Vs 5); Lanfranchi, Parpola 1990, No. 88: 5.

[1927] Дьяконов 1951a, № 50 (3); Malbran-Labat 1982: 53, 82f.; Dalley 1985: 37; Dezső 2006b: 130, 214; Nadali 2010: 133f.; Fales 1999: 88ff.; նույնի՝ 2010a: 108f.; Radner 2010: 274; Scurlock 2014: 725ff.

[1928] Mayer 1983: 70f. (Z. 26), 94f. (Z. 258), 112f. (Z. 426). Տերմինի՝ նման իմաստով ընկալումը տե՛ս Postgate 2000: 104f. Տե՛ս նաև Fales 2009: 88ff., 93; Հմմտ. CAD, K, 1971: 77f. (kallābu); Mayer 1978: 185; Malbran-Labat 1982: 82f.; Dalley, Postgate 1984: 34, 229; Dalley 1985: 37; Mayer 1995: 443f.; Nadali 2010: 133. Տե՛ս և հմմտ. նաև Dezső 2012a: 69ff.

CÌR.2.MEŠ / $^{lú}$*zūku* (GÌR.2))[1929]: Եթե դա իրոք այդպես է, ապա կարելի է կարծել, որ ուրարտական բանակի *kallāpu*-զորքերը ներկայացրել են բուն ուրարտական հետևակը:

Տարբեր էթնոքաղաքական գործընթացներով պայմանավորված՝ ասորեստանյան բանակի հետևազորում *kallāpu*-զորքերի թիվը խիստ կրճատվել էր՝ ի հաշիվ նահանգային/մարզային զորքերի: Ուշագրավ է, որ վերը նշված Մազամուա նահանգի զորագնդում ասորեստանցիներից են կազմված եղել զորագնդի ողջ հեծելազորը, կառավարներն ու կառամարտիկները, սպասարկող անձնակազմը (գրագիրներ, հացթուխներ ևն) և թվով 80-ը՝ եղել են *kallāpu*-զինվորներ:

Թիգլաթպալասար III – Սարգոն II-ից սկսած ասորեստանյան բանակը արագորեն փոխեց իր էթնիկ պատկերը: Սարգոն II-ի օրոք գրված արքայական զեկուցագրերից մեկից պարզ է դառնում, որ, օրինակ, Զամուայի նահանգային գնդում ոչ-ասորեստանցիները (800 հոգի՝ իթու'ա և կուրրա ցեղերից) գերակշռել են ասորեստանցիներին (630 հոգի): Պատկերը նույնն էր բանակի այլ միավորումներում ևս: Նման կազմ է ունեցել, օրինակ, Զամուային սահմանակից Արզուխինա նահանգի զորագունդը: Մեզ հասած մի զեկուցագրի համաձայն՝ զորագունդն ունեցել է կառամարտիկներ (ÉRIM.MEŠ *ša* GIŠ.GIGIR), հետևակայիններ՝ $^{lú}$*kallāpu*-զորքեր և $^{lú}$*zūku*-զորքեր, ինչպես նաև կուրրայցի ($^{lú}$*qurrāyu*) և իթու'այցի ($^{lú}$*itu'āyu*) զինվորներ[1930]: Հայտնի է ասորեստանյան տերության արևելյան նահանգներում տեղաբաշխված զորքերի շարքում թաբալցիների առկայության մասին[1931]: Ասորեստանյան տարբեր զեկուցագրերում բանակի շարքերում հիշատակվում են պաղեստինյան զինվորներ, ուլլուբացիներ, կումմուխցիներ, սամարացիներ ևն[1932]: Աղբյուրներից դատելով՝ միայն պալատի պահակազորի շարքերում ծառայում էին տասից ավելի էթնոսների ներկայացուցիչներ[1933]: Արդեն Ք.ա. 7-րդ դարում էթնիկ ասորեստանցիները նորասորեստանյան բանակի թվակազմում միանշանակ փոքրամասնություն էին[1934]:

Ինչ վերաբերում է կոնկրետ էթնիկ խմբերին, որոնց ներկայությունը ուրարտական բանակում միանգամայն սպասելի է, ապա ուրարտական սեպագիր աղբյուրները լռում են այս հարցում: Գրավոր աղբյուրներում առայժմ չենք հանդիպում տվյալների, որոնք կվկայեին ուրարտական բանակում էթնիկ սկզբունքով ձևավորված զորամիավորումների գոյության մասին, ինչպիսիք կային ասորեստանյան

[1929] Mayer 1983: 70f. (Z. 32), 100ff. (Z. 325, 330).
[1930] Lanfranchi, Parpola 1990, No. 215; Parpola 2000: 89ff.
[1931] Fuchs, Parpola 2001, No. 48.
[1932] Համապատասխանաբար՝ Parpola 1987, No. 155, 172; Saggs 2001, ND 2434, 1495; Dalley 1985: 36ff.
[1933] Fuchs 2011: 387.
[1934] Lanfranchi, Parpola 1990, No. 215.

բանակում[1935]: Մյուս կողմից, դատելով այն փաստից, որ տեքստերում մի քանի անգամ հիշատակվում են գերի տարված ռազմիկներ (Բաբիլոնի, Ուրմե և այլ երկրներից, տե՛ս ստորև, Աղ. 28), կարելի է կարծել, որ նրանց ընդգրկել են բանակի կազմում, ինչպես դա ենթադրվում է Խաթե և Ծուփա երկրներից բերված 6 հազ. 600 զինվորների դեպքում[1936]: Սակայն, արդյո՞ք կազմավորվել են էթնիկ սկզբունքով ձևավորված զորամասեր, հայտնի չէ: Կարելի է մտածել, որ կենտրոնական իշխանությունները պետք է որ խուսափեին նման քայլերից:

Մի քանի աղբյուր, որոնցում հանդես են գալիս բարձրաստիճան պաշտոնյաներ և զինվորականներ, կարծես վկայում են, որ ընդհուպ մինչև Ռուսա Արգիշթորդու ժամանակաշրջան քաղաքական/ռազմական իշխանությունը շարունակել է գտնվել բիայնացիների ձեռքին: Նրանց անունները, որոնց թվում նաև՝ խոսուն անձնանուն, ունեն տեղական/բիայնական տեսք և նշվում են առանց էթնիկ ծագումը/պատկանելությունը շեշտադրելու (տե՛ս վերը): Սակայն, տերության տարածքային աճը հատկապես Սարդուրի Արգիշթորդու ժամանակ, հսկայածավալ վերաբնակեցումները, ինչպես նաև տարածաշրջան նոր էթնիկ խմբերի մուտքը չէր կարող իր ազդեցությունը չթողնել նաև բանակի էթնիկ կազմի վրա: Ուրարտական բանակում հայտնվեցին կիմմերական և սկյութական զորքեր[1937], ենթադրվում է, որ Թեյշեբայի քաղաքի (Կարմիր բլուր) կայազորում ծառայել են սկյութ զինվորներ, ըստ ոմանց՝ քաղաքում տեղակայված կայազորի շարքերում կար սկյութական կամ կիմմերական ջոկատ[1938]: Ըստ Ջեք Յաքարի՝ Թոփրաքքալեում պահակային ծառայություն (՞) կատարող «երկրների մարդիկ»՝ թվով 300 հոգի (3 ME $^{LÚ}$KUR.KUR$^{MEŠ}$-*e*), կարող էին հավաքագրված լինել տարբեր քոչվոր ցեղերի ռազմիկներից[1939]:

Ռուսա Սարդուրորդու կողմից մարզային զորքերի կազմավորումը, դրանցում տեղական էթնիկ տարրերի և հատկապես՝ կախյալների ընդգրկումը, ինչն անխուսափելի գործընթաց էր տերության աճող ռազմական ու մարդկային կարիքները բավարարելու համար, կտրուկ արագացրեց այս գործընթացը, հավանաբար, փոխելով էթնիկ պատկերը բանակում: Իհարկե, կարելի է ենթադրել, որ ուրարտական իշխողները հոգ են տարել՝ թույլ չտալու միևնույն էթնիկ խմբից մեծաքանակ ռազմիկների ծառայությունը միևնույն զորամասում կամ ռազմական գոտում և նրանց

[1935] Տե՛ս, օրինակ, Dalley, Postgate 1984: 36.

[1936] Дьяконов 1952a: 95, 99; Меликишвили 1958: 46. Հմմտ. Salvini 2002b: 41.

[1937] Меликишвили 1951a: 38 сл.; նույնի՝ 1954: 316, 363 сл.; Wartke 1993: 70; Smith 1996: 280 and n. 9.

[1938] Алексеев 1992: 40; Тер-Мартиросов 1994: 80 сл. Քաղաքում սկյութական ներկայության համար տե՛ս Пиотровский 1959a: 241 сл; նույնի՝ 1989: 3 сл.

[1939] Yakar 2006: 51. Տե՛ս և հմմտ. նաև Diakonoff 1989: 99.

ցրել են տերության տարբեր հատվածներում: Բայց մյուս կողմից իրականացված մեծածավալ գերեվարությունները, հատկապես՝ Էթիունիից, ըստ երևույթին արդեն փոխել էր լեզվական իրավիճակն անգամ տերության բնօրրանում և շատ հաճախ տարբեր, իրարից բավական հեռու ընկած մարզերից հավաքվող զինվորները հիմնականում արդեն նույն լեզվի կրողներ էին: Եվ այս առումով արտահայտված կարծիքը՝ տեղի հայախոս բնակչության՝ Ուրարտուի զինվորական խավը կազմելու մասին, ուշ-ուրարտական շրջանի համար թվում է միանգամայն իրական[1940]:

Ամփոփելով ասվածը կարելի է նշել, որ Ք.ա. 8-րդ դ-ի երկրորդ կեսից սկսած բանակի համալրման կարևոր աղբյուրներից մեկը, եթե ոչ՝ հիմնականը, նվաճված տարածքների կամ այդ տարածքներից բերված օտար ծագման բնակչությունն էր, և կարելի է կարծել, որ Ք.ա. 7-րդ դ-ում ուրարտացիներն արդեն փոքրամասնություն էին կազմում բանակում: Կարելի է վստահությամբ պնդել, որ Ք.ա. 7-րդ դ-ի կեսերին ուրարտական բանակի հրամանատարական կազմն էր միայն ներկայացնում տերության իշխող վերնախավը, այն էլ, թերևս, արդեն ոչ ամբողջությամբ:

## 2.4. Ամրոցաշինությունը և ամրաշինությունն Ուրարտուում

### 2.4.1. Ամրոցաշինությունն Ուրարտուում

#### 2.4.1.1. Տեքստային վկայություններ

Ուրարտական արձանագրություններում ընդհանուր առմամբ հիսունհինգ անգամ հիշատակվում է «ամրոց» (É.GAL) կառուցելու մասին՝ ի լրումն քաղաքների (URU/*patari*), որոնց մի մասը հիշատակվում է անվանապես և հանդիսացել են հզոր ամրոցներ (Աղ. 12-13 և Քարտեզ 3-1): Ամրոցաշինությանը վերաբերող ամենավաղ տեքստերը թվագրվում են Իշպուինիի կառավարման շրջանով[1941], իսկ վերջին վկայությունները վերաբերում են Ռուսա Արգիշթորդու իշխանության շրջանին[1942]: Տեքստերի մեծամասնությունը կազմվել է Մենուայի ժամանակ (35 հիշատակություն, տե՛ս Աղ. 12): Անվանապես հիշատակվող ամրոցներից ոչ բոլորն է հնարավոր հնագիտորեն նույնականացնել, առավել ևս, ոչ բոլոր ամրոցներն են, որ աղբյուրներում հիշատակվում են որպես այդպիսին: Օրինակ, Բաստամը՝ ուրարտական խոշորագույն ամրոցներից մեկը, հանդես է գալիս որպես տաճար կամ տաճարային համալիր (É.BÁRA)՝ կրելով «Ռուսայի փոքր քաղաք» անունը ($^{m}$*rusai* URU.TUR)[1943]:

---

[1940] Diakonoff 1991: 19f.; նույնի՝ 1992a: 53.
[1941] КУКН, Послесловие, стр. 531; CTU I, A 2-6 A-C, A 2-9 A-B.
[1942] КУКН, 415; CTU I, A 12-1, A 12-4 II, A 12-9.
[1943] КУКН, $419_{1-7}$; CTU I, A $12\text{-}7_{1-7}$.

Բիայնական ամրոցներին վերաբերող գրավոր աղբյուրների մյուս խումբը ասորեստանյան տեքստերն են: Ամենավաղ տեքստը դա ասորեստանյան արքա Շամշի-Ադադ V-ի տարեգրությունն է, որտեղ հիշատակվում է Ուշպինայի (Իշպուինիի) 11 ամրացված քաղաքներ և 200 բնակավայրեր գրավելու մասին[1944]:

Ք.ա. 735 թ-ի արշավանքից հետո ուրարտական 33 քաղաք և ամրոց նվաճելու և Ասորեստանին կցելու մասին է հայտնում Թիգլաթպալասար III-ը[1945]: Ուրարտական ամրոցների առավել մանրամասն նկարագրությունը պահպանել է «Լուվրի աղյուսակ»-ը: Վերջինս հիշատակում է ընդհանուր առմամբ 430 բնակավայր նվաճելու և ավերելու մասին[1946]: Սարգոն II-ի տարեգրության մեջ նշվում է 48 քաղաք և ամրոց նվաճելու մասին՝ շրջապատող բնակավայրերով հանդերձ[1947]: Ուրարտական 55 (տարբերակ՝ 56) ամրացված քաղաքներ, 11 անմատչելի ամրոցներ նվաճելու մասին է ասվում Սարգոն II-ի մեկ այլ արձանագրության մեջ[1948]:

Ամրոց-ամրությունների առավել խիտ շղթան կառուցվել էր Ուրմիա լճի ավազանի ուրարտական տիրույթներում և հանդիսանում էր տերության գլխավոր հենարաններից մեկը: Այստեղ ուրարտացիներն ունեին 60-ից ավելի բերդամրոց, ամրոց և ամրություն (տե՛ս ստորև)[1949]: Միայն Ուրմիայի արևմտյան ափերին, ըստ «Լուվրի աղյուսակ»-ի, ուրարտացիներն ունեին 6 հզոր ամրոց[1950]: Դրանցից մեկը՝ Ուայաիս քաղաքը, ուրարտական բանակի հիմնական հանգրվանն էր այս տարածքում: Հայտնի է, որ Ուայաիսը հանդիսանում էր ուրարտական զորքերի կենտրոնացման վայր և արշավանքների մեկնակետ: Ասորեստանյան աղբյուրը հետևյալ խոսքերով է տալիս ամրոցի նկարագրությունը.

«*Ուայաիսը՝ նրա* (Ռուսայի) *ամրացված քաղաքը և մեծ բերդը, նրա բոլոր բերդերից հզորագույնը և ամուր կառուցվածը, որտեղ բնակեցված էին նրա քաջ ռազմիկները, հետախույզները....., մարզպետները՝ իրենց գնդերով.....*»[1951]:

---

[1944] Grayson 1996: 184 (A.0.103.1: ii 16b-34a).

[1945] Tadmor 1994: 54f. (The Calah Annals 20, lns. 1′-8′), 132ff. (Summ.Inscr. III, lns. 25′-32′.; թերևս նաև Summ.Inscr. V, lns. 11-24; Summ.Inscr. VII, lns. 42-44; Summ.Inscr. IX, lns. 5′ff.): Առավել ամբողջական ցանկը տե՛ս 122ff. (Summ.Inscr. I, lns. 25-36): Քիչ այլ կերպ է ներկայացված ցանկը Summ.Inscr. IX, lns. 8′-23′-ում: Գերեվարությանն ու ձեռք բերված ավարին վերաբերող թվական որոշ տվյալներ են պահպանվել The Calah Annals 5, տող 1-7-ում:

[1946] Mayer 1983: 112f. (Z. 422).

[1947] Fuchs 1994: 112, 320 (Z. 135-147b).

[1948] Fuchs 1994: 204, 345 (Z. 43).

[1949] Kleiss 1976a: 41ff., Abb. 24; Kleiss, Hauptmann 1976: 28ff., Blatt 1; Kleiss 1977a: 138, Abb. I; Kroll 1976: 171ff., Abb. 45-46; Zimansky 1985: 36ff.; Dyson 1989a: 5f. Հյուսիս-արևմտյան Իրանում ուրարտական ամրությունների մասին առավել մանրամասն տե՛ս Biscione 2012: 77ff.

[1950] Mayer 1983: 98f. (Z. 297-305).

[1951] Mayer 1983: 98f. (Z. 299-301, 303-305).

Ուրարտուի մերձուրմյան հենարանը հնարավորություն էր տալիս ուղիղ միջամտելու ասորեստանյան տերության համար ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող շրջաններում՝ Տավրոսյան և Զագրոսյան լեռնագոտիներում ընթացող իրադարձություններին: Ասորեստանցիները մեծ նշանակություն էին տալիս այդ գոտու վերահսկողությանը: Ուրարտուի դեմ Սարգոն II-ի ձեռնարկած արշավանքի հիմնական նպատակը, ըստ երևույթին, Ուրարտուի մերձուրմյան հենարանի ոչնչացումն էր[1952]:

Նման ամրացված գոտիներ ուրարտական տերությունը ստեղծել էր նաև առավել խոցելի և ռազմավարական մեծ նշանակություն ունեցող հատվածներում: Սկսած Ք.ա. 8-րդ դարի երկրորդ կեսից՝ Ուրարտուն սկսեց ամրացնել Ասորեստանի հետ ունեցած սահմանը: Սահմանի մի զգալի մասն անցնում էր բնական արգելքների թելադրած ուրվագծով, հիմնականում՝ ջրային արգելքներ: Հայտնի է, որ ափագծի հսկողությունն իրականացնում էին զինվորներն առանց տարածքը լրացուցիչ ամրացնելու[1953]: Մինչդեռ, ցամաքային սահմաններն ամրացվում էին ամրությունների շղթայով: Ասորեստանյան աղբյուրները վկայում են ուրարտական նման ամրաշղթաների մասին, ինչպես, օրինակ, ասորեստանյան արքային ուղղված Շուլմու-Բելի զեկուցագրում, ուր խոսվում է ուրարտական սահմանապահ ամրությունների բերդապետերի մասին (*amēl*rab ĶAL.ṢUmeš TILLA.KI-*a*-*a*)[1954]:

Ուրարտական ամրոցները գտնվում էին միմյանցից տեսանելի հեռավորության վրա, հաղորդակցվում էին կրակի ազդանշաններով, ինչի մասին են վկայում ասորեստանյան մի քանի այլ աղբյուր[1955]: Այդ նպատակին էին ծառայում նաև ամրոցներին մերձակա բարձունքների վրա կառուցված դիտակետ-աշտարակները[1956]: Կալաթգահի ուրարտական ամրոցից հնարավոր էր կրակի կամ ծխի ազդանշաններով հաղորդակցվել շրջակա առնվազն 4 ամրոցների հետ[1957]:

### 2.4.1.2. **Ամրոցներն Ուրարտուում ըստ հնագիտական տվյալների**

Բիայնական ամրոցաշինությանը վերաբերող ամենավաղ տեքստերը թվագրվում են Իշպուինիի կառավարման շրջանով: Այս շրջանի համար ունենք նաև հնագիտական վկայություններ: Մասնավորապես, բիայնական առաջին ամրոցների

[1952] Diakonoff, Medvedskaya 1987: 389; Medvedskaya 1989: 446.
[1953] Տե՛ս, օրինակ, Lanfranchi, Parpola 1990, No. 3 տեքստը, ուր նշվում է գետի երկու ափերը հսկող ասորեստանյան և ուրարտական զինվորների միջև տեղ գտած նետաձգության մասին:
[1954] Saggs 2001, ND $2402_4$.
[1955] Mayer 1983: 94f. (Z. 249-250). Տե՛ս նաև Lanfranchi, Parpola 1990, No. $12_{10\text{-}12}$.
[1956] Տե՛ս նաև Հովհաննիսյան 1964, էջ 27; Zimansky 1985: 45 (հղված գրականությամբ); Earley-Spadoni 2015: 22ff.
[1957] Kleiss, Kroll 1977: 72, Abb. 23.

թվին են դասվում Քալեջիքը, Ստորին Անձավը և Ծվստանի (թուրք. Զիվիսթան, այժմ՝ Էլմալըք) զույգ ամրոցները[1958]: Դրանք կառուցվել են Տուշպա տանող ճանապարհների վրա՝ պաշտպանելով մայրաքաղաքի մատույցները: Այս շարքից Ծվստանի ստորին ամրոցը (Աշաղը Էլմալըք քալեսի) գտնվում էր բիայնական պաշտամունքային ամենավաղ կառույցներից մեկի՝ Հազինե Փիրի Քափըսը կոչվող ժայռափոր «դռան» մերձավորությամբ[1959]:

Արտաքին նվաճումներին զուգահեռ լայնածավալ ամրաշինություն իրականացվեց Իշպուինիի և Մենուայի «համատեղ գահակալության» շրջանում: Մերձուրմյան ավազանում հիմնադրվեց Կալաթգահի խոշոր ամրոցը՝ պետության գլխավոր հենարաններից մեկն այս տարածաշրջանում[1960]: Դեպի արևելք՝ Պուլուադի երկրի դեմ ձեռնարկված հաղթական արշավանքից հետո Արաքսին մերձակա տարածքներում՝ Նախիջևանի և Մակվի շրջաններում, ևս իրականացվեցին ամրաշինական աշխատանքներ[1961]:

Ուրարտուում ծավալված ամրաշինական հիմնական աշխատանքները վերաբերում են Մենուայի իշխանության շրջանին: Նրա առաջին ձեռնարկումներից էր Մենուախինիլի քաղաքի կառուցումը Մեծ Մասիսի մերձավորությամբ, այն է՝ Քարաքոյունլուի ամրոցը կամ Արտաշատը (տե՛ս ստորև): Դեպի հյուսիս պետության ընդլայնմամբ անհրաժեշտություն առաջացավ ամրացնելու նոր սահմաններն առավել դյուրամատչ հատվածներում, հատկապես՝ Բասենի դաշտում, ուր կառուցված ամրոցները վկայված են հնագիտորեն:

Արածանիի ափին, ուր գետի հոսանքն արևելքից թեքվում է հարավ, հիմնադրվեց Քայալըդերե (Ներքին Խնձոր) հզոր ամրոցը: Տասնյակ ամրոցներ հիմնադրվեցին ինչպես նորանվաճ տարածքներում, այնպես էլ՝ երկրի ներքին շրջաններում: Մենուայի շինարարական գործունեության արիասիքն է Վերին Անձավի բերդաքաղաքը՝ որը հսկում էր Տուշպայի մատույցները հյուսիս-արևելքից, և ինչ-որ շրջանում հանդիսացել է նաև բիայնական արքաների նստավայր[1962]: Արգիշթի Մենուայորդու և Սարդուրի Արգիշթորդու օրոք շարունակվեցին տերության ընդլայնվող սահմաններն ամրացնելու աշխատանքները հատկապես Շարուրի դաշտում՝ ապահովելով կապը սկզբնապես Վանա լճի ավազանի և Արարատյան դաշտավայրի, ապա

[1958] Burney, Lawson 1960: 178ff.; Belli, Dinçol 1980 [1982]: 168f.; Dan 2010c: 49ff.; Çavuşoğlu, Biber 2012: 329; Biscione, Dan 2014: 124, Figs. 1, 4.
[1959] Belli, Dinçol 1980 [1982]: 171ff.; Özfırat 2009b: 354.
[1960] Muscarella 1971: 44f.; Belgiorno *et al*. 1984: 177 (n. 136); Zimansky 1985: 112, nt. 64.
[1961] Kroll 1976: 173, Abb. 46.
[1962] Belli 2004a: 285f.

նաև՝ Սևանա լճի ավազանի միջև: Արարատյան դաշտավայրում հիմնվեցին Էրեբունի և Արգիշթիխինիլի բերդաքաղաքները և բազում փոքր ամրոցներ, Էրիախիում (Շիրակ) կառուցվեց Հոռոմի ամրոցը: Շարունակվեցին մերձուրմյան ավազանի ուրարտական տիրույթներն ամրացնելու աշխատանքները[1963]: Արևմուտքում ուրարտական տերությանը սկսեց ծառայել Մելիդից խլված նրա մերձեփրատյան ամրաշղթան:

Ռուսա Սարդուրորդուց սկսած ուրարտական իշխանությունները հիմնականում ձգտում էին ամրացնել Ասորեստանի հետ սահմանը, իսկ մերձուրմյան հենարանի կորստից հետո ձեռնամուխ եղան ամրացնելու Ուրմիա լճի հյուսիս-արևմտյան տարածքները՝ այստեղ կառուցելով ամրությունների նոր շղթա: Ուրարտուում Ք.ա. 7-րդ դ-ի կեսերին նկատվող բուռն ամրաշինությունը, արդեն իսկ գոյություն ունեցող ամրոցների լրացուցիչ ամրացումներն ունեին արդեն այլ պատճառներ և դուրս է քննարկվող հարցի շրջանակներից[1964]:

Ընդհանուր առմամբ՝ հնագիտորեն վկայված, մեզ հայտնի ուրարտական ամրոցների թիվը կազմում է շուրջ 300: Դրանցից 13-ը խոշոր բերդաքաղաքներ են, 27-ը՝ բերդամրոցներ, մնացյալ 254-ը տարբեր մեծության և ամրացվածության ամրոց-ամրություններ են: Ի լրումն՝ մոտ 30 ամրոցի ուրարտական պատկանելության հարցն ամբողջությամբ փարատված չէ[1965]: Այստեղ ամրոցները մենք ներկայացնում ենք խմբավորելով մի քանի ամրաշղթաների մեջ, որոնք մեր կարծիքով հանդիսացել են առանձին ամրացված գոտիներ: Թե հնագիտական, և թե գրավոր աղբյուրներով Ուրարտուում ուրվագծվում են հետևյալ գոտիները:

2.4.1.2.1. «**Ա**» **գոտի**

Առաջին գոտին դա Վանա լճի արևելյան ավազանն է: Վանա լճի արևելյան ավազանն ամենախոշոր ամրացված շրջանն է, ինչը բնական էր, քանի որ այստեղ էր ընկած տերության նոր մայրաքաղաք Տուշպան (Բ-43 – Բ-44): Տերության միջնաշխարհին ընդգրկող գոտում կառուցված էին առնվազն 57 բերդաքաղաք, բերդամրոց, ամրոց-ամրություն և ճանապարհային կայան, որոնցից Տուշպան խոշորագույնն էր իր տարածքով և առավել ամուրը ողջ տերության մեջ: Մայրաքաղաքին հաջորդում էին 4 բերդաքաղաք (Վերին Անձավ, Հայկաբերդ, Թոփրաքքալե, Այանց), 3 բերդամրոց (Ամյուկ, Գործոթ, Շուշանց), ինչպես նաև առնվազն 49 ամրոց-ամրություններ (նկ. Բ-45 – 51, Աղ. 20, Քարտեզ 3-2ա-բ):

[1963] Ամփոփ տե՛ս Kleiss 1976a: 41ff., Abb. 24; Kleiss, Hauptmann 1976: 28ff.; Kroll 1976: 171ff., Abb. 45-46.; Forbes 1983: 31ff.; Pecorella 1988: 288ff.; Biscione 2003: 174ff., Fig. 8.6; նույնի՝ 2012: 77ff., Fig. 05.01.
[1964] Grekyan 2009: 102ff.
[1965] Համմտ. Jakubiak 2003a: 15ff., Tab. 1; Dan 2010a: 332, n. 5.

2.4.1.2.2. «**Բ**» **գոտի**

Վանի ավազանի ուրարտական հուշարձանների առաջին ուսումնասիրությունն իրականացրել է Չառլզ Բըրնին: Սարգոն II-ի արշավանքի ուղին տանելով Վանա լճի հյուսիսային, ապա և՝ արևմտյան ափերով, նա «Լուվրի աղյուսակ»-ում հիշատակվող մի շարք տեղանուններ փորձում էր համադրել իր այցելած և ուսումնասիրած հնավայրերի հետ: Մի կողմ թողնելով Սարգոնի՝ Վանա լճի հյուսիսային և արևմտյան ափերով անցնելու հնարավորությունը, ինչը կարելի է այժմ պարզապես բացառել, նրա կատարած աշխատանքի նշանակությունը, անկասկած, անգնահատելի է[1966]:

Վանա լճի հյուսիսային ավազանում ընկած հենակետերի թիվը հասնում էր 40-ի, այդ թվում՝ 1 բերդաքաղաք (Քեֆ-քալեսի – Արծկե/Ադըլջևազ, այն է՝ «Զիուկունի երկրի Խալդիի քաղաք»-ը), 4 բերդամրոց (Դելիչայ, Ազնավուրթեփե, Քանջըքլը, Բաղդըշան հյոյուք) և 35 այլ ամրոց-ամրություն (Բ-52/1, Աղ. 20, Քարտեզ 3-3ա-բ):

2.4.1.2.3. «**Գ**» **գոտի**

Վանա լճի հարավային ավազանը աչքի չի ընկնում պաշտպանական խոշոր կառույցներով կամ խոշորածավալ քաղաքաշինությամբ: Սա կարող էր պայմանավորված լինել այն հանգամանքով, որ պաշտպանական դեր այստեղ կատարում էր բավական դժվարամատչ Տավրոսյան լեռնաշղթան: Այս փաստով կարելի է բացատրել Վանից հարավ և հարավ-արևմուտք ընկած տարածքերում ուրարտական ամրոցների սակավությունը՝ առայժմ հայտնի տվյալներով՝ ընդամենը երկու ամրոց, որոնցից մեկը՝ բերդամրոց (Ոստան), ինչպես նաև մեկ պահակակետ-աշտարակ (Բ-52/2, Աղ. 20, Քարտեզ 3-4ա-բ):

2.4.1.2.4. «**Դ**» **գոտի**

Վանա լճի արևմտյան ավազանում կառուցված ամենախոշոր հենարանը դա Քայալըդերե (Ներքին Խնձոր) բերդաքաղաքն է: Նրան հաջորդում են Դատվանի բերդամրոցը և 9 այլ ամրոց-ամրություններ: Ընդհանուր առմամբ՝ Վանա լճի արևմտյան ավազանում և մասնավորապես՝ Մշո դաշտում, մենք տեսնում ենք ուրարտական՝ բավական թույլ արտահայտված ռազմական ներկայություն (Բ-53 – Բ-55, Աղ. 20, Քարտեզ 3-5ա-բ):

2.4.1.2.5. «**Ե**» **գոտի**

Սա մերձեփրատյան գոտին է, ուրարտական խիստ ամրացված շրջաններից մեկը: Ուրարտական կենտրոնական իշխանությունը մեծ կարևորություն էր տալիս այս գոտու վերահսկողությանն ու պաշտպանությանը, որը հանգուցային կետ էր

[1966] Burney 1957: 37ff.

Միջագետքի, Սիրիայի, Փոքր Ասիայի արևելքի և Հայկական լեռնաշխարհի միջև: Այն ծառայում էր նաև իբրև դարպաս՝ դեպի Միջերկրական ծով ուրարտական առաջխաղացման համար, ինչը նկատվում է հատկապես Սարդուրի Արգիշթորդու օրոք: Ընդհանուր առմամբ՝ այս գոտում վկայված է ուրարտական 1 բերդաքաղաք (Ալթըն-թեփե), 4 բերդամրոց (Պաղին, Մերյեմ Դաղ, Խարբերդ, Բալու) և 29 ամրոց-ամրություն (Բ-56 – Բ-58, Աղ. 20, Քարտեզ 3-6ա-բ):

2.4.1.2.6. «**Զ**» **գոտի**

Ինչպես Վանա լճից հարավ և արևմուտք ընկած գոտու դեպքում, ուրարտական տերության մերձտիգրիսյան գոտին առավելապես պաշտպանված էր Տավրոսյան լեռներով և ուրարտական վերահսկողությունը սահմանափակվում էր միայն լեռնային ճանապարհները, գետանցումներն ու արահետները վերահսկելով: Ուրարտական ներկայությունն այստեղ արտահայտված չէ: Թեև Հաքքյարիի շրջանում վկայված մի քանի փոքր ամրոցներ համարվում են ուրարտական (Նահալահունի, Չըլգըրի-քյոյ, Հինդրինիսի Գենիբահեսթ ևն)[1967], սակայն, դա հավանական չէ, քանի որ, մի կողմից, այդ ամրոցներում չկան ուրարտական ներկայության հետքեր և բացի դա գտնվել են, ամենայն հավանականությամբ, ոչ թե Ուրարտուի, այլ Ուկկուի տարածքում: Ընդհանրապես, այս գոտում ընկած երկրները, ինչպես, օրինակ, Շուբրիան, Կումմեն, Խաբխին, Ուլլուբան և Ուկկուն, կատարում էին բուֆերի դեր[1968] և խոսել այս երկրներում ուրարտական տերության ռազմական կայուն ներկայության մասին ճիշտ չէ, եթե հաշվի չառնենք սեպագիր աղբյուրներից հայտնի մի քանի էպիզոդիկ դրվագները՝ այդ երկրների տարածք ուրարտական ներթափանցման փորձերի մասին:

2.4.1.2.7. «**Է**» **գոտի**

Ուրմիա լճին հարող տարածքները, բացառությամբ՝ լճի արևելյան ափերի, մոտ մեկուկես դար շարունակ գտնվել են ուրարտական տերության կազմում: Այս գոտու խոշորագույն կենտրոնը Բաստամն է՝ Ռուսա Արգիշթորդու հիմնադրած «Ռուսայի փոքր քաղաք»-ը: Բաստամին հաջորդում են 7 բերդամրոց (Վերախրամ, Կըզ Կալ'եհ, Լիվար, Կալ'եհ Գյավուր (Արաքս), Կալ'եհ Գյավուր (Խոյ), Կալ'եհ Էսմայիլ Աղա, Կալաթգահ) և 57 այլ ամրոց-ամրություններ (Բ-59 – Բ-64, Աղ. 20, Քարտեզ 3-7ա-գ):

2.4.1.2.8. «**Ը**» **գոտի**

Արաքսի ստորին հոսանքի շրջան ուրարտական ներթափանցումը սկսվել էր դեռևս Սարդուրի Արգիշթորդու օրոք, երբ նրա կողմից նվաճվեց և տերությանը

[1967] Jakubiak 2003a: 30.
[1968] Radner 2012: 243ff.

միացվեց Պուլուադի երկիրը՝ մայրաքաղաք Լիբլիունիով հանդերձ: Լիբլիունիի շուրջը կառուցված նոր ամրաշղթան ընդգրկում էր 6 ամրոց-ամրություններ, որոնց հանգուցային կետը Լիբլիունիի մերձավորությամբ կառուցված ուրարտական նոր բերդամրոցն էր:

Արգիշթի Ռուսայորդին այս նույն գոտում ձեռնարկեց ամրաշինական աշխատանքներ, հատկապես՝ դեպի արևելք իրականացրած արշավանքներից հետո: Ռազլիկից, Նաշթեբանից և Շիշեից գտնված նրա արձանագրություններում[1969] նվաճումներից բացի նշվում է նաև ամրոցներ կառուցելու մասին, որոնցից մեկը կրում էր «Խալդիի կայազոր»(՞), իսկ մյուսը՝ «Արգիշթիի կայազոր»(՞) անունը: Այդ տարածքներից հայտնի հնագիտական նյութը մղում է ենթադրելու, որ այստեղ ուրարտական ներկայությունը կարճատև էր և միգուցե այդ ընթացքում նրանք օգտագործել են տեղի ամրոցները՝ առանց էական վերափոխումների ենթարկելու (Բ-65/1, Աղ. 20, Քարտեզ 3-8ա-բ)[1970]:

2.4.1.2.9. «**Թ**» **գոտի**

Այս գոտու կենտրոնը Օղլանկալայի վաղերկաթեդարյան ամրոցն է, որը զբաղեցվել է ուրարտացիների կողմից առանց ամրոցը էականորեն վերափոխելու: Օղլանկալայից բացի վկայված են 10 այլ ամրոցներ, որոնցից երեքի ուրարտական պատկանելությունը վիճահարույց է (Բ-65/2, Աղ. 20, Քարտեզ 3-9ա-բ)[1971]:

2.4.1.2.10. «**Ժ**» **գոտի**

Արարատյան դաշտավայրը ուրարտական տերության տնտեսական կարևորագույն գոտին էր, որի պաշտպանությունն էին ապահովում 25 ամրոց-ամրություններ: Դրանցից 4-ը խոշոր բերդաքաղաքներ էին (Արգիշթիխինիլի-Արմավիր, Էրեբունի, Կարմիր բլուր, Արտաշատի ուրարտական ամրոց), կային 3 բերդամրոց (Ցոլակերտ (Թաշբուրուն/Մաղարալար Մևքիի), Քասըմ Թըղը/Գրե Հերշե, Աքթաշ) և 18 այլ ամրոց-ամրություններ (Բ-66 – Բ-69, Աղ. 20, Քարտեզ 3-10ա-բ):

2.4.1.2.11. «**Ի**» **գոտի**

Բայազետի հարթավայրը և Գայլատու լճի ավազանը հանդիսանում է կապող օղակ մի կողմից Վանա լճի ավազանի, իսկ մյուս կողմից՝ Արարատյան դաշտավայրի և Շարուրի դաշտի միջև, և ուներ ռազմավարական մեծ նշանակություն: Այս գոտում ընկած համեմատաբար խոշոր ամրոցը Օեմերաղա-քալեսին է, իսկ ամրոց-ամրությունների ընդհանուր թիվը հասնում է 7-ի (Բ-70/1-2, Աղ. 20, Քարտեզ 3-11ա-բ):

[1969] КУКН, 409-410; CTU I, A 11-4, A 11-5, A 11-6.
[1970] Kleiss 1972b: 144f., Abb. 17, Taf. 34/1-2; Kleiss 1978: 398. Հմմտ. Kroll 1984b: 42ff., 91.
[1971] Հմմտ. Кашкай 2002: 142.

2.4.1.2.12. «**Լ**» **գոտի**

Արփա գետի բարեբեր հովիտը, այստեղով անցնող և Արաքսի հովիտը Սևանա լճի ավազանին կապող կարևորագույն ճանապարհը ամենայն հավանականությամբ ուրարտական վերահսկողության տակ է անցել Սարդուրի Արգիշթորդու օրոք: Այս գոտու վերահսկողության համար կառուցվեցած ամրոցներից (որոնք հայտնի դարձան վերջին տարիներին) առավել ամբողջական ուսումնասիրվել է միայն Գետափ I ամրոցը: Հնարավոր է, որ ուրարտական շրջանում են կառուցվել վերը նշված ճանապարհի երկայնքով դասավորված ամրոցներից շատերը, որոնք հայտնի են ուշ շրջանի անուններով (ինչպես, օրինակ, Սուլեմա բերդը):

Սևանա լճի ավազանում ուրարտական մշտական ներկայությունը սկսվում է Ռուսա Սարդուրորդու իշխանության շրջանից միայն: Վերջինիս կողմից այստեղ վերակառուցվում են երկու ամրոցներ՝ Գավառը (Բերդի-գլուխ) և Ծովինարը, դրանք անվանակոչելով, համապատասխանաբար, Խալդի և Թեյշեբա աստվածների անուններով[1972]: Սակայն, դրանք համեատաբար փոքր ամրոցներ են և տարածաշրջանում վկայված չէ այնպիսի խոշոր կենտրոն, որը համադրելի կլիներ, օրինակ, Արարատյան դաշտավայրի բերդաքաղաքների հետ: Ընդհանուր առմամբ, ուրարտական զորքերի կողմից զբաղեցված ամրոց-ամրությունների թիվը Սևանա լճի արևմտյան, հարավ-արևմտյան և հարավային ափերին հասնում է առնվազն 15-ի (Բ-71/1, Աղ. 20, Քարտեզ 3-12ա-բ)[1973]:

2.4.1.2.13. «**Խ**» **գոտի**

Շիրակի դաշտավայրի ամենախոշոր ուրարտական ամրոցը Հոռոմն է: Ընդհանրապես, Շիրակի դաշտում ուրարտական ներկայությունը հնագիտորեն թույլ է արտահայտված: Այս գոտում՝ Ախուրյան գետի ձախափնյա հատվածում, Հոռոմից բացի ուրարտական ծագում է ենթադրվում երկու ամրոցների համար, այն է Ակունքը և Հյուսիսային Գառնահովիտը[1974]:

Շիրակի դաշտավայրից դեպի արևմուտք՝ Չըլդըր լճի շրջակայքում գտնվող ամրոցներից մի քանիսը կարող էին ծառայել որպես ռազմական հանգրվաններ: Ընդհանուր առմամբ, առայժմ միայն վստահորեն կարելի է նշել ընդամենը 3 ամրոցների ուրարտական պատկանելության մասին (Բ-71/2, Աղ. 20, Քարտեզ 3-13ա-բ)[1975]:

[1972] КУКН, $388_{5-6}$, $389_{17-18}$; CTU I, A $10\text{-}1_{5-6}$, A $10\text{-}2_{17-18}$. Salvini 2002b: 53ff.
[1973] Melkonyan *et al*. 2010: 90ff., Fig. 1.
[1974] Smith 1996: 293, n. 15, 390, 396; Smith, Kafadarian 1996: 29f.
[1975] Sinclair 1987: 418.

#### 2.4.1.2.14. «Ծ» գոտի

Դեպի հյուսիս պետության ընդլայնմամբ անհրաժեշտություն առաջացավ ամրացնելու նոր սահմանները նաև Բասենի դաշտում, ուր կառուցված ամրոցներից մի քանիսը վկայված են հնագիտորեն: Այստեղ ռազմական խոշոր հենարաններ չկային, իսկ ուրարտական ամրաշղթան կոչված էր վերահսկելու տերության հյուսիսային սահմանների անդորրն ու ճանապարհների անվտանգությունը: «Հյուսիսային ամրաշղթա»-յում ընդգրկված ամրոց-ամրությունների թիվը հասնում է 15-ի (Բ-72/1 – Բ-73/2, Աղ. 20, Քարտեզ 3-14ա-բ):

### 2.4.2. Ամրաշինությունն Ուրարտուում

#### 2.4.2.1. Պաշտպանական կառույցները

Ամրաշինությունն Ուրարտուում իրականացվում էր պետության կողմից՝ կիրառելով միասնական շինարարական չափորոշիչներ, խնամքով մշակված հատակագիծ և շինարարական միջոցներ[1976]: Շինարարության ժամանակ հաշվի էին առնում երկու կարևոր հանգամանք՝ լեռնաշխարհի կլիմայական պայմանները, ինչպես նաև ռելյեֆը հնարավորինս ամրաշինությանը ծառայեցնելու հնարավորությունը[1977]՝ այս առումով հետևելով վաղերկաթեդարյան ամրաշինական ավանդույթներին[1978]:

Ինչպես վաղերկաթեդարյան շրջանում՝ բիայնացիները ևս ձգտում էին ամրոցները կառուցել բարձրադիր, հիմնականում դժվարամատչ բլուրների կամ բարձունքների վրա: Հատկապես տերության հարավ-արևելյան շրջաններում՝ ասորեստանյան զորքերի հետ շփման գոտում, ուրարտական ամրոցների դիրքը անհնար էր դարձնում ռազմական մեքենաների կիրառությունը դրանց պաշարման ժամանակ[1979]: Ապահովելու համար պարիսպների ամրությունը՝ բիայնացի շինարարները ձգտում էին պատերի հիմքերը դնել մայր ժայռի վրա՝ աստիճանաձև հարթեցնելով ժայռը պարսպի հաստությանը համապատասխան, հաճախ՝ ամրության համար տալով որոշակի թեքություն դեպի ներս[1980]: Նույն կերպ և բարձրացվում էին պատերը՝ դեպի ներս որոշակի թեքությամբ (նկ. Բ-74)[1981]: Այանցի ամրոցի հարավային

---

[1976] Ուրարտական ամրաշինության համար տե՛ս նաև Ղաֆադարյան 1972, էջ 151-162; նույնի՝ 1984, էջ 57-66; Ավետիսյան, Բոբոխյան 2010, էջ 113-146 (նշվ. գրականությամբ); Çilingiroğlu 1983a: 28ff.; van Loon 1966: 38ff.; Kleiss 1988c: 181ff.; նույնի՝ 1976b: 28ff.; նույնի՝ 1994: 131ff.; նույնի՝ 1996: 289ff.; նույնի՝ 2005: 207ff.; Forbes 1983: 8ff.; Smith 1996: 218ff.; Jakubiak 2003a; նույնի՝ 2004a: 169ff.

[1977] Kleiss 1976b: 28.

[1978] Տե՛ս նաև Smith, Kafadarian 1996: 36. Արեշյան, Ղաֆադարյան 1996, էջ 80. Հմմտ. Forbes 1983: 13.

[1979] Jakubiak 2004a: 170f.

[1980] Burney 1957: 41; նույնի՝ 1966: 73, Fig. 5/b; Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 280, Lev. VI/a-b, VII/b; Çilingiroğlu 1983a: 31; Kleiss 1970b, Taf. 11/3, 12/1, 21/1, 22/2-3; նույնի՝ 1988a, Taf. 12/1, 13/2; Kleiss, Kroll 1977: 66; Melkonyan *et al*. 2010: 90f., Tab. XXI/1.

[1981] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 279, 284, Lev. V/a-b.; Harmanşah 2009: 189f., Figs. 6, 8.

պարսպի քարերի շարվածքի տեխնիկան արվել էր ակնհայտորեն նկատի ունենալով տարածքի սեյսմիկ ակտիվության վտանգը[1982]: Նույնը երևում է նաև Հայկաբերդում (նկ. Բ-75/1-2)[1983]: Հարթեցված «աստիճաններ»-ի վրա դրվում էր պարսպի քարե հիմքը (նկ. Բ-76/1-2):

Քարե պատերը կարող էին բարձրանալ մինչև 10 մ, Գործոթի ամրոցում պահպանված պատի բարձրությունը հասնում է 8 մ-ի[1984], Կալ'եհ Գյավուրում՝ մինչև 5 մ-ի[1985], Բաստամում՝ 5 մ[1986], Հոռոմում[1987] և Այանցում[1988]՝ մինչև 4 մ, Էրեբունիում՝ առնվազն 3 մ[1989]: Քարե հիմնապատի վրա բարձրացվում էր հում աղյուսի պատը: Շինարարության համար օգտագործվում էին ստանդարտ չափերի աղյուսներ:

Արտաքին պարսիսպների հաստությունը սովորաբար կազմում էր հիմնականում 2.5-4 և մինչև 5 մ, շատ ավելի հազվադեպ՝ 7.5-ից 10 մ (Կալ'եհ Սարանջ)՝ կառուցված միմյանց բավական լավ մոտեցված խոշոր, հիմնականում կոպտատաշ, հազվադեպ նաև սրբատաշ քարերով: Դրանք ծառայում էին իբրև արտաքին շերտ, որոնց միջև եղած տարածքում արվում էր քարակավային լիցք: «Լուվրի աղյուսակ»-ի վկայությամբ՝ ուրարտական Ուշկայա ամրոցի պարիսպներն ունեին 8 կանգուն հաստություն, որը կազմում է մոտ 4 մ[1990]:

Ուրարտական ամրոցներում պարիսպների բարձրությունը միջինը կազմել է 10-12 մ[1991]: Կարմիր բլուրի արտաքին պարիսպները, ենթադրվում է, ունեցել են 10 մ բարձրություն, իսկ պահպանված ամենաբարձր պատի բարձրությունը հասնում է 7 մ-ի: Նման հաշվարկի համար հիմք է ծառայում նաև այն հանգամանքը, որ պարսպի լայնության և բարձրության հարաբերակցությունը սովորաբար կազմել է 1 : 3 կամ 1 : 4[1992]: «Լուվրի աղյուսակ»-ը, մինչդեռ, նշում է ուրարտական ամրոցների՝ մինչև 120 շարք ունեցող աղյուսաշեն պարիսպների մասին[1993], որոնց բարձրությունը, ըստ այդմ, պետք է կազմեր 15-18 մ (120 × 12-15 սմ): Նկատենք, որ ուրարտական ստանդարտ աղյուսների բարձրությունը սովորաբար տատանվել է 12.5-ից մինչև 16 սմ: Նաև այս վկայության վրա հենվելով՝ Այանցի ամրոցի պարիսպների բարձրությունը ենթադրվում

[1982] Harmanşah 2009: 187f., Fig. 7.
[1983] Köroğlu 2011: 29, Fig. 8.
[1984] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 277.
[1985] Kleiss, Kroll 1976: 109.
[1986] Kleiss 1968: 25.
[1987] Badaljan *et al*. 1993: 13; Badaljan *et al*. 1994: 28, n. 5.
[1988] Çilingiroğlu 2001b: 27; Harmanşah 2009: 188.
[1989] Оганесян 1951: 81; նույնի՝ 1980: 120; Burney 1957: 41; Dan 2010c: 65.
[1990] Mayer 1983: 85f. (Z. 179).
[1991] Ավետիսյան 2001, էջ 11; Տե՛ս նաև Forbes 1983: 16. Հմմտ. Çilingiroğlu 2011b: 342; Işıklı, Caner 2014: 36.
[1992] Միքայելյան 1966, էջ 239; Jakubiak 2004b: 194.
[1993] Mayer 1983: 91f. (Z. 239-240).

է 17-22 մ-ի սահմաններում, որից մոտ 2 մ-ը կազմել է պարսպի քարե հիմքը[1994]: Դա թվում է խիստ բարձր, եթե հաշվի առնենք, որ, օրինակ, Այանցի հարավային պարսպապատի հաստությունը կազմել է ընդամենը 2 մ[1995]: Այս դեպքում, հնարավոր է, որպես լրացուցիչ հենարան է ծառայել բլրի թեք լանջը, որի և պարսպի միջև եղած հատվածում լիցք անելով՝ կարող էին ստանալ թե արհեստական հարթակ՝ ընդլայնելով ամրոցի օգտակար մակերեսը, և թե ամրություն հաղորդելով արտաքին պարիսպներին[1996]: Նման մոտեցում է նկատվում Սարդուրիխինիլիում[1997]:

Ուրարտական ամրաշինության առանձնահատկություններից էին աշտարակների և որմնահեցերի լայն կիրառությունը, որոնք լրացուցիչ ամրություն էին հաղորդում պատերին: Բիայնական վաղ ամրաշինության մեջ այս մոտեցումը բացակայում է (Ներքին Անձավ, Ծվստան)[1998], և միայն Ք.ա. 9-րդ դ-ի վերջ – 8-րդ դ-ի սկզբներին՝ ոչ ուշ, քան Մենուայի իշխանության շրջանում, ուրարտացի ճարտարապետները սկսում են կիրառել ոչ մեծ որմնահեցեր, որոնք առաջինը նկատվում են Վերին Անձավի ամրոցում և Շուշանցում[1999]:

Հնարավոր է՝ որմնահեցերի կիրառությունը վերցված էր «այսրկովկասյան տիպի» ամրաշինությունից[2000], որի հետ ուրարտացի ճարտարապետները կարող էին ծանոթանալ, հավանաբար, դեռևս Իշպուինիի օրոք դեպի Վանա լճի ավազան ձեռնարկված արշավանքների և այստեղ «այսրկովկասյան տիպի» առաջին ամրոցների նվաճման ժամանակ[2001]: Վանա լճի ավազանում գտնվող «այսրկովկասյան տիպի» վաղերկաթեդարյան ամրոցներից են, օրինակ, Ալիլերը և Էվդիթեփեն[2002]: Մյուս կողմից, նման ամրոցաշինությունը խորթ չէր նաև հյուսիս-արևմտյան Իրանի վաղերկաթեդարյան ամրոցներին: Նման օրինակ կարող է ծառայել Աիարից 14 կմ հյուսիս-արևմուտք ընկած Կալ’եհ Դիզլի ամրոցը[2003]:

Ուրարտական ամրոցներում անկյունային աշտարակներն ու որմնահեցերը դուրս էին գալիս պատից 0.5-ից մինչև 1.1 մ, միջինը ունենալով 4.5-5 մ երկարություն և սովորաբար գտնվելով միմյանցից հավասար հեռավորության վրա: Աշտարակ-

[1994] Çilingiroğlu 2011b: 342f.; Çilingiroğlu, Işıklı 2014: 310f.
[1995] Çilingiroğlu, Işıklı 2014: 310.
[1996] Çilingiroğlu 2001b: 26.
[1997] Марр, Орбели 1922: 10.
[1998] Burney, Lawson 1960: 181f.; Forbes 1983: 11; Kleiss 1988c: 181f.
[1999] Belli, Salvini 2004: 155ff.
[2000] Տե՛ս Ղաֆադարյան 1984, էջ 57-60, նկ. 18; Արեշյան, Ղաֆադարյան 1996, էջ 78-80, Աղ. 13-15; Smith 1998: 82ff.
[2001] Տե՛ս և հմմտ. Smith 1998: 82ff.
[2002] Sevin 2004a: 183, Figs. 5/1, 6/1; նույնի՝ 2004c: 373f. Հմմտ., միաժամանակ, Smith 1998: 84 and n. 20.
[2003] Kroll 1984b: 68, 87sqq., Abb. 26.

որմնահեցերի լայն կիրառությունը շարունակվեց ընդհուպ մինչև Ք.ա. 7-րդ դ-ի կեսեր, այն տարբերությամբ, որ նախկինում որմնահեցերից քիչ տարբերվող աշտարակների չափերը ուրարտական տերության գոյության վերջին շրջանում զգալիորեն մեծացվում են, հատկապես՝ ամրոցների մուտքերի մոտ (Կարմիր բլուր, Բաստամ, Արագած, տե՛ս նկ. Բ-77/1, Բ-78/1)[2004]:

Ամրոցները սովորաբար միապարիսպ են, երբեմն՝ առանձնացված միջնաբերդով, «Լուվրի աղյուսակ»-ը հիշատակում է նաև կրկնակի պարսպապատ քաղաքներ (Բուբուզի, Խունդիր)[2005]: Հնագիտորեն վկայված նման ամրոցներից են Բաստամը, Քանջըքլըն, Վերին Անձավը ևն, թեև այստեղ հարկ է նկատի ունենալ, որ կրկնակի պարիսպները կարող էին լինել Ք.ա. 7-րդ դ-ի հավելումների արդյունք[2006]:

Ուրարտական ամրաշինության մեկ այլ առանձնահատկություն էր քարե հենապատերով ամրացված դարավանդների լայն կիրառությունը, ինչով լրացուցիչ արգելապատնեշ էր ստեղծվում գրոհող հակառակորդի համար, միաժամանակ, պատնեշելով հողի սահքը, ինչպես նաև ստեղծելով լրացուցիչ օգտակար մակերես[2007]:

Ամրոցներն ունեցել են սովորաբար մեկ (Գործոթ[2008], Օեմեր-աղա Քալեսի[2009], Արագած[2010], Գյավուր Կալ'եհ[2011], նվազ հավանականությամբ՝ Այանց[2012], ևն) կամ երկու (Կարմիր բլուր[2013], Էրեբունի[2014], Վերին Անձավ[2015], Արգիշթիխինիլի-Արմավիր (Արևմտյան և Արևելյան միջնաբերդեր)[2016], Ալթընթեփե[2017], Սեկինդելի ուրարտական ամրոց[2018], Աքթաշի ամրոց[2019] ևն), առանձին դեպքերում՝ երեք և ավելի մուտք (Բաստամ[2020], Կալ'աթ[2021], Հոռոմ[2022]): Երկու և ավելի մուտքերը հիմնականում ստացվել են ամրոցի ընդարձակման և նոր պարսպապատ կառուցելու արդյունքում (Բաստամ,

---

[2004] Ղաֆադարյան 1972, էջ 155; Forbes 1983: 11; Kleiss 1996: 290ff.; Jakubiak 2004a: 174.
[2005] Mayer 1983: 95f. (Z. 270).
[2006] Grekyan 2009: 102ff.
[2007] Եսայան, Ղաֆադարյան 1965, էջ 83; Kleiss 2005: 210f.:
[2008] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 281f, Res. 1.
[2009] Özfırat 2014d: 214, Res. 9.
[2010] Ավետիսյան 2001, էջ 11, Աղ. 3, 5:
[2011] Kleiss, Kroll 1978: 35, Abb. 11.
[2012] Çilingiroğlu 2001b: 28, Figs. 10, 14; Çilingiroğlu, Işıklı 2014: 311, Fig. 9.
[2013] Пиотровский 1950: 43; Оганесян 1955: 71 сл., рис. 40-41.
[2014] Оганесян 1961: 17, рис. 3; նույնի՝ 1980: 42, рис. 22. Ամրոցում բացված մոտ 4 մ լայնությամբ երկրորդ՝ արևմտյան մուտքի համար տե՛ս Deschamps *et al.* 2011: 124ff., Figs. 3, 7.
[2015] Belli 1999a, Çiz. 7, 9-11; նույնի՝ 2001e.: 168f., Fig. 6.
[2016] Ղաֆադարյան 1984, էջ 41-46, գծ. 13, նկ. 8, 55, գծ. 14-17:
[2017] Karaosmanoğlu *et al.* 2014a: 139, Res. 4-5; Karaosmanoğlu *et al.* 2014b: 80, Res. 8.
[2018] Kleiss, Kroll 1980, Abb. 3, 8.
[2019] Özfırat; 2009b: 352.
[2020] Kleiss 1996: 289sqq., Abb. 1-2, 4-7.
[2021] Kleiss, Kroll 1978: 41sqq., Abb. 19.
[2022] Badaljan *et al.* 1992: 41ff., Figs. 8-9; Badaljan *et al.* 1994, Fig. 1; Kohl, Kroll 1999, Fig. 2.

Արգիշթիխինիլիի Արևմտյան և Արևելյան միջնաբերդեր, Վերին Անձավ, Կալ՚աթ, Հոռոմ): Ամրոցի մուտքը սովորաբար գտնվել է երկու աշտարակների միջև կամ պարսպի վերջնամասում՝ պաշտպանվելով մեկ աշտարակի կողմից[2023]: Այդ մոտեցումը միաժամանակ կիրառվել է Կարմիր բլուրում: Վերջինիս երկրորդ դարպասն ունեցել է երկու մուտք, որոնցից մեկը նախատեսված է մարտակառքի/սայլի համար, իսկ երկրորդը՝ հետիոտնի համար նախատեսված առանձին դռնակ է (նկ. Բ-78/2): Նման մոտեցում կիրառվել է նաև Այանցում (նկ. Բ-77/2)[2024]: Արգիշթիխինիլի-Արմավիրի Արևմտյան միջնաբերդի մուտքը պաշտպանված էր միմյանց նկատմամբ ուղիղ անկյան տակ տեղադրված երկու հաջորդական դարպասներով, միևնույն առանցքով հաջորդաբար տեղադրված զույգ դարպասներով մուտք է ունեցել Էրեբունին[2025]: Սովորաբար, մուտքերի լայնությունը կազմել է 3-6 մ, միջինը՝ 4-5 մ, թեև հետագայում՝ հատկապես ուշ-ուրարտական շրջանում նկատվում է միտում՝ փոքրացնելու ամրոցների մուտքերը կամ փակելու երկրորդ մուտքը, ինչը, թերևս, պայմանավորված էր երկրում տիրող խառնակ իրավիճակով[2026]: Նման երևույթ է դիտարկվում Քայալըդերեում[2027], Էրեբունիում[2028], Կարմիր բլուրում[2029], Վերին Անձավում[2030], Այանցում[2031], Բաստամում[2032], Յոնջաթեփեում[2033] ևն (նկ. Բ-79/1-2): Իրենց կառուցվածքով առանձնանում են Հայկաբերդի երկու՝ Վերին և Ստորին ամրոցների մուտքերը: Ենթադրվում է, որ Վերին ամրոցի մուտքը բացվել է արևմտյան պարսպապատի մեջ՝ ժայռի մեջ կերտված և պարսպապատը եզերող արհեստական հարթակից մոտ 2.6 մ բարձրության վրա, ուր հնարավոր էր բարձրանալ փայտե շարժական սանդուղքի միջոցով[2034]: Ստորին ամրոց հնարավոր է եղել մուտք գործել ամրոցի հարավ-արևելյան հատվածում՝ պարսպապատից մոտ 6 մ հեռավորությամբ կառուցված 12 × 12 մ չափեր ունեցող հզոր աշտարակի միջոցով: Այստեղից դեպի պարիսպն է գցվել կախովի կամուրջ, որը հանվել է վտանգի ժամանակ[2035]: Ամենայն հավանականությամբ՝ Վանի միջնաբերդ մուտքը ևս ապահովվել է ամրոցի խանդակների վրայով գցված կախովի

[2023] Մանրամասն տե՛ս Ղաֆադարյան 1984, էջ 61-66, գծ. 19; Kleiss 1996: 289sqq.; Jakubiak 2004a: 169ff., Figs. I-IV.
[2024] Çilingiroğlu 2001b: 28, Fig. 10.
[2025] Ղաֆադարյան 1984, էջ 43, գծ. 12:
[2026] Grekyan 2009: 98ff.; Գրեկյան 2013ա, էջ 64-82:
[2027] Burney 1966: 66f., Pl. 3/b.
[2028] Deschamps *et al.* 2011: 130.
[2029] Пиотровский 1955a: 8, рис. 1
[2030] Belli 1996a: 386ff., Fig. 6-9; Belli 2001e.: 167ff., Fig. 6.
[2031] Çilingiroğlu, Işıklı 2014: 311f.
[2032] Kleiss 1970b, Abb. 16.
[2033] Köroğlu 2009: 385.
[2034] Sevin 2014: 228ff., Şek. 5-6.
[2035] Sevin 2014: 227f., Şek. 2-4.

կամուրջներով[2036]: Արգիշթիխինիլիի, Կարմիր բլուրի և Արագածի ամրոցի միջնաբերդ հնարավոր է եղել մուտք գործել հողաթմբից կառուցված թեքահարթակի միջոցով[2037]:

Ամրաշինության մեջ լայնորեն կիրառվում էին խանդակները: «Լուվրի աղյուսակ»-ը մի քանի անգամ հիշատակում է ուրարտական ամրոցների շուրջը փորված խորը խանդակների մասին[2038]: Խանդակները վկայված են նաև հնագիտորեն, ինչպես, օրինակ, Տուշպայում[2039], Հայկաբերդում[2040], Ումուդում-թեփեում[2041], Կալ'եի Զենդանում[2042], Փիր Չավուշում[2043], Քյաֆիր Կալ'եհում[2044], Թեփե Լոմբադում[2045] ևն: Խանդակներով էր պաշտպանված Ոստանի ուրարտական շրջանի ամրոցը[2046], Հայկաբերդի առաջին (հյուսիս-արևելյան) խանդակի խորությունը կազմում էր առնվազն 8 մ[2047], լայնությունը 14 մ, երկրորդ (հարավ-արևմտյան) խանդակի լայնությունը մոտ 10 մ էր[2048]:

Երկրի բնակլիմայական պայմանները, ինչպես նաև երկարատև պաշարման հավանականությունը մղում էր ոչ միայն ամրոցները կառուցել ջրի աղբյուրների մոտ, այլև՝ ապահովել ամրոցը ջրի պաշարով՝ դրա համար կառուցելով ջրահավաք ավազաններ կամ դեպի արտաքին/ստորգետնյան ջրի աղբյուրները տանող գաղտնուղիներ և ժայռափոր թունելներ փորելով (Հաբիբուշաղը, Խարբերդ, Պաղին, Քալեքյոյ, Մեծկերտ/Մազգիրթ, Շիրինքալե, Թոփրաքքալե, Կալ'եհ Հայդարի ևն)[2049]: Տարիներ առաջ հայտնաբերվեց նաև Վանի բերդի ժայռափոր աղբյուրը[2050]: Ազնավուրթեփեի ջրամատակարարումն իրականացվել է մոտ 2 կմ հեռավորությամբ գտնվող աղբյուրներից այստեղ բերված ստորգետնյա կավակերտ խողովակներով[2051]: Ամրոցներն ունեին ջրահեռացման համակարգեր՝ անձրևաջրերն ու կեղտաջրերը հեռացնելու համար[2052]:

---

[2036] Sevin 2014: 230.
[2037] Տե՛ս Ղաֆադարյան 1984, էջ 43; Եսայան 1982, էջ 14; Оганесян 1958: 87; Ավետիսյան 2001, էջ 11; ևն:
[2038] Mayer 1983: 86f. (Z. 190), 91f. (Z. 242).
[2039] Tarhan 1994: 26, Fig. 3; նույնի՝ 2011: 289; etc.
[2040] Erzen 1968 [1969]: 85; նույնի՝ 1978: 2.
[2041] Çilingiroğlu 1980 [1982]: 191.
[2042] Kleiss 1971: 54, Abb. 4.
[2043] Kleiss, Kroll 1979: 184, Abb. 5.
[2044] Kleiss, Kroll 1978: 29f, Abb. 4-5.
[2045] Kleiss 1973a: 30, Abb. 27.
[2046] Burney 1957: 47, Fig. 5.
[2047] Burney 1957: 46, Fig. 4.
[2048] Erzen 1976-1977 [1977]: 2, Res. 3; նույնի՝ 1978: 2, Res. 1.
[2049] Burney 1957: 41; Işık (F.) 1987: 511ff., Abb. 17; Işık (C.) 1987: 550ff. and n. 7; Köroğlu 1996: 14ff.; Kleiss 1976a: 22f., Abb. 7; նույնի՝ 2005: 212.
[2050] Konyar *et al*. 2013: 195ff. Հմմտ. նաև Konyar *et al*. 2015: 73ff., Figs.
[2051] Balkan 1960: 137.
[2052] Оганесян 1980: 61; Kleiss 1976b: 28, Abb. 3; Yılmaz 2012: 229; Res. 1-9; Karaosmanoğlu *et al.* 2014b: 81; etc.

### 2.4.2.2. **Ռազմական ճամբարները և զորանոցները**

Մինչ օրս հայտնի ուրարտական հուշարձանների շարքում չկան այնպիսիք, որոնք միանշանակ կդիտվեն որպես ռազմական ճամբարներ: Ուրարտական բանակի տեղակայման վայր և ռազմական ճամբար նախկինում համարվում էր Վանա լճի հյուսիսային ափերի մոտ՝ Արճեշից ոչ հեռու կառուցված Զերնակի-թեփեի բնակատեղին[2053]: Ուղիղ հատվող փողոցներով և միանման հատակագիծ ունեցող տներով կառուցապատված հուշարձանը ընդունելու էր մինչև 7 հազ. մարդու, ինչն անգամ կարող էր լինել կրկնակին, եթե տները լինեին երկհարկանի[2054]: Այս հուշարձանը չուներ իր զուգահեռը և կտրուկ առանձնանում էր ուրարտական այլ հուշարձաններից: Արդի գրականության մեջ, սակայն, Զերնակի-թեփեն այլևս չի դիտարկվում որպես ուրարտական և թվագրվում է ավելի ուշ՝ աքեմենյան կամ հելլենիստական շրջանով[2055]: Այն ակնհայտ հիշեցնում է Միլեթ քաղաքի հատակագիծը, և թեև գրականության մեջ այս մասին ակնարկներ վաղուց են արվել, սակայն՝ առանց համապատասխան հետևությունների[2056]:

Երկրորդ հուշարձանը գտնվում է Ուշնուի մոտ: Դա Գերդե-Սորեհի (Սուֆիան)՝ Ք.ա. 8-րդ դ-ում կառուցված օվալաձև ամրոցն է (նկ. Բ-80/1): Վերջինիս հատակագիծը հուշում է, որ ամրոցը լինելու էր ուրարտական բանակի տեղակայման զորակայաններից մեկը[2057]: Եվ երրորդ հուշարձանը Ազնավուրթեփեն է: Երեք կողմից պարսպապատերով շրջապատված ամրոցի ներսում ձիերի համար նախատեսված արհեստական ջրամբարի գոյության փաստը[2058] կարող է վկայել, որ մարզային կենտրոն լինելուց բացի այստեղ կարող էին տեղակայված լինել հեծյալ զորամասեր[2059]:

Ուրարտական սեպագիր տեքստերը նշում են մի քանի անուն, որոնք կարող են վերաբերել ռազմական շինությունների: Դրանցից մեկը կոչվում է $^{É}$*barzu/idib(i)duni*: Մեզ են հասել վեց արձանագրություններ՝ գտնված տերության տարբեր շրջաններից (տե՛ս Աղ. 19): Դրանք Կոնստանտին Հովհաննիսյանը համարում է կառույցի անվանում, ենթադրաբար՝ «զորանոց»[2060]: Հարկ է նկատել նաև, որ տեքստերից մի քանիսում $^{É}$*barzu/idib(i)duni*-ի հետ նշվում է նաև ամրոց կառուցելու մասին, ինչը, թվում է, խոսում է այդ ենթադրության օգտին: Դրա օգտին կարող է խոսել նաև $^{É}$*barzu/idib(i)duni*-կառույցը

[2053] Burney 1957: 49f., Fig. 11; Burney, Lawson 1960: 185f., Fig.
[2054] Burney, Lawson 1960: 188.
[2055] Sinclair 1987: 16, 314; Sevin 1997: 173ff.; Burney 1998: 153; Dan 2010b: 81ff.
[2056] Kleiss 1976b: 39.
[2057] Kleiss 1976a: 24ff., Abb. 8; նույնի՝ 1976b: 32. Տե՛ս և հմմտ. նաև Оганесян 1985b: 149.
[2058] Balkan 1960: 137.
[2059] Burney, Lawson 1960: 192ff.; Burney 1998: 150.
[2060] Оганесян 1985b: 151; Հովհաննիսյան 1996, էջ 138-140:

հիշատակող տեքստերից մեկում ոչ հասկանալի կոնտեքստում «Խալդիի զորքի»-ի հիշատակությունը[2061]: Ի դեպ, հետաքրքիր է, որ առայժմ հայտնի վեց կառույցներից հինգը կրել են Մենուայի անունը, իսկ վեցերորդը կառուցվել է Սարդուրի Արգիշթորդու կողմից[2062]: Ենթադրվում է, որ Թոփրաքքալեից հայտնաբերված եռահարկ շինության բրոնզե մոդելը պատկերում է նման զորանոց[2063], ինչը, իհարկե, հնարավոր չէ միանշանակ պնդել: Մյուս կողմից, որպես աշխատանքային վարկած կարելի է ենթադրել, որ $^{É}$*barzu/idib(i)duni* կոչվող կառույցները կարող էին լինել ամրացված իջևանատներ կամ ճանապարհային կայան-ամրոցներ: Այստեղ կարելի է հիշել նաև Ազնավուրթեփեից գտնված նորահայտ ուրարտական արձանագրությունը, ուր առաջին անգամ խոսվում է *šinami* կոչվող ինչ-որ կառույցի մասին[2064]: Հնարավոր է, որ այստեղ գործ ունենք հենց զորանոցի հետ՝ հաշվի առնելով հատկապես Ազնավուրթեփեի նշանակությունն իբրև ուրարտական բանակի զորակայան:

Առայժմ միայն երկու քաղաքներում են պեղվել շինություններ, որոնք հաստատապես կարող են բնորոշվել որպես զորանոց: Դրանցից մեկը բացվել է Արգիշթիխինիլիում: Այստեղ՝ ամրոցի «Արևելյան միջնաբերդում», մուտքի մերձավորությամբ, պեղվել են գրեթե նույն չափերի 7-8 սենյակներ, որոնք, հնարավոր է, ծառայել են որպես զորանոց[2065]: Բացի դա, ամրոցի «Արևմտյան միջնաբերդ»-ում պեղվել են թվով 13 համանման սենյակներ, որտեղից հայտնաբերված նետասլաքները, կաշվե վահանի մնացորդները վկայում են, որ համալիրը ծառայել է իբրև զորանոց[2066]: Սակայն, այն փաստը, որ համալիրը կառուցվել է ուշ-ուրարտական շրջանում՝ զբաղեցնելով Արևմտյան միջնաբերդի կենտրոնական բակի զգալի մասը, վկայում է, որ կառույցը ծառայել է իբրև միայն լրացուցիչ շինություն, և որ կայազորի զորանոցները հարկ է որոնել քաղաքի այլ հատվածում:

Առավել լավ են ուսումնասիրված Բաստամի զորանոցները (նկ. Բ-80/2)[2067]: Այանցի «արտաքին քաղաք»-ի թաղամասերից մեկում բացված աշտարակավոր կամ որմնահեցերով պատերով կառույցը[2068], որն անկասկած կառուցվել է պետության կողմից, ենթադրվում է, որ կարող էր լինել զորանոց[2069]:

---

[2061] КУКН, 46$_7$; CTU I, A 5-60$_7$. Նկատենք, որ տեքստն այդ հատվածում պակասավոր է:
[2062] КУКН, 46, 114-116, 278a, 481; CTU I, A 5-60-64, A 9-19.
[2063] Оганесян 1985b: 150 сл.
[2064] Işık *et al*. 2012: 99ff.
[2065] Тирацян 1988: 79.
[2066] Мартиросян 1974: 90 сл., рис. 33; Ղաֆադարյան 1984, էջ 81-84, նկ. 26:
[2067] Kleiss 1976b: 37f., Abb. 21; նույնի՝ 1979a: 51ff., Abb. 56, 58; Kroll 2011: 166, Fig. 16.
[2068] Stone, Zimansky 2001: 362, Figs. 19-21.
[2069] Konakçı, Baştürk 2009: 191.

### 2.4.2.3. **Արքունի ախոռները**

Ուրարտուին նվիրված իր աշխատանքներից մեկում Մարգարեթ Ռիմշնայդերը կարծիք էր հայտնել, ըստ որի ուրարտական տեքստերում լ՝ «տուն» գաղափարագրով հանդես եկող շինությունների մի մասը կարող էին լինել ախոռներ, հաշվի առնելով այն փաստը, որ «տան» կառուցման մասին հայտնող շինարարական արձանագրությունները հիմնականում փորագրվել են սյան խարիսխների վրա[2070]: Նման եզրակացության նա հանգել էր նկատի ունենալով, որ Առաջավոր Ասիայում հնագիտորեն վկայված ախոռները հիմնականում ունեն եռանավ կառուցվածք, որոնց տանիքը հենվում էր երկու շարք սյուների կամ մույթերի վրա[2071]: Բաստամի ախոռների ճարտարապետական հորինվածքը հնարավոր է դարձնում նման մոտեցումը[2072]:

Վերը նշված ուրարտական՝ խիստ պակասավոր տեքստերից մեկում, ուր հիշատակվում են ինչ-որ պաշտոնյաներ/ծառայողներ, ինչպես նաև մոտ 3500 ձի, հանդիպում է նաև ինչ-որ կառույցի՝ «տան» անվանում՝ É-*gi*: Եթե ընդունենք, որ *gi*-ն ուրարտերեն բառի հնչյունական վերջավորությունն է, ապա կարող ենք նշել, որ նման կառույց է հիշատակվում նաև Կարմիր բլուրի պակասավոր տեքստերից մեկում, կապված ինչ-որ քաղաքի հետ, որի անունը վնասված է (É-*gi* $^{URU}$*ú-x*[-*x x*)[2073]: Հարց է ծագում, թե արդյո՞ք այդ կառույցները կամ «տներ»-ը ևս ախոռներ էին, ինչպես ենթադրում էր Մարգարեթ Ռիմշնայդերը: Մյուս կողմից, եթե ընդունենք, որ «Լուվրի աղյուսակ»-ի հիշատակած *bīt dūri*(É-BÀD) «(ամրացված) զորակայան (՞)» (բառացի՝ «պարսպապատ տուն») արտահայտության տակ կարող էին ընկալվել արքայական գնդի ամրացված հանգրվանները (տե՛ս վերը 1.4.3.3.), ապա Մարգարեթ Ռիմշնայդերի կարծիքը թվում է միանգամայն հիմնավոր: Այստեղ սահմանափակվենք նշելով, որ ըստ Քեմալ Բալքանի՝ «ախոռ» իմաստն է ունեցել ուրարտ. *burganani* բառը (հմմտ., սակայն, 1.4.3.9.1.2.)[2074]:

Ուրարտական բանակի միջուկը կազմող հեծելազորը և մարտակառքերի զորամասերը տեղաբաշված էին զորանոցներում, որոնք արտաքուստ հիշեցնելու էին ամրոցներ: Նման ախոռ և վարժահրապարակ է բացվել Բաստամի մերձավորությամբ (այսպես կոչված “Ostbau” կառույցը): Այդ կառույցը զբաղեցնում էր 162 × 130 մ մակերես (2 հա), ավելի ընդարձակ էր, քան ուրարտական ամրոցներից շատերը, շրջապատված

[2070] Riemschneider 1965: 312ff.
[2071] Gregor 2009: 9ff., Fig. 5. Նման կառուցվածք ունի նաև Հայկական լեռնաշխարհում հնագիտորեն վկայված առաջին ախոռը Հասանլուում (IVB): Տե՛ս Kroll 1992: 65ff.
[2072] Kroll 1989: 332f.
[2073] КУКН, 431$_4$; CTU IV, CT Kb-5$_{4р}$. Մեկ այլ համադրության համար տե՛ս ստորև 3.3.1.6.:
[2074] Balkan 1960: 143f.

աշտարակավոր պարիսպներով, ուներ ուղղանկյունաձև բակ, որը ծառայում էր որպես ձիերի վարժահրապարակ: Հարավ-արևմտյան պարսպապատին կից կառուցված էր ախոռը՝ 47 × 9.5 մ մակերեսով (նկ. Բ-81/2)[2075]: Այստեղ կարող էր պահվել 60-70 ձի: Մեկ այլ ախոռ էր կառուցված Բաստամի արտաքին պարիսպներին կից՝ հարավային դարպասի կողքին (50 × 9.8 մ), ուր կարող էր պահվել 64 ձի, իսկ երրորդ ախոռը, որն ուներ 29 × 10.5 մ մակերես, գտնվում էր հյուսիսային դարպասի մոտ՝ հիմնական պարսպապատից դուրս (այսպես կոչված "Hallenbau" կառույցը)[2076], ուր կարող էր պահվել 36 ձի (նկ. Բ-81, Բ-82/1): Ախոռներ են բացվել Վերին Անձավում[2077], Քեֆ-քալեում[2078], Այանցում[2079], ենթադրելի է նման կառույցի գոյությունը Հայկաբերդում[2080]: Կալ'եհ Էսմայիլ Աղայում հաստատագրված երկարավուն կառույցը, հնարավոր է, ծառայել է իբրև ախոռ[2081], Հոռոմում պեղված կառույցներից մեկը նույնպես ախոռ էր, թեև վերջինս կարող է լինի հետուրարտական շրջանի կառույց[2082]:

Ուրարտական արքունի ախոռների հատակագծից դատելով՝ հնարավոր է թվում ենթադրել, որ Կարմիր բլուրի միջնաբերդի արտաքին պարիսպներին կից, ընդ որում՝ դարպասների մերձավորությամբ կառուցված երկու ուղղանկունաձև շինություններից առնվազն մեկը ծառայել է որպես ախոռ[2083]: Կարմիր բլուրից հայտնաբերված ձիու խնամքի փայտե սանրը[2084] կարող է հանիդսանալ իբրև լրացուցիչ փաստարկ, որ ամրոցում պահվել են ձիեր: Հնարավոր է, նման ձիաբուծարան և արքունի ախոռ է եղել նաև Սղգյաուի[2085]: Նույն կերպ Վարշակի (Վարշակ-թեփե/Էրնիս-Էվդիթեփե) և Ալիլերի մոտ բացված խոշոր, ուղղանկյուն հատակագծով կառույցները[2086], որոնցում եղել են քարե խարիսխներով հեծաններ, նույնպես կարող էին հանդիսանալ ախոռներ: Հետաքրքիր է, որ այստեղից հայնաբերվել են սյան քարե խարիսխներ՝ արձանագրված

[2075] Kleiss 1974b: 107ff., Abb. 3-5; նույնի՝ 1977b: 47ff., Abb. 38-39; նույնի՝ 1979a: 16ff., Abb. 4. նույնի՝ 1980: 299f.; նույնի՝ 1981c: 152f.; նույնի՝ 1996: 294, Abb. 8; նույնի՝ 1988a: 13ff., Abb. 3; Kroll 1992: 69ff., Abb. 3; նույնի՝ 2011: 162, Fig. 15, 18.

[2076] Kleiss 1970b: 28ff., Abb. 11-12; նույնի՝ 1972a: 14ff., Abb. 7-10; նույնի՝ 1979a: 34ff., Abb. 30, 32-35; նույնի՝ 1980: 300; նույնի՝ 1981c: 152ff.; նույնի՝ 1988a: 17, 19ff., Abb. 8-9; Kroll 1989: 330f.

[2077] Belli 1999c: 510f., Res. 6.

[2078] Burney 1957: 51, Fig. 12.

[2079] Stone, Zimansky 2003: 222f., 238, Fig. 11.10; նույնի՝ 2004: 238; Stone 2005: 192; նույնի՝ 2008: 156f., Fig. 8.13.

[2080] Burney 1957: 46; Erzen A. 1966 [1968]: 55; նույնի՝ 1978: 15. Սակայն, այն կառույցը, որը դիտարկվել էր որպես ախոռ, իրականում, ջրահավաք ավազան է: Տե՛ս Belli 1990: 314; նույնի՝ 1992: 484f. Դա, այնուամենայնիվ, չի նշանակում, որ ամրոցը չի ունեցել ախոռ:

[2081] Pecorella, Salvini 1982: 22.

[2082] Badaljan *et al*. 1997: 210, Abb. 17; Kohl, Kroll. 1999: 255; Kroll 2010: 26.

[2083] Ամրոցի հատակագծի համար տե՛ս, օրինակ, Мартиросян 1964, рис. 94.

[2084] Пиотровский 1959б: 175, рис. 3.

[2085] Կարագյոզյան 1981, էջ 52; Եսայան 1994, էջ 69:

[2086] Belli, Konyar 2003a: 59f.; նույնի՝ 2003b: 171f., Fig. 5; Sevin 2004a: 183, Figs. 7/2; նույնի՝ 2004c: 373f.

Մենուայի անունով[2087]: Արքունի բանակի հեծյալ զորամասերի տեղակայման վայր է եղել, ինչպես վերը նշվեց, Ազնավուրթեփեի ամրոցը[2088]: Ըստ այդմ, ուրարտական մի քանի բերդաքաղաքներում պեղված և մյուսներում ենթադրաբար եղած ախոռներից բացի առկա տվյալները հուշում են առնվազն 7-8 խոշոր արքունի ախոռների գոյության մասին: Դրան կարելի է հավելել «Լուվրի աղյուսակ»-ի հիշատակած թվով յոթ *bīt dūri*-ները (տե՛ս վերը 1.4.3.3.): Ի դեպ, հետաքրքիր է, որ դրանցից հինգը գտնվել են Ուայաիսում: Սա ամենևին պատահական չի թվում, հաշվի առնելով այն փաստը, որ Ուայաիսը հանդիսացել է հարավ-արևելյան ուղղությամբ ուրարտական տերության ամենախոշոր ռազմական հանգրվանը:

### 2.4.2.4. **Զինագործությունը և զինապահեստները**

Ուրարտական խոշոր ամրոցներում գործել են զինագործական արհեստանոցներ: Տարբեր կենտրոններից հայտնաբերված զենքերը և պաշտպանական միջոցները նման արհեստանոցի ստանդարտ արտադրանքից էին: Հետաքրքիր է, որ հայտնաբերված զենքերի մի մասի վրա երևում են վերանորոգման հետքերը[2089]: Վազա երկրի Թեյշեբայի քաղաք (Կարմիր բլուր) առաքված կաշիների մի մասը, հնարավոր է, նախատեսված է եղել կաշվե վահաններ, կապարճներ կամ թեփուկավոր զրահի պատրաստելու համար: Հայտնի է, որ զրահը պատրաստվում էր այծի կաշվից[2090], որի վրա կարվում էին բրոնզե կամ երկաթե թիթեղները, իսկ վերը նշված տեքստում տարբեր կենդանիների կաշիների թվում թվարկված է նաև 16 կամ 18 այծի կաշի (16/18 KUŠ ÙZ)[2091]:

«Սարդուրյան տարեգրության»՝ վերը մեջբերված հատվածում նշվում է 7079 «մանա» պղինձ (բրոնզ) և 336 «ուրուրդա»-ծառաներ (3 ME 36 ERUM$^{\text{MEŠ LÚ}}$*ururdani*)[2092]: Մեզ հնարավոր է թվում վերջիններիս շարքերում տեսնելու նաև զինագործների, որոնք, անկասկած, մշտապես ուղեկցել են բանակին և կատարել տարբեր աշխատանքներ:

Ուրարտական ամրոցներից շատերի մոտ ժայռերի մեջ փորված այսպես կոչված «պաշտամունքային նշաններ»-ի[2093] կամ «հսկայանշաններ»-ի առկայությունը[2094], ինչպես հետագայում պարզվեց, ծառայել են փայտին համապատասխան ձև տալու

[2087] Sevin 2004c: 374.
[2088] Burney, Lawson 1960: 192; Balkan 1960: 144; Riemschneider 1965: 317ff.
[2089] Տե՛ս, օրինակ, Burney 1966: 97, Fig. 20/4; Çilingiroğlu 1979 [1981]: 84, Lev. I/1; Ruder, Merhav 1991: 352f., Fig. 13; Kellner 1991a, Nr. 83, Taf. 22, No. 83, Reindell 2001a: 281, Tav. VIIa.
[2090] Drews 1993: 111.
[2091] КУКН, 521$_7$; CTU IV, CT-Kb 10$_7$.
[2092] КУКН, 241 G$_{11}$; CTU I, A 9-3 VII$_{11}$.
[2093] Kleiss 1981b: 26, Abb. 2; Belli 1989: 65ff., Res. 1-11; նույնի՝ 2001a: 365ff.
[2094] Մովսիսյան 2003, էջ 208:

համար՝ մարտակառքերի անիվներ ու փայտե այլ դետալներ պատրաստելու նպատակով[2095]: Նման փորվածքներ են հայտնի Վանի ամրոցի[2096], Վերին Անձավի[2097], Հայկաբերդի[2098], Բաստամի[2099], Չելեբիբաղըի[2100], Արտամետի[2101], Յուքարը Աշըքիյուսեինի[2102], Արդըչ-քալեսիի[2103], Դատվանի ամրոցների մերձավորությամբ[2104]: Նման փորվածքների ամենամեծ խումբը հայտնի է Աթաբինդիից[2105], որտեղից, ի դեպ, մեզ են հասել նաև ուրարտական արձանագրությունների մեծ քանակությամբ բեկորներ[2106]: Մեծաթիվ մեկ այլ խումբ է հայտնի Բագայռիճի ամրոցից (թուրք. Փեքերիչ)[2107]: Օրինակներ կան նաև Խարբերդից[2108], Բահչեջիքից[2109], Դելիչայից[2110], Ցոլակերտից (Թաշբուրուն)[2111], Աքթաշից[2112], Սուվերենից[2113], ևն[2114]: Սա հուշում է, որ ամրոցներում եղել են մարտակառքերի հավաքման արհեստանոցներ, ինչպիսիք հայտնի էին սիրիա-միջագետքյան տեքստերից՝ մարտակառքեր պատրաստող փայտագործ արհեստավորների հիշատակումներով (LÚ.NAGAR GIŠ.GIGIR / *naggār narkabti*)[2115]: Կարմիր բլուրի տեքստերից մեկում $^{LÚ}$ŠE.NUMUN-*ḫu*(?) կամ $^{LÚ}$GÉME MUŠEN(?)՝ ոչ հստակ ընթերցվող գաղափարագրերի փոխարեն մեր կողմից առաջարկվող $^{LÚ}$NAGAR՝ «փայտագործ/ատաղձագործ» ընթերցումը թեև նույնպես միանշանակ չէ, սակայն չի բացառվում: Իսկ այդ դեպքում կարող ենք ունենալ նման արհեստանոցի պատասխանատուի հիշատակություն, որին ուղղած էր արքայի նամակը (տե՛ս 1.1.5.4.):

Ուրարտական խոշոր ամրոցներում չենք հանդիպում այնպիսի ընդարձակ փակ տարածքների, որոնք ծառայելու էին որպես զինանոց և որոնցում պահվելու էին նաև

---

[2095] Konyar 2006: 113ff.; նույնի՝ 2007: 1ff. Մարտակառքերի փայտե դետալների համար տե՛ս և հմմտ. նաև Gündüz 2002: 249ff.
[2096] Lehmann-Haupt 1926: 105sq.; Belli 1989: 76ff., Res. 6, Lev. XI/1-2.
[2097] Belli 1989: 78ff., Res. 7-11, Lev. XII-XVI; Belli 1999a: 16ff., Fig. 7.
[2098] Belli 1989: 70, Res. 1, Lev. V.
[2099] Kleiss 1968: 27, Abb. 14; նույնի՝ 1981b: 23ff., Abb. 2.
[2100] Belli 1989: 71.
[2101] Belli 1989: 73f., Res. 4, Lev. VII/2, VIII/1.
[2102] Տե՛ս նաև Kleiss, Kroll 1978: 32f.; Belli 1998a: 178.
[2103] Belli 1997a: 31f., Res. 30-31; 1998a: 181f.
[2104] Özfırat 2002: 23, Res. 4.
[2105] Belli 1989: 68f., Lev. II/1-2, III/1-2, IV/1; Başgelen 1990: 24ff.; Konyar 2006: 114.
[2106] Başgelen 1985: 16.
[2107] Belli 1989: 76, Res. 5, Lev. IX/1-2, X/1-2; Ceylan 2000a: 192, Res. 15.
[2108] Belli 1989: 74ff.
[2109] Sevin 1989b: 460, Res. 35-37; նույնի՝ 2005a: 380; Payne, Sevin 2001: 113, Fig. 3; Köroğlu 1996: 31, Res. 27-28.
[2110] Belli 1989: 73, Res. 3, Lev. VI/1-2, VII/1.
[2111] Başgelen 1988: 15, Res. 7; Belli 1989: 76.
[2112] Topaloğlu 2012: 145.
[2113] Ceylan 2007b: 110, Fig. 7.
[2114] Մովսիսյան 2003, էջ 208-211, Քարտեզ 5; Kleiss 1975: 53f., Abb. 4, Taf. 7/2; նույնի՝ 1981b: 23ff., Abb. 1; Belli 1989: 65f., 104, Harita 1; Başgelen 1988: 15f., Res. 7; Özkaya 1994: 383f., Res. 12.
[2115] Vita 2008: 59.

մարտակառքերը: Այս առումով ուշադրության է արժանի այն փաստը, որ հայտնի են օրինակներ, երբ սահմանափակ տարածքի պատճառով մարտակառքերը ապամոնտաժում էին, դետալները պահեստավորում և վերստին հավաքում, երբ ծագում էր դրա անհրաժեշտությունը: Ենթադրվում է, որ նման կերպ են պահվել մարտակառքերը Ուգարիթում, նման երևույթ է հանդիպում նաև միկենյան աշխարհում[2116]: Չի բացառվում, որ Ուրարտուում ևս դիմեին նման միջոցի՝ մարտակառքերի դետալները պահելով ամրոցների պահեստներում: Նկատենք, որ մի քանի ամրոցների պեղումներից հայտնաբերվել են մարտակառքերի առանձին բրոնզե դետալներ[2117]:

Ռազմական նշանակություն ունեցող շինություն կարելի է համար ուրարտական տեքստերում բազմիցս վկայված $^{(\text{L})}$*urišḫusi(ni)*-ն[2118]: Հայտնի է, որ *urišḫi/e* տերմինը նշանակում է «զենք», «ռազմական հանդերձանք», բազմաթիվ տեքստերում նրան համազոր կիրառվում է *BE.LI* / *TIL-LI* աքքադագիրը, որի նշանակությունը նույնպես «զենք» է (աքքադ. *bēlu* II / *tillu*)[2119]: Նկատի ունենալով, որ որոշ դեպքերում այս տերմինը կիրառված է «տուն» նշանակող որոշչի հետ միասին, ապա պարզ է դառնում, որ գործ ունենք կոնկրետ կառույցի՝ «զինանոց»-ի կամ «զինապահեստ»-ի հետ[2120]: Միաժամանակ, չի բացառվում, որ «զինանոց» կամ «զինապահեստ» ասելով պետք է հասկանալ բանակի հանդերձանք ընդհանրապես, ներառյալ՝ ճամբարային սպասքը: Թերևս, դրա մասին կարող է վկայել ուրարտական բրոնզե թասերից մեկի վրա արձանագրված լ *TIL-LI* արտահայտությունը, որը համազոր է $^{(\text{É})}$*urišḫusi(ni)* տերմինին[2121]:

Թեև ուրարտական ամրոցներից պեղվել է մեծ քանակության զենք, սակայն, առայժմ չի նույնականացվել որևէ շինություն, որն օգտագործվեր որպես զինանոց: Օրինակ, Այանցում բացված մի քանի նկուղային սենյակներ, միանշանակ, ծառայել են որպես պահեստ: Այստեղից հայտնաբերված զենքերը, այդ թվում՝ 11 վահան, կախված են եղել պատերից կամ խնամքով դասավորվել փայտե դարակների վրա[2122]: Այստեղ, սակայն, խնդիրն այն է, թե արդյո՞ք այս սենյակը ծառայել է կայազորին: Պահեստի մերձավորությունը «սուսի»-տաճարին, զենքերի բարձրորակ և հարուստ-դրվագված

[2116] del Olmo 1978: 51; Drews 1993: 108; Vita 2008: 61. Տե՛ս նաև Гельцер 1965: 50.
[2117] Մանրամասն տե՛ս, օրինակ, Çavuşoğlu 2011a: 115ff., Çiz. 1-5, Res. 1-9. Տե՛ս նաև Փիլիպոսյան, Մկրտչյան 2001, էջ 22-24:
[2118] Հղումների համար տե՛ս КУКН, с. 473; CTU IV: 90.
[2119] Տե՛ս, օրինակ, Seidl 2004: 20 (B.16, 18 ևն):
[2120] Пиотровский 1948: 85; Меликишвили 1953: 28 сл.; Friedrich 1956: 367f. Քննարկումների համար տե՛ս նաև Batmaz 2015a: 129f. (նշվ. գրականությամբ).
[2121] Belli, Salvini 2010: 42ff.
[2122] Çilingiroğlu 2001d: 279.

լինելը, իսկ որոշների վրա առկա սեպագիր արձանագրությունները հուշում են, որ գործ ունենք տաճարին ընծայված նվիրատվական զենքերի հետ: Դա, այնուամենայնիվ, չի նշանակում, որ այդ զենքը չէր կարող օգտագործվել ռազմական գործում և որ ընդհանրապես՝ տաճարի մերձավորությամբ չէր կարող պահվել ամրոցի զինանոցը[2123]:

Բացի նշվածից, Վերին Անձավի միջանցիկ փոքր սենյակներից մեկը (2.5 × 5 մ), որտեղից գտնվել է զգալի քանակությամբ զենք (այդ թվում՝ նվիրատվական/արձանագիր)[2124], կարող էր ունենալ նույն գործառույթը, ինչը որ Այանցի՝ վերը նշված նկուղային սենյակը: Նմանատիպ «զինանոց» է պեղվել նաև Յոնջաթեփեի ուրարտական դղյակ-ամրոցում[2125]:

Համենայն դեպս, կարելի է չկասկածել, որ առնվազն Մենուայի իշխանության շրջանից սկսած (մշտական) բանակի հանդերձավորումն իրականացնում էր հիմնականում պետությունը, ինչի վկայությունն են պետական արհեստանոցներում պատրաստված մեծ թվով ուրարտական «պետ-ստանդարտ»-ի զենքերի և զինվորական հանդերձանքի առկայությունը տարբեր բերդամրոցներում: Հնարավոր է, մարտակառքերն ու ձիերը ևս տրամադրում էր պետությունն ու իրականացնում հանդերձավորումը, ինչը տեսնում ենք Միտաննիում[2126], Նուզիում[2127] կամ Ուգարիթում[2128]: Այս մասին է կարծես նշվում նաև ուրարտական սեպագիր աղյուսակներից մեկում: Դրանում, մասնավորապես, նշվում է զինվորին ձի տալու մասին (1 ANŠE.KUR.RA : [x x]x ÉRIN-*a-di*)[2129]: Մնացյալ զորքը, թերևս, ներկայանում էր սեփական զենքով, ձիերով և մարտակառքերով: Կարելի է կարծել, որ Ռուսա Սարդուրորդուց սկսած, երբ ձևավորվեցին «մարզային զորքեր»-ը, դրանց հանդերձավորումը ևս ստանձնեց պետությունը:

Այսպիսով, ուրարտական բանակն իր ռազմական կազմակերպվածությամբ չէր զիջում հին առաջավորասիական այլ երկրների զինված ուժերին, որոշ առումներով անգամ՝ գերազանցում էր նրանց և ապահովում ուրարտական գրեթե կեսդարյա գերիշխանությունը ողջ Առաջավոր Ասիայում:

[2123] Այս հարցի շուրջը մանրամասն տե՛ս Batmaz 2015a: 132ff.; նույնի՝ 2015b: 183ff.
[2124] Belli, Ceylan 2004: 31ff., esp. p. 34; նույնի՝ 2005: 179f.;
[2125] Belli, Tozkoparan 2006: 171f.
[2126] Wilhelm 1987-1990: 419ff.; Salvini 2008b: 110.
[2127] Drews 1993: 112.
[2128] Гельцер 1969: 24 сл.; Feldman 2010: 75.
[2129] КУКН, 429 лиц. стор.; CTU IV, CT Kb-2 Ro.

# ԳԼՈՒԽ Գ
# ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

## 3.1. Աշխարհագրական և բնակլիմայական միջավայրը

### 3.1.1. Ուսումնասիրվող տարածքը

Իրանական բարձրավանդակի, Սիրիա-միջագետքյան հարթավայրի, Փոքր Ասիա թերակղզու և Կովկասյան լեռնահամակարգի միջև ընկած տարածքը պատմա-աշխարհագրական առումով հայտնի է Հայկական լեռնաշխարհ անունով[2130]:

Հայկական լեռնաշխարհի հյուսիսային, արևելյան և հարավային սահմանները ուրվագծվում են հստակ. սկսած Արևելապոնտական լեռնաշղթայի արևելյան՝ Պարխարյան (Քաջքարի) լեռներից՝ սահմանագիծը շարժվում է դեպի Մոսքիկյան (Աջարա-իմերեթական) և Թռեղքի (Թրիալեթի) լեռներ, ապա Փոքր Կովկասի լեռնահամակարգով իջնում դեպի Արաքսի հարթավայր և, եզերվելով Ղարադաղի (Հայկական), Սավալանի լեռներով ու Սոհենդի հրաբխային զանգվածով, իր մեջ է ընդգրկում Ուրմիա լճի գոգավորությունն ու միանում հյուսիսային Զագրոսներին: Հարավային սահմանը հստակ ընդգծվում է Տավրոսյան լեռնահամակարգով (Արևելյան կամ Հայկական Տավրոսներ (Իշխանասար/Շարիեքշան լ., 2561 մ), Բիթլիսի (Մարութա լ.՝ 2967 մ, Անդովկ լ.՝ 2940 մ), Ռշտունյաց (Առնոս լ.՝ 3550 մ, Արտոս լ.՝ 3475 մ), Կորդվաց և Հաքյարիի (Ագարակի) լեռներ (Ջողա/Զիլո լ., 4168 մ)), որը, ձգվելով դեպի արևմուտք, Էրգանիի լեռներով միանում է Մալաթիայի լեռներին, ապա Նուկրական լեռնաշղթայով և Հալիս ու Եփրատ գետերի ջրբաժանով՝ Անտիպոնտոսի լշ-ին մաս կազմող Թեջերի լեռներով ձգվում դեպի հյուսիս և Գայլ գետի (Քելքիթ) վերին հոսանքի շրջանում միանում Արևելապոնտական լեռներին (Քարտեզ 1-1): Լեռնաշխարհի միջով ձգվում են Մնձուրի, Բյուրակնյան և Հայկական Պարի լեռները՝ կազմելով Ներքին Տավրոսը և եզերվում լեռնաշխարհի ամենաբարձր՝ Մեծ Մասիս լեռով (5165 մ)[2131]:

Որպես երկրաբանական գոտի՝ Հայկական լեռնաշխարհն առանձնանում է հարևան շրջաններից: Լեռնաշխարհի տարածքի մոտ 60 տոկոսը ծովի մակարդակից բարձր է 1500 մ-ով, մոտ 23 տոկոսը գտնվում է 1000-1500 մ-ի վրա, ընդամենը 12 տոկոսն է ընկած 500-1000 մ-ի վրա և միայն 2.5 տոկոսը՝ մինչև 500 մ-ի վրա[2132]: Միջին բարձրությունը կազմում է 1850-1900 մ, և բնորոշվում է որպես «վիթխարի լեռնային

[2130] Абих 1899, 1902; Karajian 1920: 37 etc.
[2131] Karajian 1920: 36ff.; Ասլանյան 1971ա, էջ 30-52; Գաբրիելյան 2000, էջ 11-15: Տե՛ս և Հմմտ. Հակոբյան 2007, էջ 5-29; Պողոսյան, Խոյեցյան 2008, էջ 23-43:
[2132] Գաբրիելյան 2000, էջ 16, 78-104: Տե՛ս և Հմմտ. նաև Պողոսյան, Խոյեցյան 2008, էջ 26:

պարսպապատ կղզի»: Միջլեռնային գոգավորությունները և գետահովիտները հանդիսանում են բնակչության կենտրոնացման և կենսագործունեության հիմնական շրջանները:

### 3.1.2. Օգտակար ռեսուրսները

#### 3.1.2.1. Մետաղահանքերը

##### 3.1.2.1.1. Երկաթ

Հայկական լեռնաշխարհը հարուստ է մետաղական հանքերով, որոնց վաղ շահագործման մասին ունենք թե հնագիտական, և թե գրավոր վկայություններ: Վկայությունների մի զգալի մասը կարելի է գտնել անտիկ (Քսենոփոն[2133], Ստրաբոն[2134]), հայկական (Փավստոս Բուզանդ[2135], Ղազար Փարպեցի[2136], Ղևոնդ պատմիչ[2137], «Աշխարհացոյց»[2138]), արաբական և պարսկական (Իբն ալ-Ֆակիհ[2139], Ալ-Իստախրի[2140], Իբն ալ-Ասիր[2141], «Հուդուդ ալ-Ալամ»-ի անհայտ պարսկախոս հեղինակ[2142] և այլք), բյուզանդական (Իոաննես Մալալա[2143], Թեոփանես[2144], Պրոկոպիոս Կեսարացի[2145]), միջնադարյան այլ (Յակուտ ալ-Համավի, Իբն Բատուտա, ալ-Ումարի, Մարկո Պոլո և այլք[2146]), ուշ շրջանի օսմանյան աղբյուրներում[2147] ևն:

Հայկական լեռնաշխարհը մետաղագործության հնագույն կենտրոններից է՝ առնվազն 200 մետաղահանքերի վաղ շահագործման վկայություններով[2148]: Պղնձի բնակտորների մշակումը հնոցներում լեռնաշխարհի արևմուտքում թվագրվում է դեռևս Ք.ա. մոտ 4200-ական թթ-ով (Դեյիրմենթեփե)[2149], Հարավային Կովկասում՝ Ք.ա. 5-րդ հազ-ի վերջերով (Թեղուտ)[2150] կամ առնվազն 4-րդ հազ-ի սկզբներով[2151]: Հանքաքարից

---

[2133] Քսենոփոն, Անաբասիս, 5: V (1-2).
[2134] Strabo XI, 14: 9, XII, 3: 19, 23.
[2135] Փավստոս Բուզանդ, «Հայոց պատմություն», Երրորդ Դպրութիւն, Ժ (Ավետիսյան 1987, էջ 40/41):
[2136] Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն», Դրվագ Ա, Է (Ուլուբաբյան 1982, էջ 22/23):
[2137] Ղևոնդ, «Պատմություն», Գլուխ ԼԷ (Տեր-Ղևոնդյան 1982, էջ 123):
[2138] Երեմյան 1963, էջ 93:
[2139] Իբն ալ-Ֆակիհ, Գիրք երկրների մասին: Խոսք Հայաստանի մասին, էջ 286-301 (Տեր-Ղևոնդյան 2005, էջ 502):
[2140] al-Istakhri, masalik al-mamalik, 190-191 (de Goeje 1927: 190f.).
[2141] Իբն ալ-Ասիր, Պատմություն Մոսուլի աթաբեկների պետության, էջ 117 (Տեր-Ղևոնդյան 1981, էջ 353):
[2142] Ḥudūd al-ʿĀlam, § 35-36 (Minorsky 1937: 59, 67f.). Հատվածի հայերեն թարգմանության համար տե՛ս Փափազյան 1952, էջ 77:
[2143] Ioannes Malala, “Chronographia” (Niehbuhr 1831: 455-456).
[2144] Ադոնց 1987, էջ 225-226, ծնթ. 1: Բյուզանդական շրջանի Հայաստանի մետաղահանքերի համար տե՛ս Vryonis 1962: 4ff.; Pitarakis 1998: 148ff, .
[2145] Պրոկոպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, Գիրք I, 15 (Բարթիկյան 1967, էջ 40, ծնթ. 124):
[2146] Vryonis 1962: 7ff., ուր և տե՛ս աղբյուրների հղումները:
[2147] Vryonis 1962: 10; Parry 1970: 223ff.
[2148] Hauptmann 2007: 13f.
[2149] Özbal *et al*. 2000: 59; Yener 2000: 33ff.; Amzallag 2009: 504 ; Lehner, Yener 2014: 540, Fig. 20.5.
[2150] Meliksetian *et al.* 2011: 201f.

կապարի և արծաթի, հավանաբար նաև պղնձի և ոսկու ստացումը թվագրվում է առնվազն Ք.ա. 4-րդ հազ-ի կեսերով (Արսլանթեփե, Նորշունթեփե, Թեփեջիք, Թյուլինթեփե)[2152]: Ք.ա. 4-րդ հազ-ի վերջերից սկսվում է մկնդեղային բրոնզի[2153], Ք.ա. 3-րդ հազ-ի սկզբներից՝ անագաբրոնզի արտադրությունը[2154], ընդ որում, ՀՀ տարածքից հայտնի անագաբրոնզե առարկաներից հնագույնը թվագրվում է դեռևս Ք.ա. 4-րդ հազ-ի վերջ – 3-րդ հազ-ի սկզբներով (Թալինի դամբարանադաշտ)[2155]:

Երկաթի մշակությունը Հայկական լեռնաշխարհում վկայված է առնվազն Ք.ա. 2-րդ հազ-ում, և այս առումով թե լեռնաշխարհը, և թե նրան հարակից փոքրասիական ու հարավկովկասյան տարածքները հանդիսանում են երկաթի ստացման հնագույն օջախներից մեկը[2156]: Աքքադերենում *parzillu(m)*՝ «երկաթ» բառը (խաթ./խեթ. *habalki*, շումերագիր՝ AN.BAR) համարվում է փոխառություն անատոլիական որևէ լեզվից, ենթադրաբար՝ լուվերենից[2157]: Երկաթը գրավոր աղբյուրներում հիշատակվում է դեռևս Ք.ա. 2-րդ հազ-ի սկզբներին, ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն երկնաքարային, այլև՝ ձուլածո երկաթի[2158]: Երկաթե իրեր են բազմիցս հիշատակվում Ք.ա. 18-րդ դ-ի առաջին կեսով թվագրվող Մարիի տեքստերում[2159]: Մարիի տեքստերում հիշատակվում են նաև «երկաթագործներ» (*awīlū ša parzillim*)[2160]: «Երկաթագործներ» են հիշատակվում նաև հինխեթական դարաշրջանի տեքստերում (LÚ$^{MEŠ}$ AN.BAR.DÍM.DÍM)[2161]: Երկաթից իրեր են հիշատակվում նաև միտաննական և միջինասորեստանյան տեքստերում[2162]: Հայտնի է, որ երկաթը տեղ ուներ խեթերին տրված ուգարիթյան հարկի մեջ[2163] և բազմիցս հիշատակվում է ուգարիթյան տեքստերում[2164]: Հայաստանում և հարավկովկասյան տարածքներում առնվազն Ք.ա. 12-րդ դ-ով կարելի է թվագրել երկաթի սիստեմատիկ արհեստագործական

---

[2151] Amzallag 2009: 506.
[2152] Palmieri *et al*. 1993: 574f., Fig. 2; Palmieri, Sertok 1994: 119ff.; Yakar 2002: 18; Yener 2000: 27f., 48ff., 57ff.; Özbal *et al*. 2000: 59; Hauptmann 2007: 62; Hauptmann, Klein 2009: 80; Di Nocera 2010: 255ff.; Lehner, Yener 2014: 540f.
[2153] Hauptmann 2007: 295f.
[2154] Кашкай 1976: 152; Muhly 1977: 75; նույնի՝ 1995: 1506f.; Lehner, Yener 2014: 544f.
[2155] Meliksetian, Pernicka 2010: 41.
[2156] Pigott 1989: 69; Muhly *et al*. 1985: 70ff.; Yalçın 1999: 182ff.; Yener 2006: 372ff.; Akanuma 2008: 313ff.
[2157] Valério, Yakubovich 2010: 108ff.
[2158] Košak 1986: 134; Yalçın 1999: 183, Tab. 4; Valério, Yakubovich 2010: 112f.
[2159] Архипов 2009: 3 сл.
[2160] Архипов 2009: 11.
[2161] Košak 1986: 126. Այստեղ տե՛ս նաև երկաթի հիշատակությունները խեթական սեպագիր աղբյուրներում:
[2162] Maxwell-Hyslop 1974: 140ff.; Zaccagnini 1990: 500ff. Հնագիտական վկայությունների համար տե՛ս Арешян 1975: 86 сл.
[2163] Heltzer 1977: 205. Տե՛ս նաև Zaccagnini 1990: 500.
[2164] Fensham 1969: 209ff.

արտադրության սկիզբը[2165], ընդ որում, առաջին հերթին խոսքը վերաբերում է զինագործությանը[2166]: Վանա լճի ավազանում՝ Արճիշակ լճի մերձավորությամբ գտնվող Խառակոնիսի (Քարագյունդյուզ)՝ Ք.ա. 11-10-րդ դդ-ով թվագրվող դամբարանադաշտի պեղումներից հայտնաբերվել են հարյուրավոր երկաթե իրեր՝ սկսած զենքերից մինչև արդուզարդի առարկաներ[2167]: Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան շրջանի բնակիչները՝ խալյուբները (խալդայներ) հայտնի էին որպես հմուտ երկաթագործներ (*οἱ σιδηροτέκτονες Χάλυβες*) և բազմիցս են որպես այդպիսին հիշատակվում հունական աղբյուրներում[2168]:

Ք.ա. 13-րդ դարի վերջերից սկսած երկաթի աստիճանական տարածմանը հակառակ՝ անգամ Ք.ա. 9-րդ դարում Ասորեստանում երկաթը դեռևս լայն կիրառություն չուներ, և շարունակվում էր հիմնականում կիրառվել բրոնզը՝ թե զինագործության, և թե արհեստագործության մեջ: Սակայն, այս նույն շրջանից սկսած՝ ասորեստանյան արշավանքներն արդեն միտված էին երկաթ ձեռք բերելուն: Պատահական չէ, որ սիրիա-փյունիկյան իշխանություններից ասորեստանցիները հարկը պահանջում էին վճարել նաև երկաթի ձուլակտորներով, ասորեստանյան աղբյուրներում բազմիցս է շեշտվում տեղի արքաների պալատներում կամ տաճարներում պահվող և բռնագրավված երկաթի պաշարների մասին: Ընդ որում՝ խոսքը վերաբերում է բավական խոշոր քանակությունների: Օրինակ՝ ասորեստանյան արքա Աշշուր-նածիր-ապալ II-ի (Ք.ա. 884-858 թթ.) տարեգրության մեջ Բիթ-Զամանի երկրից ստացված մետաղով հարկի շարքում թվարկվում է 100 տաղանդ անագ, 100 տաղանդ բրոնզ և 300 տաղանդ (մոտ 9 հազ. կգ) երկաթ[2169]: Սալմանասար III-ի արձանագրություններում նշվում է Ունկի-Պատտինայից ստացված 3 տաղանդ ոսկու, 100 տաղանդ արծաթի, 300 տաղանդ բրոնզի և նույնքան էլ երկաթի մասին[2170]:

Ադադնիրարի III-ի (Ք.ա. 811-782 թթ.)՝ դեպի Արամ (արամեական իշխանությունների ընդհանրական անվանումը) ձեռնարկած արշավանքի ժամանակ նրա ձեռքն ընկավ այդ ժամանակների համար հսկայական ռազմավար՝ 2 հազ. 300 տաղանդ արծաթ, 20 տաղանդ ոսկի, 3 հազ. տաղանդ պղինձ, 5 հազ. տաղանդ (մոտ 150 հազ. կգ) երկաթ, ինչպես նաև այլ հարստություն: Նրա մեկ այլ արձանագրության մեջ որպես «Խաթթի» և «Ամուրրու» երկրներից ստացված հարկի չափ նշվում է 2 հազ.

[2165] Арешян 1974б: 128 сл.
[2166] Арешян 1974a: 192 сл.
[2167] Sevin 2003b: 191ff., Figs 9.16-20; Sevin, Kavaklı 1995: 336ff.; Sevin, Kavaklı 1996: 27ff., 55, Figs. 12-25; Sevin, Özfırat 2001a: 140f., Fig. 4.
[2168] Ամփոփ տե՛ս Kinnier-Wilson 1972: 99f.
[2169] Grayson 1991: 211 (A.0.101.1: ii 121-122).
[2170] Grayson 1996: 18 (A.0.102.2 22).

տաղանդ արծաթ, 1000 տաղանդ պղինձ, 2 հազ. տաղանդ երկաթ (մոտ 60 հազ. կգ)[2171]: Երկաթի մշակումը Ասորեստանում տարածվեց համեմատաբար ուշ՝ միայն Ք.ա. 8-րդ դարում, երբ Հայկական լեռնաշխարհում այն արդեն ուներ խորը ավանդույթներ:

Երկաթի պաշարներ կան Արևելապոնտական լեռների, Արածանիի ստորին հոսանքի ու Եփրատի ոլորանի շրջանում և հատկապես Վանա լճի հարավային ավազանում, ուր առկա են նաև երկաթի հանքաքարի հանույթի վաղ վկայություններ (Բալաբանի և Փյուրնեշեի հանքերը)[2172]: Այս տարածքը հայկական աղբյուրներում հայտնի էր «Երկաթահատաց և Կապարահատաց լեռ», «Երկաթահանք», «Երկաթապատ» անուններով[2173]: Երկաթի հանքերով հատկապես հարուստ էր վերինեփրատյան գոտին՝ Դիվրիգին (Տևրիկ) և Դևեջին՝ Մալաթիայի և Սիվասի միջև[2174], որոնք թեև ուրարտական տերության սահմաններից դուրս էին գտնվում, սակայն, առնվազն Ք.ա. 770-750-ական թթ-ին, Ուրարտուն միանգամայն կարող էր վերահսկել այդ տարածքներից արդյունահանվող մետաղի տեղաշարժը: Բացի դա, երկաթի արդյունահանում է վկայված հյուսիս-արևմտյան Իրանում՝ Ահարի շրջանում՝ Հայկական (Ղարադաղի) լեռների մոտ, սկսած դեռևս Վաղ Երկաթի դարից[2175]: Ընդհանրապես, այս գոտին չափազանց հարուստ է մետաղական հանքավայրերով[2176]:

Ուրարտական մետաղագործության մեջ մեծ էր երկաթի կիրառությունը: Դրան հակառակ՝ երկաթ ուրարտական տեքստերում գրեթե չի հիշատակվում: Միակ հավաստի վկայությունը հայտնի է «Սարդուրյան տարեգրություն»-ից: Այստեղ, Կուլխա երկրի մայրաքաղաք Իլդամուշայի նվաճման կապակցությամբ աղբյուրը հայտնում է Սարդուրիի կողմից «երկաթե կնիք» (KIŠIB AN.BAR) պատրաստելու մասին (Քարտեզ 4-1ա)[2177]:

#### 3.1.2.1.2. **Պղինձ**

Հյուսիս-արևմտյան Իրանում՝ Ահարի շրջանում, որը համապատասխանում էր ուրարտական աղբյուրների Պուլուադի երկրին[2178], կան պղնձի վաղ արդյունահանմանը

---

[2171] Տե՛ս, համապատասխանաբար, Grayson 1996: 213 (A.0.104.8: 18-19), 211 (A.0.104.7: 6). Ամփոփ տե՛ս նաև Янковская 1956: 36; Walker 1988: 112ff.

[2172] Karajian 1920: 168ff., Map; Maxwell-Hyslop 1974: 141f., Pl. XX; Slattery 1987: 10ff., Pigott 1989: 69, Fig. 4; Chart V; Belli 1985: 365ff.; նույնի՝ 1991b: 31ff., 36f. and Map 3; Belli, Konyar 2003a, Harita/Map 4; Bobokhyan 2008a: 77f., 613, Karte 4.

[2173] Հակոբյան և այլք 1988, էջ 241-242, 949:

[2174] Maxwell-Hyslop 1974: 150f., Tab. XX; Muhly *et al*. 1985: 72ff., Fig. 1.

[2175] Weisgerber *et al*. 1990: 85ff., 99.

[2176] Петров 1955: 29 сл., карта; Pigott 1990: 458, Fig. 27; Bobokhyan 2008a: 613, Karte 4.

[2177] КУКН, 241 $D_{x+13}$; CTU I, A 9-3 $III_{11'}$. Երկրորդ հնարավոր վկայության համար տե՛ս CTU I, A 8-3 $VII_{2'}$: Հմմտ., սակայն, КУКН, 173 $VII_{x+3}$, ուր տրվում է այլ ընթերցում:

[2178] Арутюнян 1985a: 160 сл.; Diakonoff, Kashkai 1981: 64. Այս երկրի անունը կապում են միջին պարսկ. **pōlavāt*՝ «պողպատ» բառի հետ: Տե՛ս Меликишвили 1968: 122 сл.

վերաբերող հետքեր, և այդ երկրի նվաճումը Սարդուրի Արգիշթորդու կողմից նպատակ ուներ վերահսկելու մետաղով հարուստ այդ գոտին[2179]: Ընդ որում, նման նպատակ կարող էր հետապնդել դեռևս Իշպուինին՝ դեպի Պուլուադի ձեռնարկված առաջին արշավանքի ժամանակ, որի մասին է հայտնում Օձասարի արձանագրությունը (Նախիջևան): Մետաղական հանքեր (արծաթ, պղինձ, ոսկի) կան նաև Նախիջևանում, որոնք շահագործվել են, ենթադրվում է, դեռևս բրոնզեդարյան հասարակությունների կողմից[2180]: Այս նույն տրամաբանությամբ կարելի է բացատրել Արգիշթի Ռուսայորդու ձեռնարկած արշավանքը դեպի Զանգեզուրի լեռներ, ուր պղնձի արդյունահանումն ուներ հեռավոր անցյալ (Կապան, Քաջարան, Ագարակ)[2181]: Հինարևելյան առևտրում մեծ նշանակություն ունեցող անագով հարուստ է Թավրիզի շրջակայքը[2182]:

Պղնձի, ցինկի և կապարի հանքեր կան Արևելապոնտական լեռների շրջանում, Սղերդում, Բիթլիսում, Քեբանում, Բասքիլում և Էլազըղի շրջանում, ուր առկա են նաև վաղ շահագործման վկայություններ[2183]: Պղնձի պաշարներով հատկապես հարուստ է ՀՀ հյուսիս և հյուսիս-արևելյան հատվածը (Ֆիոլետովո (Լոռի)[2184], Ալավերդի, Շամլուղ ևն[2185]), ուր հայտնի են արդեն մետաղագործության մեջ մասնագիտացված բրոնզեդարյան բնակավայրեր: Եվ թեև այս հեռավոր գոտում ուրարտական ներկայության հետքեր չկան, սակայն, Արգիշթի Մենուայորդու ձեռնարկած արշավանքը վերինսևանյան ավազան կարելի է դիտարկել այդ գոտին վերահսկելու կամ մուտք ապահովելու տեսանկյունից: Միաժամանակ, ուրարտական վերահսկողության տակ էր հայտնվել մեկ այլ հարուստ գոտի լեռնաշխարհի արևմուտքում՝ Էլազըղի շրջանը[2186]: Ասորեստանի մետաղի կարիքների զգալի մասը հնարավոր էր հոգալ տեղի Էգանիի (Էրգանի Մադեն) պղնձի հանքերից[2187]: Ինչպես հայտնի է, այդ գոտին ընկած էր «Նաիրյան երկրներ»-ի տարածքում, իսկ «Նաիրյան երկրներ»-ից բրոնզ, անագ և երկաթ ստանալու մասին նշվում է բազմիցս և հատկապես՝ Ք.ա. 10-9-րդ դդ-ի ասորեստանյան աղբյուրներում[2188]: Այդ նույն շրջանի

[2179] Меликишвили 1968: 122 сл.; Kroll 1984b: 128; նույնի՝ 2011: 151.
[2180] Belli, Sevin 1999: 41ff.; Ristvet *et al*. 2011: 3.
[2181] Palmieri *et al*. 1993: 591ff., Fig. 12; Xnkikyan 2002: 14; Kroll 2006: 20; Meliksetian, Pernicka 2010: 41, Fig. 1.
[2182] Karajian 1920: 186; Кашкай 1976: 150 сл.; Zaccagnini 1990: 499.
[2183] Karajian 1920: 161ff., Map; Vryonis 1962: 6f.; de Jesus 1978: 98f., Map. 1; Slattery 1987: 9ff., Map 2, Chart III-IV; Belli 1991b: 23ff., Map 2; Palmieri *et al*. 1993: 578ff., Fig. 3; Pitarakis 1998: 164f.; Özbal *et al*. 2000: 57ff., Fig. 1; Belli, Konyar 2003a, Harita/Map 3; Şerifoğlu 2007: 103; Bobokhyan 2008a: 613, Karte 4; Lehner, Yener 2014: 531ff., Fig. 20.1.
[2184] Геворгян, Пальмиери 2001: 11-13.
[2185] Meliksetian, Pernicka 2010: 41ff., 55.
[2186] Karajian 1920: 165ff.; de Jesus 1978: 98f., Map. 1; Kunç, Çukur 1988: 29ff., Şek. 1; Palmieri *et al*. 1993: 578f., Fig. 3; Pitarakis 1998: 175; Özbal *et al*. 2000: 57ff.; Hauptmann 2007: 61f.
[2187] Belli 1991b: 25.
[2188] Grayson 1991: 172 (A.0.100.5: 21).

տեքստերում առանձին հիշատակվում են Գիլզանուն, Խուբուշկիան և Շուբրիան[2189], որտեղից ստացված պղինձն ու բրոնզը կարող էին ծագել Սղերդի և Բիթլիսի լեռների մետաղահանքերից (Քարտեզ 4-1բ):

Գյումուշհանե-Էրզրում-Արդահանի շրջանը հետաքրքրություն էր ներկայացնում մետաղահանքերի աղբյուրներ մուտք ունենալու տեսանկյունից և ուրարտական աղբյուրներում հիշատակվող Դիաուխի երկրի նվաճումն ուրարտական տերության համար թերևս ուներ կենսական նշանակություն. այն մուտք էր ապահովում դեպի Արևելապոնտական լեռների՝ պղնձահանքերով հարուստ տարածքները[2190]: Այդ գոտում՝ Ճորոխի ստորին հոսանքի շրջանում ընկած Ձանզուլի հանքերից 1914 թ-ին ստացվել էր Կովկասում արդյունահանվող պղնձի մոտ մեկ երրորդը[2191]: Մեծ կարևորություն էր ներկայացնում նաև Էլյազըղի շրջանը իր հարուստ հանքերով, որ, ենթադրվում է, օգտագործվել են անգամ Ռուսա Արգիշթորդու ժամանակ[2192], թեև այս տարածքներում ուրարտական մշտական ներկայությունը Արգիշթի Ռուսայորդուց հետո քիչ է հավանական:

3.1.2.1.3. **Ոսկի**

Ուրարտական ոսկու համար կարևոր աղբյուր էին հանդիսանում Դիաուխին և նրան հարակից տարածքները: Ըստ հին և միջնադարյան աղբյուրների՝ այստեղ ոսկին հանդիպում է Սպերում (Սյուսպիրիտիս), Կաբալլայում[2193] և Տայքի Արսեաց փոր գավառներում[2194]: Այստեղ՝ Սպերում, Ստրաբոնի հիշատակած Կաբալլան հնարավոր է թվում նույնացնել Դիաուխիի կազմում հիշատակվող Կաբիլուխի ցեղանվան հետ[2195]: Դիաուխին կարող էր նաև մուտք ապահովել դեպի ոսկով հարուստ մեկ այլ շրջան՝ Տրապիզոն և մերձսևծովյան տարածքներ[2196]: Երկրորդ կարևոր աղբյուրը Սևանա լճից հարավ-արևելք ընկած Սոթքն էր, ուր ուրարտական ներկայությունը հաճախ պայմանավորում են տեղի ոսկու հանքերով[2197], առավել ևս, այստեղ վկայված են

---

[2189] Տե՛ս, համապատասխանաբար, Grayson 1991: 197 (A.0.101.1: 56-58), 241 (A.0.101.17: i 79-81), 262 (A.0.101.19: 101-102).

[2190] Меликишвили 1950: 40 сл.; նույնի՝ 1954: 334; Burney, Lang 1971: 136f.; Sinclair 1989a: 125; Çilingiroğlu 1997: 36; Laneri *et al*. 2003: 112, 117; Çiğdem 2006: 97ff.; Işıklı 2008: 55ff., Fig. 2; Bobokhyan 2008a: 613, Karte 4.

[2191] Karajian 1920: 144ff.

[2192] Belli 2000: 372

[2193] Страбон XI, 14.

[2194] Հմայակյան 1997, էջ 21-23; նույնի՝ 2007, էջ 155: Հայտնի է, որ այս շրջանները բյուզանդական կայսր Հուստինիանոս I-ի օրոք (527-565 թթ.) կայսրությանն էին տալիս երկու տաղանդ ոսկի: Տե՛ս Ադոնց 1987, էջ 225-226, ծնթ. 1: Տե՛ս նաև Karajian 1920: 144ff.; Slattery 1987: 10ff., Chart I; Bobokhyan 2008a: 75ff., 613, Karte 4.

[2195] Հմայակյան 1997, էջ 22; նույնի՝ 2007, էջ 156:

[2196] Hauptmann, Klein 2009: 75ff.

[2197] Հմայակյան 2007, էջ 153-155; Biscione 2003: 182.

հանքերի վաղ շահագործման հետքեր[2198]: Այս գոտին ընկած էր ուրարտական աղբյուրներում հանդես եկող Ուդուրի/Վեդուրի Էթիունիի տարածքում, ընդ որում, այստեղ հիշատակվող Ուշքիանի լեռան անունը ([KUR]*uškiani*) համադրվում է հայ. «ոսկի» բառի հետ[2199], իսկ մյուս կողմից՝ այս լեռնանվան տակ տեսնում են Սոթքի մերձակայքը[2200]: Այս նույն շրջանակում է դիտարկվում նաև Ուրմիա լճից արևելք հիշատակվող Ուշքայա – Օսկու համադրությունը[2201]: ՀՀ ներկայիս տարածքում ոսկու վաղ արդյունահանում է վկայված նաև Հրազդանի մերձակայքում՝ Մեղրաձոր - Արջասարում[2202]:

Գետաբերուկային ոսկի է առկա Արածանիի ստորին հոսանքի շրջանում՝ Էլազըղում, ոսկու հանքավայրեր կան նաև Հայկական Տավրոսների՝ Վանա լճից հարավ-արևմուտք ընկած հատվածներում (Քարտեզ 4-1գ)[2203]:

Ընդունված է կարծել, որ Էլազըղի և Սասունի շրջանները Միջագետքի համար ծառայել են որպես ոսկու աղբյուր դեռևս Ք.ա. 3-րդ հազ-ի երկրորդ կեսին[2204]: Եթե դա իրոք այդպես է, ապա դրանք կարող էին հետաքրքրություն ներկայացնել նաև Ուրարտուի համար Ք.ա. 9-րդ դ-ի վերջերից սկսած (Մենուայի արշավանքը դեպի Սասունի շրջան):

3.1.2.1.4. **Արծաթ**

Արծաթի հարուստ հանքավայրեր կան լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում՝ ներկայիս Գյումուշհանեից Իսպիր և Արդվին ձգվող շրջաններում, վերինեփրատյան գոտում և հատկապես Քեբանի շրջանում, ինչպես նաև Մեծ Զաբի վերին հոսանքի շրջանում (Հաքքյարի)[2205]: Հոմերոսը «Իլիական»-ում Տրոյայի դաշնակիցների շարքում թվարկում է հալիզոններին, որոնց հիշատակում է որպես «*հեռու Ալյուբեից եկածներ, որտեղ արծաթի հայրենիքն է*»: Ալյուբեն (*Ἀλύβης*) նույնացվում է Արևելապոնտական լեռնային շրջանների բնակիչներից խալյուբների (խալդայների) հետ[2206], ինչպես նրանք հանդես են գալիս հունական աղբյուրներում և որոնց երկիրը նույնանում է ուրարտական աղբյուրներում հիշատակվող Խալիտուի հետ (հայկ. Խաղտիք)[2207]: Այս

[2198] Գևորգյան, Զալիբեկյան 2007, էջ 16-17:
[2199] Պետրոսյան 1984, էջ 178-179:
[2200] Հմայակյան 2007, էջ 154:
[2201] Պետրոսյան 1984, էջ 179; Հմայակյան 2007, էջ 154:
[2202] Գևորգյան, Զալիբեկյան 2007, էջ 18-21:
[2203] Karajian 1920: 147.
[2204] Maxwell-Hyslop 1977: 84f.
[2205] Slattery 1987: 9f., Map 2, Chart II; Belli 1991b: 16f., Map 1; Belli, Konyar 2003a, Harita/Map 2; Bobokhyan 2008a: 613, Karte 4.
[2206] Այս մասին տե՛ս և հմմտ. van Loon 1966: 82; Belli 1991b: 21f. Հմմտ. Меликишвили 1962: 48, 56 сл.
[2207] Дьяконов 1952б: 111 сл.; Diakonoff, Kashkai 1981: 39; van Loon 1966: 81ff.

տարածքներում արծաթի վաղ և տևական արդյունահանման վկայությունն կարելի է դիտել նաև տեղի խոշոր քաղաքներից մեկի՝ Գյումյուշհանեի անվանումը («Արծաթե տուն»), որը ծագում է հուն. *Αργυρούπολη* / *Αργυρόπολις* («Արծաթի քաղաք») անվանումից[2208]: Արծաթը հիմնականում արդյունահանվում է արճիճի և ցինկի հետ միասին, որպես դրանց հանույթի բաղադրատարր (Քարտեզ 4-1դ):

3.1.2.2. **Այլ հանածոներ**

Բացի մետաղական հանքերից, մեծ կարևորություն ունեին ոչ մետաղական հանածոները: Դեռևս կիրառական էր օբսիդիանը, օբսիդիանի խոշոր հանք էր գտնվում Մեյդանթեփե կոչվող ուրարտական երբեմնի ամրոցի մոտակայքում: Հատկապես կարևոր են Նախիջևանի աղի հանքերը, որոնք, հնարավոր է, շահագործվել են դեռևս էնեոլիթյան դարաշրջանից սկսած[2209]: Քարաղի խոշոր հանքավայրեր կան նաև Կաղզվանի շրջանում[2210], Էրզրումի, Երզնկայի և Սղերդի շրջակայքում[2211]: Քարաղի արդյունահանում է վկայված նաև Վանի շրջանում[2212]:

3.1.2.3. **Անտառները**

Գլոբալ տաքացումը, որ դիտարկվում է երկրագնդի վրա Վաղ Հոլոցենի շրջանում, ավարտվում է Ք.ա. մոտ 4000 թ-ի սահմաններում և սկսում է մի նոր չորային և ցուրտ շրջան: Հայկական լեռնաշխարհում անտառներն աստիճանաբար նվազում են, փոխարենը՝ աճում են խոտածածկ տարածքները: Լեռնաշխարհի ներկայիս կլիման ձևավորվում է Ք.ա. մոտ 2000 թ-ի սահմաններում[2213]: Ուրարտական տերության միջնաշխարհը՝ Վանա լճի ավազանը, պատկանում է տափաստանային գոտուն: Այստեղ կլիմայական փոփոխությունների, իսկ Ք.ա. 3-րդ հազարամյակից սկսած՝ մարդու ինտենսիվ գործունեության հետ կապված, այս տարածքը գրեթե զրկվել է անտառներից, պայմանավորված, հատկապես, մետաղամշակության համար իրականացված անտառահատումներով: Զանգվածային անտառահատումների արդյունքում Ք.ա. 3-րդ հազարամյակում շուրջ 30 տոկոս կազմող Հայկական լեռնաշխարհի անտառածածկույթից պահպանվել է ոչ ավելի քան 6 տոկոսը: Անտառածածկույթից զրկվել են Բյուրակնի (թուրք. Բինգյոլ), Մնձուրի (Մունզուր), Ծաղկանց (Ալադաղ) լեռները, Նեմրութի, Թոնդրակի լեռնազանգվածները, Մեծ

[2208] Karajian 1920: 149ff.
[2209] Marro *et al*. 2009: 31ff.; Marro *et al*. 2010: 229ff.
[2210] Karajian 1920: 120.
[2211] Belli, Konyar 2003a, Harita/Map 1.
[2212] Karajian 1920: 120.
[2213] Oybak Dönmez, Belli 2007: 291; Solmaz, Dönmez2013: 283. Տե՛ս և հմմտ. նաև Wick *et al*. 2003: 674.

Մասիսի շրջակայքը ևն[2214]: Նույն երևույթը նկատվում է նաև հյուսիս-արևմտյան Իրանի՝ մետաղական հանքերով հարուստ Ահարի շրջանում, ուր անտառների ճնշող մասը վերացել են զանգվածային անտառահատումների հետևանքով[2215]:

Ներկայումս Վանի ավազանում անտառներ գրեթե չկան. ներկայիս Վանի իլում անտառապատ է տարածքի ընդամենը մոտ 1.23 տոկոսը[2216]: Բացառություն են կազմում Վանա լճի հարավային որոշ շրջաններ, ուր այժմ էլ՝ 2500-2700 մ բարձրության վրա, հնարավոր է հանդիպել կաղնու կղզյակների՝ այս ծառի մի քանի տեսակներով: Հանդիպում են նաև պիստակենի (*Pistacia atlantica, Pistacia khinjuk*), թխկի (*Acer cinarescens*), գիհի (*Juniperus oxycedrus*)[2217]: Այանցի շրջակայքում եղել են սոճենու (*Pinus* L.) պուրակներ[2218]: Ծառաբանական հետազոտությունները վկայում են, որ Այանցի ամրոցի կառուցման ժամանակ օգտագործվել են թեղու/ծփու, կնձնու/ (*Ulmus* L.), գիհու (*Juniperus* L.), կաղնու (*Quercus* L.), բարդու (*Populus* L.) ծառեր[2219]: Բարդու (*Populus* L. Pinaceae), թեղու (*Ulmus* L. Ulmaceae) և սոճու (*Pinus* L. Pinaceae) ծառեր են օգտագործվել Էրեբունիի կառուցման ժամանակ[2220], ընդ որում, եթե բարդին և կաղնին աճում են Արարատյան դաշտավայրի գետահովտային շրջաններում, ապա սոճին բնորոշ չէ այս տարածքին և, ամենայն հավանականությամբ, դրա փայտը բերվել է Կաղզվանի կամ Կարսի շրջաններից[2221]: Բարդու և սոճու փայտանյութ է օգտագործվել նաև Կարմիր բլուրում[2222]: Բաստամից հայտնաբերված ծառատեսակների թվում հանդիպում են հիմնականում սոճենու և բարդու տեսակներ[2223]:

Այժմ հիմնականում անտառապատ են Բիթլիսի լեռները՝ կազմելով համանուն իլի տարածքի մոտ 25 տոկոսը, իսկ Մուշի շրջանում անտառները կազմում են տարածքի մոտ 7 տոկոսը[2224]:

3.1.2.4. **Ջրագրությունը**

Հայկական լեռնաշխարհը ջրաբաշխ գոտի է հանդիսանում Կասպից ծովի (Կուր և Արաքս գետերի ավազան), Սև ծովի (Ճորոխի ավազան) և Պարսից ծոցի (Եփրատ և Տիգրիս գետերի ավազան), ինչպես նաև երկու ներքին փակ ավազանների՝ Վանա և Ուրմիա լճերի համար: Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող երկու խոշորագույն՝

[2214] Belli 1987: 98; Belli, Konyar 2003a: 2.
[2215] Kroll 1984b: 128.
[2216] Al *et al*. 2011: 35.
[2217] Wick *et al*. 2003: 666.
[2218] Solmaz, Dönmez2013: 282.
[2219] Newton, Kuniholm 2007: 195ff.
[2220] Паланджян 1964: 49 сл.
[2221] Туманян 1955: 62 сл.; Паланджян 1964: 51.
[2222] Туманян 1955: 61.
[2223] Selmeier 1988: 319ff.
[2224] Gür *et al*. 2012: 12.

Եփրատ և Տիգրիս գետերին բաժին է ընկնում լեռնաշխարհի ջրերի ողջ հոսքի մոտ կեսը: Լեռնաշխարհի սահմաններում շուրջ 95 հազ կմ$^2$ ջրահավաք ավազան ունեցող Եփրատը ամենաջրառատ գետն է 2700 կմ երկարությամբ (առավելագույնը՝ 7000 մ$^3$, նվազագույնը՝ 167 մ$^3$, տարեկան միջինը՝ 840 մ$^3$ վրկ, տարեկան հոսքը՝ 26 կմ$^3$): Տիգրիսի երկարությունը կազմում է 1900 կմ, ջրահավաք ավազանը լեռնաշխարհի սահմաններում՝ 40 հազ. կմ$^2$, սկիզբ է առնում երկու՝ Արևմտյան և Արևելյան Տիգրիս (թուրք. Բոհթան-սու) ճյուղերով (առավելագույն ծախսը 5685 մ$^3$, նվազագույնը՝ 69 մ$^3$, տարեկան միջինը՝ 530 մ$^3$ վրկ, տարեկան հոսքը՝ 15-16 կմ$^3$)[2225]:

Ուրարտական շրջանում ոռոգման ջրի հիմնական աղբյուր էին հանդիսանում Արևելյան Եփրատը և Արաքսը: Արևելյան Եփրատը կամ Արածանին (թուրք. Մուրադ-սու) ունի մոտ 722 կմ երկարություն, ջրահավաք ավազանը 42 հազ. կմ$^2$ է, ջրի հոսքի միջինը կազմում է 200-300 մ$^3$ վրկ, վարարման շրջանում հասնում է մինչև 2500 մ$^3$, ջրի նվազման շրջանում՝ իջնում մինչև 50-70 մ$^3$: Սկիզբ առնելով Ծաղկանց լեռներից՝ սնվում է բազմաթիվ վտակներից, որոնցից առավել խոշորը Մեղրագետն է (թուրք. Քարասու): Շատ են փոքր գետակները, ինչպես, օրինակ, Մշո դաշտով հոսող Հերոնեքը, Չիչեքվերեն դերեսին, Լիզ Սույուն, Մեմանլըն, Չըլբուհուրը ևն: Արածանիի մյուս վտակներն են Բյուրակն (թուրք. Բինգյոլ), Լիզ և Վարաժնունիք (Խնուս) գետերը:

Արաքս գետի երկարությունն է 1072 կմ՝ ավելի քան 102 հազ կմ$^2$ ջրահավաք ավազանով, գետի առավելագույն ծախսը հասնում է մինչև 1520 մ$^3$ վրկ, նվազագույնը՝ 160 մ$^3$, տարեկան միջինը կազմելով 280 մ$^3$, տարեկան հոսքը՝ 9 կմ$^3$: Սկիզբ է առնում Բյուրակնի լեռներից, ընդունում է Մուրց, Ախուրյան, Քասաղ, Հրազդան, Ազատ, Վեդի, Արփա գետերն ու այլ մանր վտակներ և հոսում դեպի Կասպից ծովը: Սկսած ուրարտական շրջանից՝ Արաքսի ջրերն օգտագործվել են ոռոգման նպատակով հատկապես Արարատյան դաշտավայրում և Շարուրի դաշտում (տե՛ս ստորև):

Սակայն, Արածանին և Արաքսը շրջանցում են Վանա լճից արևելք ընկած Ուրարտուի միջնաշխարհը, ուր տերության կենսագործունեության համար անգնահատելի նշանակություն ունեին Հայկական Տավրոսներից, Կորդվաց և նրան հյուսիս-արևմուտքից հարող Կոտուր-Վասպուրականի լեռներից սկիզբ առնող գետ-գետակներն ու բազմաթիվ ջրառատ աղբյուրները, որոնք կյանք են պարգևում բերրի ալյուվիալ գետահովիտներին: Դեպի Վանա և Ուրմիա լճեր հոսող այդ աղբյուրներն են Բերկրի (Բենդիմահի, այժմ՝ Մուրադիյե), Արճիշակ (Արճակ, այժմ՝ Մեմեդիք), Մարմետ (այժմ՝ Քարասու), Հայոց ձոր (Խոշաբ/Գյուզելսու) գետերը (Վանա լճի ավազան), Զոլա

[2225] Գաբրիելյան 2000, էջ 172-200:

Չայ (Տարոնո գետ), Նազլու Չայ (Էլո ջուր), Շար Չայ (Թրաբի գետ), Բարանդուզ Չայ (Մարի գետ), Գադեր Չայ (Գետառ) գետերը (Ուրմիա լճի ավազան): Վարագա լեռան առատ աղբյուրները ապահովում էին Վանը ջրով, ինչով և պայմանավորված էր մայրաքաղաքի ընտրությունը[2226]:

Հայկական լեռնաշխարհում ջրի պաշարները խիստ անհավասարաչափ են տեղաբաշխված, և թեև լեռնաշխարհը գրեթե ամբողջապես ընկնում է բնական տեղումների 200-300 մմ նվազագույն սահմանագծից բարձր գոտում, ինչը թույլ է տալիս զբաղվելու անջրդի երկրագործությամբ[2227], սակայն, եղանակային տատանումներով պայմանավորված վաղաժամ հալոցքները, հաճախակի հանդիպող երաշտային ամիսները դեռևս բերքի հասունացման շրջանում առաջ են բերում ջրի սով, ինչի արդյունքում լեռնաշխարհի մի շարք գոտիներում ըստ էության անհնարին է դառնում երկրագործությունն առանց արհեստական ոռոգմանը դիմելու: Վանի և Ուրմիայի ավազանները սնուցող Կոտուր-Վասպուրականի, Կորդվաց և հյուսիս-զագրոսյան ծալքաբեկորավոր լեռներից սկիզբ առնող գետերին բնորոշ է ամառային սակավաջրությունը՝ պայմանավորված դրանք սնուցող աղբյուրների շարքում ստորգետնյա ջրերի քիչ չափաբաժնով՝ ի տարբերություն հրաբխային ծագման լեռներում ձևավորվող գետերի, որոնք առավել մեծ չափով են սնվում ստորգետնյա ջրերից[2228]: Պատահական չէ, որ ծալքաբեկորային լեռներից սկիզբ առնող գետերի մեծ մասն ունի ժամանակավոր հոսք և ամռանը ցամաքում է: Ջրի անհրաժեշտ պաշարներ չկուտակելու դեպքում (ինչը մեծապես իրականացվում էր ուրարտական շրջանում) այս երևույթը երկրագործական հասարակությունների համար կարող էր ունենալ աղետալի հետևանքներ սակավաջուր տարիներին և հատկապես տևական երաշտի ժամանակ:

### 3.1.3. Ուրարտուի տնտեսական տարածքը

#### 3.1.3.1. Տնտեսական գոտիների ընդհանուր բնութագիրը

Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում վկայված ուրարտական ներկայության առաջին դրսևորումը հարթավայրային գոտիներում անցկացված տասնյակ կիլոմետրեր ձգվող ջրանցքներն էին և այդ ջրանցքների ոռոգած տարածքներում կառուցված խոշոր ամրոցները: Ի տարբերություն ուշ-բրոնզ – վաղերկաթեդարյան ամրոցերի, որոնք կառուցվել են ծ.մ. միջինը 2000 մ և հիմնականում ավելի բարձր ընկած գոտիներում, ուրարտական իշխանությունները ընդհուպ մինչև ուշ-ուրարտական շրջան երբևէ չեն փորձել հիմնավորվել

[2226] Belli 1999b: 11.
[2227] Oates and Oates 1976: 111; Neumann, Parpola 1987: 162; Riehl 2009: 94; Bagg 2012: 261ff.
[2228] Գաբրիելյան 2000, էջ 179; Պողոսյան, Խոյեցյան 2008, էջ 28 հաջորդիվ:

նախալեռնային և լեռնային գոտիներում[2229]: Ուրարտական պետության կենսագործունեությունը, ակնհայտորեն, կենտրոնացված էր լեռնաշխարհի ստորին՝ հարթավայրային հատվածներում: Այս առումով կարելի է նշել, որ Ուրարտուն հարթավայրային քաղաքակրթություն էր:

Ուրարտական տերության տարածքը տնտեսապես բաժանվում էր երկու հատվածի, որ կարելի է բնութագրել որպես ուրարտական պետական տնտեսական տարածք, և դրանից դուրս գտնվող, ենթակա/նվաճված բնակչության տնօրինության տակ գնվող մշակովի հողեր և արոտավայրեր: Ուրարտական պետական տնտեսական տարածքն ըստ էության նույնանում էր կենտրոնական իշխանությունների անմիջական վերահսկողության տակ գտնվող և նրա կողմից տնօրինվող երկրագործական տարածքներին կամ «հովիտներին», իսկ մեկ կամ մի քանի նման «հովիտներ» կազմում էին վարչատնտեսական այն միավորը, որն ասորեստանյան սեպագիր աղբյուրներում հանդես է գալիս որպես *nagū*[2230], իսկ ուրարտական աղբյուրներում, մի գուցե, որպես *asuni*(ʾ)[2231] (իմա՝ «մարզ»): «Լուվրի աղյուսակ»-ում *nagū* տերմինի կիրառությունները ևս հուշում են, որ գործ ունենք դրա տարբեր նշանակությունների հետ[2232], այդ թվում՝ *nagū*-ն որպես «(բերրի) հովիտ», «հարթավայր», *nagū*-ն որպես «երկրագործական շրջան, պետության երկրագործական և բնակչության կենտրոնացման հիմնական տարածք»[2233], որն ունենալ էր ռազմավարչական/տնտեսական կենտրոն և ամրոց/ամրություններ՝ դրանք շրջապատող երկրագործական տարածքով և գյուղատիպ բնակավայրերով[2234]: Այս վերջիններիս խնդիրը ռազմավարչական կենտրոնների/ամրոցների կամ այլ կերպ ասած՝ պետության տնտեսական ապահովումն էր[2235]: Այս առումով կարելի է որպես զուգահեռ նշել խեթական վարչատնտեսական կազմակերպման *ḫappiriya*-համակարգը[2236]:

Ուրարտական կենտրոնական իշխանությունների վերահսկողության տակ գտնվող տնտեսական տարածքը չէր նույնանում տերության քաղաքական

---

[2229] Տե՛ս նաև Biscione 2003: 183. Հայաստանի տարածքում ընկած նախա-ուրարտական և ուրարտական ամրոցների գոտիականության համար տե՛ս Smith 1996: 142ff., 228ff.; Fig. 4.9, 5.8, Tab. 4.6, 5.3; նույնի՝ 2003: 173ff.

[2230] Գրեկյան 2002բ, էջ 215-217:

[2231] Оганесян 1983: 138 сл.; КУКН. Հմմտ. Çavuşoğlu *et al*. 2010: 49.

[2232] CAD, N I, 1980: 121ff. (nagû A).

[2233] Zimansky 1985: 93f.; նույնի՝ 1990: 10ff.

[2234] Mayer 1983: 86ff. (Z. 192-193). Մանրամասն տե՛ս Գրեկյան 2000, էջ 157:

[2235] Ճիշտ այդպիսի միավորի հետ գործ ունենք հետագայում ևս, ինչպիսին հելլենիստական Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի տնտեսական տարածքն էր կամ նրա *χώρα*-ն: Տե՛ս Քոչարյան 1998, էջ 172-176:

[2236] Beckman 1999: 168.

վերահսկողության տակ գտնվող տարածքի կամ այլ կերպ ասած՝ նրա սահմանների հետ: Ուրարտուի տնտեսական տարածքը, ակնհայտորեն, առավել համեստ էր, կազմված էր մի քանի տասնյակ «հովիտներից», որոնց կարելի է հավելել այն գոտիները, ուր առկա էին բնական պաշարներ կամ ապահովում էին մուտք դեպի այդ պաշարները:

### 3.1.3.2. **Կենտրոնական գոտի (Վանա լճի ավազան)**

Վանա լիճը ձևավորվել է ոչ վաղ անցյալում: Սկզբնապես խիստ համեստ չափեր ունեցող այս լճի մակերեսը սկսում է կտրուկ բարձրանալ Ք.ա. 8-րդ հազ-ից սկսած՝ Ք.ա. 2-րդ հազ-ի ընթացքում աստիճանաբար ընդունելով այն տեսքը, որը մոտ է լճի ներկայիս ափագծին[2237]: Ներկայումս լիճը զբաղեցնում է 3570 կմ$^2$ մակերես, ջրահավաք ավազանը կազմում է մոտ 13 հազ. 700 կմ$^2$ [2238]: Լճի մակերեսը փոփոխական է, իսկ վերջին տասնամյակներում վերստին սկսել է կտրուկ բարձրանալ[2239]: Ջրերն աղի են, լճում բազմանում է միայն մեկ ձկնատեսակ՝ տառեխը: Այս գոտու երկրորդ մեծ լիճը Արճիշակն է (թուրք. Erçek Gölü)՝ 99 կմ$^2$ մակերեսով:

Վանա լճի ավազանում կլիման ցամաքային է՝ երկարատև ձմեռներով և ոչ շատ տաք ամառներով. հուլիս-օգոստոսին միջին ջերմաստիճանը կազմում է 14.7 °C, հունվար-փետրվարին՝ -3 °C[2240]: Տարեկան տեղումները տատանվում են 300-400 մմ սահմաններում, այդ թվում Վանում՝ 382 մմ: Վանա լճի հարավային ափերից սկսած տեղումների քանակն աճում է՝ հասնելով 600-800 մմ-ի[2241], Բիթլիսի լեռներում՝ 1000 մմ-ից ավելի[2242]: Վանա լճից հյուսիս ընկած Արծկեի և Արճեշի հովիտներում կլիման առավել բարեխառն է՝ համեմատաբար երկար տաք օրերով և բնակության համար առավել նպաստավոր միջավայրով: Երկարատև ձմեռների և կարճատև ամառների պատճառով բերքի հասունացման շրջանը տևում է կարճ՝ մի քանի ամիս, և բերքահավաքը արվում է հուլիսին[2243]:

Վանա լճի ավազանի երկրագործական նշանակությունը մեծ չէր՝ բնակլիմայական պայմանների և լեռնային կտրատված ռելյեֆի պատճառով, փոխարենը՝ գերակշռում էր անասնապահությունը[2244]: Թե ուրարտական շրջանում, և թե հետագայում՝ ընդհուպ մինչև մեր օրերը, առավել ինտենսիվ երկրագործությամբ

[2237] Özdemir *et al*. 2013: 959ff., esp. 968, Şek. 3-4.
[2238] Özdemir *et al*. 2013: 961f.
[2239] Yıldız, Deniz 2005: 15ff.
[2240] Oybak Dönmez, Belli 2007: 292.
[2241] Yıldız, Deniz 2005: 21f.; Özdemir *et al*. 2013: 963.
[2242] Wick *et al*. 2003: 666.
[2243] Zimansky 1998: 77. Տե՛ս նաև Çilingiroğlu 1997: 5.
[2244] Taffet, Yakar 1998: 135.

հնարավոր է զբաղվել սահմանափակ տարածքներում՝ Վանա լիճ թափվող գետերի ու գետակների գետահովիտներում, ինչպիսիք են Դերե-չայ գետի (Չաղլայան-չայ) ձևավորած Արծկեի հովիտը, Աղի (Զիլան, այժմ՝ Ըլըջա) և Գայթիս (այժմ՝ Դելի-չայ) գետերի ձևավորած Արճեշի հովիտը, Բերկրիի, Մարմետի, Հայոց ձորի, Ոստանի (Գևաշ) հովիտները, Վանը, Արճիշակ գետի հովիտը:

Վանա հովիտը կամ Տոսպա դաշտը Վարագա լեռների ուրվագծած կիսալուսնաձև լեռնային զանգվածով շրջապատված, մոտ 9 կմ երկարություն և 17 կմ լայնություն, շուրջ 150 կմ$^2$ մակերես ունեցող հիմնական երկրագործական գոտիներից մեկն:

Վանա հովտից դեպի հարավ՝ Հայող ձոր (Խոշաբ/Գյուզելսու) գետի միջին և ստորին հոսանքի շրջանում էր ձգվում Հայոց ձորի հովիտը (այժմ՝ Գյուրփընար): Այն ձգվում է մոտ 40 կմ, հովտի լայնությունը տատանվում է 2-5 կմ-ի միջև՝ ընդհանուր առմամբ զբաղեցնելով մոտ 190 կմ$^2$ տարածք[2245]: Շրջանի տնտեսական կենտրոնը Հայկաբերդն էր: Գետի վերին հոսանքի շրջանում էր ընկած Խոշաբի հովիտը՝ 180 կմ$^2$ մակերեսով: Երկրագործության համար նպաստավոր հողեր կան նաև Վանա լճի հարավ-արևելյան ափերից մինչև Արտոս լեռան փեշերը ձգվող հատվածում, ուր գտնվում էր Ոստանի ուրարտական ամրոցը:

Կենտրոնական գոտու բերրի հովիտներից է Վանա լիճ արևելքից թափվող Մարմետ գետի (այժմ՝ Քարասու) հոսանքի շրջանը՝ Նոշարի (80 կմ$^2$) և Թարհանի (50 կմ$^2$) հարթավայրերով: Թարհանի հարթավայրում է կառուցված տեղի ուրարտական ամենախոշոր կենտրոնը՝ Այանցը: Երկրագործության համար նպաստավոր գոտի է նաև Արճիշակ լիճը թափվող նույնանուն գետի վերին հոսանքի շրջանը՝ Սարայի (45 կմ$^2$) և Մոլլահասանի (Քարաքալլը) հովիտները (150 կմ$^2$): Այս գոտում՝ Վանից հյուսիս-արևելք ընկած ամենախոշոր հովիտը Չալդըրանն է՝ շուրջ 315 կմ$^2$ տարածքով:

Վանա լճին հյուսիս-արևելքից հարող Բերկրիի դաշտը, որը ոռոգվում է լիճ թափվող Բերկրի (Առեստ/Բենդիմահի, այժմ՝ Մուրադիյե) գետի ջրերով, ունի մոտ 112 կմ$^2$ տարածք[2246]: Կարևոր երկրագործական կենտրոն է, այստեղ է գտնվում Գործոթի ուրարտական ամրոցը: Դեպի արևմուտք ձգվում է Արճեշի հովիտը՝ մոտ 150 կմ$^2$ մակերեսով:

Առավել բարձրադիր երկրագործական գոտին Վանա լճից դեպի հյուսիս-արևմուտք՝ Արածանիի երկայնքով ձգվող Հարքի (Բուլանըք) դաշտն է՝ մոտ 525 կմ$^2$

[2245] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 286; Belli 1995: 357; Dan 2009: 87.
[2246] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 274; Belli 1997c: 117.

տարածքով, որից դեպի հյուսիս-արևելք ընկած է Մանազկերտի դաշտը՝ 450 կմ$^2$ տարածքով: Այս գոտում ընկած Լիզի դաշտը զբաղեցնում է մոտ 160 կմ$^2$:

Վանա լճի հարավ, հարավ-արևմտյան և արևմտյան շրջանները բարձրադիր են, լեռները կազմում են տարածքի մոտ 71 տոկոսը, հովտային շրջանները՝ ոչ ավել, քան 10 տոկոսը (670 կմ$^2$), միջին բարձրությունը կազմում է 1600 մ: Տարեկան տեղումները գերազանցում են 800 մմ-ը, Խլաթում կազմում է 400, Դատվանում՝ 580 մմ[2247]:

Նեմրութի հրաբխային լեռնազանգվածից դեպի արևմուտք՝ շուրջ 80 կմ երկարությամբ և մոտ 30 կմ լայնությամբ ձգվում է Մշո դաշտը՝ զբաղեցնելով ավելի քան 1650 կմ$^2$ տարածք: Ծովի մակարդակից բարձր է 1300-1350 մ, տեղումներն առատ են՝ հասնելով մինչև 900 մմ-ի[2248], այդ թվում Բուլանըքում՝ 500 մմ, Սոլհանում՝ 650, և Մուշում՝ մինչև 750 մմ: Ձնածածկույթը տևում է 3-4, լեռներում՝ մինչև 6-7 ամիս: Ամռան տևողությունը կարճ է՝ հունիսի կեսերից մինչև սեպտեմբեր: Այդ պատճառով՝ հատկապես Մշո դաշտում տնտեսության մեջ գերիշխում էր անասնապահությունը[2249]:

Ընդհանուր առմամբ, հովտային և հարթավայրային գոտիները՝ շուրջ 2 հազ. 670 կմ$^2$ ընդհանուր մակերեսով, կազմում են Վանա լճի արևելյան ավազանի տարածքի ընդամենը մոտ 14 տոկոսը[2250]: Այս ցուցանիշը Վանա լճից արևմուտք՝ Մշո դաշտի և Արածանիի միջին հոսանքի շրջանում հասնում է 27.2 տոկոսի (կամ մոտ 2230 կմ$^2$):

Այս գոտիները շրջափակված էին լեռներով, և միմյանց հետ կապվում էին տարվա մեջ մի քանի ամիս միայն՝ լեռնային հովիտներով հոսող գետակների ափերով[2251]: Օրինակ, 17-րդ դ-ի ճանապարհորդ Էվլիյա Չելեբիի խոսքերով՝ Բիթլիսի լեռնանցքը տարվա մեջ փակ է մնում 8 ամիս[2252]: Չալդրանում ձյունը մնում է հոկտեմբերի կեսերից մինչև մայիսի կեսերը՝ գրեթե 7 ամիս շարունակ[2253]: Գիյիմլի-Վան ճանապարհը տարվա մեջ փակ է մնում մոտ 6 ամիս[2254]: Փոխարենը, այս նույն տարածքում խոտը կանաչ է մնում գրեթե ողջ ամառ՝ լեռնային աղբյուրների շնորհիվ:

Ընդհանուր առմամբ, Վանի արևելյան ավազանի տարածքի 71 տոկոսից ավելին կազմում են խոտհարքերն ու մարգագետինները, Բիթլիսի շրջանում այն կազմում է տարածքի մոտ 44, Մուշի շրջանում՝ 46 տոկոսը[2255]:

---

[2247] Gür *et al*. 2012: 12, 36.
[2248] Rothman 1993: 272.
[2249] Burney 1966: 57.
[2250] Al *et al*. 2011: 4.
[2251] Zimansky 1985: 9, 28.
[2252] Էվլիյա Չելեբի, «Ուղեգրություն», էջ 128-134 (Սաֆրաստյան 1967, էջ 207):
[2253] Burney 1957: 37.
[2254] Erzen 1974c: 193.
[2255] Al *et al*. 2011: 37; Gür *et al*. 2012: 62.

### 3.1.3.3. **Հարավ-արևելք (Ուրմիա լճի ավազան)**

Ուրմիո լճի ավազանը զբաղեցնում է ավելի քան 52 հազ. կմ$^2$ տարածք՝ գտնվելով ծովի մակերևույթից միջինը 1000-1300 մ բարձրության վրա: Կլիման այստեղ մեղմ է, ձմռանը ջերմաստիճանը հազվադեպ է իջնում -6 °C-ից ցած, ձնածածկույթ գրեթե չի առաջանում, իսկ ամռան միջին ջերմաստիճանը կազմում է +30 °C: Ուրմիա լիճը, որի մակերևույթը փոփոխական է՝ տատանվելով 4750-6100 կմ$^2$-ի սահմաններում, վերջին տարիներին խիստ կրճատվել է՝ նվազելով ընդհուպ մինչև 2366 կմ$^2$ (2011 թ. օգոստոս)՝ կլիմայական փոփոխությունների և ինտենսիվ երկրագործությամբ պայմանավորված լիճ թափվող ջրի ծավալի կտրուկ անկման պատճառով[2256]: Ջրերը խիստ աղի են՝ զուրկ ձկնային պաշարներից: Տեղումները կազմում են տարեկան միջինը մոտ 330 մմ, ինչը թույլ է տալիս բերք հավաքել առանց արհեստական ոռոգմանը դիմելու: Սակայն, տեղումների քանակն անհավասարաչափ է բաշխված և տատանվում է 156 մմ-ից (Մոշիրան) 405 մմ սահմաններում (ք. Ուրմիա)[2257]: Ուրմիային մերձակա բարձրլեռնային գոտիներում հանդիպում են կաղնու և սոճենու անտառներ: Երկրագործական հիմնական գոտիներն այստեղ ընկած են Զոլա Չայ (Տարոնո գետ), Նազլու Չայ (Էլո ջուր), Շար Չայ (Թրաբի գետ), Գադեր Չայ (Գետառ) գետերի հովիտներում: Երկրագործության մեջ օգտագործվող հողերը ներկայումս կազմում են 670 հազ. հա:

### 3.1.3.4. **Հյուսիս-արևելք (Արարատյան դաշտավայր, Շարուր-Նախիջևան և Բայազետ)**

Լեռնաշխարհի ընդհարձակ հարթավայրերից մեկը Արարատյան դաշտն է: Մեծ Մասիս, Հայկական Պար, Արագած և Գեղամա լեռներով շրջապատված Արարատյան գոգավորության մերձարաքսյան հատվածը՝ Արարատյան դաշտը, ձգվում է մոտ 200 կմ՝ 20-45 կմ լայնությամբ, և մոտ 6600 կմ$^2$ մակերեսով: ՀՀ ներկայիս տարածքում՝ Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի-դրունք (հայ-նախիջևանյան սահման), Արարատյան դաշտը ձգվում է մոտ 100 կմ՝ 4-5, առավելագույնը՝ 15-17 կմ լայնությամբ, և զբաղեցնում հիմնականում հարթ մակերևույթով տարածք՝ շուրջ 650 կմ$^2$ մակերեսով: Միջին բարձրությունը ծովի մակարդակից 800-1000 մ է: Կլիման չոր է, ցամաքային՝ տևական շոգ ամառներով, ամառվա միջին ջերմաստիճանը +24-26 °C է, ձմռանը ջերմաստիճանը կարող է իջնել մինչև -30 °C: Տարեկան տեղումները տատանվում են 200-300 մմ սահմաններում: Տեղումները հիմնականում բաժին են ընկնում ձմեռային և գարնանային ամիսներին, մինչդեռ՝ ամառային ամիսներն ուղեկցվում են չոր և շոգ

[2256] Garousi *et al*. 2012: 1ff.
[2257] De Planhol 1989: 208f.

եղանակով: Արարատյան դաշտավայրի մակերևութային հոսքն աղքատ է, մշտական հոսք ունի Արաքսի ձախափնյա վտակ Հրազդան գետը, իր հոսքը պահպանում է նաև Այղր լճից և ստորգետնյա աղբյուրներից սնվող Մեծամոր գետը, մինչդեռ՝ մյուսները մեծավմասամբ ցամաքում են (Քասաղ, Վեդի): Բուսականությունն աղքատ է, սակայն, մյուս կողմից, ոռոգման ապահովման դեպքում դաշտավայրի բնակլիմայական պայմանները հնարավորություն են տալիս ստանալու առատ բերք[2258]:

Ուրարտական տերության համար Արարատյան դաշտը՝ երկրագործության համար պիտանի շուրջ 200 հազ. հա հողերով, ամենաընդարձակ երկրագործական գոտին էր[2259]: Ուրարտական շրջանում այստեղ ձևավորվել էին մի քանի տնտեսական միավորներ՝ սփռված Արտաշատի ուրարտական ամրոցի, Արգիշթիխինիլիի, Էրեբունիի, իսկ հետագայում՝ Կարմիր բլուրի, Օշականի շուրջը:

Բնակլիմայական պայմանները գրեթե նույնն են ներկայիս Նախիջևանի ԻՀ տարածքում: Տեղումներն այստեղ կազմում են 200-300 մմ՝ մերձարաքսյան հովտային շրջաններում, և ընդհուպ մինչև 900 մմ՝ Զանգեզուրի լեռնաշղթայում[2260]: Արաքս են թափվում Արփա և Նախիջևան գետերը, որոնք ունեն մշտական հոսք: Ժամանակավոր հոսք ունեցող գետակների թիվը հասնում է 400-ի: Նախիջևանի տարածքը բարձրլեռնային է՝ կտրատված լեռնային գետահովիտներով: Շատ ավելի մատչելի է դաշտավայրային հատվածը, հատկապես՝ Արարատյան դաշտի հարավային շարունակությունը հանդիսացող Շարուրի դաշտն ու Նախիջևանի գոգավորությունը, ինչպես նաև հանդիպակաց, Արաքսին մերձակա աջափնյա հողերը (Կոտուրյան գոգավորությունը): Ներկայումս առավել ինտենսիվ օգտագործվող հատվածը 14-15 կմ լայնություն և մոտ 30-32 կմ երկարություն ունեցող Շարուրի դաշտն է՝ ավելի քան 41 հազ. հա ոռոգովի հողերով[2261], որը Նախիջևանի ԻՀ հիմնական գյուղատնտեսական գոտին է: Գյուղատնտեսության համար նպաստավոր տարածք է նաև Ճահուկի՝ 7 կմ երկարությամբ և մոտ 5 կմ լայնությամբ դաշտը:

Երկրագործության համար նպաստավոր հողեր կան ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող Գայլատու լճից սկիզբ առնող Արուն գետի (Սարըսու) երկարությամբ ձգվող նեղ հովտային տարածքներում: Այստեղ ամենաընդարձակ գոտին Բայազետի հովիտն է ՝ շուրջ 280 կմ$^2$ տարածքով[2262]:

[2258] Ասլանյան 1971բ, էջ 290-302; Պողոսյան, Խոյեցյան 2008, էջ 168-171:
[2259] Biscione, Dan 2010: 111.
[2260] Ristvet *et al*. 2012a: 324.
[2261] Ristvet *et al*. 2011: 3; Ristvet *et al*. 2012a: 324f.
[2262] Belli 1997a: 27.

### 3.1.3.5. **Հյուսիս (Շիրակի դաշտավայր և Կարսի սարահարթ, Էրզրումի և Բասենի դաշտեր)**

Լեռնաշխարհի հյուսիսային հատվածը՝ Էրզրում-Բասեն-Վանանդ-Շիրակ գոտին, բարձրադիր է՝ միջինը 2 հազ. մ բարձրությամբ, բարձրադիր լեռները հատում են 3 հազ. մ-ի սահմանը, ինչպես Այծպտկունքի (Փալանդյոքեն լ., 3124 մ), Տայքի (Ալլահուեքբեր լ., 3123 մ) և Մեծրաց/Կարմիր Փորակ լեռները (Մեծրաց/Չախըրբաբա լ.՝ 2885 մ), որն ավարտվում է Խորձյան (թուրք. Ղսըր լ., 3192 մ) լեռնագագաթով՝ Հյուսիսական ծովի (Չըլդըչ լիճ) մերձավորությամբ: Այս լեռնահամակարգից դեպի հյուսիս գրեթե զուգահեռաբար ձգվում են Անահտական (Կոփա) և Ճորոխի լեռնաշղթաները (Մեսջիդ լ, 3255 մ): Տեղանքը, որ հանդիսանում է Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող մի քանի խոշոր գետերի ջրբաժանը, կտրտված է գետահովիտներով, երբեմն ներառում է համեմատաբար ընդարձակ դաշտավայրեր[2263]: Միայն Էրզրումի դաշտը զբաղեցնում է ավելի քան 825 կմ$^2$ տարածք, Բասենի դաշտը զբաղեցնում է մոտ 540 կմ$^2$: Կլիման ցամաքային է՝ խիստ ցուրտ, ձնառատ ձմեռներով, իսկ ձնածածկույթը տևում է առնվազն չորս ամիս: Ամռան միջին ջերմաստիճանը +30 °C է, ձմռանը ջերմաստիճանը կարող է իջնել ընդհուպ մինչև -40 °C: Միջին տեղումներն այստեղ կազմում են մոտ 400 մմ: Բուսածածկույթը հիմնականում տափաստանային է, անտառներ հանդիպում են բարձրլեռնային գոտիներում (հիմնականում բարդի), ընդարձակ են ալպյան մարգագետինները: Չնայած հողերը բերրի են, սակայն, խիստ կլիմայի պատճառով երկրագործությունն այստեղ ունի երկրորդական դեր[2264]: Երկրագործության համար առավել նպաստավոր է Վանանդի արևելյան հատվածը, բայց հատկապես Շիրակի բարձրադիր դաշտը, որն ունի մոտ 35 կմ երկարություն և 25 կմ լայնություն: Մթնոլորտային տեղումներն այստեղ տատանվում են 300-500 մմ-ից (հարավ-արևմուտք) մինչև 500-700 մմ և ավելի (հյուսիս-արևելք), և հնարավոր է զբաղվել անջրդի երկրագործությամբ, իսկ հարթ ռելյեֆը թույլ է տալիս հողերն օգտագործել առավելագույն չափով[2265]:

### 3.1.3.6. **Արևմուտք (Մերձեփրատյան գոտի)**

Արածանիի ստորին հոսանքի շրջանում՝ գետի ձախափնյա հատվածում, մինչև Ծավք լիճ (թուրք. Հազար-գյոլյու) և Մադենի լեռներ ձգվում են մի քանի դաշտավայրեր: 900-1100 մ բարձրության վրա գտնվող այս գոտին վերինեփրատյան շրջանի առավել բարեբեր տարածքներից է (ներկայիս անվամբ Ուլուովայի, Խարբերդի կամ Էլազըղի,

[2263] Çilingiroğlu 1997: 5; Işıklı 2008: 58f.
[2264] Taffet, Yakar 1998: 137f.; Laneri *et al*. 2003: 112; Çifci 2015b: 215.
[2265] Աբրահամյան 1971, էջ 319-331:

Քուզովայի, Հանքենդիի, Յարըմջա-Բալթաշըի, Քովանջըլարի դաշտերը)։ Ուլուօվայի դաշտի երկարությունը կազմում է 56 կմ, առավելագույն լայնությունը 15 կմ է և զբաղեցնում է մոտ 370 կմ$^2$ տարածք, մինչդեռ Էլազըղի դաշտն առավել փոքր է՝ 12-13 կմ երկարությամբ, 3-3.5 կմ լայնությամբ և մոտ 36 կմ$^2$ մակերեսով։ Այս գոտում էր ընկած նաև Պոլիբիոսի կողմից *Καλόν πεδίον*՝ «Գեղեցիկ դաշտ»[2266] անվանված և այժմ Քեբանի ջրամբարի ջրերի տակ մնացած Ոսկեհովիտը (թուրք. Ալթընօվա)։ Եվս մոտ 110 կմ$^2$ է զբաղեցնում Քուզօվայի հովիտը[2267]։ Էլազըղից դեպի արևելք է ձգվում Բալուի (Յարըմջայի) դաշտը՝ մոտ 40 կմ$^2$ մակերեսով։

Ինչպես Հայկական լեռնաշխարհի մեծ մասում՝ այստեղ ևս կլիման խիստ է՝ երկարատև, ցուրտ ձմեռներով և չոր, տաք ամառներով։ Տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +16 °C, տեղումների տարեկան միջինը բավական բարձր է՝ շուրջ 500-600 մմ, իսկ Արածանիից հյուսիս ընկած լեռնային շրջաններում՝ Մնձուրի (3250 մ) և Մերջանի (Աքբաբա լ., 3449 մ) լեռներում, այն հասնում է մինչև 1000 մմ-ի[2268]։

### 3.1.3.7. **Հարավ-արևմուտք (Մերձտիգրիսյան գոտի)**

Այս տարածքը հիմնականում ընդգրկում է պատմական Մոկքը և Աղձնիք աշխարհի արևելյան հատվածը։ Այստեղով են ձգվում Սալնո և Մոկաց լեռները, Արևելյան Տիգրիսը՝ իր Բաղեշ վտակով (այժմ՝ Գյուզել-դարա), և Արզան գետը։ Խիստ լեռնային գոտի է, միայն Տիգրիսին մերձ հատվածներում են ձգվում հարթավայրային գոտիներ (Արզնի կամ Հազրուի դաշտը)։ Կլիմայական առումով բաժանվում է երկու հատվածի։ Հյուսիս և հյուսիս-արևելյան լեռնային հատվածում ձմեռը խիստ է, տևում է առնվազն յոթ ամիս, իսկ ճանապարհները առանց բացառության փակվում են։ Մինչդեռ հարավային՝ տիգրիսամերձ հարթավայրային գոտում կիման տաք է, ամռանը միջին ջերմաստիճանը կազմում է մոտ +30 °C[2269]։ Տիգրիսամերձ գոտին ծառայում էր իբրև հացի շտեմարան սկսած միջինասորեստանյան դարաշրջանից[2270]։ Օրինակ, Աշշուր-նածիր-ապալ II-ի արձանագրություններից մեկում նշվում է «Նաիրի երկրի բերք»-ը հավաքելու և Թուշխան, Դամդամմուսա, Սինաբու և Թիդու քաղաքներում ամբարելու մասին[2271]։ Վերջիններիս տեղադրությունը[2272] վկայում է, որ խոսքը վերաբերում է վերինտիգրիսյան այս նույն գոտուն։

---

[2266] Polybius VIII.23.1.
[2267] Sevin *et al*. 2011: 9ff.
[2268] Şerifoğlu 2007: 102f.
[2269] Հակոբյան 2007, էջ 225-235։
[2270] Տեքստային վկայությունների համատ տե՛ս, օրինակ, Llop 2013: 552ff.
[2271] Grayson 1991: 261 (A.0.101.19: 96b-97).
[2272] MacGinnis, Matney 2009: 3ff.

### 3.2. Տնտեսության հիմնական ճյուղերն Ուրարտուում ըստ գրավոր և հնագիտական աղբյուրների:

#### 3.2.1. Երկրագործություն

Ուրարտական պետության ծնունդն իբրև երկրագործության վրա հիմնված հին առաջավորասիական տիպի պետություն, կարիք ստեղծեց ամբողջությամբ վերաձևելու լանդշաֆտը հատկապես բերրի հողեր ունեցող, սակայն, անջրդի հովտային շրջաններում, որոնք, հավանաբար, սակավամարդ էին դառնում հատկապես ամառային ամիսներին: Այս առումով ուրարտական արձանագրությունների պնդումը՝ տարածքի ամայի լինելու, դաշտերի, խաղողի այգիների և պտղատու ծառերի բացակայության մասին, կարելի է համարել ոչ թե ուրարտական քարոզչամեքենայի պնդում, այլ պարզ իրողություն:

Հայտնի է, որ ուրարտական դպրությունը տարբերակել է երկրագործության համար պիտանի, մշակովի հողատարածքները խոպանից: Ուրարտական տեքստերում «(մշակովի) դաշտ/հող» իմաստով գործածվել է դեռևս Ք.ա. 3-րդ հազարամյակից հայտնի GÀN(A) շումերագիրը[2273]: Անմշակ հողատարածքներն արտահայտվել են *qiurani/*KI$^{(TIM)/MEŠ}$ *quldini*(*e*) *manu* «հողն անմշակ(՞) էր[2274]» *qirani ṣirabae manu* «հողը ծարավ(՞) էր[2275], *qiurani/qarbie šuli*(*e*) *manu* «հողը/ժայռը(՞) ամայի(՞) էր[2276] կաղապարային բանաձևով և այլ զուգահեռներով[2277]:

Ուրարտական սեպագիր աղբյուրներն իրենց կաղապարայնությամբ հանդերձ բավական խոսուն են, երբ տեղեկություններ են հաղորդում Ուրարտուում արքաների/կենտրոնական իշխանությունների իրականացրած տնտեսական միջոցառումների մասին: Ուրարտական ինը արձանագրություններ՝ Մենուայից մինչև Ռուսա Արգիշթորդի, վկայում են երկրագործական ձեռնարկումների մասին՝ քաղաքների կառուցման, ջրանցքների անցկացման հետ միասին հաղորդելով նաև արտ հիմնելու/ցանքս կատարելու մասին (տե՛ս Աղ. 21): Կենտրոնացված մատակարարումների համակարգ կիրառող պետության համար երկրագործությունն ուներ կենսական նշանակություն. երկրագործությունն էր, ըստ էության, պայմանավորում բիայնական պետության գոյությունը:

Եթե մինչուրարտական շրջանում բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր, իսկ երկրագործությունն ուներ երկրորդական նշանակություն

---

[2273] КУКН: 416; CTU II: 413.
[2274] Համմտ. հայ. «կորդ» բառը՝ «անմշակ (հող)», «խոպան» իմաստով (Джаукян 1985: 367).
[2275] КУКН, 187$_4$; CTU I, A 8-15$_4$.
[2276] КУКН, 421$_7$, 417$_2$; CTU I, A 12-8$_7$; A 12-10$_2$, etc.
[2277] КУКН, 419$_4$; CTU I, A 12-7$_4$.

(տե՛ս ստորև), ապա ուրարտական շրջանում պատկերը ճիշտ հակառակն էր: Ուրարտուի տնտեսության հիմքը երկրագործությունն էր, հատկապես՝ հացահատիկիկային մշակաբույսերի մշակությունը[2278]: Հացահատիկն ինքն ուներ ծիսապաշտամունքային մեծ նշանակություն[2279] և բիայնացիների գերագույն՝ Խալդի աստվածը, առաջին հերթին բերրիության, թերևս՝ հացահատիկի աստված էր: Խալդիի ռազմի աստված լինելու հետ միասին տոնվում էր նրա պտղաբերության աստվածության գործառույթը[2280]: Ավելորդ չէ մեկ անգամ ևս նշել ուրարտական տոմարի՝ տիպիկ երկրագործական բնույթը[2281]:

Երկրագործական գործիքների հետ զուգահեռ ուրարտական կենտրոններում պահպանվել են մշակաբույսերի մեծ քանակությամբ մնացորդներ, որոնք հայտնաբերվել են Թոփրաքքալեից[2282], Կարմիր բլուրից[2283], Արգիշթիխինիլիից[2284], Հայկաբերդից[2285], Դեյիրմենթեփեից (Բադնոցի մոտ)[2286], Քայալըդերեից[2287], Յոնջաթեփեից[2288], Բաստամից[2289], Կալ՚եհ Էսմայիլ Աղայից[2290] և Այանցից[2291]:

Հնաբուսաբանական հետազոտությունների համաձայն՝ ուրարտական շրջանում աճեցվել են հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում՝ երկշարք գարի (*Hordeum distichon*), բազմաշարք գարի (*Hordeum vulgare* L.), սովորական կորեկ (*Panicum miliaceum* L.), աղվեսագի կորեկ (*Setaria italiaca* L. P. Beauvois), սովորական ցորեն (*Triticum vulgare* Vill.), փափուկ ցորեն (*Triticum aestivum* L./T. *durum* Desf., *Triticum spelta* L.), միաշարք ցորեն (*Triticum monococcum*), երկշարք ցորեն (*Triticum dicoccum* Schübl.), տարեկան (*Secale cereale* L.), սորգո (*Sorghum vulgare*), վարսակ (*Secole* L.), ոսպ (*Lens culinaris* Medik.), մանրահատիկ ոսպ (*Ervum Lens* L.), սիսեռ (*Cicer arietinum* L.), ոսպանման գլուլ (*Vicia ervilia* [L.] Willd.) ևն:

---

[2278] Ուրարտուում երկրագործության համար տե՛ս և հմմտ. Меликишвили 1954: 327 сл.; Пиотровский 1959a: 133 сл.; Հարությունյան 1971դ, էջ 363-366, ինչպես նաև Zimansky 1998: 79-81-ում տրված գրականությունը:
[2279] Çilingiroğlu 2004a: 257ff.
[2280] Yakar, Taffet 2001: 102.
[2281] Համայակյան 1990, էջ 76-78; Բադալյան 2009, էջ 36-42; Taffet 1999: 369f., 375ff.
[2282] Սրուանձտեանց 1874, էջ 132-133:
[2283] Туманян 1944: 73 сл.; Ղասաբյան 1959բ, էջ 77-78; Пиотровский 1961: 116; Гулканян 1966a: 265 сл.; Bedigian 1985: 159ff.; նույնի՝ 2010a: 367ff.
[2284] Гулканян 1966б: 107 сл.
[2285] Erzen 1978: 32, Lev. 37/c.
[2286] Oybak Dönmez2003: 89ff.
[2287] Burney 1998: 159.
[2288] Oybak Dönmez, Belli 2007: 290ff.
[2289] Hopf, Willerding 1988: 263ff., Abb. 15, Taf. 44-46.
[2290] Costantini, Biasini 1984: 397ff., Tab. A, Tav. LXXV-LXXVI.
[2291] Cocharro *et al.* 2001: 391ff., Tab. I; Solmaz, Dönmez2013: 285ff.

### 3.2.2. Այգեգործություն և խաղողագործություն

Ուրարտական տեքստերը շատ ավելի խոսուն են այգեգործության և խաղողագործության հետ կապված[2292]: Այգեգործության մասին տեղեկություններ են պահպանել թվով տասնինը վիմագիր տեքստեր, այգիներ ($^{(GIŠ)}$*ṣari*, $^{GIŠ}$TIR) հիմնելու մասին առաջին վկայությունները վերաբերում են Իշպուինիի կառավարման շրջանին, վերջին տեքստերը թվագրվում են Ռուսա Արգիշթորդու իշխանության տարիներով (Աղ. 21): Նույն պատկերն է խաղողագործության դեպքում. ուրարտական քսանչորս տեքստ տեղեկություններ է հաղորդում խաղողուտներ ($^{(GIŠ)}$*uldi*/$^{GIŠ}$*uduli*/$^{GIŠ}$GEŠTIN) հիմնելու մասին՝ սկսած Իշպուինիից մինչև Ռուսա Արգիշթորդի (Աղ. 21): Ենթադրվում է, որ Միերի դռան արձանագրության մեջ հիշատակվող Խալդիի խաղողի այգիները տնկվել էին հենց սրբարանի մերձավորությամբ՝ Զիմ-Զիմ լեռան լանջերին, ուր մինչ օրս նկատվում են դարավանդների հետքերը, որտեղ ժամանակին աճեցվել են խաղողի թփեր[2293]: Ագարակում հնագիտորեն վկայված հնձանների մի մասը կարող է թվագրվել ուրարտական շրջանով[2294]: Ասորեստանյան զինվորների կողմից ուրարտական մերձուրմյան տարածքների այգիներն և անտառները հատելու մասին է ասվում «Լուվրի աղյուսակ»-ում[2295]:

Հնագիտորեն վկայված են տարատեսակ մրգերի և բանջարեղենի մնացորդներ, այդ թվում՝ խաղող (*Vitis vinifera*), ծիրան (*Prunus armeniaca*), սալոր (*Prunus domestica*), բալ (*Prunus cerasus*), նուռ (*Punica granatum*), դեղձ (*Prunus persica*), ձմերուկ (*Citrullus aedulis* Pang.) ևն[2296]: Պեղումներից հայտնաբերվել են նաև նուշի (*Amygdalus communis*), չամանի (*Carum carvi* L.), գինձի (*Coriandrum sativum* L.), մաղադանոսի (*Petroselinum crispum* (Mill.) Fuss) սերմեր[2297]:

Տեխնիկական մշակաբույսերից աճեցվել է քունջութ (*Sesamum indicum* L., *Sesamum orientale*), որից պատրաստում էին ձեթ: Ձեթ էին ստանում նաև սորուկից/վայրի կտավատից (*Camelina sativa*)[2298]:

### 3.2.3. Անասնապահություն

Հայկական լեռնաշխարհին առանձնանում է անասնապահության համար ունեցած նպաստավոր պայմաններով: Լեռնաշխարհի որոշ շրջաններում արոտները կանաչ են

[2292] Մանրամասն տե՛ս և հմմտ. Пиотровский 1959a: 142 сл.; Арутюнян 1964: 102 сл.; Հարությունյան 1971դ, էջ 366-369; Թումանյան 2008, էջ 21-27:
[2293] Belli 1999a: 29f.
[2294] Թումանյան 2008, էջ 24-25:
[2295] Mayer 1983: 96ff. (Z. 276, 296, 303).
[2296] Пиотровский 1950: 31; նույնի՝ 1955a: 15 сл.; նույնի՝ 1961: 117; Арутюнян 1964: 134 сл.
[2297] Solmaz, Dönmez2013: 285ff.
[2298] Туманян 1944: 77; Ղասաբյան 1957, էջ 107; Bedigian 1985: 159ff.; Bedigian, Harlan 1986: 146ff.

մնում ողջ տարին, ինչպես, օրինակ, Վանից դեպի արևելք ընկած ալպյան մարգագետիններում կամ Բալըք (Գայլատու) լճի շրջանում[2299]: Ք.ա. 2-րդ հազ-ի վերջերին Հայկական լեռնաշխարհի գրեթե ողջ տարածքում և մասնավորապես՝ Վանա լճի ավազանում, ընդհուպ մինչև ուրարտական դարաշրջան տիրապետող էր անասնապահական կենցաղավարությունը[2300]: Բիայնացիների ձգտումը՝ հաստատվելու Էրզրում-Արդահանի կամ Սևանա լճի ավազանում, պայմանավորված էր նաև անասնապահական լայն հնարավորություններ ունեցող այս գոտիները վերահսկելու ցանկությամբ: Այս տարածքներից է, որ ուրարտական աղբյուրները նշում են մեկ արշավանքի ժամանակ ձեռք բերված թալանի առավել խոշոր քանակությունները. Դիաուխիից տարվել է 10 հազ. (՞) 478 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և 73 հազ. 770 ոչխար, Էթիունիից՝ x+126 հազ. ոչխար, Էթիունի և Վեդուրի Էթիունի երկրներից՝ 40 հազ. 353 գլուխ խոշոր, 214 հազ. գլուխ մանր եղջերավոր անասուն (տե՛ս նաև Աղ. 26): Նման մեկ այլ գոտի կարող էր լինել Արգիշթի Մենուայորդու տարեգրության մեջ հիշատակվող «Տուարածինի խուբին» ($^{KUR}$*ṭuaraṣiniei ḫubi*)[2301]: Այն նույնանում է հին հայկ. աղբյուրների «Տուարածատափ»-ին, իսկ անվան համար ենթադրվում է հայերեն ստուգաբանություն՝ մատնանշելով անասնապահական շրջան[2302]:

Ուրարտուի տնտեսության մեջ անասնապահությունը, իհարկե, երկրորդական չէր, բայց այնուամենայնիվ կարծում ենք՝ չուներ այն կենսական նշանակությունը, որը հատկացվում էր երկրագործությանը[2303]: Ի տարբերություն, օրինակ, «ամայի վայրեր»-ում այգիներ, խաղողուտներ և ցորենի ցանքսեր գցելու մասին արձանագրությունների մեծաթիվ հիշատակումների՝ ընդամենը երկու տեքստ է մեզ հայտնում արքայի կողմից «գոմ» (՞) կամ «փարախ» (ուրարտ. *si/eršini*[2304]) կառուցելուս մասին[2305]: Ընդ որում, այն չուներ տնտեսական նշանակություն. հիշյալ *si/eršini*-ն, դատելով տեքստերից մեկից, Վանա ամրոցում ժայռափոր մի սրահ էր (նկ. Գ-1/1-2)[2306], ուր պահվել են զոհաբերության համար նախատեսված կենդանիները[2307]: Բացի նշվածից, «Լուվրի

[2299] Erzen 1974c: 192f.; Belli, Sevin 1999: 26.
[2300] Burney 1957: 37; Taffet, Yakar 1998: 135 and n. 4-5; Taffet, Yakar 1998: 135ff.; Yakar 2011: 125ff.
[2301] КУКН, 173 столб. $V_{12}$; CTU I, A 8-3 $V_{12}$.
[2302] Ջահուկյան 1988, էջ 155; Petrosyan 2010: 136f.
[2303] Համմտ. Меликишвили 1954: 324 сл.; Пиотровский 1959a: 147 сл.; Հարությունյան 1971դ, էջ 369-376; Zimansky 1998: 76f.; Burney 2012: 55f.; Çifci 2015b: 214ff. Տե՛ս նաև Zimansky 1998: 84-85-ում տրված գրականությունը:
[2304] Salvini 1986: 36f. CTU I: 250 (*stalla*); Tarhan, Sevin 1989 [1990]: 431, Res. 2-4; Tarhan 1994: 33ff., Fig. 11; Çavuşoğlu *et al*. 2010: 39. Համմտ. Дьяконов 1963a: 61. Տե՛ս նաև Diakonoff, Medvedskaya 1987: 387.
[2305] КУКН, $80_{2,4}$, $81_4$; CTU I, A 5-$68_{2-4}$, A 5-$69_4$.
[2306] Tarhan 2011: 319f., Fig. 18a-18b.
[2307] Salvini 1986: 36f. Ընդ որում, որպես փարախ է այն ծառայել նաև օսմանյան շրջանում Վանի բերդի կայազորի համար: Տե՛ս Lehmann-Haupt 1926: 31.

աղյուսակ»-ը մի քանի անգամ հայտնում է ուրարտական ամրոցներում ամբարված հարդի մասին, որն ասորեստանցիները հրի էին մատնել[2308]: Այս տեղեկությունները ևս կարող են վերաբերել անասնապահության պետական հատվածին: Ի լրումն՝ անասնապահությամբ են զբաղվել նաև ուրարտական կենտրոնների մերձավորությամբ սփռված գյուղական բնակավայրերում, ուր, չի բացառվում, պահվել են պետության սեփականություն հանդիսացող հոտերի ինչ-ինչ քանակներ (տե՛ս ստորև)[2309]:

Այն պնդումները[2310], թե ուրարտական տիրապետությունն ի զորու չի գտնվել ձևափոխելու լանդշաֆտը և այն հարամարեցնելու կենտրոնացված պետության պահանջներին, բացարձակապես տեղին չէ: Համենայն դեպս, սա կարելի է ասել Ուրարտուի տնտեսության «պետական հատված»-ի համար: Կարմիր բլուրի *tamertu*-ն, անկասկած, տիպիկ երկրագործական տնտեսություն էր, ուր անասնապահությունն ուներ երկրորդական նշանակություն (տե՛ս ստորև): Այդ նույնը վերաբերում է միջինասորեստանյան *dunnu* համակարգին[2311], որը, ինչպես կփորձենք ցույց տալ ստորև, ուրարտական պետական (պալատական/տաճարային) հողատիրության և տնտեսության կազմակերպման նախատիպն էր:

Թոնի Ոիլքինսոնի տեսակետը, ըստ որի՝ ուրարտական իշխանության շրջանում բնակչության հիմնական մասն ապրել է կիսաքոչվոր կենցաղավարությամբ և սեզոնային տեղաշարժերով պայմանավորված եղել խիստ շարժունակ՝ բարձրանալով ամառային արոտավայրերը և ձմեռելով հարթավայրերում[2312], մեզ համոզիչ չի թվում: Ուրարտական իշխանությունը հազիվ թե կարողանար վերահսկել նման տեղաշարժերը և ապահովել՝ ամառային ալպյան արոտավայրեր բարձրացած անասնապահ համայնքների վերադարձը, առավել ևս, եթե այդ համայնքը կազմված էր նախկին գերիներից[2313]: Ստորև ներկայացվելիք պատկերը՝ Ուրարտուում հողատիրության բնույթի և հիմնական արտադրող ուժի՝ հողին ամրացված կախյալների խավի մասին, բացառում է նման հնարավորությունը: Այդ նույնը վերաբերում է այն կարծիքին, ըստ որի՝ ուրարտական ջրանցքաշինությունը միտված էր հիմնականում անասնապահության կարիքները բավարարելուն: Դրա վրա շեշտադրում են

[2308] Mayer 1983: 88f. (Z. 209-210), 96f. (Z. 275).

[2309] Ուրարտական հնավայրերից հայտնաբերված կենդանիների ոսկրաբանական նյութի ուսումնասիրության համար տե՛ս Даль 1952: 75 сл.; Մեժլումյան 1979, էջ 36-37; Boessneck, Kokabi 1988: 175ff., Taf. 40-43.

[2310] Համմտ. Erdem 2011b: 63.

[2311] Koliński 2001: 109f.; Szuchman 2009a: 537f.

[2312] Wilkinson 2003: 197f., 204.

[2313] Այստեղ կարելի է նշել միջինասորեստանյան դարաշրջանի մի տեքստ, ըստ որի՝ ցուպի 100 հարվածով էր պատժվելու այն հովիվը, ով ժամանակին չի վերադառնա *dunnu*-ամրոց: Տե՛ս Szuchman 2009a: 537, n. 35.

հատկապես Թուրքիայի հետազոտողները[2314]: Ճիշտ է՝ «Լուվրի աղյուսակ»-ը հայտնում է ջրանցքների ոռոգած արոտավայրերի մասին, սակայն, հենց այդ տեղեկությունը կարող է հուշել, որ ուրարտական իշխանությունները փորձում էին հոտերը պահել հարթավայրային՝ իրենց հաստատուն իշխանության տակ գտնվող գոտում, և շեշտը չէին դնում բարձրլեռնային արոտավայրեր մուտք ունենալու վրա, ենթադրելի է՝ այդ տարածքներում ունեցած թույլ իշխանության կամ ընդհանրապես՝ դրա բացակայության պատճառով:

Մյուս կողմից, բիայնական արշավանքների գլխավոր նպատակներից մեկը դա կենդանի հոտերի թալանն էր: Թալանված անասնագլխաքանակը լրացնելու էր այն հնարավոր բացը, որը պետությունը կարող էր զգալ՝ անասնապահության համար հարթավայրային գոտիների ընձեռած համեմատաբար սուղ հնարավորությունների պատճառով: Մեզ հասած տեքստերում Բիայնիլի քշված անասունների թիվը հասնում է հսկայական չափերի՝ մոտ 300 հազ. խոշոր, 1 մլն-ից ավելի մանր եղջերավոր անասուն, չհաշված ձիերը և քիչ քանակությամբ ուղտերը (տե՛ս Աղ. 26): Թալանից բացի մեկ այլ աղբյուր էր հպատակ ժողովուրդներից ստացվող հարկերը, որը հիմնականում ստացվել է ընտանի կենդանիներով (տե՛ս ստորև): «Լուվրի աղյուսակ»-ը տեղեկացնում է Մուծածիրից տարված ընդամենը 1810 գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասունների մասին[2315], մինչդեռ՝ Սարգոն II-ի տարեգրության մեջ այդ թիվը կազմում է x+920 գլուխ խոշոր, 100 հազ. 225 գլուխ մանր եղջերավոր անասուն, ինչպես նաև 692 ջորի և ավանակ[2316]: Տարբերությունը թերևս կայանում է նրանում, որ այստեղ արտացոլվել է ողջ արշավանքի ընթացքում՝ Ուրարտուի մերձուրմյան տարածքներից ձեռք բերված կենդանիների ընդհանուր թվաքանակը:

Կենդանիների մի զգալի մասը տրվում էր աստվածներին իբրև զոհաբերություն: Միայն «Միերի դռան» դիցացանկում աստվածների համար սահմանված զոհաբերության չափը կազմում էր 401 կենդանի, այդ թվում՝ 6 ուլ (UDU.MÁŠ.TUR), 96 ցուլ (GUD), 6 կով (GUD.ÁB) և 293 ոչխար (UDU)[2317]: Եվ թեև արձանագրության մեջ նշվում է նաև ամիսը, երբ պետք է արվեր զոհաբերությունը ($^{d}$UTU ITU), սակայն, այնուամենայնիվ, տեքստից պարզ չի դառնում, թե արդյո՞ք զոհաբերություններն արվելու էին ամսեկան[2318] կամ տարեկան կտրվածքով[2319], թե, ըստ տեսակետներից

[2314] Erdem 2011b: 62; Çifci, Greaves 2013: 203ff.
[2315] Mayer 1983: 112f. (Z. 424).
[2316] Fuchs 1994: 114, 321 (Z. 154-155).
[2317] КУКН, 38 текст $I_{1-23}$, текст $II_{1-44}$; CTU I, A 3-$1_{1-23, 32-75}$.
[2318] Меликишвили 1951a: 34.
[2319] König 1955: 54, Anm. 3.

մեկի, անգամ ամեն օր[2320]: Ավելի հավանական է թվում, որ սա տարեկան զոհաբերություն էր, նամանավանդ, արձանագրությունն առանձին զոհաբերություններ էր սահմանում Խալդի աստծո և մնացյալ աստվածների համար ըստ տարվա «եղանակներ»-ի/երկրագործական սեզոնների՝ երեք անգամ երեքական ոչխար Խալդիին ($^{d}$*ẖaldie* III UDU$^{(MEŠ)}$ TAG), ևս երեք անգամ երեքական ոչխար՝ «բոլոր աստվածներին» (III UDU$^{(MEŠ)}$ DINGIR$^{MEŠ}$ UKKIN$^{(MEŠ)}$)[2321]: Եվս 3 ցուլ և 30 ոչխար է նշվում նույն արձանագրության մեջ ոչ հասկանալի կոնտեքստում[2322]: Այսպիսով, միայն «Միերի դռան» դիցացանկում հիշատակված աստվածների համար զոհաբերվելու էր 452 գլուխ խոշոր և մանր եղջերավոր անասուն: Հայտնի են զոհաբերությունների ցանկեր պարունակող այլ տեքստեր ևս, որոնցում, սակայն, գործ ունենք շատ ավելի համեստ թվերի հետ[2323]:

Ի դեպ, զոհաբերության տեքստերում և, թերևս մեկ բացառությամբ՝ նաև Խորխորյան տարեգրության մեջ, հանդիպում են զոհաբերվող ոչխարների միաժամանակ երկու հիշատակումներ՝ UDU և UDU.ŠE[2324]: Այս երկրորդ գրելաձևը թարգմանվում է որպես «գեր ոչխար»[2325]: Սակայն, դատելով միջագետքյան զուգահեռներից, ավելի հավանական է թվում այն թարգմանել որպես «հացահատիկով կերակրված ոչխար»[2326]՝ ի տարբերություն խոտով կերակրված ոչխարների (UDU.Ú): Այս դեպքում, պետք է ենթադրել, որ խոսքը վերաբերում է տերության երկրագործական տարածքներում կամ «պետական հատված»-ում առկա ոչխարների հոտերին, որ, թերևս, պահվում էին հատուկ արքայական սեղանի համար և զոհաբերությունների նպատակով: Օրինակ, նորասորեստանյան տեքստերից մեկում հիշատակվող թվով 1 հազ. 998 «գարով կերակրված» ոչխարների (UDU.ŠE.MEŠ) ստացման և վերաբաշխման ցանկում 1 հազ. 522-ը նշվում է որպես «խնջույքի սեղանի հովվի» (LÚ.SIPA–BUR/*rā'i naptini*) տրամադրության տակ գտնվող[2327]: Բացի դա մենք ենթադրում ենք, որ այստեղ խոսքը կարող է վերաբերել ոչ միայն «գեր» կամ «գարով կերակրված» ոչխարի, այլ՝ ոչխարների մեկ այլ ցեղատեսակի, տվյալ դեպքում՝ դմակավոր ոչխարների: Դմակավոր ոչխարները (*Ovis aries* L. *dolichura*) գրավոր

[2320] Özgüç 1969: 3.
[2321] КУКН, 38 текст $I_{29-31}$, текст $II_{59-62}$; CTU I, A 3-$1_{29-31, 90-93}$.
[2322] КУКН, 38 текст $I_{26}$, текст $II_{52}$; CTU I, A 3-$1_{26, 83}$.
[2323] КУКН, 36, 270, 392, 407, 421, 424; CTU I, A 3-2, A 10-4 Ro (?), A 10-6, A 11-1 Vo, A 12-1 I-II, V-VI, A 12-2 I, A 12-3, A 12-8, A 14-1 Vo, 14-2 Vo.
[2324] КУКН, 407, обор. стор. $_{43}$; CTU I, A 11-1 $Vo_{26}$, A 12-1 $I_{10}$, A 14-1 $Vo_{6-8, 12-13, 17}$, A 14-2 $Vo_{4-5, 9-10, 15}$.
[2325] Տե՛ս և հմմտ. Friedrich 1940: 214f.; Գրեկյան 2004բ, էջ 242-243; Հարությունյան 2006, էջ 201-204:
[2326] Gelb 1965: 237; Ellison 1978: 97f.
[2327] Fales, Postgate 1995, No. 80.

աղբյուրներում հանդիպում եմ դեռևս Ք.ա. 4-րդ հազ-ից և հիմնականում նախատեսված էին զոհաբերությունների համար:

Նիկոլայ Հարությունյանը զուգահեռ է անցկացնում ուրարտական տեքստերում մի քանի անգամ հանդիպող UDU *erašini* տերմինը UDU.ŠE գաղափարագրի հետ և գտնում, որ դրանք նույնական են[2328]: Դա, իհարկե, չի կարելի բացառել, սակայն, միաժամանակ, մենք հնարավոր ենք գտնում UDU *erašini* տերմինի տակ տեսնել ոչխարների ինչ-որ այլ ցեղատեսակ, կարելի է ենթադրել՝ բրդատու (շում. udu.sig$_2$): Այս առումով հետաքրքիր է, որ UDU *erašini* ոչխարները ուրարտական տեքստերում հիշատակվում են միմիայն «Խալդյան դարպասներ»-ի և $^{LÚ}$*palagi* խոչվող քրմերի (՞) հետ միասին, կարելի է ենթադրել՝ ոչխարները խուզելու ինչ-որ ծեսի հետ կապված:

Ուշագրավ է, որ բիայնացիները պահում էին զոհաբերված կենդանիների ոսկորները: Միայն Կարմիր բլուրի թիվ 26 սենյակից հայտնաբերվել է մոտ 36 հազ. ոսկոր, ընդ որում՝ առանձ գլխի և առաջնային վերջույթների[2329]: Զոհաբերված կենդանիների մոտ 600 հազ. ոսկորներ են (մոտ 1200-1500 գլուխ) հայտնաբերվել Բաստամի ամրոցի սենյակներից մեկից[2330]: Նման իրավիճակ հայտնի է նաև Թոփրաքքալեից[2331]: Հնարավոր է համարվում այս երևույթը բացատրակ արքայական սննդի մնացորդների տաբույավորմամբ[2332], թեև այստեղ կան այլ կարծիքներ ևս[2333]:

### 3.2.4. Հիդրոշինարարությունը

Արհեստական ոռոգման վրա հիմնված երկրագործությամբ հին առաջավորասիական տիպի պետության համար, ինչպիսին էր Ուրարտուն, հիդրոշինարարությունն ուներ կենսական նշանակություն[2334] և պայմանավորված չէր կենտրոնական իշխանությունների զուտ քաղաքական նկատառումներով[2335]: Սեպագիր և հնագիտական աղբյուրները վկայում են Ուրարտուում արհեստական ոռոգման վրա հիմնված երկրագործության և ընդարձակ տարածքներ ընդգրկող ոռոգման բարդ համակարգերի առկայության մասին[2336]: Ուրարտական վիմագրությունից հայտնի է

---

[2328] Harutyunyan 2010: 985f. (ուր և տե՛ս տեքստային հղումները):

[2329] Пиотровский 1950: 61, նույնի՝ 1952: 21 сл.; Даль 1952: 78; Арутюнян 1964: 189 сл.

[2330] Zimansky 1979: 53ff.; նույնի՝ 1988: 107ff. Հմմտ. Wartke 1993: 66f.

[2331] Zimansky 1988: 119f., n. 19; նույնի՝ 1998: 288.

[2332] Zimansky 1995a: 99.

[2333] Տե՛ս և հմմտ. Kroll 1984a: 157; Grekyan 2013-2014: 72f.

[2334] Меликишвили 1951a: 30; նույնի՝ 1954: 330; Հարությունյան 1971դ, էջ 359; Taffet, Yakar 1998: 139f.

[2335] Burney 1972a: 180; նույնի՝ 1981: 149f.; Burney, Lang 1971: 142; Zimansky 1985: 67ff.

[2336] Առկա է խնդրին վերաբերող նշանակալի գրականություն: Տե՛ս Շիրմազան 1962, էջ 5-61; Пиотровский 1944: 193 сл.; Арутюнян 1964: 11 сл.; Laessøe 1951: 21ff.; Öğün 1970; Burney 1972a: 179ff.; Garbrecht 1988: 185ff.; նույնի՝ 2004: 1ff.; Garbrecht, Fahlbusch 2003: 123ff.; Belli 1994b: 9ff.; նույնի՝ 1996b: 638ff.; նույնի՝ 1997a; ինչպես նաև վերջինիս մի շարք հոդվածներ, որոնց համար տե՛ս Աղ. 22:

ջրանցքաշինության մասին տեղեկություններ պահպանած 30 արձանագրություն: Տեքստերի ճնշող մեծամասնությունը (21 տեքստ) պատկանում է Մենուա Իշպուինորդուն, որոնցից 14-ը վերաբերում են «Մենուայի ջրանցք»-ին (ᵐ*menuai pili timi*): «Մենուայի ջրանցք»-ը հիշատակվում է ևս երկու արձանագրություններում, սակայն, դրանք հայտնաբերվել են Մանազկերտի շրջանից և չի բացառվում, որ վերաբերեն արքայի անունը կրող մեկ այլ ջրանցքի[2337]: Երեք արձանագրություն հայտնում են նաև ջրամբար (բառացի՝ «ծով», ուրարտ. *ṣue*) կառուցելու մասին: «Աղբյուրներ» (ուրարտ. *tar(a)mana/i*) կառուցելու մասին են հայտնում չորս այլ արձանագրություններ, բոլորն էլ՝ Մենուայի անունից կազմված (տե՛ս Քարտեզ 4-2ա, Աղ. 25):

Այս տեքստերը, արձանագրելով փաստը ջրանցքներ անցկացնելու կամ ջրամբար կառուցելու մասին, չեն նշում դրա հետ կապված որևէ այլ տվյալ՝ չտարբերակելով նաև ջրանցքների տիպեր: Ուրարտական դպրության մեջ, թվում է, «ջրանցք» իմաստն է արտահայտել մեկ հիմնական տերմին՝ վանկագիր *pili*-ն և նրա գաղափարագիր տարբերակը՝ $PA_5$-ը: Հանդիպում են երեք այլ տերմիններ ևս (*išinili*[2338], ᶦᴰ*muna*[2339], ÍD[2340]), որոնք բովանդակությամբ, հնարավոր է, մաս են կազմել ոռոգման համակարգին:

Հայկական լեռնաշխարհում անցկացված ջրանցքների հնագույն համակարգը թվագրվում է Ք.ա. 3-2-րդ հազարամյակներով[2341]: Ք.ա. 1-ին հազ-ի սկզբներով են թվագրվում Վանա լճի ավազանում հնագիտորեն վկայված թվով չորս ջրամբարներ (Հարաբեյի, Շեհնագյոլի, Դումուի և Արաբի ջրամբարները, տե՛ս Աղ. 22)[2342]:

Ուրարտական ջրանցքաշինության առաջին ծրագրերն իրականացվել են Իշպուինիի օրոք: Մասնավորապես, բավական լավ պահպանված ոռոգման ցանց է հայտնի Ծվստանի ամրոցի մերձակա տարածքներում: Ջրի գլխավոր աղբյուրն այստեղ արհեստական լիճ է՝ ներկայիս անվամբ Ազաբ Գյոլեթին, որի կառուցումը թվագրվում է

---

[2337] Հմմտ. Գայսերյան 1981, էջ 191-192:

[2338] Այս տերմինը հանդիպում է Գյովելեք + Քեշիշ-գյոլի կոթողում ($A^{MEŠ}$ *ištin*[*i p*]*ula*ʳⁱⁿ*e e'a išinai*[*e*]. Տե՛ս УКН I, $268_{2-3}$; КУКН $391_{x+3}$; CTU I, A 14-1 $Ro_{36}$. CTU I, A 14-2 $Ro_{36}$): Ըստ Իգոր Դյակոնովի՝ դրա նշանակությունն է «առու»-ն (Дьяконов 1951б: 112 сл.):

[2339] Այս տերմինի ընդունված նշանակությունը «գետ»-ն է: Մյուս կողմից, ամենևին չի բացառվում այստեղ տեսնել նաև «(մայր) ջրանցք» իմաստը: Նման հնարավորության համար տե՛ս և հմմտ. նաև Меликишвили 1951б: 174 сл.; Арутюнян 1957: 100 сл.

[2340] ÍD գաղափարագրի՝ ուրարտական աղբյուրներում որպես «(մայր) ջրանցք» կիրառելու հնարավորության համար տե՛ս Գրեկյան 2002բ, էջ 225-226, ծնթ. 53:

[2341] Քալանթար 1937, էջ 171-194; Շիրմազան 1962, էջ 50-51; Խաչատրյան 1971, էջ 137-137; Хачатрян 1976: 121 сл. Տե՛ս նաև Мартиросян 1974: 37.

[2342] Տե՛ս, համապատասխանաբար, Belli 1997d: 147ff., esp. 151; նույնի՝ 1999b: 11f., Figs. 1-4; նույնի՝ 2002c: 239f.; նույնի՝ 2006b: 125f.

Իշպուինիի ժամանակաշրջանով և, ըստ երևույթին, ուրարտական ջրանցքաշինության ամենավաղ օրինակներից է[2343]: Ամրոցից մոտ 600 մ հեռավորությամբ գտնվում է մեկ այլ արհեստական ջրամբար, որից անցկացվել է ստորգետնյա ջրատարների համակարգ, որոնք հիշեցնում են կանատները (քյահրիզները): Հնարավոր է, որ սա հուշի ավելի ուշ շրջան (տե՛ս ստորև):

Գրավոր վկայությունների հիմնական մասը, ինչպես վերը նշվեց, պատկանում է Մենուայի շրջանին: Վերջինիս կառուցած խոշորագույն՝ «Մենուայի ջրանցք»-ը, սկիզբ առնելով Վերին Մժնկերտի աղբյուրներից (թուրք. Մեջինգիր, ներկայումս՝ Յուքարը Քայմազ) և ձգվելով, ըստ տարբեր հաշվարկների, 50-56 կմ[2344], վայրկյանում 2-3 մ$^3$ ծավալի խմելու ջուր էր հասցնում մայրաքաղաք Տուշպա (նկ. Գ-2/1-2)[2345]: Ջրանցքի լայնությունը տատանվում էր 3.5-4.5 մ-ի, իսկ խորությունը՝ 1.5-2 մ-ի սահմաններում և տեղափոխում է մինչև 1500 լ/վ ջուր (տարեկան՝ մոտ 40-45 մլն մ$^3$), անցնում էր բնականից դժվարին տեղանքով, զգալի մասը ժայռափոր է (մոտ 25 կմ-ը, նկ. Գ-3/2), հաճախ ջրանցքն ամրացվել է հենապատերով (նկ. Գ-6/1), իսկ մի քանի անգամ այն անցել է գետերի վրայով՝ փայտե կամուրջների միջոցով (նկ. Գ-3/1)[2346]: Ջրանցքի անցկացումը ոռոգելի դարձրեց շուրջ 5-7 հազ. հա հող[2347]: Նկատենք, որ 1000 հա հող ոռոգելու համար անհրաժեշտ ջրի քանակը կազմում է մոտ 10 մլն մ$^3$ [2348], իսկ ջրանցքի տարեկան թողունակությունը կազմում է շուրջ 75 մլն մ$^3$ [2349]:

Մենուայի հիմնադրած խոշորագույն՝ Վերին Անձավի ամրոցին շրջակա բերրի հողերի ոռոգումն իրականացնելու համար կառուցվել էր ջրամբար ամրոցից 1 կմ դեպի արևելք, որը գոյություն ունի մինչ օրս: Այս նույն շրջանով թվագրվող Շուշանցի մոտ կառուցված ջրամբարները, որոնք, հավանաբար, համաժամանակակից էին ամրոցին, հինգն էին[2350]: Վարագա լեռներից են բխում առատ աղբյուրներ, որոնց ջրերն ամբարվել են 14 ջրամբարներում[2351]:

[2343] Belli 1999b: 14f., Fig. 5; Dan 2010c: 53f.
[2344] Garbrecht 1980: 308; նույնի՝ 2004: 17, 21ff., Abb. 10; Belli 1999b: 15f., Fig. 6; Çifci, Greaves 2013: 195; etc.
[2345] Lehmann-Haupt 1910b: 41sq.; Տեր-Ավետիսյան 1941, էջ 35-44; Öğün 1970: 16ff., 28ff.; Garbrecht 1980: 308ff.; նույնի՝ 1988: 185ff.; նույնի՝ 2004: 19ff., Abb. 10, 12-15, 20; Garbrecht, Fahlbusch 2003: 124ff., Figs. 9-10; Belli 1997a: 11ff.; Salvini 1992: 67ff.; նույնի՝ 2001c: 146ff., Fig. 1. Հմմտ. Kuşlu, Şahin 2009: 2110 (6-10 մ$^3$).
[2346] Տեր-Ավետիսյան 1941, էջ 38; Belli 1997a: 12; Salvini 2001b: 146f., Fig. 2; Garbrecht 2004: 22, Abb. 12-13.
[2347] Belli 1997a: 11ff.; Kuşlu, Şahin 2009: 2110.
[2348] Garbrecht 2004: 19.
[2349] Belli 1997a: 11ff.
[2350] Belli, Salvini 2004: 161ff., Figs. 9-10; Dan 2010c: 73f.
[2351] Belli 1992 [1993]: 443; նույնի՝ 1999b: 11ff., Figs. 1, 9; Belli, Salvini 2004: 163, Figs. 9-10.

Մենուայի Արծվաբերդի արձանագրության մեջ նշվում է Դաինալա անունը կրող գետից և Կուերաինիլի քաղաքի աղբյուրներից ջրանցք անցկացնելու մասին[2352]: Դաինալա անունը կրող գետից ջրանցք անցկացնելու մասին է հայտնում նաև Արգիշթի Մենուաորդին «Խորխորյան տարեգրության» մեջ[2353]: Արքայի երկու այլ արձանագրություններ հայտնում են նաև Արարատյան դաշտավայրում իրականացված ջրանքաշինության մասին: Արձանագրություններից մեկը հայտնում է մայր ջրանցքի, երկրորդը՝ Արգիշթիխինիլի քաղաքի կառուցման հետ չորս այլ ջրանցքներ անցկացնելու մասին[2354]: Հնագիտորեն վկայված այդ հինգ ջրանցքների ընդհանուր երկարությունը կազմել է առնվազն 50 կմ: Ջրանցքներից գլխավորը, որը սկիզբ է առնում Արաքսից և որի անցկացման մասին է վկայում ուրարտական արձանագրությունը, ունի 10 մ լայնություն, 1-1.5 մ խորություն և ձգվում է շուրջ 30 կմ: Մայր ջրանցքից սկիզբ առած երկու այլ ջրանցքների ընդհանուր երկարությունը կազմել է 9 կմ: Մնացյալ երկու ջրանցքները միասին ունեցել են ոչ պակաս քան 15 կմ երկարությամբ[2355]: Էրեբունիի հիմնադրման կապակցությամբ ջրանցքաշինական աշխատանքներ են իրականացվել Հրազդան գետի ստորին հոսանքի շրջանում[2356]:

Սարդուրի Արգիշթորդու արձանագրություններից ջրանցքաշինության մասին վկայություններ են պահպանել երկուսը: Դրանցից մեկը, որը հայտնաբերվել է Բադնոցի շրջանում՝ Դամլա գյուղի մոտ, հայտնում է այստեղ ջրանցք անցկացնելու մասին: Ի դեպ, արձանագրության մերձավորությամբ երևում են նաև հին ջրանցքի հետքերը[2357]: Արճեշից 2 կմ դեպի արևելք՝ Քարաթաշի մոտ, հայտնաբերվել են Սարդուրիի երկու այլ վիմափոր արձանագրություններ, որոնք հայտնում են այստեղ խաղողուտներ գցելու մասին[2358] և որոնց ոռոգումն էր ապահովելու Դամլայի ջրանցքը: Հայկաբերդի արձանագրությունը հայտնում է Գուգունաինինի գետից (ըստ երևույթին՝ Խոշաբ գետը[2359]) ջրանցք անցկացնելու մասին[2360], ընդ որում, ամրոցի ստորոտին

[2352] КУКН, 75; CTU I, A 5-17. Նախկինում ենթադրվում էր, որ Դաինալա անունով գետը կարող էր լինել Արածանին իր միջին հոսանքի շրջանում (Арутюнян 1957: 97 сл.) կամ նրա վտակներից մեկը (Գայսերյան 1981, էջ 193): Սակայն, Արածանիի հիշատակությունը Արգիշթի Ռուսայորդու Բուլութփընարի արձանագրության մեջ Արծիյանի անունով ($^{\text{ID}}$*arṣi”ani*) մղում է Դաինալայի համար փնտրել այլ թեկնածու: Չառլզ Բըրնին Դաինալան նույնացնում է Վանա լիճ հյուսիսից թափվող Զիլան-չայի հետ (Burney 1972: 182; Burney, Lang 1971: 142): Ըստ Օքթայ Բելլիի՝ Դաինալան ներկայիս Դելի-չայն է (Belli 2012b: 302f.):
[2353] КУКН, 173 $V_{17}$; CTU I, A 8-3 $V_{17}$.
[2354] КУКН, 187-188; CTU I, A 8-15-16.
[2355] Мартиросян 1974: 24 и рис. 7, 37.
[2356] Агаханян, Мартиросян 1984: 194 сл.
[2357] Çavuşoğlu, Salvini 2003: 185; Belli 2007b: 213ff.
[2358] КУКН, 273-274; CTU I, A 9-10, 9-11.
[2359] Dan 2009: 91.
[2360] КУКН, $247_4$; CTU I, A $9\text{-}17_4$.

երևում են հին ջրանցքի հետքեր[2361]: Մերձուրմյան ավազանում իրականացված ջրանցքաշինության մասին է հաղորդում «Լուվրի աղյուսակ»-ը:

Ուրարտական ջրանցքաշինական նոր խոշոր ծրագրերի սկիզբ դրեց Ռուսա Էրիմենայորդին: Վերջինիս կողմից կառուցվեց ուրարտական ամենախոշոր ջրամբարներից մեկը՝ Քեշիշ-գյոլը, որը գոյություն ունի մինչ օրս և շարունակում է ծառայել որպես ոռոգման ջրի կարևոր աղբյուր (տե՛ս նկ. Գ-4/1-2)[2362]: Ջրամբարը, որը զբաղեցնում է ավելի քան 7 կմ$^2$ մակերես, կարող է ամբարել մինչև 40 մլն մ$^3$ ջուր[2363]: Ընդ որում, ենթադրվում է, որ ուրարտական շրջանում լճի մակարդակը պետք է լիներ 10 մ-ով ավելի բարձր, քան այժմ է, կուտակել է մինչև 100 մլն մ$^3$ ջուր՝ որից մատչելի է եղել շուրջ կեսը[2364]: Քեշիշ-գյոլի հետ կապված կառուցվեցին ևս երկու՝ Դոնիի և Քյոշեբաշըի ջրամբարները, ուր ջուրը հասնում էր Քեշիշ-գյոլից սկիզբ առնող ջրանցքով (Գերոֆ Դերեսի)[2365]: Ուրարտական շրջանում թերևս Ալաինի ($^{ծD}$*alainini*) անվանված «գետ»-ը/ջրանցքը, որ հիշատակվում է Ռուսա Էրիմենայորդու Գյովելեք+Քեշիշ-գյոլի կոթողում, գոյություն ունի մինչ օրս, ձգվում է 17 կմ և կարող է լինել Դեյիրմեն դերեն (Ձորակ/Ձորաք դերե)[2366]: Ջրանցքի վերջին հանգրվանը Թոփրաքքալեից մոտ 2 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Սղգյաի (Բոսթանիչի) արհեստական ջրամբարն էր[2367]: Ջրամբարի պատնեշն ունի 8-9 մ հաստություն և ձգվում է 342 մ[2368]: Այստեղից ջուր էր հասցվում Թոփրաքքալեին հարակից դաշտերը (տե՛ս նկ. Գ-5/1):

Արգիշթի Ռուսայորդու օրոք շարունակվեց նոր ջրանցքների անցկացումը, ինչի մասին են հայտնում նաև այս արքայի թողած Հաղիի և Չելեբիբաղիի զույգ կոթողները[2369]: Այդ ջրամբարների թվում է Ուրարտուում երբևէ կառուցված ամենախոշոր մակերեսով Մեյդան Բողազի ջրամբարը, որը զբաղեցնում է շուրջ 9 կմ$^2$ տարածք[2370]: Այս նույն շրջանով թվագրվող մեկ այլ խոշոր կառույց էր Սիփանի ջրամբարը՝ շուրջ 10-11 մլն մ$^3$ ծավալով[2371], ևն (տե՛ս նկ. Գ-5/2):

---

[2361] Sevin 2000: 400f., Res. 3, 6-7.

[2362] Öğün 1970: 12ff.; Garbrecht 1980: 310ff.; նույնի՝ 2004: 32ff.; Belli 1988: 314f.; նույնի՝ 1999b: 22f., Figs. 14-15; Salvini 2001b: 150ff., Figs. 6-7.

[2363] Belli 1999b: 22f., Figs. 14-15. Հմմտ. Garbrecht 1980: 311.

[2364] Տե՛ս և հմմտ., միաժամանակ, Garbrecht 1980: 311; նույնի՝ 2004: 53f.; Garbrecht, Fahlbusch 2003: 127; Salvini 2001b: 150ss.

[2365] Belli 1999b: 22ff., Figs. 16-18; Garbrecht 2004: 52, Abb. 42; Dan 2010c: 71f., Fig. 9.

[2366] Dan 2010c: 75, n. 69. Հմմտ. Garbrecht 2004: 51; Garbrecht, Fahlbusch 2003: 127; Öğün 1970: 25, n. 56.

[2367] Belli 1984: 170, Res. 1; նույնի՝ 1993b: 297ff.; նույնի՝ 1999b: 25f., Figs. 19-20.

[2368] Belli 1993b: 299.

[2369] КУКН, 406-407; CTU I, A 11-1, 11-2.

[2370] Belli 1995: 358ff.

[2371] Belli 1994c: 78.

Ուրարտական ջրանքաշինական վերջին (՞) ծրագրերն իրականացրեց Ռուսա Արգիշթորդին: Դրանցից մեկն ընդգրկում էր Արարատյան դաշտավայրի՝ Կարմիր բլուրին մերձակա տարածքները, ընդ որում, Հրազդան գետից տարված նոր ջրանցքը, որին տրվել էր Ումեշինի անունը (*umešini tini*)[2372], անցնում էր մոտ 400 մ-ոց ժայռափոր թունելով[2373]:

Մեկ այլ խոշորածավալ ջրաբաշխիչ համակարգ է անցկացվել Բաստամի մոտ[2374]: Ջրի աղբյուր էր այստեղ ծառայում Ակ-չայ գետը, որից վերցված ջուրը, հենց Բաստամի մերձավորությամբ փորված ջրանցքով հոսելով առնվազն 11 կմ, հասնում էր մինչև Ալլահվերդիքենդի ուրարտական ամրոցը[2375] և հավանաբար այստեղից ձգվում ընդհուպ մինչև Ուզուբ-թափա, այսպիսով, ունենալով մոտ 25-30 կմ ընդհանուր երկարություն[2376]: Ջրանցքի հետքեր են պահպանվել Աշաղի Կորուլի մոտ[2377]: Մինչ օրս գործում է Նազլու-Չայ գետից դեպի Կալ'եհ Էսմայիլ Աղա տանող ջրանցքը[2378]: Ջրանցքի հետքեր են նկատվում նաև Որմիայից հարավ՝ Բերդեսոր-Չայի ստորին հոսանքի շրջանում[2379]:

Այդ նույն շրջանում Շարուր-Նախիջևանում անցկացվում է իր երկարությամբ երրորդ ուրարտական ջրանցքը՝ Ֆերհաթ-քանալը (Ֆերհաթ 2): Ամենայն հավանականությամբ՝ թե Ֆերհաթ 1-ը (ներկայիս Թուրքիայի տարածքում) և թե Ֆերհաթ 2-ը կառուցվել են Ռուսա Արգիշթորդու կողմից[2380]: Միայն ներկայիս Նախիջևանի տարածքում ջրանցքն ունեցել է 25-30 կմ երկարություն[2381]: Արփա գետից տարված ջրանցքի հետքեր են նկատվել նաև Կալաջըկի մոտ[2382]: Ք.ա. 7-րդ դ-ում Վանա լճի ավազանում անցկացված Մենգենեյի ջրանցքն ունի 16-17 կմ երկարություն[2383], 16-17 կմ երկարությամբ ձգվում է նաև Վաքըֆի ջրանցքը[2384], Աշաղը Մեզրայի ջրանցքի երկարությունն է 11-12 կմ[2385] և այլն:

Ջրանցքաշինական աշխատանքներ են հայտնի ուրարտական տերության այլ շրջաններից ևս: Լայնածավալ աշխատանքներ են իրականացվել Գևաշի մոտ[2386]:

---

[2372] КУКН, $421_{4\text{-}15}$; CTU I, A $12\text{-}81_{4\text{-}15}$.
[2373] Մուշեղյան 1971, էջ 212-215; Եսայան 1982, էջ 38:
[2374] Kleiss 1970b: 59ff., Abb. 32; նույնի՝ 2012: 62, Abb. 04.04-04.05.
[2375] Kleiss, Kroll 1977: 59; Kleiss 1979a: 11ff., Abb. 2; նույնի՝ 1980: 299.
[2376] Kleiss 1976b: 34.
[2377] Kleiss 1971: 68f., Abb. 18-19.
[2378] Di Silenzi 1984: 218.
[2379] Kleiss, Kroll 1977: 78f.; Kleiss, Kroll 1978: 52, Abb. 28.
[2380] Belli, Sevin 1999: 29f.
[2381] Այվազյան 1976, էջ 91; Belli, Sevin 1999: 27ff., Res. 29-30.
[2382] Belli, Sevin 1999: 30.
[2383] Belli 2004c: 337.
[2384] Belli 2001c: 208.
[2385] Belli 2010: 85.
[2386] Dan 2010c: 63.

Նորգյուղի մոտ կառուցված ջրամբարը զբաղեցնում է ավելի քան 9 հազ մ$^2$ մակերես (180 × 50 մ)[2387], խոշոր ջրամբարի և ջրանցքի հետքեր են պահպանվել Սենգարի մոտ՝ Չըլդր լճի մերձավորությամբ[2388], ուրարտական շրջանում մեկ այլ ջրամբար էր կառուցվել Վանա լճից հյուսիս՝ Զիլան գետի վրա[2389] (Քարտեզ 4-2ա, 4-2բ, Աղ. 23):

Ընդհանուր առմամբ, 2010 թ. դրությամբ, ուրարտական շրջանից մեզ են հասել հնագիտորեն վկայված ավելի քան 110 ջրամբարների հետքեր, որոնց մի մասը՝ շուրջ 13 տոկոսը, հետագա վերակառուցումների շնորհիվ գործում է մինչ օրս (Քարտեզ 4-3ա, 4-3բ, Աղ. 22): Ջրամբարներից առավել երկար ամբարտակն ուներ Մեմեդիքի ջրամբարը (շուրջ 1 կմ), իսկ Քյոշեբաշըի ջրամբարն ուներ առավել հաստաբեստ ամբարտակը՝ 31.5 մ լայնությամբ[2390]:

Քննարկման մեկ այլ նյութ է Ուրարտուում «կանատներ» հիշեցնող և խիստ ջրախնայող համակարգերի գոյության հարցը[2391]: Թեև այստեղ կարծիքները տարամետ են[2392], սակայն, նույն դարաշրջանի Ասորեստանում «կանատներ»-ի համակարգի առկայությունն ամենևին չի բացառում, եթե չասենք՝ հաստատում է նման համակարգերի գոյության հնարավորությունը նաև Ուրարտուում:

## 3.3. Ուրարտական պալատական/տաճարային (պետական) տնտեսությունը. էտատիզմ:

### 3.3.1. Պալատական/տաճարային (պետական) տնտեսության հիմնական բնութագիրը

#### 3.3.1.1. Ուրարտական «ստրկատիրական պետություն»-ը

Ուրարտուից մեզ հասած աղբյուրները, որ կարող են լույս սփռել երկրի տնտեսական կարգի և կացութաձևի վրա, չափազանց քիչ են և անհամեմատելի՝ հինարևելյան այլ երկրներից հայտնի նյութի հետ: Մյուս կողմից՝ եղած տվյալներն առանձնապես չեն վկայում Ուրարտուում տնտեսական ազատ հարաբերությունների օգտին և կարծես թե խոսում են պետական գերկենտրոնացված տնտեսական համակարգի գոյության մասին: Մասնագիտական գրականության մեջ Ուրարտուն հաճախ է դիտվել իբրև ստրկատիրական երկիր՝ ստրկական աշխատանքի վրա

[2387] Dan 2009: 92, Fig. 3, 9-10; նույնի՝ 2010c: 72.
[2388] Dan 2010c: 81.
[2389] Marro, Özfırat 2004: 237, Fig. 7.
[2390] Kuşlu, Şahin 2009: 2113.
[2391] Ուրարտուում այս համակարգի գոյության համար տե՛ս և հմմտ. Lehmann-Haupt 1926: 111sqq.; Laessøe 1951: 21ff.; Öğün 1970: 14f.; Burney 1972a: 181; Belli 1984: 170; նույնի՝ 1992: 486f., Res. 23-24; նույնի՝ 1994c: 109, Figs. 31-32; Garbrecht 2004: 15ff., Abb. 8-9; Çilingiroğlu 2004c: 215f.; Issar, Zohar 2007: 247f.; Dan 2010c: 55f., Fig. 4; Çifci, Greaves 2013: 200. Հմմտ. Salvini 2001b: 143ff.; Dalley 2001-2002: 446ff.; նույնի՝ 2005: 40ff.
[2392] Հմմտ. Salvini 2001b: 143ff.; Dalley 2001-2002: 446ff.; նույնի՝ 2005: 40ff.

հիմնված արքայական, տաճարային, մասնավոր, համայնական տնտեսություններով[2393]: Որպես դրա ապացույց են բերվում բիայնական արքաների կատարած մեծաքանակ գերեվարությունները՝ դրանք դիտելով ստրկական աշխատուժի համալրման հիմնական աղբյուր[2394]: Գրավոր վկայությունների գրեթե բացակայության պայմաններում գերեվարությունների բնույթը, կարծում ենք, կարող է նպաստել խնդրի որոշակի պարզաբանմանը:

Ընդհանրապես, Հայկական լեռնաշխարհում ստրկատիրությունը տարբեր պնդումներին[2395] հակառակ՝ երբևէ խորը արմատներ չի ունեցել[2396]: Ընդհակառակը՝ լեռնաշխարհի երկրները հաճախ էին ծառայում իբրև ապաստան՝ հարևան խոշոր թագավորություններից այստեղ փախածների համար, ինչպես, օրինակ, խեթական դարաշրջանում էր[2397]: Նույն երևույթը տեսնում ենք նաև ուրարտական դարաշրջանում, մասնավորապես՝ Շուբրիայում, ուր ապաստան էին գտնում շատերը, այդ թվում՝ *ilku*-ծառայությունից խուսափող ասորեստանցիները[2398]: Շուբրիայում ապաստանած ուրարտացի փախստականներին որոնելու և Ուրարտու վերադարձնելու մասին է հայտնում ասորեստանյան արքա Ասսարհադդոնը[2399]:

Մասնագիտական գրականության մեջ արվող հղումներին հակառակ՝ ստրկական աշխատանք Ուրարտուում տեսանելի չէ: Ուրարտական աղբյուրներում մի քանի անգամ հիշատակվող $^{LÚ}$ÌR/ERUM՝ «ստրուկ» գաղափարագիրն ըստ երևույթին վերաբերել է ոչ թե «ստրուկներ»-ի, այլ՝ «ծառաներ»-ի կամ «սպասավորներ»-ի. այս տերմիններն ունեն նույն գրությունը, չհաշված այն, որ «ստրուկ» կարող էր կոչվել արքայի յուրաքանչյուր հպատակ՝ անկախ իր կարգավիճակից: Ընդհանրապես, միջագետքյան համաժամանակյա աղբյուրներից դատելով՝ պետությունն ինքը ստրկական աշխատանքին մեծ տեղ չէր տալիս[2400], ստրուկներն առավելապես

---

[2393] Ղափանցյան 1940, էջ 224-225; Меликишвили 1951a: 22 сл., 31 сл.; նույնի՝ 1953: 22 сл. նույնի՝ 1954: 340 сл., 350 сл., 353 сл.: Հմմտ. նաև Հարությունյան 1971բ, էջ 338-344; Հմայակյան 1994, էջ 19; Wartke 1993: 82f. Տե՛ս և հմմտ. Дьяконов 1952a: 90 сл.; Հմայակյան 2012, էջ 36-37:

[2394] Меликишвили 1951a: 27 сл.; նույնի՝ 1954: 345 сл.; Հարությունյան 1971բ, էջ 342-343; Belli 1978 [1979]: 48f.

[2395] Տե՛ս, մասնավորապես, Սամուելյան 1937, էջ 87-141; Еремян 1950: 12 сл.; Երեմյան 1971, էջ 2-4:

[2396] Մանանդյան 1934, էջ 233-240; Սարգսյան 1962, էջ 94:

[2397] Խաչատրյան 1998: 76-77:

[2398] Меликишвили 1951a: 31 сл.; նույնի՝ 1954: 352 сл.; Lanfranchi, Parpola 1990, No. 35, 52-53; Leichty 2011, No. 33 iii 23′-27′.

[2399] Leichty 2011, No. 33 iii 28′-34′.

[2400] Gelb 1965: 241; նույնի՝ 1973: 96; Васильев, Стучевский 1966: 78; Меликишвили 1966: 68 сл.; Дьяконов 1968в: 36 сл.: Neumann 2011: 21. Նորբաբելոնյան տեքստերում վկայված անձնանունների թվում տարբեր կառույցներին պատկանող ստրուկների և կախյալների անունները կազմում են ընդամենը մոտ 3.5 տոկոս՝ 45 հազ-ից մոտ 1600-ը (Dandamaev 2009: 60): Խաթթիի տնտեսության մեջ ստրուկների ունեցած երկրորդական դերի համար տե՛ս Klengel 1986: 30.

օգտագործվում էին մասնավոր, մասամբ՝ տաճարային տնտեսություններում, ստրկական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար հաճախ էին շահագրգռում ստրուկներին՝ նրանց տալով հող և սեփական տնտեսություն վարելու հնարավորություն՝ սահմանված վճարումները կատարելու պայմանով (միջինը՝ մոտ 12 սիկղ), ինչով վերջիններս իրենց կարգավիճակով մոտենում էին հողի վարձակալներին: Նման «ստրուկներ»-ն իրավունք էին ստանում կազմելու ընտանիքներ, իսկ երբեմն՝ ձեռք բերում նշանակալի ունեցվածք[2401]: Նրանք կարող էին ունենալ իրենց ստրուկները, վարձել ստրուկների կամ ազատ մարդկանց՝ համապատասխան աշխատանքներ կատարելու, ևն: Այնուամենայնիվ, ստրուկին չէր թույլատրվում փրկագնվել, և նա կարող էր ազատ արձակվել միմիայն տիրոջ ցանկությամբ[2402]:

Ասորեստանցիները նույնպես ռազմագերիներին սովորաբար չեն ստրկացրել, եթե հաշվի չառնենք եզակի բացառությունները: Ռազմագերիների զանգվածային կոտորածները, որ դեռևս հանդիպում են Ք.ա. 9-րդ դ-ի առաջին կեսի ասորեստանյան աղբյուրներում[2403], Ք.ա. 8-7-րդ դդ-ում այլևս բացառություն էին. գերեվարում էին հիմնականում ընտանիքներով[2404] և նստեցնում հողին, թերևս, ավելի ճիշտ է խոսել զանգվածային վերաբնակեցումների մասին[2405]: Պետությունը ապահովում էր վերաբնակիչներին տնով, սննդով և ընտանի կենդանիներով[2406], թեև, անգամ այս դեպքում քիչ չէին փախուստները[2407]:

Հին Առաջավոր Ասիայի երկրների՝ «ստրկատիրական» կամ «վաղ ստրկատիրական» հորջորմանը հակառակ, որ հատկապես իշխող էր խորհրդային պատմագրության մեջ մարքսիստական հայեցակարգից ելնելով, ընդ որում, չխուսափելով նաև բանավեճերից[2408], դեռևս անցյալ դարի առաջին կեսից այդ երկրները սկսեցին բնութագրվել իբրև «ավատատիրական», այդ թվում նաև Ուրարտուն[2409]: Դրա հիմքում ընկած էր վերաբաշխման համակարգը[2410] և դրա հետ

[2401] Меликишвили 1966: 69 сл. Մանրամասն տե՛ս Dandamaev 2009: 103ff.
[2402] Տե՛ս Kleber 2011: 101ff., 105ff.
[2403] Grayson 1991: 201 (A.0.101.1: i 107-108), 210 (A.0.101.1: ii 107-109).
[2404] Fales 2010a: 207ff.
[2405] Oded 1979; Меликишвили 1975: 40 сл.
[2406] Parpola 1987, No. 219; Lanfranchi, Parpola 1990, No. 80, 242; Fuchs, Parpola 2001, Nos. 41-42, 54, 311; Luukko 2012, No. 3; etc.
[2407] Lanfranchi, Parpola 1990, No. 79; Fuchs, Parpola 2001, No. 54, 232.
[2408] Тюменев 1957: 50 сл. Մանրամասն տե՛ս և հմմտ. Дьяконов 1963б: 16 сл.; նույնի՝ 1968в: 3 сл., 37; նույնի՝ 1973а: 3 сл., прим. 1-2; Семенов 1965: 69 сл.; Васильев, Стучевский 1966: 77 сл.; Меликишвили 1966: 65 сл.; Меликишвили 1975: 18 сл.; Dandamaev 2009: 70ff. Տե՛ս նաև Van De Mieroop 1999: 112f.; McGeough 2007: 49ff.; Liverani 2006: 33f.
[2409] Ուրարտուի համար տես, դեռևս, Adontz 1946: 215, 219; König 1954: 60sq.; Özgüç 1969: 3; Belli 1978 [1979]: 48ff. Քննարկումների համար տե՛ս և հմմտ. նաև Семенов 1965: 82 сл.; Коростовцев 1970: 11 сл.; McGeough 2007: 42ff., 341ff.; etc.

փոխկապակցված հողային հարաբերությունները, երբ հողօգտագործման գերիշխող ձև դարձավ ծառայության դիմաց հողի ժամանակավոր տիրապետությունը, հինառաջավորասիական այլ երկրներում՝ նաև վարձակալությունը: Այս երևույթը, որի առաջին դրսևորումներին հանդիպում ենք Շումերում դեռևս Ուրուկ III շրջանից սկսած (Ք.ա. մոտ 3100-3000 թթ.)[2411] և որը մի պահ կասեցվեց Ուրի III հարստության՝ խիստ կենտրոնացված տնտեսական քաղաքականություն վարող արքայատան կողմից[2412], ըստ էության նոր կյանք ստացավ Հին Առաջավոր Ասիայում ամորեական տիրապետության դարաշրջանում: Ուրի III հարստության պետական կենտրոնացված տնտեսական համակարգը ամորեացիների արշավանքներից հետո, նրանց տիրապետության պայմաններում պարզապես փլուզվեց. առաջին հերթին քայքայվեցին արքայական տնտեսությունները. կիսաքոչվոր ամորեացիներն ամենևին հաղորդակից չէին տնտեսական կյանքի կազմակերպման նման բարդ ձևերի հետ: Փոխարենը, լայն տարածում ստացավ հողի վարձակալությունն ու ծառայության դիմաց հողի ժամանակավոր տիրապետության կարգը, թեև այդ հողերը դրանք օգտագործելու իրավունք ստացածների կողմից, եթե հատկապես խոսքը վերաբերում էր խոշոր հողատարածքի, վերջին հաշվով, նույնպես տրվում էր վարձակալության[2413]: Արքայական իշխանությունը փորձում էր վերահսկել այս գործընթացը՝ թելադրելով միջոցների և աշխատուժի վարձակալության պայմանները և վարձավճարների չափերը[2414]:

Հին Առաջավոր Ասիայում այսպես կոչված «ավատատիրական հարաբերություններ»-ի ներմուծումը հաճախ է կապվում հնդարիացիների հետ: Մասնավորապես, «ավատատիրական» թագավորություն էր դիտվում Միտաննին[2415], ուր հնդարիական ծագում ուներ թե իշխող վերնախավը, և թե արքայատոհմը[2416]: Այստեղ ռազմական խավը ներկայացնող ազնվականությունը՝ *maryannu*-ն, արքայից ստանում էր հող՝ ռազմական ծառայության դիմաց: Այս երևույթը առավել լավ փաստագրված է Նուզիից՝ Միտաննիին ենթակա Արրապխեի թագավորության քաղաքներից մեկից[2417]: Նույն երևույթը տեսնում ենք նաև այս նույն շրջանի

---

[2410] Polanyi 1944 [2001]: 54f.
[2411] Семенов 1965: 72; Дьяконов 1968в: 3 и прим. 1.
[2412] Дьяконов 1963б: 18; նույնի՝ 1968в: 10 сл.; Steinkeller 1987b: 22f.; Renger 1995: 284ff.
[2413] Дьяконов 1952a: 13 сл.; նույնի՝ 1968в: 13 сл ; Тюменев 1957: 60 сл.; Семенов 1965: 75.
[2414] Հմմտ. Էշնուննայի օրենքների §§ 3-11-ը (Yaron 1988: 44ff.):
[2415] O'Callaghan 1948: 64ff.; Speiser 1958: 24. Ուգարիթի թագավորության «ավատատիրական» բնույթի համար տե՛ս Gray 1952: 49ff.
[2416] Wilhelm 1995: 1246f.
[2417] Lewy 1942: 1ff.; Stillman, Talis 1984: 24f. Հմմտ. Jankowska 1969a: 235ff., ինչպես նաև Maidman 2010: 10, 165.

քանաանական[2418] և սիրիական մի շարք թագավորություններում, մասնավորապես՝ Ուգարիթում[2419] և Ալալախում[2420]: Կասսիտական Բաբելոնիայում (միջինբաբելոնյան դարաշրջան) խոշոր հողատերերի խավի ծնունդը նույնպես պայմանավորվում էր «ավատատիրական» հարաբերությունների ձևավորմամբ, որի համար հիմք կարող էին ծառայել դեռևս հինբաբելոնյան դարաշրջանի վերջում ձևավավորված «ամրոցային հասարակություններ»-ը[2421]: Ինչպես կփորձենք ցույց տալ ստորև՝ Ուրարտուում տնտեսական կացութաձևը մի քանի առումներով հիշեցնում էր հինարևելյան «ավատատիրություն»-ը: Միաժամանակ, մենք տեսնում ենք բազում յուրահատկություններ, որոնք թույլ են տալիս մեզ տնտեսության կազմակերպման «բիայնական մոդել»-ը բնութագրելու իբրև «էտատիզմ» (տե՛ս ստորև):

3.3.1.2. **Գերեվարությունները**

Ուրարտական արքայական տարեգրությունները և հանդիսավոր արձանագրությունները մեծ տեղ են հատկացնում գերեվարությունների և ձեռք բերված ավարի թվարկմանը՝ հայտնելով նաև գերիներից «ոմանց սպանելու» և «ոմանց կենդանի» տանելու մասին (*aliki zašgubi aliki šeḫiri*/TI.(LA)$^{MEŠ}$ *agubi*)[2422]: Այդ գերեվարությունները թվարկելիս նկատվում է հետաքրքիր երևույթ: Ուրարտական տեքստերում մինչև մեկ թվի ճշգրտությամբ առանձին թվարկվում են «կանայք» ($^{SAL}$*lutu*$^{(MEŠ)}$/SAL$^{MEŠ}$/$^{LÚ/SAL}$*ïediani*$^{(MEŠ)}$), «տղամարդիկ» (*’aše*$^{(MEŠ)}$, LÚ$^{MEŠ}$), «պատանիներ» ($^{(LÚ)}$*ubše*)[2423], երբեմն՝ «զինվորներ» (LÚ$^{MEŠ}$ *gunušini*/$^{LÚ}$ÉRIN$^{MEŠ}$) և մեկ բացառությամբ՝ «երեխաներ» ($^{LÚ}$TUR$^{MEŠ}$) (տե՛ս Աղ. 28): Համաժամանակյա նորասորեստանյան տեքստերը, ընդհակառակը, տալիս են «երիտասարդ թե մեծ, տղամարդ թե կին» գերիների թվի միայն ամփոփիչ տվյալներ՝ առանց որևէ մանրամասնության (UN.MEŠ/*niše* TUR/*ṣeḫer* GAL/*rabi* NITA/*zikar u* MUNUS/*sinniš*)[2424]:

Ուշադրություն է գրավում, որ մեզ հասած աղբյուրներում գերիների մեջ «տղամարդիկ» կազմել են բավական փոքր թիվ՝ ըստ պահպանված տվյալների՝ մոտ 19 հազ. մարդ, որոնց էլ, եթե գումարենք գերեվարված «ռազմիկներ»-ի թիվը՝

[2418] Gabriel 2003: 19f.

[2419] Гельцер 1963: 53 сл.; նույնի՝ 1969: 21 сл. Հմմտ. նաև Rainey 1965: 19ff.; Drews 1993: 112; McGeough 2007: 42ff.

[2420] Гельцер 1956: 33 сл.

[2421] Richardson 2011: 23 and n. 54.

[2422] Ուրարտուում իրականացված գերեվարությունների համար տե՛ս Меликишвили 1951a: 27 сл.; նույնի՝ 1954: 346 сл.; Дьяконов 1952a: 90 сл.; Çilingiroğlu 1983b: 311ff.

[2423] Այս տերմինի $^{(LÚ)}$*arše* ընթերցումը, ակնհայտորեն, տեղին չէ (տե՛ս և հմմտ. Меликишвили 1960: 212, прим. 3; КУКН, стр. 436): Տերմինի $^{(LÚ)}$*ubše* ընթերցման և թարգմանության համար տե՛ս Дьяконов 1963a: 91.

[2424] Grayson, Novotny 2012, No. 3 (16); No. 4 (14). Մանրամասն տե՛ս Oded 1979: 22ff.

առավելագույնը 29 հազ. մարդ, այնուամենայնիվ, կունենանք ոչ ավելի քան 48 հազ. մարդ 448 հազ-ից և սա՝ գերիների ընդհանուր թվաքանակի նվազագույն հաշվումներով: Տղամարդկանց քանակը կազմում է գերիների մոտ 10.59 տոկոսը, իսկ այս հարաբերակցությունը շատ ավելի փոքր կլինի (մոտ 4.18 տոկոս), եթե առանձնացնենք «ռազմիկներ»-ին (6.41 տոկոս), որոնք, ամենայն հավանականությամբ, ընդգրկվել են զորքերում և որոնց ներգրավվածությունը տնտեսական աշխատանքներում թերևս եղել է սահմանափակ կամ դրվագային: Այդ հարաբերակցությունը, անկասկած, շատ ավելի փոքր կլինի, եթե հաշվի առնենք նաև այն 182 հազ. գերիներին, որոնք նշված են հանրագումարային թվերով և չեն տարբերակվում «տղամարդկանց», «պատանիներ»-ի կամ «կանանց» թվաքանակները:

Փաստ է, որ գերիների մեջ «կանայք» և «պատանիներ»-ը մեծ քանակ են կազմում՝ համապատասխանաբար մոտ 47.81 և 41.59 տոկոս: Ուշադրություն է գրավում հատկապես «պատանիներ»-ի նշանակալի քանակը: Սա մղում է ենթադրելու, որ ուրարտական տեքստերում առկա պնդումը՝ «ոմանց սպանելու» մասին, հեռու չէր իրականությունից և կարող էր առավելապես վերաբերել չափահաս/զենք կրելու ունակ արական բնակչությանը[2425]: Այս առումով պատահական չէ, որ «տղամարդկանց» կապակցությամբ ուրարտական աղբյուրները հատկապես շեշտում են նրանց «կենդանի» տանելու մասին (հմմտ. LÚ TI$^{MEŠ}$/*šeḫiri* արտահայտությունը՝ «կենդանի տղամարդիկ» կամ «կենդանի (տարված) տղամադրիկ»[2426]:

Բնական է ենթադրել, որ գերեվարություններն ինքնանպատակ չէին և միտված էին ձեռք բերելու ոչ միայն և ոչ այնքան վերաբնակիչների, որքան՝ լրացնելու տերության աշխատուժի պահանջարկը, հատկապես, երբ բիայնացիները խնդիր ունեին արմատավորվելու թե նորանվաճ տարածքներում, ինչպես, օրինակ, Արարատյան դաշտավայրն էր, և թե անգամ՝ Վանա լճի ավազանում[2427]: Այդ նպատակով բիայնացիները ստիպված էին ձեռնարկել հսկայածավալ շինարարական աշխատանքներ՝ կառուցելով ամրոցներ և բնակավայրեր, անցկացնելով ճանապարհներ և ջրանցքներ, մշակելի դարձնելով հողերը ևն: Դրա համար պահանջվում էր մեծաքանակ աշխատուժ, որի պահանջարկը չէին կարող ապահովել Լեռնաշխարհի հարթավայրային, հատկապես՝ կիսաանապատային գոտում ընկած շրջանները, ինչպիսին էր, օրինակ, Արարատյան դաշտավայրը: Այդ տարածքը մինչև

[2425] Շումերական օրինակի համար տե՛ս Дьяконов 1963б: 16. «Աստվածաշնչից» հայտնի օրինակների համար տե՛ս Zorn 2014: 85f.
[2426] КУКН, 173 II$_{20, 45}$, 241 F$_{29}$ ; CTU I, A 8-3 II$_{20, 45}$, 9-3 VI$_{29}$.
[2427] Գրեկյան 2013բ, էջ 48-58:

ուրարտական նվաճումները եղել է սակավաբնակ: Համենայն դեպս, որքան էլ որ այստեղ գործ ունենք վաղերկաթեդարյան շրջանի բավական խոշոր բնակավայրերի հետ, ամեն դեպքում պետք է փաստենք, որ դրանց թիվը մեծ չէր՝ շուրջ երկու տասնյակ[2428], և հիմնականում ցրված էին առանձին կղզյակների տեսքով՝ ջրի աղբյուրներին մատչելի վայրերում (Մեծամոր[2429], Արտաշատի մինչուրարտական բնակատեղի[2430], Մոխրաբլուր II[2431], Դվին[2432], Շամիրամ[2433], Կարմիր բլուրի մինչուրարտական բնակատեղի[2434], Էլառ[2435] ևն):

Կարելի է նշել, որ ուրարտական գերեվարությունները Իշպուինիից սկսած մինչև Ռուսա Սարդուրդի արշավանքների ենթարկված երկրների համար ունեցել են ծանր հետևանքներ: Այդ արշավանքների ժամանակ տեղի բնակավայրերը որպես կանոն հրդեհվում և ավերվում էին (Տուշպա-հյոյուք[2436], Դիլքայա-հյոյուք[2437], Արմավիր-Արգիշթիխինիլի[2438], Կարմիր բլուրի վաղերկաթեդարյան բնակատեղի[2439], Դվին[2440], Մեծամոր[2441], Էլառ[2442], Շամիրամ[2443], Հոռոմ[2444], Շիրակավան[2445], Հասանլու[2446], Հաֆթա-վան-թեփե IV[2447], Կորդլար Թեփե II-I[2448], Գյոյ-թեփե[2449] և մերձուրմյան ավազանի այլ բնակավայրեր[2450], Նորշունթեփե և Աղձնիքի այլ բնակավայրեր[2451], Քյոշքերբաբա[2452], Ալթընթեփե[2453] ևն, բոլորն էլ՝ Ք.ա. 9-րդ դ-ի վերջ – 8-րդ դ-ի սկզբներին[2454]): «Այրված հող»-ի քաղաքականությունը բնորոշ էր ուրարտացիներին, և կոտորածների,

[2428] Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, էջ 10:
[2429] Խանզադյան և այլք 1973:
[2430] Smith 1996: 134 and n. 13.
[2431] Арешян 1978: 96 сл.
[2432] Кушнарева 1977: 10 сл.
[2433] Արեշյան, Սիմոնյան 1976, էջ 286-288:
[2434] Мартиросян 1961; նույնի՝ 1964: 160 сл.
[2435] Խանզադյան 1979, էջ 82 և այլուր:
[2436] Tarhan, Sevin 1992 [1993]: 411; Tarhan 2005a: 131.
[2437] Çilingiroğlu 2012b : 84f.
[2438] Мартиросян 1974: 19.
[2439] Сорокин 1958: 149; Мартиросян 1961: 63.
[2440] Кушнарева 1977: 107 сл.
[2441] Խանզադյան և այլք 1973, էջ 56-58, 189; Jakubiak 2015: 128f.
[2442] Խանզադյան 1979, էջ 11:
[2443] Արեշյան 1985, էջ 14:
[2444] Badaljan *et al.* 1994: 9ff.
[2445] Խնկիկյան 1999, էջ 30; Թորոսյան և այլք 2002, էջ 135-138:
[2446] Muscarella 1989: 34ff.; նույնի՝ 2012: 267ff., Fig. 18.03 – 18.04.
[2447] Burney 1972b: 139.
[2448] Kroll 2012b: 143.
[2449] Kleiss, Kroll 1997: 116.
[2450] Danti 2013b: 367f.
[2451] Hauptmann 1971: 76.
[2452] Bilgi 1983: 113f.
[2453] Karaosmanoğlu *et al*. 2014b: 78.
[2454] Smith 2003: 166ff.

գերեվարությունների ու վերաբնակեցումների արդյունքում այդ երկրների կորցրած բնակչության թիվը կարող էր կազմել ընդհուպ մինչև 75 տոկոս (տե՛ս 1.3):

Գերեվարված բնակչության մեջ «տղամարդկանց» փոքր թիվը մղում է ենթադրելու, որ «կանանց»-ից հետո որպես հիմնական աշխատող ուժ դիտվել են հենց «պատանիներ»-ը: Հետևաբար, չպետք է այս տերմինն ընկալել իր բուն նշանակությամբ, նամանավանդ, որոշ դեպքերում ուրարտական տեքստերը, հայտնելով «տղամարդկանց» և «կանանց» գերեվարելու մասին, այնուհետև թվական տվյալներ են հաղորդում միայն «պատանիներ»-ի և «կանանց» համար (տե՛ս Աղ. 28): Ակնհայտ է, որ «պատանիներ»-ը այստեղ նույնացվում են «տղամարդկանց» հետ: Ըստ այդմ, մենք հավանական ենք համարում այստեղ սոցիալական տերմին կամ սոցիալական ինչ-որ խավ տեսնելու հնարավորությունը[2455]:

Ինչպես հայտնի է, Միջագետքում Ուրի III հարստության (Ք.ա. 21-րդ դ.) շրջանում ողջ աշխատուժը կոչվում էր guruš՝ «(պատանի) տղամարդ» (իմա՝ «կախյալ տղամարդ աշխատավոր») և $geme_2$՝ «ստրկուհի» (իմա՝ «կախյալ կին աշխատավոր»)[2456]: Նրանք աշխատում էին թե արքայական, և թե տաճարային տնտեսություններում առանձին «ջոկատներ»-ի կազմում (շում. $erin_2$) և իրենց աշխատանքի դիմաց ստանում էին օրապահիկ բնամթերքով (շում. še-ba)[2457]: Այս առումով խիստ հետաքրքրական է, որ ուրարտական երկու տեքստերում, որ հայտնում են գերեվարություններին վերաբերող ամենավաղ վկայությունները, «պատանի»-ներ տերմինի փոխարեն օգտագործվել է գաղափարագրերի համադրություն: Միրյո Սալվինին, հետևելով Գեորգի Մելիքիշվիլուն, այն կարդում է $^{LÚ}$KU.[X]$^{MEŠ}$՝ առանց թարգմանելու, քանի որ արձանագրությունն այստեղ վնասված է, իսկ գաղափարագիրը՝ պակասավոր[2458]: Նիկոլայ Հարությունյանը, հետևելով Ֆրիդրիխ-Վիլհելմ Քյոնիգին[2459], այստեղ տեսնում է գաղափարագրերի մեկ այլ համադրություն՝ $^{LÚ}$ḪUN.G[Á$^{(?)}$]$^{MEŠ}$[2460]: Վերջինս, ինչպես «գուրուշ-խունգա»-յի դեպքում, նշանակում է «վարձու աշխատող, վարձկան» (աքք. *agru*)[2461]: Մենք այստեղ առաջարկում ենք մեկ այլ ընթերցում՝ $^{LÚ}$ÉŠ.[GÀR]$^{MEŠ}$ (աքք. *iškāru*)[2462]: Աքքադերենում այն ունի մի քանի իմաստ, այդ թվում՝ «հող, ուր

[2455] Տե՛ս և հմմտ. Հմայակյան 1995բ, էջ 46-48:
[2456] Gelb 1965: 240ff.; նույնի՝ 1972: 87f.; Дьяконов 1967: 13 сл.; նույնի՝ 1983б: 271. Հմմտ. Steinkeller 1987a: 74; Studevent-Hickman 2008: 142ff.; Englund 2010: 71ff.
[2457] Տե՛ս և հմմտ. նաև Дьяконов 1983б: 269 сл.; Gelb 1965: 230ff.; նույնի՝ 1973: 83f.
[2458] УКН I, 20, лиц. стор. 20, обор. стор.$_{15}$, прим. 11; CTU I, A 3-4$_{34}$.
[2459] König 1955: 39 (Nr. 6a, VIII).
[2460] КУКН: 33 сл., прим. 19.
[2461] Borger 1978: 187f. (No. 536).
[2462] Borger 1978: 187f. (No. 536).

իրականացվելու է *iškāru*-աշխատանքը»: Նման վերակազմությունը թույլ է տալիս պատկերացում կազմելու այն հողատարածքների բնույթի մասին, որոնցում պետք է աշխատեին գերեվարված «պատանիներ»-ը և «կանայք»:

### 3.3.1.3. **Հողային հարաբերությունները, հողատիրության բնույթն ու ձևերը Ուրարտուում**

Թեև առկա վկայությունները թվում են սուղ՝ վերջնական եզրակացությունների համար, բայց այնուամենայնիվ Ուրարտուում հնարավոր է թվում տեսնելու հողատիրության մի համակարգ, որը քաջ ծանոթ էր սիրիա-միջագետքյան աշխարհից և որը պայմանականորեն կարելի է կոչել *iškāru*-ծառայություն:

Որպես հողատիրության ձև *iškāru*-ն վկայված է դեռևս Ք.ա. III հազ-ի սիրիա-միջագետքյան տեքստերում, ընդ որում՝ հիշատակվում են թե արքայի, թե տաճարների, և թե առանձին անհատների *iškāru*-հողեր[2463]: Ասորեստանում *iškāru*-ծառայության մասին հստակ տեղեկություններ չկան, թեև նորասորեստանյան շրջանի տեքստերում *iškāru*-ն հիշատակվում է որպես ինչ-որ հարկատեսակ (*iškāru*-հողերից ստացվող(?))[2464]: Հետաքրքիր է, որ ասորեստանյան տեքստերից մեկի համաձայն՝ այս հարկատեսակը գանձվում էր նաև ձիերով[2465] կամ մանր եղջերավոր կենդանիներով[2466]:

Ասորեստանում հողատիրության հիմնական ձևը կապված էր այսպես կոչված *ilku*-ծառայության հետ (աքք. *alāku(m)* բառից, բառացի՝ «*գալ-գնալ*», իմա՝ «*ծառայել, ծառայություն իրականացնել*»), երբ ծառայության դիմաց այն կատարողները պետությունից, տաճարից կամ խոշոր հողատիրոջից ստանում էին հողատարածքներ՝ *ilku*[2467], ավելի ճիշտ՝ նրանց էր պատկանում այդ հողից ստացվող բերքի մի մասը, քանի որ հողը չէր տրվում որպես սեփականություն և կարող էր հետ վերցվել, այն չէր կարող օտարվել կամ ժառանգվել, բայց կարող էր փոխանցվել հորից որդի, եթե որդին շարունակեր կատարել նույն ծառայությունը[2468]: Նման հողատարածքները կոչվում էին *ma'uttu*: Ենթադրվում է, որ *ilku*-ծառայություն կատարելու առանձնաշնորհում (կամ պարտավորություն) ունեին միայն ասորեստանցիները կամ նրանք, որոնք համարվում

[2463] CAD, I, 1960: 244f. (iškaru A 5).

[2464] CAD, I, 1960: 244f. (iškaru A 4); Postgate 1974: 94ff., 202ff. Միջինասորեստանյան շրջանի համար տե՛ս և հմմտ. Postgate 2010: 21ff.

[2465] Parker 1961: 45f. (2727), 52f. (ND 2788); Saggs 2001, ND 2401.

[2466] Fales 1990b: 141. Մանրամասն տե՛ս Postgate 1974: 100ff.

[2467] Մանրամասն տե՛ս Postgate 1971: 496ff.; նույնի՝ 1982: 304ff.; Pečírková 1982: 207f.; Richardson 2011: 21ff.

[2468] De Graef 2002: 146. Տե՛ս նաև Postgate 1974: 81ff.; նույնի՝ 1982: 307. Նորասորեստանյան տեքստերում հանդիպում ենք կալվածքի փոխանցման վկայությունների՝ հորից որդուն կամ եղբորը: Տե՛ս, օրինակ, Fales, Postgate 1995, No. 221: 9′-12′.

էին «ասորեստանցիներ»[2469]: Ընդ որում, այն ենթադրում էր ոչ միայն ռազմական կամ վարչական ծառայություն, այլև աշխատանքային (ինչպես, օրինակ, ճանապարհների անցկացումը, ջրանցքների մաքրումը և այլն): *Ilku*-ծառայություն կատարող զինվորներն իրենց վարձը ստանում էին իրենց տրված հողատարածքից ստացվող եկամտի տեսքով, իսկ նման հողատարածքը կոչվում էր «աղեղի հող» (A.ŠÀ GIŠ.BAN-*šu*)[2470]: «Աղեղի հող»-ին տիրող զինվորները կանչվում էին ռազմական ծառայության արշավանքների ժամանակ կամ ըստ անհրաժեշտության[2471], նրանց անունները արձանագրված էին հատուկ ցուցակներում՝ այս կամ այն զորահրամանատարի պատասխանատվության ներքո, և որոշակի ժամանակահատվածի ընթացքում իրականացվում էր ստուգատես: Պահպանվել են նման բազմաթիվ տեքստեր՝ ցուցակներում զինվորների ներկա կամ բացակա անուններով[2472]:

Այս համակարգին հանդիպում ենք նաև խեթական տերության մեջ (*IL-KU, saḫḫan*(ʷ))[2473], Ուգարիթում[2474], Միտաննիում (*ilku*, խուրր. *unušše*)[2475] և վերջինիս ենթակա Արրապխեի թագավորությունում[2476], այն դեռևս հինբաբելոնյան շրջանից սկսած գործում էր Բաբելոնիայում[2477], իսկ Նորբաբելոնյան թագավորության անկումից հետո մուտք գործեց նաև Աքեմենյան տերություն: Աքեմենյան շրջանով թվագրվող բաբելոնյան տեքստերում հիշատակվում են ծառայության դիմաց տրամադրվող հողերի չորս կարգ՝ «*աղեղի հող*» (A.ŠÀ GIŠ.BAN-*šu*) կամ «*աղեղի փուն*» (*bīt qašti*), «*ձիու հող*» կամ «*ձիու փուն*» (A.ŠÀ ANŠU.KUR.RA-*šu* կամ *bīt sisî*) և «*մարտակառքի հող*» կամ «*մարտակառքի փուն*» (A.ŠÀ GIŠ.GIGIR-*šu* կամ *bīt narkabti*)[2478]: Չորրորդը այսպես կոչված «ձեռքի հող»-ն էր (*bīt ritti*)[2479], որը, հավանաբար, տրվում էր վարչական/քաղաքացիական ծառայության դիմաց: Որոշ փաստերից դատելով՝ կարելի է կարծել, որ նման համակարգ է գործել նաև Ուրարտուում:

Փաստերից առաջինը ասորեստանյան մի աղբյուրի ուղղակի վկայությունն է Ուրարտուում իրականացվող *ilku*-ծառայության մասին (*a-na il-ki ina* KUR.TILLA)[2480]:

---

[2469] Postgate 2000: 106; նույնի՝ 2007b: 346. Տե՛ս և հմմտ. նաև Дьяконов 1968б: 17 сл.
[2470] Հմմտ., օրինակ, Lanfranchi, Parpola 1990, No. 16 տեքստը: Տե՛ս նաև Radner 2003b: 899. MacGinnis 2012a: 339ff.; etc.
[2471] Հմմտ., օրինակ, Lanfranchi, Parpola 1990, No. 32; Postgate 1974: 221ff.
[2472] Lanfranchi, Parpola 1990, No. 251; Fales, Postgate 1995, Nos. 123-140.
[2473] Дьяконов 1968б: 18 сл. и прим 73.
[2474] McGeough 2007: 123ff.
[2475] von Dassow 2014b: 26.
[2476] Jankowska 1969a: 240ff. *Ilku* տերմինի այլ բովանդակության համար տե՛ս և հմմտ. Maidman 2010: 163ff.
[2477] Բաբելոնիայում *ilku* ծառայության համար տե՛ս Stol 2004: 738ff.; McGinnis 2010: 158f.; Jursa 2011: 432f.
[2478] Dandamaev 2009: 53f.; Jursa 2011: 435ff.
[2479] Bedford 2005: 80.
[2480] Saggs 2001, ND $2433_{14}$.

Երկրորդ հնարավոր վկայությանը հանդիպում ենք արդեն ուրարտական տեքստերում: Հայկաբերդից հայտնաբերված սեպագիր աղյուսակներից մեկում վնասված հատվածում ինչ-որ խավի/խմբի մարդկանց կողքին արձանագրված է «դաշտ» գաղափարագիրը (x $^{LÚ}$*ṭèri* A.ŠÀ) և կարելի է կարծել, որ տեքստը կազմվել է այդ ծառայության հետ կապված ինչ-որ դրվագ արձանագրելու համար, առավել ևս, տեքստում թվարկվում են, ինչպես վերը նշվեց, մարդկանց խավեր կամ խմբեր, որոնց թվում՝ նետաձիգներ (x LÚ.GIŠ.BAN)[2481]:

Ելնելով վերը նշվածից՝ մեզ հնարավոր է թվում Ուրարտուում տեսնել հողատիրության մի համակարգ, որը հանգում էր սիրիա-միջագետքյան օրինակներին մեկ էական տարբերությամբ: Որպես գերագույն հողատեր հանդես էր գալիս պալատը/տաճարը (=պետությունը): Այս առումով ուրարտական հողատիրական համակարգը կարելի է համարել բացառություն կամ, առնվազն, եզակի բացառություններից մեկը հին առաջավորասիական իրականության մեջ[2482]: Ըստ այդմ, պայմանագրային հարաբերությունների այնպիսի համակարգ, որը գործում էր սիրիա-միջագետքյան աշխարհում (արքա – վարձակալ, տաճար – վարձակալ, խոշոր հողատեր – վարձակալ և վարձակալ – երկրորդ վարձակալ[2483]), Ուրարտուում չի ենթադրվում:

Հնարավոր է, որ հողատիրության այս ձևը Ուրարտուում իր արմատներով հասնում էր միտաննական դարաշրջանին: Միտաննական դարաշրջանում հողատիրության ձևերին վերաբերող հիմնական վկայությունները հայտնի են Նուզիից: Որոշ տվյալներից դատելով՝ պետությունն այստեղ ուներ սեփականության բացառիկ իրավունքներ, մասնավորապես, նրան էր պատկանում ողջ հողային ֆոնդը[2484]: Դա երևում է այն հանգամանքից, որ, օրինակ, Նուզիից հայտնաբերված սեպագիր դիվանում ոչ մի փաստաթուղթ չի վերաբերում հողի առք ու վաճառքին, ինչը տարածված էր հինարևելյան այլ երկրներում: Այլ հարց է, որ առք ու վաճառք փաստացի իրականացվում էր այսպես կոչված «որդեգրման» ճանապարհով[2485]: Կառամարտիկների դասը՝ «*մարյաններ*»-ը, պետությունից ստանում էին հող, որը

[2481] Dinçol *et al*. 2001: 199; CTU IV, CT Çav.-2.

[2482] Հմմտ. Дьяконов 1973a: 4 сл., ուր, սակայն, ոչ ուրարտական օրինակի հիման վրա, քննարկվում է այս խնդիրը:

[2483] Jursa 2011: 432f.

[2484] Дьяконов 1973a: 4 сл.; Van De Mieroop 2007: 150ff., esp. 154. Տե՛ս և հմմտ. Янковская 1959: 43; Jankowska 1969a: 239f.; Maidman 2010: 10, 168f.

[2485] Դրանով շրջանցվում էր հողի վաճառքի արգելքը, երբ վաճառողը «որդեգրում» էր գնորդին «նվեր»-ի (իմա՝ գումարի) դիմաց: Վերջինս դրանով ձեռք էր բերում հողի տիրապետության իրավունք: Տե՛ս Steele 1943: 18, 50ff.; Purves 1945: 68ff.; Дьяконов 1968a: 64 сл.; De Graef 2002: 146 and n. 9.

կարող էր անցնել նրանց որդիներին ծառայությունը շարունակելու պայմանով[2486]: Նուզիից, ի դեպ, հայտնի են *iškāru*-ծառայության մասին մի քանի վկայություններ, որ կատարել են կառամարտիկները[2487]:

Ընդհանրապես, հետաքրքիր է, որ պետական *iškāru*-հողերը կապվում էին հիմնականում իշխող և արիեստագործական վերնախավի հետ, մինչդեռ հետևակայիններին տրվում էին *ilku*-հողերը[2488]: Դեռևս միջինասորեստանյան շրջանից սկսած *ilku*-ծառայության հետ էին կապված *ḫuradu*-կատեգորիայի մարդիկ նաև Ասորեստանում[2489]: Ուրարտական կանոնավոր բանակի զինվորների համար $^{LÚ}$*ḫuradi(e)* տերմինի ընտրությունը, թերևս, պատահականություն չէր և վերաբերելու էր այն զինվորականությանը, որը ռազմական ծառայությունն իրականացնում էր փոխարենը ստանալով հողի ժամանակավոր տիրապետության իրավունք (տե՛ս նաև ստորև 4.2.2):

Բիայնական իշխող արքայատոհմի անդամները և վերնախավը ներկայացնող զինվորականությունը/ազնվականությունը պետական հողերը ամենայն հավանականությամբ ստանում էր դրան ամրացված մի քանի ընտանիքներով կամ չի բացառվում անգամ՝ գյուղական համայնքով հանդերձ (տե՛ս 3.3.1.6.):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Ուրարտուում բիայնացիների հաստատած հողատիրության ձևը սերտորեն ազդված էր հին առաջավորասիական և հատկապես՝ խեթա-միտաննական/միջինասորեստանյան հողատիրական համակարգերից և դրանց յուրատեսակ սինթեզ էր: Ի տարբերություն Միջագետքի, ուր ենթադրվում է հողատիրության երեք ձև՝ ինստիտուցիոնալ, մասնավոր և համայնական[2490], մենք Ուրարտուում ենթադրում ենք հողատիրության երկու ձև՝ տաճարային/պալատական կամ այլ կերպ ասած՝ ինստիտուցիոնալ, և համայնական: Մասնավոր հողատիրություն Ուրարտուում մենք չենք ենթադրում:

#### 3.3.1.4. **Տաճարային/պալատական տնտեսությունները**

##### 3.3.1.4.1. **Տաճարային/պալատական տնտեսության ընդհանուր բնութագիրը**

Ուրարտական տերության աստվածապետական բնույթն ինքնին մղում է ենթադրելու, որ երկրի տնտեսության մեջ «պետական հատված» ասելով պետք է հասկանալ տաճարային/պալատական տնտեսությունը, որի արտահայտությունը երկրի տարբեր հատվածներում կառուցված տաճարային/պալատական համալիրներն էին՝

[2486] Steele 1943: 15; Drews 1993: 112.
[2487] CAD, I, 1960: 248f. (iškaru A 5).
[2488] Dalley 1995: 416f.
[2489] Postgate 1971: 496ff.; Machinist 1982: 27; Heltzer 1979: 247ff.
[2490] Renger 1994: 157ff.; նույնի՝ 1995: 269ff.; Քննարկման համար տե՛ս Van De Mieroop 1999: 105ff.

կենտրոնական ամրոցով, խոշորածավալ մթերանոցներով, արհեստանոցներով, ամրոցը շրջապատող տնտեսական/երկրագործական տարածքով և այդ տարածքում ընկած գյուղատիպ բնակավայրերով: Այս համալիրն է «Լուվրի աղյուսակ»-ում հանդես գալիս իբրև *tamertu*:

Ինչպես փորձել ենք ցույց տալ մեր մի հոդվածում՝ «Լուվրի աղյուսակ»-ում հանդիպող երկրագործական հիմնական տերմիններից մեկը՝ *tamertu*-ն, ունի «ոռոգվող հողատարածք» կամ «բերովի ջրի կարիք ունեցող մշակովի հողատարածք» իմաստը[2491]: «Լուվրի աղյուսակ»-ում այս իմաստով տերմինի կիրառության բոլոր երեք դեպքերում *tamertu*-ին զուգահեռ հիշատակվում են մի քանի կառույցներ, որոնց պետական սեփականություն հանդիսանալը հազիվ թե վիճարկվի: Դրանք են՝ խոշոր շտեմարաններ ունեցող ամրոցները՝ «նրա գարու տուն»-ը (É ŠE.PAD.MEŠ-*šú*)[2492], «արքայական պալատ»-ը (É.GAL *šubat* LUGAL-*ti*)[2493] և պալատական համալիրը՝ «մեծ պալատներ»-ը (É.GAL.MEŠ *rabbâte*)[2494]՝ շեշտելով արքաների կողմից դրանց կառուցման իրողությունը: Ըստ այդմ, խոսելով *tamertu*-ի մասին, պետք է հասկանալ ուրարտական կենտրոնի՝ «քաղաք»-ի շուրջը սփռված պետական հողատարածք՝ պետության կողմից անցկացված ջրանցքներով (*pili*/PA$_5$) և արհեստական ոռոգմամբ ապահովված վարելահողերով (*amudi*/GÀN $^{(GIŠ).ŠAM}$ŠE), այգիներով ($^{(GIŠ)}$*ṣari*), խաղողուտներով ($^{(GIŠ)}$*uldi/uduli*/$^{(GIŠ)}$GEŠTIN/*ḫaluli*), արոտավայրերով[՞]/փարախներով[՞] (*si/eršini*) ևն[2495]: Մեկ կամ մի քանի *tamertu*-ներից կազմվում էր «մարզ»-ը՝ *nagū*-ն:

Եթե իրոք «պետական հատված» ասելով կարող ենք հասկանալ տաճարային/պալատական տնտեսությունը որպես մեկ ամբողջություն, ապա այլևս անիմաստ է դառնում նաև խոսել Ուրարտուում առանձին «տաճարային տնտեսություններ»-ի գոյության մասին «արքայական»-ին կամ «համայնական»-ին զուգահեռ, ինչպես ենթադրվում էր նախկինում[2496]: Այստեղ կարելի է նկատել նաև, որ չկա որևէ տեքստ, որը, օրինակ, կվկայեր ուրարտական որևէ տաճարի արքաների կատարած նվիրատվության մասին: Մինչդեռ, նման փաստ մենք ունենք Ուրարտուի ուղղակի վերահսկողությունից դուրս գտնվող և Միրյո Սալվինիի բնորոշմամբ «միջազգայնորեն ճանաչված սրբազան քաղաք»-ի[2497] համարում ունեցող Մուծածիրի

[2491] Գրեկյան 2002բ, էջ 220-221:
[2492] Mayer 1983: 86f. (Z. 189).
[2493] Mayer 1983: 88f. (Z. 211).
[2494] Mayer 1983: 92f. (Z. 245).
[2495] Գրեկյան 2002բ, էջ 219-221:
[2496] Տե՛ս Меликишвили 1953: 32 сл.; նույնի՝ 1954: 353 сл.; Հարությունյան 1971բ, էջ 340; Հմայակյան 2012, էջ 37: Միաժամանակ, տե՛ս և հմմտ. նաև Дьяконов 1983г: 57.
[2497] Salvini 1993-1997: 445.

պարագայում[2498]: Սա ևս մեկ անգամ թույլ է տալիս ենթադրել, որ Ուրարտուի պարագայում «տաճար» և «պալատ» հասկացությունները հարկ է դիտարկել միմիայն իբրև մեկ ամբողջություն: Այանցի օրինակից դատելով՝ ամրոցի «տաճարային/պալատական» հատվածում կամ դրան անմիջապես կից պեղված «Արևելյան պահեստ»-ի կարասները, ի տարբերություն ամրոցի «Արևմտյան պահեստներ»-ում դրվածների, չեն ունեցել տարողության արձանագրումներ, այստեղից չեն հայտնաբերվել նաև արձանագիր բուլլաներ[2499], ինչը սպասելի կլիներ, եթե առանձնացված լիներ տաճարի ստացվածքը բնամթերքով: Իսկ դա հուշում է, որ այդ կարասները լցվել են ամրոցի ընդհանուր պահեստներից: Նույն երևույթը դիտարկվում է նաև Էրեբունիում[2500]:

Ըստ այդմ, այս կամ այն կարգի «տնտեսություններ»-ի կամ որ նույնն է՝ հողօգտագործման ձևերի գոյությունը պետք է դիտարկվի միմիայն պետական (=տաճարային/պալատական) հողատիրության/տնտեսության շրջանակում և ոչ երբեք նրանից դուրս կամ զուգահեռ: Ավելին, կարծում ենք ավելորդ է խոսել անգամ առանձին աստվածների տաճարների ունեցած տնտեսությունների/հողատարածքների մասին[2501] այն դեպքում, երբ Ուրարտուում «տաճար» հասկացությունը, ինչպես վերը նշեցինք, նույնանում էր «Խալդիի տաճար»-ին: Ընդհանրապես, ինչպես մեզ է թվում, Ուրարտուում, հողերը չէին կարող օտարվել, ըստ այդմ, չէր կարող լինել նաև անհատ հողատեր, և կարելի է խոսել միայն հողօգտագործողների կամ հողի ժամանակավոր տիրապետության մասին[2502]:

#### 3.3.1.4.2. **Տաճարը/պալատը որպես տնտեսությունը կազմակերպող օղակ**

Ուրարտուում տաճարը/պալատը վերաբաշխման վրա հիմնված տնտեսության կազմակերպիչն էր[2503]: Բազմաֆունկցիոնալ այս կառույցն էր համակարգում երկրի տնտեսական կյանքը՝ երկրագործական և արհեստագործական աշխատանքները, անասնապահությունը, փոխանակումը կամ արտաքին առևտուրը, պետական պահոցների ու պաշարների համալրումը, հաշվառումը և դրանց բաշխումը տվյալ տնտեսական գոտում պետության հետ կապված քրմական, վարչական, ռազմական,

[2498] КУКН, 30; CTU I, A 3-11.
[2499] Çilingiroğlu 2001a: 74f., Figs. 10-14; նույնի՝ 2007b: 41ff.
[2500] Оганесян 1961: 43 сл. Հմմտ. Իսրայելյան 1971, էջ 81, ծնթ. 2:
[2501] Меликишвили 1951a: 32 сл.; նույնի՝ 1953: 32.
[2502] Խորհրդային հողատիրության հետ զուգահեռի համար տե՛ս և հմմտ. Дьяконов 1967: 20 сл.
[2503] Միջագետքում վերաբաշխման համակարգի համար տե՛ս, մասնավորապես, Polanyi 1944 [2001]: 53ff.; նույնի՝ 1957: 250ff.; McGeough 2007: 20ff.; Liverani 2006: 7ff.; ևն աշխատանքները: Ուրարտուի համար տե՛ս և հմմտ. նաև Smith 1996: 231f., 288.

արհեստագործական և ընդհանրապես՝ սպասարկող անձնակազմին ու ծառայող խավերին:

Տաճարը/պալատը ըստ էության ինքնաբավ համակարգ էր, մի ընդարձակ շտեմարան, ուր հավաքում էին հարկերը, կուտակում երկրագործական և արհեստագործական հավելյալ արդյունքները, հաշվառում այդ ամենը՝ պետության կողմից հաստատագրված ստանդարտներով, ապա պահեստավորում, կնքում և վերջապես իրականացնում դրանց վերաբաշխումը: Նման բովանդակությամբ գրավոր վկայությունների պատառիկներ հայտնի են գրեթե բոլոր խոշոր ուրարտական կենտրոններից: Միայն Բաստամից հայտնաբերված 1500-ի հասնող բուլլաները[2504] վկայում են վերաբաշխման համակարգի օղակներից մեկի՝ պահեստավորման ընդգրկած ծավալների մասին: Մեկ այլ վկայություն է Վերին Անձավի ուրարտական ամրոցից գտնված «պետական ստանդարտ»-ի կշռաքարը՝ «մաքուր» 1 տաղանդ կշռով (տե՛ս ստորև 3.3.3.2.): Ճիշտ նույն պատկերն ունենք միջագետքյան աշխարհում, օրինակ, միջինասորեստանյան դարաշրջանի համար[2505]: Ուրարտուն, թվում է, ժառանգեց այդ համակարգը՝ միաժամանակ շարունակելով կառուցել տարածքային պետություն և տաճարային/պալատական տնտեսությունը ներդնելով նորանվաճ տարածքներում՝ ի դեմս այստեղ հիմնադրված նոր «քաղաքներ»-ի:

Մեր կողմից առաջարկված Ուրարտուի տնտեսության՝ վերը նկարագրված մոդելը չափազանց մոտ է կամ գրեթե նույնական՝ գրականության մեջ միջագետքյան տաճարային տնտեսության համար առաջարկված այսպես կոչված *oikos* մոդելին՝ որպես մեկ հիմնական արտադրող ու սպառող միավոր, ուր առևտրի և դրամային հարաբերությունների դերն աննշան էր[2506], միայն այն տարբերությամբ, որ ուրարտական *oikos*-ն ուներ հսկայական տարածք և աշխատուժի ու նյութական միջոցների շրջանառության ահռելի ծավալներ:

#### 3.3.1.4.3. Տաճարային/պալատական տնտեսությունը կամ *tamertu*-ն Կարմիր բլուրի օրինակով

Կարմիր բլուր բերդաքաղաքը համարվում է Արարատյան դաշտավայրի բիայնական տիրույթների տնտեսական նոր կենտրոնը[2507]: Ավելի քան 150 սենյակներից կազմված համալիրն ընդգրկում էր 7 մառան, որոնցից ամենախոշորը

[2504] Kleiss 1988a: 58; Kroll 2013b: 248.

[2505] Machinist 1982: 20f. Կրետեի պալատական/տաճարային տնտեսության հետ զուգահեռի համար տե՛ս և հմմտ. Schoep 2010: 219ff.

[2506] Pearson 1957: 4ff.; Renger 1995: 272f.; Van De Mieroop 1999: 107ff.; նույնի՝ 2004: 54ff.; Jursa 2005: 172f.; McGeough 2007: 10ff.; etc.

[2507] Пиотровский 1961: 115; Եսայան 1982, էջ 42:

(թիվ 25 սրահը) զբաղեցնում էր 300 մ$^2$ տարածք և տեղավորում էր 82 կարաս, թիվ 28-ը՝ տեղավորում էր 72 կարաս, ևս մոտ 180 կարաս տեղավորում էին մնացյալ հինգ մառանները: Ընդհանուր առմամբ՝ մինչև պեղումների ավարտը հայտնաբերվել է 400-ից ավելի խոշոր կարաս[2508]:

Ամրոցի հարավային հատվածում պեղված մոտ 10 ամբարների տարողությունը կազմում էր յուրաքանչյուրը 80-100 մ$^3$ և կարող էր տեղավորել մոտ 750 տ հացահատիկ[2509]: Կարմիր բլուրում պահվող հացահատիկի ընդհանուր քանակը, հավանաբար, կազմել է մոտ 1.5 հազ. տ կամ 2310 հազ. լ:

19-րդ դ-ում Հայաստանի լեռնային շրջաններում ցորենի մեկ հա ցանքսից ստացվում էր 7-8 ց բերք, Արարատյան դաշտավայրից՝ 20-30 ց: Ստեփան Եսայանի կարծիքով՝ ուրարտական շրջանում մեկ հա-ից ստացվող հացահատիկի բերքը Արարատյան դաշտավայրում կարող էր լինել 5-10 ց[2510]: Այս ենթադրությունը միանգամայն համահունչ է հյուսիսային Միջագետքի համար մեր ունեցած տվյալների հետ, ընդ որում, խոսքը վերաբերում է Նուզիին, որի տարածքի բնակլիմայական պայմանները համեմատաբար մոտ են Արարատյան դաշտավայրին[2511]:

Ըստ Նուզիի տեքստերի, մեկ ANŠE (*imērū*)[2512] հողակտորի ցանքս անելու համար պահանջվում էր ճիշտ այդքան սերմացու (1 ANŠE/*imērū*)[2513], հազվադեպ՝ քիչ ավելի՝ 1 ANŠE 3 *sāti* սերմ (գարու կամ երկշար ցորենի)[2514]: Նման քանակությամբ ցանքսի դեպքում յուրաքանչյուր մեկ ANŠE հողակտորից ստացվող բերքը լինում էր տարբեր՝ 2 ANŠE 2 *sāti* 4 *qa*-ից հասնելով մինչև 21 ANŠE 7 *sāti*-ի[2515]: Միջին ցուցանիշները տատանվում էին 1 : 3-ից մինչև 1: 7-ի սահմաններում: Նուզիում լավագույն հողերի բերքատվությունը կազմում էր 1 : 8-9: Ընդ որում, խոսքը, հավանաբար, ոռոգովի

[2508] Եսայան 1982, էջ 15:
[2509] Wright 1969: 95, ուր 1 մ$^3$-ի համար նշվում է մոտ 700-720 կգ:
[2510] Եսայան 1982, էջ 19:
[2511] Մոսուլում բնական տեղումները տարեկան հասնում են մինչև 390 մմ: Տե՛ս Liverani 2011: 253.
[2512] Որպես տարածական միավոր մեկ *imērū*-ն հավասար էր 120 × 150 մ-ի կամ 1.8 հա-ի, որը այն չափն էր, որտեղ ցանելու համար պահանջվում էր 1 իշաբեռ սերմ:
[2513] 1 *imērū* = 10 *sāti* = 100 *qa* = 84.2 լ: Տե՛ս Zaccagnini 1975: 193, 217f., ինչպես նաև Postgate 1978: 71ff.; Wiggermann 2000: 186. Թեև հինարևելյան տեքստերում հանդիպում են նշումներ՝ տվյալ հողատարածքի ցանքսի համար օգտագործված հացահատիկի քանակության մասին, բայց այնուամենայնիվ դժվար է որոշել սերմացուի քանակության ինչ-որ ստանդարտ չափ (տե՛ս և հմմտ. Zaccagnini 1975: 218f.; Morandi Bonacossi 1996 [2012]: 201, n. 64): Օրինակ, միջինասորեստանյան շրջանում մեկ հա-ի համար պահանջվող սերմացուի քանակը կարծես կազմում էր մոտ 55 լ. Տե՛ս Wiggermann 2000: 190.
[2514] Մանրամասն տե՛ս Zaccagnini 1975: 182ff.
[2515] Zaccagnini 1975: 185ff.

հողերի մասին է, որոնց բերքը կախված չէր բնական տեղումներից[2516]: Իհարկե, երբեմն նշվում է նաև ստացված բերքի բավական մեծ քանակ՝ մինչև 1 : 30 հարաբերակցությամբ[2517]: Սակայն, Նուզիում հողի վարձակալության պարտավորությունները չկատարելու համար որպես տույժ սահմանված վերադարձվելիք բերքի 1 : 10 հարաբերակցությունը վկայում է, որ դա բավական բարձր նշագիծ էր Նուզիի հողերի բերքատվության համեմատությամբ[2518]: Միջինասորեստանյան շրջանում, դատելով Թելլ Սաբի Աբյադից հայտնի տվյալներից, միջին բերքատվությունը կազմել է 1 : 7.35, ընդ որում, այստեղ նույնպես խոսքը կարող է վերաբերել ոռոգովի հողերին[2519]: Թելլ Շեյխ Խամադ/Դուր-Կատլիմույից հայտնի տվյալները տատանվում են 1 : 1, 1 : 1.5-ից մինչև 1 : 7.5 և 1 : 9.8-ի միջև, իսկ միջին հարաբերակցությունը կազմում է 1 : 3-ից 1 : 4[2520]: Նույն պատկերն է նաև Միջագետքի այլ գոտիների դեպքում[2521]:

Եթե ընդունելի համարենք քննարկվող շրջանում հա-ից 5-10 g միջին բերքատվությունը Արարատյան դաշտավայրի ոռոգովի հողերի համար, ապա 1.5 հազ. տ ստանալու համար անհրաժեշտ կլիներ 1.5 հազ-ից 3 հազ. հա հողատարածք: Այդ հողատարածքի ցանքսի համար, եթե դարձյալ առաջնորդվենք միջագետքյան տվյալներով՝ 1 հա-ի համար 46-55 լ կամ 29.8-35.7 կգ հաշվարկով և որպես միջին ընդունելով 50 լ-ը (32.5 կգ)[2522], ապա կպահանջվեր շուրջ 75-150 հազ. լ կամ 48.75-97.5 հազ. կգ սերմացու: Իսկ դա ենթադրում է, որ Արարատյան դաշտավայրի հողերի բերքատվությունը կազմել է 1 : 15.4-ից 1: 30.1-ի միջև:

Թեև նման բերքատվությունը բացառիկ երևույթ չէր հյուսիսային Միջագետքի համար (տե՛ս վերը), բայց այնուամենայնիվ թվում է խիստ բարձր՝ անգամ ուրարտական շրջանի Արարատյան դաշտավայրի համար: Վերցնելով շատ ավելի իրատեսական՝ 1 : 10-ի հարաբերակցությունը[2523] և 1 հա-ի համար ենթադրելով 7 g

---

[2516] Zaccagnini 1975: 209ff. Այստեղ նշենք, որ ոռոգովի երկրագործության և անջրդի երկրագործության բերքատվության հարաբերակցությունը կազմում է 1 : 2: Տե՛ս Weiss 1986a: 95.

[2517] Այստեղ նշենք նաև, որ Հյուսիսային Միջագետքում անջրդի հողերից ստացվում էր 300-600 կգ բերք մեկ հա-ից, միջինը՝ 400-500 կգ/հա: Տե՛ս Wiggermann 2000: 193: Ուրի III հարստության, հին, միջին և նորբաբելոնյան շրջանում հողից ստացվող բերքի հարաբերակցության համար տե՛ս և հմմտ. Дьяконов 1968в: 17, прим. 68; Zaccagnini 1975: 218f.; Hunt 1987: 144ff.; van Driel 1999-2000: 84f.; Butz, SchrΦder 1985: 165ff.; Dandamaev 2009: 37. Միջինասորեստանյան շրջանի համար տե՛ս Wiggermann 2000: 180f. (1440 հա-ից՝ 6951 *imērū* կամ մոտ 431 հազ. լ գարի, միջինը՝ մոտ 3 g):

[2518] Zaccagnini 1975: 204f.

[2519] Wiggermann 2000: 193.

[2520] Fales 2010b: 72.

[2521] Ամփոփ տե՛ս Altaweel 2008: 829.

[2522] Տե՛ս վերը, ծնթ. 2513:

[2523] Անգամ 19-րդ դ-ի վերջ – 20-րդ դ-ի սկզբներին Շիրակի դաշտավայրում ցորենի բերքի հարաբերակցությունը ամենառատ տարում կազմել է 1 :10-ից 1 : 12: Տե՛ս Բոյաջյան 2013, էջ 85:

բերքատվություն, ապա 1 հա-ի ցանքսի համար պահանջվող սերմացուի քանակ կարելի է համարել 70 կգ-ը կամ մոտ 108 լ: Ըստ այդմ, 1.5 հազ. տ բերք ստանալու համար կարող էր պահանջվել մինչև 215 հազ. կգ կամ մոտ 331 հազ. լ սերմացու, այն է՝ ամբողջ պաշարի շուրջ 14.3 տոկոսը: Հաշվի առնելով այն փաստը, որ բավական մեծածավալ կորուստներ են լինում նաև ամբարված հացահատիկում (ընդհուպ մինչև 25 տոկոս)[2524], ապա կարելի է նշել նաև, որ պետությունը վերաբաշխման համար կարող էր օգտագործել ստացված բերքի ոչ ավելի, քան 60 տոկոսը:

Եթե արժանահավատ համարենք այն ենթադրությունը, որ Կարմիր բլուրը հնարավորություն ուներ ստանալու մինչև 1.5 հազ. տ խաղող՝ գինու պաշարները համալրելու, ինչպես նաև սննդի մեջ օգտագործելու համար, ապա նման քանակությամբ խաղողի բերք ստանալու համար անհրաժեշտ կլիներ ունենալու 300-350 հա խաղողի այգի[2525]: Դրան գումարելով այգիների և տեխնիկական մշակաբույսերի տարածքները, ապա պարզ կդառնա, որ միայն Կարմիր բլուրի մառաններն ու ամբարները լցնելու համար անհրաժեշտ կլիներ մոտ 3-4 հազ. հա հողատարածք[2526], իսկ այդ հողերը մշակելու համար հարկավոր էր առնվազն 280-350 զույգ լծկան կենդանի[2527]: Միայն այդ կենդանիներին կերով ապահովելու համար անհրաժեշտ կլիներ 306 հազ-ից մինչև 361 հազ. լ գարի կամ մոտ 280-350 հա գարու ցանքս յուրաքանչյուր կենդանուն օրական 1.5 լ գարու հաշվարկով (տե՛ս ստորև)[2528]: Արոտավայրերում կերակրելու դեպքում յուրաքանչյուր կենդանու համար հաշվվում է 1.2 հա հողատարածք[2529]: Այդ դեպքում, 280 կամ 350 զույգ լծկան կենդանու կերակրելու համար անհրաժեշտ արոտավայրերի տարածքը պետք է կազմեր մոտ 670-ից 840 հա: Ի դեպ, ինչպես «Լուվրի աղյուսակ»-ն է վկայում, Ուրարտուում հարթավայրային արոտավայրերը նույնպես ոռոգվել են[2530], ինչը նշանակում է, որ կենդանիները կամ առնվազն կենդանիների մի մասը պահվում էր տեղում: Այստեղ պետք է նկատել, որ Արարատյան դաշավայրի ամառային շոգ կլիմայի պայմաններում կենդանիների

---

[2524] Wiggermann 2000: 196. Այստեղ տեղին է նշել, որ հացահատիկի վնասատուների մնացորդներ են հայտաբերվել Կարմիր-բլուրի ամբարներում: Տե՛ս Пиотровский 1950: 53.

[2525] Համմտ. Мартиросян 1972: 51; Wartke 1993: 87. Ստեփան Եսայանը ենթադրում է, որ միայն խաղողի այգիները մշակելու համար անհրաժեշտ էր լինելու մոտ 2-2.5 հազ. մարդու աշխատանք, ինչը, իհարկե, չափազանցված է (1982, էջ 17):

[2526] Տե՛ս և համմտ. նաև Եսայան 1982, էջ 19:

[2527] Ըստ Ֆրանս Վիգերմանի՝ մեկ զույգ լծկան ցուլը մշակում էր մոտ 40 *iku*՝ 14.4 հա հող՝ մեկ զույգ մարդկանց հետ (Wiggermann 2000: 189f.). Տե՛ս և համմտ. նաև Козырева 1975: 10.

[2528] Լծկան կենդանիների կերակրման համար օգտագործվում է ընդհանուր բերքի մոտ 11 տոկոսը: Տե՛ս Morandi Bonacossi 1996 [2012]: 201, 233.

[2529] Yakar 2011: 133.

[2530] Mayer 1983: 88f. (Z. 209-210).

հոտերը ջրի կարիք կզգային ամեն օր և չէին կարող ջրի աղբյուրներից շատ հեռու տարվել[2531]:

Եվ վերջապես այս թվերին պետք է հավելել հողերի այն քանակությունը, որը թողնվում էր որպես ցել: Նորասորեստանյան շրջանի տեքստերից դատելով՝ դա կարող էր կազմել վարելահողերի 1/3-րդից մինչև 2/5-րդ մասը[2532] կամ ուղիղ կեսը[2533], տվյալ դեպքում՝ կարելի է ենթադրել 750-ից 1.5 հազ. հա: Ըստ այդմ, Կարմիր բլուրի երկրագործական գոտին կարող էր կազմել ոչ պակաս քան 6-7 հազ հա կամ 60-70 կմ$^2$, ինչը գրեթե հավասար է Կարմիր բլուրի գոտու շրջագծին մոտ 5 կմ շառավղով (հետիոտնի համար կենտրոնից մոտավորապես մեկժամյա ճանապարհ հեռավորություն):

Ենթադրվում է, որ մեկ աշխատողի բերքահավաքի շրջանում բաժին է ընկնում 3-4 հա հողատարածք[2534]: Միջագետքյան տեքստերից մեկից դատելով՝ մեկ կախյալի (guruš) աշխատանքի ծավալը միջինը կազմում էր 3.53 հա[2535]: Միջինացված հաշվարկից ելնելով կարելի է կարծել, որ միայն Կարմիր բլուրի երկրագործական գոտին մշակելու համար անհրաժեշտ կլիներ մոտ 1.7 հազ-ից 2 հազ. աշխատող ձեռք:

Այս նույն պատկերը կարելի է վերականգնել Էրեբունիի համար, իր՝ առնվազն 2 հազ. տ տարողությամբ շտեմարաններով: Առնվազն 7-8 հազ. հա հողատարածք էր անհրաժեշտ Արգիշթիխինիլիի 5 հազ. տ տարողությամբ ամբարները լցնելու համար, և կարելի է կարծել, որ Արգիշթիխինիլիի երկրագործական գոտին ընդգրկել է 12-15 հազ. հա տարածք՝ ներառյալ այգիներն ու խաղողուտները, ինչպես նաև ցելը[2536]: Ըստ այդմ, Արգիշթիխինիլիի երկրագործական գոտին կազմելու էր ոչ պակաս քան 120-150 կմ$^2$, որը համապատասխանում է Վանի արևելյան ավազանի ուրարտական այն հովիտների տարածքին, որոնցում հիմնվել են խոշոր բերդաքաղաքներ, ինչպես, օրինակ, Տուշպան, որի երկրագործական գոտին զբաղեցնում է մոտ 150 կմ$^2$ տարածք, Հայկաբերդը, որը 190 կմ$^2$ զբաղեցնող երկրագործական գոտու կենտրոնն էր, Բադնոցը՝ իր 112 կմ$^2$ երկրագործական գոտիով ևն: Եթե նկատի ունենանք, որ Ք.ա. 9-8-րդ դդ-ում Արարատյան դաշտավայրում հիմնադրվել են առնվազն 3 խոշոր բերդաքաղաքներ (Արտաշատի ուրարտական ամրոց կամ Մենուախինիլի, Էրեբունի,

[2531] Տե՛ս, օրինակ, Khazanov 2009: 123.
[2532] Hunt 1987: 145.
[2533] Wright 1969: 21; Ellison 1978: 83f.; Morandi Bonacossi 1996 [2012]: 196.
[2534] Համեմատության համար տե՛ս Wilkinson 1994: 496. Հմմտ., միաժամանակ, Wright 1969: 22.
[2535] Adams 1981: 146.
[2536] Տե՛ս և հմմտ. նաև Мартиросян 1972: 40; նույնի՝ 1974: 38 сл.; Wartke 1993: 85f.; Հովհաննիսյան 1996, էջ 188:

Արգիշթիխինիլի), ապա առնվազն միայն այս կենտրոնները ապահովելու համար անհրաժեշտ էր լինելու ոչ պակաս քան 30-35 հազ. հա պետական հողատարածք՝ չհաշվելով դեռ այս գոտում ընկած միջին և փոքր մեծության ամրոցներին հարակից մշակովի հողերը, հատկապես՝ Շարուրի դաշտում: Եթե ընդունենք, որ միայն հացահատիկի համար օգտագործվող վարելահողերի քանակը կարող էր կազմել 20-25 հազ. հա, ապա այդ հողերի կեսը ցանելու և միջինը 7 ց բերք ստանալու դեպքում հավաքված բերքը կկազմեր 8750 տ կամ 13 մլն 475 հազ լ: Այդ քանակությունը կարող էր ողջ տարին կերակրել 14 հազ. ընտանիքի կամ 56-70 հազ. բնակչություն:

Համեմատության համար նշենք, որ միջինասորեստանյան շրջանում Բալիխի երկայնքով ձգվող ասորեստանյան նահանգն ուներ 3600-6000 հա ոռոգովի հողի պոտենցիալ, որը կարող էր կերակրել ոչ ավելի, քան 2400-6000 մարդու[2537]: Խաբուր գետի ստորին ավազանը նորասորեստանյան շրջանում ունենալու էր մոտ 30-35 հազ. բնակիչ[2538] և հաշվի առնելով ոգոռովի հողերի իրական պոտենցիալը՝ մոտ 23-33 հազ. հա, ի զորու էր կերակրելու ընդհուպ մինչև 45 հազ. բնակչություն[2539]:

3.3.1.5. «**Արքայական տնտեսություններ**»-ը

Ուրարտուում իշխող գաղափարախոսության համաձայն՝ ողջ երկիրը համարվում էր Խալդի աստծո սեփականությունը, իսկ բիայնական արքան հանդես էր գալիս որպես այդ սեփականության «կառավարիչ»: Այս առումով ուրարտական տնտեսության համար առաջարկվող մոդելը՝ «տաճարային/պալատական (=պետական) տնտեսություն» կամ «էտատիզմ», տարբերվում է ինչպես Ուրարտուի համար նախկինում առաջարկված քառամաս («արքունական», «տաճարային», «մասնավոր», «համայնական»)[2540], այնպես էլ՝ նորասորեստանյան տերության տնտեսության համար առաջարկված եռամաս՝ «պալատական», «պետական» և «մասնավոր» (Նիկոլաս Փոսթգեյթ)[2541], կամ երկմաս՝ «պալատական» և «տոհմական» (Մարիո Լիվերանի[2542]) մոդելներից[2543]:

Ուրարտուում արքան անմիջականորեն ներգրավված էր տնտեսության կառավարման գործերում (տե՛ս վերը 1.1.2.5.) և որպես ծառայության վարձ՝ ստանում էր իր տնօրինությանը հանձնված հողատարածքների եկամուտը, թերևս նաև մասնաբաժին պետության ընդհանուր եկամուտներից, ինչպես նաև ավարից:

[2537] Wilkinson 1998: 81.
[2538] Morandi Bonacossi 1996 [2012]: 179.
[2539] Morandi Bonacossi 1996 [2012]: 195, 202s.
[2540] Տե՛ս վերը, 3.3.1.1.
[2541] Postgate 1979: 193ff.
[2542] Liverani 1984: 33ff.
[2543] Տե՛ս և հմմտ. նաև Van De Mieroop 1999: 105; նույնի՝ 2004: 54ff.; Bedford 2005: 76ff.

Հետաքրքիր է, որ «Խորխորյան տարեգրության» մեջ նշվում է Խալդի աստծո կողմից Արգիշթիին տրված «վճար»-ի մասին՝ 7566 խոշոր և 51878 մանր եղջերավոր անասուն[2544]:

Բացի դա, ուրարտական այլ արձանագրություններում բազմիցս կարելի է հանդիպել «*սա արքային հասավ, իսկ այն, ինչ զորքերը գրաված, առանձին գրաված*» արտահայտությանը (*inani* LUGÁL-*e nunabi mei ali* $^{LÚ}$A.SI$^{MEŠ}$-*še irbitu/partu šeri partu*)[2545], ընդ որում, սովորաբար թվարկվում է ավարից արքայի ստացած բաժնեմասը: Կարելի է վստահությամբ նշել, որ արքան բաժնեմաս է ունեցել նաև ենթակա երկրների վճարած հարկերից: Թե խեթական, և թե ասորեստանյան տեքստերը նույնպես վկայում են, որ ենթակա երկրների վճարած հարկերի մեջ առանձին մասնաբաժիններ են նախատեսված եղել արքայի, արքայական ընտանիքի առաջին անդամների (թագուհի և գահաժառանգ արքայազն), ինչպես նաև՝ երկրի բարձրաստիճան պաշտոնյաների համար[2546]:

Կարծում ենք, որ Ուրարտուում արքայական տնտեսություն որպես այդպիսին չկար, կային հողատարածքներ, որոնք հանդիսացել են արքային ծառայության դիմաց տրված հողեր, ճիշտ այնպես, ինչպես կտրվեին դրանք զինվորներին[2547]: Թերևս՝ տարբերությունը կայանում էր այդ հողերի չափի և որակի մեջ, երբ արքային տրված հողատարածքը կարող էր կազմել մի ամբողջ «հովիտ», զինվորներինը՝ այգի կամ արտ: Աղբյուրներում պահպանվել են արքաների տիրապետման տակ գտնվող նման հողատարածքների անվանումները, ինչպես, օրինակ, «*Մենուայի հովիտ*» ($^{m}$*menuainie ḫubi*)[2548], «*Մենուայի խաղողուտ*» ($^{m}$*menuai* $^{GIŠ}$*uldie*)[2549], «*Թարիրիայի խաղողուտ*» ($^{SAL}$*taririai ...* $^{GIŠ}$*uldi*)[2550], «*Սարդուրիի հովիտ*» ($^{md}$*sardurini ḫ*[*ub*]*ini*)[2551], «*Սարդուրիի խաղողուտ*» ($^{md}$*sardurini* $^{GIŠ}$*uduliei*)[2552], «*Արգիշթիի հովիտ*» ($^{m}$*argištinie ḫubigi*)[2553], «*Ռուսայի հովիտ*» ($^{m}$*rusainie ḫubigi*)[2554] և այլն:

Այս երևույթի զուգահեռները հայտնի են Միջագետքում դեռևս ամորեական տիրապետության շրջանից[2555]: Անշուշտ, հնարավոր է նաև զուգահեռներ տանել

---

[2544] КУКН, 173 VI$_{13-15}$; CTU I, A 8-3 VI$_{13-15}$. Թարգմանության համար տե՛ս նաև Дьяконов 1963a: 70.
[2545] КУКН, 241 A$_{11-12}$, C$_{45-46}$; CTU I, A 9-3 I$_{11-12}$, 9-3 II$_{45'-46'}$.
[2546] Beckman 1996: 151ff. (Nos. 28A-B, 31B); Parpola 1987, No. 34; Fales, Postgate 1995, No. 36.
[2547] Համմտ. Меликишвили 1951a: 24 сл.; նույնի՝ 1953: 22 сл.; նույնի՝ 1954: 340 сл.; Дьяконов 1963в: 62 сл.
[2548] КУКН, 273$_{5-6}$; CTU I, A 5-20$_{5-6}$.
[2549] КУКН, 82$_{14-15}$; CTU I, A 5-33$_{14-15}$.
[2550] КУКН, 137$_{5}$; CTU I, A 5A-1$_{5}$.
[2551] CTU I, A 9-11$_{6-7}$. Համմտ. КУКН, 273$_{6-7}$;
[2552] КУКН, 273$_{7}$; CTU I, A 9-11$_{7}$.
[2553] КУКН, 406, обор. стор.$_{24-25}$; CTU I, A 11-2 Ro$_{24-25}$.
[2554] КУКН, 421$_{16-17}$; CTU I, A 12-8$_{16-17}$.
[2555] Козырева 1975: 4 сл. Համեմատության համար նշենք, որ Արրապխեում արքայական ընտանիքի անդամները օրապահիկ են ստացել պետության կողմից, արքայի ձիերը նույնպես պահվել են

բիայնական արքային և արքայական ընտանիքին տրված այս հողերի և ասորեստանյան արքայական տնտեսության միջև, որը ներառում էր հողերի երկու կարգ՝ *ma'uttu ša šarri* կամ *ma'uttu ša bit šarrani* («*արքային պատկանող ma'uttu-հողատարածք*» կամ «*արքայական տանը պատկանող ma'uttu-հողատարածք*») և *ma'uttu ša ekalli* («*պալատին պատկանող ma'uttu-հողատարածք*»)[2556]: Ասորեստանում արքունի հողերի մի մասը, ինչպես դա արվում էր դեռևս ամորեական դարաշրջանում, տրվում էր *ilku*-ծառայության դիմաց: Միակ տարբերությունը ուրարտական և ասորեստանյան օրինակների միջև, կարծում ենք, հողերի տիրապետման կարգն էր. ի տարբերություն Ասորեստանի՝ Ուրարտուում արքան արքայապատկան հողերին տիրում էր ծառայության իրավունքով:

Եթե ընդունենք, որ Արգիշթիին Խալդիի տված «վճար»-ը՝ 7566 գլուխ խոշոր և 51878 գլուխ մանր եղջերավոր անասունը, հանդիսանում էր արքունի արոտավայրերում պահվող անասնագլխաքանակի ինչ-որ հանրագումար, ապա դա կարող է վկայել, որ գործ ունենք բավական մեծ տնտեսության հետ: Համեմատության համար նշենք, որ բաբելոնյան խոշորագույն տաճարային տնտեսություններից մեկը՝ Է-աննայի տաճարը, ուներ 5-7 հազ. խոշոր և 100-150 հազ. մանր եղջերավոր անասուններ[2557]:

Այսպիսով, հնարավոր է թվում Ուրարտուում տեսնել հողատիրության մի համակարգ, որը հանգում էր սիրիա-միջագետքյան օրինակներին մեկ էական տարբերությամբ: Որպես գերագույն հողատեր հանդես էր գալիս պետությունը (=տաճարը/պալատը) և պայմանագրային հարաբերությունների այնպիսի համակարգ, որը գործում էր սիրիա-միջագետքյան աշխարհում, Ուրարտուում չի ենթադրվում: Անգամ արքաները, ըստ երևույթին, իրենց եկամուտները ստանում էին որպես կառավարիչ-ծառայողներ:

### 3.3.1.6. «**Մասնատիրական տնտեսություններ**»-ը

Առկա է կարծիք, որ բիայնացիներն ունեցել են մասնավոր տնտեսություններ[2558]: Որպես օրինակ նշվում է ոմն Գիլուրանիի «անտառ»-ը ($^{m}$*giluranie* $^{GIŠ}$TIR-*ni*) կամ Իշպիլինիի՝ Բաթուի որդու այգին ($^{m}$*išpilini* $^{m}$*batuḫinini* $^{GIŠ}$NU.SAR/KIRI$_6$-*ni*), որ հիշատակվում են Արգիշթի Ռուսայորդու մի արձանագրության մեջ[2559]: Իրականում,

---

պետության հաշվին (Янковская 1959: 43; Maidman 2010: 21ff.): Ուրարտական պետության կողմից արքայական ընտանիքի անդամներին արված մասհանումների համար տե՛ս ստորև:

[2556] Postgate 1970: 135; Parpola 1975: 295; Radner 2000: 243 and n. 67-68; նույնի՝ 2003b: 888f.

[2557] Տե՛ս և հմմտ. Jursa 2005: 181, n. 55.

[2558] Меликишвили 1951a: 34 сл.; նույնի՝ 1954: 361; Հարությունյան 1971բ, էջ 340-342; Wartke 1993: 82f.; Հմայակյան 2001ա, էջ 28:

[2559] КУКН, 408; CTU I, A 11-7.

սակայն, Ուրարտուում մասնատիրական տնտեսությունների գոյության մասին տվյալներ մենք չունենք, առկա չէ հողի առք ու վաճառքի, վարձակալության, գրավադրման, ինչպես նաև՝ փոխառություն տալու կամ վերցնելու մասին որևէ փաստ: Ընդհակառակը՝ առկա սուղ փաստերը առայժմ բացառում են նման հարաբերությունների գոյությունն ընդհանրապես: Ըստ այդմ, խոսելով «մասնատիրական» հողերի մասին, պետք է նկատի ունենալ բացառապես տվյալ հողատարածքի օգտագործման իրավունքը, որը տրվում էր, ինչպես վերը նշվեց, ռազմական, վարչական կամ քրմական ծառայության դիմաց: Եվ այս առումով Գիլուրանիի «անտառ»-ը կամ Իշպիլինիի այգին կարող ենք դիտարկել այլ տեսանկյունից՝ որպես պետական սեփականություն հանդիսացող տարածքներ, որ տրվել են նշված անձանց ժամանակավոր տնօրինության իրավունքով: Այստեղ կարող ենք օրինակ բերել խեթական զուգահեռը: Խաթթիում ռազմիկների մի խավ, որոնք հիշատակվում են $LÚ^{MEŠ\ GIŠ}$TUKUL գաղափարագրով, տիրում էին հողակտորների և սպառում այդ հողերից ստացված բերքը՝ մինչև ռազմական ծառայության կանչվելը[2560]:

Ցավոք, տվյալներ չկան ուրարտացի զինվորականին տրված հողատարածքների չափի մասին: Ուշ-հինբաբելոնյան աղբյուրներից դատելով՝ զինվորներին ծառայության դիմաց տրվող հողի չափը տատանվում էր 8-ից 13 *iku*-ի[2561] սահմաններում, միջինը սովորաբար կազմում էր 12 *iku*, այսինքն՝ մոտ 4.32 հա[2562]: Սա բավարար էր ողջ տարին ապահովելու համար առնվազն 14 մարդու, եթե նկատի ուեննանք, որ 6 հա հողը Բաբելոնիայում բավարարում էր 20 մարդու անհրաժեշտ հացահատիկի կարիքները[2563]: Իհարկե, այստեղ պետք է հաշվի առնել, որ բաբելոնյան ոռոգովի հողերում բավական բարձր էր հացահատիկի բերքատվությունը[2564]: Ըստ Միխայիլ Յուրսայի՝ մեկ ընտանիքի պահանջները ապահովելու համար բավարար էր 2 *kurru* հող (2.72 հա)[2565]: Մոտավորապես այդ նույնն է ենթադրում Թոնի Ուիլքինսոնը՝ գտնելով, որ 1 հա հողը 5 ց բերքատվության դեպքում կարող է պահել 2 մարդու ողջ տարին[2566], իսկ նորասորեստանյան շրջանի գրավոր վկայություններից դատելով՝ մեկ ընտանիքի

[2560] Beal 1988: 304; Bryce 2002: 75f.
[2561] 1 *iku*-ն հավասար է մոտ 0.36 հա-ի (3600 մ$^2$): Տե՛ս Wiggermann 2000: 181; De Graef 2002: 147, n. 11.
[2562] De Graef 2002: 148ff., 155.
[2563] Richardson 2011: 22.
[2564] Տե՛ս, օրինակ, Morandi Bonacossi 1996 [2012]: 199s. (հղված գրականությամբ):
[2565] Jursa 2011: 440, n. 54. 1 *kurru*-ն (շում. gur) հավասար է 1.36 հա-ի (13 հազ. 600 մ$^2$):
[2566] Wilkinson 1994: 495. Տե՛ս նաև Wright 1969: 21. Մեկ մարդու համար 1.4 հա հող է նշում Ռոբերթ Ադամսը՝ դրա կեսն ընդունելով որպես ցել (Adams 1965: 41). Տե՛ս և հմմտ. նաև Zorn 1994: 43; Van De Mieroop 1997: 96; Morandi Bonacossi 1996 [2012]: 201s.

համար որպես միջին թիվ կարելի է նշել չորս անձը[2567]: Իհարկե, այստեղ պետք է նկատի ունենալ թե բնակլիմայական պայմանները, և թե հողերի բնույթն ու բերրիության աստիճանը, ոռոգման հնարավորությունները, ինչու չէ նաև՝ տվյալ հողատարածքի վրա աշխատող ձեռքերի քանակը, և, ի վերջո, ցելը: Համենայն դեպս, բիայնական պրոֆեսիոնալ զինվորականը կամ «մարի(նի)»-ն ստանալու էր հողի մի չափ, որը կբավարարեր իր և իր ընտանիքի պահանջները, ինչպես նաև հողին ամրացված երեքից չորս ընտանիքների կամ 6-8 «պատանիներ»-ի նվազագույն ապրուստը[2568]: Ի լրումն՝ նաև ձիու կամ ձիերի խնամքը, ինչպես նաև առնվազն մեկ զույգ լծկան ցլերի կերը, որը կարող էր կազմել մեկ ձիու չափաբաժնից քիչ պակաս[2569]:

Ըստ այդմ, եթե զինվորականը պարտավոր էր ունենալու ձի, որին կերակրելու համար պահանջվում էր առնվազն 1.8-ից 2 հա հող կամ դրա կրկնակին՝ մեկ զույգ ձիերի (մարտակառքի) համար (մոտ 3.2-4 հա)[2570], ապա կարելի է ենթադրել, որ պետությունից բիայնացի զինվորականը կարող էր ստանալ առնվազն 6 հա հող՝ 2-4 աշխատող ձեռքով (1-2 ընտանիք)[2571], եթե ծառայում էր հետևազորում (կոչենք այն «աղեղի/կապարճի հող/տուն»), մոտ 8-10 հա և առնվազն 4 աշխատող ձեռք (երկու ընտանիք)՝ եթե ծառայում էր հեծելազորում («ձիու հող/տուն»), և 15 և ավելի հա՝ առնվազն 6 աշխատող ձեռքերով (երեք ընտանիք), եթե մարտակառքի տեր էր («մարտակառքի հող/տուն»): Այստեղ պետք է նկատի ունենալ, որ բիայնացի զինվորականը երկրագործական աշխատանքներով չէր զբաղվելու:

Ուրարտական կենտրոններից գտնված սեպագիր աղբյուրներից մի քանիսում հանդիպում ենք տարբեր «երկրներում» կամ «քաղաքներում» այս կամ այն անձին պատկանող «տան» հիշատակումների, ինչպես, օրինակ, É-*iš* $^{m}$*ina”a* $^{KUR}$*iqisa*, $^{m}$*abiliuqu*[*ni*$^{(?)}$..] É-*gi* $^{URU}$*u*[……] ևն[2572]: Կարմիր բլուրի աղյուսակներից մեկում նույնպես հիշատակվում է երկու «ծառաներ»-ի՝ ոմն Խուկայի և Կութուբիլիի «տան» (É-*ni*) մասին, ընդ որում, կարծես թե տեքստում խոսվում է նաև այդ «տան» և Կուդունա «քաղաք»-ի

---

[2567] Wiggermann 2000: 190. Հմմտ. նաև Zorn 1994: 33 (միջինը՝ 4-5.5 մարդ): Ուգարիթում մեկ ընտանիքի անդամների միջին թիվը կազմում է 5.25 մարդ: Տե՛ս Garr 1987: 31ff. Տե՛ս նաև Adams 1981: 144.

[2568] Այս առումով կարող ենք զուգահեռ տանել «տներ»-ի միջև բաշխված NAM.RA խմբի մարդկանց քանակությունների հետ, որ հանդիպում են խեթական տեքստերում՝ 4-8, երբեմն՝ դրա կրկնակին, սակայն, միջինը 10 մարդ յուրաքանչյուր «տան» (տնտեսության) համար: Տե՛ս Klengel 1986: 28ff. Այս նույն թվերին ենք հանդիպում Միջագետքում ամորեական տիրապետության շրջանում: Տե՛ս Козырева 1975: 11.

[2569] Տե՛ս 3.3.2.1.3.

[2570] Drews 1993: 112; Cantrell 2011: 54, n. 81.

[2571] 1 bùr՝ մոտ 6 հա հող մշակելու համար պահանջվում էր նվազագույնը 2-3 հոգու աշխատանք: Տե՛ս Дьяконов 1968в: 17 и прим. 68.

[2572] Համապատասխանաբար տե՛ս КУКН, 431, лиц. стор.$_{3-4}$,; CTU IV, CB Ba-7$_{1-3}$, CT Kb-5 Ro$_{3'-4'}$.

միջև հողերի բաժանման մասին, իսկ երկու պաշտոնյաներ իրականացնելու էին սահմանաբաժանումը սահմանաքարեր (բառացի՝ «կոթողներ») կանգնեցնելով (KI*TIM*.MEŠ : URU*quduna* 2-*ïe* LÚERUM-*ïe* : *quṭuraïe* É-*ni* : *bidi* m*ḫukai* : m*qutubili* …… NA4*pulusinie/li*(?) *’alditu*[*ni*])[2573]: Այս երևույթը շատ է հիշեցնում թե կասսիտական Բաբելոնիան, ուր հաստատված արքայատոհմը կատարում էր հողի վերաբաժանում՝ դրանք ամրագրելով սահմանաքարեր կանգնեցնելով (*kudurru*)[2574], մյուս կողմից, հիշեցնում է Մովսես Խորենացու վկայությունը Արտաշես Ի-ի կողմից գյուղերի և ագարակների հողատարածքները սահմանաքարերով ամրագրելու մասին[2575]: Այստեղ հետաքրքիր է նաև, որ տվյալ կալվածքի՝ «տան» հետ կապված նշվում են միաժամանակ երկու անձնանց անուններ: Սա կարող է նշանակել, որ ինչպես Միջագետքում[2576], այնպես էլ՝ Ուրարտուում, ծառայության դիմաց հատկացվող հողը նախատեսված էր երկու անձի համար, և ցանկացած ժամանակ պետությունը կարող էր նրանցից գոնե մեկին կանչել ծառայության:

Եվ վերջապես այս շարքին հարկ է հավելել հատկապես արքայական ընտանիքի անդամի կամ, համենայն դեպս, արքայական անուն կրող անձին պատկանող «տան» հիշատակությունը Կարմիր բլուրից գտնված կնքադրոշմներից մեկում (*ini* KIŠIB m*r*[*us*]*a*<*i*> m*rusaḫi* É.x)[2577]: Ակնհայտորեն, Ռուսա Ագիշթորդու «տան» մասին է խոսվում Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության մեջ (m*rusainie* É)[2578]:

Կարելի է ենթադրել, որ նման «տներ»-ն են առնչվում տվյալ անձանց ծառայության դիմաց տրված հողատարածքների հետ, որոնք աղբյուրներում կարող են հանդես գալ հենց որպես «տուն» (É/*bītu*)[2579], իմա՝ որպես «կալվածք», «տնտեսություն»՝ այս առումով հիշեցնելով «ագարակ-դաստակերտ»-ը հին Հայաստանում:

Կարելի է կարծել, որ նման «տներ» են եղել «Լուվրի աղյուսակ»-ի հիշատակած այն բնակավայրերը, որոնցում բնակվում էին Ռուսայի եղբայրները և արքայական

---

[2573] КУКН, 428$_{5\text{-}12}$; CTU IV, CT Kb-1 Ro$_{5\text{-}12}$. Տեքստի մեկնաբանության համար տե՛ս և հմմտ. Հարությունյան 1958, էջ 201-213; Կարագյոզյան 1960, էջ 85:

[2574] Brinkman 1980-1983: 267ff.

[2575] Մովսէս Խորենացի, Պատմութիին Հայոց, Գիրք Բ, Գլուխ ԾՋ: Տեղին է հիշել նաև Պատմահոր մեկ այլ վկայություն՝ կապված Շամիրամի գործունեության հետ. «*Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր*» (Մովսէս Խորենացի, Պատմութիին Հայոց, Գիրք Ա, Գլուխ ԺՋ):

[2576] Greengus 1995: 476.

[2577] CTU IV, Sig. 19-1. Տե՛ս նաև CTU IV, Sig. 19-2, 21-1. Հմմտ., սակայն, КУКН, 445, ուր մեզ հետաքրքրող հատվածում առաջարկվում է այլ ընթերցում (m*rusaḫi* É.G[AL(?)-*ni*?]): Հմմտ. նաև Пиотровский 1959б: 172.

[2578] CTU I, A 12-1 IV$_{11}$.

[2579] Հին առաջավորասիական զուգահեռների համար տե՛ս և հմմտ. Дьяконов 1949: 24; Gelb 1972: 90ff.; Klengel 1986: 23ff.; Renger 1994: 170; Postgate 2007b: 356; Richardson 2011: 25.

ընտանիքի այլ անդամներ՝ թվով 7 բնակավայր, ի լրումն Ռուսայի «հայրական տուն» համարվող Արբու (…$^{URU}$*Arbu* URU É AD-*šú ša* $^{m}$*Ursa*) և «Սարդուրիի տուն» Ռիյար «քաղաքներ»-ի ($^{URU}$*Ri''ar* URU-*šú ša* $^{md}$XV-*dure*$_{8}$)[2580]:

Ճիշտ այդպիսի «տներ» կարելի է համարել Դանալուում[2581], Շերաղայե Ամիրում[2582], Ալլահվերդիքենդում[2583], Թորքի-թափայում[2584], Քյաֆիր-Կալ'եհում[2585] և Կալ'եհ Քամանայում[2586] բացված «դղյակ»-ամրոցները[2587]: Դրանցից մեկը՝ Կալ'եհ Քամանան (Ք.ա. 8-րդ դ.), իրենից ներկայացնում էր մոտ 1.5 հա (150 × 105 մ) զբաղեցնող փոքր բնակավայր՝ բիայնական դղյակ-ամրոցի կամ «դաստակերտ»-ի շուրջը՝ նրա անմիջական մերձավորությամբ սփռված ընդամենը չորս կամ հինգ բնակելի համալիրներով[2588]: Ունեցել է մինչև 50 բնակիչ: Բուն դղյակ-ամրոցը զբաղեցնում է մոտ 1500 մ$^2$ տարածք (51 × 31 մ), եղել է առնվազն երկհարկանի կառույց[2589]: Պահպանված առաջին հարկի պատերը տարածքը բաժանել են 12 սենյակների, որոնցից երկուսը, թերևս, եղել են մառաններ (նկ. Գ-6/2): Դաստակերտը կարող էր պատկանել բարձրաստիճան պաշտոնյայի/զինվորականի կամ «մարի(նի)»-ի, ով, այս դեպքում, կարող էր հանդիսանալ մարտակառքի տեր, ըստ այդմ, տիրելով «մարտակառքի հողի/տան»: Դաստակերտի շուրջը բացված բնակելի համալիրները կարող էին պատկանել սոցիալական այն խմբին, որը հինարևելյան աղբյուրներում հանդես է գալիս որպես «մարյանուի եղբայր»: Վերջիններս, թերևս, տիրել են «ձիու հողի/տան»:

Հետևաբար, այստեղ խոսքը վերաբերում է մի կալվածքի, որի տարածքը կազմելու էր առնվազն 50 հա և որին տիրողը պարտավոր էր լինելու պետությանը տրամադրել առնվազն 5-7 զինվոր՝ 1 մարտակառք և 4-5 հեծյալ: Եվ սա այն դեպքում, եթե ենթադրենք, որ ամրոցում բնակվել է մեկ «մարի(նի)» իր ընտանիքով: Եթե հաշվի առնենք ամրոցի մակերեսը՝ շուրջ 1500 մ$^2$ , և որ այն եղել է առնվազն երկհարկ, ապա միանգամայն տեղին է մտածել, որ այստեղ կարող էին հանգրվանել մի քանի

[2580] Mayer 1983: 96f. (Z. 277-278).
[2581] Kleiss 1975: 62, Abb. 12.
[2582] Kleiss, Kroll 1977: 59ff., Abb. 10.
[2583] Kleiss, Kroll 1977: 61.
[2584] Kleiss, Kroll 1977: 64, Abb. 13.
[2585] Kleiss 1968: 31f., Abb. 21; Kleiss, Kroll 1978: 28ff., Abb. 2-4; Kleiss, Hauptmann 1976: 30 (Nr. 31); Kroll 1976: 81f.
[2586] Kleiss, Kroll 1978: 48ff., Abb. 24-26, Taf. 6/3, 7/1-3, 8/1-2.
[2587] Այստեղ տեղին է հիշել Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության այն հատվածը, որտեղ հիշատակվում են «փոքր քաղաք(ներ)»՝ URU.TUR (տե՛ս CTU I, A 12-1 V$_{1-3}$): Դրանց տակ, մի գուցե, պետք է նկատի ունենալ վերը նշված «դղյակ»-ամրոցները:
[2588] Kleiss, Kroll 1978: 51.
[2589] Kleiss, Kroll 1978: 48ff., Abb. 24-26.

«մարի(նի)ներ»-ի ընտանիքներ: Այս դեպքում, ներկայացված թվերը կարելի է անգամ եռապատկել[2590]:

Հնագիտական նույն իրավիճակն է նաև Օշականում, որի ամրոցն ու նրանից ոչ հեռու բացված «պալատական» տիպի չորս համալիրները կարելի է համադրել Կալ'եհ Քամանայում մեր ունեցած պատկերի հետ[2591]: Համանման պատկեր ենք մենք տեսնում միտաննական և դրան հետևած միջինասորեստանյան դարաշրջանում: Այսպես, Նեմրիկի միտաննական դարաշրջանի *dimtu*-ն իրենից ներկայացնում էր 4-5 տներից կազմված համալիր, որոնցից մեկը կարող էր լինել երկհարկ և հիշեցներ աշտարակ (նկ. Գ-7/1)[2592]: Մեկ այլ *dimtu* էր Թելլ Սաբի Աբյադը, որի՝ միտաննական շրջանի համալիրը նույնպես ներկայացնում էր երկհարկ աշտարակավոր կառույց (նկ. Գ-7/2)[2593]:

Ի դեպ, ուրարտական դաստակերտները, ինչպես այդ նույն միտաննական *dimtu*-ն կամ միջինասորեստանյան *dunnu*-ն, կարող էին ծառայել որպես բիայնական տնտեսական համակարգի ենթակենտրոններ, ուր տեղում ամբարվում էր բերքի որոշակի քանակություն: Միգուցե, այս տեսանկյունից կարելի է դիտարկել նաև Արգիշթիխինիլիի «բիայնական վերնախավ»-ի տները, որոնցում առկա էին ամբարներ և/կամ մառաններ՝ 3-20 խոշոր կարասներով՝ մինչև 12-13 հազ. լ տարողությամբ[2594]: Հնարավոր է՝ որպես ամբար է ծառայել Դուչգագիում բացված՝ 19 × 12.5 մ չափեր ունեցող ուղղանկյունաձև շինությունը[2595]:

Պետությունից հող ստացած զինվորականը, եթե այն խոպան հող էր, մի գուցե, ստանում էր նաև աշխատանքային միջոցներ, սերմացու, լծկան կենդանիներ, գուցե նաև, սկզբնապես, օրապահիկ և կենդանիների համար անասնակեր: Հետաքրքիր է, որ Կարմիր բլուրից գտնված տեքստերից մեկում նշվում է, որ զինվորին տրվել է ձի, ցորեն(՞) (ZÍZ(՞)[2596]), 6 ցուլ, խաղողի այգի(՞) (*ulda*(՞))[2597] և, միաժամանակ, ոչ հստակ ընթերցվող հատվածում հիշատակվում է ինչ-որ «քաղաք»[2598]: Վերջինս կարող էր լինել

---

[2590] Հմմտ., օրինակ, Ալալախից հայտնաբերված տեքստերից մեկը, որում անվանապես հիշատակվող կոնկրետ քաղաքում թվարկում են 3 «մարյանու» և 4 «էխելենա» խավի մարդիկ, ինչպես նաև 20 զինվորներ: Տե՛ս Casana 2009: 27. Ալալախից հայտնաբերված մեկ այլ տեքստում հիշատակվում են արդեն 15 «մարյանու»-ներ Թիլիշե «քաղաք»-ում: Տե՛ս Гельцер 1956: 33, прим. 6, ուր և տե՛ս «մարյանուների ստրուկներ/ծառաներ»-ի մասին (ardē(meš) marianni):

[2591] Есаян 1985: 112 сл., Рис. 1.

[2592] Reiche 2014: 52ff., Fig. 6.

[2593] Akkermans *et al.* 1993: 13ff., Figs. 5-7. Երկհարկ «աշտարակ»-տան միջագետքյան զուգահեռների համար տե՛ս և հմմտ. Джандиери 1981: 123 сл.

[2594] Հմմտ. Wartke 1993: 82f.

[2595] Kleiss, Kroll 1978: 41, Abb. 14.

[2596] Ընթերցումն ըստ Дьяконов 1963a: 32 сл., 49. Հմմտ. КУКН: 363, прим. 9.

[2597] Ընթերցումն ըստ Дьяконов 1963a: 49 и прим. 30; КУКН: 363, прим. 11.

[2598] КУКН, 529, лиц. стор.$_{7\text{-}12}$; CTU IV, CT Kb-2 Ro$_{7\text{-}12}$.

այն համայնքը կամ «գյուղ»-ը, որը ապահովելու էր տվյալ «մարի(նի)»-ի և նրա ընտանիքի հողատարածքի մշակումը:

Ի դեպ, քանի որ տեքստում հիշատակվում են 6 ցլեր, իսկ մեկ զույգ ցուլը ցանքսի շրջանում վարում էր ոչ ավելի, քան 15 հա հող[2599], ապա կարելի է կարծել, որ գործ ունենք 40-50 հա ընդգրկող հողատարածքի հետ, մի թիվ, որը բավականին լավ է համապատասխանում Կալ'եհ Քամանայի «մարի(նի)»-ի և նրա «եղբայրներ/որդիներ»-ի հողատարածքների մասին վերհանված պատկերացումների հետ:

Ասորեստանում մեր ունեցած զուգահեռներն այն կալվածքներն էին, որոնք սեպագիր տեքստերում հիշատակվում են որպես É/URU*dunnu*՝ միջինասորեստանյան[2600], և URU.ŠE/*kapru*՝ նորասորեստանյան դարաշրջաններում[2601], այն է՝ ամրացված ագարակներ/ապարանքներ՝ տասնյակ և հարյուրավոր հա կազմող հողատարածքներով[2602]: Նման կալվածքի նախատիպը *dimtu*-ն էր Միտաննիում, որը վերաբերում էր թե (ամրացված) ագարակին, և թե նրա երկրագործական շրջանին[2603]: Պատահական չէ, որ որոշ *dimtu*-ներում բնակվող մարդկանց թիվը հասնում էր մինչև 200 մարդու[2604]: Մոտ 900 մարդու էր հասնում միջինասորեստանյան Թելլ Սաբի Աբյադի *dunnu*-կալվածքի հետ կապված բնակչության թիվը[2605]: Միջագետքում այդ համալիրները (աքք. *dimtu*, շում. an.zag.gàr, բառացի՝ «աշտարակ, ամրություն») ի հայտ են գալիս դեռևս ամորեական տիրապետության շրջանում, ինչպես, օրինակ, Լարսայում էր[2606]: Այս նույն մոդելը կարելի է տեսնել ուրարտական խոշոր կենտրոնների պարագայում, պարզապես՝ շատ ավելի մեծ էին մասշտաբները:

Մենք որևէ տվյալ չունենք պալատի բարձրաստիճան սպասավորներին և պաշտոնյաներին տրված հողերի մասին, ընդ որում, դժվար է միանշանակ ասել՝ արդյո՞ք նրանք ստացել են նման հողատարածքներ ընդհանրապես, թե նրանց ապրուստը հոգացել է պետությունն ինքը՝ պետական պահոցների հաշվին: Թերևս՝ թե մեկը, և թե մյուսը:

Այն, որ նման պաշտոնյաները ծառայության դիմաց պետությունից ստացել են ապրուստի միջոցներ և տարբեր վճարումներ, վկայում են նաև ուրարտական

[2599] Wiggermann 2000: 189f.
[2600] Biagov 1974: 333ff.; Wiggermann 2000: 172ff.; Fales 2014: 230ff.
[2601] Fales 1990b: 102ff.
[2602] Բալիխի հովտում ընկած միջինասորեստանյան շրջանի *dunnu*-ներից մեկի՝ Թելլ Սաբի Աբյադի երկրագործական գոտին կազմելու էր 2 հազ. հա-ից ավելի: Տե՛ս Wiggerman 2000: 179ff.
[2603] Մանրամասն տե՛ս Koliński 2001. Հմմտ. Янковская 1959: 47 сл.; Jankowska 1986: 33ff.
[2604] Jankowska 1969c: 243f.
[2605] Wiggermann 2000: 184ff.
[2606] Козырева 1975: 5. Միաժամանակ տե՛ս և հմմտ. Дьяконов 1968б: 7 сл. и прим 19.

կենտրոններից հայտնաբերված արքունի դիվանի նյութերը: Ըստ երևույթին այդ մասին է հայտնում Թոփրաքքալեից գտնված, բայց, ցավոք, խիստ պակասավոր տեքստի բեկորը, ուր ինչ-ինչ թվերի հետ հիշատակվում են «ազնվականներ»՝ $^{\text{LÚ}(\text{ʾ})}$*mariḫi*[2607]: Նման վճար հատկացնելու մասին հայտնող Բաստամի՝ խիստ պակասավոր աղյուսակներից մեկում նշված անձնանցից մեկը, հետաքրքիր է, կրում էր Մենուա(ʾ) անունը ($^{\text{m}}$*mì-nu-x*[...])[2608]: Արքայական անուններ կրող առանձին անհատների տրված վճարումների մասին են վկայում Այանցից հայտնաբերված արձանագրված բուլլաները: Դրանցից մեկը , օրինակ, հայտնում է Ռուսախինիլի Էիդուրուկայի քաղաքում բնակվող ոմն Սարդուրիի ստացած գարու մասին՝ իր ձիու համար[2609]: Այս ամենը կարող է լրացուցիչ փաստարկ ծառայել նշելու համար պետության կողմից ուրարտական վերնախավի անդամներին օրապահիկ հատկացնելու և տարբեր մասհանումների մասին:

Մյուս կողմից, դա ամենևին չի բացառում, որ բարձրաստիճան պաշտոնյաներին ևս կարող էին տրվել հողատարածքներ տիրապետության նույն սկզբունքով, միաժամանակ, շարունակելով պետությունից ստանալ օրապահիկ և այլ վճարումներ:

3.3.1.7. **Համայնքային հողատիրությունը**

Հողատիրության մյուս ձևն Ուրարտուում համայնականն էր: Համայնական հողատիրությանը, ինչպես կարծում ենք, բիայնական իշխանությունները ցուցաբերել են տարբերակված մոտեցում, որը կարող էր դրսևորվել նպատակային վերաբնակեցման ենթարկված համայնքների դեպքում: Վերաբնակեցված համայնքը, պետությունից ստանալով հողատարածք, կենտրոնական իշխանության հանդեպ ստանձնում էր որոշակի պարտավորություններ՝ փոխարենը պահպանելով համայնքային ինքնակառավարումը և, կարծում ենք, իրավունք ունենալով վարելու սեփական տնտեսություն: Վերաբնակեցված համայֆքը շատ ավելի մոտ էր կանգնած իշխանություններին, քան նվաճված/տեղական բնակչությունը, այս առումով ինչ-որ տեղ հիշեցնելով «պերիօյկոսներ»-ի խավը հին Սպարտայում: Միգուցե, կարելի է խոսել նաև այս երևույթի փաստական վկայության մասին, երբ մի քանի դեպքերում որպես հարկատու (ʾ) հանդես է գալիս «էթնիկ» բնորոշմամբ առանձնացված ինչ-որ համայնք:

[2607] КУКН, 449; CTU IV, CT Tk-3. Համենայն դեպս, ուգարիթյան տեքստերից դատելով «մարյաններ»-ը, բացի իրենց ժամանակավոր տիրապետությանը հանձնված հողատարածքից ստացվող միջոցների, պետությունից ստացել են նաև վճարումներ արծաթով և մթերքով, այդ թվում՝ հատկապես գինի: Տե՛ս Гельцер 1969: 26 сл.
[2608] CTU IV, CT Ba-$4_2$.
[2609] CTU IV, CT Ay-$16_1$.

Մասնավորապես, խոսքը «նունիբախալցիներ»-ի ($^{KUR}$*nunibaḫali*) մասին է, ովքեր երկու անգամ հիշատակվում են Բաստամի բուլլաների արձանագրություններում[2610]:

Թվում է, Ուրարտուում համայնական հողատիրության համար ունենք նաև ասորեստանյան աղբյուրի վկայություն: «Լուվրի աղյուսակ»-ում հանդիպող և երկրագործական տարածք մատնանշող տերմիններից է *qarbatu*-ն: Վերջինս հանդիպում է ընդամենը մեկ անգամ՝ «ոռոգովի դաշտ» նշանակությամբ: Ինչպես ենթադրել ենք մեր մի հոդվածում, այս տերմինը կարող է արտահայտել ոչ միայն երկրագործական տվյալ տարածքի բնույթը՝ ոռոգվող, այլև՝ այդ տարածքի համայնական պատկանելությունը[2611]: Պատահական չէ, որ ասորեստանցի գրիչը այս կոնտեքտում է հիշատակում 300 *imērū* հողերի յուրացման կամ 300 *ṁērū* բերք ստանալու և մարդկանց կողմից երգվող ուրախ «ալալուներ»-ի մասին[2612]: Իսկ *alalu*-ն բերքահավաքին նվիրված աշխատանքային երգ էր[2613], որ երգում էին համայնականները կամ «երկրի մարդիկ» (*nišē māti*): Այս վերջին տերմինը նշանակում է «(երկրագործ) բնակչություն», մարդիկ, որոնք ունեցել են հողաբաժիններ[2614]:

Երկրորդ՝ շատ ավելի մեծաթիվ խումբը կազմում էին այն հողատարածքները, որոնք գտնվում էին բիայնական գերիշխանությանը ենթակա, բայց ուղղակի կառավարման տակ չգտնվող տարբեր «երկրներ»-ի տարածքում: Այդ հողերը պետական տնտեսական տարածքի մաս չէին կազմում: Համենայն դեպս, մենք փաստեր չունենք ենթադրելու, որ բիայնացիները փորձել են նման տարածքներում ներդնել այն նույն հողային հարաբերությունները, ինչը ենթադրում ենք ուրարտական պետական տնտեսական տարածքի համար:

### 3.3.2. Էտատիզմ

#### 3.3.2.1. **Պետական պահուստները**

##### 3.3.2.1.1. **Շտեմարանները**

Ուրարտական տերության գերկենտրոնացված տնտեսությունը, որը, թերևս, կարելի է անվանել «էտատիզմ»[2615] կամ Բենջամեն Ֆոսթերի բնորոշմամբ՝ «պետական սոցիալիզմ»[2616], ենթադրում էր տնտեսական մի ամբողջ ցիկլ՝ սկսած նյութական միջոցների արտադրությունից մինչև պահեստավորում, վերաբաշխում և սպառում:

[2610] CTU IV, CT Ba-4, Ba-5.
[2611] Գրեկյան 2002բ, էջ 221-224:
[2612] Mayer 1983: 88f. (Z. 207-208).
[2613] Дьяконов 1951a, № 49, прим. 51; CAD, A I, 1964: 328f. (alala).
[2614] Տե՛ս և հմմտ. Амусин 1955: 14 сл.
[2615] Բնութագրման համար տե՛ս Jones 2001: 1475ff. (statism).
[2616] Foster 1977: 31.

Պետական մատակարարումների հաշվին պահվող արքունիքի, մարզերի պաշտոնեության և զինվորականության սնունդը հոգալու համար կենտրոնական իշխանությունները կառուցում էին խոշոր շտեմարաններ: Դրանք կոչվում էին *ʾari*[2617] և գտնվում էին ինչպես ամրոցների ներսում՝ կայազորի հսկողության տակ, այնպես էլ՝ երկրագործական տարածքների մերձավորությամբ, թերևս, որպես ամրացված կետ, ինչպիսիք էին միջինասորեստանյան տեքստերից հայտնի «քաղաք-շտեմարաններ»-ը (URU.É*karme*)[2618]: «Լուվրի աղյուսակ»-ը, նկարագրելով ուրարտական տարածքներով ասո-րեստանյան բանակի անցումը, հիշատակում է Թարուի և Թարմաքիսա «քաղաքներ»-ը, որոնց մերձավորությամբ գտնվել է «*նրա* (Ռուսայի) *մեծաքանակ գարու փունը*» (É ŠE.PAD.MEŠ-*šú*)[2619]: Այնուհետև աղբյուրը տարբեր դրվագներում մի քանի անգամ նշում է ամբարված «անհաշիվ քանակությամբ» գարով զորքը կերակրելու մասին[2620]:

Նման շտեմարանների տարողությունը կարող էր հասնել մինչև 30.000 *kapi*-ի[2621], այն է՝ մոտ 750 հազ. լ: Շտեմարանների կառուցման մասին մինչ օրս հայտնի են չորս արքաների թողած 37 արձանագրություն՝ 414 հազ. 98 *kapi* ընդհանուր տարողությամբ (տե՛ս Աղ. 27):

Նշված 37 արձանագրություններից 11-ը գտնվել են Էրեբունիից, որի շտեմարանների տարողությունը հասնում էր 106 հազ. 748 *kapi*-ի[2622]: Նման խոշոր շտեմարանների առկայությունը Էրեբունիում (պահպանված տվյալներով՝ տարողությունների 1/4-ից ավելին) պայմանավորված էր այն հանգամանքով, որ ամրոցը ուրարտական տերության գլխավոր ռազմական հանգրվանն էր Արարատյան դաշտավայրում, թերևս՝ հանդիսանում էր զորքերի կենտրոնացման վայր և ծառայում էր որպես հենարան արքաների հետագա արշավանքների համար[2623]: Մեկ *kapi* = 25 լ հաշվարկի դեպքում (տե՛ս ստորև 3.3.3.2.) ամրոցում ամբարված հացահատիկի քանակությունը կկազմի ավելի քան 2668.7 հազ. լ:

---

[2617] Меликишвили 1951a: 25 сл.; նույնի՝ 1953: 25 сл.

[2618] Llop 2010: 108. Հմմտ. նաև Wiggermann 2000: 195.

[2619] Mayer 1983: 86f. (Z. 189).

[2620] Mayer 1983: 88f. (Z. 197); ևն:

[2621] КУКН, $182_{5-6}$; CTU I, A $8\text{-}29_{5-6}$, A $8\text{-}32_{5-6}$.

[2622] Մանրամասն տե՛ս Демская 1968: 176ff.: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ հիշյալ տեքստերի մի մասը կարող են լինել կրկնօրինակներ և վերաբերեն միևնույն շինությանը, ինչը, կարծում ենք, այնուամենայնիվ քիչէ հավանական շտեմարանների համար: Համենայն դեպս, արձանագրություններից ոչ մեը չի գտնվել *in situ*: Տե՛ս Ходжаш *и др*. 1979: 16.

[2623] Арутюнян 1970: 210 сл.

Թվով ինը արձանագրություն է հայտնի Սարդուրիխինիլի/Հայկաբերդից՝ 90 հազ. 632 *kapi* ընդհանուր տարողությամբ կամ 2265.8 հազ. լ[2624]: Այստեղ հնագիտորեն վկայված են հացահատիկի առնվազն երեք շտեմարաններ[2625]: Կարմիր բլուրում ամբարված պաշարները, հնարավոր է, կազմել են մոտ 1500 տ[2626], այն է՝ 2310 հազ. լ[2627]: Պաշարների կեսը՝ մոտ 750 տ, պահվել է միջնաբերդում (նկ. Գ-8/1-2): Այստեղից պեղումների ընթացքում միայն երկու ամբարներից գտնված հացահատիկի քանակը հասնում էր մոտ 20 հազ. լ-ի[2628]: Արգիշթիխինիլիում բացված հացահատիկի շտեմարաններից մեկը զբաղեցնում էր 250 մ$^2$ մակերես, մնացյալ 6 շտեմարանների ընդհանուր մակերեսը կազմում էր 400 մ$^2$, որոնք բոլորը միասին կարող էին տեղավորել մոտ 2300 տոննա հացահատիկ: Ենթադրվում է, որ ընդհանուր առմամբ Արգիշթիխինիլիում կարող էր կուտակվել մոտ 5 հազ. տ[2629] կամ 7700 հազ. լ հացահատիկի պաշար: Այանցում բացված սենյակներից մեկի հատակը ծածկված էր 8-15 սմ հաստությամբ այրված հացահատիկի շերտով, ինչը վկայում է, որ այն շտեմարան է եղել[2630]: Այդ շտեմարանը կարող էր ամբարել մոտ 148 հազ. լ հացահատիկ (նկ. Գ-8/4)[2631]:

Ք.ա. 7-րդ դ-ի առաջին կեսին, ենթադրելով, որ մեզ հասած գրավոր աղբյուրներում վկայված բոլոր շտեմարանները շարունակվել են օգտագործվել, ապա դրանցում պահվող հացահատիկի քանակությունը կկազմեր 414 հազ. 98 *kapi* կամ 10 մլն. 352 հազ. 450 լ: Այստեղ նշենք նաև, որ ուրարտական տեքստերում *kapi*-ներով արտահայտված գարու առավելագույն թիվը հասնում էր 1022 հազ. 133-ի[2632] կամ 25 մլն. 553 հազ. 325 լ-ի:

Ուշ-ուրարտական շրջանում սկսում են հացահատիկ ամբարել նաև գինու մառաններում՝ կարասների մեջ, կարասներն արձանագրելով երկրորդ, երբեմն՝ նաև երրորդ անգամ, երբ հաշվվում էր արդեն մթերքի ոչ թե ծավալը, այլ դրա տեսակարար կշիռը, այսինքն, երբ սկսում են կարասներում պահել սորուն մարմիններ[2633]: Հնագիտական վկայությունները ևս փաստում են, որ կարասներում ինչ-որ մի շրջանից

---

[2624] Հմմտ. Erdem 2011a: 85.

[2625] Հայկաբերդի շտեմարանների տարողության համար տես և հմմտ. Salvini, Mileto 2010: 364ff.

[2626] Եսայան 1982, էջ 29:

[2627] Հաշվարկների համար որպես հիմք ենք վերցրել գարու 1լ : 0.650 գ միջին հարաբերակցությունը (Варданян, Асатрян 1980: 175), ըստ այդմ, 1 կգ-ը հավասար է լինում 1.54 լ գարու ծավալին:

[2628] Пиотровский 1950: 53.

[2629] Мартиросян 1972: 51; նույնի՝ 1974: 138.

[2630] Erdem 2011a: 86, Fig. 3; Çilingiroğlu, Batmaz 2014: 185ff. Տե՛ս նաև Batmaz 2014: 132ff.

[2631] Erdem 2011a: 86.

[2632] Համապատասխանաբար՝ КУКН, 182$_{5-6}$; 241G$_{10}$; CTU I, A 8-29$_{5-6}$, A 8-32$_{5-6}$, A 9-3 VII$_{10}$.

[2633] Այս նույն երևույթը՝ պետական պահուստները ամբարելու խոշոր կարասներում՝ արձանագրելով դրանց տարողությունը, վկայված է նաև Միջագետքում Ուրի III հարստության շրջանում: Տե՛ս Gelb 1982: 585ff., Fig. 2.

սկսած պահել են այլ մթերքներ, գերազանցապես՝ հացահատիկ: Հացահատիկ է հայտնաբերվել, օրինակ, Կարմիր բլուրի մառանների կարասներում[2634]: Այանցի ամրոցի կարասներում նույնպես պահվել է ցորեն, ինչպես նաև գարի և կորեկ[2635]: Հացահատիկ է հայտնաբերվել Քայալըդերեի[2636], Չավուշթեփեի[2637], Բաստամի գինու մառաններից[2638] և այլն: Այս երևույթը՝ հացահատիկ ամբարելու նաև մառաններում, միանգամայն այլ գործընթացների արդյունք էր, ինչին անդրադարձել ենք մեր հոդվածներում[2639]:

3.3.2.1.2. **Մառանները**

Ուրարտական ամրոցներում ընդարձակ տարածքներ էին հատկացվում մառաններ կառուցելու համար, ուր, դեռևս ամրոցի կառուցմանը զուգընթաց, տեղավորում էին խոշոր կարասները (*pithoi*)[2640]: Ենթադրվում է, որ նման մառանները կոչվում էին *gi(e)*[2641], որպես զուգահեռ ունենալով խուրր. *kê*-ն՝ «տարողություն», «պահեստ» նշանակությամբ[2642]: Այստեղ, սակայն, կարծիքները տարբեր են[2643]: Մենուա Արգիշթորդու կողմից թողնված միայն մեկ արձանագրություն է վկայում նման կառույց կառուցելու մասին՝ 900 *aqarqi*, այն է՝ 213 հազ. 300 լ տարողությամբ[2644]: Ուրարտական գինու մառաններ հիշատակում է նաև «Լուվրի աղյուսակ»-ը (տեքստում՝ É GEŠTIN.MEŠ-*šú ša nişirte* «նրա թաքցված գինու տունը»)[2645]:

Նման մառաններ են պեղվել ուրարտական 16 հուշարձաններում՝ Կարմիր բլուր[2646], Ս.Դավթի-բլուր[2647], Այանց[2648], Վերին Անծավ[2649], Հայկաբերդ[2650], Քեֆ-

[2634] Пиотровский 1952: 19-20, 34 сл.
[2635] Çilingiroğlu 2001a: 71ff; նույնի՝ 2003: 202; Kozbe *et al.* 2001: 102.
[2636] Burney 1998: 159.
[2637] Erzen 1976: 47.
[2638] Kleiss 1970b: 37.
[2639] Գրեկյան 2013ա, էջ 64-82; Grekyan 2009: 98ff.
[2640] Դասաբյան 1959ա, էջ 211-220:
[2641] Меликишвили 1951a: 26; նույնի՝ 1953: 26.
[2642] Diakonoff 1971: 49, 76; Хачикян 1985: 46.
[2643] Հմմտ. Friedrich 1961: 512 («ջրհոր»): Տե՛ս նաև Salvini 2001b: 144; Dan 2010c: 80, ըստ որոնց, արձանագրությունը կարող էր վերաբերել Բոսթանքայա ամրոցի (որտեղից հայտնաբերվել էր արձանագրությունը) ժայռափոր ջրամբարի տարողությանը:
[2644] КУКН, 99; CTU I, A 5-67.
[2645] Mayer 1983: 90f. (Z. 220).
[2646] Пиотровский 1950: сл., նույնի՝ 1959a: 145 сл.; նույնի՝ 1970, рис. 9-14; Piotrovskij 1956: 81f.
[2647] Martirosyan 1974: 81, fig. 50b; Ղաֆադարյան 1984, էջ 73-74, Գծ. 21, 23, նկ. 14:
[2648] Çilingiroğlu 1992 [1993]: 434ff.; նույնի՝ 2001a: 68ff., Figs. 1-9; նույնի՝ 2012a: 12ff.; Çilingiroğlu *et al.* 2002: 291, Çiz. 3; նույնի՝ 2011b: 535f., Çilingiroğlu, Erdem 2007: 125f., Res. 3-4; Salvini 2001: 309ff.; Erdem 2011a: 84ff., Fig. 2.
[2649] Belli 2002a: 277ff., Çiz. 2, Res. 1-6; նույնի՝ 2007a: 419f., Res. 3-5; նույնի՝ 2008a: 176ff., Çiz. 2-4, Res. 1-4; Belli, Ceylan 2001: 390f., Çiz. 8, Res. 4-6; Belli, Salvini 2003: 141ff., Fig. 3; Belli, Salvini 2006: 55ff.
[2650] Erzen 1976a: 46f., Res. 3; նույնի՝ 1978: 11, Lev IX/a; նույնի՝ 1980a [1981]: 39f., Res. 1-2.

քալեսի[2651], Բաստամ[2652], Թոփրաքքալե[2653], Քայալըդերե[2654], Ալթըն-թեփե[2655], Նորշունթեփե[2656], Յոնջաթեփե[2657], Արին-բերդ[2658], Գետափ[2659], Արագած[2660]: Մառանի գոյության վկայություններ կան նաև Տուշպայից[2661]: Մառաններ են ունեցել, սակայն, չեն պահպանվել մոտ քսան այլ ամրոցներում, որտեղից հայտնի են միայն խոշոր կարասների բեկորները: Դրանց թվում են Շուշանց/Քևենլին[2662], Ազնավուրթեփեն[2663], Քալեօենուն[2664], Զորավանցը (Քավունջու)[2665], Ոստանը[2666], Դատվանը[2667], Գործոթը[2668], Աշոտակերտը (Յեշիլալըչ I)[2669], Ջերմուկը (Չերմիք)[2670], Օղլանկալան[2671], Սանգարը[2672], Վերախրամը[2673], Լիվարը[2674], Կալաթգահը[2675], Սեկինդելը[2676], Կուի-է Զամբիլը[2677], Հոռոմը[2678], Առվույտի դաշտը[2679], Ծովինարը[2680], Ծովակը[2681]:

Կարմիր բլուրի մառաններում պահվել է 400-ից ավելի խոշոր կարաս, որոնց տարողությունը կազմել է ավելի քան 400 հազ. լիտր (նկ. Գ-9/1-2)[2682]: Արգիշթիխինիլիի միայն մեկ մառանում գտնվել է 68 խոշոր կարաս[2683]: Ամրոցի գինու մառանների

---

[2651] Bilgiç, Öğün 1964: 67ff., Lev. III/b, Lev. V/a-b, 102, Res. 2; նույնի՝ 1964 [1966]: 67ff., Lev. IV/b, V/a-b; նույնի՝ 1965a [1967]: 3ff., Lev. I, III; նույնի՝ 1965b [1967]: 120, Lev. II.

[2652] Kleiss 1970b: 36f., Abb. 20; նույնի՝ 1972a: 30f., Abb. 23; նույնի՝ 1979a: 77ff., Abb. 86; Kroll 1970: 71f., Taf. 11/1, 23/1-2; նույնի՝ 1972: 73; նույնի՝ 1979: 224ff.; idem. 1988: 166ff.

[2653] Lehman-Haupt 1907: 110ff., Fig. 85; Barnett 1950: 24; Erzen *et al*. 1960 [1961]: 13ff.

[2654] Burney 1966: 83ff., Fig. 13-16, Pl. 12, 14, 15/a; Lloyd, Burney 1965 [1967]: 218.

[2655] Özgüç 1961: 266f.; նույնի՝ 1963 [1964]: 48 / 56, Pl. XV/1; նույնի՝ 1969: 75ff.; Karaosmanoğlu *et al*. 2012: 304ff.

[2656] Hauptmann 1969/1970: 64ff., Abb. 20; նույնի՝ 1971: 77f./87sqq.; Lev./Taf. 61/1.

[2657] Belli 2002b: 266, Res. 1-3.

[2658] Оганесян 1960: 291, рис. 5; նույնի՝ 1980: 56, рис. 35, 50; Grekyan 2010b: 130.

[2659] Melkonyan *et al*. 2010: 95, Tab. XXII/2.

[2660] Ավետիսյան 2001, էջ 60-61; Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, էջ 116:

[2661] Tarhan 1988: 375; նույնի՝ 1994: 35.

[2662] Belli 1984: 165, Fig. 8; Belli, Salvini 2004: 163; CTU IV: 244.

[2663] Balkan 1964: 239.

[2664] Sevin 1989b: 459.

[2665] Dan 2010c: 59.

[2666] Çevik 2005: 87.

[2667] Dan 2010c: 64.

[2668] Dan 2010c: 65.

[2669] Sevin, Belli 1976-1977: 376f. (Lev. 3, 8/1-2); Dan 2010c: 68.

[2670] Erzen A. 1970 [1972]: 108; Dan 2008: 90, Fig. 2.

[2671] Ristvet *et al.* 2012a: 344f., Fig. 18.

[2672] Kleiss 1968: 5; Kroll 1976: 25.

[2673] Kroll 1976: 30.

[2674] Kroll 1976: 63; Kleiss, Kroll 1977: 88.

[2675] Kroll 1976: 94.

[2676] Kleiss, Kroll 1980: 54.

[2677] Kleiss 1975: 52.

[2678] Badaljan *et al*. 1997: 209f., Abb. 30; Kohl, Kroll 1999: 253f.

[2679] Biscione, Parmegiani 2003: 316.

[2680] Hmayakyan 2002: 287, Pl. 16/7.

[2681] Hmayakyan 2002: 283, 287.

[2682] Пиотровский 1962б: 40 сл.; Եսայան 1982, էջ 15-16: Ամրոցից հայտնաբերված խոշոր կարասների ճշգրիտ թիվը հայտնի չէ: Առավելագույնը նշվում է 500 կարասների մասին: Տե՛ս Мартиросян 1961: 99.

[2683] Мартиросян 1967: 228.

տարողությունը, նվազագույն հաշվումներով, հասել է մոտ 300 հազ. լ-ի[2684]: Սարդուրիխինիլիի պեղումներից գտնված խոշոր կարասների թիվն անցնում էր 100-ից՝ շուրջ 100-120 հազ. լ տարողությամբ (նկ. Գ-10/1)[2685]: Բաստամի ամենախոշոր մառանը պարունակում էր մինչև 78 տարբեր մեծության կարաս[2686], որոնց թվում կային մինչև 6 *aqarqi* 6 *ţerusi* տարողությամբ անոթներ[2687], իսկ ամրոցի մառանների ընդհանուր տարողությունը գնահատվում է մինչև 350 հազ. լ (նկ. Գ-10/2)[2688]: 25 կարասներ են հայտնաբերվել Քայալըդերեից (նկ. Գ-11/1-2)[2689]: Եվս 52 կարասներ՝ Քեֆ-քալե բերդամրոցի պեղումներից. այստեղից հայտնաբերված կարասների տարողությունը տատանվում է 3 *aqarqi* 2.5 *ţerusi*-ից մինչև 7 *aqarqi* 3.5 *ţerusi*-ի միջև, իսկ տարողության նշումներ ունեցող 18 կարասների ընդհանուր տարողությունը հասնում է մոտ 80 *aqarqi*-ի (19 հազ. լ)[2690]: Քեֆ-քալեի երկու պեղված մառանների կարասների ընդհանուր տարողությունը, միանշանակ, անցնելու էր 50 հազ լ-ից (նկ. Գ-12/1-2):

Վերին Անձավում բացված թիվ 14 սրահի 30 կարասների ընդհանուր տարողությունը՝ արտահայտված դրանց վրա նշված տարողությունների չափերի հանրագումարով, հասնում է մոտ 60 *aqarqi*-ի՝ այն է՝ 14 հազ. 220 լ, ընդ որում, ոչ բոլոր կարասներն են արձանագրված կամ ոչ բոլորի արձանագրումներն են պահպանվել[2691]: Ընդհանուր առմամբ, Վերին Անձավից առայժմ հայտնի խոշոր կարասների թիվն անցնում է 60-ից (նկ. Գ-13/1-2)[2692]:

Ալթըն-թեփեից հայտնաբերված ուրարտական ուշ շրջանի մառանում խոշոր կարասների թիվը մոտ 60 է (նկ. Գ-14/1)[2693]: Դրանց թիվը համալրվեց վերջին տարիներին բացված ուրարտական նոր մառանում գտնվող կարասներով: Նորահայտ մառանը, որը կառուցվել էր ամրոցի հիմնադրման հետ միաժամանակ, զբաղեցնում էր 27 × 16.50 մ մակերես և կարող էր տեղավորել մինչև 100 կարաս (նկ. Գ-14/2)[2694]:

Այանցի ամրոցի տաճարային համալիրի հետ կապված մառանում գտնվել են 18 խոշոր կարասներ[2695]: Այանցի արևմտյան մթերանոցներն ընդգրկում էին 10

[2684] Мартиросян 1974: 138.
[2685] Erzen 1978: 11; Եսայան, Քիլիմջյան 1991, էջ 105-106; Եսայան, Աբաջյան 1995, էջ 218:
[2686] Kleiss 1973: 82; նույնի՝ 1977b: 30, Abb. 19; նույնի՝ 1979a: 77ff., Abb. 86; նույնի՝ 1988a: 56f.
[2687] Kroll 1979: 228, Abb. 2/1, 15.
[2688] Wartke 1993: 85.
[2689] Burney 1966: 83.
[2690] Bilgiç, Öğün 1965a [1967]: 3.
[2691] Belli, Salvini 2006: 58, 62.
[2692] Belli 2008a: 187, Çiz. 2.
[2693] Özgüç 1969: 60ff./75ff., Lev./Tab. 28/2, 29/1-2, 31/1-2; Karaosmanoğlu *et al.* 2014b: 82, Res. 2.
[2694] Karaosmanoğlu *et al.* 2011: 167f.; Karaosmanoğlu *et al.* 2014b: 80, Res. 9-10.
[2695] Çilingiroğlu 2001a: 74f., Fig. 10-14.

մառաններ, որոնցում գտնվել են ավելի քան 250 խոշոր կարաս[2696]: Եվս 23 կարաս էր տեղադրված ամրոցի «արևելյան մթերանոց»-ի մառանում (Գ-15)[2697]:

Էրեբունի ամրոցի պեղումների ընթացքում բացվել են 6 մառաններ: Դրանցից հինգում կային համապատասխանաբար 4, 7, 11, 12 և 18 կարասներ: Վեցերորդ՝ խոշորագույն մառանն ուներ 38 × 13 մ մակերես և տեղավորում էր մոտ 100 կարաս: Շինության ծածկը պահել են փայտե սյուները, որոնց բազալտե խարիսխները կրում էին արձանագրություններ. «*Խալդյան մեծությամբ Արգիշթին՝ Մենուայի որդին, այս փունը կառուցեց*»[2698]:

Կարասներից շատերն ունեցել են տարողության չափը մատնանշող սեպագիր նշումներ: Էրեբունիից հայտնաբերված արձանագիր բեկորները վերաբերում են մոտ երկու տասնյակ կարասների, որոնց տարողության չափը տատանվում էր 3 *aqarqi*-ից մինչև 7 *aqarqi* 4 *ṭerusi*[2699]: 2008-10թթ. ընթացքում Էրեբունիում իրականացված պեղումներից հայտնաբերվեցին կարասների երկու նոր արձանագրված բեկորներ, որոնցից առաջինի վրա նշված էր 7 *a-qar-qi* [x *ṭé-ru-si* (?)], իսկ երկրորդի վրա՝ [x *a-qa*]*r-qi* 5 *ṭé-ru-si* բառերը[2700]:

Կարասների տարողության չափն արձանագրվում էր ինչպես սեպագրով, այնպես էլ՝ պատկերագրով, որոշ կարասներ արձանագրվել են մի քանի անգամ՝ միաժամանակ կրելով տարողության չափի մինչև երեք տարբեր մատնանշում[2701]: Թե սեպագրով, և թե պատկերագրով գրված տարողության չափերի արձանագրումներ են հայտնի Կարմիր բլուրից[2702], Թոփրաքքալեից[2703], Հայկաբերդից[2704], Վերին Անձավից[2705], Արգիշթիխինիլիից[2706], Էրեբունիից[2707], Բաստամից[2708], Այանցից[2709], Քայալըդերեից[2710] ևն: Այանցում արձանագրումներն արվել են նաև բուլլաների վրա, որոնցով կնքվել են կարասը ծածկող քաթանը օղակած պարանները[2711]: Դրանցից մի քանիսը վերաբերում են ստացված/պահվող ձեթի կամ յուղի քանակին, ընդ որում,

[2696] Çilingiroğlu 2011b: 354.
[2697] Çilingiroğlu 2012a: 12ff., Res. 22.
[2698] КУКН, 203-206; CTU I, A 8-23 A-D.
[2699] КУКН, 586-597; CTU IV: 242f.
[2700] Grekyan 2010b: 129f.
[2701] Пиотровский 1955a: 23; նույնի՝ 1956: 81; Burney 1966: 88; Payne 2005: 23ff.
[2702] Пиотровский 1952: 65 сл., рис. 36-42; CTU IV: 235ff.
[2703] Lehmann-Haupt 1931: 473sqq., 586sq.; CTU IV: 241.
[2704] Dinçol 1974 [1977]: 105ff., Lev. I-VIII; CTU IV: 238f.
[2705] Belli, Salvini 2006: 55ff.; CTU IV: 244f.
[2706] Мартиросян 1974: 81 (рис. 50б), 118 (рис. 74); CTU: 241f.
[2707] Оганесян 1960: 291, Рис. 5; Ходжаш 1981: 88 сл., рис. 71-72, 75; CTU IV: 243.
[2708] Kroll 1979: 221ff.; Salvini 1988: 140f.; CTU IV: 232ff.
[2709] Çilingiroğlu 2001a: 67ff.; CTU IV: 225ff.
[2710] Burney 1966: 88ff., Fig. 17, Pl. 16; CTU IV: 246f.
[2711] CTU IV: 184ff.

արձանագրված են բավական մեծ թվեր՝ 1 a(qarqi) 7 ṭé(rusi) 9 LIŠ-ից մինչև 3 a(qarqi) 1/2 ṭé(rusi) 9 LIŠ, այն է՝ մոտ 413.6 լ-ից մինչև մոտ 733.5 լ[2712]:

Ընդհանուր առմամբ, մինչ օրս հայտնի մառանների տարողությունը միասին՝ հաշվի առնելով թե գրավոր, և թե հնագիտական վկայությունները, հասնում էր գրեթե 2 մլն լ-ի:

### 3.3.2.1.3. Տաճարային/պալատական տնտեսության վերաբաշխման հնարավորությունները

Ինչպես բազմիցս նշվեց, հասուն տղամարդու համար որպես օրապահիկ սահմանված էր 1 լ գարի: Ընտանիքի մյուս անդամներին հատկացվող չափաքանակներն այլ էին: Ընդհանրապես, դատելով միջինասորեստանյան աղբյուրներից, 1 լ էր կազմում գարու օրապահիկը հասուն տղամարդու համար կամ ամիսը՝ 3 *sūtu* (մոտ 30 լ), կնոջ համար կազմում էր 2 *sūtu* ամեն ամիս կամ յուրաքանչյուր օրը մոտ 0.75 լ, պատանու և դեռահասի համար՝ 1 *sūtu* 5 *qa* կամ 0.5 լ, և վերջապես մանուկների համար՝ 1 *sūtu* կամ 0.3 լ օրեկան[2713]: Այս չափաբաժինները, դատելով նորասորեստանյան որոշ աղբյուրներից, մնացել էին նույնը: Օրինակ, Մարաշում վերաբնակեցվելիք 160 «առողջ հոգիներ»-ի համար հատկացվող ամենամսյա սնունդը ևս կազմում էր յուրաքանչյուրին 3 *sūtu* հացահատիկ[2714]:

Հենվելով այս թվերի վրա կարելի է նշել, որ 4-5 հոգուց կազմված ընտանիքի համար (նրանց թվում ենթադրելով մեկ կամ երկու պատանի/դեռահաս և/կամ մեկ կամ երկու մանկահասակ երեխա) ամիսը կպահանջվեր 70-90 լ հացահատիկ: Մեկ ընտանիքի հաշվով որպես միջին կարելի է ընդունել 80 լ-ը:

Եթե ընդունենք, որ, օրինակ, Էրեբունիի կայազորը բաղկացած էր լինելու ոչ պակաս, քան 300 զինվորից, իսկ յուրաքանչյուր զինվորի համար նախատեսված էր 1 լ գարի, ապա կայազորի կարիքները բավարարելու համար տարեկան անհրաժեշտ կլիներ 109.5 հազ. լ գարի կամ ամրոցի՝ վերաբաշխման ենթակա պաշարների (= ամբողջի 60 տոկոսը կամ 1601.2 հազ. լ) մոտ 6.83 տոկոսը: Եվս 43.8 հազ. լ (մոտ 2.73 տոկոս) կպահանջվեր ամրոցի ձիերին կերակրելու համար (60 ձիու հաշվարկով[2715]): Մնացյալ քանակությունը կբավարարեր ողջ տարին կերակրելու նվազագույնը 3 հազ.

---

[2712] Salvini 2001a: 288ff.; CTU IV, CB Ay 24-37.

[2713] Jacob 2003: 49. Տե՛ս և հմմտ. նաև Gelb 1965: 232f., 239; Козырева 1975: 11 и прим. 16; Ellison 1981: 40f.; Wiggermann 2000: 186.

[2714] Parpola 1987, No. 257. Նորասորեստանյան շրջանի տեքստային վկայությունների համար հմմտ. նաև Ellison 1978: 296ff., ուր, սակայն, հիմք է ընդունվում 1 SÌLA = 1.81 լ հաշվարկը:

[2715] Հաշվարկը պայմանական է: Որպես հիմք ենք վերցնում ուրարտական խոշոր կենտրոններում կամ կենտրոններին կից առնվազն մեկ արքունի ախոռի գոյության հնարավորությունը:

967 մարդու, եթե որպես միջին օրապահիկ վերցնենք 1 լ-ը, կամ 4-5 հոգուց կազմված 1508 ընտանիքի, այլ կերպ ասած՝ 6-7.5 հազ. «բնակչություն», ենթադրելով նաև, որ ամրոցի երկրագործական գոտու ընտանի կենդանիներին կերակրելու հոգսը հոգալու էին շրջակա գյուղական բնակավայրերը: Իսկ դա, միանշանակ, փոքր թիվ չէր կազմելու[2716]:

Եթե հիմք ընդունենք նման հաշվարկը, ապա Սարդուրիխինիլի/Հայկաբերդի համար կունենանք 300 զինվոր (109.5 հազ. լ կամ մոտ 8.05 տոկոս), 1256 ընտանիք կամ մոտ 5-6.3 հազ. «բնակչություն» (1206.2 հազ. լ կամ 88.72 տոկոս) և 60 ձի (43.8 հազ. լ կամ 3.22 տոկոս), Կարմիր բլուրի համար՝ համապատասխանաբար 300 (109.5 հազ. լ կամ մոտ 7.9 տոկոս), 1284 ընտանիք կամ մոտ 5.1-6.4 հազ. բնակիչ (1232.7 հազ. լ կամ 88.93 տոկոս) և 60 (43.8 հազ. լ կամ մոտ 3.16 տոկոս), իսկ Արգիշթիխինիլիի համար՝ 300 (109.5 հազ. լ կամ մոտ 2.37 տոկոս), 4652 ընտանիք կամ մոտ 18.6-ից հազ. մինչև 23.3 հազ. բնակչություն (4466.7 հազ. լ կամ մոտ 96.68 տոկոս) և 60 (43.8 հազ. լ կամ 0.94 տոկոս) հարաբերակցությունները:

Ինչպես տեսնում ենք, Արգիշթիխինիլին կարող էր ապահովել ամենաշատ թվով մարդկանց, ինչը պատահական չէ և պայմանավորված չէ միայն նրա՝ վարչական ու տնտեսական կենտրոն լինելու հանգամանքով: Հարկ է հաշվի առնել բերդաքաղաքի դիրքը՝ շրջապատված երկրագործական բարեբեր և ընդարձակ հողատարածքներով, ինչպես նաև մատչելի ջրի աղբյուրների մերձավորությունը: Մինչդեռ, օրինակ, Էրեբունիի ամրոցն ու շրջակա հողերը խնդիրներ են ունեցել ջրամատակարարման հետ կապված[2717]:

Այսպիսով, միայն այս չորս բերդաքաղաքները, դատելով առկա տվյալներից, կարող էին ողջ տարին ապահովել առնվազն 1.2 հազ. կայազորային զինվորների, շուրջ 8700 ընտանիքների կամ 34.8-ից մինչև 43.5 հազ. բնակչության սնունդը, ինչպես նաև ամրոցների ախոռների 240 ձիերի կերը:

Նկատենք, որ խեթական տերության մայրաքաղաք Խաթթուսասում բացված պետական շտեմարանները, որոնք կարող էին տեղավորել 4 հազ. 200-ից մինչև 5 հազ. 900 տոննա հացահատիկ, բավարար էին ողջ տարին ապահովելու համար 23 հազ-ից

[2716] 100 ցլի պահանջը նվազագույնը 1.5 *qû* յուրաքանչյուր օրվա համար հաշվարկով վեց ամսվա կտրվածքով կազմում է 270 *imērū*, այն է՝ մոտ 23 հազ. լ: Տե՛ս Wiggermann 2000: 189, Հմմտ. նաև Дьяконов 1968в: 20, прим. 77. Լարսայի տեքստերում մեկ արորի լծկան ցլերին (որոնք, ի դեպ, կարող էին լինել երկուսից ավելի), հատկացվող հացահատիկի ընդհանուր քանակը կազմում էր 45 gur: Տե՛ս Козырева 1975: 10.

[2717] Մուշեղյան 1971, էջ 210-211:

մինչև 32 հազ. մարդու սնունդը[2718]: Կնոսսոսի պահուստները բավարար էին ողջ տարին կերակրելու շուրջ 4260 մարդու[2719]:

Ինչ վերաբերում է Այանցին, ապա տեղի հացահատիկի շտեմարանի և մառանների կարասների տարողությունը գնահատվում է մոտ 240 հազ. լ[2720]: Վերը նշված հաշվարկով առաջնորդվելու դեպքում տեսնում ենք, որ ամրոցի պաշարները կարող էին հազիվ բավականացնել կայազորի և ամրոցում բնակվող պալատական անձնակազմի կարիքները (համապատասխանաբար՝ 109.5 հազ. լ կամ 300 զինվորի և 34.5 հազ. լ կամ 95 մարդու սնունդ): Իհարկե, այստեղ պետք է նկատի ունենալ, որ Այանցում առայժմ բացվել է հացահատիկի միայն մեկ ամբար և որ դրանց թիվը, անկասկած, լինելու էր ավելին:

Ենթադրելով, որ մեզ հասած գրավոր աղբյուրներում վկայված բոլոր շտեմարանները շարունակվել են օգտագործվել նաև Ք.ա. 7-րդ դ-ի առաջին կեսին, ապա դրանցում պահվող քանակության՝ 414 հազ. 98 *kapi*-ի կամ 10 մլն. 352 հազ. 450 լ-ի 60 տոկոսի վերաբաշխումը բավարար կլիներ ողջ տարին սննդով ապահովելու 6470 ընտանիքի՝ մոտ 26 հազ-ից մինչև 32.4 հազ. մարդ: Ուրարտական տեքստերում հանդիպող գարու առավելագույն թիվը արտահայտված *kapi*-ներով հասնում էր 1022 հազ. 133-ի[2721] (= 25 մլն. 553 հազ. 325 լ): Նույն հաշվարկով առաջնորդվելու դեպքում տեսնում ենք, որ այս քանակությունը բավարար կարող էր լինել ապահովելու համար ավելի քան 26.6 հազ. ընտանիքների կամ մոտ 106.4 հազ-ից մինչև 133 հազ. բնակչության:

Ինչ խոսք, սրանք պայմանական հաշվարկներ են՝ հիմնված գրավոր և հնագիտական առկա տվյալների վրա, որոնք երբեք չեն կարող լինել ամբողջական: Բացի դա, այստեղ պետք է հաշվի առնել նաև բանակի հեծելազորի, գումակի կենդանիների, բերդաքաղաքների ու մայրաքաղաքի մատակարարումները իրականացնող կենդանիների համար նախատեսված կերը: Նշենք, որ սովորաբար մոտ 450 կգ կշռող մեկ ձիուն կերակրելու համար պահանջվում է 5.4-ից մինչև 6.8 կգ գարի և մոտ 4.5 կգ խոտ կամ 0.68 կգ գարի և 0.45 կգ խոտ ձիու կենդանի քաշի յուրաքանչյուր 45 կգ-ի դիմաց, եթե ձին մշտապես պահվում էր ախոռում: Այդ հաշվարկների համաձայն՝ Մեգիդդոյի հացահատիկի ամբարը, որի տարողությունը

[2718] Seeher 2001: 305. Տե՛ս և հմմտ. նաև Mielke 2011: 176.
[2719] Hiller 1988: 63.
[2720] Erdem 2011a: 86. Ըստ հեղինակի՝ ամրոցում ամբարված հացահատիկի պաշարները կարող էին ողջ տարին սննդով ապահովել 1-1.5 հազ. մարդու:
[2721] KYKH, 241$G_{10}$; CTU I, A 9-3 $VII_{10}$.

կազմում էր մոտ 465 հազ. լ, բավարար էր ողջ տարին կերակրելու համար 150 ձիերի[2722]:

Մյուս կողմից, հարկ է նկատի ունենալ, որ քննարկվող դարաշրջանում ձիերը շատ ավելի փոքր էին և սննդի չափաբաժինը՝ շատ ավելի քիչ[2723]: Ուրարտուում հիմնականում տարածված էին փոքր ձիերը, որոնց վզակոթի (հետնաբաշի) բարձրությունը կազմել է ընդամենը 125.5 սմ՝ գրեթե հեծյալի գոտկատեղի բարձրությամբ[2724], իսկ «խոշորներին»-ը՝ ոչ ավելի, քան 136-140 սմ[2725], ինչպես, օրինակ, այս շրջանի սկյութական ձիերն էին (մինչև 140 սմ), և կարելի է մտածել, որ ուրարտական մի քանի հուշարձաններից հայտնի այդ ձիերը կամ «սկյութական» էին, կամ «էթիունյան»[2726]: Համենյան դեպս, նրանք նույնպես դասվում են փոքր ձիերի շարքը[2727]: Բացի դա, պետք է նշել, որ Միջագետքում որպես խոտհարք օգտագործվող հողերը բավական սակավ էին, հողային ֆոնդի սահմանափակ լինելու պատճառով պիտանի հողերն օգտագործվում էին գերազանցապես ցանքսի համար կամ որպես այգիներ, ըստ այդմ, ենթադրաբար մեծ էր լինելու գարու չափաբաժինը կենդանիների սննդակարգում և քիչ՝ խոտի/ծղոտի բաժինը: Պատահական չէ, որ ենթակա երկրների վրա ասորեստանցիների սահմանած կարևոր հարկատեսակներից մեկը ծղոտով ստացվող հարկն էր: Եվ վերջապես հարկ է հաշվի առնել, որ գարու չափաբաժինները տարբերվում էին ըստ տարվա ամիսների: Նման տեղեկություն է պահպանվել Նուզիից, ուր ձիու համար *Saputi* ամսին հատկացվում էր օրեկան մոտ 2 *qa*, իսկ *Arkapinni* ամսին՝ մոտ 4.6 *qa* գարի[2728]: Միջինասորեստանյան դարաշրջանի որոշ տեքստերից դատելով՝ մեկ ձիու համար նախատեսված գարու քանակությունը կազմում էր 5 *qa*, ջորունը՝ 3 *qa*, ավանակինը՝ 2-2.5 *qa*, և 1.5 *qa*՝ խոշոր եղջերավորների համար[2729]: Այդ նույն դիվանի մեկ այլ տեքստում նշվում է ջորիների համար գարու մասհանման մասին՝ 20 *emār* գարի հարյուր ջորու համար տաս օրվա հաշվարկով կամ յուրաքանչյուր կենդանուն օրեկան 2 *qa* չափով (մոտ 2 լ)[2730]:

---

[2722] Cantrell 2011: 54, 95f.

[2723] Տե՛ս Fuchs 2005: 41, Anm. 9; Wiggermann 2000: 196 (15 ձին՝ 17 հազ 50 կգ տարին, օրը՝ 3.1 կգ).

[2724] Даль 1947: 57 сл.; Пиотровский 1950: 32; Եսայան 1982, էջ 25:

[2725] Межлумян 1972: 117.

[2726] Մանրամասն տե՛ս Межлумян 1972: 114 сл.

[2727] Եսայան 1994, էջ 29, 51: Տե՛ս և հմմտ. նաև Манасерян 2011: 38: Հասանլուից հայտնաբերված ձիերը ևս դասվում են փոքր ձիերի շարքը՝ մինչև 140 սմ բարձրությամբ: Տե՛ս de Schauensee 1989: 40f. Եգիպտական ձիերի համար (մինչև 140 սմ) տե՛ս Feldman 2010: 84f.

[2728] Jacob 2003: 355.

[2729] Jacob 2003: 355f. Հմմտ. նաև De Odorico 1995: 108, n. 258. Տե՛ս նաև Wiggermann 2000: 196, 199.

[2730] Llop 2010: 108.

Հռոմեական հեծելազորում, մինչդեռ, այդ քանակությունը՝ մոտ 1.6 լ գարի, հատկացվում էր ձիու համար[2731]: Ըստ երևույթին նման քանակություն է կազմել ձիերի գարու օրապահիկը նաև քննարկվող դարաշրջանում Ուրարտուում[2732]: Հետաքրքիր է, որ գրեթե նույն քանակությունն է վկայված Այանցում, որտեղից գտնված բուլլաներից մեկում նշվում է ձիու համար 1.1/2 LIŠ գարի հատկացնելու մասին, որը կազմում է մոտ 1.8 լ կամ մոտ 2 *qa*: Եթե հիմք ընդունենք այս տվյալները, հաշվի առնելով, որ 2 *qa*-ն նվազագույն չափաբաժինն է, ապա միայն «արքունի գնդի» ենթադրվող մոտ 5 հազ. ձիերի համար տարեկան կպահանջվեր առնվազն 3650 հազ. լ գարի՝ չհաշված ծղոտը և այլ հավելումներ: Այս քանակությունն ավելին է, քան Էրեբունիի շտեմարանների ընդհանուր տարողությունը:

### 3.3.2.2. **Պետական արհեստանոցները**

#### 3.3.2.2.1. **Մետաղագործական և փայտագործական արհեստանոցներ**

Ուրարտուում պետական տնտեսության մաս են կազմել արհեստանոցները: Դրանք պատվերները ստանում էին պետությունից, արհեստավորներն ազատ չէին ստեղծագործում այլ, կատարելով պետպատվերը, արտադրում էին ստանդարտացված արտադրանք[2733]: Պետությունն էր մատակարարում հումքը, հոգում արհեստավորների ապրուստը: Ենթադրվում է, որ գերեվարվածների մեջ փոքր թիվ չեն կազմել արհեստավորները, և Ուրարտուում արհեստագործության որոշ ճյուղերի ի հայտ գալը, բացատրվում է դրանց ներմուծմամբ դրսից՝ գերեվարությունների ժամանակ[2734]:

Ուրարտուն առաջիններից էր, որ թե տնտեսության մեջ, և թե ռազմի գործում սկսեց լայնորեն կիրառել երկաթը: Ուրարտական երկաթն ուներ բարձր որակ և իր որակական հատկանիշներով մոտենում էր պողպատին[2735]: Պողպատե զենքեր առաջին անգամ հանդիպում են Ուրարտուում, այստեղ է, որ հաջողվել է ստանալ գրեթե դամասկոսյան տիպի պողպատ[2736]: Ուրարտական մետաղագործության բարձր որակի մասին են խոսում երկմետաղյա զենքերը, մասնավորապես՝ բրոնզե դաստակով և

---

[2731] Cantrell 2011: 96, n. 37.

[2732] Այստեղ նշենք, որ թեև այս թիվը՝ մոտ 1.6-2 լ կամ 2 *qa*, թվում է բավական փոքր՝ միջինասորեստանյան տեքստերում ձիերի օրապահիկի համար նշվող 2 *qa*-ի համեմատությամբ, սակայն նկատենք, որ ուրարտական ձիերը առատ սնվել են խոստով, ընդ որում՝ հիմնականում թարմ խոտով, ինչը ցույց է տալիս նաև Կարմիր-բլուրից հայտնաբերված ձիու ատամների կառուցվածքը: Տե՛ս Даль 1947: 59.

[2733] Տե՛ս նաև van Loon 1966: 168; Bernbeck 2003-2004a: 60.

[2734] Çilingiroğlu 1983b: 314f.; նույնի՝ 1984: 49f.; Tarhan 1983: 307.

[2735] Пиотровский 1959б: 177; Piaskowski, Wartke 1989: 89ff.; Biber 2011: 233.

[2736] Yalçın *et al.* 1995: 39ff.; Biber *et al.* 2008: 159.

երկաթե շեղբով սրերը, որոնց ի հայտ գալն Ուրարտուում և բազմազանությունը թույլ են տալիս առանձնացնելու «ուրարտական ոճ»-ի սրերի մի ուրույն խումբ[2737]:

Մետաղաձուլական և մետաղագործական արհեստանոցներ են պեղվել ուրարտական մի շարք կենտրոններում, այդ թվում՝ Արգիշթիխինիլիում[2738], Հայկաբերդում[2739], Կարմիր բլուրում[2740], Մեծկերտում (Մազգիրթ/Քալեքյոյ)[2741]: Հնարավոր է՝ որպես մետաղագործական արհեստանոց է ծառայել Այանցում բացված սենյակներից մեկը[2742]: Կարմիր բլուրից հայտնաբերված մեծ քանակությամբ երկաթե և բրոնզե ձողերը ծառայել են որպես հումք՝ հետագա մշակման համար[2743]: Թերևս, նույն նպատակին է ծառայել այստեղից գտնված ոսկու ձուլակտորը[2744]: Ի դեպ, Կարմիր բլուրից գտնված մի տեքստում հիշատակվում է 30 $^{GIŠ}$*zuli*(*e*)[2745], իսկ այդ բառը կարող էր նշանակել «ձող»: Եվ վերջապես Քայալըդերեից հայտնաբերված բրոնզե կամ պղնձե սկավառակաձև ձուլակտորները, որոնք հիմնականում կշռում էին 415-450 գր, հավանաբար, հանդիսացել են պատրաստի հումք հետագա մշակման համար[2746]:

Մետաղագործական և փայտագործական արհեստանոցներում են պատրաստվել նաև պալատական և տաճարային համալիրների համար նախատեսված բրոնզե, հիմնականում՝ հարուստ-դրվագված գույքը՝ գահ և գահավորակ (Թոփրաքքալե, Գեղհովիտ[2747]), բրոնզե աշտանակներ, կաթսաներ և տարաբնույթ անոթներ, ջահակալներ, ծիսապաշտամունքայի իրեր ևն[2748]: 80 «չափ» տարողություն ունեցող և մինչև պռունկը գինով լցվող մեկ հսկա բրոնզե *Æarû*-կաթսայի մասին է հիշատակում Սարգոն II-ը Մուծածիրից տարված ավարը թվարկելիս[2749]: Կարմիր բլուրից գտնված պղնձե կաթսան ուներ 6-700 լ տարողություն[2750], մոտ 300 լ

---

[2737] Փիլիպոսյան 1999, էջ 12-13, Աղ. 5/15-21; Biber *et al.* 2008: 149ff.; Çavuşoğlu, Biber 2012: 332, 339, Fig. 13/1.
[2738] Мартиросян 1974: 101 сл.; Тирацян, Кошеленко 1985: 29 сл.
[2739] Erzen 1982: 156f.
[2740] Мартиросян 1961: 131 сл.
[2741] Belli 1993a: 62.
[2742] Çilingiroğlu, Batmaz 2014: 184f.; Batmaz 2014: 132.
[2743] Եսայան 1982, էջ 30-31:
[2744] Пиотровский 1955a: 18; Հմայակյան 2007, էջ 162-163, Աղ. XCVII/6:
[2745] КУКН, 520, лиц. стор.$_9$. Հմմտ. CTU IV, CT Kb-7 Ro$_9$.
[2746] Burney 1966: 67f., Pl. IV/c.
[2747] Տե՛ս, համապատասխանաբար, Seidl 1994, 67ff., Abb. 1ff, Taf. 6-23; Փիլիպոսյան, Մկրտչյան 2001, էջ 25-28:
[2748] Ուրարտական բրոնզե արվեստի համար տե՛ս Пиотровский 1959a; Есаян 1983; նույնի՝ 1986; Taşyürek 1975a; նույնի՝ 1978: 1ff.; Tanabe *et al* 1982; Vanden Berghe, Meyer 1982; van Loon 1966: 84ff.; Yesayan 1984: 132ff.; Eichler 1984; Maaß 1987: 65sqq.; Merhav 1991; Kellner 1991a; Karaosmanoğlu 1991: 595ff.; Curtis 1996: 118ff.; Caner 1998; Born, Seidl 1995; Seidl 2004; Muscarella 2006a: 147ff.; Bernbeck 2003-2004a: 51ff.; Muscarella 2013: 621ff.; ևն:
[2749] Mayer 1983: 108f. (Z. 397).
[2750] Пиотровский 1959a: 170; Мартиросян 1961: 92.

տարողությամբ մեկ այլ կաթսա է գտնվել Ալթըն-թեփեից (նկ. Գ-16)[2751]: Մոտ 110 և 30 լ տարողությամբ կաթսաներ են հայտնաբերվել Այանցից[2752] և այլն (նկ. Գ-17/1-3, 18/1-2)[2753]: Մեծաթիվ են ուրարտական գոտիների պատկերագրության մեջ հանդիպող ծիսական կաթսաների դրվագումները (նկ. Գ-19/1-4)[2754]: Ընդ որում, կարելի է նշել, որ գործել են արհեստավորական տարբեր դպրոցներ, ինչն էլ արտահայտվել է տարբեր դարաշրջաններով թվագրվող բրոնզեգործական իրերի դրվագումներում[2755]: Նման արհեստանոցներում պատրաստել են նաև երկրագործական գործիքները[2756]: Հատկապես մեծ քանակությամբ եղաններ կամ եռաժանիներ են հայտնաբերվել Այանցից, մի քանի օրինակներ կան նաև Կարմիր բլուրից և Բաստամից, որոնք, ինչպես ենթադրվում է, կարող էին ունենալ նաև ծիսապաշտամունքային նշանակություն[2757]:

Մեզ հասած մետաղագործական արտադրանքի մի զգալի մասը ներկայացնում է Խալդի աստծո տաճարին ընծայված նվիրատվական գույք, որը պահվել է տաճարի մերձավորությամբ կառուցված հատուկ պահեստներում (Այանց, Վերին Անձավ, Հայկաբերդ, Կարմիր բլուր, նկ. Գ-20/1-2, Գ-21/1-2)[2758]:

Չի բացառվում, որ արհեստանոցները կատարել են նաև անհատ պատվիրատուների պատվերները[2759], ինչպիսիք կարող էին հանդիսանալ տաճարներին ընծայվելիք նվիրատվական թիթեղները: Ենթադրվում է, որ նման արհեստանոց է գործել Գիյիմլիում (Սերբար-թեփե), որտեղից հայտնաբերված բրոնզե թիթեղների թիվն անցնում էր երկու հազարից[2760]: Սակայն, Սերբար-թեփեն փոքր, առանց պաշտպանական ամրությունների, մոտ 0.1 հա զբաղեցնող և բավական բարձրադիր վայրում գտնվող բնակելի մի համալիր էր[2761], և իրականում դժվար է ասել՝ արդյո՞ք գործ ունենք այստեղ պետական արհեստանոցի, թե պարզապես գանձի ավանդման փաստի հետ[2762]:

[2751] Barnett, Gökce 1953: 121f. and n. 2, Pls. XIII-XIV.
[2752] Batmaz 2013b: 803; նույնի՝ 2015: 137, Figs. 10, 35.
[2753] Տե՛ս նաև Çavuşoğlu, Gökce 2013: 105ff., Çiz. 1-2.
[2754] Seidl 2004: 141, Abb. 99, Falttaf. 2-3.
[2755] Seidl 2004: 122f., 198, Abb. 93-94; նույնի՝ 2007: 137ff.; Salvini 2007a: 146ff.
[2756] Ամփոփ տե՛ս նաև Ավետիսյան Հ., Ավետիսյան Ն. 2008, էջ 365-367:
[2757] Baştürk 2011: 164ff. Տե՛ս նաև Եսայան 1982, էջ 31; Kroll 2009: 517ff.
[2758] Մանրամասն տե՛ս Batmaz 2015a: 134ff.
[2759] Տե՛ս նաև Seidl 1988a: 171f.
[2760] Taşyürek 1977b: 12ff.
[2761] Erzen 1974b: 13ff.; նույնի՝ 1974c: 191ff., Res. 1-40.
[2762] Տե՛ս նաև Taşyürek 1977b: 20; Burney 1998: 159. Հմմտ. Kellner 1976: 56; Հմայակյան 2007, էջ 160:

### 3.3.2.2.2. **Բրուտագործական արհեստանոցներ**

Ուրարտական տերունական մշակույթը ներկայանում էր այսպես կոչված «բիայնական» կարմիր հիմնագույնով խեցեղենով[2763], որը մասնագիտական հրատարակությունների մեջ հայտնի է նաև «Թոփրաքքալեի խեցեղեն» կամ «պալատական խեցեղեն» (Palastware / Palastkeramik) անուններով[2764]: Այս խեցեղենը, որը կարելի է ընդունել որպես ուրարտական ներկայության գլխավոր վկայություն՝ ամրաշինությանը զուգահեռ, արտադրվում էր զանգվածաբար, որպես պետական արհեստանոցների ստանդարտացված արտադրանք, և նպատակ ուներ բավարարել պետական միջոցների հաշվին մատակարարվող իշխող, ծառայող և սպասարկող խավերին (նկ. Գ-22/1-12, Գ-23/1-12): Այս նույն երևույթին հանդիպում ենք միջինասորեստանյան շրջանում, ուր «ասորեստանյան» կոչվող խեցեղենը բնութագրվում է ճիշտ նույն բնորոշիչներով, ինչ «բիայնական»-ը, այն է՝ պատրաստված «ասորեստանցիներ»-ի (հմմտ. «ուրարտացիներ»-ի) համար՝ «ասորեստանցիներ»-ի (հմմտ. բիայնական պետության) կողմից[2765]:

Ուրարտուում մեծ թիվ են կազմել պետական բրուտագործական արհեստանոցները, բրուտի անիվներ են հայտնաբերվել Կարմիր բլուրից[2766], Էրեբունիից[2767] և Արգիշթիխինիլիից[2768], բրուտագործական հնոց է բացվել Յոնջաթեփեում[2769], Այանցից գտնված խեցեբեկորներից մի քանիսը կրում են հատուկ դրոշմներ՝ բրուտագործական անիվի առջև նստած խեցեգործի պատկերով (տե՛ս նկ. Գ-24/4-5)[2770]:

Նման արհեստանոցների արտադրանքը մականշվում էր նաև խեցեղենի վրա արված վարպետների նշաններով, ընդ որում, դրանք սովորաբար արվում էին մինչև թրծելը[2771]: Արհեստավորներն ազատ չէին ստեղծագործելու մեջ, և արտադրված

---

[2763] Пиотровский 1950: 35; նույնի՝ 1959a: 189; Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 291f.; Zimansky 1995b: 107; Kozbe *et al*. 2001: 86f.; Avetisyan, Bobokhyan 2012b: 378.

[2764] Տե՛ս, համապատասխանաբար, Burney 1957: 42; Kroll 1976: 152, Anm. 233; Barnett 1982: 367.

[2765] Այս առումով տե՛ս և հմմտ. Postgate 2010: 27.

[2766] Пиотровский 1952: 86, рис. 46.

[2767] Իսրայելյան 1971, էջ 80, Աղ. XV:

[2768] Мартиросян 1974: 115.

[2769] Belli 1997d: 149.

[2770] Çilingiroğlu, Salvini 2012: 100ff., Figs. 6-8; Erdem 2013: 193f., Pls. 10/h, 14.

[2771] Տարբեր հնավայրերից հայտնի վկայությունների համար տե՛ս Lehmann-Haupt 1931: 572sqq., 587 (Թոփրաքքալե); Пиотровский 1959a: 147 (Կարմիր-բլուր); Мартиросян 1972: 48 сл., рис. 3; նույնի՝ 1974: 149 сл.; նույնի՝ 1981: 80 сл., рис. 60, 64-66 (Արգիշթի[ինիլի); Իսրայելյան 1971, էջ 84-87, նկ. 8 (Էրեբունի); Մանուկյան 1981, էջ 24 (Արտաշատ); Ходжаш 1981: 85 сл., рис. 67-70, 73-74; Ter-Martirosov 2009: 127ff. (Էրեբունի); Badaljan *et al.* 1994: 6, Pl. 1/e (Հոռոմ); Հմայակյան 1991, էջ 58-60; Հմայակյան և այլք 1987, էջ 34; նույնի՝ 2005ա, էջ 77 (Դովրի); Erzen 1969: 412 (Հայկաբերդ); Derin 1999: 81ff., Fig. 1ff.; Çilingiroğlu, Salvini 2012: 100ff.; Erdem 2013: 193ff., Pls. 1-14. (Այանց); Karaosmanoğlu, Korucu 2012: 133, Fig. 14;

սահմանափակ տիպերի և ձևերի խեցեղենի օրինակները կրկնում էին նախկինում արտադրված նույնատիպ խեցեղենին մեծ քանակներով:

Պետական հստակ ստանդարտներ ենթադրող նման խեցեղենի զանգվածային արտադրության պատճառներից մեկը, եթե ոչ հիմնականը, դա, իհարկե, վերաբաշխման համակարգն էր[2772], և պատահական չէ, որ փոքր տարողությամբ խեցանոթների բռնակները հաճախ ունեին տարողության չափի մատնանշումներ (տե՛ս նկ. Գ-24/1-3): Դրանց հիմնական քանակությունները պետք է որ ունենային տարողության նույն չափը: Նման խեցեղենի զանգվածային արտադրություն վկայված է Ուրի III հարստության տեքստերում[2773], իսկ Ուրարտուն, ինչպես բազմիցս նշվեց, տնտեսության իր վերաբաշխման համակարգով չափազանց նմանվում էր նրան:

Էրեբունիի խեցեղենի վրա պահպանվել են առնվազն 5 վարպետների նշաններ[2774]: Կարմիր բլուրի կարասները պատրաստվել են տարբեր արհեստանոցներում առնվազն 8-9 խեցեգործ-արհեստավորների կողմից[2775]: Այս նույն ամրոցի պահեստներից մեկից հայտնաբերվել են այստեղ պահվող ավելի քան 1036 սափոր և տարբեր նշանակության 70 խեցանոթ (նկ. Գ-25)[2776], միայն Արարատյան դաշտավայրի տարբեր կենտրոններից հայտնաբերված խոշոր կարասների թիվն անցնում էր 1000-ից[2777]: Խեցեղենի նմանատիպ պահեստներ են պեղվել Էրեբունիում[2778], Բաստամում[2779] և Այանցում[2780]: Ընդ որում, Այանցում պեղված խեցեգործական իրերի պահեստներից մեկում գտնված խեցեբեկորների թիվը վկայում է, որ այդ պահեստում եղել է տարբեր մեծության շուրջ 8 հազ. անոթ (նկ. Գ-26, Գ-27/1-2)[2781]: Պահեստներից մեկն ամբողջությամբ պարունակել է միայն ուրարտական կարմիր հիմնաներկով «պետ-ստանդարտ»-ի խեցեղեն, գրեթե բոլորը՝ վարպետների և տարողության նշաններով նշագրված[2782]:

---

Karaosmanoğlu *et al.* 2015: 118, Foto 3 (Ալթըն-թեփե). Տե՛ս նաև Մարգըրեթ Փեյնի աշխատությանը կցված կատալոգը (Payne 2005: 108ff.):

[2772] Միջինասորեստանյան խեցեղենի համար հմմտ. նաև Postgate 2010: 28f.

[2773] Gelb 1982: 589.

[2774] Իսրայելյան 1971, էջ 85:

[2775] Пиотровский 1959a: 147, 196; Ղասաբյան 1959ա, էջ 213:

[2776] Пиотровский 1959a: 145; նույնի՝ 1970, рис. 15.

[2777] Ավետիսյան 1989, էջ 70:

[2778] Իսրայելյան 1971, էջ 84:

[2779] Kleiss 1970b: 35, Abb. 20; Kroll 1972: 70ff.

[2780] Çilingiroğlu 2012a: 14f., res. 20; Çilingiroğlu, Batmaz 2014: 182, res. 3, 8.

[2781] Erdem 2014: 149, Res. 1-7. Տե՛ս նաև Çilingiroğlu 2011b: 342; նույնի՝ 2012a: 14f.; Batmaz 2014: 128ff.

[2782] Erdem 2013: 195; Batmaz 2014: 128.

### 3.3.2.2.3. **Կարի արհեստանոցներ**

Քանի որ Ուրարտուում պետությունն էր հոգում մեծաթիվ զինվորների և այլ ծառայողների հագուստը, ապա հաստատապես զգալի թիվ էին կազմելու կարի արհեստանոցները: Ինչպես վերը նշվեց՝ Թոփրաքքալեի պալատական/տաճարային անձնակազմի անդամների թվում հիշատակվում են ոչ քիչ թվով դերձակներ: Կարմիր բլուրից հայտնաբերված տեքստերից մեկում նշվում է «Վազա երկրի Թեյշեբայի քաղաք» տարբեր հագուստների և կաշիների առաքման մասին[2783]: Առաքված կաշիները կարող էին նախատեսված լինել կաշվե վահանների, կապարճների, կոշիկների և զրահների պատրաստման համար: Ի դեպ, հետաքրքիր է, որ ըստ Նուզիի տեքստերի՝ 7 այծի կաշվից պատրաստվում էր 3 *gurpisu*՝ այն է՝ թեփուկավոր սաղավարտ[2784], ինչպես նաև պահանջվում էր 1 *mina* բուրդ՝ յուրաքանչյուր սաղավարտի համար: Մեկ ձեռք հագուստ պատրաստելու համար պահանջվող բրդի քանակությունը կազմում էր 1.5-2 կգ:

Կարի արհեստանոցներ են պեղվել Վերին Անձավի ուրարտական ամրոցում[2785], Սարդուրիխինիլիում[2786], տարատեսակ գործվածքների մնացորդներ են հայտնի Կարմիր բլուրից[2787], Այանցից[2788] և Յոնջաթեփեից[2789], Կարմիր բլուրից հայտնաբերվել է նաև զինվորական հագուստի մնացորդներ[2790]:

Հավանաբար, արդեն այս շրջանում Ուրարտուում հայտնի էր որդան կարմիրի ներկը, և ենթադրվում է, որ «Լուվրի աղյուսակ»-ում որպես Ուրարտու և Խաբխի երկրների արտադրանք հիշատակվող *tabarru* գործվածքը[2791] կարող էր պատրաստված լինել որդան կարմիրով ներկված բրդից[2792]:

### 3.3.2.2.4. **Բնամթերք մշակող արհեստանոցներ**

Ուրարտական խոշոր կենտրոններում էին կենտրոնացված նաև երկրագործական արտադրանքը վերամշակող արհեստանոցները: Քնջութի ձեթ ստանալու արհեստանոց է պեղվել Կարմիր բլուրում (նկ. Գ-28/1)[2793], այստեղ մեկ այլ արհեստանոցում ստացել են գարեջուր[2794], բացվել է պանրագործական

[2783] КУКН, 521; CTU IV, CT Kb-10.
[2784] Kendall 1981: 207; Hulit 2002: 196.
[2785] Belli, Sevin 2003: 145.
[2786] Erzen 1978: 39; նույնի՝ 1980a [1981]: 40.
[2787] Верховская 1955: 67 сл., рис. 48, Табл. XVI; Եսայան 1982, էջ 27:
[2788] Çilingiroğlu, Erdem 2010: 9, 11f.
[2789] Belli 2005a: 187/188.
[2790] Есаян 1966: 102.
[2791] Mayer 1983: 104f. (Z. 366).
[2792] Янковская 1956: 32; նույնի՝ 1969b: 258f. Հմմտ. CAD, T, 2006: 21ff. (*tabarru*).
[2793] Пиотровский 1959a: 137; Ղասաբյան 1957, էջ 107-116, նկ. 1:
[2794] Пиотровский 1959a: 147; Ղասաբյան 1959բ, էջ 78-86:

արհեստանոց[2795]: Գարեջրի կամ բնամթերք մշակելու արհեստանոց է պեղվել նաև Բաստամում (նկ. Գ-28/2)[2796]: Գարեջրի արհեստանոց է հայտնի Այանցից[2797]: Գարեջուր ստանալու վերաբերյալ վկայություններ կան նաև Յոնջաթեփեից[2798]: Հետաքրքիր է, որ Այանցից հայտնաբերված արձանագիր բուլլաների շարքում մի քանիսը նշում են (քամված) ձեթի կամ յուղի (*ḪAL-ŠÍ*, Í) զգալի քանակություններ[2799], այդ թվում՝ դրանցից մեկը արձանագրում է ավելի քան 650 լ թիվը (2 *a* 3 *ṭí* ½ 6 LIŠ Í)[2800]:

### 3.3.2.2.5. **Քարի մշակման արհեստանոցներ**

Ուրարտական շինարվեստի բնութագրական կողմերից էր քարե հիմքերի պարտադիր կիրառությունը թե ամրաշինության, և թե աշխարհիկ կամ պաշտամունքային կառույցների շինարարության մեջ: Ամրաշինության մեջ կիրառվող քարերը ենթարկվում էին միայն կոպիտ մշակման դրսի կողմից, իսկ շինարարության մեջ հիմնականում օգտագործվում էր շրջակայքում առկա քարը: Փոխարենը՝ տաճարաշինության մեջ, ինչպես նաև հանդիսավոր կոթողներ կանգնեցնելիս պարտադիր օգտագործվում էր բազալտ, սակավ դեպքերում՝ նաև անդեզիտ կամ կրաքար: Ուրարտական վիմագիր, հանդիսավոր արձանագրությունները, մեկ բացառությամբ, փորագրված էին բազալտե քարերի վրա և միայն Ռուսա Էրիմենայորդու մեկ արձանագրություն է հայտնի փորագրված տուֆ քարի վրա:

Ուրարտական շրջանում օգտագործված քարհանքերից առաջինը, միգուցե, Արտամետին մերձակա կրաքարի հանքն էր, որից հանված քարն օգտագործվել է Վանա ժայռի ստորոտին կառուցված այսպես կոչված «Sardursburg»-ի կառուցման համար, ինչպես ենթադրում է Օքթայ Բելլին: Սարդուրի Լութիպրիի որդու թողած թվով 6 նույնաբովանդակ արձանագրությունները հայտնում են քարհանքի վայրի անունը՝ Ալնիունի քաղաքը: Ըստ այդմ, քարհանքին մերձակա քաղաքը՝ շրջապատված առանց որմնահեցերի պարսպով, նույնացվում է Ալնիունիի հետ[2801]: Այստեղից գտնվել են մեծ քանկությամբ մշակված և կիսամշակ քարաբեկորներ, որոնց մի մասը նախատեսված էր կոթողների կանգնեցման համար և ունեին համապատասխան փորվածքներ[2802]: Թոփրաքքալեի հանդիսավոր կառույցների համար օգտագործված կրաքարը,

---

[2795] Пиотровский 1959a: 150; Եսայան 1982, էջ 22-28: Տե՛ս նաև Гулканян 1966a: 269 сл.
[2796] Kleiss 1988a: 47, Abb. 49, Taf. 6/2, 7/1-2.
[2797] Çilingiroğlu 2011a: 1060.
[2798] Köroğlu 2009: 384, n. 7.
[2799] CTU IV, CT Ay-24-28a.
[2800] CTU IV, CT Ay-27.
[2801] Belli 1980a [1982]: 120ff., Lev. I-XIX; Dan 2010c: 78.
[2802] Այլ տեսակետի համար տե՛ս Salvini 2005c: 149, ուր նշվում է, որ այդ հիմնաքարերը կարող էին օգտագործվել ոչ թե կոթողներ, այլ խաչքարեր կանգնեցնելու համար: Քարհանքն ընկած է հին Արտամետի տարածքում:

հավանաբար, բերվել էր Զորավանցին (Զորավանիս) մերձակա քարհանքից: Միայն Վանի շրջակայքից հայտնի են ուրարտական շրջանում շահագործված վեց քարհանք[2803]: Այանցի հարավային պարսպի անդեզիտե քարերը բերվել են նրանից մոտ 30 կմ հեռավորությամբ շահագործված քարհանքից[2804]:

Քարամշակման պետական արհեստանոց էր գործում Այանցից 6-7 կմ հեռավորությամբ ընկած Ալաքյոյի ամրոցում: Ուշագրավ է, որ այստեղից հայտնաբերվել են առյուծների՝ կիսատ թողնված արձանների անդեզիտից քարաբեկորներ[2805]: Այանցի բերդաքաղաքի սենյակներից մեկից գտնված մեծ քանակությամբ նախշազարդ, փորագրված, իսկ երբեմն՝ կիսավարտ քարե անոթների մնացորդները նույնպես վկայում են քարագործական արհեստանոցի գոյության մասին (նկ. Գ-29)[2806]:

#### 3.3.2.2.6. Այլ

Այլ ոլորտների պատկանող պետական արհեստանոցների շարքին կարելի է դասել նկարիչների արհեստանոցները/տները, որ պեղվել են Էրեբունիում և Տուշպայում[2807]: Այս շարքում կարելի է խմբավորել նաև այլ բնագավառներ, ինչպես, օրինակ, բժշկությունը[2808]: Դիլքայայի ուրարտական շրջանի հուշարձանից հայտնաբերված ոսկրաբանական նյութը վկայում է, որ այստեղ իրականացվել են անգամ գանգոսկրի վիրահատություններ[2809]: Այսպես կոչված «քուրմ-բժշկի տուն» է պեղվել Արգիշթիխինիլիում[2810]:

### 3.3.3. Չափի, կշռի և ծավալի միավորները և պետական ստանդարտները

#### 3.3.3.1. Պետական ստանդարտները

Սիրիա-միջագետքյան աշխարհում գործել են չափ ու կշռի մի քանի ստանդարտներ, տեքստերում շատ հաճախ է նշվում, թե ինչ ստանդարտով է կատարվել գործարքը կամ փոխանցումը՝ «թեթև մինա»-յով (մոտ 500 գր), «ծանր մինայով (մոտ 1000 գր)», «կարգամիսյան մինա»-յով (մոտ 470 գր) և այլն[2811]:

Մտածել, որ Ուրարտուի տարբեր մարզերում գործել են իրարից տարբեր ստանդարտներ, քիչ է հավանական[2812]: Ուրարտական տեքստերում, կարծում ենք,

[2803] Belli 1980a [1982]: 119; Belli, Dinçol 1980 [1982]: 167ff.
[2804] Çilingiroğlu 2012a: 4.
[2805] Derin, Sağlamtimur 1998: 15ff., Çiz. 1-3; Belli 2005b: 208.
[2806] Çilingiroğlu 1994: 74ff.; նույնի՝ 1996: 188, Lev. I-VI; Sağlamtimur 2009: 487ff.
[2807] Тер-Мартиросов 2005: 148 сл.; Tarhan 2005a: 126-127.
[2808] Ուրարտուում բժշկության համար տե՛ս Межлумян, Мартиросян 1972: 235 сл.
[2809] Güleç 1989: 155ff.; Gözlük *et al*. 2004: 56, Res. 1.
[2810] Мартиросян 1967: 229.
[2811] Powell 1987-1990: 516.
[2812] Հմմտ. Payne 2005: 30.

ունենք վկայություններ՝ պետության կողմից չափ ու կշռի նոր համակարգի ներմուծման կամ գործող միավորների ստանդարտացման մասին: Դա վերագրվում էր Իշպուինիի և Մենուայի շրջանին[2813], ինչը միանգամայն հնարավոր է, սակայն, փաստական վկայություններ չկան: Փոխարենը, նման վկայություններ ունենք Արգիշթի Մենուայորդու շրջանի համար: Մասնավորապես, նրա արձանագրություններից մեկում, որը եզակի է իր բնույթով, նշվում է հետևյալը. $^{m}$*Argištiše alie ini uḫini* [N]A$_4$ *šua"e*/$^{NA4}$*šua"e*[2814]: Նույնաբնույթ տեքստ է պարունակում մեզ հետաքրքրող երկրորդ՝ ավելի ընդարձակ արձանագրությունը, ուր ասվում է. $^{m}$*Argištiše alie šuini adini aka"e* 1 1-KᴍŠ$^{MEŠ}$ NA$_4^{MEŠ}$ *'aḫae* $^{m}$*Argištiše uḫinie*[2815]:

Երկու տեքստերն էլ, բացառությամբ «*Արգիշթին ասում է*» բանաձևի, հնարավոր չէ թարգմանել, առավել ևս՝ օգտագործված բառապաշարը (*adini, aka"e, uḫini, šua"e*) հիշատակվում է միայն այստեղ: Մյուս կողմից, NA$_4$ գաղափարագրի և *ini uḫini* («*այս uḫini-ն*») արտահայտության առկայությունը ցույց է տալիս, որ գործ ունենք ինչ-որ առարկայի հետ, որը կարող էր լինել քարից (ինչպես ենթադրում են հրատարակիչները)՝ նկատի ունենալով NA$_4$ (= *abnum*) «քար» գաղափարագրի կիրառությունն այստեղ: Սակայն, պետք է հաշվի առնել, որ NA$_4$ գաղափարագիրը միաժամանակ նշանակում է «կշռաքար»[2816], որոնք կարող էին լինել թե քարից, և թե մետաղից: Բացի դա, երկրորդ արձանագրության մեջ NA$_4^{MEŠ}$՝ մեր կարծիքով՝ «կշռաքարեր» գաղափարագրից առաջ գրվել է 1 1-KÙŠ$^{MEŠ}$՝ «մեկ արմնկաչափ» գաղափարագիրը: Չափ ու կշռին վերաբերող այս հիշատակումները մեկ արձանագրության մեջ չեն կարող լինել պատահականություն և, մեր կարծիքով, վերաբերում են արքայի՝ Արգիշթի Մենուայորդու կողմից չափ ու կշռի միավորների ստանդարտացմանը կամ պետական/արքայական միավորների հաստատմանը: Ամենայն հավանականությամբ՝ պատրաստվել են նաև այդ ստանդարտին համապատասխանող կշռաքարեր և 1 «արմնկաչափ»-ը նշող իրեր, որը կարող էր լինել պարան կամ պատրաստված լինել փայտից/մետաղից[2817]: Դրանք, թերևս, ուղարկվել են բոլոր խոշոր կենտրոնները՝ այսուհետև դրանցով կատարելու/ճշգրտելու հաշվարկները: Ուշագրավ է, որ վերը նշված և, մեր կարծիքով, «կշռաքար»-ի (*uḫini*$^{(?)}$) ստանդարտացմանը վերաբերող առաջին տեքստը գտնվել է Վերին Անձավից,

[2813] Հմայակյան 1994, էջ 20; նույնի՝ 2012, էջ 41:
[2814] КУКН, 183; CTU I, A 8-41.
[2815] КУКН, 184; CTU I, A 8-40.
[2816] CAD, A I, 1964: 59f. (*abnu* A 4).
[2817] Powell 1987-1990: 462.

որտեղից և հայտնաբերվել է բրոնզե կշռաքար՝ 1 «բիայնական» տաղանդ կշռով: Քարից կշռաքար է հայտնաբերվել նաև Այանցի միջնաբերդից[2818]:

Սիրիա-միջագետքյան աշխարհում եզակի չեն այն օրինակները, որոնք վերաբերում են պետության/արքայական իշխանության կողմից չափ ու կշռի պետական/արքայական ստանդարտներ հաստատելուն: Չափ ու կշռի պետական/արքայական ստանդարտներ հաստատելու և գործող միավորները կանոնակարգելու երևույթ Միջագետքում վկայված է դեռևս Աքքադի թագավորության շրջանում, երբ Նարամ-Սինի կողմից շրջանառության մեջ դրվեց չափ ու կշռի մեկ հիմնական միավոր՝ «արքայական GUR»-ը ($LU_2$.GAL GUR/*šarru kurru*)[2819]: Նման երևույթ վկայված է Ուրի III հարստության շրջանում[2820], երբ «ճիշտ» կշռով կշռաքարը, որը երբեմն կոչվում էր «Շամաշի կշռաքար»[2821] (իմա՝ «արդար, ճիշտ») դրվում էր տաճարում, ինչպես նաև ուղարկվում երկրի խոշոր կենտրոնները: Նշենք նաև, որ նման երևույթի հանդիպում ենք նորասորեստանյան շրջանում ևս, երբ Թիգլաթպալասար III-ից սկսած կիրառության մեջ է դրվում «արքայական մինա»-ն[2822], ինչը կարելի է դիտել այս արքայի ձեռնարկած բարեփոխումների համատեքստում:

### 3.3.3.2. **Չափի, կշռի և ծավալի միավորները**

Ամենայն հավանականությամբ Ուրարտուում սկզբնապես կիրառվել են սիրիա-միջագետքյան չափ ու կշռի միավորները: Ուրարտուում կիրառված չափի հիմնական միավորը «կանգուն»-ը կամ «արմնկաչափ»-ն էր (1-KÙŠ), որը կազմում էր մոտ 52 սմ և նույնական էր «նիպպուրյան արմնկաչափ»-ին (51.8)[2823]: Մենուայի տեքստերից մեկում նշվում է արքայի՝ Արծիբի անունով ձիու կատարած ցատկի մասին՝ 22 «արմնկաչափ» (22 1-KÙŠ), այն է՝ մոտ 11.4 մ[2824]: Արգիշթի Ռուսայորդու մեկ այլ տեքստում նշվում է, որ արքայի արձակած նետը թռել է 950 «արմնկաչափ»՝ մոտ 492 մ (9 ME 50 1-KÙŠ)[2825]:

Ուրարտական ամրոցաշինության մեջ օգտագործվող հում աղյուսները ևս պատրաստվում էին այդ ստանդարտին համապատասխան. Կարմիր բլուրում կիրառված մեկ «արմնկաչափ»-ը կազմում էր 51.8 սմ-ից 52.5 սմ[2826], Էրեբունիում կիրառված հիմնական չափը 47.4 սմ էր, որը մոտ էր Լագաշի «արմնկաչափ»-ին (49.5

[2818] Batmaz 2013a: 69.
[2819] Powell 1995: 1955.
[2820] Biga 2006: 341ff.
[2821] Ascalone, Peyronel 2001: 9f.
[2822] Radner 1999a: 130; Fales 1996: 12ff. Տեքստային վկայությունների համար տե՛ս Tadmor, Yamada 2011, Nos. 61-63.
[2823] Дьяконов 1951б: 116; Сивков 1944: 83 сл. Հմմտ. Варданян, Асатрян 1980: 167, прим. 5.
[2824] КУКН, 136; CTU I, A 5-91.
[2825] КУКН, 408; CTU I, A 11-7.
[2826] Пиотровский 1959а: 205; նույնի՝ 1959б: 170.

սմ)[2827]: «Լուվրի աղյուսակը» ուրարտական ամրոցներից մեկի՝ Ուշկայայի մասին նշում է, որ նրա պատերի հաստությունը կազմում էր ութ «կանգուն»[2828]:

Տարածական չափ մատնանշող որևէ ուրարտական տեքստ առայժմ հայտնի չէ: «Լուվրի աղյուսակ»-ի տեղեկությունը Ուլխու քաղաքի հետ կապված 300 ANŠE (= *imērū*)-ի մասին կարող էր վերաբերել ինչպես ստացված բերքի քանակությանը, այնպես էլ այն տարածքին, որտեղից ստացվել է բերքը[2829]: Այս դեպքում, միգուցե, կարելի է ենթադրել, որ Ուրարտուում կիրառվել են 1-ANŠE մատնանշող չափի միավորներ (60 × 60 մ), թեև, մյուս կողմից, ուրարտական թվարկության համակարգը հենվում էր ոչ թե 60-ական, այլ 10-ական համակարգի վրա: Այս առումով կարևոր է նշել, որ ուրարտական շրջանում դաշտերը բաժանվել են քարերով եզրագծված և գրեթե միևնույն չափեր ունեցող հողակտորների, ինչը նկատվում է, մասնավորապես, Ալահվերդիքենդիի ամրոցի շրջակայքում: Յուրաքանչյուր հողակտորի մակերեսը կազմում էր 3000-3750 մ$^2$ (40-50 × 75 մ)[2830]: Սա շատ հետաքրքիր է, քանի որ, ինչպես երևում է, դաշտերը բաժանվել են 1 ANŠE-ին մոտ կտորների, այսինքն՝ մի տարածքի, որի ցանքսի համար, ինչպես վերը նշեցինք, պահանջվում էր մեկ իշաբեռ սերմ:

Կշռի միավորներից ուրարտական արձանագրություններում մի քանի անգամ հիշատակվում է «մինա»-ն (MA.NA)[2831], որը կշռի հիմնական միավորներից էր Հին Արևելքում (*manû(m)*, MA.NA): 1 միջագետքյան «մինա»-ն հավասար էր մոտ 500 գր-ի, որի 1/60-րդ մասն էր կազմում «սիկղ»-ը (*šiqlu*)[2832]:

Ուրարտական տեքստերում հանդիպող կշռի երկրորդ միավորը, որը թերևս նույնպես չուներ տեղական ակունքներ, *kapi*-ն է: Ուրարտերենում *kapi* բառը հանդիպում է հացահատիկի շտեմարանների կառուցման մասին հաղորդող շինարարական բնույթի արձանագրություններում[2833]: Այս բառը համարվում է փոխառություն խեթերենից[2834], ուր վկայված է $^{DUG}$*kappi*-ն[2835]: Միաժամանակ նկատենք, որ աքքադերենում նույնպես վկայված է *kappi*-ն, որը նշանակում է «գավաթ», «անոթ» կամ «դույլ»[2836]: Ուրարտական տեքստերում հանդիպող կշռի երրորդ միավորը նույնպես ունի միջագետքյան ծագում: Դա BANEŠ շումերոգրամն է (աքք. *ṣimdu*), որը տեքստերում մի քանի անգամ կիրառվել

[2827] Сивков 1944: 85; Оганесян 1980: 127 сл.
[2828] Mayer 1983: 86f. (Z. 179).
[2829] Дьяконов 1951a, № 49 (199), прим. 52; Mayer 1983: 88f. (Z. 208).
[2830] Kleiss, Kroll 1977: 59, Abb. 6.
[2831] КУКН, стр. 453; CTU II: 458.
[2832] Powell 1987-1990: 509f.
[2833] КУКН, стр. 451; CTU II, p. 132.
[2834] Хачикян 1985: 53.
[2835] Tischler 2001: 69.
[2836] CAD, K, 1971: 188f. (*kappu* B).

է որպես *kapi*-ին համարժեք[2837], ինչն էլ թույլ է տալիս գաղափար ունենալ է *kapi*-ի մասին որպես սորուն մարմինների չափի միավոր[2838]:

Ուրարտուում կիրառված BANEŠ-ի ստանդարտ չափի մասին չկա միասնական մոտեցում: Փոլ Զիմանսկին, ելնելով 1 *sūtu*-ի համար ենթադրված 18.4 լ արժեքից, 55.2 լ է ենթադրում BANEŠ-ի համար[2839], 18 լիտր են ենթադրում Օքթայ Բելլին և Միրյո Սալվինին[2840], մինչդեռ վերջինս նախապես ենթադրել էր մոտ 25 լ[2841]: Մարգըրեթ Փեյնը *kapi*-ի համար առաջարկում է մոտ 14.8 լ արժեքը[2842]:

Հայտնի է, որ մեկ BANEŠ-ը կազմում էր 3 *sūtu*: Մեկ *sūtu*-ն սովորաբար համարժեք էր 10 *qû*-ի, իսկ 3 *sūtu*-ն կամ 1 BANEŠ-ը՝ 1 *ṣimdu*-ի (= 30 *qû*): Ընդունելով, որ 1 *qû*-ն կազմում էր մոտ 1 լ, իսկ 1 *sūtu*-ն՝ մոտ 10 լ[2843], ապա BANEŠ-ը կարող էր կազմել 30 լ: Քանի որ նորասորեստանյան շրջանում միանշանակ չէ նաև 1 *sūtu*-ի արժեքը, որը կարող էր տատանվել 8-10 *qû*-ի միջև[2844], ապա որպես հաշվարկների հիմք (որին անդրադարձանք վերևում) մենք վերցրել ենք 1 BANEŠ = 25 լ միջին արժեքը:

Ինչպես ենթադրում ենք, Ուրարտուում Արգիշթի Մենուայորդու օրոք սահմանվել է կշռի միավորների համար ստանդարտացված արժեք: Այս մասին կարելի է դատել նաև Վերին Անձավից գտնված կշռաքարից՝ արձանագրված այսպես կոչված «պետ-ստանդարտ»-ի համաձայն: Արտաքնապես այն նմանվում էր միջագետքյան «բադ»-կշռաքարերին (նկ. Գ-30/1-3), որոնք կշռում էին «մաքուր» 1 կամ «կրկնակի» տաղանդ և արձանագրված են՝ նշելով կշիռը և արքայի անունը[2845]: Ուրարտական կշռաքարը նույնպես կրում է թե սեպագիր, և թե պատկերային գրով գրված արձանագրություն: Ինչպես սեպագիր արձանագրությունն է փաստում՝ կշռաքարը կշռել է 50 MA.NA[2846]: Հետաքրքիր է, որ կշռաքարի կշիռը ճիշտ 35 կգ է[2847], այսինքն՝ Ուրարտուում 1 «մինա»-յի արժեքը հավասար էր 700 գր-ի: Սա շեղում է սիրիա-միջագետքյան աշխարհում, հատկապես՝ նորասորեստանյան շրջանում կիրառվող կշռային համակարգերից, ուր գերակշռում էր միջագետքյան «ստանդարտ» մինան (մոտ 500 գր), իսկ Ք.ա. 8-րդ դ-ի երկրորդ կեսից սկսած՝ «կարքեմիշյան մինա»-ն (մոտ 470 գր)[2848]:

---

[2837] Համապատասխանաբար՝ КУКН, No. $265_{9,\ 11\text{-}12}$, $278a_{12}$; CTU I, A $9\text{-}19_{12}$, A $9\text{-}20_{9,\ 10\text{-}11}$.
[2838] Հմմտ. նաև հայ. «կապիճ» բառը (Sandalgian 1900: 386).
[2839] Zimansky 1985: 120, n. 157.
[2840] Salvini 1998b: 133; Belli, Salvini 2006: 72.
[2841] Salvini 1969: 20.
[2842] Payne 2005: 86ff.
[2843] Powell 1987-1990: 504.
[2844] Powell 1987-1990: 488; Fales 1990a: 27, n. 14.
[2845] Ascalone, Peyronel 2001: 9, n. 24.
[2846] CTU IV, B 18-8.
[2847] Belli 2009d: 757f.
[2848] Radner 1999a: 130f., 139ff.

Քանի որ «ստանդարտ» մեկ տաղանդը հավասար էր 60 մինայի և 3600 սիկղի (60×60)[2849], ապա, նույն սկզբունքով առաջնորդվելու դեպքում պետք է ենթադրել, որ ուրարտական 1 տաղանդը, որը կազմում էր 50 մինա, հավասար էր լինելու 2500 սիկղի (50ճ50): Սակայն, այդ դեպքում մեկ սիկղի համար ստանում ենք 14 գր արժեքը, ինչը սիկղի՝ հինարևելյան բոլոր ստանդարտներից դուրս է[2850]: Փոխարենը, հնարավոր է, որ մեկ տաղանդը կամ 50 մինան հավասար լինեին 3000 սիկղի՝ 1 մինա : 60 սիկղ հարաբերակցության դեպքում[2851]: Այս դեպքում 1 ուրարտական սիկղի արժեքը կազմում է մոտ 11.7 գրամ, որը 1 սիկղի արժեքն է նաև փոքրասիական-լևանտ-սիրիական համակարգում, այն է՝ ± 11.75 գրամ («խեթական սիկղ»)[2852]: Այս փաստը ինքնին հետաքրքիր է այն համատեքստում, որ ըստ էության բացակայել են ուղիղ առևտրական հարաբերությունները Ուրարտուի և Ասորեստանի միջև, իսկ որպես միջնորդ օղակ կարող էին հանդես գալ փոքրասիական լուվիական թագավորությունները, որոնց հետ Ուրարտուն իր առևտրական հարաբերություններում, հնարավոր է, հիմնվել է «խեթական» համակարգերի վրա: Այստեղ տեղին է մեկ անգամ ևս նշել, որ ուրարտերենի *kapi* բառը կարող էր փոխառված լինել խեթերենից[2853], ինչպես և հենց «լցնել», «ամբարել» բառը (ուրարտ. *šu-*, հմմտ. սեպագիր լուվիերենի *šuwa-* և հիերոգլիֆային լուվիերենի *suwa*-ն[2854]):

Մեզ են հասել կարասների տարողությունը մատնանշող երեք միավորներ՝ *aqarqi*, *ṭerusi* և *arusi* (LIŠ/DÍLIM)[2855]: Հանդիպում են նաև դրանց ակրոֆոնիկ ձևերը (*a = aqarqi*, *ṭí/ṭé = ṭerusi*): Կարասների տարողության չափը նշվել է նաև հիերոգլիֆային գրահամակարգով, որոնք պահպանվել են անհամեմատ մեծաթիվ օրինակներով[2856]:

---

[2849] Powell 1987-1990: 514.

[2850] Դժվար է միանշանակ պնդել, որ Կարմիր-բլուրից հայտնաբերված ոսկու ձուլակտորից կտրված սեգմենտը՝ 14.85 գր քաշով, ներկայացրել է ուրարտական «սիկղ»-ը: Իսկ արտահայտված կարծիքը՝ այն համարելու 1 SU, այն է՝ մինայի 1/36 մասը, խնդրահարույց է, քանի որ դժվար է միանշանակ պնդել, որ այն հենվելու էր մինայի՝ հատկապես 505 գր արժեքի վրա: Վերստին նկատենք, որ այս դարաշրջանում Ասորեստանում կիրառվող «կարքեմիշյան մինա»-ն կշռում էր մոտ 470 գր: Տե՛ս և հմմտ. Հմայակյան 1997, էջ 22; նույնի՝ 2007, էջ 162:

[2851] Նման հարաբերակցություն է վկայված սիրիա-ուգարիթյան համակարգում (Ալալախ, Ուգարիթ), ուր 1 տաղանդը հավասար էր 3000 սիկղի: Տե՛ս Zaccagnini 1978: 67ff.; Powell 1987-1990: 516; Mederos, Lamberg-Karlovsky 2004: 208:

[2852] Mederos, Lamberg-Karlovsky 2004: 203, 208; Rahmstorf 2006: 21.

[2853] Хачикян 1985: 53.

[2854] Kosyan 1997: 29f.

[2855] Salvini 2001a: 308 and n. 1; Belli, Salvini 2006: 69.

[2856] Կարմիր-բլուրի թիվ 25 և 28 պահեստները միասին տեղավորում էին 152 կարաս: Դրանցից միայն 20-ը ունեին սեպագիր արձանագրություններ,, մինչդեռ, մնացածը կրում էին հիերոգլիֆային նշումներ (Пиотровский 1959a: 145 сл.): Ընդհանուր առմամբ, Կարմիր-բլուրի մոտ 400 կարասներից միայն 55-ը ունեին սեպագիր նշումներ: Տե՛ս Пиотровский 1963: 6: Այանցում ևս հիերոգլիֆային արձանագրումներն ավելի մեծ քանակ են կազմում: Տե՛ս Kozbe *et al*. 2001: 102, 104f. Նույնը նաև Քայալըդերեում և այլուր

Ուրարտուում այս նույն նպատակով կիրառվել է նաև լուվիական հիերոգլիֆային գիրը: Տարողության չափերն այս գրահամակարգով են արտահայտված Ալթըն-թեփեից հայտնաբերված կարասների վրա՝ ուրարտ. *aqarqi* = լուվ. *aharku* (á-há+r-ku), ուրարտ. *ṭerusi* = լուվ. *turuza* (tu-ru/ra-za) և ուրարտ. *arusi* = լուվ. *aruza* (a-ru-za/i)[2857]:

Այս միավորների ճշգրիտ արժեքի բացահայտման խնդրին են նվիրված մի շարք աշխատանքներ, թեև՝ իրարամերժ եզրահանգումներով[2858]: Ամփոփ նշենք, որ ըստ Ռ. Վարդանյանի և Դ. Ասատրյանի՝ 1 *aqarqi*-ն կարող է հավասարվել 300.5 լ-ի, եթե կարասում պահվում էր գինի կամ ջուր, 276 կգ-ի, եթե պահվում էր բուսական յուղ, և 234 կամ 180 կգ-ի՝ սորուն մարմինների դեպքում (համապատասխամաբար՝ ցորեն և գարի[2859]), իսկ *ṭerusi*-ն կազմում էր 1/10 *aqarqi*: Փաստորեն, *ṭerusi-aqarqi-arusi* համակարգը որպես ոչ հեղուկ (այն է՝ սորուն, չոր) մարմինների միավոր ուներ այլ արժեք[2860]:

Համաձայն Ինգրիդ Ռայնդելի և Միրյո Սալվինիի՝ 1 *aqarqi*-ն հավասար է 237 լ-ի, 1 *ṭerusi*-ն՝ 23.7 լ-ի (1/10 *aqarqi*), իսկ 1 *arusi*-ն՝ 1.185 լ-ի (1/20 *ṭerusi*)[2861]: Առավել ճշգրտված հաշվարկներով՝ այժմ 1 *aqarqi*-ի համար ենթադրվում է 275.3 լ, 1 *ṭerusi*-ի համար՝ 27.53 լ (1/10 *aqarqi*), և 1 *arusi*-ի համար՝ 1.376 լ (1/20 *ṭerusi*)[2862]: Այս հարաբերակցությունը մոտ է Ռ. Վարդանյանի և Դ. Ասատրյանի հաշվարկներին[2863]:

Հեղուկ մարմինների չափի այս միավորները, դատելով ուրարտական պատկերագիր օրինակներից, կարելի է թարգմանել որպես «կարաս», «տիկ» և «փարչ» (նկ. Գ-31/1-6):

---

(Burney 1966: 85ff., Fig. 17): Չավուշթեփեի կարասներրի գրանշումների համար տե՛ս Dinçol 1974 [1977]: 105ff., Šek. 1-2, Lev. 1-8; Արծկե/Ադիլջևազ - Քեֆ-Քալեսիի համար՝ Bilgiç, Öğün 1965a [1967], 3ff., Lev. 13-14, Վերին Անձավի համար՝ Belli, Salvini 2006: 55ff., etc. Այանցի ամրոցում բացված նոր պահեստների տարողության չափերի համար տե՛ս Çilingiroğlu 2008b: 187ff. Առավել մանրամասն տե՛ս և հմմտ. նաև Payne 2005: 2ff.

[2857] Տե՛ս Laroche 1971 [1973]: 55ff.; Dinçol 1974 [1977]: 107ff; Klein 1974: 77ff.; Клейн 1978: 129 сл.; CTU IV, CP Alt-1-8.

[2858] Lehmann-Haupt 1931: 474sqq.; Пиотровский 1952: 74 сл.; նույնի՝ 1959a: 145; Брашинский 1978: 141 сл.; Варданян, Асатрян 1980: 166 сл. Վերջին ուսումնասիրություններից տե՛ս Reindell, Salvini 2001: 121ff.; Payne 2005: 58ff.; Sağlamtimur 2005: 139ff.; Çilingiroğlu 2008b: 187ff.; Mileto 2010: 21ff. (նշված գրականությամբ):

[2859] Հիմնվելով 1 լ = 0.880/0.940 գ (բուսական յուղ), 1 լ = 0.750/0.830 գ (ցորեն) և 1 լ = 0.600/0.720գ (գարի) հարաբերակցության վրա: Տե՛ս Варданян, Асатрян 1980: 178. Հմմտ. Ellison 1981: 38; Wiggermann 2000: 186.

[2860] Варданян, Асатрян 1980: 176.

[2861] Reindell, Salvini 2001: 121ff.

[2862] Salvini 2010: 38ff. Հմմտ., միաժամանակ, Çilingiroğlu, Salvini 2012: 101ff.

[2863] Կարմիր-բլուրի կարասների մի խմբի համար (հիերոգլիֆային) ակարկին տատանվում է միջինը 234.2-ից (A խումբ) 275լ-ի (B խումբ), տերուսին՝ 23.4-ից (A խումբ) 27.5լ-ի սահմաններում (B խումբ): Դատելով Վարդանյանի և Ասատրյանի հաշվարկներից՝ դրանցում գինու փոխարեն պահվել է ցորեն և յուղ (Варданян, Асатрян 1980: 173 сл., Табл. 3-4): Ի դեպ, Կարմիր-բլուրի թիվ 28 մառանի այն հինգ կարասները (No. 42, 45, 48, 72, and 73), որոնցում հայտնաբերվել են հացահատիկի մնացորդներ, կրում են միմիայն հիերոգլիֆային նշաններ: Տե՛ս Пиотровский 1952: 19 сл., рис. 38-39, 42.

### 3.3.3.3. **Պետական միջոցների բաշխումը և սննդակարգը**

#### 3.3.3.3.1. **Պետական միջոցների բաշկումը**

Ուրարտական կենտրոններում ամբարված պետական պահուստները ծառայում էին ապահովելու համար բազմամարդ պաշտոնեությանը, քրմությանը, սպասարկող անձնակազմին, կայազորին, արքունի բանակի մերձակա զորակայաններին, գուցե նաև՝ պետական տնտեսության մեջ զբաղված երկրագործներին և անասնապահներին ևս: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ բիայնական տիրապետության տակ ընկած ողջ տարածքի բնակչությունը պարենավորվում էր պետության կողմից, ինչպես դա ենթադրվում է, օրինակ, Ուրի III հարստության ժամանակ (շուրջ 300 հազ. մարդ[2864]) կամ կրետե-միկենյան հասարակություններում Վաղ-պալատական դարաշրջանում[2865]:

Սակայն, կարծում ենք, որ վերաբաշխման բիայնական համակարգը ավելի շուտ հիշեցնում էր էբլայական կամ Նոր-պալատական շրջանի կրետական տնտեսական համակարգը, երբ միջոցների հավաքումն ու վերաբաշխումը պետության կողմից ուղղված էր հասարակության իշխող, սպասարկող և ծառայող խավերին[2866], որից դուրս էր մնում համայնքը, Ուրարտուի պարագայում՝ կախյալ և հպատակ բնակչությունը:

Վերաբաշխման այս համակարգում բնական է ենթադրել, որ միջին և բարձր ծառայողները ստացել են ավելին, քան զինվորները և սպասարկող/ծառայող անձնակազմը, նամանավանդ, եթե նրանք ունեցել են ընտանիքներ: Դա երևում է նաև Բաստամից և Այանցից գտնված գրավոր նյութից, որը տվյալներ է պահպանել պետական պահուստների համալրման և բաշխման մասին: Նման երևույթ վկայված է նաև Էրեբունիում, սակայն, ցավոք, առանց ուղեկցող սեպագիր/գրավոր վկայությունների[2867]:

Այս փաստը հավաստող գրավոր վկայությունները մի քանիսն են: Բաստամից գտնված խիստ պակասավոր աղյուսակներից մեկում, օրինակ, նշվում է չորս տարբեր անձանց 1-ական ոչխար (UDU 1-*Æi*) հատկացնելու մասին[2868]: Այանցից գտնված CB Ay-1 բուլլայի վրա արձանագրված է 6 BANEŠ գարի և ոմն Բիլիմադուրիի անունը, ով ստացել է այն[2869]: Նկատի ունենալով, որ 6 BANEŠ գարին կազմում է մոտ 150 լ, ինչը, թերևս, հիշյալ Բիլիմադուրիի վճարն էր, ապա կարելի է ենթադրել, որ նա զբաղեցրել է բավական բարձր դիրք, իսկ վճարը բավական էր սննդով ապահովելու առնվազն 4

[2864] Waetzoldt 1987: 119. Տե՛ս և հմմտ. նաև Renger 1994: 176ff.; Van De Mieroop 2004: 59.
[2865] Renfrew 1972.
[2866] Christakis 2011: 200ff. Մայրցամաքային Հունաստանի համար տե՛ս Palaima 2004: 284, ուր և տե՛ս ընտրված մասնագիտական գրականությունը (p. 273ff.):
[2867] Hodjasch 1999: 255ff.; Salvini 2001a: 279f.
[2868] CTU IV, CT Ba-$4_{1-4}$.
[2869] CTU IV, CB Ay-$1_2$.

անձից բաղկացած ընտանիքի երկու ամիս շարունակ: Մեկ այլ բուլլա (CB Ay-39) վերաբերում է քրմերին կամ տաճարի սպասարկող անձնանց տրված ինչ-որ չափաքանակների (2 BU LIŠ / 2 *pu-li*$_x$ LÚ $^{d}$*’aruba*)[2870]: Ոմն Զանուայի՝ $^{LÚ}$*mardadi*-պաշտանյային *5*(-)*diri gai* տալու (՞) մասին է նշվում Վերին Անձավից գտնված բուլլաներից մեկում[2871]:

Այանցի բուլլաների երկրորդ խումբը վերաբերում է ձիերի համար հատկացվող գարուն և ծղոտին: Ընդ որում, առաջին անգամ նման տեքստերում է վկայվում ուրարտ. *Æipu(ni)* բառը, որը թարգմանվում է որպես «գարի»[2872]: Տեքստերում ձիերի համար հատկացվող գարու չափը տատանվում է 1.5 LIŠ-ից մինչև 1 *ṭé* 4 LIŠ, այն է՝ մոտ 1.8 լ-ից մինչև 28.44 լ[2873]: Այս վերջին թիվը, հնարավոր է, 15-օրյա չափաբաժին էր:

Այստեղ նշենք նաև, որ բուլլաների վերջին խումբը արձանագրված է միայն պատկերային գրով, որով ըստ էության նշվել է կարասում պահվող առկա պաշարի չափը այն փակելուց առաջ և դժվար է ասել, թե ինչ պաշարների այն կարող էր վերաբերել[2874]: Համենայն դեպս, կարասները կարող էին լցված լինել հացահատիկով, ինչպիսի օրինակներ ունենք ուրարտական բազմաթիվ ամրոցներից[2875]: Այստեղ հետաքրքիր է նշել, որ Տուշպայի դամբարանադաշտում՝ Ալթընթեփեում բացված ստորգետնյա ժայռափոր դամբարաններից մեկից գտնված խեցանոթի մի բեկորի վրա պահպանվել է *ka-pi* ŠE ընթերցումը, այն է՝ (1՞) *ka-pi* գարի»[2876]: Դա կարող է վերաբերել ստանդարտացված և միևնույն տարողությունն ունեցող այն խեցանոթների թվին, որոնցով իրականացվել է վերաբաշխումը:

### 3.3.3.3.2. **Սննդակարգը**

Ինչպես նշվեց վերը՝ Ուրարտուում զինվորների համար նախատեսված օրապահիկը հիմնականում կազմված էր գարուց, որի կալորիականությունն ավելի բարձր էր, քան ցորենինը[2877]: Գարու չափաբաժինը յուրաքանչյուրի համար կարող էր կազմել միջինը 1 լ (տե՛ս նաև վերը 2.3.7.8.): Դա ապահովում էր մոտ 2700 կկ, ինչը բավարար չափաբաժին էր հասուն տղամարդու համար[2878]: Թերևս պատահական չէ,

[2870] Salvini 2001a: 291 (CB Ay-39); CTU IV, CB Ay-39.
[2871] Belli, Salvini 2003: 145ff.; CTU IV, CB An-1.
[2872] Salvini 2001a: 284: Հետաքրքիր է, որ միջինասորեստանյան տեքստերից մեկում հիշատակվում է *ḫiburnu*-(տունը), ուր ամբարվել է գարի. 74 ANŠE 5 BÁN ŠE *i+na* GIŠ.BÁN *ša ḫi-bur-ni* «75 *emār* 5 *sūtu* գարի (կշռված) *ḫiburnu*-(տան) *sūtu*-չափով»: Տե՛ս Llop 2010: 108.
[2873] Salvini 2001a: 284ff.; CTU IV, CB Ay 13–23.
[2874] Salvini 2001a: 293ff.; CTU IV, CB Ay 41–50.
[2875] Ամփոփ տե՛ս Grekyan 2009: 102
[2876] Payne 2005: 89. Cf. Salvini, Mileto 2010: 366.
[2877] Hunt 1987: 144 and n. 11.
[2878] Ellison 1981: 38f. Հմմտ. Варданян, Асатрян 1980: 178. Այստեղ նկատենք, որ այս հեղինակների առաջարկած 250-400 գր գարու օրապահիկը ոչ միայն չի հաստատվում սեպագիր աղբյուրների տվյալներով, այլև չէր կարող ապահովել մարդուն անհրաժեշտ նվազագույն կալորիաները:

որ Այանցից գտնված անոթներից մեկը, որի կանթին ըստ երևույթին արձանագրվել է տարողության 1 LIŠ չափը, ունի գրեթե 1 լ տարողություն[2879]: Նույն քանակությունը կարելի է ենթադրել նաև սպասարկող խավի շարքային անդամների համար, ինչի մասին են վկայում հինարևելյան զուգահեռները: Օրինակ, հայտնի է, որ 1-ական *qû* (մոտ 1 լ) գարի է տրվել ջորեպաններին, նույն քանակությունն է կազմել արհեստավորների օրապահիկը Է-աննայի տաճարում ևն (1 SÌLA = ± 1 լ[2880]): Նույնը վերաբերում է նաև աքեմենյան դարաշրջանին[2881]:

Գարու օրապահիկից զատ պետական մատակարարումների հաշվին պահվող անձնակազմը պետությունից ստանալու էր նաև այլ մթերքներ, մասնավորապես՝ կաթնամթերք, ընդդեղեն, չրեր և թարմ միրգ ու բանջարեղեն ևն, ինչը հարկավոր էր մարդուն ստանալու համար անհրաժեշտ վիտամիններ և ամինաթթուներ, և որը չէր ապահովում գարու խաշիլը[2882]: Հատկապես զգացվում էր A և C վիտամինների պակասը, որ մասամբ լրացվել է սննդակարգում գարու կանաչ ածիկ, պանիր, սոխ, սիսեռ, կոտեմ և համեմ օգտագործելով[2883]:

Անկասկած, սննդի մեջ օգտագործվել է նաև մսեղեն: Սակայն, կարելի է կարծել, որ մսեղենը մեծ տոկոս չէր կազմելու և, թերևս, տրվել է ինչ-ինչ առիթներով միայն (հաղթական արշավանք, պաշտամունքի հետ կապված հատուկ օրեր ևն): Այս առումով պետք է հաշվի առնել, որ գարու համեմատությամբ մսեղենի կալորիականությունը քիչ է[2884], իսկ պետության երկրագործական շրջանների անասնապահական հնարավորությունները՝ սահմանափակ:

Անձնակազմը ստանում էր նաև գարեջուր և գինի: Ի տարբերություն Միջագետքի, ուր գարեջրին նախապատվություն էր տրվում առողջապահական նկատառումներից ելնելով՝ գործածելով այն ջրի փոխարեն[2885], ապա Ուրարտուում նման խնդիր, թերևս, չկար, և գարեջուրը, ինչպես նաև գինին ծառայողները կարող էին ստանալ որպես պարգևատրություն կամ որպես օրապահիկ՝ սահմանափակ քանակությամբ: Մասնավորապես, նորասորեստանյան աղբյուրներից դատելով՝ 10 հոգու համար նախատեսված մեկօրյա գինու բաժինը կազմում էր 1 *qû*,

[2879] Çilingiroğlu, Salvini 2012: 101f., Figs. 9-11.
[2880] Sasson 1969: 35; Renger 1971: 497; Gelb 1982: 587ff.
[2881] Briant 2002: 431f.
[2882] Ellison 1981: 35ff.
[2883] Ellison 1981: 39ff.
[2884] Khazanov 2009: 120.
[2885] Տե՛ս և հմմտ. Mineck 2009: 9.

յուրաքանչյուրին՝ մոտ 100 գր կամ մեկ գավաթ: Մեկ այլ տեքստում նշվում է 1 *sūtu* գինի հարյուր մարդու համար՝ ստանալով նույն չափաբաժինը[2886]:

Ենթադրվում է, որ պալատի սպասարկող/ծառայող անձնակազմը սնվել է բակում կամ ընդհանուր խոհանոցում[2887]: Նման խոհանոցներ պեղվել են նաև ուրարտական խոշոր կենտրոններում, ինչպես, օրինակ, Այանցում[2888], Վերին Անծավում[2889], Ալթըն-թեփեում[2890], Հայկաբերդում[2891] և Բաստամում[2892]:

Ի տարբերություն բիայնական պետությանը ծառայող և սպասարկող խավերի՝ կախյալ և հպատակ բնակչությունը ունեցել է խնդիրներ սննդի հետ կապված: Ինչպես ցույց են տալիս ուրարտական շրջանի դամբարաններից հայտնի ոսկրաբանական նյութի ուսումնասիրությունները՝ մահացածների ճնշող մեծամասնությունը եղել է թերսնված[2893]: «Ք.ա. 7-րդ դ-ի ճգնաժամ»-ի շրջանում երկրում տիրող սովի վկայություն կարող է լինել այն փաստը, որ Այանցի արտաքին քաղաքում բացված ուշ-ուրարտական շրջանի՝ բավական անկանոն և հապճեպ կառուցված տներից հայտնաբերվել են մեծ քանակությամբ շան ոսկորներ, որոնց միսը օգտագործվել է որպես սնունդ[2894]:

### 3.3.4. Ներքին հարկային համակարգը

#### 3.3.4.1. **Հարկերը**

Ուրարտական վիմագիր տեքստերը լռում են՝ չհիշատակելով պետության սահմանած որևէ հարկատեսակ: Միայն Ռուսա Էրիմենայորդու թողած Գյովելեք + Քեշիշ-գյոլի և Սավաջըքի զույգ կոթողներն են, որոնցում նշվող արտահայտություններից մեկը կարող է մեկնաբանվել իբրև հողի (՞) և ջրի (՞) օգտագործման համար ինչ-որ հարկ/վճար սահմանելու մասին[2895], այն էլ, եթե ընդունենք տրված մեկնությունը: Այստեղ նկատենք, որ խոսքը վերաբերում է հատկապես URUDU *dudie*/$^{URUDU}$*dudie terag*[*i*] մտքին, թեև, իհարկե, տեքստի թարգմանությունն ամենևին էլ հստակ չէ ($^{LÚ}$DUMU$^{MEŠ}$-*niše alu*[(*še*)] *uruluni šuini* $^{LÚ}$DUMU-*n*[*i*?] [(*q*)]*uradiri* URUDU *dudie terag*[*i*])[2896]:

---

[2886] Kinnier-Wilson 1972: 4, 50.
[2887] Kinnier-Wilson 1972: x-xi.
[2888] Çilingiroğlu 2012d: 111.
[2889] Belli 2001e: 170; Belli, Ceylan 2001: 389f.
[2890] Karaosmanoğlu M. 2011: 371f., Fig. 6; Karaosmanoğlu, Korucu 2012: 133f., Figs. 11-13; Karaosmanoğlu, Yılmaz 2013-2014: 124f., Tab. 18/1.
[2891] Erzen 1978: 9.
[2892] Kroll 2011: 166, Fig. 16.
[2893] Yiğit *et al*. 2005: 79ff., esp. p. 86.
[2894] Տե՛ս Stone 2008: 162f.
[2895] Կարագյոզյան 2002, էջ 352-353:
[2896] КУКН, 391$_{x+15-17}$; CTU I, A 14-1 Ro$_{48-50}$; A 14-2 Ro$_{49-50}$ – A 14-2 l. d.$_{1-3}$. Ընթերցման համար տե՛ս և հմմտ. Дьяконов 1963a: 71, 88; Կարագյոզյան 1976, էջ 109; նույնի՝ 2002, էջ 352; КУКН: 300; CTU I: 623.

Հողօգտագործման վճարներից բացի կարելի է ենթադրել նաև ջրօգտագործման համար սահմանված վճարների մասին, եթե համայնքը ջուրը վերցնում էր պետության կողմից անցկացված և պետությանը պատկանող ջրանցքներից: Համենայն դեպս, Ռուսա Էրիմենայորդու՝ վերը բերված արձանագրություններում նշվում է նաև այդ հողեր ջուր հասցնելու մասին (A$^{MEŠ}$ *ištini pulaïe eïa išinaïe*)[2897]: Ընդ որում, հետաքրքիր է, որ այստեղ հիշատակված «քաղաքացիներ»-ը տուշպացիներն էին՝ «Տուշպայի որդիներ»-ը ($^{LÚ}$DUMU-*še* $^{URU}$*ṭušpaini*), որոնք, ենթադրելի է, ունենալու էին առանձնաշնորհումներ: Քիչ ընդարձակ պատկեր են տալիս ուրարտական կավե արձանագրությունները:

Պետության եկամուտների մի մասը գոյանում էր կախյալ և հպատակ բնակչության վճարած հարկերից, որոնց բնույթի մասին տեղեկությունները խիստ սահմանափակ են: Հայտնի է, որ հարկերն առաքվում էին մարզային կենտրոններ, ուր կատարվում էր դրանց հաշվառումը, պահեստավորումը, ապա և օգտագործվում էր պետության կարիքների համար:

Նման տվյալների ամենամեծ խումբը ծագում է Այանցից: Ամրոցի 7-րդ հատվածից, ուր մառաններն են՝ խոշորածավալ կարասներով, հայտնաբերվել են 50-ից ավել արձանագրված բուլլաներ: Բուլլաները դրվել են կարասների բերանը օղակող պարանի վրա, որով կապվել է կարասի բերանի ծածկոցը, այնուհետև բուլլայի վրա դրվել է կնիքը և արձանագրվել՝ նշելով պահվող մթերքի տեսակը և տվյալ կարասի պարունակությունը կնքելու պահին[2898]: Արձանագրությունները մի քանի խումբ են՝ վերաբերելով թե ամրոց մուտք գործած մթերքի քանակությանը և տեսակին, և թե դրա բաշխմանը տարբեր անձանց: Այսպես, Այանցի ավելի քան 10 բուլլաներում արձանագրված են թերևս այն հարկերը՝ բնամթերքի տեսքով, որ առաքվել են մարզերից և ամբարվել ամրոցում: 1-2 տողանի նման արձանագրություններում նշված է միայն երկրանունը և դրա կառավարչի/պատասխանատուի անուն(ներ)ը, ընդ որում, տեղանուններն ունեն լայն աշխարհագրություն. հիշատակվում են «վազացիներ»-ի երկիրը ($^{m}$*’azaḫali*), այն է՝ Արարատյան դաշտավայրը[2899], Թեյշեբայի քաղաքը ($^{d}$IM-*ni* URU)[2900], Մենուախինիլի քաղաքը ($^{URU}$*menuaḫi<ni>e*)[2901] և այլն[2902]: Միգուցե, հնարավոր է այս նույնը ասել Արդունի «քաղաք»-ի համար, որից ստացված հարկը (հացահատիկը՞) հաշվառվել և կնքվել է բուլլայի վրա արձանագրելով հետևյալը՝ 1

[2897] КУКН, 391$_{x+2-3}$; CTU I, A 14-1 Ro$_{35-36}$, A 14-2 Ro$_{35-36}$.
[2898] Salvini 2001a: 279; Çilingiroğlu 2001a: 69, Fig. 2. Տե՛ս և հմմտ. նաև Çilingiroğlu 2012a: 18.
[2899] Salvini 2001a: 284 (CB Ay-10); CTU IV, CB Ay-10.
[2900] Salvini 2001a: 282 (CB Ay-4); CTU IV, CB Ay-4.
[2901] Salvini 2001a: 282 (CB Ay-3); CTU IV, CB Ay-3.
[2902] Salvini 2001a: 281ff. (CB Ay-5-9, 11-12); CTU IV, CB Ay-5-9, 11-12.

KIŠIB GUD.APIN $^{URU}$*arduni*[2903]: GUD.APIN GN հասկացությամբ, հնարավոր է, արտահայտել են հողից ստացված հարկը հացահատիկով, եթե հաշվի առնենք կիրառված գաղափարագրերը՝ «ցուլ» և «արոր»[2904]:

Այստեղ հպանցիկ նկատենք, որ ստացված ապրանքների նման հակիրճ արձանագրումներ՝ հիմնականում նշելով միայն քաղաքանունը, որտեղից այն առաքվել է, հայտնի են նաև նորասորեստանյան շրջանի կնքադրոշմների վրա[2905]:

Տվյալների երկրորդ խումբը Կարմիր բլուրից է: Այստեղից գտնված նամակներից մեկում կարծես թե խոսվում է նման հարկահանության (՞) մասին: Տեքստում, մասնավորապես, նշվում է արքայի առջև երկու $^{LÚ}$*šiardiali*-մարդկանց ներկայանալու (բառացի՝ «բերվելու»(՞), «գցվելու»(՞)) մասին, այնուհետև թվարկվում են այն միջոցները, որ տրվելու էին (՞) արքային/պետությանը, այդ թվում՝ «տարեկան ծղոտ (՞)» (ŠAM$^{Ú}$ *ša”ali*[2906]), 1 ձի, 1 մեծ (՞) *suḫurdaḫi*, 1 *dauše*, 1 ջորի, 30 ձող (՞)[2907], 20 *suri ḫilḫili*, 2 «կապի» ճերմակ հաց (2 *kapi* BABBAR[2908] NINDA$^{MEŠ}$), իմա՝ հացահատիկ[2909]:

Կարմիր բլուրից հայտնաբերված մեկ այլ տեքստում նշվում է մարզային կենտրոն՝ «Վազա երկրի Թեյշեբայի քաղաք»[2910] առաքված իրերի մասին: Տեքստում թվարկվում են տարբեր հագուստներ և կաշիներ, այդ թվում՝ 12 բրդե հագուստ (12 TÚG UDU), 25 բրդե հագուստ (25 TÚG UDU), 198 կաշի/հագուստ (՞), 26 ցլի կաշի (26 KUŠ GUD), 162 ոչխարի կաշի (1 ME 50 10 2 KUŠ *šú-še*) և 16 կամ 18 այծի կաշի (16/18 KUŠ UZ), ինչպես նաև 14 ոչխար (14 UDU)[2911]:

Հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում Թոփրաքքալեից գտնված մեկ այլ տեքստ: Տեքստում նշվում են ընտանի կենդանիների ինչ-որ քանակներ և անձինք, որոնք, կարծես, ստացել են այդ կենդանիները. համենայն դեպս, այդպես կարելի է դատել այդ անձանց անվան գրելաձևից՝ ուղևորական հոլովով ($^{m}$x-*di*), ընդ որում, գրիչը յուրաքանչյուր նոր թվարկում իրարից առանձնացրել է գծով: Ամեն հատված առանձնանում էր պարբերաբար կրկնվող *manu* KUR-*ni guniei* արտահայտությամբ՝ «երկրում կանոնավոր էր (՞)» մոտավոր նշանակությամբ:

---

[2903] CTU IV, CT Tk-$1_{1-2}$.

[2904] Հմմտ. նաև Wartke 1993: 69; Salvini 2005b: 266.

[2905] Fales, Postgate 1995: xx-xxiii and Nos. 49-75. Միկենյան զուգահեռների համար տե՛ս և հմմտ. Aravantinos 1990: 149ff.; Palaima 2004: 295f.

[2906] Ընթերցումն ըստ КУКН, 520, прим. 10. Հմմտ. Дьяконов 1963a: 36, 68; CTU IV, CT Kb-7 $Ro_7$.

[2907] Հմմտ. Дьяконов 1963a: 71; CTU IV, CT Kb-7 $Ro_9$.

[2908] КУКН, 520, лиц. стор.$_{10}$. Հմմտ. Дьяконов 1963a: 71; CTU IV, CT Kb-7 $Ro_{10}$.

[2909] КУКН, 520; CTU IV, CT Kb-7. Թարգմանության համար տե՛ս նաև Дьяконов 1963a: 35 сл.

[2910] Ընթերցումը միանշանակ չէ՝ $^{d}$A URU-*e* $^{m}$*a-za-a* $^{KUR}$*e-ba* ըստ КУКН, 521, прим. 1: Հմմտ., սակայն, Дьяконов 1963a: 37 сл. и прим. 1, с 79; CTU IV, CT-Kb $10_7$.

[2911] КУКН, 521; CTU IV, CT Kb-10.

Ընդհանուր առմամբ՝ տեքստում թվարկվում են 3(՞) անձնանց ստացած (՞) կամ նրանց մոտ պահվող (՞) 20 ցուլ (GUD), 2 կենդանի փիղ (՞) (AM.SI$^{MEŠ}$ *tardini šeḫeri*), 16 կով ($^{GUD}$ÁB) և 21 մեծ ոչխար (UDU.GAL): Ընդ որում, հետաքրքիր է, որ գրիչի արձանագրած ընդհանուր թիվը (PAP 19 GUD 13 ÁB 20 UDU.GAL) չի համապատասխանում թվարկված կենդանիների հանրագումարին, իսկ տեքստը եզրափակվում է վերջին երեք տողերում Շուպա «քաղաք»-ի հիշատակությամբ (ուր, հավանաբար, պահվել են այդ կենդանիները)՝ նշելով «այցելված է/սոտւգված է» բառը ($^{URU}$*šupa* IGI.É)[2912]:

Ակնհայտ է, որ գործ ունենք պետական միջոցների հաշվառման ինչ-որ «մատյան»-ի հետ, ուր գրանցվել է բաժանված/տրված և առկա կենդանիների թիվը և հավանաբար այստեղ գործ ունենք ոչ թե պետական միջոցների բաշխման, այլ դրանց վերահսկողության հետ: Այլապես, եթե համարենք, որ տվյալ անձինք այդ կենդանիները ստացել են իբրև ծառայության վարձ, անհասկանալի կլինի տեքստը եզրափակող IGI.É՝ «այցելված է/սոտւգված է» բառի կիրառությունը: Ըստ այդմ, տեքստում հիշվող անձինք կարող էին լինել Շուպա «քաղաք»-ի հովիվներ (՞): Մյուս կողմից, սա դարձյալ հիշեցնում է նորասորեստանյան շրջանում *iškāru*-ծառայության համար մեր ունեցած պատկերացումները, այդ թվում՝ 1) պետական միջոցների (տվյալ դեպքում՝ հում նյութի) հաշվին իրականացվող արտադրություն, 2) պետական միջոցների (տվյալ դեպքում՝ ընտանի կենդանիների) ստացում, բուծում և վերադարձ հավելումով[2913]:

Հարկերի մի մասը, թերևս, հավաքվել է աստվածներին տրված զոհաբերությունների կամ ընծաների տեսքով: Սա, հնարավոր է, կանոնավոր հարկահանություն չէր, այլ կարող էր կապված լինել ինչ-որ ծիսապաշտամունքային արարողակագրի կամ դրանց խմբի հետ, երբ հասարակության որոշ, ընդ որում, ինչպես երևում է, միմիայն իշխող և ծառայող խավերը ($^{LÚ}$*marini,* $^{LÚ}$*ḫuradinili*), իրականացրել են զոհաբերություններ կամ նվիրատվություններ աստվածներին (= տաճարին/պալատին): Նման հետևության կարելի է հանգել ուրարտական մի քանի ծիսապաշտամունքային տեքստերին տրված մեկնաբանություններից[2914]:

Ինչպես երևում է, հարկերն Ուրարտուում վճարվում էին թե բնամթերքով, և թե ընտանի կենդանիներով ու ձիերով, կարելի է մտածել նաև մետաղագործական արտադրանքով և գործվածքով կամ դրանց հումքով իրականացվող վճարումների

[2912] КУКН, 447; CTU IV, CT Tk-2.
[2913] Տե՛ս և հմմտ. Postgate 1974: 100ff., 202ff. Միջինասորեստանյան շրջանի համար տե՛ս և հմմտ. Postgate 2010: 22ff., հինբաբելոնյան շրջանի համար՝ Тюменев 1957: 61.
[2914] Diakonoff 1991: 13ff.

մասին: Այս առումով հավաքված հարկերի և ընծաների մասին որոշակի պատկերացում է տալիս նաև ուրարտական պատկերագրությունը: Առայժմ մեզ հայտնի է միայն մեկ կապարճ, որի վրա երկու արքաների (՞) հանդիպման տեսարանի ֆոնին հաջորդում են մատուցվելիք ընծաները բերող մարդկանց պատկերները, որոնց ձեռքերին տեսնում ենք մետաղյա զամբյուղներ, սափորներ, գավաթներ ևն (նկ. Գ-32/1-2)[2915]:

Հնարավոր է այս շարքին դասել նաև բրոնզե մեկ սաղավարտ, որը կարող է լինի ուրարտական արտադրանք: Սաղավարտի վրա պատկերված են հարկեր/ընծաներ մատուցող անձինք, որոնք բերում են գինու(՞) տիկեր(՞), մետաղե(՞) խոշոր անոթ և կաթսաներ(՞) (նկ. Գ-32/3)[2916]:

Այս տեղեկություններով հանդերձ հնարավոր չէ նշել, թե որքան կարող էր կազմել հարկերի չափը բնակչության տարբեր խավերի համար: Հինբաբելոնյան աղբյուրներից դատելով՝ այն կարող էր կազմել հացահատիկի բերքի մինչև 1/5-րդ մասը[2917], նորասորեստանյան շրջանում պետական հարկը կազմում էր բերքի 1/10-րդ մասը (կոչվում էր $^{(še)}$*nusāḫū/ē*$^{(meš)}$)[2918], հարդի 1/4-րդ մասը (կոչվում էր *šibšu*)[2919], ինչպես նաև ընտանի կենդանիներով կամ կաշիներով/հագուստով գանձվող հարկը (*ṣibtu*)[2920], սովորաբար՝ ամեն 20 ընտանի կենդանիներից մեկը[2921]: Ուրարտուին կցված երբեմնի մաննայական տարածքներից ամեն տարի որպես հարկ կենտրոնական իշխանությունների ստացած ձիերի մասին է հայտնում «Լուվրի աղյուսակ»-ը[2922]:

Եթե հնարավոր լինի ապացուցել ուրարտական տեքստերից մեկում հիշատակվող $^{LÚ}$KASKAL-պաշտոնյայի (՞) հնարավոր նույնականացումը որպես «առևտրական»-ի, ապա չի բացառվում, որ այդ դեպքում կարող ենք գործ ունենալ նաև «հարկահան»-ի հետ: Դատելով հին առաջավորասիական զուգահեռներից՝ պետությանը/արքային ծառայող «առևտրականներ»-ը նաև հարկահաններ էին (տե՛ս նաև վերը 1.1.5.5.)[2923]:

---

[2915] Vanden Berghe, Meyer 1982: 80., Afb 34 (cat. nr. 30); Seidl 2004: 90, Abb. 55; Castelluccia, Dan 2011: 55, Fig. 18b.

[2916] Vanden Berghe, Meyer 1982: 78f., Afb 33 (cat. nr. 22), 130. Տե՛ս և հմմտ. Dezső 2001: 30ff. (Cat. No. 8), Pl. 7-8.

[2917] Հմմտ. Իսինի արքա Էնլիլ-բանիի արձանագրությունը հացահատիկի հարկը 1/5-ից 1/10-ի իջեցնելու մասին: Տե՛ս Frayne 1990: 89 (E4.1.10.1001 vi 1-23).

[2918] Postgate 1969: 14; նույնի՝ 1974: 186ff.; Kinnier-Wilson 1972: 15.

[2919] Postgate 1969: 14; նույնի՝ 1974: 187ff.

[2920] Postgate 1974: 171f. Հմմտ. Կարմիր-բլուրի՝ տարատեսակ հագուստներ և կաշիներ թվարկող սեպագիր աղյուսակը (КУКН, 521; CTU IV, CT-Kb 10):

[2921] Գանձվող հարկի չափի համար տե՛ս Postgate 1974: 197.

[2922] Mayer 1983: 84f. (Z. 171).

[2923] Radner 1999b: 101ff.

### 3.3.5. Արտաքին եկամուտները

#### 3.3.5.1. Հարկատու երկրներ

Ուրարտացիների կողմից պարտված երկրի վրա ամենամյա հարկ սահմանելու առաջին դրվագը վերաբերում է Մենուայի իշխանության շրջանին: Նրա թողած արձանագրություններում նշվում են Էրիկուախի, Էթիունի, Դիաուխի, Մելիդ, Ուրմե(՞) և Քուլմերի, Իգանի երկրները կամ նրանց արքաներին «հարկի տակ գցելու» մասին (*'aldu- mesini piei*)[2924]: Արգիշթի Մենուայորդու արձանագրություններում Դիաուխիի նկատմամբ ձեռք բերված հաղթանակից հետո վերստին նշվում է այս երկրի վրա տարեկան հարկ սահմանելու մասին: Դիաուխիի վճարելիք տարեկան հարկը կազմելու էր x *մանա* ոսկի ([x MA].NA GUŠKIN$^{MEŠ}$)[2925], 10 հազ. *մանա*, այն է՝ 7 հազ. կգ պղինձ (10 LIM MA.NA URUDU$^{MEŠ}$), x×100 «պարարտ ցուլ» ([x ME G]UD ŠE), 100 «պարարտ» կով (1 ME GUD ÁB ŠE), 500 ոչխար (5 ME UDU$^{MEŠ}$) և 300 ձի (3 ME PIT.ḪAL.LU[$^{MEŠ}$])[2926], ընդ որում՝ սա միակ աղբյուրն է, որը թվական տվյալներ է պարունակում Ուրարտուին ենթակա երկրի վճարած հարկերի չափի մասին: Բացի դա, որպես միանվագ հարկ/ռազմատուգանք բիայնական արքան Դիաուխիից ստացել է նաև 41 *մանա* ոսկի (28.7 կգ), 37 *մանա* արծաթ (25.9 կգ), x×10000 մանա պղինձ (x×7 հազ. կգ), 1000 ձի, 300 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և x×10000 ոչխար[2927]: Ի դեպ, Դիաուխիից ոսկի և արծաթ (GUŠKIN KÙ.BABBAR$^{MEŠ}$) ստանալու մասին նշվում է դեռևս Մենուայի արձանագրության մեջ[2928]: Լուշա և Իգա(նի) երկրներից ոսկի, արծաթ և պղինձ որպես հարկ ստանալու մասին է նշվում, ըստ Ֆրիդրիխ-Վիլհելմ Քյոնիգի վերակազմության, «Խորխորյան տարեգրության» մեկ այլ հատվածում[2929]:

Դիաուխիին վերաբերող տվյալներն իհարկե չի կարելի ընդունել որպես հիմք՝ նման թվեր ենթադրելու այլ երկրների համար ևս, քանի որ Դիաուխին, միանշանակ, իր հնարավորություններով առանձնանում էր բիայնացիներին հարկատու տասնյակ երկրներից: Այնուամենայնիվ, համադրելով այս թվերը ասորեստանյան՝ համաժամանակյա աղբյուրների տվյալների հետ, հնարավորություն է ստեղծվում որոշակի պատկերացում ունենալու ենթակա երկրներից հարկերի տեսքով ստացվող տերության արտաքին եկամուտների մասին:

---

[2924] Տե՛ս, համապատասխանաբար, КУКН, 47$_{13-14}$, 53$_{12-15}$, 56$_{16-17}$, 174 B1$_{17-18}$, 57 фрагмент B$_{10-11}$, 58 правая стор. x+1-3, 174 B1$_{39-40}$; CTU I, A 5-1$_{13-14}$, 5-2A$_3$, A 5-3$_{12-15}$, CTU I, A 8-2 Vo$_{17'-18'}$., A 5-5$_{16-17}$, A 5-6 Ro (b)$_{10'-11'}$., A 5-7 l. d.$_{1-3}$, A 8-2 Vo$_{39'-40'}$.

[2925] Թվական որոշ տվյալներ արձանագրության մեջ չեն պահպանվել:

[2926] КУКН, 174 B1$_{22-28}$; CTU I, A 8-2 Vo$_{22'-25'}$.

[2927] КУКН, 174 B1$_{19-22}$; CTU I, A 8-2 Vo$_{19'-22'}$.

[2928] КУКН, 53$_{16}$; CTU I, A 5-3$_{16}$.

[2929] König 1957: 105f. (Nr. 82 Rs. IX). Հմմտ. КУКН, 174 B1$_{38-40}$; CTU I, A 8-2 Vo$_{38'-41'}$.

Մասնավորապես, հայտնի է, որ, Խուբուշկիայի արքա Յանզուն որպես հարկ Ասորեստան էր տարել ձիեր, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, որոնց քանակությունները տեքստում չեն պահպանվել[2930]: Հայտնի է տեղեկություն Մուծածիրի արքա Ուրզանայի՝ ասորեստանյան արքունիք բերած հարկի մասին՝ 56 ձի, 2 հազ. գլուխ մանր և թերևս մի քանի հարյուր գլուխ խոշոր եղջերավոր անասուն[2931]: Հայտնի են մարաբնակ երկրների համար սահմանված հարկերը, որոնք գերազանցապես հավաքվում էին ձիերով և յուրաքանչյուր երկրի/ցեղի համար տատանվում էր 32-ից 300-ի սահմաններում, հիմնականում՝ 100-200[2932]: Զալիպցիների վճարելիք հարկի չափը 100 ձի էր[2933], Խալմանից ստացված ձիերի թիվը կազմել է 484 ձի ու 30 ջորի, և այլն[2934]: Այդ թվերը միանգամայն համադրելի են Դիաուխիի վճարելիք ընտանի կենդանիների հարկաչափերի հետ:

Ամենայն հավանականությամբ, տերությանը հարկատու մյուս երկրները հարկը վճարում էին հիմնականում ընտանի կենդանիներով: Կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր երկրի վճարած տարեկան հարկը կարող էր կազմել 100-ից մինչև 300 խոշոր, 500-ից մինչև 1000 գլուխ մանր եղջերավոր անասուն և մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր ձի: Հնարավոր է, որ հարկը ստացվում էր նաև բնամթերքով, թեև ուրարտական աղբյուրներում նման վկայություններ չունենք, փոխարենը՝ ենթակա երկրների կողմից բնամթերքով կատարված վճարումների ենք հանդիպում Ասորեստանում[2935]:

Որպես հարկ գանձվել է նաև մետաղ: Հայտնի է, որ բիայնական արքաների հետաքրքրվածությունը Դիաուխիի նկատմամբ վերջինիս հարուստ մետաղահանքերն էին կամ, առնվազն, Դիաուխիի դիրքը՝ որպես այդ մետաղահանքերի ճանապարհին ընկած երկիր: Դիաուխիից բացի մետաղներով և հատկապես՝ ոսկով կարող էր հարկը գանձվել Սևանա լճի հարավային ավազանում ընկած երկրներից, որոնք շահագործում էին Սոթքի ոսկու հանքերը մինչև ուրարտական տիրապետության հաստատումը[2936]: Մետաղներով հարկեր կարող էին վճարել նաև տավրոսյան լեռնագոտում ընկած երկրները, որոնց տարածքի հարուստ հանքերը շահագործվում էին դեռևս մինչուրարտական շրջանում, մետաղներով, ինչպես նաև պատրաստի արտադրանքի

[2930] Lanfranchi, Parpola 1990, No. 133.
[2931] Lanfranchi, Parpola 1990, No. 136.
[2932] Tadmor 1994: 104/5-106/7 (Stele II B, lns. 29′-44′); Tadmor, Yamada 2011, No. 35 ii 29′-44′.
[2933] Fuchs, Parpola 2001, No. 53.
[2934] Parker 1961: 45f. (2727).
[2935] Տե՛ս, օրինակ, Grayson 1991: 261 (A.0.101.19: 92).
[2936] Տե՛ս վերը 3.1.2.1.3.:

տեսքով հարկեր ստացվել են թերևս լուվիական թագավորություններից: Հայտնի է, որ վերջիններս հյուսիս-սիրիական իշխանությունների հետ միասին վերահսկում էին առևտուրը Միջագետքի և Փոքր Ասիայի միջև՝ զբաղվելով հատկապես մետաղների միջնորդ առևտրով: Սարդուրի Արգիշթորդու տարեգրության մեջ նշվում է Կումմուխի արքա Կուշտաշպիլիից ստացած միանվագ հարկի/ռազմատուգանքի մասին՝ ավելի քան 40 *մանա* ոսկի (28 կգ), 800 *մանա* արծաթ (560 կգ), 3 հազ. ձեռք ձգեստ (TÚG$^{MEŠ}$), 2 հազ. պղնձե վահան (*aše*$^{MEŠ}$ URUDU), 1535 պղնձե գավաթ (*kiri* URUDU)[2937]: Լուվիական մեկ այլ՝ Մելիտեա (Մելիդ) երկրի արքա Խիլարուադայից ոսկի, արծաթ, ինչպես նաև կենդանիների հոտեր ստանալու մասին է նշվում Սարդուրի Արգիշթորդու Իզոլուի արձանագրության մեջ[2938]:

Արգիշթի Մենուայորդի կողմից «հարկի տակ գցված» հաջորդ երկիրը Իգանին է[2939], թեև մանրամասնություններ նրա տարգրությունը չի հայտնում: Սարդուրի Արգիշթորդու արձանագրություններում հիշատակվում են Ուրարտուին հարկատու դարձած չորս երկրներ՝ Մելիտեան, Պուինիալխին, Աբիլիանիխին և Վելիքուխին[2940]: Ռուսա Սարդուրորդու Ծովինարի արձանագրության մեջ նշվում է «ծովի այն ափին» ընկած տասնինը երկրների վրա տարեկան հարկ հաստատելու մասին[2941]: Նույն արքայի արձանագրություններում անգամ Մուծածիրն է հիշատակվում որպես Ուրարտուին հարկատու երկիր[2942]: Այս շարքի վերջին հիշատակումներին հանդիպում ենք Արգիշթի Ռուսայորդու արձանագրություններում, որոնցում տերությանը հարկ վճարած երկրների թվում հիշատակվում է Ծուլուկուն[2943], ինչպես նաև Ուրմիա լճից դեպի արևելք՝ դեպի Սաբալանի լեռնազանգված ձգվող շրջանում ընկած մի քանի երկրներ (Ուշուլունի, Բուկու, Գիրդունի, Գիտուխանի, Տուիշդունի, Րունիթարնի)[2944]:

Ընդհանուր առմամբ, ուրարտական աղբյուրներում հանդես եկող երկրներից 35-ը տարբեր ժամանակ հիշատակվում են որպես տերությանը հարկատու, այդ թվում՝ Էթիունին, Վիտերուխին, Դիաուխին, Մելիդը, Ուրմեն, Իգանին, Պուինիալխին, Աբիլիանիխին, Վելիքուխին, Մուծածիրը և Ծուլուկուն, ի լրումն՝ մերձսևանյան տասնինը և հյուսիս-արևմտյան Իրանում ընկած վեց երկրների: Այս ցանկին հարկ է հավելել Գուրիանիան, որը, համաձայն ասորեստանյան աղբյուրների, հարկատու էր

[2937] ԿՈՒՀ, 241 $E_{54-56}$; CTU I, A 9-3 $IV_{54'-56'}$.
[2938] ԿՈՒՀ, $244_{25}$; CTU I, A 9-$4_{25}$.
[2939] ԿՈՒՀ, 174 $B1_{39-40}$; CTU I, A 8-2 $Vo_{39'-40'}$.
[2940] Տե՛ս, համապատասխանաբար, ԿՈՒՀ, 242 $BI_{28-31}$, $244_{22-26}$, 241 $A_{17-18}$, 241 $C_{36-39}$, 241 $F_{19-21}$; CTU I, A 9-1 $Vo_{28-31}$, A 9-$4_{22-26}$, A 9-3 $I_{17-18}$, A 9-3 $II_{36'-39'}$, A 9-3 $VI_{19-21}$.
[2941] ԿՈՒՀ, $389_{14-15}$; CTU I, A 10-$2_{14-15}$.
[2942] ԿՈՒՀ, $387_{19-20}$; CTU I, A 10-5 $Ro_{19'-20'}$.
[2943] ԿՈՒՀ, $411_{13-14}$; CTU I, A 11-3 $Vo_{13-14}$.
[2944] ԿՈՒՀ, $409_{7}$; CTU I, A 11-$4_{7}$, $410_{9-10}$; CTU I, A 11-$5_{9-10}$.

Ուրարտուին[2945]: Նշված երկրներից մի քանիսը հետագայում ներառվել են տերության կազմում[2946]:

Ուրարտական արքայական արձանագրություններում երբեմն հանդիպող կաղապարային բանաձևը՝ այս կամ այն երկրի «ապստամբած/թշնամացած» լինելու մասին ($^{KUR}$GN *durba''e manu*[2947]), կարող է վերաբերել այն դեպքերին, երբ տվյալ երկիրը դադարել էր հարկ վճարել ուրարտական արքային, ինչն էլ կարող էր դիտվել որպես «ապստամբություն/թշնամանք» և պատճառ (կամ պատրվակ) դառնալ այդ երկիր արշավելու համար:

3.3.5.2. **Ավարառություն**

Բիայնական արքաների արշավանքները հաճախ կոչված էին լուծելու տերության տնտեսական ապահովության խնդիրները ճիշտ այնպես, ինչպես դա անում էին համաժամանակյա Ասորեստանում նորասորեստանյան տերության գոյության ողջ ընթացքում: Ավարառությունը հանդիսանում էր տերության եկամուտների կարևոր աղբյուր: Ուրարտական տեքստերը բազմիցս են հայտնում նվաճված երկրներից ձեռք բերված ընտանի կենդանիների մասին՝ դրանք թվարկելով մանրամասն կամ հայտնելով «նախիր(ներ)» (*BI-BU/niribi*[2948]) և «հոտ(եր)»[(?)] (*didguši*[(?)]) տանելու մասին[2949]: Բավական է նշել, որ միայն ուրարտական սեպագիր աղբյուրներում պահպանված տվյալներով Արգիշթի Մենուայորդու կառավարման շրջանի 16 տարիների տվյալներով արշավանքներից ձեռք բերված կենդանի ավարը կազմել է ավելի քան 140 հազ. խոշոր, 570 հազ. մանր եղջերավոր անասուն և 10 հազ-ից ավելի ձի (տարեկան միջինը՝ մոտ 9 հազ. խոշոր, 35-36 հազ. մանր եղջերավոր անասուն և 600-ից ավելի ձի): Սարդուրի Արգիշթորդու կառավարման շրջանի 18 տարիների տվյալներով ձեռք է բերվել մոտ 120 հազ. խոշոր, մոտ 450 հազ. մանր եղջերավոր անասուն և մոտ 10 հազ. ձի, տարեկան միջինը՝ 6-7 հազ. խոշոր, 25 հազ. մանր եղջերավոր անասուն և մոտ 550 ձի (Աղ. 26):

Սարդուրիի օրոք՝ տերության առավել ընդարձակ շրջանում, հիմք ընդունելով միմիայն աղբյուրների տվյալները, կարելի է նշել, որ հարկատու 6-7 երկրներից Ուրարտուն յուրաքանչյուր տարի կարող էր ստանալ առնվազն 1000-1500 գլուխ խոշոր, մոտ 5000 գլուխ մանր եղջերավոր անասուն և 500-1000 ձի: Եթե հարկատու երկրների

[2945] Lanfranchi, Parpola 1990, No. 92: 5-7.

[2946] Ֆրիդրիխ-Վիլհելմ Քյոնիգը նման տեքստ է տեսնում նաև «Սարդուրյան տարեգրության» ամփոփիչ հատվածում, ուր, ըստ հեղինակի, նշվել է «336 ամսում» 121 առաջնորդներից Սարդուրիի ստացած հարկերի չափը, այդ թվում նաև 7079 մանա պղինձ: Այս տեսակետը, սակայն, վիճելի է: Հմմտ. König 1957: 119 (Nr. 103. A. I-III).

[2947] Տե՛ս, օրինակ, КУКН, 148$_{7-8, 22-23}$; CTU I, A 5-11 A$_{7-8, 22-23}$.

[2948] Salvini, Wegner 2014: 112. Հմմտ. Diakonoff 1971: 77, Anm. 75. Տե՛ս և հմմտ. նաև Khachikyan 2011: 98.

[2949] КУКН, 241 C$_{32-33}$, 242 BI$_{23}$, 242 C$_{15-16}$, 244$_{25}$; CTU I, A 9-1 Vo$_{23}$, A 9-3 II$_{32'-33'}$, A 9-11 l. s.$_{15-16}$, A 9-4$_{25}$.

տված հարկաչափերը կրկնապատկենք՝ հաշվի առնելով նախորդ արքաների նվաճումները և աղբյուրների՝ միանգամայն հնարավոր բացերը, ապա անգամ այս դեպքում հարկատու երկրներից ստացվող քանակությունները կկազմեն կեսից քիչ՝ յուրաքանչյուր տարվա արշավանքների ժամանակ ձեռք բերված ավարի ընդհանուր քանակության մեջ, և շատ ավելի քիչ տոկոս, եթե հաշվի առնենք, որ ձեռք բերված ավարի թվարկումը շատ հաճախ վերաբերում է միայն արքայի մասնաբաժնին և դրանում հաշվարկված չէ զինվորների կատարած թալանը:

Ի դեպ, վերջիններս իրավունք ունեին թալանել երկիրը, եթե տրվում էր դրա թույլտվությունը[2950]: Բազմաթիվ ուրարտական տեքստեր վկայում են զինվորների կողմից ավարի մի մասը «առանձին տանելու» մասին. *me” ali* $^{LÚ}$A.SI$^{MEŠ}$*-še irbitu, šeri partu*՝ «*այն ինչ զինվորները թալանեցին, առանձին տարան*»[2951]: Զինվորների կատարած թալանի դրվագներ, ի տարբերություն նորասորեստանյան պատկերագրության, ուրարտական պատկերագրության մեջ հայտնի չէ:

### 3.3.6. Առևտուրը

#### 3.3.6.1. **Ընդհանուր բնութագիրը**

Ի տարբերություն համաժամանակյա Ասորեստանի կամ Բաբելոնիայի, ուր առևտուրն ազատ էր, գործում էին շուկայական գներ և առևտրական գործունեությամբ կարող էր զբաղվել միջոցներ ունեցող ցանկացած ոք[2952], Ուրարտուում առևտուրը, կարծում ենք, ամբողջությամբ գտնվում էր պետության վերահսկողության ներքո: Ընդ որում, խոսքը վերաբերում է միմիայն արտաքին առևտրին, քանի որ տնտեսության խիստ կենտրոնացված բնույթը, քաղաքային կյանքի փաստացի բացակայությունը պարզապես չէր ենթադրում երկրում ներքին ազատ առևտրական հարաբերությունների գոյություն ճիշտ այնպես, ինչպես կրետե-միկենյան աշխարհում, ուր հաստատված «պալատական համակարգ»-ը խոչնդոտ էր հանդիսանում մասնավոր ձեռնարկատիրության կայացման համար[2953]: Ինչպես կրետե-միկենյան աշխարհում[2954], Ուրարտուում ևս, կարծում ենք, դրամի շրջանառություն, ապրանքների առք ու վաճառք, վարկավորում, գրավադրում, փոխանակություն ևն չի ենթադրվում[2955]:

---

[2950] Hamblin 2006: 195; Richardson 2011: 31f.

[2951] Տե՛ս, օրինակ, КУКН, 241 $C_{45-46}$; CTU I, A 9-3 $II_{45'-46'}$.

[2952] Տե՛ս, օրինակ, Fales 1996: 11ff.

[2953] Հին առաջավորասիական և միկենյան զուգահեռների համար տե՛ս Pečírková 1982: 208; Liverani 1987: 66ff.

[2954] Ամփոփ տե՛ս Walberg 1995: 157ff. (նշվ. գրականությամբ):

[2955] Համմտ. Дьяконов 1988a: 62; Diakonoff 1991: 20.

Այս առումով հետաքրքիր է նաև, որ ուրարտական աղբյուրներում չկա վաճառականների ($^{LÚ}$DAM.GÀR/*tamkāru*) որևէ հիշատակություն, թեկուզև այն վաճառականության, որը ծառայում էր պետությանը (պալատին/տաճարին), ինչպես, օրինակ Ք.ա. 2-րդ հազ-ի Բաբելոնիայում էր[2956], Խաթթիում[2957], Ուգարիթում[2958] կամ Նուզիում[2959]: Եվ թերևս տարօրինակ չէ, որ համաժամանակյա ասորեստանյան աղբյուրներում նույնպես չենք հանդիպում ուրարտացի կամ Ուրարտուից եկած վաճառականների որևէ հիշատակության: Փոխարենը, հանդիպում ենք մաքսանենգության դեպքերի (տե՛ս ստորև), ինչը կարող է խոսել ոչ միայն ասսուրա-ուրարտական ուղիղ առևտրական հարաբերությունների բացակայության, այլև՝ առևտրական գործունեության վրա Ուրարտուում սահմանված արգելքի մասին: Խոսքը, իհարկե, չի վերաբերում արտաքին առևտրին, որը, ինչպես վերը նշվեց, ամբողջությամբ գտնվելու էր կենտրոնական իշխանությունների վերահսկողության ներքո: Ըստ այդմ, պալատի/տաճարի համար գործող առևտրականների գոյությունը Ուրարտուում միանգամայն սպասելի է, թեև չի երևում տեքստերից, իսկ մեր կողմից առաջարկված նման մի հնարավորությունը, այնուամենայնիվ, թվում է թեական (տե՛ս վերը):

3.3.6.2. **Ներքին տնտեսական կապերը**

Ուրարտական տնտեսության գերկենտրոնացված բնույթը և համակարգումը տաճարից/պալատից մեծապես սահմանափակում էր ակտիվ տնտեսական շփումները լայնածավալ տերության տարբեր հատվածների միջև նույնպես: Տնտեսական կապերը կենտրոնի վերահսկած երկրագործական գոտու՝ *tamertu*-ի շրջանագծից դուրս ընկած տարածքների հետ սահմանափակվում էր միայն հարկի ստացումով, որն ուղարկվում էր տեղական կենտրոն և այստեղից էլ, թերևս, մայրաքաղաք: Նման փաստ է հայտնում Կարմիր բլուրից գտնված սալիկներից մեկը, որում թվարկվում են ինչ-ինչ ապրանքներ, որ բերվելու էին «արքայի առջև»[2960]: Կարծում ենք՝ հենց նման երևույթի, և ոչ թե՝ ուրարտական տարբեր քաղաքների միջև տեղ գտած առևտրի հետ գործ ունենք խեցեգործական այն արտադրանքի դեպքում, որոնք, արտադրված լինելով ուրարտական այս կամ այն կենտրոնում (Քեֆ-քալեսի, Բաստամ), առաքվել են այնուհետև մեկ այլ կենտրոն (Այանց)[2961]: Այդ նույնը կարելի է ասել Կարմիր բլուրից

[2956] Leemans 1950; Foster 1977: 33f.; Дьяконов 1968в: 9, 21 сл.; Дандамаев 1973: 65 сл.
[2957] Hoffner 2001: 181, 189.
[2958] Гельцер 1964: 3 сл.; Rainey 1963: 313ff.
[2959] Zaccagnini 1977: 173ff.
[2960] КУКН, 520; CTU IV, CT Kb-7.
[2961] Հմմտ. Speakman *et al*. 2004: 126. Տե՛ս և հմմտ. նաև Իսրայելյան 1971, էջ 82; Erdem 2013: 199.

հայտնաբերված, բայց, հավանաբար, Արգիշթիխինիլիում արտադրված խեցեղենի համար[2962]:

Տնտեսության գերկենտրոնացված բնույթը խոչընդոտում էր նաև մասնավոր ձեռնարկատիրությանը, բավական է նշել, որ ուրարտական տեքստերում վկայված չէ ապրանքների վաճառքի կամ փոխանակության որևէ գործարք, ապրանքների գներ և այլն, իսկ հողային հարաբերությունները, ակնհայտորեն, կարգավորվում էին միմիայն պետության կողմից: Ըստ երևույթին, երբ խոսքը վերաբերում է ներքին տնտեսական կապերին, ապա դա կարող էր գործել բավական նեղ շրջանագծի սահմաններում միայն և ուրարտական տերության ուղղակի վերահսկողությունից դուրս՝ իրար հարևանող և մերձակա համայնքների միջև կամ դրանց ներսում՝ վերաբերելով ապրանքների սահմանափակ շրջանառությանը, հիմնականում, թերևս, «բնամթերք՝ արհեստագործական արտադրանքի դիմաց» ձևաչափով[2963]:

3.3.6.3. **Արտաքին առևտուրը**

Ուրարտուի արտաքին քաղաքականությունը, նրա ձեռնարկած արշավանքները լեռնաշխարհի սահմաններից դուրս պայմանավորված էին նաև տնտեսական շարժառիթներով: Պետության շահագրգռվածությունը արտաքին առևտրում երևում է առևտրական միջազգային մայրուղիները վերահսկելու նպատակով Ասորեստանի հետ նրա մղած գրեթե կեսդարյա, բավական հաջողված պայքարով: Դրա արդյունքում Ասորեստանը կտրվեց Փոքր Ասիայի հումքի աղբյուրների հետ կապից[2964]: Ասորեստանում ուրարտական շրջափակման հանգեցրած ծանր կացության մասին կարելի է դատել Աշշուր-նիրարի V-ի կառավարման շրջանով՝ Ք.ա. 748 թ-ով թվագրվող փոխառության մի պայմանագրից: Տեքստից դատելով՝ այս շրջանում Ասորեստանում արծաթի փոխառության տոկոսը ավանդական 25-ի փոխարեն հասել էր 400-ի[2965]:

Ուրարտուն կարողացավ տևական ժամանակով փակել Ասորեստանի մուտքը թե դեպի փոքրասիական-արևելամիջերկրածովյան, և թե դեպի իրանական-արևելյան հումքի աղբյուրներ/շուկաներ, ինչով և պայմանավորվեց Ուրարտուի՝ որպես առաջավորասիական հզորագույն պետության կարգավիճակը Ք.ա. 8-րդ դ-ի առաջին կեսին[2966]: Նման պայմաններում, բնականաբար, ավելորդ է խոսել ասսուրա-ուրարտական ուղիղ առևտրական հարաբերությունների գոյության օգտին:

[2962] Տե՛ս և հմմտ. Мартиросян 1972: 48.
[2963] Հմմտ. Հմայակյան 2012, էջ 43:
[2964] Այս հարցի շուրջն առավել մանրամասն տե՛ս Maxwell-Hyslop 1974: 150; Бациева 1953: 17 сл.; WՊfler 1980/1981: 79sqq.; նույնի՝ 1986: 87sqq.; Mayer 2013a: 42.
[2965] Wiseman 1950: 189; Mallowan 1950: 172; Çilingiroğlu 1984: 21.
[2966] Գրեկյան 2005բ, 49-50:

Ընդհանրապես, ենթադրվում է, որ հարևան երկրների հետ Ուրարտուն ունեցել է բավական թույլ առևտրական կապեր[2967]: Սակայն, մյուս կողմից, այդ ուղիների վերահսկողությունը ոչինչ չէր տալու, եթե փակվեին արտահանման շուկաները: Դրանցից մեկը հենց Ասորեստանն էր, որը զգում էր հումքի և հատկապես ժամանակի ռազմավարական ապրանքի՝ մետաղի խիստ կարիք: Մյուսը կարող էր լինել Բաբելոնիան, և Սարդուրի Արգիշթորդու ձեռնարկած հեռավոր արշավանքը դեպի «Բաբիլունի քաղաքի երկիր» թեև ուղեկցվեց ավերածություններով ու թալանով, բայց մյուս կողմից կարող էր միտված լինել կենտրոնական – հարավ-միջագետքյան շուկաներ ուրարտական մետաղի/մետաղագործական ապրանքների համար մուտք ապահովելուն: Ուրարտական արտադրանքի հայտնվելը Պարսից ծոցի շրջանում՝ հեռավոր Դիլմունում, կարող էր լինել դրա վկայությունը (տե՛ս ստորև):

Ուրարտական իշխանությունները, մյուս կողմից, մետաղ և մետաղագործական արտադրանք արտահանելու համար ամենայն հավանականությամբ դիմում էին միջնորդների օգնությանը, ինչը կարելի է ենթադրել հատկապես Ասորեստանի հետ առևտրի դեպքում: Որպես միջնորդներ կարող էին հանդես գալ փոքրասիական լուվիական թագավորությունները: Այս նույն դերը կարող էին կատարել նաև Հայկական լեռնաշխարհի հարավի երկրները, ինչպես, օրինակ, Խաբխին, Կումմեն, Ուկկուն, Խուբուշկիան և Մուծածիրը: Հատկապես ակտիվ դերակատարում կարող էր ունենալ Մուծածիրը՝ իր նշանակության, երկու տերությունների հետ ունեցած սերտ կապերի, ինչպես նաև աշխարհագրական դիրքի շնորհիվ[2968]: Մուծածիրում ամբարված հսկայական քանակությամբ բրոնզի ձուլակտորներն ու պատրաստի արտադրանքը, որոնք, ինչպես կարծում ենք, զուտ գանձեր չէին՝ նվիրված տաճարին, այդ թվում՝ մեծաքանակ բրոնզե զենքերը, այլ կարող են լինել այդ առևտրի վկայությունը: Մուծածիրի տաճարը, որպես միջնորդ, այդ առևտրից կարող էր ապահովել հսկայական եկամուտներ: Բավական է նշել, որ Մուծածիրի արքայի պալատից ասորեստանցիների զավթած միայն մետաղը կազմել է 34 տաղանդ և 18 մինա ոսկի, 167 տաղանդ և 2.5 մինա արծաթ, ինչպես նաև այլ մետաղներ՝ «ճերմակ/փայլուն պղինձ» (URUDU.ḪI.A BABBAR-*ú*)[2969] և անագ (AN.NA)[2970]: Մուծածիրի Խալդի աստծո տաճարից տարված հարստությունը կազմել է x+4 տաղանդ և 3 մինա ոսկի, 162 տաղանդ և 20 մինա «առանց 6 սիկղի» արծաթ, 3600 տաղանդ բրոնզ

[2967] van Loon 1977: 229ff.; Tarhan 1983: 306; Burney 2012: 59.
[2968] Меликишвили 1954: 355; Belli 1991b: 22f. Հմմտ. Редер 1987: 147 сл.
[2969] Ենթադրվում է, որ այդ տերմինը վերաբերելու էր ցինկի մեծ տոկոս պարունակող բրոնզին: Տե՛ս Bernbeck 2003-2004a: 50.
[2970] Mayer 1983: 104f. (Z. 352).

ձուլակտորներով[2971]: Այսինքն, միայն թալանված ոսկին կազմել է մեկ տ-ից ավել, տարվել է մոտ 10 տ արծաթ և ավելի քան 109 տ բրոնզ: Ի լրումն՝ 25 հազ. 212 «ծանր և թեթև» պղնձե[2972] վահան, 1514 «ծանր և թեթև» պղնձե նիզակ, պղնձե «ծանր» նիզակաձայրեր, 305 հազ. 412 «ծանր և թեթև» պղնձե սրեր և այլն: Մեծ քանակություն են կազմել թանկարժեք և հասարակ մետաղից պատրաստված տարատեսակ իրերը, որոնց թվարկումը «Լուվրի աղյուսակ»-ում զբաղեցնում է 56 տող[2973]: Սա հաճախ է հիմք տվել Մուծածիրը համարելու ուրարտական տերության «գանձարան»-ը[2974]:

Այստեղ կարող է տարակուսանքի տեղիք տալ հսկայական քանակությամբ մետաղե զենքերի առկայությունը տաճարում: Սովորաբար, դա դիտվում է ուրարտական բանակի՝ գործածությունից հանված զենք, երբ պղնձե և բրոնզե զենքերը փոխարինվել են երկաթե զենքերով, իսկ հինը նվիրել տաճարներին[2975]: Մյուս կողմից, կարելի է այդ զենքը դիտարկել իբրև զուտ պատրաստի մետաղ, որն արտահանվելու էր արտաքին շուկաներ: Ի դեպ, հյուսիսից Միջագետքի ստացած մետաղը դեռևս բրոնզե-դարյան շրջանում հաճախ էր ներմուծվում ձուլածո զենքերի տեսքով, ինչպես, օրինակ, «այսրկովկասյան տիպ»-ի կացինները և սակրերը, հայտնի է, որ հարստության ավանդումը ևս հիմնականում արվում էր մետաղե զենքերի տեսքով[2976], ինչը և պարզ է դարձնում Մուծածիրում դրանց առկայությունը հսկայական քանակներով:

Ուրարտուի մետաղի առևտրում ներգրավված մյուս երկիրը կարող էր լինել Խուբուշկիան: Համենայն դեպս, նորասորեստանյան տեքստերը նշում են այստեղից ստացված անագի մասին[2977], իսկ Խուբուշկիայի տեղորոշումը վկայում է, որ այս երկիրը չուներ սեփական հանքեր և մետաղի առևտրում միայն միջնորդ էր ճիշտ այնպես, ինչպես ժամանակին Ջամուան, որի վրա սահմանված հարկերի թվում մեծ տեղ ուներ մետաղը[2978]:

Ասորեստանի համար մեծ նշանակություն ունեցող մյուս «ռազմավարական» ապրանքը դա ձին էր[2979]: Թեև Ասորեստանը կարողացավ ի վերջո մուտք ապահովել

---

[2971] Mayer 1983: 106f. (Z. 369).

[2972] Ասորեստանյան տեքստերում հաճախ URUDU՝ «պղինձ» գաղափարագրի տակ հասկանում էին նաև «բրոնզ»-ը, որը գաղափարագիր գրվում է ZABAR: Տե՛ս Редер 1987: 150, прим. 19.

[2973] Mayer 1983: 104ff. (Z. 352-406). Մուծածիրից տարված թալանը թվարկվում է նաև Սարգոնի տարեգրության մեջ և այսպես կոչված «Պրիզմա B»-ում: Տե՛ս Дьяконов 1951a, № 46, 51; Fuchs 1994: 114ff., 321f. (Z. 155-160). Ի դեպ, թալանված հարստության ընդհանուր կշիռը կազմել է մոտ 2 տ ոսկի և 10 տ արծաթ: Տե՛ս Пиотровский 1959a: 161.

[2974] Пиотровский 1959a: 109; Հմայակյան 2007, էջ 159-161; Редер 1987: 149 сл.

[2975] Редер 1987: 150; Հմայակյան 1994, էջ 19:

[2976] Bobokhyan 2008a: 54ff.

[2977] Grayson 1991: 197 (A.0.101.1 56b-58a), 241 (A.0.101.1 79b-81a).

[2978] Grayson 1991: 208 (A.0.101.1 78b-79a).

[2979] Kessler 1986: 68; Cantrell 2011: 46ff.

դեպի Իրանական բարձրավանդակ և այստեղից ստանալ ձիեր (նկ. Գ-33/1-2)[2980], սակայն, ստիպված էր ձիերի պահանջարկը բավարարել նաև առևտրի միջոցով: Հայտնի է, որ ձիեր ստացվել են Զիկերտուից, չնայած, որ վերջինս Ուրարտուի դաշնակիցն էր Ռուսա Սարդուրորդու ժամանակ, Մանայից ներմուծված ձիերի մի մասը նույնպես կարող էր ունենալ ուրարտական ծագում (տե՛ս ստորև 3.3.6.3.2.):

Այս շրջանում կարևոր նշանակություն ուներ փայտանյութը, որի կարիքը խիստ զգում էին Ասորեստանում, պայմանավորված, հատկապես, այնպիսի խոշորածավալ շինարարական աշխատանքներով, ինչպիսին էր Դուր Շարրուկենի կառուցումը: Բարձրորակ փայտանյութի համար ասորեստանցիները չէին խուսափում անտառահատում անել ուրարտական տարածքներում և մարտի բռնվել հակառակորդի հետ[2981]: Մյուս կողմից, Ք.ա. 8-րդ դ-ի վերջերիս սկսված ասսուրա-ուրարտական մերձեցման միտումները, որ հետագայում ավարտվեց անգամ դաշինքի հաստատմամբ[2982], ճանապարհ էին բացում նաև տնտեսական մերձեցման համար: Այս առումով ասորեստանյան նահանգապետերից մեկի՝ Շա-Աշշուր-դուբբուի արտահայտած թերհավատությունը Սարգոնին գրած իր նամակում՝ Ուրարտուի արքայից փայտանյութ ստանալու հնարավորության առումով, գուցեև տեղին չէր[2983]:

Ինչպես հայտնի է, արտաքին առևտրի դրսևորումներից մեկն էլ տարբեր երկրների արքունիքների միջև իրականացվող փոխանակումն էր[2984]: Ուրարտուի համար ևս մենք ունենք նման փաստեր: Դեռևս Գեորգի Մելիքիշվիլին է նման բովանդակություն տեսել Թոփուզավայի կոթողի արձանագրության համապատասխան հատվածում, ուր ըստ հեղինակի խոսվում է տաճարին ընծայված հոտը իրերի հետ փոխանակելու մասին[2985]: Բացի դա, առկա է շատ ավելի հավաստի վկայություն: Ուրարտա-շուբրիական հարաբերություններում նկատվող լարվածության ֆոնին[2986] Արգիշթի Ռուսայորդին Շուբրիայի արքա Խու-Թեշուբից պահանջել է հետ տալ այն զարդերը, որը «… *իմ հայրը և ես տվեցինք քեզ*»[2987], թերևս, ուղարկվածի դիմաց չստանալով համարժեք «նվեր»-ը: Մուծածիրում ասորեստանյան, ուրարտական և խաբխական արտադրության ապրանքների առկայությունը, այդ թվում՝ թե հագուստ, և

[2980] Տե՛ս, օրինակ, Tadmor 1994: 104/5-106/7 (Stele II B, lns. 29′-44′); Tadmor, Yamada 2011, No. 35 ii 29′-44′.
[2981] Տե՛ս, օրինակ, Lanfranchi, Parpola 1990, No. 3: r1-10.
[2982] Ամփոփ տե՛ս Գրեկյան 2014, էջ 38:
[2983] Lanfranchi, Parpola 1990, No. 34: 21-22.
[2984] Liverani 1987: 67; Van De Mieroop 2004: 60f.
[2985] Меликишвили 1951a: 33 сл., прим. 5; նույնի՝ 1954: 354 сл.
[2986] Հմմտ., օրինակ, Lanfranchi, Parpola 1990, No. 31-33; 35 (?) տեքստերը:
[2987] Lanfranchi, Parpola 1990, No. 31: 13-17.

թե մետաղական արտադրանք[2988], ևս կարող էր լինել նման փոխանակումների արդյունք: Այս համատեքստում ուշագրավ է «թաբալյան դույլ»-ի (*kap*[*pi ša* $^{K}$]$^{UR}$*tabali*) և «թաբալյան խնկամաններ»-ի (NÍG.NA.MEŠ $^{KUR}$*tabali*) հիշատակությունները[2989], որոնք կարող էին այստեղ հայտնվել, հնարավոր է, որպես ուրարտական արքունիքից ուղարկված ընծաներ:

### 3.3.6.3.1. **Ուրարտու – Միջագետք**

Ինչպես վերը նշվեց, Ուրարտուի և Ասորեստանի միջև առևտուրը, եթե այն իրականացվում էր, ապա արվում էր միայն միջնորդ երկրների միջոցով: Մյուս կողմից, հնարավոր է, որ այս շրջանում Ուրարտուն ցանկանում էր կապ հաստատել Միջագետքում գլխավոր սպառող երկրի՝ Բաբելոնիայի հետ՝ շրջանցելով Ասորեստանը: Ուրարտական առարկաների ի հայտ գալը Պարսից ծոցի ավազանում կարող էր տեղի ունենալ Ք.ա. 8-րդ դ-ի առաջին կեսին, երբ բիայնացիները վերահսկում էին գրեթե ողջ արևմտյան Իրանը՝ զագրոսյան երկրներից Բիթ-Խամբանի, Պարսուայի, թերևս նաև մարերի միջնորդությամբ շփումների մեջ մտնելով Բաբելոնիայի կամ Էլամի հետ, որտեղից էլ ուրարտական արտադրանքը կարող էր հասնել Դիլմուն (Բահրեյն) և մինչև անգամ հեռավոր Արաբական թերակղզու ափեր (ներկայիս Արաբական միացյալ էմիրությունների տարածքը)[2990]:

Այս իրավիճակը կարող էր փոխվել Ք.ա. 8-րդ դ-ի կեսերից սկսած՝ Թիգլաթպալասար III-ի, ապա և՝ Սարգոն II-ի ձեռնարկած նվաճումներին զուգահեռ: Եթե Ուրարտուն մինչ այդ փորձում էր Ասորեստանին կտրել հումքի աղբյուրներից, ապա Ասորեստանը, ընդհակառակը, այժմ ինքն էր փորձում Ուրարտուին զրկել արտահանման շուկաներից:

Կարելի է կարծել, որ բոլորովին այլ իրավիճակի հետ գործ ունենք Ք.ա. 8-րդ դ-ի վերջերից կամ ավելի շուտ՝ Ք.ա. 7-րդ դ-ի սկզբներից սկսած: Ինչպես վերը նշվեց, այս շրջանում նկատվում է մերձեցում երկու երկրների միջև: Այս միտումը, երբեմն նկատվող բացառություններով հանդերձ, ավելի է խորանում Ք.ա. 7-րդ դ-ի կեսերին: Ենթադրվում է, որ իր գոյության մայրամուտին Ուրարտուն հանդիսացել է Ասորեստանին դաշնակից երկիր, ինչը պետք է որ արտացոլվեր նաև առևտրական հարաբերություններում: Այս շրջանից սկսած ուրարտական հնավայրերում հանդիպում են ասորեստանյան արտադրության որոշ իրեր, մասնավորապես՝ կնիքներ[2991], որոնք

[2988] Mayer 1983: 104f. (Z. 366), 106f. (Z. 383).
[2989] Mayer 1983: 104f. (Z. 358, 361).
[2990] Potts 2009: 3ff.
[2991] Пиотровский 1950: 77 сл., рис. 50; Ходжаш 2000: 151 сл., рис.

կարող են վկայել նման կապերի օգտին[2992]: Թերևս այս համատեքստում կարելի է դիտարկել նաև Այանցի ամրոցից հայտնաբերված նորբաբելոնյան արձանագրությամբ կնիքը[2993], ինչպես նաև միջերկրածովյան ծագում ունեցող խեցիները (նկ. Գ-34/1-2)[2994]: Մյուս կողմից, ուրարտական ծագում է ենթադրվում Կալխուից գտնված փղոսկրյա որոշ իրերի համար[2995], ևն (նկ. Գ-34/3-4):

### 3.3.6.3.2. **Ուրարտու – Իրանական բարձրավանդակ**

Իրանական բարձրավանդակի նշանակությունը որպես առևտրական տարանցիկ ուղի կենտրոնական Ասիայի և Առաջավոր Ասիայի միջև չափազանց մեծ էր. այն մուտք էր ապահովում դեպի Արևելքի հումքային աղբյուրներ՝ առաջին հերթին մետաղ և լաջվարդ[2996]: Ասսուրա-ուրարտական հակամարտության հիմնական պատճառներից մեկը այսպես կոչված «զագրոսյան» կամ «արևելյան» առևտրական մայրուղիների նկատմամբ վերահսկողության սահմանումն էր[2997], ինչին միաժամանակ հասավ Ուրարտուն՝ շուրջ կես դար հաջողությամբ վերահսկելով արևելյան ապրանքների շրջանառությունը՝ դրանց հոսքը, թերևս, ուղղելով դեպի Բաբելոնիա կամ Էլամ և շրջափակելով Ասորեստանն արևելքից[2998]:

Կարևորագույն ապրանքներից մեկը, որի կարիքը խիստ ուներ Ուրարտուն (ինչպես և ողջ Առաջավոր Ասիան), դա անագն էր: Հայկական լեռնաշխարհի տարածքում անագի արդյունահանելի պաշարներ գրեթե չկան, չկան նաև վկայություններ Փոքր Ասիայում անագի առավել հարուստ հանքավայրի՝ Մադենբելենիթեփեի հնագույն շահագործման մասին (Բուրսայի մոտ)[2999]: Փոխարենը, անագի արդյունահանում է ենթադրվում հարավ-կենտրոնական Փոքր Ասիայում բացահայտված Քեսթելի հանքավայրից դեռևս վաղբրոնզեդարյան փուլում, սակայն, ինչպես երևում է, սահմանափակ շրջանառությամբ[3000]:

Հին Առաջավոր Ասիան անագ ստանում էր երկու ճանապարհով՝ Եվրոպայից (արևմտամիջերկրածովյան ավազան, Բրիտանիա), որը բերվում էր թե ցամաքային, և

---

[2992] Դևեջյան, Հմայակյան 2004, էջ 39-40:
[2993] Çilingiroğlu 2011b: 360; նույնի՝ 2014: 139.
[2994] Çilingiroğlu 2014: 139f., Res. 6-7.
[2995] Herrmann 2012: 339ff.
[2996] Beale 1973: 133ff.
[2997] Զագրոսներով անցնող և Իրանական բարձրավանդակը Միջագետքին կապող ճանապարհների համար ամփոփ տե՛ս Potts 1994: 38ff., Fig. 5.
[2998] Levine 1977: 177ff.
[2999] Belli 1991d: 7; Öztürk, Hanilçi 2009: 109.
[3000] Yener 2000: 71ff., 88ff., Fig. 1; նույնի՝ 2009: 143ff., esp. 148f. Öztürk, Hanilçi 2009: 111. Cf. Muhly 1993: 239ff.; նույնի՝ 1995: 1502, 1507f.; Weeks 1999: 52; Pernicka *et al*. 2003: 170ff.

թե ծովային ճանապարհներով[3001], և արևելքից՝ ներկայիս Աֆղանստանից[3002], Տաջիկստանից և Ուզբեկստանից[3003], Ղազախստանից[3004], անգամ՝ հարավ-արևելյան Ասիայից[3005]: Միաժամանակ, ոչ վաղ անցյալում անագի պարունակությամբ հանքավայրեր են հայտնաբերվել նաև Իրանական բարձրավանդակում՝ հնագույն շահագործման հետքերով (Դաշտ-է Լութ, Դեհ Հոսեին)[3006]:

Արևելքն առավել հին ճանապարհն էր, որն ապահովում էր անագի մուտքը Փոքր Ասիա Աշշուրի փոքրասիական «կարումներ»-ի գոյության շրջանում: Աֆղանստանից սկիզբ առնող ճանապարհներից հյուսիսայինը (այսպես կոչված «Անագի (հյուսիսային) ճանապարհ»-ը) Կասպից ծովի հարավով՝ Գիլանի տարածքով անցնելով ուղղվում էր դեպի Ուրմիա լճի հարավ և այստեղից դեպի Հայկական լեռնաշխարհ, Միջագետք, ապա և Փոքր Ասիա[3007]: «Մերձուրմյան անագ»-ի առաջին հիշատակությունները վերաբերում են Ասորեստանի արքա Աշշուրնածիրպալ II-ի ժամանակաշրջանին: Հյուսիսզագրոսյան գոտում ընկած «լուլուբեական» Զամուա միության երկրների վրա սահմանված մետաղի հարկի շարքում (ոսկի, արծաթ, բրոնզ, բրոնզե առարկաներ) ասորեստանյան արքայի տարեգրությունը թվարկում է նաև անագը[3008]: Մերձուրմյան Գիլզանու երկրի արքայից մետաղներով հարկ ստանալու մասին է հայտնում Սալմանասար III-ի արձանագրություններից մեկը, ընդ որում, այստեղ ևս հիշատակվում է անագը[3009]: Անագի ձուլածո պաշարներ են հիշատակվում Մուծածիրում[3010]: Նաիրիի հետ կատարվող անագի առևտրի դրվագ է հայտնի նաև միջինասորեստանյան մի տեքստից[3011]: Անկասկած, բոլոր դեպքերում գործ ունենք ներմուծված մետաղի հետ:

Կարելի է կարծել, որ սկզբնապես Ուրարտուն ևս անագ ստացել է այս ճանապարհով, դրա վրա ընկած մերձկասպյան Թալեշի և Գիլանի տարածքի ինչ-ինչ «երկրներ»-ի հետ իրականացվող առևտրի միջոցով (Անդիա (՞), գուցե

[3001] Maddin *et al*. 1977: 42ff.; Muhly 1985: 285ff.; Bass 1985: 625; Zaccagnini 1990: 498f.; Pulak 2009: 189ff.
[3002] Cleuziou, Berthoud 1982: 14ff.; Muhly 1985: 281ff.; Belli 1991b: 24; Weeks 1999: 60f.; Oguchi 1999: 85f. and n. 9. Տե՛ս նաև Anthony 2007: 418ff., Fig. 16.1; Liverani 2011: 253.
[3003] Boroffka *et al*. 2002: 135ff.
[3004] Stöllner *et al.* 2011: 231ff.
[3005] Ամփոփ տե՛ս Muhly 1977: 75ff.; Weeks 1999: 50f.
[3006] Nezafati *et al*. 2009: 223ff.; Helwing 2009: 209ff., Fig. 1.
[3007] Burney 1977: 6; Dyson, Voigt 1990: 476; Oguchi 1999: 91, 99ff., Fig. 2.
[3008] Grayson 1991: 197 (A.0.101.1 56-58), 208 (A.0.101.1 77b-80a).
[3009] Grayson 1996: 148f. (A.0.102.87).
[3010] Mayer 1983: 104f. (Z. 352)
[3011] Wiseman 1968: 183 (TR.3019). Տեքստի թվագրության համար Ք.ա. 13-րդ դ-ով տե՛ս Wiseman 1968: 175f.; Zaccagnini 1990: 499, n. 29; Belli 1991d: 2.

Գիզիլբունդա(՞)[3012]): Ուրարտական մեծաթիվ բրոնզե առարկաների ի հայտ գալը հարավմերձկասպյան տարածքներում[3013], ինչը կազմում է բացառիկ մեծ քանակություն՝ Հայկական լեռնաշխարհից դուրս հայտնաբերված ուրարտական ծագման այլ բրոնզե գտածոների համեմատությամբ, պատահական չէր և կարող է լինել այդ առևտրի լավագույն վկայությունը:

Ի դեպ, անագի առևտրի ծավալների մասին կարելի է պատկերացում կազմել Մուծածիրում պահվող բրոնզի հսկայական քանակություններից: Եթե հաշվի առնենք միայն բրոնզի ձուլակտորները, որը կազմել են 109 տ, ապա միայն այդ քանակության բրոնզ ստանալու համար (եթե խոսքը վերաբերում է անագաբրոնզին) անհրաժեշտ կլիներ առնվազն մոտ 5500-7800 կգ անագ[3014], եթե ոչ ավելին[3015]: Մինչդեռ, մինչ այժմ հրատարակված «կապադովկիական» տեքստերի համաձայն՝ մոտ 11-13.5 հազ. կգ է կազմել անագի այն քանակությունը, որն արտահանվել է Փոքր Ասիա Աշշուրի առևտրականների կողմից Ք.ա. 2-րդ հազ-ի սկզբներին[3016]:

Իրանական բարձրավանդակի երկրների և վերջիններիս միջնորդությամբ (՞)՝ ուրարտական տերության հետ իրականացվող առևտրում կարևորագույն տեղ էր ունենալու ձիերի առևտուրը. Ասորեստանը խիստ կարիք ուներ ձիերի և չի բացառվում, որ ասորեստանյան իշխանությունները ոչ բացահայտ կերպով, բայց թույլատրում էին առևտուր անել Ուրարտուի կամ նրա ազդեցության գոտում ընկած երկրների հետ: Ուրարտուի մերձուրմյան դաշնակիցներից մեկի՝ Զիկիրտուի հետ իրականացվող ձիերի առևտրին վերաբերող նամակը կարող է լինել դրա վկայությունը[3017]:

Հայտնի է, որ Ասորեստանում մեծ պահանջարկ ունեին հատկապես «մեսայական» (*mēsāya*) կոչվող ձիերը, և կարելի է կարծել, որ նրանք տարածված էին

---

[3012] Այս տարածքով անցնող ճանապարհային ցանցի համար տե՛ս Potts 1994: 40f., Fig. 5: Անդիա և Գիզիլբունդա երկրների տեղորոշման համար տե՛ս և հմմտ. Арутюнян 1985a: 28, 63 сл.; Reade 1995: 31ff., Figs. 3-5.

[3013] Ghirshman 1964: 49ff., fig. 1-2; նույնի՝ 1966: 219f.; Տիրացյան 1966ա, էջ 291-294, նկ. 2ա/2բ; Dalalian, Grekian 2004: 1ff., Fig. 1; Piller 2010: 53ff., Tab. XIII/1-2.

[3014] Միջինը 1 (միավոր անագ) : 14-20 (միավոր պղինձ) հաշվարկի դեպքում:

[3015] Մասնավորապես, Ուլուբուրունի խորտակված նավից դուրս բերված անագաբրոնզը ստացվել էր պղնձի և անագի 10 : 1 հարաբերակցությամբ: Տե՛ս Katz 2008: 129. Կարմիր-բլուրից հայտնաբերված բրոնզե բարձրարվեստ թասերը պարունակել են 10 տոկոս անագ: Տե՛ս Пиотровский 1959б: 180. Ընդհանրապես, ուրարտական բրոնզեգործական իրերը հիմնականում պատրաստվել են պղնձի և անագի 1 : 10/11 տոկոս, հազվադեպ՝ ավելի բարձր հարաբերակցությամբ: Տե՛ս Curtis 1996: 123, 130; Biber *et al.* 2008: 159.

[3016] Muhly 1995: 1508; Wiener 1991 327f.

[3017] Lanfranchi, Parpola 1990, No. 169. Մեկ այլ նամակում հիշատակվում է անդիական արքայազնի կողմից բերվող ընծաների մասին՝ 5 ջորի (ANŠE.GÌR.NUN.NA.MEŠ) և 51 ձի (ANŠE.KUR.RA.MEŠ), այդ թվում՝ 16 կարմիր նժույգ ($SA_5$.MEŠ), 13 իրգինի(՞) նժույգ (*irgini*), 14 սև ($GI_6$.MEŠ), 1 հարշայական (*ḫaršaya*), մեկ թուանու(՞) (*tuanu*) նժույգ, ինչպես նաև 6 մատակ (MÍ.ÌÚB.MEŠ): Տե՛ս Lanfranchi, Parpola 1990, No. 171.

նաև Ուրարտուում: Մասնավորապես, Կարմիր բլուրում վկայված մոտ 125.5 սմ մնդավի բարձրությամբ համեմատաբար փոքր գլխով ձին, որը տիպաբանորեն խորթ էր Հայկական լեռնաշխարհին և վկայված չէ նախորդ դարաշրջանների համար[3018], կարող է պատկանել «մեսայական» կամ «զագրոսյան» ձիերի խմբին: Այդ ձիերը երբեմն նույնացվում են «նիսեական» կոչվող ձիերի հետ (*Νήσαιον πεδίον*)[3019]: Չափերով փոքր այդ կենդանիները, ըստ Նինվեի «Ձիերի ցուցակ»-ի, օգտագործվել են ասորեստանյան բանակի հեծելազորում, ի տարբերություն եթովպական (*kusāya*) «մեծ ձիեր»-ի, որոնք լծվում էին մարտակառքերին[3020]: Ասորեստանը Իրանական բարձրավանդակի տարբեր երկրների վրա հարկը սահմանել էր ձիերով (տե՛ս վերը), կարելի է կարծել, որ նույնն էր անում նաև Ուրարտուն, իսկ մերձուրմյան ավազանի տարածքների նշանակությունը որպես ձիաբուծության կենտրոն չափազանց մեծ էր[3021]: Ենթադրվում է անգամ, որ ասորեստանյան բանակի ձիավարժները՝ «դաստիարակներ»-ը (*murabbânu*), կարող էին լինել Ուրարտուից կամ Մանայից[3022]:

Վերը նշված «Անագի (հյուսիսային) ճանապարհ»-ով է իրականացվել նաև երկսապատանի «բակտրիական ուղտեր»-ի (*Camelus bactrianus*) ներմուծումն Ասորեստան: Մասնավորապես, *udru* կոչվող ուղտերը, որոնք անհայտ էին Միջագետքին, առաջին անգամ հիշատակվում են Աշշուր-բել-կալայի տեքստերում, ընդ որում, շեշտվում է, որ դրանք ձեռք են բերվել առևտրի շնորհիվ[3023]: Ասորեստանյան աղբյուրներում սովորաբար *udru* են անվանվել բակտրիական ուղտերը[3024]: Գիլզանու երկրի արքա Աս(ա)ուի կողմից Սալմանասար III-ին տրված հարկերի թվում արդեն վստահաբար հիշատակվում են բակտրիական ուղտեր, քանի որ այդ մասին հայտնող տեքստերից մեկում հիշատակված երկու, իսկ մեկ այլ տեքստում՝ յոթը ուղտերի մասին աղբյուրը նշում է, որ դրանք ունեն «երկու սապատ» (*udrāte ša* 2 (*šunnā*) *gungulīpī*, *udrate* (ANŠE.A.AB.BA.MEŠ) *ša šunnā ṣerišina*)[3025]: Այս նույն ճանապարհով են բակտրիական ուղտեր ներմուծվել նաև Ուրարտու. համենայն դեպս, ուրարտական շրջանի պատկերագրության մեջ ունենք երկսապատ ուղտի պատկեր[3026]: Ընդհանուր առմամբ, ուղտեր

[3018] Межлумян 1972: 117 сл.
[3019] Diakonoff, Kashkai 1981: 57.
[3020] Dalley 1985: 43.
[3021] Арутюнян 1964: 151. Հմմտ. նաև Burney 1977: 4.
[3022] Dalley 1985: 42f., 48.
[3023] Grayson 1991: 103f. (A.0.89.7: iv 26-27), 98 (A.0.89.6: 2′-3′).
[3024] Քննարկման համար տե՛ս Herles 2008: 157f.
[3025] Grayson 1996: 14f. (A.0.102.2 27b-29a), 21 (A.0.102.2 60b-63a). Տե՛ս նաև Grayson 1996: 9 (A.0.102.1 37b-40), 148f. (A.0.102.87).
[3026] Ходжаш и др. 1979, Рис. 59; Herles 2008: 166ff., Abb. 13.

(ուրարտ. *ulṭu*) հազվադեպ են հիշատակվում տեքստերում (տե՛ս Աղ. 26), իսկ առկա հիշատակումները, մեկ բացառությամբ, վերաբերում են մերձումյան շրջաններին[3027]:

Հնարավոր է, վերը նշված ճանապարհով են Առաջավոր Ասիա ներմուծվել իրեր նաև հեռավոր Հնդկաստանից և Չինաստանից[3028]: Այս երկրների հետ առևտրական ոչ ուղղակի կապերի մասին կարող են վկայել Թոփրաքքալեից հայտնաբերված մետաքսե գործվածքի մնացորդները[3029]: Արևելքից ստացված մյուս ապրանքը կարող էր լինել փղոսկրը, որի համար տե՛ս ստորև:

### 3.3.6.3.3. Ուրարտու – Լևանտ (Սիրիա-փյունիկյան աշխարհ և Պաղեստին)

Լևանտյան տարածաշրջանը միմյանց էր կապում համաշխարհային առևտրական մայրուղիները, որոնք Հնդկաստանից ձգվում էին մինչև արևմտյան Միջերկրածովք: Այս գոտու քաղաքները հսկայական եկամուտ էին ստանում ամենատարբեր ապրանքների, բայց հատկապես մետաղի առևտրից, և պատահական չէ, որ տեղի պալատներում կուտակված մեծ քանակությամբ մետաղի պաշարների մասին են հայտնում ասորեստանյան աղբյուրները՝ ներառյալ ոսկի և արծաթ, երկաթ, բրոնզ և անագ[3030]: Վերջինս ծովային ճանապարհով ներմուծվում էր փյունիկյան քաղաքներ (անագի պաշարներ են հիշատակվում, օրինակ, Սիդոնում, Տյորոսում և Ունկի-Պատտինում[3031]), որտեղից ցամաքային ճանապարհով անագն արտահանվում էր Փոքր Ասիա, Սիրիա և Միջագետք՝ արամեական և լուվիական թագավորությունների միջնորդությամբ: «Նաիրյան» Բիթ-Զամանիից ձեռք բերված անագի մասին է հայտնում ասորեստանյան արքա Թուկուլթի-Նինուրտա II-ը[3032]: Նրա տեքստերում որպես հարկ ստացված անագի հիմնական հիշատակումները վերաբերում են հենց այս՝ Եփրատից արևմուտք ձգվող երկրներին[3033]: Նույնը տեսնում ենք նաև Աշշուր-նածիր-ապալ II-ի և Սալմանասար III-ի արձանագրություններում[3034]:

Այս տվյալները կարող են հուշել, որ նշված երկրները կարող էին հանդիսանալ նաև Ուրարտու անագի ներմուծման կարևոր աղբյուր հատկապես Թիգլաթպալասար III-ի և Սարգոն II-ի արևելյան արշավանքներից հետո, երբ Իրանական

[3027] Ամփոփ տե՛ս Herles 2008: 168f.
[3028] Леман-Хаупт 1938: 265. Տե՛ս և հմմտ. նաև Пиотровский 1950: 80 сл.; նույնի՝ 1959a: 195.
[3029] Lehmann-Haupt 1931: 967.
[3030] Ամփոփ տե՛ս Янковская 1956: 36 сл., схема 3., նույնի՝ 1969b: 261ff., Fig. 4; ինչպես նաև 3.1.2.1.:
[3031] Համապատասխանաբար տե՛ս Grayson 1996: 147 (A.0.102.84), 38 (A.0.102.6 iii 11-15), 47 (A.0.102.2.8 40′-41′), 69 (A.0.102.14 155), 139 (A.0.102.60).
[3032] Grayson 1991: 171f. (A.0.100.5 11-29).
[3033] Grayson 1991: 175 (A.0.100.5 76-79, 90-98), etc.
[3034] Տե՛ս, օրինակ, Grayson 1991: 203 (A.0.101.1 77-79), նույնի՝ 1996: 9ff. (A.0.102.1 40-45, 92′-95′), 19 (A.0.102.2 35-40) ևն:

բարձրավանդակի գրեթե ողջ արևմուտքը հայտնվեց այս անգամ արդեն Ասորեստանի կամ նրան դաշնակից ուժերի վերահսկողության տակ: Կարելի է նշել, որ Ք.ա. 714 թ-ից հետո Ուրարտուն, ամենայն հավանականությամբ, զրկվելու էր անագի արևելյան աղբյուրներ մուտք ունենալու հնարավորությունից, իսկ «Անագի (հյուսիսային) ճանապարհ»-ը կարող էր անցնել, օրինակ, Մաննայի թագավորության վերահսկողության տակ: Ասորեստանի հետևողական քայլերը՝ Ուրարտուն կտրելու արևմտյան լուվիական աշխարհից[3035], հետապնդում էր ոչ միայն քաղաքական նպատակներ, և էական դեր կարող էր խաղալ Ուրարտուն տնտեսական շրջափակման ենթարկելու ձգտումը: Ասորեստանի կողմից Լևանտի նկատմամբ վերահսկողության հասնելուց հետո այդ դերը կարող էր անցնել Փռյուգիային և Թաբալին, հավանաբար, Կիլիկիայի միջնորդությամբ: «Աստվածաշնչում» կիլիկյան Տարսոն (Թարսիս) քաղաքը հանդես է գալիս կապված հատկապես մետաղների առևտրի հետ[3036], հիշատակվում են նաև Թաբալը (Տուբալ/Թովբել) և Մուշկին (Մեշեք/Մոսոք)[3037], այն է՝ Փռյուգիան:

Իր հերթին, դեպի Լևանտ արտահանման մեջ կարող էր մեծ տեղ զբաղեցնել ուրարտական մետաղը[3038]: «Աստվածաշնչում», խոսելով Ուզալի հետ Վեդանի և Յավանի առևտրի մասին, հիմնականում նշվում է երկաթը: Ուզալը (<*ūzzāl*) համադրվում է խեթական աղբյուրների Ուսավալասի (*Ušawalaš*)[3039] և ասորեստանյան տեքստերի Իզալայի հետ[3040]: Վերջինս, ընդհուպ մինչև Ք.ա. 8-րդ դ-ի վերջեր, հիմնականում գտնվել է ուրարտական գերիշխանության ներքո և հիշատակվում է դեռևս Մենուայի տեքստերում Իշալանի ($^{URU}$*išalani*) անունով[3041]:

Փյունիկյան քաղաքների հետ առևտրական կապեր կարող էր ունենալ և միջնորդ առևտրով զբաղվեր նաև Շուբրիան: Այս առումով հետաքրքիր է, որ Տյուրոսի առևրտրական գործընկերների շարքում հիշատակվում է նաև Շուբրիայի գլխավոր կենտրոններից Կուլլիմերին (տեքստում՝ *klmd*)[3042]:

Դեպի Լևանտ իրականացվող արտահանման մեջ, հավանաբար, տեղ է գտել նաև որոշ քանակությամբ բրոնզեգործական արտադրանք. համենայն դեպս, այս-տեղից հայտնաբերված որոշ իրերի համար ենթադրվում է ուրարտական ծագում[3043]:

[3035] Fuchs 1994: 127f., 324 (Z. 216-218).
[3036] Եզեկիել ԻԷ, 12-13:
[3037] Եզեկիել ԻԷ: 19-20:
[3038] Katz 2008: 133.
[3039] Elat 1983: 323ff.
[3040] Zadok 1989: 163; Block 1998: 76, n. 138.
[3041] КУКН, $44_{11}$; CTU I, A 5-9 f. s.$_{11}$; Biber *et al*. 2012: 89, 94f.
[3042] Radner 2012: 260ff.
[3043] Barnett 1962: 90; Amiran 1966: 90f., Pl. XVIII.

Լևանտյան աշխարհի հետ Ուրարտուին կապող մյուս կարևոր ապրանքը դա փղոսկրն էր[3044]: Ասորեստանյան տեքստերում մեծ թիվ են կազմում այստեղից որպես հարկ ստացված «անհաշիվ քանակությամբ փղոսկրի» (ZÚ AM.SI *ana la mani*) հիշատակումները[3045]: Փղոսկր և հարյուրավոր փղոսկրե իրեր է հիշատակում «Լուվրի աղյուսակ»-ը Մուծածիրից տարված ավարի թվարկման մեջ[3046]: Փղոսկրե իրեր հայտնի են նաև ուրարտական մի քանի հուշարձաններից, մասնավորապես՝ Կարմիր բլուրից[3047], Թոփրաքքալեից[3048], Ալթըն-թեփեից[3049] և Քյոշքերբաբայից (նկ. Գ-35/1-4)[3050]: Ուրարտական այս կենտրոններից, ինչպես նաև Քյոշքերբաբայից գտնված փղոսկրե իրերը, ենթադրվում է, ներմուծվել են հյուսիսային Սիրիայից[3051], ենթադրվում է անգամ Ուրարտուում փղոսկրի մշակության տեղական դպրոցի գոյության հնարավորությունը[3052]: Այս առումով հետարքիր է, որ Ալթընթեփեից հայտնաբերվել է հետագա մշակման համար նախատեսված փղոսկրի հումք[3053]:

Այս կապակցությամբ չափազանց ուշագրավ է փղերի հիշատակությունը ուրարտական մի տեքստում: Այստեղ խոսվում է «2(ᵐ) *tardini* կենդանի փղի» մասին ([2(?)] AM.SI$^{MEŠ}$ *tardini šeḫe*[*ri*(?)])[3054]: Փղերի հիշատակությունը Ուրարտուում չափազանց տարօրինակ է, քանի որ Հայկական լեռնաշխարհի կլիման անգամ այդ շրջանում ամենևին նպաստավոր չէր փղերի գոյատևման համար: Մյուս կողմից, ընդհուպ մինչև Ք.ա. 9-րդ դ., ասորեստանյան տեքստերում հանդիպում են արքաների կողմից կազմակերպված փղերի որսի հիշատակումները[3055]: Վերջին հիշատակությունը վերաբերում է Սալմանասար III-ի շրջանին[3056], ում թողած «Սև կոթող»-ի վրա պատկերված է նաև փիղ[3057]: Հետևաբար, արդյո՞ք հնարավոր է ենթադրել, որ դեպի հյուսիսային Սիրիա Ուրարտուի ծավալման ընթացքում ինչ-ինչ քանակությամբ փղեր են բերվել Լեռնաշխարհ:

---

[3044] Çilingiroğlu 1984: 43ff.
[3045] Grayson 1996: 69 (A.0.102.14 155), 82 (A.0.102.16: 283′-284′).
[3046] Mayer 1983: 104ff. (Z. 353-356, 388-389).
[3047] Piotrovskij 1967: 58ff.
[3048] Barnett 1950: 10, 15ff., Figs. 6-7, Tab. XII-XV; van Loon 1966: 131ff., Tab. XXXIII-XXXIV.
[3049] Özgüç 1969: 38ff./ 78ff., Res./Fig. 36-42, 46-47, Lev./Tab. XLII/3, XLVII/1-3; van Loon 1966: 135f., Fig. 16.
[3050] Bilgi 1981: 86.
[3051] Bilgi 1981: 86; Moorey 1973: 87. Հմմտ. Çilingiroğlu 1984: 49. Տե՛ս և հմմտ. նաև van Loon 1966: 133; Özgüç 1969: 47; Winter 2010: 230, n. 18.
[3052] Collon 1977: 220f.; Sağlamtimur 2009: 486f. Հմմտ. Çilingiroğlu 1984: 43.
[3053] Özgüç 1969: 47f., n. 71/2.
[3054] КУКН, 447 обор. стор.$_5$; CTU IV, CT Tk-2 Vo$_5$.
[3055] Grayson 1991: 26 (A.0.87.1: vi 70-75), 103 (A.0.89.7: iv 6-9), 135 (A.0.98.1: 72), 154 (A.0.99.2: 125-126), 226 (A.0.101.2: 41), 291 (A.0.101.30: 90-91).
[3056] Grayson 1996: 41 (A.0.102.6 iv 44), 84 (A.0.102.16 343′).
[3057] Barnett 1975, Bildtafel 46.

Մյուս կողմից, Սիրիա-Միջագետք ներմուծված փղոսկրի մի մասը, ենթադրվում է, ուներ հնդկական ծագում[3058], և տեսականորեն չի բացառվում նաև կենդանի փղերի ներմուծումն արևելքից «բակտրիական» (երկսապատ) ուղտերի հետ միասին[3059], և Ուրարտուն, որը կարծես թե բավական սերտ կապեր ուներ հարավ-կասպիական տարածաշրջանի երկրների հետ, կարող էր և վերահսկել կամ միջնորդ հանդիսանալ փղոսկրի առևտրում՝ այն արտահանելով, հնարավոր է, նաև Փոքր Ասիա կամ Սիրիա: Այս դեպքում հնարավոր է մտածել, որ Ուրարտու են բերվել նաև որոշ քանակությամբ հնդկական փղեր:

Սիրիայից Ուրարտու ներմուծված ինչ-որ քանակի խեցեղենի վկայություն կարող են լինել Հայկաբերդից հայտնաբերված «սիրիական ոճ»-ի երկարավուն խեցանոթների մեծաքանակ բեկորները[3060]: Դրանց հայտնաբերման վայրը կարող է հուշել, որ այդ խեցեղենը Ուրարտու է բերվել հյուսիսային Սիրիայում Սարդուրի Արգիշթորդու հաստատած գերիշխանության շրջանում:

Առևտրական այս կապերը իրենց հետ էին բերում նաև զանազան մշակութային փոխազդեցություններ: Մասնավորապես, սիրիա-փյունիկյան ազդեցություն է նկատվում ուրարտական բրոնզեգործության վրա[3061] և հակառակը[3062]:

Եզրափակելով այս բաժինը նշենք, որ Այանցից հայտնաբերված գունազարդ խեցեղենի որոշ օրինակների համար նույնպես ենթադրվում է լևանտյան ծագում[3063]: Այդ խեցեղենը, սակայն, Ուրարտուում կարող էր հայտնվել, միգուցե, ասորեստանյան միջնորդությամբ, ինչը կարելի է ասել նաև Այանցից հայտնաբերված միջերկրածովյան ծագման խեցիների համար (տե՛ս վերը):

#### 3.3.6.3.4. **Ուրարտու – Եգիպտոս**

Առևտրական որոշ կապեր են տեսանելի նաև Ուրարտուի և Եգիպտոսի միջև[3064]: Ավելի շուտ՝ խոսքը չի վերաբերում ուղիղ առևտրին, այլ գործ ունենք Ուրարտու և ընդհանրապես՝ Հայկական լեռնաշխարհ եգիպտական իրերի դրվագային ներմուծումների հետ: Դա կարող էր տեղ գտնել, օրինակ, Ք.ա. 670-660-ական թթ-ին՝ Եգիպտոսում ասորեստանյան գերիշխանության շրջանում՝ Ասորեստանի միջնորդությամբ, երբ Ասորեստան բերված եգիպտական հարուստ ավարի մի մասը

[3058] Collon 1977: 221f.
[3059] Collon 1977: 222.
[3060] Erzen 1970: 498.
[3061] Muscarella 1968: 1ff. Տե՛ս և հմմտ. van Loon 1977: 229ff.
[3062] Moorey 1971: 91. Տե՛ս և հմմտ. նաև Winter 2010: 347f.
[3063] Çilingiroğlu 2014: 140, Res. 8-9.
[3064] Տե՛ս և հմմտ. Դևեջյան, Հմայակյան 2004, էջ 40-41; Devejian, Hmayakyan 2002: 190f.

կարող էր հայտվել Ուրարտուում[3065]: Այս առումով հետաքրքիր է, որ Այանցից և Բաստամից հայտնաբերվել են կապույտ գույն ստանալու համար օգտագործվող և ազուրիտից ստացվող հանքանյութի կտորներ («եգիպտական կապույտ»): Սկզբնապես ենթադրվում էր, որ այն կարող էր ունենալ եգիպտական ծագում[3066], թեև հետագայում արված ուսումնասիրությունները մղում են ենթադրելու, որ այն ստացվել է տեղում[3067]: Հնարավոր շփումների հաջորդ փուլը, երբ եգիպտական իրերի ենք հանդիպում Կարմիր բլուրում[3068], Արգիշթիխինիլի-Արմավիրում[3069], Էրեբունիում[3070], Օշականում[3071], Լոռի բերդի դամբարանադաշտում[3072] և այլուր[3073], կարող էր տեղ գտնել ասորեստանյան տերության գոյության վերջին տասնամյակում, երբ տերության արևմտյան նահանգներում՝ Հայկական լեռնաշխարհի անմիջական մերձավորությամբ, գործում էին Ասորեստանի դաշնակից եգիպտական զորքերը: Ք.ա. 605 թ-ից՝ Սիրիայում եգիպտացիների ջախջախումից ու վտարվելուց հետո, բաբելա-եգիպտական շարունակվող սուր հակամարտության պայմաններում, երբ Բաբելոնիան տնտեսական շրջափակման մեջ էր փորձում պահել Եգիպտոսը, խոսել այստեղից Հայկական լեռնաշխարհի ապրանքների հնարավոր ներթափանցման մասին, հազիվ թե կարելի լինի:

### 3.3.6.3.5. **Ուրարտու – Փոքր Ասիա և Էգեյան աշխարհ**

Ենթադրվում է, որ Ուրարտուի առևտրական հարաբերությունները հասել են ոչ միայն Փռյուգիա, այլև՝ Էգեյան ծովի ավազան և անգամ Ապենինյան թերակղզի[3074]: Մասնավորապես, ենթադրաբար ուրարտական ծագման իրեր են հայտնաբերվել Սամոսից[3075], Իտալիայից գտնված մի քանի այլ իրերի համար ևս ենթադրվում է ուրարտական ծագում (նկ. Գ-36/1-2)[3076]:

---

[3065] Տե՛ս նաև Пиотровский 1958: 21.
[3066] Reindell 2009: 533ff.
[3067] Ingo *et al*. 2013: 4283ff.; Çilingiroğlu 2014: 141f.
[3068] Пиотровский 1950: 83 сл., նույնի՝ 1955a: 54; Джанполадян 1964: 307 сл., рис. 1, 3-6; Ходжаш 2000: 153.
[3069] Пиотровский 1958: 20 сл., рис. 1/1.
[3070] Ходжаш 1975: 154 сл.; նույնի՝ 2000: 153.
[3071] Եսայան, Զարդարյան 1985, էջ 152-161:
[3072] Դևեջյան 1998, էջ 3-4; Դևեջյան, Հմայակյան 2004, էջ 42-45; Devejian, Hmayakyan 2002: 188ff.
[3073] Пиотровский 1958: 20 сл., рис. 1/1-3, рис. 3.
[3074] Lehmann-Haupt 1907: 88f.; նույնի՝ 1931: 488sqq., 520sqq.; Pallottino 1955: 109ff.; Maxwell-Hyslop 1956: 150ff.; Hanfmann 1956: 213; Amandry 1956: 239ff.; նույնի՝ 1958: 78ff.; Piotrovskij 1967: 39ff.; Birmingham 1961: 185, 190ff.; Есаян 1962: 206; Եսայան 1982, էջ 49-50; Barnett 1982: 367ff. Яйленко 1990: 211 сл. Տե՛ս նաև Muscarella 1978: 62, n. 3-4; van Loon 1977: 229, n. 1-ում նշվ. գրականությունը:
[3075] Jantzen 1972: 80ff., Pls. 76-80; Muscarella 1978: 63ff.; նույնի՝ 2013: 689ff.; Belli 1991b: 16; Can 2007: 29; Eren 2012: 92.
[3076] Maxwell-Hyslop 1956: 150ff.; Akurgal 1959: 72; Erzen *et al*. 1960: 9f., n.20-21; Chahin 1978: 70ff. Հմմտ., սակայն, Muscarella 1962: 320ff.; նույնի՝ 1968: 13f., n. 20 and p. 18, n. 29; նույնի՝ 1978: 62f., n. 5; նույնի՝ 1988: 262f. (No. 351); Herrmann 1966: 79ff.; van Loon 1977: 229ff. Քննարկումների համար տե՛ս նաև Çilingiroğlu 1984: 68ff.; Seidl 1988a: 169ff.; Sevin 1999: 113ff.; Winter 2010: 343f. and n. 10; Çavuşoğlu, Gökce 2013: 108.

Իհարկե, եթե անգամ ընդունենք այդ իրերի ուրարտական ծագումը, այդ դեպքում անգամ խոսել կանոնավոր առևտրական հարաբերությունների մասին ավելորդ է: Այլ խնդիր է, որ ուրարտական իրերն այստեղ կարող էին հայտնվել միջնորդ առևտրի կամ պարզապես թալանի շնորհիվ: Առաջինի դեպքում կարող էր մեծ դերակատարություն ունենալ Օրոնտեսի գետաբերանում ընկած և Ք.ա. առնվազն 8-րդ դ-ից գործող Ալ-Մինայի նավահանգիստը[3077], ուր նաև վկայված է հույների վաղ ներկայություն[3078]: Ալ-Մինան գտնվում էր Ունկի-Պատտինի տարածքում, որի հետ, կարելի է կարծել, Ուրարտուն կապեր է ունեցել առնվազն Սարդուրի Արգիշթորդու կառավարման ընթացքում: Եթե խոսքը վերաբերում է թալանին, ապա հնարավոր է թվում դա կապել կիմմերների հետ, ովքեր ակտիվորեն գործելով Ուրարտուի տարածքներում բավական երկար ժամանակ՝ հետագայում նրանց տեսնում ենք Փոքր Ասիայի արևմուտքում՝ Լիդիայում, որտեղից կարող էին այդ առարկաները հասնել և՛ մերձակա Էգեյան ծովի կղզիներ, և՛ մայրցամաքային Հունաստան: Ընդ որում, դա կարող էր իրականացվել նաև ծովով՝ փյունիկյան քաղաքների միջնորդությամբ, և թերևս պատահական չէ, որ հենց այստեղ էլ հիշատակվում են կիմմերացի վարձկանները[3079]:

Գոյություն ունեին երկու հիմնական ճանապարհներ, որոնք Հայկական լեռնաշխարհը կապում էին Փոքր Ասիանին և Սիրիային: Դրանցից մեկն անցնում էր Արաքսի հովտով՝ այն կապելով Ալաշկերտի, Էրզրումի և Երզնկայի դաշտերին, իսկ այստեղից ուղղվում կամ դեպի հյուսիս՝ Սև ծովի ափերի հունական գաղութներ[3080], կամ դեպի արևմուտք՝ Փռյուգիա՝ կենտրոնական Փոքր Ասիայում, ապա և էլ ավելի արևմուտք՝ դեպի Էգեյան ծովի հոնիական քաղաքներ: Երկրորդ ճանապարհը Վանա լճի ավազանի կենտրոնները ուրարտական «արքունի ճանապարհ»-ով կապում էր Մալաթիայի հետ, որտեղից ուրարտական ապրանքները կարող էին ուղղվել կամ դեպի արևմուտք՝ Փռյուգիա, կամ դեպի հարավ՝ հարավ-արևելյան Փոքր Ասիա և հյուսիսային Սիրիա, ապա դեպի միջերկրածովյան ափեր, որտեղից և կարող էին արտահանվել Կիպրոս, Էգեյան ծովի կղզիներ և մայրցամաքային Հունաստան[3081]: Օրինակ, ենթադրվում է, որ հոնիական սաղավարտների համար նախատիպ կարող էին ծառայել ուրարտական սաղավարտները: Դրանք կարող էին Հոնիա հասնել Փռյուգիայի և Կարիայի վրայով[3082]: Այս նույն ճանապարհներով Ուրարտու կարող էին թափանցել

[3077] Chahin 1978: 69ff.
[3078] Яйленко 1990: 138 сл.; Luraghi 2006: 27ff.
[3079] Diakonoff 1992b: 168ff.
[3080] Winfield 1977: 151ff., Figs. 1-2. Տե՛ս նաև Çiğdem 2006: 102f. (նշվ. գրականությամբ):
[3081] Birmingham 1961: 185ff. and Fig. II; Goldman 1961: 239ff.
[3082] Held 1999: 141ff.; van Dongen 2013: 55 and n. 43.

էգեյան կամ փոքրասիական ծագման որոշ իրեր[3083]: Այս առումով նշենք, որ փոյուգական գունազարդ խեցեղենի բեկոր է գտնվել Ալթըն-թեփեի նոր շրջանի պեղումների ժամանակ (նկ. Գ-37/1-3)[3084]:

### 3.3.6.3.6. **Ուրարտու – Կենտրոնական և Հյուսիսային Կովկաս**

Ներկայիս Վրաստանի տարածքից՝ Քվեմո-Քարթլի և Շիդա-Քարթլի երկրամասերից, հայտնաբերվել են ուրարտական արտադրության կամ ուրարտական ազդեցությամբ արտադրված իրեր, մասնավորապես՝ Նազարգորայի դամբարանադաշտից[3085], Մուսիերիից և Սամթավրոյից[3086]: Բրոնզե գոտու բեկոր է հայտնի Կախեթիից (Խիրսա, արևելյան Վրաստան)[3087]: Ենթադրվում է, որ ուրարտական իրերի հայտնվելն այս տարածքներում կարող էր պայմանավորված լինել ուրարտացիների կամ նրանց հետ կապված էթնիկ խմբերի՝ դեպի հյուսիս տեղաշարժերով[3088]՝ չբացառելով նաև դրանց մուտքը նշված գոտի կապել ուրարտական և տեղական առաջնորդների միջև տեղ գտած ընծաների փոխանակումներով[3089]:

Ուրարտական եզակի թվով առարկաներ են գտնվել նաև Հյուսիսային Կովկասից, ինչպես, օրինակ, Արգիշթիի անունով սաղավարտը Ռուցչի Տիգից (Թերեքի վերին հոսանքի շրջան, հյուսիսային Օսեթիա)[3090], բրոնզե գոտին Թլիից (հարավային Օսեթիա)[3091], որոշ իրեր են հայտնի Ստավրոպոլի երկրամասից ևն[3092]: Դրանց հայտնվելը այստեղ սովորաբար կապվում է սկյութների հետ, որոնց մի մասը, ինչպես կարծում են, Առաջավոր Ասիայից ի վերջո հետ է շարժվել դեպի հյուսիսային Կովկաս՝ իր հետ տանելով թալանը՝ առաջավորասիական, այդ թվում նաև՝ ուրարտական ծագման իրեր (նկ. Գ-37/4-6)[3093]: Ուրարտական իրերի հայտնվելը սկյութների մոտ պայմանավորում են նաև ուրարտա-սկյութական ուղիղ առևտրական կապերով, ինչպես նաև ուրարտացի վարպետների գերեվարություններով, որոնք սկսել են աշխատել իրենց նոր պատվիրատուների համար[3094]:

---

[3083] Տե՛ս և հմմտ. Пиотровский 1950: 83, рис. 53; Джанполадян 1964: 307 сл.
[3084] Karaosmanoğlu, Korucu 2012: 133; Karaosmanoğlu, Korucu 2013: 233ff., Res. 1, Çiz. 1-2.
[3085] Gambaschidze *et al.* 2001: 405.
[3086] Տե՛ս Biber 2005: 169, 177, 181 (նշվ. գրականությամբ):
[3087] Пицхелаури 1965: 135, табл. 14/3.
[3088] Tsetskhladze 2003: 236.
[3089] Biber 2005: 169f., 181. Տե՛ս նաև Castelluccia 2014: 91.
[3090] Nagel 1959-1960: 144ff.; Есаян 1962: 198 сл. Տե՛ս նաև КУКН, 239; CTU IV, B 8-13.
[3091] Техов 1961: 130 сл., рис. 5; նույնի՝ 1972: 33, рис. 2/267.
[3092] Seidl 1988a: 172, Figs. 107-111; նույնի՝ 2004: 13ff.; Castelluccia 2014: 87ff., Figs. 5/1, 7/2, 8/2, 9/2.
[3093] Техов 1961: 138.
[3094] van Loon 1977: 231.

Մյուս կողմից, եթե չբացառենք առևտրական կապերի գոյությունը Ուրարտուի և Սև ծովի փոքրասիական հունական գաղութների, օրինակ՝ Տրապիզոնի միջև[3095], որոնք կարող էին զբաղվել միջնորդ առևտրով, ապա հունական գաղութներից ուրարտական ծագման իրերը կարող էին ներթափանցել նաև սկյութական աշխարհ:

3.3.6.4. **Մաքսանենգություն**

Ինչպես վերը նշվեց, առևտրական ուղիղ հարաբերությունները Ուրարտուի և Ասորեստանի միջև, թերևս, արգելված են եղել ընդհուպ մինչև Ք.ա. 8-րդ դ-ի վերջեր: Եվ մի գուցե ուրարտա-ասորեստանյան փակ սահմաններն էին պատճառը, որ հանդիպում ենք մաքսանենգության դեպքերի, որն իրականացրել են այս երկու տերությունների միջև ընկած երկրների բնակիչները: Գլխավոր վկայությունը, մասնավորապես, վերաբերում է կումմեցիներին: Ասորեստանյան արքունիք ուղղված և նախորդ գլխում բազմիցս հիշատակված Աշշուր-րեծուվայի նամակներից մեկում անվանապես թվարկվում են կումմեցի առաջնորդներ Արիծային և Արիյեին ենթակա թվով վեց անձինք, որոնք ասորեստանյան տարածքում գտնվող Բուսուսու «քաղաք»-ի բնակիչների միջնորդությամբ թանկարժեք ապրանքներ են գնել Կալախում և Նինվեում, ապա և ապրանքը տարել Ուրարտու: Նամակագիրը այնուհետև առաջարկում էր, որ արքան հրամայի ձերբակալել այդ կումմեցիներին և հարցաքննել, ընդ որում, հարցերից մեկը վերաբերելու էր այն հնարավոր օժանդակությանը, որը նրանք ստացել էին սահմանն անցնելիս: Նամակը եզրափակվում է տեղեկությամբ, որ հիշյալ կումմեցիները փախել էին Կումմեից[3096]: Հավանաբար, այս ուշագրավ տեղեկության մաս է կազմում նաև ասորեստանյան մեկ այլ, սակայն, ցավոք, խիստ պակասավոր նամակ, ուր հիշատակվում է Կումմեն, ինչպես նաև բրոնզե ինչ-ինչ իրեր, այդ թվում՝ առնվազն հարյուր բրոնզե կապարճներ[3097]: Հնարավոր է, որ այստեղ ևս խոսքը վերաբերի մաքսանենք ապրանքի, տվյալ դեպքում, սակայն, բերված Ուրարտուից: Կումմեում իրականացվող «անցանկալի» առևտրի մասին է խոսվում ասորեստանյան մեկ այլ զեկուցագրում[3098]:

[3095] Barnett 1982: 366f.; Maxwell-Hyslop 1956: 161f.; Dyson 1965: 203. Հմմտ. Slattery 1987: 1ff.
[3096] Lanfranchi, Parpola 1990, No 100.
[3097] Lanfranchi, Parpola 1990, No 101.
[3098] Parpola 1987, No. 46.

# ԳԼՈՒԽ Դ
# ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

## 4.1. Իշխող խավը

### 4.1.1. Արքայատոհմը

#### 4.1.1.1. Արքան և արքայական ընտանիքը

Ուրարտական տեքստերն առայժմ թույլ են տալիս նշելու միայն արքայի՝ պետական կառավարման և հոգևոր կյանքում ունեցած դերակատարության մասին (տե՛ս 1.1.2.1.): Ուրարտական արքաների անձնական կյանքի մասին ըստ էության ոչինչ հայտնի չէ: Թեև մեզ են հասել երկու արքաների թողած տարեգրությունները, սակայն, դրանք հեռու են «ինքնակենսագրություններ»-ի ժանրը ներկայացնելուց: Այդ բացը լրացնելուն փոքր-ինչ նպաստում է ուրարտական պատկերագրությունը: Ուրարտական արքայական կնիքներից մի քանիսի կնքադրոշմներում երևում է արքայի պատկերը (նկ. Դ-1/1-7)[3099]: Դրանցից մի քանիսը, անկասկած, պատկերում են Ռուսա Արգիշթորդուն (տես, օրինակ, նկ. Դ-1/5)[3100]: Եվս մեկ կնիք, հնարավոր է, պատկերում է Ռուսա Արգիշթորդուն իր գահաժառանգ որդու հետ (նկ. Դ-1/7)[3101]: Մենք ունենք եզակի թվով բրոնզե առարկաներ, որոնց վրա պատկերված անձը նույնպես կարող է լինել արքան: Ընդ որում, դրանց մեծ մասը դարձյալ պաշտամունքային բնույթ ունեն. պատկերում են ինչ-որ աստվածության առջև կանգնած տղամարդու, թերևս՝ արքայի, ով կրում է երկար զգեստ, սաղավարտաձև գլխարկ և սուր (նկ. Դ-2/1-2)[3102]: Նույնը վերաբերում է այսպես կոչված «խնջույքի տեսարաններ»-ին: Եզակի են այն օրինակները, որոնք պատկերում են սեղանի գլխին նստած ինչ-որ տղամարդու (նկ. Դ-5/2): Առավել ևս, դա ամենևին չի նշանակում, որ պատկերվածը արքան է: Ի տարբերություն ասորեստանյան պատկերագրության՝ ուրարտական պատկերագրության մեջ բացակայում են արքայական որսի տեսարանները: Էրեբունիի որմնանկարների շարքում վերականգնվող «արքայական որսի տեսարան»-ը[3103] պետք է թվագրել հետուրարտական/աքեմենյան շրջանով[3104]:

---

[3099] König 1955, Taf. 101, Inc. 15; van Loon 1966: 152ff., Fig. 18; Seidl 1979: 138 (B1), Taf. 33/4-6, 34/1-6, 35/1-4; նույնի՝ 1988b: 146sqq. (B2-B4), Taf. 23-26; etc.
[3100] Abay 2001: 327ff., Figs. 5-6.
[3101] Ayvazian 2004: 124f.
[3102] Kellner 1980: 83sq., Abb. 1, Taf. 18; նույնի՝ 1991b: 164, 167, Fig. 4; Հմայակյան 2005բ, էջ 7-8, 11, նկ. 3, 8:
[3103] Հովհաննիսյան 1973, էջ 20-23, նկ. 4:
[3104] Тер-Мартиросов 2004б: 160сл.

Դժվար չէ ասել, թե մթության այս քողն ինչով է պայմանավորված: Դրա պատճառն Ուրարտուում իշխող «խալդակենտրոն» գաղափարախոսությունն էր, որը երկրորդ պլան էր մղում արքայի անձը[3105]: Պետական արհեստանոցներում արտադրված ուրարտական բրոնզեգործական իրերը, անկասկած, պատրաստվել են իշխող գաղափարախոսության համաձայն՝ ներկայացնելով աստվածների աշխարհը, ուր մարդիկ միայն ստվերներ են:

Միակ բացառությունը, որը հանդիպում է ուրարտական պատկերագրության մեջ, դա Ժնևում Բուդինի մասնավոր հավաքածուում պահվող այսպես կոչված «Բուդինի թիթեղ»-ն է (նկ. Ա-11/1): Թեև այն դասվում է պաշտամունքային պատկերագրության շարքը, սակայն, թիթեղի պատկերագրությունն առանձնանում է նրանով, որ այնտեղ պատկերվածը արքայական ընտանիք է: Թիթեղը պատկերում է գահավորակին նստած աստվածության՝ թերևս Խալդիի առջև կանգնած չորս մարդկանց: Նրանք պատկերված են խնդրարկուի դիրքով, որոնցից առաջինը, հագուստից և խույրից դատելով, որը նման է աստվածության կրած խույրին, ինչպես երևում է, արքան է: Նրա կողքին կանգնած երկրորդ անձի դիմագծերի նրբությունը և կրած ականջօղերը կարող են հուշել, որ պատկերված է թագուհին: Այս զույգի հետևում կանգնած են երկու հոգի, որոնցից առաջինը դեռևս մանուկ կամ փոքրահասակ երեխայի, իսկ երկրորդը, կարծես, պատանու, պատկերներ են[3106]: Նրանց գլխավերևում արձանագրված է հիերոգլիֆային գրով գրված տեքստ: Վերջինիս թարգմանությունը հստակ չէ և, ցավոք, առայժմ չենք կարող վստահությամբ նշել, թե բիայնական ո՞ր արքայի ընտանիքն է այստեղ պատկերված: Ըստ Արտակ Մովսիսյանի՝ այստեղ պատկերված է Իշպուինիի ընտանիքը[3107]:

4.1.1.2. **Թագուհին**

Ուրարտուի թագուհիների մասին տեղեկությունները չափազանց սուղ են: Առաջին տեղեկությունը վերաբերում է Մենուայի կնոջը՝ Թարիրիային (SAL*tariria*): Կատեպանցից հայտնի արձանագրության մեջ վերջինս հանդես է գալիս որպես Մենուայի SAL*sila* (m*me-nua-i-ni-e-i* SAL*si-la-a-i-e*)[3108]: Սկզբնապես Թարիրիան համարվում էր Մենուայի մայրը[3109]: Ապա երկար ժամանակ կարծում էին, որ նա Մենուայի դուստրն է՝ ելնելով խուրր. *šala/i*՝ «դուստր» բառի հետ այդ տերմինի զուգադրումից[3110]: Սակայն,

[3105] Smith 2000: 131; Գրեկյան 2004ա, էջ 318; Тер-Мартиросов 2004a: 290 сл.; նույնի՝ 2004б: 159.
[3106] Հմմտ. Մովսիսյան 1998ա, էջ 32-33:
[3107] Մովսիսյան 1998ա, էջ 32-34, 47-51: Հմմտ. Մարտոյան 2009, էջ 138-150:
[3108] КУКН, $137_1$; CTU I, A 5A-$1_1$.
[3109] Sayce 1893: 15.
[3110] Меликишвили 1960: 405; Diakonoff 1971: 46, 61.

Օձասարի արձանագրության հրատարակությույից հետո պարզ դարձավ, որ $^{(SAL)}$*sila* տերմինը նշանակում է ոչ թե «դուստր», այլ ավելի շուտ ունի «կին, տիկին» իմաստը[3111]: Ըստ այդմ, Թարիրիայինն կարելի է համարել Մենուայի կինը և, հավանաբար, Ուրարտուի թագուհի:

Ուրարտուի թագուհիներից երկրորդի (՞) անունը հայտնի դարձավ Այանցի պեղումներից: Այստեղից գտնված հովիարի բռնակի վրա արձանագրված էր Կակուլիի անունը ($^{SAL}$*qaquli*), ով հանդես է գալիս որպես SAL/MÍ.LUGAL, այն է՝ «թագուհի»: Կակուլին առայժմ միակն է, ում հստակ կարելի է անվանել Ուրարտուի թագուհի: Վերջինս, ամենայն հավանականությամբ, Ռուսա Արգիշթորդու կինն էր[3112]:

Եվ վերջապես կարելի է մտածել, որ Սարդուրի Ռուսայորդու կինը ասորեստանյան արքա Աշշուրբանիպալի դուստրն էր (տե՛ս ստորև):

Հնարավոր է, ևս մեկ թագուհու անուն կարելի է վերականգնել Այանցի տեքստերից մեկում: Խոսքը վերաբերում է Այանցից գտնված CB Ay-53 բուլլայի արձանագրության երկրորդ տողում ընթերցվող MUNUS x-*ma-a* $^{GIŠ}$GU.ZA-*ú-e* տեքստին[3113]: Միրյո Սալվինին չի բացառում տեքստի վնասված հատվածը վերականգնել որպես $^{MUNUS}$*na-ma-a*[3114], ըստ այդմ, այստեղ նշված է ինչ-որ կնոջ անուն՝ Նամայա, կարելի է ենթադրել՝ թագուհու, քանի որ հաջորդող գաղափարագրերի համադրությունը նշանակում է «գահ»: Սա հիշեցնում է ասորեստանյան թագուհիներից մեկի՝ Յաբայի «պաշտոնական թագուհու» կոչումը՝ «թագուհի, ով նստում է գահին» (MÍ.É.GAL *šá ina* GIŠ.GU.ZA *tu-šá-ba*)[3115]:

Սակայն, մյուս կողմից, կարելի է մտածել, որ տվյալ դեպքում արձանագրված է ոչ թե ուրարտական թագուհու, այլ՝ ինչ-որ լոկալ համայնքի/ցեղի կին առաջնորդի անունը: Խնդիրն այն է, որ այդ անվանը նախորդում է É x-$li_{12}$-*a*-*ḫa*-$li_{12}$-*e* գրությունը: Դրա -*Ḫali* վերջավորությունը վկայում է, որ նշված է համայնքի անուն, ինչպես, օրինակ, «նունիբայցիների (երկիր)» անվանումն է ($^{KUR}$*nu-ni-ba-ḫa-li*$_{12}$)[3116]: Դա է վկայում նաև նախորդող l գաղափարագիրը, որը նշակում է ոչ միայն «տուն», այլև՝ «կալվածք», «տնտեսություն», «համայնք» ևն: Ըստ այդմ, կարելի է մտածել, որ հիշյալ Նամայան տվյալ համայնքի կին առաջնորդն էր, «թագուհի»-ն:

---

[3111] Salvini 1998a: 97sq.; André-Salvini, Salvini 1999: 274f. Տե՛ս և հմմտ., դեռևս, Lehmann-Haupt 1928-1935: 93; Friedrich 1961: 513sq.
[3112] Salvini 2012b: 106f.; նույնի՝ 2014b: 17f.
[3113] CTU IV, CB Ay-53$_2$.
[3114] Salvini 2012a: 197.
[3115] Postgate 2008b: 178, n. 5.
[3116] CTU IV, CB Ba-4$_1$, CB Ba-5$_1$.

Այստեղ նշենք նաև, որ ուրարտական արքունի գրագրություններում մի քանի անգամ հանդիպող և $^{(SAL)}$GAŠAN$_{(x)}$ տառադարձվող գաղափարագիր գոյություն չունի[3117], իսկ արձանագրվածը MUNUS.SIG$_7$ գաղափարագիրն է[3118]: Ըստ այդմ, պետք է մի կողմ թողնել ենթադրյալ $^{(SAL)}$GAŠAN$_{(x)}$ գաղափարագրի «տիրուհի», «թագուհի» թարգմանությունները[3119] և դրանից բխող հետևությունները[3120]: Սակայն, մյուս կողմից, առայժմ հայտնի չէ, թե ինչ են նկատի ունեցել գրիչները MUNUS.SIG$_7$ գաղափարագրերի համադրության տակ, նամանավանդ՝ նման համադրություն միջագետքյան սեպագիր դպրություններում չի կիրառվել: sig$_7$ սեպանշանն ունեցել է մի քանի նշանակություն, այդ թվում՝ «կանաչ (կանաչավուն), դեղին (դեղնավուն), կանաչադեղնավուն, դեղնաշագանակագույն», «կանաչ լինել/կանաչել, դեղին լինել/դեղնել», ինչպես նաև «կտրել (բույսը)» իմաստները[3121]: Թե ի՞նչ կարող է նշանակել այս իմաստների համադրությունը «կին» բառի հետ, դժվար է ասել: Համենայն դեպս, կարելի է մտածել, որ նրանք ներկայացրել են երկրի բարձրաշխարհիկ խավը, քանի որ տեքստերից մեկում հիշատակված ոմն Թաթա անվանված է MUNUS.SIG$_7$-տիկնոջ «ծառա» ($^{m}$ : *ta-ta-a-še* $^{LÚ}$ÌR MUNUS.SIG$_7$-*i* MUNUS.TUR : *ir-bu-ni*): Թեև այս տեքստը կարող է ընկալվել այլ շարադասությամբ[3122], սակայն, Թոփրաքքալեից գտնված մեկ այլ պակասավոր տեքստում MUNUS.SIG$_7$-կանանց հիշատակությունը «ազնվականության» ($^{LÚ}$*ma-ri-ḫi*) հետ միասին[3123], այնուամենայնիվ, կարող է վկայել հասարակության մեջ նրանց զբաղեցրած բարձր դիրքի մասին[3124]:

Հստակ տեղեկություններ չկան արքունիքում և երկրում ընդհանրապես թագուհիների դերակատարության մասին: Կարելի է մտածել, որ նրանք ակտիվ մասնակցություն են ունեցել երկրի հոգևոր կյանքին: Ուրարտական բրոնզագործական իրերի վրա, մասնավորապես՝ նվիրատվական թիթեղների երկրպագության տեսարաններում, գերազանցապես պատկերված են կանայք, հավանաբար՝ թագուհիներ և/կամ բարձրաստիճան քրմուհիներ՝ խնդրարկուի դիրքով, հաճախ՝ զոհաբերվելիք կենդանու հետ միասին[3125]: Ընդ որում, նրանք պատկերվում են թե

[3117] Հմմտ. Дьяконов 1963a: 58; КУКН, 446, прим. 10.
[3118] CTU IV, Kb-4 Ro$_6$, Tk-3$_1$.
[3119] *E.g.* КУКН, 446$_6$, 449, лиц. стор.$_{x+1}$.
[3120] Տե՛ս, օրինակ, Հմայակյան 2001բ, էջ 60:
[3121] Borger 1978: 145 (No. 351).
[3122] Дьяконов 1963a: 58.
[3123] КУКН, 449; CTU IV, CT Tk-3.
[3124] Տե՛ս և հմմտ. նաև Գրեկյան 2008, էջ 293-295:
[3125] Kellner 1976b: 53sqq, Abb. 49, 53-54; Vanden Berghe, de Meyer 1982: 172, Afb. 110-112, 119-120; Caner 1998, Taf. 56-59; Seidl 2004: 174sqq., Abb. 122-125, Taf. 60/a-d, 61/a; etc.

աստվածուհիների, և թե աստվածների առջև: Աստվածների առջև կանգնած կանանց կերպարների կարելի է հանդիպել ավելի հաճախ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Ուրարտուում քրմության մի զգալի մասը կանայք էին (նկ. Դ-2/4-6, Դ-3/1-4)[3126], որոնց թվում, համոզված ենք, նաև թագուհիները: Թագուհիները մեծ դերակատարություն են ունեցել նաև նորասորեստանյան տերության հոգևոր կյանքում[3127]: Ուրարտական մեդալիոններից մեկում տեսնում ենք գահավորակին նստած աստվածուհու, ում առջև խնդրարկուի դիրքով պատկերված կինը, ամենայն հավանականությամբ, թագուհի է (նկ. Դ-2/5)[3128]: Հնարավոր է, պալատական տիկնոջ է պատկերել Կարմիր բլուրից գտնված կնոջ փայտե արձանիկը[3129]:

Ուրարտական պատկերագրության՝ այսպես կոչված «խնջույքի տեսարաններ»-ում հիմնականում ներկայացված են կանայք, սեղանի մոտ՝ պատվավոր տեղում, նույնպես տեսնում ենք կնոջ պատկերներ (նկ. Դ-4/1-5)[3130]: Ընդ որում, կանանց նստած ծալապատիկ դիրքը վկայում է, որ պատկերվածները բարձրաշխարհիկ կանայք են և ոչ թե աստվածուհիներ (նկ. Դ-4/6-8):

Ուրարտական պատկերագրության այս օրինակները հիշեցնում են ասորեստանյան արքունի կենցաղը: Այստեղ, օրինակ, թագուհին ճաշել է առանձին և սովորաբար չի ընկերակցել արքային[3131], թեև, իհարկե, հանդիպում են նաև «խնջույքի տեսարաններ»՝ ասորեստանյան արքայի և թագուհու մասնակցությամբ (նկ. Դ-5/1)[3132]: Ուրարտական պատկերագրության «խնջույքի տեսարաններ»-ում առայժմ չունենք որևէ օրինակ, որտեղ հնարավոր կլիներ հստակ նշել, որ պատկերված են արքան և թագուհին միասին: Մեզ հայտնի է բրոնզեգործական մեկ նմուշ միայն՝ գոտու մի բեկոր, որի «խնջույքի տեսարան»-ում պատկերված են դեմ-դիմաց նստած կին և տղամարդ (նկ. Դ-5/2)[3133]:

Թոփրաքքալեի պալատական/տաճարային համալիրի անձնակազմը թվարկող տեքստում մեծ թվով ներքինիների հիշատակությունը կարող է հուշել, որ նրանց շարքում են եղել նաև արքայի հարեմում ծառայող ներքինիները[3134]: Այստեղից գտնված

[3126] Հմայակյան 2005բ, էջ 13; Գրեկյան 2004ա, էջ 337, ծնթ. 80:
[3127] Melville 1999: 15 and n. 21 (sited literature); Frahm 2014: 178. Տե՛ս նաև van Soldt 1995: 1262.
[3128] Lehmann-Haupt 1907: 84, Fig. 56; նույնի՝ 1910b: 57sq.; Kellner 1991b: 164, Fig. 1; Հմայակյան 2005բ, էջ 6-7, նկ. 1:
[3129] Пиотровский 1970, рис. 30; Հմայակյան 2001բ, էջ 61, նկ. 1; նույնի՝ 2011, էջ 7, նկ. 9:
[3130] Kellner 1991a, Nr. 256, 262-263, 265, 269, 279, Taf. 66-67/256, 68-69/262-263, 265, 269, 70-71/279; Seidl 2004: 139sqq., Abb. 98., 102, 138, Taf. 40/d, 41/1, 42/c, Falttafel A.
[3131] Kinnier-Wilson 1972: 6.
[3132] Reade 1998: 65, 68, Figs. 102-103.
[3133] Taşyürek 1975a, Fig. 4 (Res. 21); Kellner 1991a, Nr. 237, Taf. 60-61/237.
[3134] Çavuşoğlu *et al.* 2010: 157.

և հավանաբար գահի հարդարանքի մաս կազմած արձանիկները[3135], ենթադրվում է, պատկերում են ներքինիների (նկ. Դ-13/5)[3136]: Առկա է կարծիք, ըստ որի՝ Մենուա Իշպուինորդու արձանագրություններից մեկում հիշատակվում է Տուշպայում գտնվող արքայի հարեմը ([… … x-x-(*sa-a-i*? $^{URU}$*ṭu-ú-uš-pa*)]-*a* URU)[3137]: Դա, իհարկե, հնարավոր է, սակայն տեսակետի հեղինակի բերած տեքստային հենքն ամենևին էլ վստահելի չէ[3138]:

Տարօրինակ է, որ Թոփրաքքալեի պալատական/տաճարային անձնակազմը թվարկող տեքստում հարճեր կամ պալատական կանայք չեն հիշատակվում: Կարելի է մտածել, որ նրանք ներառվել են «ազնվականներ»-ի թվում կամ արտահայտվել տեքստում նշված, բայց հստակ թարգմանություն չունեցող տերմիններից որևէ մեկով: Տեքստում միայն «դերձակուհիներ»-ն են, որոնց դիմաց հրատարակիչներն ընթերցել են «կին» որոշիչը[3139]:

Կարծում ենք, քննարկվող խնդրի հետ կապված Թոփրաքքալեի աղյուսակի հրատարակիչների մոտ առկա է սխալ՝ տեքստի հատվածներից մեկի ընթերցման հետ կապված: Խոսքը վերաբերում է աղյուսակի դիմային կողմի վերջին՝ 16-րդ տողին, որն ընթերցվել է որպես 90 $^{LÚ}$UN$^{MEŠ}$-*še*, այն է՝ «90 մարդ» (բառացի՝ «ժողովուրդ/բնակչություն»)[3140]: Արձանագրության լուսանկարում երևում է (նկ. Ա-4/1[3141]), որ քննարկվող տողում «90» թվականից հետո գրվել է ոչ թե LÚ՝ մարդ կամ մասնագիտություն ցույց տվող որոշիչը, այլ SAL (MÍ/MUNUS) ցուցիչը: Դա ակնհայտ է դառնում, երբ այն համեմատում ենք նույն տեքստի 13-րդ տողում գրված SAL ցուցիչի հետ ($^{SAL}$GAD-*ḫi-e*): Հետևաբար, այստեղ գրված է «90 կանայք» (բառացի՝ «(կին) ժողովուրդ/բնակչություն»):

Բացի դա, նույն տողի վերջում գրված է ոչ թե -*še* հնչյունական լրացումը, այլ՝ KUR գաղափարագիրը: Ըստ այդմ, մենք այստեղ կարդում ենք 90 $^{SAL}$UN$^{MEŠ}$.KUR արտահայտությունը: Ինչպես նշել ենք նախորդ գլուխներից մեկում՝ նորասորեստանյան շրջանում KUR գաղափարագիրը կիրառվում էր նաև «պալատ» իմաստով (KUR = *ekallu*): Այդ նույն իմաստով այն հայտնի է նաև ուրարտական դպրության մեջ (տե՛ս 1.1.5.4.): Այստեղ նշենք, որ MÍ.KUR (տրբ. MÍ.É.GAL)

---

[3135] Mitchell 1983: 157ff., Pls. XVI-XL; Seidl 1994: 77, Abb. 10/b-c, Taf. 20; նույնի՝ 2004: 61sqq., Abb. 25.
[3136] Çavuşoğlu *et al.* 2010: 162. Հմմտ. Merhav 1991c: 171, 174; Seidl 1994: 81.
[3137] CTU I, A5-2A$_5$ – F$_5$.
[3138] Հմմտ. նաև Çavuşoğlu *et al.* 2010: 159; Çavuşoğlu *et al.* 2014: 240, 246f.
[3139] Дьяконов 1963a: 39 (12$_{13}$), 81; CTU IV, CT Tk-1 Ro$_{13}$. Հմմտ. КУКН, 412 лиц. стор. $_{13}$, прим. 16.
[3140] Дьяконов 1963a: 39 (12$_{16}$), 81 сл.; КУКН 412, лиц. стор.$_{16}$; CTU IV, CT Tk-1 Ro$_{16}$. Ընդ որում, հետաքրքիր է, որ այդ տողը գծերով առանձնացված է երկու կողմից և ակնհայտ է, որ դրանով գրիչն ընդգծել է ինչ-որ խմբի կամ խավի մարդկանց: Դա արվել է տեքստում թվարկված մյուս խմբերի/խավերի դեպքում ևս:
[3141] Առավել հաջող լուսանկարը տե՛ս Wartke 1993: 55, Taf. 86; CTU IV: 146.

գաղափարագրերի համադրությամբ էր գրվում նաև «թագուհի» բառը ասորեստանյան դպրության մեջ[3142]: Հետևաբար, մենք այստեղ գործ ունենք միջագետքյան տարբեր դարաշրջաններից քաջ հայտնի աքք. *sekret ekalli* («հարճ», «պալատի կին»[3143]) արտահայտության MÍ.UN.É.GAL[3144] գաղափարագրերի համադրության զուգահեռի հետ. դրա նշանակությունը, ըստ այդմ, նույնպես կլինի «պալատի կին»:

Այսպիսով, մեր կարծիքով, Թոփրաքքալեի անձնակազմը թվարկող տեքստում նշված է նաև հարեմի կանանց, նվազ հավանականությամբ՝ պալատի կին սպասավորների թիվը[3145]:

Այս առումով հետաքրքիր է նաև «պալատի կանանց» թիվը՝ 90: Սա միանգամայն տեղավորվում է մեզ հայտնի զուգահեռների մեջ: Մասնավորապես, հայտնի է, որ ասորեստանյան նահանգային կենտրոններում կառուցված պալատներում ապրել են միջինը 50-100 «պալատի կին», 150-ից 300-ի մոտ «պալատի կին» է ապրել Նինվեի պալատում[3146]:

Ուրարտական երկու հնավայրերում բացվել են «հարեմ»-ի բաժանմունքներ: Դրանցից առաջինը պեղվել է Հայկաբերդի պալատական համալիրի արևմտյան հատվածում[3147]: Մյուսը Գիրիքթեփեի պալատն է, ուր ևս բացվել է հարեմի բաժանմունքը: Հատկանշանակն է, որ այստեղից հայտնաբերվել են 37 կնոջ աճյուններ՝ արդուզարդի իրերի հետ միասին[3148]: Քայալըդերեի[3149] և Ալթըն-թեփեի[3150] հնավայրերից հայտնի են դամբարաններ, որոնցում հուղարկավորված կանայք, ըստ ամենայնի, ներկայացրել են բարձրաշխարհիկ խավը:

4.1.1.3. **Արքայազները և արքայադստերը**

Ուրարտական տեքստերում առայժմ չենք հանդիպում այնպիսի տերմինի, որը հստակ կարող է թարգմանվել որպես «արքայազն»: Այդ իմաստով թարգմանվող $^{LÚ}$A.NIN-*li* գրությունից, ինչպես իր տեղում նշվեց, պետք է անկասկած հրաժարվել:

Առայժմ կարող ենք նշել, որ արքայազները կամ, համենայն դեպս, գահաժառանգ արքայազնը ակտիվ մասնակցություն է ունեցել երկրի քաղաքական կյանքում, ինչն էլ հիմք է տվել որոշ հետազոտողների՝ անգամ մտածել Ուրարտուում

[3142] Parpola 1988: 73.
[3143] CAD 15, S, 1984: 215ff. (*sekretu*).
[3144] *sekret ekalli* = MÍ.ERIM.É.GAL/MÍ.ŠÀ.É.GAL/MÍ.UN.É.GAL: Նշված գաղափարագրերի ընթերցումների հետ կապված տե՛ս և հմմտ. Melville 2004: 38ff.; Teppo 2007b: 265 and n. 39.
[3145] Grekyan 2016: 54ff.
[3146] Teppo 2007b: 267 and n. 55. Մանրամասն տե՛ս նաև Barjamovic 2011: 53f. and n. 48.
[3147] Erzen 1967: 470; նույնի՝ 1978: 9.
[3148] Balkan 1964: 241f.; Çavuşoğlu *et al.* 2010: 160ff.
[3149] Burney 1966: 110.
[3150] Özgüç 1969: 17, 21f.; Çevik 2000: 79.

«երկու արքաների ինստիտուտ»-ի կամ հայր և որդու՝ «համատեղ գահակալության» հնարավորության մասին (տե՛ս 1.1.4.): Համենայն դեպս, Իշպուինի Սարդուրորդու որդին՝ Մենուա Իշպուինորդին, ակտիվորեն մասնակցել է Իշպուինիի իրականացրած ռազմաքաղաքական կամ կրոնական քայլերին, ենթադրվում է, որ մի քանի արշավանքներ իրականացվել են Իշպուինիի հրամանով, բայց՝ արքայազն Մենուայի գլխավորությամբ[3151]: Հայտնի են այլ դեպքեր ևս, որոնք վկայում են արշավանքներին արքայազնի մասնակցելու մասին:

Մենք ըստ էության որևէ տվյալ չունենք բիայնական արքաների դստրերի մասին. «արքայադուստր» բառն ուրարտական տեքստերում առայժմ վկայված չէ[3152], և միայն տեքստերից մեկում հանդիպում է «աղջիկ» գաղափարագիրը (MUNUS.TUR)[3153]: Չի բացառվում, որ բիայնական արքայադստեր մասին է խոսվում ասորեստանյան նամակներից մեկում. վերջինս, կարծես, Խաբխիի թագուհին էր (տե՛ս ստորև):

Հետաքրքիր է, որ ասորեստանյան մեկ այլ տեքստ ևս հիշատակում է ուրարտուհիների: Դա արքայական նամակ է՝ ուղղված ոմն Նաբու-դուրու-ուծուրի: Նամակում խոսվում է գերեվարված ուրարտուհիների մասին: Ընդ որում, կանանց մի մասը, հավանաբար, ներկայացրել է բարձրաշխարհիկ խավը, քանի որ նրանց որոնել են Ասորեստան ժամանած ուրարտական դեսպանները: Նամակում ասորեստանյան արքան հրահանգում էր կազմակերպել դեսպանների հանդիպումը գերեվարվածների հետ: Ուշագրավ է, որ տեքստում խոսվում է գերի կանանց մասին, որոնց «նա որոնում է»[3154]: Ըստ երևույթին խոսքն ուրարտական արքայի մասին է: Դժվար է ասել, թե ովքեր էին այդ ուրարտուհիները: Հնարավոր է՝ արքայական ընտանիքի անդամներ կամ, միգուցե, արքայի կանանոցը: Հաշվի առնելով, որ նամակը գրվել է Սարգոն II-ի կողմից, կարելի է մտածել, որ այդ կանայք գերի էին վերցվել Ուաուշի ճակատամարտի ժամանակ: Ուաուշում գերի ընկած Ռուսայի 250 կամ 260 ազգականների հետ միասին, ինչպես երևում է, ասորեստանցիների ձեռքն է ընկել նաև ուրարտական արքայի կանանոցը:

Ալթըն-թեփեում պեղված թիվ 3 դամբարանում, ինչպես ենթադրվում է թաղման հարուստ գույքից ելնելով, հուղարկավորվել են արքայական տան անդամներ, թերևս՝ «արքայազն» և «արքայադուստր»[3155]:

---

[3151] Համայակյան 2012, էջ 33:
[3152] $^{(SAL)}$*sila* տերմինի «կին,տիկին, ամուսին» նշանակության համար տե՛ս վերը 4.1.1.2.:
[3153] КУКН, 446$_7$; CTU IV, CT Kb-4 Ro$_1$.
[3154] Parpola 1987: No. 10: 9-10.
[3155] Özgüç 1961: 260/274; նույնի՝ 1969: 24ff. / 70f.; նույնի՝ 1983: 33ff., Pls. XI-XVI; Çevik 2000: 79.

#### 4.1.1.4. **Արքայական ընտանիքի մյուս անդամները**

Ինչպես իր տեղում նշվեց՝ ուրարտական «մեծամեծներ»-ի շարքում պետք է տեսնել արքայի մերձավոր հարազատներին, նախ և առաջ՝ նրա եղբայրներին և հորեղբայրներին: Այս առումով հետաքրքիր դիտարկում է կատարել Ռոբերտո Դանը: Վերջինս, ելնելով այն փաստից, որ Այանցի «սուսի»-տաճարի արձանագրության մեջ հիշատակվում է Թիթիախինիլի քաղաքը, ենթադրում է, որ այն կարող էր հիմնադրված լինել Թիթիայի կողմից կամ կոչվեր նրա անունով: Վերջինս փոխարքա էր, ում նշանակման մասին Մենուան թողել էր առանձին արձանագրություն: Այդ փաստը վկայում է տվյալ անձի կարևորության մասին, ըստ այդմ, ինչպես և ենթադրել է Ռոբերտո Դանը, հիշյալ Թիթիան կարող էր լինել Մենուայի մերձավոր հարազատներից մեկը, թերևս՝ եղբայրը[3156]: Հետաքրքիր է, որ Այանցում գտնված բուլլաներից մեկի վրայի արձանագրության մեջ կրկին հիշատակվում է Թիթիա անունը կրող մեկ այլ անձ, ով հանդես է գալիս որպես $^{LÚ}$*ibriuni*:

Որպես վարկած, ելնելով նույն տրամաբանությունից, կարող ենք խոսել բիայնական արքայի ևս մեկ մերձավոր հարազատի՝ Զայայի մասին: Վերջինս հիշատակվում է Սարդուրի Արգիշթորդու թողած Բահչեջիքի արձանագրության մեջ որպես տերության գրեթե ողջ արևմուտքն ընդգրկող ընդարձակ նահանգի փոխարքա[3157]: Նման կարևոր պաշտոնի, ենթադրելի է, կարող էր նշանակվել արքայի մերձավոր հարազատներից մեկը, և նրա անվան հիշատակությունը արձանագրության մեջ, թերևս, պատահական չէ: Հետևեբար, մի գուցե այստեղ նույնպես կարելի է տեսնել արքայի եղբորը:

Եվ վերջապես մեզ հայտնի երրորդ (՞) վկայությունը կարող է վերաբերել արքայի հորեղբայրներից մեկին: Խոսքը վերաբերում է Սարգոն II-ի իշխանության շրջանով թվագրվող երկու տեքստի: Դրանցից մեկում հիշատակվում է «Սարդուրիի ընտանիք»-ին պատկանող բարձրաստիճան զինվորական, ում անունը, ցավոք, տեքստում չի պահպանվել: Երկրորդ տեքստում նշվում է Տուրուշպայում գտնվող ոմն Սարդուրիի մասին: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ այստեղ խոսքը հավանաբար վերաբերում է Սարդուրի Սարդուրորդուն (՞)՝ Սարդուրի Արգիշթորդու որդուն և Ռուսա Սարդուրորդու եղբորը (՞): Եվ վերջապես կարող ենք նշել, որ Էրիմենան, ում գահակալության հարցի շուրջը կարծիքները տարբեր են, կարող էր լինել Արգիշթի Մենուայորդու որդին և Սարդուրի Արգիշթորդու կրտսեր (՞) եղբայրը:

---

[3156] Dan 2012: 63.
[3157] CTU I, A 9-18$_7$.

#### 4.1.1.5. **Դինաստիական կապերը**

Գրավոր աղբյուրները հստակ տեղեկություններ չեն պահպանել այլ երկրների արքայատների հետ ուրարտական արքայատան ունեցած դինաստիական կապերի մասին: Մեզ հասած երկու (՞) թագուհիների՝ Թարիրիայի և Կակուլիի, ինչպես նաև Նամայայի անունները չեն ստուգաբանվում[3158] և դժվար է ասել, թե էթնոլեզվական ի՞նչ միջավայրից էին նրանք սերում: Արտաքուստ, անունները թվում է խորթ չեն լեռնաշխարհին և, միգուցե, կարող էին ներկայացնել հենց բիայնական իշխող խավը: Երկրի մեծազոր իշխանավորների դստրերի հետ արքաների ամուսնությունը շատ հավանական է թվում: Հարևան Ասորեստանում, օրինակ, Աշշուր-նածիր-ապալ II արքան ամուսնացել էր իր խոշոր պաշտոնյաներից մեկի՝ «գլխավոր մատռվակ» Աշշուր-նիրկա-դա՛՛ինի դստեր՝ Մուլլիսսու-մուքաննիշաթ-Նինուայի հետ[3159]: Հնարավոր չէ անգամ բացառել Ուրարտուի թագուհիների՝ բիայնական արքայատնից լինելու հանգամանքը. մերձավոր ազգականների ամուսնությունները խորթ չէին հին Առաջավոր Ասիային: Մերձավոր հարազատների միջև ամուսնության փաստ է վկայված Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակություններում, օրինակ՝ Հայասայում[3160]: Այդ նույն Ասորեստանում Շամմուրամաթ թագուհին, ով Սալմանասար III-ի թոռնուհին էր, ամուսնացել էր իր հորեղբոր կամ մորեղբոր՝ Սալմանասարի որդի Շամշի-Ադադ V-ի հետ[3161]: Իհարկե, սա կանոն չէր, Ասորեստանում թագուհիները, Ք.ա. 8-րդ դ-ի կեսերից սկսած, սերում էին հիմնականում հարևան երկրներից: Օրինակ, ասորեստանյան արքա Սինախերիբի կինը՝ Նակիա/Զակութուն, հավանաբար, արամեական ծագումով բաբելուհի էր[3162]: Երուսաղեմի հրեական արքայատնից էին սերում Յաբան՝ Թիգլաթպալասար III-ի առաջին կինը, և Աթալյան՝ Սարգոն II-ի կինը[3163]:

Դինաստիական ամուսնությունները միջպետական հարաբերություններում ունեին կարևոր դերակատարություն և կնքվում էին քաղաքական նպատակներից ելնելով: Նման օրինակներ են Եգիպտոսի և Միտաննիի, Եգիպտոսի և Բաբելոնիայի, Խեթական տերության և Միտաննիի միջև տեղ գտած դինաստիական ամուսնությունների փաստերը[3164]: Հայտնի է նաև, որ Հայկական լեռնաշխարհի

[3158] Թարիրիայի անվան համար տես և հմմտ. Թումանյան 2005բ, էջ 27:
[3159] Postgate 2008b: 178; Frahm 2014: 174, Fig. 1.
[3160] Խաչատրյան 1998, էջ 59-61, ուր և տե՛ս բնագրի թարգմանությունը:
[3161] Grayson 1996: 204f. (A.0.104.3); 225f. (A.0.104.2001).
[3162] Melville 1999: 9ff. Տե՛ս և հմմտ. Weinfeld 1991: 102f.; Dalley 1998: 97.
[3163] Dalley 1998: 83, 93ff.: Տե՛ս և հմմտ. նաև Postgate 2008b: 178 and n. 6; Frahm 2014: 178ff.
[3164] Ամփոփ տե՛ս Röllig 1975: 284ff.; Meier 2000: 165ff.

հնագույն պետական կազմավորումներից առնվազն երկուսի՝ Հայասայի և Իսուվայի արքաներն ամուսնացել են խեթական արքայադստերերի հետ[3165]: Ըստ այդմ, արդյո՞ք Ուրարտուի թագուհիները ևս դրսից էին:

Նման առաջին պնդումը հիմնված էր Արգիշթիխինիլիից հայտնաբերված էլամական տեքստերի սխալ ընթերցման վրա, և ուրարտական արքայի (կամ արքայազնի) և էլամցի արքայադստեր ամուսնության մասին ենթադրությունն այլևս արդիական չէ[3166]:

Փոխարենը, կան հիմքեր ենթադրելու Ուրարտուի և հարևան երկրների արքայատոհմերի միջև հաստատված դինաստիական ամուսնության առնվազն մեկ հնարավորության մասին: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ասորեստանյան արքայատանը: Ասորեստանի արքա Աշշուրբանապալի տեքստերից մեկում՝ մեզ հետաքրքրող հատվածում ասվում է.

«*Իշթար-դուրին՝ Ուրարտուի արքան, …. ինչպես որդին է հորը դիմում որպես իր «տիրոջ», այդպես էլ նա, այսուհետև, սկսեց մշտապես գրել՝ «արքային՝ տիրոջս»: Պատկառանքով և հնազանդությամբ նա բերում է այստեղ իր ծանր ընծաները*»[3167]:

Հետաքրքիր է, որ Աշշուրբանիպալը Սարդուրիին «իր որդի» է անվանում նրան գրած իր նամակներից մեկում[3168]:

Այդ գրելաձևի շուրջն արված դատողությունները հանգում են մեկ հիմնական մտքի. դրանով արտահայտվել է ասորեստանյան արքայի գերազանցությունը և Ուրարտուում ասորեստանյան գերիշխանության առկայությունը: Մինչդեռ, այդ փաստից կարելի է անել նաև մեկ այլ հետևություն: Երկու արքաների հարաբերությունները որպես «հայր» և «որդի» կարող էր լինել նաև այն դեպքում, երբ նրանց միջև հաստատվեին ազգակցական կապեր, այսինքն, եթե ուրարտական արքան ամուսնացած լիներ ասորեստանյան արքայադստեր հետ: Սարդուրին, Աշշուրբանապալին դիմելով որպես իր «հոր», հնարավոր է, նկատի ուներ իր աներհորը: Նման փաստերի կարելի է հանդիպել սեպագիր այլ աղբյուրներում: Օրինակ, բաբելոնյան արքա Համմուրաբին էլամական արքա Ծիվե-պալար-խուխպակին դիմում էր որպես իր «հոր»[3169]: Նույն կերպ, որպես «հայր», Սարգոն II-ին

[3165] Kosyan 2013-2014: 128; Խանզադյան 2005, էջ 23-27:

[3166] Дьяконов, Янковская 1989: 55 сл.; Diakonoff, Jankowska 1990: 102ff., esp. p. 105f. Հմմտ. Koch 1993: 219ff.; Vallat 1997: 258ff.

[3167] Borger 1996: 71, 250 (Prismen A §86: A X 40-50).

[3168] Waterman 1930: 364f. (No. 1242). Տեքստի պատկանելությունն Աշշուրբանապալի ժամանակաշրջանին կասկած չի հարուցում: Տե՛ս Дьяконов 1951a, № 79, прим. 1.

[3169] Charpin, Durand 1986: 59ff.

էր դիմում կիլիկյան Կուէ երկրի արքա Ուրիկկին և խոսում «մեկ ընտանիքի» մասին[3170]: Առկա են նմանատիպ այլ օրինակներ ևս[3171]: Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ ուրարտական թագուհիներից առնվազն մեկը կարող էր լինել ասորեստանյան արքա Աշշուրբանապալի դուստրը, առավել ևս, որոշ փաստեր վկայում են, որ Աշշուրբանապալն իրոք ունեցել է դուստր[3172]:

Ընդհանրապես, դինաստիական ամուսնությունները կարևոր տեղ էին զբաղեցնում նորասորեստանյան արքաների վարած արտաքին քաղաքականության մեջ[3173], և ուրարտական արքայի հետ կնքված ամուսնությունը կարող էր այդ քաղաքականության հերթական դրսևորումը լիներ:

Հարևան երկրների հետ ուրարտական արքայատան ունեցած դինաստիական կապերի մասին կարելի է դատել նաև ասորեստանյան մեկ այլ տեքստից: Ուրարտուի հարավային հարևաններից Խաբխի երկրում ըստ երևույթին ուրարտական միջամտությամբ իրականացված իշխանափոխությունից հետո գահին է բազմեցվել ուրարտուհի: Ասորեստանյան նամակի հեղինակը հստակ նշում է, որ «ուրարտուհին չի կարող նստել գահին» (MÍ.KUR.URI-*tú ina* GIŠ.[GU.ZA] *la tu-šab*)[3174]: Տարբերակներից մեկը, որը կբացատրի ուրարտուհու գահակալությունը Խաբխի երկրում, կարող է լինել այդ երկրի արքայի հետ ուրարտական արքայադստեր ամուսնությունը: Եվ վերջապես առկա է կարծիք, ըստ որի՝ Արգիշթի Մենուայորդու կինը կարող էր լինել Վազա երկրի արքայի քույրը[3175]:

### 4.1.2. Իշխող վերնախավը

#### 4.1.2.1. $^{LÚ}$*mari*(*ni*) խավը

Ուրարտուում իշխող խավը կամ «ազնվականություն»-ը կազմել են «կառամարտիկներ»-ը, որոնք ուրարտական աղբյուրներում հանդես են գալիս որպես $^{LÚ}$*mari*(*ni*): Մարտակառքը ասոցացվում էր արքայական իշխանության և բարձր, ազնվականական ծագման հետ: Մարտակառք վարելը/մարտակառքով պատերազմելը վերնախավի բացառիկ իրավունքն էր, պատահական չէ, որ միտաննական արքաներից մի քանիսի անունը կապվում է հենց «կառամարտիկ» բառի հետ[3176]: «Կառավար» (*maria-nnu*) բառը, որն իր արմատներով հանգում էր նախահնդարիական **marya-*

[3170] Lanfranchi 2005: 481ff.; նույնի՝ 2009: 127ff.
[3171] Dalley 1998: 89.
[3172] Teppo 2007a: 388, Tab. 1 and n. 40.
[3173] Dalley 1998: 85.
[3174] Lanfranchi, Parpola 1990, No. 108: 25-26.
[3175] Թումանյան 2012, էջ 204-207:
[3176] Parpola 2004-2005: 19.

բառին՝ «երիտասարդ տղամարդ, ռազմիկ, հերոս»[3177], միտաննական շրջանում ըստ էության կիրառվում էր «ազնվական» իմաստով (հմմտ. ուրարտ. $^{LÚ}$*mari*(*ni*)-ն)[3178]: Այս մասին շատ է գրվել[3179], և մենք կանդրադառնանք միայն հարցի մեզ հետաքրքրող կողմերին՝ ուրարտական աղբյուրների $^{LÚ}$*mari*(*ni*)-ի սոցիալական, էթնիկ բովանդակությանն ու դերակատարությանը երկրում:

Անկասկած, Ուրարտուում հասարակության մեջ ամենաբարձր դիրքը զբաղեցրել է $^{LÚ}$*mari*(*ni*)-ն: Թոփրաքքալեի տաճարային/պալատական համալիրի անձնակազմը թվարկող տեքստում $^{LÚ}$*mari*(*ni*)-ն ($^{LÚ}$*marije*[3180]) նշվում է առաջինը՝ թվով 1113 հոգի[3181]: Արգիշթի Ռուսայորդու Թանահատի արձանագրության մեջ հիշատակվում է Ծուլուկու երկրի «ազնվականություն»-ը (*marini* $^{KUR}$*ṣuluque*)[3182], ընդ որում, վերջիններս հիշատակվում են ռազմական գործողություն նկարագրող դրվագում և միանգամայն հնարավոր է, որ խոսքն այստեղ նույնպես վերաբերում է կառամարտիկների:

Այս երկու վկայություններից կարող ենք դատել, որ, առաջին, ուրարտական $^{LÚ}$*mari*(*ni*)-ն, անգամ եթե մի կողմ թողնենք այս բառի ծագումը, վերաբերում էր վերնախավին, և երկրորդ, որ այն կարող էր դեռ պահպանած լինել «կառամարտիկ» նշանակությունը[3183] և վերաբերեր մարտակառքերով պատերազմող ազնվականությանը[3184]: Եթե ճիշտ է մեր այս մոտեցումը, ապա կարելի է մտածել, որ ուրարտական ռազմի տեսարաններում կամ «շքերթներ»-ում պատկերված կառամարտիկ և հեծյալ ռազմիկները ներկայացրել են հենց $^{LÚ}$*mari*(*ni*)-խավը: Պատահական չէ, որ ռազմական բովանդակությամբ պատկերագրության մեջ գրեթե չենք հանդիպում հետևակայինների, մինչդեռ՝ կառամարտիկներն ու հեծյալները ներկայացված են լայնորեն (տե՛ս նկ. Բ-10 – Բ-20)[3185]:

Կարծում ենք, որ $^{LÚ}$*mari*(*ni*) եղել է սոցիալական տերմին՝ առանց իր երբեմնի էթնիկ բովանդակության: Այս առումով նշենք, որ թեև ուրարտական աղբյուրներում չեն հանդիպում այնպիսի տեքստեր, որոնցում ուղղակի կնշվեր այս կամ այն անձի

---

[3177] Ստուգաբանության համար տես, դեռևս, Winckler 1910: 289sqq.
[3178] Иванов 1979: 109 сл.; O'Callaghan 1948: 51ff.; Boyce 1987: 508.
[3179] Mayrhofer 1966: 19, 28sq.; նույնի՝ 1974: 87; նույնի՝ 1982: 72ff.; Kammenhuber 1968: 220sqq.; Wilhelm 1987-1990: 419sqq.
[3180] Տեքստում՝ $^{LÚ}$*marigi*, որը պետք է կարդալ որպես $^{LÚ}$*marije*: Այս մասին տե՛ս Дьяконов 1963a: 81.
[3181] КУКН, 412, лиц. стор. $_{7\text{-}9}$; CTU IV, CT Tk-1 Ro$_{7\text{-}9}$.
[3182] КУКН, 411, обор. стор. $_{10\text{-}11}$; CTU I, A 11-3 Vo$_{10\text{-}11}$.
[3183] Хачикян 1985: 47.
[3184] Քննարկումների համար տե՛ս և հմմտ. Дьяконов 1963a: 81, 89; նույնի՝ 1988a: 65 сл., прим. 30; նույնի՝ 1978: 33; Diakonoff 1971: 76, 166; նույնի՝ 1991: 14, n. 19; Дьяконов, Старостин 1988: 173; Salvini 1979d: 309f.; Wilhelm 1987-1990: 419.
[3185] Մանրամասն տե՛ս 2.3.7.1.-2.3.7.2.:

առնչությունը/պատկանելությունը $^{LÚ}$*mari*(*ni*) խավին, բայց այնուամենայնիվ շուրջ 160-ի հասնող անձնանունների շարքում, որոնցից շատերը բարձրաստիճան պաշտոնյաներ էին և, ենթադրաբար, $^{LÚ}$*mari*(*ni*), չկան այնպիսիք, որոնց անունը կարող էր ստուգաբանվել հնդարիական կամ ընդհանրապես՝ հնդեվրոպական լեզվահիմքով, եթե համարենք, որ նրանք են կազմել նաև իշխող խավն Ուրարտուում: Բացի դա, առանձնապես տարբերություն չի նկատվում բարձրաստիճան ծառայողների և, ասենք, զինվորների կամ սպասավորների անձնանունների մեջ, եթե չհաշվենք ուրարտական տեքստերում սակավ հանդիպող մի քանի դիցակիր անունները: Սրանով հանդերձ խոսել, որ Ուրարտուում $^{LÚ}$*mari*(*ni*)-ն մոնոէթնիկ խավ էր, ճիշտ չի լինի: Այլ խնդիր է, որ բիայնացիները հավանաբար պետք է կազմեին այս խավի մի զգալի մասը:

Այստեղ նշենք, որ Միտաննիից բացի *maryannu* խավն էր ներկայացնում կառամարտիկներին սիրիա-պաղեստինյան տարբեր երկրներում և մասնավորապես՝ Ուգարիթում, Ք.ա. 2-րդ հազ-ի երկրորդ կեսին[3186]: Այստեղ նույնպես *maryannu*-ն կիրառվում էր որպես սոցիալական տերմին՝ առանց էթնիկ բնութագրի[3187] և հաճախ թարգմանվում է որպես «ազնվական կառամարտիկ»[3188]: Համենայն դեպս, Ուգարիթից և Ալալախից հայտնի և *maryannu* խավը կազմող ռազմիկների մեծ մասի անուններն ունեին սեմական կամ խուրրիական ծագում[3189]:

Այս նույն երևույթը նկատում ենք նաև Միտաննիում, մասնավորապես՝ Նուզիի դիվանի նյութերում: Այստեղ վերնախավը ներկայացնող դասը կոչվում էր մարտակառքերով և կոչվում էր *rākib narkabti* ($^{lú.meš}$*rākib* $^{giš}$GIGIR)[3190]: Հետաքրքիր է, որ այս համակարգը պահպանվել է նաև Ասորեստանում, ուր ևս մարտակառքի «հրամանատար»-ը կամ կառամարտիկը կոչվում էր *mār damqi*՝ «ազնվական»[3191]: Ենթադրվում է, որ այս խավը ներկայացնող անդամներն են, որ նաև հանդես են գալիս որպես LÚ.EN–GIŠ.GIGIR/*bēl mugerri*՝ «մարտակառքի տեր/սեփականատեր» արդեն նորասորեստանյան շրջանում[3192]: Վերջիններս չէին հանդիսանում մշտական բանակի մաս, հաշվառված էին զորահավաքային սպաների մոտ և հավաքագրվում էին տարածքային սկզբունքով ըստ անհրաժեշտության[3193]:

---

[3186] Гельцер 1969: 22 сл.; Vidal 2005 [2006]: 653; McGeough 2007: 102ff.
[3187] Speiser 1954: 21; Гельцер 1969: 22 сл.; Vita 1999: 465; McGeough 2007: 104f. Տե՛ս և հմմտ. նաև Иванов 1979: 101 сл., 109.
[3188] *E.g.* Rainey 1965: 19.
[3189] Speiser 1954: 21; Vidal 2010b: 37.
[3190] Wilhelm 1987-1990: 420.
[3191] Dezső 2012b: 99.
[3192] Fales 2010a: 128; Dezső 2012b: 72ff.
[3193] Dezső 2006b: 116f.

Հնարավոր է, որ Ուրարտուում $^{LÚ}$*mari*(*ni*)-խավի անդամը արքայի հետ կապվում էր հատուկ երդումով: Այս առումով հետաքրքիր դիտարկում է կատարել Մորից վան Լունը: Ըստ նրա՝ ուրարտական ոչ արքայական, սակայն, վերնախավին պատկանող դամբարաններից ուրարտական արքաների արձանագրությամբ գոտիների կամ ձիերի հանդերձանքի մասերի ի հայտ գալը պայմանավորված է արքայի և էլիտայի միջև սերտ կապերով[3194]: Միանգամայան հնարավոր է, որ $^{LÚ}$*mari*(*ni*)-խավի անդամին արքայի կողմից տրվում էր բրոնզե գոտի, գուցեև՝ զինվորական ողջ հանդերձանքը, որը խորհրդանշում էր այդ կապը: Այս առումով հետաքրքիր զուգահեռ կարող է լինել հին պարսկ. *bandakā*-ն: Այդպես էր կոչվում պարսկական ազնվականությունը, որոնց կրած լայն գոտիները (հինպարսկ. *ba$^{n}$d*՝ «կապ»), խորհրդանշում էին աքեմենյան արքայից արքային տրված հավատարմության երդումը[3195]: Մենք ենթադրում ենք, որ նման անձինք են, որ ուրարտական աղբյուրներում հանդես են գալիս որպես «բիայնացի» ($^{KUR}$*biainiše*) և որ այդ տերմինը, որը սովորաբար հակադրվում է «բարբարոս»-ին ($^{KUR}$*luluiniše*)[3196], չի նշանակում պարզապես Բիայնիլի-Ուրարտուի բնակիչ, այլ, ավելի շուտ, վերաբերում է Բիայնիլի-Ուրարտուի «քաղաքացուն»:

Պատկանելությունը «մարի(նի)ներ»-ի խավին, ամենայն հավանականությամբ, ժառանգական էր: Միաժամանակ, թեև դժվար է միանշանակ պնդել, սակայն, հինարևելյան զուգահեռները կարող են հուշել, որ Ուրարտուում ևս հնարավոր էր ծառայության միջոցով հասնել «մարի(նի)ի»-ի աստիճանի: Համենայն դեպս, Ուգարիթից և Ալալախից հայտնի են դեպքեր, երբ այլ խավի պատկանող անձը արքայի հրամանով ստանձնում էր *maryannūtu*-ծառայությունը և դասվում էր «մարյաններ»-ի շարքը[3197]: Միտաննիում հավանաբար այդ ծառայությունն էր, որ կոչվում էր *ḫanigalbatūtu* և այն ստանձնելով՝ այս կամ այն անհատը, ում հետ նաև՝ նրա ընտանիքը, դառնում էր «խանիգալբատցի», այն է՝ «միտաննացի»[3198]:

Այսպիսով, կարելի է կարծել, որ Ուրարտուում ևս $^{LÚ}$*mari*(*ni*)-ն ուներ զուտ սոցիալական իմաստ և ներկայացնում էր պետության վերնախավը: Նրա ձեռքին էր գտնվում քաղաքական, քրմական և ռազմական իշխանությունը երկրում կամ մասնակցում էր դրա իրականացմանը: Քրմական խավի անդամներն Ուրարտուում, ամենայն հավանականությամբ, նույնպես պատկանում էին «մարի(նի)ներ»-ի խավին: Կարմիր բլուրի «սուսի»-տաճարի տեքստում խոսվում է ծիսական արարողություններին

[3194] van Loon 1989: 270.
[3195] Herrenschmidt 1987: 683f.
[3196] КУКН, 421$_{4-42}$; CTU I, A 12-8$_{40-42}$.
[3197] Տե՛ս Speiser 1954: 21; Гельцер 1956: 33 сл.; Cooper *et al.* 2005: 48; Feldman 2010: 75, n. 44.
[3198] Von Dassow 2014b: 21ff.

«մարի(նի)ներ»-ի մասնակցելու մասին[3199]: «Մարի(նի)ներ»-ը, ենթադրելի է, ազատված էին հարկերից: Համենայն դեպս, հայտնի է, որ Ուգարիթում «մարյանուներ»-ն ազատված էին հարկերից[3200]:

Կարելի է կարծել, որ «մարի(նի)ներ»-ի խավն Ուրարտուում եղել է փոքրաքանակ: Թոփրաքքալեի տեքստում նշվում է ընդամենը 1113 «մարի(նի)ներ»-ի մասին: Ընդ որում, այստեղ հնարավոր չէ միանշանակ պնդել, թե արդյո՞ք խոսքը վերաբերում է երկրի բոլոր «մարի(նի)ներ»-ին, թե միայն նրանց, ովքեր, կապված էին Թոփրաքքալեի պալատական/տաճարային համալիրի հետ: Բուն տեքստը, կարծես, խոսում է վերջին ենթադրության օգտին[3201]: Այդ դեպքում «մարի(նի)ներ»-ի թիվը կարող էր լինել մի քանի անգամ ավելի: Ք.ա. 8-րդ դ-ի վերջ – 7-րդ դ-ի առաջին կեսին կային Թոփրաքքալեի նման առնվազն 6-7 խոշոր կենտրոններ, թեև հարկ է նկատի ունենալ, որ, ամեն դեպքում, Թոփրաքքալեն գտնվում էր տերության սրտում և մայրաքաղաքի մերձավորությամբ: Ենթադրելի է, որ այստեղ «մարի(նի)ներ»-ի թիվը մեծ էր լինելու[3202]:

#### 4.1.2.2. $^{LÚ}$*tardašḫe* խումբը

Երկրի իշխող վերնախավը կամ ազնվականությունը՝ $^{LÚ}$*mari*(*ni*)-ն, բաժանվել է առնվազն երկու խմբի: Դրանք կոչվել են $^{LÚ}$*tardašḫe* և $^{LÚ}$*kirine*: Թոփրաքքալեի տաճարային/պալատական համալիրի անձնակազմը թվարկող տեքստում $^{LÚ}$*tardašḫe* տերմինով են առանձնացված $^{LÚ}$*mari*(*ni*)-ի՝ թվով 1113 հոգուց 104-ը[3203]: Ցավոք, *tardašḫe* տերմինի նշանակությունն անհայտ է[3204], և մենք որևէ այլ վկայություն չունենք ազնվականների այս խմբի մասին: Պարզ է միայն, որ խմբի անդամներն ազնվականության շարքում ունեցել են ամենաբարձր դիրքը, քանի որ տեքստում $^{LÚ}$*mari*(*ni*)-ի և ընդհանրապես՝ Թոփրաքքալեի անձնակազմի թվարկումը սկսվում է նրանցով: Մյուս կողմից, նրանց՝ համեմատաբար փոքր թիվը մղում է մեզ մտածելու, որ այս խումբը կարող էր ներկայացնել երկրի խոշոր ազնվականական տներից սերող ռազմական/քրմական վերնախավը՝ երկրի «մեծամեծներ»-ը:

Հավանաբար, հենց այս խմբի անդամներն են ասորեստանյան տեքստերում հանդես գալիս որպես «մեծամեծներ» (LÚ.MAḪ.MEŠ / LÚ.GAL.MEŠ), ընդ որում, նրանք էական մասնակցություն են ունեցել երկրի ռազմական և քաղաքական կյանքում[3205]:

---

[3199] Дьяконов 1988a: 57; Diakonoff 1991: 15.
[3200] Гельцер 1969: 27.
[3201] Համմտ. É.BÁRA-*ni i-ni*՝ «տաճարում/պալատում այս» արտահայտությունը (КУКН, 412, лиц. стор.$_6$ ; CTU IV, CT Tk-1 Ro$_6$.):
[3202] Համմտ. Konakçı, Baştürk 2009: 178.
[3203] КУКН, 412, лиц. стор.$_7$; CTU IV, CT Tk-1 Ro$_7$.
[3204] Хачикян 1985: 65.
[3205] Parpola 1987, Nos. 31-32; Lanfranchi, Parpola 1990, Nos. 93, 164-165, 173.

«Մեծամեծներ»-ի մի մասը, անկասկած, ներկայացնում էր բիայնական արքայատան անդամներին և արքայատան ճյուղավորումները: Պատահական չէ, որ Ուաուշի ճակատամարտում գերի ընկած ուրարտացի 250 կամ 260 պաշտոնյաներին, «մեծամեներ»-ին և հեծյալներին ասորեստանյան աղբյուրն անվանում է «*նրա* (իմա՝ ուրարտական արքայի) *արքայական սերմը/սերունդը*» (NUMUN LUGAL-*ti-šú*)[3206]: Ասորեստանում նույնպես արքայի մերձավոր հարազատները հիշատակվում են «մեծամեծներ»-ի շարքում[3207]: «Մեծամեծներ»-ի մյուս մասը կազմել է ուրարտախոս հանրույթի վերնախավը: Այդ մասին են հուշում պաշտոնյաների անունները, որոնցից շատերը կարելի է ստուգաբանել խուրրի-ուրարտերենով: Միաժամանակ, մենք չենք բացառում, որ «մեծամեծներ»-ի շարքերը հետագայում կարող էին ընդլայնվել ի հաշիվ հպատակ երկրների առաջնորդներից ոմանց:

Ինչպես երևում է, այս խավին հասանելի էին պետական միջոցները (պետական արհեստանոցների մետաղե արտադրանք, թանկարժեք մետաղներ, «պալատական» խեցեղեն, սնունդ, հագուստ ևն): Այս առումով պատահական չէ բուլլաների ի հայտ գալը Այանցի «ուրարտական վերնախավի տներ»-ից[3208]: Դրանցից մեկը կրում է ինչ-որ անձի անուն[3209]: Ամենայն հավանականությամբ՝ այդ անունը գրվել է ամրոցում՝ նյութական միջոցները վերաբաշխելու գործընթացի ժամանակ, միջոցներ, որոնք պետությունը հատկացրել է տվյալ անձին[3210]: Նման իրավիճակ է երևում նաև Տուշպայի[3211] և Բաստամի[3212] «քաղաքային թաղամասեր»-ի համար: Բացի դա, Տուշպայի վերնախավի տներից մեկում սեպագիր սալիկի գտնվելու փաստը[3213] կարող է հուշել, որ նրանցից ոմանք պահել են մասնավոր դիվաններ, ինչպես, օրինակ, Նուզիի վերնախավի անդամներից շատերը[3214]:

Նրանք տիրել են հարուստ-դրվագված զենքերի և զինվորական հանդերձանքի, պարտավոր են եղել պահել ձի(եր), մարտակառք և մասնակցել արշավանքների՝ կազմելով կառամարտիկ ուժերը: Այս առումով նշենք, որ ուրարտական վաղ տեքստերում հանդիպող մարտակառքերի առավելագույն թիվը 106-ն է[3215], ինչը տարօրինակ կերպով մոտ է $^{LÚ}$*tardašḫe* խմբի անդամների թվին (104):

[3206] Mayer 1983: 80ff. (Z. 137-138); Fuchs 1994: 204, 345 (Z. 42).
[3207] Garelli 1972-1975: 448f.
[3208] Stone, Zimansky 2003: 219f., Fig. 11.6.
[3209] Stone, Zimansky 2004: 240; Stone 2012: 98.
[3210] Համմտ., օրինակ, CTU IV, CB Ay-1 բուլլայի տեքստը:
[3211] Işık 2014: 174f., Res. 1-2, Çiz. 1-3.
[3212] Kroll 1988a: 160.
[3213] Işık 2014: 176ff., Res. 4, Çiz. 6.
[3214] Ամփոփ տե՛ս Postgate 2013: 349.
[3215] Տե՛ս 2.3.7.1.:

Միաժամանակ, նրանք տարբերվել են բնակության բարվոք պայմաններով, իրավունք են ունեցել կառուցելու վիմափոր կամ քարաշեն հանդիսավոր դամբարաններ[3216]: Նման դամբարաններ են բացվել Ալիշարում[3217], Քայալըդերեում[3218], Յուքարը Գեոչմեզում[3219], Աթաբինդիում (թիվ I)[3220], Ալթըն-թեփեում[3221], Քալեքյոյում[3222], Դեոներթաշում[3223], Յողունհասանում[3224], Յամաչում[3225], Սանգարում[3226], Աշաղը Աքթաշում[3227], Թաշբուլաքում[3228], Երևանում («Ավտոագրեգատ»[3229]), Ագարակում[3230] և այլուր (նկ. Դ-6/1-4 – Դ-11/1-2): Դրանց ճարտարապետությունն ու կառուցվածքը միանգամայն համեմատելի են Վանա ժայռի արքայական դամբարանների հետ (հմմտ. նկ. Ա-28/1-3 – Ա-29/1-2)[3231] և առանձնացել են թաղման հարուստ գույքով (Ալիշարի[3232], Գուշջիի[3233], Երևանի («Ավտոագրեգատ»[3234], Էրեբունի[3235]), Գեղհովիտի[3236], Եղեգնաձորի[3237], Բուրմագեչիթի[3238], Ալթըն-թեփեի[3239], Արծկե/Ադըլջևազի, Դեդելիի[3240] դամբարանները):

Ասորեստանում նույնպես բարձրագույն պաշտոնյաների մեծամասնությունը արքայական ընտանիքի և երկրի խոշոր ազնվականական տների ներկայացուցիչներ էին: Հետաքրքիր է, որ նորասորեստանյան շրջանում պետության բարձրագույն պաշտոնյաների թիվը, որոնք դերակատար էին երկրի կառավարման գործում, հասնում էր 100-120 մարդու[3241], ինչը կրկին հիշեցնում է $^{\text{LÚ}}$*tardašḫe* խմբի անդամների թիվը:

---

[3216] Համայակյան 1986, էջ 128; Есаян и др. 1991: 24. Տե՛ս նաև Burney 1995: 205ff.
[3217] Пиотровский 1959a: 218, рис. 66.
[3218] Burnet 1966: 101ff., Fig. 22, Pls. XXIII-XXIV; Çevik 2000: 115f., Lev. 20a-b.
[3219] Öğün 1978a: 658sq., Textabb. 6.
[3220] Başgelen 1987a: 8ff.; Çevik 2000: 116f., Lev. 21-24.
[3221] Özgüç 1969: 10ff./65ff., Res./Figs. 4-28, Lev./Tab. II-XVIII.
[3222] Öğün 1978a: 641sqq., Textabb. 2, Abb. I/2; Çevik 2000: 119, Lev. 31-33.
[3223] Başgelen 1986: 28; Çevik 2000: 124, Lev. 43a.
[3224] Ceylan 2003: 316, Ciz. 6; Belli, Ceylan 2002: 124ff., Ciz. 2., Res. 12.
[3225] Sevin 2015: 21ff., Res. 20-21.
[3226] Kleiss 1968: 7sqq., Abb. 6-7.
[3227] Topaloğlu 2012: 145, Foto 14-16.
[3228] Topaloğlu 2012: 139f., Foto 1-2, Çiz. 1.
[3229] Есаян и др. 1991: 5 сл., Табл. I-III; Եսայան և այլք 1995, էջ 55, Աղ. I-IV:
[3230] Քալանթարյան 2005, էջ 154-160, Աղ. 1-2:
[3231] Ուրարտական ժայռափոր դամբարանների համար վերջին ուսումնասիրություններից տե՛ս Çevik 2000; Sevin 2012; նույնի՝ 2015: 21ff., Res. 19-21.
[3232] Пиотровский 1959a: 218.
[3233] Ատրպետ 1912, էջ 117-121; Hanfmann 1956: 205ff., Pls. XVII-XX.
[3234] Есаян и др. 1991: 6 сл., Табл. V-XXI; Եսայան և այլք 1995, էջ 55-58, Աղ. V-XVII:
[3235] Մարտիրոսյան, Մնացականյան 1958, էջ 63-84, Նկ. 1-2, 4, Աղ. 1-6; Мартиросян 1964: 242 сл., Табл. XXIV-XXV.
[3236] Փիլիպոսյան, Մկրտչյան 2001, էջ 19-34, Աղ. 14-16, 19, 21-28, 30, 35:
[3237] Есаян, Хнкикян 1990: 34 сл., Табл. I-IV; Xnkikyan 2002: 95f., Pls. XCIV-XCVI.
[3238] Yıldırım 1988: 217ff., Res. 1-5, Şek. 1-5; նույնի՝ 1989: 279ff., Şek. 1-6.
[3239] Özgüç 1969: 19ff./68ff., Res./Fig. 18, Lev./Tab. XIX-XXV.
[3240] Öğün 1978a: 660sqq., Abb. 20-21, 23, 25, 28-35, 38-43, 45-46, 48, 50, 53, 55-59; նույնի՝ 1978b: 65sqq., Pl. 26-32.
[3241] Radner 2011a: 359.

### 4.1.2.3. **Քրմական խավը**

#### 4.1.2.3.1. **Ընդհանուր բնութագիրը**

Ուրարտուում քրմության մասին քիչ բան է հայտնի[3242]: Մենք ենթադրում ենք, որ Ուրարտուում արքան իրականացրել է քրմական գործառույթներ և ըստ էության երկրի քրմապետն էր[3243]: Մեր մի հոդվածում մենք ենթադրում ենք նաև գուշակության և գուշակ-քրմերի ինստիտուտի գոյությունը Ուրարտուում[3244]: Դրանով հանդերձ՝ Խալդիից բացի այլ աստվածներին ձոնված տաճարների բացակայությունը[3245] մղում է մտածելու, որ քրմական խավն Ուրարտուում լինելու էր համեմատաբար փոքրաթիվ: Դժվար է ասել, թե արդյո՞ք ամեն մի աստված ունեցել է իրեն սպասարկող առանձին քուրմը, ինչը տեսնում ենք, օրինակ, խեթերի մոտ[3246]: Այանցի տեքստերից մեկում «Վարուբա(նի) (աստվածուհու) մարդուն/մարդկանց» հիշատակության փաստը (LÚ $^{d}$*’aruba*)[3247], մի կողմից, մղում է ենթադրելու նման հնարավորություն, բայց մյուս կողմից պետք է նկատի ունենալ, որ Վարուբանին կարող էր պարզապես լինել Խալդի աստծո իգական կրկնակը, նրա իգական կողմի կրողը: Համենայն դեպս, եթե անգամ ընդունենք առանձին աստվածներին սպասարկող քրմերի գոյության հնարավորությունը, ինչը հավանական է թվում, ապա, առկա փաստերից դատելով, նրանց պաշտամունքն ու ծեսերն իրականացվել են ոչ այլուր, քան Խալդի աստծո տաճարում կամ նրա հետ կապված պաշտամունքային որևէ կառույցի առջև՝ այս կամ այն կերպ փոխկապակցվելով Խալդիի պաշտամունքի հետ: Հետևաբար, այդ ծեսերը կարող էին իրագործել նաև Խալդի աստծո քրմերը:

Ուրարտական մեդալիոններից մեկում գահավորակին նստած աստվածության առջև խնդրարկուի դիրքով կանգնած տղամարդու կերպարանքը, հնարավոր է, պատկերում էր քրմի (նկ. Դ-2/3)[3248]: Այս նույնը կարելի է ասել ուրարտական նվիրատվական թիթեղներից մի քանիսի պատկերագրության մասին (նկ. Դ-12/1-2)[3249]: Մի քանի կնքադրոշմների վրա պատկերված կոթողների առջև, դարձյալ խնդրարկուի դիրքով, ուրվագծվում են տղամարդու, թերևս՝ քրմի կերպարանքներ (նկ. Ա-57/1-2)[3250]:

---

[3242] Տե՛ս Հմայակյան 1986, էջ 120-123; նույնի՝ 1990, էջ 72-74; Çevik 1997: 229ff.

[3243] Մանրամասն տե՛ս 1.1.2.1.:

[3244] Գրեկյան 2004ա, էջ 326-329; Grekyan 2005: 45ff. Տես նաև Թումանյան 2005ա, էջ 20-25:

[3245] Մանրամասն տե՛ս 1.5.2.:

[3246] Խաթթուսասի տաճարներում դրվել են նաև հարևան որոշ երկրների մեծ աստվածների արձանիկները, որոնք ունեցել են սպասարկող առանձին քրմեր: Տե՛ս Քոսյան 2002: 229, ծնթ. 38 (աղբյուրների հղումներով):

[3247] CTU IV, CB Ay-39$_2$.

[3248] Kellner 1989: 235sq., Pl. 46/1-2; Հմայակյան 2005բ, էջ 11, նկ. 8:

[3249] Kellner 1976b: 53sqq, Abb. 52; Seidl 2004, Taf. 63/a-b.

[3250] Lehmann-Haupt 1907: 82 (Fig. 54); Işık 1986, Abb. 2a. Cf. also Çevik 1999: 344ff., Lev. 6/e, etc.

Թերևս քրմուհի է պատկերված ցլի վրա կանգնած ինչ-որ աստվածության առջև՝ խնդրարկուի դիրքով և զոհաբերվելիք կենդանու հետ միասին (նկ. Դ-2/6)[3251]: Քրմուհիներ (՞) պատկերող նմանատիպ տեսարաններ են առկա պեկտորալներից կամ կախազարդերից մի քանիսի վրա նույնպես (նկ. Դ-13/1-2)[3252]: Հետևաբար, տեղին է ենթադրել նաև, որ նման պեկտորալներ կրել են հենց իրենք՝ քրմերը/քրմուհիները՝ կապված իրենց ծառայության հետ, խորհրդանշելով իրենց աստծուն տրված երդումը: Այս դեպքում պեկտորալները կատարել են այն նույն դերը, ինչը մենք ենթադրում ենք ուրարտական բրոնզե գոտիների պարագայում (տե՛ս վերը): Այս առումով նշենք նաև, որ հայտնի են ուրարտական բրոնզեգործական մի քանի նմուշներ, որոնցում պատկերված անձը կրում է պեկտորալ (նկ. Դ-13/5-6)[3253]: Նման պեկտորալի հայտնաբերումը Նոր-Արեշի ուրարտական դամբարանից կարող է վկայել, որ այնտեղ հուղարկավորված բարձրաստիճան անձը քուրմ էր (նկ. Դ-13/4)[3254]:

Ուրարտական պաշտամունքային տեքստերում հանդիպում են ծեսերի իրագործման հետ կապված ինչ-որ կատարողների խմբեր: Հիշատակվում են $^{LÚ}$*urbikani*, $^{LÚ}$*aïeiṭeni*, $^{LÚ}$*palagi*, $^{LÚ}$*šeluini*, $^{LÚ}$*purunurdani* անվանված քրմերը (՞) և այսպես կոչված «աստծո մարդիկ»: Այս վերջին դեպքում խոսքը վերաբերում է Վերին Անձավից հայտնաբերված կավե սալիկի վրա LÚ.DINGIR-i-ni / LÚ $^{d}$*i-ni* (՞) ընթերցմանը[3255]: Բացի դա, Այանցից գտնված բուլլաներից մեկի վրա ընթերցվում է «Վարուբա(նի) (աստվածուհու) մարդուն/մարդկանց» գրությունը (տե՛ս վերը): Ինչ վերաբերում է Հովսեփ Սանտալճյանի տեսակետին, ով ուրարտական տեքստերից մեկում հանդիպող *kurni* բառը համադրում է հայ. «քուրմ» բառի հետ[3256], ապա այդ տեսակետն արդիական չէ մի քանի պատճառներով: Նախ, եթե այստեղ գործ ունենայինք ինչ-որ մասնագիտություն նշանակող բառի հետ, ապա այն ունենալու էր LÚ մասնագիտության ցուցիչը, ինչպես մյուս դեպքերում: Բացի դա, հազիվ թե խոսքը վերաբերի թվով 20 քրմերի (20 *kurni* $^{LÚ}$*šeluini*) այլ, ամենայն հավանականությամբ, այստեղ գործ ուենք ծեսում օգտագործված առարկաների կոնկրետ քանակության հետ: Եվ ի վերջո պետք է նկատի ունենալ, որ հայերենում «քուրմ» բառը փոխառված է ասորերենից[3257]:

[3251] Kellner 1980: 83ff., Abb. 2. Տե՛ս նաև Пиотровский 1962б: 85, рис. 50.
[3252] Kellner 1991b: 164ff., Fig. 2, No.2.
[3253] Merhav 1991c: 171ff., Figs. 4-5.
[3254] Մարտիրոսյան, Մնացականյան 1958, էջ 64-66, Աղ. 1.
[3255] CTU IV, CT An-$1_{18}$, ինչպես նաև CTU IV: 123-ում տրված ծանոթագրությունը:
[3256] Sandalgian 1900: 388.
[3257] Աճառյան 1979, էջ 296:

#### 4.1.2.3.2. $^{LÚ}$*urbikani* խումբը

Քրմերի այս խմբի գործառույթների մասին կարելի է դատել նրանց անվանումից: Այն ստուգաբանորեն կապվում է ուրարտ. *urb*(*u*)-՝ «զոհաբերել, մասնատել» բայի հետ: Վերջինիս թարգմանությունը կասկած չի հարուցում, քանի որ այդ բայի փոխարեն ուրարտական տեքստերում հաճախ կիրառվում է շում. TAG/ŠUM՝ «զոհել, զոհաբերել» գաղափարագիրը[3258]: Հետևաբար, այդ քրմերի գործառույթները կապված էին լինելու աստվածներին արվող զոհաբերությունների հետ: Այս հարցում հետազոտողները համակարծիք են[3259]: Առկա է նաև կարծիք, ըստ որի՝ ուրարտական տեքստերից մեկում հանդիպող և $^{LÚ}$UDU.MAŠ.TUR[3260] անվանվող անձանց (քրմերի՞) խումբը նույնն է, ինչ $^{LÚ}$*urbikani*-ն[3261]: Տեսակետները, սակայն, տարբեր են: Համենայն դեպս, գաղափարագրերի UDU.MAŠ.TUR կոմբինացիան նշանակում է «ուլ»[3262], իսկ մասնագիտության ցուցիչը կարող է հուշել, որ այստեղ գործ ունենք, թերևս, ուլերի այրելու (՞) ծես իրականացնող քրմերի հետ: Հայտնի է, որ Ուրարտուում ուլեր զոհաբերում էին միայն Խալդի աստծուն և այդ դեպքերում «զոհաբերել» իմաստով կիրառվում էր մեկ այլ՝ *nipsid*(*u*) բայը[3263]: Հետևաբար, համադրությունը $^{LÚ}$*urbikani*-ի հետ, թերևս, տեղին չէ, և ի դեմս $^{LÚ}$UDU.MAŠ.TUR կոչվող անձնաց պետք է տեսնել քրմերի (՞) մեկ այլ խմբի:

#### 4.1.2.3.3. $^{LÚ}$*aïeiṭeni* խումբը

Այս խմբի անձինք հիշատակվում են Կարմիր բլուրի և Այանցի «սուսի»-տաճարի արձանագրություններում[3264]: Տերմինի նշանակությունը հայտնի չէ: Առկա երկու կարծիքներից առաջինի համաձայն՝ *aïeiṭeni*-ն կարող է կապվել հայ. *աւետ* բառի հետ[3265]:

Ըստ երկրորդ կարծիքի՝ հնարավոր է այստեղ տեսնել հայ. *գէտ*, *գիտուն*, *գիտող* բառերը (**ïeiṭ*), եթե բառի առաջին *a*-ն դիտվի որպես առանձին գաղափարագիր, օրինակ՝ «որդի» նշանակությամբ (A = *aplu*) և տերմինն ընթերցվի որպես $^{LÚ}$A *ïeiṭeni*: Ըստ այդմ, տերմինը կարելի է ընկալել իբրև քուրմ-գուշակ, պատգամախոս կամ գիտուն իմաստով[3266]: Ամեն դեպքում հարկ է նշել, որ երկու տեսակետներն էլ հիպոթետիկ են:

---

[3258] КУКН: 422.
[3259] *urb*(*u*)- բայի հետ է կապվում խուրր. *urbarinni*՝ «մսագործ» (՞) բառը: Տե՛ս Дьяконов 1963a: 50; Хачикян 1985: 49; Salvini, Wegner 2014: 115.
[3260] CTU I, A 12-6$_{3, 8}$.
[3261] SchՊfer 1977: 260. Հմմտ. КУКН, 418, прим. 8.
[3262] КУКН: 423.
[3263] Համայակյան 1986, էջ 130; նույնի՝ 1990, էջ 77:
[3264] КУКН, 425$_{x+2}$; CTU I, A 12-1 III$_{11}$, 12-2 III$_{2}$.
[3265] Ըստ Հրաչ Մարտիրոսյանի: Տե՛ս Պետրոսյան 2006, էջ 10, ծնթ. 4:
[3266] Պետրոսյան 2006, էջ 10:

#### 4.1.2.3.4. $^{LÚ}$*palagi* խումբը

Քրմերի (՞) հաջորդ խումբը կոչվում է $^{LÚ}$*palagi*[3267]: Ըստ Իգոր Դյակոնովի՝ *pal*-բայը կարող է նշանակել «գիտենալ», ըստ այդմ, տերմինը նա ընկալում էր որպես «գիտուն»՝ քրմական ինչ-որ կարգ[3268]: Այդ տեսակետին է հետևում նաև Սիմոն Հմայակյանը[3269]:

#### 4.1.2.3.5. $^{LÚ}$*šeluini*, $^{LÚ}$*purunurdani*, $^{LÚ}$*iriuni*, $^{LÚ}$*šiarkira* խմբերը

Ինչ վերաբերում է ուրարտական մի քանի ծիսապաշտամունքային տեքստերում հիշատակված $^{LÚ}$*šeluini*[3270], $^{LÚ}$*purunurdani*[3271], $^{LÚ}$*iriuni*[3272] և $^{LÚ}$*šiarkira*[3273] կոչվող մարդկանց խմբերին, ապա այստեղ անորոշությունն առավել մեծ է: Պնդել, որ նրանք բոլորը քրմեր են, ճիշտ չէ: Հնարավոր է՝ նրանք մաս են կազմել տաճարի տնտեսական/սպասարկող անձնակազմին կամ, համենայն դեպս, ինչ-որ կապ ունեցել տաճարի հետ:

### 4.1.3. Իշխող խավն Ուրարտուում ըստ հնագիտական տվյալների

#### 4.1.3.1. Կեցությունը

Ուրարտական պալատական/տաճարային համալիրներին կից բացվել են ակնհայտորեն պետության կողմից կառուցված տներով, բնակելի համալիրներով և առանձնատներով թաղամասեր: Այդ կառույցները, իրենց հերթին, բաժանվում են երկու խմբի: Առաջին խումբը միանման կառուցապատված տներ են՝ բաց կամ կիսաբաց բակով և երկու սենյակով՝ մինչև 50-100 մ$^2$ մակերեսով[3274]: Տները չունեին մթերանոց, ինչպես նաև անասունների համար նախատեսված փարախ: Դա հիմք է ծառայել պնդելու համար, որ այդ տների բնակիչները չեն վարել սեփական տնտեսություն և գոյատևել են պետության հատկացրած միջոցներով[3275]:

Ենթադրվում է, որ նման տները կառուցվել են վերաբնակիչների համար[3276]: Այս կարծիքը քիչ է հավանական, եթե վերաբնակիչ ասելով հասկանում ենք գերեվարված և նոր հողատարածքներում վերաբնակեցված կախյալ բնակչությանը: Շատ ավելի անհիմն է կարծել, թե այդ տները նախատեսված էին ստրուկների[3277] կամ գերիների

[3267] КУКН, 424$_{14}$; CTU I, A 12-1 II$_9$, 12-2 II$_3$.
[3268] Дьяконов 1988a: 65, прим. 23; Diakonoff 1991: 14, n. 19.
[3269] Հմայակյան 2012, էջ 34:
[3270] КУКН, 193$_5$, $_{12\text{-}13}$; CTU I, A 8-14$_5$, $_{12\text{-}13}$.
[3271] КУКН, 193$_{11}$; CTU I, A 8-14$_{11}$.
[3272] КУКН, 418$_2$; CTU I, A 12-6$_2$.
[3273] КУКН, 418$_8$; CTU I, A 12-6$_8$.
[3274] Сорокин 1952a: 128 сл.; Мартиросян 1958: 163; Пиотровский 1959б: 175 сл.
[3275] Пиотровский 1950: 17; նույնի՝ 1952: 10; Сорокин 1952a: 128 сл.; Мартиросян 1957: 83. Հմմտ. Меликишвили 1951a: 29.
[3276] Tarhan, Sevin 1976-1977 [1977a]: 297. Հմմտ. Сорокин 1952a: 128 сл.
[3277] Меликишвили 1951a: 29, նույնի՝ 1953: 29; նույնի՝ 1954: 344 сл.

համար[3278]: Մյուս կողմից, այն փաստը, որ այդ տների բնակիչները չեն վարել սեփական տնտեսություն և գոյատևել են պետության հատկացրած միջոցներով իրոք մղում է մտածելու, որ գործ ունենք պետության հետ կապված ինչ-որ խմբի հետ: Դա կարող էր լինել $^{LÚ}$*kirine* խումբը, որը հավանաբար ներկայացրել է պետությունից օրապահիկ՝ «սափոր» ստացող ծառայող ազնվականներին (տե՛ս ստորև): Այս տեսակետին համահունչ է Վսեվոլոդ Սորոկինի կարծիքը, ով գտնում էր, որ նման տները ծառայել են իբրև կացարան զինվորների և նրանց ընտանիքների համար, ում կեցությունը հոգում էր պետությունը[3279]: Ընդ որում, այդ տների բնակիչներն ունեցել են կեցության համար բավականին բազմազան գույք և անգամ զբաղվել են որսորդությամբ քարարծիվներով[3280]: Այս փաստը ևս խոսում է բնակիչների ունեցած բարձր դիրքի մասին:

Կարմիր բլուրի պետական տների երկրորդ խումբը բաղկացած էր խոշոր, կենտրոնական՝ հաճախ սյունազարդ սրահի շուրջը կառուցապատված, մինչև 10-15 սենյակ ունեցող և ընդարձակ մակերես ունեցող առանձնատներից (տե՛ս 1.4.3.9.1.3.): Ի տարբերություն առաջին խմբի տների՝ դրանք բոլորն ունեին մթերանոց՝ խոշոր կարասներով, խոհանոց, ինչպես նաև փարախ[3281]:

Նման տներում, անկասկած, բնակվել են բիայնական վերնախավի ներկայացուցիչներ, լինի վարչական/քրմական ծառայող թե զինվորական[3282]: Թերևս, նման տների տիրել են ուրարտական ազնվականության ամենաբարձր՝ $^{LÚ}$*tardašḫe* խմբի անդամները: Այս առումով տեղին է հիշել պեղող հնագետների կողմից այդ տներին տրված անվանումները՝ «նշանավոր ուրարտացու» տուն (Կարմիր բլուր)[3283], «կնիք պահող»-ի տուն, «մարի(նի)»-ի տուն, «քուրմ-բուժակ»-ի տուն (Արգիշթիխինիլի[3284]) ևն:

Որ նրանք եղել են «մարյանուներ»-ի շարքից, կարելի է դատել այն փաստից, որ նման տներից են հայտնաբերվել ծանրազեն զինվորականի կամ կառամարտիկի թեփուկավոր զրահներ (2.3.7.6.): Մասնավոր տներից զինվորական հանդերձանքի հայտնաբերումը ինքնին հետաքրքիր է: Նման օրինակ ունենք Նուզիից: Տեղի «մարյանուներ»-ից մի քանիսի՝ Թեխիպ-թիլլայի, Շուրկի-թիլլայի, Զիկիի և Շիլվի-Թեշշուբի տներից ևս գտնվել են զրահներ[3285]: Ընդհանրապես՝ Նուզիի ռազմիկների՝

[3278] Belli 1978 [1979]: 49f.
[3279] Сорокин 1952a: 129. Տե՛ս և հմմտ. Пиотровский 1952: 10.
[3280] Сорокин 1952a: 129.
[3281] Мартиросян 1957: 91.
[3282] Мартиросян 1964: 264 сл. Հմմտ. Тирацян, Кошеленко 1985: 26.
[3283] Мартиросян 1957: 88, рис. 2; նույնի՝ 1958: 165; նույնի՝ 1961: 116 сл.
[3284] Мартиросян 1974: 109, 112, 121, 133.
[3285] Hulit 2002: 76ff.

հաճախ երկհարկ տները, առաջին հարկի՝ 100-300 մ$^2$ մակերեսով[3286], միանգամայն համադրելի են Կարմիր բլուրի վերնախավի տների հետ:

«Ուրարտական վերնախավի թաղամասեր»-ը կամ «մարյանուներ»-ի տները կառուցվել են միջնաբերդի անմիջական մերձավորությամբ: Սա ևս շատ հետաքրքիր զուգահեռներ ունի հին Առաջավոր Ասիայում, օրինակ՝ կասսիտական Բաբելոնիայում: Այստեղ կասսիտական վերնախավը՝ հիմնականում կառամարտիկներ, կենտրոնացվել են պալատի/ամրոցի շուրջը[3287]: Այս նույնը տեսնում ենք նաև Նուզիում, ուր ևս «ազնվականություն»-ը հիմնականում բնակվում էր կամ պալատում, կամ պալատի մերձավորությամբ[3288]: Ուգարիթյան մի քանի տեքստեր հայտնում են պալատում բնակվող տասնյակ կառամարտիկների (*mryn*) մասին[3289]: Ուգարիթում բացվել են նմանատիպ «էլիտար» տներ[3290]: Հայտնի է, որ դրանցից մեկի տերը՝ ոմն Ուրտենու, «մարյանու» էր[3291]:

Ինչպես նշել ենք նախորդ գլխում, Ուրարտուում «մարի(նի)ներ»-ի մի զգալի մասը պետությունից ստացել է հողաբաժին և դրան տիրել ծառայության իրավունքով: Ուրարտական խոշոր կենտոններից հեռու ընկած նման կալվածքի մասին կարելի է դատել Կալ'եհ Քամանայի օրինակով: Քարագյունդյուզում բացված խոշոր բնակելի համալիրը՝ շուրջ 400 մ$^2$ մակերեսով[3292], նույնպես կարող էր պատկանել «մարի(նի)»-ի: Հայտնի են այլ օրինակներ ևս (մանրամասն տե՛ս 3.3.1.6.):

#### 4.1.3.2. **Կնիքն իբրև կարգավիճակի ցուցիչ**

Ինչպես վերը նշեցինք՝ «մարյանուներ»-ի խավը մուտք է ունեցել պետական պահուստներ[3293]: Կարելի է ենթադրել, որ միայն այս խմբի անդամներն էին, որ իրավունք ունեին կրելու իրենց սեփական կնիքները: Կնիքը, տվյալ դեպքում, խորհրդանշում էր նրանց իշխանությունը և, հավանաբար, կապը պալատի/տաճարի հետ[3294]: Թերևս պատահական չէ, որ ուրարտական հուշարձաններից հայտնաբերված կնիքները կազմում են բավական համեստ քանակ[3295]: Դրանց ամենամեծ

[3286] Jankowska 1981: 195ff.
[3287] Richardson 2011: 23, n. 55.
[3288] Drews 1993: 113.
[3289] McGeough 2007: 104.
[3290] McGeough 2007: 246ff.
[3291] McGeough 2007: 300.
[3292] Sevin, Özfirat 2001a: 142.
[3293] Տես., օրինակ, Pedersén *et al.* 2010: 121.
[3294] Պատահական չէ, որ ուրարտական կնիքների ճնշող մեծամասնության պատկերագրությունը կրում է սակրալ բնույթ: Տե՛ս Ayvazian 2004: 123ff.
[3295] Ուրարտական կնիքների համար տե՛ս Пиотровский 1950: 70 сл., Рис. 45-47, 50; նույնի՝ 1952: 45 сл., рис. 22; նույնի՝ 1955a: 54 сл., рис. 42-44; van Loon 1966: 139ff., Figs. 17-21, Pls. XXXV-XXXVII; Kleiss 1977b: 22,

քանակությունը հայտնաբերվել է Կարմիր բլուրից (մոտ 50 օրինակ), ընդ որում, այդ կնիքների մի զգալի, եթե ոչ՝ մեծ մասը կապված էր լինելու ամրոցում իրականացվող տնտեսական գործունեության հետ[3296]:

Ըստ այդմ, հինարևելյան զուգահեռներն Ուրարտուում, կարծում ենք, կիրառելի չեն: Բացառությունները վերաբերում են միայն այն դեպքերին, երբ գործ ենք ունենում ուրարտական պետական կառույցը հիշեցնող համակարգերի հետ: Օրինակ, Ուգարիթում ևս կնիքները հանդիսացել են իշխող վերնախավի կարգավիճակի ցուցիչ[3297]:

Կնիքների հայտնաբերման հնագիտական կոնտեքստը ևս հուշում է, որ դրանք կրել են սահմանափակ թվով և վերնախավը ներկայացնող անձինք: Այստեղ խոսքը վերաբերում է այսպես կոչված «անձնական կնիքներ»-ին, որոնք, ի տարբերություն «պաշտոնական/արքայական»-ի, արձանագրված չեն, պարունակում են ամենատարբեր, սակայն, առավելապես, պաշտամունքային բնույթի զարդամոտիվներ, հիմնականում հինգ կամ վեց տիպի են՝ գլանաձև, գլանաձև-բազմանիստ (քառանիստ կամ վեցանիստ), կշռաքարաձև, զանգակաձև կամ կոնաձև, սկավառակաձև և կենդանակերպ[3298]: Ամրոցներից դուրս նման կնիքներ են հայտնաբերվել Տուշպայի[3299], Արգիշթիխինիլիի[3300], Այանցի[3301] ամրոցների մոտ կառուցված «ուրարտական վերնախավի տներ»-ից, կնիքներ են գտնվել Քարագյունդյուզում պեղված և, թերևս, «մարի(նի)»-ի պատկանող տնից[3302], Գիրիքթեփեի ուրարտական ապարանքում զոհված անձանցից մի քանիսի մոտ գտնվել են կնիքներ (նկ. Դ-14/1-25)[3303]: Սովորաբար, ուրարտական վերնախավի անդամների թաղման գույքի արտեֆակտների թվում եղել են կնիքներ (տե՛ս Քալեջիքի[3304], Արծկե/Ադըլջևազի («D-I»)[3305], Երևանի («Ավտոագրեգատ»[3306], Էրեբունի[3307]), Արգիշթիխինիլիի մի քանի դամբարանների[3308]

---

Abb. 11; Taşyürek 1979: 309ff., Figs. 1-3, Tav. 21ff.; Sedil 1979: 137sqq., Taf. 38-42; նույնի՝ 1988b: 145sqq., Taf. 32-35.; նույնի՝ 2001: 446sqq.; Abay 2001: 321ff.

[3296] Мартиросян 1961: 93; նույնի՝ 1964: 254.

[3297] McGeough 2007: 299.

[3298] Seidl 1976: 61; Пиотровский Б.Б. 1962б: 105 сл., рис. 70-72; Есаян и др. 1991: 18/30. Մանրամասն տե՛ս և հմմտ. նաև van Loon 1966: 139ff., Figs. 17-21; Abay 2001: 321f., Figs. 28-29; Пилипосян 2003: 107 сл., табл. 1; Ayvazian 2004: 123ff.

[3299] Konyar 2011-2012: 181, Fig. 6; նույնի՝ 2011d: 152, Fig. 6.

[3300] Мартиросян 1974: 109.

[3301] Stone 2012: 98.

[3302] Sevin, Özfirat 2001a: 142.

[3303] Köroğlu 2009: 387.

[3304] Çavuşoğlu *et al.* 2009: 275, Çiz. 4, Res. 5.

[3305] Öğün 1978a: 671.

[3306] Есаян и др. 1991: 18, Таб. XXI; Եսայան և այլք 1995, էջ 58, Աղ. XVII:

[3307] Մարտիրոսյան, Մնացականյան 1958, էջ 64-69, Աղ. 1; Мартиросян 1964: 242, 244 сл, Таб. XXIV/11.

[3308] Մարտիրոսյան, Թորոսյան 1986, էջ 224-226, Աղ. 2, նկ. 8; Կարապետյան, Ենգիբարյան 2002, էջ 220-225, նկ. 1; Karapetyan, Yengibaryan 2010: 265ff., Figs. 1, 14-15; Tiratsyan 2013-2014: 114f., Figs. 1-6.

նյութերը)։ Այստեղ նկատենք նաև, որ ուրարտական բրոնզե գոտիները, որոնք, ինչպես կարծում ենք, խորհրդանշել են այդ գոտին կրող ազնվականի կապը արքայի հետ (տե՛ս վերը), ոչ պատահականորեն հայտնաբերվել են հիմնականում դամբարանային թաղումներից։ Դրանք հիմնականում պատկանել են բարձր խավին և զինվորների[3309]։ Հայտնի է, որ Գիրիքթեփեի՝ վերը նշված ապարանքի գրավման ժամանակ զոհված անձանցից շատերը կրել են բրոնզե գոտիներ[3310]։

### 4.2. Ծառայող խավը

#### 4.2.1. «Ծառայող ազնվականություն»-ը (LÚ*kirine*)

Թոփրաքքալեի տաճարային/պալատական համալիրի անձնակազմը թվարկող տեքստում ազնվականության երկրորդ հատվածը ներկայացնող խումբը՝ LÚ*kirini*-ն, անհամեմատ մեծաքանակ է՝ 1009 հոգի[3311]։ Իգոր Դյակոնովը LÚ*kirinie*-ն թարգմանել է իբրև «մատռվակ»[3312]՝ ելնելով ուրարտերենում վկայված և աքքադերենից փոխառված համարվող *kiri*՝ «անոթ, գավաթ» կամ ավելի ճիշտ՝ «սափոր» բառի առկայությունից[3313]։ Սա կարող ենք կիրառել իբրև աշխատանքային տերմին, և կարծում ենք, որ որպես «մատռվակ» պետք է հասկանալ միմիայն այն անձնանց, որոնց ապրուստը հոգացել է պետությունը։ Ըստ այդմ՝ LÚ*kirine*-ն պետությունից ապրուստ/օրապահիկ («սափոր») ստացող ազնվականն էր կամ ծառայող խավի ներկայացուցիչը։ Հետևաբար, միգուցե ճիշտ կլինի LÚ*kirinie*-ն թարգմանել իբրև «ծառայող (ազնվական)»։

Հավանաբար, LÚ*kirinie* խավը ներկայացնում էր երկրի խոշոր ազնվականական տների կրտսեր անդամներին, թերևս նրանց, ովքեր հինարևելյան աղբյուրներում հանդես են գալիս որպես «մարյանուի եղբայր»։ Նկատենք, որ թե Նուզիի, և թե ասորեստանյան տեքստերում «մարյանուներ»-ը հիշատակվում են «(իրենց) եղբայրներ»-ի հետ ծառայություն կատարելիս[3314]։ Այդ համակարգը գործել է նաև նորասորեստանյան շրջանում[3315]։

Արդյո՞ք այստեղ խոսքը նահապետական «տան» մասին է, որ կազմված էր «անբաժան եղբայրներ»-ից[3316]։ Կարելի է կարծել՝ այո։ Ռուսայի եղբայրների մասին ասորեստանյան աղբյուրի հաղորդումը կարող է լինել դրա վկայությունը։ Եթե

---

[3309] Ամփոփ տե՛ս de Brestian 2005-2007: 30.
[3310] Köroğlu 2009: 387.
[3311] КУКН, 412, лиц. стор. $_8$; CTU IV, CT Tk-1 Ro$_8$.
[3312] Дьяконов 1963a: 81, прим. 134.
[3313] КУКН: 451; CTU I: 426.
[3314] Jankowska 1981: 195ff; Stillman, Tallis 1984: 25, 27; Postgate 2008a: 89.
[3315] Տես, օրինակ, ABL 251 տեքստը (Lanfranchi, Parpola 1990, No. 53).
[3316] Այս մասին տե՛ս և հմմտ. Дьяконов 1968б: 11 сл.

զուգահեռ տանենք միջնադարյան Հայաստանում գործող նախարարական համակարգի հետ, ապա $^{LÚ}$*kirine*-ին ամենամոտ զուգահեռը կլինեն սեպուհները:

Ամենայն հավանականությամբ՝ $^{LÚ}$*kirine* խմբի անդամները կատարել են ռազմական կամ առավելապես ռազմական ծառայություն: Հավանաբար, նրանք են համալրել հեծելազորը և մասնավորապես՝ արքայական գունդը: Այս առումով հետաքրքիր է Սիմոն Հմայակյանի տեսակետը՝ Ուրարտուում «հեծյալների դաս»-ի գոյության մասին[3317]:

Հնարավոր է՝ $^{LÚ}$*kirine* խմբի անդամները չունեին իրենց սեփական ձին/մարտակառքը, այլ ստանում էին պետությունից արշավանքներից առաջ: Ըստ էության՝ նրանց ամբողջ հոգսը այս կամ այն կերպ հոգում էր պետությունը: Ի դեպ, հինարևելյան աղբյուրները նույնպես վկայում են, որ բոլոր «մարյանուներ»-ը չէ, որ ունեցել են մարտակառքեր: Հայտնի են տեքստեր (մասնավորապես՝ Ալալախից), որոնցում թվարկվում են մարտակառք ունեցող և մարտակառք չունեցող «մարյանուներ»-ի անունները[3318]: Մյուս կողմից, կային մարյանուներ, որոնք ունեին մի քանի մարտակառք[3319], ինչը, թերևս, պայմանավորված էր իրենց տրված հոցատարածքի չափով:

### 4.2.2. «Զինվորականություն»-ը ($^{LÚ}$*ḫuradinili*)

Նախորդ գլխում մենք փորձեցինք ցույց տալ, որ Ուրարտուում գործել է սիրիա-միջագետքյան աշխարհից փոխառված ծառայության մի համակարգ, որը հայտնի էր որպես *iškāru*: Տվյալներ կան նաև Ուրարտուում *ilku*-ծառայության կամ, համենայն դեպս, այնպիսի համակարգի գոյության մասին, որն իր բնույթով մոտ էր լինելու Ասորեստանում գործող *ilku*-ծառայությանը: Դա պայմանական հողատիրության ձև էր, իսկ հողատերերի հիմնական զանգվածը կազմել են զինվորականները:

Հայտնի է, որ Ասորեստանում դեռևս միջինասորեստանյան շրջանից սկսած *ilku*-ծառայության հետ էին կապված *ḫuradu*-կատեգորիայի անձինք: Ուրարտական պրոֆեսիոնալ զինվորականությունը մատնանշող $^{LÚ}$*ḫuradinili* տերմինի ի հայտ գալը $^{LÚ}$KUR.KUR$^{MEŠ}$ տերմինի փոխարեն կարող է մատնանշել, որ տվյալ դեպքում ևս գործ ունենք պետության հետ պայմանագրային հարաբերություններով կապված մի խավի հետ, ով պետությունից ստանում էր հող՝ «ավատ», և փոխարենը պետության համար կատարում ռազմական կամ այլ բնույթի ծառայություն:

[3317] Հմայակյան 2012, էջ 38:
[3318] Rainey 1965: 19.
[3319] Rainey 1965: 21.

Զինվորականության հետ կապված հիմնական խնդիրը վերաբերում է Սարդուրի Արգիշթորդու տարեգրության հատվածներից մեկի մեկնաբանությանը: Դա զինվորականների հսկայական թիվ մատնանշող KUKH, 241 G, CTU I, A 9-3 VII տեքստն է: Այդ մասին խոսվել է նախորդ գլուխներում: Ենթադրվում է, որ տեքստը վերաբերում է բնակչության տարբեր խավերի հարկերից և պարհակներից ազատելուն, այդ թվում՝ *šureli*-խավին: Համենայն դեպս՝ այդպես է տեքստը թարգմանվում ռուսալեզու հրատարակություններում[3320]: Միրյո Սալվինին ձեռնպահ է մնում տեքստի թարգմանությունը պայմանավորող մի քանի բառերը (*arda”e, isiuše, turubi*) իմաստավորելուց, գտնելով, որ առայժմ հնարավոր չէ տալ դրանց ճիշտ նշանակությունը[3321]:

Այստեղ նշենք միայն, որ մեզ հավանական չի թվում Իգոր Դյակոնովի կարծիքը, ըստ որի՝ տեքստում նշված զինվորականությունը դա այսպես կոչված *šureli*-խավն էր՝ երկրի ազատ, զենք կրելու իրավունք ունեցողների խավը: Այս մոտեցման հիմքում ընկած է երկու փաստարկ, այն, որ ուրարտական վաղ տեքստերում զինվորականությունը նշվում է $^{LÚ}$KUR.KUR$^{MEŠ}$ գաղափարագրերի համադրությամբ, իսկ KUR.KUR$^{(MEŠ)}$ գրությանը զուգահեռ հետագայում կիրառվում է $^{KUR}$*šureli* տերմինը, և երկրորդ, որ այդ տերմինը ծագում է ուրարտ. $^{(GIŠ)}$*šuri*՝ «զենք» բառից, ըստ այդմ, այստեղ խոսքը վերաբերում է զինվորականների կամ նրանց, ովքեր իրավունք ունեին զենք կրել[3322]:

Այս մոտեցումը թեև տրամաբանական է, սակայն, ընդունելի չէ մի քանի պատճառով: Առաջին պատճառն այն է, որ Մենուայից սկսած $^{LÚ}$KUR.KUR$^{MEŠ}$ գաղափարագրերի համադրության փոխարեն կիրառվում է պրոֆեսիոնալ զինվորականությանն արտահայտող $^{LÚ}$*ḫuradinili* ($^{LÚ}$A.SI$^{MEŠ}$) տերմինը: Երկրորդ, չպետք է մոռանալ, որ եթե KUR.KUR$^{MEŠ}$-ը և $^{KUR}$*šureli*-ն հավասարազոր են և կիրառվում են փոխարինաբար[3323], սակայն, որևէ օրինակ չունենք, որտեղ $^{LÚ}$KUR.KUR$^{MEŠ}$՝ «երկրների մարդիկ/աշխարհազոր»-ի դեպքում օգտագործված կլիներ $^{LÚ}$*šureli* գրությունը, այն է՝ խավ, մասնագիտություն ցույց տվող LÚ որոշիչով: $^{LÚ}$*šureli*-ի գրությունը երբեք չի հանդիպում: Իսկ դա ցույց է տալիս, որ ճիշտ չէ այն նույնացնել $^{LÚ}$KUR.KUR$^{MEŠ}$-ի հետ՝ դրանից բխող հետևություններով: Ըստ ամենայնի՝ $^{KUR}$*šurili*-ի առավել նպատակահարմար թարգմանությունը «տերություն»-ն է (համմտ. KUR.KUR$^{MEŠ}$-ի «երկրներ», «կայսրություն», «տիեզերք/ամբողջություն» նշանակությունները)[3324]: Ինչ

[3320] УКН I, 155 G; Дьяконов 1963a: 83, прим. 137; նույնի՝ 1963в: 56 сл.; КУКН 241 G. Տե՛ս և համմտ. նաև König 1957: 119sq. (Nr. 103, I-IV).
[3321] CTU I: 430.
[3322] Дьяконов 1963a: 82; նույնի՝ 1963в: 55 сл.; նույնի՝ 1988a: 59.
[3323] *E.g.* КУКН, 406, лиц. стор.$_{30}$; CTU I, A 11-2 Ro$_{30.}$ Համմտ. КУКН, 407, лиц. стор.$_{22-23}$; CTU I, A 11-1 Ro$_{21-22}$.
[3324] Համմտ. Дьяконов 1988a: 60.

վերաբերում է *šureli*-ի ծագմանը $^{(GIŠ)}$*šuri*-ից, ապա այստեղ նույնպես մեծ է անորոշությունը: Այս հարցերի շուրջն առկա է ընդարձակ գրականություն: Ամփոփ նշենք, որ առայժմ դեռ փաստարկված չեն $^{KUR}$*šureli*-ն որպես առանձին երկրանուն ընդունելու մասին կարծիքները[3325], որևէ տվյալ չկա, որը կվկայեր, որ *šureli*-ն եղել է ուրարտացիների (ուրարտախոս հանրության) էթնիկ անվանումը կամ որ այն կարող էր նշանակել այդ էթնիկ խմբի լեզուն[3326]: Ինչպես արդեն հայտնի է՝ հիերոգլիֆ լուվիերեն տեքստերում վկայված *su+ra/i-za* երկիրը[3327] դա ոչ թե Ուրարտուն է, այլ՝ Ասորեստանը[3328], իսկ *sù+ra/i-wa/i-ni-ti* կոչվող լեզուն[3329] կապ չունի $^{KUR}$*šurili*-ի հետ և վերաբերում է փյունիկերենին[3330]:

Իսկ ընդհանուր առմամբ՝ մեզ թվում է, որ Իգոր Դյակոնովի տեսակետը՝ Սարդուրի Արգիշթորդու տարեգրության քննարկվող հատվածը որպես նրա իրագործած ինչ-որ ռազմական բարեփոխում դիտելու մասին, կարող է մոտ լինել իրականությանը: Կարելի է կարծել, որ քննարկվող հատվածը վերաբերում է բանակի սպասարկմանը հատկացված պետական միջոցների թվարկմանը (տե՛ս վերը):

#### 4.2.3. «Սպասավորներ»-ը ($^{LÚ}$ ÌR/ERUM/$^{LÚ}$*bura*)

Ուրարտագիտական գրականության մեջ այս գաղափարագիրը սովորաբար թարգմանվում է «ստրուկ» նշանակությամբ[3331]: Սակայն, ինչպես վերը նշեցինք, Ուրարտուում ստրկական աշխատանք չի ենթադրվում, իսկ գաղափարագրի հիշատակումները վկայում են, որ գործ ունենք սոցիալական՝ ամենևին էլ ոչ ցածր աստիճանին գտնվող անձանց հետ: Դա է հուշում, մասնավորապես, Կարմիր բլուրից հայտնաբերված տեքստերից մեկը[3332], որտեղ հիշատակված երկու $^{LÚ}$ERUM-անձինք տիրել են հողերի[3333]: Այդ փաստը վկայում է, որ գործ ունենք ավելի շուտ «ծառաներ/սպասավորներ»-ի և ոչ թե՝ «ստրուկներ»-ի հետ: Այդ նույնը կարող ենք ասել ուրարտական տեքստերում նշված «սպասավորներ»-ի ամենամեծ խմբի մասին: Խոսքը վերաբերում է Սարդուրի Արգիշթորդու տարեգրության՝ վերը քննարկված հատվածին: Այստեղ հիշատակված 336 «սպասավորներ»-ը (ERUM$^{MEŠ}$), ինչպես կարծում ենք, կարող են հանդիսանալ բանակին ուղեկցող սպասարկող անձնակազմը (տե՛ս 2.3.7.5.):

---

[3325] Հմմտ. Մովսիսյան 1998բ, էջ 30-31; Payne, Ceylan 2003: 197f.
[3326] Дьяконов 1988a: 59 сл.; Diakonoff, Medvedskaya 1987: 393; Hawkins 2000: 126, 133; Rollinger 2006: 286, n. 29; etc. Հմմտ. Wilhelm 1993: 135 sqq.
[3327] Hawkins 2000: 124 (KARKEMIŠ A6, 3. § 6); Tekoğlu, Lemaire 2000 [2002]: 968: § VI.
[3328] Tekoğlu, Lemaire 2000 [2002]: 980f. and n. 23-24; Rollinger 2006: 286, n. 29.
[3329] Hawkins 2000: 131 (KARKEMIŠ A15*b*, 4. § 19).
[3330] Lanfranchi 2009: 131, n. 18.
[3331] КУКН, 155 $G_{11}$; Дьяконов 1963в: 58; КУКН, 241 $G_{11}$.
[3332] КУКН, 428, лиц. стор.; CTU IV, CT Kb-1 Ro.
[3333] Մեկնության համար տե՛ս Дьяконов 1963a: 43.

Թերևս պատահական չէ, որ որպես «սպասավորներ» հանդես եկող հիշյալ 336 անձինք կոչվում են $^{LÚ}$*ururdani*[3334]: Այս տերմինի հնարավոր ծագումը *ur*-՝ «անել, աշխատել, աշխատանք կատարել, ծառայել» բայից[3335] հուշում է, որ այստեղ գործ ունենք բանակի համար զանազան աշխատանքներ կատարող «ծառաներ/սպասավորներ»-ի խմբի հետ[3336]: Այստեղ տեսնել սոցիալական առանձին՝ «աշխատավորներ»-ի խավ, որոնց վրայից հանվել էին աշխատանքային պարիսկները և հարկերը[3337], մեզ հավանական չի թվում, եթե հաշվի առնենք նրանց խիստ սահմանափակ քանակը: Շատ ավելի անհավանական է այստեղ ուրարտացիների էթնիկ անվանումը տեսնելու տեսակետը[3338]:

### 4.2.4. Իշխող և ծառայող խավերի անդամների թիվը

Ռուսախինիլի Կիլբանիկայիի անձնակազմին վերաբերող տեղեկությունները կարող են հիմք հանդիսանալ պատկերացում կազմելու համար նաև մյուս ուրարտական կենտրոններում գործող վարչակազմի և պետության հետ կապված խավերի կամ նրանց թվի մասին: Ինչ խոսք, տեղին չէ Ռուսախինիլի Կիլբանիկայիի հետ կապված անձնակազմի թիվը՝ շուրջ 5500 հոգի, մեխանիկորեն վերագրել նաև մյուս ուրարտական կենտրոններին, առավել ևս, եթե հաշվի առնենք Ռուսախինիլիի մերձավորությունը Տուշպային: Մյուս կողմից, չի կարելի բացառել և նման հնարավորությունը՝ յուրաքանչյուր խոշոր կենտրոնի համար ենթադրելով, օրինակ, այդ կենտրոնի հետ կապված շուրջ 2-3 և մինչև 4-5 հազ-ի հասնող «բնակչություն»:

Այստեղ հետաքրքիր կլինի նշել, որ Ռուսախինիլի Կիլբանիկայիի՝ շուրջ 5.5 հազ-ոց անձնակազմին մոտ թիվ է ենթադրվում Կալխուի պալատական տնտեսության անդամների համար՝ մոտ 6 հազ. մարդ[3339]: Էբլայում պալատի հետ կապված մարդկանց թիվը կազմում էր 11 հազ. 700 հոգի, որոնցից 4700-ը ստացել են օրապահիկ պալատից, մնացյալ 7 հազ-ը՝ ապրել տրված հողերից ստացված միջոցներով[3340]: Կնոսսոսից հայտնի տեքստերը նշում են 2 հազ-ից ավելի մարդու օրապահիկ տալու մասին[3341]: Պիլոսում պետական մատակարարումների կամ պետության տրամադրած հողերից ստացվող միջոցների հաշվին պահվել է ավելի քան

[3334] КУКН, 241 $G_{11}$; CTU I, A 9-3 $VII_{11}$.
[3335] Дьяконов 1988a: 64, прим. 12; Diakonoff 1991: 20; Арутюнян 2001: 473. Հմմտ. Salvini, Wegner 2014: 115.
[3336] Տե՛ս և հմմտ. նաև König 1957: 208 („Beamte“).
[3337] Дьяконов 1988a: 64, прим. 12.
[3338] Мещанинов 1924: 19 сл.; Ղափանցյան 1940, էջ 133:
[3339] Kinnier-Wilson 1972: 1, 116ff.
[3340] Hiller 1988: 63.
[3341] Godart 1968: 63.

4100 մարդ[3342]: Այստեղ նշենք, որ Էբլայի թագավորության բնակչությունը ենթադրվում է մոտ 260 հազ. մարդու սահմաններում[3343], Կնոսսոսի բնակչության թիվը՝ 14-18 հազ.[3344], առնվազն մոտ 50 հազ-ի է հասել Պիլոսի բնակչությունը[3345]:

Սա հետաքրքիր է այն առումով, որ պայմանական ասած «պետական ծառայողներ»-ի թիվն Էբլայում կազմել է ողջ բնակչության 4.5 տոկոսը, Կնոսսոսում՝ բնակչության 11.1-ից մինչև 14.3, իսկ Պիլոսում՝ 8.2 տոկոսը: Կարելի է մտածել, որ վերաբաշխման համակարգի վրա հիմնած տնտեսություններում պետության հետ կապված և նրանից օրապահիկ և/կամ հողատարածք ստացած խավերի անդամների թիվը սովորաբար չէր գերազանցելու երկրի ողջ բնակչության 10 տոկոսը, իսկ ընդարձակ և բազմամարդ երկրների համար ենթադրելի է 5 տոկոսի սահմաններում:

Դատելով Ռուսախինիլի Կիլբանիկայիի անձնակազմի թվից և կազմից, ինչպես նաև ուրարտական կենտրոնների նյութական հնարավորություններից (տե՛ս վերը)՝ կարելի է խոսել տաճարի/պալատի հետ կապված և պետական մատակարարումներ կամ պետական հող ստացող շուրջ 15-20 հազ. մարդու մասին: Նրանց թվում կարելի է ենթադրել մինչև 8-10 հազ. ազնվականների և նույն քանակությամբ այլ ծառայողների: Մշտական բանակի և կայազորային զորքերի հետ այդ թիվը կարող էր հասնել ընդհուպ մինչև 60 հազ-ի: Դա կարող էր կազմել ուրարտական պետության բնակչության մոտ 6 տոկոսը (տե՛ս վերը 1.3):

### 4.3. «Կախյալներ»-ի խավը

Նորանվաճ տարածքներում որպես աշխատուժ էին ծառայում գերեվարությունների ժամանակ ձեռք բերված կանայք և «պատանիներ»-ը: Վերջիններիս հնարավոր բնորոշումը որպես $^{\text{LÚ}}$ÉŠ.GÀR$^{\text{(MEŠ)}}$ կարող է վկայել, որ նրանք դիտվել են ինչ-որ խմբի, ինչպես թվում է՝ պետական տնտեսության/հողերի աշխատողներ/հողագործներ (*iškāru*-աշխատանք կատարողներ) և հիմնականում բնակեցվել են գյուղական միջավայրում:

Այս նույնը կարող է վերաբերել գերեվարված կանանց մեծ մասին: Վերջիններս ուրարտական տեքստերում հիշատակվում են համապատասխանաբար $^{\text{(MUNUS)}}$*lutu(ni)*$^{\text{(MEŠ)}}$ և $^{\text{LÚ/MUNUS}}$*ïediani*$^{\text{(MEŠ)}}$ բառերով: Դրանցից առաջինը նշանակում է պարզապես «կին»: Այն հանդես է գալիս տարեգրություններում և հանդիսավոր արձանագրություններում, երբ խոսքը վերաբերում է «տղամարդ և կին» գերեվարելուն

[3342] Hiller 1988: 60ff.
[3343] Pettinato 1981: 44, 133f.
[3344] Whitelaw 2004: 153.
[3345] Hiller 1988: 61ff.

ընդհանրապես ($^{(LÚ)}$*’aše* $^{MUNUS}$*lutu*$^{(MEŠ)}$ *parubi/šiubi/agubi*)[3346]: $^{LÚ/MUNUS}$*ïediani*-ի տերմինը հանդիպում է հիմնականում թվական տվյալներ պարունակող կոնտեքստներում (տե՛ս Աղ. 28): Տարօրինակ է սակայն, որ այս տերմինի կիրառության քառասուն դեպքերից երեսուներեքում այն հանդես է գալիս LÚ (իմա՝ «մարդ, տղամարդ», ինչպես նաև մասնագիտության ցուցիչ) որոշիչով, մինչդեռ՝ մնացած դեպքերում դրվել է MUNUS (իմա՝ «կին») որոշիչը[3347]: Նման երևույթ $^{MUNUS}$*lutu(ni)* բառի հետ չի նկատվում[3348]: Սա կարող է հուշել, որ $^{LÚ/MUNUS}$*ïediani*-կանայք ընկալվել են պարզապես որպես աշխատող ուժ[3349], և թերևս պատահական չէ, որ առաջին անգամ $^{LÚ/MUNUS}$*ïediani* տերմինը հիշատակվում է հենց այն նույն կոնտեքստում, նույն արձանագրության մեջ, որտեղ և՝ վերը քննարկված $^{LÚ}$ÉŠ.GÀR$^{(MEŠ)}$-ը[3350]: Ըստ այդմ, միանգամայն հավանական է ուրարտ. $^{(LÚ)}$*ubše* ($^{LÚ}$ÉŠ.GÀR) և $^{LÚ/MUNUS}$*ïediani* տերմինների մեջ տեսնել այն նույն նշանակությունը, ինչ շում. guruš-ը և geme$_2$-ն՝ «կախյալ տղամարդ աշխատավոր» և «կախյալ կին աշխատավոր» իմաստով:

Ըստ այդմ, կարելի է կարծել, որ նշված «պատանիներն» ու «կանայք» չեն համարվել ստրուկներ, թեև իրենց կարգավիճակով գտնվել են ավելի ցածր աստիճանին, քան բիայնացիների իշխանության տակ հայտնված նվաճված տարածքների բնակչությունը: Ինչպես թվում է՝ սահմանափակվել է նրանց տեղաշարժը: Միաժամանակ, հնարավոր է, որ նրանց մի մասին իրավունք է տրվել ունենալու տուն և կազմելու ընտանիք՝ իրենց պահելով ստացված բերքի մի մասը որպես գոյության միջոց[3351]: Սա կարող էր վերաբերել «աղեղի», «ձիու» կամ «մարտակառքի հող»-ին ամրացված կախյալներին:

Ուրարտուում «կախյալներ»-ի գոյության մասին հետաքրքիր տեղեկություն է պահպանվել ասորեստանյան աղբյուրներից մեկում: Դա նահանգապետ Շարրու-էմուրանիի նամակն է ուղղված ասորեստանյան արքային: Նամակում նա հայտնում էր Սիպպարում 70 ուրարտացի զինվորների (ERÍM.MEŠ) վերաբնակեցնելու մասին՝ իրենց «կախյալներ»-ի հետ միասին (տեքստում՝ ZI.MEŠ, բառացի՝ «հոգիներ»): Ընդ որում, հետաքրքիր է, որ «կախյալներ»-ից տասը դիմել էին փախուստի[3352]:

---

[3346] КУКН, 174 A2$_{13}$; CTU I, A 8-5 Vo$_{13}$ ևն:

[3347] Հղումների համար տե՛ս КУКН, с. 470; CTU II: 223f.

[3348] Հղումների համար տե՛ս КУКН, с. 453; CTU II: 142f.

[3349] Նման հնարավորության մասին տե՛ս նաև Hoffman 1978: 65f. Քննարկումների համար տե՛ս նաև Çavuşoğlu *et al.* 2014: 236ff.

[3350] КУКН, 31, лиц. стор.$_{36}$, обор. стор.$_{16}$; CTU I, A 3-4 Ro$_{35'}$, Vo$_{15'}$.

[3351] Այս առումով հմմտ. «մշակներ»-ի կարգավիճակը Հին Հայաստանում: Տե՛ս Սարգսյան 1962, էջ 88-92:

[3352] Fuchs, Parpola 2001, No. 232. Հաշվի առնելով, որ նամակի հեղինակը Շարրու-Էմուրանին էր, ով, մեր կարծիքով, անմիջական մասնակցություն է ունեցել դեպի Ուրարտու ասորեստանյան արքա Սարգոն II-

Իրենց կարգավիճակով «պատանիներ»-ը և LÚ/MUNUS*ïediani*-կանայք, ամենայն հավանականությամբ, դիտարկվել են որպես պետական սեփականություն[3353]: Այս առումով նրանք նմանվել են *šiluḫlu*-կախյալներին կամ «ճորտեր»-ին[3354]՝ միջինասորեստանյան դարաշրջանում, որ վկայված են դեռևս Նուզիի տեքստերում (հմմտ. *šelluḫlu*-խմբի մարդիկ Նուզիում[3355]), և NAM.RA (*arnuwalaš*)-խմբի մարդկանց (վերաբնակիչներ, ռազմագերիներ ևն)՝ խեթական տերության գոյության շրջանում[3356]: Նորասորեստանյան շրջանի համար այս խավի մարդիկ են, ամենայն հավանականությամբ, հանդես գալիս *ālû* անունով[3357]: Այստեղ տեղին է հիշել նաև Սպարտայի նվաճյալ բնակչության՝ հելոտների կարգավիճակը[3358]:

Իսկ այն խմբերին, որոնք ամրացվել են անմիջապես պալատին սպասարկող հողերին և ընդհանրապես՝ կապել պալատական տնտեսության հետ, նրանց, հնարավոր է, ներքինացրել են: Թերևս պատահական չէ, որ Թոփրաքքալեի տաճարային համալիրի անձնակազմը թվարկող տեքստում, ուր հիշատակվում են ավելի քան 3 հազ. 784 ներքինիներ, միաժամանակ նշվում է, որ նրանցից 2411-ը «պատանի» էին: Վերջիններս, կարելի է ենթադրել, զուրկ են եղել որևէ միջոցից և կենտրոնից ստացել են միայն օրապահիկ: Նրանք իրենց աշխատանքային շաբաթն ամբողջությամբ անցկացրել են պետության համար աշխատելով այն դեպքում, երբ կենտրոնից հեռու ընկած գյուղական միջավայրում տեղաբաշխված կախյալների աշխատանքային շաբաթվա մոտավորապես 3/7-րդ մասը կարող էր ծախսվել սեփական կարիքները հոգալու համար[3359]:

Այս նոր հողերին ամրացված «պատանիներ»-ը ապահովելու էին տիրոջ և նրա ընտանիքի կարիքները, անհրաժեշտության դեպքում պետությունը, հնարավոր է, օգտագործել է նրանց խոշոր շինարարական կամ այլ բնույթի աշխատանքներում:

---

ի ձեռնարկած արշավանքին, ապա կարելի է ենթադրել, որ տեքստում նշված ուրարտացի զինվորները և նրանց «կախյալներ»-ը ռազմագերիներ էին:

[3353] Այստեղ տեղին է նշել, որ *iškāru*-կատեգորիայի հետ կապված միջոցները որպես պետական սեփականություն է դիտում նաև Նիկոլաս Փոսթգեյթը: Տե՛ս Postgate 1974: 107; նույնի՝ 2010: 24. Միկենյան հնարավոր զուգահեռի համար տե՛ս Hiller 1988: 55f.

[3354] Postgate 2008a: 88f.; Wiggermann 2000: 174.

[3355] Fincke 1994: 339ff.; Fadhil, Radner 1996: 427, Anm. 49.

[3356] Götze 1957: 106; Дьяконов 1968в: 26 сл.; Klengel 1986: 28ff.; Bryce 2002: 77f.; Hoffner 2002: 61ff.

[3357] Նման հնարավորության համար տե՛ս Fadhil, Radner 1996: 425f. Նորբաբելոնյան շրջանի համար որպես զուգահեռ, միգուցե, կարելի է նշել *širku*-ն: Տե՛ս և հմմտ. Kleber 2011: 104ff. Հմմտ. նաև Дьяконов 1949: 100 сл

[3358] Grekyan 2009: 99. Հելոտների խավի համար տե՛ս Cartledge 2002: 138ff. Հին Առաջավոր Ասիայում այս խավի բնորոշումը որպես «հելոտներ»-ի կիրառում է Իգոր Դյակոնովը: Մանրամասն տե՛ս Дьяконов 1973a: 11 сл., 17 сл. (նշվ. գրականությամբ); նույնի՝ Дьяконов 1983г: 57.

[3359] Նման հաշվարկի համար տե՛ս և հմմտ. Wiggermann 2000: 194.

Նրանց քանակը համալրվել է նոր գերեվարությունների, ինչպես նաև բնական աճի հաշվին, քանի որ քիչ է հավանական ենթադրել, որ բոլոր գերիներին անխտիր ներքինացրել են (տե՛ս վերը):

Ուրարտական մի քանի արձանագրություններում նշվում է «մնացած տղամարդկանց զինվորներին տալու» մասին (*ali ’aše manu arubi* $^{LÚ}$*ḫuradinaïe*$^{MEŠ}$)[3360]: Կարելի է մտածել, որ վերջիններս համարվել են ոչ թե ստրուկ և վաճառվել ստրկավաճառական շուկաներում, ինչպես կարծում էին նախկինում[3361] և ինչը տեսնում ենք, օրինակ, Բաբելոնիայում[3362], այլ տրվել զինվորներին որպես նրանց հողերի աշխատող ձեռք: Կարծում ենք, որ այս նույնը վերաբերում է նաև գերեվարված կանանց: Ուրարտական տեքստերից մեկում նշվում է տղամարդկանց հետ միասին նաև կանանց զինվորներին տալու մասին (*šeri ’aše* $^{SAL}$*lutu* $^{LÚ}$A.SI$^{MEŠ}$*-ïe arubi*)[3363]: Իշպուինիի և Մենուայի շրջանին պատկանող երկու տեքստերում կարծես թե նշվում է գերեվարված կանանց ինչ-որ արտոնյալ համայնքի, տվյալ դեպքում՝ տուշպացիներին (բառացի՝ «Տուշտա (քաղաքի) տղամարդկանց» (?)) տալու մասին (*kamni* $^{LÚ}$*ïediani ’ašiniei* $^{URU}$*ṭušpai* (URU) *manu inini gurdari*)[3364]: Հնարավոր է, այդ մասին է խոսվում նաև Մենուայի Գործոթի ընդարձակ արձանագրության մեջ[3365]: Հողային կամ շինարարական աշխատանքներում կանանց ներգրավումն ամենևին տարօրինակ չէ և վկայված է տարբեր դարաշրջանների սեպագիր աղբյուրներում, ինչպես, օրինակ, Ուրի III հարստության կամ միջինասորեստանյան շրջանում էր[3366]: Միջինասորեստանյան տեքստերից հայտնի է, որ կանայք ևս կատարել են *iškāru*-աշխատանք[3367]: Ուրարտական տեքստերից մեկը նույնպես վկայում է կանանց՝ հողային/այգեգործական աշխատանքներ կատարելու մասին (*…ui gi ištini šidauri* $^{LÚ}$*ïediani parubi erṣedubi ištinini*)[3368]: Այս առումով չափազանց ուշագրավ է նաև Կարմիր բլուրից հայտնաբերված սեպագիր աղյուսակներից մեկի տեղեկությունն այն մասին, որ արքան հետ է վերցրել ոմն հացթուխ Մուիդային որպես կին տրված մի կնոջ ($^{SAL}$*sila šusie*) և նրան

[3360] Տե՛ս, օրինակ, КУКН, 44, верх. стор.$_{14-15}$, лиц. стор.$_{8}$; CTU I, A 5-9 f. s.$_{14-15}$. A 5-9 f. f.$_{8}$. Տե՛ս նաև A 18-4 Ro$_{7'-9'}$.

[3361] Տե՛ս և հմմտ. նաև Меликишвили 1951a: 37.

[3362] Dandamayev 2004: 139; նույնի՝ 2009: 107ff.

[3363] КУКН, 241 F$_{28}$; CTU I, A 9-3 VI$_{28}$.

[3364] КУКН, 31, лиц. стор.$_{40-43}$, обор. стор.$_{19-21}$, 35, обор. стор. Текст III$_{36-38}$; CTU I, A 3-4 Ro$_{39'-41'}$, A 3-9 Vo$_{36-38}$.

[3365] CTU I, A 5-2A-F$_{5-6}$. Հմմտ., սակայն, արձանագրության այդ հատվածին Միրյո Սալվինիի թարգմանությունը, ըստ որի, խոսքն այստեղ վերաբերում է Տուշպայի արքունի հարեմ կանանց բերելու մասին (CTU I: 188f.): Տե՛ս նաև Çavuşoğlu *et al*. 2010: 159.

[3366] Дьяконов 1968в: 11 и прим. 42; նույնի՝ 1983б: 270 сл.; Gelb 1973: 81ff.; McC Adams 2010: 2f.; MacGinnis 2012b: 13ff. Միկենյան աշխարհի համար տե՛ս Palaima 2004: 285.

[3367] Postgate 2001: 378; նույնի՝ 2008a: 88.

[3368] CTU I, A 5-24 Vo$_{6-11}$.

տվել/վերադարձրել մեկ ուրիշ հացթուխի՝ ոմն Ալուանիին[3369]: Սա կարող է վկայել, որ տվյալ կինը դիտվել է իբրև պետական սեփականություն և որի ճակատագիրը տնօրինել է արքան, իմա՝ պետությունը: Ի դեպ, ամենևին չի բացառվում, որ այդ կանայք Ուրարտուում ևս կոչվեին *alaḫḫinnu* կամ դրա նմանությամբ, որից և հայերենի «աղախին»-ը[3370], ինչպես նրանց անվանում էին Միտաննիում, Արրապխեում և միջինասորեստանյան թագավորության մեջ[3371]: Այս տերմինը սովորաբար թարգմանվում է որպես «հացթուխ»[3372], և թերևս ատահական չէ, որ հենց հացթուխներ են հանդես գալիս վերը հիշատակված սեպագիր աղյուսակում:

Այստեղ նկատենք, որ ռազմագերիներին զինվորների միջև բաժանելու երևույթը նորություն չէր: Օրինակ, տաճարներից զատ ռազմագերիներին զինվորների միջև բաժանելու փաստը վկայված է դեռևս Մարիի տեքստերում[3373]: Խեթական բանակի կառամարտիկ և հետևակային զինվորներին ռազմագերիներ տալու մասին հայտնի է խեթական տեքստերից[3374]: Իր արձանագրություններից մեկում ասորեստանյան արքա Շամշի-Ադադ V-ը հայտնում է գերված ռազմիկներին «ինչպես մորեխներ»-ի իր երկրի զինվորներին տալու մասին[3375]: Դեպի Շուբրիա իրագործված հաղթական արշավանքից հետո գերիներին «ինչպես ոչխարների և այծերի» ազնվականությանն ու ասորեստանյան խոշոր քաղաքների բնակչությանը բաժանելու մասին է հայտնում Ասսարհադդոնը[3376]: Ասորեստանյան բարձրաքանդակներում հաճախ հանդիպող մոտիվներից մեկը՝ գերիների խմբի ուղեկցող ասորեստանյան զինվորի պատկերումով, կարող է վերաբերել նրան բաժին հասած գերիներին՝ իբրև մասնաբաժին ընդհանուր ավարից[3377]:

Ի դեպ, եթե հայացք նետենք Արտաշեսյան Հայաստանում ավատատիրության վաղ դրսևորումներին և «ագարակատերեր»-ի դասին՝ դրանցում աշխատող «մշակներ»-ի խավով[3378], ապա կտեսնենք բազում ընդհանրություններ ուրարտական հողատիրության հետ: Արդյո՞ք սա վկայում է, որ հին Հայաստանում հողատիրության ձևերը ժառանգվել էին Ուրարտուից, թե՞ այն կարող էր ձևավորված լինել

[3369] КУКН, 433; CTU IV, CT Kb-3.
[3370] Diakonoff 1985a: 598; Greppin, Diakonoff 1991: 728.
[3371] Postgate 2010: 21ff.; Jacob 2003: 386sqq.
[3372] Jacob 2003: 391ff.
[3373] Richardson 2011: 30. Հմմտ. նաև Vidal J. 2010a [2011]: 719ff. Ուգարիթում ռազմագերիների կարգավիճակի մասին:
[3374] Hoffner 2002: 63.
[3375] Grayson 1996: 188 (A.0.103.1 iv 34-36).
[3376] Leichty 2011, No. 33 iii $_{21'-22'}$.
[3377] Nadali 2014: 109.
[3378] Տե՛ս Սարգսյան 1962, էջ 87-94; նույնի՝ 1965, էջ 62-65: Քննարկումների համար տե՛ս և հմմտ. նաև Մանանդյան 1934, էջ 157-158; Սամուելյան 1937, էջ 105-108:

աքեմենյան/միջագետքյան հողատիրական համակարգի ազդեցությամբ: Գերադասելին, երևի թե, երկրորդ տարբերակն է: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ աքեմենյանների օրոք Միջագետքում գործող հողատիրության հին համակարգը պահպանվել էր նույնությամբ[3379]: Բացի դա, հայերենում «մշակ» բառը կարող է լինել փոխառություն աքքադերենից[3380] (հմմտ. աքք. *muškēnu(m)*-ը՝ «արքայական (տնտեսության) աշխատող», «(հողին ամրացված) հողագործ»[3381]), իսկ «մուշկենումներ»-ի խավը սիրիա-միջագետքյան աշխարհում ձևավորվել էր կապված *ilku(m)*-ծառայության հետ[3382]: Ի դեպ, «մուշկենում» տերմինը հանդիպում է նաև «Աստվածաշնչում» (*ʻarēy misknōṯ*)[3383], որի համար հայերեն թարգմանությունը տալիս է «Եւ կացոյց ի վերայ նոցա գործավարս, *զի չարչարեսցեն զնոսա ի գործ*» միտքը[3384]:

Այսպիսով, ամփոփելով բաժինը, կարելի է նշել, որ ուրարտական պալատական/տաճարային տնտեսության հիմնական արտադրող խավը եղել են հողին նստեցված «կախյալներ»-ը կամ «պետական ճորտեր»-ը: Ստրկական ուժի կիրառություն Ուրարտուում մենք չենք տեսնում:

### 4.4. «Հպատակների խավ»-ը

#### 4.4.1. Տեղական բնակչությունը

Բիայնական պետության ներկայությունը այս կամ այն տարածքում վկայված է գերազանցապես նորակառույց ամրոցներով՝ կառուցված երկրագործական բարենպաստ պայմաններ ունեցող գոտիներում: Այդ գոտիները ներառվում էին ուրարտական պետական տնտեսական տարածքի մեջ և վերաձևավորվում՝ իշխողների հաստատած նոր հողային հարաբերություններին և տնտեսության կազմակերպման ձևերին համապատասխան:

Որոշ տվյալներ թույլ են տալիս ենթադրելու, որ անգամ Վանա լճի ավազանի բնակչությունը ստիպողաբար է ներառվել նոր հարաբերությունների մեջ: Դրա ապացույցն է տեղի վաղերկաթեդարյան բնակավայրերի մի մասի ավերումը բիայնացիների կողմից: Մյուս կողմից, պնդել, թե տեղի ողջ բնակչությունը վեր է ածվել կախյալների՝ չի կարելի: Տուշպան կարող է լինել տեղի բնակչության և եկվոր

---

[3379] Բաբելոնիայում աքեմենյան շրջանի հողատիրության համար տե՛ս Briant 2002: 401f., 417ff. Այստեղ տեղին է հիշել նաև *kurtaš*-ների խավը Աքեմենյան տերության մեջ: Տե՛ս և հմմտ. Briant 2002: 429ff.

[3380] Еремян 1950: 25. Հմմտ., սակայն, այս տերմինի կովկասյան ծագման հնարավորությունը: Տե՛ս Աճառյան 1977, էջ 335:

[3381] Speiser 1958: 19ff., esp. 27f.; Дьяконов 1956б: 37 сл.; նույնի՝ 1968в: 13 сл., 36 сл.; Yaron 1988: 132ff.

[3382] Greengus 1995: 476f.; Հմմտ. CAD, M II, 1977: 272ff. (*muškēnu* 1.); von Dassow 2011: 213ff.; նույնի՝ 2014a: 291ff.

[3383] Speiser 1958: 27, n. 3.

[3384] Ելից Ա, 11:

բիայնացիների միջև փոխզիջումների հասնելու օրինակներից մեկը (տե՛ս ստորև): Կարելի է մտածել, որ տեղի համայնքների մի մասը, այս կամ այն գործոնով պայմանավորված, այնուամենայնիվ պահպանել է իր համայնական կառույցը և ներքին ինքնավարությունը, փոխարենը՝ պետության հետ կապվել ինչ-ինչ պարտավորություններով: Նման համայնքների հիմնական խնդիրը համայնքին մոտ ընկած կամ համայնքի բնակավայրին կից կառուցված ուրարտական ամրոցի տնտեսական ապահովումն էր: Որոշ համայնքներ նույն խնդիրն ունեին պայմանական հողատիրության իրավունքով բիայնական իշխող և ծառայող խավերին տրված հողերը մշակելու առումով: Հավանաբար, նման համայնքներն են՝ «քաղաքներ»-ը (URU), որ երբեմն հիշատակվում են այս կամ այն բիայնացու «տան» (É) հետ միասին (տե՛ս 3.3.1.6.):

Նույնը վերաբերում է այն տարածքներին, որոնց բնակչությունը բիայնական նվաճումից հետո թողնվել է տեղում: Նման տեղեկություն է հայտնում Արգիշթի Մենուայորդու տարեգրությունը: Դեպի Դիաուխի ձեռնարկված արշավանքներից մեկի նկարագրության մեջ նշվում է երեք երկրներ «այդտեղից պոկելու (՞)» (3 $^{KUR}$*e-ba-ni-*[*e-li e-d*]*i-ni su-ṭu-q*[*u*]*-b*[*i*]) և «բնակչությամբ հանդերձ իմ երկրին» ավելացնելու մասին ($^{LÚ}$*ta-ar-šú-a-*[*na-ra-a*]*-ni a-bi-li-du-ú-*[*bi*] ⌜$^{KUR}$⌝*e-ba-ni-*⌜*ú*⌝*-k*[*i-e-di*])[3385]: Հետաքրքիր է, որ այստեղ չի նշվում բնակչությանը «գերի տանելու» կամ «քշելու» մասին, փոխարենը՝ «բնակչությամբ հանդերձ իմ երկրին» ավելացնելու մասին միտքը հուշում է, որ տվյալ դեպքում բնակչությունը թողնվել է տեղում, պահպանվել է համայնական կառույցը, միաժամանակ, նրանց վրա դրվել են հարկային և աշխատանքային պարտավորություններ: Իրենց կարգավիճակով նրանք նույնացվել են «հպատակների խավ»-ին:

Իրենց կարգավիճակով «հպատակներ»-ի խավին կարելի է դասել նաև ուրարտական պետական տնտեսական տարածքից դուրս ընկած երկրների կամ համայնքների բնակչությանը: Ինչպես ենթադրում ենք՝ բիայնացիները չեն փորձել այդ տարածքներում հասնել տոտալ վերահսկողության, չեն փորձել ներդնել այն հողային հարաբերությունները, ինչը ենթադրում ենք ուրարտական պետական տնտեսական տարածքի համար: Ուրարտական գերիշխանության տակ ընկած համայնքը պահպանել է իր ինքնակառավարման համակարգը, վարել սեփական տնտեսություն[3386], իսկ բիայնական գերիշխանության հանդեպ դիրքորոշումն արտահայտվել է լոյալությամբ և հարկեր վճարելով:

[3385] КУКН, 174 B1$_{x+8-11}$; CTU I, A 8-2 Vo$_{8'-11'}$.

[3386] Հինարևելյան համատեքստում քննարկումների համար տե՛ս և հմմտ. Дьяконов 1963б: 31 сл.; նույնի՝ 1967: 22 сл.; Меликишвили 1975: 29 сл.; ինչպես նաև Oded 1979: 91ff.

### 4.4.2. Վերաբնակիչները

Բնակչության տեղահանության և վերաբնակեցումների քաղաքականությունը լայնորեն կիրառվում էր հատկապես նորասորեստանյան իշխողների կողմից: Տարբեր հաշվարկների համաձայն՝ նորասորեստանյան շրջանում վերաբնակեցվել է 1.3 մլն-ից մինչև 4-5 մլն մարդ: Ասորեստանյան արքա Թիգլաթպալասար III-ի՝ մեզ հասած տեքստերից դատելով՝ միայն այս արքայի օրոք վերաբնակեցվել է նվազագույնը մոտ 400 հազ. մարդ[3387]: Նրանց մի զգալի մասը բնակեցվում էր քաղաքներում կամ հաստատվում էին նոր հիմնադրված գյուղական բնակավայրերում: Վերաբնակիչներին տրվում էին որոշակի արտոնություններ: Ասորեստանյան բարձրաքանդակներում հաճախ կարելի է հանդիպել տեղահանված և վերաբնակեցվող ընտանիքների պատկերների (նկ. Դ-15/1-2):

Վերաբնակիչների համայնքը, հաստատվելով նոր հողերում, բայց, հիմնականում, օտար միջավայրում, կապվում էր պետության և հետ և շահագրգիռ էր այդ պետության իշխանության՝ գոնե միառժամանակյա հարատևությամբ: Մյուս կողմից, պետությունը շահագրգիռ էր վերաբնակեցված համայնքի բարօրությամբ՝ նպատակ ունենալով հասնել նոր հողերի յուրացմանը: Պատահական չէ, որ ասորեստանյան իշխանությունները հետևում էին, որ վերաբնակեցումները կատարվեն նվազագույն կորուստներով, ապահովվեն նրանց սննդի և ջրի կարիքները, խստորեն հետևում էին վերաբնակիչներին տրվող պետական օժանդակության ճշգրիտ բաշխմանը, նոր կացարանների կառուցմանը ևն[3388]:

Նստակյաց բնակչության դերակատարությունը պետության մատակարարման և պաշտպանության գործում շատ ավելի մեծ էր, քան կիսաքոչվոր կամ քոչվոր բնակչությանը, իսկ մյուս կողմից՝ կենտրոնական իշխանությունների համար ավելի դյուրին էր նրանց պահել վերահսկողության տակ[3389]:

Ի տարբերություն Ասորեստանի՝ Ուրարտուում նպատակային վերաբնակեցումները կարծես թե եզակի էին: Առկա են ընդամենը մի քանի փաստ, որոնք թույլ են տալիս մտածելու, որ տվյալ դեպքերում նվաճված համայնքը տեղահանվել և վերաբնակեցվել է տերության այլ տարածքում պահպանելով համայնքի ամբողջականությունը:

Դա է հուշում նաև Մենուա Իշպուինորդու թողած Յազըլըթաշի արձանագրությունը, ուր խոսվում է երկու արքաների տեղահանելու (՞) մասին (2

[3387] Oded 1979: 19ff. and n. 5.
[3388] Մանրամասն տե՛ս Oded 1979: 22ff., 33ff. Տե՛ս և հմմտ. նաև Nadali 2014: 105f.
[3389] Taffet, Yakar 1998: 136.

MAN$^{MEŠ}$-*li-li e-di-ni su-ṭu-qu-*⌜*ú*⌝*-bi*)[3390]: Կարելի է կարծել, որ խոսքը վերաբերում է այդ արքաների առաջնորդած համայնքներին: Ինչպես երևում է՝ վերաբնակիչներն իրավունք են ունեցել իրենց հետ տանելու իրենց շարժական գույքը: Հետաքրքիր է, որ վերը նշված հատվածում օգտագործվում է *suṭuqu-* բայը: Այն խորհրդային շրջանի ուրարտագիտական աշխատանքներում թարգմանվում է «պոկել» իմաստով[3391]: Թերևս, «պոկել» ասելով հասկացվել է բնակչության տեղահանությունը՝ իր ունեցվածքով:

Նման երկրորդ վկայությունը վերաբերում է Արխի երկրին: Արգիշթի Մենուայորդու տարեգրության պակասավոր հատվածներից մեկում տեղեկություն կա Արխի երկրի 60 «քաղաքներ»-ի բնակչությանը վերաբնակեցնելու (՞) մասին (60 URU$^{MEŠ}$-*e* $^{LÚ}$UN$^{MEŠ}$-*ra-*[*ni e-di-ni* (?) *ta*]*-áš-*⌜*mu-ú*⌝*-bi*)[3392]: Այստեղ օգտագործված *tašmu-* բայը կարելի է թարգմանել «տեղահանել/վերաբնակեցնել» նշանակությամբ[3393]: Այստեղից էլ, թերևս, $^{LÚ}$*tašmuše* գոյականը՝ «տեղահանված/վերաբնակիչ»[3394]:

Նվաճված երկրից բնակչությանը տեղահանելու և վերաբնակեցնելու վերջին վկայությունը հայտնի է Սարդուրի Արգիշթորդու տարեգրությունից: Տարեգրության հատվածներից մեկում նշվում է խուշայցիների համայնքի առաջնորդ Խախային իր ժողովրդով տեղահանելու և «իմ երկրում» վերաբնակեցնելու մասին[3395]: Այն, որ այստեղ խոսքը վերաբերում է բնակչությանը իր ունեցվածքով/շարժական գույքով վերաբնակեցնելու մասին, կարելի է դատել նաև տարեգրության մեկ այլ հատվածից: Այստեղ նշվում է Էրիախի երկրի 250 ամբարները գրավելու և տեղահանելու մասին: «Տեղահանել» (իմա՝ «տեղափոխել») իմաստով օգտագործվել է այդ նույն՝ *tašmu-* բայը[3396]:

Այս օրինակները համադրելի են ասորեստանյան արձանագրություններում հանդիպող տեղեկություններին՝ նվաճված երկրի բնակչությանը իր ունեցվածքով տեղահանելու և «իմ երկրի մարդիկ» համարելու (*ana nišē*(UN.MEŠ) *mātīya*(KUR-*ia*) *amnu*[3397]) կամ «Ասորեստանի ժողովրդին հավելելու» (*…itti nišē māt*(KUR) *aššur amnūšunūti*[3398]) մասին[3399]:

---

[3390] КУКН, $53_{24}$; CTU I, A $5\text{-}3_{24}$.
[3391] König 1957: 200; Меликишвили 1960: 405; КУКН: 461. Հմմտ. CTU I: 331.
[3392] КУКН, 173 $III_{35}$; CTU I, A 8-3 $III_{35}$.
[3393] König 1957: 204; Меликишвили 1960: 409. Հմմտ. Дьяконов 1963a: 91.
[3394] КУКН, $53_{17\text{-}18}$; CTU I, A $5\text{-}3_{17\text{-}18}$. Թարգմանության համար տե՛ս Götze 1936: 195, n. 46; Меликишвили 1960: 409. Հմմտ. Diakonoff 1971: 144.
[3395] КУКН, 241 $C_{x+3\text{-}5}$; CTU I, A 9-3 $II_{3'\text{-}5'}$.
[3396] КУКН, 241 $C_{x+30\text{-}31}$; CTU I, A 9-3 $II_{30'\text{-}31'}$.
[3397] *E.g.* Grayson 1996: 30 (A.0.102.5 6).
[3398] *E.g.* Fuchs 1994: 132/326 (Ann. 240-241).
[3399] Մանրամասն տե՛ս Oded 1979: 81ff.

Կարելի է ենթադրել, որ նշված դեպքերում համայնքը վերաբնակեցվել է կոմպակտ, պահպանվել են համայնքային կառույցները և ներհամայնքային ավանդական հարաբերությունները: Ուրարտական իշխանություններին դա ձեռնտու էր, երբ հատկապես համայնքը ենթարկվում էր կոլեկտիվ պատասխանատվության: Պատահական չէ, որ մի քանի դեպքերում վերաբնակիչները հիշատակվում են իրենց առաջնորդի հետ միասին: Միևնույն ժամանակ, վերաբնակիչներին հազիվ թե ազատեին հարկերից և պարհակներից: Ամենայն հավանականությամբ՝ վերաբնակեցված համայնքը պետության հանդեպ ունեցել է հարկային, աշխատանքային, չի բացառվում՝ նաև ռազմական պարտավորություններ: Համենայն դեպս, եթե դատենք Ասորեստանի օրինակով, ապա Ասորեստանում վերաբնակեցված և իշխանությունների կողմից «ասորեստանցի» համարված վերաբնակիչների վրա դրվում էին այն նույն հարկերն ու պարհակները, որոնք կրում էին ասորեստանցիները[3400]:

Վերաբնակեցված համայնքի առաջնորդը կամ գեղջավագը, որը պատասխանատու էր պետության առջև համայնքի ունեցած պարտականությունների համար, հանդիսանում էր միջնորդ՝ համայնքի և իշխանությունների միջև, կարգավորում էր ներհամայնքային հարաբերությունները: Ամենայն հավանականությամբ՝ նման ավագներն են ասորեստանյան մի քանի զեկուցագրերում հիշատակվում որպես ուրարտական քաղաքների «քաղաքապետներ»: Տվյալ տեքստերում «քաղաք» հասկացությունը չպետք է հասկանալ բառացի և կարող էր նշանակել ցանկացած տիպի բնակավայր/համայնք, իսկ նրա առաջնորդը կարող էր ընկալվել իբրև «քաղաքապետ», իմա՝ համայնքապետ, գեղջավագ:

Ուրարտական իշխանություններն էին կարգավորում հպատակ համայնքների և բիայնացիների միջև ծագած խնդիրները, ինչպիսին կարող էր լինել հողային խնդիրը: Հայտնի է նման մի դեպք, երբ հողային վեճը (՞) բիայնական արքան կարգադրել էր լուծել «կոթողներ»-ի միջոցով հողերի սահմանազատում անելով (տե՛ս վերը)[3401]:

Մեր կողմից ենթադրվող ուրարտական գերկենտրոնացված պետության մեջ, կենտրոնական իշխանությանը ենթական տարածքում համայնական ինքնակառավարման գոյությունն ամենևին զարմանալի չէ: Նույն երևույթը կարելի է տեսնել Միտաննիում[3402]:

[3400] Տեքստային վկայությունների համար տե՛ս Oded 1979: 77f., 82.
[3401] КУКН, 428; CTU IV, CT Kb-1.
[3402] Մանրամասն տե՛ս և հմմտ. Otto 2012: 87ff.

Այսպիսով, կարելի է կարծել, որ Ուրարտուում պետության կողմից վերաբնակեցված համայնքների կարգավիճակը եղել է ավելի բարձր, քան «կախյալներ»-ինը և զբաղեցրել են միջանկյալ դիրք՝ «ծառայող» և «կախյալ» խավերի միջև: Այս առումով կարելի է հիշել «պերիօյկոսներ»-ի խավը հին Սպարտայում: Վերջիններս ունեցել են որոշակի ինքնավարություն իրենց քաղաքի/համայնքի սահմաններում, առաջնորդվել են սեփական օրենքներով, իրավունք են ունեցել ծառայել սպարտական բանակի օժանդակ կամ թեթևազեն զորամասերում: Գտնվելով սպարտական գերիշխանության տակ՝ նրանք զբաղեցրել են միջանկյալ դիրք՝ իշխող սպարտիադների և կախյալ բնակչության՝ հելոտների միջև[3403]:

### 4.4.3. Ինքնավար քաղաքային համայնքները

Հպատակ բնակչության հաջորդ խումբը կազմում էին ինքնավար քաղաքների բնակչությունը: Առայժմ տվյալներ կան մեկ-երկու քաղաքների մասին, որոնք կարող էին օժտված լինել որոշակի ներհամայնքային/քաղաքային ինքնավարությամբ:

Դրանցից առաջինը Տուշպան էր: Թեև ուրարտական արքաները պարբերաբար հանդես են գալիս «Տուշպա քաղաքի տեր» տիտղոսով, սակայն, կան տվյալներ նշելու, որ քաղաքն ունեցել է որոշակի ինքնավարություն: Խոսքը վերաբերում է «Տուշպայի որդիներ»-ին ($^{LÚ}$DUMU-*še* $^{URU}$*ṭušpainī*), ովքեր հիշատակվում են Ռուսա Էրիմենայորդու թողած Գյովելեք + Քեշիշ-գյոլի և Սավաջըքի արձանագրություններում[3404]:

Եթե նայենք միջագետքյան տեսանկյունից՝ «Տուշպայի որդիներ»-ին կարելի է համեմատել համաժամանակյա միջագետքյան քաղաքների լիիրավ քաղաքացիների հետ, ովքեր կոչվում էին *mār banī*: «Քաղաքի որդիներ»-ը կախված չէին պալատից[3405], անձնապես ազատ էին, պատկանում էին սոցիալական տարբեր խավերի, իրավունք ունեին մասնակցելու գլխավոր տոնակատարություններին, երբեմն՝ մասնաբաժին ստանալու քաղաքի և/կամ տաճարի եկամուտներից: Այս կամ այն քաղաքի «քաղաքացի» լինելու ստատուսը ժառանգական էր և անցնում էր հորից որդի[3406]:

Եթե իրապես «Տուշպայի որդիներ»-ը ներկայացրել են տեղի համայնքը՝ «տուշպացիներ»-ին[3407], ապա կարելի է մտածել, որ քաղաքն ունենալու էր նաև ինքնակառավարման սեփական մարմինը՝ Միջագետքում ազատ և հավասար

---

[3403] Cartledge 2002: 153ff.

[3404] КУКН, $391_{x+11}$; CTU I, A 14-1 $Ro_{44}$; A 14-2 $Ro_{45}$. «Տուշպայի որդիներ»-ը հիշատակվում են արձանագրության այլ հատվածում ևս՝ քիչ հասկանալի կոնտեքստում: Տե՛ս KUKN, $391_{x+15-17}$; CTU I, A 14-1 $Ro_{48-50}$; A 14-2 $Ro_{49-50}$ – A 14-2 l. d.$_{1-3}$.

[3405] van Soldt 1995: 1262.

[3406] Dandamaev 1991: 255f.

[3407] Տե՛ս Дьяконов 1963в: 71 сл.; CTU I, A 14-1 Ro44, n. 105 (p. 623).

իրավունքներ ունեցող քաղաքացիների կողմից ձևավորվող «ժողով»-ի (աքք. *puḫru*) կամ «ժողովրդի/բանակի ժողով»-ի (աքք. *puḫur ummani*) նմանությամբ: Նման ժողովներում լսվել են համայնքի ներքին խնդիրներին վերաբերող հարցեր, ժողովի ավագներն ունեցել են դատական գործառույթներ, ներկայացրել են իրենց քաղաքը և քաղաքացիներին արքայի առջև: Ժողովն էր նաև պատասխանատվություն կրում արքայական իշխանության առջև քաղաքի ունեցած պարտավորությունների համար[3408]:

Ինչ խոսք, չի կարելի միջագետքյան քաղաքային ինքնավարությունների գործառույթներն ու ընդհանրապես՝ միջագետքյան քաղաքների կյանքը մեխանիկորեն տեղայնացնել Ուրարտուում: Այստեղ գործող պետական գերկենտրոնացված տնտեսական համակարգը, ներքին շուկայի բացակայությունը զրկում էր քաղաքներին տնտեսության կազմակերպման կենտրոններ լինելուց՝ այդ դերը զիջելով պալատին/տաճարին: Հետևաբար, քաղաք և քաղաքային կյանք այն բովանդակությամբ, ինչպիսին տեսնում ենք համաժամանակյա Ասորեստանում կամ Բաբելոնիայում, Ուրարտուում տեսնել սպասելի չէ:

Այս դեպքում, «տուշպացիներ»-ի ունեցած ինքնավարությունը կարելի է դիտարկել որպես քաղաքական որոշակի գործընթացի՝ տուշպացիների և Տուշպայում ամրապնդվել փորձող բիայնական իշխանության միջև տեղ գտած փոխզիջման արդյունք: Այս առումով կարելի է նշել Աշշուրի օրինակը: Այստեղ հաստատված ամորեցի ցեղապետ Շամշի-Ադդուի իշխանությունը յուրօրինակ փոխզիջում էր քաղաքի բնակչության և ամորեացիների միջև[3409]: Նման մեկ այլ փոխզիջման օրինակ է Մուհամմեդ մարգարեի և Մեքքայի վերնախավի միջև հաստատված փոխզիջումը[3410]:

Տուշպայի ինքնավարությունը, կարծում ենք, նույնպես նման փոխզիջման արդյունք էր: Կարելի է միայն ենթադրել, որ Տուշպայի մայրաքաղաքային նշանակությունը թույլ է տվել նրա բնակիչներին օգտվելու արտոնություններից: Հնարավոր է, որ նրանք ազատված են եղել հարկերից և պարհակներից, չի բացառվում՝ պետությունից ստացել են մասնաբաժին ընդհանուր ավարից (տե՛ս վերը): Մյուս կողմից, երկրագործական աշխատանքներում «Տուշպայի որդիներ»-ի՝ մեր կարծիքով ստիպողական ներգրավումը Ք.ա. 8-րդ դ-ի վերջերին[3411] կարող է վկայել, որ նրանք մինչև այդ ազատված են եղել նաև աշխատանքային պարհակներից:

[3408] Dandamaev 1991: 252ff.
[3409] Համմտ. Van De Mieroop 2007: 107.
[3410] Donner 2010: 48f.
[3411] Այս մասին տե՛ս Grekyan 2013-2014: 70f.

Երկրորդ վկայությունը վերաբերում է Էրեբունիին: Ըստ Արմեն Պետրոսյանի՝ Էրեբունի անունը հնարավոր է ստուգաբանել լուվիերեն *arawa- «ազատ, ազատ(վ)ել» բառով, որի զուգահեռները պահպանվել են լուվիերենին մերձավոր անատոլիական այլ լեզուներում: Ըստ այդմ, Էրեբունի անունը կարող է նշանակել «ազատ քաղաք»՝ վկայելով այստեղ վերաբնակեցված «խեթական» զինվորականությանը շնորհված հարկային և աշխատանքային պարհակներից մասնակի կամ միառժամանակյա ազատված լինելու մասին[3412]: Ուրարտուում մինչև այդ անհայտ՝ Իուբշա աստծո պաշտամունքի ի հայտ գալը հենց Էրեբունիում կարող է վկայել նաև այստեղ հաստատված «խեթական» զինվորականությանը տրված պաշտամունքային ազատության մասին: Իրենց կարգավիճակով, միգուցե, նրանք ունեցել են նույն ստատուսը, ինչ վերաբնակիչները:

Մենք չենք կարող բացառել այլ ինքնավար քաղաքների/համայնքների գոյությունը Ուրարտուում: Դրանց թվում կարող էին լինել դեռևս նաիրյան համադաշնության շրջանում կրոնաքաղաքական դերակատարություն ունեցող այլ քաղաքներ, օրինակ, Արծունիունին: Մեկ այլ ինքնավար քաղաք կարող էր լինել Իրդիունին: Թեև վերջինիս նույնականացման հարցի շուրջը կարծիքները տարամետ են, սակայն, գործնականում չի բացառվում, որ հիշյալ Իրդիունին լինի Է/Իր(ի)դիա քաղաքը: Վերջինս, եթե անգամ չէր նույնանում միտաննական դարաշրջանի խոշորագույն կենտրոններից մեկի՝ Իրրիդու/Իրրիտե հետ[3413], այնուամենայնիվ, բավական նշանավոր պաշտամունքային կենտրոն էր, քանի որ այն իր Ամպրոպի աստծո «դարպաս»-ով հանդես է գալիս «Միերի դռան» արձանագրության մեջ[3414]: Հետաքրքիր է, որ Իրդիունին հիշատակող սեպագիր տեքստում նշվում է այդ քաղաքի «որդի»-ն ($^{LÚ}$DUMU : $^{URU}$*irdiuni*)[3415], ինչը կարող է հուշել, որ այստեղ ևս գործ ունենք համայնական ինքնավարության և համայնքի ազատ, լիիրավ անդամների հետ:

Կարող ենք վստահորեն նշել, որ Ուրարտուում իշխող և հպատակ խավերի միջև շփումը գտնվում էր նվազագույն աստիճանի վրա: Ուրարտուի բնակչության զգալի մասը կազմող հպատակների խավը այդպես էլ չինտեգրվեց բիայնական պետական համակարգի մեջ, հաղորդակից չեղավ բիայնական տերունական մշակույթին, նրանց շրջանում չտարածվեց իշխողների լեզուն: Բիայնական պետական համակարգից դուրս մնալով՝ հպատակների խավը սպասում էր միայն այդ համակարգի փլուզմանը և լրացրեց այն վակուումը, որն առաջ եկավ համակարգի փլուզումից հետո:

---

[3412] Պետրոսյան 2006, էջ 28-37:
[3413] Grekyan 2006: 168, n. 151.
[3414] КУКН, 38 Текст $I_{16}$, $II_{28}$; CTU I, A 3-$1_{16, 59}$.
[3415] КУКН, 520 лиц. стор.$_{13}$; CTU IV, CT Kb-7 $Ro_{13}$.

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բիայնիլի-Ուրարտու. պետություն և հասարակություն» թեմայի շուրջն իրականացված ուսումնասիրության արդյունքում մենք հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

1. Բիայնիլի-Ուրարտուն աստվածապետություն էր, ուր դիցարանի գերագույն՝ Խալդի աստվածն ընկալվում էր իբրև արքա: Այդ սկզբունքով էր կազմակերվում նաև պետության կառավարումը: Պետության առաջնորդները հանդես էին գալիս որպես Խալդի աստծո տեղապահներ՝ նրա անունից իրականացնելով աստված-արքայի «երկրային» գործառույթները, այդ թվում՝ քրմական, ռազմական, վարչական, տնտեսական և դատական:
2. Երկրի կառավարումն իրականացվում էր մայրաքաղաքից՝ բազմաստիճան և մեծաթիվ պաշտոնեության միջոցով: Ուրարտական սեպագիր աղբյուրները տեղեկություններ են տալիս կառավարման համակարգում գոյություն ունեցող առնվազն տասնչորս տարբեր պաշտոնների մասին: Ինը այլ պաշտոններ վերաբերում են ծառայող և սպասարկող անձնակազմին: Եվս տասը պաշտոնների նշանակությունը մնում է առայժմ անհայտ:
3. Բիայնական պետության մեջ կիրառված գրահամակարգը կրում էր նորասորեստանյան սեպագիր դպրոցի ազդեցությունը և կարող էր ներմուծված լինել արամեացի (շրջիկ) դպիրների կողմից Ք.ա. 9-րդ դ-ում: Մյուս կողմից՝ բիայնական դպրոցը մեծապես ազդվել է Ք.ա. 2-րդ հազ-ի միտաննական, խեթական և միջինասորեստանյան սեպագրության ավանդույթները պահպանած մեկ այլ՝ տեղական (շուբրիական՞, կումմեական՞) կենտրոնից: Միևնույն ժամանակ, բիայնական սեպագիր դպրոցը ոչ միայն կիրառել է փոխառված գրահամակարգ, այլև փորձ է արել կատարելագործել այն և հարմարեցնել նոր պահանջներին՝ իր ներդրումն ունենալով սեպագիր գրահամակարգի բազմազանության մեջ:
4. Բիայնական իշխանությունների անմիջական հսկողության տակ գտնվող տարածքը սահմանափակ էր և որպես կանոն ընդգրկում էր լեռնաշխարհի հարթավայրային/երկրագործական գոտիները և այդ գոտիները միմյանց կապող «միջանցքներ»-ը: Դրանից դուրս ընկած տարածքը բիայնական անմիջական տիրապետության տակ չէր գտնվում:
5. Հենվելով հնագիտական և գրավոր աղբյուրների վրա և դիմելով վիճակագրական մեթոդին՝ Բիայնիլի-Ուրարտուի բնակչության թվաքանակի

համար ենթադրվում է 1 մլն, իսկ Հայկական լեռնաշխարհի ողջ բնակչության համար՝ 1.5-1.75 մլն մարդ: Բիայնիլի-Ուրարտուի բնակչության ճնշող մասը ձևավորվել է գերեվարությունների արդյունքում (ընդհուպ մինչև 75 տոկոսը կամ 0.75 մլն. մարդ):

6. Բիայնիլի-Ուրարտուում քաղաքաշինությունը նույնանում էր պալատական/տաճարային համալիրի կառուցման հետ և «քաղաքաշինություն» եզրույթը կիրառելի է միայն այն պատճառով, որ այդ կենտրոնին կից կամ մերձավորությամբ գտնվել է այդ կառույցին սպասարկելու կոչված բնակելի հատվածը՝ այսպես կոչված «արտաքին քաղաք»-ը կամ կից բնակատեղին:
7. Բիայնիլի-Ուրարտուն ուներ գերկենտրոնացված տնտեսություն, որը մենք բնութագրում ենք իբրև «էտատիզմ»՝ հիմնված վերաբաշխման համակարգ վրա:
8. Վերաբաշխման վիամակարգի վրա հիմնված տնտեսության կազմակերպիչը պալատը/տաճարն էր: Բազմաֆունկցիոնալ այդ կառույցն էր համակարգում երկրի տնտեսական կյանքը՝ երկրագործական և արհեստագործական աշխատանքները, անասնապահությունը, փոխանակումը կամ արտաքին առևտուրը, պետական պահոցների ու պաշարների համալրումը, հաշվառումը և դրանց բաշխումը տվյալ տնտեսական գոտում պետության հետ կապված քրմական, վարչական, ռազմական, արհեստագործական և ընդհանրապես՝ սպասարկող անձնակազմին ու ծառայող խավերին:
9. Իրականացնելու համար վերաբաշխման իր գործառույթը՝ պալատական/տաճարային տնտեսությունը դիմում էր մեծ ծավալներով հացահատիկի պահեստավորմանը: Գրավոր աղբյուրները վկայում են շուրջ 400 հազ. *kapi* ընդհանուր տարողությամբ շտեմարանների գոյության մասին: Դա բավարար էր ողջ տարին սննդով ապահովելու համար շուրջ 6500 ընտանիքի կամ 26 հազ-ից մինչև 32 հազ. մարդու: Ուրարտական տեքստերում հանդիպող գարու առավելագույն թիվը արտահայտված *kapi*-ներով անցնում էր 1 մլն-ը, ինչը բավարար էր մեկ տարի շարունակ կերակրելու շուրջ 100 հազ. բնակչի: Այնուամենայնիվ, հիմքեր չկան մտածելու, որ բիայնական տիրապետության տակ ընկած ողջ տարածքի բնակչությունը պարենավորվում էր պետության կողմից, ինչպես դա արվում էր Միջագետքում Ուրի III հարստության շրջանում (շուրջ 300 հազ. մարդ):
10. Ի տարբերություն Միջագետքի, ուր ենթադրվում է հողատիրության երեք ձև՝ ինստիտուցիոնալ, մասնավոր և համայնական, Ուրարտուում տեսանելի է

հողատիրության երկու ձև՝ տաճարային/պալատական կամ այլ կերպ ասած՝ ինստիտուցիոնալ, և համայնական: Մասնավոր հողատիրություն Ուրարտուում մենք չենք ենթադրում:

11. Որպես գերագույն հողատեր Բիայնիլի-Ուրարտուում հանդես էր գալիս տաճարը/պալատը (=պետությունը), իսկ հողատիրության հիմնական կարգը կապված էր *iškāru*-ծառայության հետ: Դա պայմանական հողատիրության ձև էր, երբ հողերը վարչական/աշխատանքային կամ ռազմական ծառայության դիմաց տրվում էին անհատ անձանց ժամանակավոր տիրապետության իրավունքով: Նման հողատարածքները կարող էին բաժանվել «աղեղի հող»-ի կամ «աղեղի տան», «ձիու հող»-ի կամ «ձիու տան» և «մարտակառքի հող»-ի կամ «մարտակառքի տան»: Հողատիրության այդ ձևը սերտորեն ազդված էր հին առաջավորասիական և հատկապես՝ խեթա-միտաննական ու միջինասորես-տանյան հողատիրական համակարգերից:
12. Առավել խոշոր կալվածքները կամ դաստակերտները ընդգրկել են տասնյակ և հարյուրավոր հա հողատարածք և, թերևս, կոչվել են *burganani*: Վերջինս կարող էր նշանակել «աշտարակ»՝ նախատիպ ունենալով միտաննական *dimtu*-ն («աշտարակ», շում. an.zag.gàr) կամ միջինասորեստանյան *dunnu*-ն:
13. Պալատական/տաճարային տնտեսության մաս են կազմել արհեստանոցները: Դրանք պատվերները ստանում էին պետությունից, արհեստավորներն ազատ չէին ստեղծագործում այլ, կատարելով պետպատվերը, արտադրում էին ստանդարտացված արտադրանք: Պետությունն էր մատակարարում հումքը և հոգում արհեստավորների ապրուստը:
14. Կան տվյալներ պետության կողմից չափ ու կշռի միավորների ստանդարտացման կամ պետական/արքայական միավորների հաստատման մասին: Կշռի հիմնական միավոր էր սահմանվել տաղանդը՝ 35 կգ արժեքով: Այն կազմում էր 50 «մինա», իսկ 1 «մինա»-յի արժեքը հավասար էր 700 գր-ի: Մեկ տաղանդը կամ 50 մինան հավասար էին 3000 սիկղի՝ 1 մինա = 60 սիկղ հարաբերակցությամբ: Ըստ այդմ՝ 1 ուրարտական սիկղի արժեքը կազմում է մոտ 11.7 գրամ, որը 1 սիկղի արժեքն է նաև փոքրասիական-լևանտ-սիրիական համակարգում (± 11.75 գրամ կամ «խեթական սիկղ»): Փոքրասիական-լևանտ-սիրիական համակարգի կիրառությունը Բիայնիլի-Ուրարտուում կարող էր պայմանավորված լինել արտաքին առևտրում լուվիական թագավորությունների ունեցած միջնորդ դերակատարությամբ:

15. Պալատը/տաճարը կամ «քաղաք»-ը ուներ սահմանափակ բնակչություն՝ 1.5 հազ-ից (Կարմիր բլուր, Բաստամ) ընդհուպ մինչև 3-4 հազ. մարդ (Արգիշթիխինիլի-Արմավիր): Բնակչության թիվն ուղիղ համեմատական էր տվյալ կենտրոնի իրականացրած գործառույթների հետ, իսկ «բնակչություն»-ը ծառայում կամ սպասարկում էր «քաղաք»-ը:
16. Բիայնիլի-Ուրարտուում քաղաքային կյանք, որը կենթադրեր ինքնավար համայնք, որի անդամները կարող էին ունենալ սեփականություն և այն ինքնուրույն տնօրինելու իրավունք, որի անդամները կարող էին զբաղվել ազատ տնտեսական գործունեությամբ, քաղաք, որը կունենար իր հրապարակ(ներ)ը, շուկաները, տաճարները և այլն, ուրարտական քաղաքների դեպքում տեսանելի չէ: Դրանով պայմանավորված՝ ուրարտական խոշոր կենտրոնների «քաղաքային թաղամասեր»-ն ունեցել են սահմանափակ տարածք և ոչ խիտ կառուցապատում, չեն ունեցել հրապարակ/շուկա, տաճար(ներ)/սրբարան(ներ), իսկ բնակչությունը կամ առնվազն բնակչության զգալի մասը չի վարել սեփական տնտեսություն և պարենավորվել է պետության կողմից:
17. Բիայնիլի-Ուրարտուում առևտուրն ամբողջությամբ գտնվում էր պետության վերահսկողության ներքո: Ընդ որում, խոսքը միմիայն արտաքին առևտրի մասին է, քանի որ տնտեսության գերկենտրոնացված բնույթը, քաղաքային կյանքի փաստացի բացակայությունը չեն ենթադրում երկրում ազատ շուկայական հարաբերությունների գոյություն, իսկ պալատական/տաճարային տնտեսությունը խոչնդոտ էր հանդիսանում մասնավոր ձեռնարկատիրության կայացման գործում: Ըստ այդմ, դրամի կամ ապրանքների ազատ շրջանառություն, շուկայական գնագոյացում ևն մենք չենք ենթադրում: Երկրի ներքին տնտեսական կապերը խիստ թույլ էին, իսկ արտաքին առևտուրն ամբողջությամբ վերահսկվում էր պետության կողմից:
18. Ուրարտական տեքստերից հայտնի են մի քանի տերմիններ, որոնք բոլորն էլ կարելի է հասկանալ իբրև «տաճար», ինչպես, օրինակ, «Խալդիի կոթող»-ը, «Խալդիի տուն»-ը, «Խալդիի դարպաս»-ը և «Խալդիի «սուսի»-տաճար»-ը: Այս թվացյալ բազմազանությանը հակառակ՝ գործ ունենք Խալդիի հետ կապվող միևնույն գաղափարի տարբեր արտահայտամիջոցների հետ և բոլոր տերմիններն էլ, վերջին հաշվով, վերաբերում են մեկ-միևնույն կառույցի՝ «սուսի»-ի: «Սուսի»-ն միակ ճարտարապետական կառույցն է, որը հստակ կարելի է բնորոշել իբրև «տաճար»: Այն ձևավորվել է պետության կայացմանը զուգընթաց՝

երկրում իշխող «խալդակենտրոն» գաղափարախոսության պայմաններում: Ուրարտական տաճարային ճարտարապետության ակունքներն ընկած էին լեռնաշխարհի հարավում:

19. Ուրարտական տերության ողջ կենսագործունեությունը հենվում էր հաղորդակցության զարգացած ցանցի վրա: Աղբյուրները վկայում են պետության կողմից անցկացված ճանապարհների, կամուրջների, թունելների և կանոնավոր՝ «մեկօրյա ճանապարհ» հեռավորությամբ կառուցված ամրացված իջևանատների գոյության մասին: Դրանցից հնագիտորեն նույնականացվել են 32-ը՝ Հայկական լեռնաշխարհի գրեթե ողջ տարածքում: Այդ կառույցներն են, հավանաբար, հանդես գալիս $^{É}$*barzu/idib(i)duni* անունով: Վաղ և միջնադարյան Հայաստանում վկայված ճանապարհների մի մասը կրկնել է ուրարտական պետական ճանապարհների երթուղին և օգտագործել դրա ենթակառուցվածքները:
20. Բիայնիլի-Ուրարտուում զինված ուժերի կազմավորումը դրվել է պրոֆեսիոնալ հիմքերի վրա՝ ստեղծելով կանոնավոր, ըստ զորատեսակների ստորաբաժանված մշտական բանակ՝ նախկին դաշնային աշխարհազորի փոխարեն: Դրա վկայությունն է տեքստերում դաշնային աշխարազորն արտահայտող $^{LÚ}$KUR.KUR$^{MEŠ}$՝ գաղափարագրերի համադրության փոխարեն նոր՝ պրոֆեսիոնալ զինվորականությանն արտահայտող $^{LÚ}$*ḫuradi(e)* (գաղափարագիր՝ $^{LÚ}$A.SI$^{(MEŠ)}$) տերմինի կիրառությունը: Ռազմական բարեփոխումները շարունակվել են նաև «կայսերական» շրջանում, իսկ դրա վերջում զինված ուժերի համար որպես մոդել է վերցվել ասորեստանյան բանակը՝ ասորեստանյան օրինակով ձևավորելով «արքայական գունդ»-ը և «մարզային (նահանգային) զորքեր»-ը: Զինվորականության աստիճանակարգը ևս կրկնում էր նորասորեստանյանին:
21. Մշտական բանակի թիվն Ուրարտուում ենթադրելի է 20-25 հազ-ի. մարդու սահմաններում, որից 10-12 հազ-ը կազմել են կայազորային զորքերը, մնացյալը՝ ընդգրկվել «արքայական գնդի» և «մարզային զորքեր»-ի կազմում: Արշավանքների ժամանակ պետությունը դիմել է միայն մասնակի զորահավաքների և ի զորու է գտնվել զորակոչելու ընդհուպ մինչև 40 հազ. մարդու:
22. Բիայնիլի-Ուրարտուի տարածքում հնագիտորեն վկայված ամրոցների թիվը հասնում է շուրջ 300-ի, որոնք ձևավորել են 14 ամրացված գոտիներ: Ամրոցների խտությունը հատկապես մեծ էր ռազմավարական ուղղություններում՝ տերության արևմուտքում (վերինեփրատյան գոտի), հարավ-արևելքում (մերձուրմյան գոտի), ինչպես նաև միջնաշխարհում՝ մայրաքաղաքի շուրջը (Վանա լճի ավազան):

23. Բիայնիլի-Ուրարտուում իշխող խավը կամ «ազնվականություն»-ը կազմել են «կառամարտիկներ»-ը, որոնք աղբյուրներում հանդես են գալիս որպես $^{LÚ}$*mari*(*ni*): Այս խավի ձեռքին էր գտնվում քաղաքական, քրմական և ռազմական իշխանությունը երկրում կամ մասնակցում էր դրա իրականացմանը: Այս խավին էին հասանելի պետական միջոցները, տարբերվել են բնակության բարվոք պայմաններով, իրավունք են ունեցել կառուցելու հանդիսավոր դամբարաններ, տիրել են հարուստ-դրվագված զենքերի և զինվորական հանդերձանքի, պարտավոր են եղել պահել ձի(եր), մարտակառք և մասնակցել արշավանքների՝ կազմելով կառամարտիկ ուժերը:
24. Հնարավոր է, որ $^{LÚ}$*mari*(*ni*)-խավի անդամը արքայի հետ կապվել է հատուկ երդումով և որպես իր ստատուսի ցուցիչ ստացել բրոնզե գոտի: Մենք ենթադրում ենք, որ նման անձինք են աղբյուրներում հանդես են գալիս որպես «բիայնացի» ($^{KUR}$*biainiše*): Դրա հինառաջավորասիական զուգահեռը մենք տեսնում ենք Միտաննիում՝ ի դեմս *ḫanigalbatūtu*-ծառայության: Այն ստանձնելով՝ այս կամ այն անհատը, ում հետ նաև՝ նրա ընտանիքը, դառնում էր «խանիգալբատցի», այն է՝ «միտաննացի»:
25. $^{LÚ}$*mari*(*ni*)-խմբի մեջ է ընդգրկվել նաև առավել բազմամարդ ծառայող ազնվականությունը՝ $^{LÚ}$*kirini*-ն: Այս խավը, հավանաբար, կազմվել է երկրի խոշոր ազնվականական տների կրտսեր անդամներից, այսպես կոչված «մարյանուի եղբայրներ»-ից: Նրանց ամենամոտ զուգահեռը միջնադարյան Հայաստանի նախարարական տների կրտսեր անդամներն են՝ սեպուհները:
26. Ծառայող խավի ամենաբազմամարդ ներկայացուցիչներն են պրոֆեսիոնալ զինվորականները կամ $^{LÚ}$*ḫuradinili*-ն, որոնց հաջորդում են «սպասավորներ»-ը ($^{LÚ}$ÌR/ERUM/$^{LÚ}$*bura*) և «(պետական) ծառայողները»-ը՝ $^{LÚ}$*ururdani*-ն:
27. Բիայնական իշխանությանը ենթակա համայնքների մի մասը, այս կամ այն գործոնով պայմանավորված, պահպանել է իր համայնական կառույցը և ներքին ինքնավարությունը: Նման համայնքների գլխավոր պարտավորությունը համայնքին մոտ ընկած կամ համայնքի բնակավայրին կից կառուցված ուրարտական ամրոցի տնտեսական ապահովումն էր: Որոշ համայնքներ նույն խնդիրն ունեին պայմանական հողատիրության իրավունքով բիայնական իշխող և ծառայող խավերին տրված հողերը մշակելու առումով: Հավանաբար, նման համայնքներն են՝ «քաղաքներ»-ը (URU), որ երբեմն հիշատակվում են այս կամ այն բիայնացու «տան» (É) հետ միասին: Նույնը վերաբերում է այն

տարածքներին, որոնց բնակչությունը բիայնական նվաճումից հետո չի գերեվարվել և թողնվել է տեղում: Իրենց կարգավիճակով «հպատակներ»-ի խավին են դասվել վերաբնակիչները: Առկա են մի քանի փաստեր, որոնք վկայում են, որ նվաճված համայնքը տեղահանվել և վերաբնակեցվել է տերության այլ տարածքում պահպանելով համայնքի ամբողջականությունը: Նրանք զբաղեցրել են միջանկյալ դիրք՝ «ծառայող» և «կախյալ» խավերի միջև:

28. Բիայնական պետության ամենաբազմամարդ խավը «կախյալներն» էին: Նրանք ուրարտական տեքստերում հիշատակվում են համապատասխանաբար $^{(LÚ)}$*ubše* ($^{LÚ}$ÉŠ.GÀR) և $^{LÚ/MUNUS}$*ïediani* տերմիններով: Նրանք պետության սեփականությունն էին, իրենց կարգավիճակով նմանվել են *šiluḫlu*-կախյալներին կամ «պետական ճորտեր»-ին՝ միջինասորեստանյան դարաշրջանում, և NAM.RA/*arnuwalaš*-խմբի մարդկանց՝ խեթական տերության գոյության շրջանում: Բիայնիլի-Ուրարտուում կախյալները թեև չեն համարվել ստրուկներ, բայց գտնվել են ավելի ցածր աստիճանին, քան բիայնական իշխանության տակ հայտնված նվաճված տարածքների բնակչու-թյունը: Սահմանափակվել է նրանց տեղաշարժը: Միաժամանակ, միգուցե, նրանց իրավունք է տրվել ունենալու տուն և կազմելու ընտանիք՝ իրենց պահելով ստացված բերքի մի մասը որպես գոյության միջոց: Սա կարող էր վերաբերել «աղեղի», «ձիու» կամ «մարտակառքի հող»-ին ամրացված կախյալներին: Անմիջապես պալատին/տաճարին սպասարկող հողերին ամրացված կախյալներին, հնարավոր է, ներքինացրել են: Վերջիններս զուրկ են եղել գոյության որևէ միջոցից և ստացել են միայն օրապահիկ:
29. Բիայնական պալատական/տաճարային տնտեսության հիմնական արտադրող խավը եղել են հողին նստեցված «կախյալներ»-ը կամ «պետական ճորտեր»-ը: Ստրկական ուժի կիրառություն Ուրարտուում մենք չենք տեսնում:
30. Բիայնիլի-Ուրարտուում իշխող և հպատակ խավերի միջև շփումը հասցված էր նվազագույնի: Տերության բնակչության զգալի մասը կազմող հպատակ և կախյալ խավերն այդպես էլ չեն ինտեգրվել բիայնական պետական համակարգին, հաղորդակից չեն դարձել բիայնական տերունական մշակույթին, նրանց շրջանում չի տարածվել իշխողների լեզուն: Բիայնական պետական համակարգից դուրս մնալով՝ այդ խավերը սպասում էին միայն համակարգի փլուզմանը և հետագայում լրացրեցին այն վակուումը, որն առաջ եկավ համակարգի փլուզումից հետո:

# ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀ – Ազգագրական հանդէս, Թիֆլիս
ԼՀԳ – Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան
ՀԱ – Հանդէս Ամսօրեայ (Zeitschrift für armenische Philologie), Վիեննա/Wien
ՀԱԱՆԳՆ – ՀՍՍՀ / Հայաստանի Հանրապետությունում դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երևան
ՀԿՀ – Հայաստանի կենսաբանական հանդես (Biological Journal of Armenia), Երևան/Yerevan
ՀՀՀ – Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երևան
ՀՀՄ – Հայաստանի հնագույն մշակույթը, Երևան
ՀԳՆՆԱԲՀԱ – Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված ազգագրական և բանագիտական հետազոտությունների արդյունքներին, Երևան
ՄԱ – Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքակրթություն, մշակույթ, Երևան
ՄՄԱԵԺ – Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան
ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես, Երևան
АГВ – Армянский гуманитарный вестник, Ереван
ВДИ – Вестник древний истории, Москва
ВИ – Вопросы истории, Москва
ДВ – Древний Восток, Ереван
КБС – Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
КУКН – տե՛ս Арутюнян 2001
НАИ – Народы Азии и Африки, Москва
ПалСб – Палестинский сборник, Москва – Ленинград
ПерСб – Переднеазиатский сборник, Москва
РА – Российская археология, Москва
СА – Советская археология, Москва
УКН I – տե՛ս Меликишвили 1960
УКН II – տե՛ս Меликишвили 1971
ЭВ – Эпиграфика Востока, Москва
AA – Archäologischer Anzeiger, Berlin
AAL – Annual of Armenian Linguistics, Cleveland
AAASH – Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae, Budapest
AAS – Anatolian Archaeological Studies, Tokyo
AcArch – Acta Archaeologica Academiae Scientiarum Hungaricae, Budapest
ACSS – Ancient Civilizations from Scythia to Siberia, Leiden
AD – Ege Üniversitesi Edebiyat Fakültesi Yayınları. Arkeoloji Dergisi, İzmir
ADAJ – Annual of the Department of Antiquities of Jordan, Amman
AfO – Archiv für Orientforschung, Berlin – Graz – Horn
AfV – Arvhiv für Völkerkunde, Wien
AHB – Ancient History Bulletin, Calgary
AI – Acta Iranica, Leiden
AJA – American Journal of Archaeology, Baltimore / Princeton
AJNES – Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
AJSL – The American Journal of Semitic Languages and Literatures, Chicago
AkAr – Aktuel Arkeoloji, İstanbul
ALASPM – Abhandlungen zur Literatur Alt-Syrien-Palästinas und Mesopotamiens, Münster

AMI – Archäologische Mitteilungen aus Iran, Neue Folge, Berlin
AMI (Erg.) – Archäologische Mitteilungen aus Iran (Ergänzungsband), Berlin
AMIT – Archäologische Mitteilungen aus Iran und Turan, Berlin
AnAn – Anatolia Antiqua, İstanbul – Paris
AnAr – Anadolu Araştırmaları (JKlF – Jahrbuch für Kleinasiatische Forschungen), İstanbul
ANE – Ancient Near Eastern Studies, Louvain
AnOr – Analecta Orientalia: commentationes scientificae de rebus Orientis Antiqui, Roma
AnSt – Anatolian Studies. Journal of the British Institute at Ankara, London
AOAT – Alter Orient und Altes Testament, Kevelaer / Neukirchen-Vluyn
AoF – Altorientalische Forschungen, Berlin
AOS – American Oriental Series, New Haven
APA – Acta praehistorica et archaeologica, Berlin
ArkST – Arkeometri Sonuçları Toplantısı, Ankara
ArOr – Archív Orientální, Praha
ArS – Arkeoloji ve Sanat, İstanbul
AS – Assyriological Studies, Chicago
AST – Araştırma Sonuçları Toplantısı, Ankara
ASTD – Arkeoloji-Sanat Tarihi Dergisi, İzmir
AWE – Ancient West & East, Louvain
BA – Biblical Archaeologist, New Haven
BaghM(itt.) – Baghdader Mitteilungen, Berlin
BAH – Bibliothèque archéologique et historique, Paris
BAI – Bulletin of the Asia Institute n.s., Bloomfield Hills
BAR IS – British Archaeological Reports. International Series, Oxford
BASOR – Bulletin of the American Schools of Oriental Research, New Haven
BATSH – Berichte der Ausgrabung Tall Šēḫ Ḫamad/Dur Katlimu, Berlin
BAVA – Beiträge zur Allgemeinen und Vergleichenden Archäologie, München
BBV – Berliner Beiträge zur Vor- und Frühgeschichte, Berlin
BBVO – Berliner Beiträge zur vorderen Orient, Berlin
BF – Baghdader Forschungen, Mainz am Rhein
BHAch – Bulletin d'histoire achémenidé, Paris
Bibl.Mes – Bibliotheca Mesopotamica, Malibu
BO – Bibliotheca Orientalis, Leiden
BPOA – Biblioteca del Próximo Oriente antique, Madrid
BSA – Bulletin on Sumerian Agriculture, Cambridge
BSOAS – Bulletin of the School of Oriental and African Studies, Oxford – Cambridge
BYZAS – Veröffenlichungen des Deutschen Archäologischen Instituts Istanbul, Istanbul
CA – Current Anthropology, Chicago
CAD – Chicago Assyrian Dictionary, Chicago
CHANE – Culture and History of the Ancient Near East, Leiden – Boston – Köln
CM – Cuneiorm Monographs, Leiden – Boston
CMAO – Contributi e materiali di archeologia orientale, Roma
CNES – Caucasian and Near Eastern Studies, Tbilisi
CollAn – Colloquium Anatolicum, İstanbul
CTN – Cuneiform Text from Nimrud, London
CTU I – տե՛ս Salvini 2008
DM – Damaszener Mitteilungen, Mainz am Rhein
DocAs – Documenta Asiana, Roma
E&L – Egypt and the Levant, Wien
HANE-M – History of the Ancient Near East, Monographs, Padova
HdO – Handbuch der Orientalistic, Leiden – Boston
HSAO – Heidelberger Studien zum Alten Orient, Heidelberg

IA – Iranica Antiqua, Leiden
IF – Istanbuler Forschungen, Tübingen
IEJ – Israel Exploration Journal, Jerusalem
IIJ – Indo-Iranian Journal, Leiden
InGr – Incunabula Graeca, Roma
IstM(itt.) – Istanbuler Mitteilungen, Istanbul / Tübingen
JAA – Journal of Anthropological Archaeology, New York
JAAS – Journal of Assyrian Academic Studies, Tarzana, CA
JANER – Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
JANES – Journal of the Ancient Near Eastern Society of Columbia University, New York
JAOS – Journal of the American Oriental Society, Boston
JAS – Journal of Archaeological Science, New York
JCS – Journal of Cuneiform Studies, New Haven
JCSMS – Journal of the Canadian Society for Mesopotamian Studies, Toronto
JDAI – Jahrbuch des Deutschen Archäologischen Instituts, Berlin
JESHO – Journal of the Economic and Social History of the Orient, Leiden
JFA – Journal of Field Archaeology, Boston
JHS – Journal of Hellenic Studies, London
JIES – Journal of Indo-European Studies, Hattiesburg
JMA – Journal of Mediterranean Archaeology, London
JNES – Journal of Near-Eastern Studies, Chicago
JRAS – Journal of the Royal Asiatic Society, London
JSAS – Journal of the Society for Armenian Studies, Fresno.
KST – Kazı Sonuçları Toplantısı, Ankara
MA – Mediterranean Archaeology, Melbourne
MDOG – Mitteilungen der Deutschen Orient- Gesellschaft, Berlin
MMJ – Metropolitan Museum Journal, New-York
MVAeG – Mitteilungen der Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft, Leipzig
N.A.B.U. – Nouvelles Assyriologiques Brèves et Utilitaires, Paris – Rouen
OA – Oriens Antiquus, Roma
OBO – Orbis Biblicus et Orientalis, Fribourg Suisse – Göttingen
OIP – Oriental Institute Publications, Chicago
OIS – Oriental Institute Seminars, Chicago
OJA – Oxford Journal of Archaeology, Oxford
OLA – Orientalia Lovaniensia Analecta, Leuven
OLZ – Orientalistische Literaturzeitung, Leipzig / Berlin
Or.NS – Orientalia, Nova Series, Roma
OTAM – Ankara Üniversitesi Osmanlı Tarihi Araştırma ve Uygulama Merkezi Dergisi (Journal of the Center for Ottoman Studies, Ankara University), Ankara
PIHANS – Publications de l'Institut historique-archeologique néerlandais de Stamboul, Leiden
QGS – Quaderni di Geografia Storica, Roma
RA – Revue d'assyriologie et d'archéologie orientale, Paris
RGTC – Répertoire géographique des textes cunéiformes, Wiesbaden
RINAP – The Royal Inscriptions of the Neo-Assyrian Period, Winona Lake
RlA – Reallexikon der Assyriologie und Vorderasiatischer Archäologie, Berlin – Leipzig – New York
SAA – State Archives of Assyria, Helsinki
SAAB – State Archives of Assyria *Bulletin*, Helsinki
SAAS – State Archives of Assyria *Studies*, Helsinki
SAOC – Studies on Ancient Oriental Civilizations, Chicago
SCA – Studies in Caucasian Archaeology, Tbilisi

SCCNH – Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians, Winona Lake / Maryland
SEL – Studi epigrafici e linguistici sul Vicino Oriente antico, Verona
SMEA – Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma
SPO – Studi di Preistoria Orientale, Roma
StBoT – Studien zu den Boğazköy-Texten, Wiesbaden
StIr – Studia Iranica, Leiden
StPohl SM – Studia Pohl: Series Maior, Roma
TAD – Türk Arkeoloji Dergisi, Ankara
TAED – Türk Arkeoloji ve Ethnografya Dergisi, Ankara
TdH – Texte der Hethiter, Heidelberg
TÜBA-AR – Türkiye Bilimler Akademisi Arkeoloji Dergisi, Ankara
UF – Ugarit-Forschungen, Kevelaer – Neukirchen-Vluyn
VT – Vetus Testamentum, Leiden
WA – World Archaeology, London
WAW – Writings from the Ancient World, Atlanta
WO – Die Welt des Orients, Wuppertal – Göttingen
WVDOG – Wissenschaftliche Veröffentlichungen der deutschen Orient-Gesellschaft, Leipzig/Berlin
ZA – Zeitschrift für Assyriologie und Vorderasiatischer Archäologie, Berlin – New York
ZDMG – Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, Leipzig – Stuttgart – Wiesbaden
ZDPV – Zeitschrift des Deutschen Palästina-Vereins, Wiesbaden
ZfE – Zeitschrift für Ethnologie, Berlin – Braunschweig

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր Կտակարանների: Եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած, Ստոկհոլմ, 1989, Աստվածաշնչի Թարգմանության Ինստիտուտ:
2. Աբրահամյան Գ.Ս. 1971, Շիրակ: Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 470 էջ (պատ. խմբ. Բաղդասարյան Ա.Բ.), էջ 290-318:
3. Ադոնց Ն. 1987, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, «Հայաստան», 640 էջ:
4. Աճառյան Հ. 1971-1979, Հայերեն արմատական բառարան, հ. I-IV, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2694 էջ:
5. Այվազյան Ա. 1976, Արբա և Ճահուկ բերդերը, ԼՀԳ, թիվ 9 (405), 87-95:
6. Այվազյան Ա. 1979, Երնջակ բերդը, ԼՀԳ, թիվ 2 (434), 61-73:
7. Առաքելյան Բ.Ն. 1975, Հին Արտաշատ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 52 էջ, 25 նկ.:
8. Առաքելյան Բ.Ն. 1981, Արտաշատի 1979-1980 թթ. պեղումների հիմնական արդյունքները, ՀԱԱՆԳՆ 1979-1980, Զեկուցումների թեզիսներ, Էջմիածին, էջ 19-20:
9. Ասլանյան Ա.Ա. 1971ա, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը և սահմանները: Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 470 էջ (պատ. խմբ. Բաղդասարյան Ա.Բ.), էջ 30-52:
10. Ասլանյան Ա.Ա. 1971բ, Արարատյան գոգավորություն: Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 470 էջ (պատ. խմբ. Բաղդասարյան Ա.Բ.), էջ 290-318:
11. Ավետիսյան Հ.Գ. 1989, Արարատյան դաշտավայրի մ.թ.ա. VIII-VII դդ. հուշարձաններից գտնված կարասները, ՊԲՀ, թիվ 1 (70), էջ 70-77.
12. Ավետիսյան Հ.Գ. 1996, Արագածի ամրաշինությունը, ԲԵՀ, թիվ 1 (88), էջ 41-46:
13. Ավետիսյան Հ.Գ. 1997, Արամուսի ամրաշինական համալիրները, ԲԵՀ, թիվ 2 (92), էջ 118-124:
14. Ավետիսյան Հ.Գ. 2001, Արագած (Ուրարտական ամրոցի պեղումներ), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 232 էջ:
15. Ավետիսյան Հ.Գ. 2005, Արամուսի ամրոցը, «Հուշարձան», հատոր 3, Երևան, էջ 97-102:
16. Ավետիսյան Հ.Գ. 2008, Վանի թագավորության մարտակառքերի հարցի շուրջ, «Հայ Աստվածաբան», հատոր 2, էջ 249-256:
17. Ավետիսյան Հ.Գ. 2012, Արամուս. Հնագիտական հետազոտություններ, Հալեպ, Հալեպի Մարաշի Հայրենակցական Միություն, 66 էջ:
18. Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Ն.Հ. 2008, Վանի թագավորության մետաղագործությունը (աշխատանքային գործիքներ, զենքեր), ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», հատոր Գ, Երևան, էջ 365-378:
19. Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Պ.Ս. 2006, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 396 էջ:

20. Ավետիսյան Հ.Գ., Ավետիսյան Ն. 2008, Վանի թագավորության մետաղագործությունը (աշխատանքային գործիքներ, զենքեր), ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ «Տարեգիրք» Գ, Երևան, էջ 365-378:
21. Ավետիսյան Հ.Գ., Բոբոխյան Ա.Ա. 2010, Ուրարտուի հնագիտություն (Ամրոց-բնակավայրեր և դամբանային համալիրներ), Երևան, «Բավիղ» հրատարակչություն, 236 էջ:
22. Ավետիսյան Պ. 2014, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXI-IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), Գիտական զեկուցում, Երևան, ՀՀ ԳԱԱ ԱԻ, 92 էջ:
23. Ատրպետ 1912, Եզի պաշտամունքը հին Հայաստանում, ԱՀ, Գիրք 23, թիվ 2, էջ 114-124:
24. Արեշյան Գ., 1985, Շամիրամի հուշարձանախմբի սիստեմատիկ պեղումների տասնամյակը, ՀԱԱՆԳՆ 1983-1984, Զեկուցումների թեզիսներ, Երևան, էջ 13-15:
25. Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., Սիմոնյան Հ., Տիրացյան Գ., Քալանթարյան Ա. 1977, Հնագիտական հետազոտություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում, ԼՀԳ, թիվ 4 (412), էջ 77-93:
26. Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ. 1996, Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը նախնադարյան-համայնական հասարակարգի և պետական առաջին կազմավորումների ժամանակաշրջանում: Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 298 էջ, 48 թ. նկ. (խմբ. Տիրացյան Գ.), էջ 13-86:
27. Արեշյան Գ., Սիմոնյան Հ. 1976, ԵՊՀ-ի Հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի 1975 թ. կատարած հնագիտական աշխատանքները, ԲԵՀ, թիվ 1 (28), էջ 284-288:
28. Բադալյան Մ. 2009, Տարին և Ուրարտուի դիցարանի գերագույն եռյակը, «Մերձավոր Արևելք», հատոր VI, էջ 36-42:
29. Բադալյան Մ. 2013, Ուրարտական սեպագիր արձանագրություններով ժայռափոր դռները (խորշեր): Հայաստանի մայրաքաղաքները, Գիրք I. Վան (Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու [7-9 հոկտեմբերի 2010թ.]), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 352 էջ (խմբ. Մարության Հ.Տ.), էջ 82-94:
30. Բայբուրդյան Ե. 1937, Հայաստանի գունազարդ կերամիկայի պրոբլեմը, Հայկական ԽՍՀ Պատմության և գրականության ինֆստիտուտի «Տեղեկագիր», գիրք 2, Երևան, 268-308:
31. Բոբոխյան Ա.Ա. 2014, Քաղաքագոյացման գործընթացները նախաուրարտական Հայաստանում (պարբերացման փորձ): Բ.Բ. Պիոտրովսկին և հնագիտությունը, Երևան, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, 264 էջ (գլխ. խմբ. Փիլիպոսյան Ա.Ս.), էջ 40-75:
32. Բոյաջյան Ա. 2013, Գյուղատնտեսության դրությունն Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառում XIX դ. ծերջին և XX դ. առաջին կեսին, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոն. Գիտական աշխատություններ, թիվ 15, էջ 69-78:
33. Գաբրիելյան Հ.Կ. 2000, Հայկական լեռնաշխարհ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 376 էջ:

34. Գայսերյան Վ.Ա. 1981, Ուրարտական ջրանցքաշինությունը Մանազկերտի շրջանում, ՊԲՀ, թիվ 2 (93), էջ 191-194:
35. Գայսերյան Վ.Ա. 1985, Սեպագիր աղբյուրներում հանդիպող մի քանի երկրների տեղադրությունը, ՊԲՀ, թիվ 1 (108), էջ 208-214:
36. Գրեկյան Ե.Հ. 2000, Մանայի թագավորության վարչաքաղաքական միավորների և դրանց տեղադրության շուրջ, ՄՄԱԵԺ, պրակ 19, էջ 153-172:
37. Գրեկյան Ե.Հ. 2001, Ուրարտու և Մանա (մերձուրմյան ավազանում ուրարտական տիրապետության հաստատման խնդրի շուրջ), «Արևելք», Երևան, 5-19:
38. Գրեկյան Ե.Հ. 2002ա, Ուաուշի ճակատամարտը (պատմա-համեմատական վերլուծություն), ՄՄԱԵԺ, պրակ XXI, էջ 180-199:
39. Գրեկյան Ե.Հ. 2002բ, «Երկրագործական տարածքներն ու ոռոգման համակարգը հյուսիս-արևմտյան Իրանում ըստ սեպագիր աղբյուրների», ՊԲՀ, թիվ 2 (160), էջ 214-232:
